Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն
International Center for
Human Development

a think tank
WWW.ICHD.ORG

Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական ակտեր

Երևան - 2016

Բովանդակություն

1. Միջազգային կարգավորման փաստաթղթեր (2016թ. հունվարի 1-իդ դրությամբ) 2
2. Ներպետական իրավական կարգավորման փաստաթղթեր (2016թ. հունվարի 1-իդ դրությամբ) 26
3. Ինստիտուտներ (2016թ. հունվարի 1-ի դրությամբ) 277

1. Միջազգային կարգավորման փաստաթղթեր (2016թ. հունվարի 1-իդ դրությամբ)

Հ/Հ	Փաստաթղթի անվանում, համարը, տեսակը, ընդունող մարմինը, ընդունման ամսաթիվը, կարգավորման առարկան	Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում սահմանող դրույթները, լիազորություններ, պարտականություններ	Լիազոր մարմին(ներ)ը, տվյալների հավաքագրման և մոնիթորինգի համակարգեր
1.	**Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին** *ընդունված է՝ 20.11.1989, ուժի մեջ է՝ 22.07.1993* Կոնվենցիայի նպատակն է նպաստել երեխայի պաշտպանությանը և ներդաշնակ զարգացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ժողովրդի ավանդույթների և մշակութային արժեքների կարևորությունը, հատուկ ուշադրություն դարձնելով բացառիկ ծանր պայմաններում ապրող երեխաներին և այդ երեխաների կարիքին, մեծ նշանակություն տալով երեխաների խնամակալության սահմանման և որդեգրման ժամանակ, սոցիալական և իրավական սկզբունքների պահպանմանը, նկատի ունենալով, որ երեխայի ֆիզիկական և մտավոր անհասունությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության, ներառյալ՝ պատշաճ իրավական պաշտպանությունը:	1. Մասնակից պետությունները հարգում և ապահովում են կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները՝ իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր երեխայի համար, **առանց որևէ խտրականության**, անկախ երեխայի կամ նրա ծնողների կամ օրինական խնամակալների ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքից, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից և ծննդից կամ այլ կարգավիճակից: (Հոդված 2) 2. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու երեխայի պաշտպանությունը **խտրականության բոլոր ձևերից կամ պատժից**՝ նրա ծնողների կամ օրինական խնամակալների կամ ընտանիքի այլ անդամների կարգավիճակի, գործունեության, արտահայտած հայացքների կամ համոզմունքի հիմքով: (Հոդված 2) 3. Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում **երեխայի լավագույն շահերին**: (Հոդված 3) 4. Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա **ծնողների, խնամակալների** կամ օրենքով նրա համար **պատասխանատվություն կրող** այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները: (Հոդված 3) 5. Մասնակից պետություններն ապահովում են երեխաների մասին հոգալու կամ նրանց պաշտպանության համար պատասխանատու **հիմնարկների, ծառայությունների և մարմինների** համապատասխանությունն իրավասու մարմինների կողմից սահմանված չափանիշներին, մասնավորապես, անվտանգության և առողջապահության բնագավառներում դրանց թվաքանակի և անձնակազմի պիտանիության, ինչպես նաև իրավասու **հսկողություն** սահմանելու իմաստով: (Հոդված 3) 6. Մասնակից պետությունները հարգում են **ծնողների**, համապատասխան դեպքերում նաև տեղական սովորություններով նախատեսված **ընդլայնված ընտանիքի** կամ **համայնքի** անդամների, **խնամակալների** կամ երեխայի համար օրենքով **պատասխանատու այլ անձանց** պատասխանատվությունը, իրավունքները և պարտականությունները, երեխայի իրավունքներն իրականացնելիս, երեխայի զարգացող ունակություններին համապատասխան ուղղություն տալու համար: (Հոդված 5) 7. Մասնակից պետություններն ընդունում են, որ յուրաքանչյուր երեխա ունի **կյանքի անկապտելի իրավունք**: Մասնակից պետությունները հնարավոր առավելագույն չափով ապահովում են **երեխայի գոյատևումը և առողջ զարգացումը**: (Հոդված 6) 8. Երեխան **գրանցվում է** ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք: Մասնակից պետություններն այդ իրավունքների իրականացումն ապահովում են իրենց ներպետական օրենսդրության և այս բնագավառում համապատասխան միջազգային փաստաթղթերով ստանձնած իրենց պարտավորությունների համաձայն, մասնավորապես այն դեպքում, եթե այլ կերպ երեխան քաղաքացիություն չունենա: (Հոդված 7) 9. Մասնակից պետությունները պարտավորվում են օրենքով նախատեսված կարգով՝ առանց անօրինական միջամտության, հարգել երեխայի իրավունքը՝ պահպանելու իր **ինքնությունը**՝ ներառյալ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը: Եթե երեխան անօրինական կերպով զրկվում է իր ինքնության որոշ կամ բոլոր տարրերից, մասնակից պետությունները տրամադրում են համապատասխան աջակցություն և պաշտպանություն՝ շուտափույթ կերպով նրա **ինքնությունը վերականգնելու** նպատակով: (Հոդված 8) 10. Մասնակից պետություններն ապահովում են, որ երեխան, **հակառակ ծնողների ցանկության, չբաժանվի նրանցից**, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները գործող օրենքի և ընթացակարգի համաձայն կայացնեն որոշում, ինչը ենթակա է դատական վերահսկողության, որ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսակետից: Նման որոշում կարող է անհրաժեշտ լինել այս կամ այն կոնկրետ դեպքում, օրինակ, երբ ծնողները **դաժանորեն** են վարվում երեխայի հետ կամ **հոգ չեն տանում** նրա մասին, կամ երբ ծնողներն առանձին են ապրում և հարկ է որոշում կայացնել երեխայի բնակության վայրի վերաբերյալ: Մասնակից պետությունները հարգում են ծնողներից մեկից կամ երկուսից **բաժանված երեխայի** իրավունքը՝ կանոնավոր կերպով անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանելու ծնողների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահերին: (Հոդված 9) 11. Այն դեպքերում, երբ այդպիսի **բաժանումը** հետևանք է մասնակից պետության որևէ գործողության, ինչպիսին է մեկ կամ երկու ծնողների կամ երեխայի **կալանքը**, **ազատազրկումը**, **աքսորը**, **տեղահանությունը** կամ **մահը**, այդ մասնակից պետությունը **ծնողներին, երեխային**, կամ, եթե դա անհրաժեշտ է, ընտանիքի այլ անդամին, նրանց խնդրանքով տրամադրում է համապատասխան **տեղեկատվություն**՝ ընտանիքի բացակա անդամի (անդամների) **գտնվելու վայրի** վերաբերյալ, եթե այդպիսի տեղեկատվությունը **վնաս չի** հասցնում երեխայի բարեկեցությանը: Մասնակից պետությունները հետագայում ապահովում են, որպեսզի այդպիսի խնդրանքով դիմելն ինքնըստինքյան չհանգեցնի անբարենպաստ հետևանքների համապատասխան անձի (անձանց) համար: (Հոդված 9) 12. **Ընտանիքի վերամիավորման** նպատակով երեխայի կամ նրա ծնողների դիմումները մասնակից պետություն ժամանելու կամ այնտեղից մեկնելու մասին մասնակից	Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին: (Հոդված 3) Կոնվենցիայով մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների կատարման գործում ձեռք բերված առաջընթացն ուսումնասիրելու նպատակով հիմնվում է Երեխայի իրավունքների կոմիտե: Այն բաղկացած է բարոյական բարձր հատկանիշներ ունեցող և կոնվենցիայի ընդգրկած բնագավառում ճանաչված տասը փորձագետներից: Կոմիտեի անդամներն ընտրվում են չորս տարի ժամանակով: Կոմիտեի որևէ անդամի մահվան կամ պաշտոնաթողության դեպքում, կամ եթե նա որևէ այլ պատճառով այլևս չի կարող կատարել Կոմիտեի անդամի պարտականությունները, Կոմիտեի անդամին առաջադրած մասնակից պետությունն իր քաղաքացիների թվից մնացած ժամանակի համար, Կոմիտեի հավանությամբ, նշանակում է այլ փորձագետ: (Հոդված 43)

		պետությունների կողմից պետք է քննարկվեն դրական, մարդասիրական և արագ կարգով: Մասնակից պետությունն այնուհետև ապահովում է, որպեսզի այդպիսի խնդրանքով դիմելը դիմողի և նրա ընտանիքի անդամների համար չհանգեցնի անբարենպաստ հետևանքների: (Հոդված 10) 13. Երեխան, որի ծնողները բնակվում են տարբեր պետություններում, իրավունք ունի կանոնավոր կերպով, բացառությամբ հատուկ հանգամանքների, **անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր** պահպանել **երկու ծնողների** հետ: Այդ նպատակով մասնակից պետությունների ստանձնած պարտավորության, մասնակից պետությունները հարգում են ցանկացած, այդ թվում նաև սեփական երկրից հեռանալու և սեփական երկիր վերադառնալու՝ երեխայի և նրա ծնողների իրավունքը: Ցանկացած երկրից հեռանալու իրավունքը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի (ordre public), բնակչության առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար և համատեղելի են կոնվենցիայով ճանաչված այլ իրավունքների հետ: (Հոդված 10) 14. Մասնակից պետությունները միջոցներ են ձեռնարկում երեխաների **ապօրինի տեղափոխումների և արտասահմանից չվերադառնալու դեմ** պայքարելու համար: Այդ նպատակով մասնակից պետությունները նպաստում են երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի կնքմանը կամ գործող համաձայնագրերին միանալուն: (Հոդված 11) 15. Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք **ազատորեն արտահայտելու** իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան **պատշաճ ուշադրություն**: Երեխային հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ, ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով, **ունկնդրվել** թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով: (Հոդված 12) 16. Երեխան իրավունք ունի ազատորեն **արտահայտելու իր կարծիքը**, այդ իրավունքը ներառում է ցանկացած բնույթի տեղեկատվություն և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ սահմաններից, գրավոր կամ տպագիր ձևով, ստեղծագործության տեսքով կամ այլ միջոցներով՝ երեխայի ընտրությամբ: Այդ իրավունքի իրագործումը կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, սակայն այդ **սահմանափակումները** կարող են լինել միայն այնպիսիք, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են այլ անձանց իրավունքները և հեղինակությունը հարգելու, կամ պետական անվտանգությունը կամ հասարակական կարգը (ordre public), կամ բնակչության առողջությունը, կամ բարոյականությունը պաշտպանելու համար: (Հոդված 13) 17. Մասնակից պետությունները հարգում են **երեխայի՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը**: Իր կրոնը կամ հավատը դավանելու ազատությունը կարող է ենթարկվել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության բարոյականության և առողջության կամ այլ անձանց հիմնարարիրավունքների կամ ազատությունների պաշտպանության համար: (Հոդված 14) 18. Մասնակից պետությունները հարգում են **ծնողների** և համապատասխան դեպքերում օրինական **խնամակալների** իրավունքն ու պարտականությունները՝ **երեխայի զարգացող ընդունակություններին համապատասխան, ուղղություն տալու երեխային** իր իրավունքներն իրականացնելիս: (Հոդված 14) 19. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ **միավորումների և խաղաղ հավաքների ազատության իրավունքը**: Այդ իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի այնպիսիներից, որոնք սահմանվում են օրենքի համաձայն և ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ են ի շահ ազգային անվտանգության կամ հասարակական ապահովության, հասարակական կարգի (ordre public), բնակչության առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության: (Հոդված 15) 20. Ոչ մի երեխա **չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի կյանքի, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիության կամայական կամ ապօրինի միջամտության**, կամ իր **պատվի և հեղինակության** նկատմամբ **ապօրինի ոտնձգության**: Երեխան նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքի կողմից պաշտպանության իրավունք ունի: (Հոդված 16) 21. Մասնակից պետություններն ընդունում են **զանգվածային լրատվության միջոցների** կարևոր դերը և երեխայի համար ապահովում են ներպետական և միջազգային զանազան աղբյուրների տեղեկատվության ու նյութերի մատչելիությունը, հատկապես՝ այնպիսի տեղեկատվության ու նյութերի, որոնք միտված են երեխայի սոցիալական, հոգևոր և բարոյական բարեկեցությանը, ինչպես նաև նրա ֆիզիկական ու հոգեկան առողջ զարգացմանն աջակցելուն: Այդ նպատակով մասնակից պետությունները խրախուսում են զանգվածային լրատվության միջոցների կողմից այնպիսի տեղեկատվության ու նյութերի տարածումը, որոնք սոցիալական ու մշակութային առումով օգտակար են երեխային, խրախուսում են միջազգային համագործակցությունը զանազան մշակութային, ներպետական և միջազգային աղբյուրներից այդպիսի տեղեկատվության ու նյութերի նախապատրաստման, փոխանակման ու տարածման գործում, խրախուսում են մանկական գրականության լույսընծայումն ու տարածումը, խրախուսում են զանգվածային լրատվության միջոցներին՝ հատուկ ուշադրություն դարձնելու՝ ազգային փոքրամասնություններին կամ բնիկ ազգաբնակչության այս կամ այն խմբին պատկանող երեխաների լեզվական պահանջմունքներին, խրախուսում են երեխայի բարեկեցությանը վնասող տեղեկատվությունից և նյութերից երեխային պաշտպանելու համապատասխան ուղենիշների զարգացումը: (Հոդված 17) 22. Մասնակից պետությունները գործադրում են բոլոր հնարավոր ջանքերը՝ **երեխայի դաստիարակության և զարգացման** գործում **երկու ծնողների ընդհանուր պատասխանատվության** սկզբունքի ճանաչումն ապահովելու համար: Ծնողները կամ համապատասխան դեպքերում օրինական խնամակալները երեխայի դաստիարակության ու զարգացման համար կրում են հիմնական պատասխանատվություն: Երեխայի լավագույն շահերը նրանց հիմնական հոգածության առարկան են: Կոնվենցիայում շարադրված իրավունքները երաշխավորելու և դրանց իրականացմանը նպաստելու նպատակով մասնակից պետությունները ծնողներին և օրինական խնամակալներին անհրաժեշտ օգնություն են տրամադրում երեխայի դաստիարակության իրենց պարտականությունները կատարելու գործում և ապահովում են երեխաների խնամքի հաստատությունների և ծառայությունների զարգացումը: Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի ապահովվի աշխատող ծնողների երեխաների իրավունքը՝ օգտվելու նրանց համար նախատեսված երեխաների խնամքի ծառայություններից: (Հոդված 18) 23. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները **պաշտպանելու երեխային ծնողների**, օրինական **խնամակալների** կամ երեխայի մասին **հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից**, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը: Պաշտպանության այդպիսի միջոցներն անհրաժեշտության դեպքում ներառում են սոցիալական ծրագրերի մշակման արդյունավետ ընթացակարգեր՝ նպատակ ունենալով անհրաժեշտ աջակցություն տրամադրել երեխային և այն անձանց, ովքեր հոգ են տանում նրա մասին, ինչպես նաև երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի՝ վերը նշված դեպքերը կանխարգելելու և բացահայտելու, դրանց մասին տեղեկացնելու, քննարկման հանձնելու, հետաքննելու, բուժելու, և այդ առթիվ հետագա միջոցներ ձեռնարկելու այլ ձևերի իրականացման, այդ թվում, ըստ անհրաժեշտության՝ դատական գործ հարուցելու համար: (Հոդված 19) 24. Ժամանակավորապես կամ մշտապես իր ընտանեկան միջավայրից զրկված կամ իր լավագույն շահերի տեսակետից այդպիսի միջավայրում մնալ չկարողացող երեխան պետության կողմից տրամադրվող **հատուկ պաշտպանության և օգնության իրավունք** ունի: Մասնակից պետություններն իրենց ներպետական օրենքներին համապատասխան ապահովում են այլընտրանքային խնամք այդպիսի երեխայի համար: Այդպիսի խնամքը կարող է ներառել, ի թիվս այլ միջոցների, խնամակալության սահմանումը, «ղաֆալան»՝ ըստ իսլամական իրավունքի, որդեգրումը կամ, անհրաժեշտության դեպքում, երեխաների խնամքի համար նախատեսված համապատասխան հաստատություններում տեղավորելը: Այս կամ այն լուծումն ընտրելիս պատշաճ կերպով հաշվի է առնվում երեխայի դաստիարակության հաջորդայնությունն ապահովելու ցանկալիությունն ու նրա էթնիկական ծագումը, կրոնական ու մշակութային պատկանելությունը և մայրենի լեզուն: (Հոդված 20)	

25. **Որդեգրման** համակարգն ընդունող և/կամ թույլատրող մասնակից պետություններն ապահովում են, որ երեխայի լավագույն շահերը հաշվի առնվեն առաջնահերթ կերպով, և այդ նպատակով նրանք ապահովում են, որ երեխայի որդեգրումը թույլատրվի միայն իրավասու մարմինների կողմից, որոնք կիրառվող օրենքի և ընթացակարգի համաձայն և գործին առնչվող ողջ հավաստի տեղեկատվության հիման վրա որոշում են որդեգրման թույլատրելիությունը՝ ելնելով երեխայի կարգավիճակից՝ կապված ծնողների, հարազատների և օրինական խնամակալների հետ, և այն, որ անհրաժեշտության դեպքում, շահագրգիռ անձինք տվել են որդեգրման վերաբերյալ իրենց համաձայնությունը հնարավոր անհրաժեշտ խորհրդատվության հիման վրա, ընդունում են, որ այլ երկրում որդեգրումը կարող է դիտվել որպես երեխայի նկատմամբ խնամքի այլընտրանքային միջոց, եթե երեխայի նկատմամբ չի կարող խնամակալություն սահմանվել կամ երեխան չի կարող տեղավորվել որդեգրող ընտանիքում, և եթե երեխայի ծագման երկրում որևէ պատշաճ կերպով խնամքի ապահովումն անհնար է, երաշխավորում են, որ այլ երկրում որդեգրվող երեխան օգտվի այնպիսի պաշտպանությունից ու ստանդարտներից, որոնք համարժեք են ներպետական որդեգրման դեպքում գործող պաշտպանությանը և չափանիշներին, ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի այլ երկրում որդեգրման դեպքում երեխայիտեղավորումն ընտանիքում չհանգեցնի դրա հետ կապված անձանց համար չարդարացված ֆինանսական օգուտներ ստանալուն, անհրաժեշտության դեպքում նպատակների իրականացումը նպաստում է երկկողմ և բազմակողմ պայմանավորվածությունների և համաձայնագրերի կնքման միջոցով և դրա շրջանակներում ձգտում են երաշխավորել, որ երեխային այլ երկրում տեղավորելն իրականացվի իրավասու իշխանությունների կամ մարմինների կողմից: (Հոդված 21)
26. Մասնակից պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի **փախստականի** կարգավիճակ հայցող կամ գործող միջազգային կամ ներպետական իրավունքի ու ընթացակարգի համաձայն փախստական համարվող երեխային, ինչպես ծնողների կամ ցանկացած այլ անձանց կողմից ուղեկցվելու, այնպես էլ չուղեկցվելու դեպքում, ապահովվի պատշաճ պաշտպանություն և մարդասիրական օգնություն՝ կոնվենցիայում և տվյալ պետությունների մասնակցությամբ մարդու իրավունքների վերաբերյալ այլ միջազգային կամ մարդասիրական փաստաթղթերում ամրագրված կիրառելի իրավունքներից օգտվելիս: Այդ նպատակով մասնակից պետությունները, երբ իրենք դա անհրաժեշտ են համարում, համագործակցում են ՄԱԿ-ի և այլ իրավասու միջկառավարական կազմակերպությունների կամ ՄԱԿ-ի հետ համագործակցող այլ ոչ կառավարական կազմակերպությունների հետ՝ նման երեխային պաշտպանելու և նրան օգնություն ցույց տալու և ցանկացած այլ փախստական երեխայի ծնողների կամ ընտանիքի այլ անդամների որոնումների գործում՝ իր ընտանիքի հետ միանալու համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով: Եթե ծնողները և ընտանիքի մյուս անդամները չեն գտնվում, այդպիսի երեխային տրամադրվում է այնպիսի պաշտպանություն, ինչպիսին տրամադրվում է այս կամ այն պատճառով իր ընտանեկան միջավայրից մշտապես կամ ժամանակավորապես զրկված ցանկացած այլ երեխայի: (Հոդված 22)
27. Մասնակից պետություններն ընդունում են, որ **մտավոր կամ ֆիզիկական խեղումներով** երեխան պետք է ապրի լիարժեք և արժանավայել կյանքով այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են նրա արժանապատվությունը, նպաստում են ինքնավստահությանը և դյուրացնում են նրա ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին: Մասնակից պետությունները միջազգային համագործակցության ոգով նպաստում են խեղումներով երեխաների կանխարգելիչ առողջապահական, բժշկական, հոգեբանական և ֆունկցիոնալ բուժման բնագավառներում համապատասխան տեղեկատվության փոխանակմանը, ներառյալ՝ վերականգնման, հանրակրթական և մասնագիտական պատրաստության մեթոդների մասին տեղեկատվության տարածումը և դրանց մատչելիությունը՝ այս բնագավառներում մասնակից պետություններին իրենց կարողություններն ու հմտությունները կատարելագործելու և փորձն ընդլայնելու հնարավորություն տալու նպատակով: Այդ կապակցությամբ հատուկ ուշադրություն պետք է դարձվի զարգացող երկրների պահանջմունքներին: (Հոդված 23)
28. Մասնակից պետությունները ճանաչում են խեղումներով երեխայի՝ **հատուկ խնամքի իրավունքը**, խրախուսում և, ռեսուրսների առկայության դեպքում, դրա իրավունքն ունեցող երեխային և նրա խնամքի համար պատասխանատու անձանց ցույց են տալիս օգնություն, եթե այդ առթիվ խնդրանք է ներկայացվել և եթե դա համապատասխանում է երեխայի վիճակին, ծնողների կամ նրա նկատմամբ խնամք տանող այլ անձանց դրությանը: Նախատեսված օգնությունը տրամադրվում է ըստ հնարավորին անվճար՝ հաշվի առնելով ծնողների կամ երեխային խնամող այլ անձանց ֆինանսական միջոցները, և նպատակ ունի խեղումներով երեխայի համար ապահովել կրթության, մասնագիտական պատրաստության, առողջապահական ծառայությունների, առողջության վերականգնման ծառայությունների, աշխատանքային գործունեության նախապատրաստվելու, հանգստի միջոցներից օգտվելու հնարավորության մատչելիությունը, որը կհանգեցնի երեխային առավել լիակատար սոցիալական կյանքում ընդգրկելուն և նրա անհատականության զարգացմանը, ներառյալ մշակութային և հոգևոր զարգացմանը: (Հոդված 23)
29. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ **առողջապահության** առավել կատարյալ ստանդարտներից և հիվանդությունների բուժման ու առողջության վերականգնման ծառայություններից օգտվելու իրավունքը: Մասնակից պետությունները ձգտում են ապահովել, որպեսզի ոչ մի երեխա չզրկվի առողջապահական համակարգի նման ծառայություններից օգտվելու իր իրավունքից: Մասնակից պետությունները ձգտում են տվյալ իրավունքի լիարժեք իրականացմանը և, մասնավորապես, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում նորածինների և մանկական մահացության մակարդակն իջեցնելու համար, բոլոր երեխաներին անհրաժեշտ բժշկական օգնության և բժշկական սպասարկման տրամադրումն ապահովելու համար՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով առաջնային առողջապահությանը, հիվանդությունների և թերսնման դեմ պայքարելու համար, այդ թվում առաջնային առողջապահության շրջանակներում, ի թիվս այլ բաների՝ մատչելի տեխնոլոգիաների և բավականաչափ սննդարար մթերքների և խմելու մաքուր ջրի տրամադրման միջոցով՝ ուշադրության առնելով շրջակա միջավայրի աղտոտման վտանգավորությունն ու ռիսկը, մայրերի համար նախածննդյան և հետծննդյան շրջանում պատշաճ բժշկական օգնություն ապահովելու համար, երաշխավորելու համար, որ հասարակության բոլոր տարրերը, մասնավորապես, ծնողներն ու երեխաները տեղեկացված են երեխաների առողջության և սնման, կրծքով կերակրելու առավելությունների, հիգիենայի և շրջակա միջավայրի սանիտարիայի և դժբախտ պատահարները կանխելու մասին հիմնական գիտելիքներին, ինչպես նաև ապահովված է կրթության մատչելիությունը և այդ գիտելիքները կիրառելիս տրամադրվող աջակցությունը, զարգացնելու կանխարգելիչ բժշկական սպասարկումը, ծնողների համար ուղեցույցները և ընտանիքի պլանավորման վերաբերյալ կրթությունն ու ծառայությունները: (Հոդված 24)
30. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր արդյունավետ և անհրաժեշտ միջոցները երեխայի առողջության վրա **բացասաբար ազդող ավանդական սովորությունների վերացման** նպատակով: (Հոդված 24)
31. Մասնակից պետությունները ճանաչում են խնամելու, պաշտպանության կամ ֆիզիկական, կամ հոգեկան հիվանդությունների բուժման նպատակով իրավասու մարմինների կողմից տեղավորված երեխայի իրավունքը՝ պարբերաբար **վերանայելու երեխայի բուժման ընթացքը** և իր տեղավորման հետ կապված մյուս բոլոր հանգամանքները: (Հոդված 25)
32. Մասնակից պետությունները ճանաչում են **սոցիալական ապահովության**, ներառյալ՝ սոցիալական ապահովագրության նպաստներից օգտվելու յուրաքանչյուր երեխայի իրավունքը և անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում այդ իրավունքի լիակատար իրականացմանը հասնելու համար՝ համաձայն իրենց ներպետական օրենսդրության: Այդ նպաստները, անհրաժեշտության դեպքում, տրամադրվում են՝ հաշվի առնելով երեխայի ու այն անձանց միջոցներն ու հնարավորությունները, որոնք պատասխանատու են երեխային պահելու համար, ինչպես նաև երեխայի կողմից կամ նրա անունից նպաստներ ստանալու հետ կապված այլ նկատառումներ: (Հոդված 26)
33. Մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուր երեխայի՝ իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ **կենսամակարդակի իրավունքը**: Ծնողը(ները) կամ երեխայի համար պատասխանատու այլ անձինք, իրենց կարողությունների և ֆինանսական հնարավորությունների շրջանակներում կրում են երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններն ապահովելու հիմնական պատասխանատվությունը: Մասնակից պետությունները, ազգային պայմաններին համապատասխան և իրենց հնարավորությունների շրջանակներում, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում այդ իրավունքի իրականացման գործում ծնողներին և երեխայի համար պատասխանատու այլ անձանց աջակցելու համար և անհրաժեշտության դեպքում տրամադրում են նյութական աջակցություն ու օժանդակող ծրագրեր, մասնավորապես, կապված սննդի, հագուստի և բնակարանով ապահովելու հետ: (Հոդված 27)
34. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցներն ինչպես պետության ներսում, այնպես էլ արտասահմանում՝ ծնողների կամ երեխայի համար

ֆինանսական պատասխանատվություն կրող այլ անձանց կողմից **երեխայի խնամքի վերահաստատումն** ապահովելու համար: Մասնավորապես, եթե երեխան և նրա համար ֆինանսական պատասխանատվություն կրող անձինք բնակվում են տարբեր պետություններում, մասնակից պետությունները նպաստում են միջազգային համաձայնագրերին միանալուն կամ այդպիսի համաձայնագրեր կնքելուն, ինչպես նաև համապատասխան այլ պայմանավորվածություններ ձեռք բերելուն: (Հոդված 27)

35. Մասնակից պետությունները ճանաչում են **երեխայի կրթության իրավունքը** և **հավասար հնարավորությունների հիման վրա** այդ իրավունքի իրականացմանն աստիճանաբար հասնելու համար նրանք մտցնում են **պարտադիր և անվճար տարրական կրթություն**, խրախուսում են միջնակարգ կրթության տարբեր ձևերի, ներառյալ՝ ընդհանուր և մասնագիտական կրթության զարգացումը, ապահովում են դրանց մատչելիությունը բոլոր երեխաների համար և ձեռնարկում են այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են անվճար կրթություն տրամադրելը և կարիքի դեպքում ֆինանսական օգնություն ցույց տալը, բոլոր համապատասխան միջոցներով ապահովում են բարձրագույն կրթության մատչելիությունը՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, ապահովում են կրթական և մասնագիտական տեղեկատվության և ուղեցույցների մատչելիությունը բոլոր երեխաների համար, միջոցներ են ձեռնարկում նպաստելու կանոնավոր դպրոց հաճախելուն և դպրոցը թողած սովորողների թվաքանակի նվազմանը: (Հոդված 28)
36. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները երաշխավորելու համար, որ **դպրոցական կարգապահությունն** իրականացվում է երեխայի մարդկային արժանապատվության հետ համատեղելի մեթոդներով: (Հոդված 28)
37. Մասնակից պետությունները խթանում և խրախուսում են **միջազգային համագործակցությունը** կրթությանը վերաբերող հարցերով, մասնավորապես, ամբողջ աշխարհում տգիտության և անգրագիտության վերացմանը և գիտատեխնիկական գիտելիքների և ուսուցման ժամանակակից մեթոդների մատչելիության հեշտացմանը նպաստելու նպատակով: Այդ կապակցությամբ հատուկ ուշադրություն է դարձվում զարգացող երկրների կարիքներին: (Հոդված 28)
38. Երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի **երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը**՝ դրանց լրիվ ծավալով, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ամրագրված սկզբունքների նկատմամբ հարգանքի դաստիարակմանը, երեխայի ծնողների, նրա մշակութային ինքնատիպության, լեզվի և արժեքների, երեխայի բնակության երկրի ազգային արժեքների, նրա ծագման երկրի և իր սեփական քաղաքակրթությունից տարբեր քաղաքակրթությունների հանդեպ հարգանքի դաստիարակմանը, երեխային ազատ հասարակության մեջ, փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահավասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով պատասխանատու կյանքով ապրելուն նախապատրաստելը, շրջապատող բնության նկատմամբ հարգանքի դաստիարակմանը: Վերը նշվածը չի կարող մեկնաբանվել որպես առանձին անձանց և մարմինների իրավունքների սահմանափակում՝ ստեղծելու և ղեկավարելու ուսումնական հաստատություններ, այդ սկզբունքները մշտապես պահպանելու և այդպիսի ուսումնական հաստատություններում տարվող կրթությունն այն նվազագույն նորմերին համապատասխանեցնելու պահանջները կատարելու պայմանով, որոնք կարող են սահմանվել պետության կողմից: (Հոդված 29)
39. Այն պետություններում, ուր գոյություն ունեն էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ, կամ բնիկ ազգաբնակչության թվին պատկանող անձինք, այդպիսի **փոքրամասնություններին** կամ **բնիկ ազգաբնակչությանը** պատկանող երեխային չի կարող մերժվել իր խմբի մյուս անդամների հետ իր մշակույթից օգտվելու, իր կրոնը դավանելու և նրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լեզուն գործածելու իրավունքը: (Հոդված 30)
40. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի **հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին ու զվարճալի միջոցառումներին և մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու և արվեստով զբաղվելու իրավունքը**, ինչպես նաև հարգում և խրախուսում են երեխայի՝ մշակութային և ստեղծագործական կյանքին բազմակողմանիորեն մասնակցելու իրավունքը և նպաստում են մշակութային ու ստեղծագործական գործունեության, հանգստի և ժամանցի համար համապատասխան և հավասար հնարավորությունների տրամադրմանը: (Հոդված 31)
41. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի՝ **տնտեսական շահագործումից** և այնպիսի **աշխատանք կատարելուց պաշտպանվելու** իրավունքը, որը կարող է **վտանգավոր** լինել կամ **խոչընդոտել** երեխայի կրթությանը կամ վնասել նրա առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը: Այդ նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցառումներ, մասնավորապես՝ սահմանում են աշխատանքի ընդունելու նվազագույն տարիք կամ նվազագույն տարիքներ, նախատեսում են աշխատանքային ժամերի և աշխատանքի պայմանների կանոնակարգում, հոդվածի արդյունավետ իրականացումն ապահովելու համար նախատեսում են համապատասխան պատժամիջոցներ կամ այլ պատասխանատվության ձևեր: (Հոդված 32)
42. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, ներառյալ՝ օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները, որպեսզի **երեխաներին պաշտպանեն թմրանյութերի և հոգեներգործուն նյութերի ապօրինի օգտագործումից**, ինչպես դրանք սահմանված են միջազգային փաստաթղթերում, և կանխեն երեխաների ներգրավումն այդպիսի նյութերի ապօրինի արտադրության ու առևտրի մեջ: (Հոդված 33)
43. Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել **սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական չարաշահումից**: Այդ նպատակով մասնակից պետությունները, մասնավորապես, ներպետական, երկկողմ և բազմակողմ մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխարգելեն երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը, շահագործման նպատակով երեխաներին պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը, շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրաֆիայի և պոռնոգրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը: (Հոդված 34)
44. Մասնակից պետություններն ազգային, երկկողմ և բազմակողմ մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները **երեխաների առևանգումը**, նրանց **վաճառքը** կամ ցանկացած նպատակով և ցանկացած ձևով նրանց **առուվաճառքը** կանխելու համար: (Հոդված 35)
45. Մասնակից պետությունները երեխային պաշտպանում են նրա **բարեկեցությանը** որևէ տեսանկյունից վնասող շահագործման բոլոր այլ ձևերից: (Հոդված 36)
46. Մասնակից պետություններն ապահովում են, որ **ոչ մի երեխա չենթարկվի խոշտանգումների** կամ այլ **դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի** կամ **պատժի**: Ոչ մահապատիժ, ոչ ցմահ բանտարկություն, որն ազատման հնարավորություն չի նախատեսում, չի սահմանվում տասնութ տարին չլրացած անձանց կողմից կատարված հանցագործությունների համար, ոչ մի երեխա չզրկվի ազատությունից անօրինական կամ կամայական կերպով: Երեխայի ձերբակալությունը, կալանքը կամ ազատազրկումն իրականացվում են համաձայն օրենքի և գործադրվում են միայն որպես ծայրահեղ միջոց և որքան հնարավոր է՝ կարճ ժամանակամիջոցով, ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա օգտվի մարդասիրական վերաբերմունքից և մարդկային անօտարելի արժանապատվության նկատմամբ հարգանքից՝ հաշվի առնելով նրա տարիքի անձանց պահանջմունքները, մասնավորապես, ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է առանձնացվի մեծահասակներից, եթե միայն չի համարվում, որ երեխայի լավագույն շահերից ելնելով, հարկավոր չէ այդ անել և պետք է իրավունք ունենա կապ պահպանել իր ընտանիքի հետ՝ նամակագրության և տեսակցությունների միջոցով, բացառությամբ հատուկ հանգամանքների, ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է իրավունք ունենա անհապաղ օգտվելու համապատասխան իրավական և այլ օգնությունից, ինչպես նաև դատարանի կամ այլ իրավասու, անկախ և անկողմնակալ մարմնի առաջ վիճարկելու իրեն ազատությունից զրկելու օրինականությունը և անհապաղ որոշում ակնկալելու նման ցանկացած գործողության կապակցությամբ: (Հոդված 37)
47. Մասնակից պետությունները պարտավորվում են հարգել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, որոնք կիրառվում են **զինված ընդհարումների դեպքում** և առնչվում են երեխաներին, և ապահովել դրանց նկատմամբ հարգանքը: Մասնակից պետությունները ձեռնարկում են հնարավոր բոլոր միջոցները՝ ապահովելու, որպեսզի տասնհինգ տարին չլրացած անձինք ուղղակի մասնակցություն չունենան մարտական գործողություններին: Մասնակից պետությունները ձեռնպահ են մնում տասնհինգ տարին չլրացած ցանկացած անձի՝ իրենց զինված ուժերում ծառայության զորակոչելուց: Տասնհինգ տարին լրացած, բայց դեռ տասնութ տարին չլրացած անձանց թվից զորակոչելիս՝ մասնակից պետությունները ձգտում են նախապատվություն տալ ավելի բարձր տարիք ունեցողներին: Զինված ընդհարումների ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության

		առթիվ միջազգային մարդասիրական իրավունքով, իրենց ստանձնած պարտավորությունների համաձայն, մասնակից պետությունները պարտավորվում են ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ զինված ընդհարումից տուժող երեխաների պաշտպանությունն ու խնամքն ապահովելու նպատակով: (Հոդված 38) 48. Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նպաստելու համար դաժան վերաբերմունքի, շահագործման կամ չարաշահման ցանկացած ձևի, խոշտանգումների կամ ցանկացած այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, զինված ընդհարումների զոհ դարձած **երեխայի ֆիզիկական կամ հոգեբանական վերականգնմանը** և **սոցիալական վերաինտեգրացմանը**: Նման վերականգնումը և վերաինտեգրացումն իրականացվում են երեխայի առողջությունը, ինքնահարգանքը և արժանապատվությունն ապահովող պայմաններում: (Հոդված 39) 49. Մասնակից պետությունները ճանաչում են **մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող յուրաքանչյուր երեխայի իրավունքը**՝ արժանանալու այնպիսի վերաբերմունքի, որը նպաստում է նրա **արժանապատվության և նշանակալիության զգացումի զարգացմանը**, երեխայի մեջ ամրապնդում է հարգանքը մարդու իրավունքների և ուրիշների հիմնարար ազատությունների նկատմամբ, և որի դեպքում հաշվի է առնվումերեխայի տարիքը և հասարակության մեջ նրա վերաինտեգրացման և հետագա դրական դեր խաղալուն նպաստելու ցանկալիությունը: Այդ նպատակով և ուշադրության առնելով համապատասխան միջազգային փաստաթղթերի դրույթները՝ մասնակից պետությունները, մասնավորապես, ապահովում են, որ, ոչ մի երեխա չմեղադրվի կամ չճանաչվի որպես քրեական օրենսդրությունը խախտող այն գործողությունների կամ անգործության պատճառով, որոնք դրանք կատարելու պահին արգելված չեն եղել ներպետական կամ միջազգային իրավունքով, մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող յուրաքանչյուր երեխա ունենա առնվազն հետևյալ երաշխիքները՝ համարվի անմեղ, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել համաձայն օրենքի, անհապաղ և անմիջականորեն կամ, անհրաժեշտության դեպքում, ծնողների կամ օրինական խնամակալների միջոցով տեղեկացվի իր դեմ ներկայացված մեղադրանքների մասին և ստանա իրավաբանական կամ այլ համապատասխան օգնություն՝ իր պաշտպանությունը նախապատրաստելիս և իրականացնելիս, իր գործի կապակցությամբ որոշում կայացվի իրավասու, անկախ և անկողմնակալ մարմնի կամ դատարանի կողմից արդար քննության ընթացքում օրենքի համաձայն փաստաբանի կամ համապատասխան այլ անձի և, եթե դա չի հակասում երեխայի լավագույն շահերին, մասնավորապես, հաշվի առնելով նրա տարիքը կամ վիճակը, ծնողների կամ օրինական խնամակալների ներկայությամբ, չհարկադրվի վկայություն տալու կամ մեղքը խոստովանելու, ինքնուրույն կամ այլ անձանց օգնությամբ հարցաքննելու մեղադրող կողմի վկաներին և հավասարության պայմաններում ապահովելու պաշտպանության կողմի վկաների մասնակցությունը և նրանց հարցաքննումը, քրեական օրենսդրությունը խախտած համարվելու դեպքում հնարավորություն ունենա այդ որոշման և դրա արդյունքում կիրառված ցանկացած միջոցի վերանայման՝ վերադաս իրավասու, անկախ և անկողմնակալ մարմնի կամ դատարանի կողմից՝ օրենքի համաձայն, ստանալու թարգմանչի անվճար օգնություն, եթե երեխան չի հասկանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով, լիովին հարգվի նրա անձնական կյանքի անձեռնմխելիությունը քննության բոլոր փուլերում: (Հոդված 40) 50. Մասնակից պետությունները ձգտում են նպաստել **մեղադրվող կամ քրեական օրենսդրությունը խախտած համարվող երեխաների** նկատմամբ հատկապես կիրառելի օրենքների, ընթացակարգերի, մարմինների և հաստատությունների ստեղծմանը, մասնավորապես՝ այն նվազագույն տարիքի սահմանմանը, որից ցածր երեխաները համարվում են անընդունակ խախտելու քրեական օրենսդրությունը, անհրաժեշտության և ցանկալիության դեպքում նման երեխաների նկատմամբ միջոցներ ձեռնարկել՝ առանց դատաքննության դիմելու, մարդու իրավունքների լիակատար պաշտպանության և իրավական երաշխիքների պահպանման պայմանով: (Հոդված 40) 51. Անհրաժեշտ է այնպիսի **բազմազան միջոցառումների** առկայությունը, ինչպիսիք են խնամքի, խնամակալության և հսկողության մասին հրամանները, խորհրդատվական ծառայությունները, փորձաշրջանի նշանակումը, դաստիարակությունը, կրթական և մասնագիտական պատրաստության ծրագրերը և առանձին հաստատություններում խնամքի այլընտրանքային այլ ձևեր, որոնք ապահովում են երեխայի նկատմամբ նրա բարեկեցությանը, ինչպես նաև դրությանն ու հանցագործության բնույթին համապատասխանող վերաբերմունք: (Հոդված 40)	
2.	**Կոնվենցիա երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին** *ընդունված է՝ 25.10.1980, ուժի մեջ է՝ 01.06.2007* Ապահովում է որևէ պայմանավորվող պետություն անօրինականորեն տեղափոխված կամ այնտեղ պահվող երեխաների անհապաղ վերադարձը, և երաշխավորում է մի պետության օրենսդրությամբ նախատեսված՝ խնամակալության և տեսակցության իրավունքների արդյունավետ հարգումը այլ պետություններում: *Նաև՝* **««Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիայով նախատեսված կենտրոնական մարմին նշանակելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 952-Ն, ընդունված է՝ 20.08.2009, ուժի մեջ է՝ 03.09.2009* «Երեխայի միջազգային	1. **Երեխայի տեղափոխումը կամ պահելը անօրինական է դիտվում**, եթե. դրանով խախտվում են խնամակալության իրավունքները, որոնք միասնական կամ անհատական կերպով շնորհված են որևէ անձի, հաստատության կամ այլ մարմնի՝ այն Պետության օրենսդրության համաձայն, որտեղ երեխան սովորաբար բնակվել է տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ, և տեղափոխման կամ պահելու պահին միասնական կամ անհատական կերպով այդ իրավունքներն արդյունավետորեն իրականացվել են կամ կիրականացվեին, եթե չլիներ տեղափոխումը կամ պահելը: (Հոդված 3) 2. Կոնվենցիան կիրառվում է ցանկացած երեխայի նկատմամբ, որը խնամակալության կամ տեսակցության իրավունքների խախտումից անմիջապես առաջ մշտապես բնակվել է որևէ Պայմանավորվող պետությունում: Կոնվենցիայի կիրառումը դադարեցվում է, երբ երեխան դառնում է 16 տարեկան: (Հոդված 4) 3. «**Խնամակալության իրավունքներ**»-ը ներառում են երեխայի անձի նկատմամբ խնամք տանելուն և, մասնավորապես, երեխայի բնակության վայրը որոշելուն վերաբերող իրավունքները: «**Տեսակցության իրավունքներ**»-ը ներառում են երեխային սահմանափակ ժամանակով իր մշտական բնակության վայրից մեկ այլ վայր տանելու իրավունքը: (Հոդված 5) 4. **Կենտրոնական մարմինները համագործակցում** են միմյանց հետ և **օժանդակում** են իրենց Պետությունների իրավասու մարմինների միջև **համագործակցությանը**՝ երեխաների անհապաղ վերադարձն ապահովելու և Կոնվենցիայի այլ նպատակներին հասնելու համար: Մասնավորապես, անմիջականորեն կամ որևէ միջնորդի միջոցով նրանք ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները, որպեսզի՝ բացահայտեն, թե որտեղ է գտնվում անօրինականորեն տեղափոխված կամ պահվող երեխան, կանխարգելեն երեխային հետագա վնաս պատճառելը կամ շահագրգիռ անձանց վնասելը՝ ժամանակավոր միջոցներ ձեռնարկելով կամ կարգադրելով ձեռնարկել, ապահովեն երեխայի կամավոր վերադարձը կամ նախաձեռնեն խնդիրների բարեկամական լուծումը, անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն փոխանակեն երեխայի սոցիալական ծագման մասին, տրամադրեն ընդհանուր բնույթի տեղեկատվություն Կոնվենցիայի կիրառմանն առնչվող՝ իրենց Պետությունների իրավունքի մասին, նախաձեռնեն դատական կամ վարչական ընթացակարգեր կամ նպաստեն այդպիսի ընթացակարգերին՝ երեխայի վերադարձմանը հասնելու նպատակով և, անհրաժեշտության դեպքում, համաձայնության գան տեսակցության իրավունքի արդյունավետ իրականացումը կազմակերպելու և ապահովելու համար, եթե հանգամանքները պահանջում են, ապահովեն կամ դյուրացնեն իրավաբանական օգնության և խորհրդատվության տրամադրումը, ներառյալ փաստաբանների և իրավաբանական խորհրդատուների մասնակցությունը, ապահովեն այնպիսի կազմակերպչական օգնություն, որը կարող է անհրաժեշտ և տեղին լինել երեխայի անվտանգ վերադարձն ապահովելու համար, տեղյակ պահեն միմյանց Կոնվենցիայի կատարման մասին և հնարավորին չափով վերացնեն դրա կիրառման խոչընդոտները: (Հոդված 7) 5. Ցանկացած անձ, հաստատություն կամ այլ մարմին, որը բողոք է ներկայացրել այն մասին, որ երեխան տեղափոխվել կամ պահվել է՝ ի խախտումն խնամակալության իրավունքների, **կարող է դիմել** երեխայի մշտական բնակության կամ ցանկացած այլ պետության Կենտրոնական մարմնի՝ երեխայի վերադարձն ապահովելուն աջակցելու համար: (Հոդված 8) 6. Եթե դիմումն ստացած Կենտրոնական մարմինը հիմքեր ունի հավատալու, որ երեխան գտնվում է այլ պետությունում, ապա նա անմիջականորեն և առանց ձգձգումների դիմումը փոխանցում է տվյալ պետության Կենտրոնական մարմնին և այդ մասին տեղեկացնում է հայցող Կենտրոնական մարմնին կամ դիմողին՝ կախված հանգամանքներից: (Հոդված 9) 7. Այն Պետության Կենտրոնական մարմինը, որտեղ գտնվում է երեխան, երեխային կամավոր վերադարձնելու համար **ձեռնարկում է բոլոր համապատասխան միջոցները** կամ կարգադրում է դրանք ձեռնարկել: (Հոդված 10) 8. Պայմանավորվող պետությունների **դատական և վարչական մարմինները** երեխաներին վերադարձնելու համար ընթացակարգերում գործում են անհապաղ: Եթե համապատասխան դատական կամ վարչական մարմիններն ընթացակարգերն սկսվելուց հետո՝ 6 շաբաթվա ընթացքում, չեն գալիս որևէ եզրակացության, ապա դիմողը կամ	ՀՀ արդարադատության նախարարություն Պայմանավորվող պետությունները նշանակում են **Կենտրոնական մարմին**՝ Կոնվենցիայով նման իրավասու մարմինների վրա դրված պարտականությունները կատարելու համար: (Հոդված 6)

	առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված կենտրոնական մարմին է նշանակում ՀՀ արդարադատության նախարարությունը:	հայցվող Պետության Կենտրոնական Պետությունը, իր սեփական նախաձեռնությամբ կամ հայցող պետության Կենտրոնական մարմնի խնդրանքով, իրավունք ունեն բացատրություններ պահանջելու ձգձգման պատճառների մասին: Եթե պատասխանը ստանում է հայցվող Պետության Կենտրոնական մարմինը, ապա նա պատասխանը փոխանցում է հայցող Պետության Կենտրոնական մարմնին կամ դիմողին՝ կախված հանգամանքներից: (Հոդված 11) Եթե երեխան ապօրինաբար տեղափոխվել կամ պահվել է երեխայի գտնվելու վայրի պետության դատական կամ վարչական մարմիններում ընթացակարգերը սկսելու պահին անօրինական տեղափոխման կամ պահելու տարվա ամիս-ամսաթվից անցել է 1 տարուց պակաս, համապատասխան մարմինները կարգադրություն են անում երեխային անհապաղ վերադարձնելու մասին: Դատական կամ վարչական մարմինները նույնիսկ այն դեպքերում, երբ ընթացակարգերը սկսվել են նախորդ կետում նշված մեկամյա ժամկետն անցնելուց հետո, նույնպես կարգադրություն են անում երեխային վերադարձնելու մասին, եթե միայն ապացուցված չէ, որ երեխան արդեն լիովին համակերպվել է իր նոր միջավայրին: Եթե դատական կամ վարչական մարմինները հայցվող Պետությունում հիմքեր ունեն հավատալու, որ երեխան դուրս է բերվել այլ Պետություն, նրանք կարող են դադարեցնել ընթացակարգերը կամ մերժել երեխայի վերադարձման մասին դիմումը: (Հոդված 12) 9. Հայցվող Պետության դատական կամ վարչական մարմինները պարտավորված չեն կարգադրություններ անել երեխային վերադարձնելու մասին, եթե երեխայի վերադարձին դեմ հանդես եկող անձը, հաստատությունը կամ այլ մարմինն ապացուցում են, որ. երեխայի նկատմամբ խնամք իրականացնող անձը, հաստատությունը կամ այլ մարմինը տեղափոխման կամ պահելու պահին փաստացի չեն իրականացրել խնամակալության իրավունքները, կամ համաձայնություն են տվել, կամ հետագայում ընդունել են տեղափոխման կամ պահելու փաստը, գոյություն ունի լուրջ վտանգ, որ երեխայի վերադարձը ֆիզիկական կամ հոգեկան վնաս կհասցնի կամ այլ ճանապարհով երեխային կդնի անտանելի իրավիճակի մեջ: Դատական կամ վարչական մարմինները կարող են նաև մերժել երեխայի վերադարձման մասին կարգադրություն անելը, եթե նրանք պարզում են, որ երեխան դեմ է վերադարձին և հասել է այնպիսի տարիքի և հասունության մակարդակի, որ նպատակահարմար է հաշվի առնել նրա կարծիքը: Քննարկելով նշված հանգամանքները՝ դատական կամ վարչական մարմիններն ուշադրություն են դարձնում երեխայի մշտական բնակության երկրի Կենտրոնական մարմնի կամ այլ իրավասու մարմնի կողմից տրամադրված՝ երեխայի սոցիալական ծագմանը վերաբերող տեղեկատվությանը: (Հոդված 13) 10. Պարզելու համար, թե արդյոք առկա՞ է անօրինական տեղափոխման կամ պահման փաստ, հայցվող Պետության դատական կամ վարչական մարմինները կարող են ուղղակի հաշվի առնել երեխայի մշտական բնակության Պետության իրավունքը և այնտեղ պաշտոնապես ճանաչված կամ չճանաչված դատական կամ վարչական որոշումները՝ առանց դիմելու տվյալ իրավունքը ստուգելու կամ օտարերկրյա որոշումը ճանաչելու հատուկ ընթացակարգերի, որոնք այլ կերպ կիրառելի կլինեն: (Հոդված 14) Դատական կամ վարչական մարմինները նախքան երեխային վերադարձնելու մասին կարգադրություն անելը կարող են դիմողից խնդրել՝ երեխայի մշտական բնակության Պետության մարմիններից ստանալ որևէ որոշում կամ այլ հաստատում այն մասին, որ տեղափոխումը կամ պահելը անօրինական է, եթե նման որոշումը կամ հաստատումը կարող է ձեռք բերվել այդ Պետությունում: Կենտրոնական մարմինները հնարավորին չափ աջակցում են դիմողին նման որոշում կամ հաստատում ստանալու գործում: (Հոդված 15) 11. Երեխայի անօրինական տեղափոխման կամ պահելու մասին տեղեկություն ստանալուց հետո այն պետության դատական կամ վարչական մարմինները, որի տարածք է տեղափոխվել երեխան, կամ որի տարածքում նա պահվում է, չեն որոշելու խնամակալության իրավունքի մասին հարցն այնքան ժամանակ, քանի դեռ չի պարզվել, որ, Կոնվենցիայի համաձայն, երեխան չպետք է վերադարձվի, կամ քանի դեռ ծանուցում ստանալուց հետո՝ ողջամիտ ժամկետի ընթացքում, Կոնվենցիային համապատասխան դիմում չի տրվել: (Հոդված 16) 12. Միայն այն փաստը, որ խնամակալության մասին որոշումը կայացվել է, կամ իրավունք է վերապահվել ճանաչելու այն հայցվող Պետությունում, հիմք չի հանդիսանում, Կոնվենցիային համապատասխան, երեխային վերադարձնելը մերժելու համար, սակայն հայցվող Պետության դատական կամ վարչական մարմինները Կոնվենցիան կիրառելիս կարող են ուշադրություն դարձնել այդ որոշման հիմքերին: (Հոդված 17) Դրույթները չեն սահմանափակում դատական կամ վարչական մարմինների՝ ցանկացած ժամանակ երեխային վերադարձնելու մասին կարգադրություն անելու մասին լիազորությունները: (Հոդված 18) Երեխային վերադարձնելու մասին Կոնվենցիային համապատասխան ընդունված որոշումը չպետք է դիտվի որպես խնամակալության մասին ցանկացած հարցի կարևորությունը գնահատելու սահմանում: (Հոդված 19) Երեխայի վերադարձը կարող է մերժվել, եթե դա չի թույլատրվում հայցվող Պետության հիմնարար սկզբունքներով, որոնք վերաբերում են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը: (Հոդված 20) 13. **Տեսակցության իրավունքի** արդյունավետ իրականացումը կազմակերպելու կամ ապահովելու համար պայմանավորվածություն ձեռք բերելու մասին դիմումը կարող է ներկայացվել Կենտրոնական մարմիններին այն կարգով, որով ներկայացվում է երեխային վերադարձնելու մասին դիմումը: Կենտրոնական մարմինները կապված են՝ տեսակցության իրավունքների խաղաղ իրականացման և այն պայմանների կատարմանն օժանդակելու գործում համագործակցության պարտավորություններով, որոնց կարող է ենթակա լինել այդ իրավունքների իրականացումը: Կենտրոնական մարմինները քայլեր են ձեռնարկում նման իրավունքների իրականացման բոլոր խոչընդոտները հնարավորին չափ վերացնելու համար: Կենտրոնական մարմիններն անմիջականորեն կամ միջնորդների միջոցով կարող են նախաձեռնել գործ հարուցելը կամ աջակցել գործ հարուցելուն՝ նպատակ ունենալով կազմակերպել կամ պաշտպանել այդ իրավունքները և ապահովել այն պայմանների պահպանումը, որոնց կարող է ենթակա լինել այդ իրավունքների իրականացումը: (Հոդված 21) 14. Կոնվենցիայի առարկային առնչվող դատական կամ վարչական ընթացակարգերի հետ կապված վճարումներն ու ծախսերը երաշխավորելու համար չի պահանջվում որևէ՝ նախատեսված ապահովագրություն, պարտատոմս կամ ավանդ: (Հոդված 22) 15. Կոնվենցիայի համատեքստում որևէ օրինականացում կամ համանման **ձևականություններ** չեն կարող պահանջվել: (Հոդված 23) 16. Ցանկացած դիմում, հաղորդագրություն կամ այլ փաստաթուղթ հայցվող Պետության Կենտրոնական մարմնին ուղարկվում են բնագրի **լեզվով** և ուղեկցվում են հայցվող Պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից մեկի թարգմանությամբ, իսկ եթե դա հնարավոր չէ, անգլերեն կամ ֆրանսերեն թարգմանությամբ: Այնուամենայնիվ, պետությունը կարող է Կենտրոնական մարմնին ուղարկվող դիմումներում, հաղորդագրություններում կամ այլ փաստաթղթերում առարկել անգլերեն կամ ֆրանսերեն լեզուներից մեկի, բայց ոչ երկուսի օգտագործման դեմ: (Հոդված 24) 17. Պայմանավորվող պետությունների քաղաքացիները և այդ Պետություններում սովորաբար բնակվող անձինք իրավունք ունեն ցանկացած այլ պետությունում իրավաբանական օգնություն և խորհուրդ ստանալ Կոնվենցիայի կիրառման հետ կապված հարցերի շուրջ այն նույն պայմաններով, որոնցով նրանք կստանային իրավունքները այդ Պետությունների քաղաքացիներ կամ դրանց տարածքում սովորաբար բնակվող անձ հանդիսանալու դեպքում: (Հոդված 25) 18. Կոնվենցիայի կիրառման գծով յուրաքանչյուր Կենտրոնական մարմին կրում է իր սեփական **ծախսերը**: Կենտրոնական մարմինները և պետական մյուս ծառայությունները չեն պահանջում Կոնվենցիայով նախատեսված դիմումների հետ կապված որևէ **տուրքի** վճարում: Մասնավորապես, նրանք չեն կարող պահանջել դիմողի կողմից որևէ վճարում՝ որպես ընթացակարգերի ծախսեր կամ վճարումներ, կամ, եթե կիրառելի է, վճարումներ, որոնք առաջանում են փաստաբանների կամ խորհրդատուների մասնակցության պատճառով: Այնուամենայնիվ, նրանք կարող են պահանջել երեխայի վերադարձի իրականացման հետ կապված ծախսերի կամ ակնկալվող **ծախսերի փոխհատուցում**: Դատական կամ վարչական մարմինները երեխայի վերադարձը կարգադրելիս կամ Կոնվենցիայով տեսակցության իրավունքի վերաբերյալ կարգադրություն տալիս կարող են, անհրաժեշտության դեպքում, դիմողի կամ նրա անունից կրած անհրաժեշտ ծախսերի, այդ թվում՝ ճանապարհածախսի, երեխայի գտնվելու վայրը պարզելու համար կատարված վճարումների կամ կրած ծախսերի, դիմողի օրինական ներկայացուցչի ծախսերի և երեխայի վերադարձի համար կատարված ծախսերի հոգածությունը հանձնարարել այն անձին, որը տեղափոխել կամ պահել է երեխային կամ խոչընդոտել է երեխային տեսակցելու իրավունքի իրականացմանը: (Հոդված 26) 19. Եթե պարզվել է, որ Կոնվենցիայի պահանջները կատարված չեն, կամ որ դիմումն այլ կերպ բավարար չափով հիմնավորված չէ, Կենտրոնական մարմինը **պարտավոր չէ**	

		ընդունել դիմումը: Այդ դեպքում Կենտրոնական մարմինը պատճառների մասին անհապաղ տեղեկացնում է դիմողին կամ այն Կենտրոնական մարմնին, որի միջոցով փոխանցվել է դիմումը՝ կախված հանգամանքներից: (Հոդված 27) 20. Կենտրոնական մարմինը կարող է պահանջել, որ դիմումն ուղեկցվի **լիազորագրով**, որն իրեն իրավունք կտա գործելու դիմողի անունից կամ նշանակելու ներկայացուցիչ՝ այդ գործողություններն իրականացնելու համար: (Հոդված 28) 21. Ցանկացած դիմում, որը Կոնվենցիայի պայմանների համաձայն ներկայացվել է Կենտրոնական մարմնին կամ անմիջականորեն պետությունների դատական կամ վարչական մարմիններին իրեն կցված կամ Կենտրոնական մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերի կամ այլ տեղեկատվության հետ միասին, **պետք է ընդունելի լինի** պետությունների դատարաններում կամ վարչական մարմիններում: (Հոդված 30) 22. Կոնվենցիան գերակա ուժ կունենա Անչափահասների պաշտպանության առումով իրավասու մարմինների իրավունքների և կիրառելի իրավունքի մասին 1961թ. հոկտեմբերի 5-ի Կոնվենցիայի նկատմամբ այն հարցերում, որոնք մտնում են իր շրջանակի մեջ՝ այն կողմերի նկատմամբ, որոնք հանդիսանում են երկու Կոնվենցիաների կողմեր: Այլ դեպքերում Կոնվենցիան չի սահմանափակում որևէ միջազգային պայմանագրի կիրառումը, որը գործում է ծագման Պետության և հայցվող Պետության միջև, կամ հայցվող Պետության այլ իրավունքի կիրառումը անօրինական տեղափոխված կամ պահվող երեխային վերադարձնելու կամ տեսակցության իրավունքների կազմակերպման նպատակների համար: (Հոդված 34) 23. Կոնվենցիայում ոչինչ չի խոչընդոտում երկու կամ ավելի պետություններին երեխայի վերադարձին ենթակա այն սահմանափակումները նվազեցնելու համար համաձայնություն ձեռք բերել միմյանց միջև Կոնվենցիայի ցանկացած դրույթից խուսափելու համար, որը կարող է հանգեցնել նման սահմանափակման: (Հոդված 36)	
3.	**Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանադրություն** *ընդունված է՝ 22.07.1946, ուժի մեջ է՝ 04.05.1992* Ժողովուրդների առողջության պահպանման մակարդակի բարելավման համար միմյանց միջև և այլ երկրների հետ համագործակցելու նպատակով ընդունում է ԱՀԿ Սահմանադրությունը և որպես մասնագիտացված հաստատություն, հիմնում Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը:	1. Կոնվենցիայի նպատակներին հասնելու համար Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից իրականացվող գործառույթները ներառում են մոր և երեխայի առողջության, բարեկեցության և փոփոխվող միջավայրի հետ ներդաշնակ գոյատևելու կարողության բարելավմանը նպաստելը: (Հոդված 2) 2. Կազմակերպության գործունեությունն իրականացվում է Առողջապահության համաշխարհային ասամբլեայի, Գործադիր խորհրդի և Քարտուղարության կողմից: (Հոդված 9)	
4.	**Կոնվենցիա քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին** *ընդունված է՝ 07.10.2002, ուժի մեջ է՝ 19.02.2005* Ամրագրում է ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիների, ինչպես նաև նրանց տարածքում բնակվող այլ անձանց իրավական պաշտպանության, իրավական օգնության, քաղաքացիական և ընտանեկան գործերով իրավական հարաբերությունների, պետություններ որոշումները ճանաչելու և կատարելու, քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների դրույթներ:	1. **Ամուսնության պայմանները** ապագա ամուսիններից յուրաքանչյուրի համար որոշվում է այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է նա համարվում, իսկ քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ այն կողմի օրենսդրությամբ, որը համարվում է նրանց մշտական բնակության վայրը: Դրանից բացի՝ ամուսնության արգելքների վերաբերյալ պետք է պահպանվեն այն կողմի օրենսդրության պահանջները, որի տարածքում տեղի է ունենում ամուսնությունը: (Հոդված 29) 2. **Հայրության կամ մայրության ճանաչումն ու վիճարկումը** որոշվում է այն կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին համարվում է երեխան, իսկ նրա քաղաքացիությունը որոշելու անհնարինության դեպքում՝ այն կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին երեխան համարվում է ծնունդով: (Հոդված 34) 3. **Ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները**, այդ թվում՝ **երեխաների խնամքի** հետ կապված՝ ծնողների պարտականությունները, որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում նրանք ունեն համատեղ մշտական բնակության վայր, իսկ ծնողների և երեխաների համատեղ մշտական բնակության վայրի բացակայության դեպքում՝ նրանց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները որոշվում են այն կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է համարվում երեխան: Ալիմենտային պարտավորություններով, հայցվորի պահանջով, կիրառվում է այն կողմի օրենսդրությունը, որի տարածքում մշտապես բնակվում է երեխան: Ծնողների օգտին չափահաս երեխաների ալիմենտային պարտավորությունները, ինչպես նաև ընտանիքի այլ անդամների ալիմենտային պարտավորությունները որոշվում են այն կողմի օրենսդրությամբ, որի տարածքում նրանք համատեղ բնակության վայր են ունեցել: Համատեղ բնակության վայրի բացակայության դեպքում այդպիսի պարտավորությունները որոշվում են այն կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է համարվում հայցվորը: Ծնողների և երեխաների միջև իրավահարաբերությունների վերաբերյալ գործերով իրավասու է այն կողմի դատարանը, որի օրենսդրությունը ենթակա է կիրառման: Երեխաների դաստիարակության վերաբերյալ գործերով դատարանի որոշումների կատարումը իրականացվում է այն կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում երեխան բնակվում է: Կողմերը միմյանց օգնություն են ցույց տալիս ալիմենտների գանձման վերաբերյալ գործերով պատասխանողի հետախուզման գործում, երբ հիմք կա ենթադրելու, որ պատասխանողը գտնվում է մյուս կողմի տարածքում, և դատարանի կողմից որոշում է կայացվել նրա հետախուզում հայտարարելու մասին: (Հոդված 35) 4. **Խնամակալություն և հոգաբարձություն սահմանելը կամ դրանք վերացնելը** կատարվում են այն կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է համարվում այն անձը, որի նկատմամբ սահմանվում կամ վերացվում է խնամակալությունը կամ հոգաբարձությունը: Խնամակալի կամ հոգաբարձուի և խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձանց միջև իրավահարաբերությունները կարգավորվում են այն կողմի օրենսդրությամբ, որի հիմնարկը խնամակալ կամ հոգաբարձու է նշանակել: Խնամակալությունը կամ հոգաբարձությունը ստանձնելու պարտականությունը սահմանվում է այն կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է համարվում խնամակալ կամ հոգաբարձու նշանակվող անձը: Մի կողմի քաղաքացի համարվող անձի խնամակալ կամ հոգաբարձու կարող է նշանակվել մյուս կողմի քաղաքացին, եթե նա բնակվում է այն կողմի տարածքում, որտեղ իրականացվելու է խնամակալությունը կամ հոգաբարձությունը: (Հոդված 36) 5. **Խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու կամ դրանք վերացնելու գործերով իրավասու են** այն կողմի հիմնարկները, որի քաղաքացին է համարվում այն անձը, որի նկատմամբ սահմանվում կամ վերացվում է խնամակալությունը կամ հոգաբարձությունը, եթե կոնվենցիայով այլ բան սահմանված չէ: (Հոդված 37) 6. Խնամակալության կամ հոգաբարձության միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության դեպքում, ի շահ մի կողմի քաղաքացու, որի մշտական բնակության վայրը, գտնվելու վայրը կամ գույքը գտնվում են մյուս կողմի տարածքում, այս կողմի հիմնարկն անհապաղ ծանուցում է իրավասու հիմնարկին: Անհետաձգելի դեպքերում մյուս կողմն ինքը կարող է ձեռնարկել անհրաժեշտ ժամանակավոր միջոցներ իր օրենսդրության համապատասխան: Ընդ որում՝ նա պարտավոր է այդ մասին անհապաղ ծանուցել իրավասու հիմնարկին:	

		Այդ միջոցներն ուժը պահպանում են մինչև իրավասու հիմնարկի կողմից այլ որոշում ընդունվելը: (Հոդված 38) 7. Մի ող կողմի իրավասու հիմնարկը խնամակալությունը կամ հոգաբարձությունը մյուս կողմի հիմնարկին կարող է փոխանցել այն դեպքում, եթե խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող անձը այդ կողմի տարածքում բնակության վայր, գտնվելու վայր կամ գույք ունի: Խնամակալության կամ հոգաբարձության փոխանցումն ուժի մեջ է մտնում, երբ հայցվող կողմի հիմնարկն իր վրա է վերցնում խնամակալությունը կամ հոգաբարձությունը և այդ մասին ծանուցում է հայցող կողմի հիմնարկին: Հիմնարկը, որը ստանձնել է խնամակալությունը և հոգաբարձությունը, դրանք իրականացնում է իր կողմի օրենսդրության համապատասխան: (Հոդված 39) 8. **Որդեգրելը կամ դա վերացնելը** իրականացվում են այն կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է համարվում որդեգրողը որդեգրման կամ այն վերացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու պահին, եթե կողմի ներպետական օրենսդրությամբ, որի քաղաքացին է համարվում երեխան, այլ բան նախատեսված չէ: Եթե երեխան համարվում է մյուս կողմի քաղաքացի, ապա որդեգրման կամ դրա վերացման դեպքում անհրաժեշտ է ստանալ օրինական ներկայացուցչի և իրավասու պետական մարմնի համաձայնությունը, ինչպես նաև երեխայի համաձայնությունը, եթե դա պահանջվում է այն կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է համարվում նա: Եթե երեխան որդեգրվում է ամուսինների կողմից, որոնցից մեկը համարվում է մի կողմի քաղաքացի, իսկ երկրորդը՝ մյուս կողմի քաղաքացի, ապա որդեգրելը կամ դրա վերացնելը պետք է կատարվեն երկու կողմերի օրենսդրությամբ նախատեսված պայմաններին համապատասխան: Որդեգրման կամ դրա վերացման գործերով իրավասու է այն կողմի հիմնարկը, որի քաղաքացին է համարվում որդեգրողը որդեգրման կամ այն վերացնելու վերաբերյալ դիմում տալու պահին, իսկ վերը նշված դեպքում իրավասու է այն կողմի հիմնարկը, որի տարածքում ամուսիններն ունեն կամ ունեցել են վերջին համատեղ բնակության վայր կամ գտնվելու վայր: (Հոդված 40) 9. Կողմերից յուրաքանչյուրը Կոնվենցիայով նախատեսված պայմաններով ճանաչում և կատարում է մյուս կողմերի տարածքներում կայացված մի շարք որոշումները, մասնավորապես, քաղաքացիական և ընտանեկան գործերով կողմերի արդարադատության հիմնարկների որոշումները՝ ներառյալ այդպիսի գործերով դատարանի կողմից հաստատված հաշտության համաձայնությունները և դրամական պարտավորությունների վերաբերյալ նոտարական ակտերը: (Հոդված 54) 10. Եթե անձը հանրության համար վտանգավոր արարք կատարելու պահին, հայցվող կողմի օրենսդրության համաձայն, չի հասել այն տարիքին, որից սկսած՝ քրեական պատասխանատվություն է առաջանում, ապա քրեական հետապնդում իրականացնելը մերժվում է: (Հոդված 102)	
5.	**Լրացուցիչ արձանագրություն միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների** *ուժի մեջ է՝ 07.12.1993* Ապահովում է քաղաքացիական անձանց և մարտիկների՝ հաստատված սովորույթներից, մարդասիրության սկզբունքներից և հանրային խղճի պահանջներից բխող միջազգային իրավունքի սկզբունքների պաշտպանությունը:	1. **Օգնության ծանրոցները** բաշխելիս գերապատվությունը տրվում է այնպիսի անձանց, ինչպես երեխաներն են, հղի, ծննդկան կանայք և կերակրող մայրերը, որոնք չորրորդ կոնվենցիային կամ արձանագրությանը համապատասխան օգտվում են հատուկ արտոնություններից և հատուկ պաշտպանությունից: (Հոդված 70) 2. **Կանայք** օգտվում են **հատուկ հարգանքից**, և **ապահովվում է նրանց պաշտպանությունը**, մասնավորապես, **բռնաբարությունից**, **պոռնկության հարկադրելուց** և **անպարկեշտ ոտնձգությունների** ցանկացած այլ ձևերից: (Հոդված 76) 3. **Հղի կանանց և փոքրահասակ երեխաներ ունեցող այն մայրերի գործերը**, որոնցից կախված են այդ երեխաները, և որոնք ռազմական ընդհարման հետ կապված պատճառներով ենթարկվում են **ձերբակալման**, **կալանման** կամ **ներկալման**, **քննարկվում են առաջնահերթ կարգով**: Ընդհարման մեջ գտնվող կողմերը առավելագույն հնարավորության չափով կձգտեն **խուսափել** ռազմական ընդհարման հետ կապված **իրավախախտումների** համար **հղի կանանց կամ փոքրահասակ երեխաների այն մայրերի** նկատմամբ **մահվան դատավճիռ կայացնելուց**, որոնցից կախված են այդ երեխաները: Այդ կանանց նկատմամբ այդպիսի **իրավախախտումների համար մահվան դատավճիռն ի կատար չի ածվի**: (Հոդված 76) 4. **Երեխաներն օգտվում են հատուկ հարգանքից**, և ապահովվում է նրանց **պաշտպանությունն** ամեն կարգի **անպարկեշտ ոտնձգություններից**: Ընդհարման մեջ գտնվող կողմերը կապահովեն նրանց **անհրաժեշտ խնամքը և օգնությունը**, որոնք բխում են նրանց **տարիքից** կամ ցանկացած **այլ պատճառով**: Ընդհարման մեջ գտնվող կողմերը կձեռնարկեն գործնականում բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի **15 տարին չլրացած երեխաներն** անմիջական մասնակցություն չունենան **ռազմական գործողություններին**, և մասնավորապես, կողմերը ձեռնպահ կմնան իրենց **զինված ուժերի մեջ նրանց հավաքագրումից**: 15 տարեկանից բարձր, բայց դեռ **18 տարին չլրացած** անձանց թվից հավաքագրելիս, ընդհարման մեջ գտնվող կողմերը կձգտեն **նախապատվությունը** տալ առավել **ավագ տարիքի** անձանց: Եթե, բացառիկ դեպքերում, հակառակ վերոհիշյալ դրույթների, **15 տարին չլրացած** երեխաներն **անմիջական մասնակցություն** են ունենում ռազմական գործողություններին և ընկնում **հակառակ կողմի իշխանության տակ**, նրանք շարունակում են **օգտվել հատուկ պաշտպանությունից**, անկախ այն բանից՝ հանդիսանո՞ւմ են **ռազմագերիներ**, թե՞ ոչ: **Զինված ընդհարման** հետ կապված պատճառներով **ձերբակալման, կալանման կամ ներկալման** դեպքում երեխաները **պահվում** են մեծահասակների շենքերից **առանձին շենքերում**, բացի այն դեպքերից, երբ ընտանիքները տեղավորվում են առանձին և պահվում են որպես **առանձին ընտանիքներ**: **Զինված ընդհարման հետ կապված իրավախախտման** համար **մահվան դատավճիռն ի կատար չի ածվում** այն անձանց նկատմամբ, ում **18 տարին չի լրացել** իրավախախտումը կատարելու պահին: (Հոդված 77) 5. Ընդհարման մեջ գտնվող ոչ մի կողմ միջոցներ **չի ձեռնարկի օտարերկրյա պետություն տարահանելու երեխաներին**, **բացի** միայն իր **սեփական քաղաքացիներից**, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը վերաբերում է **ժամանակավոր տարահանմանը**, որն անհրաժեշտ է երեխաների առողջական վիճակի կամ նրանց բուժման կամ, եթե նրանք չեն գտնվում գրավյալ տարածքում՝ նրանց անվտանգության հետ կապված անհետաձգելի պատճառներով: Այն դեպքում, եթե կարող են **գտնվել ծնողները** կամ **օրինական խնամակալները**, այդպիսի տարահանման համար պահանջվում է նրանց **գրավոր համաձայնությունը**: Եթե այդպիսի անձինք չեն կարող գտնվել, ապա տարահանման համար պահանջվում է այն **անձանց գրավոր համաձայնությունը**, որոնք օրենքով կամ ավանդույթի համաձայն կրում են **երեխաների խնամքի** գլխավոր **պատասխանատվությունը**: Ցանկացած այդպիսի տարահանում անցկացվում է հովանավոր տերության **հսկողությամբ**՝ շահագրգիռ կողմերի հետ **համաձայնեցնելով**, այսինքն՝ **տարահանումն իրականացնող** կողմի, **երեխաներին ընդունող** կողմի և ցանկացած այն կողմերի հետ, որոնց քաղաքացիները տարահանվում են: Ամեն դեպքում ընդհարման մեջ գտնվող բոլոր կողմերը կձեռնարկեն **նախազգուշության** գործնականորեն բոլոր հնարավոր միջոցները՝ **խուսափելու տարահանման** համար սպառնալիք առաջացնելուց: (Հոդված 78) 6. **Տարահանման** իրականացման դեպքերում յուրաքանչյուր երեխայի **ուսումը**, ներառյալ՝ նրա **կրոնական և բարոյական դաստիարակությունը**, նրա **ծնողների ցանկության համաձայն**, ապահովվում է, քանի դեռ նա գտնվում է տարահանման մեջ, առավելագույն հնարավոր չափով **անընդհատ**: Տարահանված երեխաների **վերադարձն իրենց ընտանիքները և իրենց երկիրը** դյուրացնելու նպատակով, տարահանումն իրականացնող կողմի իշխանությունները, և երբ դա նպատակահարմար է՝ ընդունող կողմի իշխանությունները, յուրաքանչյուր երեխայի համար **լրացնում են քարտ**՝ լուսանկարներով հանդերձ, որը նրանք ուղարկում են Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կենտրոնական տեղեկատու գործակալություն: Յուրաքանչյուր քարտ պետք է բովանդակի, հնարավորության սահմաններում և երեխային վնաս հասցնելու վտանգի բացակայության դեպքում, սահմանված տեղեկատվություն: (Հոդված 78)	Կողմերը Կարմիր խաչի (Կարմիր մահիկի, Կարմիր առյուծի և արևի) ազգային ընկերությունների օգնությամբ ջանքեր կգործադրեն կոնվենցիաների և արձանագրության կիրառմանը և, մասնավորապես, հովանավոր տերությունների գործունեությանը նպաստելու նպատակով հատուկ անձնակազմ պատրաստելու համար:
6.	**Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա** *ուժի մեջ է՝ 23.02.2011* Ամրագրում է բռնությամբ անհետացումները	1. Յուրաքանչյուր Կողմ պետություն պետք է սահմանի **առանց խախտելու մյուս քրեական ընթացակարգերը՝ ծանրացուցիչ հանգամանքներ**. Մասնավորապես, հղի կանանց, անչափահասների, հաշմանդամների կամ այլ՝ մասնավորապես խոցելի անձանց՝ **բռնությամբ անհետացման գործողություն** կատարելու հետ կապված դեպքում: (Հոդված 7) 2. Յուրաքանչյուր Կողմ պետություն պետք է ձեռնարկի, իր քրեական օրենքի համաձայն, **անհրաժեշտ միջոցներ՝ կանխարգելելու և պատժելու** համար. **բռնությամբ անհետացած այն երեխաների անօրինական տեղափոխումը**, որոնց **հայրը, մայրը կամ օրինական խնամակալը ենթարկվել են բռնությամբ անհետացման**, կամ **երեխան ծնվել է բռնությամբ անհետացման ենթարկված մոր գերության** ընթացքում, ինչպես նաև վերը նշված **երեխաների ինքնությունը հաստատող փաստաթղթերը կեղծելը, թաքցնելը** կամ **ոչնչացնելը**: (Հոդված 25) 3. Յուրաքանչյուր Կողմ պետություն պետք է անհրաժեշտ **միջոցներ** ձեռնարկի **բռնությամբ անհետացած երեխաներին որոնելու**, նրանց **ինքնությունը հաստատելու** և իրենց	Կոնվենցիայով նախատեսված գործառույթներն իրականացնելու համար պետք է ստեղծվի **բռնությամբ անհետացման հարցերով Կոմիտե**: Կոմիտեն պետք է բաղկացած լինի բարոյական բարձր հատկանիշներով օժտված և մարդու իրավունքների ոլորտի ճանաչված 10 որակյալ

	կանխարգելելու և բռնությամբ անհետացման հանցագործության անպատժելիության դեմ պայքարելու դրույթներ:	**ընտանիքներ վերադարձնելու** ուղղությամբ՝ իրավական ընթացակարգին և կիրառվող միջազգային համաձայնագրերին համապատասխան: Կողմ պետությունները պետք է **միմյանց օժանդակեն բռնությամբ անհետացած երեխաների որոնման**, **ինքնության հաստատման** և **գտնվելու վայրի հայտնաբերման** հարցերում: (Հոդված 25) 4. Հաշվի առնելով բռնությամբ անհետացած երեխաների շահերը լավագույնս պաշտպանելու անհրաժեշտությունը և նրանց՝ ինքնությունը պահելու և վերականգնելու իրավունքը, ներառյալ նրանց քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը, ինչպես նախատեսված է օրենքով, Կողմ պետություններում, որոնք ճանաչում են որդեգրման համակարգը կամ երեխաներին խնամակալության հանձնման մյուս ձևերը, պետք է լինեն **իրավական ընթացակարգեր՝ վերանայելու որդեգրման և խնամակալության հանձնման ընթացակարգը** և անհրաժեշտության դեպքում **չեղյալ համարելու բռնությամբ անհետացման արդյունքում կատարված երեխաների որևէ որդեգրում կամ խնամակալության հանձնում**: (Հոդված 25) 5. **Երեխայի բարձրագույն շահերը պետք է առաջնային ուշադրության** արժանանան, և այն երեխան, **որն ընդունակ է ինքնուրույն կարծիք** հայտնելու, պետք է իրավունք ունենա **ազատորեն արտահայտելու** դա, որը պետք է պատշաճ կերպով հաշվի առնվի **երեխայի տարիքին և հասունության մակարդակին** համապատասխան: (Հոդված 25)	փորձագետներից, ովքեր պետք է աշխատեն՝ ներդնելով իրենց բոլոր հնարավորությունները, լինեն անկախ ու անկողմնակալ: Կոմիտեի անդամները պետք է ընտրվեն Կողմ պետությունների կողմից՝ աշխարհագրական հավասարաչափ բաշխմամբ: Պատշաճ կերպով պետք է հաշվի առնվեն իրավական փորձ ունեցող անձանց մասնակցության օգտակարությունը Կոմիտեի աշխատանքում և գենդերային ներկայացվածության հավասարակշռությունը: (Հոդված 26)
7.	**Եվրոպայի խորհրդի կոնվենցիա մարդկանց շահագործման (թրաֆիկինգ) դեմ պայքարի մասին** *ընդունված է՝ 16.05.2005, ուժի մեջ է՝ 01.08.2008* Կոչված է կանխարգելել մարդկանց շահագործումը և պայքարել դրա դեմ, պաշտպանել թրաֆիկինգ զոհերի իրավունքները, սահմանել զոհերի ու վկաների պաշտպանության և օգնության համընդգրկուն շրջանակ, ինչպես նաև ապահովել քննության և քրեական հետապնդման արդյունավետ միջոցներ, խթանել միջազգային համագործակցությունը մարդկանց շահագործման դեմ պայքարի ոլորտում:	1. Մարդկանց շահագործման կանխարգելման ու դրա դեմ պայքարի համար քաղաքականությունն ու ծրագրերը մշակելիս, իրականացնելիս և գնահատելիս յուրաքանչյուր կողմ պետք է հանդես գա **մարդու իրավունքների պաշտպանության**, ինչպես նաև **գենդերային խնդիրների առաջնայնության և երեխաների շահերի պաշտպանության** դիրքերից, ինչպես նաև պետք է մշակվի քայլեր՝ մարդկանց առևտրում **երեխաների խոցելիությունը նվազեցնելու ուղղությամբ**՝ մասնավորապես վերջիններիս համար ստեղծելով **պաշտպանական միջավայր**: (Հոդված 5) 2. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի կամ ամրապնդի **օրենսդրական, վարչական, կրթական, սոցիալական, մշակութային** և այլ միջոցները՝ վերացնելու համար մարդկանց, մասնավորապես **կանանց և երեխաների շահագործման բոլոր ձևերին նպաստող պահանջարկը**, որը հանգեցնում է մարդկանց շահագործման:(Հոդված 6) 3. Կողմերից յուրաքանչյուրը պետք է իր իրավասու մարմինները համալրի մարդկանց շահագործման կանխարգելման և դրա դեմ պայքարի, զոհերին, այդ թվում՝ երեխաներին հայտնաբերելու ու նրանց օգնություն ցուցաբերելու բնագավառում վերապատրաստված և որակավորված մասնագետներով և ապահովի տարբեր մարմինների համագործակցությունը ինչպես միմյանց միջև, այնպես էլ համապատասխան օժանդակող կազմակերպությունների հետ, այնպես որ զոհերի հայտնաբերման ընթացակարգն իրականացնելիս՝ պատշաճ կերպով հաշվի առնվի տուժած կանանց և երեխաների հատուկ վիճակը և հարկ եղած դեպքում նրանց տրամադրվի կացության թույլտվություն՝ ըստ սահմանված կարգի:(Հոդված 10) 4. Երբ **զոհի տարիքն անհայտ** է, և կան պատճառներ հավատալու, որ նա երեխա է, ապա **մինչև զոհի տարիքի մասին հավաստի տվյալներ ձեռք բերելը** վերջինս **կհամարվի երեխա** և **կօգտվի պաշտպանության հատուկ միջոցներից**:(Հոդված 10) 5. Այն բանից հետո, երբ չուղեկցվող երեխան կճանաչվի զոհ, յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որ տվյալ երեխան ներկայացված լինի այնպիսի **օրինական խնամակալի, կազմակերպության կամ մարմնի** կողմից, որը հանդես կգա **վերջինիս բարձրագույն շահերից** և ձեռնարկի անհրաժեշտ քայլեր նրա **անձը և ազգությունը հաստատելու** ուղղությամբ, գործադրի **ամեն ջանք** նրա **ընտանիքի գտնվելու վայրը** պարզելու ուղղությամբ, եթե դա բխում է **երեխայի լավագույն շահերից**: (Հոդված 10) 6. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի միջոցներ՝ մասնավորապես ապահովելու համար, որ զանգվածային լրատվամիջոցներով կամ այլ եղանակով չեն հրապարակվի ո՛չ մարդկանց շահագործման (թրաֆիկինգ) զոհ հանդիսացող երեխայի ինքնությունը, ո՛չ էլ այնպիսի մանրամասներ, որոնք թույլ կտան ճանաչել վերջինիս, բացառությամբ արտակարգ հանգամանքների, երբ դա կհեշտացնի հայտնաբերել ընտանիքի անդամներին կամ որևէ այլ կերպով կապահովի երեխայի բարեկեցությունն ու պաշտպանությունը: (Հոդված 11) 7. Յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի օրենսդրական կամ այլ անհրաժեշտ միջոցներ՝ զոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնմանը նպաստելու համար, այդ թվում՝ **պատշաճ կրթություն երեխաների համար**: (Հոդված 12) 8. Յուրաքանչյուր կողմ պետք է ապահովի, որ **զոհերին ծառայությունները** մատուցվեն **փոխհամաձայնության և իրազեկվածության** պայմաններում՝ պատշաճ ուշադրություն դարձնելով խոցելի իրավիճակում հայտնված անձանց **հատուկ կարիքներին** և **երեխաների իրավունքներին՝ կացարանի, կրթության և առողջության** պահպանման հարցերում: (Հոդված 12) 9. **Տուժած երեխաների** համար, երբ **իրավաչափորեն անհրաժեշտ** է, **կացության կարգավիճակ** պետք է տրամադրվի՝ **ելնելով երեխայի լավագույն շահերից**, և հարկ եղած դեպքում **երկարաձգվի**՝ համաձայն նույն պայմանների: (Հոդված 14) 10. Յուրաքանչյուր կողմ պետք է **ձեռնարկի օրենսդրական կամ այլ անհրաժեշտ միջոցներ հայրենադարձման ծրագրեր** մշակելու համար՝ ներգրավելով համապատասխան ազգային կամ միջազգային կառույցների ու հասարակական կազմակերպությունների: Յուրաքանչյուր կողմ պետք է գործադրի հնարավոր ամեն ջանք՝ նպաստելու համար **զոհերին վերադարձի** պետության հասարակությունում **վերաինտեգրմանը**, այդ թվում՝ **կրթական համակարգին և աշխատաշուկային** վերաինտեգրմանը, ինչը մասնավորապես կիրականացվի վերջիններիս կողմից **մասնագիտական հմտությունների** ձեռքբերմամբ և կատարելագործմամբ: Երեխաների համար այդ ծրագրերը պետք է նախատեսեն **կրթության իրավունքից** օգտվելու հնարավորություն, ինչպես նաև ապահովեն **անհրաժեշտ խնամք կամ ընդունելություն ընտանիքի** կողմից կամ համապատասխան խնամքով զբաղվող կառույցներ: (Հոդված 16) 11. Տուժած երեխաները **չպետք է վերադարձվեն** որևէ պետության, եթե **ռիսկերի և անվտանգության խնդիրների գնահատումը** հիմք է տալիս ենթադրելու, որ դա **չի բխում երեխայի լավագույն շահերից**: (Հոդված 16) 12. **Հանցագործությունների** համար պատիժ սահմանելիս **երեխայի նկատմամբ հանցավոր արարք կատարելը համարել ծանրացուցիչ հանգամանք**: (Հոդված 24) 13. Տուժած երեխայի համար պետք է ապահովվեն **հատուկ պաշտպանության միջոցներ**՝ ելնելով վերջինիս **լավագույն շահերից**: (Հոդված 28) 14. **Դատավարության** ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել տուժած **երեխաների կարիքներին** և **պաշտպանության հատուկ միջոցների** ապահովմանը: (Հոդված 30) 15. Կոնվենցիայի կողմերը կարող են քննարկել **անհայտ կորած անձանց**, մասնավորապես **անհայտ կորած երեխաների որոնման** հարցում իրենց **համագործակցությունն** ուժեղացնելու հնարավորությունը, եթե առկա տեղեկատվությունը հիմք է տալիս ենթադրելու, որ տվյալ անձը հանդիսանում է **թրաֆիկինգի զոհ**: Այս նպատակով կողմերը կարող են միմյանց հետ կնքել **երկկողմ** կամ **բազմակողմ** պայմանագրեր: (Հոդված 33)	Պատասխանատու մարմինը **Կողմերի կոմիտեն** է, որը կազմված է Կոնվենցիայի կողմ հանդիսացող՝ **Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում** ներկայացված անդամ պետությունների ներկայացուցիչներից, ինչպես նաև Կոնվենցիայի Կողմ հանդիսացող այն պետությունների ներկայացուցիչներից, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ չեն:
8.	**Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին** *ընդունված է՝ 30.03.2007, ուժի*	1. Կոնվենցիայի կիրարկման համար օրենսդրություն և ռազմավարություններ մշակելիս ու իրականացնելիս, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց ն առնչվող հիմնահարցերի վերաբերյալ այլ որոշումներ կայացնելիս մասնակից պետությունները պետք է խորհրդակցեն հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների հետ նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների միջոցով, և ակտիվորեն ներգրավեն նրանց այդ գործընթացներում: (Հոդված 4)	Մասնակից պետությունները, համաձայն իրենց կազմակերպչական համակարգի, պետք է կառավարությունում սահմանեն համապատասխան շրջանակներ, որոնք կգբաղվեն Կոնվենցիայի կիրարկման

	մեջ է՝ 22.10.2010 Կոչված է աջակցել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեքորեն և հավասարապես օգտվել մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից, ինչպես նաև ապահովել հարգանքը նրանց արժանապատվության նկատմամբ:	2. Պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող երեխաների՝ մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով օգտվելը: (Հոդված 7) 3. Հաշմանդամություն ունեցող երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում երեխայի բարձրագույն շահերը համարվում են առաջնահերթ: (Հոդված 7) 4. Պետությունները հաշմանդամություն ունեցող երեխաներին ապահովում են իրենց վերաբերող հարցերի շուրջ կարծիքներն ազատ արտահայտելու իրավունքով, նրանց տեսակետներին տրվում է տարիքին ու հասունությանը համապատասխան կշիռ մյուս երեխաներին հավասար հիմունքներով, և այդ իրավունքն իրականացնելու համար տրամադրվում է հաշմանդամությանը անհրաժեշտ ու տարիքին համապատասխան աջակցություն: (Հոդված 7) 5. Պետությունները պարտավորվում են անհապաղ, արդյունավետ և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, որպեսզի նպաստեն հարգալից վերաբերմունքի սերմանմանը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների նկատմամբ կրթական համակարգի բոլոր մակարդակներում, այդ թվում՝ երեխաների մեջ, դեռ վաղ հասակից: (Հոդված 8) 6. Պետություններն արդյունավետ կերպով կիրարկում են կանանց ու երեխաներին վերաբերող օրենսդրություն և ռազմավարություն, որպեսզի ապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց դեմ կիրառված շահագործման, բռնության կամ դաժան վերաբերմունքի ցանկացած դեպքի բացահայտումը, հետաքննումը, անհրաժեշտության դեպքում՝ նաև դատապարտումը: (Հոդված 16) 7. Հաշմանդամություն ունեցող երեխաները գրանցվում են ծնվելուց անմիջապես հետո, ի ծնե ունեն անուն ու քաղաքացիություն ստանալու իրավունք և, հնարավորության դեպքում, իրենց ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի տակ գտնվելու իրավունք: (Հոդված 18) 8. Պետությունները ձեռնարկում են արդյունավետ ու անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ճանաչվեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները՝ ազատ ու պատասխանատու կերպով որոշելու իրենց երեխաների թիվը և նրանց ծննդյան միջև ընկած ժամանակահատվածները, տարիքին համապատասխան տեղեկատվություն, վերարտադրողական վարքագծի ու ընտանիքի պլանավորման դաստիարակություն ստանալու, ինչպես նաև տրամադրվեն իրավունքների իրականացման համար անհրաժեշտ միջոցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, ներառյալ երեխաները, պաշտպանեն մայրանալու և հայրանալու իրավունքը մյուսների հետ հավասար հիմունքներով: (Հոդված 23) 9. Պետություններն ապահովում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու պարտականությունները՝ կապված երեխաների խնամակալության, հովանավորության, հոգաբարձության, որդեգրման կամ նման այլ ինստիտուտների հետ, եթե տվյալ հասկացությունները գոյություն ունեն ներպետական օրենսդրության մեջ. բոլոր դեպքերում երեխայի բարձրագույն շահերը համարվում են առաջնահերթ: Պետությունները համապատասխան աջակցություն են ցուցաբերում հաշմանդամություն ունեցող անձանց երեխաների դաստիարակության հետ կապված իրենց պարտականությունները կատարելիս: (Հոդված 23) 10. Պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող երեխաներն օգտվեն ընտանեկան կյանքի իրավունքներից: Այս իրավունքներն իրականացնելու նպատակով, և որպեսզի կանխեն այնպիսի երևույթները, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող երեխաներին թաքցնելը, լքելը, նրանց նկատմամբ պարտականությունները չկատարելը և խտրականության ենթարկելը, պետությունները պարտավորվում են հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին վաղ փուլում տալ սպառիչ տեղեկատվություն, մատուցել ծառայություններ և ցուցաբերել աջակցություն: (Հոդված 23) 11. Պետություններն ապահովում են, որ երեխան չբաժանվի ծնողներից իր կամքին հակառակ՝ բացի այն դեպքերից, երբ դատական հսկողություն իրականացնող մարմինները, կիրառելի օրենսդրության ու ընթացակարգերի համաձայն, որոշում են կայացնում, որ նման բաժանումն անհրաժեշտ է՝ ելնելով երեխայի բարձրագույն շահերից: Ոչ մի դեպքում երեխան չպետք է բաժանվի ծնողներից երեխայի կամ ծնողներից մեկի կամ երկուսի հաշմանդամության պատճառով: (Հոդված 23) 12. Երբ հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիքն ի վիճակի չէ խնամելու նրան, պետությունները քայլեր են ձեռնարկում նրան խնամելու այլ միջոցներ տրամադրելու ուղղությամբ, մասնավորապես՝ հեռավոր հարազատների միջոցով, իսկ նման հնարավորություն չլինելու դեպքում՝ տվյալ համայնքում ապրող այլ ընտանիքում տեղավորելով: (Հոդված 23) 13. Պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը: Այս իրավունքն առանց խտրականության և հավասար հնարավորություններով իրականացնելու համար պետություններն ապահովում են կրթության բոլոր ոլորտները ներառող համակարգը բոլոր մակարդակներում, ինչպես նաև՝ կրթությունը ամբողջ կյանքի ընթացքում, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք չմեկուսացվեն ընդհանուր կրթական համակարգից հաշմանդամության պատճառով, և որ հաշմանդամություն ունեցող երեխաները չզրկվեն անվճար ու պարտադիր՝ տարրական կամ միջնակարգ կրթություն ստանալու իրավունքից հաշմանդամության պատճառով: (Հոդված 24) 14. Պետությունները պետք է հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տան սովորելու կյանքի ու սոցիալական զարգացման հմտությունները՝ աջակցելով նրանց լիակատար ու հավասար մասնակցությանը կրթական համակարգում ու հասարակական կյանքում՝ որպես լիիրավ անդամներ: Այս նպատակով պետություններն իրականացնում են անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում. Ապահովում է, որ կույր, խուլ կամ կույր ու խուլ անձանց, մասնավորապես երեխաների ուսուցումը կատարվի տվյալ հաշմանդամություն ունեցող անձի համար ամենահարմար լեզվով, հաղորդակցության մեթոդներով ու միջոցներով և այնպիսի միջավայրում, որն առավելագույնս կնպաստի ուսումնական ու սոցիալական զարգացմանը: (Հոդված 24) 15. Պետությունները գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն առողջապահական ամենաբարձր չափորոշիչներին հասնելու իրավունք՝ առանց հաշմանդամության պատճառով խտրականության, ուստի ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձանց մատուցեն հաշմանդամության հատուկ կարիքներին անհրաժեշտ առողջապահական ծառայություններ, ներառյալ վաղ հայտնաբերումն ու միջամտությունը, ինչպես նաև՝ հետագա հաշմանդամությունը նվազեցնելուն ու կանխելուն միտված ծառայություններ նաև երեխաների ու տարեցների շրջանում: (Հոդված 25) 16. Նպատակ ունենալով հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տալ մյուսների հետ հավասար հիմունքներով մասնակցելու հանգստի, ժամանցային ու սպորտային միջոցառումներին՝ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ քայլեր՝ ապահովելու համար, որ հաշմանդամություն ունեցող երեխաներին մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով մատչելի լինեն խաղի, առողջարարական, ժամանցային ու սպորտային միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները, ներառյալ՝ դպրոցում նույն միջոցառումների իրականացումը: (Հոդված 30)	հետ կապված հարցերով և պատշաճ կերպով կուսումնասիրեն կառավարությունում համակարգման մեխանիզմների հաստատման կամ ստեղծման հնարավորությունները՝ նպաստելու համար համապատասխան աշխատանքների իրականացմանը տարբեր հատվածներում և մակարդակներում: (Հոդված 33) Քաղաքացիական հասարակությունը, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունները, պետք է ներգրավվեն ու մասնակցեն վերահսկման գործընթացին: (Հոդված 33)
9.	**Կոնվենցիա Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավական կարգավիճակի մասին** *ընդունված է՝ 14.11.2008, ուժի մեջ է՝ 15.07.2010* Կոչված է աշխատողների	1. Աշխատող միգրանտները և նրանց ընտանիքների անդամները, ընդունող կողմի միջազգային պայմանագրերին և օրենսդրությանը համապատասխան, օգտվում են ընդունող կողմում **երեխայի ծնունդը գրանցելու** իրավունքներից: (Հոդված 7)	Կոնվենցիայի դրույթների իրականացման ընթացքին վերաբերող հարցերը քննարկվում են ԱՊՀ պետությունների միգրացիոն մարմինների ղեկավարների խորհրդի, ինչպես նաև ԱՊՀ պետությունների բնակչության սոցիալական պաշտպանության, աշխատանքի և միգրացիայի հարցերով խորհրդակցական խորհրդի նիստերին: (Հոդված 26)

	միգրացիոն հոսքերն արդյունավետ կերպով կարգավորել, դրանց ծավալները, ուղղությունները և կազմը կողմերի սոցիալ-տնտեսական զարգացման շահերին համապատասխանեցնելուն:		
10.	**Համաձայնագիր ՀՀ կառավարության և Ուկրաինայի նախարարների կաբինետի միջև քաղաքացիների՝ առանց վիզաների այցելությունների մասին** *ընդունված է՝ 24.12.1999, ուժի մեջ է՝ 20.02.2002* Կարգավորում է երկու պետությունների քաղաքացիների փոխայցելությունների ռեժիմը:	1. Համաձայնագրի շրջանակներում արտասահման մուտք գործելու և արտասահմանից վերադառնալու համար **մինչև 16 տարեկան երեխաների** համար **վավերական փաստաթղթերն** են **ծննդյան վկայական** (միայն Ուկրաինայից դուրս գալու համար՝ օրինական ներկայացուցիչների ուղեկցությամբ) և **երեխայի երթևեկության փաստաթուղթը**: (Հավելված)	
11.	**Համաձայնագիր ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև Ասիական զարգացման բանկի մշտական առաքելության մասին** *ընդունված է՝ 30.01.2008, ուժի մեջ է՝ 03.06.2008* Ապահովում է ՀՀ-ում Ասիական զարգացման բանկի մշտական առաքելության պայմանները:	1. ԱԶԲ-ի պաշտոնյաները և աշխատակազմը, այդ թվում՝ ԱԶԲ-ի հանձնարարությունները կատարող փորձագետները, ՀՀ-ում և ՀՀ-ի հետ հարաբերություններում օգտվում են հետևյալ **արտոնություններից և անձեռնմխելիությունից**. ԱԶԲ-ի և Մշտական առաքելության **պաշտոնյաների** և **աշխատակազմի** վրա **չեն տարածվում պարտադիր սոցիալական վճարումների**, **երեխայի նպաստների**, **պարտադիր ապահովագրության և վճարումների** մասին ՀՀ-ի օրենքները, եթե Մշտական առաքելության պաշտոնյաները և աշխատակիցները ԱԶԲ-ի սոցիալական ապահովության համակարգի կամ այնպիսի համակարգի անդամներ են, որին ԱԶԲ-ը միացել է, և որը նախատեսում է բավարար նպաստներ: (Հոդված 8) 2. Որպես հավելում վերը նշված անձեռնմխելիության և արտոնությունների՝ Մշտական առաքելության ղեկավարին, այդ թվում՝ նրա բացակայության ժամանակ նրա անունից գործելու համար ԱԶԲ-ի կողմից նշանակված պաշտոնյային, և նրա ամուսնուն ու անչափահաս երեխաներին պետք է տրամադրվեն դիվանագիտական ներկայացուցիչներին միջազգային իրավունքի համաձայն տրամադրվող **արտոնություններ, անձեռնմխելիություն, ազատումներ և հնարավորություններ**: (Հոդված 8)	Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ՀՀ Կառավարության կողմից Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի ավարտի մասին գրավոր ծանուցումը ԱԶԲ-ի կողմից ստանալու օրվանից: (Հոդված 15)
12.	**Պայմանագիր ՀՀ և Ռումինիայի միջև քաղաքացիական և քրեական գործերով իրավական օգնության մասին** *ընդունված է՝ 25.03.1996, ուժի մեջ է՝ 08.10.1996* Կարգավորում է քաղաքացիական և քրեական գործերով իրավական օգնության ձևերը երկու երկրների միջև:	1. **Հայրության ճանաչման և վիճարկման** հետ կապված գործերով կիրառվում է այն պայմանավորվող կողմի օրենսդրությունը, որի քաղաքացի է հանդիսանում երեխան: Եթե **երեխան բնակվում է մյուս կողմի տարածքում**, ապա կիրառվում է վերջինիս օրենսդրությունը, եթե այն **երեխայի շահերի** պահպանման տեսակետից ավելի նպաստավոր է: Նման հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու **իրավասությունը** պատկանում է այն կողմի համապատասխան արդարադատության հիմնարկին, որի քաղաքացի է հանդիսանում երեխան: (Հոդված 30) 2. Եթե **երեխայի առնչությամբ ծագած վեճով** հայցվորը և պատասխանողը բնակվում են նույն կողմի տարածքում, ապա իրավասու են համարվում նաև այդ կողմի արդարադատության հիմնարկները: (Հոդված 30) 3. **Ծնողների և իրենց երեխայի միջև իրավահարաբերությունները** կարգավորվում են այն կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացի է հանդիսանում երեխան: Եթե երեխան բնակվում է մյուս կողմի տարածքում, ապա կիրառվում է վերջինիս օրենսդրությունը, եթե այն երեխայի շահերի համար ավելի նպաստավոր է: (Հոդված 31) 4. **Որդեգրման համար անհրաժեշտ պայմանները** որոշվում են որդեգրողի և որդեգրվողի ազգային օրենսդրությամբ: Նրանք նաև պետք է կատարեն իրենց յուրաքանչյուրի ազգային օրենսդրությամբ նախատեսված պարտադիր պահանջները: (Հոդված 33) 5. **Որդեգրման ձևը** որոշվում է այն կողմի օրենսդրությամբ, որի տարածքում այն իրականացվում է: (Հոդված 33) 6. **Որդեգրման հետևանքները և որդեգրողի ու որդեգրվողի իրավահարաբերությունները** կարգավորվում են որդեգրողի ազգային օրենսդրությամբ, իսկ եթե որդեգրումը կատարվել է ամուսինների համաձայնությամբ՝ ապա այն կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին են նրանք հանդիսանում: (Հոդված 33) 7. **Որդեգրման անհրաժեշտ պայմանների չկատարման** պատճառով դրա **անվավերության** հարցը որոշվում է վերը նշված օրենսդրությամբ, իսկ որդեգրման ձևի վերաբերյալ պահանջների չկատարման պատճառով՝ այն կողմի օրենսդրությամբ, որի տարածքում այն իրականացվում է: (Հոդված 33) 8. **Որդեգրման գործերով իրավասու** են այն կողմի արդարադատության հիմնարկները, որի քաղաքացին էր հանդիսանում որդեգրվողը՝ որդեգրման պահին: (Հոդված 33)	Իրավական օգնություն ցույց տալու հետ կապված բոլոր հարցերով երկու կողմերի արդարադատության հիմնարկները միմյանց հետ հաղորդակցվում են իրենց կենտրոնական մարմինների միջոցով, ՀՀ-ի համար՝ արդարադատության նախարարությունը կամ գլխավոր դատախազը, իսկ Ռումինիայի համար՝ արդարադատության նախարարությունը: (Հոդված 9)
13.	**Պայմանագիր ՀՀ և Լիտվայի հանրապետության միջև քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին** *ընդունված է՝ 15.09.2003, ուժի մեջ է՝ 08.07.2005* Կարգավորում է	1. **Հայրությունը հաստատելու և վիճարկելու** և տվյալ **ամուսնությունից երեխայի ծնվելը հաստատելու** վերաբերյալ գործերը լուծվում են այն պայմանավորվող կողմի օրենսդրության համապատասխան, որի քաղաքացին է հանդիսանում երեխան ծնունդով: (Հոդված 28) 2. **Իրավահարաբերությունները ծնողների և երեխաների միջև** որոշվում են այն կողմի օրենսդրությամբ, որի տարածքում նրանք համատեղ բնակության վայր ունեն: Եթե ծնողներից և երեխաներից որևէ մեկի բնակության վայրը գտնվում է մյուս կողմի տարածքում, ապա նրանց միջև իրավահարաբերությունները որոշվում են այն կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է հանդիսանում երեխան: (Հոդված 29) 3. **Իրավահարաբերությունները արտաամուսնական երեխայի և նրա մոր ու հոր միջև** որոշվում են այն կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է հանդիսանում երեխան: (Հոդված 30) 4. **Որդեգրելիս կիրառվում** է այն կողմի օրենսդրությունը, որի քաղաքացին է հանդիսանում որդեգրվողը: (Հոդված 32) 5. Եթե **երեխան որդեգրվում է ամուսինների կողմից**, որոնցից մեկը հանդիսանում է մի կողմի քաղաքացի, իսկ մյուսը՝ մյուս կողմի քաղաքացի, ապա որդեգրումը պետք է	Կողմերի արդարադատության հիմնարկները քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն են ցույց տալիս պայմանագրի դրույթներին համապատասխան: (Հոդված 2)

	քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական ոլորտներում երկու երկրների համագործակցությունը:	համապատասխանի կողմերից յուրաքանչյուրի տարածքում գործող օրենսդրության պահանջներին: (Հոդված 32) 6. Եթե **երեխան մի պայմանավորվող կողմի քաղաքացի** է, իսկ **որդեգրողը՝ մյուս** կողմի քաղաքացի, ապա որդեգրելու կամ դրա չեղյալ հայտարարելու դեպքում անհրաժեշտ է ստանալ երեխայի համաձայնությունը (եթե դա պահանջվում է այն կողմի օրենքով, որի քաղաքացին է նա հանդիսանում), նրա օրինական ներկայացուցչի և այդ կողմի իրավասու պետական մարմնի համաձայնությունը: (Հոդված 32) 7. **Որդեգրման մասին որոշումներ կայացնելու համար իրավասու** է այն կողմի արդարադատության հիմնարկը, որի քաղաքացին է հանդիսանում որդեգրվողը, իսկ եթե երեխան որդեգրվում է ամուսինների կողմից, որոնցից մեկը հանդիսանում է մի կողմի քաղաքացի, իսկ մյուսը՝ մյուս կողմի քաղաքացի, ապա այդ դեպքում իրավասու է այն կողմի հիմնարկը, որի տարածքում ամուսիններն ունեն կամ ունեին վերջին համատեղ բնակության վայր կամ գտնվելու վայր: (Հոդված 33)	
14.	**Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածու, Միջազգային պայմանագիր 43/173** *ընդունված է՝ 09.12.1988* Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանվող բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների մշակումը:	1. Օրենքի շրջանակներում կիրառվող և հատկապես կանանց, առանձնապես հղի կանանց և ծծմայրերի, ինչպես նաև երեխաների, դեռահասների, զառամյալների, հիվանդների կամ հաշմանդամների իրավունքներն ու հատուկ իրավիճակը պաշտպանելու համար նախատեսված միջոցները խտրական չեն համարվում: Նման միջոցների անհրաժեշտության ու կիրառման հարցը միշտ ենթակա է դատական կամ այլ մարմնի քննարկման: (Սկզբունք 5) 2. Համապատասխան իշխանությունները միջոցներ են ձեռնարկում, ազգային օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտության դեպքում օգնություն ապահովել ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձանց ընտանիքների անդամներին, որոնք գտնվում են նրանց խնամքի տակ, հատկապես անչափահաս անձանց, և առանձնակի ուշադրություն են դարձնում առանց հսկողության մնացած երեխաների պատշաճ խնամակալությանը: (Սկզբունք 31) 3. Եթե ձերբակալված կամ բանտարկված անձը անչափահաս է կամ ի վիճակի չէ գիտակցել իր իրավունքները, ապա իրավասու մարմինն իր նախաձեռնությամբ տեղեկացման պարտավորություն է ստանձնում ընտանիքի անդամներին կամ իր ընտրությամբ համապատասխան այլ անձանց տեղյակ պահելու կալանավորման, ձերբակալման կամ բանտարկվելու կամ էլ տեղափոխության և այն վայրի մասին, որտեղ նա պահվում է: Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի ծնողներին և խնամակալներին տեղյակ պահելուն: (Սկզբունք 16)	Գլխավոր ասամբլեան 6-րդ Կոմիտեի վրա դրել էր պատասխանատվություն՝ որևէ ձևով ձերբակալվող կամ կալանվող բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի մշակման համար ձևավորել հանձնաժողով:
15.	**ՄԱԿ-ի կոնվենցիա թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին** *ընդունված է՝ 20.12.1988, ուժի մեջ է՝ 12.12.1993* Ուղղված է ապօրինի շրջանառության դեմ և հաշվի է առնում հիմնահարցի տարբեր ասպեկտներն ընդհանրապես, և մասնավորապես նրանք, որոնք նախատեսված չեն թմրամիջոցներին և հոգեներգործուն նյութերին առնչվող գործող համաձայնագրերով:	1. Կողմերից յուրաքանչյուրը ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնցով իրենց դատական կամ համապատասխան լիազորություններով օժտված այլ իրավասու մարմինները թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության մեջ անչափահասների ներգրավումը և օգտագործումը համարեն ծանրացնող հանգամանք: (Հոդված 3)	Յուրաքանչյուր Կողմ, անհրաժեշտության սահմաններում, մշակում, իրականացնում կամ կատարելագործում է իրավապահ և այլ մարմինների աշխատակիցների հատուկ պատրաստության ծրագրեր՝ ներառյալ մաքսային մարմինները, որոնք պատասխանատու են թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի համար: (Հոդված 9)
16.	**Ծխախոտի դեմ պայքարի առողջապահության համաշխարհային կազմակերպության շրջանակային կոնվենցիա** *ընդունված է՝ 21.05.2003, ուժի մեջ է՝ 27.02.2005* Կոչված է սերունդներին պաշտպանել մարդկանց առողջության համար ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության քայքայիչ հետևանքներից, ինչպես նաև սոցիալական, բնապահպանական և տնտեսական հետևանքներից՝ ծխախոտի դեմ պայքարի միջոցների համար համապատասխան այնպիսի շրջանակներ ապահովելու միջոցով, որոնք ենթակա են իրականացման ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:	1. Յուրաքանչյուր կողմ համապատասխան կառավարական մակարդակում ձեռնարկում և իրականացնում է արդյունավետ օրենսդրական, գործադիր, վարչական կամ այլ միջոցներ ծխախոտային արտադրատեսակների վաճառքը ներքին օրենսդրությամբ, ազգային օրենսդրությամբ սահմանված տարիքին չհասած կամ 18 տարեկան չդարձած անձանց արգելելու համար: Այդ միջոցները կարող են ներառել պահանջ, որպեսզի ծխախոտի արտադրատեսակների բոլոր վաճառողները իրենց վաճառակետի ներսում տեսանելի մասում տեղադրեն պարզ հայտարարություն անչափահասներին ծխախոտային արտադրատեսակներ վաճառելու արգելքի մասին և, կասկածելու դեպքում, ծխախոտային արտադրատեսակների յուրաքանչյուր գնորդից պահանջեն օրենքով սահմանված չափահասությունը հաստատող փաստաթուղթ, ծխախոտային արտադրատեսակների ձև ունեցող կոնֆետների, խորտիկների, խաղալիքների կամ այլ առարկաների արտադրության և վաճառքի արգելում, որոնք գրավում են անչափահասների ուշադրությունը, և այնպիսի դրության ապահովում, որի պայմաններում իր իրավազորության ներքո գտնվող ծխախոտային արտադրատեսակների վաճառքի ավտոմատները անհասանելի լինեն անչափահասների համար և չխթանեն ծխախոտային արտադրատեսակների վաճառքը անչափահասներին: (Հոդված 16) 2. Յուրաքանչյուր կողմ արգելում է կամ նպաստում արգելմանը տարածելու բնակչության մեջ և հատկապես անչափահասների շրջանում անվճար ծխախոտային արտադրատեսակներ: (Հոդված 16) 3. Յուրաքանչյուր կողմ ձգտում է արգելել ծխախոտի վաճառքը հատով կամ փոքր փաթեթներով, որոնք մեծացնում են այդ արտադրատեսակների մատչելիությունը անչափահասների համար: (Հոդված 16) 4. Կողմերը ընդունում են, որ արդյունավետության բարձրացման համար, ծխախոտային արտադրատեսակների՝ անչափահասներին վաճառքի կանխարգելման միջոցները անհրաժեշտության դեպքում պետք է իրականացվեն կոնվենցիայում պարունակվող մյուս դրույթների հետ զուգակցված: (Հոդված 16)	Յուրաքանչյուր կողմ մշակում, իրագործում, պարբերաբար նորացնում և վերանայում է ծխախոտի դեմ պայքարի համակողմանի բազմաոլորտ ազգային ռազմավարությունները, պլանները և ծրագրերը Կոնվենցիային և արձանագրություններին համապատասխան, այդ նպատակին հասնելու համար յուրաքանչյուր Կողմ իր հնարավորություններին համապատասխան ստեղծում կամ ամրապնդում և ֆինանսավորում է ծխախոտի դեմ պայքարի ազգային համակարգման մեխանիզմը կամ համակարգող մարմինները: (Հոդված 5)

17.	**Կոնվենցիա կիբեռհանցագործությունների մասին** *ընդունված է՝ 23.11.2001, ուժի մեջ է՝ 01.02.2007* Կոչված է հասարակությանը պաշտպանել կիբեռհանցագործությունից համապատասխան օրենսդրության և միջազգային համագործակցության միջոցով:	1. Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրության համաձայն որպես քրեական հանցագործություն սահմանելու միտումնավոր և անօրեն կերպով կատարված հետևյալ գործողությունները. մանկական պոռնոգրաֆիայի արտադրությունը՝ համակարգչային համակարգի միջոցով տարածելու նպատակով, մանկական պոռնոգրաֆիայի առաջարկումը կամ մատչելի դարձնելը համակարգչային համակարգի միջոցով, մանկական պոռնոգրաֆիայի տարածումը կամ փոխանցումը համակարգչային համակարգի միջոցով, մանկական պոռնոգրաֆիայի հայթայթումը համակարգչային համակարգի միջոցով՝ իր կամ մեկ այլ անձի համար, մանկական պոռնոգրաֆիային տիրապետումը համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում: (Հոդված 9)	Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ լիազորելու համար իր իրավասու մարմիններին կարգավորել կամ նմանապես ձեռք բերել սահմանված համակարգչային տվյալների արագացված պաշտպանություն, մուտք գործել համակարգչային տվյալները, պատճենահանել այդ համակարգչային տվյալները և պահել պատճենները, ապահովել համապատասխան ձևով պահված համակարգչային տվյալների ամբողջականությունը, անհասանելի դարձնել կամ տեղափոխել համակարգչային տվյալները հասանելի համակարգչային համակարգ:
18.	**Կոնվենցիա ապաքաղաքացիության կրճատման մասին** *ընդունված է՝ 30.08.1961, ուժի մեջ է՝ 16.08.1994* Կոչված է կրճատելու ապաքաղաքացիությունը:	1. Պայմանավորվող պետության տարածքում ամուսնությունից ծնված երեխան, որի մայրն ունի այդ պետության քաղաքացիությունը, ծնվելիս ձեռք է բերում այդ քաղաքացիությունը, այլապես նա կդառնա քաղաքացիություն չունեցող անձ: (Հոդված 1) 2. Որևէ պետության տարածքում հայտնաբերված երեխան, հակառակ ապացույցների բացակայության դեպքում, համարվում է այդ տարածքում այդ պետության քաղաքացիություն ունեցող ծնողներից ծնված: (Հոդված 2) Այս դրույթները կիրառվում են միայն տվյալ պետության տարածքում՝ այդ պետության համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերված երեխաների նկատմամբ: (Հոդված 12) 3. Կոնվենցիայի համաձայն պետությունների պարտավորությունների սահմանման նպատակով ծնունդը նավի վրա կամ ինքնաթիռում համարվում է տեղի ունեցած համապատասխանաբար այն պետության տարածքում, որի դրոշի ներքո լողում է նավը կամ այն պետության տարածքում, որտեղ գրանցված է ինքնաթիռը: (Հոդված 3) 4. Եթե որևէ պետության օրենսդրության համաձայն արտամուսնական կապից ծնված երեխան կորցնում է այդ պետության քաղաքացիությունը հայրության ճանաչման հետևանքով, նրան հնարավորություն է ընձեռվում այդ քաղաքացիությունը վերականգնել համապատասխան մարմնին գրավոր դիմելու միջոցով, և նման դիմումը կանոնակարգող պայմանները չպետք է առավել խիստ լինեն, քան (ա) որ դիմումը ներկայացվի այդ պետության սահմանած ժամկետում, որն սկսվում է տասնութամյա հասակից ոչ ուշ և ավարտվում քսանմեկամյա հասակից ոչ շուտ, սակայն այնպես, որպեսզի շահագրգիռ անձին տրամադրվի առնվազն մեկ տարի, որի ընթացքում նա կարող է ինքը դիմում ներկայացնել՝ առանց դրա համար օրինական թույլտվություն ստանալու անհրաժեշտության, (բ) որ շահագրգիռ անձը մշտապես բնակվի այդ պետության տարածքում այդ պետության սահմանած ժամկետում, որը չպետք է գերազանցի դիմում ներկայացնելուն անմիջապես նախորդող հինգ տարին, իսկ ընդհանրապես չպետք է գերազանցի տասը տարին, (գ) որ տվյալ անձը դատապարտված չլինի ազգային անվտանգության դեմ ուղղված հանցագործության համար կամ քրեական մեղադրանքով դատապարտված չլինի ազատազրկման հինգ տարի կամ ավելի ժամկետով, նշված կետերը:(Հոդված 5) 5. Եթե որևէ պետության օրենսդրություն նախատեսում է իր քաղաքացիության կորուստը որևէ անձի ամուսնու կամ երեխաների կողմից, այդ անձի կողմից այդ քաղաքացիությունը կորցնելու կամ այդ անձին այդ քաղաքացիությունից զրկելու հետևանքով, այդպիսի կորուստը պայմանավորվում է նրանց կողմից այլ քաղաքացիություն ունենալու կամ ձեռք բերելու հանգամանքով: (Հոդված 6)	Պայմանավորվող պետությունները վեցերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո հնարավորինս շուտ աջակցում են ՄԱԿ-ի շրջանակներում այնպիսի մարմնի ստեղծմանը, որին կարող է դիմել Կոնվենցիայի հիման վրա արտոնություն հայցող անձը՝ իր դիմումը քննության առնելու և այն համապատասխան մարմնին ներկայացնելու կապակցությամբ աջակցության համար: (Հոդված 11)
19.	**Կոնվենցիա փախստականների կարգավիճակի մասին** *ուժի մեջ է՝ 04.10.1993* Կոչված է վերանայել ու ամրապնդել փախստականների կարգավիճակի վերաբերյալ միջազգային նախկին համաձայնագրերը և նման փաստաթղթերի շրջանակն ու դրանցով տրամադրվող պաշտպանությունը:	1. Պայմանավորվող պետություններն իրենց տարածքում գտնվող փախստականներին սեփական կրոնն ազատորեն դավանելու և սեփական երեխաների կրոնական ազատ դաստիարակության հարցում ցուցաբերում են առնվազն նույնքան բարեհաճ վերաբերմունք, որքան իրենց քաղաքացիներին: (Հոդված 4) 2. Ամեն դեպքում, ներպետական աշխատուժի շուկայի պաշտպանության նպատակով օտարերկրացիների կամ օտարերկրացիների զբաղվածության նկատմամբ կիրառվող սահմանափակիչ միջոցառումները չեն կիրառվում այն փախստականի նկատմամբ, ով արդեն ազատված է եղել դրանցից տվյալ պետության համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրը կամ եթե ունի բնակության երկրի քաղաքացիություն ունեցող մեկ կամ ավելի երեխաներ: (Հոդված 17) 3. Փաստաթուղթը տվող երկրում ընդունված կանոններով պայմանավորված՝ երեխաները կարող են գրանցվել ծնողի կամ, բացառիկ դեպքերում, մեկ այլ չափահաս փախստականի ճամփորդական փաստաթղթում: (Ցանկ, Կետ 3)	ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը կոչված է վերահսկելու փախստականների պաշտպանություն նախատեսող միջազգային կոնվենցիաները: Այս խնդրի լուծման համար կիրառվող միջոցառումների արդյունավետ համակարգումը կախված է պետությունների ու Գերագույն հանձնակատարի համագործակցությունից
20.	**Կոնվենցիա 1949 թվականի օգոստոսի 12-ի ժնևի կոնվենցիան պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին** *ընդունված է՝ 12.08.1949, ուժի մեջ է՝ 21.10.1950* Կոչված է պաշտպանելու այն անձանց, որոնք կոնֆլիկտի կամ օկուպացման դեպքում ինչ-որ պահ և ինչ-որ ձևով հայտնվում	1. Դեռևս խաղաղ ժամանակ Կողմերը, իսկ ռազմական գործողություններն սկսելուց հետո, կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կարող են իրենց սեփական տարածքում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օկուպացված տարածքներում ստեղծել այնպիսի կազմակերպված սանիտարական և անվտանգ գոտիներ ու տեղեր, որպեսզի պատերազմի գործողություններից պատսպարեն վիրավորներին և հիվանդներին, հաշմանդամներին, զառամյալներին, մինչև 15 տարեկան հասակի երեխաներին, հղի կանանց և մինչև 7 տարեկան հասակի երեխաներ ունեցող մայրերին: (Հոդված 14) 2. Կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կձգտեն կնքել տեղական համաձայնագրեր պաշարված կամ շրջապատված գոտուց վիրավորներին և հիվանդներին, հաշմանդամներին, զառամյալներին, երեխաներին և ծննդաբեր կանանց դուրս բերելու մասին և բոլոր դավանանքների պաշտամունքի սպասավորներին, սանիտարական անձնակազմին և սանիտարական գույքը այդ գոտին մուտք ունենալու մասին: (Հոդված 17) 3. Պայմանավորվող կողմը ազատ անցում կթույլատրի մինչև 15 տարեկան երեխաների, հղի կանանց և ծննդաբեր կանանց համար նախատեսված անհրաժեշտ սննդամթերք, առաքվող իրեր և կազդուրող միջոցներ պարունակող բոլոր ծանրոցներին: (Հոդված 23) 4. Կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ, որպեսզի պատերազմի հետևանքով որբացած կամ իրենց ընտանիքներից անջատված մինչև 15 տարեկան երեխաները չթողնվեն ինքնահոսի, և որպեսզի բոլոր հանգամանքներում դյուրացվի նրանց ապրուստը, նրանց կրոնների հետ կապված պարտականությունների կատարումը և նրանց դաստիարակությունը: Նրանց դաստիարակությունը, եթե դա հնարավոր է, կհանձնարարվի միևնույն մշակութային ավանդույթների մարդկանց: (Հոդված 24)	Կոնֆլիկտի հենց սկզբից և օկուպացման բոլոր դեպքերում կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերից յուրաքանչյուրը կհիմնադրի տեղեկատու բյուրո, որին կհանձնարարվի հավաքել և հանձնել տեղեկություններ իր իշխանության տակ գտնվող հովանավորվող անձանց մասին: (Հոդված 136)

	են կոնֆլիկտի մեջ գտնվող կողմի կամ օկուպացված այն տերության իշխանության ներքո, որի քաղաքացիները չեն հանդիսանում նրանք:	5. Կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կնպաստեն հովանավոր տերության համաձայնությամբ կոնֆլիկտի ժամանակ այդ երեխաներին ընդունելու չեզոք երկրում, եթե այդպիսին գոյություն ունի, և այն բանի երաշխիքով, որ կպահպանվեն առաջին պարբերության մեջ շարադրված սկզբունքները: (Հոդված 24) 6. Կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը կձգտեն ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի մինչև 12 տարեկան բոլոր երեխաների ինքնությունը պարզվի ճանաչման մեդալիոնի օգնությամբ կամ ցանկացած այլ միջոցով: (Հոդված 24) 7. Հովանավորվող անձանց՝ մինչև 15 տարեկան երեխաներին, հղի կանանց և մինչև 7 տարեկան հասակի երեխաներով մայրերին կտրվեն առավելություններ այնչափ, որչափ որ շահագրգիռ պետության քաղաքացիներին: Նրանց վիճակը սկզբունքորեն կշարունակվի կարգավորվել խաղաղ ժամանակ օտարերկրացիների հետ վարվելակերպին վերաբերող կանոններով: (Հոդված 38) 8. Օկուպացրած տերությունը պետք է իր ազգային և տեղական իշխանությունների օգնությամբ աջակցություն ցուցաբերի այն հիմնարկներին, որոնց հանձնարարված է երեխաների խնամքը և դաստիարակությունը, որպեսզի այդ հիմնարկների աշխատանքը հաջող ընթանա: (Հոդված 50) 9. Այդ տերությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի նպաստի երեխաների ինքնության պարզմանը և նրանց արյունակցական կապերի հաշվառմանը: Ոչ մի դեպքում չպետք է փոխի նրանց քաղաքացիական կացությունը, ոչ էլ նրանց գրանցի իրենից կախված կազմավորումների կամ կազմակերպությունների մեջ: (Հոդված 50) 10. Այն դեպքում, եթե տեղական հիմնարկները ի վիճակի չեն լինի կատարել այդ ֆունկցիաները, օկուպացրած տերությունը պետք է միջոցներ ձեռնարկի որբ երեխաների կամ պատերազմի հետևանքով իրենց ծնողներից անջատված երեխաների պահպանության և ուսուցման ուղղությամբ, եթե միայն նրանք ապահովված չեն լինի մոտիկ հարազատների կամ բարեկամների հոգատարությամբ, ուսուցումը պետք է կատարվի, հնարավորության սահմաններում, նրանց ազգության, լեզվի և կրոնի անձանց միջոցով: (Հոդված 50) 11. Կոնֆլիկտի հենց սկզբից և օկուպացման բոլոր դեպքերում կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերից յուրաքանչյուրը կհիմնադրի տեղեկատու բյուրո, որի հատուկ բաժինը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները պարզելու համար երեխաների ինքնությունը՝ նրանց ինքնության վերաբերյալ տարակուսանք ծագելու դեպքում: Նրանց հոր և մոր կամ մոտիկ այլ հարազատների մասին տվյալները, որոնք նրանք կունենան, պետք է մշտապես գրանցվեն: (Հոդված 50) 12. Օկուպացրած տերությունը չպետք է դժվարություններ հարուցի կիրառելու սննդի, բժշկական խնամքի և պատերազմի գործողություններից պաշտպանելու արտոնյալ միջոցներ, որոնք մինչև օկուպացումը կարող են ընդունվել մինչև 15 տարեկան հասակի երեխաների, հղի կանանց և մինչև 7 տարեկան հասակի երեխաներով մայրերի նկատմամբ: (Հոդված 50) 13. Ներկալման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում միևնույն ընտանիքի անդամները, և, հատկապես ծնողներն ու նրանց երեխաները, կպահվեն ներկալման միևնույն տեղում, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատանքը կամ առողջական վիճակն անհրաժեշտ են դարձնում նրանց ժամանակավոր անջատումը: Ներկալվածները կարող են պահանջել, որպեսզի ազատության մեջ առանց ծնողական խնամքի մնացած իրենց երեխաները ներկալվեն իրենց հետ միասին: (Հոդված 82) 14. Հղի, ծննդկան կանայք և մինչև 15 տարեկան երեխաները պետք է ստանան լրացուցիչ սնունդ իրենց ֆիզիկական պահանջմունքներին համապատասխան: (Հոդված 89) 15. Ներկալվածներին կտրամադրվեն բոլոր արտոնություններն այն բանի համար, որպեսզի նրանք կարողանան շարունակել իրենց ուսումնական պարապմունքները կամ ձեռնամուխ լինեն պարապմունքների: Պետք է ապահովվի երեխաների և դեռահասների ուսուցումը: Նրանք կարող են հաճախել ներկալման վայրերի ներսի կամ դրանցից դուրս գտնվող դպրոցները: (Հոդված 94) 16. Ներկալվածները պետք է հնարավորություն ունենան զբաղվելու ֆիզիկական վարժություններով, սպորտով և սպորտային խաղերով՝ բաց օդում: Այդ նպատակով ներկալման բոլոր վայրերում կառանձնացվեն բավականին ազատ հրապարակներ: Երեխաների և դեռահասների համար պետք է առանձնացվեն հատուկ տեղամասեր: (Հոդված 94) 17. Կոնֆլիկտի մեջ գտնվող կողմերը ջանքեր կգործադրեն ռազմական գործողությունների ժամանակ կնքելու համաձայնագրեր ներկալվածների որոշ կատեգորիաների, և հատկապես երեխաների, հղի կանանց և կրծքի երեխաներ կամ փոքրահասակ երեխաներ ունեցող մայրերի, վիրավորների և հիվանդների, ինչպես նաև ներկալման վայրում երկար ժամանակ գտնվող ներկալվածների ազատման, հայրենադարձության, բնակության վայրը վերադառնալու կամ չեզոք երկրում հոսպիտալացվելու մասին: (Հոդված 132)	
21.	**Համաձայնագիր ՀՀ և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին** *ընդունված է՝ 19.04.2013, ուժի մեջ է՝ 01.01.2014* Կոչված է ամրապնդելու ՀՀ-ի և ԵՄ-ի միջև համագործակցությունն անօրինական միգրացիայի դեմ պայքարում, ստեղծում է ընթացակարգեր այն անձանց հայտնաբերման և անվտանգ ու կանոնակարգված վերադարձի համար, որոնք չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում ՀՀ կամ ԵՄ անդամ պետություններից մեկի տարածք մուտք գործելու, այնտեղ գտնվելու կամ բնակվելու համար պահանջներին, և դյուրացնելու այդպիսի անձանց տարանցումը:	1. Հայաստանը հետ է ընդունում, անդամ պետության դիմումի հիման վրա և առանց հետագա ձևական պահանջների, բոլոր անձանց և նրանց անչափահաս չամուսնացած երեխաներին՝ անկախ նրանց ծննդյան վայրից կամ քաղաքացիությունից , ովքեր չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում հարցում ներկայացրած անդամ պետության տարածք մուտք գործելու, ներկա գտնվելու կամ բնակվելու գործող պայմաններին՝ պայմանով, որ ապացուցված է կամ կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, ներկայացված առերևույթ (prima facie) փաստարկների հիման վրա, որ նրանք Հայաստանի քաղաքացիներ են: (Հոդված 3) 2. ԵՄ անդամ պետությունը հետ է ընդունում, Հայաստանի դիմումի հիման վրա և առանց հետագա ձևական պահանջների՝ բացառությամբ այն պահանջների, բոլոր անձանց և անչափահաս չամուսնացած երեխաներին՝ անկախ նրանց ծննդյան վայրից կամ քաղաքացիությունից, բացի այն դեպքերից, երբ նրանք ունեն Հայաստանում բնակության անկախ իրավունք և, ովքեր չեն բավարարում կամ այլևս չեն բավարարում Հայաստանի տարածք մուտք գործելու, այնտեղ ներկա գտնվելու կամ բնակվելու գործող պայմաններին՝ պայմանով, որ ապացուցված է կամ կարող է հիմնավորված ձևով ենթադրվել, ներկայացված առերևույթ (prima facie) փաստարկների հիման վրա, որ նրանք այդ անդամ պետության քաղաքացիներ են: (Հոդված 5) 3. Հետընդունման դիմումը, հնարավորության սահմաններում, պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝ հետ ընդունվող անձի տվյալները (անունները, ազգանունները, ծննդյան տարեթիվը, եթե հնարավոր է՝ ծննդյան վայրը և բնակության վերջին վայրը) և, եթե կիրառելի է, անչափահաս չամուսնացած երեխաների և (կամ) ամուսինների տվյալները: (Հոդված 9) 4. Ցանկացած տեսակի անձնագիր (ազգային անձնագրեր, դիվանագիտական անձնագրեր, ծառայողական անձնագրեր, հավաքական անձնագրեր, փոխարինող անձնագրեր՝ ներառյալ երեխաների անձնագրերը) համարվում է քաղաքացիության մասին ապացույց: (Հավելված 1)	Անդամ պետության կամ ՀՀ դիմումի հիման վրա՝ Հայաստանը և անդամ պետությունը կազմում են կիրարկող արձանագրություն, որը, ի թիվս այլ հարցերի կարգավորում է իրավասու մարմինների նշանակումը: (Հոդված 20)
22.	**Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների**	1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, եթե անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու	Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով պայմանավորվող կողմերի ստանձնած

	պաշտպանության մասին փոփոխված 11-րդ արձանագրությամբ *ընդունված է՝ 04.11.1950, ուժի մեջ է՝ 26.04.2002* Կոչված է պաշտպանելու մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները:	Նպատակ ունի: (Հոդված 56) 2. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը: (Հոդված 67)	պարտավորությունների կատարումն ապահովելու համար հիմնվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Այն գործում է մշտական հիմունքով: (Հոդված 19) Դատարանի դատավորների թիվը հավասար է կողմերի թվին: (Հոդված 20) Խորհրդարանական վեհաժողովն ընտրում է յուրաքանչյուր կողմի դատավորին կողմի առաջադրած երեք թեկնածուների ցուցակից՝ քվեների մեծամասնությամբ: (Հոդված 22)
23.	**Արձանագրություն թիվ 7 մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ փոփոխված 11-րդ արձանագրությամբ** *ընդունված է՝ 22.11.1984, ուժի մեջ է՝ 01.07.2002* Ապահովում է 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ստորագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի որոշ իրավունքների և ազատությունների կոլեկտիվ իրականացումը:	1. Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում ամուսինները հավասար իրավունքներ և մասնավոր իրավական բնույթի հավասար պատասխանատվություն ունեն փոխադարձ հարաբերություններում և իրենց երեխաների հետ ունեցած հարաբերություններում: (Հոդված 5)	
24.	**Կոնվենցիա Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին** *ընդունված է՝ 29.05.1993, ուժի մեջ է՝ 01.06.2007* Ստեղծում է օտարերկրյա որդեգրումը երեխայի լավագույն շահերից ելնելով և միջազգային իրավունքով ճանաչված նրա հիմնական իրավունքների պահպանումով իրականացնելու Երաշխիքներ, և միջպետական համագործակցության համակարգ՝ երեխաների առևանգումը, վաճառքը կամ առևտուրը կանխելու համար: *Նաև՝* **««Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայով նախատեսված կենտրոնական մարմին նշանակելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 790-Ն, ընդունված է՝ 24.07.2008, ուժի մեջ է՝ 07.08.2008*	1. Կոնվենցիան տարածվում է միայն այն որդեգրումների վրա, որոնք մշտական կապ են ստեղծում ծնողների և երեխաների միջև: (Հոդված 2) 2. Որդեգրումը կատարվում է միայն այն դեպքում, եթե ծագման պետության իրավասու մարմինները հաստատել են, որ երեխան կարող է որդեգրվել, ծագման պետությունում երեխայի տեղավորման հնարավորությունների պատշաճ քննարկումից հետո որոշել են, որ օտարերկրյա որդեգրումը բխում է երեխայի լավագույն շահերից, համոզվել են, որ անձինք, հիմնարկներն ու մարմինները, որոնց համաձայնությունն անհրաժեշտ է որդեգրման համար, պատշաճ կերպով խորհրդատվություն են ստացել և տեղեկացված են եղել իրենց համաձայնության հետևանքների մասին, մասնավորապես՝ այն բանի առնչությամբ, թե արդյոք որդեգրումը կհանգեցնի երեխայի և նրա հարազատ ընտանիքի միջև իրավական կապի դադարեցման, թե ոչ: (Հոդված 4) 3. Որդեգրումը կատարվում է միայն այն դեպքում, եթե համոզվել են, որ որտեղ պահանջվում է, մոր համաձայնությունը տրվել է միայն երեխայի ծնվելուց հետո, և որ երեխայի տարիքը և հասունացման աստիճանը հաշվի առնելով՝ համոզվել են, որ երեխայի հետ խորհրդակցել են և նրան պատշաճ կերպով տեղեկացրել են որդեգրման հետևանքների և որդեգրմանը նրա համաձայնության անհրաժեշտության մասին, եթե նման համաձայնություն պահանջվում է հաշվի են առնվել երեխայի ցանկությունը և կարծիքը, որդեգրման վերաբերյալ երեխայի համաձայնությունը, եթե նման համաձայնությունը պահանջվում է, ստացվել է կամքի ազատ արտահայտմամբ՝ պատշաճ իրավական ձևով, որն արտահայտված կամ հաստատված է գրավոր, և նման համաձայնությունը չի տրվել վարձատրության կամ որևէ տեսակի փոխհատուցման դիմաց: (Հոդված 4) 4. Որդեգրումը կարող է կատարվել միայն այն դեպքում, եթե ընդունող պետության իրավասու մարմինները որոշել են, որ երեխային թույլատրվում է կամ թույլատրվելու է մուտք գործել այդ պետություն և մշտապես բնակվել այնտեղ: (Հոդված 5) 5. Կենտրոնական մարմիններն անմիջականորեն կամ պետական մարմինների կամ իրենց պետությունում հավատարմագրված այլ մարմինների միջոցով ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները, մասնավորապես, այն բանի համար, որ տեղեկատվություն հավաքեն, պահպանեն և փոխանակեն երեխայի վիճակի և որդեգրող ապագա ծնողների մասին՝ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է որդեգրումը ձևակերպելու համար, հեշտացնեն, պահպանեն և արագացնեն որդեգրման ընթացակարգը, աջակցեն իրենց պետություններում որդեգրման հարցերով խորհրդատվության և որդեգրման իրականացումից հետո ծառայությունների զարգացմանը, միմյանց տրամադրեն օտարերկրյա որդեգրման փորձի վերաբերյալ ընդհանուր գնահատող զեկույցները. պատասխանեն, որքանով դա թույլատրված է իրենց պետության օրենքով, այլ կենտրոնական կամ պետական մարմինների կողմից որդեգրման բնագավառում որոշակի իրավիճակի մասին տեղեկատվություն տրամադրելու հիմնավորված խնդրանքներին: (Հոդված 9) 6. Երկու պետությունների կենտրոնական մարմինները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը, որպեսզի երեխայի համար ստանան ծագման պետությունից հեռանալու և ընդունող պետությունում մշտապես բնակվելու և այնտեղ մեկնելու թույլտվություն: (Հոդված 18) Ընդունող պետություն երեխայի տեղափոխումը կարող է իրականացվել միայն վերոնշյալ թույլտվությունը ստանալու դեպքում: Երկու պետությունների կենտրոնական մարմիններն ապահովում են, որ երեխայի տեղափոխումն իրականացվի անվտանգ և պատշաճ իրադրությունում և, եթե հնարավոր է, որդեգրած կամ որդեգրող ապագա ծնողների ուղեկցությամբ: (Հոդված 19) 7. Ցանկացած պետություն կոնվենցիայի ավանդապահին կարող է հայտնել, որ իր տարածքում մշտապես բնակվող երեխաների որդեգրումը կարող է տեղի ունենալ կենտրոնական մարմինների կողմից այն ծավալով, որը թույլատրվում է նրա պետության օրենքներով: (Հոդված 22) 8. Պայմանավորվող պետությունում որդեգրման ճանաչումը կարող է մերժվել միայն այն ժամանակ, եթե, հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը, որդեգրումն ակնհայտորեն հակասում է նրա պետական քաղաքականությանը: (Հոդված 24) 9. Որդեգրման ճանաչումը ներառում է երեխայի և նրան որդեգրած ծնողների միջև ծնող-երեխա իրավական հարաբերությունների ճանաչումը, երեխայի համար որդեգիր ծնողների պատասխանատվության ճանաչումը, երեխայի և նրա մոր ու հոր միջև նախկինում գոյություն ունեցող իրավահարաբերությունների դադարեցման ճանաչումը, եթե որդեգրումն այդպիսի հետևանքներ է առաջացնում այն պետությունում, որտեղ այն կատարվել է: (Հոդված 26)	**ՀՀ արդարադատության նախարարություն** Երեխաներին պաշտպանելու համար և կոնվենցիայի այլ նպատակներին հասնելու համար պետությունը նշանակում է **կենտրոնական մարմին**: (Հոդված 6,7) Ծագման և ընդունող պետությունների կենտրոնական մարմինները միմյանց տեղեկացված են պահում որդեգրման գործընթացի և դրա իրականացման համար ձեռնարկված միջոցների մասին, ինչպես նաև տեղավորման գործընթացի մասին, եթե պահանջվում է փորձաշրջան: (Հոդված 20) Պայմանավորվող պետությունում մշտապես բնակվող անձինք, որոնք ցանկանում են որդեգրել մեկ այլ պետությունում մշտապես բնակվող երեխայի, դիմում են իրենց մշտական բնակության վայրի պետության կենտրոնական մարմնին: (Հոդված 14) Եթե ընդունող պետության կենտրոնական մարմինը համոզվում է, որ դիմողները որդեգրելու իրավունք ունեն և կարող են դա անել, նախապատրաստում է զեկույց նրանց անձի, որդեգրում իրականացնելու իրավունքների և պիտանիության, կենսագրական տվյալների, բժշկական քարտի և ընտանիքի պատմության, սոցիալական շրջապատի, որդեգրման

	«Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կենտրոնական մարմին է նշանակում ՀՀ արդարադատության նախարարությունը:	10. Այն դեպքում, երբ որդեգրումը հանգեցնում է ծնողների և երեխայի միջև նախկինում գոյություն ունեցող ծնող-երեխա իրավահարաբերությունների դադարեցման, ընդունող պետությունում և ցանկացած այլ պետությունում, որտեղ որդեգրումը ճանաչվում է, երեխան օգտվում է նույնպիսի իրավունքներից, որոնք ծագում են յուրաքանչյուր նման Պետությունում տվյալ հետևանքներն ունեցող որդեգրումից: (Հոդված 26) 11. Այնտեղ, որտեղ ծագման պետությունում թույլատրված որդեգրումը ծնողների և երեխայի միջև նախկինում գոյություն ունեցող ծնող-երեխա իրավահարաբերությունների դադարեցման հետևանք չի առաջացնում, այն կարող է ընդունող պետությունում, որը, կոնվենցիայի համաձայն, ճանաչում է որդեգրումը, այդպիսի հետևանքներ առաջացնող որդեգրման վերածվել այն դեպքում, եթե դա թույլատրում է ընդունող պետության օրենքը, և եթե նման որդեգրման նպատակների համար ստացվել է կամ ստացվելու է այն անձանց, հիմնարկների ու մարմինների կամավոր համաձայնություն, որն անհրաժեշտ է որդեգրման համար, ինչպես նաև որդեգրման վերաբերյալ երեխայի համաձայնությունը, եթե նման համաձայնությունը պահանջվում է, որն ստացվել է կամքի ազատ արտահայտմամբ՝ պատշաճ իրավական ձևով՝ գրավոր արտահայտված կամ հաստատված, և նման համաձայնությունը չի տրվել վարձատրության կամ որևէ տեսակի փոխհատուցման դիմաց: (Հոդված 27) 12. Որդեգրող ապագա ծնողների և երեխայի ծնողների կամ ցանկացած այլ անձի միջև, որը հոգ է տանում երեխայի մասին, չպետք է շփումներ լինեն, քանի դեռ չեն հաստատել են, որ երեխան կարող է որդեգրվել, քանի դեռ ծագման պետությունում երեխայի տեղավորման հնարավորությունների պատշաճ քննարկումից հետո որոշել են, որ օտարերկրյա որդեգրումը բխում է երեխայի լավագույն շահերից: Համոզվել են, որ անձինք, հիմնարկներն ու մարմինները, որոնց համաձայնությունն անհրաժեշտ է որդեգրման համար, պատշաճ կերպով խորհրդատվություն են ստացել և տեղեկացված են եղել իրենց կամավոր համաձայնության հետևանքների մասին, մասնավորապես՝ այն բանի առնչությամբ, թե արդյոք որդեգրումը կհանգեցնի երեխայի և նրա հարազատ ընտանիքի միջև իրավական կապի դադարեցման, թե ոչ, համաձայնությունը չի տրվել և հետ չի վերցվել վարձատրության կամ որևէ տեսակի փոխհատուցման դիմաց, իսկ որտեղ պահանջվում է, մոր համաձայնությունը տրվել է միայն երեխայի ծնվելուց հետո, ինչպես նաև որոշել են, որ որդեգրող ապագա ծնողները որդեգրման իրավունք ունեն և կարող են դիմել նման քայլի, եթե միայն որդեգրումը տեղի չի ունենում ընտանիքի շրջանակներում, կամ եթե այդպիսի շփումը համապատասխանում է ծագման պետության իրավասու մարմնի կողմից սահմանված պայմաններին: (Հոդված 29)	պատճառների, օտարերկրյա որդեգրում իրականացնելու ունակության, ինչպես նաև այն երեխաների բնութագրի վերաբերյալ, որոնց համար նրանք պետք է հոգ տանեն: Նա զեկույցը փոխանցում է ծագման պետության կենտրոնական մարմնին: (Հոդված 15) Եթե ծագման պետության կենտրոնական մարմինը համոզված է, որ երեխան կարող է որդեգրվել, ապա նա նախապատրաստում է զեկույց, որը ներառում է տեղեկատվություն նրա անձի, որդեգրվելու հնարավորության, կենսագրական տվյալների մասին, սոցիալական շրջապատի, ընտանիքի պատմության, բժշկական քարտի մասին՝ ներառյալ երեխայի ընտանիքի վերաբերյալ այդ տեղեկությունները և երեխայի ցանկացած հատուկ պահանջները, պատշաճ կերպով հաշվի է առնում երեխայի դաստիարակությունը և նրա էթնիկական, կրոնական և մշակութային կապերն ու շրջապատը, համոզվում է, որ համաձայնությունը ստացվել է, որոշում է, մասնավորապես՝ երեխային և որդեգրում իրականացնող ապագա ծնողներին վերաբերող զեկույցի հիման վրա, բխո՞ւմ է արդյոք նախատեսված տեղափոխումը երեխայի լավագույն շահերից, ապա նա ընդունող պետության կենտրոնական մարմնին է փոխանցում երեխայի մասին իր զեկույցը, ապացույցը, որ ստացվել է անհրաժեշտ համաձայնությունը և տեղափոխման վերաբերյալ իր ընդունած որոշման հիմքերը՝ չբացահայտելով մոր և հոր ինքնության գաղտնիքը, եթե ծագման պետությունում դրանք չպետք է բացահայտվեն: (Հոդված 16) Ծագման պետությունում ցանկացած որոշում այն մասին, որ երեխան պետք է վստահված լինի որդեգրող ապագա ծնողներին, կարող է կայացվել միայն այն դեպքում, եթե այդ պետության կենտրոնական մարմինը համոզվել է որդեգրող ապագա ծնողների համաձայնության մեջ, ընդունող պետության կենտրոնական մարմինը հավանություն է տվել այդպիսի որոշմանը, որտեղ նման հավանություն տալը պահանջվում է այդ պետության օրենքով կամ ծագման պետության կենտրոնական մարմնի կողմից, երկու պետությունների կենտրոնական մարմինները համաձայնել են իրականացնել որդեգրումը, և որոշվել է, որ ենթադրյալ որդեգրող ծնողները որդեգրման իրավունք ունեն և կարող են դա անել, և որ երեխային թույլատրվում է կամ թույլատրվելու է մեկնել ընդունող պետություն և մշտապես բնակվել այնտեղ: (Հոդված 17)

			Եթե որդեգրումը տեղի է ունենում երեխային ընդունող պետությանը փոխանցելուց հետո, և այդ պետության կենտրոնական մարմինը պարզում է, որ որդեգրող ապագա ծնողների մոտ երեխայի շարունակական գտնվելը չի համապատասխանում երեխայի լավագույն շահերին, նման կենտրոնական մարմինը երեխային վերցնում է որդեգրող ապագա ծնողների մոտից և կազմակերպում է երեխայի նկատմամբ ժամանակավոր խնամք, ծագման պետության կենտրոնական մարմնի հետ խորհրդակցելով՝ անհապաղ կազմակերպում է երեխայի նոր տեղավորում՝ նրա որդեգրման նպատակով, կամ, եթե դա նպատակահարմար չէ, կազմակերպում է այլընտրանքային երկարաժամկետ խնամակալություն, որդեգրում տեղի չի կարող ունենալ, քանի դեռ ծագման պետության կենտրոնական մարմինը պատշաճ կերպով չի տեղեկացվել նոր՝ որդեգրող ապագա ծնողների մասին և որպես ծայրահեղ միջոց՝ կազմակերպում է երեխայի վերադարձը, եթե դա բխում է նրա շահերից: Կախված երեխայի տարիքից և հասունության աստիճանից՝ նրա հետ անց են կացնում խորհրդատվություն, որտեղ դա անհրաժեշտ է, և ստանում են նրա համաձայնությունը վերը նշված ձեռնարկվող միջոցների վերաբերյալ: (Հոդված 21) Իրավասու մարմիններն ապահովում են, որ պահպանվի երեխայի ծագման վերաբերյալ իրենց ունեցած տեղեկատվությունը, մասնավորապես՝ նրա ծնողների ինքնությանը վերաբերող տեղեկատվությունը, ինչպես նաև բժշկական քարտը: Նրանք ապահովում են, որ նման տեղեկատվությունը համապատասխան հսկողության ներքո մատչելի լինի երեխայի կամ նրա ներկայացուցիչների համար, որքանով դա թույլատրված է նման պետության օրենքով: (Հոդված 30)
25.	**«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտրական արձանագրություն** *ուժի մեջ է՝ 30.07.2005* Ուղղված է Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի նպատակների իրականացմանը՝ հատկապես մանկավաճառության, երեխաների	1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ, ցանկացած միջոցով երեխա առաջարկելը, փոխանցելը կամ ստանալը, երեխայի սեռական շահագործումը, վարձատրության դիմաց երեխայի օրգանների հանձնումը, հարկադիր աշխատանքներում երեխայի օգտագործումը, որդեգրմանը վերաբերող կիրառելի միջազգային իրավական ակտերի խախտումով, որպես միջնորդ՝ երեխայի որդեգրմանը համաձայնելուն անօրինական հակելը, երեխային առաջարկելը, ստանալը, փոխանցելը կամ տրամադրելը՝ երեխայի մարմնավաճառության նպատակներով, երեխաների պոռնոգրաֆիա արտադրելը, բաշխելը, տարածելը, ներմուծելը, արտահանելը, առաջարկելը, վաճառելը կամ պահելը, լրիվ չափով ընդգրկված լինեն իր քրեական իրավունքով՝ անկախ նրանից՝ այդ հանցագործությունները կատարվել են ազգային, թե անդրազգային մակարդակով կամ անհատական կամ կազմակերպված կարգով: (Հոդված 3) 2. Պետություններն արձանագրությամբ արգելվող պրակտիկայի զոհ դարձած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության համար քրեական դատավարության բոլոր փուլերում պատշաճ միջոցներ են ձեռնարկում, զոհ երեխաների խոցելիության ճանաչման և նրանց բացառիկ կարիքների ճանաչման համար ընթացակարգերի հարմարեցման, այդ թվում՝ որպես վկա՝ նրանց առանձնահատուկ պահանջների, զոհ երեխաներին իրենց իրավունքների, իրենց դերի մասին, պահելու, դատավարության ժամկետների և ընթացքի մասին և իրենց գործերով որոշում կայացնելու մասին տեղեկացման, այն բանի ապահովման, որ դատավարության ընթացքում զոհ երեխաների կարծիքները, պահանջները և հիմնահարցերը, այն դեպքերում, երբ շոշափվում են նրանց անձնական շահերը, ներկայացվեն և քննարկվեն ազգային օրենսդրության դատավարական նորմերին համապատասխան, դատավարության բոլոր փուլերում զոհ երեխաներին պատշաճ օժանդակություն ցույց տալու ծառայություններ տրամադրելու, անհրաժեշտության դեպքերում զոհ երեխաների անձնական կյանքի և անձի պաշտպանության և, ազգային օրենսդրության համապատասխան, այնպիսի տեղեկության անցանկալի տարածումից խուսափելու նպատակով միջոցներ ձեռնարկելու, որը կարող է հանգեցնել զոհ երեխաների անձի բացահայտմանը, անհրաժեշտության դեպքերում՝ վախեցնելուց և ներգործության միջոցներ կիրառելուց զոհ երեխաների, ինչպես նաև նրանց ընտանիքների և նրանց անունից հանդես եկող վկաների պաշտպանությունն ապահովելու, զոհ	

	մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի պրակտիկայից երեխաներին պաշտպանելու ոլորտներում:	երեխաներին փոխհատուցում տրամադրելու մասին գործերով որոշումներ կայացնելու և կարգադրությունների ու վճիռների կատարման չափազանց մեծ ուշացումներ թույլ չտալու համար: (Հոդված 8) 3. Պետություններն ապահովում են, որ զոհի իրական տարիքի հետ կապված կասկածների առկայությունը չխոչընդոտի քրեական հետաքննության սկսմանը, ներառյալ զոհի տարիքը պարզելու նպատակով հետաքննությունը: (Հոդված 9) 4. Պետություններն ապահովում են, որ քրեական դատավարության համակարգում երեխաների հետ վարվելիս, որոնք համարվում են արձանագրությամբ նախատեսված հանցագործությունների զոհ, առաջնահերթ ուշադրություն դարձվի երեխայի շահերի լավագույն պահպանմանը: (Հոդված 9) 5. Պետությունները միջոցներ են ձեռնարկում արգելված հանցավոր գործողությունների զոհ երեխաների հետ աշխատող անձանց պատշաճ պատրաստականության, մասնավորապես, իրավաբանական և հոգեբանական ապահովման համար: (Հոդված 9) 6. Պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները միջազգային համագործակցության ամրապնդման ուղղությամբ՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության, մանկական պոռնոգրաֆիայի և երեխաների սեռազբոսաշրջության հետ կապված արարքների կատարման մեջ մեղավոր անձանց նախազգուշացման, բացահայտման, հետաքննության, քրեական հետապնդման և պատժելու նպատակներով բազմակողմ, տարածաշրջանային և երկկողմ պայմանավորվածությունների կնքման միջոցով: (Հոդված 10) 7. Պետություններն աջակցում են միջազգային համագործակցության զարգացմանը, որն ուղղված է զոհ երեխաներին օգնություն ցույց տալուն՝ նրանց ֆիզիկական և հոգեբանական վերականգնման, սոցիալական վերաինտեգրման և հայրենադարձության գործում: (Հոդված 10) 8. Պետություններն աջակցում են միջազգային համագործակցության ամրապնդմանը՝ այնպիսի հիմնական պատճառները վերացնելու նպատակով, ինչպիսիք են չքավորությունը և անբավարար զարգացումը, որոնք խորացնում են երեխաների խոցելիությունը՝ որպես երեխաների առևտրի, երեխաների մարմնավաճառության, մանկական պոռնոգրաֆիայի և երեխաների սեռազբոսաշրջության օբյեկտներ: (Հոդված 10) 9. Արձանագրության դրույթներից որևէ մեկը, որը ներառված է պետության օրենսդրության մեջ կամ այդ պետության համար գործող միջազգային իրավունքի նորմերում, չի ազդում երեխայի իրավունքների ավելի նպաստավոր դրույթների իրականացմանը: (Հոդված 11)	
26.	**Արձանագրություն ՄԱԿ-ի անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին** *ուժի մեջ է՝ 25.12.2003* Նպաստում է մարդկանց առևտրի կանխարգելմանը և դրա դեմ պայքարին՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և երեխաներին, այդպիսի առևտրից տուժողների պաշտպանությանը և օգնությանը, խրախուսում է մասնակից պետությունների համագործակցությունը:	1. Յուրաքանչյուր մասնակից պետություն քննարկում է մարդկանց առևտրի զոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վերականգնման ապահովման միջոցների իրագործման հնարավորությունը, այդ թվում պատշաճ դեպքում համագործակցելով ոչ կառավարական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ տարրերի հետ, և, մասնավորապես, այնպիսի միջոցներ, որոնք նախատեսում են տրամադրել պատշաճ տանիք, խորհրդատվական օգնություն և տեղեկություն, հատկապես նրանց իրավաբանական իրավունքների վերաբերյալ, այնպիսի լեզվով, որը հասկանալի է մարդկանց առևտրի զոհերին, բժշկական, հոգեբանական և նյութական օգնություն, հնարավորություններ աշխատանքի տեղավորման, կրթության և մասնագիտական պատրաստման բնագավառներում Այս դրույթները կիրառելիս յուրաքանչյուր պետություն հաշվի է առնում մարդկանց առևտրի զոհերի տարիքը, սեռը և հատուկ կարիքները, մասնավորապես, երեխաների հատուկ կարիքները, այդ թվում՝ պատշաճ տանիքի, կրթության և խնամքի վերաբերյալ: (Հոդված 6) 2. Պետությունները համալիր հիմունքով մշակում և ընդունում են քաղաքականություն, ծրագրեր և այլ միջոցներ մարդկանց առևտրի զոհերին, հատկապես կանանց և երեխաներին ռեվիկտիմիզացումից պաշտպանելու նպատակով: (Հոդված 9) 3. Պետությունները ձեռնարկում կամ կատարելագործում են այն միջոցները, այդ թվում՝ երկկողմ կամ բազմակողմ համագործակցության միջոցով, որոնք ուղղված են այնպիսի գործոնների ազդեցության մեղմացմանը, որոնք պայմանավորում են մարդկանց, հատկապես կանանց և երեխաների խոցելիությունը մարդկանց առևտրի տեսակետից, ինչպիսիք են՝ չքավորությունը, զարգացման ցածր մակարդակը և հավասար հնարավորությունների բացակայությունը: (Հոդված 9) 4. Պետությունները ընդունում կամ կատարելագործում են օրենսդրական կամ այլ միջոցները, օրինակ՝ կրթության կամ մշակույթի բնագավառում կամ սոցիալական բնագավառում, այդ թվում՝ երկկողմ և բազմակողմ համագործակցության միջոցով, որոնք ուղղված են մարդկանց, հատկապես կանանց ու երեխաների շահագործում առաջացնող պահանջարկին դրա բոլոր ձևերով հակադրելուն, քանի որ դա հանգեցնում է մարդկանց առևտրին: (Հոդված 9) 5. Պետությունները ապահովում կամ կատարելագործում են իրավապահ, միգրացիոն և մարդկանց առևտրի կանխարգելման հարցերով մյուս համապատասխան մարմինների աշխատակիցների պատրաստվածությունը: Նշված պատրաստվածությունը պետք է կենտրոնացվի այդպիսի առևտրի կանխարգելման մեթոդների, դրանով զբաղվող անձանց քրեական հետապնդման և զոհերի իրավունքների պաշտպանության վրա, ներառյալ զոհերին այն անձանցից պաշտպանելը, որոնք զբաղվում են այդպիսի առևտրով: Պատրաստման ընթացքում պետք է նաև նկատի առնվի մարդու իրավունքների, երեխաների հիմնախնդիրների և գենդերային հիմնախնդիրների հաշվառման անհրաժեշտությունը. պատրաստումը պետք է նպաստի համագործակցությանը ոչ կառավարական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության այլ տարրերի հետ: (Հոդված 10)	Մասնակից պետությունները ապահովում կամ կատարելագործում են իրավապահ, միգրացիոն և մարդկանց առևտրի կանխարգելման հարցերով մյուս համապատասխան մարմինների աշխատակիցների պատրաստվածությունը: Պատրաստման ընթացքում պետք է նաև նկատի առնվի մարդու իրավունքների, երեխաների հիմնախնդիրների և գենդերային հիմնախնդիրների հաշվառման անհրաժեշտությունը. պատրաստումը պետք է նպաստի համագործակցությանը ոչ կառավարական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության այլ տարրերի հետ:
27.	**Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա** *ընդունված է՝ 03.05.1996, ուժի մեջ է՝ 01.03.2004* Կոչված է նպաստելու Եվրոպայի խոհրդի անդամ պետությունների տնտեսական ու սոցիալական զարգացմանը՝ մարդու իրավունքների՝ այդ թվում երեխաներին և երիտասարդներին հոգեբանական և ֆիզիկական վտանգներից, ինչպես նաև սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանությունը ամրապնդման միջոցով:	1. Կողմերը պարտավորվում են աշխատանքի ընդունման համար որպես նվազագույն տարիք ապահովել 15 տարեկանը, բացառությամբ այն երեխաների, որոնք զբաղվում են ընդունված թեթև աշխատանքով, առանց վնասելու նրանց առողջությունը, բարոյական կերպարը կամ խանգարելու կրթությանը, աշխատանքի ընդունման համար որպես նվազագույն տարիք ապահովել 18 տարեկանը՝ այն ընդունված աշխատանքների առնչությամբ, որոնք համարվում են վտանգավոր կամ վնասակար են առողջությանը, ապահովել, որ դեռևս պարտադիր կրթության ենթակա անձինք չզբաղվեն այնպիսի աշխատանքով, որի պատճառով կզրկվեն իրենց կրթությունից լրիվ օգտվելու հնարավորությունից, ապահովել, որ 18 տարեկանից ցածր անձանց աշխատաժամերը սահմանափակվեն՝ ելնելով նրանց զարգացման անհրաժեշտությունից և, մասնավորապես, նրանց մասնագիտական ուսման նկատառումներից, ճանաչել երիտասարդ աշխատողների և աշակերտների՝ արդար աշխատավարձի կամ այլ համապատասխան նպաստների իրավունքը, ապահովել, որ սովորական աշխատաժամանակի ընթացքում գործատուի համաձայնությամբ մասնագիտական ուսման համար երիտասարդների ծախսած ժամանակը համարվի որպես աշխատանքային օրվա բաղկացուցիչ մաս, ապահովել, որ 18 տարեկանից ցածր աշխատող անձինք տարեկան նվազագույնը չորսշաբաթյա վճարովի արձակուրդի իրավունք ունենան, ապահովել, որ 18 տարեկանից ցածր աշխատող անձինք չկատարեն գիշերային աշխատանք, բացառությամբ ազգային օրենքներով կամ կանոնակարգերով սահմանված որոշակի աշխատանքների, ապահովել, որ ազգային օրենքներով կամ կանոնակարգերով նախատեսված աշխատանքով զբաղված 18 տարեկանից ցածր տարիքի աշխատող անձինք ենթարկվեն կանոնավոր բժշկական ստուգումների, երաշխավորել հատուկ պաշտպանություն ֆիզիկական և բարոյական վտանգներից, որոնց ենթակա են երեխաները և երիտասարդները և, մասնավորապես, նրանց աշխատանքից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագող վտանգների դեմ: (Հոդված 7) 2. Աշխատող կանանց մայրության պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են աշխատող կանանց ապահովել առնվազն մինչև տասնչորսշաբաթյա արձակուրդով երեխայի ծննդից առաջ և հետո՝ միասին վերցրած՝ վարձատրվող արձակուրդի, սոցիալական ապահովության համապատասխան նպաստների կամ հասարակական ֆոնդերից ստացվող նպաստների հիման վրա, համարել անօրինական գործատուի՝ կնոջը աշխատանքից ազատման ծանուցում տալը այն ժամանակաշրջանից սկսած, երբ կինը ծանուցում է իր գործատուին իր հղիության մասին, մինչև նրա մայրությանը հատկացված արձակուրդի վերջը, կամ՝ նրան աշխատանքից ազատման ծանուցում տալը այնպիսի ժամանակ, որ ծանուցման ժամկետը կվերջանա վերոնշյալ ժամանակաշրջանում, ապահովել, որ իրենց երեխաներին կերակրող մայրերը այդ նպատակով բավարար չափով լրացուցիչ ժամանակի իրավունք ունենան, կանոնակարգել գիշերային ժամերին աշխատող հղի, նոր ծննդաբերած	

		կանանց կամ իրենց երեխաներին կերակրող կանանց աշխատանքը, արգելել ստորերկրյա հանքային արդյունաբերությունում՝ վտանգավորության, առողջության վնասակարության կամ դժվար բնույթի պատճառով անհամապատասխան ցանկացած այլ աշխատանքում հղի կանանց, նոր ծննդաբերած կամ իրենց երեխաներին կերակրող կանանց աշխատանքը, ինչպես նաև համապատասխան միջոցներ ձեռնարկել այդ կանանց աշխատանքի իրավունքները պաշտպանելու համար: (Հոդված 8) 3. Երեխաների և երիտասարդների՝ նրանց անձնավորությունը և ֆիզիկական ու մտավոր ընդունակությունների ամբողջական զարգացումը խրախուսող միջավայրի ստեղծման իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են ուղղակիորեն կամ, համագործակցելով պետական և մասնավոր կազմակերպությունների հետ, ձեռնարկել բոլոր համապատասխան և անհրաժեշտ միջոցները, որոնք ուղղված կլինեն՝ երաշխավորելու, որ երեխաները և երիտասարդները, հաշվի առնելով նրանց ծնողների իրավունքները և պարտականությունները, ունենան իրենց համար անհրաժեշտ խնամքի, օգնության, կրթության և ուսման իրավունք, մասնավորապես՝ ապահովելով այս նպատակի համար բավարար և համապատասխան հաստատությունների և ծառայությունների ստեղծումը կամ պահպանումը, պաշտպանելու երեխաներին և երիտասարդներին արհամարհանքից, բռնությունից կամ շահագործումից, ապահովելու պետական հատուկ պաշտպանություն և օգնություն ժամանակավորապես կամ մշտապես ընտանեկան աջակցությունից զրկված երեխաների և երիտասարդների համար, ապահովելու երեխաների և երիտասարդների՝ տարրական և միջնակարգ դպրոցներում անվճար կրթությունը, ինչպես նաև խրախուսելու դպրոցներ կանոնավոր հաճախելը: (Հոդված 17) 4. Ցանկացած մյուս Կողմի տարածքում միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանվածության և օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են իրագործելիության սահմաններում նպաստել և դյուրացնել միգրանտ աշխատողի երեխաներին միգրանտ աշխատողի մայրենի լեզվի ուսուցումը: (Հոդված 19) 5. Ընտանեկան պարտավորություններով տղամարդկանց և կանանց համար, ինչպես նաև նման աշխատողների և այլ աշխատողների միջև հնարավորության և վերաբերմունքի հավասարության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով կողմերը պարտավորվում են համապատասխան միջոցներ ձեռնարկել, որպեսզի մշակեն կամ ապահովեն պետական կամ մասնավոր ծառայություններ, մասնավորապես՝ ցերեկային ժամերին երեխաների խնամքի ծառայություններ կամ երեխաների խնամքի համար այլ միջոցառումներ, ինչպես նաև մայրության արձակուրդից հետո ընկած ժամանակաշրջանում երեխայի խնամքի համար ծնողներից մեկին ապահովել արձակուրդ ստանալու հնարավորությամբ. ընդ որում, արձակուրդի տևողությունը և պայմանները պետք է որոշվեն ազգային օրենսդրությամբ, կոլեկտիվ համաձայնագրերով կամ գործնականորեն: (Հոդված 20)	
28.	**Կոնվենցիա ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին** *ընդունված է՝ 19.10.1996, ուժի մեջ է՝ 01.05.2008* Սահմանում է երեխայի անձի կամ սեփականության պաշտպանությանն ուղղված միջոցները և այն իրավունքը, որը կիրառվելու է ծնողական պարտականության նկատմամբ, ապահովում է պաշտպանության միջոցների ճանաչումը և իրականացումը:	1. Պայմանավորվող պետության դատական կամ վարչական մարմինները, որտեղ սովորաբար բնակվում է երեխան, իրավասու են ձեռնարկելու երեխայի անձի կամ սեփականության պաշտպանությանն ուղղված միջոցներ: Երեխայի սովորական բնակության վայրը, մի պետությունից մեկ այլ պետություն տեղափոխվելու դեպքում, նման իրավասություն կունենան երեխայի նոր բնակության վայրի պետության իրավասու մարմինները: (Հոդված 5) 2. Փախստական, իրենց երկրներում անհանգստությունների պատճառով միջազգայնորեն տեղափոխված, կամ սովորական բնակության վայրը հաստատված չհաստատված երեխաների անձի կամ սեփականության պաշտպանությանն ուղղված միջոցների ձեռնարկման իրավասությունն ստանում են այն պետության իրավասու մարմինները, որի տարածքում գտնվում են այդ երեխաները իրենց տեղափոխության արդյունքում: (Հոդված 6) 3. Երեխային անօրինականորեն դուրս բերելու, պահելու, յուրաքանչյուր անձի, հաստատության կամ խնամակալության իրավունք ունեցող այլ մարմնի կողմից երեխային դուրս հանելու կամ պահելու հարցում չզիջելու, կամ եթե երեխան գտնվում է տվյալ պետությունում առնվազն մեկ տարի այն բանից հետո, երբ անձը, հաստատությունը կամ խնամակալության իրավունք ունեցող այլ մարմինը իմացել են կամ պետք է իմանային երեխայի գտնվելու վայրի մասին, և այդ ընթացքում բնակեցվածին վերադարձնելու դեռևս որևէ հարցում քննարկման մեջ չէ, այդ դեպքում այն պետության իրավասու մարմինները, որտեղ նախքան իրեն դուրս բերելը կամ պահելը սովորաբար բնակվել է երեխան, պահպանում են իրենց իրավասությունը, քանի դեռ երեխան սովորական բնակություն ձեռք չի բերել մեկ այլ պետությունում, այդ մարմինները անհետաձգելի միջոցներ, որոնք անհրաժեշտ են երեխայի անձի կամ գույքի պաշտպանության համար: Երեխային դուրս բերելը կամ պահելը համարվում է անօրինական, եթե դա արվել է անձին, հաստատությանը կամ որևէ այլ մարմնին վերագրված խնամակալության իրավունքների խախտմամբ՝ միասին կամ առանձին, համաձայն այն պետության օրենքի, որտեղ սովորաբար բնակվում էր երեխան նախքան դուրս բերելը կամ պահելը: (Հոդված 7) 4. Եթե պետության իրավասու մարմինները գտնում են, որ մյուս պետության իրավասու մարմիններն առավել սերտ կապ ունեն երեխայի լավագույն շահերը գնահատելու առանձին գործի հետ, բացառության կարգով կարող են կամ հարցում անել այդ մյուս մարմնին անմիջականորեն, կամ իրենց պետության կենտրոնական մարմնի միջոցով ստանձնել այնպիսի պաշտպանության միջոցներ ձեռնարկելու իրավասություն, որոնք իրենք անհրաժեշտ են համարում, կամ դադարեցնել գործի վերանայումը և կողմերին առաջարկել հարցումը ներկայացնել նշված այլ պետության իրավասու մարմնին: (Հոդված 8) 5. Պայմանավորվող պետությունը կարող է դիմել այն պետությանը, որի քաղաքացին է երեխան, որտեղ գտնվում է երեխայի սեփականությունը, որի մարմինների քննության տակ է գտնվում ամուսնալուծության կամ դատարանի վճռով երեխայի ծնողների առանձին ապրելու կամ ամուսնությունը չեղյալ հայտարարելու մասին դիմումը, կամ որի հետ երեխան առավել սերտ կապ ունի, եթե գտնում է, որ այդ պետությունն առավել արդյունավետ կիրականացնի երեխայի անձի կամ սեփականության պաշտպանությանն ուղղված միջոցներ: (Հոդված 8) 6. Մարմինը, որին, հարցում է արվել մի պետության իրավասու մարմնի կողմից անմիջականորեն, կամ պետության կենտրոնական մարմնի միջոցով ստանձնել այնպիսի պաշտպանության միջոցներ ձեռնարկելու իրավասություն, որոնք իրենք անհրաժեշտ են համարում, կարող է համապատասխան իրավասություն ունեցող մարմինների փոխարեն իր վրա վերցնել իրավասությունը, եթե գտնում է, որ դա բխում է երեխայի լավագույն շահերից: (Հոդված 8) 7. Եթե պետության մարմինները գտնում են, որ իրենք ավելի լավ կարող են ապահովել երեխայի լավագույն շահերն առանձին գործում, ապա նրանք կարող են կամ խնդրել երեխայի սովորական բնակության վայրի պետության իրավասու մարմնին անմիջապես, կամ տվյալ պետության կենտրոնական մարմնի օգնությամբ՝ իրենց լիազորել՝ իրականացնելու իրավասություն՝ ձեռնարկելու համար պաշտպանության այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են համարում, կամ կողմերին առաջարկել հարցումը ներկայացնել այն պետության մարմին, որտեղ երեխան սովորաբար բնակվում է: (Հոդված 9) 8. Հարցումը նախաձեռնող մարմինը կարող է իրավասություն իրականացնել երեխայի սովորական բնակության վայրը հանդիսացող պետության մարմնի փոխարեն, եթե միայն վերջինս համաձայնություն է տվել հարցմանը: (Հոդված 9) 9. Պետության մարմինները, որոնք իրավասու են որոշում կայացնելու ամուսնալուծության կամ մեկ այլ պետությունում սովորաբար բնակվող երեխայի ծնողների՝ օրինականորեն առանձին ապրելու կամ նրանց ամուսնությունը չեղյալ հայտարարելու մասին դիմումի վերաբերյալ, կարող են ձեռնարկել նման երեխայի անձի կամ սեփականության պաշտպանությանն ուղղված միջոցներ. եթե դատավարությունը սկսելու պահին երեխայի ծնողներից մեկը սովորաբար բնակվում է տվյալ պետությունում, և նրանցից մեկը երեխայի նկատմամբ ծնողական պարտականություններ ունի, և եթե տվյալ մարմինների կողմից միջոցներ ձեռնարկվելու իրավասությունն ընդունվել է ծնողների, ինչպես նաև երեխայի նկատմամբ ծնողական պարտականություն ունեցող որևէ այլ անձի կողմից և բխում է երեխայի լավագույն շահերից: Նման իրավասությունն անմիջապես դադարում է, երբ կայացվում է ամուսնալուծության, ծնողների առանձին ապրելու կամ ամուսնությունը անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումներին դրական պատասխան տալու կամ դրանք մերժելու վերաբերյալ վերջնական որոշում, կամ եթե դատավարությունը ավարտվում է մեկ այլ պատճառով: (Հոդված 10) 10. Անհետաձգելի դեպքերում պետության մարմինները, որի տարածքում գտնվում է երեխան կամ նրան պատկանող սեփականությունը, իրավունք ունեն ձեռնարկելու պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ: Այն ձեռնարկված միջոցները, որոնք առնչվում են որևէ պետությունում սովորաբար բնակվող երեխային, անմիջապես	Կոնվենցիայի դրույթներն իրականացնելու համար ստեղծվում է կենտրոնական մարմին:

		դադարեցվում են այն պահին, երբ, իրադրությունից ելնելով, իրավասություն ունեցող մարմինները միջոցներ են ձեռնարկում: (Հոդված 11) 11. Այն պետության մարմինները, որի տարածքում է գտնվում երեխան կամ նրան պատկանող գույքը, իրավասու են երեխայի անձի կամ գույքի պաշտպանության համար խնդրո առարկա պետությունում ձեռնարկել սահմանափակ տարածքային գործողություն ունեցող ժամանակավոր բնույթի միջոցներ այնքանով, որքանով նման միջոցները չեն հակասում երեխայի անձի կամ սեփականության պաշտպանությանն ուղղված միջոցներ իրականացնելու իրավասություն ունեցող մարմինների կողմից արդեն իսկ ձեռնարկված միջոցներին: Ձեռնարկված միջոցները դադարեցվում են, երբ երեխայի անձի կամ սեփականության պաշտպանությանն ուղղված միջոցներ իրականացնելու իրավասություն ունեցող մարմինները կայացնում են որոշում իրադրությամբ պահանջվող պաշտպանության միջոցների վերաբերյալ: Երեխայի անձի կամ գույքի պաշտպանության համար խնդրո առարկա պետությունում ձեռնարկված սահմանափակ տարածքային գործողություն ունեցող ժամանակավոր բնույթի միջոցները, որոնք առնչվում են պայմանավորվող պետություն չհանդիսացող պետությունում սովորաբար բնակվող երեխային, անմիջապես դադարեցվում են այն պետությունում, որտեղ միջոցները ձեռնարկվել են՝ այն պահին, երբ իրադրությամբ պահանջվող և մյուս պետության մարմինների կողմից ձեռնարկված միջոցները ճանաչվում են խնդրո առարկա պետությունում: (Հոդված 12) 12. Երեխայի անձի կամ սեփականության պաշտպանության համար միջոցներ ձեռնարկելու իրավասություն ունեցող պետության մարմինները պետք է հրաժարվեն իրենց իրավասությունն իրականացնելուց, եթե դատավարությունը սկսվելու պահին մյուս պետության մարմիններին ներկայացվել է համապատասխան միջոցների վերաբերյալ հարցում, որը դեռևս քննարկման ենթակա է: (Հոդված 13) 13. Պետությունների մարմիններն իրենց իրավասությունն իրականացնելիս կիրառում են իրենց ներքին իրավունքը: Այնքանով, որքանով պահանջում է երեխայի անձի կամ գույքի պաշտպանությունը, նրանք բացառության կարգով կարող են կիրառել կամ հաշվի առնել այլ պետության իրավունքը, որի հետ իրադրությունն առավել սերտ կապ ունի: Եթե երեխայի սովորական բնակության վայրը փոխվում է մեկ այլ պետություն, ապա, փոխվելու պահից սկսած, փաստացի սովորական բնակության վայրի պետությունում ձեռնարկված միջոցների կիրառման պայմանները ղեկավարվում են այդ մյուս պետության իրավունքով: (Հոդված 15) 14. Ծնողական պարտականության օրենքի ուժով վերագրումը կամ դադարեցումը, առանց դատական կամ վարչական մարմինների միջամտության, կառավարվում է երեխայի սովորական բնակության վայրի պետության իրավունքով: Ծնողական պարտականության վերագրումը կամ դադարեցումը պայմանագրով կամ միակողմանի ակտով, առանց դատական կամ վարչական մարմինների միջամտության, կառավարվում է երեխայի սովորական բնակության վայրի պետության իրավունքով՝ այն պահից սկսած, երբ պայմանագիրը կամ միակողմանի ակտն ուժի մեջ է մտնում: Երեխայի սովորական բնակության վայրի պետության իրավունքի համաձայն գործող ծնողական պարտականությունը գործում է նաև երեխայի սովորական բնակության վայրը մեկ այլ պետություն փոխելիս: Եթե երեխայի սովորական բնակության վայրը փոխվում է, ապա օրենքի ուժով ծնողական պարտականության վերագրումն այն անձին, որը դեռևս չունի նման պարտականություն, կառավարվում է սովորական բնակության նոր պետության իրավունքով:(Հոդված 16) 15. Ծնողական պարտականության իրականացումը կառավարվում է երեխայի սովորական բնակության պետության իրավունքով: Եթե երեխայի սովորական բնակության վայրը փոխվում է, այն կառավարվում է սովորական բնակության նոր պետության իրավունքով: (Հոդված 17) 16. Գործարքի վավերականությունը, որը կնքվել է երրորդ կողմի և մեկ այլ անձի միջև, որն իրավասու է հանդես գալու որպես երեխայի օրինական ներկայացուցիչ այն պետության իրավունքին համապատասխան, որտեղ կնքվել է գործարքը, վիճարկման ենթակա չէ, և երրորդ կողմը չի կարող պատասխանատվություն կրել միայն այն հիմքով, որ մյուս անձը իրավասու չի եղել հանդես գալու որպես երեխայի օրինական ներկայացուցիչ, եթե միայն երրորդ կողմը չի իմացել կամ չէր կարող իմանալ, որ ծնողական պարտականությունը կառավարվում է վերջինիս իրավունքով: (Հոդված 19) 17. Եթե երեխայի լավագույն շահերն ապահավող իրավունքի կիրառումն, ակնհայտորեն հակասում է հանրային քաղաքականությանը, ապա կարող է մերժվել: (Հոդված 22) 18. Պետություններից մեկի մարմինների կողմից ձեռնարկված միջոցները օրենքի ուժով ճանաչվում են բոլոր մյուս պետություններում: Բայց այդ ճանաչումը, այնուամենայնիվ, կարող է մերժվել, եթե, բացառությամբ անհետաձգելի դեպքի, դատական կամ վարչական վարույթների ընթացքում միջոցը, ի խախտումն հայցվող պետության ընթացակարգերի հիմնարար սկզբունքների, ձեռնարկվել է երեխային արտահայտվելու հնարավորություն չտրամադրելով, որևէ անձի բողոքի հիման վրա, որը պնդում է, որ միջոցը խախտում է իր ծնողական պարտականությունը, եթե այդ միջոցը, բացառությամբ անհետաձգելի դեպքի, ձեռնարկվել է առանց այդ անձին արտահայտվելու հնարավորություն տալու, եթե նման ճանաչումը, հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը, ակնհայտորեն հակասում է հայցվող պետության հանրային քաղաքականությանը, եթե միջոցը անհամատեղելի է երեխայի սովորաբար բնակության վայրի ոչ պայմանավորվող պետությունում ավելի ուշ ձեռնարկված միջոցի հետ, որտեղ տվյալ՝ ավելի ուշ ձեռնարկված միջոցը համապատասխանում է հայցվող պետությունում ճանաչման պահանջներին: (Հոդված 23) 19. Մի պետությունում ձեռնարկված և մյուս պետությունում իրականացվելիք հայտարարված կամ իրականացման նպատակով գրանցված միջոցները վերջին պետությունում իրականացվում են այնպես, ինչպես կկատարվեին այդ պետության մարմինների կողմից ձեռնարկված միջոցները: Իրականացումը տեղի է ունենում հայցվող պետության իրավունքին համապատասխան, տվյալ իրավունքով ապահովվող չափով՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը: (Հոդված 28) 20. Կենտրոնական մարմինն անմիջականորեն կամ այլ մարմինների միջոցով ձեռնարկում է համապատասխան քայլեր, որպեսզի միջնորդության, հաշտեցման կամ նման այլ միջոցներով հեշտացվեն համար երեխայի անձի կամ սեփականության պաշտպանությանն ուղղված համաձայնեցված որոշումները, մեկ այլ պետության իրավասու մարմնի հարցման հիման վրա օգնություն տրամադրվի երեխայի գտնվելու վայրը բացահայտելու համար, եթե ենթադրվում է, որ երեխան կարող է գտնվել հայցվող պետության տարածքում և պաշտպանության կարիք ունի: (Հոդված 31) 21. Երեխայի հետ առավել սերտ կապ ունեցող յուրաքանչյուր պետության կենտրոնական կամ այլ իրավասու մարմնի կողմից օգնության նպատակով արված հարցման հիման վրա երեխայի սովորական բնակության վայրի պետության կենտրոնական մարմինը կարող է անմիջականորեն կամ պետական կամ այլ մարմինների միջոցով տրամադրել տեղեկանք երեխայի վիճակի մասին և հարցում անել իր պետության իրավասու մարմնին՝ քննարկելու երեխայի անձի կամ սեփականության պաշտպանության համար միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության հարցը: (Հոդված 32) 22. Եթե իրավասություն ունեցող մարմինը քննարկում է երեխային խնամատար ընտանիքում կամ երեխայի խնամքի հատուկ հաստատություններում տեղավորելու կամ kafala-ի կամ նման այլ հաստատության միջոցով խնամք տրամադրելու հարցը, ինչը տեղի է ունենում մեկ այլ պետությունում, ապա այն խորհրդակցում է վերջինիս կենտրոնական կամ այլ իրավասու մարմնի հետ: Ուղարկում է տեղեկանք երեխայի մասին՝ նշելով առաջարկված տեղավորման կամ խնամք տրամադրելու պատճառները: Տեղավորման կամ խնամք տրամադրելու մասին որոշումը կարող է կայացվել հայցող պետությունում միայն այն դեպքում, եթե դրա կենտրոնական կամ իրավասու այլ մարմինը, երեխայի լավագույն շահերը հաշվի առնելով, տվել է իր համաձայնությունը տեղավորման կամ խնամքի տրամադրման համար: (Հոդված 33) 23. Իրավասու մարմինները պաշտպանության միջոց քննարկելիս, եթե երեխայի վիճակը դա է պահանջում, կարող են հարցում անել որևէ այլ պետության մարմնի, որն ունի երեխայի պաշտպանությանը վերաբերող տեղեկատվություն, այն տրամադրելու խնդրանքով: (Հոդված 34) 24. Պետության մարմինները, որտեղ երեխան փաստացի բնակության վայր չունի, կարող են այդ պետությունում բնակվող ծնողների հարցման հիման վրա, որոնք ցանկանում են երեխայի հետ տեսակցություն ստանալու կամ հաստատելու իրավունք ստանալ, տեղեկատվություն կամ վկայություն հավաքել և հարցում անել, թե արդյոք ծնողին հարմար է տեսակցելը, և ինչ պայմաններով է իրականացվելու տեսակցությունը: Երեխայի անձի կամ սեփականության պաշտպանությանն ուղղված միջոցներ իրականացնելու իրավասություն ունեցող մարմինները երեխային տեսակցելու մասին դիմումի վերաբերյալ որոշում կայացնելու համար պետք է ստանան և նախքան որոշում կայացնելը քննարկեն	

		նման տեղեկատվությունը, վկայությունը և հարցումները: (Հոդված 35) 25. Եթե երեխային լուրջ վտանգ է սպառնում, այն պետության իրավասու մարմինները, որտեղ ձեռնարկվել կամ քննարկման տակ են գտնվում երեխայի պաշտպանության միջոցները, եթե նրանք տեղեկացված են, որ երեխայի բնակության վայրը փոխվել է, կամ երեխան գտնվում է մեկ այլ պետությունում, տեղեկացնում են մյուս պետության մարմիններին վտանգի առկայության և ձեռնարկված կամ քննարկման տակ գտնվող միջոցների մասին: (Հոդված 36) 26. Մարմինը հարցում չի անում կամ որևէ տեղեկատվություն չի տրամադրում, եթե գտնում է, որ դա կվտանգի երեխայի անձին կամ սեփականությանը կամ լուրջ վնաս կհասցնի երեխայի ընտանիքի անդամների կյանքին կամ ազատությանը: (Հոդված 37) 27. Երեխայի սովորական բնակության կամ այն վայրի պետության մարմինները, որտեղ ձեռնարկվել է պաշտպանության միջոցը, կարող են ծնողական պարտականություն ունեցող կամ երեխայի անձի կամ սեփականության պաշտպանությունը ստանձնած անձին, վերջինի հարցման հիման վրա տրամադրել վկայական, որում նշվում են տվյալ անձի գործելու իրավունքը և նրան վերագրված լիազորությունները: (Հոդված 40)	
29.	**Համաձայնագիր անչափահասներին իրենց մշտական բնակության պետություններ վերադարձնելու հարցերով ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին** *ընդունված է՝ 07.10.2002, ուժի մեջ է՝ 10.06.2004* Կարգավորում է անչափահասների կողմից և նրանց դեմ կատարված իրավախախտումների կանխարգելումը՝ նրանց, իրենց մշտական բնակության պետություններ վերադարձնելով:	1. Կողմերի իրավասու մարմինները հարցման հիման վրա միմյանց աջակցություն են ցուցաբերում առանց խնամակալության մնացած անչափահասների հետախուզման և նրանց մշտական բնակության պետություն վերադարձնելու գործում: Եթե սահմանվում է, որ մասնագիտացված հիմնարկությունում տեղավորված անչափահասը մյուս պետության կողմից հետախուզվում է քրեական պատասխանատվության ենթարկվելու կամ դատավճռի կատարման համար, նա կարող է հանձնվել տվյալ պետությանը միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով կամ կարգով: Առանց ծնողական խնամակալության և հոգաբարձության իրավունք իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց թուլտվության մշտական բնակության պետությունը լքած և մյուս կողմի պետության տարածքում հայտնված անչափահասները կտեղավորվեն մյուս կողմի պետության մասնագիտացված հիմնարկությունում՝ այդ կողմի պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և պայմաններով: (Հոդված 2) 2. Կողմերը պարտավորվում են մասնագիտացված հիմնարկություններում տեղավորված բոլոր անչափահասների համար ստեղծել բարենպաստ և հավասար պայմաններ: (Հոդված 3) 3. Մասնագիտացված հիմնարկություններում տեղավորված անչափահասներն այնտեղ պահվում են նրանց ինքնությունը, գտնվելու պետություն ժամանելու պատճառները և պայմանները պարզելու և հետագայում նրան մշտական բնակության պետություն վերադարձնելու նպատակով: (Հոդված 4) 4. Կողմերի իրավասու մարմինները, ելնելով մյուս պետության տարածքում գտնվող անչափահասի ինքնությունը պարզելու նկատառումներից, հարցման հիման վրա անհատույց կտրամադրեն տեղեկատվություն, որը թույլ կտա պարզել նրա մշտական բնակության պետությունը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փաստաթղթեր, որոնք պահանջվում են անչափահասից և նրան ուղեկցող անձանցից նրան մշտական բնակության պետություն փոխադրելիս պետական սահմանը հատելու ժամանակ: Անչափահասի գտնվելու վայրի մասին տեղեկացվում է ծնողական խնամակալություն և հոգաբարձության իրավունք իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ինչպես նաև անչափահասի գտնվելու պետությունում նրա մշտական բնակության պետության դիվանագիտական ներկայացուցչությունը (հյուպատոսական հիմնարկությունը): (Հոդված 5) 5. Մասնագիտացված հիմնարկություններում պահվող անչափահասները հանձնվում են նրանց ուղեկցելու եկած ծնողական խնամակալության և հոգաբարձության իրավունք իրականացնող անձանց կամ նրանց մշտական բնակության պետության մասնագիտացված հիմնարկությունների աշխատակիցներին՝ համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Մասնագիտացված հիմնարկություններում պահվող անչափահասներին վերը նշված անձանց կողմից ուղեկցման անհնարինության մասին ծանուցում ստանալու դեպքում նշված ծանուցումը ստանալու պահից 30 օրվա ընթացքում անչափահասները պետք է ուղարկվեն մշտական բնակության պետության մոտակա մասնագիտացված հիմնարկություններ՝ պաշտոնատար անձանց ուղեկցությամբ: (Հոդված 6) 6. Անչափահասների մասնագիտացված հիմնարկություններում պահելու հետ կապված ծախսերը կրում է այն կողմը, որի պետության տարածքում դրանք առաջացել են: Անչափահասների տեղափոխման հետ կապված ծախսերը կրում է նրանց մշտական բնակության պետությունը: Անչափահասներին նրանց մշտական բնակության պետություն փոխադրելիս գտնվելու պետության կողմի կրած ծախսերը հատուցում է մյուս կողմը՝ համապատասխան հաշվետու-ֆինանսական փաստաթղթերը իրեն տրամադրելու պահից 30-օրյա ժամկետում: (Հոդված 7) 7. Կողմերի իրավասու մարմինները աջակցություն են ցուցաբերում մասնագիտացված հիմնարկություններին և անձանց, որոնք ուղեկցում են անչափահասներին նրանց մշտական բնակության պետություն՝ վերադարձի, տարանցման, արտոնագրերի ձևակերպման և այդ կապակցությամբ ծագած այլ հարցերի լուծման առնչությամբ: (Հոդված 8)	Կողմերից յուրաքանչյուրը սահմանում է համաձայնագրի դրույթների կատարման համար պատասխանատու իրավասու մարմիններ (նշելով լուծվող հարցերի շրջանակը) և այդ մասին տեղեկացնում ավանդապահին՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին տեղեկատվությունը ներկայացնելու հետ միաժամանակ: Ավանդապահը կողմերից ստացված ծանուցումների հիման վրա կազմում է իրավասու մարմինների ցանկը, այն ուղարկում համաձայնագրի բոլոր մասնակիցներին, ինչպես նաև հայտնում, կողմերից ստացված ծանուցումների հիման վրա, տվյալ ցանկում բոլոր փոփոխությունների մասին: (Հոդված 10)
30.	**Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից՝ զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրություն** *ուժի մեջ է՝ 21.03.2005* Աջակցում է Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայում ճանաչված իրավունքների առավել արդյունավետ իրագործմանը ՝ ուժեղացնելով երեխաների պաշտպանությունը զինված հակամարտություններին մասնակցելուց:	1. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր հնարավոր միջոցները՝ ապահովելու համար, որ իրենց զինված ուժերի 18 տարեկան չդարձած զինծառայողներն ուղղակիորեն չմասնակցեն ռազմական գործողություններին: (Հոդված 1) 2. Պետություններն ապահովում են, որ 18 տարեկան չդարձած անձինք ենթակա չլինեն պարտադիր զորակոչի իրենց զինված ուժերում: (Հոդված 2) 3. Պետությունները բարձրացնում են իրենց ազգային զինված ուժերում անձանց կամավոր զորակոչի նվազագույն տարիքը՝ ընդունելով, որ 18 տարին չլրացած անձինք, կոնվենցիային համապատասխան, հատուկ պաշտպանության իրավունք ունեն: Սա չի տարածվում պետությունների զինված ուժերի տնօրինության կամ հսկողության տակ գտնվող ուսումնական հաստատությունների վրա (Հոդված 3) 4. Յուրաքանչյուր պետություն ի պահ է հանձնում պարտադիր բնույթ ունեցող հայտարարություն, որում նշվում է այն նվազագույն տարիքը, որի դեպքում պետությունը թույլատրում է իր ազգային զինված ուժեր կամավոր զորակոչ, և շարադրվում են իր կողմից այն բանն ապահովելու համար ընդունված երաշխիքները, որ այդպիսի զորակոչը չի կրի բռնի կամ հարկադիր բնույթ: (Հոդված 3) 5. Իրենց ազգային զինված ուժեր 18 տարեկան չդարձած անձանց կամավոր զորակոչը թույլատրող պետությունները տրամադրում են երաշխիքներ, որ զորակոչն իրականում կրի կամավոր բնույթ, զորակոչը կատարվի ծնողների կամ այդ անձի օրինական խնամակալների գիտակցված համաձայնությամբ, 18 տարեկան չդարձած անձինք ամբողջությամբ տեղեկացվեն այդպիսի զինվորական ծառայություն կրելու հետ կապված պարտականությունների մասին, 18 տարեկան չդարձած, մինչև ազգային զինվորական ծառայության ընդունվելը, ներկայացնեն իրենց տարիքի վերաբերյալ հավաստի վկայություններ: (Հոդված 3) 6. Պետությունների զինված ուժերից տարբեր այլ զինված խմբերը ոչ մի պարագայում չպետք է հավաքագրեն կամ զինված գործողություններում օգտագործեն 18 տարեկան չդարձած անձանց: Պետություններն այդպիսի հավաքագրումն ու օգտագործումը կանխելու նպատակով ձեռնարկում են բոլոր հնարավոր միջոցները՝ ներառյալ այդպիսի գործունեության արգելման և քրեականացման համար անհրաժեշտ իրավական միջոցների ընդունումը: (Հոդված 4) 7. Երեխայի իրավունքների իրականացմանը նպաստող ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես օրենսդրության մեջ կամ միջազգային պայմանագրերում ու միջազգային մարդասիրական իրավունքում պարունակվող բացառող դրույթ: (Հոդված 5) 8. Պետությունները պարտավորվում են մեծահասակների և երեխաների շրջանում համապատասխան միջոցներով ապահովել արձանագրության դրույթների և սկզբունքների լայնորեն տարածումն ու պրոպագանդումը: Պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ իրենց իրավասության ներքո գտնվող անձինք, ովքեր, հակառակ արձանագրության, հավաքագրված են եղել կամ օգտագործվել են ռազմական գործողություններում, զորացրվեն կամ այլ ձևով ազատվեն զինվորական ծառայությունից: Անհրաժեշտության դեպքում պետություններն այդ անձանց ցուցաբերում են պատշաճ օգնություն նրանց ֆիզիկական և հոգեբանական վիճակի վերականգնման, ինչպես նաև նրանց սոցիալական ռեինտեգրացիայի նպատակով: (Հոդված 6)	Յուրաքանչյուր մասնակից պետություն այդ պետության համար նշված՝ արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու տարվա ընթացքում, Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեին ներկայացնում է զեկույց, որը համապարփակ տեղեկատվություն է պարունակում արձանագրության դրույթների իրագործման նպատակով իր ձեռնարկած միջոցների մասին: (Հոդված 8)

31.	**Կոնվենցիա կրթության բնագավառում խտրականության դեմ** *ընդունված է՝ 15.12.1960, ուժի մեջ է՝ 05.12.1993* Սահմանում է կրթության բնագավառում խտրականության տարբեր ձևերի դեմ պայքարի միջոցառումներ, որոնք կապահովեն հավասար հնարավորություն ու վերաբերմունք կրթության բնագավառում	1. Խտրականությունը վերացնելու և կանխարգելելու նպատակով մասնակից պետությունները պարտավորվում են չեղյալ հայտարարել ցանկացած նորմատիվ ակտ ու վարչական կարգադրություն և դադարեցնել վարչական ցանկացած պրակտիկա, որոնք խտրականություն են ներառում կրթության բնագավառում, երաշխավորել, անհրաժեշտության դեպքում՝ օրենսդրական կարգով, խտրականության բացառում ուսումնական հաստատությունների սովորողների ընդունելության հարցում, թույլատրել պետական մարմինների կողմից քաղաքացիների նկատմամբ որևէ տարբերակված վերաբերմունք, բացառությամբ ընդունակության կամ կարիքավորության հիմքով՝ կապված ուսման վարձի, կրթաթոշակների կամ սովորողներին աջակցության այլ ձևերի, ինչպես նաև՝ կրթությունն օտարերկրյա պետություններում շարունակելու համար անհրաժեշտ թույլատրության և հնարավորությունների հետ, պետական մարմինների կողմից ուսումնական հաստատություններին այս կամ այն տեսակի օգնություն ցուցաբերելիս թույլ չտալ որևէ սահմանափակում կամ նախապատվություն, որը բացառապես հիմնված լինի սովորողների՝ որևէ խմբին պատկանելության վրա, իրենց տարածքում բնակվող օտարերկրյա քաղաքացիներին տրամադրել կրթություն ստանալու նույն հնարավորությունները, ինչ որ սեփական քաղաքացիներին: (Հոդված 3) 2. Պետությունները պարտավորվում են մշակել, զարգացնել և կիրառել այնպիսի պետական քաղաքականություն, որն ազգային պայմաններին ու սովորույթներին համապատասխանող մեթոդներով միտված լինի նպաստելու կրթության բնագավառում հավասար հնարավորություն և վերաբերմունք ապահովելուն, մասնավորապես. տարրական կրթությունը դարձնել անվճար և պարտադիր, միջնակարգ կրթությունը՝ իր տարբեր ձևերով, դարձնել բոլորի համար հնարավոր և մատչելի, բարձրագույն կրթությունը դարձնել բոլորի համար հավասարապես մատչելի՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, ապահովել դպրոց հաճախելու՝ օրենքով սահմանված պարտականության կատարումը բոլորի կողմից, միևնույն մակարդակի բոլոր պետական ուսումնական հաստատություններում ապահովել կրթական ստանդարտների, ինչպես նաև տրամադրվող կրթության որակի հետ կապված պայմանների համարժեքությունը, համապատասխան մեթոդներով խրախուսել և զարգացնել տարրական կրթություն չստացած կամ այն չավարտած անձանց կրթությունը, նրանց կողմից կրթությունը շարունակելը՝ յուրաքանչյուրի ընդունակություններին համապատասխան: (Հոդված 4) 3. Կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատականության լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը. այն պետք է նպաստի բոլոր ազգերի և ռասայական կամ կրոնական բոլոր խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, ինչպես նաև ՄԱԿ-ի՝ խաղաղության պահպանմանն ուղղված գործունեության զարգացմանը, էական նշանակություն ունի, առաջին հերթին, ծնողների և, համապատասխան դեպքերում, խնամակալների՝ իրենց երեխաների համար հանրային իշխանությունների կողմից պահվող ուսումնական հաստատություններից բացի այլ ուսումնական հաստատություններ ընտրելու ազատության հարգումը, պայմանով, որ այդ ուսումնական հաստատությունները համապատասխանեն իրավասու իշխանությունների սահմանած կրթական նվազագույն ստանդարտներին, ու երկրորդ, տվյալ երկրում օրենսդրության կիրառման ընթացակարգերին համապատասխան կարգով երեխաների համար՝ իրենց դավանանքին համապատասխան, կրոնական և բարոյական կրթության ապահովումը. ոչ մի անձի կամ անձանց խմբի չի կարելի պարտադրել ստանալու կրոնական ցուցումներ՝ հակառակ իր կամ իրենց դավանանքի, կարևոր է ճանաչել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ սեփական կրթական գործունեություն ծավալելու իրավունքը, ներառյալ դպրոցներ պահելը, և, պայմանավորված յուրաքանչյուր պետության կրթական քաղաքականությամբ, սեփական լեզուն օգտագործելու կամ դասավանդելու իրավունքը, եթե այդ իրավունքի իրականացումը չի խոչընդոտում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ հասկանալու ողջ համայնքի մշակույթն ու լեզուն և մասնակցելու նրա գործունեությանը կամ դա չի վտանգում ազգային ինքնիշխանությունը, կրթության ստանդարտը ցածր չէ իրավասու իշխանությունների սահմանած կամ հաստատած ընդհանուր ստանդարտից, այդպիսի դպրոցներ հաճախելը ֆակուլտատիվ է: (Հոդված 5)	Պետությունները ՄԱԿ-ի գիտության և մշակույթի կազմակերպության գլխավոր խորհրդաժողովին, վերջինիս սահմանած ժամկետում ու կարգով ներկայացվող իրենց պարբերական զեկույցներով, տեղեկատվություն են հաղորդում իրենց ընդունած օրենսդրական ու վարչական դրույթների և այն միջոցառումների մասին, որ ձեռնարկել են կոնվենցիայի կատարման համար, ներառյալ այն միջոցառումները, որոնք ձեռնարկվել կրթության բնագավառում հավասար հնարավորություն և վերաբերմունք ապահովելուն ուղղված պետական քաղաքականության մշակման և զարգացման համար, ինչպես նաև տեղեկատվություն այդ քաղաքականության իրագործման արդյունքների և խոչընդոտների մասին: (Հոդված 7)
32.	**Կոնվենցիա երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին** *ընդունված է՝ 17.06.1999, ուժի մեջ է՝ 02.01.2006* Խթանում է երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման ու վերացմանն ուղղված կարգավորումը ՝ որպես ազգային և միջազգային գործունեության գերակա առաջնահերթություն:	1. Յուրաքանչյուր անդամ պետություն անհապաղ և արդյունավետ միջոցներ է ձեռնարկում, որոնք շուտափույթ կերպով կապահովեն երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի՝ ստրկության բոլոր ձևերի կամ ստրկությանը համանման աշխատանքի, ինչպիսիք են երեխաների վաճառքը և առևտուրը, պարտքային ստրկացումը կամ ճորտային կախվածությունը, ինչպես նաև հարկադիր կամ պարտադիր աշխատանքը, այդ թվում՝ երեխաների պարտադիր կամ հարկադիր հավաքագրումը զինված ընդհարումներում օգտագործելու համար, երեխային օգտագործելու, հավաքագրելու կամ առաջարկելու մարմնավաճառությամբ զբաղվել, պոռնոգրաֆիկ արտադրանքի արտադրության կամ պոռնոգրաֆիկ ներկայացումների համար, երեխային օգտագործել, հավաքագրել կամ առաջարկել հակաիրավական գործունեությամբ զբաղվելու, մասնավորապես թմրանյութերի արտադրման և վաճառքի համար, ինչպես դրանք սահմանված են համապատասխան միջազգային պայմանագրերում, աշխատանքի, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը, արգելումը և վերացումը: (Հոդված 1) 2. Յուրաքանչյուր պետություն մշակում և իրականացնում է գործողության ծրագրեր երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը առաջնային կարգով վերացնելու համար: (Հոդված 6) 3. Յուրաքանչյուր պետություն, հաշվի առնելով կրթության կարևորությունը երեխայի աշխատանքը վերացնելու գործում, սահմանված ժամկետում ձեռնարկում է արդյունավետ միջոցառումներ ուղղված՝ երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերում երեխաների ներգրավման կանխմանը, անհրաժեշտ և համապատասխան ուղղակի աջակցություն ցույց տալուն երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերում երեխաների զբաղվածության դադարեցման, ինչպես նաև նրանց վերականգնման և սոցիալական ինտեգրման համար, երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերից ազատված բոլոր երեխաներին անվճար բազային կրթության, ինչպես նաև, ըստ հնարավորության և անհրաժեշտության, մասնագիտական պատրաստվածության տրամադրմանը, առավել խոցելի վիճակում գտնվող երեխաների հայտնաբերմանը և նրանց հետ կապի հաստատմանը, և աղջիկների վիճակի առանձնահատկությունների հաշվի առնելուն: (Հոդված 7)	Յուրաքանչյուր պետություն նշանակում է իրավասու մարմին, որը իրավասու է Կոնվենցիայի կատարմանն ուղղված դրույթների կիրառման համար: (Հոդված 7)
33.	**Կոնվենցիա քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին** *ուժի մեջ է՝ 21.12.1994* Ապահովում է ԱՊՀ անդամ պետության քաղաքացիների և նրանց տարածքներում բնակվող անձանց անձնական և գույքային իրավունքների կապակցությամբ բոլոր կողմերում նույնպիսի իրավական պաշտպանություն, ինչպիսին սեփական քաղաքացիներինն է՝ կարևոր նշանակություն տալով արդարադատության մարմինների կողմից	1. Մայրության կամ մայրության ճանաչումն ու վիճարկումը որոշվում է այն պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է երեխան ծնունդով: (Հոդված 31) 2. Ծնողների և երեխաների իրավահարաբերությունները որոշվում են այն պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում մշտապես բնակվում են երեխաները: Չափահաս երեխաներից ալիմենտներ գանձելու գործերով կիրառվում է այն պայմանավորվող կողմի օրենսդրությունը, որի տարածքում ալիմենտ ստանալ հավակնող անձն ունի մշտական բնակության վայր: Ծնողների և երեխաների միջև իրավահարաբերությունների վերաբերյալ գործերով իրավասու է այն պայմանավորվող կողմի դատարանը, որի օրենսդրությունը ենթակա է կիրառման: (Հոդված 32) 3. Որդեգրումը կամ դրա վերացումը որոշվում է այն պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է որդեգրողը որդեգրման կամ այն վերացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու պահին: Եթե երեխան մյուս պայմանավորվող կողմի քաղաքացի է, ապա որդեգրման կամ դրա վերացման դեպքում անհրաժեշտ է ստանալ օրինական ներկայացուցչի և պետական իրավասու մարմնի համաձայնությունը, ինչպես նաև երեխայի համաձայնությունը, եթե դա պահանջվում է այն պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է նա: (Հոդված 37) 4. Եթե երեխային որդեգրում են ամուսիններ, որոնցից մեկը մի, իսկ երկրորդը՝ մյուս պայմանավորվող կողմի քաղաքացի է, ապա որդեգրումը կամ դրա վերացումը պետք է կատարվեն երկու պայմանավորվող կողմերի օրենսդրություններով նախատեսված պայմաններին համապատասխան: (Հոդված 37) 5. Որդեգրման կամ դրա վերացման գործերով իրավասու է այն պայմանավորվող կողմի մարմինը, որի քաղաքացին է որդեգրողը որդեգրման կամ այն վերացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու պահին, իսկ եթե երեխային որդեգրում են ամուսիններ, որոնցից մեկը մի, իսկ երկրորդը՝ մյուս պայմանավորվող կողմի քաղաքացի է, ապա նման դեպքում իրավասու է այն պայմանավորվող կողմի մարմինը, որի տարածքում ամուսիններն ունեն կամ ունեցել են վերջին համատեղ բնակության կամ գտնվելու վայրը: (Հոդված 37)	Կողմերից մեկի տարածքում բնակության վայր ունեցող անձանց դեմ, անկախ նրանց քաղաքացիությունից, հայցերը հարուցվում են այդ պայմանավորվող կողմի դատարաններում, իսկ իրավաբանական անձանց դեմ հայցերը հարուցվում են այն պայմանավորվող կողմի դատարաններում, որի տարածքում գտնվում է տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինը, ներկայացուցչությունը կամ մասնաճյուղը: (Հոդված 20)

	քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելու ասպարեզում համագործակցության զարգացմանը:		
34.	**Համաձայնագիր երեխաներ ունեցող ընտանիքներին սոցիալական նպաստների, փոխհատուցումային վճարումների և ալիմենտների վճարման բնագավառում քաղաքացիների երաշխիքների մասին** *ընդունված է՝ 09.09.1994, ուժի մեջ է՝ 27.10.1995* Ապահովում է համաձայնագիրը ստորագրած պետությունների տարածքներում բնակվող քաղաքացիների իրավունքները, այդ թվում՝ երեխաներ ունեցող քաղաքացիներին երաշխավորված պետական սոցիալական օգնություն տրամադրելու միջոցով:	1. Կողմերից յուրաքանչյուրն իր տարածքում չի հաստատի որևէ սահմանափակում՝ հիմնված քաղաքացիության տարբերակման վրա երեխաներ ունեցող անձանց երաշխավորված պետական սոցիալական օգնություն ստանալու համար: (Հոդված 1) 2. Երեխաներ ունեցող քաղաքացիներին երաշխավորված պետական սոցիալական օգնությունը իրականացվում է այն կողմի ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում բնակվում է երեխան ծնողներից մեկի հետ (նրան փոխարինող անձի հետ): Սոցիալական նպաստները և փոխհատուցումային վճարները կողմերից որևէ մեկի զինծառայողներից և զինվորական կազմավորումների քաղաքացիական անձնակազմից երեխաներ ունեցող ընտանիքների համար, որոնք գտնվում են մյուս կողմի տարածքում, սահմանվում են այն դեպքերում, եթե դրանց վճարումը կատարվում է աշխատանքի (ծառայության) վայրում կեցության կողմի ազգային օրենսդրությամբ նախատեսված չափերով և պայմաններով, զինվորական կազմավորումների պատկանելության կողմի բյուջեից հատկացվող միջոցների հաշվին, իսկ այլ դեպքերում՝ կեցության կողմի քաղաքացիների համար նախատեսված կարգով: (Հոդված 3) 3. Սոցիալական նպաստների և փոխհատուցումային վճարների վճարման հետ կապված ծախսերը կրում է կողմը, որի տարածքում մշտապես բնակվում են երեխաներ ունեցող քաղաքացիներ, առանց փոխադարձ հաշվարկների, եթե այլ բան չի նախատեսված իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին երկկողմ համաձայնագրերով և սույն համաձայնագրով: (Հոդված 4) 4. Կողմերն առաջնային կարգով բանկերի և (կամ) փոստային կապի հաստատությունների միջոցով ապահովում են իրենց տարածքներում մշտապես կամ ժամանակավորապես բնակվող ֆիզիկական անձանց ալիմենտներով, երեխաներ ունեցող ընտանիքներին սոցիալական նպաստների և փոխհատուցումային վճարների դրամական միջոցների ազատ փոխանցումը և վճարումը: Երեխաներ ունեցող ընտանիքներին ալիմենտներով և այլ փոխհատուցումային վճարների գծով դրամական միջոցների փոխանցումը իրականացվում է սոցիալապես նշանակալի ոչ առևտրային վճարումներով քաղաքացիներին դրամական միջոցների փոխանցման մասին միջկառավարական համաձայնագրով: (Հոդված 7) 5. Համաձայնագրի դրույթներին համապատասխան, երեխաներ ունեցող քաղաքացիների ծագած սոցիալական իրավունքներն իրենց ուժը չեն կորցնում նաև համաձայնագրից որևէ կողմի դուրս գալու դեպքում: (Հոդված 15) 6. Երեխաներ ունեցող ընտանիքներին սոցիալական նպաստների, փոխհատուցումային վճարների և ալիմենտների վճարման գծով համաձայնագրում մասնակցության ժամանակաընթացքում ծագած կողմերի պարտավորությունները, համաձայնագրից որևէ կողմի դուրս գալու դեպքում, պահպանում են իրենց ուժը միջև դրանց լիովին կատարումը: (Հոդված 15)	Կողմերը իրականացնում են քաղաքականություն՝ համագործակցության միջոցով ազգային օրենսդրությունների մերձեցման նպատակով, կտեղեկացնեն միմյանց իրենց պետություններում գործող սոցիալական օրենսդրությունների և դրանց փոփոխությունների մասին, այդ թվում բնակչության աշխատանքի, միգրացիայի և սոցիալական պաշտպանության գծով խորհրդակցական խորհրդի միջոցով: (Հոդված 8)
35.	**ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ («Պեկինյան կանոններ»), Միջազգային պայմանագիր, 40/33** *ընդունված է՝ 29.11.1985* Անչափահասների համար ապահովում է սոցիալական արդարության բազմակողմանիություն, օժանդակելով երիտասարդության պաշտպանությանը և հասարակության մեջ խաղաղ կարգ ու կանոնi ապահովմանը:	1. Անչափահասի ձերբակալման ժամանակ աղջկա կամ տղայի ծնողները կամ խնամակալը անմիջապես տեղյակ են պահվում, իսկ եթե հնարավոր չէ՝ ծնողները կամ խնամակալը տեղյակ են պահվում ավելի ուշ, բայց հնարավորին չափ կարճ ժամանակամիջոցում: Դատավորը կամ այլ իրավասու պաշտոնական անձը կամ մարմինը ազատման հարցը քննարկում են անհապաղ: (Մաս 2) 2. Իրավակարգը պաշտպանող մարմինների և անչափահաս իրավախախտի միջև շփումը, իրավակարգը ապահովելու համար, իրագործվում է այնպես, որպեսզի պատշաճ կերպով հաշվի առնելով գործի հանգամանքները, հարգվի անչափահասի իրավական վիճակը, աջակցվի անչափահասի բարեհաջողությանը և խուսափվի աղջկան կամ տղային վնաս պատճառելուց: (Մաս 2) 3. Եթե անչափահաս իրավախախտների գործը չի կարճվել, աղջկա կամ տղայի գործով, արդար և անաչառ դատի սկզբունքներին համապատասխան, զբաղվում է իշխանության իրավասու մարմինը (դատարանը, տրիբունալը, խորհուրդը, հանձնաժողովը և այլն): Դատական քննությունը պետք է պատասխանի անչափահասի շահերին և իրագործվի ըմբռնողության մթնոլորտում, որն անչափահասին հնարավորություն կտա մասնակցելու դատաքննությանը և այնտեղ ազատ շարադրելու իր տեսակետները: (Մաս 3) 4. Անչափահասների գործով որոշումը կարող է անչափահասի կյանքի վրա ազդել ավելի երկար ժամանակաընթացքում, քան մեծահասակների: Ուստի կարևոր է իշխանության ղեկավար մարմնի կամ անկախ մարմնի (երաշխավորության գործերով հանձնաժողով, փորձարարական ծառայության համակարգ, երիտասարդության սոցիալական ապահովության հիմնարկներ) կողմից որոշման կատարման հսկողությունը, որի լիազորությունները գործով սկզբնական որոշում ընդունած իրավասու մարմնի լիազորություններին համապատասխան են: Այդ նպատակով մի քանի երկրներում հիմնված է juge de L' execution des peines պաշտոնը: (Մաս 4) 5. Պետք է ջանքեր գործադրել դատավարության բոլոր փուլերում անչափահասներին բնակության, կրթության կամ պրոֆեսիոնալ պատրաստություն ստանալու, աշխատանքի տեղավորելու և այդ տեսակի անհրաժեշտ օգնություն տրամադրելու համար, որն օգտակար և գործուն կլինի դաստիարակության ընթացքին նպաստելու գործում: (Մաս 4) 6. Ուղղիչ հիմնարկներում անչափահասները պետք է ապահովվեն իրենց տարիքին, սեռին, անձին և լիարժեք զարգացման շահերին համապատասխան խնամքով, պաշտպանությամբ և սոցիալական, հոգեբանական, բժշկական, ֆիզիկական, կրթության և արհեստավարժության բնագավառների ողջ անհրաժեշտ օգնությամբ: (Մաս 5) 7. Ուղղիչ հիմնարկներում անչափահասները պետք է պահվեն մեծահասակներից առանձին, հատուկ ուղղիչ հիմնարկում կամ ուղղիչ հիմնարկի հատուկ բաժամմունքում, որտեղ պահվում են նաև մեծահասակները: (Մաս 5) 8. Ուղղիչ հիմնարկներում պահվող իրավախախտ երիտասարդ կանանց պետք է հատկացնել հատուկ ուշադրություն, հաշվի առնելով նրանց անձնական կարիքներն ու պրոբլեմները: Նրանք պետք է ապահովվեն նույնպիսի խնամքով, օգնությամբ, պրոֆեսիոնալ պատրաստությամբ, ինչպիսիք ապահովվում է երիտասարդ տղամարդ իրավախախտների համար: Նրանց նկատմամբ պետք է ապահովվի արդարացի վարվելաձև: (Մաս 5) 9. Ուղղիչ հիմնարկներում պահվող անչափահասների բարեկեցության շահերից ելնելով ծնողները կամ խնամակալները պետք է նրանց այցելելու իրավունք ունենան: (Մաս 5) 10. Անհրաժեշտ է խրախուսել միջնախարարական և միջգերատեսչական համագործակցությունը՝ ուղղիչ հիմնարկներում պահվող անչափահասներին համապատասխան ակադեմիական կրթություն կամ, հնարավորության դեպքում, արհեստավարժություն ապահովելու նպատակով, որպեսզի ուղղիչ հիմնարկից դուրս գալուց հետո նրանք լիարժեք կրթություն ունենան: (Մաս 5) 11. Պետք է ջանքեր գործադրել անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման շրջանակներում գնահատիչ հետազոտությունների կանոնավոր մեխանիզմի ստեղծման և համապատասխան տվյալների ու տեղեկությունների հավաքման և վերլուծության համար, նպատակ ունենալով պատշաճ գնահատել և առավել բարեփոխել ու կատարելագործել արդարադատության իրականացման մեխանիզմը: (Մաս 6) 12. Անչափահասների նկատմամբ արդարադատություն կիրառելիս ծառայությունների մատուցումը պետք է պլանավորել ու իրականացնել, որպես ազգային զարգացման միջոցառումների անբաժանելի մաս: (Մաս 6)	Միավորված ազգերի կազմակերպության համակարգի բոլոր համապատասխան մարմիններին, մասնավորապես տարածաշրջանային հանձնաժողովներին և մասնագիտացված հիմնարկներին, հանցագործությունների կանխարգելման և իրավախախտների հետ վարվելաձևի հարցերով զբաղվող հաստատություններին, մյուս միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպություններին հաստատակամ կոչ է անում համագործակցել քարտուղարության հետ և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել իրենց մասնագիտական իրավասության համապատասխան բնագավառներում ապահովելու համաձայնեցված ու մշտական գործողություններ Պեկինյան կանոնների բովանդակած սկզբունքների իրականացման նպատակով:

2. Ներպետական իրավական կարգավորման փաստաթղթեր (2016թ. հունվարի 1-ի դրությամբ)

Հ/Հ	Փաստաթղթի անվանում, համարը, տեսակը, ընդունող մարմինը, ընդունման ամսաթիվը, կարգավորման առարկան	Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում սահմանող դրույթները, լիազորություններ, պարտականություններ	ԵԻՊ ոլորտում տվյալների հավաքագրման և մոնիթորինգի համակարգեր	Լիազոր մարմին(ներ)ը
36.	**ՀՀ քաղաքացիական օրենսգիրք** *ՀՕ-239, ընդունված է՝ 05.05.1998, ուժի մեջ է՝ 01.01.1999* Սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների (մտավոր սեփականություն) ծագման հիմքերն ու իրականացման կարգը, կարգավորում է պայմանագրային և այլ պարտավորություններ, գույքային ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերություններ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց միջև կամ նրանց մասնակցությամբ հարաբերություններ	1. Եթե դատական կարգով հաստատվել է, որ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով ֆիզիկական անձի նկատմամբ թույլ է տրվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2, 3 կամ 5 հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում, ապա այդ անձի մահվան կամ անգործունակության դեպքում, մասնավորապես, նրա ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում: (Հոդված 162.1) 2. Բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձի հետ առանց սեփականատիրոջ համաձայնության կարող են բնակվել նաև իր ընտանիքի անդամները (ամուսինը, անչափահաս երեխաները): (Հոդված 225) 3. Ուղևորն իրավունք ունի օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կարգով իր հետ անվճար կամ այլ արտոնյալ պայմաններով փոխադրել երեխաներ: (Հոդված 856) 4. Տուժողի (կերակրողի) մահվան դեպքում վնասի հատուցման իրավունք ունեն, մասնավորապես. մահացածի մահվանից հետո ծնված նրա երեխան, ծնողներից մեկը, ամուսինը կամ ընտանիքի անդամը՝ անկախ նրա աշխատունակությունից, որը չի աշխատում և զբաղված է մահացածի խնամքի ներքո գտնվող նրա տասնչորս տարեկան չդարձած կամ թեկուզև նշված տարիքին հասած, սակայն բժշկական մարմինների եզրակացությամբ իր առողջական վիճակով կողմնակի խնամքի կարիք ունեցող երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով: Վնասը հատուցվում է անչափահասներին՝ մինչև տասնութ տարեկան դառնալը, ծնողներից մեկին, ամուսնուն կամ ընտանիքի այլ անդամին, որն զբաղված է մահացածի խնամքի տակ գտնվող նրա երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով՝ մինչև վերջիններիս տասնչորս տարեկան դառնալը: (Հոդված 1081) 5. Կերակրողի մահվան հետ կապված վնասի հատուցման իրավունք ունեցող յուրաքանչյուր անձի համար սահմանված հատուցման չափը ենթակա չէ վերահաշվարկի, բացառությամբ հետևյալ դեպքերի. երեխայի ծնունդը կերակրողի մահվանից հետո, մահացած կերակրողի երեխաների, թոռների, եղբայրների և քույրերի խնամքով զբաղված անձանց հատուցման վճարի նշանակումը և դադարումը: (Հոդված 1082) 6. Ժառանգության բացման ժամանակ պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի անչափահաս երեխաները: (Հոդված 1194) 7. Ժառանգատուի երեխաները առաջին հերթի ժառանգներն են: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով: (Հոդված 1216) Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով: (Հոդված 1217) Ժառանգատուի հորեղբայրների և հորաքույրների ու քեռիների և մորաքույրների երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով: (Հոդված 1219) Մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին (ներկայացման իրավունքով ժառանգություն) և նրանց միջև բաշխվում է հավասարապես: Ներկայացման իրավունքով չեն կարող ժառանգել ժառանգությունից մեկուսացված կամ ժառանգատուի կողմից ժառանգությունից զրկված ըստ օրենքի ժառանգի երեխաները: (Հոդված 1221) Ըստ օրենքի ժառանգության դեպքում որդեգրվածն ու նրա երեխաները մի կողմից, և որդեգրողն ու նրա ազգականները մյուս կողմից հավասարեցվում են ըստ ծագման ազգականներին (արյունակից ազգականներին): Որդեգրվածը և նրա երեխաները, ըստ օրենքի, չեն ժառանգում որդեգրվածի ծնողների ու ըստ ծագման նրա այլ ազգականների մահից հետո: Որդեգրվածի ծնողները և ըստ ծագման նրա այլ ազգականները, ըստ օրենքի, չեն ժառանգում որդեգրվածի ու նրա երեխաների մահվանից հետո: (Հոդված 1223) 8. Սաղմնավորված, սակայն դեռ չծնված ժառանգի առկայության դեպքում ժառանգության բաժանումը կարող է կատարվել միայն նրա ծնվելուց հետո: Անչափահասների շահերի պաշտպանության նպատակով ժառանգության բաժանման վերաբերյալ համաձայնությունը կազմելուն կամ ժառանգությունը բաժանելու վերաբերյալ գործի դատաքննությանը պետք է մասնակցի խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչը: (Հոդված 1238) 9. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասների կամ խնամակալության տակ գտնվող քաղաքացիների բնակության վայր է համարվում նրանց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ խնամակալների բնակության վայրը: (Հոդված 23) 10. Տասնվեց տարին լրացած անչափահասը կարող է լրիվ գործունակ ճանաչվել, եթե նա աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ: Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելը (էմանսիպացիա) կատարվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի վճռով: Ծնողները, որդեգրողները և հոգաբարձուն պատասխանատվություն չեն կրում լրիվ գործունակ ճանաչված անչափահասի պարտավորությունների, մասնավորապես նրա կողմից պատճառված վնասի հետևանքով առաջացած պարտավորությունների համար: Այն դեպքում, երբ օրենքով թույլատրվում է ամուսնանալ մինչև տասնութ տարեկան դառնալը, քաղաքացին լրիվ ծավալով գործունակություն է ձեռք բերում ամուսնանալու պահից: Ամուսնության հետևանքով ձեռք բերված գործունակությունը լրիվ ծավալով պահպանվում է նաև մինչև տասնութ տարեկան դառնալն ամուսնալուծվելուց հետո: Ամուսնությունն անվավեր ճանաչելիս՝ դատարանը կարող է վճիռ կայացնել դատարանի կողմից որոշված պահից անչափահաս ամուսնու գործունակության լրիվ կորստյան մասին: (Հոդված 24) 11. Տասնչորս տարեկան չդարձած անչափահասների (փոքրահասակների) փոխարեն գործարքները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշվածների, նրանց անունից կարող են կնքել միայն նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները: Վեցից մինչև տասնչորս տարեկան փոքրահասակներն իրավունք ունեն ինքնուրույն կնքել. մանր կենցաղային գործարքներ, նոտարական վավերացում կամ գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում չպահանջող՝ անհատույց օգուտներ ստանալուն	Խնամարկյալների բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը հսկողություն է իրականացնում խնամակալների ու հոգաբարձուների գործունեության նկատմամբ: (Հոդված 36)	• **Խնամակալության և հոգաբարձության մարմինները** սահմանվում են օրենքով: (Հոդված 36)

		ուղղված գործարքներ, օրինական ներկայացուցչի կամ վերջինիս համաձայնությամբ երրորդ անձանց կողմից որոշակի նպատակով կամ ազատորեն տնօրինելու համար տրամադրված միջոցները տնօրինելու գործարքներ: Փոքրահասակի գործարքներով՝ ներառյալ նրա կողմից ինքնուրույն կնքված գործարքները, գույքային պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չապացուցեն, որ պարտավորությունն իրենց մեղքով չի խախտվել: Այդ անձինք, օրենքին համապատասխան, պատասխանատվություն են կրում նաև փոքրահասակի պատճառած վնասի համար: (Հոդված 29) 12. 14-ից մինչև 18 տարեկան անչափահասները կարող են գործարքներ կնքել իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ: Այդպիսի անչափահասի կնքած գործարքը վավեր է նաև նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի՝ հետագայում տված գրավոր հավանության դեպքում: 14-ից մինչև 18 տարեկան անչափահասները, առանց ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության, իրավունք ունեն. տնօրինել իրենց աշխատավարձը, կրթաթոշակը և այլ եկամուտները, իրականացնել գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության, գյուտի կամ մտավոր գործունեության՝ օրենքով պահպանվող այլ արդյունքի հեղինակի իրավունքներ, ավանդներ մուծել վարկային հաստատություններ և տնօրինել դրանք, կնքել կենցաղային մանր գործարքներ: 16 տարեկան դառնալիս՝ անչափահասներն իրավունք ունեն նաև, կոոպերատիվների մասին օրենքներին համապատասխան, լինել կոոպերատիվի անդամ: 14-ից մինչև 18 տարեկան անչափահասներն ինքնուրույն գույքային պատասխանատվություն են կրում իրենց կնքած գործարքներով: Այդպիսի անչափահասներն իրենց պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում օրենսգրքին համապատասխան: Ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի միջնորդությամբ դատարանը կարող է բավարար հիմքերի առկայության դեպքում սահմանափակել 14-ից մինչև 18 տարեկան անչափահասի՝ իր աշխատավարձը, կրթաթոշակը կամ այլ եկամուտներն ինքնուրույն տնօրինելու իրավունքը կամ զրկել նրան այդ իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահասը լրիվ ծավալով գործունակություն է ձեռք բերել: (Հոդված 30) 13. Անչափահասների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն սահմանվում է նաև նրանց դաստիարակելու նպատակով: Խնամակալների և հոգաբարձուների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ ընտանիքի մասին օրենսգրքով: Խնամակալները և հոգաբարձուներն առանց հատուկ լիազորության հանդես են գալիս իրենց խնամարկյալների իրավունքների ու շահերի պաշտպանությամբ՝ ցանկացած անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում: Անչափահասների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն սահմանվում են նրանց ծնողների, որդեգրողների բացակայության, դատարանով ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու, ինչպես նաև այն դեպքերում, երբ անչափահասներն այլ պատճառներով մնացել են առանց ծնողական խնամքի, մասնավորապես, երբ ծնողները խուսափել են նրանց դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից: (Հոդված 33) 14. Խնամակալություն սահմանվում է 14 տարին չլրացած անչափահասների նկատմամբ: Խնամակալները խնամարկյալների ներկայացուցիչներն են օրենքի ուժով և նրանց անունից ու ի շահ նրանց կնքում են բոլոր անհրաժեշտ գործարքները: (Հոդված 34) 15. Հոգաբարձությունը սահմանվում է 14-ից մինչև 18 տարեկան անչափահասների նկատմամբ: Հոգաբարձուները համաձայնություն են տալիս այնպիսի գործարքներ կնքելու համար, որոնք հոգաբարձության ներքո գտնվող անձինք իրավունք չունեն ինքնուրույն կնքել: Հոգաբարձուներն աջակցում են հոգաբարձության ներքո գտնվող անձանց՝ իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս, ինչպես նաև պաշտպանում են նրանց երրորդ անձանց չարաշահումներից: (Հոդված 35) 16. ՀՀ տարածքից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների նկատմամբ սահմանված խնամակալությունը (հոգաբարձությունը) ՀՀ-ում համարվում է վավեր, եթե դրա դեմ օրենքի վրա հիմնված առարկություններ չունի ՀՀ համապատասխան հյուպատոսական հաստատությունը: (Հոդված 1268) 17. Խնամակալ կամ հոգաբարձու նշանակում է խնամակալության ու հոգաբարձության կարիք ունեցող անձի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ մեկ ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ նշված մարմնին հայտնի է դարձել քաղաքացու նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու անհրաժեշտությունը: Խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի նկատմամբ, մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններն իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինը: Խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը շահագրգիռ անձանց կողմից կարող է բողոքարկվել դատարան: Խնամակալը կամ հոգաբարձուն նշանակվում է իր համաձայնությամբ: Ընդ որում, պետք է հաշվի առնվեն նրա բարոյական և անձնական այլ հատկանիշները, խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններ կատարելու ունակությունը, նրա ու խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի միջև եղած հարաբերությունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև խնամարկյալի ցանկությունը: Խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող և համապատասխան դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նման այլ հաստատություններում գտնվող կամ տեղավորված քաղաքացիների խնամակալներն ու հոգաբարձուներն այդ հաստատություններն են: (Հոդված 37) Խնամակալության և հոգաբարձության մարմինը խնամակալին կամ հոգաբարձուին ազատում է իր պարտականությունների կատարումից՝ անչափահասին իր ծնողներին վերադարձնելու կամ նրան որդեգրելու դեպքում: (Հոդված 41) 18. Փոքրահասակ խնամարկյալի 14 տարին լրանալիս նրա նկատմամբ խնամակալությունը դադարում է, իսկ խնամակալի պարտականություններ իրականացնող քաղաքացին, առանց այդ մասին լրացուցիչ որոշման, դառնում է անչափահասի հոգաբարձուն: Անչափահասի նկատմամբ հոգաբարձությունն առանց հատուկ որոշման դադարում է նրա 18 տարին լրանալիս, ինչպես նաև մինչև չափահաս դառնալը՝ նրա ամուսնության և լրիվ գործունակություն ձեռք բերելու այլ դեպքերում: (Հոդված 42) 19. Անչափահաս քաղաքացիների խնամակալները և հոգաբարձուները պարտավոր են իրենց խնամարկյալների հետ ապրել համատեղ: 16 տարին լրացած խնամարկյալից հոգաբարձուի առանձին ապրելը թույլատրում է խնամակալության և հոգաբարձության մարմինը, եթե դա անբարենպաստ չի անդրադառնում խնամարկյալի դաստիարակության, նրա իրավունքների ու շահերի պաշտպանության վրա: Խնամակալները և հոգաբարձուները պարտավոր են հոգալ իրենց խնամարկյալների ապրուստը, ապահովել նրանց խնամքն ու բուժումը, կրթությունը և դաստիարակությունը, պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը: (Հոդված 38) 20. Կարգավորում է խնամարկյալի գույքը տնօրինելու (Հոդված 39), հավատարմագրային կառավարման հարցերը (Հոդված 40): 21. 14 տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) կնքած գործարքն առոչինչ է: Փոքրահասակի շահերից ելնելով՝ նրա կնքած		

		գործարքը ծնողների, որդեգրողների կամ խնամակալի պահանջով դատարանով կարող է ճանաչվել վավեր, եթե այն կնքվել է ի շահ փոքրահասակի: (Հոդված 309): 14-ից մինչև 18 տարեկան անչափահասի կողմից, առանց իր ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության կնքած գործարքը, այն դեպքերում, երբ նման համաձայնությունը պահանջվում է, դատարանով կարող է անվավեր ճանաչվել ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի հայցով: Կանոնները չեն տարածվում լրիվ գործունակ դարձած անչափահասների գործարքների վրա: (Հոդված 310) 22. 14 տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել: Եթե խնամակալության կարիք ունեցող փոքրահասակը գտնվել է համապատասխան դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ այլ նմանօրինակ հաստատությունում, որն օրենքի ուժով նրա խնամակալն է, այդ հաստատությունը պարտավոր է հատուցել փոքրահասակի պատճառած վնասը, եթե չի ապացուցում, որ վնասը անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել: Եթե փոքրահասակը վնաս է պատճառել այն ժամանակ, երբ նա գտնվել է կրթական, դաստիարակչական, բուժական կամ այլ հաստատության հսկողության ներքո, որը պարտավոր էր հսկողություն իրականացնել նրա նկատմամբ կամ պայմանագրի հիման վրա փոքրահասակի նկատմամբ հսկողություն իրականացնող անձի հսկողության ներքո, այդ հաստատությունը կամ անձը պատասխանատվություն է կրում փոքրահասակի պատճառած վնասի համար, եթե չի ապացուցում, որ վնասն անչափահասի (փոքրահասակի) մեղքով չի պատճառվել, և եթե այլ բան նախատեսված չէ փոքրահասակի ծնողների, որդեգրողների կամ խնամակալի և կրթական, դաստիարակչական, բուժական կամ այլ հաստատության միջև կնքված պայմանագրով: Այն անձը, որն օժտված չէ ծնողական իրավազորությամբ, որին, սակայն, լիազորությունների փոխանցմամբ կամ որևէ այլ ճանապարհով վստահվել է անչափահասի նկատմամբ խնամքի, հսկողության կամ դաստիարակության իրականացումը, պարտավոր է հատուցել անչափահասի գործողությունների հետևանքով պատճառված վնասը, եթե այլ բան նախատեսված չէ լիազորողի կամ վստահողի և անչափահասի նկատմամբ խնամք, հսկողություն կամ դաստիարակություն իրականացնողի միջև կնքված պայմանագրով: Փոքրահասակի պատճառած վնասը հատուցելու, ծնողների, որդեգրողների, խնամակալի, կրթական, դաստիարակչական, բուժական և այլ հաստատությունների պարտականությունը չի դադարում փոքրահասակի չափահաս տարիքի հասնելով կամ նրա կողմից վնասը հատուցելու համար բավարար գույք ստանալով: Եթե ծնողները, որդեգրողները, խնամակալը մահացել են կամ բավարար միջոցներ չունեն տուժածի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու համար, իսկ վնաս պատճառողը, դառնալով լրիվ գործունակ, ունի այդպիսի միջոցներ, դատարանը, հաշվի առնելով տուժողի և վնաս պատճառողի գույքային դրությունը, ինչպես նաև այլ հանգամանքներ, իրավունք ունի վճիռ կայացնել վնասի հատուցումը լրիվ կամ մասնակիորեն վնաս պատճառողի վրա դնելու մասին: (Հոդված 1067) 23. 14-ից մինչև 18 տարեկան անչափահասներն ընդհանուր հիմունքներով ինքնուրույն պատասխանատվություն են կրում իրենց պատճառած վնասի համար: Այն դեպքում, երբ 14-ից մինչև 18 տարեկան անչափահասը վնասը հատուցելու համար չունի բավարար եկամուտներ կամ այլ գույք, վնասը լրիվ կամ պակասող մասով պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել: Եթե հոգաբարձության կարիք ունեցող 14-ից մինչև 18 տարեկան անչափահասը գտնվում է համապատասխան դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ այլ նմանօրինակ հաստատությունում, որն օրենքի ուժով նրա հոգաբարձուն է, այդ հաստատությունը պարտավոր է հատուցել նրա պատճառած վնասը լրիվ կամ չբավարարող մասով, եթե չի ապացուցում, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: 14-ից մինչև 18 տարեկան անչափահասների պատճառած վնասը հատուցելու՝ ծնողների, որդեգրողների, հոգաբարձուի և համապատասխան հաստատության պարտականությունը դադարում է վնաս պատճառողի չափահաս տարիքի դառնալով կամ այն դեպքերում, երբ մինչև չափահաս դառնալը նա ձեռք է բերել եկամուտներ կամ այլ գույք, որը բավարար է վնասը հատուցելու համար, կամ նա գործունակություն ձեռք է բերել մինչև չափահաս տարիքի հասնելը: (Հոդված 1068) 24. 14-ից մինչև 18 տարեկան անչափահասը, որը վնաս է պատճառել այնպիսի վիճակում, երբ նա չէր կարող գիտակցել իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, պատասխանատվություն չի կրում իր պատճառած վնասի համար: Եթե վնասը պատճառվել է տուժողի կյանքին կամ առողջությանը, դատարանը կարող է տուժողի և վնաս պատճառողի գույքային դրության, ինչպես նաև այլ հանգամանքների հաշվառմամբ վնաս հատուցելու պարտականությունը լրիվ կամ մասնակիորեն դնել վնաս պատճառողի վրա: Վնաս պատճառողը չի ազատվում պատասխանատվությունից, եթե ոգելից խմիչքներ, թմրադեղեր օգտագործելով կամ այլ եղանակով իրեն հասցրել է այնպիսի վիճակի, որում նա չէր կարող գիտակցել իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք: Եթե վնասը պատճառվել է անձի կողմից, որը հոգեկան խանգարման հետևանքով չէր կարող գիտակցել իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, դատարանը կարող է վնասը հատուցելու պարտականությունը դնել այդ անձի հետ համատեղ բնակվող աշխատունակ ծնողների վրա, ովքեր իմացել են վնաս պատճառողի հոգեկան խանգարման մասին, սակայն չեն բարձրացրել նրան անգործունակ ճանաչելու հարցը: (Հոդված 1071) 25. 14 տարեկան չդարձած անչափահասին (փոքրահասակին), որը չունի աշխատավարձ (եկամուտ), հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում, դրա համար պատասխանատու անձը պարտավոր է հատուցել առողջությանը վնաս պատճառելուց ծագած ծախսերը: Փոքրահասակի 14 տարեկան դառնալուց հետո, ինչպես նաև 14 տարեկանից մինչև 18 տարեկան հասակի անչափահասի, որը չունի աշխատանք (եկամուտ), առողջությանը վնաս պատճառելու դեպքում, դրա համար պատասխանատու անձը պարտավոր է բացի տուժողի առողջությանը վնաս պատճառելուց ծագած ծախսերից, հատուցել նաև նրա աշխատունակության կորստի կամ նվազեցման հետ կապված վնասը՝ ելնելով նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափից: Եթե առողջությանը վնաս հասցվելու ժամանակ անչափահասն ունեցել է աշխատավարձ, ապա վնասը հատուցվում է, ելնելով այդ աշխատավարձի չափից, որը սակայն չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի հնգապատիկից: Անչափահասը, որի առողջությանը նախկինում վնաս է պատճառվել, աշխատանքային գործունեությունն սկսելուց հետո իրավունք ունի, ելնելով իր ստացած աշխատավարձից, պահանջել վնասի հատուցման չափի մեծացում, սակայն իր զբաղեցրած պաշտոնի համար սահմանված վարձատրությունից կամ իր աշխատատեղի նույն որակավորման աշխատողի աշխատավարձից ոչ ավելի չափով: (Հոդված 1080)		
37.	**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք**	1. Անչափահասների իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանում են նրանց ծնողները (որդեգրողները), խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք դատարան են ներկայացնում իրենց կարգավիճակը հավաստող փաստաթղթեր:	Երեխա որդեգրելու վերաբերյալ դիմումին պետք է կցվի **ՀՀ կառավարության լիազորած մարմնի**	• ՀՀ կառավարության լիազորած մարմին: (Հոդված 173[2])

	ՀՕ-247, ընդունված է՝ 17.06.1998, ուժի մեջ է՝ 01.01.1999 Սահմանում է ՀՀ դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը	(Հոդված 43) 2. Անձանց դեմ ամուսնալուծության վերաբերյալ հայցը, եթե անչափահաս երեխան (երեխաները) գտնվում է հայցվորի մոտ, կարող է հարուցվել հայցվորի բնակության վայրի դատարան: (Հոդված 83) 3. Դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե ամուսինը կնոջ հղիության ժամանակ կամ երեխան ծնվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առանց կնոջ համաձայնության ամուսնալուծության դիմում է տվել: (Հոդված 92) 4. Կարգավորում է երեխա **որդեգրելու** վերաբերյալ դիմումի տրման վայր հարցերը (Հոդված 173[1]), սահմանում է դիմումին առաջադրվող պահանջները, մասնավորապես դիմումում պետք է նշվեն որդեգրել ցանկացող անձի ցանկության դեպքում նրա միջնորդությունը՝ որդեգրվող երեխայի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ժամանակը և վայրը փոփոխելու, իրեն որպես որդեգրվող երեխայի ծնող գրառելու մասին, իսկ եթե որդեգրվող երեխան մինչև մեկ տարեկան է, ապա նաև որդեգրել ցանկացող անձի ցանկության դեպքում նրա միջնորդությունը՝ որդեգրվող երեխայի ծննդյան ժամանակը փոփոխելու մասին: Դիմումին, մասնավորապես, պետք է կցվի տասը տարին լրացած երեխայի համաձայնությունը: Եթե երեխան ապրել է որդեգրողի ընտանիքում և նրան համարում է իր ծնողը, ապա որդեգրումը բացառության կարգով կարող է կատարվել առանց որդեգրվող երեխայի համաձայնությունն ստանալու: Որդեգրմանը երեխայի համաձայնությունը ի հայտ են բերում խնամակալության և հոգաբարձության մարմինները: Անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս անհրաժեշտ է նրանց ծնողների կամ խնամակալների (հոգաբարձուների) համաձայնությունը, իսկ ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությունը: (Հոդված 173[2]): Անհրաժեշտության դեպքում դատարանը գործի մասնակցությանը կարող է ներգրավել որդեգրվող երեխայի ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին և այլ շահագրգիռ անձանց, ինչպես նաև տասը տարին լրացած որդեգրվող երեխային: (Հոդված 173[3]) Որդեգրումը վերացնելու գործերի քննությունը և լուծումն իրականացվում են հայցային վարույթի կանոններով: (Հոդված 173[5]) 5. Կարգավորում է **անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (էմանսիպացիա)** գործերի վարույթը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում 16 տարեկան դարձած անչափահասը կարող է դիմել իր բնակության վայրի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ իրեն լրիվ գործունակ (էմանսիպացված) ճանաչելու մասին դիմումով: (Հոդված 165): Դիմումի քննության արդյունքներով դատարանը վճիռ է կայացնում դիմողի խնդրանքը բավարարելու կամ մերժելու մասին: Դիմումը բավարարվելու դեպքում դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից տասնվեց տարեկան դարձած անչափահասը ճանաչվում է լրիվ գործունակ (էմանսիպացված): (Հոդված 167)	եզրակացությունը՝ որդեգրման հիմնավորվածության և այդ որդեգրումը որդեգրվող երեխայի շահերին համապատասխանելու մասին՝ նշելով որդեգրվող երեխայի և որդեգրողի (որդեգրողների) անձնական շփումների փաստի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև բոլոր այն փաստաթղթերի պատճենները, որոնք որդեգրել ցանկացող անձը (անձինք) ներկայացրել են եզրակացությունը ստանալու համար: (Հոդված 173[2]) Դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է վճիռ՝ որդեգրումը հաստատելու մասին: (Հոդված 173[4])	• Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան • Դատարանի վճիռը, որով հաստատված է ճանաչվում երեխայի որդեգրումը, հիմք է **քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների** կողմից պետական գրանցման համար: (Հոդված 173[4]) • Երեխաների որդեգրումը հաստատելու մասին գործերը **դատարանը** քննում է **խնամակալության և հոգաբարձության մարմնի**, որդեգրել ցանկացող անձի և տասնչորս տարին լրացած երեխայի պարտադիր մասնակցությամբ: (Հոդված 173[3]) • Դատարանը էմանսիպացիայի դիմումը քննում է դիմողի, ծնողներից մեկի (որդեգրողների, հոգաբարձուի) կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ: (Հոդված 166)
38.	**ՀՀ դատական օրենսգիրք** *ՀՕ-135-Ն, ընդունված է՝ 21.02.2007, ուժի մեջ է՝ 18.05.2007* Կարգավորում է դատական իշխանության, ինչպես նաև հաշտարարության կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերություններն այնքանով, որքանով դրանք չեն վերաբերում ՀՀ սահմանադրական դատարանին:	1. Արգելվում է դատական կարգադրիչի կողմից զենքի գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում կամ զինված դիմադրություն ցույց տալու և անձանց կյանքին իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի: (Հոդված 218.1)	**Ընդհանուր իրավասության դատարանը** քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ: (Հոդված 22) **Դատական կարգադրիչի** գործունեության նկատմամբ հսկողության հարաբերությունները կարգավորվում են «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքով (Հոդված 197) **Դատական դեպարտամենտի ղեկավարը** ընդհանուր վերահսկողություն է իրականացնում **դատական կարգադրիչների ծառայության** գործունեության նկատմամբ: Դատական կարգադրիչների ծառայության պետը, որն ի պաշտոնե Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալն է ղեկավարում և հսկողություն է իրականացնում դատական կարգադրիչների ծառայության գործունեության նկատմամբ: (Հոդված 201)	• Դատական կարգադրիչների ծառայություն • ՀՀ դատական դեպարտամենտ
39.	**ՀՀ աշխատանքային օրենսգիրք** *ՀՕ-124-Ն, ընդունված է՝ 09.11.2004, ուժի մեջ է՝ 21.06.2005* Կարգավորում է կոլեկտիվ և անհատական աշխատանքային	1. Աշխատանքային **իրավունակությունը** և իր գործողություններով աշխատանքային իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար աշխատանքային պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (աշխատանքային գործունակություն) լրիվ ծավալով ծագում է տասնվեց տարեկան դառնալու պահից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: (Հոդված 15) 2. **Լիակատար նյութական պատասխանատվության** մասին պայմանագիր չի կարող կնքվել մինչև 18 տարեկան աշխատողների հետ: (Հոդված 240) 3. Ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող 14-ից	Աշխատանքային պայմանագիրը լուծվում է, եթե աշխատողը մինչև 16 տարեկան է, և ծնողներից մեկը, որդեգրողը կամ հոգաբարձուն կամ խնամակալը, նրա առողջության նկատմամբ հսկողություն իրականացնող բժիշկը կամ աշխատանքի անվտանգության ապահովման	• ՀՀ կառավարության լիազորած մարմին (Հոդված 109) • Աշխատողների ներկայացուցիչներ • Գործատուներ և գործատուների ներկայացուցիչներ • Առողջությունը վերահսկող կազմակերպություն

	հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաև աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:	մինչև 16 տարեկան անձինք համարվում են **աշխատող**: 14-ից մինչև 16 տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում, իսկ մինչև 14 տարեկան անձինք կարող են ընդգրկվել կինեմատոգրաֆիայի, մարզական, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում ստեղծագործությունների ստեղծմանը (ստեղծագործական աշխատանք) և (կամ) կատարմանը՝ ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնության դեպքում, որը չպետք է վնասի նրանց առողջությանն ու բարոյականությանը, ինչպես նաև չպետք է խոչընդոտի կրթությանն ու անվտանգությանը: Մինչև 16 տարեկան անձանց հետ կնքվում է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր: (Հոդված 17) 4. Սահմանում է մինչև 14 տարեկան աշխատողների հետ աշխատանքային **պայմանագրի** կնքման կարգը (Հոդված 85), և մինչև 18 տարեկան քաղաքացիներին աշխատանքի ընդունման ժամանակ պահանջվող **փաստաթղթերը** (Հոդված 89): 5. Եթե **աշխատանքի է ընդունվում** մինչև 16 տարեկան անչափահաս քաղաքացին, ապա աշխատանքային պայմանագիր կնքելու համար գործատուն պարտավոր է պահանջել ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի կամ խնամակալի գրավոր համաձայնությունը: (Հոդված 89) 6. Աշխատանքային **պայմանագրի** լուծումը գործատուի նախաձեռնությամբ արգելվում է երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ սահմանված դեպքերի: (Հոդված 114) 7. **Աշխատաժամանակի** կրճատ տևողություն սահմանվում է. մինչև 7 տարեկան երեխաների համար՝ օրական մինչև երկու ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան չորս ժամ, 7-ից մինչև 12 տարեկան երեխաների համար՝ օրական մինչև երեք ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան վեց ժամ, 12-ից մինչև 14 տարեկան երեխաների համար՝ օրական մինչև չորս ժամ, սակայն շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան տասներկու ժամ, 14-ից մինչև 16 տարեկան աշխատողների համար՝ շաբաթական մինչև 24 ժամ, 16-ից մինչև 18 տարեկանների համար՝ շաբաթական մինչև 36 ժամ: (Հոդված 140) 8. Ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ սահմանվում է հղի կնոջ և մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողի պահանջով (Հոդված 141) 9. Առանց ամուսնու (կնոջ) մինչև 14 տարեկան անչափահաս խնամող աշխատողն ունի աշխատանքային հերթափոխի նախապատվության իրավունք՝ գործատուի մոտ նման հնարավորության առկայության դեպքում: (Հոդված 142) 10. Մինչև 18 տարեկան անձանց արգելվում է ներգրավել **գիշերային** (Հոդված 148) կամ **արտաժամյա** աշխատանքի (Հոդված 144), ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում (Հոդված 257), տանը կամ կազմակերպությունում **հերթապահության** (Հոդված 149), ինչպես նաև միայնակ ուղարկել **գործուղման** (Հոդված 209): 14-ից մինչև 18 տարեկան անձինք չեն կարող ընդգրկվել աշխատանքի **հանգստյան**, **ոչ աշխատանքային**՝ տոնական և հիշատակի օրերին, բացառությամբ մարզական և մշակութային միջոցառումներին մասնակցելու դեպքերի (Հոդված 17): 11. Հղի կանայք, մինչև 1 տարեկան երեխա խնամող աշխատողները կարող են **արտաժամյա** աշխատանքի (Հոդված 144), հանգստյան (Հոդված 155) և **ոչ աշխատանքային**՝ տոնական և հիշատակի օրերին (Հոդված 156) աշխատանքի ներգրավվել, ինչպես նաև **գործուղման** ուղարկվել (Հոդված 209) միայն իրենց համաձայնությամբ: Հղի կանայք և մինչև 3 տարեկան երեխա խնամող աշխատողը կարող են գիշերային աշխատանքի (Հոդված 148), տանը կամ կազմակերպությունում հերթապահության (Հոդված 149) ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ: 12. Առանց ամուսնու (կնոջ) մինչև 14 տարեկան անչափահաս խնամող աշխատողն ունի **աշխատանքային հերթափոխի** նախապատվության իրավունք՝ գործատուի մոտ նման հնարավորության առկայության դեպքում: (Հոդված 142) Արգելվում է մինչև 18 տարեկան աշխատողների նկատմամբ **աշխատաժամանակի** գումարային հաշվարկի կիրառումը: (Հոդված 143) Մինչև 18 տարեկան աշխատողներին, որոնց աշխատաժամանակի տևողությունը գերազանցում է 4 ժամը, աշխատաժամանակի ընթացքում պետք է տրվի հանգստի համար լրացուցիչ **ընդմիջում**՝ նվազագույնը 30 րոպե: (Հոդված 153) 14-ից մինչև 16 տարեկան աշխատողների համար **ամենօրյա անընդմեջ հանգստի** տևողությունը չի կարող պակաս լինել 16 ժամից, իսկ 16-ից մինչև 18 տարեկան աշխատողների համար՝ ոչ պակաս 12 ժամից, և պետք է ներառի ժամը 22-ից մինչև 6-ը: (Հոդված 154) Մինչև 18 տարեկան աշխատողներին շաբաթվա ընթացքում տրվում է ոչ պակաս, քան երկու **հանգստյան օր**: (Հոդված 155) 13. Մինչև 18 տարեկան աշխատողները, հղի կանայք և մինչև 14 տարեկան երեխա խնամող աշխատողը **ամենամյա արձակուրդի** ժամանակի ընտրության իրավունք ունեն անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո: Տղամարդկանց ամենամյա արձակուրդն իրենց ցանկությամբ տրամադրվում է կնոջ հղիության ու ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածում: (Հոդված 164) 14. Աշխատող կանանց տրամադրվում է **հղիության և ծննդաբերության արձակուրդ**. 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության դեպքում, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում: Արձակուրդը հաշվարկվում է միասին և կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին: Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական (երկու և ավելի նորածին որդեգրելու կամ երկու և ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչև նորածինների 110 օրական) դառնալը: Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական (երկու և ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչև նորածինների 110 օրական) դառնալը: Արձակուրդի համար վարձու աշխատողի վճարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: (Հոդված 172) 15. Երեխային փաստացի խնամող ընտանիքի մոր (խորթ մոր), հոր (խորթ հոր) կամ խնամակալի ցանկությամբ տրամադրվում է **երեխայի խնամքի արձակուրդ** մինչև երեխայի երեք տարեկան դառնալը: Արձակուրդը վերցվում է ամբողջությամբ կամ մաս առ մաս: Նման իրավունք ունեցող աշխատողը այն կարող է ստանալ արտահերթ: (Հոդված 137) Աշխատողի պահանջով չվճարվող	հարցերով **ՀՀ կառավարության լիազորած մարմնի** ծառայողը պահանջում է աշխատանքային պայմանագրի լուծում (Հոդված 109) **Աշխատողների ներկայացուցիչներն** իրավունք ունեն կազմակերպությունում վարելու կոլեկտիվ բանակցություններ, կնքելու կոլեկտիվ պայմանագրեր, իրականացնելու դրանց կատարման հսկողությունը, աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի կատարման նկատմամբ կազմակերպությունում իրականացնելու **ոչ պետական վերահսկողություն** (Հոդված 25) Աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողությունն ու վերահսկողությունը իրականացնում են համապատասխան **պետական մարմինները**, իսկ ոչ պետական վերահսկողությունը՝ **աշխատողների ներկայացուցիչները և գործատուները** (**գործատուների ներկայացուցիչները**): (Հոդված 33) Գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողությունն իրականացնում են աշխատողների ներկայացուցիչները, իսկ աշխատողների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողությունը՝ գործատուները (գործատուների ներկայացուցիչները): (Հոդված 35) Հանրապետական, ճյուղային և տարածքային կոլեկտիվ պայմանագրերով կարող են սահմանվել կոլեկտիվ պայմանագրի կատարման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և դրա կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը (Հոդված 49) Հանրապետական, ճյուղային և տարածքային կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են կողմերը կամ այդ նպատակով նրանց լիազորած ներկայացուցիչները: Հանրապետական, ճյուղային և տարածքային կոլեկտիվ պայմանագրերի կատարման	

		արձակուրդ տրամադրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն: Այդ արձակուրդի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել երկու ամիսը: (Հոդված 176) 16. Կարգավորում է հանրակրթական, միջին-մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող աշխատողներին **ուսումնական արձակուրդի** տրամադրման հարցերը (Հոդված 174) 17. Կազմակերպությունում աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման մասին նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգին համապատասխան՝ հանգստանալու, **երեխաներին կրծքով** կերակրելու համար կահավորվում են սանիտարական և անձնական հիգիենայի սենյակներ կամ համապատասխան առանձնացված տեղեր՝ լվացարաններով, ցնցուղարաններով, զուգարաններով: (Հոդված 251) 18. **Ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում** հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց ներգրավելն արգելվում է: Կարգավորում է հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց անվտանգության և առողջության վրա ազդող վտանգավոր գործոնների ազդեցության տևողությունը, բնույթը և դրանց վերացման հարցերը: Եթե աշխատանքային պայմանների փոփոխությամբ նման ազդեցությունը հնարավոր չէ վերացնել, ապա գործատուն պարտավոր է կնոջը (նրա համաձայնությամբ) փոխադրել այլ աշխատանքի նույն կազմակերպությունում: Այդպիսի հնարավորության բացակայության դեպքում կնոջը տրամադրվում է վճարովի արձակուրդ մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի հատկացումը: Եթե հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կնոջն անհրաժեշտ է աշխատաժամանակի ընթացքում բժշկական հետազոտություն անցնել, ապա գործատուն պարտավոր է նրան ազատել աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով միջին աշխատավարձը: Երեխային կրծքով կերակրող կնոջը մինչև երեխայի մեկուկես տարին լրանալը, բացի հանգստի և սնվելու համար տրամադրվող ընդմիջման ժամերից, երեխային կերակրելու համար յուրաքանչյուր երեք ժամը մեկ տրամադրվում է լրացուցիչ ընդմիջում՝ կես ժամից ոչ պակաս տևողությամբ: Երեխային կերակրելու համար նախատեսված ընդմիջումների ժամանակահատվածում աշխատողը վարձատրվում է միջին ժամային աշխատավարձի չափով: (Հոդված 258) 19. Մինչև 18 տարեկան աշխատողները պարտավոր են անցնել **բժշկական զննություն** աշխատանքի ընդունման ժամանակ, իսկ մինչև 18 տարեկան դառնալը՝ սահմանված պարբերականությամբ: Նրանց պարբերական բժշկական զննությունը կատարվում է գործատուի հաշվին: (Հոդված 249)	Նկատմամբ հսկողություն և վերահսկողություն կարող է իրականացնել պետական լիազոր մարմինը, եթե կոլեկտիվ պայմանագրի կողմերը անկարող են ինքնուրույն իրականացնել հսկողություն և համապատասխան խնդրանքով դիմել են պետական լիազոր մարմին: (Հոդված 53) Կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են կողմերը կամ այդ նպատակով նրանց լիազորած ներկայացուցիչները: Կազմակերպության կոլեկտիվ պայմանագրի կատարման նկատմամբ հսկողություն և վերահսկողություն կարող է իրականացնել պետական լիազոր մարմինը, եթե կոլեկտիվ պայմանագրի կողմն անկարող է ինքնուրույն իրականացնել հսկողություն և համապատասխան խնդրանքով դիմել է պետական լիազոր մարմին: (Հոդված 62) Գործատուն պարտավոր է հաստատել այն աշխատողների ցանկը, որոնք ենթակա են պարտադիր բժշկական զննության, և **առողջությունը վերահսկող կազմակերպության** հետ համաձայնեցնել բժշկական զննություն անցնելու ժամանակացույցը: (Հոդված 249) Աշխատողների անվտանգության և առողջության պահպանման նկատմամբ իրենց իրավասությունների սահմաններում հսկողություն և վերահսկողություն են իրականացնում **պետական լիազորված մարմինները**: (Հոդված 262)	
40.	**ՀՀ ընտանեկան օրենսգիրք** *ՀՕ-123-Ն, ընդունված է՝ 09.11.2004, ուժի մեջ է՝ 19.04.2005* Սահմանում է ամուսնության, ամուսնությունը դադարելու և անվավեր ճանաչելու պայմաններն ու կարգը, կարգավորում է անձնական ոչ գույքային և գույքային հարաբերություններն ընտանիքի անդամների միջև՝ ամուսինների, ծնողների և զավակների (որդեգրողների ու որդեգրվածների), իսկ ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և շրջանակներում՝ մյուս ազգականների և այլ անձանց միջև, ինչպես նաև որոշում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին	1. Ընտանիքը, մայրությունը, հայրությունը և մանկությունը ՀՀ-ում **հասարակության ու պետության հովանավորության և պաշտպանության** ներքո են: Պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների առաջնային պաշտպանությունը: Ընտանեկան օրենսդրությունը ելնում է, մասնավորապես, ընտանիքում երեխաների դաստիարակության առաջնայնության անհրաժեշտությունից: Ընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորումն իրականացվում է, մասնավորապես, ընտանիքի անչափահաս անդամների իրավունքների և շահերի առաջնային պաշտպանությունն ապահովելու սկզբունքներին համապատասխան: (Հոդված 1) 2. **Երեխա** է համարվում 18 տարին չլրացած անձը: Յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին: Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք: (Հոդված 41) 3. Երեխան ունի իր ծնողների, պապերի և տատերի, եղբայրների, քույրերի, ինչպես նաև այլ ազգականների հետ **շփվելու** իրավունք: Ծնողների ամուսնության դադարեցումը, այն անվավեր ճանաչվելը կամ նրանց առանձին ապրելը չեն ազդում երեխայի իրավունքների վրա: Ծնողների առանձին (ընդ որում՝ տարբեր պետություններում) ապրելու դեպքում երեխան նրանցից յուրաքանչյուրի հետ շփվելու իրավունք ունի: Արտակարգ իրադրության մեջ գտնվող (ձերբակալված, կալանավորված, բժշկական կազմակերպությունում գտնվելու և այլ դեպքերում) երեխան իր ծնողների և մերձավոր ազգականների, ինչպես նաև արտակարգ իրադրության մեջ գտնվող ծնողն իր երեխայի հետ շփվելու իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով: (Հոդված 42) Երեխայից առանձին ապրող ծնողը իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու: Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը: (Հոդված 54) Երեխայի պապերը, տատերը, եղբայրները, քույրերը և այլ ազգականներն իրավունք ունեն շփվելու երեխայի հետ: (Հոդված 56) 4. Երեխան ունի իր **իրավունքների և օրինական շահերի պաշտպանության** իրավունք: Օրենքով սահմանված կարգով լրիվ	Պաշտոնատար անձինք և այլ քաղաքացիներ, որոնց հայտնի են դարձել երեխայի կյանքին և առողջությանը սպառնալու, նրա իրավունքների և շահերի խախտումների դեպքեր, այդ մասին պետք է հայտնեն երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին: Նման տեղեկություններ ստանալուն պես խնամակալության և հոգաբարձության մարմինը պետք է ձեռնարկի երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ: (Հոդված 43) Խնամակալության և հոգաբարձության մարմինները բացահայտում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, վարում են նման երեխաների հաշվառումը և, ելնելով ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից, ընտրում են այդ երեխաներին տեղավորելու ձևերը:	• Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում են ծնողները (օրինական ներկայացուցիչները), իսկ օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ **խնամակալության և հոգաբարձության մարմինը**: (Հոդված 43) • Ծնողների բացակայության, նրանց ծնողական իրավունքներից զրկված լինելու և ծնողական հոգատարությունից զրկվելու այլ դեպքերում ընտանիքում դաստիարակվելու երեխայի իրավունքն ապահովում է **խնամակալության և հոգաբարձության մարմինը**: (Հոդված 41) • Ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները լուծում է

	ընտանիքում տեղավորելու ձևերն ու կարգը:	գործունակ ճանաչված անչափահասն իր իրավունքները (ընդ որում՝ պաշտպանության իրավունքը) և պարտականությունները ինքնուրույն իրականացնելու իրավունք ունի: Երեխան ունի իր ծնողների (օրինական ներկայացուցիչների) չարաշահումներից պաշտպանվելու իրավունք: Երեխայի իրավունքների և շահերի խախտման դեպքում (ընդ որում՝ ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթության տալու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ ծնողական իրավունքները չարաշահելու դեպքերում), երեխան իրավունք ունի պաշտպանության համար ինքնուրույն դիմելու **խնամակալության և հոգաբարձության մարմին**: (Հոդված 43) 5. Երեխան իրավունք ունի իր շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու **սեփական կարծիքը** ընտանիքում, դատական և այլ մարմիններում: 10 տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է՝ կապված խղճի ազատության հետ, որոշակի միջոցառումներին մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում: 10 տարին լրացած երեխայի վերաբերյալ խնամակալության և հոգաբարձության մարմինը կամ դատարանը կարող են որոշում ընդունել միայն նրա համաձայնությամբ: (Հոդված 44) 6. Երեխան ունի **անուն, հայրանուն** և **ազգանուն** ունենալու իրավունք: Երեխային անուն տրվում է ծնողների համաձայնությամբ, իսկ հայրանուն տրվում է հոր անունով՝ օրենսգրքով նախատեսված կարգով: Երեխայի ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով: Եթե ծնողները կրում են տարբեր ազգանուններ, ապա երեխային ծնողների համաձայնությամբ տրվում է հոր կամ մոր ազգանունը: Եթե երեխայի հայրությունը չի որոշվել, ապա նրան անուն է տրվում մոր ցուցումով, հայրանուն՝ որպես երեխայի հայր գրառված անձի անունով, ազգանուն՝ մոր ազգանունով: (Հոդված 45) Կարգավորում է երեխայի անունը և ազգանունը փոխելու հարցերը, ընդ որում, 10 տարին լրացած երեխայի անվան փոխումը կարող է կատարվել երեխայի համաձայնությամբ, իսկ ազգանվան փոխումը՝ հաշվի առնելով երեխայի կարծիքը: (Հոդված 46) 7. Կարգավորում է երեխայի **գույքային** իրավունքները: Երեխան իր ծնողներից և ընտանիքի այլ անդամներից ապրուստի միջոց պահանջելու իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ու չափերով: Երեխաներին ալիմենտ վճարելու պարտավոր ծնողի պահանջով դատարանը կարող է որոշում կայացնել վճարման ենթակա ալիմենտի գումարի հիսուն տոկոսից ոչ ավելին բանկերում երեխաների անունով բացված հաշվին փոխանցելու մասին: Սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը տնօրինելու երեխայի իրավունքը սահմանվում է քաղաքացիական օրենսդրությամբ: Ծնողների կողմից երեխայի գույքը կառավարելու լիազորություններն իրականացնելիս նրանց վրա տարածվում են խնամակալի գույքի տնօրինման վերաբերյալ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված նորմերը: Երեխան սեփականության իրավունք չունի ծնողների գույքի նկատմամբ, իսկ ծնողները սեփականության իրավունք չունեն երեխայի գույքի նկատմամբ: Համատեղ ապրող երեխաներն ու ծնողները կարող են մեկը մյուսի գույքը տիրապետել և օգտագործել փոխադարձ համաձայնությամբ: Ծնողների և զավակների՝ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու կարգն ու պայմանները սահմանվում են քաղաքացիական օրենսդրությամբ: (Հոդված 47) 8. Ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (**ծնողական իրավունքներ**): Ծնողական իրավունքները դադարում են երեխաների 18 տարեկանը լրանալով, ինչպես նաև երեխաների ամուսնանալու, մինչև չափահաս դառնալը երեխաների կողմից լրիվ գործունակություն ձեռք բերելու դեպքերում: (Հոդված 49) 9. Ամուսնության մեջ չգտնվող **անչափահաս ծնողներն** ունեն իրենց երեխայի հետ համատեղ ապրելու և նրա դաստիարակությանը մասնակցելու իրավունքներ: Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներից երեխա ծնվելու դեպքում, ինչպես նաև նրանց մայրությունը և (կամ) հայրությունը որոշելիս ծնողները ամուսնության տարիքը լրանալուց հետո կարող են ինքնուրույն իրականացնել ծնողական իրավունքները: Մինչև անչափահաս ծնողների ամուսնության տարիքը լրանալը նրանց երեխայի համար կարող է նշանակվել խնամակալ, որը անչափահաս ծնողների հետ համատեղ կիրականացնի այդ երեխայի դաստիարակությունը: Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն իրավունք ունեն ընդհանուր սկզբունքներով ընդունելու կամ վիճարկելու իրենց հայրությունը և մայրությունը: (Հոդված 50) 10. Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են **դաստիարակելու** իրենց երեխաներին: Ծնողները պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար: Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների **առողջության, ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման** մասին: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք: Ծնողները պարտավոր են ապահովել երեխաների **կրթություն** ստանալը: Ծնողները, երեխաների կարծիքը հաշվի առնելով հանդերձ, ունեն կրթական հաստատության և երեխաների ուսուցման ձևի ընտրության իրավունք մինչև երեխաների հիմնական ընդհանուր կրթություն ստանալը: (Հոդված 51) **Խորթ** ծնողները պարտավոր են դաստիարակել և խնամել իրենց ամուսնու՝ նախկին ամուսնությունից ծնված և իրենց հետ համատեղ ապրող երեխաներին (խորթ երեխաներին): (Հոդված 55) 11. Երեխաների իրավունքների և օրինական **շահերի պաշտպանությունը** դրվում է նրանց ծնողների վրա: Ծնողները համարվում են իրենց երեխաների օրինական ներկայացուցիչները և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ առանց լիազորագրի հանդես են գալիս ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ ցանկացած հարաբերություններում, ինչպես նաև դատարանում: (Հոդված 52) 12. Ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ: Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան: Ծնողական իրավունքներն իրականացնելիս ծնողներն իրավունք չունեն վնաս պատճառելու երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը: Երեխաների դաստիարակության եղանակները պետք է բացառեն նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը: Ծնողական իրավունքներն ի վնաս երեխաների իրավունքների և շահերի իրականացնող ծնողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով: Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով 10 տարին լրացած երեխայի կարծիքը: (Հոդված 53) 13. Ամուսնության կնքման համար անհրաժեշտ է ամուսնացող տղամարդու և կնոջ ամուսնական՝ 18 տարեկան **տարիքի** հասնելը: Անձը	(Հոդված 109) Երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի իր երեխայի մասին տեղեկատվություն ստանալու դաստիարակչական ու բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից, ինչպես նաև ծնողից, որի մոտ ապրում է երեխան: Տեղեկատվություն տրամադրելը կարող է մերժվել միայն ծնողի կողմից երեխայի կյանքին և առողջությանն սպառնացող վտանգի առկայության դեպքում: Տեղեկատվություն տրամադրելու մերժումը կարող է վիճարկվել դատական կարգով: (Հոդված 54)	խնամակալության և հոգաբարձության մարմինը: (Հոդված 45) • Երեխայի խնամակալի և անչափահաս ծնողների միջև առաջացած տարաձայնությունները կարգավորում է **խնամակալության և հոգաբարձության մարմինը**: (Հոդված 50) • **Խնամակալության և հոգաբարձության մարմիններից** բացի, իրավաբանական և ֆիզիկական այլ անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման ուղղությամբ գործունեություն չի թույլատրվում: **Խնամակալության և հոգաբարձության մարմինները տեղական ինքնակառավարման մարմիններն** են: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, որոնց անհատական կազմը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին: Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատում է ՀՀ կառավարությունը: (Հոդված 109) • Հիմնարկների (**նախադպրոցական կրթական, հանրակրթական, բժշկական կամ նմանատիպ** այլ կազմակերպությունների) պաշտոնատար անձինք, որոնք տեղեկություններ ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին, պարտավոր են այդ մասին հաղորդել խնամակալության և հոգաբարձության մարմիններին՝ ըստ երեխաների փաստացի գտնվելու վայրի: • **Դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության և նմանատիպ** այլ կազմակերպությունների (որտեղ գտնվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաները) ղեկավարները պարտավոր են, սկսած այն օրից, երբ նրանց հայտնի է դարձել, որ երեխան կարող է ընտանիքում դաստիարակության հանձնվել, յոթնօրյա ժամկետում այդ մասին հաղորդել խնամակալության և հոգաբարձության մարմին՝ ըստ տվյալ կազմակերպության գտնվելու վայրի: • Խնամակալության և հոգաբարձության մարմինը, բացառությամբ Երևանի քաղաքապետի, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին տեղեկություններն ստանալուց հետո՝ 3 օրվա ընթացքում, այդ տեղեկություններն ուղարկում է

		կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է: (Հոդված 10) 14. **Արգելվում է** ամուսնություն կնքել ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների), որդեգրողների և որդեգրվածների միջև: (Հոդված 11) 15. Դատական կարգով **ամուսնալուծվելիս**, ինչպես նաև անկախ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնալուծվելիս ամուսինները կարող են դատարան ներկայացնել համաձայնություն այն մասին, թե նրանցից ում հետ են ապրելու երեխաները, երեխաներին պահելու համար ապրուստի միջոցները հոգալու կարգի, այդ միջոցների չափերի մասին: Ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է որոշել, թե ամուսնալուծությունից հետո ծնողներից ում հետ պետք է ապրեն երեխաները., որ ծնողից և ինչ չափով պետք է ալիմենտ (ապրուստավճար) բռնագանձվի, ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեցող մյուս ամուսնու պահանջով որոշել այդ միջոցների չափը: (Հոդված 17) 16. Անչափահաս ամուսինը, նրա ծնողները (օրինական ներկայացուցիչները), խնամակալության և հոգաբարձության մարմինը **ամուսնությունն անվավեր** ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեն, եթե ամուսնությունը կնքվել է ամուսնական տարիքի չհասած անձի հետ: Անչափահաս ամուսնու 18 տարին լրանալուց հետո ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունի միայն այդ ամուսինը: (Հոդված 21) Կնոջ հղիության կամ երեխա ծնվելու դեպքում, կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես նաև ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում դատարանը կարող է մերժել ամուսնացող անձի հետ կնքված ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին հայցը: Դատարանը չի կարող ամուսնությունը ճանաչել կեղծ, եթե նման ամուսնություն գրանցած անձինք մինչև դատարանի կողմից գործի քննությունը, փաստորեն, ընտանիք են կազմել: (Հոդված 22) Ամուսնությունն անվավեր ճանաչելը չի ազդում այդպիսի ամուսնությունից ծնված կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահից հետո՝ երեք հարյուր օրվա ընթացքում, ծնված երեխաների իրավունքների վրա: (Հոդված 23) 17. Մայրության, հայրության, երեխաների դաստիարակության և կրթության հարցերն ամուսինները համատեղ լուծում են՝ ելնելով ամուսինների իրավահավասարության սկզբունքից: Ամուսիններն ընտանիքում պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների բարեկեցության ու զարգացման համար: (Հոդված 24) Ամուսնական պայմանագիրը չի կարող սահմանափակել երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները: (Հոդված 29) 18. Իրենց երեխաների պատճառած վնասի համար ամուսինների պատասխանատվությունը որոշվում է քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով: (Հոդված 32) 19. Ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները հիմնվում են երեխաների՝ **սերման** փաստի վրա: (Հոդված 34) Երեխայի սերումը մորից (**մայրությունը**) հաստատվում է երեխայի՝ բժշկական կազմակերպությունում տվյալ մորից ծնված լինելու փաստը հավաստող փաստաթղթերի, իսկ եթե երեխան ծնվել է բժշկական կազմակերպությունից դուրս՝ համապատասխան բժշկական փաստաթղթերի, վկաների հայտարարությունների կամ այլ ապացույցների հիման վրա: Միմյանց հետ ամուսնության մեջ գտնվող անձանցից, ինչպես նաև ամուսնալուծությունից կամ ամուսնությունն անվավեր ճանաչելուց հետո կամ երեխայի մոր ամուսնու մահվան պահից երեք հարյուր օրվա ընթացքում երեխա ծնվելու դեպքում երեխայի հայր է ճանաչվում երեխայի մոր ամուսինը (նախկին ամուսինը), եթե այլ բան չի ապացուցվել: Երեխայի մոր ամուսնու (նախկին ամուսնու) **հայրությունը** հավաստվում է նրանց ամուսնության պետական գրանցումով: Երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի հայրությունը որոշվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ երեխայի հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա: Մոր մահվան կամ դատարանի կողմից վերջինիս անգործունակ ճանաչվելու կամ բնակության վայրը որոշելու անհնարինության կամ ծնողական իրավունքներից զրկվելու դեպքում երեխայի հայրությունը որոշվում է երեխայի հոր դիմումի հիման վրա՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի վճռով: Այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ երեխայի ծնվելուց հետո հայրությունը որոշելու մասին համատեղ դիմում ներկայացնելը կարող է դառնալ անհնար կամ դժվարանալ, ապագա երեխայի ծնողները, որոնք ամուսնության մեջ չեն գտնվում, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմին նման դիմում կարող են ներկայացնել մոր հղիության ընթացքում: Այդ դեպքում երեխայի ծնողների մասին գրառումը կատարվում է երեխայի ծնվելուց հետո: (Հոդված 35) Ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում, եթե բացակայում է ծնողների համատեղ դիմումը կամ երեխայի հոր դիմումը, ապա որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստը (հայրությունը) որոշվում է դատական կարգով՝ ծնողներից մեկի կամ մոր, երեխայի խնամակալի (հոգաբարձուի), կամ այն անձի դիմումի հիման վրա, որի խնամքին է գտնվում երեխան, իսկ երեխայի չափահաս դառնալուց հետո՝ վերջինիս ներկայացրած դիմումի հիման վրա: Այս դեպքում դատարանը հաշվի է առնում ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի այդ անձից: (Հոդված 36) Իրեն երեխայի հայր ճանաչած, բայց երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի մահվան դեպքում վերջինիս որպես երեխայի հայր ճանաչելու (հայրության) փաստը կարող է հաստատվել դատական կարգով՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված նորմերով: (Հոդված 37) Ծննդի պետական գրանցման գրքում երեխայի ծնողների գրառումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: (Հոդված 38) Կարգավորում է հայրության (մայրության) վիճարկումը (Հոդված 39) Հայրությունը որոշելիս ամուսնության մեջ չգտնվող անձանցից ծնված երեխաները ծնողների և նրանց ազգականների նկատմամբ ունեն նույնպիսի իրավունքներ ու պարտականություններ, ինչպիսիք ունեն ամուսնության մեջ գտնվող անձանցից ծնված երեխաները: (Հոդված 40) 20. Ծնողները կամ նրանցից մեկը կարող են **զրկվել ծնողական իրավունքներից**, եթե նրանք չարամտորեն խուսափում են ծնողական պարտականությունները կատարելուց, ընդ որում՝ ալիմենտ վճարելուց, առանց հարգելի պատճառների հրաժարվում են վերցնել իրենց երեխային ծննդատնից կամ բժշկական այլ կազմակերպությունից, ինչպես նաև դաստիարակչական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից, չարաշահում են իրենց ծնողական իրավունքները,		մարզպետարան, ինչպես նաև ապահովում է երեխայի տեղավորումը: • **Մարզպետարանը** երեխաների մասին նման տեղեկություններ ստանալու պահից երեք օրվա ընթացքում իրականացնում է երեխաների հաշվառումը և հայտնում այդ մասին ՀՀ կառավարության լիազորած մարմնին, ինչպես նաև ապահովում է այդ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը: • **Երևանի քաղաքապետը** համապատասխան տեղեկություններն ստանալուց հետո՝ 3 օրվա ընթացքում, իրականացնում է երեխաների հաշվառումը և հայտնում այդ մասին ՀՀ կառավարության լիազորած մարմնին, ինչպես նաև ապահովում է այդ երեխաների տեղավորումը, իրավունքների և շահերի պաշտպանությունը: • **ՀՀ կառավարության լիազորած մարմինը** իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումը, աջակցում է այդ երեխաների հետագա տեղավորմանը ընտանիքներում: (Հոդված 110) • Երեխային խնամատար ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը կնքվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի ու խնամատար ծնողների (ամուսինների կամ առանձին քաղաքացիների, ովքեր ցանկանում են դաստիարակության նպատակով երեխաներին վերցնել իրենց ընտանիք) միջև: (Հոդված 137) Խնամատար ծնողների ընտրությունն իրականացնում են խնամակալության և հոգաբարձության մարմինները (Հոդված 138) • Խնամատար ընտանիքին հանձնելու համար երեխայի (երեխաների) նախնական ընտրությունն իրականացնում են երեխային (երեխաներին) դաստիարակության համար ընտանիք ընդունել ցանկացող անձինք՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների համաձայնությամբ: (Հոդված 139) • Խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է խնամատար ընտանիքին ցուցաբերել անհրաժեշտ օգնություն, նպաստել երեխայի (երեխաների) կյանքի ու դաստիարակության համար պայմանների ստեղծմանը, ինչպես նաև վերահսկողություն իրականացնել խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ: (Հոդված 140)

		ընդ որում՝ իրենց հակաբարոյական վարքագծով վնասակար ազդեցություն են գործում երեխաների վրա, դաժանաբար են վարվում երեխաների հետ, ընդ որում՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնություն են գործադրում նրանց նկատմամբ, ոտնձգում են նրանց սեռական անձեռնմխելիությունը, տառապում են քրոնիկ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ, թունամոլությամբ, կամ կատարել են իրենց երեխաների դեմ դիտավորյալ հանցագործություն: (Հոդված 59) Սահմանում է ծնողական իրավունքներից զրկելու դատական կարգը: (Հոդված 60) Երեխայի և ծնողական իրավունքներից զրկված ծնողների կամ նրանցից մեկի հետագայում համատեղ ապրելու մասին հարցը լուծվում է դատական կարգով: (Հոդված 61) Ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու դեպքում երեխային որդեգրել թույլատրվում է ոչ շուտ, քան ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից 6 ամիս հետո: (Հոդված 61) Կարգավորում է ծնողական իրավունքների վերականգնումը, ընդ որում՝ 10 տարին լրացած երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների վերականգնումը կատարվում է՝ հաշվի առնելով նրա կարծիքը, և դատարանը, հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը, իրավունք ունի մերժելու ծնողական իրավունքների վերականգնման հայցը, եթե ծնողական իրավունքների վերականգնումը հակասում է երեխայի շահերին: Ծնողական իրավունքների վերականգնում չի թույլատրվում, եթե երեխան որդեգրված է, և որդեգրումը սահմանված կարգով չի վերացվել: (Հոդված 62) 21. Ելնելով երեխայի շահերից՝ դատարանը կարող է վճիռ կայացնել ծնողներից (ծնողներից մեկից) երեխային վերցնելու մասին (**ծնողական իրավունքների սահմանափակում**)՝ առանց ծնողական իրավունքներից զրկելու: Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է, եթե երեխային ծնողների կամ նրանցից մեկի հետ թողնելը նրա համար վտանգավոր է ծնողներից կամ նրանցից մեկից անկախ հանգամանքներից (հոգեկան կամ այլ քրոնիկ հիվանդություն, ծանր հանգամանքների առկայություն և այլն): Ծնողական իրավունքների սահմանափակում թույլատրվում է նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ թողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար: (Հոդված 63) Ծնողներին, որոնց ծնողական իրավունքները սահմանված կարգով սահմանափակվել են, կարող է թույլատրվել կապ ունենալ երեխայի հետ, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա: (Հոդված 65) Կարգավորում է ծնողական իրավունքների սահմանափակման վերացումը, ընդ որում՝ Հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել հայցի բավարարումը, եթե երեխային իր ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելը հակասում է նրա շահերին: (Հոդված 66) 22. Ծնողական իրավունքներից զրկելը (Հոդված 61) կամ ծնողական իրավունքների սահմանափակումը (Հոդված 64) ծնողներին չի ազատում իրենց **երեխայի ապրուստը** հոգալու պարտականությունից: Ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու (Հոդված 61) կամ ծնողական իրավունքների սահմանափակման (Հոդված 64) դեպքում երեխան պահպանում է բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իր իրավունքը, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝ բնակարանային օրենսդրությանը համապատասխան՝ բնակելի տարածություն ստանալու իրավունքը, ինչպես նաև ծնողների և այլ ազգականների հետ ազգակցականության կապի վրա հիմնված գույքային իրավունքները (ընդ որում՝ ժառանգություն ստանալու իրավունքը): 23. Սահմանում է երեխաների **ապրուստը հոգալու**՝ ծնողների պարտականությունները: Ծնողները պարտավոր են պահել իրենց երեխաներին: Երեխաներին ապրուստի միջոց տրամադրելու կարգն ու պայմանները ծնողները որոշում են ինքնուրույն: Եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական կարգով: (Հոդված 68) 24. Երեխաների համար **ալիմենտ** վճարելու վերաբերյալ նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում ծնողներից ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով՝ հետևյալ չափերով ամենամսյա վճարումներ կատարելու միջոցով՝ մեկ երեխայի համար ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի ¼-ը, երկու երեխաների համար՝ 1/3-ը, երեք և ավելի երեխաների համար՝ կեսը: Ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար չպետք է պակաս լինի սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափից, իսկ գործազրկության նպաստ ստացող ծնողներից ալիմենտ բռնագանձելիս՝ գործազրկության նպաստի 20 տոկոսից: Բաժինների չափերը կարող են դատարանով նվազեցվել կամ ավելացվել՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը: (Հոդված 69) 25. Սահմանում է ծնողների վաստակի և (կամ) այլ եկամտի տեսակներ, որոնցից ալիմենտներ է պահվում երեխաների համար (Հոդված 70), կարգավորում է երեխաների համար ալիմենտի բռնագանձումը կայուն դրամական գումարով (Հոդված 71), առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար ալիմենտի բռնագանձումը և օգտագործումը, ինչպես նաև ծնողների մասնակցությունը երեխաների համար կատարվող լրացուցիչ ծախսերին (Հոդված 74): 26. Կինը՝ հղիության ընթացքում, ինչպես նաև ընդհանուր երեխային խնամող ամուսինը մինչև երեխայի երեք տարին լրանալը, ինչպես նաև անապահով ամուսինը, որ խնամում է մանկուց հաշմանդամ ընդհանուր երեխային մյուս ամուսնուց (Հոդված 77) կամ նախկին ամուսնուց (Հոդված 78) դատական կարգով ալիմենտ պահանջելու իրավունք ունի նյութական օժանդակությունը մերժվելու և ալիմենտ վճարելու վերաբերյալ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում: Սահմանում է ամուսիններից և նախկին ամուսիններից դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը (Հոդված 79) և կարգավորում մյուս ամուսնուն պահելու պարտականությունից ազատելը կամ այդ պարտականությունը որոշակի ժամանակով սահմանափակելը (Հոդված 80): 27. Ամրագրում է իրենց անչափահաս եղբայրներին և քույրերին պահելու՝ **եղբայրների և քույրերի** պարտականությունը (Հոդված 81), անչափահաս թոռներին պահելու՝ **պապերի և տատերի** պարտականությունը (Հոդված 82), ինչպես նաև կարգավորում է ընտանիքի այլ անդամների օգտին դատական կարգով բռնագանձվող ալիմենտի չափը (Հոդված 86): 28. Կարգավորում է **ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության** կնքումը (Հոդված 87) և ալիմենտ ստացողի շահերը ոտնահարող համաձայնությունն անվավեր ճանաչելը (Հոդված 90), սահմանում է համաձայնության ձևը (Հոդված 88), համաձայնություն կնքելու, կատարելու, փոփոխելու, լուծելու և անվավեր ճանաչելու կարգը (Հոդված 89), վճարվող ալիմենտի չափը (Հոդված 91) և ինդեքսավորումը (Հոդված 93), վճարելու ձևերն ու կարգը (Հոդված 92): 29. Սահմանում է ալիմենտի **վճարման** և դատարանի վճռով **բռնագանձման** կարգը (Հոդված 94-ից մինչև Հոդված 108): 30. Սահմանում է **առանց ծնողական խնամքի** մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ ծնողական խնամքի		• Ծնողական իրավունքների սահմանափակման մասին գործերը քննվում են խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ: Եթե ծնողները կամ նրանցից մեկը չփոխեն իրենց վարքագիծը, խնամակալության և հոգաբարձության մարմինը ծնողական իրավունքների սահմանափակման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո պարտավոր է հայց ներկայացնել ծնողական իրավունքներից զրկելու մասին: Խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող է ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու մասին հայց ներկայացնել մինչև այդ ժամկետը լրանալը՝ ելնելով երեխայի շահերից: Ծնողական իրավունքների սահմանափակման մասին հայց կարող են ներկայացնել երեխայի մերձավոր ազգականները, այն մարմիններն ու կազմակերպությունները, որոնց վրա օրենքով դրված են երեխաների իրավունքների պաշտպանման պարտականություններ, նախադպրոցական, հանրակրթական և այլ կազմակերպություններ: (Հոդված 63) • Եթե անհնարին է երեխային հանձնել մյուս ծնողին, կամ երկու ծնողներն էլ ծնողական իրավունքներից զրկվել են (Հոդված 61) կամ ծնողների ծնողական իրավունքների սահմանափակման դեպքում (Հոդված 64) երեխան հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի խնամքին: • Երեխայի հետ ծնողական սահմանափակ իրավունքներով ծնողների շփումը թույլատրվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի, խնամատար ծնողների կամ երեխայի խնամակալի (հոգաբարձուի) կամ այն կազմակերպության ղեկավարի կամ նրան փոխարինողի համաձայնությամբ, որտեղ գտնվում է երեխան: (Հոդված 65) • Դատարանը երեխաների դաստիարակության հետ կապված վեճերը քննելիս գործին պետք է մասնակից դարձնի խնամակալության և հոգաբարձության մարմնին, անկախ նրանից, թե ով է ներկայացրել երեխայի պաշտպանության մասին հայց: Խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը և դատարան ներկայացնել

		բացակայության դեպքերում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դնելով **խնամակալության և հոգաբարձության մարմինների** վրա: (Հոդված 109) Կարգավորում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բացահայտումը և հաշվառումը (Հոդված 110), ինչպես նաև տեղավորումը (Հոդված 111) 31. **Որդեգրումը** համարվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման նախապատվելի ձևը: Որդեգրում թույլատրվում է միայն երեխաների նկատմամբ և ելնելով նրանց շահերից, նաև հաշվի առնելով երեխաների լիարժեք ֆիզիկական, հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացումն ապահովելու հնարավորությունները: Չի թույլատրվում եղբայրների ու քույրերի որդեգրումը տարբեր անձանց կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որդեգրումը ելնում է երեխաների շահերից: Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից ՀՀ քաղաքացի երեխաների որդեգրումը թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ հնարավորություն չկա այդ երեխաներին ՀՀ տարածքում մշտապես ապրող ՀՀ քաղաքացիների ընտանիքում դաստիարակության հանձնելու կամ երեխաներին իրենց ազգականների կողմից որդեգրելու: Օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ տրամադրվում են նշված երեխաներին կենտրոնացված հաշվառման վերցնելուց երեք ամիս հետո: (Հոդված 112): 32. Սահմանում է երեխային **որդեգրելու կարգը** (Հոդված 113), կարգավորում է որդեգրման ենթակա երեխաների և երեխաներ որդեգրել ցանկացող անձանց հաշվառումը (Հոդված 114), արգելում երեխաների որդեգրման միջնորդական գործունեության անթույլատրելիությունը (Հոդված 115): 33. Սահմանում է **որդեգրելու իրավունք** ունեցող անձանց, արգելում է ամուսնության մեջ չգտնվող անձանց համատեղ որդեգրել միևնույն երեխային, ընդ որում՝ միևնույն երեխային միաժամանակ որդեգրել ցանկացող մի քանի անձանց առկայության դեպքում նախապատվության իրավունք տրվում է երեխայի ազգականներին և խորթ ծնողներին, պայմանով, որ կպահպանվեն որդեգրվող երեխայի շահերը: (Հոդված 116) Ամուսնության մեջ չգտնվող որդեգրողի (բացառությամբ երեխայի խորթ հոր կամ մոր) և որդեգրվող երեխայի տարիքային տարբերությունը պետք է լինի տասնութ տարուց ոչ պակաս: (Հոդված 117) Կարգավորում է երեխային որդեգրելու համար ծնողների (Հոդված 118), խնամակալների (հոգաբարձուների), խնամատար ծնողների (Հոդված 120), որդեգրողի ամուսնու (Հոդված 122) համաձայնության և առանց ծնողների համաձայնության (Հոդված 119) որդեգրման հարցերը: 10 տարին լրացած երեխայի որդեգրման համար անհրաժեշտ է նրա համաձայնությունը: Եթե մինչև որդեգրման համար դիմում տալը երեխան ապրել է որդեգրողի ընտանիքում և նրան համարում է իր ծնողը, ապա որդեգրումը բացառության կարգով կարող է կատարվել առանց որդեգրվող երեխայի համաձայնությունն ստանալու: (Հոդված 121) 34. Կարգավորում է որդեգրված երեխայի անվան, հայրանվան, և ազգանվան (Հոդված 123), ինչպես նաև ծննդյան ժամանակի և ծննդյան վայրի փոփոխման հարցերը (Հոդված 124): 10 տարին լրացած որդեգրված երեխայի անվան, հայրանվան և ազգանվան փոփոխում կարող է կատարվել միայն նրա համաձայնությամբ (Հոդված 123): Կարգավորում է որդեգրողներին որպես որդեգրված երեխայի ծնողներ գրառելու հարցերը, ընդ որում 10 տարին լրացած որդեգրված երեխայի նկատմամբ նման գրառում կատարելու համար անհրաժեշտ է երեխայի համաձայնությունը (Հոդված 125) 35. Երեխան, որը որդեգրվելու պահին ունեցել է ծնողների մահվան պատճառով **կենսաթոշակի** իրավունք, պահպանում է դա նաև որդեգրվելուց հետո: (Հոդված 127) 36. Երեխայի **որդեգրման գաղտնիքը** պահպանվում է օրենքով: Երեխայի որդեգրման մասին վճիռ կայացրած դատավորները կամ որդեգրման պետական գրանցում իրականացնող քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմնի ղեկավարը և աշխատողները, ինչպես նաև որդեգրման մասին տեղյակ այլ անձինք պարտավոր են պահպանել երեխայի որդեգրման գաղտնիքը: (Հոդված 128) 37. Երեխայի որդեգրումը **վերացվում** է դատական կարգով: Երեխայի որդեգրման վերացման մասին գործը քննվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ: (Հոդված 129) Սահմանում է երեխայի որդեգրումը վերացնելու հիմքերը (Հոդված 130), երեխայի որդեգրումը վերացնելու պահանջի իրավունք ունեցող անձանց (Հոդված 131), որդեգրումը վերացնելու անթույլատրելիությունը որդեգրված երեխայի չափահաս դառնալու դեպքում (Հոդված 133) և սահմանում որդեգրումը վերացնելու հետևանքները, ընդ որում, որդեգրումը վերացնելիս երեխան դատարանի վճռով հանձնվում է ծնողներին: Եթե ծնողները բացակայում են, կամ երեխային ծնողներին հանձնելը հակասում է նրա շահերին, ապա երեխան հանձնվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի խնամքին: (Հոդված 132): 38. Սահմանում է երեխային որդեգրելու **իրավական հետևանքները**, այդ թվում՝ որդեգրողների և նրանց ազգականների, իրենց ծնողների (ազգականների) նկատմամբ՝ որդեգրված երեխաների ու նրանց սերնդի, որդեգրված երեխաների ու նրանց սերնդի նկատմամբ՝ որդեգրողների ու նրանց ազգականների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքներն ու պարտականությունները: Նորածին երեխա որդեգրած կինն ունի հետծննդյան արձակուրդի և սահմանված այլ արտոնությունների իրավունք: (Հոդված 126) 39. ՀՀ քաղաքացի երեխայի որդեգրումն **օտարերկրյա** քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձի, ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից կատարվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ նախնական համաձայնությունն ստանալու դեպքում: ՀՀ տարածքում ՀՀ քաղաքացիների կողմից օտարերկրյա քաղաքացի երեխային որդեգրելիս անհրաժեշտ է ստանալ երեխայի օրինական ներկայացուցչի և այն պետության իրավասու մարմնի համաձայնությունը, որի քաղաքացին է համարվում երեխան, ինչպես նաև որդեգրման համար տասը տարին լրացած երեխայի համաձայնությունը, եթե դա պահանջվում է նշված պետության օրենսդրությամբ: Եթե որդեգրման հետևանքով կարող են խախտվել ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված երեխայի իրավունքները, ապա որդեգրում չի կարող կատարվել անկախ որդեգրողի քաղաքացիությունից, իսկ կատարված որդեգրումը ենթակա է վերացման դատական կարգով: ՀՀ տարածքից դուրս որդեգրված ՀՀ քաղաքացի երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնում են ՀՀ հյուպատոսական հիմնարկները, որտեղ նշված երեխաները մինչև չափահաս դառնալը գտնվում են հաշվառման մեջ: (Հոդված 150) 40. Կարգավորում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների նկատմամբ՝ նրանց պահելու, դաստիարակելու և կրթություն տալու, ինչպես նաև նրանց իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակներով **խնամակալություն կամ հոգաբարձություն**		հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը: (Հոդված 67) • Ծնողները (նրանցից մեկը) փոխադարձ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում կարող են առկա տարաձայնությունները լուծելու համար դիմել **խնամակալության և հոգաբարձության մարմին** կամ **դատարան**: (Հոդված 53) • Ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է **դատարանը**՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով 10 տարին լրացած երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն): (Հոդված 53) • Ծնողները կարող են պահանջել վերադարձնել իրենց երեխային այն անձից, ով նրան իր մոտ է պահում առանց օրինական հիմքի կամ առանց դատարանի որոշման: Վեճի առկայության դեպքում ծնողներն իրենց ծնողական իրավունքները պաշտպանելու համար կարող են դիմել **դատարան**: Հաշվի առնելով 10 տարին լրացած երեխայի կարծիքը՝ դատարանը կարող է մերժել ծնողների հայցի բավարարումը, եթե հանգի այն եզրակացության, որ ծնողներին վերադարձնելը չի բխում երեխայի շահերից: Եթե դատական կարգով հաստատվում է, որ ո՛չ ծնողները, ո՛չ էլ այն անձը, որի մոտ գտնվում է երեխան, ի վիճակի չեն ապահովելու նրա դաստիարակությունն ու զարգացումը, ապա դատարանը երեխային հանձնում է **խնամակալության և հոգաբարձության մարմնի** խնամքին: (Հոդված 57) • Երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում **խնամակալության և**

		սահմանելու հարցերը: (Հոդված 134-ից Հոդված 136) 41. Կարգավորում է երեխային **խնամատար ընտանիք** հանձնելու մասին պայմանագրի հարաբերությունները: Խնամատար ընտանիքը առանց ծնողական խնամքի մնացած երեխայի դաստիարակության համար տեղավորման ձևերից մեկն է: Երեխայի դաստիարակությունը կարող է իրականացվել խնամատար ընտանիքում՝ երեխային ընտանիք դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի հիման վրա: Քաղաքացիները (ամուսինները կամ առանձին անձինք), որոնք ցանկություն են հայտնել դաստիարակության վերցնել առանց ծնողական խնամքի մնացած երեխա, համարվում են խնամատար ծնողներ: Խնամատար ընտանիք դաստիարակության համար հանձնվող երեխան համարվում է հոգեզավակ, իսկ խնամատար ծնողներից և հոգեզավակներից կազմված ընտանիքը՝ խնամատար ընտանիք: (Հոդված 137) Սահմանում է խնամատար ծնողների իրավունքներն ու պարտականությունները (Հոդված 138), կարգավորում է խնամատար ընտանիք հանձնված երեխային պահելու, խնամատար ընտանիքին դրամական միջոցների հատկացման, ֆինանսավորման հարցերը 42. Խնամատար ընտանիքին դաստիարակության չեն կարող հանձնվել սուր կամ քրոնիկ վարակիչ հիվանդությամբ տառապող երեխաները, եթե խնամատար ընտանիքը հակառակը չի պնդում: Արգելվում է եղբայրներին ու քույրերին առանձին խնամատար ընտանիքներ հանձնելը, բացառությամբ այն դեպքերի, եթե դա բխում է նրանց շահերից: Երեխային խնամատար ընտանիք հանձնելն իրականացվում է՝ հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: Խնամատար ընտանիք հանձնված երեխան պահպանում է իրեն հասանելիք ալիմենտի, կենսաթոշակի նկատմամբ իրավունքը, ինչպես նաև բնակելի տարածության սեփականության, օգտագործման իրավունքը, իսկ բնակելի տարածության բացակայության դեպքում՝ բնակարանային օրենսդրությանը համապատասխան՝ բնակելի տարածություն ստանալու իրավունքը: (Հոդված 139) 43. Սահմանում է ընտանեկան օրենսդրության կիրառումը **օտարերկրյա** քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցությամբ ընտանեկան հարաբերությունների նկատմամբ, մասնավորապես, հայրության (մայրության) որոշումը և վիճարկումը (Հոդված 147), ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները (Հոդված 148):		**հոգաբարձության մարմինն** իրավասու է անմիջապես երեխային վերցնելու ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան: Երեխային վերցնելիս **խնամակալության և հոգաբարձության մարմինը** պարտավոր է անհապաղ ապահովել երեխայի ժամանակավոր տեղավորումը և յոթ օրվա ժամկետում դիմել դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով: (Հոդված 58) • Ծնողներն իրավունք ունեն գրավոր համաձայնություն կնքելու երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին: Եթե ծնողները չեն կարող համաձայնության գալ, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով **խնամակալության և հոգաբարձության մարմնի** պարտադիր մասնակցությամբ վեճը լուծում է **դատարանը**: Դատարանի վճիռը չարամտորեն չկատարելու դեպքում երեխայից առանձին ապրող ծնողի պահանջով դատարանը կարող է որոշում կայացնել երեխան նրան հանձնելու մասին՝ ելնելով երեխայի շահերից և հաշվի առնելով 10 տարին լրացած երեխայի կարծիքը: (Հոդված 54) • Մերձավոր ազգականների հետ երեխային շփվելու հնարավորություն տալուց ծնողների կամ նրանցից մեկի մերժման դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինը կարող է պարտավորեցնել ծնողներին կամ նրանցից մեկին՝ չխանգարելու այդ շփմանը: Եթե ծնողները կամ նրանցից մեկը չեն կատարում խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումը, երեխայի մերձավոր ազգականները կարող են երեխայի հետ շփվելու արգելքները վերացնելու հայցով դիմել դատարան: Դատարանը վեճը լուծում է՝ ելնելով երեխայի շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: (Հոդված 56)
41.	**ՀՀ քրեական օրենսգիրք** *ՀՕ-528-Ն, ընդունված է՝ 18.04.2003, ուժի մեջ է՝ 01.08.2003* Ամրագրում է քրեական պատասխանատվության հիմքն ու քրեական օրենսդրության սկզբունքները, որոշում, թե հանրության համար վտանգավոր որ արարքներն են համարվում	1. **Կալանքը** չի նշանակվում դատավճիռը կայացնելու պահին 16 տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ խնամքին մինչև 8 տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ: (Հոդված 57) 2. Պատասխանատվությունը և պատիժը **մեղմացնող հանգամանքներ** են. հանցանք կատարելու պահին հանցավորի անչափահաս լինելը, հանցանք կատարելու կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի հղիությունը, պատիժ նշանակելու պահին հանցավորի խնամքի տակ մինչև 14 տարեկան երեխայի առկայությունը: (Հոդված 62) 3. Այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի տասնութ տարին լրանալը, **ռեցիդիվը** գնահատելիս հաշվի չեն առնվում: (Հոդված 22) 4. **Քրեական պատասխանատվության ենթակա** է այն անձը, ում 16 տարին լրացել է նախքան հանցանք կատարելը: Այն անձինք, որոնց 14 տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը, ենթակա են քրեական պատասխանատվության սպանության, դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու , մարդուն առևանգելու, բռնաբարության,	ՀՀ քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածների վերաբերյալ վիճակագրությունը. 22, 24, 54, 57, 60, 62, 75, 78, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 106, 119, 123, 124, 127, 131, 132.2, 132.3, 132.3, 133, 138, 139, 140, 141, 142, 156, 165, 166, 166.1, 167, 168, 169, 169.1, 170, 171, 172, 173, 213, 218, 243, 262, 263, 272, 309.1, 341, 393, 395	• Իրավասու դատարաններ • Եթե անչափահասը դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցից պարբերաբար խուսափում է, ապա **տեղական ինքնակառավարման մարմնի** կամ **դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի** միջնորդությամբ նյութերն ուղարկվում են դատարան՝ նշանակված միջոցը

	հանցագործություններ, և սահմանում է պատժի տեսակներ ու քրեաիրավական ներգործության այլ միջոցներ՝ դրանք կատարելու համար:	սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, ավազակության, գողության, կողոպուտի, շորթման, առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու, ծանրացուցիչ հանգամանքներում գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու, թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր հափշտակելու կամ շորթելու, տրանսպորտային միջոցները կամ հաղորդակցության ուղիները փչացնելու, խուլիգանության համար: Եթե անձը հասել է համապատասխան տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցել իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարել դա, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության: (Հոդված 24) 5. Կարգավորում է **անչափահասների քրեական պատասխանատվությունը և պատիժը**, ընդ որում՝ հանցանք կատարած անչափահասի նկատմամբ կարող է նշանակվել պատիժ կամ կարող են նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: (Հոդված 85) Անչափահասների նկատմամբ նշանակվող պատժի տեսակներն են. տուգանքը, հանրային աշխատանքները, կալանքը, որոշակի ժամկետով ազատազրկումը (Հոդված 86) **Տուգանքը** կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում: Տուգանքը նշանակվում է պատիժ նշանակելու պահին ՀՀ-ում սահմանված նվազագույն աշխատավարձի 10-ապատիկից 500-ապատիկի չափով: (Հոդված 87) **Կալանքը** 15 օրից 2 ամիս ժամկետով նշանակվում է դատավճիռը կայացնելու պահին 16 տարին լրացած անչափահասի նկատմամբ: (Հոդված 88) **Ազատազրկումն** անչափահասների նկատմամբ նշանակվում է ոչ մեծ ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, իսկ միջին ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, մինչև 16 տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը 7 տարի ժամկետով, 16-ից մինչև 18 տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը 10 տարի ժամկետով: (Հոդված 89) Անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրա վրա այլ անձանց ազդեցությունը: Մինչև 16 տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել 7 տարին: 16-ից մինչև 18 տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել 10 տարին: Ըստ դատավճիռների համակցության՝ ազատազրկման ձևով նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել 12 տարին: (Հոդված 90) **Հանրային աշխատանքները** չեն նշանակվում դատավճիռ կայացնելու պահին 16 տարին չլրացած և հղի կանանց նկատմամբ: (Հոդված 54) **Ցմահ ազատազրկման** չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս 18 տարին չլրացած անձինք, հանցանք կատարելու կամ դատավճիռ կայացնելու պահին հղի վիճակում գտնվող կանայք: (Հոդված 60) 6. Առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է **ազատվել քրեական պատասխանատվությունից**, եթե դատարանը գտնի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ:. Անչափահասի նկատմամբ դատարանը կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները. Նախազգուշացում, ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելն առավելագույնը 6 ամիս ժամկետով, պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի սահմանած ժամկետում, ժամանցի ազատության սահմանափակումը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումն առավելագույնը 6 ամիս ժամկետով: Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ դատարանն անչափահասի նկատմամբ կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի այլ միջոցներ: Անչափահասի նկատմամբ կարող է միաժամանակ նշանակվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի մի քանի միջոց: Նոր հանցանք կատարելիս անչափահասը քրեական պատասխանատվության ենթակա չէ նախկին հանցագործության համար, եթե վերջինիս կապակցությամբ նրա նկատմամբ կիրառվել է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոց: (Հոդված 91) **Նախազգուշացումը** անչափահասի արարքով պատճառած վնասի, ինչպես նաև օրենսգրքով նախատեսված հանցանքների կրկնակի կատարման հետևանքների պարզաբանումն է անչափահասին: **Հսկողության հանձնելը** ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի վրա անչափահասի նկատմամբ դաստիարակչական ներգործության և նրա վարքագծի նկատմամբ վերահսկողության պարտականություն դնելն է: Պատճառված **վնասը հարթելու պարտականությունը** դրվում է՝ հաշվի առնելով անչափահասի գույքային դրությունը և նրա մոտ համապատասխան աշխատանքային ունակությունների առկայությունը: **Ժամանցի ազատության սահմանափակումը և անչափահասի վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը** կարող են նախատեսել որոշակի վայրեր այցելելու, ժամանցի որոշակի ձևերի, այդ թվում՝ մեխանիկական տրանսպորտային միջոցներ վարելու հետ կապված արգելք, օրվա որոշակի ժամերից հետո տանից դուրս գտնվելու, առանց տեղական ինքնակառավարման մարմնի համաձայնության այլ վայրեր ուղևորվելու իրավունքի սահմանափակում: (Հոդված 92) Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը կարող է պատժից ազատվել, եթե դատարանը գտնի, որ պատժի նպատակներին կարելի է հասնել նրան անչափահասների հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով: Հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելը նշանակվում է առավելագույնը 3 տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան չափահաս դառնալը: (Հոդված 93) Անչափահաս տարիքում հանցանք կատարած և ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ պատիժը կրելուց **պայմանական վաղաժամկետ ազատում** կարող է կիրառվել, եթե դատապարտյալը փաստացի կրել է 1) ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան ¼-ը, կամ 2) ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան 1/3-ը, կամ առանձնապես ծանր հանցագործության համար նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը: (Հոդված 94) Մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անձին **վաղեմության ժամկետներն** անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելիս առանձին հանցանքների վաղեմության ժամկետները համապատասխանաբար կրճատվում են կիսով չափ: (Հոդված 95) Ազատազրկման հետ չկապված պատիժը կրելուց հետո անձի **դատվածությունը** համարվում է մարված: Մինչև 18 տարին լրանալը հանցանք կատարած անձանց համար դատվածությունը մարվելու ժամկետները կրճատվում են և համապատասխանաբար հավասար են՝ 1 տարվա՝ միջին ծանրության հանցագործության		վերացնելու և անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: (Հոդված 91) • Անչափահասին կարող է նաև ուսումնական հաստատություն վերադառնալու կամ տեղական ինքնակառավարման մարմնի միջնորդությամբ աշխատանքի տեղավորվելու պահանջ ներկայացվել: (Հոդված 92) • **Հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատություններում** անչափահասի գտնվելը կարող է վաղաժամկետ դադարեցվել, եթե դատարանը ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատության ղեկավարի միջնորդությամբ գտնի, որ անչափահասը տվյալ միջոցը հետագա կրելու կարիքը չունի: (Հոդված 93)

		համար ազատազրկումը կրելուց հետո, 3 տարվա՝ ծանր հանցագործության համար ազատազրկումը կրելուց հետո, 5 տարվա՝ առանձնապես ծանր հանցագործության համար ազատազրկումը կրելուց հետո: (Հոդված 96) 7. Ազատազրկման դատապարտված հղի կանանց կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձանց, բացառությամբ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար 5 տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց, դատարանը կարող է **հետաձգել պատիժը կրելը կամ ազատել պատիժը կրելուց** այն ժամկետի սահմաններում, որի ընթացքում կինն ազատվում է աշխատանքից հղիության, ծննդաբերության, ինչպես նաև երեխայի մինչև 3 տարեկան դառնալու կապակցությամբ: Եթե նման դեպքերում դատապարտված անձը հրաժարվում է երեխայից կամ նրան հանձնել է մանկատուն կամ խուսափում է նրան խնամելուց և դաստիարակելուց, որի համար գրավոր նախազգուշացվել է իր նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից, ապա նշված մարմնի միջնորդությամբ դատարանը կարող է դատապարտյալին ուղարկել դատավճռով նշանակված պատիժը կրելու: (Հոդված 78) 8. Մոր կողմից ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո, ինչպես նաև հոգեճնշող վիճակում կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում **նորածին երեխայի սպանությունը** պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով: (Հոդված 106) 9. Անչափահասին կամ ակնհայտ հղի կնոջը **դիտավորությամբ** ֆի**զիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք** պատճառելը պատժվում է ազատազրկմամբ՝ 3-ից 7 տարի ժամկետով (Հոդված 119), **մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով դիտավորությամբ կամ ինքնավստահությամբ վարակելն** այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին պատժվում է պատժվում է ազատազրկմամբ՝ 3-ից 8 տարի ժամկետով (Հոդված 123) **վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելն** այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 300-ապատիկից 500-ապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով: (Հոդված 124), խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով **գաղտնի կամ բացահայտ առևանգելը** պատժվում է ազատազրկմամբ՝ 4-ից 8 տարի ժամկետով (Հոդված 131), **ազատությունից ապօրինի զրկելը**, որն առևանգելու հետ կապված չէ պատժվում է ազատազրկմամբ՝ 3-ից 5 տարի ժամկետով (Հոդված 133), **պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից** հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ՝ դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով պատժվում է ազատազրկմամբ՝ 7-ից 12 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ 3 տարի ժամկետով (Հոդված 309.1), դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից բռնություն կամ սպառնալիք գործադրելու կամ այլ ապօրինի գործողություններով՝ դատավարությանը մասնակցող անձանց **ցուցմունք կամ բացատրություն կամ փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը** պատժվում է ազատազրկմամբ՝ 7-ից 12 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ 3 տարի ժամկետով: (Հոդված 341) 10. Ակնհայտ անչափահասի կամ հղի կնոջ **ծառայությունից օգտվելը՝ նրանց շահագործման վիճակում** գտնվելիս, եթե շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է ծառայությունից օգտվողի համար պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ առանց դրա: (Հոդված 132.3) 11. Ակնհայտ անչափահասին կամ հղի կնոջը **պատանդ վերցնելը կամ պատանդ պահելը**, որը կատարվել է պատանդին ազատելու պայմանով պետությանը, կազմակերպությանը կամ քաղաքացուն որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով պատժվում է ազատազրկմամբ՝ 6-ից 10 տարի ժամկետով: (Հոդված 218) 12. Անչափահասին առանց իր ազատ կամարտահայտության և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնության **բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը** պատժվում է ազատազրկմամբ՝ 1-ից 3 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա: (Հոդված 127) 13. **Բռնաբարությունը**՝ տղամարդու սեռական հարաբերությունը կնոջ հետ՝ նրա կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով, որը կատարվել է անչափահասի կամ ակնհայտ հղի կնոջ նկատմամբ պատժվում է ազատազրկմամբ 4-ից 10 տարի ժամկետով: Արարքը, որը կատարվել է 18 տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն կամ 14 տարին չլրացած անձի նկատմամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 8-ից 15 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ 3 տարի ժամկետով կամ առանց դրա: Անօգնական վիճակում գտնվող է համարվում, մասնավորապես, 12 տարին չլրացած անձը: (Հոդված 138) 14. **Սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողությունները** տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով, որոնք կատարվել են անչափահասի կամ ակնհայտ հղի կնոջ նկատմամբ պատժվում են ազատազրկմամբ՝ 4-ից 10 տարի ժամկետով: Արարքը, որը կատարվել է 18 տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն կամ 14 տարին չլրացած անձի նկատմամբ պատժվում է ազատազրկմամբ՝ 8-ից 15 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա: (Հոդված 139) 15. **Ակնհայտ 16 տարին չլրացած անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական**		

		գործողություններ կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 5-ից 12 տարի ժամկետով: (Հոդված 140) Ակնհայտ 16 տարին չլրացած սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողություններ կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով պատժվում է ազատազրկմամբ՝ 5-ից 12 տարի ժամկետով: (Հոդված 140) 16. 18 տարին լրացած անձի կողմից **սեռական հարաբերությունը ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ** կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելն ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից 250-ապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով: Արարքը, որը կատարվել է 21 տարին լրացած անձի կողմից, մի խումբ անձանց կողմից կամ միևնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 4-ից 10 տարի ժամկետով: Արարքը, որը կատարվել է 18 տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն կամ 14 տարին չլրացած անձի նկատմամբ պատժվում է ազատազրկմամբ՝ 5-ից 12 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա: (Հոդված 141) 17. 18 տարին լրացած անձի կողմից ակնհայտ 16 տարին չլրացած անձի նկատմամբ կամ 16 տարին լրացած անձի կողմից 14 տարին չլրացած անձի նկատմամբ **անառակաբարո գործողություններ** կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից 250-ապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով: Արարքը, որը կատարվել է 16 տարին լրացած անձի կողմից՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, կամ 21 տարին լրացած անձի կողմից ակնհայտ 16 տարին չլրացած անձի նկատմամբ, կամ 18 տարին լրացած անձի կողմից 14 տարին չլրացած անձի նկատմամբ, կամ միևնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար, կամ մի խումբ անձանց կողմից, կամ էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կիրառմամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 2-ից 5 տարի ժամկետով: Արարքը, որը կատարվել է 18 տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն, կամ 12 տարին չլրացած անձի նկատմամբ պատժվում է ազատազրկմամբ՝ 3-ից 7 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա: (Հոդված 142) 18. Կարգավորում է անչափահաս տուժողի նկատմամբ **սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության** դեմ ուղղված հանցանքների քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով (Հոդված 75) 19. **Վաշխառությունը**՝ պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը, ինչպես նաև անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը և որը կատարվել է տուժողի անչափահաս լինելն օգտագործելով պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 400-ապատիկից 600-ապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 4 տարի ժամկետով: (Հոդված 213) 20. **Պոռնկությամբ** զբաղվելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ որևէ հանրային հաստատություն պոռնկությամբ զբաղվելու համար օգտագործելը կամ այլ անձի պոռնկությամբ զբաղվելու համար բնակարան կամ այլ կացարան պարբերաբար տրամադրելը կամ գույքային օգուտ ստանալով՝ պոռնկությամբ զբաղվելուն այլ ձևով նպաստելը՝ ակնհայտ հղի կնոջը կամ անչափահասին օգտագործելով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 3-ից 6 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ առանց դրա (Հոդված 262) 21. **Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածմանը հակելը կամ ներգրավելը**, որը կատարվել է անչափահասի նկատմամբ պատժվում է ազատազրկմամբ՝ 3-ից 8 տարի ժամկետով: (Հոդված 272) 22. Ակնհայտ անչափահասին ներգրավելով **վարձկան** հավաքագրելը, ուսուցանելը, ֆինանսավորելը կամ այլ ձևով նյութապես ապահովելը, ինչպես նաև զինված ընդհարումներում կամ ռազմական գործողություններում նրան օգտագործելը պատժվում են ազատազրկմամբ՝ 7-ից 12 տարի ժամկետով: (Հոդված 395) 23. **Շահագործման** նպատակով երեխային հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը պատժվում է ազատազրկմամբ՝ 7-ից 10 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ առանց դրա: Նույն արարքը, որը կատարվել է 2 կամ ավելի անձանց նկատմամբ, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, պաշտոնեական դիրքը օգտագործելով, բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, առևանգման միջոցով, ակնհայտ հղի կնոջ նկատմամբ, ՀՀ պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 10-ից 12 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ առանց դրա: Արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից, անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 12-ից 15 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ առանց դրա: (Հոդված 132^2) Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը, եթե այդ անձի շահագործման վիճակի մեջ լինելը ակնհայտ է **ծառայությունից օգտվողի** համար, որը կատարվել է ակնհայտ անչափահասի նկատմամբ, ակնհայտ հղի կնոջ նկատմամբ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա: (Հոդված 132^3) 24. Հղի կնոջը հղիության շարժառիթով կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձին այդ շարժառիթով **աշխատանքի ընդունելուց անհիմն հրաժարվելը** կամ **աշխատանքից անհիմն ազատելը** պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-		

		ապատիկից 500-ապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը 1 ամիս ժամկետով: (Հոդված 156) 25. 18 տարին լրացած անձի կողմից տվյալ հանցագործության համար օրենսգրքով քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասին խոստումներ տալու, խաբեության կամ այլ եղանակով **հանցանքի կատարմանը ներգրավելը** պատժվում է ազատազրկմամբ՝ 1-ից 5 տարի ժամկետով: Նույն արարքը, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է անչափահասի դաստիարակության պարտականություն պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը 5 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա: Արարքները, որոնք կատարվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով պատժվում են ազատազրկմամբ՝ 3-ից 7 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ առանց դրա: Արարքները՝ զուգորդված՝ անչափահասին կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության կամ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելուն ներգրավելով պատժվում են ազատազրկմամբ՝ 5-ից 10 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ առանց դրա: (Հոդված 165) 26. 18 տարին լրացած անձի կողմից երեխային **պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը** պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից 400-ապատիկի չափով, կամ կալանքով՝ 1-ից 3 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ 1-ից 5 տարի ժամկետով: Նույն արարքը, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն պատժվում է ազատազրկմամբ՝ 2-ից 6 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա: Արարքները, որոնք կատարվել են երկու կամ ավելի անձանց նկատմամբ, զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով պատժվում են ազատազրկմամբ՝ 3-ից 7 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ առանց դրա: (Հոդված 166) 27. 18 տարին լրացած անձի կողմից երեխային պարբերաբար **ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը, թափառաշրջիկությանը ներգրավելը կամ մուրացկանության հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը** պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից 400-ապատիկի չափով, կամ կալանքով՝ 1-ից 3 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 5 տարի ժամկետով: Նույն արարքը, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 300-ապատիկից 500-ապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ 1-ից 5 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ առանց դրա: Արարքները, որոնք կատարվել են երկու կամ ավելի անձանց նկատմամբ, զուգորդվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով պատժվում են ազատազրկմամբ՝ 2-ից 6 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ առանց դրա: (Հոդված 166.1) 28. Երեխային **առանց ծնողների համաձայնության նրանցից բաժանելը**, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կամ **երեխային փոխելը** պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից 250-ապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 5 տարի ժամկետով: Նույն գործողությունները, որոնք կատարվել են երկու կամ ավելի երեխաների նկատմամբ, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, երեխային այլ պետություն ապօրինի տեղափոխելով պատժվում են ազատազրկմամբ՝ 3-ից 8 տարի ժամկետով: Գործողությունները, որոնք կատարվել են կազմակերպված խմբի կողմից, կամ անզգուշությամբ առաջացրել են երեխայի մահ կամ այլ ծանր հետևանքներ պատժվում են ազատազրկմամբ՝ 5-ից 10 տարի ժամկետով: (Հոդված 167) 29. Խնամքը ստանձնելու նպատակով **երեխայի առքը** կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով **երեխայի վաճառքը** պատժվում է ազատազրկմամբ՝ 2-ից 5 տարի ժամկետով: Նույն արարքը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով, երկու կամ ավելի երեխաների նկատմամբ, ՀՀ պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով, կեղծ որդեգրում կատարելու միջոցով պատժվում է ազատազրկմամբ՝ 4-ից 8 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ առանց դրա: (Հոդված 168) 30. **Որդեգրման գաղտնիքը որդեգրողի կամքին հակառակ հրապարակելն** այն անձի կողմից, ով որդեգրման փաստը պարտավոր էր պահպանել որպես ծառայողական կամ մասնագիտական գաղտնիք, կամ այդ գաղտնիքն այլ անձի կողմից շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հրապարակելը, ինչպես նաև որդեգրման նպատակով որդեգրվողի օրինական ներկայացուցչի կամքին հակառակ նրան որդեգրման համաձայնություն տալուն շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հակելը կամ հարկադրելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը 200-ապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա: (Հոդված 169) 31. **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելը** պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից 300-ապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը 3 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով: (Հոդված 169[1]) 32. Ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն, կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից **երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը** պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 50-ապատիկից 100-ապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա: Նույն արարքը, որը զուգորդվել է անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից 200-ապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով՝ որոշակի		

		պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա: (Հոդված 170) 33. **Երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն** այն անձի կողմից, ում վրա այդ պարտականությունները դրված են ըստ ծառայության, կամ այն անձի կողմից, ով այդ պարտականությունը կատարում է հատուկ հանձնարարությամբ կամ ստանձնել է կամավոր, եթե դրա հետևանքով երեխայի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է միջին ծանրության վնաս պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից 300-ապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա: (Հոդված 171) 34. **Խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական կամ այլ անձնական դրդումներով օգտագործելը կամ խնամարկյալին դիտավորությամբ առանց հսկողության կամ անհրաժեշտ օգնության թողնելը**, որն առաջացրել է խնամարկյալի իրավունքների և օրինական շահերի էական սահմանափակում պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից 300-ապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով կամ առանց դրա: (Հոդված 172) 35. Ծնողի կողմից երեխային դատարանի վճռով **ապրուստի միջոցներ վճարելուց 3 ամսից ավելի չարամտորեն խուսափելը** պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկից 200-ապատիկի չափով: (Հոդված 173) 36. Համակարգչային համակարգի միջոցով **մանկական պոռնոգրաֆիայի** ներկայացնելը կամ համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում մանկական պոռնոգրաֆիայի պահպանելը պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 400-ապատիկից 800-ապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը 3 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով: Նույն արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից պատժվում է ազատազրկմամբ՝ 2-ից 4 տարի ժամկետով: (Հոդված 263) 37. **Տրանսպորտային միջոցը 16 տարին չլրացած անձին հանձնելը** պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից 400-ապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը 1 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով: (Հոդված 243) 38. **Ցեղասպանությունը**, այսինքն՝ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական որևէ խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակով՝ այդ խմբի անդամներին սպանելը, նրանց առողջությանը ծանր վնաս պատճառելը, **մանկածնությանը** խոչընդոտելը, երեխաներին հարկադրաբար մարդկային այդ խմբից այլ խմբի **հանձնելը**, բռնությամբ **վերաբնակեցնելը** կամ այդ խմբի լիովին կամ մասամբ ֆիզիկական ոչնչացման նպատակով կյանքի այլ պայմաններ ստեղծելը պատժվում են ազատազրկմամբ՝ 14-ից 20 տարի ժամկետով, կամ ցմահ ազատազրկմամբ: (Հոդված 393)		
42.	**ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք** *ՀՕ-248, ընդունված է՝ 01.07.1998, ուժի մեջ է՝ 12.01.1999* Սահմանում է ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները	1. Անչափահաս **տուժողի** (Հոդված 59), քաղաքացիական **հայցվորի** (Հոդված 61), **կասկածյալի** (Հոդված 63), **մեղադրյալի** (Հոդված 65) իրավունքները նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը: Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի **օրինական ներկայացուցիչներ** են համարվում նրանց ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում են դատավարության համապատասխան անչափահաս մասնակցի օրինական շահերը: Օրինական ներկայացուցիչ չունենալու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչ է նշանակում խնամակալության և հոգաբարձության մարմնին: (Հոդված 76) 14 տարին չլրացած վկայի օրինական ներկայացուցիչը, իսկ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ՝ նաև առավել բարձր տարիքի անչափահասի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի իմանալ ներկայացվող անձին քրեական վարույթն իրականացնող մարմին կանչելու մասին և **մասնակցել քննչական կամ այլ դատավարական գործողությանը**՝ ուղեկցելով նրան: Սահմանում է քննչական կամ այլ դատավարական գործողությանը՝ վկայի օրինական ներկայացուցչի իրավունքները և պարտականությունները: (Հոդված 87) 2. Քրեական գործով վարույթին **պաշտպանի մասնակցությունը** պարտադիր է, եթե հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է (Հոդված 69) 3. Անչափահասները, որոնք ծնողին կամ կերակրողին արգելանքի վերցնելու, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի այլ գործողությունների հետևանքով մնացել են **առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների**, ունեն խնամքի իրավունք, որը նշված մարմինը պարտավոր է նրանց ապահովել պետական բյուջեի միջոցների հաշվին: Քրեական վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությունները՝ կազմակերպելու վերոհիշյալ անձանց հսկողությունը և խնամքը պարտադիր են խնամակալության և հոգաբարձության մարմնի համար: Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի նաև անչափահաս անձանց հանձնել նրանց ազգականների խնամակալությանը՝ վերջիններիս համաձայնությամբ: (Հոդված 140) 4. **Հսկողության հանձնելն** այն է, երբ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի վրա, որտեղ նա պահվում է, պարտականություն է դրվում ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը: Անչափահասի նկատմամբ որպես խափանման միջոց հսկողության հանձնելը կիրառելու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը նրա ծնողներին, խնամակալներին, հոգաբարձուներին, փակ մանկական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին ծանոթացնում է կայացված որոշմանը և նրանց հանձնում որոշման պատճենը, ծանոթացնում է կասկածանքի կամ մեղադրանքի բովանդակությանը, նրանց բացատրում է իրենց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչն արտացոլվում է արձանագրությունում: Ծնողները, խնամակալները, հոգաբարձուներն իրավունք ունեն հրաժարվել անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ հսկողություն իրականացնելուց: Իրենց պարտականությունները չկատարելու համար հսկողություն իրականացնելու պարտավորություն ստանձնած անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն: (Հոդված 148) 5. Չի թույլատրվում **բերման** ենթարկել մինչև 14 տարեկան անչափահասներին, հղի կանանց, բացառությամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ կասկածվելու դեպքերի: (Հոդված 153)	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հետևյալ հոդվածների վերաբերյալ վիճակագրությունը. 59, 61, 63, 65, 69, 76, 87, 140, 148, 153, 169, 177, 205, 2051, 207, 341, 429, 431, 439, 440, 441, 442, 443	• **Առաջին ատյանի դատարանները** քննում են բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ: (Հոդված 44) • **Քրեական վերաքննիչ դատարանին** ընդդատյա են առաջին ատյանի դատարանների՝ օրինական ուժի մեջ չմտած, իսկ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բացառիկ դեպքերում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին վերաբերող գործերը: (Հոդված 44) • **ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատին** ընդդատյա են վերաքննիչ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի վերաբերյալ գործերը, իսկ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված բացառիկ դեպքերում՝ նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին վերաբերող գործերը: (Հոդված 46) • **Քաղաքացիական հայցը** քննվում է քրեական գործի հետ միասին՝ ըստ վերջինիս ընդդատության: (Հոդված 162) • **Դատախազը** պետական պաշտոնատար անձ է, որն իր

		6. Արգելանքի տակ չգտնվող անչափահասները, որպես կանոն, **հարցաքննության կանչվում** են իրենց օրինական ներկայացուցիչների միջոցով: (Հոդված 205) Անչափահասի **հարցաքննությունը չի կարող տևել** անընդմեջ 2 ժամից ավելի: Օրվա մեջ անչափահասի հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 6 ժամը: (Հոդված 205[1]) Անչափահաս **վկան կամ անչափահաս տուժողը**, անկախ տարիքից, կարող է հարցաքննվել՝ պայմանով, որ նա կարող է հաղորդել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ: Մինչև 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը: Հարցաքննությունը սկսելուց առաջ օրինական ներկայացուցչին բացատրվում են հարցաքննությանը ներկա գտնվելու, քննիչի թույլտվությամբ իր դիտողությունները շարադրելու և հարցեր տալու իր իրավունքները, ինչպես նաև պարտականությունները: Քննիչն իրավունք ունի չընդունելու տրված հարցերը, սակայն դրանք պետք է ներառվեն արձանագրությունում: 16 տարին չլրացած վկային կամ տուժողին բացատրվում է գործին վերաբերող ամեն ինչի մասին ճշմարտացիորեն պատմելու նրա պարտականությունը, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին: (Հոդված 207) Անչափահաս **վկայի հարցաքննությունը**, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի ցուցմունքները, նրան հնարավորություն է ընձեռվում տվյալ վկային տալ հարցեր և ցուցմունքներ՝ վկայի հաղորդած տվյալների վերաբերյալ: 16 տարին չլրացած վկան պետք է հեռացվի դատական նիստի դահլիճից նրա հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ վկայի հետագա ներկայությունը: (Հոդված 341) 7. Անչափահասին դատապարտելու դեպքում **դատական ծախսերը** կարող են դրվել նրա օրինական ներկայացուցչի վրա: (Հոդված 169) 8. Եթե լրացել է հանցագործությունների մասին **հաղորդում** տվող դիմողի 16 տարին, նա նախազգուշացվում է սուտ մատնության համար պատասխանատվության մասին, ինչը հաստատում է իր ստորագրությամբ: (Հոդված 177) 9. Անչափահաս դատապարտյալի նկատմամբ **դատական որոշումներն ի կատար ածելու** հետ կապված հարցերը դատարանի կողմից քննելիս պաշտպանի մասնակցությունը պարտադիր է: (Հոդված 429) 10. Ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ **դատական որոշման կատարումը որոշում կայացրած դատարանը կարող է հետաձգել**, եթե առկա է դատապարտյալի հղիությունը դատական որոշման կատարման պահին՝ 1 տարուց ոչ ավելի ժամանակով, կամ դատապարտված կնոջ փոքրահասակ երեխաների առկայությունը՝ մինչև երեխայի 3 տարեկան դառնալը: (Հոդված 431) 11. Անչափահասների **գործերով վարույթի կարգը** կարգավորվում է ընդհանուր կանոններով, ինչպես նաև հանցանքը կատարելու պահին տասնութ տարին չի լրացած անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկություններով: (Հոդված 439) Բոլոր գործերով հաստատման ենթակա հանգամանքներից բացի, անչափահասների գործերով **անհրաժեշտ է պարզել** նաև անչափահասի տարիքը (ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը), կյանքի և դաստիարակության պայմանները, առողջության և ընդհանուր զարգացման վիճակը: (Հոդված 440) Անչափահասների հանցագործությունների վերաբերյալ **գործերի քննությանը մասնակցում է** անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչը: (Հոդված 441) Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ **կալանքը** որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում: (Հոդված 442) Դատարանը, դատավճիռ կայացնելիս, գալով այն եզրակացության, որ անչափահասը կարող է ուղղվել առանց քրեական պատժի միջոցներ կիրառելու, կարող է անչափահասին **ազատել պատժից** և նրա նկատմամբ կիրառել **դաստիարակչական** բնույթի հարկադրանքի միջոցներ: (Հոդված 443)		իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները: (Հոդված 52) • Կարգավորում է դատական վերահսկողության ոլորտը (Հոդված 278) • **Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը**, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ բողոքները ստանալով, պարտավոր է գրանցել դրանք և ուղարկել ըստ ընդդատության՝ այդ մասին տեղյակ պահելով հսկող դատախազին: Վերաքննիչ դատարանը, ստանալով բողոքը, անհապաղ պահանջում է կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը և դատարանի որոշումը: (Հոդված 287) • Դատարանն իրավունք ունի հայտարարելու պատժի կրումից խուսափող դատապարտյալի հետախուզում՝ **դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի** միջնորդությամբ: (Հոդված 434[1]) • Եթե հանցանքը կատարելուց հետո հոգեկան խանգարում ստացած անձինք գտնվում են արգելանքի տակ, նրանք պետք է գտնվեն հատուկ **բժշկական հաստատություններում**՝ բժշկական վերահսկողության տակ (469) Քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած և հասարակության համար վտանգ ներկայացնող անձի անմեղսունակության փաստը հաստատվելու պահից նա կարող է տեղավորվել **հոգեբուժական հաստատությունում**: Հոգեբուժական հաստատությունում տեղավորելը թույլատրվում է քննիչի պատճառաբանված որոշմամբ, որը հաստատում է դատարանը: (Հոդված 459)
43.	**ՀՀ վարչական իրավախախտումների**	1. **Վարչական պատասխանատվության ենթակա են** այն անձինք, որոնց 16 տարին լրացել է մինչև վարչական իրավախախտում կատարելու պահը: (Հոդված 12) Սահմանում է այն դեպքերը, երբ 16-ից մինչև 18 տարեկան հասակում գտնվող վարչական իրավախախտումներ կատարած անձինք ենթակա են վարչական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով: (Հոդված 13)	Անչափահասների գործերի հանձնաժողովի՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով	• Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, մասնավորապես, քննում են.

	վերաբերյալ օրենսգիրք *ընդունված է՝ 06.12.1985, ուժի մեջ է՝ 01.06.1986*	Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի **վարույթը չի կարող սկսվել**, իսկ սկսվածը ենթակա է **կարճման** եթե անձը վարչական իրավախախտում կատարելու պահին չի հասել 16 տարեկան հասակի: (Հոդված 247) 2. Վարչական իրավախախտման համար **պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ** են համարվում իրավախախտում կատարելը անչափահասի կողմից. իրավախախտում կատարելը հղի կնոջ կամ մինչև 1 տարեկան երեխա ունեցող կնոջ կողմից: (Հոդված 33) Վարչական իրավախախտման համար **պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք** է համարվում անչափահասին իրավախախտման մեջ ներգրավելը (Հոդված 34) 3. Կարգավորում է **մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության կանոնները** խախտելու դեպքում վարչական պատասխանատվությունը: Մանկական սննդի և հարակից ապրանքների **վաճառքն առողջապահական կազմակերպությունների կողմից** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 300-ապատիկի չափով: Մանկական սնունդ արտադրողների և (կամ) բաշխողների կողմից ցանկացած առաջարկի դեպքում (նմուշ, նվեր կամ այլ շնորհ) առողջապահական կազմակերպությունների կողմից **լիազոր մարմնին չտեղեկացնելն** առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով: Մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի և հարակից ապրանքների **գովազդը** և (կամ) խրախուսման այլ ձևերն առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով: Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում ընդգրկված **բուժաշխատողի** կողմից մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքով, իրացման, գովազդի և (կամ) խրախուսման այլ ձևերով զբաղվելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով, իսկ արտադրողից և (կամ) բաշխողից կամ նրանց անունից հանդես եկող այլ կազմակերպությունից որևէ նվեր, շնորհ կամ պարգև դրամական կամ որևէ այլ տեսքով ընդունելը, մանկական սննդի և հարակից ապրանքների նմուշներ ընդունելը կամ տրամադրելն առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով: Մանկական սնունդ արտադրողների և (կամ) բաշխողների կողմից ցանկացած առաջարկի դեպքում (նմուշ, նվեր կամ այլ շնորհ), բուժաշխատողի կողմից առողջապահական կազմակերպության ղեկավարությանը չտեղեկացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով: Մանուկների և վաղ տարիքի երեխաների սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների վերաբերյալ գրավոր, ձայնային կամ տեսողական **տեղեկատվական և ուսուցողական նյութեր** պատրաստելը և տարածելը օրենքի պահանջների խախտմամբ՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով: «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները չպահպանելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 300-ապատիկի չափով: Արարքները վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ 1 տարվա ընթացքում, կրկին կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված տուգանքի կրկնապատիկի չափով: (Հոդված 47.8) Մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի վաճառքն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 300-ապատիկի չափով: Մանկական սննդի և հարակից ապրանքների պահպանման համապատասխան պայմաններ չունեցող առևտրի օբյեկտի, սպառողական ապրանքների շուկայի, շրջիկ առևտրի կետի և (կամ) առևտրի կենտրոնի կողմից դրանց վաճառքն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 300-ապատիկի չափով: 18 տարին չլրացած անձանց ծխախոտ, ալկոհոլային խմիչքներ, թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր, սարսափ կամ պոռնոգրաֆիա բովանդակող գրականություն և տեսաերիզներ վաճառելն առաջացնում է տուգանքի նշանակում վաճառողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի, իսկ այդ նյութերի վաճառքի մեջ ներգրավելը՝ 100-ապատիկի չափով: (Հոդված 158) 4. 5-ից մինչև 10 տարեկան **անտոմս երեխաներ փոխադրելը** առաջացնում է տուգանքի նշանակում՝ մերձքաղաքային գնացքներով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 3%-ի չափով, տեղական և հեռավոր հաղորդակցության գնացքներով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 5%-ի չափով: (Հոդված 137) 5. Ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կողմից անչափահաս երեխաների **դաստիարակության և ուսուցման պարտականությունները չարամտորեն չկատարելը**, անչափահասների կողմից թմրամիջոցներ օգտագործելն առանց բժշկի նշանակման կամ նրանց կողմից այլ իրավախախտումներ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում ծնողների կամ նրանց փոխարինող անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 30-ապատիկի չափով: Հասարակական վայրերում մինչև 16 տարեկան դեռահասների հարբած վիճակում երևալը, ինչպես նաև նրանց կողմից ոգելից խմիչքներ օգտագործելն առաջացնում է տուգանքի նշանակում ծնողների կամ նրանց փոխարինող անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 20-ապատիկի չափով: (Հոդված 178) Ծնողների կամ այլ անձանց կողմից **անչափահասին հարբած վիճակի հասցնելը**՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով: (Հոդված 177) 6. **Կրոնական միավորումների վերաբերյալ օրենսդրությունը խախտելը**՝ պաշտամունքի սպասավորների և կրոնական միավորումների անդամների կողմից մանկական և պատանեկան հատուկ հավաքներ, ինչպես նաև աշխատանքային, գրական և պաշտամունքի ծիսակատարությունների հետ կապ չունեցող այլ խմբակներ և խմբավորումներ կազմակերպելն ու անցկացնելն առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի 30%-ից մինչև դրա լրիվ չափը: (Հոդված 206) 7. Անչափահասի՝ վարչական իրավախախտում կատարելու համար **ձերբակալման մասին** նրա ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց **տեղյակ պահելը** պարտադիր է: (Հոդված 260) 8. Վարչական պատասխանատվության ենթարկվող անձի և տուժողի շահերը, որոնք անչափահասներ են իրավունք ունեն ներկայացնելու նրանց **օրինական ներկայացուցիչները** (ծնողները, որդեգրողները, խնամակալները, հոգաբարձուները): (Հոդված 269) 9. Եթե մանր խուլիգանություն կատարած 16-ից մինչև 18 տարեկան անձինք ինքնուրույն վաստակ չունեն, **տուգանքը գանձվում է** ծնողներից կամ նրանց փոխարինող անձանցից: (Հոդված 305)	որոշումը կարող է գանգատարկվել պատգամավորների համապատասխան խորհրդի գործադիր կոմիտե կամ շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարան, որի որոշումը վերջնական է: (Հոդված 287) Բնակչության պետական ռեգիստրում ընդգրկվելու համար 16 տարին չլրացած անձի օրինական ներկայացուցչի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան տեղական ռեգիստրին մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն, ինչպես նաև օրենքով պահանջվող այլ անհատական հաշվառման **տվյալները չտրամադրելը կամ կեղծ տվյալներ տրամադրելը** կամ մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս նոր բնակության վայրի (կացարանի) հասցեն օրենքով սահմանված ժամկետում չհայտնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով: (Հոդված 195.1)	պատգամավորների շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներին առընթեր **վարչական հանձնաժողովները**, պատգամավորների ավանային, գյուղական խորհուրդների **գործադիր կոմիտեները**, **անչափահասների գործերի շրջանային (քաղաքային), քաղաքների շրջանային հանձնաժողովները**, **դատարանը** (դատավորը), **ոստիկանությունը**, **պետական տեսչությունների մարմինները**, **արդարադատության նախարարության մարմինները** և այլն (Հոդված 214): Անչափահասների վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում են անչափահասների գործերի շրջանային (քաղաքային), քաղաքների շրջանային հանձնաժողովները, օրենքով այլ բան չի նախատեսված: (Հոդված 215) • **Տարածքային կառավարման մարմիններ** և **տեղական ինքնակառավարման մարմիններ** (Հոդված 219[1]) • **Վարչական դատարաններ** (Հոդված 223) • **Պետական հրդեհային հսկողության** (Հոդված 225), **երկաթուղային տրանսպորտի** (Հոդված 226), **օդային տրանսպորտի** (Հոդված 227), **քաղաքային և միջքաղաքային մարդատար ավտոմոբիլային տրանսպորտի և էլեկտրատրանսպորտի** (Հոդված 229), **մաքսային** (Հոդված 234), **ՀՀ պաշտպանության նախարարության** (Հոդված 235), **անասնաբուժական պետական հսկողության** (Հոդված 238), **բույսերի կարանտինի և երկրագործության ոլորտի պետական տեսչության** (Հոդված 238[1]), **բնապահպանական օրենսդրության կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնող** (Հոդված 242), **ՀՀ կապի նախարարության համակարգի էլեկտրակապի պետական տեսչության** (Հոդված 243), **գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության** (Հոդված 244), **հարկային** (Հոդված 244[2]), **ՀՀ առողջապահության նախարարության մարմիններ** (244[14]), **աշխատանքի պետական տեսչություն** (Հոդված 230), **էներգետիկայի բնագավառում և էներգասպառման ոլորտում պետական տեխնիկական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին** (Հոդված 232[1]), **պետական սանիտարական հսկողություն իրականացնող**

				մարմինները և հիմնարկներ (Հոդված 236), **սննդամթերքի անվտանգության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող պետական լիազորված մարմին** (Հոդված 2382), **ջրային համակարգերի կառավարման լիազորված մարմին** (Հոդված 239), **ընդերքի օգտագործման ու պահպանման բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին** (242[2]), **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն** (Հոդված 2447), **ՀՀ տրանսպորտային տեսչություն** (Հոդված 244[13]) • Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի ժամանակ **դատախազական հսկողությունը** օրենքների կատարման նկատմամբ (Հոդված 250) • Անչափահասների գործերի շրջանային (քաղաքային), քաղաքների շրջանային հանձնաժողովները քննում են անչափահասների վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, բացի ոստիկանության զորքերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերից: (Հոդված 221) • **Անչափահասների գործերի շրջանային (քաղաքային), քաղաքների շրջանային հանձնաժողովները** ստեղծվում են պատգամավորների համապատասխան խորհուրդների կողմից՝ նախագահի, նախագահի տեղակալի, ազատված պատասխանատու քարտուղարի և հանձնաժողովի անդամների կազմով: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի կազմի մեջ կարող է մտցվել նաև երեխաների հետ տարվող աշխատանքի գծով տեսչի պաշտոն: (Հոդված 216) • 16-ից մինչև 18 տարեկան հասակում վարչական իրավախախտումներ կատարած անձանց նկատմամբ կիրառվում են Անչափահասների գործերի հանձնաժողովների կանոնադրությամբ նախատեսված միջոցները: Հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթն ու խախտողի անձը, նշված անձանց վերաբերյալ գործերը (բացառությամբ օրենսգրքի 182 հոդվածով նախատեսված իրավախախտումներ կատարած անձանց) կարող են հանձնվել, իսկ օրենսգրքի 53 հոդվածով (Մանր չափերով

				հափշտակությունը կամ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը) նախատեսված իրավախախտումներ կատարելու դեպքում, որպես կանոն, ենթակա են հանձնման, անչափահասների գործերի հանձնաժողովների քննությանը: (Հոդված 12) • Եթե վարչական իրավախախտում կատարվելու հետևանքով գույքային վնաս է պատճառվել քաղաքացուն, ձեռնարկությանը, հիմնարկին կամ կազմակերպությանը, ապա անչափահասների գործերի հանձնաժողովը վարչական իրավախախտման համար տույժ նշանակելու հարցը լուծելիս իրավունք ունեն միաժամանակ լուծելու գույքային վնասը մեղավորի կողմից հատուցելու հարցը, եթե վնասի գումարը չի գերազանցում 50 դրամից, իսկ շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարանը՝ անկախ վնասի չափից: Մնացած դեպքերում վարչական իրավախախտմամբ պատճառված գույքային վնասի հատուցման հարցը լուծվում է քաղաքացիական դատավարության կարգով: (Հոդված 39) • Անչափահասների գործերի հանձնաժողովները վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում են ըստ խախտողի բնակության վայրի: (Հոդված 276)
44.	**ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք** *ՀՕ-139-Ն, ընդունված է՝ 05.12.2013, ուժի մեջ է՝ 07.01.2014* Սահմանում է ՀՀ վարչական դատարանում, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական և վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը:	1. **Դատավարական գործունակությունը** ֆիզիկական անձանց համար լրիվ ծավալով ծագում է 18 տարեկան դառնալու պահից, անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու պահից (էմանսիպացիա), մինչև 18 տարին լրանալը՝ օրենքով սահմանված կարգով ամուսնանալու պահից: 14-ից 18 տարեկան անչափահասներին, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված անձանց դատարանում ներկայացնում են նրանց օրինական ներկայացուցիչները: Օրենքով նախատեսված դեպքերում 14-ից 18 տարեկան անչափահասները կարող են ինքնուրույն ներկայացնել իրենց շահերը: Նման դեպքերում դատարանը կարող է դատավարությանը մասնակից դարձնել նրանց օրինական ներկայացուցիչներին: 14 տարեկան չդարձած անչափահասների, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձանց իրավունքները և ազատությունները դատավարությունում ներկայացնում են նրանց օրինական ներկայացուցիչները՝ ծնողը, խնամակալը կամ օրենքով նման իրավունք ունեցող այլ անձինք: Գործի քննության ընթացքում 14-ից 18 տարեկան անչափահասները, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված անձինք լսվելու իրավունք ունեն: Դատարանը կարող է 14 տարեկան չդարձած անչափահասին կամ անգործունակ ճանաչված անձին ընձեռել գործի քննության ընթացքում լսվելու իրավունք: (Հոդված 4) 2. Բացառիկ դեպքերում **որպես վկա կարող է կանչվել** 16 տարեկան չդարձած երեխան, որին բացատրվում է դատարանին ցուցմունք տալու և միայն ճշմարտությունը հայտնելու կարևորությունը: Նա չի նախազգուշացվում սուտ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու համար քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին: 16 տարեկան չդարձած երեխայի հարցաքննության ընթացքում դատարանը հետևում է, որ հարցաքննության մեթոդը կամ հարցերը չշփոթեցնեն երեխային կամ չենթարկեն նրան անհարկի հոգեբանական ճնշման, և այդ նպատակով կարող է ցանկացած հարց հանել, ընդմիջել կամ դադարեցնել երեխայի հարցաքննությունը: 16 տարեկան չդարձած երեխայի հարցաքննությանը դատարանի նախաձեռնությամբ կարող է մասնակցել մանկական հոգեբանը կամ երեխայի մանկավարժը: (Հոդված 35)		

45.	**ՀՀ քրեակատարողական օրենսգիրք** *ՀՕ-60-Ն, ընդունված է՝ 24.12.2004, ուժի մեջ է՝ 18.01.2005* Սահմանում է քրեական պատիժներ կատարելու և պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու և կրելու կարգն ու պայմանները, ապահովել դատապարտյալի ուղղման համար անհրաժեշտ պայմաններ, պաշտպանել նրա իրավունքները և ազատությունները, ամրագրում է պատժի կատարման հիմքը, քրեակատարողական օրենսդրության սկզբունքները, դատապարտյալի իրավական վիճակը, նրա իրավունքները և ազատություններն ապահովելու երաշխիքները, պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու, առանձին պատժատեսակներ կատարելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջան նշանակելու և փորձաշրջանի ընթացքում վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև պատժից ազատելու կարգը:	1. Ողղիչ հիմնարկին կից մանկատանը երեխա ունեցող դատապարտյալին կարող է տրամադրվել **կարճաժամկետ մեկնում**՝ երեխային մանկատանը կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով: (Հոդված 80) 2. Ուղղիչ հիմնարկում անհրաժեշտության դեպքում կարող է ստեղծվել **մանկատուն**՝ երեխաների բնակության և զարգացման պատշաճ պայմաններով: Դատապարտյալն ուղղիչ հիմնարկի մանկատանը կարող է տեղավորել իր՝ մինչև 3 տարեկան երեխային և աշխատանքից ազատ ժամերին, առանց սահմանափակման, շփվել նրա հետ: Դատապարտյալին կարող է թույլատրվել երեխայի հետ համատեղ բնակություն: Դատապարտյալի համաձայնությամբ նրա՝ մինչև 3 տարեկան երեխան կարող է հանձնվել ազգականի, ինչպես նաև հոգաբարձության և խնամակալության մարմնի որոշմամբ՝ այլ անձանց խնամքին, իսկ երեք տարին լրանալուց հետո՝ դատապարտյալի ընտրությամբ ուղարկվել մանկատուն կամ համապատասխան այլ հաստատություն: Ուղղիչ հիմնարկին կից մանկատանը պահվող երեխայի 3 տարին լրանալուց հետո ուղղիչ հիմնարկի պետը կարող է մանկատանը երեխային պահելու ժամկետը երկարաձգել մինչև ծնողի պատժի ժամկետի ավարտը, եթե պատիժը կրելուն մնացել է երկու տարուց ոչ ավելի ժամանակ: (Հոդված 82) 3. **Երկարատև տեսակցություն** տրամադրվում է նաև դատապարտյալի հետ ամուսնության մեջ չգտնվող այն անձի հետ, որի հետ դատապարտյալն ունի համատեղ երեխա: (Հոդված 92) 4. Ուղղիչ հիմնարկի մանկատանը երեխա ունեցող, կերակրող մայր, հղի, նախածննդյան կամ հետծննդյան ժամանակահատվածում գտնվող դատապարտյալը **պատժախուց չի** տեղափոխվում: (Հոդված 97) Պատիժը կրելու սահմանված կարգը խախտելու համար ազատազրկման դատապարտված անչափահաս դատապարտյալին սահմանված կարգով պատժախուց տեղափոխելը թույլատրվում է մինչև տասն օր ժամկետով: (Հոդված 95) 5. Դատապարտյալի **ուղղման միջոցների առանձին տեսակներ** անչափահասների համար կրում են պարտադիր բնույթ: (Հոդված 17) 6. Անչափահաս դատապարտյալին ամսվա ընթացքում 1 անգամ տրամադրվում է մինչև 4 ժամ տևողությամբ **կարճատև տեսակցություն** ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հետ: Անչափահաս դատապարտյալն օգտվում է առնվազն 2 ժամ տևողությամբ **ամենօրյա զբոսանքի** իրավունքից: (Հոդված 56) 7. Ուղղիչ հիմնարկում անչափահասները **անջատ են պահվում** չափահասներից, բացառությամբ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անչափահասը (Հոդված 68) 8. Հղի, կերակրող մայր, անչափահաս դատապարտյալն ապահովվում է **հավելյալ սննդով**, որի չափաբաժինները սահմանում է ՀՀ կառավարությունը: (Հոդված 76) 9. Անչափահաս դատապարտյալին **կարճաժամկետ մեկնում** տրամադրվում է միայն ազգականի կամ այլ անձի ուղեկցությամբ: (Հոդված 80) 10. **Նախնական մասնագիտական կրթությունն** անչափահաս դատապարտյալի համար իրականացվում է աշխատանքային օրվա տևողության սահմաններում: (Հոդված 90) 11. Որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անչափահասը մինչև պատժի ժամկետը լրանալը պատիժը կրում է **միևնույն** ուղղիչ հիմնարկում, բայց ոչ ավելի, քան նրա 21 տարեկան դառնալը: 18 տարին լրացած դատապարտյալի՝ բացասական վարքագիծ դրսևորելու դեպքում այս առանձնահատկությունը չի գործում: Արգելվում է որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անչափահասի պատիժը կրելու նպատակով **փակ ուղղիչ հիմնարկ ուղարկելը**: (Հոդված 109) 12. Պատիժը կատարելու համար ուղղիչ **հիմնարկի տեսակը կարող է փոխվել** մեկուսացվածության առավել ցածր աստիճանի՝ հիմք ընդունելով որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի դրսևորած դրական վարքագիծը, մասնավորապես, բաց ուղղիչ հիմնարկ կարող են տեղափոխվել՝ դիտավորությամբ ոչ մեծ կամ միջին ծանրության կամ ծանր հանցագործության համար առաջին անգամ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված և կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող անչափահաս դատապարտյալը՝ նշանակված պատժի առնվազն մեկ քառորդը կրելուց հետո, առանձնապես ծանր հանցագործության համար մինչև 10 տարի ժամկետով ազատազրկման առաջին անգամ դատապարտված կամ ռեցիդիվի կամ վտանգավոր ռեցիդիվի դեպքում և կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող անչափահաս դատապարտյալը՝ նշանակված պատժի առնվազն մեկ երրորդը կրելուց հետո, առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում կամ առանձնապես ծանր հանցագործության համար 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված և կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող անչափահաս դատապարտյալը՝ նշանակված պատժի առնվազն կեսը կրելուց հետո: Կիսաբաց ուղղիչ հիմնարկ կարող են տեղափոխվել՝ ռեցիդիվի դեպքում՝ կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող անչափահաս դատապարտյալը՝ նշանակված պատժի առնվազն մեկ քառորդը կրելուց հետո, վտանգավոր ռեցիդիվի դեպքում կամ առանձնապես ծանր հանցագործության համար մինչև 10 տարի ժամկետով ազատազրկման առաջին անգամ դատապարտված և կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող անչափահաս դատապարտյալը՝ նշանակված պատժի առնվազն մեկ երրորդը կրելուց հետո, առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում կամ առանձնապես ծանր հանցագործության համար 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտված և կիսափակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող անչափահաս դատապարտյալը՝ նշանակված պատժի առնվազն մեկ երրորդը կրելուց հետո: Արգելվում է փոխել անզգուշությամբ կատարած հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անչափահաս անձի նկատմամբ պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը դեպի մեկուսացվածության առավել բարձր աստիճանի: (Հոդված 102)	Եթե դատապարտյալը հրաժարվում է երեխայից կամ նախազգուշացումից հետո շարունակում է խուսափել երեխային դաստիարակելուց և խնամելուց, ապա ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատժի կրման հետաձգումը վերացնելու և դատապարտյալի նկատմամբ դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին: Դատապարտյալը երեխային դաստիարակելուց խուսափող է համարվում, եթե, պաշտոնապես չհրաժարվելով երեխայից, նրան թողնում է ծննդատանը կամ հանձնում է մանկատուն կամ հակահասարակական ապրելակերպ է վարում և չի զբաղվում երեխայի դաստիարակությամբ ու խնամքով կամ երկար ժամանակով երեխային թողնում է ազգականների կամ այլ անձանց մոտ կամ թաքնվում է կամ կատարում է այլ գործողություններ, որոնք վկայում են երեխային դաստիարակելուց խուսափելու մասին: (Հոդված 118) Պատիժներ կատարող մարմնի և հիմնարկի վարչակազմը դատարանին հայտնում է պատիժը կատարելու մասին: Դատարանը քննարկում է դատապարտյալի բողոքները՝ պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի գործողությունների դեմ: (Հոդված 18) Պատիժներ կատարող մարմինների և հիմնարկների գործունեության նկատմամբ վերադաս մարմինները և դրանց պաշտոնատար անձինք ՀՀ կառավարության սահմանած կարգով իրականացնում են գերատեսչական վերահսկողություն: (Հոդված 18) Պատիժները կատարելու և պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու նկատմամբ դատախազական հսկողությունն իրականացվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: (Հոդված 20) Պատիժները կատարելու նկատմամբ հասարակական վերահսկողությունն իրականացվում է ՀՀ պետական կառավարման լիազորված մարմնի կազմավորած հասարակական դիտորդների խմբի միջոցով: (Հոդված 21) Դատապարտյալի հաշվառումը, պատիժը կրելու կարգն ու պայմանները պահպանելու նկատմամբ հսկողությունն իրականացնում է, ինչպես նաև պատիժը կրելու կարգը և պայմանները նրան բացատրում է ազատությունից զրկելու	• Եթե դատապարտյալը հղի կին է կամ ունի մինչև 3 տարեկան երեխա, ապա պատժի կրումը հետաձգելու կամ պատժից ազատելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացնում **պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի ղեկավարը**: Միջնորդությանը կցվում են դատապարտյալի բնութագիրը, նրան և երեխային ընդունելու, նրանց բնակարան տրամադրելու և ապրելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու մասին հարազատի համաձայնությունը կամ դատապարտյալի՝ բնակարանով և երեխայի հետ ապրելու համար անհրաժեշտ պայմաններով ապահովված լինելու մասին տեղեկանքը կամ հղիության մասին բժշկական եզրակացությունը կամ երեխայի ծննդյան վկայականի պատճենը կամ այլ հանգամանքների մասին տեղեկանքներ, ինչպես նաև դատապարտյալի անձնական գործը: Նախատեսված հանգամանքները վերանալու դեպքում ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատժի չկրած մասից դատապարտյալին ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կամ դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին՝ հաշվի առնելով դատապարտյալի վարքագիծը, կատարած հանցանքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը և պատժի չկրած ժամկետը: (Հոդված 117) • Պատժից ազատվող և հղի, մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձին, ինչպես նաև անչափահասին պատժից ազատելիս պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն ազատվելու մասին նախօրոք հայտնում է նրա ազգականներին կամ այլ անձանց, իսկ այդպիսիք չունենալու դեպքում անհրաժեշտ օգնությունը ցուցաբերում է ուղղիչ հիմնարկի վարչակազմը: Դատապարտյալը բնակության վայր է ուղարկվում ազգականի կամ այլ անձի կամ ուղղիչ հիմնարկի ծառայողի ուղեկցորդմամբ: (Հոդված 122) • Ուղղիչ հիմնարկի վարչակազմը պարտավոր է անչափահաս դատապարտյալի՝ ուղղիչ հիմնարկ ընդունվելու կամ մեկ հիմնարկից մյուսը փոխադրվելու մասին անհապաղ տեղյակ պահել նրա մերձավոր

			հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը: (Հոդված 32) Դատապարտյալի նկատմամբ տույժի միջոցի կիրառումը կարող է բողոքարկվել պատիժները կատարելու նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին: (Հոդված 97) Օրենքով նախատեսված դեպքերում պատժից ազատված անձանց վարքագծի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: (Հոդված 120) Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը, իսկ զինծառայողի նկատմամբ՝ նրա զորամասի հրամանատարությունը: (Հոդված 129)	ազգականներին կամ նրա նշած անձանց: (Հոդված 67) •
46.	**ՀՀ հողային օրենսգիրք** *ՀՕ-185, ընդունված է՝ 02.05.2001, ուժի մեջ է՝ 15.06.2001* Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը՝ ելնելով հողի կարևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակությունից, որի շնորհիվ ՀՀ-ում հողն օգտագործվում և պահպանվում է որպես ժողովրդի կենսագործունեության պայման:	1. Հողի սեփականաշնորհում իրականացրած համայնքներում բնակվող՝ չորս և ավելի երեխա ունեցող ընտանիքներին, որոնք չեն օգտվել հողի սեփականաշնորհումից, նախկինում չեն ստացել (ձեռք բերել) տնամերձ կամ բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար հողամաս, պետության և համայնքների սեփականության հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում են գյուղատնտեսական գործունեության համար և որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար: (Հոդված 64) 2. Անչափահաս քաղաքացու կողմից հողամասը ժառանգելու դեպքում նրա օրինական ներկայացուցիչները կարող են այդ հողամասը տրամադրել վարձակալության՝ մինչև ժառանգի չափահաս դառնալը: (Հոդված 95)	Անշարժ գույքի պետական միասնական կադաստր	• Տեղական ինքնակառավարման մարմիններ • ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե • Մարզպետարաններ
47.	**«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-57-ՀՆ-0800-1, ընդունված է՝ 14.04.1993, ուժի մեջ է՝*	1. Հաշմանդամ երեխայի կարգավիճակը սահմանելու վերաբերյալ որոշումների կայացումը բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինների կողմից: (Հոդված 6[1]) 2. **Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի** կողմից մինչև 18 տարեկան երեխաներին տրվում է հաշմանդամ երեխայի կարգավիճակ՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ օգտագործվող դասակարգիչներին և հաշմանդամության խմբերի սահմանման չափանիշներին համապատասխան՝ տվյալ աստիճանի կենսագործունեության սահմանափակման համար սահմանված ժամկետով: «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի սահմանման չափորոշիչները բխում են երեխայի զարգացման և կառուցվածքային-գործառնական առանձնահատկություններից:	Տարեկան ծրագիր (արդյո՞ք նախատեսում է տվյալների հավաքագրման, մոնիթորինգի և վերահսկման համակարգեր) Իրենց շահերի և իրավունքների պաշտպանության, փոխադարձ օգնության և ծառայությունների մատուցման նպատակով	• բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմիններ • կրթության պետական համակարգի մարմիններ • սոցիալական ապահովության մարմիններ

	01.08.1993 Սահմանում է ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները	(Հոդված 6[2]) 3. Հաշմանդամի վերափորձաքննությունը կատարվում է հաշմանդամ երեխայի կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալու, նրա առողջական վիճակը վատթարանալու, նրա՝ բժշկասոցիալական փորձաքննության որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու կամ հաշմանդամության սահմանման կարգի խախտման դեպքերում, ինչպես նաև նրա (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի համաձայն կամ դատարանի որոշմամբ: (Հոդված 6[2]) 4. Հաշմանդամ երեխաները ըստ դեղատոմսերի ապահովվում են դեղորայքով անվճար: Հաշմանդամներին երաշխավորվում է պետական բյուջեի միջոցների հաշվին որակյալ անվճար բժշկական օգնություն **պետական բժշկական հիմնարկներում**: (Հոդված 11) 5. Սահմանում է որոշումների բողոքարկումը վերադասության կամ **դատական** կարգով: (Հոդված 6) 6. **Կրթության պետական համակարգի մարմինները սոցիալական ապահովության և առողջապահության մարմինների** հետ համատեղ հաշմանդամի վերականգնման անհատական ծրագրին համապատասխան ապահովում են հաշմանդամ երեխաների նախադպրոցական դաստիարակությունը, հաշմանդամների միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: (Հոդված 12) 7. Նախադպրոցական տարիքի հաշմանդամ երեխաների դաստիարակության և անհրաժեշտ վերականգնողական օգնության համար առավել բարենպաստ հնարավորություններ ստեղծելու նպատակով ընդհանուր տիպի մանկական նախադպրոցական հիմնարկներում նրանց համար ստեղծվում են հատուկ պայմաններ: Այն հաշմանդամ երեխաների համար, որոնց առողջական վիճակը թույլ չի տալիս նրանց դաստիարակությունն իրականացնել ընդհանուր տիպի նախադպրոցական հիմնարկներում, ստեղծվում են հատուկ նախադպրոցական հիմնարկներ: Ընդհանուր կամ հատուկ նախադպրոցական հիմնարկներում հաշմանդամ երեխաների դաստիարակության դեպքում, նրանց ծնողների համաձայնությամբ, այն կարող է իրականացվել տնային պայմաններում: Նման դեպքերում ծնողներից մեկին կամ նրան փոխարինող անձին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում են նյութական ապահովություն և արտոնություններ: Համապատասխան կրթօջախները և նախադպրոցական հիմնարկները հաշմանդամ երեխաների ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց օգնություն են ցույց տալիս տնային պայմաններում նրանց դաստիարակությունն իրականացնելու գործում: Օգնության ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և ժամկետներում: (Հոդված 13) 8. Հաշմանդամների **միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթությունն** իրականացվում է ընդհանուր տիպի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ ուսումնական հաստատություններում: Ընդունելության քննությունների ընթացքում հաշմանդամների և մյուս դիմորդների համար հավասար պայմաններ ստեղծելու նպատակով իրականացվում են համապատասխան միջոցառումներ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում: Պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգում սովորող հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության վճարովի համակարգ, եթե 18 տարին լրանալուց հետո չեն ճանաչվել հաշմանդամ: Պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող անձինք ուսումնառության ընթացքում հաշմանդամ երեխայի կարգավիճակ ստանալու դեպքում տեղափոխվում են տվյալ ուսումնական հաստատության անվճար համակարգ: Պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Նրանց թվից ցերեկային ուսուցման հաշմանդամներին, հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից: Ուսումնական պարապմունքներ կազմակերպվում են նաև բուժկանխարգելիչ կամ վերականգնողական հիմնարկներում բուժման կուրս անցնող հաշմանդամ երեխաների համար: Ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և ժամկետներում: (Հոդված 14) 9. Հաշմանդամների **սոցիալական պաշտպանությունը ֆինանսավորվում** է ՀՀ բյուջեի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: (Հոդված 37) 10. Բնակչության **սոցիալական պաշտպանության հաստատություններում** բնակվող հաշմանդամներն օգտվում են օրենքով հաշմանդամների համար նախատեսված իրավունքներից և արտոնություններից: Տնային պայմաններում հաշմանդամին տրամադրվում են կենցաղային և առաջնային բժշկական օգնություն, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն: Հաշմանդամների՝ տնային պայմաններում սոցիալական սպասարկման և խնամքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է ՀՀ կառավարությունը: (Հոդված 35) 11. Կարգավորում է հաշմանդամների համար **սոցիալական ենթակառուցվածքի մատչելիության** ապահովման պայմանների ստեղծումը (Հոդված 21-27) 12. Կարգավորում է հաշմանդամ երեխաներին ցույց տրվող **սոցիալական օգնության տեսակները**, սահմանում է երաշխիքները, կարգավորում է հաշմանդամին տեխնիկական կամ այլ միջոցների տրամադրումը, հաշմանդամների պրոթեզավորման կարգն ու պայմանները	հաշմանդամները և նրանց ներկայացնող անձինք իրավունք ունեն ստեղծելու **հասարակական կազմակերպություններ**: Հաշմանդամները շահերի հետ առնչվող հարցերի քննարկումն ու լուծումը պետական իշխանության և կառավարման մարմինների կողմից իրականացվում է հաշմանդամների համապատասխան հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ կամ նրանց համաձայնությամբ: (Հոդված 38) Պետությունն ապահովում է հաշմանդամների **տեղեկություններ ստանալու ազատությունը**: Տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար երաշխավորվում է Բրայլի համակարգով կատարվող ուսուցման ապահովումը, լսողական միջոցների և խոշոր տառատեսակների մատչելիությունը՝ ներառյալ ուշ տարիքում տեսողությունը կորցրած անձանց Բրայլի համակարգով լրացուցիչ ուսուցումը: Մտավոր թերություններ ունեցող անձանց համար կազմակերպվում է լեզվի մատչելի ըմբռնման ուսուցման համակարգ: Խոսակցական խանգարումներով անձանց տրամադրվում են հաղորդակցման տեխնիկական միջոցներ: **Հաշմանդամների հասարակական կազմակերպությունները** սեփական միջոցների հաշվին և կանոնադրական խնդիրների շրջանակներում կարող են տրամադրել նաև անձնական շփման և հաղորդակցման այլ միջոցներ: **Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնած հեռուստառադիոընկերությունները** օրենքով սահմանված եթերաժամանակով ապահովում են մանկական և լրատվական հեռուստահաղորդումների ժեստերի լեզվով թարգմանությամբ հեռարձակումը: (Հոդված 14)	• առողջապահության մարմիններ, պետական բժշկական հիմնարկներ • հաշմանդամների հասարակական կազմակերպություններ • պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնած հեռուստառադիոընկերություններ • ՀՀ կառավարություն և ՀՀ Ազգային Ժողով (տարեկան ծրագրի և դրա իրականացման հաշվետվության հաստատման մասով)
48.	**«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-16, ընդունված է՝ 06.11.1995, ուժի մեջ է՝ 28.11.1995* Սահմանում է ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման, ինչպես նաև	1. ՀՀ **քաղաքացիություն ձեռք է բերվում**, մասնավորապես, ծննդով (Հոդված 9) Երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Երեխան, ում ծնողներից մեկը նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Այն դեպքում, երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե նա ծնվել է ՀՀ-ում կամ, եթե ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ, կամ եթե ծնողները մշտապես բնակվում են ՀՀ-ում: (Հոդված 11)	Քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումները և միջնորդությունները ներկայացվում են գրավոր: ՀՀ քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումների, միջնորդությունների, դրանց քննարկման ընթացքի, անձի քաղաքացիության վերաբերյալ	• **Հանրապետության Նախագահն** իր հրամանագրով լուծում է ՀՀ քաղաքացիություն ստանալու, ՀՀ քաղաքացիությունը վերականգնելու, ՀՀ քաղաքացիության խմբային ձեռքբերման, ՀՀ քաղաքացիության դադարեցման հարցերը, սահմանում է

	փոխելու կարգը	2. ՀՀ-ում ծնված երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե **ծնողները քաղաքացիություն չունեցող անձինք** են, կամ ծնողների **քաղաքացիությունն անհայտ** է, կամ ծնողներն **այլ երկրի** քաղաքացիներ են, սակայն չեն կարող իրենց քաղաքացիությունը փոխանցել երեխային՝ իրենց քաղաքացիության երկրի օրենսդրության համաձայն, կամ ծնողներից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ այլ երկրի քաղաքացի, որը, իր քաղաքացիության երկրի օրենսդրության համաձայն, չի կարող իր քաղաքացիությունը փոխանցել երեխային, կամ ծնողներից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսի քաղաքացիությունն անհայտ է, կամ ծնողներից մեկի քաղաքացիությունն անհայտ է, իսկ մյուսն այլ երկրի քաղաքացի է, որը, իր քաղաքացիության երկրի օրենսդրության համաձայն, չի կարող իր քաղաքացիությունը փոխանցել երեխային: Այս դեպքերում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա: Երեխան ՀՀ-ում ծնված է համարվում նաև, եթե ծնվել է ՀՀ դրոշի տակ օրինական կարգով գտնվող կամ ՀՀ տարբերանշանը կրող ՀՀ օդանավակայանում կամ նավահանգստում գրանցված օդային, ծովային կամ գետային նավում: Ծնողի քաղաքացիությունը համարվում է անհայտ, եթե մինչև երեխայի քաղաքացիությունը որոշելու համար վերջնական որոշում կայացնելու պահը ՀՀ կառավարության լիազոր մարմնի ձեռնարկած անհրաժեշտ և բավարար միջոցների արդյունքում հնարավոր չի եղել որոշել ծնողի քաղաքացիությունը: (Հոդված 12) 3. ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ, մասնավորապես, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձը, որն ունի **ՀՀ քաղաքացի երեխա**: (Հոդված 13) 4. ՀՀ **քաղաքացիություն ձեռք բերած ծնողների երեխան** ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Եթե ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե առկա է ծնողների գրավոր համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է ՀՀ-ում, և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը, կամ եթե ծնողների (ծնողի) համաձայնության բացակայության դեպքում ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ: ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած օտարերկրյա քաղաքացիների երեխան, անկախ այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքից, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն՝ ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայացված դիմումի հիման վրա: Նման դեպքերում 14-18 տարեկան երեխան ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար տալիս է գրավոր համաձայնություն: (Հոդված 16) 5. ՀՀ քաղաքացիությունը կորցրած ծնողների **երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը**, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն: Եթե ծնողներից մեկը կորցրել է ՀՀ քաղաքացիությունը, իսկ մյուսը ՀՀ քաղաքացի է, ապա նրանց երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է ՀՀ-ից դուրս, և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը: Նման դեպքերում 14-18 տարեկան երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը իր գրավոր համաձայնության առակայության դեպքում, եթե չունի պետության հանդեպ չկատարված՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտավորություններ: Երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե նա ունի կամ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն: Երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը՝ քաղաքացիության դադարեցման հետևանքով՝ ծնողի ներկայացրած դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու համար նախատեսված ընդհանուր հիմունքներով: (Հոդված 17) 6. ՀՀ քաղաքացիների կողմից **որդեգրված երեխան** ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը օտարերկրյա քաղաքացի է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե առկա է երեխային որդեգրած ամուսինների համաձայնությունը, կամ երեխան բնակվում է ՀՀ-ում, և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող որդեգրած ամուսնու համաձայնությունը, կամ երեխան քաղաքացիություն չունեցող անձ է կամ ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ: (Հոդված 18) ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են օտարերկրյա քաղաքացիները կամ այնպիսի ամուսիններ, որոնցից մեկը ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, պահպանում է ՀՀ քաղաքացիությունը: Նման դեպքում երեխան կարող է փոխել քաղաքացիությունը միայն որդեգրողների դիմումով, եթե նա ունի կամ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն: ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են քաղաքացիություն չունեցող անձինք, կամ որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի կամ օտարերկրյա քաղաքացի, պահպանում է ՀՀ քաղաքացիությունը: (Հոդված 19) 7. **ՀՀ-ում գտնվող երեխան, որի ծնողներն անհայտ են**, ՀՀ քաղաքացի է: Ծնողներից մեկի կամ խնամակալի գտնվելու դեպքում երեխայի քաղաքացիությունը կարող է փոխվել օրենքին համապատասխան: (Հոդված 20) 8. ՀՀ քաղաքացի երեխան, որի նկատմամբ հաստատված է ՀՀ քաղաքացիների **խնամակալություն կամ հոգաբարձություն**, պահպանում է ՀՀ քաղաքացիությունը՝ անկախ նրա ծնողների կողմից ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու հանգամանքից: Նման դեպքում երեխան կարող է դուրս գալ ՀՀ քաղաքացիությունից ծնողների դիմումով, եթե նրանք զրկված չեն ծնողական իրավունքից, և եթե երեխան ունի կամ ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն: (Հոդված 21) 9. ՀՀ **քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերն** են՝ ՀՀ քաղաքացու նույնականացման քարտը և անձնագիրը, իսկ մինչև 16 տարին լրանալը նաև՝ ծննդյան վկայականը կամ ՀՀ քաղաքացիությունը հաստատող վկայականը: (Հոդված 4)	**տվյալները** ֆիզիկական անձանց, կազմակերպություններին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև օտարերկրյա պետություններին կարող են փոխանցվել կամ տրամադրվել միայն դիմումատուի կամ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած անձի համաձայնությամբ կամ օրենքով կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում: Համաձայնությունը ներկայացնելու պարտավորությունը կրում է տվյալներ ստանալու նպատակով հարցմամբ դիմողը: (Հոդված 29) Պաշտոնատար անձանց կողմից քաղաքացիության հարցերով դիմումները չընդունելը, քննարկման ժամկետները խախտելը, ինչպես նաև նրանց այլ անօրինական գործողությունները կարող են գանգատարկվել **դատական** կարգով: (Հոդված 30)	քաղաքացիության վերաբերյալ դիմումների քննարկման կարգը: (Հոդված 26) • **Հանրապետության Նախագահին առընթեր քաղաքացիության հարցերի հանձնաժողովը** կազմավորում է Հանրապետության Նախագահը: Քաղաքացիության հարցերի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատում է Հանրապետության Նախագահը: (Հոդված 27) • Սահմանում է քաղաքացիության մասին հարցերում **ՀՀ կառավարության** լիազորությունները (Հոդված 28)
49.	**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-42, ընդունված է՝ 04.03.1996, ուժի մեջ է՝ 16.05.1996* Սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի	1. 18 տարին չլրացած հիվանդների **առողջական վիճակի մասին տեղեկությունները** տրվում են նրանց օրինական ներկայացուցիչներին: (Հոդված 7) 2. 18 տարին չլրացած հիվանդին **բժշկական միջամտության համար համաձայնությունը** տրվում է նրա օրինական ներկայացուցչի կողմից: Օրինական ներկայացուցչի բացակայության դեպքում, եթե բժշկական միջամտությունը հետաձգման ենթակա չէ, բժշկական միջամտության վերաբերյալ որոշումը, ելնելով հիվանդի շահերից, կայացվում է բժշկական խորհրդակցության (կոնսիլիումի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկի կողմից: (Հոդված 8) 3. Յուրաքանչյուր զույգ կամ յուրաքանչյուր ոք իրավունք ունի որոշել իր **երեխաների թիվը** և նրանց **ծնվելու ժամկետները**, **անցանկալի հղիությունից և հղիության արհեստական ընդհատումից խուսափելու** նպատակով օգտվել ընտանիքի պլանավորման արդյունավետ և անվնաս միջոցներից ու մեթոդներից, դրանց վերաբերյալ ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, հղիության	Կարգավորում է բժշկական փորձաքննության հարցերը (Հոդված 22) ՀՀ կառավարությունը պետական բյուջեով նախատեսված հատկացումներով իրականացնում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման **երաշխավորված ֆինանսավորում**, բժշկական օգնություն	• ՀՀ-ում **բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն** իրավունք ունեն ցուցաբերել համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում ընտրված տեսակների շրջանակներում՝ լիցենզիա ստանալու դեպքում: Բժշկական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեն ՀՀ-ում համապատասխան կրթություն, մասնագիտացում

	իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները:	ընթացքում ստանալ հղիության և ծննդաբերության հետ կապված բժշկական օգնություն և սպասարկում՝ պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում: Յուրաքանչյուր ոք, ներառյալ դեռահասը, իրավունք ունի տեղեկություններ ստանալ իր սեռական առողջության պահպանման հարցերի, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, դրանց բարդությունների և հետևանքների մասին: (Հոդված 9) 4. Յուրաքանչյուր երեխա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում իրավունք ունի ստանալ **անվճար կամ արտոնյալ** պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում: (Հոդված 10) 1. **Ախտաբանաանատոմիական հերձումները** պարտադիր կարգով իրականացվում են, մասնավորապես, շուրջծննդյան (պերինատալ) մահացության դեպքում, հղիների, ծնունդականների և ծննդաբերների մահվան (մայրական մահացության) դեպքում (Հոդված 24)	և սպասարկում իրականացնողներին՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական տեսակից և սեփականության ձևից: Առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական ծառայությունների, դեղերի և (կամ) բժշկական պարագաների փոխհատուցման կարգը հաստատում է կառավարությունը: (Հոդված 25) Պարտադիր կարգով իրականացվող ախտաբանաանատոմիական հերձումների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: (Հոդված 24) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են ներկայացնել **վիճակագրական և այլ տեղեկություններ**՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Իրենց մեղքով մարդու առողջությանը հասցրած վնասի համար, ինչպես նաև մարդու առողջական վիճակի մասին տեղեկություններ հայտնելու դեպքում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, ապօրինի բժշկական գործունեությամբ զբաղվող անձինք պատասխանատվություն են կրում: (Հոդված 19)	ստացած, բժշկական գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու լիցենզիա ստացած անձինք: (Հոդված 18) • Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են յուրաքանչյուր մարդու ցուցաբերել անհետաձգելի, առաջին բժշկական օգնություն՝ անկախ այդ օգնության դիմաց վարձատրությունը երաշխավորող հիմքերի և այլ հանգամանքների առկայությունից, ապահովել ցուցաբերվող բժշկական օգնության և սպասարկման քանակական ու որակական բնութագրիչների համապատասխանությունը սահմանված չափանիշներին, յուրաքանչյուրին տեղյակ պահել նրան տրամադրվելիք բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի, մեթոդների, ծավալների, տրամադրման կարգի և պայմանների մասին, յուրաքանչյուր մարդու կամ բժշկական օգնության համար այլ վճարողների պահանջով տրամադրել անհրաժեշտ տվյալներ հիվանդին ցուցաբերած բժշկական օգնության և սպասարկման քանակական ու որակական բնութագրիչների և այդ նպատակով կատարված ծախսերի մասին, ապահովել մարդու բժշկի օգնությանը դիմելու փաստի, նրա առողջական վիճակի մասին հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիությունը, բացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերից, հոգատար և հարգալից վերաբերմունք ցուցաբերել հիվանդների նկատմամբ: (Հոդված 19)
50.	**«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-59, ընդունված է՝ 29.05.1996, ուժի մեջ է՝ 27.06.1996* Սահմանում է երեխայի իրավունքները, պետության, համապատասխան մարմինների և քաղաքացիների պարտականությունները, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ծրագրային հիմունքները և կարգավորում է դրանց հետ կապված հարաբերությունները:	1. Պետությունը ելնում է հասարակության մեջ երեխային լիարժեք կյանքի նախապատրաստման, նրա մեջ հասարակական և ստեղծագործական ակտիվության զարգացման, բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության և որպես քաղաքացու դաստիարակման առաջնահերթության **սկզբունքներից**: Երեխան գտնվում է հասարակության և պետության հովանավորության ու պաշտպանության ներքո: **Երեխա է համարվում** 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ: (Հոդված 1) 2. Երեխաներն ունեն **հավասար իրավունքներ**՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից: (Հոդված 4) 3. Յուրաքանչյուր երեխա ունի **կյանքի իրավունք**: (Հոդված 5) 4. Յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի **անվան և քաղաքացիության իրավունք**: Երեխայի ծննդյան փաստն օրենքով սահմանված կարգով գրանցվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից: Երեխան քաղաքացիություն է ձեռք բերում, նրա քաղաքացիությունը դադարում է «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: (Հոդված 6) 5. Յուրաքանչյուր երեխա ունի **առողջության պահպանման և ամրապնդման իրավունք**: (Հոդված 7) 6. Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ **կենսապայմանների իրավունք**: Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները: (Հոդված 8) 7. Յուրաքանչյուր երեխա ունի ամեն տեսակի (ֆիզիկական, հոգեկան և այլ) **բռնությունից պաշտպանության իրավունք**: Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի: (Հոդված 9)	Պետությունը համապատասխան մարմինների միջոցով համագործակցում է երեխայի իրավունքների պաշտպանությանը նպաստող անձանց և հասարակական միավորումների հետ: (Հոդված 3) Երեխայի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում խախտողը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: (Հոդված 9) Երեխայի հանգստի կազմակերպման համար նախատեսված նյութատեխնիկական բազայի կրճատմանն ուղղված գործողությունները, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կողմից համաձայնեցվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ: (Հոդված 20)	• Երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացնում են լիազորված պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: (Հոդված 3) • Պետությունն ու նրա համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի ապրելու և զարգանալու համար: (Հոդված 5) • Պետական համապատասխան մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի անվճար կամ արտոնյալ պայմաններով օգտվելու հնարավորությունը՝ ամենամյա առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում: (Հոդված 7) • Ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից երեխայի համար անհրաժեշտ

		8. Յուրաքանչյուր երեխա ունի **մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք**: Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության: Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով: Երեխայի տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով: Դավանանքի ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին: (Հոդված 10) 9. Յուրաքանչյուր երեխա ունի **կրթություն ստանալու և ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք**: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր երեխա ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք: (Հոդված 11) 10. Յուրաքանչյուր երեխա ունի **ծնողներին ճանաչելու և նրանց հետ համատեղ ապրելու իրավունք**՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այն դեպքերի, երբ դատարանի որոշմամբ ծնողներից կամ ծնողից երեխայի բաժանումը համարվում է անհրաժեշտություն՝ ելնելով երեխայի շահերից: (Հոդված 12) 11. Ծնողների (ծնողի) հետ **համատեղ չբնակվող երեխան ունի նրանց (նրա) հետ անձնական կանոնավոր փոխհարաբերությունների և ուղղակի կապերի պահպանման իրավունք**՝ բացառությամբ ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգրքով սահմանված դեպքերի: (Հոդված 15) 12. Բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ **վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք**՝ անկախ իր բնակության վայրից: Երկկողմանի ծնողազուրկ երեխան ունի արտահերթ բնակելի տարածություն ստանալու իրավունք՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: (Հոդված 16) 13. Յուրաքանչյուր երեխա (ներառյալ որդեգրված) ծնողի մահվան, ինչպես նաև դատարանի վճռով ծնողին մեռած հայտարարելու դեպքում, անկախ բնակության վայրից, ունի **ժառանգություն ստանալու իրավունք**: (Հոդված 17) 14. Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի **պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու իրավունք**: Յուրաքանչյուր երեխա ունի գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, մշակութային կյանքին մասնակցելու, իր ունակություններն ու հետաքրքրությունները դրսևորելու իրավունք: Արգելվում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության և դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը (Հոդված 18) 15. Յուրաքանչյուր երեխա ունի իր տարիքային հնարավորություններին, զարգացման առանձնահատկություններին և ունակություններին համապատասխան **մասնագիտություն ստանալու,** օրենքով չարգելված **աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք**: Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել նրա 16 տարին լրանալուց հետո, բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրերի: Մինչև 16 տարեկան երեխաները կարող են ընդունվել ժամանակավոր աշխատանքի՝ ծնողներից մեկի (որդեգրողի) կամ հոգաբարձուի (խնամակալի) և խնամակալության և հոգաբարձության մարմնի գրավոր համաձայնությամբ, եթե դա չի խանգարում նրանց ուսուցման գործընթացին: Երեխան ունի աշխատանքի արտոնյալ պայմանների իրավունք: Արգելվում է երեխային ներգրավել ալկոհոլային խմիչքների, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի, ծխախոտի, էրոտիկա և սարսափ բովանդակող գրականության և տեսաերիզների արտադրության, օգտագործման կամ իրացման մեջ, ինչպես նաև այնպիսի աշխատանքներում, որոնք կարող են վնասել նրա առողջությանը, ֆիզիկական և մտավոր զարգացմանը, խոչընդոտել կրթություն ստանալուն: (Հոդված 19) 16. Յուրաքանչյուր երեխա ունի **հանգստի և ժամանցի**, իր տարիքին համապատասխան խաղերին և միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք: (Հոդված 20) 17. Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքաց**իների միավորումներին, այդ թվում՝ հասարակական, մանկապատանեկան կազմակերպություններին անդամակցելու, խաղաղ հավաքներին մասնակցելու իրավունք**: (Հոդված 21) 18. Յուրաքանչյուր երեխա ունի **պատվի և արժանապատվության իրավունք**: Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների: Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա: (Հոդված 22) 19. ՀՀ-ում երաշխավորվում է երեխայի **անվտանգությունը**: (Հոդված 23) 20. **Առանց ծնողական խնամքի մնացած երեխան** ունի պետության և նրա համապատասխան մարմինների կողմից պաշտպանության, խնամքի, դաստիարակության և օգնության իրավունք: Խնամքի ձևն ընտրելիս հաշվի են առնվում երեխայի դաստիարակության հաջորդականության ապահովումը, մայրենի լեզուն, տարիքը, սեռը և այլն: Երեխան 16 տարին լրանալուց հետո ունի ինքնուրույն ապրելու իրավունք՝ բավարար կենսապայմանների, պետության և նրա համապատասխան մարմինների կողմից նյութական օգնության և որոշակի պայմանների ստեղծման դեպքում: (Հոդված 24) 21. **Հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ** ունեցող երեխաները կարող են իրենց ցանկությամբ սովորել հանրակրթական դպրոցներում: (Հոդված 26) Հաշմանդամ և կերակրողին կորցրած երեխան ունի կենսաթոշակ ստանալու իրավունք, որի նշանակման և վճարման կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ: Երեխան ունի նպաստ ստանալու իրավունք, որի նշանակման և վճարման	Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: (Հոդված 22) Երեխայի անօրինական տեղաշարժը (այդ թվում՝ այլ պետություններ), առևանգումը, առուծախն առաջացնում է պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: (Հոդված 23) ՀՀ կառավարության լիազորած պետական մարմինը վերահսկողություն է իրականացնում մանկատներում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) երեխաներին տեղավորելու, ինչպես նաև նրանց խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչների կիրառման նկատմամբ: Մանկատներում երեխաների տեղավորման կարգը և նրանց խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները սահմանում է ՀՀ կառավարությունը: (Հոդված 25) ՀՀ կառավարության սահմանած կարգով՝ հաշմանդամ երեխաներն ունեն հաշմանդամության սայլակների, հատուկ պրոթեզաօրթոպեդիկ կոշիկների ու բոլոր տեսակի պրոթեզային իրերի (բացի թանկարժեք մետաղներից պատրաստվող ատամնապրոթեզներից) և հաշմանդամ երեխաների կենսագործունեության համար անհրաժեշտ տեխնիկական այլ սարքերի (առարկաների) անվճար պատվիրման, նորոգման և ստացման իրավունք՝ ՀՀ պետական բյուջեի և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: (Հոդված 26) Երեխայի իրավունքների պաշտպանության աշխատանքներն իրականացվում են երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրերով սահմանված ժամկետներում և կարգով: Տարեկան ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման ծախսերն արտացոլվում են համապատասխան տարվա պետական բյուջեի ծախսերում, իսկ դրանց թերակատարված մասը ներառվում է հաջորդ տարվա տարեկան ծրագրում: (Հոդված 33) Սահմանում է տարեկան ծրագրի բովանդակությունը և դրա մշակման	կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարինության դեպքում պետությունը ցուցաբերում է համապատասխան օգնություն: (Հոդված 8) • **Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն** իրականացնում են երեխայի պաշտպանությունը ցանկացած բռնությունից, շահագործումից, հանցավոր գործունեության մեջ ներգրավելուց, այդ թվում՝ թմրանյութերի օգտագործումից, դրանց արտադրության կամ առևտրի մեջ ներգրավումից, մուրացկանությունից, անառակությունից, մոլի խաղերից և նրա իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից: (Հոդված 9) • Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական և մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և այլն: Պետական համապատասխան մարմինները մշակում և իրականացնում են տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր: Պետական համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի կրթության և մասնագիտական պատրաստության համար անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի տրամադրման մատչելիություն: (Հոդված 11) • Պետությունն ու նրա համապատասխան մարմինները նպաստում են ընտանիքի վերամիավորմանը: (Հոդված 12) • Երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացվում են հիմնականում ընտանիքում, որոնց պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև պետության կողմից լիազորված պետական մարմինները: Նրանք ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի լիարժեք զարգացման, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, ընտանիքում և հասարակության մեջ ինքնուրույն կյանքի

		կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: (Հոդված 27) 22. **Արգելվում է երեխային ներգրավել ռազմական գործողություններին**, զինված ընդհարումներին, ինչպես նաև՝ երեխաների շրջանում պատերազմի և բռնության քարոզչությունը, մանկական ռազմականացված միավորումների ստեղծումը: Արգելվում է մինչև 15 տարեկան երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին: (Հոդված 29) 23. Ռազմական գործողությունների և այլ ընդհարումների հետևանքով բնակելի տարածությունից և անձնական գույքից զրկված փախստական երեխան ունի իր շահերի պաշտպանության իրավունք: (Հոդված 30) 24. Երեխան ունի **անձի անձեռնմխելիության իրավունք**, որը պաշտպանվում է օրենքով: Երեխային չի կարելի ձերբակալել, խուզարկել կամ կալանավորել այլ կերպ, քան սահմանված է օրենքով: Երեխայի ձերբակալման կամ կալանավորման մասին անհապաղ հայտնվում է ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին: Ազատազրկման դատապարտված յուրաքանչյուր երեխա ունի օրենքով սահմանված կարգով ազատազրկման դատավճիռը բողոքարկելու իրավունք: Արգելվում է երեխային չափահասների հետ միասին կալանքի տակ պահելը: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում երեխային քրեական պատասխանատվության ենթարկելիս փաստաբանի (հոգեբանի, մանկավարժի) ներկայությունը հետաքննության, նախաքննության և դատաքննության ընթացքում պարտադիր է: Երեխան պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ծնողների կամ մերձավոր ազգականների դեմ: Արգելվում է որպես վկա ցուցմունքներ վերցնելու կամ սեփական հանցանքը խոստովանելու համար երեխայի նկատմամբ բռնության, սպառնալիքի և այլ ապօրինի գործողությունների կիրառումը: (Հոդված 31) 25. **Հատուկ դաստիարակչական** կամ **բուժկանխարգելիչ** կամ **հոգեբուժական հաստատություններում** գտնվող երեխան ունի հարգալից վերաբերմունքի, առողջության պահպանման, համապատասխան կրթության և մասնագիտական պատրաստության, ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների, հարազատների և այլ անձանց հետ տեսակցության և նամակագրության իրավունք: Հատուկ դաստիարակչական հաստատության խնդիրն է երեխային ուղղելը և վերադաստիարակելը: (Հոդված 32)	սկզբունքները (Հոդված 34), ինչպես նաև դրա կատարման մասին հաշվետվության արտացոլումը համապատասխան տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում: (Հոդված 35)	նախապատրաստման համար: Ընտանիքում երեխայի լիարժեք խնամքը և դաստիարակությունն ապահովելու նպատակով պետությունը և նրա համապատասխան մարմիններն օգնություն են ցույց տալիս ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին՝ երեխայի բարեկեցությունն ապահովելու համար, խրախուսում են ընտանիքին աջակցող հոգեբանական, մանկավարժական խորհրդատվական ծառայությունների գործունեությունը: (Հոդված 13) • Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հիմնական պարտականություններից է: Երեխայի կողմից ՀՀ օրենսդրության խախտման դեպքում ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով: (Հոդված 14) • Երեխայի ստեղծագործական հնարավորությունների զարգացման նպատակով պետությունը խրախուսում է ֆիլմերի և տեսաֆիլմերի, հեռուստահաղորդումների թողարկումը, մանկական թերթերի, ամսագրերի, գրքերի հրապարակումը, ապահովում դրանց մատչելիությունը: (Հոդված 18) • Պետական համապատասխան մարմինները խրախուսում են երեխայի հանգստի և ժամանցի կազմակերպումը՝ ստեղծելով արտադպրոցական, մանկապատանեկան, մշակութային, մարզական, հանգստի և առողջության ամրապնդմանն ուղղված հաստատություններ: (Հոդված 20) • Պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են նման երեխաների խնամքը և դաստիարակությունը՝ որդեգրման, խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու և խնամատար ընտանիքում տեղավորելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ համապատասխան մանկատներում տեղավորելու միջոցով: Ելնելով երեխայի, նրա օրինական ներկայացուցիչների շահերից՝ պետությունը և նրա համապատասխան մարմինները երեխայի կենսապայմանների, առողջական վիճակի գնահատումը կատարում են գաղտնի՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով: (Հոդված 24) • Ծնողազուրկ երեխայի անձնական

				հաշվին փոխանցվում է կենսաթոշակ: Երեխայի ֆիզիկական, մտավոր և հոգևոր ունակությունների լիարժեք զարգացման, նրան ինքնուրույն կյանքի նախապատրաստելու նպատակով մանկատներում, գիշերօթիկ հաստատություններում ստեղծվում են ընտանեկանին մոտ պայմաններ: Մանկատանը գտնվող կամ տեղավորված և խնամակալի կարիք ունեցող առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամակալի պարտականությունները, ինչպես նաև այդ երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում է մանկատան ղեկավարը: (Հոդված 25) • Պետությունը և նրա համապատասխան մարմինները հաշմանդամ, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող երեխային երաշխավորում են անվճար մասնագիտացված բժշկական, արատաբանական և հոգեբանական օգնություն, իր հնարավորություններին համապատասխանող բազային և մասնագիտական կրթություն ստանալու, աշխատանքի տեղավորվելու հնարավորություն, սոցիալական վերականգնում, լիարժեք կյանք՝ նպաստելով նրա ինքնավստահության ամրապնդմանը, դյուրացնելով նրա մասնակցությունը հասարակական կյանքին: Պետությունը և նրա համապատասխան մարմինները նրանց համար ստեղծում են հատուկ մանկատներ, գիշերօթիկ հաստատություններ, իրականացնում են հաշմանդամ երեխաների բուժման հետևանքով նրանց թվաքանակը նվազեցնող սոցիալ-տնտեսական միջոցառումներ, կազմակերպում են հաշմանդամ երեխաների կենսագործունեության համար անհրաժեշտ տեխնիկական սարքերի արտադրությունը և դրանց ձեռքբերումը: (Հոդված 26) • Արտակարգ իրավիճակներում հայտնված երեխային պետությունը տրամադրում է անհապաղ և անվճար օգնություն, միջոցներ է ձեռնարկում վտանգավոր գոտուց նրան տեղափոխելու, ընտանիքի հետ վերամիավորելու, անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար: Պետությունն ու նրա համապատասխան մարմինները ապահովում են արտակարգ իրավիճակներում հայտնված երեխայի սոցիալական պաշտպանվածությունը՝ հոգալով նրա առաջնահերթ կարիքները: (Հոդված 28)

				• Զինված հակամարտությունների ժամանակ պետությունն ու նրա համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի հատուկ պաշտպանությունը: (Հոդված 29) • Պետությունը և նրա համապատասխան մարմինները միջոցներ են ձեռնարկում երեխայի ծնողների կամ հարազատների որոնման ուղղությամբ, ցուցաբերում են նյութական, բժշկական և այլ օգնություն, անհրաժեշտության դեպքում նրան տեղավորում են բուժկանխարգելիչ, գիշերօթիկ կամ այլ հաստատություններում: (Հոդված 30) • Երեխային հատուկ դաստիարակչական հաստատություն է ուղարկում միայն դատարանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացմամբ: Երեխան առանց օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական հաստատություն կարող է հոսպիտալացվել միայն դատարանի վճռով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: (Հոդված 32)
51.	**«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-103, ընդունված է՝ 03.02.1997, ուժի մեջ է՝ 28.02.1997* Սահմանում է մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման, ախտորոշման և հսկողության իրականացման կարգը, ինչպես նաև մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման կազմակերպական, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները:	1. Մինչև 14 տարեկան երեխաների **ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտությունը** կատարվում է օրենքով սահմանված կարգով նրանց օրինական ներկայացուցիչների դիմումով կամ համաձայնությամբ, իսկ 14-18 տարեկան երեխաներինը՝ նրանց դիմումով կամ համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: (Հոդված 10) 2. **Պարտադիր բժշկական խորհրդատվության և հետազոտության** ենթակա են, մասնավորապես, ՄԻԱՎ-ի վարակ ունեցող մայրերից ծնված երեխաները: Հղի կանանց բուժաշխատողների կողմից տրամադրվում է ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվություն և հետազոտություն: (Հոդված 11) 3. ՄԻԱՎ-ով վարակված մինչև 18 տարեկան երեխաներն օգտվում են մինչև 18 տարեկան **հաշմանդամ երեխաների** համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքներից: ՄԻԱՎ-ով վարակված երեխայի ծնողները (օրինական ներկայացուցիչները) իրավունք ունեն երեխայի հետ գտնվել հիվանդանոցում, այդ ժամկետում ազատվելով աշխատանքից, և ստանալ երեխայի և իրենց համար սահմանված նպաստները, օգտվել տարեկան արձակուրդից իրենց հարմար ժամանակ: ՄԻԱՎ-ով վարակված երեխային խնամելու նպատակով աշխատանքից ազատվելու ժամանակահատվածը հաշվառվում է աշխատանքային ստաժում: (Հոդված 15)	ՀՀ բնակչության ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և մոնիթորինգի նպատակով ՀՀ-ում գործում է ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը: (Հոդված 2) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, ՄԻԱՎ-ով վարակված անձանց բուժման և սոցիալական պաշտպանվածության ֆինանսավորումը իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին: (Հոդված 5)	• ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելումն իրականացնում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև առողջապահական, կրթական և այլ կազմակերպություններ (անկախ կազմակերպական-իրավական ձևից): ՄԻԱՎ-ի վարակի կանխարգելման միջոցառումների անցկացման և հատկացված միջոցների արդյունավետ օգտագործման համար լիազորված պետական մարմինը մշակում է պետական նպատակային ծրագիր, որը հաստատում է կառավարությունը: (Հոդված 2) • Սահմանում է ՀՀ կառավարության լիազորությունները ՁԻԱՀ-ի կանխարգելման բնագավառում (Հոդված 4)
52.	**«Դատախազության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-126-Ն, ընդունված է՝ 22.02.2007, ուժի մեջ է՝ 01.05.2007* Սահմանում է դատախազության գործունեության կազմակերպման կարգը:	1. Ատեստավորման ենթակա չեն, մասնավորապես, հղի և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող դատախազները, եթե նրանք ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել: Հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող դատախազության ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո ոչ շուտ, քան 1 տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար: (Հոդված 54)	Դատախազությունը հանրությանը տեղեկացնում է իր իրականացրած գործունեության մասին այնքանով, որքանով դա չի հակասում մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին և օրինական շահերին, ինչպես նաև պետական և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությանը: Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, Հանրապետության Նախագահին և ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում ՀՀ դատախազության	• Դատախազության լիազորությունները սահմանվում էն ՀՀ սահմանադրությամբ, այն մասնավորապես, հարուցում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան, բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները, հսկողություն է

			նախորդ տարվա գործունեության մասին: Հաղորդումը ներառում է նախորդ տարվա ընթացքում դատախազության իրականացրած գործունեության վերաբերյալ տեղեկություններ, վիճակագրական տվյալներ, համեմատական վերլուծություններ և եզրահանգումներ: (Հոդված 5)	իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ: (Հոդված 4)
53.	**«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-221, ընդունված է՝ 05.05.1998, ուժի մեջ է՝ 01.01.1999* Սահմանում է ՀՀ դատարանների դատական ակտերի, ինչպես նաև արբիտրաժային տրիբունալների վճիռների և Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը, հանրային իրավական դրամական պահանջների կատարման պայմանները և կարգը՝ այնքանով, որքանով դրա նորմերն իրենց էությամբ (mutatis mutandis) կիրառելի են անբողոքարկելի վարչական ակտի կատարման նկատմամբ:	1. Անչափահասների իրավունքները և օրինական շահերը կատարողական վարույթում պաշտպանում են նրանց ծնողները (որդեգրողները), խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք ներկայացնում են իրենց կարգավիճակը հավաստող փաստաթղթեր: Օրինական ներկայացուցիչները կատարողական վարույթին իրենց մասնակցությունը կարող են հանձնարարել այլ անձանց: (Հոդված 13)	ՀՀ-ում դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովվում է ՀՀ արդարադատության նախարարության համակարգում գործող դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը: (Հոդված 3)	• Խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչները մասնակցում են կատարողական գործողությունների իրականացմանը՝ երեխային կողմերից մեկին հանձնելու հետ կապված կատարողական գործողություններն իրականացնելիս, երեխայի տեսակցության հետ առնչվող կատարողական գործողություններ իրականացնելիս՝ անհրաժեշտություն առաջանալու դեպքում: (Հոդված 6) • Հարկադիր կատարման պարբերական բնույթ ունեցող կատարողական գործողությունները, այդ թվում՝ երեխայի տեսակցությունը իրականացվում են պարբերական կատարման միջոցով: Այդ դեպքերում հարկադիր կատարումը դադարում է վարույթի ավարտով կամ կարճմամբ: (Հոդված 34)
54.	**«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-258, ընդունված է՝ 27.10.1998, ուժի մեջ է՝ 30.11.1998* Սահմանում է ՀՀ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական և կազմակերպական դրույթները:	1. Կարգավորում է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների **բժշկական սպասարկման** (Հոդված 33), **բնակարանային ապահովության** (Հոդված 34) և **ամենամսյա պարգևավճարի** իրավունքը (Հոդված 34.1), ընդ որում կարգավորման տարբեր մասերի առումով զինծառայողի և զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում 18 տարին չլրացած երեխաները, նրա խնամքի տակ գտնվող՝ 18 տարին չլրացած քույրը և եղբայրը, ինչպես նաև 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակները, քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Քույրը և եղբայրը համարվում են զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում: 2. Պետությունը երաշխավորում է ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիների, զոհված (մահացած) զինծառայողների **երեխաների ընդունելությունը պետական ուսումնական հաստատություններ**՝ մրցույթից դուրս, պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: (Հոդված 37)	Օրենքի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները և համապատասխան մարմինների՝ սոցիալական խնդիրներ իրականացնող ծառայությունները: (Հոդված 41)	•
55.	**«Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-249, ընդունված է՝ 24.10.2001, ուժի մեջ է՝ 12.12.2001* Կարգավորում է ՀՀ դիվանագիտական ծառայության կազմակերպման, ղեկավարման, այդպիսի ծառայության անցնելու և ծառայությունը դադարեցնելու, ծառայողական առաջխաղացման,	1. Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետի հետ բնակվող երեխաների՝ **հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսման ծախսերը հոգալու** նպատակով դիվանագետին վճարվում է փոխհատուցում՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և չափով, մինչև երեխայի 18 տարին լրանալը: (Հոդված 46) 2. **Դիվանագիտական անձնագրեր** տրվում են օտարերկրյա պետություն դիվանագիտական ծառայության մեկնած դիվանագետի ամուսնուն, ինչպես նաև մինչև 21 տարեկան չամուսնացած և խնամքի տակ գտնվող երեխաներին՝ դիվանագետի հետ օտարերկրյա պետություն մեկնելիս: (Հոդված 49)		•

	դիվանագիտական աստիճաններ շնորհելու, դիվանագիտական ծառայություն իրականացնող անձանց իրավական վիճակի սահմանման, ծառայության ընթացքում ու դրանից հետո այդ անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական երաշխիքների, դիվանագիտական ծառայության մարմինների ֆինանսավորման սկզբունքների, ինչպես նաև դիվանագիտական ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:			
56.	**«Կրթության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-297, ընդունված է՝ 14.04.1999, ուժի մեջ է՝ 14.05.1999* Սահմանում է կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և կրթության համակարգի կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը:	1. Ընդհանուր կրթությունն սկսվում է վեց **տարեկանից** (որը լրանում է մինչև տվյալ ուսումնական տարվա դեկտեմբերի վերջը): Նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքով: (Հոդված 15) 2. Հանրակրթական հիմնական ծրագրերն իրականացվում են հանրակրթական ուսումնական հաստատություններում և հանրակրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատություններում, կազմակերպություններում: Հանրակրթական մասնագիտացված ծրագրերը մշակվում են ընդհանուր հանրակրթական ծրագրերի հիմքի վրա՝ ռազմական, սպորտի, գիտության, արհեստների կամ արվեստի որևէ բնագավառում սովորողների խորացված հանրակրթություն ապահովելու նպատակով: Տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերը կառուցվում են հաջորդականության սկզբունքով: Հանրակրթական հիմնական ծրագիրը (բացի նախադպրոցականից) չյուրացնելու դեպքում սովորողին չի թույլատրվում անցնել հանրակրթական ուսուցման հաջորդ աստիճան: Հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում տվյալ ուսումնական տարվա ծրագիրը չյուրացրած սովորողի հետագա ուսումնառությունը կարգավորվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով: (Հոդված 16) 3. Սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագրերն իրականացվում են առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (ընտանեկան և ինքնակրթության) ձևերով: Կրթության բոլոր ձևերի համար նույն կրթական ծրագրերի շրջանակներում գործում է միասնական պետական կրթական չափորոշիչը: (Հոդված 12) 4. **Հիմնական ընդհանուր կրթությունը** պարտադիր է: Հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը, եթե այն չի բավարարվել ավելի վաղ: 16 տարին լրանալուց հետո սովորողը ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ կարող է թողնել դպրոցը: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Պարտադիր միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության պահանջը չի տարածվում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի խմբերի վրա: (Հոդված 18) 5. **Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների** կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով: (Հոդված 19) 6. **Միջին մասնագիտական** ուսումնական հաստատությունների ավարտական ատեստավորում անցած շրջանավարտներին շնորհվում է մասնագետի որակավորում: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: (Հոդված 23) 7. Արգելվում է **սովորողներին ներգրավել աշխատանքի**՝ առանց վերջիններիս և (կամ) նրանց ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնության: Սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման մեթոդների կիրառումն արգելվում է: Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողները կրթաթոշակ են ստանում ՀՀ կառավարության սահմանած կարգով և չափերով: Ռազմաուսումնական հաստատությունների սովորողները դրամական բավարարմամբ, հանդերձանքով, սննդով և կացարանով ապահովվում են ՀՀ օրենքով սահմանված կարգով: Միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողներն իրավունք ունեն տվյալ կամ այլ հաստատությունում վճարովի հիմունքներով ստանալ երկրորդ մասնագիտություն՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով: Սովորողներն ատեստավորումը հաջողությամբ անցնելու դեպքում, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իրավունք ունեն տեղափոխվել համապատասխան մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական այլ հաստատություն: (Հոդված 49)	ՀՀ-ում սահմանվում և հրապարակվում են **պետական կրթական չափորոշիչներ**, որոնք շրջանավարտների կրթության մակարդակի և որակավորման գնահատման հիմքն են՝ անկախ նրանց ստացած կրթության ձևից և ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևից: (Հոդված 9) **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը** վերահսկողություն է իրականացնում կրթության զարգացման պետական ծրագրի և պետական կրթական չափորոշիչների կիրառման նկատմամբ, հաստատում է պետական և հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կանոնները, վերահսկում է դրանց իրականացումը: (Հոդված 37) Կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների, կրթության որակի բարձրացման և կրթական ծրագրերի յուրացման ապահովումը վերահսկողական գործառույթների միջոցով իրականացնում է **ՀՀ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կրթության պետական տեսչությունը**, որի գործունեությունը կարգավորվում է «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքով: (Հոդված 37[1]) **Մարզպետը** վերահսկում է նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի	• Նախադպրոցական, հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների **ընդունելության պահանջները** սահմանում է հիմնադիրը՝ հաշվի առնելով ուսումնական հաստատության առանձնահատկությունները, իսկ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ ՀՀ կառավարությունը: Ուսումնական հաստատությունը պարտավոր է դիմորդներին և նրանց ծնողներին (կամ նրանց օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել ուսումնական հաստատության կանոնադրությանը և կրթության գործընթացը կարգավորող մյուս փաստաթղթերին: Պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դիմորդների ընդունելության արտոնությունները սահմանում է ՀՀ կառավարությունը: Պետական հանրակրթական դպրոցների ավարտական քննությունների անցկացման համար նախապատրաստվող հարցաթերթիկները (հարցաշարերը, քննական հարցերը, խնդիրները և այլ առաջադրանքները) կազմվում են բացառապես պետական հանրակրթական դպրոցների (1-12-րդ դասարանների) կրթական ծրագրերով նախատեսված, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից պետական հանրակրթական դպրոցներում օգտագործման համար երաշխավորված և առնվազն 1 ուսումնական տարվա ընթացքում պետական հանրակրթական դպրոցներում օգտագործված (դասավանդված) դասագրքերին, ձեռնարկներին, խնդրագրքերին և ժողովածուներին համապատասխան:

			ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, ապահովում է կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում: (Հոդված 38) Ուսումնական հաստատությունների լիցենզավորման համար եզրակացություն տալու նպատակով կրթության պետական կառավարման լիազորված մարմինն ստեղծում է լիցենզավորման ծառայություն: Ուսումնական հաստատություններում և հանրակրթական ու նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող այլ կազմակերպություններում կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման, կրթության որակի ապահովման պետական վերահսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ կառավարությունը ստեղծում է կրթության պետական տեսչություն: (Հոդված 43) Կարգավորում է պետական և համայնքային (Հոդված 46) և ոչ պետական (Հոդված 47) ուսումնական հաստատության ֆինանսավորումը Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը: (Հոդված 4) Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը վերահսկում է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին: (Հոդված 14)	(Հոդված 15) • **Նախադպրոցական կրթության** ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պատկանում է ընտանիքին: Պետությունը պայմաններ է ստեղծում ընտանիքում երեխաների դաստիարակությունը կազմակերպելու համար: Ընտանիքին աջակցելու համար պետությունն ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ՝ տարբերակված ծրագրերով մսուր-մանկապարտեզներ և մանկապարտեզներ: (Հոդված 17) • **Միջնակարգ կրթությունն** իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ՝ հետևյալ հաջորդական աստիճաններով. տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ), միջին դպրոց (5-9-րդ դասարաններ), ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ): Միջնակարգ հանրակրթական դպրոցի առաջին երկու աստիճանները կազմում են հիմնական դպրոցը: Ավագ դպրոցում սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան կարող է լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվել տարբերակված (հոսքային) ուսուցում: Միջին և ավագ դպրոցում հայոց լեզու և հայ գրականություն, հայոց պատմություն առարկաների ուսուցումն ավարտվում է գիտելիքների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ: (Հոդված 18) • Պետությունն ստեղծում է **հատուկ հաստատություններ** (այդ թվում՝ երկարօրյա և գիշերօթիկ)՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով: Հատուկ հաստատությունների տիպերը սահմանում է ՀՀ կառավարությունը: Վարքի շեղում ունեցող անչափահասների ուսուցումը և վերադաստիարակումն իրականացնում են հանրակրթական դպրոցները՝ հաշվի առնելով սովորողների հոգեբանական առանձնահատկությունները: (Հոդված 19) • **Արտադպրոցական դաստիարակությունն** իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական

				կայանների, մարզադպրոցների, առողջարարական ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների միջոցով: (Հոդված 20) • **Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունն** իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում: Համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը կարող է իրականացվել նաև անհատական մասնագիտական ուսուցման ձևով (վարպետային ուսուցում), որի իրականացման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հիմքը՝ ըստ մասնագիտությունների, սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: (Հոդված 22) • **Միջին մասնագիտական կրթությունն** իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում և ուսումնարաններում, որոնք կարող են իրականացնել նաև հանրակրթական ու արհեստագործական կրթական ծրագրեր: (Հոդված 23) • Սահմանում է կրթության բնագավառում՝ **ՀՀ կառավարության** (Հոդված 36) և **կրթության պետական կառավարման լիազորված մարմնի** (Հոդված 37) իրավասությունները • **Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը** մշակում է կրթության զարգացման պետական ծրագիրը, պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը, ապահովում է օրինակելի հանրակրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակումը և հրատարակումը, մշակում է հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական պատվերը: (Հոդված 37) • **Համայնքի ղեկավարը** պարտադիր լիազորության կարգով իրականացնում

				է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում (Հոդված 39) • **Ուսումնական հաստատությունն** իր իրավասության շրջանակներում կազմակերպում ու իրականացնում է ընդունելության և ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման, կազմակերպման և իրականացման, կադրերի ընտրության և տեղաբաշխման, գիտական, ֆինանսական, տնտեսական և այլ գործունեություն: (Հոդված 40) • Ուսումնական հաստատությունը կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած անձանց հանձնում է համապատասխան փաստաթուղթ (վկայական, ատեստատ, դիպլոմ): Ուսումնական հաստատությունները հավատարմագրված մասնագիտությունների գծով ամփոփիչ ատեստավորում անցած անձանց հանձնում են ավարտական փաստաթուղթ (ռազմաուսումնական հաստատությունների շրջանավարտներին՝ զինվորական և դրան համապատասխանող քաղաքացիական կրթության ավարտական փաստաթուղթ): Ոչ պետական հանրակրթական հաստատությունները պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու իրավունք են ստանում լիցենզավորման պահից: Ավարտական փաստաթուղթը հավատարմագրված մասնագիտությունների գծով ուսումնական հաստատություններում հաջորդ աստիճանի կրթություն ստանալու համար պարտադիր պայման է: Տվյալ մակարդակի կրթությունը չավարտած անձանց տրվում է համապատասխան տեղեկանք: (Հոդված 44) • ՀՀ-ն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Պետությունը ՀՀ քաղաքացիների համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն: ՀՀ

				երկքաղաքացիները նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվում են ՀՀ քաղաքացիների կամ օտարերկրացիների համար ՀՀ կառավարության սահմանած կարգով՝ իրենց ընտրությամբ: Պետությունը սահմանամերձ, ինչպես նաև բարձրլեռնային բնակավայրերում հաշվառված և վերջին 8 տարում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական կրթություն: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցույթից առանձնացված կարգով, որը սահմանում է ՀՀ կառավարությունը միայն սահմանամերձ, ինչպես նաև բարձրլեռնային բնակավայրերի քաղաքացիների համար: Պետական հանրակրթական դպրոցների առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով: Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին պետությունն աջակցում է՝ ստանալու համապատասխան մակարդակի կրթություն: Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով: (Հոդված 6) • Կրթության գործընթացը կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակներով: Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: Դրանք մշակում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին

				մասնագիտական կրթության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, համապատասխան բնագավառի(ների) պետական կառավարման լիազորված մարմնի հետ համաձայնեցված և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած չափորոշիչներին համապատասխանեցված, հաստատում են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները: Ուսումնական հաստատություններում ուսումնական տարվա սկիզբը և տևողությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչով: Հիմնական, միջնակարգ կրթության և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումն ավարտվում է շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ, որի անցկացման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Դրսեկության ձևով հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական), մասնագիտական միջին և բարձրագույն կրթության կազմակերպումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իսկ մասնագիտությունների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը: Հեռակա, հեռավար (դիստանցիոն) ձևերով մասնագիտական միջին և բարձրագույն կրթության կազմակերպումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորած մարմնի սահմանած կարգով, իսկ մասնագիտությունների ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը: (Հոդված 14) • Ուսումնական հաստատությունը նպաստում է սովորողների կենցաղի, սննդի, առողջության պահպանման, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Բացառիկ ընդունակություններ դրսևորած երեխաների համար կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով կարող են ստեղծվել հանրակրթական համապատասխան հաստատություններ: Պետությունն ապահովում է առանց ծնողական խնամքի մնացած և ծնողական

				խնամքից զուրկ երեխաների ուսուցումը պետական հանրակրթական հաստատություններում: Կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հանրակրթական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է բարձրացված չափաքանակներով: (Հոդված 49)
57.	**«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-236-Ն, ընդունված է՝ 15.11.2005, ուժի մեջ է՝ 01.01.2006* Կարգավորում է նախադպրոցական կրթության համակարգի գործունեության իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը:	1. Նախադպրոցական **տարիքը** երեխայի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական կայացման ժամանակաշրջանն է: Նախադպրոցական տարիքային փուլերն են. **վաղ տարիք**՝ մինչև 3 տարեկան, **կրտսեր նախադպրոցական**՝ 3-ից մինչև 5 տարեկան, **ավագ նախադպրոցական**՝ 5-ից մինչև 6 տարեկան: (Հոդված 9) 2. Նախադպրոցական տարիքի երեխաներն ունեն նախադպրոցական կրթություն ստանալու հավասար **իրավունքներ**: Ծնողների կամ երեխաների օրինական ներկայացուցիչների ընտրությամբ երեխան կարող է նախադպրոցական կրթություն ստանալ նախադպրոցական ուսումնական հաստատություններում, ընտանիքում, անհատական մանկավարժական գործունեության միջոցով, նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնող այլ կազմակերպություններում՝ խնամքի, զարգացման, դաստիարակության և ուսուցման անվտանգ և առողջության համար անվնաս պայմանների առկայությամբ: Նախադպրոցական կրթության ոլորտում երեխան իրավունք ունի մտավոր և հոգեկան զարգացմանը վնասող ցանկացած տիպի տեղեկատվությունից և քարոզչությունից պաշտպանվածության, բժշկական օգնության և սպասարկման, առողջությանը վնասող ցանկացած տիպի շահագործումից և ազդեցությունից, ֆիզիկական և հոգեբանական ճնշումից, արժանապատվության նվաստացումից պաշտպանվածության: (Հոդված 23) 3. Ծնողները կամ նրանց օրինական ներկայացուցիչները իրավունք ունեն. ընտրելու նախադպրոցական ուսումնական հաստատությունը և երեխայի կրթություն ստանալու ձևը, այդ թվում՝ ուսուցումը ընտանիքում, երեխաների զարգացման, դաստիարակության և ուսուցման հարցերով դիմելու կրթության կառավարման համապատասխան մարմիններ, համապատասխան պետական մարմիններում պաշտպանելու իրենց երեխաների օրինական շահերը, մասնակցելու նախադպրոցական կրթության գործընթացին: Ծնողները կամ նրանց օրինական ներկայացուցիչները պարտավոր են երեխաների մեջ սերմանել հարգալից վերաբերմունք հայրենիքի, ազգային, պատմական, մշակութային արժեքների նկատմամբ, երեխաների համար ապահովել նախադպրոցական կրթություն ստանալու անհրաժեշտ պայմաններ, մշտապես հոգալ երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջության մասին, ապահովել պատշաճ պայմաններ երեխաների հակումների և ընդունակությունների զարգացման համար, հարգել երեխայի արժանապատվությունը, երեխայի մեջ դաստիարակել աշխատասիրություն, հարգալից վերաբերմունք ավագների, մայրենի լեզվի, ազգային ավանդույթների և սովորույթների, շրջակա միջավայրի նկատմամբ: Երեխայի հաճախելը նախադպրոցական ուսումնական հաստատություն ընտանիքին չի ազատում նրան ընտանեկան միջավայրում դաստիարակելու, զարգացնելու և կրթելու պարտավորությունից: Ծնողները կամ նրանց օրինական ներկայացուցիչները հասարակության և պետության առջև պատասխանատվություն են կրում երեխայի զարգացման, դաստիարակության և ուսուցման, ինչպես նաև նրա կյանքի, առողջության և արժանապատվության պաշպանության համար: (Հոդված 28)	Կարգավորում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունը, ընդ որում, **պետական վերահսկողությունն** իրականացնում են կրթության բնագավառում լիազորություններ ունեցող պետական կառավարման մարմինները, իսկ **համայնքային ենթակայության** նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեության նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: (Հոդված 19) Նախադպրոցական ուսումնական հաստատությունում **հսկողությունը բժշկական սպասարկման** նկատմամբ իրականացնում է առողջապահության բնագավառի լիազորված պետական մարմինը: (Հոդված 26)	• Սահմանում է նախադպրոցական կրթության ոլորտում պետական **քաղաքականության** խնդիրները (Հոդված 3), նախադպրոցական կրթության **սկզբունքները** (Հոդված 5) **նպատակներն** ու **խնդիրները** (Հոդված 6), **համակարգը** (Հոդված 7): • Կարգավորում է նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների **խմբերի համալրումը:** (Հոդված 10) • Սահմանում է **նախադպրոցական ուսումնական հաստատության գործառույթները** (Հոդված 11), **տեսակները** (Հոդված 12) և կարգավիճակը (Հոդված 13): • Նախադպրոցական կրթության բնագավառի **կառավարումն** իրականացնում են **կրթության պետական կառավարման լիազորված մարմինը**, **տեղական ինքնակառավարման մարմինները**: (Հոդված 15) • Սահմանում է նախադպրոցական կրթության բնագավառում **կրթության պետական կառավարման լիազորված մարմնի** (Հոդված 16) և **տեղական ինքնակառավարման մարմինների** (Հոդված 17) լիազորությունները: • Կարգավորում է նախադպրոցական կրթության **պետական կրթական չափորոշիչը** (Հոդված 20) և նախադպրոցական կրթությանը և նրա իրականացմանը ներկայացվող **պահանջները** (Հոդված 21) • Սահմանում է ուսումնադաստիարակչական գործընթացի **մասնակիցներին** (Հոդված 22) • Կարգավորում է մանկավարժների, ղեկավարների **ատեստավորումը** (Հոդված 25) • Նախադպրոցական կրթության համակարգում բժշկական սպասարկման կազմակերպումն ապահովում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները: Սաներն ապահովվում են անվճար հիմունքներով անընդհատ բժշկական սպասարկմամբ, որն իրականացնում է տվյալ համայնքն սպասարկող

				բժշկական կազմակերպությունը: (Հոդված 26) • Երեխաների սնունդը՝ սահմանված չափաքանակին համապատասխան կազմակերպում և դրա համար պատասխանատվություն են կրում ուսումնական հաստատությունների հիմնադիրները՝ օրենքով սահմանված կարգով: (Հոդված 27) • Կարգավորում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆինանսատնտեսական գործունեությունը (Հոդված 29) և նյութատեխնիկական բազան (Հոդված 30)
58.	**«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-160-Ն, ընդունված է՝ 10.07.2009, ուժի մեջ է՝ 15.08.2009* Սահմանում է ՀՀ հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը, կարգավորում է հանրակրթության գործընթացին մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավահարաբերությունները, ապահովում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված բոլորի համար հավասար կրթության իրավունքի, անվճար պարտադիր միջնակարգ կրթության հնարավորության հիմքերը:	1. Սահմանում է հանրակրթության բնագավառում **պետական քաղաքականությունը**: ՀՀ-ն համընդհանուր **ներառական կրթությունը** հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Հիմնական ընդհանուր կրթությունը **պարտադիր** է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում **անվճար** է: ՀՀ-ում իրականացվում է **12-ամյա** միջնակարգ կրթություն: Ուսումնական հաստատություններում արգելվում է իրականացնել **քաղաքական** գործունեություն կամ **քարոզչություն**: **Կրոնական** գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: ՀՀ-ում հանրակրթությունն իրականացվում է **գրական հայերենով**՝ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: ՀՀ **ազգային փոքրամասնությունների** հանրակրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ: (Հոդված 4) 2. Ուսումնական տարին **սկսվում է** սեպտեմբերի 1-ից (Հոդված 15) 3. Ուսումնական հաստատության առաջին դասարան **ընդունվում** են այն երեխաները, որոնց վեց տարին լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ավելի փոքր տարիքի երեխաների ընդունելությունը ուսումնական հաստատություն արգելվում է: Հանրակրթական դպրոցի առաջին դասարան երեխայի ընդունելության ժամանակ արգելվում է գիտելիքների ստուգումը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդունելությունը ուսումնական հաստատություն կատարվում է ընդհանուր հիմունքներով: Դպրոցական տարիքի երեխային ուսումնական հաստատություն ընդգրկելու համար պատասխանատու է ծնողը՝ օրենքով սահմանված կարգով: Ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն **տեղափոխելը** և ազատելը կատարվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած կարգով հետևյալ դեպքերում. ծնողի դիմումի հիման վրա, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա: Ոչ պետական ուսումնական հաստատությունում, մասնագիտացված հանրակրթական դպրոցում կամ այլընտրանքային ծրագրում ընդգրկված սովորողի ազատումը կամ այլ ուսումնական հաստատություն տեղափոխումը կարող է կատարվել նաև ծնողի և տվյալ ուսումնական հաստատության միջև կնքված պայմանագրային դրույթները սովորողի կամ ծնողի կողմից չպահպանվելու դեպքում: (Հոդված 16) 4. Առողջական վիճակի պատճառով ուսումնական հաստատություններ հաճախել չկարողացող սովորողների համար կազմակերպվում է տնային ուսուցում՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի: (Հոդված 17) 5. Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի՝ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում ծնողը կարող է արդյունքները բողոքարկել հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն: (Հոդված 17.1) 6. Կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու նպատակով երեխան կարող է ներկայացվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման՝ ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա կամ երեխայի կրթության վայր հանդիսացող ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի դիմումի հիման վրա, եթե դիմումին կցված է ծնողի ստորագրած համաձայնագիրը: (Հոդված 17.2) 7. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար **իրավունքներ** և **պարտականություններ**: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Սովորողն իրավունք ունի. ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն, ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ, անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից, ստանալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը բավարարելուն ուղղված աջակցություն, մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների, պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը, ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը, ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները: Սովորողը պարտավոր է. կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները, ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային	Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը իրականացնում է ուսումնական հաստատությունների վերահսկողություն, պետական տեսչավորում և գործունեության գնահատում, հրապարակում է ուսումնական հաստատությունների վարկանիշային ցանկը, մասնակցում է ուսումնական հաստատության արտաքին գնահատմանը (Հոդված 30) Մարզպետը (Երևան քաղաքում՝ քաղաքապետը) վերահսկում է ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, կրթական ծրագրերի իրականացումը՝ հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան, համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություն, աջակցում է ուսումնական հաստատություններում սովորողների և շրջանավարտների գիտելիքների գնահատման կամ թեստավորման գործընթացին, աջակցում է ուսուցչի ատեստավորման գործընթացին: (Հոդված 31) Համայնքի ղեկավարը իրականացնում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություն: (Հոդված 32) Ուսումնական հաստատության գործունեության վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, կրթության պետական կառավարման լիազորված մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված պետական կառավարման այլ մարմիններ: Ուսումնական հաստատությունում կրթության բնագավառի օրենսդրության պահպանման նկատմամբ պետական	• Սահմանում է հանրակրթության նպատակները և պետական քաղաքականության սկզբունքները (Հոդված 5), կարգավորում է պետական չափորոշիչը (Հոդված 5) և ծրագրերը (Հոդված 7): Սահմանում է ուսումնական հաստատության տեսակները (Հոդված 8), կազմակերպական-իրավական ձևերը (Հոդված 9), կարգավորում է հաստատության կառավարման հարցերը (Հոդված 10, 11, 12) • Պետական ուսումնական հաստատությունում ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է ուսումնական հաստատությունը, իսկ ոչ պետական ուսումնական հաստատությունում՝ հիմնադիրը: Ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում են աշնանային, ձմեռային, գարնանային և ամառային արձակուրդներ՝ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան: Պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների ժամկետները և տևողությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը, իսկ ոչ պետական ուսումնական հաստատությունում՝ հիմնադիրը՝ այդ մասին տեղյակ պահելով պետական կառավարման լիազորված մարմնին: (Հոդված 15) • Սովորողների ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի և հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով: Պետական ուսումնական հաստատությունների համար պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական

		համակարգին ներկայացվող պահանջները, հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին: (Հոդված 20) 8. Կարգավորում է սովորողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը (Հոդված 21) և խրախուսումը (Հոդված 23) 9. Մանկավարժական աշխատողը պարտավոր է հարգել և պաշտպանել սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը, նպաստել երեխայի կրթության իրավունքի իրացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կրթական կարիքների առանձնահատկությունները, նպաստել սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը, ապահովել հանրակրթության պետական չափորոշիչով նախատեսված ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ, համագործակցել ծնողների հետ երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում, սովորողների մեջ ձևավորել պատշաճ վարքագիծ ու վարվելակերպ, դաստիարակել հայրենասիրություն, սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ: (Հոդված 27) 10. Սովորողի ծնողը պարտավոր է երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար, մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար, հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ, դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ, դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ, սահմանված ժամկետներում երեխային բերել ուսումնական հաստատություն, հատուցել իր, ինչպես նաև իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը, սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց: (Հոդված 28) 11. Ուսումնական հաստատության ֆինանսավորումը պետական բյուջեից կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից: Ոչ պետական ուսումնական հաստատությունը պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորվում է ՀՀ կառավարության սահմանած պահանջներին և չափանիշներին համապատասխանելու դեպքում: Կրթության կազմակերպման համար լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակով օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն երեխաները, որոնք ունեն հետևյալ ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ. ձայնի և խոսքի, լսողական, տեսողական, ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն ունեցող, շարժողական: (Հոդված 35	վերահսկողությունն իրականացվում է «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքով: (Հոդված 33) Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական, որոնց չափանիշները և իրականացման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Ներքին գնահատումը ուսումնական հաստատության կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները: Ներքին գնահատման հաշվետվությունը տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև ապահովում դրա հրապարակումը: Ուսումնական հաստատության արտաքին գնահատման նպատակը դրա գործունեության արդյունավետության գնահատումն է՝ նմանատիպ մյուս հաստատությունների համեմատությամբ: Արտաքին գնահատման չափանիշները միասնական են բոլոր ուսումնական հաստատությունների համար: Արտաքին գնահատումը կատարվում է ուսումնական հաստատության գիտությամբ՝ անկախ կազմակերպության կողմից: Արտաքին գնահատմանը մասնակցում են ծնողները, սովորողները, կրթության պետական և տարածքային կառավարման լիազորված մարմինները, տեղական ինքնակառավարման մարմնի և ուսումնական հաստատության ներկայացուցիչները: Ուսումնական հաստատության արտաքին գնահատումն իրականացվում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի և հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին շրջանավարտների համապատասխանության հիման վրա: Արտաքին գնահատման ընթացքում օգտագործվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրականացրած տեսչական ստուգումների արդյունքները: Կրթական ծառայությունների որակի գնահատման հիմքը ուսումնական հաստատությունների միջին վիճակագրական տվյալների ցուցանիշներն են: Շրջանավարտների համապատասխանության աստիճանը հանրակրթության պետական չափորոշչի	կառավարման լիազորված մարմինը: Ուսումնական հաստատությունը, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինները ապահովում են դպրոցական տարիքի երեխայի ընդգրկումը ուսումնական հաստատություն: Սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով: Սովորողների կողմից կրթական ծրագրի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման, սովորողի փոխադրման և ավարտման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Տվյալ ուսումնական տարվա հանրակրթական հիմնական ծրագիրը չյուրացրած սովորողի հաջորդ դասարան փոխադրվելու, ինչպես նաև տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Ուսումնական պարապմունքներից բացակայություններ ունեցող սովորողների հետագա ուսումնառության կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: (Հոդված 16) • Կարգավորում է ուսումնական գործընթացի կազմակերպումը: Տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը: Երեխայի կրթության իրավունքն ապահովելու նպատակով հիվանդանոցային բժշկական կազմակերպություններում հանրակրթական ծրագրերին համապատասխան կազմակերպվում է երկարատև (ոչ պակաս, քան 21 օր) բուժման մեջ գտնվող երեխաների ուսուցումը: Այն իրականացվում է տվյալ բժշկական կազմակերպությունում և ուսումնական հաստատության միջև պայմանագրի հիման վրա, որի օրինակելի ձևը հաստատվում է կրթության պետական կառավարման և առողջապահության պետական կառավարման լիազորված մարմինների ղեկավարների համատեղ հրամանով: Պայմանագրի պատճենը ներկայացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմին: (Հոդված 17) • Կարգավորում է կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները

			պահանջներին որոշվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կազմակերպած ամփոփիչ ատեստավորման արդյունքներով: Արտաքին գնահատման արդյունքներով կրթության պետական կառավարման լիազորված մարմինը հրապարակում է ուսումնական հաստատությունների վարկանիշային ցանկը: (Հոդված 34)	(Հոդված 17.1) • Կարգավորում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը (Հոդված 17.2) և վկայագրումը (Հոդված 17.3) • Կարգավորում է սովորողների գնահատումը և ատեստավորումը • Ուսումնական հաստատությունն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ՝ համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի: Սովորողների առողջության պահպանման և ֆիզիկական ու մտավոր զարգացման դժվարությունները կանխարգելելու, վերականգնելու նպատակով յուրաքանչյուր սովորող տարին առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտություն՝ ուսումնական հաստատության բժշկական սպասարկման ծառայության կողմից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝ պետական բյուջեի միջոցների հաշվին: (Հոդված 22) • Կարգավորում է ուսուցչի վերապատրաստումը, ատեստավորումը և տարակարգի շնորհումը: Հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը ատեստավորման ենթակա չէ, եթե նա նման հայտ չի ներկայացրել: Հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը ենթակա է ատեստավորման արձակուրդից վերադառնալուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե նա ավելի վաղ ատեստավորվելու հայտ չի ներկայացրել: (Հոդված 26) • Կարգավորում է մանկավարժական աշխատողների (Հոդված 27) և սովորողի ծնողի (Հոդված 28) իրավունքներն ու պարտականությունները • Սահմանում է հանրակրթության բնագավառում ՀՀ կառավարության (Հոդված 29), կրթության պետական

				կառավարման լիազորված մարմնի (Հոդված 30), տարածքային կառավարման մարմնի և Երևանի քաղաքապետի (Հոդված 31), տեղական ինքնակառավարման մարմնի (Հոդված 32) իրավասությունները • Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, սահմանում է ՀՀ կառավարությունը: Ուսումնական հաստատությունը կարող է մրցութային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակներով. իրականացնել հատուկ կամ լրացուցիչ կրթական ծրագրեր արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար, իրականացնել ուսումնամեթոդական գիտափորձ և (կամ) այլընտրանքային ծրագիր, կազմակերպել դպրոցականների միջազգային օլիմպիադաների նախապատրաստական հավաքներ և դասընթացներ, ստեղծել ուսումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնական նյութեր (այդ թվում՝ էլեկտրոնային): Լրացուցիչ ֆինանսավորման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Հանրակրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունը կարող է իր կրթական ծառայությունները կազմակերպել վճարովի հիմունքներով, այդ թվում՝ սովորողներից գանձել ուսման վարձավճար: (Հոդված 35) • Պետությունը հանրակրթության համակարգի պետական ուսումնական հաստատությունների գործունեության կարիքների համար երաշխավորում է ամենամյա համապատասխան բյուջետային հատկացումներ: 2. Պետական կրթական չափորոշիչների սահմաններում հանրակրթություն ստանալու պետական երաշխիքի հիմքը պետական ֆինանսավորումն է: Պետությունը ուսումնական հաստատություններին, անկախ կազմակերպական-իրավական ձևից, երաշխավորում է գործունեության հավասար իրավական դաշտ՝ կանոնադրությամբ նախատեսված հանրակրթական գործունեության մասով: Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման նկատմամբ կիրառվում է հարկային արտոնությունների համակարգ: (Հոդված 37)

59.	**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-62-Ն, ընդունված է՝ 14.12.2004, ուժի մեջ է՝ 02.03.2005* Կարգավորում է ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները:	1. Բուհը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն 10 տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն 7 տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում, մասնավորապես, մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս, 3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս չափով (Հոդված 6): 2. Բուհի ուսանողները (կուրսանտները, ունկնդիրները), ասպիրանտները կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների, ընտրել մասնագիտություն, բուհի տեսակը և ուսուցման ձևը, տեղափոխվել այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների), զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը, բուհի կանոնադրությանը համապատասխան՝ լիիրավ մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինների աշխատանքներին: Սովորողն իրավունք ունի. ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են համապատասխան ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) և ամբիոնը, մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները, բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բուհում, մասնակցելու բուհերի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին, անվճար օգտվելու բուհերի գրադարաններից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և սիմպոզիումներին, բողոքարկելու բուհի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները, օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից, ստանալու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաև ուսանողական վարկ, ծանոթանալու բուհի կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր բարձրագույն ուսումնական հաստատության հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև 1 տարի ժամկետով, ուսուցման առկա ձևով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան 2 անգամ, գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան 7 շաբաթ ընդհանուր տևողությամբ, հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում ստանալու հանրակացարանում համապատասխան տեղ, փոխադրվելու մեկ այլ բուհ, ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություն, ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք: Կրթությունը ընդհատած նախկին սովորողը, անկախ ընդհատման պատճառից, իրավունք ունի վերականգնելու իր ուսանողական իրավունքները, բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակում կրթության ընդհատման: Սովորողը պարտավոր է կատարել բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով սահմանված պարտականությունները: Բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում սովորողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ բարձրագույն ուսումնական հաստատությունից հեռացնելը՝ ներքին ակտերով սահմանված դեպքերում և կարգով: Արգելվում է սովորողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում: Սովորողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում: (Հոդված 17)	Լիազորված մարմնի իրավասությունն է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի վերահսկողության իրականացումը լիազորված մարմնի իրավասությունն է (Հոդված 21) Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է լիազորված մարմինը՝ լիցենզավորման և հավատարմագրման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների կազմակերպմամբ, ուսումնական հաստատության որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների միջոցով: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի ապահովման նպատակով բուհը և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր են հրապարակել որակի գնահատման և (կամ) հավատարմագրման չափանիշները, ուսումնական հաստատության որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպության տված եզրակացությունները, ինչպես նաև որակի գնահատման ընթացիկ արդյունքները: Բուհերում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում ուսումնական հաստատության որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգը հաստատում է լիազորված մարմինը: (Հոդված 22)	• Սահմանում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները (Հոդված 4), պետական քաղաքականության խնդիրները (Հոդված 5): Կարգավորում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությունը, իրավասությունը և ակադեմիական ազատությունները (Հոդված 6), խնդիրները (Հոդված 11), տեսակները և անվանումները (Հոդված 12): Կարգավորում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները և կրթական ծրագրերը (Հոդված 8), որակավորման աստիճանները, ուսուցման ժամկետները և ձևերը (Հոդված 9), ավարտական փաստաթուղթը (Հոդված 10), կառավարումը (Հոդված 15) • Կարգավորում է ընդունելությունը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում (Հոդված 14) • Սահմանում է պետական իշխանության մարմինների իրավասությունը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում (Հոդված 21) • Ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների ստեղծման և գործունեության կարգը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների գործունեությունը ֆինանսավորվում է բարձրագույն ուսումնական հաստատության արտաբյուջետային միջոցների հաշվին: Ֆինանսավորման չափը սահմանում է բուհի կառավարման խորհուրդը: (Հոդված 17)
60.	**«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-272, ընդունված է՝ 04.12.2001, ուժի մեջ է՝ 09.01.2002* Սահմանում է ՀՀ-ում քաղաքացիական ծառայության հիմնական սկզբունքները և կարգավորվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգման և քաղաքացիական ծառայության դասային աստիճանների, քաղաքացիական ծառայության	1. **Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք** ունեն քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները: (Հոդված 11) 2. Հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող քաղաքացիական ծառայողները **ատեստավորման** ենթակա չեն, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել: Հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող քաղաքացիական ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո՝ ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար: (Հոդված 19) 3. **Հաստիքների կրճատման** դեպքում հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող քաղաքացիական ծառայողին տրվում է աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունք: (Հոդված 29)	**Քաղաքացիական ծառայության խորհուրդը**, մասնավորապես, իրականացնում է համապատասխան մարմինների կադրային գործի վարման մեթոդական ղեկավարումը և վերահսկողությունը, համապատասխան և այլ մարմիններից ստանում է քաղաքացիական ծառայության հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր, սահմանում է քաղաքացիական ծառայողների էթիկայի կանոնները և էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության կարգը և նրանց գործառույթները: (Հոդված 37)	• Քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմիններն են **քաղաքացիական ծառայության խորհուրդը** և **աշխատակազմերի ղեկավարները**: (Հոդված 36) • Քաղաքացիական ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովները

	պաշտոնի նշանակման, քաղաքացիական ծառայողների ատեստավորման և վերապատրաստման, կատարողականի գնահատման, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվի, քաղաքացիական ծառայողների իրավական վիճակի, քաղաքացիական ծառայության կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:			
61.	**«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-305, ընդունված է՝ 06.02.2002, ուժի մեջ է՝ 01.04.2002* Սահմանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ձերբակալված անձին արգելանքի և կալանավորված անձին կալանքի տակ պահելու ընդհանուր սկզբունքները, պայմանները և կարգը, ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքները, դրանց ապահովման երաշխիքները, նրանց պարտականությունները, ինչպես նաև արգելանքից և կալանքից ազատելու կարգը:	1. Կալանավորված անչափահաս անձին **կարճաժամկետ մեկնումներ** տրամադրվում են միայն ազգականների կամ այլ անձանց ուղեկցությամբ: (Հոդված 17) 2. Ձերբակալված կամ կալանավորված հղի կանայք, կերակրող մայրերը, անչափահասները ապահովվում են **անվճար հատուկ սննդով**, որի տեսականին և նվազագույն չափաբաժինները սահմանում է ՀՀ կառավարությունը: (Հոդված 19) 3. Ձերբակալված կամ կալանավորված կանանց և անչափահասների համար ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում ստեղծվում են **բարելավված նյութակենցաղային պայմաններ**: Ձերբակալված կամ կալանավորված կանայք և անչափահասներն օգտվում են ամենօրյա՝ 2 ժամից ոչ պակաս տևողությամբ **զբոսանքի իրավունքից**, որի ընթացքում հնարավորություն է տրվում զբաղվել **մարմնամարզությամբ**: (Հոդված 27) 4. Կալանավորված կանայք իրավունք ունեն կալանքի տակ գտնվելու ընթացքում **իրենց մոտ պահել մինչև 3 տարեկան** իրենց երեխաներին: Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող ձերբակալված կամ կալանավորված կանանց համար ստեղծվում են համապատասխան նյութակենցաղային պայմաններ, կազմակերպվում է **մասնագիտացված բուժսպասարկում**: Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող կանանց, որպես տույժի միջոց, **պատժախուց տեղափոխելն արգելվում է**: Հիվանդության, ծնողական պարտականությունները բարեխղճորեն չկատարելու, երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև ներքին կանոնակարգի խախտումներ թույլ տալու դեպքերում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը կարող է միջնորդություն ներկայացնել դատարան՝ կալանավորված անձին **ծնողական իրավունքներից զրկելու** և (կամ) երեխային **այլ անձանց խնամքին հանձնելու** մասին: (Հոդված 27) 5. Կալանավորված անձինք կալանավորվածներին պահելու վայրերում **պահվում են անջատ**՝ տղամարդիկ՝ կանանցից, անչափահասները՝ չափահասներից (Հոդված 31) 6. Ներքին կանոնակարգը խախտելու, իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կալանավորված անչափահաս անձի նկատմամբ կարող է, մասնավորապես, կիրառվել տույժի հետևյալ միջոցը. պատժախուց տեղափոխելը մինչև հինգ օր ժամկետով: (Հոդված 35) 7. Հղի կամ մանկահասակ երեխաներ ունեցող կանանց, ինչպես նաև անչափահասներին **արգելանքից կամ կալանքից ազատելիս** ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն ազատման մասին նախօրոք հայտնում է նրանց մերձավոր ազգականներին կամ այլ անձանց: Մերձավոր ազգականներ չունենալու դեպքում անհրաժեշտ օգնությունը ցույց է տալիս տվյալ հիմնարկի վարչակազմը: Սույն անձինք բնակության վայր են ուղարկվում մերձավոր ազգականների, կամ այլ անձանց կամ տվյալ հիմնարկի աշխատակցի ուղեկցությամբ: (Հոդված 43)	Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը **դատարանին** հայտնում է կալանավորված անձի՝ կալանքի տակ գտնվելու, դրա ժամկետների, ինչպես նաև կալանավորված անձին կալանքից ազատելու մասին: (Հոդված 44) Ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի գործունեության նկատմամբ **վերադաս մարմինները** և դրանց պաշտոնատար անձինք իրականացնում են գերատեսչական վերահսկողություն (Հոդված 45) Ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում օրենքների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում են **ՀՀ գլխավոր դատախազը** և նրան ենթակա **դատախազները** (Հոդված 46) Ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի գործունեության նկատմամբ **հասարակական վերահսկողությունն** իրականացվում է լիազորված համապատասխան մարմնի ղեկավարի կազմավորած հասարակական դիտորդների խմբի միջոցով: Հասարակական վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի կազմը և իրավասությունը սահմանում է լիազորված համապատասխան մարմնի ղեկավարը: Հասարակական դիտորդների խմբի անդամների թիվը չի կարող գերազանցել քսանմեկը, իսկ խմբի անդամի լիազորությունները երեք տարի են: (Հոդված 47)	• Ձերբակալվածներին պահելու վայրեր և կալանավորվածներին պահելու վայրեր • Ուղղիչ հիմնարկներ • Դատարան • ՀՀ Գլխավոր դատախազ • ՀՀ արդարադատության նախարարություն
62.	**«Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-380-Ն, ընդունված է՝ 03.07.2002, ուժի մեջ է՝ 20.07.2002* Սահմանում է խաղաղ պայմաններում ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության (շարքային	1. Օբյեկտիվ պատճառներով (այդ թվում՝ հղիություն, ծննդաբերություն և երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվել) նոր պայմանագիր կնքելու հնարավորություն չունեցող և ծառայությունը շարունակելու ցանկություն հայտնած պայմանագրային զինծառայողները շարունակում են զինվորական ծառայությունը՝ պայմանագրային հիմունքներով: Նշված հանգամանքների վերացումից հետո՝ ծառայության վայր ներկայանալուց մեկ ամսվա ընթացքում, նրանց հետ կնքվում է նոր պայմանագիր (կամ նրանք զորացրվում են): (Հոդված 14) 2. Կին զինծառայողը հղիության շրջանում իր ցանկությամբ նշանակվում է ծառայության ավելի դյուրին պայմաններ ունեցող պաշտոնի՝ բժշկական եզրակացության համաձայն: Այդպիսի դեպքերում պահպանվում է նախկինում զբաղեցրած պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը: Մինչև 2 տարեկան երեխա ունեցող կին զինծառայողը, եթե չի կարողանում կատարել իր ծառայողական պարտականությունները, նշանակվում է այլ զինվորական պաշտոնի՝ մինչ նշանակումն զբաղեցրած պաշտոնի համար		• ՀՀ պաշտպանության նախարարություն • ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայություն

	կազմի զինծառայողների և «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենքով չկարգավորված մասերով), ներքին գործերի, հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայություն անցնելու կարգը, զինծառայողներին զինվորական պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու, տեղափոխելու և գործուղելու, որակավորելու, զինվորական կոչում շնորհելու, դրանից զրկելու և վերականգնելու, արձակուրդ տրամադրելու, ծառայությունից արձակելու հետ կապված հարաբերությունները:	սահմանված պաշտոնային դրույքաչափի պահպանմամբ: (Հոդված 19) 3. Ժամանակավոր զբաղեցվող պաշտոնի կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անընդմեջ տևողությունը չպետք է գերազանցի հետևյալ ժամկետները 4 ամիսը՝ զբաղեցված պաշտոնի պարտականությունների կատարումը (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող զինծառայողի պաշտոնի պարտականությունների կատարման դեպքի): Զինծառայողն իր համաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում պահեստազորից զորակոչված քաղաքացին նշանակվում է պաշտոնի պարտականությունների կատարող՝ պաշտոնն զբաղեցնողի՝ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվելու ժամկետի ընթացքում: Թափուր պաշտոնի կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող կին զինծառայողի պաշտոնեական պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակված զինծառայողին վճարվում են տվյալ պաշտոնի համար սահմանված աշխատավարձը: (Հոդված 20) 4. Հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող կին զինծառայողի զբաղեցրած պաշտոնը կրճատվելիս՝ մինչև արձակուրդի ավարտը կին զինծառայողը թողնվում է պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային մարմնի) տրամադրության տակ: (Հոդված 21) 5. Պայմանագրային զինծառայողը, ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, տեղափոխվում է ծառայության նոր վայր, հավասար պաշտոնի նշանակմամբ: Տեղափոխությունը կատարվում է առանց զինծառայողի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ զինծառայողի կամ նրա ընտանիքի անդամի (կին, անչափահաս, հաշմանդամ երեխա) համար, ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությամբ, տեղափոխման վայրը հակացուցված է: (Հոդված 23) 6. Կին զինծառայողներին տրվում է հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդ: (Հոդված 42) 7. Մինչև 16 տարեկան 3 և ավելի երեխա ունեցող, հաշմանդամ ամուսին կամ երեխա ունեցող զինծառայողներին վերապահվում է հերթական արձակուրդի ժամանակը որոշելու իրավունք: (Հոդված 46) 8. Կին զինծառայողին հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար տրվում է արձակուրդ: Հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում աշխատավարձը պահպանվում է: Դրանից առաջ կամ անմիջապես հետո կին զինծառայողին, իր դիմումի համաձայն, տրվում է հերթական տարեկան արձակուրդ: Մինչև երեխայի 2 տարին լրանալը, կին զինծառայողին, իր ցանկությամբ, տրվում է արձակուրդ: Այդ ժամկետում կին զինծառայողին տրվում է երեխայի խնամքի համար նախատեսված նպաստ: Կին զինծառայողի դիմումի հիման վրա, երեխայի 2 տարեկան դառնալուց հետո, նրան տրվում է լրացուցիչ անվճար արձակուրդ՝ մինչև երեխայի 3 տարեկան դառնալը, որը նա կարող է օգտագործել լրիվ կամ մաս-մաս: Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդը հաշվարկվում է կին զինծառայողի անընդհատ ծառայության ստաժում՝ պաշտոնային դրույքաչափը սահմանելու, միանվագ դրամական պարգևատրման, կենսաթոշակ հաշվարկելու և զինվորական կոչում շնորհելու համար: Երեխայի խնամքի համար տրված արձակուրդի ընթացքում կին զինծառայողի ծառայության տեղն ու պաշտոնը պահպանվում է: Հղիության և ծննդաբերության տարում կին զինծառայողին հերթական արձակուրդ տրվում է ընթացիկ տարվա արձակուրդի տևողությամբ, երեխայի խնամքի համար արձակուրդն ավարտվելու տարում՝ ավարտվելու օրվանից համամասնաբար մինչև օրացուցային տարվա ավարտը՝ ծառայության յուրաքանչյուր լրիվ ամսվա դիմաց երկու և կես օր հաշվարկով: (Հոդված 49) 9. Հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող զինծառայողը զորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանվում է բուժման կամ արձակուրդի ավարտի հաջորդ օրը: (Հոդված 50)		
63.	**«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-532-Ն, ընդունված է՝ 11.04.2003, ուժի մեջ է՝ 01.06.2003* Սահմանում է ՀՀ ազգային անվտանգության մարմիններում ծառայության հիմնական սկզբունքները, կարգը, պայմանները, ազգային անվտանգության մարմինների ծառայողների պաշտոնները և զինվորական կոչումները, ազգային անվտանգության մարմինների ծառայողների իրավունքները և պարտականությունները, նրանց պաշտոնական երաշխիքները, ծառայության և հանգստի ժամանակը, արձակուրդը, զինվորական կոչում շնորհելու, կոչումն իջեցնելու և վերականգնելու, ծառայությունից արձակելու, ինչպես նաև ծառայության հետ կապված այլ	1. Նախածննդյան և հետծննդյան, ինչպես նաև երեխայի խնամքի համար տրվող արձակուրդն ազգային անվտանգության մարմինների կին ծառայողների կոչումը կրելու ժամկետում չի հաշվարկվում: Նշված ժամկետի հաշվարկը վերսկսվում է կին ծառայողների կողմից ծառայության անցնելուց հետո: (Հոդված 9) 2. Ծառայողի համաձայնությամբ նրան նշանակում են ոչ թափուր պաշտոնի պարտականությունների կատարող՝ պաշտոնն զբաղեցնողի՝ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվելու ժամանակահատվածի ընթացքում: (Հոդված 23) 3. Ծառայողը, ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, տեղափոխվում է ծառայության նոր վայր, հավասար կամ բարձր պաշտոնի նշանակմամբ: Տեղափոխությունը կատարվում է առանց ծառայողի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ ծառայողի կամ նրա ընտանիքի անդամի (կին, երեխա և այլն) համար, ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությամբ, տեղափոխման վայրը հակացուցված է: (Հոդված 24) 4. Նախածննդյան և հետծննդյան կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող կին ծառայողի զբաղեցրած պաշտոնը կրճատվելիս՝ մինչև արձակուրդի ավարտը ազգային անվտանգության մարմինների ծառայողը թողնվում է կադրերի տրամադրության տակ: (Հոդված 26) 5. Հղի կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ծառայողները ատեստավորան ենթակա չեն: Նախածննդյան, հետծննդյան կամ երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող ծառայողները ենթակա են ատեստավորման ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց մեկ տարի հետո: (Հոդված 28) 6. Կին ծառայողներին վարձատրության պահպանմամբ տրվում է նախածննդյան և հետծննդյան, ինչպես նաև երեխայի խնամքի համար արձակուրդ: (Հոդված 37) 7. Հերթական արձակուրդի ժամանակը որոշելիս մինչև 16 տարեկան 3 և ավելի երեխա, հաշմանդամ կին կամ երեխա ունեցողներին տրվում է նախապատվություն: Ռազմական դրություն հայտարարվելու դեպքում ազգային անվտանգության մարմինների ծառայողի արձակուրդն ընդհատվում է, բացառությամբ կին ծառայողի՝ նախածննդյան և հետծննդյան, ինչպես նաև երեխայի խնամքի արձակուրդի: (Հոդված 38) 8. Ազգային անվտանգության մարմինների կին ծառայողին նախածննդյան, հետծննդյան, ինչպես նաև երեխայի խնամքի համար տրվում է արձակուրդ: Արձակուրդը հաշվարկվում է կին ծառայողի անընդհատ ծառայության ստաժում՝ պաշտոնային դրույքաչափը սահմանելու, միանվագ դրամական պարգևատրման և կենսաթոշակ հաշվարկելու համար: Երեխայի խնամքի համար տրված արձակուրդի ընթացքում կին ծառայողի պաշտոնը պահպանվում է: Նախածննդյան և հետծննդյան տարում կին ծառայողին		• ՀՀ ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին՝ ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն • Ազգային անվտանգության մարմինների ռազմաբժշկական հանձնաժողով

	առանձնահատկություններ:	հերթական արձակուրդ տրվում է ընթացիկ տարվա արձակուրդի տևողությամբ, երեխայի խնամքի համար արձակուրդն ավարտվելու տարում՝ ավարտվելու օրվանից համամասնաբար, մինչև օրացուցային տարվա ավարտը՝ ծառայության յուրաքանչյուր լրիվ ամսվա դիմաց երկուսուկես օր հաշվարկով: (Հոդված 42)		
64.	**«Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-61, ընդունված է՝ 29.05.1996, ուժի մեջ է՝ 15.06.1996* Սահմանում է ՀՀ հյուպատոսական հիմնարկներում ծառայության հիմնական սկզբունքները, հյուպատոսական պարտականությունների կատարման կարգը, հյուպատոսական հիմնարկի անձնակազմի և հյուպատոսական հիմնարկի ղեկավարի նշանակման կարգը, հյուպատոսական հիմնարկի ղեկավարի պարտականությունները, նոտարական գործողությունները, հյուպատոսական վավերացումը, հյուպատոսական գանձումները	1. Հյուպատոսական հիմնարկի ղեկավարն իրավունք ունի ձևակերպել ՀՀ քաղաքացի հանդիսացող և ՀՀ սահմաններից դուրս բնակվող երեխաների որդեգրումը: Որդեգրման համար անհրաժեշտ է ստանալ ՀՀ լիազոր մարմնի թույլտվությունը: (Հոդված 30) 2. Հյուպատոսական հիմնարկի ղեկավարը միջոցներ է ձեռնարկում իր հյուպատոսական տարածաշրջանում գտնվող ՀՀ անչափահաս ծնողազուրկ քաղաքացիների նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու համար: (Հոդված 31)	Հյուպատոսական հաշվառումը ՀՀ տարածքից դուրս մեկնող կամ գտնվող ՀՀ քաղաքացիների կողմից իրենց անձնական տվյալները լիազոր պետական մարմնին կամավոր հայտնելու գործընթաց է: Հյուպատոսական հաշվառումն իրականացվում է ՀՀ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությունն ապահովելու, արտակարգ իրավիճակներում աջակցություն ցուցաբերելու, քաղաքացիների կողմից իրենց պարտականությունների կատարումը դյուրացնելու, ինչպես նաև բնակչության պետական ռեգիստրում մշտական բնակության միայն մեկ վայրի հասցեով հաշվառելու նպատակով: ՀՀ քաղաքացիները հյուպատոսական հաշվառման կանգնելու համար իրենց անձնական տվյալները կարող են ներկայացնել անձամբ, փոստով կամ հյուպատոսական հաշվառման ավտոմատացված համակարգի միջոցով: (Հոդված 24)	• ՀՀ հյուպատոսական հիմնարկներ՝ գլխավոր հյուպատոսությունները, հյուպատոսությունները, փոխհյուպատոսությունները և հյուպատոսական գործակալությունները • ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ • ՀՀ ԱԳՆ
65.	**«Սահմանապահ զորքերի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-266, ընդունված է՝ 20.11.2001, ուժի մեջ է՝ 25.12.2001* Սահմանում է ՀՀ սահմանապահ զորքերի հասկացությունը, գործունեության իրավական հիմքը, սկզբունքները, իրավունքներն ու պարտականությունները, սահմանապահ զորքերի անձնակազմի և պետական սահմանի պահպանությանը մասնակցող քաղաքացիների ու նրանց ընտանիքների անդամների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը, սահմանապահ զորքերի ֆինանսական և նյութատեխնիկական ապահովումը:	1. Սահմանապահ զորքերին արգելվում է կիրառել զենք՝ կանանց, հաշմանդամության ակնհայտ նշաններով անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցուցաբերելու կամ մարդկանց կյանքին սպառնացող խմբակային հարձակման դեպքերի: (Հոդված 10) 2. Արգելվում է հատուկ միջոցներ գործադրել հղիության նկատելի նշաններով կանանց, հաշմանդամության ակնհայտ նշաններով անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նշված անձանց կողմից ցույց տրվող զինված դիմադրության, մարդկանց կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող գործողությունների դեպքերի: (Հոդված 11)		• ՀՀ ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին՝ ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն
66.	**«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-177, ընդունված է՝ 16.04.2001, ուժի մեջ է՝ 10.06.2001* Կարգավորում է ոստիկանության հասկացությունը, խնդիրները, իրավական հիմքերն ու սկզբունքները,	1. Ոստիկանությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է անչափահասներին սահմանված կարգով հոգեբուժական հաստատություն հոսպիտալացնելու դեպքում այդ մասին տեղյակ պահել վերջիններիս օրինական ներկայացուցիչներին. (Հոդված 10) 2. Ոստիկանությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է իրականացնել պետական և հասարակական մարմինների հետ համապատասխան միջոցառումներ՝ առանց հսկողության թողնված անչափահասների, ինչպես նաև հաշվառման մեջ գտնվող անչափահասների կողմից կատարվող հանցագործությունները կանխելու և անչափահասներին դաստիարակելու ուղղությամբ: (Հոդված 11) 3. Հասարակական կարգը պահպանելիս ոստիկանությունն իրավունք ունի մինչև դաստիարակչական հսկողության հանձնելը կամ իրավասու այլ մարմին ներկայացնելը պահելու առանց հսկողության թողնված անչափահասներին: (Հոդված 22)	Ոստիկանության գործունեության նկատմամբ իրենց լիազորությունների սահմաններում վերահսկողություն են իրականացնում ՀՀ **Նախագահը**, ՀՀ **կառավարությունը**: ՀՀ Սահմանադրությամբ սահմանված դեպքերում ոստիկանության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնում է ՀՀ **Ազգային ժողովը**:	• ՀՀ ԿԱ Ոստիկանություն

	պարտականությունները և իրավունքները, կառուցվածքը, պատասխանատվության կարգը, իրավական ու սոցիալական ապահովության պետական երաշխիքները, ինչպես նաև ոստիկանության ֆինանսավորման, նյութատեխնիկական ապահովման և գործունեության վերահսկողության սկզբունքները:	4. Արգելվում է հատուկ միջոցները գործադրել հղիության նկատելի նշաններով կանանց, անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին ու առողջությանն սպառնացող խմբակային հարձակման դեպքերի), դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների տարածքներում (բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ միջոցները գործադրվում են դրանց լիազոր ներկայացուցիչների խնդրանքով), ինչպես նաև խաղաղ, առանց զենքի և օրենքով սահմանված կարգի խախտմամբ անցկացվող հավաքները և հանրային միջոցառումները դադարեցնելու ժամանակ, իսկ մարտավարատեխնիկական բնութագրերով պայթյունավտանգ հատուկ միջոցները՝ այն շենքերում (շինություններում), որտեղ արտադրվում կամ պահվում են դյուրավառ կամ պայթուցիկ նյութեր: (Հոդված 31) 5. Արգելվում է հրազենի գործադրումը հղիության նկատելի նշաններով կանանց, անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից քաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման և զինված դիմադրության դեպքերի), ինչպես նաև մարդկանց զգալի կուտակումների ժամանակ, երբ հրազենի գործադրումից կարող են տուժել այլ անձինք: (Հոդված 32)	Ոստիկանությունում **ներգերատեսչական հսկողությունն** իրականացվում է ոստիկանության պետական կառավարման մարմնի ղեկավարի սահմանած կարգով: Ոստիկանության **օպերատիվ-հետախուզական գործունեության** նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: Պետական այլ մարմիններն ու կազմակերպություններն **իրավասու չեն միջամտելու** ոստիկանության **օպերատիվ-հետախուզական** և **քրեադատավարական** գործունեությանը, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությանը: (Հոդված 42) Ոստիկանության կողմից կատարվող **հետաքննության օրինականության** նկատմամբ հսկողությունն իրականացնում են **դատախազության** մարմինները՝ օրենքով սահմանված կարգով: (Հոդված 43)	
67.	**«Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-177, ընդունված է՝ 21.12.2006, ուժի մեջ է՝ 03.02.2007* Կարգավորում է ռազմական ոստիկանության հասկացությունը, խնդիրները, գործունեության սկզբունքները, լիազորությունները և կառուցվածքը, ռազմական ոստիկանության ծառայողի իրավական ու սոցիալական ապահովության պետական երաշխիքները, ինչպես նաև ռազմական ոստիկանության ֆինանսավորման, նյութատեխնիկական ապահովման և գործունեության վերահսկման կարգը:	1. Արգելվում է հատուկ միջոցների կիրառումը հղիության նկատելի նշաններ ունեցող կանանց, անչափահասների նկատմամբ, եթե նրանց տարիքն ակնհայտ է կամ հայտնի է ռազմական ոստիկանության ծառայողին, բացառությամբ նշված անձանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, ռազմական ոստիկանության ծառայողի կամ այլ անձի կյանքին և առողջությանը, պահպանվող օբյեկտի կամ գույքի անվտանգությանն սպառնացող զինված կամ խմբակային այլ հարձակումը կանխելու դեպքերի: (Հոդված 14) 2. Արգելվում է զենք կիրառել մարդկանց կուտակումների վայրերում, երբ կարող են վտանգի ենթարկվել կողմնակի անձինք, հղիության նկատելի նշաններ ունեցող կանանց, անչափահասների նկատմամբ, եթե նրանց տարիքն ակնհայտ է կամ հայտնի է ռազմական ոստիկանության ծառայողին, բացառությամբ նշված անձանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, ռազմական ոստիկանության ծառայողի կամ այլ անձի կյանքին և առողջությանը, պահպանվող օբյեկտի կամ գույքի անվտանգությանն սպառնացող զինված կամ խմբակային այլ հարձակումը կանխելու դեպքերի: (Հոդված 15)	Ռազմական ոստիկանության գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում է լիազոր մարմինը՝ վերադասության կարգով, իսկ հետաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը՝ **ՀՀ դատախազությունը**՝ օրենքով սահմանված կարգով: (Հոդված 21)	• ՀՀ պաշտպանության նախարարություն • Ռազմական ոստիկանություն
68.	**«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-6-Ն, ընդունված է՝ 09.02.2012, ուժի մեջ է՝ 01.01.2013* Սահմանում է մասնավոր պահնորդական գործունեության իրավական հիմքերը, սկզբունքները, խնդիրները, պետական և այլ մարմինների հետ համագործակցության կարգը, կարգավորում է այդ գործունեության իրականացման ընթացքում ծագող	1. Արգելվում է հատուկ միջոցների (Հոդված 20) և հրազենի (Հոդված 21) գործադրումը հղիության նկատելի նշաններ ունեցող կանանց, անչափահասների նկատմամբ, եթե նրանց տարիքն ակնհայտ է կամ հայտնի է պահնորդին (թիկնապահին), բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, պահնորդի (թիկնապահի) կամ պահպանվող այլ անձի կյանքին կամ առողջությանը, պահպանվող օբյեկտի անվտանգությանը սպառնացող զինված կամ խմբակային այլ հարձակումը կանխելու դեպքերի:	Մասնավոր պահնորդական կազմակերպությունների՝ օրենքով նախատեսված գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնում է ոստիկանությունը: Պետական վերահսկողություն իրականացնելիս ոստիկանությունն իրավունք ունի մասնավոր պահնորդական կազմակերպությունում, ինչպես նաև պահնորդական ծառայություններ մատուցելու վայրում (պատվիրատուների համաձայնությամբ) իրականացնելու ստուգումներ: (Հոդված 30)	•

	հարաբերությունները:			
69.	**«ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-99, ընդունված է՝ 03.12.1996, ուժի մեջ է՝ 07.01.1997* Սահմանում է զինված ուժերի զինծառայողների ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները, նրանց փոխհարաբերությունները, գնդի և նրա ստորաբաժանումների հիմնական պաշտոնատար անձանց պարտականությունները, ինչպես նաև ներքին կարգուկանոնը:	1. Արգելվում է զենք գործադրել կանանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք կատարում են զինված կամ խմբային հարձակում, ցույց են տալիս զինծառայողի և այլ քաղաքացիների կյանքին սպառնացող զինված դիմադրություն, եթե այլ եղանակով ու միջոցներով հնարավոր չէ կասեցնել այդ հարձակումը: (Հոդված 12) 2. Զինծառայողները պարտավոր են հատուկ ուշադրություն ցուցաբերել կանանց և երեխաների նկատմամբ, ինչպես նաև նրանց օգնություն ցույց տալ դժբախտ պատահարների դեպքում, հրդեհների և տարերային աղետների ժամանակ: (Հոդված 68)		• ՀՀ պաշտպանության նախարարություն • ՀՀ ռազմական ոստիկանություն • Ռազմական դատախազություն • Դատարաններ
70.	**«Ոստիկանության զորքերի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-163, ընդունված է՝ 17.11.1997, ուժի մեջ է՝ 04.01.1998* Սահմանում է ՀՀ ոստիկանության զորքերի հասկացությունը, խնդիրները, գործունեության իրավական հիմքերն ու սկզբունքները, ոստիկանության զորքերի զինծառայողների պարտականությունները և իրավունքները, ոստիկանության զորքերի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավական և սոցիալական ապահովության պետական երաշխիքները, ինչպես նաև ոստիկանության զորքերի ֆինանսավորման և նյութատեխնիկական ապահովման կարգը	1. Արգելվում է հատուկ միջոցները գործադրել հղիության նկատելի նշաններով կանանց, անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին ու առողջությանն սպառնացող խմբակային հարձակման դեպքերի), դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների տարածքներում (բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ միջոցները գործադրվում են դրանց լիազոր ներկայացուցիչների խնդրանքով), իսկ մարտավարատեխնիկական բնութագրերով պայթյունավտանգ հատուկ միջոցները՝ այն շենքերում (շինություններում), որտեղ արտադրվում կամ պահվում են դյուրավառ կամ պայթուցիկ նյութեր: (Հոդված 18) 2. Արգելվում է հրազենի գործադրումը հղիության նկատելի նշաններով կանանց, անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող խմբակային հարձակման դեպքերի), ինչպես նաև մարդկանց զգալի կուտակումների ժամանակ, երբ հրազենի գործադրումից կարող են տուժել այլ անձինք: (Հոդված 19)		• ՀՀ Ոստիկանություն
71.	**«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-407-Ն, ընդունված է՝ 03.07.2002, ուժի մեջ է՝ 12.11.2002* Կարգավորում է ՀՀ հարկային ծառայության, որպես պետական ծառայության հատուկ տեսակ, կազմակերպման և իրականացման, հարկային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց իրավական կարգավիճակի, հարկային ծառայության առանձնահատկությունների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:	1. Հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հարկային ծառայողները, ատեստավորման ենթակա չեն, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել: Հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հարկային ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո ոչ ուշ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ավելի վաղ ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել: (Հոդված 20) 2. Հղիության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ հատուկ միջոցներ չեն կիրառվում, բացառությամբ նշված անձանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, խմբակային կամ այլ հարձակումների, մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր գործողությունների դեպքերի: (Հոդված 32) 3. Արգելվում է զենքի գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և հարկային ծառայողի կյանքին և առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի: (Հոդված 33) 4. Ծառայության ընթացքում կամ ազատվելուց հետո հարկային ծառայողի մահվան դեպքում, եթե դա առաջացել է ծառայողական գործունեության կապակցությամբ նրան վնասվածքներ պատճառելու հետևանքով, հարկային ծառայողի խնամքի տակ գտնվող ընտանիքի անչափահաս անդամներին ամեն ամիս վճարվում է փոխհատուցում՝ մահացածի ամսական միջին վաստակից նրանց բաժին ընկնող մասի և կերակրողին կորցնելու համար նշանակված կենսաթոշակի չափերի միջև տարբերության չափով: Ամսական միջին վաստակից մահացածին բաժին ընկնող մասը որոշելու համար մահացածի ամսական միջին վաստակը բաժանվում է նրա խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամների, այդ թվում՝ աշխատունակների թվի վրա: (Հոդված 37)		• Հարկային մարմին • Հարկային ծառայության մարմնի

72.	**«Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-402-Ն, ընդունված է՝ 03.07.2002, ուժի մեջ է՝ 08.10.2002* Կարգավորում է ՀՀ մաքսային ծառայության, որպես պետական ծառայության հատուկ տեսակ, կազմակերպման և դրա իրականացման, մաքսային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց իրավական կարգավիճակի, մաքսային ծառայության առանձնահատկությունների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:	1. Հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող մաքսային ծառայողները, ատեստավորման ենթակա չեն, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել: Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ մաքսային ծառայողները ենթակա են ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, բացառությամբ հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող մաքսային ծառայողների: Հղիության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող մաքսային ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո՝ 2 ամիս անց, սակայն ոչ ուշ, քան արձակուրդից վերադառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, եթե վերջիններս ավելի վաղ ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել: (Հոդված 15) 2. Հաստիքների կրճատման կամ մաքսային մարմնի լուծարման, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր աշխատանքի չներկայանալու հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատվել չեն կարող հղի և մինչև 3 տարեկան երեխա խնամող մաքսային ծառայողները: (Հոդված 48) 3. Հղիության ակնհայտ նշաններով անձանց, անչափահասների նկատմամբ հատուկ միջոցներ չեն կիրառվում, բացառությամբ նշված անձանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, խմբակային կամ այլ հարձակումների, մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր գործողությունների դեպքերի: (Հոդված 28) 4. Արգելվում է զենքի գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և մաքսային ծառայողի կյանքին և առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի: (Հոդված 29)		• Մաքսային մարմին
73.	**«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-160-Ն, ընդունված է՝ 08.07.2005, ուժի մեջ է՝ 27.12.2005* Կարգավորում է քրեակատարողական գործառույթներ իրականացնող պետական լիազոր մարմնում քրեակատարողական ծառայության հիմնական սկզբունքները, քրեակատարողական ծառայության մարմինների և հիմնարկների համակարգը, դրանց գործունեության կազմակերպման հիմունքները, ծառայություն անցնելու կարգը և պայմանները, պաշտոնների ու կոչումների դասակարգումը, ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները, ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:	1. Արգելվում է քաղաքացիական զենք կամ հատուկ միջոցներ (Հոդված 49), ինչպես նաև մարտական զենք (Հոդված 50) գործադրել հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և քրեակատարողական ծառայողի կյանքին կամ առողջությանը սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի: 2. Քրեակատարողական ծառայությունում ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, այդ թվում՝ կին ծառայողի նախածննդյան կամ հետծննդյան, ինչպես նաև ծառայողի՝ երեխային խնամելու արձակուրդի դեպքերում նրա պաշտոնը կարող է զբաղեցվել՝ քրեակատարողական ծառայության այլ փոխարինող ծառայողին տվյալ պաշտոնին գործուղելով կամ քրեակատարողական ծառայությունում կադրերի ռեզերվում գտնվող ծառայողին կամ քրեակատարողական ծառայությունում ծառայության անցնող անձին տվյալ պաշտոնին ժամանակավոր նշանակելով: (Հոդված 17) 3. Հղի կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող քրեակատարողական (Հոդված 19) և քաղաքացիական (Հոդված 51.14) ծառայողները, ատեստավորման ենթակա չեն, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել: Հղիության կամ երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող քրեակատարողական և քաղաքացիական ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո՝ ոչ շուտ, քան 1 տարի անց, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար: 4. Ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված նախածննդյան ու հետծննդյան և երեխային խնամելու համար արձակուրդը, քրեակատարողական ծառայողը քրեակատարողական ազատվում է ծառայությունից: (Հոդված 39) 5. Քաղաքացիական հատուկ ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի, մինչև քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքով հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը, քաղաքացիական ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, ինչպես նաև մի շարք այլ դեպքերում այդ պաշտոնն զբաղեցվում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից, բացառությամբ մասնավորապես հղիության, ծննդաբերության և երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդի: (Հոդված 51.13) 6. Հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև 3 տարեկան երեխա խնամող քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ քաղաքացիական հատուկ ծառայության ավելի բարձր դասային աստիճան ունեցող քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության դեպքում՝ քաղաքացիական հատուկ ծառայության առավել երկար ստաժ ունեցող քաղաքացիական ծառայողին: (Հոդված 51.27)		• ՀՀ արդարադատության նախարարություն • ՀՀ ԱՆ քրեակատարողական մարմին
74.	**«Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-60-Ն, ընդունված է՝ 31.03.2004, ուժի մեջ է՝ 15.05.2004* Կարգավորում է ՀՀ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների համալրման, նախապատրաստման,	1. Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներին արգելվում է զենք կիրառել հղիության ակնհայտ նշաններով կանանց, անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից քաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման և զինված դիմադրության դեպքերի): (Հոդված 11)		• Պաշտպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին՝ ՀՀ ՊՆ

	մարտական կիրառման կարգը, իրավասությունը և կազմակերպական հիմքերն ու գործունեության սկզբունքները:			
75.	**«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-40-Ն, ընդունված է՝ 18.02.2004, ուժի մեջ է՝ 10.04.2004* Կարգավորում է դատական ակտերի հարկադիր կատարման գործառույթներ իրականացնող պետական լիազոր մարմնում ծառայության հիմնական սկզբունքները, ծառայության անցնելու կարգը և պայմանները, պաշտոնների ու կոչումների դասակարգումը, ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները, ծառայության հետ կապված այլ հարաբերություններ:	1. Հարկադիր կատարման ծառայությունում ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, այդ թվում՝ կին ծառայողի նախածննդյան կամ հետծննդյան, ինչպես նաև ծառայողի՝ երեխային խնամելու արձակուրդի դեպքերում նրա պաշտոնը կարող է զբաղեցվել՝ հարկադիր կատարման ծառայության այլ փոխարինող ծառայողին տվյալ պաշտոնին գործուղելով: (Հոդված 12) 2. Հղիության և ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հարկադիր կատարողները, ատեստավորման ենթակա չեն, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել: Հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հարկադիր կատարողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար: (Հոդված 13) 3. Կին հարկադիր կատարողին տրամադրվում է նաև հղիության և ծննդաբերության, իսկ հարկադիր կատարողին՝ երեխային խնամելու արձակուրդ: (Հոդված 32) 4. Ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ոչ ավելի, քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ երեխային խնամելու համար արձակուրդը հարկադիր կատարողը հարկադիր կատարման ծառայությունից ազատվում է: (Հոդված 38) 5. Արգելվում է հատուկ միջոցների գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և հարկադիր կատարողի կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի: (Հոդված 47) 6. Արգելվում է հրազենի գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և հարկադիր կատարողի կյանքին ու առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի: (Հոդված 48)		• ՀՀ արդարադատության նախարարություն • ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն
76.	**«Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-40-Ն, ընդունված է՝ 03.12.2003, ուժի մեջ է՝ 01.07.2004* Սահմանում է հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության կազմակերպման և իրականացման իրավական հիմքերը, սկզբունքները, պետական պահպանություն իրականացնող մարմնի լիազորությունները, գործունեության կարգն ու առանձնահատկությունները, կարգավորում է այդ ոլորտում ծագող հարաբերությունները:	1. Արգելվում է հատուկ միջոցների (Հոդված 21) և զենքի (Հոդված 22) գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և ծառայողի կյանքին և առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի: (Հոդված 21)		• ՀՀ պետական պահպանության ծառայություն • ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն
77.	**«Զենքի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-246, ընդունված է՝ 03.07.1998, ուժի մեջ է՝ 13.09.1998* Կարգավորում է ՀՀ տարածքում քաղաքացիական, ծառայողական, ինչպես նաև ձեռքի մարտական հրաձգային և մարտական սառը զենքի շրջանառության ժամանակ ծագող հարաբերությունները:	1. Արգելվում է հրազեն գործադրել կանանց, անչափահասների նկատմամբ, եթե վերջիններիս տարիքն ակնհայտ է կամ հայտնի է հրազեն գործադրողին, բացառությամբ նրանց կողմից զինված կամ խմբակային հարձակման կամ զինված դիմադրության դեպքերի, ինչպես նաև մարդկանց զգալի կուտակումների ժամանակ, երբ հրազենի գործադրումից կարող են տուժել այլ անձինք:		• ՀՀ ոստիկանություն

78.	**«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-411-Ն, ընդունված է՝ 24.09.2002, ուժի մեջ է՝ 31.10.2002* Սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական, կազմակերպական հիմքերը, նպատակները, սկզբունքները և ձևերը: *Նաև՝* **«ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 983-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *ՀՕ-46-Ն, ընդունված է՝ 25.01.2005, ուժի մեջ է՝ 12.02.2005* «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին է ճանաչում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: (Կետ 1) *Նաև՝* **«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրականացնող պետական մասնագիտացված կազմակերպություններ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *ՀՕ-430-Ա, ընդունված է՝ 12.04.2007, ուժի մեջ է՝ 20.04.2007* Սահմանում է, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրականացնող պետական մասնագիտացված կազմակերպություններն են «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ը և «Խարբերդի	1. **Առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում**, մասնավորապես, 18 տարին չլրացած այն երեխան, որի ծնողները (կամ միակ ծնողը) մահացել են, զրկվել են ծնողական իրավունքներից, ճանաչվել են անգործունակ, խուսափում են երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են մահացած, անհայտ բացակայող կամ անհայտ են: (Հոդված 2) 2. Սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության **նպատակները**: (Հոդված 4) 3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության հիմնական **սկզբունքներն** են. մարդասիրությունը, սոցիալական արդարությունը, երեխաների խնամքն ու դաստիարակությունն ընտանիքում կազմակերպելու առաջնահերթությունը և առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ դաստիարակող և խնամող ընտանիքներին աջակցելը, դաստիարակչական, բուժական և բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) գտնվող կամ բնակվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչների սահմանումը և պահպանումը, սոցիալական խնամառության բացառումը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ զբաղվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու հասարակական կազմակերպությունների համագործակցությունը: (Հոդված 5) 4. ՀՀ կառավարությունը սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ **պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները**, այդ թվում՝ հանրակրթական, մրցութային կարգով միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթություն, անվճար բժշկական օգնություն և սպասարկում, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սննդի ապահովում՝ սննդի նվազագույն չափորոշիչներին համապատասխան, երեխաների առողջության վերականգնման և հանգստի կազմակերպում, 16 տարին լրացած առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար մասնագիտական կողմնորոշում, գործունեության բնագավառի ընտրություն, աշխատանքի տեղավորում և պաշտպանություն, սոցիալական աջակցության, բնակարանի իրավունքի ապահովում, անվճար իրավաբանական օգնության ցուցաբերում: 5. Հիմնական ընդհանուր կամ միջնակարգ (լրիվ) ընդհանուր **կրթություն** ստացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների նախապատրաստական դասընթացներ ընդունվում և սովորում են անվճար: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներն ընդհանուր մրցույթով պետական միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար համակարգ ընդունվում են վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում: Պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ ուսումնական հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով: (Հոդված 7) 6. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրամադրվում է **անվճար բժշկական օգնություն** պետական պատվերի շրջանակներում: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին կարող են տրամադրվել սպորտ-առողջարարական ճամբարների, հանգստյան տների, համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում՝ առողջարանային բուժման ուղեգրեր՝ պետական և համայնքային բյուջեներից այդ նպատակով նախատեսված միջոցների և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին: (Հոդված 8) 7. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները բուժական, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվելու կամ բնակվելու, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու, հանրապետության զինված ուժերում ծառայելու կամ ազատազրկման վայրերում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում պահպանում են իրենց բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իրավունքը: 18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, որոնք չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը, իրավունք ունեն ստանալու նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն: (Հոդված 9) 8. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ կազմակերպական-իրավական ձևից, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար կարող են ստեղծվել մասնագիտացված աշխատատեղեր: Կազմակերպության լուծարման դեպքում գործատուները պարտավոր են կազմակերպել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասնագիտական ուսուցումը և այլ գործատուների մոտ նրանց աշխատանքի տեղավորումը: (Հոդված 10) 9. Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները հատուկ հոգածության և պաշտպանության իրավունք ունեն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որոնք պետք է նպաստեն երեխաների լիարժեք կենսագործունեությանը և զարգացմանը, ինչպես նաև ապահովեն նրանց մասնակցությունը հասարակական կյանքին: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքները և օրինական շահերը ոտնահարելու դեպքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին հասցված վնասի փոխհատուցումը դատարանի վճռով գանձվում է մեղավոր անձանցից՝ հաշվի առնելով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական ադապտացման և սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացումը: (Հոդված 11)	Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների **հաշվառումն** իրականացնում են խնամակալության և հոգաբարձության մարմինները: (Հոդված 2) Բուժական, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվող կամ բնակվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները կամ նրանց օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն պահանջելու **պարբերաբար ուսումնասիրել խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին՝ երեխաներին տրամադրվող ծառայությունների համապատասխանությունը**: Տվյալ ուսումնասիրությունները կազմակերպում են ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը և տեղական ինքնակառավարման մարմինները՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կամ նրանց օրինական ներկայացուցիչների դիմումների հիման վրա: Նշված կազմակերպություններում պաշտոնատար անձինք պարտավոր են վերացնել բացահայտված խախտումները և տեղեկացնել այդ մասին լիազորված պետական կառավարման մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին: Պաշտոնատար անձինք նշված խախտումները չվերացնելու դեպքում ենթարկվում են պատասխանատվության՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով:	ՀՀ ԱՍՀՆ • Տեղական ինքնակառավարման մարմիններ • Խնամակալության և հոգաբարձության մարմիններ • Բնակելի տարածություն չունեցող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակտարածությունը տրվում է արտահերթ՝ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից: (Հոդված 9) • **Զբաղվածության պետական ծառայությունն** իրեն դիմած 16 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար իրականացնում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ և, հաշվի առնելով նրանց աշխատանքային ունակություններն ու առողջական վիճակը, աջակցում է նրանց աշխատանքի տեղավորմանը: (Հոդված 10) • Տարածքային կառավարման պետական մարմինը, Երևանի քաղաքապետը, սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնները, դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, կազմում են երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին համապատասխան՝ երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր: (Հոդված 11) ՀՀ ՏԿԱԻՆ • Դաստիարակները, մանկավարժները, բժիշկները, սոցիալական աշխատողները, հոգեբանները և մյուս մասնագետները, որոնք ՀՀ օրենսդրության համաձայն պատասխանատվություն են կրում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի, դաստիարակության, կրթության, առողջության պահպանման, սոցիալական պաշտպանության ապահովման համար, տարածքային կառավարման պետական մարմնի, խնամակալության և հոգաբարձության ու այլ իրավասու մարմինների հանձնարարությամբ կարող են մասնակցել համապատասխան մարմինների կողմից իրականացվող երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցառումներին, ինչպես նաև

	մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը: (Կետ 1)			հանդես գալ դատարանում: Հասարակական, բարեգործական և միջազգային կազմակերպությունները կարող են աջակցել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին՝ իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցում: (Հոդված 12)
79.	**«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-49-Ն, ընդունված է՝ 18.05.2015, ուժի մեջ է՝ 01.07.2015* Կարգավորում է պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները:	1. Տվյալների սուբյեկտի անգործունակության կամ սահմանափակ գործունակության կամ մինչև 16 տարեկան անչափահաս լինելու դեպքում նրա անձնական տվյալները մշակելու համար համաձայնություն է տալիս տվյալների սուբյեկտի օրինական ներկայացուցիչը: (Հոդված 9) 2. Ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին 12 ամսվա ընթացքում ավելի քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ երեխային խնամելու համար արձակուրդը, անձնական տվյալների պաշտպանության լիազորված մարմնի ղեկավարը պաշտոնից ազատվում է (Հոդված 25)	Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը ստուգում է իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա անձնական տվյալների մշակման համապատասխանությունը օրենքի պահանջներին, պահանջների խախտման դեպքում կիրառում է օրենքով սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ, պահանջում է արգելափակել, կասեցնել կամ դադարեցնել օրենքի պահանջները խախտող անձնական տվյալների մշակումը, մշակողից պահանջում է անձնական տվյալների ուղղում, փոփոխում, ուղեփակում կամ ոչնչացում, անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ մշակողի ծանուցման ուսումնասիրության արդյունքում ամբողջությամբ կամ մասամբ արգելում է անձնական տվյալների մշակումը, վարում է անձնական տվյալներ մշակողների ռեեստր, իրավաբանական անձանց անձնական տվյալներ մշակող էլեկտրոնային համակարգերը ճանաչում է բավարար պաշտպանության մակարդակ ունեցող և դրանք ներառում է ռեեստրում, ստուգում է տվյալներ մշակելու համար օգտագործվող սարքերը և փաստաթղթերը, այդ թվում՝ առկա տվյալները և համակարգչային ծրագրերը, օրենքով նախատեսված դեպքերում դիմում է դատարան, պահպանում է իր գործունեության ընթացքում իրեն վստահված կամ հայտնի դարձած անձնական տվյալների գաղտնիությունը, ապահովում է տվյալների սուբյեկտի իրավունքների պաշտպանությունը, քննում է անձնական տվյալների մշակմանը վերաբերող հարցերով ֆիզիկական անձանց դիմումները և իր լիազորությունների սահմաններում ընդունում որոշումներ, տարեկան մեկ անգամ ներկայացնում է հրապարակային հաշվետվություն՝ անձնական տվյալների պաշտպանության բնագավառում առկա իրավիճակի և նախորդ տարվա գործունեության վերաբերյալ, կատարում է հետազոտություններ և մշակողների դիմումների կամ լուսաբանումների հիման վրա տալիս տվյալներ մշակելու վերաբերյալ խորհրդատվություն կամ տեղեկացնում է անձնական տվյալներ մշակելու վերաբերյալ լավագույն փորձի	• Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին՝ ՀՀ ԱՆ Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն • Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին կից կարող է հասարակական հիմունքներով գործել խորհրդատվական մարմին, որի ձևավորման ու գործունեության կարգը սահմանվում է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ղեկավարի հրամանով: (Հոդված 24)

			մասին, իրավապահ մարմիններին հաղորդում է ներկայացնում իր գործունեության ընթացքում քրեահիրավական բնույթի խախտումների վերաբերյալ կասկածներ ի հայտ գալու դեպքում: (Հոդված 24)	
80.	**«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-82-Ն, ընդունված է՝ 11.04.2005, ուժի մեջ է՝ 28.05.2005* Կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները և սահմանում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների և բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:	1. Բնապահպանական պետական տեսուչը ֆիզիկական հարկադրանք կիրառելիս իրավունք ունի գործադրելու ձեռնաշղթաներ: Ձեռնաշղթաներ կիրառելն արգելվում է հղիության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ վերջիններիս կողմից զինված դիմադրություն ցույց տալու և բնապահպանական պետական տեսուչի կյանքին վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի: (Հոդված 18) 2. Արգելվում է զենքի գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և բնապահպանական պետական տեսուչի կյանքին վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի: (Հոդված 19)		• Բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին՝ ՀՀ բնապահպանության նախարարություն
81.	**«Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-188, ընդունված է՝ 17.12.1997, ուժի մեջ է՝ 10.02.1998* Կարգավորում է պետական գույքի, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցման՝ սեփականաշնորհման (մասնավորեցում) հարաբերությունները:	1. Մասնավորեցման բնագավառում անչափահասների իրավունքներն իրականացնում են նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները: (Հոդված 7)		• ՀՀ կառավարություն • Մասնավորեցում իրականացնող պետական կառավարման լիազորված մարմին՝ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն)
82.	**«Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-267, ընդունված է՝ 02.12.1998, ուժի մեջ է՝ 01.01.1999* Սահմանում է ՀՀ-ում Հայրենական մեծ պատերազմի վետերանների սոցիալական պաշտպանության կազմակերպչական, տնտեսական և իրավական հիմքերը՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով նրանց ակտիվ գործունեությունն ու	1. Ֆաշիստական համակենտրոնացման ճամբարների նախկին անչափահաս գերիները Հայրենական մեծ պատերազմի վետերաններ են: (Հոդված 1)		• ՀՀ ԱՍՀՆ

	բարեկեցությունն ապահովելու համար:			
83.	**«Գույքահարկի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-491-Ն, ընդունված է՝ 26.12.2002, ուժի մեջ է՝ 01.01.2003* Կարգավորում է ՀՀ-ում գույքահարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է ՀՀ-ում գույքահարկ վճարողների շրջանակը, գույքահարկով հարկվող օբյեկտն ու հարկման բազան, գույքահարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը, օրենքի խախտման համար պատասխանատվությունը:	1. Ծառայության ընթացքում գույքահարկից ազատվում են ՀՀ միջազգային պայմանագրերով դաշնակից երկրների, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքահարկով հարկվող սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքահարկով հարկվող օբյեկտի մասով, եթե մյուս համասեփականատերերն անչափահաս են: (Հոդված 15)		• Տեղական ինքնակառավարման մարմիններ • Գույքահարկ վճարողներին հաշվառող մարմին • Հարկային մարմիններ
84.	**«Ազգային Ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք** *ՀՕ-308, ընդունված է՝ 20.02.2002, ուժի մեջ է՝ 12.04.2002* Կարգավորում է ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորի իրավունքներն ու պարտականությունները, էթիկայի կանոններն ու շահերի բախումը, աշխատանքային գործունեությունն ու երաշխիքները, խմբակցությունների և պատգամավորական խմբերի գործունեությունը, ԱԺ Նախագահի և նրա տեղակալների ընտրությունն ու իրավասությունները, ԱԺ մշտական, ժամանակավոր և էթիկայի հանձնաժողովների կազմավորումը, գործունեությունն ու իրավասությունները, ԱԺ նստաշրջանների ու նիստերի գումարումը, քննարկվող հարցերի ներկայացումը և քննարկումը, օրենքի նախագծի քննարկման ընթացակարգը, պետական բյուջեի և դրա կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկումն ու հաստատումը, Ազգային ժողովին, Հանրապետության Նախագահին վերապահված, ինչպես նաև կառավարությանն առնչվող հարցերի քննարկման ընթացակարգերը, ԱԺ աշխատանքի կազմակերպումը:	1. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամի թափուր տեղի համար թեկնածուների մրցույթի մասնակիցների հետ հարցազրույց անցկացվում է հեռահաղորդակցության, լրագրության և արտահայտվելու ազատության կիրառման, ինչպես նաև կրթության, մշակույթի բնագավառների, գովազդի իրականացման, սոցիալական խմբերին կամ **անչափահասներին ուղղված հաղորդումներին**, դրանց հիմնախնդիրներին ուղղված հեռուստատեսային ծրագրերի ստեղծման, լուսաբանման ուղղությամբ: (Հոդված 97)		• ՀՀ Ազգային Ժողով
85.	**«Մարդահամարի մասին» ՀՀ**	1. Մարդահամարն անցկացվում է լիազորված մարմնի ներգրաված և հրահանգավորած աշխատողների՝ հաշվարարների կողմից բնակելի և այլ շինություններ շրջագայելու և դրանցում բնակվող յուրաքանչյուր չափահաս անձի (կամ ընտանիքի որևէ չափահաս	Մարդահամարի վերջնական արդյունքներն օգտագործվում կամ	• Վիճակագրության պետական լիազորված մարմին՝ Ազգային

	օրենք *ՀՕ-13, ընդունված է՝ 12.10.1999, ուժի մեջ է՝ 13.11.1999* Կարգավորում է մարդահամարը նախապատրաստելու, անցկացնելու, սկզբնական (անձնական) տվյալները կուտակելու և պահպանելու, ինչպես նաև ամփոփ տվյալները տարածելու ընթացքում ծագող իրավահարաբերությունները:	անդամի) անմիջական հարցման ու հարցերի պատասխանները մարդահամարի փաստաթղթերում լրացնելու միջոցով: Անչափահասների վերաբերյալ տեղեկությունները հաղորդում են ընտանիքի չափահաս անդամները: (Հոդված 9)	հրապարակվում են միայն ամփոփված և խմբավորված տեսքով: Մարդահամարի սկզբնական (անձնական) տվյալները գաղտնի են և հրապարակման ենթակա չեն: Մարդահամարի բոլոր փաստաթղթերը պահպանվում են լիազորված մարմնի սահմանած կարգով: (Հոդված 12)	վիճակագրության ծառայություն
86.	**«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-41-Ն, ընդունված է՝ 18.02.2004, ուժի մեջ է՝ 31.12.2004* Սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:	1. Ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձի մահվան դեպքում նրա առաջին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ երկրորդ կարգի ժառանգներին վճարվում է միանվագ հատուցում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից ոչ պակաս չափով: Եթե ֆիզիկական անձի մահն առաջացնում է կերակրողին կորցնելու հետևանքներ և վնասի հատուցում ստանալու իրավունք ունեցողն անչափահաս է և մինչև 18 տարեկան դառնալն ընդունվել և սովորում է միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում, ապա վնասի հատուցումն իրականացվում է մինչև համապատասխան հաստատությունում նրա ուսումնառության ավարտը (վճարվում է ամենամսյա հատուցում՝ մահացածի՝ մահվանից առաջ վերջին մեկ տարվա միջին ամսական աշխատավարձի 70 տոկոսի չափով): (Հոդված 106)		• Վարչական մարմիններ • Դատարան
87.	**«Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-135-Ն, ընդունված է՝ 10.06.2008, ուժի մեջ է՝ 04.08.2008* Կարգավորում է ՀՀ-ում գինեգործական արտադրանք արտադրելու նպատակով խաղողի մշակության, իրացման և խաղողի հումքով ոգելից խմիչքների արտադրության, վերամշակման, մակնշման և շուկայահանման ընթացքում ծագող հարաբերությունները:	1. ՀՀ-ում արտադրված գինեգործական արտադրանքի մակնշման ժամանակ տարայի վրա մասնավորապես զետեղվում են հետևյալ պարտադիր տեղեկությունները և նշանները՝ անչափահասների, հղի կանանց համար այդ արտադրանքի օգտագործման սահմանափակումների մասին ցուցումներ: (Հոդված 46) 2. ՀՀ ներկրված գինեգործական արտադրանքի մակնշման պարտադիր տեղեկությունները և նշաններ են անչափահասների, հղի կանանց համար այդ արտադրանքի օգտագործման սահմանափակումների մասին ցուցումները: (Հոդված 47)	Խաղողի հումքով ոգելից խմիչքների համապատասխանության հավաստումը և պետական վերահսկողությունը իրականացվում է «Համապատասխանության գնահատման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքներով սահմանված կարգերին համապատասխան: (Հոդված 56)	• Լիազորած պետական մարմին
88.	**«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-268, ընդունված է՝ 04.12.2001, ուժի մեջ է՝ 27.12.2001* Կարգավորում է ՀՀ-ում այլ անձանց հետ միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու մարդու՝ սահմանադրորեն ամրագրված իրավունքն իրականացնելիս ծագող իրավահարաբերությունները՝	1. Մինչև 14 տարեկան անչափահասը կազմակերպությանը կարող է անդամագրվել իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: 14-ից մինչև 18 տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, կազմակերպությանը կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ: Կազմակերպության կանոնադրությամբ կարող են նախատեսվել անչափահաս անդամների իրավունքների ու պարտականությունների առանձնահատկությունները: (Հոդված 6) 2. Եթե կազմակերպություն հիմնադրել ցանկացող անձը մինչև 14 տարեկան անչափահաս է, ապա պայմանագիրը՝ որով սահմանվում են մինչև կազմակերպության պետական գրանցումը հիմնադիրների համատեղ գործունեության կարգը, նրանց գույքը կազմակերպությանը հանձնելու պայմանները նրա անունից կնքում է նրա օրինական ներկայացուցիչը: 14-ից մինչև 18 տարեկան անչափահասը, եթե լրիվ գործունակ չի ճանաչված, պայմանագիրը կնքում է իր օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ: (Հոդված 9)		• ՀՀ արդարադատության նախարարություն • ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն

	կապված հասարակական կազմակերպությունների ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման հետ:			
89.	**«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-233-Ն, ընդունված է՝ 05.12.2006, ուժի մեջ է՝ 06.01.2007* Կարգավորում է ՀՀ-ում ավտոտրանսպորտային գործունեության կազմակերպման և իրականացման իրավական ու տնտեսական հարաբերությունները, այդ գործընթացին մասնակից իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների շահագործման, ուղևորների, ուղեբեռի և բեռների փոխադրումների, սպասարկման ծառայությունների և փոխադրումների անվտանգության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև նրանց իրավունքներն ու պարտականությունները:	1. Կանոնավոր ավտոբուսային փոխադրումներից օգտվող ուղևորն իրավունք ունի իր հետ անվճար տեղափոխելու մինչև 7 տարեկան մեկ երեխա, եթե վերջինս առանձին նստատեղ չի զբաղեցնում: Առանձին նստատեղ զբաղեցնելու դեպքում, ինչպես նաև մինչև 7 տարեկան մի քանի երեխաների հետ երթևեկելիս յուրաքանչյուր երեխայի համար վճարվում է սահմանված փոխադրավարձի 50 տոկոսը: Միջքաղաքային հաղորդակցության ավտոբուսներով երթևեկելիս ուղետոմսի 50 տոկոս արժեքով ուղետոմս է ձեռք բերվում 7-ից 12 տարեկան երեխաների համար: 12 տարեկանից բարձր տարիքի երեխաների երթևեկության համար վճարը գանձվում է սահմանված փոխադրավարձի չափով: (Հոդված 23) 2. Երեխաների և դպրոցականների զբոսաշրջային և զանգվածային փոխադրումների կազմակերպումը 3 և ավելի ավտոտրանսպորտային միջոցներով իրականացվում է պետավտոտեսչության մարմինների տեղեկացմամբ, ավտոշարասյան հատուկ ավտոտրանսպորտային միջոցի ուղեկցմամբ, փոխադրումն ուղեկցող ավտոտրանսպորտային միջոցներում չափահաս անձանց (15 երեխային մեկ ուղեկցող անձի հաշվարկով) ուղեկցմամբ և հետևյալ պայմաններով. ավտոբուսների շարժումը պետք է իրականացվի օրվա լուսավոր ժամերին, միանգամյա՝ մինչև երկու ավտոտրանսպորտային միջոցով փոխադրումների իրականացման դեպքում՝ 60 կմ/ժ-ը չգերազանցող արագությամբ և մոտակա լուսարձակների միացմամբ, զանգվածային փոխադրումների իրականացման ընթացքում՝ ավտոշարասյան ուղեկցմամբ՝ 40 կմ/ժ-ը չգերազանցող արագությամբ: Զբոսաշրջային և հատուկ փոխադրումներ իրականացնելու դեպքում խմբերի ղեկավարների ընտրությունը, ավտոբուսից օգտվելու և ուղևորության ընթացքում վարքագծի մասին հրահանգավորումն իրականացնում է պատվիրատուն: Երեխաների զբոսաշրջային և հատուկ փոխադրումներ իրականացնելու դեպքում ավտոբուսի լուսամուտները շարժման ընթացքում պետք է լինեն փակ, ուղեկցողները գտնվեն յուրաքանչյուր դռան մոտ: (Հոդված 27) 3. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնելու դեպքում ավտովարորդները, բացի որակավորման ընդհանուր պահանջներից, պետք է ունենան, մասնավորապես՝ միջքաղաքային, միջպետական և լեռնային երթուղիներով մինչև 16 տարեկան երեխաների խմբի փոխադրումների համար՝ վերջին երեք տարվա նշված երթուղիներով փոխադրումների իրականացման անընդմեջ աշխատանքային փորձ: (Հոդված 28)		• ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն • ՀՀ ոստիկանություն • ՀՀ մարզպետարաններ • ՏԻՄ-եր
90.	**«Սնանկության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-51-Ն, ընդունված է՝ 25.12.2006, ուժի մեջ է՝ 10.02.2007* Կարգավորում է սնանկության գործերի վարումը:	1. Սահմանում է պարտատերերի չապահովված պահանջների, այդ թվում՝ պարտապան քաղաքացու նկատմամբ ալիմենտների գծով պահանջների (երեխա, անաշխատունակ ծնող, անաշխատունակ ամուսին) բավարարման հերթականությունը: Երեխայի օգտին ալիմենտը հաշվարկվում է մինչև չափահաս դառնալը: Վնասի, ալիմենտի հատուցման համար կապիտալացված գումարը վճարվում է պարբերական վճարումների ձևով: (Հոդված 82) 2. Ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ալիմենտների բռնագանձման պահանջներով պարտատերերն իրենց պահանջները կարող են ներկայացնել դատարան: Նշված պահանջները չներկայացվելու դեպքում ֆիզիկական անձի սնանկության գործի ավարտից հետո պահպանում են իրենց ուժը: (Հոդված 92)		• Իրավասու դատարան • Սնանկության ժամանակավոր կառավարիչներ • Սնանկության կառավարիչներ • ՀՀ արդարադատության նախարարություն • Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա ինքնակարգավորվող կազմակերպություն
91.	**«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-97, ընդունված է՝ 09.10.2000, ուժի մեջ է՝ 18.11.2000* Սահմանում է հեռուստառադիոընկերությունների (հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների) կարգավիճակը, կանոնակարգում է դրանց հիմնադրման, հեռուստաընկերությունների լիցենզավորման և ղեկավարման կարգը, իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, հեռուստառադիոընկերությունե	1. Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր **բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները**, բացառությամբ բաժանորդային հեռարձակման, կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ն: (Հոդված 22) Հեռարձակումը նշված ժամանակահատվածից դուրս, բացառությամբ բաժանորդային հեռարձակման՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 500-ապատիկի չափով: (Հոդված 60) 2. Հեռուստառադիոընկերությունների կողմից մանկապատանեկան հեռուստառադիոհաղորդումներում ծխախոտի կամ ծխախոտային արտադրության ապրանքատեսակների ուղղակի կամ անուղղակի օգտագործումը կամ ցուցադրումը առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 300-ապատիկի չափով: (Հոդված 60) 3. Հանրային հեռուստառադիոընկերությունը և ՀՀ-ում գործող այն մասնավոր հեռուստաընկերությունները, որոնք հեռարձակում են նաև մանկական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել **խուլ** հանրության համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը, օրվա եթերաժամում առնվազն մեկ մանկական հեռուստահաղորդում հեռարձակել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով (Հոդված 5.1):	Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը ստանում, գրանցում, ուսումնասիրում և հիմնավոր պատասխանում կամ եզրակացություն է տալիս ցանկացած հեռուստառադիոընկերության գործունեության վերաբերյալ բողոքներին, առաջարկություններին և հարցումներին, իրականացնում է հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկում, իր վերահսկողական գործառույթներն իրականացնելու նպատակով ուսումնասիրություններ և ստուգումներ է իրականացնում հեռուստառադիոընկերություններում	• Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով • Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով պետությունը ստեղծում է անկախ հանրային հեռուստառադիոընկերություն, որի գործունեությունն ապահովում է տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, **մանկապատանեկան,** գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն: (Հոդված 26) • Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռարձակում է

	րի ստեղծման ու գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:			իրականացնում, մասնավորապես, մեկ մասնավոր հեռուստաընկերություն՝ մանկապատանեկան, գիտակրթական, դաստիարակչական, ճանաչողական ուղղվածության: (Հոդված 47)
92.	**«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-211-Ն, ընդունված է՝ 27.11.2008, ուժի մեջ է՝ 24.01.2009* Կարգավորում է փախստականի ճանաչման, ապաստանի տրամադրման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև ապահովում է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի, դրա 1967 թվականի Արձանագրության կիրառումը և ճանաչում է բոլոր օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ ՀՀ տարածքում և ՀՀ պետական սահմանի անցման կետերում ապաստան հայցելու, ինչպես նաև ապաստան ստանալու իրավունքը, եթե նրանք բավարարում են ապաստանի տրամադրման համար օրենքով սահմանված անհրաժեշտ պահանջները:	1. ՀՀ-ում ապաստան ստացած փախստականի ամուսինը, մինչև 18 տարեկան զավակը և խնամքի տակ գտնվող այլ անձը նույնպես համարվում են փախստական և ՀՀ-ում ապաստան ստացած, եթե նրանք ՀՀ-ում բնակվում են այդ փախստականի հետ համատեղ և չունեն փախստականի քաղաքացիությունից տարբերվող արդյունավետ պաշտպանություն տրամադրող որևէ այլ երկրի քաղաքացիություն: Փախստական ճանաչված և ՀՀ-ում ապաստան ստացած երեխայի ծնողները, մինչև 18 տարեկան, ինչպես նաև 18-ից բարձր տարիքի անգործունակ հարազատ քույրերն ու եղբայրները նույնպես համարվում են փախստական, և նրանց ՀՀ-ում տրամադրվում է ապաստան, եթե նրանք ՀՀ-ում բնակվում են փախստականի կարգավիճակ ստացած երեխայի հետ համատեղ և չունեն այդ երեխայի քաղաքացիությունից տարբերվող արդյունավետ պաշտպանություն տրամադրող որևէ այլ պետության քաղաքացիություն: ՀՀ-ում ապաստան ստացած փախստականները իրավունք ունեն վերամիավորվելու իրենց ընտանիքի վերը նշված անդամներին ՀՀ տարածքում: Ընտանիքի անդամներից ՀՀ-ում առաջինը փախստական ճանաչված անձը, փախստականի ճանաչման դադարեցման կամ չեղյալ հայտարարելու կամ այդ փախստականին շնորհված ապաստանի դադարեցման դեպքում, նրա ընտանիքի անդամները, որոնք վերը նշվածի համաձայն ճանաչվել էին փախստական և ՀՀ-ում ստացել էին ապաստան, առաջին փախստական ճանաչվածի հետ դադարեցվում կամ չեղյալ են հայտարարվում նրանց՝ փախստականի ճանաչման և ապաստանի տրամադրման որոշումները: Սակայն նրանք չեն զրկվում դրանից անմիջապես հետո ապաստանի հայց ներկայացնելու հնարավորությունից՝ հիմնվելով իրենց անձնական պատճառների վրա: Ընդ որում, եթե նրանք ճանաչվում են փախստական և ապաստան են ստանում, ապա դրանք արդեն չեն կարող փոխանցվել ընտանիքի այն անդամներին, որոնք կորցրել են փախստականի ճանաչման իրավունքն ու տրամադրված ապաստանը՝ դադարեցման, զրկման կամ չեղյալ հայտարարելու միջոցով: (Հոդված 7) 2. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահասը, օրենքի իմաստով, 18 տարին չլրացած՝ ՀՀ տարածքում օրինական ներկայացուցիչ (ծնող, խնամակալ, հոգաբարձու) չունեցող ապաստան հայցող կամ փախստական երեխան է: Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահասի նկատմամբ կիրառվում են ապաստանի ընդհանուր ընթացակարգերը: Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահասներն ունեն ապաստան հայցողների կամ փախստականների համար սահմանված նույն իրավունքները:	ՀՀ ՏԿԱԻՆ Միգրացիոն պետական ծառայությունը, մասնավորապես, իրականացնում է ՀՀ-ում ապաստան հայցողների և ՀՀ-ում ապաստան ստացած փախստականների կենտրոնացված հաշվառում, պահում է տեղեկատվական բանկ և իրականացնում է այդ բանկի մշտական թարմացումը, անհրաժեշտության դեպքում դիմում է ՀՀ ԿԱ ԱԱԾ՝ ՀՀ անօրինական մուտք գործած ապաստան հայցողների՝ ՀՀ ազգային անվտանգության համար հնարավոր վտանգ ներկայացնելու մասին եզրակացություն տալու հարցով, անհրաժեշտության դեպքում դիմում է Ազգային անվտանգության, Արտաքին գործերի հարցերով լիազոր մարմիններ, ինչպես նաև Ոստիկանություն՝ ապաստան հայցողների ինքնությունը պարզելու գործում աջակցելու հարցով, օրենքով սահմանված կարգով ապաստանի դիմումների վերաբերյալ ընդունված վերջնական որոշումների մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Ոստիկանությանը, ՄԱԿ ՓԳՀ-ին է տրամադրում փախստականների և ապաստանի հարցերին վերաբերող ամբողջական տեղեկատվություն, ներառյալ՝ ընդհանուր վիճակագրական բնույթի տեղեկություններ, ինչպես նաև հաշվառման վերցված ապաստան հայցողների և փախստականների անվանական ցուցակները, ապաստան հայցողների և փախստականների անձնական գործերը՝ նրանց համաձայնությամբ, առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների կողմից ապաստանի տրամադրման դիմում ներկայացնելուն պես դիմում է ՀՀ ԱՍՀՆ, անհրաժեշտության դեպքում՝ ԸԿԵԻՊ բաժիններ՝ առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անչափահաս և հաշմանդամ ապաստան հայցողների տեղավորումն ու խնամքը կազմակերպելու հարցով: (Հոդված 34) ՀՀ ԿԱ ԱԱԾ Սահմանապահ զորքերը ՀՀ անօրինական (սահմանային ռեժիմի խախտումով) մուտք գործած ապաստան հայցողներից ընդունում են ապաստանի հայցը և սահմանված կարգով գրանցում են դրանք հատուկ այդ նպատակով բացված գրանցամատյանում, ինչպես նաև ապաստանի հայցի մասին տեղեկացնում են ՀՀ ՏԿԱԻՆ ՄՊԾ-ին և	Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների գծով գերագույն հանձնակատար • **ՀՀ ՏԿԱԻՆ Միգրացիոն պետական ծառայությունը** պետք է աջակցի առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահասին, երեխայի տեղավորմանը և խնամքի ապահովմանը, ինչպես նաև նրա իրավունքների իրացման հարցերում: Առանց ուղեկցողի անչափահաս ապաստան հայցողների կամ փախստականների հարցերի հետ առնչություն ունեցող պետական մարմինները, հաշվի առնելով առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների առանձնահատուկ վիճակը, առավելագույնս ելնելով նրանց շահերից՝ իրենց իրավասությունների շրջանակներում պետք է աջակցեն նրանց: (Հոդված 8) • **ՀՀ ՏԿԱԻՆ ՄՊԾ**-ն յուրաքանչյուր ապաստան հայցողին և նրա ընտանիքի անդամներին, ապաստանի հայց ներկայացնելուց հետո անվճար տրամադրում է անձը հաստատող վկայական: Ընտանիքի մինչև 16 տարեկան անդամների մասին տեղեկությունները զետեղվում են ապաստանի հայց ներկայացրած իրենց ծնողների կամ խնամակալների անձը հաստատող վկայականներում: Առանց ուղեկցողի և (կամ) ընտանիքից անջատված մինչև 16 տարեկան ապաստան հայցողներին տրամադրվում է անձը հաստատող առանձին վկայական: (Հոդված 29) • **Ոստիկանությունը** ՀՀ-ում ապաստան ստացած փախստականներին անվճար տրամադրում է կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ: Մինչև 16 տարեկան փախստականի տվյալներն ընդգրկվում են ծնողների կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթում: Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված մինչև 16 տարեկան անչափահաս փախստականներին տրամադրվում է կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ, որը չի կարող օգտագործվել առանց խնամակալի ՀՀ-ից դուրս գալու դեպքում: (Հոդված 30) • **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը** ՀՀ ՏԿԱԻՆ ՄՊԾ միջնորդության հիման վրա, համագործակցելով

			Ոստիկանությանը: (Հոդված 35)	Խնամակալության մարմինների և Երեխաների պաշտպանության բաժինների հետ, կազմակերպում է առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների տեղավորումն ու խնամքը: (Հոդված 38) • **ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը** միջոցներ է ձեռնարկում ՀՀ-ում ապաստան հայցողների և ՀՀ-ում ապաստան ստացած փախստականների կրթության իրավունքի իրացման ուղղությամբ: Խնամակալության մարմնի դիմումի հիման վրա կազմակերպում է առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների և ապաստան ստացած փախստականների՝ կրթական հաստատություն ընդունման հարցը: (Հոդված 39) • **Խնամակալության և հոգաբարձության մարմինները**՝ ՀՀ ԱՍՀՆ կամ ԸԿԵԻՊ բաժինների միջնորդության հիման վրա իրենց համայնքի տարածքում կազմակերպում են առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների համար խնամակալի (կամ) հոգաբարձուի նշանակումը: (Հոդված 41) • ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի **ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները**, համագործակցելով խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ, կազմակերպում են առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողների տեղավորումն ու խնամքը: (Հոդված 42) • Առանց ուղեկցողի և (կամ) ընտանիքից անջատված անչափահաս անձի ապաստան հայցելու դեպքում ՀՀ ՏԿԱԻՆ ՄՊԾ-ն աջակցում է խնամակալի նշանակման հարցում: Նշանակված խնամակալը մասնակցում է ՄՊԾ-ի և այլ մարմինների կողմից ապաստանի դիմումի քննարկմանը, ինչպես նաև փախստականի ճանաչման և ապաստանի տրամադրման ուղղությամբ հարուցված վարույթով նախատեսված հետագա բոլոր իրավահարաբերություններին: (Հոդված 47) • Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված անչափահաս ապաստան հայցողի դեպքում ՀՀ ՏԿԱԻՆ ՄՊԾ-ն անմիջապես տեղեկացնում է ՀՀ ԱՍՀՆ-ին՝ առանց ուղեկցողի անչափահաս ապաստան հայցողներին

				խնամակալ (հոգաբարձու) նշանակելուն աջակցելու նպատակով: ՄՊԾ-ն պետք է նախաձեռնի երեխայի ծնողների կամ այլ բարեկամների որոնումը ընտանիքի միավորման նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որոնումը և միավորումը երեխայի շահերից չեն բխում: ՀՀ ԱՍՀՆ-ն Երեխաների պաշտպանության բաժինների հետ համատեղ նախաձեռնում է առանց ուղեկցողի անչափահաս ապաստան հայցողներին տեղավորելու և խնամակալ նշանակելու գործընթացը: Երեխային տեղավորելիս խնամակալության և հոգաբարձության մարմինները պետք է ապահովեն մեկ ընտանիքի անդամ հանդիսացող անչափահաս ապաստան հայցողների համատեղ բնակությունը՝ ելնելով երեխաների շահերի պաշտպանությունից: Խնամակալը պարտավոր է ապաստանի ընթացակարգի ընթացքում պատշաճ կերպով ներկայացնել առանց ուղեկցողի անչափահաս ապաստան հայցողի շահերը: ՄՊԾ-ն չպետք է նախաձեռնի ապաստանի ընթացակարգի որևէ քայլ առանց խնամակալի ներգրավման և պետք է ապահովի, որ հարցազրույցը անցկացվի վերջինիս ներկայությամբ, և այն անցկացնող պաշտոնյան պետք է տիրապետի անչափահասների հետ աշխատելու անհրաժեշտ գիտելիքներին ու հմտություններին: Առանց ուղեկցողի անչափահաս ապաստան հայցողի ապաստանի ընթացակարգում ընդգրկված բոլոր պաշտոնյաները իրենց գործողություններում պետք է ելնեն երեխայի շահերի պաշտպանության սկզբունքից: (Հոդված 50)
93.	**«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-80-Ն, ընդունված է՝ 25.05.2004, ուժի մեջ է՝ 30.08.2004* Կարգավորում է մարդու հիմնարար անձնական բարիք համարվող հոգեկան առողջության, հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված հարաբերությունները, կանոնակարգում է հոգեկան առողջության ոլորտում միջազգային իրավունքի նորմերով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին»	1. Հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներով տառապող երեխաները ունեն հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց ընդհանուր իրավունքները, ինչպես նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավունքները: (Հոդված 6) 2. Բուժման, հետազոտման, դուրսգրման հարցերով հոգեբուժական կազմակերպությանը դիմելու, ինչպես նաև բուժական մեթոդներին և միջոցներին համաձայնություն տալու և դրանցից ցանկացած փուլում հրաժարվելու՝ եթե դրանք կիրառվում են գիտական կամ փորձարարական նպատակներով, ուղեկցվում են լուսա-, տեսա- և կինոնկարահանումներով, հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին իր ընտրած հոգեբույժ մասնագետի մասնակցությունը պահանջելու, հետազոտման, բուժման, դուրսգրման, իր իրավունքների պաշտպանության և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, հոգեբուժական կազմակերպության ղեկավարին, նրա վերադաս մարմնին, դատարան, դատախազություն, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին անձամբ կամ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու իրավունքներն իրականացնում է հոգեկան խանգարումներ ունեցող երեխայի օրինական ներկայացուցիչը: (Հոդված 6)	Հոգեբուժական օգնություն և ծառայություններ իրականացնող հոգեբույժի կամ այլ մասնագետի գործողությունները կարող են բողոքարկվել դատական կարգով: Բողոքը ներկայացնում է հոգեկան խանգարում ունեցող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը: (Հոդված 24) Անչափահաս հիվանդներին այցելուների հետ հանդիպման ժամանակ բժշկական համապատասխան ցուցումների դեպքում բժշկի հանձնարարությամբ ուղեկցում է տվյալ բաժանմունքի բուժքույրը, որի վերաբերյալ գրառում է կատարվում համապատասխան բժշկական փաստաթղթերում: (Հավելված 1) Հոգեկան խանգարումներով տառապող	• ՀՀ առողջապահության նախարարություն • Հոգեբուժական կազմակերպություններ • Հոգեկան խանգարումներով տառապող անձանց հոգեբուժական օգնությունը և սոցիալական պաշտպանությունն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը ստեղծում է հիվանդանոցային և արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն իրականացնող կազմակերպություններ ծերունիների, մեծահասակների, դեռահասների և մանուկների համար, կազմակերպում է հոգեկան խանգարումներով տառապող անչափահասների հանրակրթական և մասնագիտական հատուկ ուսուցում: (Հոդված 8)

	եվրոպական կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների ու ազատությունների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծման գործընթացները:		անչափահաս անձին իր իրավունքները բացատրվում են այն լեզվով և այն եղանակով, որը հասկանալի է տվյալ անձի համար: Ընդ որում, տվյալ իրավունքների բացատրությունը ներառում է իրավունքների ու դրանց իրականացման մեխանիզմների պարզաբանումը: Նշվածի վերաբերյալ բուժող բժիշկը կամ ընդունարանի բժիշկը կամ բաժանմունքի վարիչը գրառում է կատարում հոգեկան խանգարմամբ տառապող անձի բժշկական քարտում՝ անչափահասի օրինական ներկայացուցչից վերցնելով ստորագրություն: (Հավելված 1)	
94.	**«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-518-Ն, ընդունված է՝ 26.12.2002, ուժի մեջ է՝ 20.05.2003* Կարգավորում է թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև քաղաքացիների առողջության, պետության և հասարակության անվտանգության ապահովման նպատակով սահմանում է դրանց ապօրինի շրջանառությունը կանխարգելելու պետական քաղաքականության իրավական հիմքերը և թմրամոլության դեմ պայքարի հիմնական միջոցները:	1. Բժշկական պարտադիր դիտարկումը սահմանվում է բժշկական երկարատև դիտարկման կարիք ունեցող հիվանդների և բոլոր դեպքերում՝ մինչև 21 տարեկան անձանց նկատմամբ: (Հոդված 48) 2. Մինչև 14 տարեկան անչափահասներին բժշկական օգնությունը ցուցաբերվում է նրանց օրինական ներկայացուցիչների դիմումով, իսկ 14-ից 18 տարեկան անչափահասներին՝ նրանց համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: (Հոդված 49)		Թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողով • **Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման վերահսկողության իրականացման լիազորված մարմիններ**
95.	**«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-72-Ն, ընդունված է՝ 24.12.2004, ուժի մեջ է՝ 02.03.2005* Կարգավորում է ծխախոտի իրացման, սպառման, օգտագործման և արդյունաբերության բնագավառում ծագած իրավահարաբերությունները, կոչված է ներկա և ապագա սերունդներին պաշտպանելու ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի՝ մարդկանց առողջության համար վնասակար ազդեցությունից, ինչպես նաև սոցիալական, բնապահպանական և այլ հետևանքներից:	1. Ծխախոտային արտադրատեսակների իրացումը կազմակերպելիս անհրաժեշտ է չնշել ծխախոտային արտադրատեսակների անվանումներն ու ապրանքային նշանները խաղալիքների, տիկնիկների, մրցավազքային մեքենաների մանրակերտների, տեսաշարային, ձայնային և տեսաձայնաշարային խաղերի, քաղցրավենիքի կամ նմանատիպ այլ առարկաների վրա: (Հոդված 7) 2. Ծխախոտային արտադրատեսակների վաճառքն արգելվում է 18 տարին չլրացած անձանց, 18 տարին չլրացած անձանց կողմից, առանց վաճառողի անմիջական մասնակցության (իրացումը վաճառքի ավտոմատ համակարգի, էլեկտրոնային կամ մեխանիկական այլ սարքավորումների միջոցով), բացառությամբ վայրերի, որտեղ անչափահասների մուտքն արգելվում է, առողջապահական, կրթական, մանկական, դաստիարակչական հաստատություններում, մարզական դահլիճներում, համալիրներում, մարզադաշտերում և առողջարաններում: Ծխախոտի վաճառքի բոլոր կետերում՝ դրամարկղերի մոտ կամ դրանց հարակից տարածքներում, տեսանելի մասում պարտադիր փակցվում է մասնավորապես հետևյալ նախազգուշացումը. 18 տարին չլրացած անձանց ծխախոտ չի վաճառվում: Ծխախոտային արտադրատեսակների իրացմամբ զբաղվող բոլոր անձինք ծխախոտային արտադրատեսակների վաճառքն իրականացնելիս 18 տարեկանից ցածր արտաքին տեսք ունեցող քաղաքացիներին պարտավոր են ծխախոտ չվաճառել: Եթե գնորդը ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, վարորդական իրավունքի կամ զինվորական ծառայության վկայական), ապա միայն այդ դեպքում ծխախոտային արտադրատեսակի իրացմամբ զբաղվողը կարող է կատարել ծխախոտի վաճառք: (Հոդված 8) 3. Ծխելը, մասնավորապես, արգելվում է՝ կրթական՝ ուսումնական, արտադպրոցական, մանկական, դաստիարակչական և այլ հաստատություններում, մշակութային հաստատություններում՝ կինոթատրոններում, թատրոններում, մարզական տարածքներում, կրկեսում, համերգասրահներում, թանգարաններում, գրադարաններում, ցուցահանդեսներում, դահլիճներում, լսարաններում և մինչև 18 տարեկանների համար նախատեսված հանգստի և ժամանցի վայրերում, առողջապահական հաստատություններում՝ հիվանդանոցներում, պոլիկլինիկաներում, ամբուլատորիաներում, առողջարաններում և առողջապահական այլ կազմակերպություններում, բոլոր այլ հիմնարկների, կազմակերպությունների շենքերի տարածքներում, բացառությամբ դրա համար նախատեսված վայրերի, քաղաքային տրանսպորտում և փոխադրամիջոցներում, ներառյալ՝ ավտոբուսները, երթուղային տաքսիները, գնացքները (բացառությամբ այդ նպատակով առանձնացված վագոնների), ինչպես նաև օդակայանները, ավտոբուսի և գնացքի կայարանները: (Հոդված 11)	Յուրաքանչյուր մարդ պետք է տեղեկացված լինի ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության հետևանքով առողջությանը պատճառված վնասի մասին: Ծխախոտային արդյունաբերություն իրականացնող անձինք պարտավոր են ապահովել բնակչության՝ տեղեկատվություն ստանալու ազատության և մատչելիության իրավունքն այդ բնագավառում, իրազեկել մարդկանց՝ առողջության համար ծխախոտի և ծխի բացասական, ինչպես նաև տնտեսական ու բնապահպանական հետևանքների մասին: (Հոդված 3)	• Օրենքի դրույթների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են ՀՀ կառավարության լիազորված մարմինները: (Հոդված 12)

96.	**«Գովազդի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-55, ընդունված է՝ 30.04.1996, ուժի մեջ է՝ 04.06.1996* Սահմանում է ՀՀ տարածքում գովազդի ստեղծման և տարածման իրավական հիմքերը:	1. Արգելվում է այն գովազդը, որտեղ՝ օգտագործվում են անչափահասների դյուրահավատությունն ու անփորձությունը, պարունակվում են տեսաձայնային այնպիսի դրվագներ, որոնք կարող են բարոյական կամ ֆիզիկական վնաս պատճառել անչափահասներին, խաթարվում են ծնողների և դաստիարակների հեղինակությունը, անչափահասների վստահությունը նրանց նկատմամբ: Արգելվում է ալկոհոլային խմիչքների և ծխախոտի գովազդի տեղակայումը մանկապատանեկան ռադիոհեռուստահաղորդումներում, անչափահասներին վերաբերող տպագիր հրատարակություններում, ինչպես նաև մանկական, ուսումնական, բուժական, մշակութային, մարզական կազմակերպություններում, հաստատություններում և դրանց տարածքում, պատմական և մշակութային վայրերում, մինչև 18 տարեկան անձանց համար նախատեսված հանգստի և ժամանցի կենտրոններում, հանրային սննդի օբյեկտների տարածքում: Արգելվում է անչափահասների կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործումը գովազդում, եթե այն չի վերաբերում անչափահասների համար նախատեսված ապրանքներին: (Հոդված 14) 2. Ալկոհոլային խմիչքների և ծխախոտի գովազդներում արգելվում է նկարահանել և պատկերել 25 տարեկանից ցածր տարիք ունեցող անձանց: Մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի և հարակից ապրանքների գովազդն արգելվում է: Արգելվում է ալկոհոլային խմիչքների և ծխախոտի գովազդման ժամանակ դիմել անմիջապես անչափահասներին: (Հոդված 15)	Գովազդի մասին ՀՀ օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող ՀՀ պետական կառավարման լիազորված մարմինը իրավասու է՝ նախազգուշացնել իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից թույլ տրված անբարեխիղճ գովազդի առկայության մասին և արգելել այն, գովազդատուին, գովազդ արտադրողին և գովազդակրին ուղարկել գովազդի մասին օրենսդրության խախտման դադարեցման և հակագովազդի իրականացման մասին ծանուցագրեր, անբարեխիղճ գովազդի փաստի առկայության դեպքում գովազդատուի, գովազդ արտադրողի և գովազդակրի նկատմամբ հայցեր ներկայացնել դատարան, իսկ գովազդի մասին օրենսդրության հաճախակի խախտման դեպքում՝ հայց ներկայացնել նրանց լուծարման առաջարկով: (Հոդված 25) Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող ՀՀ պետական կառավարման լիազորված մարմինը ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն է: (Հոդված 25)	• Գովազդի մասին ՀՀ օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող ՀՀ պետական կառավարման լիազորված մարմին
97.	**«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-9-Ն, ընդունված է՝ 08.12.2004, ուժի մեջ է՝ 19.04.2005* Կարգավորում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, քաղաքացիական կացության ակտերի գրառումներն ուղղելու, լրացնելու, փոփոխելու, վերականգնելու և չեղյալ հայտարարելու, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մատյանները (ակտային գրքերը) կազմելու և պահպանելու կարգի ու ժամկետների և դրանց հետ կապված այլ հարաբերություններ, ինչպես նաև սահմանում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնող մարմինների իրավասությունները:	1. Պետական գրանցման ենթակա են քաղաքացիական կացության հետևյալ ակտերը. ծնունդը, ամուսնությունը, ամուսնալուծությունը, որդեգրումը, հայրությունը որոշելը, անվան փոխումը, մահը: (Հոդված 3) 2. Կարգավորում է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակի տրամադրման հարցերը, այդ թվում՝ ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչին: Երեխայի ծննդյան վկայականի կրկնօրինակ չի տրվում այն ծնողներին, որոնք այդ երեխայի նկատմամբ զրկված են ծնողական իրավունքներից կամ սահմանափակված են նրանց ծնողական իրավունքները: Վերոհիշյալ անձանց դիմումով նրանց տրվում է երեխայի ծնունդը կամ ամուսնության պետական գրանցումը հաստատող փաստաթուղթ: (Հոդված 9) 3. Սահմանում է ծննդի պետական գրանցման հիմքերը (Հոդված 14), գրանցման վայրը (Հոդված 15): 4. Կարգավորում է ծննդյան մասին հայտարարության հարցերը: Եթե երեխայի ծննդի պետական գրանցումը կատարվում է ամուսնության մեջ գտնվող անձանց, ամուսնության մեջ չգտնվող տղամարդու կամ կնոջ հայտարարությամբ, որոնք օգտվել են օրենքով նախատեսված վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից, ապա ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթղթի հետ ներկայացվում է նաև փոխնակ մոր հետ օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի մեկ օրինակը: Երեխայի ծննդյան մասին հայտարարություն տալու անհնարինության դեպքում երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարությունը տալիս է երեխայի գտնվելու վայրի համայնքի ղեկավարը (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարը) կամ լիազորված անձը: (Հոդված 16) 5. Կարգավորում է ծննդի ակտի գրառման մեջ ծնողների մասին տեղեկություններ լրացնելը: Եթե երեխայի ծնողներն ամուսնության մեջ չեն գտնվում, ապա երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկությունները լրացվում են հայրության որոշման ակտի գրառման հիման վրա, եթե հայրությունը ճանաչվում և գրանցվում է երեխայի ծննդի պետական գրանցման հետ միաժամանակ, կամ երեխայի մոր գրավոր հայտարարության հիման վրա, եթե հայրությունը որոշված չէ: Երեխայի հոր ազգանունը գրառվում է մոր ազգանվամբ, հոր անունը և նրա հայրանունը՝ մոր ցուցումով: Երեխայի հոր մասին լրացված տեղեկությունները չեն կարող արգելք հանդիսանալ հայրության որոշման հարցի լուծման համար: Մոր ցանկությամբ երեխայի ծննդի ակտի գրառման մեջ կարող են չլրացվել երեխայի հոր մասին տեղեկությունները: (Հոդված 17) 6. Ծննդի ակտի գրառման մեջ երեխայի անունը գրառվում է ծնողների համաձայնությամբ, հայրանունը գրառվում է հոր անվամբ, ազգանունը գրառվում է նրա ծնողների ազգանվամբ, իսկ ծնողների տարբեր ազգանունների առկայության դեպքում՝ հոր կամ մոր ազգանվամբ՝ ծնողների համաձայնությամբ: Երեխայի հոր հետ ամուսնության մեջ չգտնվող մոր ցանկությամբ երեխայի ծննդի ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկությունները լրացվում են մոր ցուցումով: (Հոդված 18) 7. Կարգավորում է գտնված (ընկեցիկ) երեխայի ծննդի պետական գրանցումը: Երեխային գտած անձը այդ մասին 48 ժամվա ընթացքում պարտավոր է հայտարարություն տալ երեխայի գտնվելու վայրի ոստիկանության կամ խնամակալության և հոգաբարձության մարմին: Ոստիկանության, խնամակալության և հոգաբարձության մարմինները, դաստիարակչական ու բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններ պարտավոր են երեխայի գտնվելուց	Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների հետ կապված գործունեությունը համակարգում և վերահսկում է ՀՀ արդարադատության նախարարությունը՝ կառավարության սահմանած կարգով: (Հոդված 4) ՔԿԱԳ մարմնի ղեկավարին և աշխատողին քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման կապակցությամբ անձի վերաբերյալ հայտնի դարձած տեղեկությունները հրապարակման ենթակա չեն: ՔԿԱԳ մարմնի ղեկավարը պարտավոր է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վերաբերյալ տեղեկությունները տրամադրել ՀՀ բնակչության ռեգիստրի ձևավորման և վարման նպատակներով համապատասխան լիազոր մարմիններին, ինչպես նաև դատարանի (դատավորի), դատախազության, նախաքննության, հետաքննության մարմիններին՝ հարուցված քրեական կամ քաղաքացիական գործերի կապակցությամբ և իրավասու այլ մարմինների պահանջով: (Հոդված 11) Քաղաքացիական կացության ակտերի գրառումների առաջին օրինակներից կազմված քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մատյանները (ակտային գրքերը)՝	• ՀՀ ԱՆ Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման գործակալություն • ՔԿԱԳ մարմինը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումն իրականացնում է քաղաքացիական կացության ակտում համապատասխան գրառում կատարելու և այդ գրառման հիման վրա քաղաքացուն պետական գրանցման վկայական տալու միջոցով: ՔԿԱԳ մարմնի ղեկավարը կամ աշխատողը իրավունք չունի իրականացնելու իրեն, իր ամուսնուն, ամուսնու և իր ազգականներին (ծնող, երեխա, թոռ, պապ, տատ, հարազատ եղբայր և քույր) վերաբերող քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում: Նման դեպքերում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումն իրականացնում է ՔԿԱԳ մարմնի այլ աշխատող կամ ՔԿԱԳ այլ մարմին: (Հոդված 6) • ՀՀ ԱՆ ամուսնության և ծննդի հանդիսավոր գրանցման պալատ • Օտարերկրյա պետություններում **ՀՀ հյուպատոսական հիմնարկները** իրականացնում են ծննդի, ամուսնության, ամուսնալուծության,

		հետո՝ 7 օրվա ընթացքում, հայտարարել գտնված (ընկեցիկ) երեխայի ծննդի պետական գրանցման մասին: Գտնված (ընկեցիկ) երեխայի անվան, հայրանվան և ազգանվան մասին տեղեկությունները նրա ծննդի ակտի գրառման մեջ լրացվում են վերը նշված մարմնի կամ կազմակերպության ցուցումով: Գտնված (ընկեցիկ) երեխայի ծննդի ակտի գրառման մեջ նրա ծնողների մասին տեղեկություններ չեն լրացվում: (Հոդված 19) 8. Կարգավորում է մահացած ծնված կամ կյանքի չորս շաբաթվա ընթացքում մահացած երեխայի ծննդի պետական գրանցումը: (Հոդված 20) 9. Մեկ տարեկան և ավելի դարձած երեխայի ծննդի պետական գրանցումը բժշկական կազմակերպության կամ բժշկի կողմից ծննդյան մասին տրված սահմանված ձևի փաստաթղթի առկայության դեպքում իրականացվում է ծնողների (ծնողներից մեկի) կամ երեխայի գտնվելու վայրի համայնքի ղեկավարի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի) կամ լիազորված անձի կամ շահագրգիռ այլ անձանց գրավոր դիմումի հիման վրա: Երեխայի չափահաս դառնալուց հետո նրա ծննդի պետական գրանցումն իրականացվում է իր դիմումի հիման վրա: (Հոդված 21) 10. Սահմանում է ծննդի ակտի գրառման բովանդակությունը (Հոդված 22), ծննդյան վկայականը (Հոդված 23) 11. Եթե ամուսնացող անձը 16 կամ 17 տարեկան է, ապա ամուսնության մասին համատեղ դիմում տալու հետ միաժամանակ անհրաժեշտ է ներկայացնել ամուսնացող անձի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի՝ նոտարական կարգով հաստատված կամ ՔԿԱԳ մարմնում տրված գրավոր համաձայնությունը: (Հոդված 26) 12. Ամուսնացող անձանց համատեղ երեխա(ներ) ունենալը, ամուսնացող կնոջ հղիությունը (առնվազն 12 շաբաթական) ամուսնության գրանցման ժամկետը կրճատելու համար հիմք համարվող հարգելի պատճառներ են: Հարգելի պատճառները պետք է հաստատված լինեն համապատասխան փաստաթղթերով (կնոջ հղիության վերաբերյալ բժշկական տեղեկանք, երեխայի ծննդյան և հայրության ճանաչման վկայական: (Հոդված 27) 13. Ամուսնալուծության ակտի գրառման մեջ լրացվում է մինչև 18 տարեկան համատեղ երեխաների թվաքանակը: (Հոդված 37) 14. Որդեգրման պետական գրանցման համար հիմք է համարվում դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը: (Հոդված 39) 15. Սահմանում և կարգավորում է որդեգրման պետական գրանցման վայրը (Հոդված 40), դիմումը (Հոդված 40[1]), գրանցման պետական կարգը (Հոդված 41), գրառման ակտի բովանդակությունը (Հոդված 42), որդեգրման վկայականը (Հոդված 43), երեխայի որդեգրման կապակցությամբ ծննդի ակտի գրառման փոփոխումը (Հոդված 44), որդեգրման վերացման կապակցությամբ ծննդի ակտի գրառման փոփոխումը: Որդեգրման վերացման դեպքում որդեգրվածի ցանկությամբ որդեգրման կապակցությամբ կատարված գրառումները կարող են պահպանվել: (Հոդված 45) 16. Եթե երեխայի որդեգրման մասին դատարանի վճռի մեջ նշվում է որդեգրված երեխայի հետ իր ծնողների (ծնողներից մեկի) գույքային և անձնական՝ ոչ գույքային հարաբերությունների պահպանման մասին, ապա երեխայի ծննդի ակտի գրառման մեջ նրա ծնողների (ծնողներից մեկի) մասին տեղեկությունները փոփոխման ենթակա չեն (Հոդված 45): 17. Սահմանում է հայրության որոշման պետական գրանցման հիմքերը (Հոդված 48), գրանցման վայրը (Հոդված 49): Կարգավորում է հայրության որոշման պետական գրանցումը երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող հոր և մոր համատեղ դիմումի հիման վրա (Հոդված 50), երեխայի ծննդյան պահին երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող հոր դիմումի համաձայն (Հոդված 51): ՔԿԱԳ մարմինը մերժում է հայրության որոշման պետական գրանցումը երեխայի ծննդի ակտի գրառման մեջ երեխայի հոր մասին տեղեկությունների առկայության դեպքում, բացառությամբ այն դեպքի, երբ երեխայի հոր մասին գրառումը կատարվել է մոր դիմումի հիման վրա: (Հոդված 53) Կարգավորում է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա հայրության որոշման պետական գրանցումը: (Հոդված 54) Սահմանում է հայրության որոշման ակտի գրառման բովանդակությունը (Հոդված 55) և հայրության որոշման վկայականը (Հոդված 56): Կարգավորում է հայրության որոշման կապակցությամբ երեխայի ծննդի ակտի գրառման մեջ փոփոխություններ կատարելը: (Հոդված 57) 18. 16 տարին լրացած անձն իրավունք ունի սահմանված կարգով փոխելու իր անունը, որը ներառում է անունը, հայրանունը և ազգանունը: 16-ից մինչև 18 տարեկան անձը իր անվան փոխումը կատարում է ծնողների, որդեգրողների կամ խնամակալի (հոգաբարձուի) գրավոր համաձայնության առկայության դեպքում, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, բացառությամբ մինչև նրա՝ օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչվելու դեպքերի: 16 տարին չլրացած անձի անվան փոխումը, ինչպես նաև ծնողի՝ նրան շնորհած ազգանվան փոխումը կարող է կատարվել ծնողների համատեղ (որդեգրողների կամ խնամակալի (հոգաբարձուի) դիմումի հիման վրա, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշմամբ: (Հոդված 58) Սահմանում է անվան փոփոխման մասին դիմումը (Հոդված 59) 19. Ծնողների կողմից անվան փոխման դեպքում անչափահաս երեխայի ծննդի ակտի **գրառման մեջ փոխվում են ծնողների մասին տեղեկությունները**: Ծնողների կողմից ազգանվան և հոր կողմից անվան փոխման դեպքում 16 տարին չլրացած երեխայի ծննդի ակտի գրառման մեջ փոխվում են երեխայի ազգանունը և հայրանունը: Ծնողներից մեկի կողմից ազգանվան փոխման դեպքում նրանց՝ 16 տարին չլրացած երեխայի ազգանունը կարող է փոխվել ծնողների համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշմամբ: Անչափահաս երեխայի ծննդի ակտի գրառման մեջ կատարված փոփոխությունների հիման վրա տրվում է ծննդյան նոր վկայական: (Հոդված 63) 20. Քաղաքացիական կացության ակտերի **գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ** կատարելու հիմքերն են, մասնավորապես, որդեգրման ակտի գրառումը, հայրության որոշման ակտի գրառումը, երեխայի անվան փոխման մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումը, երեխայի ծննդի ակտի գրառման մեջ նրա հոր մասին տեղեկություններ լրացնելու, փոփոխելու կամ հանելու մասին հոր հետ ամուսնության մեջ չգտնվող մոր դիմումը, երեխայի ծննդյան ակտի գրանցման մեջ նրա, հոր կամ մոր մասին տեղեկությունների (անունը, հայրանունը, ազգանունը փոխելու կապակցությամբ) ուղղման վերաբերյալ ծնողների (ծնողի) դիմումը, ծննդի ակտի գրանցման մեջ տվյալ անձի կամ իր ծնողների ազգության լրացման վերաբերյալ տվյալ անձի դիմումը, իսկ երեխաների դեպքում՝ ծնողներից մեկի դիմումը: (Հոդված 69)	կարված, համարակալված և կնքված, սահմանված կարգով պահվում են տվյալ ակտերի պետական գրանցման վայրի ՔԿԱԳ մարմնում: Քաղաքացիական կացության ակտերի գրառումների երկրորդ օրինակներից կազմված քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մատյանները (ակտային գրքերը)՝ կարված, համարակալված և կնքված, սահմանված կարգով պահվում են ՀՀ արդարադատության նախարարության արխիվում: Օտարերկրյա պետություններում ՀՀ հյուպատոսական հիմնարկների կազմած քաղաքացիական կացության ակտերի գրառումների առաջին օրինակները և տվյալ ակտերի պետական գրանցման համար հիմք համարվող փաստաթղթերը երեսուն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կառավարության սահմանած կարգով փոխանցվում են ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան արխիվ՝ պահպանման, իսկ երկրորդ օրինակները պահպանվում են ՀՀ հյուպատոսական հիմնարկներում: ՔԿԱԳ մարմնում պահպանվում են նաև պետական գրանցման համար ներկայացված բոլոր փաստաթղթերը: (Հոդված 76) Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մատյանները (ակտային գրքերը) պահպանվում են ՔԿԱԳ մարմիններում՝ համապատասխան քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ կատարելուց հետո՝ 100 տարի: 100 տարին լրանալուց հետո ՔԿԱԳ մարմինները պետական արխիվ են փոխանցում քաղաքացիական կացության ակտերի գրառումների առաջին օրինակներից կազմված գրքերը, ինչպես նաև չափաբերական գրքերը: Քաղաքացիական կացության ակտերի գրառումների երկրորդ օրինակներից կազմված ակտերի գրքերը ենթակա են ոչնչացման: (Հոդված 77) ՀՀ արդարադատության նախարարությունն իրականացնում է ՔԿԱԳ մարմինների մեթոդական ղեկավարումը և վերահսկողությունը, ուսումնասիրում է ՔԿԱԳ մարմինների գործունեության դեմ ուղղված բողոքները, կատարում է ՔԿԱԳ մարմիններում գրանցման գործառույթների օրինականության պահպանման վերաբերյալ ստուգումներ: (Հոդված 80) ՔԿԱԳ մարմնի ղեկավարը և աշխատողը, առանց որդեգրողների	հայրության որոշման, անվան փոխման և մահվան պետական գրանցումը: (Հոդված 5)

		21. Քաղաքացիական կացության ակտի **գրառումների վերականգնման** համար քաղաքացին իր բնակության վայրի ՔԿԱԳ տարածքային մարմին գրավոր դիմում է ներկայացնում, որում մասնավորապես նշվում են ընտանեկան դրությունը, անչափահաս և չափահաս երեխաների մասին: (Հոդված 74[1])	(որդեգրողի) համաձայնության, բացառությամբ նախատեսված դեպքերի, իրավասու չեն որդեգրման մասին որևէ տեղեկություն հայտնելու կամ փաստաթղթեր տալու: Որդեգրողի մահվան դեպքում նրա որդեգրված չափահաս երեխան իրավունք ունի դիմելու ՔԿԱԳ մարմին և նրանից իր որդեգրման մասին տեղեկություններ ստանալու: Որդեգրողի (որդեգրողների) համաձայնության բացակայության դեպքում որդեգրված չափահաս երեխան կարող է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ՔԿԱԳ մարմիններից իր որդեգրման մասին տեղեկություններ ստանալ: (Հոդված 47)	
98.	**«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-474-Ն, ընդունված է՝ 11.12.2002, ուժի մեջ է՝ 07.07.2003* Կարգավորում է մարդու վերարտադրողական առողջության պահպանման, վերարտադրողական իրավունքի ապահովման, վերարտադրողականության ոլորտում տեխնոլոգիաների կիրառման կարգի ու պայմանների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ:	1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները ներառում են. հղիության արհեստական ընդհատում (աբորտ)՝ բժշկական միջամտություն, որը կատարվում է հղիության ընդհատման նպատակով, դեռահասներ՝ բժշկակենսաբանական (ֆիզիոլոգիական) հասկացություն, որը ներառում է 10-18 տարեկան անձանց տարիքային խումբը և բնորոշում է մանկությունից լրիվ չափահասության անցումային շրջանը, դոնորական սաղմ՝ կենսաբանական ծնողի (ծնողների) և (կամ) դոնորի սեռաբջիջների միաձուլման արդյունքում առաջացած սաղմ, որը պետք է կրի կամ արդեն կրում է փոխնակ մայրը կամ կինը, վերարտադրողականության (սեռաբջջի) դոնոր՝ իր բեղմնունակ սերմը տրամադրող տղամարդ կամ իր բեղմնունակ ձվաբջիջը տրամադրող կին, կենսաբանական ծնող՝ տղամարդ կամ կին, որի սեռաբջջից է ձևավորվել սաղմը, և որի գենոտիպի կրողը նրա ապագա երեխան է (Հոդված 2) 2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ընտանիք կազմել, ինքնուրույն որոշել իր երեխաների թիվն ու նրանց ծնվելու ժամկետները և այդ նպատակով ունենալ պտղաբերության կարգավորման ապահով ու արդյունավետ ծառայություններից օգտվելու հնարավորություն, պաշտպանված լինել ճնշման բոլոր ձևերից, այդ թվում՝ սեռական շահագործումից և բռնությունից, հարկադրական հղիությունից, աբորտից, ամլացումից և վերարտադրողականության իրավունքների այլ խախտումներից, ստանալ հավաստի և ամբողջական տեղեկատվություն սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ, այդ թվում՝ պտղաբերության կարգավորման առկա միջոցների և մեթոդների առավելությունների, արդյունավետության և հնարավոր վտանգների վերաբերյալ, ստանալ բժշկական խորհրդատվություն և ծառայություններ սեռական և վերարտադրողական առողջության հարցերի շուրջ՝ մեկուսի ու գաղտնի պայմաններում, օգտվել բարձրորակ բուժկանխարգելիչ ծառայություններից և պաշտպանված լինել առողջության համար վտանգ ներկայացնող մեթոդների, այդ թվում՝ գիտական փորձերի կիրառումից, ինքնուրույն որոշումներ կայացնել սեռական և վերարտադրողական առողջության հետ կապված բժշկական միջամտություններ ստանալիս, բացառությամբ կյանքին սպառնացող շտապ միջամտություն պահանջող իրավիճակների և օրենքով նախատեսված այլ դեպքերի, օգտվել վերարտադրողականության նոր տեխնոլոգիաներից, ներառյալ՝ պտղաբերության կարգավորման ապահով և արդյունավետ միջոցներից և (կամ) մեթոդներից, ինչպես նաև անպտղության բուժման համար կիրառվող վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից: Հասարակական անվտանգության, հանրային առողջության և բարքերի, այլոց իրավունքի պաշտպանության նպատակով վերարտադրողականության հետ կապված մարդու իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով: (Հոդված 4) 3. Դեռահասներն իրավունք ունեն. սեռական դաստիարակության, ինչպես նաև սեռական և վերարտադրողական առողջության պահպանման, իրազեկ լինել սեռական հասունացման, սեռական և վերարտադրողական առողջությանը վերաբերող հարցերին, ունենալ անհրաժեշտ գիտելիքներ հղիության արհեստական ընդհատման, սեռավարակների, այդ թվում՝ մարդու իմունային անբավարարության վարակի (ՄԻԱՎ) կանխարգելման ժամանակակից միջոցների վերաբերյալ, բարյացակամ և մեկուսի պայմաններում ստանալ մատչելի ու լիարժեք բժշկական խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում՝ նաև բուժօգնություն՝ սեռական հասունացման, սեռական և վերարտադրողական առողջության հարցերի հետ կապված: Դեռահասների սեռական դաստիարակությունը հանրակրթական դպրոցներում և կրթական այլ հաստատություններում իրականացնում են մասնագիտական պատրաստվածություն ունեցող անձինք՝ ընտանիքի, առողջապահական ծառայությունների, հասարակական կազմակերպությունների, հանրության հետ սերտ համագործակցությամբ: Դեռահասների սեռական և վերարտադրողական առողջության պահպանման հետ կապված կրթական ծրագրերը մշակվում և իրականացնում են կրթության ու առողջապահության ոլորտների գործադիր մարմինները՝ շահագրգիռ հասարակական և այլ կազմակերպությունների, համայնքների, ինչպես նաև իրենց՝ երիտասարդ մարդկանց գործուն մասնակցությամբ՝ հաշվի առնելով ազգային ավանդույթները, բարոյական արժեքներն ու միջազգային փորձը, ելնելով դեռահասների տարիքային, հոգեբանական և ֆիզիկական զարգացման առանձնահատկություններից: (Հոդված 5) 4. Մայրությունը և մանկությունը գտնվում են պետության և հասարակության հովանավորության ու պաշտպանության ներքո և աջակցություն ստանալու իրավունք ունեն: Կինն ունի անվտանգ մայրության, այն է՝ հղիության ընթացքում առողջության պահպանման, ծննդաբերության և հետծննդյան ժամանակաշրջանում իր, պտղի առողջությանը և նորածնին նվազագույն ռիսկ պատճառող մեթոդների կիրառմամբ օգնություն ստանալու իրավունք: Կինն իրավունք ունի տեղեկություն ստանալու կրծքով կերակրման առավելությունների, ինչպես նաև մանուկների և վաղ տարիքի երեխաների առողջ և անվտանգ սնուցման վերաբերյալ: Հղիության ընթացքում ցանկացած բժշկական միջամտություն կատարվում է կնոջ համաձայնությամբ: Կինն իրավունք ունի հրաժարվել բժշկական միջամտությունից կամ պահանջել ընդհատել այն: Առանց հղի կնոջ համաձայնության, բժշկական հանձնաժողովի որոշմամբ, դրա անհնարինության դեպքում՝ բժշկի որոշմամբ, թույլատրվում է իրականացնել բժշկական միջամտություն հղի կնոջ կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում: Բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը՝ հնարավոր հետևանքների նշումով, գրանցվում է բժշկական	Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների՝ արհեստական սերմնավորման կամ բեղմնավորման և փոխնակ մայրության կիրառման հետ կապված տեղեկությունները համարվում են բժշկական գաղտնիք և հրապարակման ենթակա չեն: Տեղեկությունները տրամադրվում են միայն դատարանի (դատավորի), դատախազության, նախաքննության, հետաքննության մարմինների հարուցած քրեական կամ քաղաքացիական գործերի կապակցությամբ, ինչպես նաև այլ իրավասու մարմինների պահանջով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: (Հոդված 18) Դոնորի և փոխնակ մոր մասին տեղեկությունները հաշվառվում են համապատասխան առողջապահական հաստատություններում: Հաշվառվում են այն դոնորի կամ փոխնակ մոր մասին տեղեկությունները, ովքեր սահմանված կարգով ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության և չունեն դոնոր և (կամ) փոխնակ մայր լինելու հակացուցումներ: Դոնորի և փոխնակ մոր մասին տեղեկությունները տրամադրվում են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձանց ցանկությամբ: (Հոդված 17)	• ՀՀ առողջապահության նախարարություն • Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ կապված ծառայությունները մատուցում են առողջապահական այն հաստատությունները, որոնք օրենքով սահմանված կարգով ունեն բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակով զբաղվելու լիցենզիա, ինչպես նաև պահպանում են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման համար օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված պայմանները: (Հոդված 19)

		փաստաթղթերում և գրավոր հավաստվում հղի կնոջ, դրա անհնարինության դեպքում՝ նրա ամուսնու կամ հարազատների, իսկ վերջինիս անհնարինության դեպքում՝ բուժանձնակազմի կազմած արձանագրությամբ: Կինն իրավունք ունի հղիության ընթացքում ստանալ հղիության և ծննդաբերության հետ կապված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում՝ պետության երաշխավորած առողջապահական նպատակային ծրագրերի շրջանակներում: (Հոդված 6) 5. Յուրաքանչյուր կին ունի անվտանգ մայրության և անցանկալի հղիությունից ու հղիության արհեստական ընդհատումից խուսափելու նպատակով **բեղմնականխման** արդյունավետ միջոցներից և (կամ) մեթոդներից օգտվելու իրավունք: Պտղաբերության կարգավորման և բեղմնականխման միջոցները և մեթոդները կիրառվում են որպես անցանկալի հղիությունից և հղիության արհեստական ընդհատումից խուսափելու միջոց: (Հոդված 8) 6. **Կամավոր բժշկական ամլացումն** իրականացվում է բուժհաստատություններում միայն չափահաս անձանց նկատմամբ՝ նրանց իրազեկված համաձայնության դեպքում: (Հոդված 9) 7. Յուրաքանչյուր կին ունի **հղիության արհեստական ընդհատման իրավունք**: Հղիության արհեստական ընդհատումը մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է կնոջ դիմումի համաձայն: Հղիության արհեստական ընդհատումը մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կարող է կատարվել բժշկասոցիալական ցուցումների դեպքում՝ կնոջ համաձայնությամբ: Հղիության արհեստական ընդհատումից առաջ և հետո առողջապահական հաստատությունը կնոջը տրամադրում է անվճար բժշկասոցիալական խորհրդատվություն՝ անցանկալի հղիությունից պաշտպանվելու միջոցների և մեթոդների վերաբերյալ: (Հոդված 10) 8. **Հղիության արհեստական ընդհատումն անչափահասի դիմումով** կատարվում է նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկական հանձնաժողովի արձանագրության հիման վրա: (Հոդված 10) 9. ՀՀ-ում թույլատրվում է կիրառել վերարտադրողականության հետևյալ **օժանդակ տեխնոլոգիաները**. արհեստական սերմնավորում ամուսնու կամ դոնորական սերմով, արհեստական (արտամարմնական/փորձանոթային) բեղմնավորում ամուսնու կամ դոնորական սերմով և սաղմի ներպատվաստում, դոնորական սաղմի ներպատվաստում փոխնակ մոր արգանդում: Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաները կիրառվում են ՀՀ առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած բժշկասոցիալական ցուցումների հիման վրա: (Հոդված 11) 10. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում ապագա **երեխայի սեռը պլանավորել չի թույլատրվում**, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականություն: (Հոդված 11) 11. Կարգավորում է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հետ կապված **իրավական հարաբերությունները**: Օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեն գրանցված ամուսնության մեջ գտնվող ամուսինը (կինը)՝ միայն կնոջ (ամուսնու) հետ փոխադարձ համաձայնության առկայության դեպքում, գրանցված ամուսնության մեջ չգտնվող տղամարդը կամ կինը՝ իր ցանկությամբ: Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձինք (ամուսինները) իրավունք ունեն ընտրել սեռաբջջի դոնորին և (կամ) փոխնակ մորը: (Հոդված 12) 12. **Կենսաբանական ծնողն** իր բեղմնունակ սերմը կամ բեղմնունակ ձվաբջիջը տրամադրելու համար դրամական հատուցում չի ստանում: Կենսաբանական ծնողը համարվում է ապագա երեխայի ծնողը և նրա նկատմամբ ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ: (Հոդված 16) 13. **Փոխնակ մայր** լինելու իրավունք ունեն նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած 20-35 տարեկան այն կանայք, ովքեր սահմանված կարգով ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել փոխնակ մայր լինելու հակացուցումներ: Փոխնակ մայր լինելու իրավունք ունեն նաև վերարտադրողական տարիքի (նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած 20 տարեկանից սկսած) այն կանայք, ովքեր ցանկանում են կրել հարազատների կողմից տրամադրված սաղմով հղիությունը, ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության, որի արդյունքում չեն հայտնաբերվել փոխնակ մայր լինելու հակացուցումներ: Գրանցված ամուսնության մեջ գտնվող կինը կարող է փոխնակ մայր լինել ամուսնու համաձայնությամբ: Փոխնակ մայր չի կարող լինել այն կինը, որի փոխնակ մայր լինելը հակացուցված է բժշկական ցուցումներով: Փոխնակ մայրը միաժամանակ չի կարող լինել ձվաբջջի դոնոր: Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձանց և փոխնակ մոր միջև փոխհարաբերությունները կարգավորվում են գրավոր պայմանագրերով, որոնք ենթակա են նոտարական վավերացման: Փոխնակ մայրը պարտավոր է բժշկական հաշվառման կանգնել հղիության վաղ ժամկետներում (մինչև հղիության 12 շաբաթը), մշտապես գտնվել բժշկի հսկողության տակ, խստորեն կատարել նրա խորհուրդները և հետևել իր առողջությանը: Փոխնակ մայրը վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձից կամ ամուսիններից առանձին ապրելու դեպքում պարտավոր է վերջիններիս տեղեկացնել հղիության ընթացքի մասին: Փոխնակ մայրն իրավունք չունի հրաժարվել իրենից ծնված երեխային հանձնել օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքած անձանց՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձին կամ ամուսիններին: Փոխնակ մայրն իրենից ծնված երեխայի նկատմամբ չունի որևէ իրավունք և չի կրում որևէ պարտականություն երեխային սահմանված կարգով պայմանագիր կնքած անձին կամ ամուսիններին հանձնելու պահից: Փոխնակ մայրը հղիություն կրելու և ծննդաբերելու համար կարող է ստանալ դրամական հատուցում՝ համապատասխան առողջապահական հաստատության կամ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձի կամ ամուսինների և փոխնակ մոր կողմից նախապես կնքված պայմանագրով սահմանված կարգով: Փոխնակ մոր հետ պայմանագիր կնքած վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձը (ամուսինները) կրում է (են) բոլոր այն ծախսերը, որոնք կապված են հղիության ընթացքի, ծննդաբերության, ինչպես նաև բժշկական փաստաթղթերով հաստատված բարդությունների վերացման հետ: (Հոդված 15) 14. **Վերարտադրողականության դոնոր** լինելու իրավունք ունեն 18-35 տարեկան այն տղամարդիկ և կանայք, ովքեր ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության և չունեն դոնոր լինելու բժշկական հակացուցումներ: Ժամանակավոր դոնոր լինելու իրավունք ունեն նաև վերարտադրողական տարիքի (18 տարեկանից սկսած) այն տղամարդիկ և կանայք, ովքեր ցանկանում են իրենց սեռաբջիջը կամ սաղմը տրամադրել հարազատներին, ենթարկվել են բժշկագենետիկական հետազոտության և չունեն դոնոր լինելու		

		բժշկական հակացուցումներ: Դոնորն իր բեղմնունակ սերմը կամ ձվաբջիջը տրամադրելու համար կարող է ստանալ դրամական հատուցում համապատասխան առողջապահական հաստատության կամ սեռաբջիջն օգտագործող անձի կամ զույգի կողմից՝ նախապես կնքված և սահմանված կարգով վավերացված պայմանագրի համաձայն: Դոնորը չունի որևէ իրավունք և չի կրում որևէ պարտականություն օժանդակ տեխնոլոգիաների օգտագործման արդյունքում իրենից սերված երեխայի նկատմամբ:		
99.	**«ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-287-Ն, ընդունված է՝ 30.11.2011, ուժի մեջ է՝ 01.06.2012* Սահմանում է ՀՀ քաղաքացու անձնագիր տրամադրելու, փոխանակելու, անվավեր ճանաչելու, վերցնելու հիմքերը և դրանց հետ կապված այլ իրավահարաբերությունների կարգավորման հիմունքները:	1. Քաղաքացին անձնագիր ստանում է կամավոր՝ **անկախ տարիքից**: **Մինչև 16 տարեկան** քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է 3 տարի վավերականության ժամկետով, իսկ 16 տարին լրացած քաղաքացիներին՝ 10 տարի վավերականության ժամկետով: Ընդ որում, մինչև 16 տարեկան, ինչպես նաև 16 տարին լրացած նախազորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է մինչև նրանց զորակոչային տարիքը լրանալը, իսկ զորակոչային տարիքը լրանալու դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացած տարկետման ժամկետով: Մինչև 16 տարեկան երեխային անձնագիր տրամադրվում է երեխայի ծնողներից մեկի կամ այլ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչն անձամբ չի կարող ներկայացնել դիմումը, ապա ներկայացվող դիմումի վրա նրա ստորագրության իսկությունը վավերացվում է նոտարական կարգով: Մինչև 16 տարեկան երեխային մյուս ծնողի դիմումի հիման վրա անձնագիր չի տրամադրվում, եթե ծնողը, որի մոտ օրինական հիմքերով բնակվում է երեխան, ՀՀ ոստիկանություն նախապես ներկայացնում է անձնագիր տրամադրելու անհամաձայնության վերաբերյալ գրավոր հայտարարություն: Հայտարարությանը կցվում է երեխայի բնակության վայրը որոշելու՝ նոտարական կարգով վավերացված համաձայնության պատճենը կամ դատական ակտի պատճենը: (Հոդված 4) 2. Երեխաների մատնադրոշմները (աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրոշմները, իսկ դրանք ստանալը ֆիզիոլոգիապես անհնարին լինելու դեպքում վերցվում են աջ և ձախ ձեռքերի որևէ մատի մատնադրոշմները:) վերցվում են 6 տարեկանից, իսկ լուսանկարը՝ անձնագիր տալու յուրաքանչյուր դեպքում՝ անկախ տարիքից: Անձնագիր ստանալու համար մինչև 16 տարեկան քաղաքացին ներկայացնում է ծննդյան վկայական: (Հոդված 5) 3. 2014 թվականի հունվարի 1-ից հետո մինչև 16 տարեկան ՀՀ քաղաքացիները և 16 տարին լրացած նախազորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիներն իրավունք ունեն ստանալու կամ փոխանակելու ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված անձնագրերը: (Հոդված 9)		• ՀՀ ոստիկանություն ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հիմնարկ
100.	**«Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-288-Ն, ընդունված է՝ 30.11.2011, ուժի մեջ է՝ 01.06.2012* Սահմանում է հանրային ծառայությունների համարանիշի հասկացությունը, օգտագործման նպատակը, ձևավորման և հատկացման կարգը:	1. Ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի ցանկությամբ երեխայի բնակության վայրի տեղական ռեգիստրի կողմից 16 տարին չլրացած երեխային հատկացվում է հանրային ծառայությունների համարանիշ: (Հոդված 5)	Հանրային ծառայությունների համարանիշն օգտագործվում է պետական մարմինների, պաշտոնատար անձանց, իրավասու այլ անձանց կողմից օրենքով նրանց վերապահված խնդիրների (գործառույթների) շրջանակներում ֆիզիկական անձանց ծառայություններ մատուցելիս՝ անձնական տվյալների տեղեկատվական բազաներում վերջիններիս նույնականացումն իրականացնելու նպատակով: Հանրային ծառայությունների համարանիշը պարտադիր կիրառվում է քաղաքացուն աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտ վճարելու, սոցիալական ապահովության պետական ծրագրերով նախատեսված կենսաթոշակ, նպաստ, հատուցում նշանակելու և վճարելու, հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ հաշվարկելու և վճարելու, քաղաքացու կողմից բանկային հաշիվ բացելու, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային ենթակայության կազմակերպությունների տեղեկատվական բազաները վարելու ժամանակ: (Հոդված 3)	• ՀՀ ԱՍՀՆ
101.	**«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-47-Ն, ընդունված է՝ 25.12.2006, ուժի մեջ է՝ 03.02.2007* Կարգավորում է օտարերկրացիների՝ ՀՀ մուտք գործելու, ՀՀ տարածքում գտնվելու և բնակվելու, ՀՀ	1. Մինչև 18 տարեկան օտարերկրացիները կարող են **մուտք գործել** ՀՀ իրենց ծնողների, ծնողներից որևէ մեկի, այլ օրինական ներկայացուցչի կամ ուղեկցողի հետ միասին կամ միայնակ, եթե նրանք գալիս են ՀՀ իրենց ծնողների, ծնողներից որևէ մեկի, այլ օրինական ներկայացուցչի մոտ կամ ընդունող կազմակերպություն: (Հոդված 6) 2. Օտարերկրացուն մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) կարող է **մերժվել**, տրամադրված մուտքի վիզան **ուժը կորցրած ճանաչվել կամ մուտքը ՀՀ արգելվել**, եթե նա դատապարտվել է ՀՀ-ում ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով չի հանվել կամ մարվել: Այս **դրույթները չեն տարածվում** ՀՀ-ում մերձավոր ազգականներ (ամուսին, երեխա, հայր, մայր, հարազատ քույր, եղբայր, տատ, պապ) ունեցող անձանց վրա: (Հոդված 8) 3. Արգելվում է արտաքսել ՀՀ-ում բնակվող օտարերկրացուն, եթե նա անչափահաս է, և նրա ծնողները օրինական հիմքերով բնակվում	ՀՀ մուտքի վիզայի տրամադրման (ժամկետի երկարաձգման) մերժման, մուտքի վիզան ուժը կորցրած ճանաչելու կամ մուտքի մերժման դեպքում օտարերկրացու մասին տվյալները մտցվում են ՀՀ տարածքում անցանկալի համարվող օտարերկրացիների տվյալների բանկ: Տվյալների բանկը վարում է ՀՀ ազգային անվտանգության	• ՀՀ ոստիկանություն • ՀՀ ԿԱ ԱԱԾ • ՀՀ ԱԳՆ • ՀՀ հյուպատոսական հիմնարկներ • ՀՀ Նախագահի աշխատակազմ • ՀՀ դատարաններ •

	տարածքով տարանցիկ երթևեկելու, ՀՀ-ից ելքի, ինչպես նաև օտարերկրացիների հետ կապված այլ հարաբերություններ:	են ՀՀ-ում կամ իր խնամքի տակ ունի անչափահաս երեխա: (Հոդված 32) 4. Օտարերկրացուն ծագման պետություն կամ այն պետություն, որտեղից նա ժամանել է, վերադարձնելու անհնարինության դեպքում, առանց անձնագրի, անվավեր անձնագրով ՀՀ պետական սահմանի անցման կետ ժամանած կամ ՀՀ պետական սահմանի անցման կետում մուտքի վիզայի մերժում ստացած կամ սահմանային հսկողություն իրականացնող մարմնի կողմից մուտքի թույլտվություն չստացած օտարերկրացիները կարող են պահվել տարանցիկ գոտում կամ այլ տեղ՝ այդ նպատակով ստեղծված հատուկ կացարանում: Եթե նշված օտարերկրացիներն ընտանիքի անդամներ են, ապա նրանք պահվում են համատեղ: Եթե անձն առանց ծնողի կամ օրինական ներկայացուցչի ուղեկցությամբ երթևեկող 18 տարին չլրացած անձ է, ապա նա չի կարող պահվել հատուկ կացարանում և անմիջապես պետք է ուղեկցվի ծնողի (ծնողների) կամ օրինական ներկայացուցչի մոտ: (Հոդված 37)	բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը, որն էլ անհրաժեշտ տեղեկություններ է մուտքագրում տվյալների բանկ: Տվյալների բանկում տեղեկություններ մուտքագրելու նպատակով ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնին տեղեկություններ են ներկայացնում ՀՀ Նախագահի աշխատակազմը, ՀՀ ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը, ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը, արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը: Տվյալների բանկից օգտվելու իրավունք ունեն ՀՀ Նախագահի աշխատակազմը, ՀՀ ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը, ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը, արտաքին գործերի բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը, սահմանային հսկողություն իրականացնող լիազոր մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում՝ ՀՀ դատարանները, ՀՀ քրեական հետապնդում իրականացնող մարմինները: (Հոդված 8)	
102.	**«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-246-Ն, ընդունված է՝ 22.12.2010, ուժի մեջ է՝ 01.01.2013* Կարգավորում է ՀՀ-ում եկամտային հարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է ՀՀ-ում եկամտային հարկ վճարողների շրջանակը, եկամտային հարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը:	1. Անչափահաս անձանց եկամուտները հայտարարագրում են նրանց ծնողները (խնամակալները): (Հոդված 22)		• Հարկային մարմիններ
103.	**«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-196, ընդունված է՝ 26.06.2001, ուժի մեջ է՝ 01.08.2001* Կարգավորում և սահմանում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության սկզբունքները, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համակարգի կազմակերպական-իրավական ու	1. ՀՀ-ում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման **պետական երաշխիքները** ներառում են. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի **պարտադիր դասավանդումն** ուսումնական բոլոր հաստատություններում՝ ուսումնառության ամբողջ ընթացքում, աջակցությունը **մանկապատանեկան մարզադպրոցների** ցանցի ընդլայնմանը, դրանց նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը: (Հոդված 6)		• ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմինը՝ (**ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն**) ՀՀ պետական կառավարման մարմինների հետ կազմում և հաստատում է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների, սովորող երիտասարդության և ուսանողների ֆիզիկական դաստիարակության պետական ծրագրերը: (Հոդված 9) • Առողջապահության բնագավառի

	ֆինանսատնտեսական հիմքերը, ինչպես նաև այն սկզբունքները, որոնք պետք է պահպանվեն միջազգային մարզական շարժմանն ինտեգրվելու համար:			պետական կառավարման լիազորված մարմինը (**ՀՀ առողջապահության նախարարություն**) սահմանում է հանրակրթական ուսումնական հաստատությունների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման համար դպրոցականներին բժշկական համապատասխան խմբերի դասելու չափորոշիչը: (Հոդված 9.1) • Կրթության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը (**ՀՀ ԿԳՆ**) կազմակերպում է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների, սովորողների ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության տվյալների ընդհանրացումն ու վերլուծումը: Ուսումնական հաստատությունում «Ֆիզիկական կուլտուրա» առարկան և արտադասարանական մարզական խմբում դասավանդող անձի մասնագիտական կրթությունը պարտադիր է: ԿԳՆ-ն կազմակերպում է ուսումնական հաստատություններում մանուկների, երիտասարդների, այդ թվում՝ հաշմանդամների ֆիզիկական ունակությունների զարգացումը, կազմակերպում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի կատարելագործումն ու զարգացումը, ընդլայնում մանկապատանեկան մարզադպրոցների ցանցը, կազմակերպում է ազգային, միջազգային մարզական միջոցառումներ ու մրցումներ սովորողների համար, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի հետ մշակում և հաստատում է ուսումնական հաստատությունների արտաուսումնական մարզական խմբերի գործունեության կարգը, սահմանում է մարզական ուղղվածության դասարան ստեղծելու կարգը: (Հոդված 9.1) • Աշխատանքի և սոցիալական հարցերի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը (ՀՀ ԱՍՀՆ) կազմակերպում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում (մանկատուն, գիշերօթիկ դպրոց, տուն-ինտերնատ) ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու անհրաժեշտ պայմաններ: (Հոդված 9.1) • Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տարածքային կառավարման մարմինները (**մարզպետարաններ**) համադասում են

				մանկապատանեկան մարզադպրոցների, հանրակրթական դպրոցների, մարզական հերթափոխի պատրաստման, մարզաձևերի զարգացման և Ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործընթացը: (Հոդված 10) • **Տեղական ինքնակառավարման մարմինները** նպաստում են նախադպրոցական, դպրոցական, արտադպրոցական և այլ ուսումնական հաստատություններում ֆիզիկական կուլտուրայի ուսուցման գործընթացին, համայնքների բնակչության շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական միջոցառումների կազմակերպմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նյութատեխնիկական բազայի ստեղծման, բարելավման և հետագա ամրապնդման գործընթացին, մանկապատանեկան մարզադպրոցների ցանցի ընդլայնմանը և մարզաձևերի զարգացմանը: (Հոդված 11) • Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե, Մարզաձևերի ազգային ֆեդերացիաներ, մարզական հասարակական կազմակերպություններ, միություններ և ընկերություններ
104.	**«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-109-Ն, ընդունված է՝ 11.06.2004, ուժի մեջ է՝ 31.07.2004* Կարգավորում է մանկապատանեկան սպորտի բնագավառում պետական քաղաքականության ծրագրային հիմունքները, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, երեխաների առողջ կենսակերպի և անհատի կրթման ու զարգացման հետ կապված հարաբերությունները:	1. Մանկապատանեկան սպորտ՝ մինչև 14 տարեկան մանուկների և 14-ից մինչև 18 տարեկան պատանիների մարզական պարապմունքներ, մանկապատանեկան մարզական կազմակերպություններ՝ մանկապատանեկան մարզադպրոցներ, մանկապատանեկան մարզական տեխնիկական դպրոցներ, օլիմպիական հերթափոխի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցներ, օլիմպիական հերթափոխի ուսումնարաններ: (Հոդված 2) 2. Օրենքի **նպատակն** է մանուկների ու պատանիների բազմակողմանի զարգացման, առողջ կենսակերպի, ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու, ինչպես նաև հիվանդությունների ու իրավախախտումների կանխման անհրաժեշտ պայմանների ապահովումը: (Հոդված 3) 3. **Խնդիրներն** են՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող մանուկների ու պատանիների իրավունքների պաշտպանությունը, մանկապատանեկան սպորտի զարգացման համար իրավական երաշխիքների ապահովումը, մանկապատանեկան սպորտի զարգացման բնագավառում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և պարտականությունների սահմանումը, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող մանուկների ու պատանիների համար պայմաններ ստեղծող հիմնարկներին ու կազմակերպություններին պետական աջակցության ցուցաբերումը՝ անկախ դրանց սեփականության ձևից, մանկապատանեկան սպորտի ոլորտում աշխատող մարզիչ-մանկավարժների, բժշկական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, գիտահետազոտական աշխատանքների համակարգումը, մանուկների ու պատանիների պարբերաբար ներգրավումը մարզական պարապմունքներին, բարձրակարգ մարզիկների պատրաստումը, խթանիչների օգտագործման նկատմամբ վերահսկողությունը, ուսումնական և մարզական կազմակերպությունների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի հասարակական կազմակերպությունների կողմից մանուկներին ու պատանիներին մատուցվող մարզական և առողջարարական բնույթի ծառայությունների համապատասխանեցումը նախադպրոցական, հանրակրթական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչներին, մանուկների ու պատանիների շրջանում ուսումնամարզական միջոցառումների պարբերաբար անցկացումը: (Հոդված 3) 4. Մանկապատանեկան սպորտի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունն ապահովում է մանուկների ու պատանիների ֆիզիկական զարգացման և մարզական կրթություն ստանալու հնարավորությունների իրականացումը: Պետությունն ապահովում է հավասար պայմաններ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվող մանուկների ու պատանիների համար, մարզական վիճակագրության կատարելագործումը, մանկապատանեկան սպորտի զարգացման ծրագրերի ընդունումը: (Հոդված 5) 5. Ուսումնական բոլոր հաստատություններում ուսումնառության ամբողջ ընթացքում իրականացվում է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի **պարտադիր դասավանդումը**: (Հոդված 6) 6. **Նախադպրոցական տարիքի** մանուկների ֆիզիկական դաստիարակությունն անվճար պարապմունքների միջոցով իրականացվում է մանկապարտեզներում (անկախ սեփականության ձևից)՝ մանուկների օրգանիզմի գործառական հնարավորությունների ավելացման,	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներում և խմբերում ընդգրկված մանուկների ու պատանիների առողջությանը պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում ֆիզկուլտուրային-մարզական կազմակերպությունների և ուսումնական ու մարզական հաստատությունների ղեկավարները: (Հոդված 14) **Մանկապատանեկան սպորտի զարգացման տարեկան ծրագիրը**, մասնավորապես, ներառում է. մանկապատանեկան սպորտի զարգացման աշխատանքների իրականացման և դրանց ֆինանսավորման գործընթացի վերահսկողության կարգը, մարզադպրոցներից, մարզական ակումբներից, մարզաբազաներից և մարզական գույքից մանուկների ու պատանիների անվճար օգտվելու համար իրականացվող միջոցառումները, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում հաշմանդամ մանուկների և պատանիների ընդգրկման համար համապատասխան պայմանների ստեղծման և նրանց հասցեագրված	• Մանկապատանեկան սպորտի ոլորտում լիազորված մարմինը (**ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն**) մշակում է մանուկների ու պատանիների ֆիզիկական լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման չափորոշիչները, ուղղություններն ու հեռանկարները, մշակում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում հաշմանդամ մանուկների ու պատանիների ընդգրկման ձևերն ու եղանակները, հաստատում է մանուկների ու պատանիների համար նախատեսվող ֆիզկուլտուրային-մարզական միջոցառումների անցկացման օրացուցային պլանը, սահմանում է մանուկների ու պատանիների համար նախատեսվող ֆիզկուլտուրային-մարզական միջոցառումներին (այդ թվում՝ միջազգային մրցաշարերին) նրանց մասնակցության կարգը, մշակում է նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների ֆիզիկական պատրաստվածության չափորոշիչները, աջակցում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի

		հիմնական շարժողական որակների ու հմտությունների զարգացման, ֆիզիկական վարժությունների, հիգիենայի վերաբերյալ գիտելիքների ստացման նպատակով: (Հոդված 6) 7. **Հանրակրթական, նախնական (արհեստագործական) մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական** կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում և մարզական կազմակերպություններում (ներառյալ՝ պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատություններում) սովորող (ընդգրկված) մանուկների ու պատանիների առողջության պահպանումը և ամրապնդումը, նրանց ֆիզիկական կատարելագործումը և առողջ կենսակերպի ձևավորումն այդ ուսումնական հաստատությունների հիմնական խնդիրներից են: Հանրակրթական դպրոցներում «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերն անցկացվում են ուսումնառության ամբողջ ընթացքում՝ շաբաթական առնվազն 3 ժամով, նախնական (արհեստագործական) մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ մեկ տարի տևողությամբ՝ շաբաթական առնվազն 4 ժամով, իսկ միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ մինչև 3 տարի տևողությամբ՝ շաբաթական առնվազն 4 ժամով: (Հոդված 6) 8. **Ֆիզիկական արատներ ունեցող կամ հաշմանդամ** երեխաների համար իրականացվում են առանձին ուսումնամարզական պարապմունքներ: Ֆիզիկական դաստիարակության իրականացման համար մանուկների ու պատանիների շրջանում կազմակերպվում են ուսումնամարզական միջոցառումներ, ապահովվում է մանուկների ու պատանիների մասնակցությունը տեղական, հանրապետական և միջազգային մրցաշարերին: (Հոդված 6) 9. **Հաշմանդամ մանուկների ու պատանիների** ներգրավումը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներին նպատակ ունի բարձրացնել նրանց շարժողունակությունը, վերականգնել օրգանիզմի գործառական հնարավորությունները, նրանց համար ստեղծել բարոյահոգեբանական նպաստավոր պայմաններ: Հաշմանդամ մանուկների ու պատանիների անընդմեջ վերականգնման համակարգում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքների կազմակերպումը, մեթոդաբանական ու բժշկական աջակցությունն իրականացնում են ուսումնական հաստատությունների և առողջապահական կազմակերպությունների, սոցիալական ապահովության հիմնարկների և ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի իրավասու մարմինները: (Հոդված 7) 10. **Նախազորակոչային և զորակոչային տարիքի** պատանիների ֆիզիկական պատրաստվածությունը զինվորական ծառայությանն իրականացվում է հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ պետական ծրագրերին ու չափորոշիչներին համապատասխան: (Հոդված 9) 11. Մինչև 14 տարեկան անչափահասը մանկապատանեկան մարզական հասարակական կազմակերպությանը կարող է **անդամագրվել** իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն: (Հոդված 11) 12. **Մարզական պարապմունքներին մասնակցելու իրավունք** ունեն այն մանուկներն ու պատանիները, ովքեր բժշկական հաստատություններում հետազոտվել են և թույլտվություն են ստացել մասնակցելու ուսումնամարզական պարապմունքներին ու մարզական միջոցառումներին: (Հոդված 14) 13. **Բարձրակարգ մարզիկներին** սպասարկելու նպատակով ստեղծվում են մարզական բժշկության կենտրոններ: (Հոդված 14) Մարզական բարձր ցուցանիշների հասած մանուկներին ու պատանիներին շնորհվում են մարզական կարգեր: (Հոդված 15) Մարզական բարձր ցուցանիշների հասած մանուկների և պատանիների ու նրանց մարզիչների համար ՀՀ կառավարությունը սահմանում է պատվովճարներ, պարգևատրումներ և խրախուսման այլ ձևեր, ինչպես նաև դրանց չափը և տրամադրման կարգը: (Հոդված 16) 14. Կարգավորում է մանկապատանեկան սպորտի բնագավառում պետական քաղաքականության ծրագրային հիմունքները	աջակցություն ցուցաբերելու միջոցառումները, ուղղությունները և նախատեսվող արտոնությունները, մանուկների և պատանիների համար նախատեսվող ֆիզկուլտուրային-մարզական միջոցառումներին նրանց մասնակցության ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, այդ միջոցառումների անցկացման ժամանակացույցը, մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծման ուղղությամբ իրականացվող միջոցառումները, մանուկներին ու պատանիներին մատուցվող մարզական և առողջապահական բնույթի ծառայություններից անվճար օգտվելու ուղղությամբ իրականացվող միջոցառումները, ուսումնական և մարզական հաստատություններում, բնակության վայրերում մանուկների և պատանիների ֆիզիկական դաստիարակության ու սպորտով զբաղվելու ուղղությամբ իրականացվող միջոցառումները, մինչզորակոչային և զորակոչային տարիքի պատանիների ֆիզիկական պատրաստվածության ուղղությամբ իրականացվող միջոցառումները, մարզական բարձր ցուցանիշների հասած մանուկներին և պատանիներին ու նրանց մարզիչներին պատվովճարներ, պարգևատրումներ, թոշակներ և խրախուսման այլ ձևեր տրամադրելու ուղղությամբ իրականացվող միջոցառումները, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի հասարակական կազմակերպություններին ցույց տրվող պետական աջակցության ծավալները և այլն (Հոդված 18)	բնագավառի հասարակական կազմակերպությունների գործունեությանը, աջակցում է մանկապատանեկան սպորտի վերաբերյալ կատարվող գիտական հետազոտությունների իրականացմանը, մշակում է մեթոդական փաստաթղթեր մանկապատանեկան սպորտի հարցերի վերաբերյալ, կազմակերպում է մանկապատանեկան սպորտի բնագավառի մասնագետների (մարզիչների, մանկավարժների և այլն) պատրաստումը և վերապատրաստումը, սահմանում է անհատական մարզաձևերում, ինչպես նաև մարզական թիմերի կազմում բարձր ցուցանիշների հասած մանուկներին ու պատանիներին մարզական կարգեր շնորհելու կարգը: (Հոդված 21) • **Ուսումնական հաստատությունները և մարզական կազմակերպությունները** որոշում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքների մեթոդներն ու եղանակները, մարզաձևերն ու պարապմունքների տևողությունը՝ հենվելով պետական ուսումնական ծրագրերի ու ֆիզիկական պատրաստվածության չափորոշիչների վրա, կազմակերպում են մարզական միջոցառումներ, իրականացնում են արտաուսումնական ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական աշխատանքներ: Ուսումնական հաստատություններն անցկացնում են ամենամյա ատեստավորում և պետական չափորոշիչներին համապատասխան՝ ստուգում են մանուկների ու պատանիների ֆիզիկական պատրաստականությունը: Ուսումնական տարվա արդյունքներին համապատասխան՝ յուրաքանչյուր սովորող ատեստավորվում է ֆիզիկական պատրաստականության համար: (Հոդված 6) • **Ուսումնական հաստատությունները, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի իրավասու մարմինները հաշմանդամների և ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի հասարակական կազմակերպությունների** հետ համատեղ ապահովում են ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական միջոցառումների անցկացումը, հաշմանդամ մանուկների ու պատանիների նախապատրաստումը և մասնակցությունը հանրապետական, միջազգային մրցումներին (այդ թվում՝ աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, օլիմպիական

				խաղերին): (Հոդված 7) • Մանուկների ու պատանիների բնակության վայրում, ինչպես նաև հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար համապատասխան պայմաններ են ստեղծում **տեղական ինքնակառավարման մարմինները**: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի իրավասու մարմիններն աջակցում են տեղական ինքնակառավարման մարմիններին ու հասարակական կազմակերպություններին ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական աշխատանքներ անցկացնելու, առողջ կենսակերպ քարոզելու գործում: (Հոդված 8) • Պաշտպանության բնագավառի պետական լիազորված մարմինը (**ՀՀ ՊՆ**) կարող է պայմանագրեր կնքել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի, մարզական զինվորական ուղղվածության հասարակական կազմակերպությունների հետ՝ նախազորակոչային ու զորակոչային տարիքի պատանիների զինվորական ծառայությունը նախապատրաստելու վերաբերյալ: Պատանիների ֆիզիկական նախապատրաստումը զինվորական ծառայությանը իրականացնում է պաշտպանության բնագավառում կառավարության լիազորած պետական մարմինը (ՀՀ ՊՆ) և դրա նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով: (Հոդված 9) • **Մանկապատանեկան մարզական կազմակերպությունները** կազմակերպում են մանկապատանեկան սպորտի զարգացման աշխատանքները, մարզաձևերի հավաքական թիմերը համալրում են մարզիկներով, ապահովում են մանուկների ու պատանիների ֆիզիկական կարողությունների ու գիտելիքների տիրապետումը: Մանկապատանեկան մարզական կազմակերպություններն ստեղծում են իրավաբանական և ֆիզիկական անձինք: (Հոդված 10) • Մանուկների ու պատանիների հետ տարվող ուսումնամարզական աշխատանքները կազմակերպում են **մարզիչ-մանկավարժները**: (Հոդված 12) • Մարզական միջոցառումների **մրցավարությունը** համապատասխան **մարզաձևերի ազգային ֆեդերացիաների** սահմանած կարգով իրականացնում են համապատասխան

				մասնագիտական որակավորում ու պատրաստվածություն ունեցող մրցավարները: (Հոդված 13) • **Տարածքային կառավարման մարմինները** համակարգում և իրականացնում են մարզի մանկապատանեկան սպորտի զարգացման պետական ծրագրերը, աջակցում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդման աշխատանքներին, աջակցում են մարզի և համայնքների տարածքում բնակվող մանուկների ու պատանիների մասնակցությանը ֆիզկուլտուրային-մարզական միջոցառումներին, մանկապատանեկան սպորտի զարգացմանը: (Հոդված 22) • Տեղական ինքնակառավարման մարմինները աջակցում են համայնքի տարածքում մանկապատանեկան սպորտի զարգացման ծրագրերի իրականացմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդման աշխատանքներին, մանուկների ու պատանիների մասնակցությանը ֆիզկուլտուրային-մարզական միջոցառումներին, նպաստում են համայնքի տարածքում մանկապատանեկան սպորտի զարգացմանը: (Հոդված 23)
105.	**«Զբաղվածության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-152-Ն, ընդունված է՝ 11.12.2013, ուժի մեջ է՝ 01.01.2014* Կարգավորում է ՀՀ-ում բնակչության զբաղվածության խթանման տնտեսական և կազմակերպական դրույթներն ու իրավական հիմքերը, սահմանում է զբաղվածության բնագավառում քաղաքացիների իրավունքների իրացումը, պետության կողմից մատուցվող ծառայությունների տեսակները, գործազրկության դեպքում սոցիալական աջակցության ձևերը, ինչպես նաև պետական-մասնավոր համագործակցության իրավական հիմքերը:	1. **Աշխատանք փնտրող անձ** է 16 տարին լրացած անձը, որը, անկախ գործունեության (գործատուների մոտ վարձու աշխատանքային գործունեություն, քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայությունների մատուցում կամ աշխատանքների կատարում, անհատ ձեռնարկատիրական և նոտարի գործունեություն, արտոնագրային վճար վճարողի գործունեություն, ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն, ուսումնական հաստատություններում, մասնագիտական ուսուցման դասընթացներում և ուսուցման այլ ձևերում առկա ուսուցում) որևէ տեսակով զբաղված լինելու հանգամանքից, աշխատանք փնտրող զբաղված անձի իրավունքներն իրացնելու նպատակով դիմել է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին: (Հոդված 4) 2. Անձի տարիքը, ինչպես նաև անձի մինչև 3 տարեկան երեխա խնամելու հանգամանքը աշխատաշուկայում գործազուրկի **անմրցունակության** որոշարկման չափանիշներն են: (Հոդված 22) Սահմանում է աշխատաշուկայում անմրցունակ անձի զբաղվածության ապահովումը: (Հոդված 23)	Ամենամյա ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում են հետևյալ հիմնական գործընթացների ապահովման միջոցով. զբաղվածության պետական ծրագրերի մոնիթորինգի և վերջնական արդյունքների գնահատման թիրախային ցուցանիշների սահմանում, ընթացիկ ցուցանիշների՝ թիրախային ցուցանիշներից շեղումների վերհանում և վերացմանն ուղղված գործողությունների ժամանակացույցի առաջադրում, զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում մատուցված ծառայությունների արդյունքների մասին հետադարձ տեղեկատվության ստացում, վերլուծություն և գնահատում, հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեներից ստացված համապատասխան առաջարկությունների դիտարկում: (Հոդված 14) Զբաղվածության ոլորտի նպատակային կառավարման, ամենամյա պետական ծրագրի հասցեականության ապահովման, անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման, այդ թվում՝ պետական-մասնավոր համագործակցության շրջանակներում, աշխատաշուկայի օբյեկտիվ վերլուծության և կանխատեսման	• Լիազորված մարմինը (**ՀՀ ԱՍՀՆ**), մասնավորապես իրականացնում է աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակի ուսումնասիրություն, վերլուծություն, ազդեցության գնահատում և կանխատեսումն ապահովում է աշխատաշուկայի իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը, իրականացնում է աշխատանք փնտրող անձի հաշվառումը, հաշվառումից հանումը, գործազուրկի կարգավիճակ տալը, դրա կասեցումը, վերականգնումը և դադարեցումը, հաստատում է ամենամյա ծրագրի մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանությունը, մշակում և իրականացնում է ամենամյա ծրագիրը, տեղաբաշխում է ամենամյա ծրագիրը՝ ըստ մարզերի, տարածքների և աշխատանք փնտրող անձանց առանձին խմբերի (շահառուների), որի հիմքում դրվում են շահառուների ներգրավման առաջնահերթությունները, առանձին տարածաշրջանների աշխատաշուկաների հիմնական բնութագրիչները, ինչպես նաև սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի առանձնահատկությունները,

			նպատակներով լիազորված մարմինը ձևավորում և վարում է տեղեկատվական շտեմարան: Շտեմարանը ներառում է տեղեկատվություն՝ աշխատանք փնտրող անձանց, գործատուների ներկայացրած թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, զբաղվածության պետական ծրագրերի հնարավորությունների և այդ ծրագրերի ընթացիկ արդյունքների վերաբերյալ: Գործատուների ներկայացրած թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի ցանկը տեղադրվում է լիազորված մարմնի կայքէջում: Զբաղվածության պետական ծրագրում ներգրավված անձանց աշխատանքի տեղավորման, ինչպես նաև այդ անձանց՝ տվյալ աշխատատեղում աշխատանքային հարաբերությունների հետագա շարունակության վերաբերյալ ստացված տեղեկատվությունը պարբերաբար ներառվում է տեղեկատվական շտեմարանում և օգտագործվում ամենամյա ծրագրի պլանավորման, իրականացման, մոնիթորինգի, գնահատման և այլ նպատակներով: Տեղեկատվական շտեմարանն ապահովում է աշխատանք փնտրող անձանց և գործատուների՝ լիազորված մարմին անհատական այցելությունների և (կամ) էլեկտրոնային ձևով և առցանց եղանակով գրանցման և համապատասխան տեղեկատվության մուտքագրման հնարավորությունները: (Հոդված 24) **Աշխատանք փնտրող անձանց և գործատուների անձնական տվյալներն առցանց եղանակով կարող են հասու լինել միայն նրանց գրավոր համաձայնությամբ:** (Հոդված 24)	իրականացնում է ամենամյա ծրագրի մոնիթորինգն ու գնահատումը, կազմակերպում է աշխատանքի տոնավաճառ, աշխատուժի առաջարկի ու պահանջարկի գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնում է առաջարկություններ կրթության ոլորտում պետական կառավարման լիազորված մարմին՝ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար ուսուցանվող մասնագիտությունների ցանկի և տեղերի վերաբերյալ, վարում է էլեկտրոնային պաշտոնական կայքէջ և ձևավորում է տեղեկատվական շտեմարան՝ աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության հավաքման և փոխանակման ապահովման նպատակով, զանգվածային լրատվության միջոցներով՝ պարբերաբար և էլեկտրոնային պաշտոնական կայքէջի միջոցով՝ առցանց հրապարակում է նոր ստեղծվող և թափուր աշխատատեղերի, աշխատաշուկայի վիճակի, ամենամյա ծրագրի կատարման ընթացքի (ծախսված ֆինանսական միջոցների և արդյունքների) մասին տեղեկատվություն (Հոդված 11) • «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն
106.	**«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-243-Ն, ընդունված է՝ 22.12.2010, ուժի մեջ է՝ 01.01.2011* Կարգավորում է պետական կենսաթոշակային ապահովության կառավարմանը և ֆինանսավորմանն առնչվող հարաբերությունները, սահմանում է պետական կենսաթոշակների տեսակները, կենսաթոշակ հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը:	1. **Կերակրողին կորցնելու դեպքում** աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է մահացած կերակրողի **18 տարին չլրացած երեխային**՝ անկախ երեխայի՝ մահացած կերակրողի խնամքի տակ եղած լինելու հանգամանքից: (Հոդված 13) 2. Կերակրողին կորցնելու դեպքում **18 տարին չլրացած եղբորը, քրոջը և թոռանը** աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է, եթե նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում, և եթե նրանք, ըստ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, կերակրողի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ հաշվառված են եղել նույն բնակության վայրում (հասցեում): (Հոդված 13) 3. Կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է նաև **ամուսնուն** կամ օրենքով սահմանված կարգով **խնամակալ** ճանաչված անձին՝ անկախ տարիքից, եթե նա զբաղված է մահացած (զոհված) կերակրողի 14 տարին չլրացած՝ կենսաթոշակի իրավունք ունեցող երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան խնամքով, ըստ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) և չի աշխատում, ինչպես նաև՝ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամին՝ անկախ տարիքից, եթե նա զբաղված է մահացած (զոհված) կերակրողի 14 տարին չլրացած՝ կենսաթոշակի իրավունք ունեցող՝ երկու ծնողին կամ միակ ծնողին կորցրած երեխայի խնամքով, ըստ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) և չի աշխատում: Նման դեպքերում վերը նշված անձինք կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն մահացած (զոհված) կերակրողի 14 տարին չլրացած երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան հետ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում նույն բնակության վայրում (հասցեում) հաշվառված լինելու ժամանակահատվածում: (Հոդված 13) 4. Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող անչափահասն այդ իրավունքը պահպանում է նաև **որդեգրվելու** դեպքում: Որդեգրողը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունի հարազատ ծնողին հավասար, իսկ որդեգրվածը՝ հարազատ երեխային հավասար: Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող որդեգրվածը որդեգրողի մահվան դեպքում կենսաթոշակի ընտրության իրավունք ունի: (Հոդված 13) 5. **Խորթ հայրը և խորթ մայրը** կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն հարազատ հորը և հարազատ մորը	Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ստեղծելու նպատակն է ապահովել անձի կենսաթոշակային ապահովության իրավունքի իրականացումը: (Հոդված 45) Շտեմարանը ներառում է ֆիզիկական անձանց, ինչպես նաև կենսաթոշակառուներին վերաբերող տվյալներ, այդ թվում՝ ՀՀ քաղաքացու անձնագրի (մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայականի): (Հոդված 46) Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման՝ կենսաթոշակին վերաբերող որոշումները կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով: (Հոդված 51) Շտեմարանը վարելու, գործատուներին, ֆիզիկական անձանց և պետական մարմիններին ու կազմակերպություններին շտեմարանից տվյալներ տրամադրելու, շտեմարան	• ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայություն • Լիազոր մարմինը վերահսկում է պետական կենսաթոշակային ապահովության օրենսդրության կիրառման օրինականությունը, իրականացնում է կենսաթոշակ նշանակելու, հաշվարկելու (վերահաշվարկելու) և վճարելու մեթոդական ղեկավարումը, գործատուներից, պետական այլ մարմիններից ու կազմակերպություններից, ֆիզիկական անձանցից պահանջում է կենսաթոշակ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, ստուգում դրանց հավաստիությունը, հարկային մարմնից ստանում է շտեմարանը ձևավորելու համար անհրաժեշտ տվյալներ, ստուգում դրանց

		հավասար, եթե մահացած խորթ որդուն կամ խորթ դստերն անչափահաս տարիքում խնամել են առնվազն 5 տարի: Խորթ որդին և խորթ դուստրը կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն հարազատ որդուն և հարազատ դստերը հավասար: (Հոդված 13) 6. Երկու ծնողին կորցրած մինչև 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի՝ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային **կենսաթոշակի չափը** հաշվարկվում է հետևյալ կերպ. հիմնական կենսաթոշակի չափի հնգապատիկին գումարվում է մահացած յուրաքանչյուր ծնողի հաշվարկված (ենթադրյալ) կենսաթոշակի աշխատանքային մասի 50 տոկոսը: (Հոդված 15) Յուրաքանչյուր երեխայի, առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողի համար կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է մահացած կերակրողի վերջին զինծառայության պաշտոնը զբաղեցրած, նույն զինվորական կոչումը ունեցող և 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող զինծառայողի համար հաշվարկվող՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 60 տոկոսի չափով: Երկու ծնողին կորցրած մինչև 18 տարեկան յուրաքանչյուր երեխայի, առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողի համար կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկվում է մահացած կերակրողի վերջին զինծառայության պաշտոնը զբաղեցրած, նույն զինվորական կոչումը և 20 տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող զինծառայողի համար հաշվարկվող՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի 80 տոկոսի չափով: Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի (այդ թվում՝ երկու ծնողին կորցրած երեխայի, առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորողի) կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափը սահմանում է ՀՀ կառավարությունը: (Հոդված 23) 7. Կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի, իսկ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժի առկայության դեպքում **աշխատանքային ստաժում հաշվառվում են** նաև. ծնողներից (որդեգրողներից, խնամակալներից) մեկի՝ **հաշմանդամ երեխային** մինչև նրա 18 տարին լրանալը կամ խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ 10 տարուց ոչ ավելի, ծնողներից (որդեգրողներից) մեկի՝ մինչև յուրաքանչյուր երեխայի **2 տարին լրանալը երեխային խնամելու** ժամանակահատվածը՝ 6 տարուց ոչ ավելի, ուսումնական հաստատություններում, բացառությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների, առկա (ցերեկային) **ուսման ժամանակահատվածը**՝ 6 տարուց ոչ ավելի, **բռնադատված կամ քրեական հետապնդման ենթարկված և հետագայում օրենքով սահմանված կարգով արդարացված** անձի՝ կալանքի տակ գտնվելու, ազատազրկման վայրերում և աքսորավայրերում պատիժ կրելու ժամանակահատվածները՝ եռակի չափով՝ սկսած 14 տարեկանից: (Հոդված 29) Բռնադատված լինելու ժամանակահատվածները 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ դարձած անձի աշխատանքային ստաժում հաշվառվում են եռակի չափով՝ սկսած 14 տարեկանից, անկախ կենսաթոշակ նշանակելու համար պահանջվող աշխատանքային ստաժի առկայությունից: (Հոդված 30) 8. Կենսաթոշակը անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող անձի դեպքում նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի գրավոր դիմումի հիման վրա **նշանակում է** կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը՝ ըստ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում առկա՝ ՀՀ-ում կենսաթոշակի իրավունք ունեցող անձի հաշվառման հասցեի մասին տվյալների: Կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացնում է անձամբ: Կենսաթոշակի իրավունք ունեցող՝ 14 տարին լրացած անձը կարող է կենսաթոշակ նշանակելու դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել անձամբ: (Հոդված 33) 9. **Կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարելը** կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուի, իսկ անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի բանկային հաշվին փոխանցելն է: Անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում կենսաթոշակը նաև վճարվում է նաև նրա օրինական ներկայացուցչի՝ (ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) տված և նոտարի վավերացրած լիազորագրով, եթե լիազորագրով կենսաթոշակ վճարելու մասին գրավոր դիմումը և լիազորագիրը ներկայացվում են կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Վերալիազորման կարգով տրված լիազորագրով կենսաթոշակ չի վճարվում: (Հոդված 35) 10. **Կենսաթոշակառուի մահվան դեպքում** չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է մահացածի ամուսնուն կամ 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային՝ անկախ կենսաթոշակառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ նույն վայրում (հասցեում) հաշվառված լինելու հանգամանքից, իսկ ընտանիքի այլ անդամին՝ եթե նա, ըստ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, կենսաթոշակառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ հաշվառված է եղել նույն վայրում (հասցեում): Անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի մահվան դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է նաև նրա օրինական ներկայացուցչին՝ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին: Այդ գումարը վճարվում է, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում են ներկայացվում կենսաթոշակառուի մահվանից հետո: (Հոդված 36) 11. Կենսաթոշակը **վերահաշվարկվում** է նաև կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող երեխայի կամ առկա (ցերեկային) ուսուցմամբ սովորող զավակի մյուս ծնողի մահանալու դեպքում՝ նրա մահվան օրվանից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: (Հոդված 38) 12. **Բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունում**, ինչպես նաև **մանկատանը** ապրող երեխային վճարվում է կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի 50 տոկոսը: Այդ գումարները, մինչև երեխայի 18 տարեկան դառնալը կամ սահմանված կարգով պետական կազմակերպությունից հեռանալը, կուտակվում են երեխայի անունով հատուկ այդ նպատակով բացված համապատասխան հաշվում և երեխայի 18 տարին լրանալու կամ սահմանված կարգով պետական կազմակերպությունից հեռանալու օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում վճարվում միանվագ կարգով: (Հոդված 39) 13. Կենսաթոշակ վճարելը **վերսկսվում** է կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվելու կամ կենսաթոշակ վճարելը դադարեցված լինելու դեպքում՝ դիմելու (անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկատվությունն ստացվելու) ամսին հաջորդող ամսվա 1-	ներառվող տվյալները փոփոխելու համար առաջարկություններ ներկայացնելու, կենսաթոշակ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և շտեմարանը ձևավորելու համար անհրաժեշտ տվյալների հավաստիությունն ստուգելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: (Հոդված 48)	հավաստիությունը, առաջարկություններ է ներկայացնում հարկային մարմին՝ շտեմարան ներառվող տվյալների հավաստիությունը ճշտելու և դրանք փոփոխելու համար, իր լիազորությունների շրջանակում քննարկում է կենսաթոշակային օրենսդրության խախտումները, նշանակում, վերահաշվարկում է կենսաթոշակները, ապահովում կենսաթոշակների վճարումը կամ մերժում կենսաթոշակ նշանակելու, նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու դիմումները, վարում է շտեմարանը, շտեմարանից տվյալներ տրամադրում գործատուներին, ֆիզիկական անձանց և պետական մարմիներին ու կազմակերպություններին, օրենքով սահմանված կարգով քննարկում է կենսաթոշակ նշանակելու, վերահաշվարկելու, վճարելու մասին դիմումները, կենսաթոշակային ապահովությանն առնչվող հարցերով դիմող անձանց ապահովում է խորհրդատվությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում աջակցում նրանց պահանջվող փաստաթղթեր ստանալու գործում: (Հոդված 48)

		ից, եթե 14 տարեկան չդարձած անչափահաս կենսաթոշակառուի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի օրինական ներկայացուցիչը (ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) գրավոր դիմումը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ներկայացնում է անձամբ: (Հոդված 41		
107.	**«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-212-Ն, ընդունված է՝ 17.12.2014, ուժի մեջ է՝ 30.06.2015* Կարգավորում է մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկված լինելու մեջ կասկածվող անձանց հայտնաբերման պահից նրանց ուղղորդման, նրանց վերաբերյալ տեղեկատվության կուտակման և փոխանակման, որպես զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ նույնացման, աջակցության և պաշտպանության ապահովման, մտորման ժամկետի ընձեռնման գործընթացների հետ կապված հարաբերությունները:	1. Շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը սահմանվում է որպես մարդկանց թրաֆիքինգ կամ շահագործում: Շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը: Հայտնաբերման պահին մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկված երեխան հատուկ կատեգորիայի զոհ: Երեխա է համարվում 18 տարին չլրացած անձը, ինչպես նաև անձը, որի տարիքը անհայտ է, բայց կան ողջամիտ կասկածներ, որ չի լրացել նրա 18 տարին: (Հոդված 4) 2. Հավանական զոհերի աջակցությունը կարող է ներառել նաև, մասնավորապես, նախանույնացման փուլի տևողությամբ ժամանակավոր կացարանի տրամադրում՝ նաև օրինական ներկայացուցչի և խնամքի տակ գտնվող երեխաների համար, ինչպես նաև հիմնական կրթության ապահովում: (Հոդված 21) 3. **Կացարանի տրամադրումը** զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին, ինչպես նաև նրանց օրինական ներկայացուցչին ու խնամքի տակ գտնվող երեխաներին անհրաժեշտության և նրանց համաձայնության դեպքում բնակելի տարածքով ապահովումն է: Այդպիսի կացարան կարող են հանդիսանալ՝ գործընկեր հասարակական կազմակերպությունների ապաստարանները, խնամք և պաշտպանություն իրականացնող կամ օթևան տրամադրելու հնարավորությամբ այլ հաստատությունները, պետության կողմից տրամադրվող բնակելի տարածքները: (Հոդված 22) 4. **Բնաիրային օգնությունը** սննդի, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների տրամադրումն է ինչպես զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին, այնպես էլ նրանց խնամքի տակ գտնվող անձանց: (Հոդված 22) 5. Հատուկ կատեգորիայի զոհերի համար նախատեսված է **խնամքի տրամադրում** (ներառյալ՝ համապատասխան հաստատությունում) նախատեսված է: Խնամքը, ըստ կարիքի, կարող է տրամադրվել շուրջօրյա կամ միայն ցերեկային ժամերին, տնային պայմաններում, կացարանում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում կամ սոցիալ-վերականգնողական կենտրոններում կամ համապատասխան մասնագիտացված հաստատությունում: Խնամքի տրամադրման շրջանակներում առանց ծնողական խնամքի մնացած երեխաներն ապահովվում են ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններով, ծեր, հաշմանդամ զոհերը՝ իրենց հարազատ սոցիալական միջավայրում մնալու հնարավորությամբ: Խնամքը տրամադրվում է դիետիկ սննդի, բժշկական, սանիտարահիգիենիկ սպասարկման, հատուկ տրանսպորտային միջոցների, սոցիալ-հոգեբանական, մշակութային, կրթական, ժամանցի, անհրաժեշտության դեպքում՝ զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի դիսպանսերիզացման և հոսպիտալացման և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով: (Հոդված 22) 6. Հատուկ կատեգորիայի երեխա զոհերը մինչև աջակցության դադարեցումն ապահովվում են **հիմնական կրթությամբ**: Այդ կրթությունը, ըստ նպատակահարմարության, կարող է մատուցվել ինչպես մասնավոր դասընթացների, այնպես էլ հանրակրթական կամ հատուկ դպրոցներում աշակերտելու միջոցով: (Հոդված 22) 7. **Միջնակարգ կրթության կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հասանելիության ապահովումը** նպատակաուղղված է զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին հնարավորություն ընձեռել վերականգնելու կամ ստանալու միջնակարգ կրթություն կամ արհեստագործական այնպիսի ունակություններ, որոնք թույլ կտան հետագայում գտնելու համապատասխան աշխատանք: (Հոդված 22) 8. Հատուկ կատեգորիայի զոհերի վերադարձն իրականացվում է իր օրինական ներկայացուցչի, հոգեբանի կամ ոստիկանի ուղեկցությամբ: Վերադարձի հետ կապված ծախսերն իրականացվում են սահմանված ֆինանսական միջոցների հաշվին: (Հոդված 22) 9. Հատուկ կատեգորիայի հավանական զոհերը և զոհերը ապահովվում են համապատասխան աջակցությամբ, ինչպես նաև նրա հատուկ վիճակից բխող յուրահատկությունների հետ կապված լրացուցիչ աջակցությամբ: Իրավասու մարմինները ձեռնարկում են հնարավոր բոլոր միջոցները՝ հայտնաբերելու հատուկ կատեգորիայի հավանական զոհերի և զոհերի օրինական ներկայացուցիչներին: Դրա անհնարինության, ինչպես նաև այն դեպքերում, երբ հատուկ կատեգորիայի հավանական զոհերի և զոհերի ներգրավվածությունը չի բխում հատուկ կատեգորիայի հավանական զոհերի և զոհերի շահերից, հատուկ կատեգորիայի հավանական զոհերը և զոհերը նախանույնացման մեկնարկից մինչև աջակցության դադարեցումը օրենքով սահմանված կարգով ապահովվում է օրինական այլ ներկայացուցչով: Աջակցություն ստանալու նպատակով հատուկ կատեգորիայի հավանական զոհերի և զոհերի ուղղորդումն իրականացվում է օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ: Հատուկ կատեգորիայի երեխա զոհերի աջակցության հասանելիությունը ապահովվում է մինչև նրանց չափահասության տարիքի հասնելը: Չափահասության տարիքին հասնելուն պես անձը այլևս չի համարվում հատուկ կատեգորիայի զոհ՝ երեխա հանդիսանալու հիմքով, և նրա նկատմամբ աջակցության գործընթացն իրականացվում է զոհերի համար նախատեսված ընդհանուր հիմունքներով: (Հոդված 24)	Արգելվում է զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ եղանակով մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի վերաբերյալ այնպիսի տեղեկությունների հրապարակումը, որոնք թույլ կտան նույնացնել վերջինիս ինքնությունը, բացառությամբ նրա շահերից բխող դեպքերի՝ Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի որոշմամբ, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ: (Հոդված 7) Իրավասու մարմինները, մարդու իրավունքների և անձնական տվյալների պաշտպանության սկզբունքներին համահունչ, օրենքով սահմանված կարգով պահպանում են իրենց հայտնի դարձած անձնական և այլ տեղեկությունների գաղտնիությունը: (Հոդված 12) Կարգավորում է մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց հայտնաբերումը, իրավասու մարմիններ ուղղորդումը և տեղեկությունների փոխանցումը: (Հոդված 13), նույնացումը (Հոդված 14), նախանույնացումը (Հոդված 15), տեղեկությունների փոխանցումը նախանույնացման փուլում (Հոդված 16) և դրա ժամկետները (Հոդված 17), ինչպես նաև նույնացման ընթացակարգը (Հոդված 18), մտորման ժամկետը (Հոդված 19) Նույնացման հանձնաժողովը և իրավասու մարմինները յուրաքանչյուր կիսամյակ՝ մինչև հաջորդող ամսվա 15-ը, խորհուրդ են ներկայացնում միասնական հաշվետվություն՝ իրականացված աշխատանքների և կատարված ծախսերի վերաբերյալ: Խորհուրդը յուրաքանչյուր տարի՝ մինչև փետրվարի 15-ը, ՀՀ Ազգային ժողով է ներկայացնում հաշվետվությունների վերաբերյալ տարեկան ամփոփ զեկույց: (Հոդված 26)	• **ՀՀ-ում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհուրդը** մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի ոլորտում շահագրգիռ պետական մարմինների ղեկավար կազմից բաղկացած մարմին է, որի նպատակն է ՀՀ-ում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հիմնական ուղղությունների որոշումը, այդ ոլորտում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների կողմից իրականացվող աշխատանքների ընդհանուր համակարգումը, խորհրդին կից գործող աշխատանքային խմբերի, հանձնաժողովների վերահսկումը: Խորհրդի աշխատանքներին դիտորդական կարգավիճակով կարող են մասնակցել նաև շահագրգիռ՝ պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները: (Հոդված 9) • **Գործընկեր հասարակական կազմակերպություն** (Հոդված 10) • **Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովը** մարդուն որպես զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչելու իրավասությամբ օժտված միակ մարմինն է: Համապատասխան աջակցության և պաշտպանության տրամադրման նպատակով մարդը կարող է ճանաչվել զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ բացառապես նույնացման հանձնաժողովի կողմից: (Հոդված 11) • **Նախանույնացում** իրականացնելու և հավանական զոհերին նույնացման ներկայացնելու համար իրավասու մարմիններն են՝ գործընկեր հասարակական կազմակերպությունները, **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը** և **ՀՀ ոստիկանությունը:** (Հոդված 12) • Զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, իսկ պաշտպանությունը՝ ՀՀ ոստիկանությունը: (Հոդված 20)
108.	**«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենք**	1. Մայրության նպաստի միջոցով ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի (արձակուրդի իրավունք ունենալու) ժամանակահատվածում մասնակիորեն կամ ամբողջությամբ **փոխհատուցվում է** նպաստի իրավունք ունեցող անձանց հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության հետևանքով **կորցրած աշխատավարձը (եկամուտը)**, որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ: (Հոդված 3)	Հարկային մարմինը եկամտային հարկի ճշտությանն ուղղված դեպքերում իրականացվող ստուգումների ժամանակ **հսկողություն է իրականացնում**	Հարկային մարմին Լիազոր մարմինը **(ՀՀ ԱՍՀՀՆ)** հաշվարկում, նշանակում և վճարում է ինքնուրույնաբար իրենց աշխատանքով

	ՀՕ-160-Ն, ընդունված է՝ 27.10.2010, ուժի մեջ է՝ 01.12.2010 Կարգավորում է վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է վարձու աշխատողների և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստի հասկացությունը, ժամանակավոր անաշխատունակության նպաստի տեսակները, վարձու աշխատողների և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման պայմաններն ու կարգը:	2. **Մայրության նպաստի իրավունք** ունեն գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձինք, բացառությամբ ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամների, և անհատ ձեռնարկատերերը, բացառությամբ արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերի, նոտարները: Անձը մայրության նպաստի իրավունք ունի սահմանված պայմանների բավարարման և օրենքով սահմանված կարգով ու չափով եկամտային հարկ վճարած լինելու դեպքում: Մայրության նպաստը տրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի համար, բայց ոչ ավելի, քան մինչև աշխատանքային պայմանագիրը լուծելը (աշխատանքից ազատվելը) կամ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտը, կամ ձեռնարկատիրական գործունեության դադարեցումը կամ նոտարի պաշտոնավարման ավարտը (գործունեության դադարեցումը): Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին մայրության նպաստը տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածում գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դեպքում՝ գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու օրվանից: Համատեղությամբ աշխատելու դեպքում (այդ թվում՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ հանդիսացող վարձու աշխատողի դեպքում) մայրության նպաստը հաշվարկվում և վճարվում է հիմնական գործատուի կողմից: (Հոդված 4) 3. **Վարձու աշխատողին** (Հոդված 7) և **ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձանց** (Հոդված 17) տրվում է մայրության նպաստ, ինչպես նաև ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ: 4. Վարձու աշխատողին (Հոդված 11) և ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձանց (Հոդված 20) մայրության նպաստ տրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդի **ժամանակահատվածի** բոլոր օրացուցային օրերի համար: Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված վարձու աշխատողին մայրության նպաստ վճարվում է միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի օրացուցային օրերի համար: Նպաստը վճարվում է որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական դառնալը (երկու և ավելի նորածին որդեգրած կամ խնամակալ նշանակված անձին՝ մինչև 110 օրական դառնալը) ժամանակահատվածի օրացուցային օրերի համար: Հղիության 154-րդ օրը և 154 օրից հետո վաղաժամ ծննդաբերելու և հղիության արձակուրդում չգտնվելու դեպքում մայրության նպաստը տրվում է միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի օրացուցային օրերի համար (ներառյալ, երբ երեխան ծնվել է մահացած կամ մահացել է ծնվելուց հետո): Մինչև հղիության 154-րդ օրը հղիության արհեստական (այդ թվում՝ բժշկական և սոցիալական ցուցումներով) կամ ինքնաբեր ընդհատման դեպքերում ժամանակավոր անաշխատունակության ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար տրվում է հիվանդության նպաստ: Փոխնակ (սուրոգատ) մորը մայրության նպաստ վճարվում է ընդհանուր հիմունքներով: Փոխնակ (սուրոգատ) մորից ծնված երեխայի կենսաբանական մորը մայրության նպաստ վճարվում է միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի օրացուցային օրերի համար՝ երեխայի ծնվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական դառնալը (երկու և ավելի երեխա ծնվելու դեպքում՝ մինչև 110 օրական դառնալը) ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար: (Հոդված 11) 5. Վարձու աշխատողին **տնային (ամբուլատոր) պայմաններում հիվանդ երեխայի խնամքի** անհրաժեշտության դեպքում ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ է տրվում՝ 24 օրացուցային օրից ոչ ավելի, իսկ վարակիչ հիվանդությունների պատճառով երեխայի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 28 օրացուցային օրից ոչ ավելի ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած երկրորդ աշխատանքային օրվանից: (Հոդված 12) 6. **Հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվող հիվանդ երեխայի խնամքն** իրականացնելու դեպքում վարձու աշխատողին (Հոդված 12) և ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձանց (Հոդված 21) նպաստ տրվում է հիվանդանոցում գտնվելու ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած երկրորդ աշխատանքային օրվանից, իսկ մինչև 18 տարեկան՝ անհատ**ական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամ երեխայի առողջարանային բուժման** ընթացքում նրա խնամքն իրականացնելու դեպքում՝ երեխայի առողջարանային բուժման ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած երկրորդ աշխատանքային օրվանից, բայց ուղեգրում նշված ժամանակահատվածից ոչ ավելի, ընդ որում, նպաստ է տրվում օրացուցային տարում մեկ անգամ: (Հոդված 12) 7. Մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան **հաշմանդամ երեխայի խնամքի** համար, եթե մայրը (խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության կամ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ տրվում է երեխայի խնամքն իրականացնող այլ վարձու աշխատողին, երեխայի մոր (խնամակալի, հոգաբարձուի) հիվանդության կամ նրա հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի համար՝ սկսած երկրորդ աշխատանքային օրվանից: (Հոդված 12) 8. Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում առաջացած **ժամանակավոր անաշխատունակության** դեպքում ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի տրվում: Եթե անաշխատունակությունը շարունակվում է նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդի ավարտից հետո, ապա ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է այն աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվանից, երբ աշխատողը պետք է անցներ աշխատանքի: Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքում վարձու աշխատողներին մայրության նպաստը տրվում է ընդհանուր հիմունքներով՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի համար, բայց ոչ ավելի, քան մինչև աշխատողի աշխատանքի անցնելը: (Հոդված 13) 9. Աշխատանքից ազատման օրինականության մասին վեճի դեպքում վարձու աշխատողին մայրության նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության՝ գործատուի որոշման կամ դատարանի վճռի հիման վրա վարձու աշխատողին աշխատանքում վերականգնվելու օրվանից սկսած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար: (Հոդված 14) 10. Կարգավորում է նպաստի տրամադրումը գործատուի հետ **որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր** կնքած վարձու աշխատողին (Հոդված 16) 11. Սահմանում է **մայրության նպաստը և միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկելու կարգը** (Հոդված 22), կարգավորում է նպաստը նշանակելը և վճարելը (Հոդված 24) և պակաս վճարված նպաստի վճարումը, ավել վճարված նպաստի գումարի հետպահումը (Հոդված 27), սահմանում է նպաստի նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերը	գործատուների կողմից վարձու աշխատողներին նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման ճշտության նկատմամբ, այդ թվում՝ մայրության նպաստի հաշվարկման, նշանակման և վճարման ճշտության նկատմամբ: (Հոդված 28) Առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը լիազոր մարմնին է տրամադրում **անձնավորված տեղեկատվությունն** հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրամադրված անաշխատունակության թերթիկների մասին: (Հոդված 28) Լիազոր մարմնի՝ նպաստներին վերաբերող որոշումները կարող են **բողոքարկվել** վերադասության կամ դատական կարգով: Գործատուի՝ նպաստներին վերաբերող որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով: (Հոդված 29)	ապահովված անձանց նպաստները: (Հոդված 28) ՀՀ առողջապահության նախարարություն

109.	**«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-154-Ն, ընդունված է՝ 12.12.2013, ուժի մեջ է՝ 01.01.2014* Կարգավորում է ՀՀ-ում պետական նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է պետական նպաստի հասկացությունը, տեսակները և տրամադրման կարգը:	1. Սահմանում է **պետական նպաստների տեսակները**, այդ թվում՝ ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ, հրատապ օգնություն, երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ, ժամանակավոր անաշխատունակության նպաստ, մայրության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ: (Հոդված 5) 2. Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելիս **ընտանիքի անդամ չեն համարվում**, մասնավորապես, երկարաժամկետ կացարան և շուրջօրյա լրիվ խնամք ապահովող բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, այդ թվում՝ մանկատանը, մասնագիտացված տուն-ինտերնատում գտնվող կամ տեղավորված քաղաքացիները: (Հոդված 12) 3. **Ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի** ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ ունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից: (Հոդված 13) 4. **Ընտանեկան նպաստի չափը որոշվում է՝** ընտանեկան նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի կազմում գտնվող և ընտանիքի բնակության վայրում փաստացի բնակվող 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամի համար տրվող հավելումը: 2. Ընտանիքի 18 տարին չլրացած անդամի համար տրվող հավելման չափը տարբերակվում է՝ ելնելով տվյալ ընտանիքի անապահովության աստիճանից, բնակավայրից, ընտանիքի 18 տարին չլրացած անդամների թվից: (Հոդված 14) 5. **Հրատապ օգնության տեսակները** ներառում է ընտանիքում երեխայի ծննդյան կամ ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում տրամադրվող միանվագ հրատապ օգնությունը: (Հոդված 18) 6. **Երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնության իրավունք** ունի այն ընտանիքը, որի անդամներից մեկն ունեցել է երեխա և դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան նպաստի իրավունք: Երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնություն ստանալու համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը դիմում է տարածքային կենտրոն: Երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնությունը նշանակվում է, եթե ընտանիքի չափահաս անդամներից մեկը դիմել է երեխայի ծնվելու օրվանից սկսած՝ վեց ամսվա ընթացքում, և ընտանիքը դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան նպաստ ստանալու իրավունք: Երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնությունը նշանակվում է ընտանիքում ծնված յուրաքանչյուր երեխայի համար: Երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնությունը վճարվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա ընթացքում: (Հոդված 19) 7. **Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնության իրավունք** ունի դիմելու ամսվա դրությամբ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող այն ընտանիքը, որի անչափահաս անդամներից մեկն ընդունվել է հանրակրթական ուսումնական հաստատության առաջին դասարան: Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնություն ստանալու համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը դիմում է տարածքային կենտրոն: Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնությունը նշանակվում է, եթե ընտանիքի չափահաս անդամներից մեկը դիմել է երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու տարվա օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների ընթացքում, և ընտանիքը դիմելու ամսվա դրությամբ ունի ընտանեկան նպաստ ստանալու իրավունք: Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնությունը նշանակվում է ընտանիքի՝ առաջին դասարան ընդունվող յուրաքանչյուր երեխայի համար: Երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնությունը վճարվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա ընթացքում: (Հոդված 20) 8. **Մայրության նպաստի իրավունք ունեն**. գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը, բացառությամբ՝ արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերերի, նոտարները, ՀՀ բնակության վայրի հասցեով հաշվառված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ վարձու աշխատող կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ չհանդիսացող անձը: Չաշխատող անձ է համարվում նաև ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամը, արտոնագրային վճար վճարող անհատ ձեռնարկատերը, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց գործատուից եկամուտ ստացող անձը: (Հոդված 23.1) 9. **Վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստը նշանակելու և վճարելու հետ կապված հարաբերությունները** կարգավորվում են «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքով: «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքով մայրության նպաստի իրավունք ունեցող (հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ վարձու աշխատող կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսացող) անձին չաշխատող անձի մայրության նպաստ չի նշանակվում: (Հոդված 23.1) 10. **Չաշխատող անձի հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք** ունենալու ժամանակահատված է համարվում աշխատող կանանց համար սահմանված հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածը: Չաշխատող անձի հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածը կազմում է 140 օր (70 օր հղիության, 70 օր ծննդաբերության): Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակվում է, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի (140 օրվա) ընթացքում: (Հոդված 23.1) 11. **Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակվում է** մայրության նպաստի իրավունք ունեցող անձի դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը տարածքային կենտրոն ներկայացվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու համար հիմք են հանդիսանում բժշկական հաստատության տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկը և ծննդօգնության պետական հավաստագիրը: Երեխայի ծննդյան օրվա դրությամբ ծննդօգնության պետական հավաստագիրը չստացած կնոջը մայրության նպաստ չի նշանակվում, բացառությամբ սահմանված դեպքերի: (Հոդված 23.2) 12. Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու օրվան հաջորդող 12 ամսվա ընթացքում նպաստը չվճարելու դեպքում նպաստի իրավունքը դադարում է: Չաշխատող փոխնակ (սուրոգատ) մորը մայրության նպաստ վճարվում է ընդհանուր հիմունքներով: Փոխնակ (սուրոգատ) մորից ծնված երեխայի՝ չաշխատող կենսաբանական մորը մայրության նպաստ չի վճարվում: Հղիության 154-րդ օրը և 154 օրից հետո՝ մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրը,	Ընտանիքների **անապահովության գնահատման համակարգը** ներառում է ընտանիքի անապահովության գնահատման կարգը, ընտանիքի հաշվառումը համակարգում, ընտանիքի անապահովության գնահատման տեղեկատվական բազան: (Հոդված 9) Ընտանիքի **անապահովության աստիճանը գնահատվում** է ընտանիքի անապահովության բնութագրիչների՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի եկամուտ, ընտանիքի կազմ, ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական վիճակ և այլ պայմանների հիման վրա: Ընտանիքի անապահովության աստիճանը գնահատելիս ընտանիք է համարվում միևնույն բնակության վայրում հաշվառված (փաստացի բնակվող) քաղաքացիների սոցիալական փոքր խումբը, որի անդամները վարում են ընդհանուր տնտեսություն և ունեն ընդհանուր բյուջե, ինչպես նաև միայնակ բնակվող քաղաքացին: Ընտանիքների անապահովության գնահատման կարգը մշակվում է, իսկ դրանում ներառվող ընտանիքի անապահովության բնութագրիչներն ընտրվում են՝ հաշվի առնելով տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված ընտրանքային հետազոտությունների տվյալները: Ընտանիքների անապահովության գնահատումն իրականացվում է ինքնաշխատ եղանակով՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում ներառված տվյալների հիման վրա: (Հոդված 10) Կարգավորում է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում **հաշվառվելը** և ընտանիքների անապահովության գնահատման **տեղեկատվական բազան** (Հոդված 11)	• Պետական **նպաստը տրամադրում** (նշանակում և դրա վճարումը կազմակերպում) է քաղաքացու բնակության վայրի՝ պետական նպաստ տրամադրելու ՀՀ կառավարության լիազորած մարմինը՝ ՀՀ ԱԱՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը: (Հոդված 6) • Խորհուրդը եռամյակային հրատապ օգնության տրամադրման մասին առաջարկությունը տալիս է, մասնավորապես, հաշվի առնելով՝ ընտանիքում մեկից ավելի երեխայի առկայությունը: (Հոդված 22)

		վաղաժամ ծննդաբերելու դեպքում չաշխատող անձին մայրության նպաստը տրվում է 70 օրվա՝ միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի համար (ներառյալ, երբ երեխան ծնվել է մահացած): Չաշխատող անձին տրվող մայրության նպաստի չափը հաշվարկելու համար հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի հիսուն տոկոսը բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի թիվը) և բազմապատկվում 140-ով (հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի օրացուցային օրերի թվով), իսկ սույն հոդվածի 7-րդ մասում նշված դեպքում բազմապատկվում է 70-ով (ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի օրացուցային օրերի թվով): (Հոդված 23.2) 13. **Երեխայի ծննդյան միանվագ նպաստի** իրավունք ունեն երեխայի (որի ծննդյան կապակցությամբ ծագել է ծննդյան միանվագ նպաստի իրավունքը) ծնողը, որդեգրողը կամ խնամակալը: Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է, եթե ծնողը և նոր ծնված երեխան հաշվառված են ՀՀ-ում բնակության վայրի հասցեով: Երեխայից հրաժարվելու, երեխային բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը) տեղավորելու, երեխայի որդեգրվելու կամ երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում երեխայի ծնողը կորցնում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը: Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը տարբերակվում է նոր ծնված երեխայի հերթական կարգաթվով՝ հաշվի առնելով նոր ծնված երեխայի ծնողների մյուս երեխաների և զավակների թիվը: Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է, եթե դիմումը ներկայացվել է նոր ծնված երեխայի ծննդյան օրվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում: Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է ծնված յուրաքանչյուր երեխայի համար: Միաժամանակ մեկից ավելի երեխայի ծնվելու դեպքում, եթե, նոր ծնված երեխաների հերթական կարգաթվերից կախված, նախատեսված են երեխայի ծննդյան միանվագ նպաստի տարբերակված չափեր, ապա նոր ծնված յուրաքանչյուր երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է նոր ծնված երեխաներից ամենաբարձր կարգաթիվ ունեցող երեխայի համար սահմանված չափով: (Հոդված 24) 14. Կարգավորում է երեխայի ծննդյան միանվագ նպաստ **նշանակելը և վճարելը**: Երրորդ և հաջորդ երեխայի ծնվելու դեպքում (եթե երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է ընտանիքում ծնված երրորդ և հաջորդ երեխայի համար սահմանված չափով) երեխայի ծննդյան միանվագ նպաստի մի մասը վճարվում է սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ ընտանեկան դրամագլխի սպասարկման պայմանագիր կնքած բանկում նոր ծնված երեխայի անվամբ բացված հատուկ հաշվին (պետական աջակցության հաշիվ) մուտքագրելու միջոցով: (Հոդված 25) 15. **Ընտանեկան դրամագլուխը** մինչև երեխայի (որի անվամբ բացված է պետական աջակցության հաշիվը) 18 տարին լրանալը տնօրինում է երեխայի հետ նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) օրինական ներկայացուցիչը (ծնողը, խնամակալը, որդեգրողը)՝ բացառապես ՀՀ կառավարության սահմանած պայմաններով և կարգով անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով: Օրինական ներկայացուցչի (ծնողի, խնամակալի, որդեգրողի) ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունքը դադարում է, մասնավորապես, երեխաներից մեկի՝ բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը) տեղավորվելու կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում: Հաշվետերն իրավունք ունի առանց սահմանափակումների տնօրինելու ընտանեկան դրամագլուխը 18 տարին լրանալուց հետո: Ընտանեկան դրամագլուխը ՀՀ օրենսդրության խախտմամբ տնօրինվելու դեպքում պետական աջակցության հաշվից ելքագրված միջոցները ենթակա են բռնագանձման դրանք տնօրինելու համար դիմում ներկայացրած անձից: Ընտանեկան դրամագլուխը չի կարող բռնագանձվել (պետական աջակցության հաշվի վրա արգելանք չի կարող կիրառվել) մինչև հաշվետիրոջ 18 տարին լրանալը: (Հոդված 26) 16. **Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունեն** երեխայի՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողը, որդեգրողը կամ խնամակալը մինչև երեխայի 2 տարեկանը լրանալը: Խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է, եթե ծնողը և երեխան ՀՀ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված են ՀՀ-ում բնակության վայրի հասցեով: Եթե ծնողը խնամքի տակ ունի մեկից ավելի մինչև երկու տարեկան երեխա, ապա խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է յուրաքանչյուր երեխայի համար: Այս դրույթները չեն տարածվում ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամների վրա: (Հոդված 27) 17. Կարգավորում է խնամքի նպաստ **նշանակելը և վճարելը** (Հոդված 28), խնամքի նպաստ ստանալու **իրավունքը դադարեցնելը** և **վերականգնելը**, խնամքի նպաստ **վճարելը դադարեցնելը** և **վերսկսելը**, **չվճարված խնամքի նպաստի գումարը վճարելը** (Հոդված 28.1) 18. **Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք** ունի, մասնավորապես, մահացած կերակրողի՝ կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող 18 տարին չլրացած երեխան՝ մինչև 18 տարին լրանալը, ամուսինը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը՝ եթե նա զբաղված է մահացած կերակրողի 14 տարին չլրացած՝ նպաստի իրավունք ունեցող երեխայի խնամքով, ըստ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) և չի աշխատում: Կերակրողին կորցնելու դեպքում նպաստը նշանակվում է կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունենալու ամբողջ ժամանակահատվածի համար: Կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացող անչափահասն այդ իրավունքը պահպանում է նաև որդեգրվելու դեպքում: Խորթ որդին և խորթ դուստրը կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունեն հարազատ որդուն և հարազատ դստերը հավասար: (Հոդված 31) 19. Կարգավորում է կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունքը (Հոդված 31), նպաստ ստանալու իրավունքը, նպաստը նշանակելը և վճարելը (Հոդված 32), նպաստ նշանակելու ժամկետները (32.1), նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելը և վերականգնելը (Հոդված 33), նպաստի չվճարված գումարը վճարելը (Հոդված 34)		
110.	**«Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենք**	1. Մանկական կաթնախառնուրդ է համարվում արդյունաբերական եղանակով մշակված, կենդանական կամ բուսական ծագում ունեցող կաթ կամ կրծքի կաթի փոխարինիչ, որը նախատեսված է ծննդյան պահից մինչև 6 ամսական տարիքը, իսկ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդ՝ 6 ամսականից բարձր տարիքի մանուկների և վաղ տարիքի երեխաների կերակրման համար: Հավելյալ սնունդ է 6 ամսականից բարձր մանուկների և վաղ տարիքի երեխաների սնունդը՝ նախատեսված ի հավելումն կրծքի կաթի կամ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների օգտագործմանը: Լրացուցիչ սնունդ են բժշկական ցուցումներով կամ	Կրծքով կերակրման խրախուսման ոլորտում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի իրավասությունները ներառում են կրծքով կերակրման խրախուսման	• **ՀՀ կառավարության** իրավասությունները ներառում են մանուկներին և վաղ տարիքի երեխաներին անվտանգ և համապատասխան (համարժեք)

	ՀՕ-177-Ն, ընդունված է՝ 20.11.2014, ուժի մեջ է՝ 17.03.2015 Կարգավորում է երեխաներին կրծքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության՝ արտադրության, պիտակավորման, վաճառքի, բաշխման, գովազդի, ինչպես նաև դրանց մասին իրազեկման և տեղեկությունների տարածման հետ կապված հարաբերությունները:	մայրական կաթի անբավարարության դեպքում մանուկների և վաղ տարիքի երեխաների համար նախատեսված կաթը կամ կրծքի կաթի փոխարինիչները: Մանկական սնունդը՝ մանուկների և վաղ տարիքի երեխաների համար նախատեսված սնունդն է, որը ներառում է մանկական կաթնախառնուրդը, վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդը և հավելյալ սնունդը: Հարակից ապրանքներ են մանկական սնունդը սպառողին հասցնելու և (կամ) երեխային կերակրելու համար նախատեսված միջոցները և պարագաները, այդ թվում՝ կերակրման շշերը և երեխաներին կերակրելու կամ հանգստացնելու նպատակով օգտագործվող արհեստական ծծակները: Մանուկ համարվում է մինչև 12 ամսական երեխան, իսկ վաղ տարիքի երեխա՝ 12 ամսականից մինչև 3 տարեկան (36 ամսական) երեխան: (Հոդված 4) 2. **Նպատակն** է ապահովել մանուկների և վաղ տարիքի երեխաների առողջ և անվտանգ սնուցումը կրծքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության կարգավորման միջոցով: (Հոդված 2) 3. **Խնդիրները** ներառում են. խրախուսել և պաշտպանել կրծքով կերակրումը՝ որպես օպտիմալ և այլընտրանք չունեցող միջոց մանուկների և վաղ տարիքի երեխաների անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու համար, խրախուսել ժամանակին և համապատասխան հավելյալ սնուցման ապահովումը, իրազեկել հանրությանը, ներառյալ՝ հղիներին, նրանց ընտանիքներին և երեխաներին խնամողներին, կրծքով կերակրման առավելությունների, կրծքի կաթի փոխարինիչների օգտագործման և ոչ ճիշտ օգտագործման հետ կապված՝ առողջությանը սպառնացող հնարավոր վտանգների և ռիսկերի վերաբերյալ՝ տրամադրելով համապատասխան, ճշգրիտ և հասանելի տեղեկատվություն, խրախուսել ու աջակցել մայրերի, մանուկների և վաղ տարիքի երեխաների համար բարյացակամ միջավայրի ապահովումն առողջապահական կազմակերպություններում, հասարակական վայրերում և աշխատավայրերում: (Հոդված 3) 4. **Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի** ստանալու կրծքով կերակրում՝ որպես օպտիմալ և այլընտրանք չունեցող միջոց անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ստանալու համար, զերծ մնալու կրծքով կերակրումից՝ բժշկական հակացուցումների առկայության դեպքում, ֆիզիոլոգիական պահանջներից ելնելով՝ 6 ամսականից ստանալու հավելյալ սնունդ, իսկ բժշկական ցուցումներով՝ լրացուցիչ սնունդ: Պետությունը միջոցներ է ձեռնարկում կրծքով կերակրումը խրախուսելու, կրծքով կերակրող կանանց և երեխաների իրավունքները պաշտպանելու համար: (Հոդված 9) 5. **Կրծքով կերակրող կինն իրավունք ունի** ունենալու համապատասխան պայմաններ աշխատավայրերում, քրեակատարողական հիմնարկներում, առողջապահական կազմակերպություններում և այլ հասարակական վայրերում կրծքով կերակրելու համար, ստանալու տեղեկատվություն կրծքով կերակրման առավելությունների, ինչպես նաև մանուկների և վաղ տարիքի երեխաների առողջ և անվտանգ սնուցման վերաբերյալ, ստանալու կրծքով կերակրման ապահովման հետ կապված անվճար բժշկական խորհրդատվություն: (Հոդված 10) 6. Արգելվում է՝ առողջապահական կազմակերպությունների կողմից մանկական սննդի և հարակից ապրանքների **վաճառքը**, համապատասխանության գնահատում չանցած կամ պիտանելիության ժամկետանց մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքը, մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող սննդամթերքը վաճառել կամ ներկայացնել որպես պիտանի 6 ամսականից փոքր մանուկների կերակրման համար, մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքը՝ լիազոր մարմնի սահմանած պահպանման համապատասխան պայմաններ չունեցող առևտրի օբյեկտի, սպառողական ապրանքների շուկայի, շրջիկ առևտրի կետի և (կամ) առևտրի կենտրոնի կողմից (Հոդված 11) 7. Մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի և հարակից ապրանքների **գովազդը և (կամ) խրախուսման այլ ձևերն** արգելվում են: Խրախուսման արգելված այլ ձևերն ընդգրկում են՝ հատուկ ցուցահանդես-վաճառքները, շնորհանդեսները, շահումները, պարգևների, մրցանակների, նվերների շնորհումը, զեղչի կտրոնների կիրառումը, ինչպես նաև զեղչային կամ որևէ այլ խրախուսական նպատակներ հետապնդող գնային քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը, ցուցադրումը, տարածումը կամ այլ ձևով հրապարակայնորեն հասանելի դարձնելը, մանկական սննդի և հարակից ապրանքների նմուշների տրամադրումը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Հավելյալ սննդի գովազդը թույլատրվում է միայն այն դեպքերում, եթե՝ չի գովազդվում առողջապահական կազմակերպություններում, հավելյալ սննդի մասին տրամադրվող ցանկացած տեղեկություն խրախուսում է բացառապես կրծքով կերակրումը կյանքի առաջին 6 ամիսների ընթացքում և շարունակական կրծքով կերակրումը մինչև երկու տարեկան հասակը: (Հոդված 12) 8. **Մանկական սննդի և հարակից ապրանքների խրախուսումն արտադրողների և (կամ) բաշխողների կողմից արգելվում է**: Արտադրողի և (կամ) բաշխողի կողմից արգելվում են բուժաշխատողներին կամ առողջապահական կազմակերպություններին մանկական սնունդ և հարակից ապրանքներ նվիրելը կամ դրանք տրամադրելը հայտարարված մեծածախ գնից կամ մեծածախ գնի բացակայության դեպքում՝ մանրածախ գնի 80 տոկոսից ցածր գնով, բացառությամբ սահմանված դեպքերի, մանկական սննդի և հարակից ապրանքների օգտագործումը խրախուսելու նպատակով առողջապահական կազմակերպությանն անվճար սարքավորումներ, պարագաներ տրամադրելը կամ ծառայություններ մատուցելը, բուժաշխատողներին և առողջապահական կազմակերպություններին նվերներ, այդ թվում՝ գրիչներ, օրացույցներ, պաստառներ, հուշատետրեր, նոթատետրեր, հասակաչափեր, մանկան աճի կամ զարգացման գրաֆիկներ, խաղալիքներ տրամադրելը, բուժաշխատողներին կամ բուժաշխատողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններին կամ արհեստակցական միություններին դրամական հատկացումներ տրամադրելը կամ առաջարկելը (նվիրատվություններ, հոնորարներ՝ մատուցված ծառայությունների համար, գիտահետազոտական աշխատանքների անցկացման համար՝ հատուցումներ, հետազոտական դրամաշնորհներ կամ հանդիպումների, սեմինարների, շարունակական ուսուցողական դասընթացների կամ գիտաժողովների հետ կապված դրամային հատկացումներ և այլն), հղի կանանց կամ կերակրող մայրերի, մանուկների և վաղ տարիքի երեխաների ծնողների կամ նրանց ընտանիքների անդամների համար ծնելիության, հղիության, երեխայի ծննդի և սնուցման հետ առնչվող իրադարձություններ, միջոցառումներ, մրցույթներ, խորհրդատվական հեռախոսագծերի գործունեություն կամ արշավներ հովանավորելը, մանուկների և վաղ տարիքի երեխաների սնուցման հետ առնչվող տեղեկատվական կամ ուսուցողական նյութերի տրամադրումը, տարածումը, ուսուցողական գործունեության ծավալումը, բացառությամբ լիազոր մարմնի հետ համաձայնեցված, մանկական սննդի և հարակից ապրանքների հատկանիշների գիտական ասպեկտներին կամ օգտագործման եղանակներին վերաբերող տեղեկատվության տրամադրման: (Հոդված 13)	ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողությունը և մշտադիտարկումը, կրծքով կերակրման խրախուսման ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պատասխանատվության կիրառումը, մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների գրանցումը: (Հոդված 6) Մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում լիազոր մարմնի իրավասությունները ներառում են մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողությունը և մշտադիտարկումը, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պատասխանատվության կիրառումը: (Հոդված 6) Կրծքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում են լիազոր մարմինները: (Հոդված 7) Կրծքով կերակրումը խրախուսելու ազգային ծրագրով նախատեսված մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների մասին տեղեկատվական և ուսուցողական նյութերը հրապարակվում են լիազոր մարմնի կողմից լիազորված կազմակերպությունների միջոցով տվյալ տարվա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև տեղական և միջազգային ոչ կառավարական գործընկեր կազմակերպությունների միջոցների հաշվին, այլ կազմակերպությունների կողմից՝ նյութերը լիազոր մարմնի հետ նախապես համաձայնեցնելուց հետո: Լիազոր մարմինն իրավունք ունի արգելելու սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների մասին տեղեկատվական և ուսուցողական նյութերի հրապարակումը և տարածումը: (Հոդված 20) Մանկական սնունդ արտադրողների և (կամ) բաշխողների կողմից ցանկացած առաջարկի դեպքում (նմուշ, նվեր կամ այլ շնորհ) կամ օրենքի նորմերի այլ	սնուցում ապահովելու նպատակով կրծքով կերակրման խրախուսման ազգային ծրագրի հաստատումը, կրծքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում միջգերատեսչական համագործակցության ապահովումը: (Հոդված 5) • ՀՀ առողջապահության նախարարություն • **Առողջապահական կազմակերպությունները** կրծքով կերակրման համար պարտավոր են ապահովել բարյացակամ միջավայր, այդ թվում՝ խրախուսել ու աջակցել կրծքով կերակրումը՝ որպես օպտիմալ և այլընտրանք չունեցող միջոց մանուկների և վաղ տարիքի երեխաների անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու համար, խրախուսել ժամանակին և համապատասխան հավելյալ սնուցման կազմակերպումը, պահպանել կրծքով կերակրման կանոնները և նշված կանոնների վերաբերյալ պարբերաբար իրազեկել բժշկական անձնակազմին, իրազեկել հանրությանը, ներառյալ՝ հղիներին, նրանց ընտանիքներին և երեխաներին խնամողներին, կրծքով կերակրման առավելությունների և գործնական հմտությունների, կրծքի կաթի փոխարինիչների օգտագործման և ոչ ճիշտ օգտագործման հետ կապված՝ առողջությանը սպառնացող հնարավոր վտանգների և ռիսկերի վերաբերյալ՝ տրամադրելով համապատասխան, ճշգրիտ և հասանելի տեղեկատվություն, իրականացնել կրծքով կերակրման համար անհրաժեշտ գործնական հմտությունների դասընթաց բուժանձնակազմի համար, մանկական սնունդ արտադրողներին և բաշխողներին չտրամադրել հղիների և կերակրող մայրերի կոնտակտային տվյալներ: (Հոդված 18) • **Բուժաշխատողները** պարտավոր են հղիների, ծնողականների և նրանց հարազատների հետ հանդիպումների ժամանակ խրախուսել կրծքով կերակրումը՝ որպես օպտիմալ և այլընտրանք չունեցող միջոց՝ մանուկների և վաղ տարիքի երեխաների անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու համար, ժամանակին գնահատել և խրախուսել համապատասխան հավելյալ սնուցման կազմակերպումը, պահպանել կրծքով կերակրման կանոնները և նշված

		9. Մանկական սնունդը և հարակից ապրանքներն **անվճար կամ ցածր գներով** կարող են տրամադրվել՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, բժշկական ցուցումներով հատուկ սնուցողական պահանջներ ունեցող երեխաներին, մայրական կաթով կերակրման բժշկական հակացուցումների դեպքում: (Հոդված 15) 10. Սահմանում է մանկական սննդի և հարակից ապրանքների **պիտակներին** ներկայացվող պահանջները: 11. Մանուկների և վաղ տարիքի երեխաների սնուցման վերաբերյալ գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական և ուսուցողական նյութերը պետք է լինեն հայերենով, անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ լեզուներով, պարունակեն ճշգրիտ և արդի տեղեկատվություն և բացառեն որևէ նկար կամ տեքստ, որը խրախուսում է մանկական սննդի և հարակից ապրանքների օգտագործումը, շշով կերակրումը կամ չի նպաստում կրծքով կերակրմանը: Դրանք պետք է հստակ ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը. կրծքով կերակրման անհրաժեշտությունն ու առավելությունները, 6 ամիս բացառապես և դրան հետևող շարունակական (երկու տարի և ավելի) կրծքով կերակրման կարևորությունը, ինչպես սկսել և պահպանել բացառապես և շարունակական կրծքով կերակրումը, ներառյալ, թե ինչու է դժվար փոխել կրծքով չկերակրելու որոշումը, 6 ամսականից սկսած՝ հավելյալ սննդի տրամադրման կարևորությունը, շշով կերակրման կամ հավելյալ սննդի վաղ տրամադրման բացասական ազդեցությունը կրծքով կերակրման վրա, տնային պայմաններում հավելյալ սննդի պատրաստումը: (Հոդված 20) 12. Մանուկների և վաղ տարիքի երեխաների սնուցման վերաբերյալ գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական և ուսուցողական նյութերը չպետք է ներկայացնեն, թե իբր մանկական սննդով կերակրելը կամ հարակից ապրանքներ օգտագործելը համարժեք է, համեմատելի է կամ գերազանցում է կրծքի կաթին կամ կրծքով կերակրմանը, պարունակեն մանկական սննդի և հարակից ապրանքների ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ կամ արտադրողի և (կամ) բաշխողի անվանումը, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը տրամադրվում է բուժաշխատողներին: Մանկական սննդով կերակրելու մասին գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական և ուսուցողական նյութերը, պետք է ընդգրկեն նաև հետևյալ տեղեկատվությունը. հրահանգներ՝ մանկական սննդի պատշաճ պատրաստման և օգտագործման, ինչպես նաև հարակից ապրանքների լվացման և ախտահանման վերաբերյալ, մանկանը կերակրման բաժակով կերակրելու վերաբերյալ, շշով կերակրման և մանկական սննդի ոչ ճիշտ պատրաստման հետ կապված հնարավոր առողջական վտանգները: (Հոդված 20)	խախտումների դեպքում առողջապահական կազմակերպությունները պարտավոր են տեղեկացնել լիազոր մարմնին: (Հոդված 18)	կանոնների մասին պարբերաբար իրազեկել կրծքով կերակրող մայրերին, նորածիններին չտրամադրել ոչ մի տեսակի սնունդ կամ հեղուկ, բացի կրծքի կաթից, բացառությամբ սահմանված դեպքերի, մանկական սնունդ արտադրողներին և (կամ) բաշխողներին չտրամադրել հղիների և կերակրող մայրերի կոնտակտային տվյալներ, մանկական սնունդ արտադրողների և (կամ) բաշխողների կողմից ցանկացած առաջարկի դեպքում (նմուշ, նվեր կամ այլ շնորհ) կամ օրենքի այլ խախտումների դեպքում տեղեկացնել առողջապահական կազմակերպության ղեկավարությանը: Բուժաշխատողները պարտավոր են մայրերին տրամադրել տեղեկատվություն մանկական սննդի օգտագործման հետ կապված՝ առողջությանը սպառնացող հնարավոր վտանգների և ռիսկերի վերաբերյալ: (Հոդված 19) • **Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում ընդգրկված բուժաշխատողներին** արգելվում է՝ մանկական սննդի և հարակից ապրանքների վաճառքով, իրացման, գովազդի կամ խրախուսման այլ ձևերով զբաղվելը, արտադրողից և (կամ) բաշխողից կամ նրանց անունից հանդես եկող այլ կազմակերպությունից որևէ նվեր, շնորհ կամ պարգև դրամական կամ որևէ այլ տեսքով ընդունելը, մանկական սննդի և հարակից ապրանքների նմուշներ ընդունելը կամ տրամադրելը, մանկական սննդի օգտագործման ցուցադրումը, բացառությամբ այն դեպքերի, երբ մանկական կաթնախառնուրդով կերակրելն անհրաժեշտ է՝ ելնելով բժշկական ցուցումներից, կամ եթե մայրն ընտրել է մանկական սննդով կերակրումը: (Հոդված 14)
111.	**«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-231-Ն, ընդունված է՝ 17.12.2014, ուժի մեջ է՝ 01.01.2015* Սահմանվում են սոցիալական ծառայությունների, սոցիալական աջակցության և ինտեգրված սոցիալական ծառայությունների հասկացությունները, հիմնական սոցիալական ծառայությունները, դրանց դասակարգման հիմքերը և տրամադրող սուբյեկտները, սոցիալական ծառայությունների տրամադրման և սոցիալական աջակցության հիմնական սկզբունքները, սոցիալական	1. **Սոցիալ-մանկավարժական ծառայություններն**, որն ուղղված են անձանց վարքագծի և զարգացման շեղումների կանխարգելմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը, ժամանցի և հանգստի կազմակերպմանը, ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը, երեխաների դաստիարակության հարցում ընտանիքին օգնության տրամադրմանը: (Հոդված 5) 2. **Բնաիրային օգնությունը** տրամադրվում, մասնավորապես, երեխաների խնամքի պարագաների և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների ձևով: (Հոդված 11) 3. **Խնամքը** ներառում է երեխաներին, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին՝ ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններ ապահովելու կամ հասարակությունում ներառելու նպատակով անհրաժեշտ օգնությունն է: **Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններն** ապահովում են երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարան, շուրջօրյա լրիվ խնամք անչափահաս անձանց, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները լինում են, մասնավորապես, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար, հատուկ (մասնագիտացված)՝ առանց ծնողական խնամքի մնացած ծանր սահմանափակ կարողություններ ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ու ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական և մտավոր արատներ ունեցող երեխաների համար, խնամքի գիշերօթիկ հաստատություն՝ մինչև 18 տարեկան երեխաների համար: **Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնը** խնամքը տրամադրում է կենտրոնում ցերեկային ժամերին, մասնավորապես՝ երեխաներին, սահմանված դեպքերում՝ նաև այդ երեխաների ընտանիքների անդամներին՝ հիմնականում հետևյալ սոցիալական ծառայությունների ձևով. սնունդ՝ օրական մեկ անգամ, սոցիալ-հոգեբանական օգնություն, իրավական խորհրդատվություն, կրթաուսումնական կամ ուսումնադաստիարակչական ծառայություններ, մասնագիտական	Տարածքային մարմնի ընդունած որոշումը, գործողությունը կամ անգործությունը կարող են **բողոքարկվել** վարչական և (կամ) դատական կարգով: (Հոդված 25) **Սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանները ստեղծվում են** տվյալ սոցիալական ծառայության տրամադրման համար անհրաժեշտ տվյալներն առցանց ինքնաշխատ ստանալու եղանակով կամ դրա անհնարինության դեպքում՝ սոցիալական աջակցություն ստանալու համար դիմող անձի ներկայացրած փաստաթղթերում ներառված տվյալներով: Սոցիալական աջակցության տեղեկատվական	• ՀՀ ԱՍՀՆ • **Տարածքային մարմինը**, մասնավորապես, գնահատում է սոցիալական աջակցություն հայցողների և ստացողների սոցիալական կարիքները, կազմում անհատական ծրագիրը (սահմանում տրամադրման ենթակա ծառայությունների համալիրը), ինչպես նաև ապահովում է անհատական ծրագրի իրականացումը և շարունակական հսկողությունը, կազմակերպում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը, անհատական ծրագրի շրջանակներում համակարգում է սոցիալական ծառայությունների

	աջակցության իրավունքը, նպատակը, սոցիալական աջակցության կառավարման համակարգը, սոցիալական աջակցություն ստացող անձանց իրավունքները և պարտականությունները, սոցիալական աջակցության ֆինանսավորման աղբյուրները, կարգավորվում են ՀՀ-ում սոցիալական համագործակցության, տեղական սոցիալական ծրագրերի իրականացման և սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված այլ հարաբերություններ:	կողմնորոշում, արվեստի միջոցով թերապիա, օկուպացիոն թերապիա (շտկիչ վարժանքներով թերապիա): Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնը կազմակերպում է խնամք ստացողների՝ աշխատանքային թերապիան, առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը, ժամանցը, ինչպես նաև մշակութային միջոցառումներ, սոցիալական ներառմանն ուղղված այլ միջոցառումներ: (Հոդված 13) 4. Սոցիալական աջակցության հիմնական սկզբունքները ներառում են **երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթությունը**՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս երեխաներին նախապատվություն տալը: (Հոդված 20 5. **Սահմանում է ինտեգրված սոցիալական ծառայությունների** համակարգը: (Հոդված 33) 6. **Սոցիալական համագործակցության համաձայնագիրն** ընդունվում է ազգային և տարածքային մակարդակներում: Համագործակցության հիմնական նպատակները ներառում են. սոցիալական ծառայությունների մատչելիության և կողմնորոշման բարձրացումը դեպի սոցիալական աջակցություն ստացողները, դրանց որակի բարելավումը, սոցիալական համախմբվածության ամրապնդումը՝ խոցելի խմբերի սոցիալական մեկուսացվածությունը նվազեցնելով, սոցիալական դեպքի վարման շրջանակներում փոխգործակցության ապահովումը, սոցիալական դեպքի վարման գործընթացի արդյունավետության մեծացումը: Համագործակցության հիմնական սկզբունքներն են համակառավարումը, հավասար պատասխանատվությունը, թափանցիկության ապահովումը և ժողովրդավարությունը: Աջակցող ցանցի մասնակիցների հիմնական իրավունքները ներառում են՝ աջակցող ցանցի մյուս մասնակիցներից տեղեկատվություն ստանալը՝ իրենց կողմից իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին: (Հոդված 35)	շտեմարաններն ստեղծվում են՝ սոցիալական աջակցության չափերի, հեռանկարային զարգացման ուղղությունների, դրանց ֆինանսավորման հնարավոր միջոցների կանխատեսման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի համակարգման նպատակով: (Հոդված 31) Սոցիալական աջակցության տեղեկատվական **շտեմարանները տիրապետում է** լիազորած պետական մարմինը, սպասարկում և շահագործում է ՀՀ կառավարության լիազորած կազմակերպությունը: Սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանները պարունակում են սոցիալական ծառայություններ ստանալու համար դիմած անձանց անձնական տվյալները, սոցիալական ծառայությունը ստանալու հիմքը կամ մերժելու պատճառը, տրամադրվող սոցիալական ծառայությունը, սոցիալական ծառայության ստացման ժամկետները, դրա պարբերականությունը, սոցիալական ծառայության ծավալը (չափը), տրամադրման և դադարեցման ժամկետները, ինչպես նաև սահմանված այլ տեղեկություններ: (Հոդված 31) Տարածքային մարմինները և կազմակերպությունները, լիազորած պետական մարմնի ենթակայությամբ գործող կամ լիազորած պետական մարմնի հետ կնքած պայմանագրի հիման վրա սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները **պարտավոր են սոցիալական ծառայություններ տրամադրելու մասին տվյալները ներկայացնել լիազորած պետական մարմին**: (Հոդված 31) Սոցիալական աջակցության պետական քաղաքականությունն իրականացնելիս լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները **համագործակցում են** սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ: Լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները տեղեկատվություն են փոխանակում սոցիալական աջակցություն	տրամադրման գործընթացը, տալիս է եզրակացություն խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու, ինչպես նաև խնամակալ ճանաչելու կամ խնամատար ծնող կամ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին, աջակցում է երեխայի կրթության (այդ թվում՝ նախադպրոցական կրթության) իրավունքի իրականացմանը, աջակցում է երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծմանը, ապահովում է սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ, սոցիալական աջակցության մատչելիություն և համարժեքություն սոցիալական աջակցություն ստացողների անհատական կարիքներին, հանդես է գալիս սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի և իրավունքների պաշտպանությամբ՝ նրա դիմելու դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ, համագործակցում է աջակցող ցանցի հետ, սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ տվյալները ստանում է առցանց կամ անհրաժեշտ փաստաթղթերով և կիրառում: (Հոդված 17) • Սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (**ՀՀ ԱՍՀՆ**), մասնավորապես՝ լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմիններում, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններում իրականացնում է պետական վերահսկողություն սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող պահանջների կատարման նկատմամբ, ստուգում է այլ մարմիններից և կազմակերպություններից (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) տրված՝ սոցիալական աջակցության տրամադրման համար պահանջվող փաստաթղթ(եր)ի հավաստիությունը, լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային

			ստացողների և իրենց տրամադրած սոցիալական ծառայությունների մասին: Լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները համագործակցում են այդ նպատակով ընդունված սոցիալական համագործակցության համաձայնագրի շրջանակներում: (Հոդված 34) Միջգերատեսչական սոցիալական համագործակցությունն իրականացվում է սոցիալական աջակցության տրամադրման գործընթացում՝ տարածքային մարմինների, առողջապահական, կրթաուսումնական կազմակերպությունների, ոստիկանության տեղամասային տեսուչների և այլ շահագրգիռ կողմերի միջև: Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգով սահմանվում են՝ համագործակցող կողմերի ցանկը, համագործակցող կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները, միջգերատեսչական համագործակցության ձևերն ու կարգը, խնդրահարույց այն դեպքերը, որոնք կարող են նախանշել անձի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված լինելը կամ հայտնվելու հնարավորությունը, որոնց հայտնաբերման ժամանակ կողմերը պարտավորվում են տեղեկացնել համապատասխան տարածքային մարմնին, համագործակցող կողմերի միջև տրամադրվող տեղեկատվության ծավալի, ձևի, տրամադրման ժամկետի մասին պահանջները, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգը: (Հոդված 36) **Սոցիալական աշխատանքի մասնագետին** սոցիալական ծառայությունների տրամադրման ընթացքում հայտնի դարձած **անձնական տեղեկությունները համարվում են մասնագիտական գաղտնիք**, և այն հրապարակող կամ տարածող սոցիալական աշխատանքի մասնագետը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով, բացառությամբ ՀՀ օրենքներով նախատեսված դեպքերի: (Հոդված 40) **Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետը** (Հոդված 41) և համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետը (Հոդված 42) պարտավոր են պահպանել իրենց կողմից	մարմիններից պահանջում է տեղեկատվություն՝ տրամադրվող սոցիալական ծառայությունը օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ, իսկ դրա անհամապատասխանության դեպքում՝ պահանջ է ներկայացնում՝ սահմանված ժամկետում վերացնելու հայտնաբերված անհամապատասխանությունը, համապատասխան սոցիալական աշխատանքի մասնագետին ենթարկում է օրենքով սահմանված պատասխանատվության կամ դիմում է համապատասխան տարածքային մարմնի վերադասին՝ համապատասխան սոցիալական աշխատանքի մասնագետին օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հանդես է գալիս սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի և իրավունքների պաշտպանությամբ նրա դիմելու դեպքում կամ իր նախաձեռնությամբ, սահմանում է սոցիալական ծառայությունների որակի վերահսկման հետադարձ կապի մեխանիզմները, ստեղծում և վարում է սոցիալական աջակցության բնագավառի տեղեկատվական շտեմարաններ, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ռեգիստր, ուսումնասիրում է տարածքային մարմինների և սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների հետ կապված բողոքները, խախտումներ հայտնաբերելու դեպքում ձեռնարկում է միջոցառումներ դրանք վերացնելու ուղղությամբ: (Հոդված 22) • **Սոցիալական դեպք վարողը** պարտավոր է, մասնավորապես՝ գնահատել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները, համակարգել սոցիալական անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, կազմակերպել խմբային (բազմամասնագիտական) քննարկումներ և ուղղորդել սոցիալական աջակցություն ստացողին տարբեր մասնագիտացված կազմակերպություններ՝ իրենց իրավունքների մասին իրազեկելու, ինչպես նաև դրանք իրականացնելու համար, պահանջել սոցիալական աջակցություն հայցող կամ սոցիալական աջակցություն ստացող

			սպասարկվող անձանց (ընտանիքների) սոցիալական աջակցություն տրամադրելու ընթացքում իրենց **հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը**, բացառությամբ ՀՀ օրենքներով նախատեսված դեպքերի:	անձից միայն սոցիալական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ տեղեկությունները, աջակցել անհրաժեշտ փաստաթղթերի (տվյալների) ճիշտ ներկայացմանը: (Հոդված 40) • Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետներ ունեն պարտականություն՝ գնահատել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները և իրականացնել նրա անհատական ծրագրով՝ իր կազմակերպությանը վերապահված իրավասությունների շրջանակներում նախատեսված միջոցառումները, անհատական ծրագրով նախատեսված ժամկետներում մասնակցել խմբային (բազմամասնագիտական) քննարկումներին: (Հոդված 41)
112.	**«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-118, ընդունված է՝ 14.05.1997, ուժի մեջ է՝ 01.07.1997* Սահմանում է ավելացված արժեքի հարկը և վճարողներին, կարգավորում է հարկվող օբյեկտը և հարկվող շրջանառությունը, սահմանում է հարկի դրույքաչափերը, կարգավորում է ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման վայրը, սահմանում է արտոնություններ և կարգավորում է զրոյական դրույքաչափով հարկումը, հարկի հաշվարկման և վճարման կարգը, սահմանում է ԱԱՀ-ի հաշվառման առանձնահատկությունները և պատասխանատվությունը օրենքի խախտման համար:	1. Հանրակրթական ուսումնական հաստատությունները, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնները, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի ուսումնական հաստատությունները, մարզադպրոցները, պրոֆեսիոնալ ուսումնարանները, որակավորման և վերաորակավորման միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ ուսման վարձի մասով, նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու, տուն-ինտերնատների, մանկատների, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատությունների, ծերանոցներում գտնվող անձանց խնամքի հետ կապված ծառայությունները, ինչպես նաև խնամվողների կողմից այնտեղ պատրաստված ապրանքների և կատարված ծառայությունների իրացումը, դպրոցական գրերի և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների իրացումը ազատվում են ԱԱՀ-ից (Հոդված 15)		• Հարկային մարմիններ
113.	**«Շահութահարկի մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-155, ընդունված է՝ 30.09.1997, ուժի մեջ է՝ 01.01.1998* Կարգավորում է ՀՀ-ում շահութահարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է ՀՀ-ում շահութահարկ վճարողների շրջանակը, շահութահարկի դրույքաչափերը հաշվարկման և վճարման կարգը:	1. Հարկվող շահույթը որոշելիս, բացառությամբ սահմանված դեպքերի, մանկական նախադպրոցական հիմնարկների, վերականգնողական ճամբարների, մշակութային, կրթական և մարզական հիմնարկների **ծախսերը համախառն եկամտից չեն նվազեցվում** (Հոդված 16)		• Հարկային մարմիններ
114.	**«Պետական տուրքի մասին»**	1. Բուժական նշանակության մանկական սննդի և դեղարարական արտադրանքի պետական գրանցման համար պետական տուրքը	Պետական տուրքի հաշվարկման և	•

	ՀՀ օրենք *ՀՕ-186, ընդունված է՝ 27.12.1997, ուժի մեջ է՝ 11.01.1998* Սահմանում է ՀՀ-ում պետական տուրքի հասկացությունը, տուրքերի տեսակները և դրույքաչափերը, տուրք վճարողներին, տուրքը գանձելու, վերադարձնելու, արտոնություններ տրամադրելու կարգն ու պայմանները և կարգավորում է պետական տուրքի հետ կապված մյուս հարաբերությունները:	գանձվում է բազային տուրքի 20-պատիկի չափով: (Հոդված 16)	գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են ՀՀ կառավարության լիազորած մարմինները: (Հոդված 37)	
115.	**«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-11-Ն, ընդունված է՝ 17.12.2003, ուժի մեջ է՝ 08.02.2004* Կարգավորում է ՀՀ զբոսաշրջության բնագավառին առնչվող հարաբերությունները և զբոսաշրջային գործունեության բնագավառում ծագող այն հարաբերությունները, որոնք ի հայտ են գալիս քաղաքացիների հանգստի, շրջագայության, ազատ տեղաշարժման իրավունքների իրականացման գործընթացում:	1. Մանկապատանեկան բնակատեղիները (համալիրները) հյուրանոցային տնտեսության օբյեկտներն են: (Հոդված 8) 2. Մանկապատանեկան բնակատեղիները (համալիրները) այն զբոսաշրջային բնակատեղիներն են, որոնք նախատեսված են դպրոցահասակ զբոսաշրջիկների համար: (Հոդված 9) 3. Մինչև զբոսաշրջային փաթեթի մատուցումը զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավոր է հաճախորդներին մատուցել տեղեկատվություն մանկական զբոսաշրջային միջոցառումների դեպքում երեխայի կամ պատասխանատու անձի հետ ժամանման վայրում ուղիղ կապ ապահովելու միջոցների մասին: (Հոդված 16)	Զբոսաշրջության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը, մասնավորապես, իրականացնում է զբոսաշրջային բնագավառում օրենքով նախատեսված գործունեության տեսակների լիցենզավորումը, լիցենզավորման պայմանների կատարման հսկողությունը, որոշում է ընդունում օրենքի պահանջների խախտման համար տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու մասին, տրամադրում և փոփոխում է հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման կարգը, մերժում է որակավորման կարգ ստանալու համար ներկայացված հայտը, զրկում է որակավորման կարգից, հսկողություն է իրականացնում որակավորման պայմանների նկատմամբ: (Հոդված 7)	• ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
116.	**«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենք** *ՀՕ-134-Ն, ընդունված է՝ 24.11.2004, ուժի մեջ է՝ 01.01.2005* Կարգավորում է ՀՀ տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի պետական կառավարման հիմքերը, այդ ոլորտում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և ուղղված է առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվող գործունեության կանոնակարգմանը, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության ապահովմանը:	1. Արգելվում է ալկոհոլային խմիչքների վաճառքն ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող առևտրի օբյեկտներում: (Հոդված 9) 2. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը: (Հոդված 11)	Տեղական ինքնակառավարման մարմինները նախատեսված գործառույթների կատարման մասով հաշվետու են՝ մարզերում՝ մարզպետին, Երևանում՝ ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնին:	• Տեղական ինքնակառավարման մարմիններ
117.	**«Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր**			• ՀՀ կառավարության սահմանած փաստաթղթերի անվճար օրինակի

	օրինակի մասին» ՀՀ օրենք *ՀՕ-186-Ն, ընդունված է՝ 04.10.2005, ուժի մեջ է՝ 16.12.2005* Կարգավորում է փաստաթղթերի (վավերագրերի) բոլոր տեսակի հրատարակությունների, էլեկտրոնային հրապարակումների և չհրատարակված նյութերի առաքման, մշտական պահպանության, վիճակագրական հաշվառման, մատենագիտության կազմման և ազգային ժառանգության հանրային օգտագործման առնչությամբ ծագող իրավական և ֆինանսատնտեսական հարաբերությունները:			բաշխման կազմակերպման կարգի համաձայն՝ **լիազորված մարմինը,** ըստ փաստաթղթերի համապատասխան տեսակների, օրինակներ է հատկացնում Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանին
118.	**«ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1694-Ն, ընդունված է՝ 27.12.2012, ուժի մեջ է՝ 21.02.2013* Հաստատում է ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումը, հանձնարարականներ է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին, ՀՀ առողջապահության նախարարին, ՀՀ ԿԳ նախարարին, ՀՀ մշակույթի նախարարին, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության պետին, ՀՀ ՏԿ նախարարին, ՀՀ ֆինանսների նախարարին, ՀՀ արդարադատության նախարարին, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին, Երեխաների իրավունքների	1. Ռազմավարական ծրագրի հիմնական նպատակը երեխայի բարեկեցիկ կյանքն ընտանիքում և հասարակության մեջ ապահովելն է: (Հավելված 1) 2. Ռազմավարական ծրագրի հիմնական միջոցառումները ներառում են հետևյալ ոլորտները՝ սոցիալական պաշտպանություն, առողջապահություն, կրթություն, մշակույթ, իրավախախտում կատարած անչափահասների իրավական պաշտպանությունը: (Հավելված 1) 3. Սոցիալական պաշտպանության ոլորտում ռազմավարության հիմնական նպատակներն են. կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և ընտանիքների իրական կարիքների առավել լիարժեք բավարարումը, և, յուրաքանչյուր երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը, որը ենթադրում է երեխայի համարժեք սոցիալականացման ու հասարակությունում լիարժեք ինտեգրման գործընթացի ապահովումն ընտանիքում, իսկ վերջինիս բացակայության կամ կենսաբանական ընտանիքում երեխայի խնամքն ու դաստիարակությունն իրականացնելու անհնարինության դեպքերում՝ ընտանեկանին առավել մոտ կենսապայմաններում կազմակերպելու պայմանների ապահովումը: (Հավելված 1) 4. Սոցիալական պաշտպանության ոլորտում վարվելիք քաղաքականության ընդհանուր խնդիրներն են՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և ընտանիքների իրական կարիքների գնահատման ամբողջական համակարգի ներդրումը, կարիքների գնահատման ամբողջական համակարգի միջոցով հանրապետության երեխաների տարբեր խմբերի իրական կարիքների պարբերական գնահատման ապահովումը, երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում մշակվող և իրականացվող քաղաքականությունը, կարիքների գնահատման ամբողջական համակարգի միջոցով ստացված արդյունքների և ոչ թե պետության այդ պահին ունեցած հնարավորությունների վրա կառուցելու քաղաքական մշակույթի աստիճանական արմատավորումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամքի ու պաշտպանության հաստատություններ ուղղորդելու կարգի կատարելագործումը, երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի ինստիտուցիոնալ ենթահամակարգի հիմնական օղակների գործառույթների հստակեցումը և արդյունավետ գործունեության համար պայմանների ապահովումը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի ու պաշտպանության այլընտրանքային ծառայությունների՝ ընտանեկենտրոն, համայնքահեն համակարգի հիմնումը, երեխաների խնամքի ու պաշտպանության կենտրոնացված մեծ հաստատությունների բեռնաթափումը, այնտեղ գտնվող երեխաների համար ընտանեկան կամ ընտանեատիպ մեխանիզմների միջոցով խնամքի ու պաշտպանության կազմակերպման ապահովումը, երեխաներին բազմաբնույթ սոցիալական ծառայությունների տրամադրման գործող համակարգի կատարելագործումը: (Հավելված 1) 5. Սոցիալական պաշտպանության ոլորտում ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և ընտանիքների իրական կարիքների գնահատման ամբողջական համակարգն առկա է, կարիքների գնահատման ամբողջական համակարգի միջոցով կանոնավոր կերպով գնահատվում են ՀՀ երեխաների իրական կարիքները, մշակվում և իրականացվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և ընտանիքների իրական կարիքների հաշվառման վրա հիմնված քաղաքականությունը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները հազվադեպ են ուղղորդվում շուրջօրյա մեծ կենտրոնացված խնամքի ու պաշտպանության հաստատություններ, երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի ինստիտուցիոնալ ենթահամակարգի հիմնական օղակներն արդյունավետ կերպով աշխատում են, ՀՀ բոլոր տարածքներում գործում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամքի ու պաշտպանության այլընտրանքային ծառայություններ մատուցող տարաբնույթ հաստատություններ, երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատություններում մնացել են քիչ թվով երեխաներ, այն էլ՝ այնպիսիք, որոնց համար հնարավոր չի եղել ապահովել ընտանեկանին մոտ խնամքի ձևերից որևէ մեկը, իսկ հաստատությունների մի մասը վերապրոֆիլավորվել և վերակազմակերպվել է սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցող այլընտրանքային հաստատությունների, երեխաներին բազմաբնույթ սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգը բարելավված է, խոցելի խմբերի երեխաներին և նրանց ընտանիքներին հասանելի են հասցեական և կարիքից բխող սոցիալական աջակցության փաթեթներ, համալիր սոցիալական ծառայությունների աշխատողները՝ դեպք վարողները, ունեն համապատասխան գիտելիքներ և օրենքով սահմանված լիազորություններ՝ իրականացնելու հասցեական աջակցություն ընտանիքներին և նրանց երեխաներին: (Հավելված 1) 6. Սոցիալական պաշտպանության ոլորտում ծրագրի ռազմավարությունը նախատեսում է առաջ տանել երեխաների խնամքի ու	Սոցիալական պաշտպանության ոլորտում վարվելիք քաղաքականության ընդհանուր խնդիրները ներառում են երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի տեղեկատվական ապահովման ենթահամակարգի կատարելագործումը: (Հավելված 1) Սոցիալական պաշտպանության ոլորտում ծրագրի ակնկալվող արդյունքները ներառում են. երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի տեղեկատվական ապահովման ենթահամակարգը լիարժեքորեն արտացոլում է ՀՀ երեխաների համախմբի բոլոր հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկությունները և գործում է անխափան (Հավելված 1) Ծրագրի ռազմավարությունը նախատեսում է կատարելագործել երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի տեղեկատվական ապահովման ենթահամակարգը՝ նպատակ ունենալով ընդլայնել ու ամբողջականացնել երեխաների և ընտանիքների սոցիալական պաշտպանությանն առնչվող բոլոր հիմնախնդիրների վերաբերյալ տարբեր կառույցների կողմից տարբեր մեթոդներով հավաքվող տեղեկությունները: (Հավելված 1) Առողջապահության ոլորտում ծրագրի նպատակային ցուցանիշներն են՝ երեխաների մահացության համար սահմանված Հազարամյակի ազգային նպատակային ցուցանիշների ձեռքբերում, նորածնային մահացության կրճատում 1/4-ով, հիվանդանոցային մահաբերության, այդ թվում՝ մինչև 1 տարեկան երեխաների մինչշուրջօրյա մահաբերության ցուցանիշի նվազեցում	• Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին է ճանաչում ՀՀ ԱՍՀՆ-ն: (Կետ 4) • ՀՀ ՏԿԱԻՆ • ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ ԿԳՆ • ՀՀ մշակույթի նախարարություն • ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն • ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն • ՀՀ բնապահպանության նախարարություն • ՀՀ սփյուռքի նախարարություն • ՀՀ քաղաքաշինության նախարարություն • ՀՀ արդարադատության նախարարություն • Դատական դեպարտամենտ • Դատական դպրոց • Դատախազության դպրոց • Փաստաբանների պալատ • ՀՀ գլխավոր դատախազություն • ՋԼՄ-ներ • ՀԿ-ներ

	պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին է ճանաչում:	պաշտպանության կենտրոնացված մեծ հաստատությունների բեռնաթափումը՝ նպատակ ունենալով առաջիկա 2-3 տարիների ընթացքում այդ հաստատություններում գտնվող բոլոր երեխաներին վերադարձնել իրենց ընտանիքները, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նրանց համար ապահովել խնամքի և դաստիարակության այլընտրանքային՝ ընտանեկանին առավել մոտ պայմաններում ապրելու հնարավորություններ: (Հավելված 1) 7. Նախատեսվում է խթանել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների որդեգրման գործընթացը, զարգացնել խնամակալական ընտանիքի ինստիտուտը՝ ֆինանսական և բարոյահոգեբանական աջակցություն տրամադրելով առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին խնամակալած ընտանիքներին, ինչը ոչ միայն ապահովում է երեխայի՝ ընտանիքում ապրելու հիմնարար իրավունքը, այլև նրան չի կտրում իր ազգակցական կապերից և արմատներից, ինչպես նաև նոր թափ հաղորդել հանրապետությունում խնամատար ընտանիքների ձևավորման գործընթացին, որն առաջին հերթին դիտվելու է որպես երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատություններում գտնվող այն երեխաների խնամքի ու դաստիարակության կազմակերպման այլընտրանքային ձև, ովքեր չունեն կենսաբանական (հարազատ) ընտանիք կամ տարբեր պատճառներով հնարավոր չէ նրանց վերադարձնել ընտանիք, կամ անհնար է ապահովել ազգականների ընտանիքներում նրանց խնամքի կազմակերպումը: (Հավելված 1) 8. Ծրագրով նախատեսվում է արագացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների բավարարմանն ուղղված համայնքային ծառայությունների համակարգը՝ նկատի ունենալով, որ այն ներառման սկզբունքի հիման վրա լիարժեքորեն պետք է ապահովի նաև հատուկ կարիքներ ունեցող երեխաների բազմազան կարիքների բավարարումը՝ կանխարգելելու համար նմանատիպ երեխաների հայտնվելը՝ երեխաների խնամքի ու պաշտպանության կենտրոնացված մեծ հաստատություններում: (Հավելված 1) 9. Նախատեսվում է ինստիտուցիոնալ-կազմակերպական բարեփոխումների ենթարկել ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգը՝ հստակ տարանջատելով ոլորտի զարգացման քաղաքականության մշակման և առաջացող խնդիրների վերջնական լուծման իրավասությունները տարածքներում այդ քաղաքականության իրականացման համակարգման և երեխաներին ու նրանց ընտանիքներին անմիջականորեն սոցիալական ծառայությունների մատուցման գործառույթներից՝ կառուցվածքագործառութային փոփոխության ենթարկելով երեխայի իրավունքների պաշտպանության գործող համակարգի բոլոր օղակները: Նշված բարեփոխումների շրջանակներում ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի միջին օղակին՝ ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններին կվերապահվեն տվյալ տարածքում երեխաների ոլորտում իրականացվող քաղաքականության և ծառայությունների մատուցման աշխատանքների համակարգման գործառույթները: (Հավելված 1) 10. Ռազմավարությունը նախատեսում է հզորացնել ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի առաջնային օղակը՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները՝ նպատակ ունենալով դրանք դարձնել աջակցության ավելի գործուն մարմիններ, հաղթահարել դրանց գործելակերպի և գործառույթների գլխավորապես վարչական-փաստաթղթային ուղղվածությունը: (Հավելված 1) 11. Նախատեսվում է մեծացնել երեխաների ու ընտանիքների սոցիալական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների, այդ թվում՝ ներդրվող համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների տեխնիկական հնարավորությունները և հզորությունները: (Հավելված 1) 12. Նախատեսվում է ստեղծել խնամակալության և հոգաբարձության մարմինների, համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների, ինչպես նաև ընտանիքների ու երեխաների պաշտպանության հարցերի լուծման իրավասություն ունեցող սուբյեկտների արդյունավետ համագործակցության համակարգ: (Հավելված 1) 13. Առողջապահության ոլորտում ծրագրի հիմնական նպատակը՝ երեխաների և դեռահասների առողջության և սնուցման կարգավիճակի բարելավում, առողջ աճի և զարգացման ապահովում, պատվաստումներով ընդգրկվածության բարձր մակարդակի պահպանում և հիվանդությունների կանխարգելում, երեխաների հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցում, հաշմանդամության կանխարգելում: (Հավելված 1) 14. Առողջապահության ոլորտում ծրագրի ընդհանուր նպատակներն են՝ երեխաների առողջապահության պետական քաղաքականության իրականացում, երեխաների հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցում, հաշմանդամության կանխարգելում: (Հավելված 1) 15. Առողջապահության ոլորտում ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝ երեխաների առողջապահության բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր, երեխաների և դեռահասների համար մատչելի և որակյալ բուժօգնություն, երեխաների սնուցման բարելավում, ժառանգական և զարգացման բնածին ախտաբանությունների վաղ հայտնաբերում և դրանցով պայմանավորված հիվանդությունների հետևանքների կանխարգելում, մասնագիտական կարողությունների զարգացում: (Հավելված 1) 16. Առողջապահության ոլորտում ծրագրի միջոցառումներն են՝ երեխաների իրավունքների՝ ներառյալ երեխաների ու դեռահասների առողջության և սնուցման վերաբերյալ ՀՀ օրենսդրության վերլուծություն և համապատասխան իրավական ակտերում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների մշակում, երեխաների հիվանդանոցային բուժօգնության բարելավման ազգային ռազմավարության ներդրման 2013-2015թթ. գործողությունների ծրագրի մշակում և իրականացում, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում և դպրոցներում առողջապահական համակարգի արդյունավետության գնահատում և բարելավման ռազմավարության մշակում, առողջ ապրելակերպի վերաբերյալ քարոզչական հաղորդումների, գրականության մշակում և տարածում, երեխաներին և դեռահասներին անհրաժեշտ բուժօգնության ծավալների ապահովում՝ պետական նպատակային ծրագրի շրջանակներում (տարեկան 720,000 երեխա կստանա ամբուլատոր-պոլիկլինիկական օգնություն լրիվ ծավալով և հիվանդանոցային բուժօգնություն), հիվանդանոցային բուժօգնության ոլորտում Երեխաների առողջության պետական հավաստագրի ծրագրի շարունակական ներդրում (տարեկան 0-7 տարեկան շուրջ 300,000 երեխա ըստ անհրաժեշտության կստանա մատչելի և որակյալ հիվանդանոցային բուժօգնություն), Վանաձորի, Կապանի և Գյումրու մանկական վերակենդանացման ծառայությունների ստեղծում և (կամ) հզորացում բժշկական սարքավորումներով, իմունականխարգելման ազգային ծրագրի շարունակական իրագործում, մանկական հիվանդությունների ինտեգրացված վարման (ՄՀԻՎ) ռազմավարության շարունակական ընդլայնում, ներառելով Երևան քաղաքի բուժհաստատությունները, հաշմանդամ երեխաների համակարգված բուժօգնության և սպասարկման բարելավման ծրագրեր և միջոցառումներ, երեխաների սնուցման բարելավման ազգային	1/5-ով, 4 պատվաստումներում ընդգրկվածության բարձր մակարդակի ապահովում, բացառապես կրծքով սնուցման ցուցանիշի աճ 30 տոկոսով, 0-5 տարեկան երեխաների սնուցման կարգավիճակի բարելավում, թերաճության և գերքաշության ցուցանիշների կրճատում նվազագույնը 20 տոկոսով, ցածր քաշով նորածինների թվի նվազեցում 20 տոկոսով, երեխաների սակավարյունությունների մակարդակի նվազեցում 1/4-ով, զարգացման խանգարումների գնահատման, վաղ հայտնաբերման և վաղ միջամտության գործող համակարգի բարելավում, ուղեգրման գործընթացի հստակեցում, հաշմանդամ երեխաների համար վերականգնողական ծառայությունների մատչելիության բարելավում, անհատական վերականգնողական ծրագրերում հաշմանդամ երեխաների ընդգրկվածության բարձր մակարդակի ապահովում, դպրոցներում բժշկական օգնության կազմակերպման ծառայությունների բարելավում, գործառույթների հստակեցում, «Դեռահասներին բարյացակամ» առողջապահական ծառայությունների մատչելիության բարելավում՝ ցանցի ընդլայնում, վնասակար սովորությունների (ծխել, արագ սնունդ, ֆիզիկական ոչ բավարար ակտիվություն) տարածվածության կրճատում, հատկապես ավագ տարիքի հասակի դպրոցականների շրջանում: (Հավելված 1) Առողջապահության ոլորտում ծրագրի իրականացման ակնկալվող ցուցանիշներն են՝ 2015թ. 1,000 կենդանի ծննդի հաշվով. մանկական (0-1տ) մահացության ցուցանիշը չպետք է գերազանցի 8% (2010թ.՝ 11.4%), իսկ 0-5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը՝ 10% (2010թ.՝ 13,4%): 2015թ. 1,000 կենդանի ծննդի հաշվով նորածնային (0-28 օրական) մահացության ցուցանիշը չպետք է գերազանցի 6% (2010թ.՝ 7,7%): 2015թ. հիվանդանոցային մինչշուրջօրյա մահացության ցուցանիշը չպետք է գերազանցի 12.5% (2010թ.՝ 15,4%): 2015թ.՝ 95% և ավելի մակարդակ՝ առանձին պատվաստումներում ընդգրկվածության ապահովում, 90% և ավելի մակարդակ՝ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների ապահովում: Բացառապես կրծքով սնուցման ցուցանիշը 2015թ. կկազմի 50% և ավելի, (2010թ.՝ 38%): 2015թ. թերաճության ցուցանիշը կկազմի 15%, գերքաշության ցուցանիշը՝ 12% (2010թ.	

		ռազմավարության և 2013-2015թթ. գործողությունների ծրագրի մշակում և ներդրում, այլուրի հարստացման ազգային ծրագրի ներդրման շարունակական աշխատանքներ, կրծքով կերակրման խրախուսման ծրագրի և «Մանկանը բարեկամ» նախաձեռնության շարունակական ներդրում, ծննդօգնության պետական հավաստագրի ծրագրի շարունակական ներդրում (տարեկան շուրջ 50,000 կին կստանա ծննդօգնության մատչելի և որակյալ ծառայություններ), նյութափոխանակության ժառանգական հիվանդությունների և բնածին այլ շեղումների հայտնաբերմանն ուղղված նորածնային սկրինինգ ծրագրերի իրագործում ՀՀ ամբողջ տարածքում, մասնագետների վերապատրաստում (վերարակավորում) կրթական անհատական ծրագրերի միջոցով, մանկաբուժական մասնագիտություններով հետդիպլոմային կրթության (նպատակային կլինիկական օրդինատուրա) գործուն համակարգի ստեղծում, կրթական ծրագրերի բովանդակության համապատասխանեցում ապացուցողական բժշկության դրույթներին, բժշկական բազային կրթական համակարգում մանկաբուժություն մասնագիտության ներառում բազային մասնագիտությունների ցանկում, ԱԱՊ-ի համակարգի մանկաբույժների կրթում մագիստրատուրայի միջոցով, նախածննդյան խնամքի և բուժօգնության ծառայությունների որակի և մատչելիության բարձրացում, այդ թվում՝ նորածնային ախտաբանությունների ներարգանդային ախտորոշման գործընթացի բարելավում, անտենատալ սկրինինգների ներդրում, հղիության վաղ հաշվառման և նախածննդյան հսկողության ծառայությունների մատչելիության և որակի բարելավում: Միջոցառմամբ նախատեսվում է նախածննդյան հսկողության վաղ հաշվառման ցուցանիշը բարձրացնել 50%ով, և ցածր քաշով նորածինների ցուցանիշը նվազեցնել 20%ով: (Հավելված 1) 17. Կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի իր հակումներին և ընդունակություններին համապատասխան ստանա որակյալ կրթություն և հանրապետության տնտեսությունն ապահովի մրցունակ մասնագետներով: Հանրակրթության պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել հիմնական հանրակրթական ծրագրերի մատչելիությունը նախադպրոցահասակ և դպրոցահասակ երեխաների համար և բարելավել կրթության որակը: (Հավելված 1) 18. Կրթության ոլորտում ծրագրի ընդհանուր նպատակներն են՝ բոլոր մակարդակներում բարձրացնել կրթության մատչելիությունը, ստեղծել հավասար հնարավորություններ, որ յուրաքանչյուրն ստանա առավել որակյալ կրթություն՝ իր նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան, բարձրացնել ընդգրկվածությունը նախադպրոցական և դպրոցական հաստատություններում, բարելավել դպրոցահասակ երեխաների՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ազգային փոքրամասնությունների և խոցելի մյուս բոլոր խմբերի երեխաների, որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները, նպաստել սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանն ուղղված կարողությունների զարգացմանը: (Հավելված 1) 19. Կրթության ոլորտում ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝ երեխաների թվի աճ՝ նախադպրոցական ծառայություններում՝ հասցնելով նախադպրոցական տարիքի երեխաների թվի 90%ին, երեխաների թվի աճ՝ տարրական և միջին դպրոցներում հասցնելով համապատասխան դպրոցահասակ երեխաների թվի 99%ին, ավագ դպրոցներում՝ ներառյալ նախնական մասնագիտական ծրագրերում երեխաների թվի աճ՝ հասցնելով համապատասխան դպրոցահասակ երեխաների թվի 95%ին, ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանցի ընդլայնում, հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների բարեփոխված համակարգ, երեխաների բազմակողմանի զարգացման ապահովում: (Հավելված 1) 20. Կրթության ոլորտում միջոցառումներն են՝ համայնքներում նախադպրոցական կրթության ինստիտուցիոնալ հիմքերի ներդրում՝ նախադպրոցական ծառայությունների կազմակերպում, նախադպրոցական կրթության չափորոշիչների հիման վրա ուսումնամեթոդաբանական ձեռնարկների մշակում և հրատարակում, հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման և կրթության մեջ ներառման մեխանիզմների մշակում, հոսքային ուսուցման կազմակերպում՝ սովորողների նախասիրություններին և հակումներին համապատասխան, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման չափորոշիչների մշակում՝ Համաշխարհային առողջապահական կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման հիման վրա, ներառական կրթություն ծրագրի իրականացում 150 դպրոցում, հատուկ հանրակրթության ճյուղերին համապատասխան մեկական հատուկ դպրոցի ստեղծում, որը կգործի նաև որպես համապատասխան ճյուղի ռեսուրսային և գիտագործնական կենտրոն, երեխայի կրթական կարիքների գնահատման եռաստիճան համակարգի ներդրում, դատապարտված երեխաների կրթության և նախնական մասնագիտական կրթության որակի բարձրացում, դպրոցական օլիմպիադայի կազմակերպում (16 առարկայից հանրապետական օլիմպիադաների կազմակերպում և 6 առարկայից միջազգային օլիմպիադայի մասնակցություն), դպրոցականների սպարտակիադաների կազմակերպում, դպրոցականների գեղարվեստական ստեղծագործության փառատոնի կազմակերպում, հանրակրթական դպրոցների 8-11-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» դասընթացի իրականացում, դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում, հանրակրթական դպրոցների ուսուցիչների շարունակական վերապատրաստում: (Հավելված 1) 21. Մշակույթի ոլորտում հիմնական խնդիրներն են՝ գեղարվեստական կրթության մատչելիության ապահովում՝ «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի շրջանակում ուսման վարձավճարների փոխհատուցման շարունակականությամբ, գեղարվեստական կրթական հաստատությունների բնականոն գործունեության ապահովում՝ նյութատեխնիկական բազայի և երաժշտական գործիքների համալրմամբ, ուսումնամեթոդական աշխատանքների իրականացմամբ, ուսումնական նոր ծրագրերի և դասագրքերի մշակմամբ, ուսուցման մատչելիության ապահովում արտադպրոցական գեղարվեստական դաստիարակության շրջանակներում, մասնավորապես, սահմանափակ կարողություններ ունեցող, սոցիալապես անապահով, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մշակութային կրթության ապահովմամբ, երեխաների բազմաբովանդակ հանգստի, ժամանցի և մշակութային կյանքի կազմակերպում, երեխաների ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման պայմանների ստեղծում, հաղորդակցում ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, ժողովրդական արվեստի լավագույն նմուշներին, դասական և ժամանակակից արվեստին, տաղանդավոր երեխաների ու երիտասարդների բացահայտում, նրանց կրթության և ստեղծագործական ունակությունների զարգացման ու ինքնադրսևորման համար պայմանների ապահովում, մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների, համերգների, «վարպետ-դասարանների» կազմակերպում, շնորհալի երեխաների բացահայտում և հետագա ուսուցման գործընթացում աջակցության ցուցաբերում, այդ թվում՝ համապատասխան խորացված մշակութային նախնական մասնագիտական կրթություն ստանալու պայմանների ստեղծում: (Հավելված 1)	համապատասխանաբար՝ 19% և 15%): 2015թ. ցածր քաշով նորածինների ցուցանիշը չի գերազանցի 6.5% (2010թ.՝ 7.6%): 2015թ. անեմիաների ցուցանիշը 0-5 տարեկան երեխաների շրջանում չի գերազանցի 30% (2005թ.՝ 37%): Անհատական վերականգնողական ծրագրերում հաշմանդամ երեխաների ընդգրկվածության 90% և ավելի մակարդակի ապահովում: Հաշմանդամ երեխաների առնվազն 3/4-ի համար վերականգնողական ծառայությունների մատչելիության ապահովում: Դպրոցների 5%ի ընդգրկվածության ապահովում «Առողջ դպրոցներ» ծրագրում՝ թիրախը 2015թ.: (Հավելված 1) Իրավախախտում կատարած անչափահասների իրավական պաշտպանության ոլորտում ծրագրի միջոցառումները ներառում են տվյալների միասնական շտեմարանի ստեղծում՝ անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների և այլ իրավախախտումների վերաբերյալ (հաշվի առնելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ու թմրանյութերի և հանցավորության հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի (UNODC) կողմից մշակված ցուցիչները), գիտական վերլուծություն՝ անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների և անչափահասների շրջանում կրկնահանցավորության վերաբերյալ: (Հավելված 1)	

		22. Մշակույթի ոլորտում ծրագրի հիմնական նպատակն է արվեստի և մշակույթի բնագավառում անհատի բազմակողմանի և մտավոր ներուժի զարգացում, ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին հաղորդակցություն, կրթության մատչելիության ապահովումը: (Հավելված 1) 23. Մշակույթի ոլորտում ծրագրի ընդհանուր նպատակներն են՝ երեխաների ստեղծագործական ներուժի բացահայտում և խթանում, երեխաների մշակութային մասնագիտական ուսուցմանը և գեղագիտական դաստիարակությանը պետական աջակցության ցուցաբերում, արվեստի և մշակույթի ոլորտներում մասնագիտական գիտելիքների ուսուցանում, արվեստի բնագավառում ստեղծագործող շնորհալի երեխաների ներգրավում, երիտասարդ սերնդի արվեստների և արհեստների ուսուցման ապահովում, երեխաների աշխարհայացքի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը և սոցիալապես անապահով խավի երեխաների ազգային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցմանը նպաստում: (Հավելված 1) 24. Մշակույթի ոլորտում ծրագրից ակնկալվող արդյունքներն են՝ ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում ուսման վարձավճարների փոխհատուցումը նպատակաուղղված է գեղարվեստական կրթության մատչելիության ապահովմանը, կրթական հաստատությունների պահպանմանը և մշակույթի ոլորտի մասնագետներով համալրմանը, մշակութային կրթական հաստատություններում ուսուցման որակի և արդյունավետության բարձրացում, կրթական նոր մեթոդների ներդրում, շնորհալի երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում և խթանում, պատանի ստեղծագործողների կարողությունների զարգացում, երեխաների և պատանիների գեղագիտական դաստիարակություն և բազմակողմանի զարգացում, արվեստի ճյուղերի հետ շփում, մանկական կինոյի զարգացում: (Հավելված 1) 25. Մշակույթի ոլորտում ծրագրի միջոցառումներն են՝ «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային, փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի իրականացում, մանկապատանեկան թատրոնների «Նռան հատիկ» հանրապետական փառատոն, «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային միջազգային փառատոն, «Հեքիաթին հյուր» մարզային միջոցառում գյուղական մանկահասակ բնակության համար, Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի գործունեության իրականացում, միջոցառումների անցկացում երեխաների հանգիստը և ժամանցը բազմաբովանդակ անցկացնելու համար, այդ թվում՝ «Արտուտիկ» ամառային ստեղծագործական ճամբարի կազմակերպում, շնորհալի և տաղանդավոր երեխաների տեղեկատվական բանկի համալրում, «Մենք ենք, մեր մարզը» մանկապատանեկան մարզային մշակույթի օրեր մայրաքաղաքում ծրագրի իրականացում, պատանի ստեղծագործողների համար մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների կազմակերպում, «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական մրցույթի կազմակերպում, գեղարվեստական գրականության, մանկական գրադարանների զարգացման նպատակային ծրագրեր, մանկական գեղարվեստական գրքերի հրատարակում, գրադարանային ֆոնդի համալրում, պետական աջակցություն հատուկ կարիքներով, սոցիալապես անապահով երեխաներին մշակութային մասնագիտական ուսուցման և գեղագիտական դաստիարակության ոլորտում՝ Երևանի 3, Վանաձորի մասնաճյուղի 2 գիշերօթիկ հատուկ դպրոցներում, Գյումրու մասնաճյուղերում, Գավառում, Սպիտակում արվեստների և արհեստների ուսուցում, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև սոցիալապես անապահով կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ստեղծագործական ներուժի բացահայտման ու ինտեգրման նպատակով Մանկապատանեկան արվեստի 1-ին միջազգային ինտեգրատիվ փառատոնի իրականացում, «Դպրոցականի ֆիլհարմոնիա» ծրագրի համերգների կազմակերպում, ՀՀ կառավարության 2012թ. նոյեմբերի 15-ի N 29 արձանագրային որոշմամբ հաստատված ծրագրերի և միջոցառումների իրականացում, «Երեխաների և պատանիների համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում» ծրագրի իրականացում, «Գրականությունը երեխաներին գրական բաց դասեր մարզային գրադարաններում» ծրագրի իրականացում, «Մանկապատանեկան կինոյի և անիմացիայի փառատոն» (աջակցություն մանկապատանեկան միջոցառումներին) ծրագրի իրականացում, մանկական մուլտֆիլմերի նկարահանում, «ԿԻՆՈՄԱՆ» «Կրթամշակութային կենտրոնի ստեղծում» ծրագիր: (Հավելված 1) 26. Իրավախախտում կատարած անչափահասների իրավական պաշտպանության ոլորտում . ծրագրի հիմնախնդիրներն են՝ իրավախախտումը ծնող պատճառների ու պայմանների վեր հանումը ու հետագա զանցանքների և հանցանքների կանխումը, իրավախախտի և տուժողի միջև համագործակցային պայմանների ստեղծումը, ՀՀ օրենսդրությունում անհամապատասխանությունն անչափահասների գործերով արդարադատության ասպարեզում ընդունված պրակտիկային, օրենսդրության ոլորտում առկա խնդիրներ անչափահասների նկատմամբ կիրառվող այլընտրանքային պատիժների և այլ միջոցների իրականացման վերաբերյալ, միասնական ցուցիչների բացակայությունն անչափահասների գործերով արդարադատության ոլորտում տվյալների հավաքագրման գործընթացում, կալանավորված անչափահասների կրթության իրավունքի ապահովում: (Հավելված 1) 27. Իրավախախտում կատարած անչափահասների իրավական պաշտպանության ոլորտում ծրագրի ընդհանուր նպատակն իրավախախտ անչափահասների, տուժողների և համայնքի իրավունքների ու շահերի պաշտպանությունն է: (Հավելված 1) 28. Իրավախախտում կատարած անչափահասների իրավական պաշտպանության ոլորտում ծրագրի հիմնական նպատակներն են՝ Հայաստանում այլընտրանքային իրավական սոցիալականացման համակարգի զարգացում, անչափահասների գործերով արդարադատության օրենսդրության բարեփոխում, իրավախախտում կատարած և դրա արդյունքում ազատությունից զրկված անչափահասների վերաինտեգրում և կրկնահանցավորութան կանխարգելում: (Հավելված 1) 29. Իրավախախտում կատարած անչափահասների իրավական պաշտպանության ոլորտում ակնկալվող արդյունքներն են՝ հասարակությունից մեկուսացնելու ձևով պատիժների և այլ միջոցների կիրառման դեպքերի սահմանափակում, իրավախախտում կատարած, հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա անչափահասների համար առավել նպաստավոր օրենսդրություն, անչափահասների գործերով արդարադատության բնագավառում մասնագիտացված տարբեր դերակատարներ (դատավորներ, դատախազներ, քննիչներ, ոստիկաններ, փաստաբաններ և այլն), ազատությունից զրկված անչափահասների առավել արդյունավետ վերաինտեգրում՝ ազատազրկման ընթացքում կյանքի անհրաժեշտ հմտություններ փոխանցելու միջոցով, անչափահասների հանցավորության վերաբերյալ հասարակության իրազեկության և հանցավորության դեմ պայքարի գործում հասարակության դերի բարձրացում, շահագրգիռ տարբեր գերատեսչությունների գործունեության և ջանքերի առավել արդյունավետ և հետևողական համակարգում, հանցավորության դեմ տարվող պայքարի քաղաքականություն՝ հիմնավորված գիտական վերլուծություններով և պարբերաբար թարմացվող տեղեկատվությամբ, կրկնահանցավորության հավանականության նվազում:		

		(Հավելված 1) 30. Իրավախախտում կատարած անչափահասների իրավական պաշտպանության ոլորտում ծրագրի միջոցառումներն են՝ 12-18 տարեկան հակասոցիալական վարք դրսևորած անչափահասների (իգական և արական սեռերի) համար վերականգնողական ծառայությունների ստեղծում, առկա վերականգնողական համայնքների կենտրոնների զարգացում և ցանցի ընդլայնում, համայնքներում իրավախախտումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում, ավագ դպրոցներում դպրոցական տեսուչ ծրագրի իրականացում, անչափահասների (իրավախախտ, վկա, տուժող) գործեր քննող դատավորների, անչափահասների գործերով զբաղվող դատախազների, քննիչների, ոստիկանների, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի անձնակազմի և փաստաբանների վերապատրաստումներ (մասնագիտացում), պարբերական մշակութային, մարզական և կրթական միջոցառումներ՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված և ազատազրկման դատապարտված անչափահասների համար, հանցավոր վարքագծի հետևանքների վերաբերյալ իրազեկության բարձրացման պարբերական միջոցառումներ (հակաքարոզչություն հեռուստատեսությամբ և այլ զանգվածային լրատվության միջոցներով), այդ թվում՝ քրեական բովանդակությամբ հեռուստասերիալների բովանդակության հսկողության ողջամիտ միջոցներով, օրենսդրության վերանայում՝ անչափահաս ձերբակալվածներին և կալանավորվածներին արգելանքի տակ պահելու առավելագույն ժամկետները կրճատելու, նրանց նկատմամբ գործերի լուծման արտադարանական միջոցների (diversion) և այլընտրանքային պատիժների կիրառման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, աջակցություն իրավախախտ անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոնին՝ ուսուցանվող արհեստների և արվեստների ցանկն ընդլայնելու և ուսուցումը ազատությունից զրկված իրավախախտ անչափահասների համար ևս կազմակերպելու հարցում: (Հավելված 1)		
119.	**«ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1334-Ն, ընդունված է՝ 03.09.2010, ուժի մեջ է՝ 28.10.2010* Սահմանում է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը:	1. Ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման **նպատակները**, մասնավորապես, ներառում են շահառուների՝ սովորողների և նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), դպրոցի մանկավարժական աշխատողների, նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, Երևանի քաղաքապետարանի, կրթության հարցերով զբաղվող կազմակերպությունների, գործատուների իրազեկվածության աստիճանի բարձրացումը, ուսումնական հաստատությունների հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը, գործունեության թափանցիկության ապահովմանը նպաստելը: (Կետ 10) 2. Ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման **խնդիրները** ներառում են՝ հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին շրջանավարտների համապատասխանության գնահատումը, ուսումնական գործընթացի կազմակերպման պայմանների և դրանց բարելավմանն ուղղված աշխատանքների գնահատումը, հանրակրթական ծրագրերի իրականացման, դասավանդման մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության գնահատումը, կրթական ծառայությունների որակի համապատասխանության և կրթական գործընթացի արդյունավետության մասին կրթական գործընթացի մասնակիցներին և հասարակությանն իրազեկումը, ներքին և արտաքին գնահատման գործընթացին հասարակայնության ներգրավումը: (Կետ 11) 3. Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը **մասնակցում են նաև ուսումնական հաստատության սովորողները** և նրանց ծնողները (օրինական ներկայացուցիչները): (Կետ 13) 4. Սահմանում է ուսումնական հաստատության գործունեության **ներքին գնահատման չափանիշները**, այդ թվում՝ շենքի և տարածքի անվտանգ շահագործման, սովորողների համար ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման, առողջության պահպանման համապատասխան ծառայությունների կազմակերպման, սովորողների շրջանում անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների ու հմտությունների ձևավորմանն ուղղված նպատակային ուսուցողական ծրագրերի իրականացման, սովորողների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրերի և միջոցառումների իրականացման, սովորողների առաջխաղացման և բարձր առաջադիմության ապահովման, որակյալ և դասավանդման ժամանակակից մեթոդներին տիրապետող ուսուցչական անձնակազմի և որակյալ կրթական միջավայրի առկայությանը, սովորողների և տնօրինության համագործակցության, հաստատության գործունեությանը սովորողների մասնակցության ապահովման, ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհրդի առկայության, տնօրինության և աշակերտական խորհրդի հետ ծնողական խորհրդի սերտ համագործակցության, ներառական կրթության և հավասարության ապահովման, ԿԱՊԿ ունեցող երեխաների սովորելուն աջակցելու ռեսուրսների առկայության և կարիքներին հարմարեցվածության, ԿԱՊԿ ունեցող երեխաների կարիքներին ուսումնական ծրագիրը, դասի պլանը, ուսուցանման գործընթացը հարմարեցնելու ուսուցիչների և նրանց խրախուսելու կարողություններին, դպրոցի և դասի բոլոր գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի ԿԱՊԿ ունեցող երեխաների հավասար մասնակցության, սովորողների՝ ԿԱՊԿ ունեցող իրենց ընկերների նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացման անհրաժեշտության գիտակցման և դրանք փոխելուն օգնելուն, սեռերի և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարության ապահովման և այլ դրույթների վերաբերյալ: (Կետ 20) 5. Արտաքին գնահատման չափանիշների առնվազն 75 տոկոսին չհամապատասխանելու (չբավարարելու) դեպքում ուսումնական հաստատությանն արտաքին գնահատման **հավաստագիր չի տրվում:** (Կետ 35) 6. Արտաքին գնահատման գործընթացը **չպետք է խոչընդոտի** ուսումնական հաստատության բնականոն գործունեությանը: (Կետ 36) 7. Ուսումնական հաստատության գործունեության **արտաքին գնահատման չափանիշները**, մասնավորապես, ներառում են ուսումնական հաստատության գործունեության բաց և թափանցիկ լինելը, տեղեկատվության համապարփակ ցանցի առկայությունը (ոսումնական հաստատության կայքի միջոցով ծնողներին և հասարակությանն ուսումնական հաստատության գործունեության մասին տեղեկացումը), սովորողների գիտելիքների, գործնական հմտությունների և կարողությունների ձեռքբերման, առարկայական ծրագրերի յուրացման, արժեքային համակարգի ձևավորման համար համապատասխան ուսումնանյութական միջավայրի ապահովումը, շրջանավարտների կրթության շարունակականությունը և (կամ) նրանց զբաղվածությունը, ուսումնական հաստատության խորհրդի, ծնողական, մանկավարժական, աշակերտական խորհուրդների՝ ուսումնական հաստատության գործունեությանը տված գնահատականը, աշակերտական խորհրդի ձևավորման և աշխատանքների կազմակերպման համար համապատասխան պայմանների ապահովումը (իր սեփական կարծիքն ու համոզմունքներն ազատ արտահայտելու	Ներքին գնահատման հաշվետվությունն ուսումնական հաստատության տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, մանկավարժական, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև երկշաբաթյա ժամկետում ապահովում դրա հրապարակումը տվյալ ուսումնական հաստատությունում (տեսանելի տեղում), տեղական և (կամ) հանրապետական մամուլում, նախարարության պաշտոնական կայքում: (Կետ 14) Շրջանավարտների համապատասխանության աստիճանը հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին որոշվում է նախարարության կազմակերպած ամփոփիչ ատեստավորման արդյունքներով: (Կետ 25) Արտաքին գնահատում անցած ուսումնական հաստատությունների վարկանիշային ցանկում ընդգրկված ուսումնական հաստատության վերաբերյալ գնահատող կազմակերպության ներկայացրած հաշվետվությունը հրապարակվում է ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում: (Կետ 38)	• **Ներքին գնահատումն** իրականացնում է ուսումնական հաստատությունը՝ անկախ դրա կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից: (Կետ 3) Պետական ուսումնական հաստատության **արտաքին գնահատումը** կատարվում է արտաքին գնահատում իրականացնող անկախ կազմակերպության կողմից: (Կետ 4) Ոչ պետական ուսումնական հաստատության գործունեության արտաքին գնահատումն իրականացվում է տվյալ ուսումնական հաստատության կողմից ընտրված գնահատող կազմակերպության կողմից: (Կետ 5) • Արտաքին գնահատման դրական արդյունքների հիման վրա գնահատող կազմակերպությունն ուսումնական հաստատությանը տալիս է **հավաստագիր**, որն ուժի մեջ է երեք տարի: (Կետ 6) Հավաստագրի մեջ նշվում է գնահատման (**վարկանիշային**) միավորը: (Կետ 7) Արտաքին գնահատման արդյունքների հիման վրա ՀՀ ԿԳՆ-ն հրապարակում է արտաքին գնահատում անցած ուսումնական հաստատությունների **վարկանիշային ցանկը**: (Կետ 8) • Ներքին գնահատումն իրականացվում է ուսումնական հաստատության տնօրենի հրամանի համաձայն ձևավորված հանձնաժողովի կողմից: (Կետ 15) Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (խորհուրդ) առնվազն երկու, մանկավարժական և ծնողական խորհուրդների՝ ուսումնական հաստատության խորհրդի կազմում չընդգրկված առնվազն մեկական անդամ, տեղական ինքնակառավարման մարմնի (Երևանի քաղաքապետարանի) առնվազն երկու ներկայացուցիչներ: (Կետ 16)

		հնարավորությունների ապահովումը), ներքին կարգապահական կանոնների առկայությունը, սահմանված վարքագծի կանոնների պահանջների կատարումը (աշխատողների և սովորողների), ուսումնական գործընթացի կազմակերպումը, ուսուցման ձևի ընտրության իրավունքի ապահովումը (անհատական ուսուցման կազմակերպման առկայությունը (առկա, հեռակա, հեռավար (դիստանցիոն) և տնային ուսուցման ձևերով), ճամբարային ուսուցման առկայությունը), ուսումնական, մշակութային, մարզական, առողջարանային և արտադրական բազայից օգտվելու մատչելիությունը, սովորողների շարժի վերլուծության արդյունքները և այլն (Կետ 29)		• Արտաքին գնահատման ընթացքում օգտագործվում են նախարարության իրականացրած տեսչական ստուգումների արդյունքները: (Կետ 22) Ուսումնական հաստատության գործունեության արտաքին գնահատումն իրականացվում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի և հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին շրջանավարտների համապատասխանության հիման վրա: (Կետ 23) Կրթական ծառայությունների որակի գնահատման հիմքն ուսումնական հաստատությունների միջին վիճակագրական տվյալների ցուցանիշներն են: (Կետ 24) • Արտաքին գնահատմանը մասնակցում են ծնողները, սովորողները, կրթության պետական և տարածքային կառավարման լիազորված մարմինները, տեղական ինքնակառավարման մարմնի և ուսումնական հաստատության ներկայացուցիչները: (Կետ 27) • Սահմանում է գնահատող կազմակերպությանը և արտաքին գնահատման ընթացակարգին վերաբերվող դրույթներ: Արտաքին գնահատումն իրականացվում է ուսումնական հաստատության ֆինանսական միջոցների հաշվին: (Կետ 33)
120.	**«Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 815-Ն, ընդունված է՝ 31.05.2007, ուժի մեջ է՝ 02.08.2007* Հաստատում է մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները	1. Հաստատում է մեկ խնամվողի հաշվարկով **սննդի տեսականին և քանակը մանկատանը խնամվող երեխաների** համար՝ ըստ տարիքային խմբերի. 5 օրականից մինչև 7 ամսական, 7-ից մինչև 12 ամսական, 1-1.5 տարեկան, 1.5-3 տարեկան, 3-18 տարեկան (վերջին խմբի դեպքում, նաև՝ մասնագիտացված մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում խնամվող երեխաների համար): (Կետ 1, հավելվածներ) 2. Հաստատում է մեկ խնամվողի հաշվարկով հ**ագուստի, կոշկեղենի ու փափուկ գույքի տեսականին և քանակը մանկատանը և մասնագիտացված մանկատանը** խնամվող մինչև 3 տարեկան, մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում և մասնագիտացված մանկատանը խնամվող 3-18 տարեկան երեխաների համար: (Կետ 1, հավելվածներ) 3. Հաստատում է ըստ տարիքային կտրվածքի **ծախսվող էներգիայի, սպիտակուցների, ճարպերի, ածխաջրատների, ֆիզիոլոգիական նորմերը**: (Կետ 1, հավելվածներ) 4. Հաստատում է մեկ սովորողի հաշվարկով **հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում** սովորող երեխաների սննդամթերքի տեսականին և քանակը, փափուկ գույքի տեսականին և քանակը: (Կետ 1, հավելվածներ) 5. Սահմանում է սննդի քանակի **15 տոկոսի հավելում**՝ քրոնիկական դիզենտերիայով, տուբերկուլոզով տառապող և ասթետիկ երեխաներին, ինչպես նաև մանկատան մեկուսարանում գտնվող **հիվանդ երեխաների** համար: (Կետ 2)		• Նորմատիվներով հաշվարկված ծախսերի հատկացման հարցը քննարկվում է յուրաքանչյուր տարվա՝ ՀՀ պետական բյուջեի նախագծի կազմման ժամանակ (Կետ 3)

121.	**«ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչության՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 598-Ն, ընդունված է՝ 06.06.2013, ուժի մեջ է՝ 06.07.2013* Հաստատում է ՀՀ ԿԳՆ աշխատակազմի կրթության պետական տեսչության՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը, նախադպրոցական, հանրակրթական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում անցկացվող ստուգումների ստուգաթերթերը:	1. Ուսումնական հաստատության անհատական ռիսկը պարունակում է 2 բաղադրիչ: Առաջին բաղադրիչի հաշվարկման համար կիրառվում են ռիսկայնության հետևյալ չափանիշները՝ սովորողների թիվ, սովորողների շարժ, մանկավարժական աշխատողների շարժ, քաղաքացիների դիմումների, բողոքների թիվ, տեսչության տարեկան աշխատանքային ծրագրերի հիման վրա իրականացված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված խախտումներ: 2. Սահմանում է ՀՀ կրթության պետական տեսչության կողմից ՀՀ **նախադպրոցական ծրագրեր** իրականացնող կազմակերպությունում **մանկավարժական աշխատողներին, տնօրենին, մեթոդիստին, զարգացնող միջավայրին** ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների հարցաշարերը՝ հետևյալ **նորմատիվ իրավական ակտերի** դրույթների հիման վրա. «Կրթության մասին» ՀՀ օրենք, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, «Լեզվի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2002թ. դեկտեմբերի 26-ի N 54 արձանագրային որոշում «ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը հավանություն տալու մասին, ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. ապրիլի 26-ի «ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման կազմի բնութագրերն ըստ պաշտոնների» N 416-Ն հրաման, ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. հունվարի 26-ի N 29-Ն հրամանով հաստատված «ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին», ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. հուլիսի 28-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների շարժի մատյան ձևաթուղթը, գործածության և վարման կարգը հաստատելու մասին» N 870 հրաման 3. Սահմանում է ՀՀ կրթության պետական տեսչության կողմից ՀՀ **հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) ծրագրեր** իրականացնող կազմակերպության **ուսուցչի, տնօրենի տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկի և սովորողների պարտականությունների**, **սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգի**, **սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի**, **սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցի և աշխատակարգի, դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի, օլիմպիադայի կազմակերպման և անցկացման կարգի, կառավարման խորհրդի լիազորությունների, վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգի, շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգի, ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի, ուսուցչի ատեստավորմանը, ուսուցչի ատեստավորման տարածքային և հանրապետական հանձնաժողովների ձևավորմանը և գործունեությանը, ատեստավորման միջոցով որակավորում ստացած մանկավարժական աշխատողներին հավելավճար տալուն, կազմակերպության կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոնների, մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկին և նկարագրերին, խորհրդակցական մարմիններին, տնօրենին** ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների հարցաշարերը՝ հետևյալ **նորմատիվ իրավական ակտերի** դրույթների հիման վրա. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1392-Ն որոշում, ՀՀ կառավարության 2010 թ. հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշումը «ՀՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը հաստատելու մասին», ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի N 1745-Ն որոշումը «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների ձևավորման և գործունեության, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման և որակավորման տարակարգի շնորհման, ինչպես նաև ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելավճար տալու կարգերը հաստատելու և ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի N 1496-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման կարգ», ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը» N319-Ն որոշում, ՀՀ ԿԳ նախարարի 24.11.2010թ. N 1640-Ն հրաման «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգ», ՀՀ ԿԳ նախարարի 05.05.2012թ. N388-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգ», ՀՀ ԿԳ նախարարի 15.05.2012թ. N465-Ա/Ք հրամանով հաստատված «2011-2012 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույց և աշխատակարգ», ՀՀ ԿԳ նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 10-ի N 833-Ն հրամանով հաստատված «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգ», ՀՀ ԿԳ նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 8-ի N 935-Ա/Ք հրամանով հաստատված «2012 թվականի՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների անցկացման աշխատակարգ և ժամանակացույց», ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2011թ. «ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի կազմակերպման և անցկացման կարգ» N 280-Ն հրաման, ՀՀ ԿԳ նախարարի 22.06.2010թ. N 609-Ն հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգ», ՀՀ ԿԳ նախարարի 2010թ. օգոստոսի 2-ի	Մեթոդաբանության համաձայն գնահատվում են այն ռիսկերը, որոնց պատճառով չի ապահովվի կրթության բնագավառի օրենսդրությամբ սահմանված՝ սովորողների կամ երեխաների կրթական իրավունքի պետական երաշխիքների, կրթության որակի բարձրացման, կրթական ծրագրերի յուրացման, պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարումը: Ուսումնական հաստատության ոլորտային ռիսկի գնահատման մոդելը կիրառվում է՝ հիմք ընդունելով տեսչության կողմից իրականացվող ստուգումների արդյունքում ստացված երեք տարվա վիճակագրական տվյալները: Տեսչությունը ձևավորում է ուսումնական հաստատությունների տվյալների բազա, որի կիրառման նպատակն է՝ աջակցել կրթության պետական տեսուչներին որոշումներ կայացնելու գործընթացում, և ապահովել այդ որոշումների հիմնավորվածությունը, ստանալ ուսումնական հաստատությունների դասակարգումն՝ ըստ ուսումնական հաստատությունների ռիսկի, ստանալ ուսումնական հաստատությունների ռիսկերի առաջացման պատճառները: Տվյալների բազան ձևավորվում է ըստ ոլորտների: Ուսումնական հաստատությունների գրանցամատյանում /ռեգիստր/ տվյալները բաժանվում են երեք մասի: Առաջին մասն իր մեջ ներառում է կազմակերպության ընդհանուր տվյալները, երկրորդ մասը ներառում է այն տվյալները, որոնք անմիջական կապ ունեն անհատական ռիսկի առաջին բաղադրիչի հաշվարկման հետ, իսկ երրորդ մասը ներառում է ստուգումների արդյունքում ստացված տվյալները: Գրանցամատյան ստեղծելուց հետո տվյալների բազան պարբերաբար թարմացվում, լրացվում և ծառայում է տեսչության կողմից ռիսկի վրա հիմնված ստուգման համակարգի նպատակներին:	• ՀՀ ԿԳՆ աշխատակազմի Կրթության պետական տեսչություն

		N 1262 -Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգ», ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանով հաստատված «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ N 2.III.3-2...», ՀՀ ԿԳ նախարարի 06.12.2010թ. թիվ 1672-Ն հրամանով հաստատված «ՀՀ ուսումնական հաստատություններում վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման մասին պայմանագիր», ՀՀ ԿԳ նախարարի 2011 թ. մայիսի 17-ի N 571-Ն հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը», ՀՀ ԿԳ նախարարի 25.05.2012թ. N 537-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2012-2013 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ», ՀՀ ԿԳ նախարարի 2010 թվականի հունիսի 15-ի «ՀՀ ԿԳ նախարարի 2010 թվականի մարտի 18-Ի N113-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 579-Ն հրաման (ՀՀ ԿԳ նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրաման «ՀՀ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ») 4. Սահմանում է ՀՀ կրթության պետական տեսչության կողմից **նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագրեր** իրականացնող կազմակերպության **սովորողների և շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, գնահատման, ամփոփիչ ատեստավորման, քննակարգերի, աշխատակարգերի պահպանման, ավարտական պետական փաստաթղթերի ստացման, պահպանության և բաշխման, կազմակերպության կողմից կրթության բովանդակությանը համապատասխան կրթական գործընթացի կազմակերպման, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարման, տարեկան ուսումնական ժամանակացույցերի, դասացուցակների պահպանման**, **ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման կարգերին համապատասխան՝ սովորողների շարժի** վերաբերյալ իրականացվող ստուգումների հարցաշարերը՝ հետևյալ **նորմատիվ իրավական ակտերի** դրույթների հիման վրա. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 01.07.2004 թ. N 1210-Ն որոշում «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն, ՀՀ կառավարության որոշում 06.09.2007թ. N 1028-Ն «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) /հավելված 2/ և դրսեկությամբ (էքստեռնատով) /հավելված 1/ ուսուցման կարգերը հաստատելու մասին», ՀՀ կառավարության որոշում 30.10.2008թ. N 1254-Ն «Նախնական (արհեստագործական) կրթական ծրագրի անհատական մասնագիտական (վարպետային ուսուցման) ձևերով ուսուցման կարգը հաստատելու մասին», ՀՀ ԿԳ նախարարի 22.06.2010թ. N 609-Ն հրաման «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների պետական նմուշի ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին», ՀՀ ԿԳ նախարարի 21.07.2006թ. N 638-Ն հրաման «ՀՀ Նախնական մասնագիտական (արհեստագործկան) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին», ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. N 254-Ն հրաման «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին», ՀՀ ԿԳ նախարարի՝ 10.02.2012թ. հրաման N 109-Ն «Լիցենզավորված անձանց կրթական ծրագրերով տրամադրվող լիցենզիայի ներդիրի ձևերը հաստատելու մասին», ՀՀ ԿԳ նախարարի 12.03.2011 թ. N 194-Ն հրաման «Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը հաստատելու մասին», ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. N 1455-Ն հրաման «Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը հաստատելու մասին», ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. N 1278-Ն հրաման «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքների վերականգնման» կարգը հաստատելու մասին», ՀՀ ԿԳ նախարարի 22.12.2006թ. N 997-Ն հրաման «ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում (մագիստրոսներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը հաստատելու մասին»		
122.	**«Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարությունը և Լոռու մարզի Վանաձորի մանկատան, Վանաձորի N 2, Վանաձորի N 3, Ստեփանավանի N 1 և Սպիտակի «որբ, ծնողական խնամքից զրկված մտավոր թերզարգացում ունեցող երեխաների» N 1 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների բեռնաթափման 2006 թվականի փորձնական**	1. Նկարագրում է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխայի պաշտպանության ոլորտում առկա **հիմնախնդիրները**, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած, հաշմանդամ, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում խնամվող, հանրակրթությունից դուրս մնացած, մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների, աղքատ ընտանիքներում երեխաների պաշտպանության և սոցիալական ծառայությունների հասցեականության հիմնախնդիրները: 2. Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010թթ. ռազմավարության իրականացման **հիմնական նպատակներն** են. մանկատներում, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում գտնվող երեխաների համար ապահովել հասարակության մեջ ինտեգրվելու անհրաժեշտ միջոցառումներ, կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների պաշտպանության համար երեխայի պաշտպանության կառույցների և ծառայությունների ստեղծում, երեխաների պաշտպանության ոլորտի համակարգում և մոնիթորինգ, հասարակության իրազեկում երեխաների պաշտպանության մասին: 3. Սահմանում է ռազմավարության հիմնական նպատակների իրականացումից ակնկալվող **արդյունքները**, այդ թվում՝ մասնագիտական գնահատման հիման վրա երեխայի ինտեգրմանն ուղղված երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր, երեխայի խնամքն ընտանիքներում, սոցիալական աջակցություն՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և նրանց թվին պատկանող անձանց, **կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխայի հայտնաբերման, գրանցման, նրա կարիքների գնահատման, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրերի մշակման և դրանց իրականացման վերահսկման նպատակով ստեղծված կառույցներ**, կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրերի իրականացումն ապահովելու նպատակով	Միջոցառումները ներառում են. Մանկատներում, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում գտնվող երեխաների կարիքների գնահատում, Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների կարիքների գնահատում, Երեխաների պաշտպանության հարցերի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում, Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների բազաների վերլուծություն, 2006-2010թթ. ընթացքում լրատվական միջոցների ներգրավում և հանրությանն իրազեկում, Հանրության	• Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողով • ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն • ՀՀ կրթության և գիտության նախարարություն • ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ կառավարություն Միջոցառումները ներառում են. Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների աշխատողների մասնագիտական ուսուցման կազմակերպում, Մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմերի երեխաների

	ծրագիրը հաստատելու և ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի N 988-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 206-Ն, ընդունված է՝ 12.01.2006, ուժի մեջ է՝ 18.03.2006* Հաստատում է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարությունը, Լոռու մարզի Վանաձորի մանկատան, Վանաձորի N 2, Վանաձորի N 3, Ստեփանավանի N 1 և Սպիտակի «Որբ, ծնողական խնամքից զրկված մտավոր թերզարգացում ունեցող երեխաների» N 1 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների բեռնաթափման 2006 թվականի փորձնական ծրագիրը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի «Մանկատների բեռնաթափում փորձնական ծրագիրը հաստատելու մասին» N 988-Ն որոշումը	մանկատներին, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններին և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններին այլընտրանք հանդիսացող ծառայություններ, **հաշվետվության գործող մեխանիզմներ**, ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագրի իրականացում, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող լիցենզավորված կամ հավատարմագրված հաստատություններ, երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների պետական կառավարման մարմինների կողմից պատվիրակված ծրագրերը համակարգված են ՀՀ վարչապետի 28.10. 2005 թվականի N 835-Ն որոշմամբ ստեղծված **երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի** կողմից, հասարակությունը տեղեկացված է երեխաների պաշտպանության քաղաքականության իրականացմանը: (Կետ 22) 4. Սահմանում է ռազմավարության հիմնական նպատակներին և ակնկալվող արդյունքներին հասնելուն ուղղված միջոցառումները, ցուցանիշները, կատարման ժամկետներն ու ցուցանիշներն ըստ տարիներից ցուցանիշների գնահատման աղբյուրները, պատասխանատուներին: 5. Միջոցառումները ներառում են. Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչների կիրառում, Մանկատներում գտնվող երեխաների համար կեսճանապարհային ծրագրերի մշակում, ՀՀ կառավարության 30.11. 2003թ. N 1419-Ն որոշմամբ հաստատված «Պետական աջակցություն մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շարունակականության ապահովում, Նոր Խարբերդի մասնագիտացված մանկատան շրջանավարտների սոցիալական աջակցության ծրագրերի կազմակերպում, ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար մշակել և իրականացնել տարեկան ծրագրեր: (Կետ 23)	իրազեկվածության և քարոզարշավի ազդեցության հետազոտություն: (Կետ 23)	իրավունքների պաշտպանության բաժինների աշխատողների մասնագիտական ուսուցում, Մանկատների, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների բեռնաթափման ծրագրերի իրականացում, Խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրում, Խնամատարության փորձնական ծրագրի ամփոփում, Երեխաների խնամքի ցերեկային հաստատությունների ստեղծում, Սոցիալական աշխատողների ցանցի ստեղծում, Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների վերանվանում, Երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատությունների ստեղծում, Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների լիցենզավորման կամ հավատարմագրման համար անհրաժեշտ օրենսդրության մշակում և ընդունում, Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ցուցակների կազմումը, Համապատասխան ընթացակարգերի մշակում, Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի կողմից երեխաների հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների պետական կառավարման մարմինների կողմից պատվիրակված ծրագրերի համակարգում: (Կետ 23)
123.	**«Պետական հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին պետական պարտադիր ծրագրերով նախատեսված առարկաների անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1351-Ն, ընդունված է՝ 25.08.2005, ուժի մեջ է՝ 23.09.2005* Հաստատում է պետական հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին պետական պարտադիր ծրագրերով նախատեսված առարկաների անվճար դասագրքերով և	1. Պետական հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին պետությունը պետական միջոցների հաշվին անվճար ապահովում է պետական պարտադիր ծրագրերով նախատեսված առարկաների դասագրքերով՝ բացառությամբ օտար լեզուների և երաժշտության դասագրքերի, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ նաև պետական պարտադիր ծրագրերով նախատեսված բոլոր առարկաների դասագրքերով: (Կետ 4) 2. Տարրական դասարանների դասագրքերը հրատարակվում են 3 տարին մեկ անգամ և տրվում են դպրոցներին որպես գրադարանային ֆոնդ: Դպրոցից այդ դասագրքերը հատկացվում են աշակերտներին օգտագործման՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: (Կետ 5) 3. Այբբենարանը և մաթեմատիկայի «Մաթեմատիկա-1» (1-ին մաս) դասագիրքն առաջին դասարանցիներին հատկացվում են անվերադարձ օգտագործման սկզբունքով: (Կետ 6) 4. Միջնակարգ դպրոցներն անվճար ապահովվում են պետական պարտադիր ծրագրով նախատեսված առարկաների դասավանդումն ապահովող ուսումնական գրականությամբ: (Կետ 7[2]) Ուսումնական գրականությունը դպրոցներին տրվում է որպես գրադարանային ֆոնդ, և սովորողներն այդ ուսումնական գրականությունից օգտվում են անվճար: (7[3])	Տարրական դասարանների պետական պարտադիր ծրագրերով նախատեսված առարկաների դասագրքերը և ուսումնական գրականությունը հաշվառվում են դպրոցներում: (Կետ 7)	• Դասագրքերի հրատարակման պատվերը ձևավորում է ՀՀ ԿԳՆ-ն՝ հիմք ընդունելով հանրապետության մարզերից (Երևան քաղաքից) ստացված համալրման ցուցանիշները: (Կետ 2) • Տարրական դասարանների պետական պարտադիր ծրագրով նախատեսված առարկաների անվճար հատկացվող դասագրքերի գնումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի: (Կետ 3)

	ուսումնական գրականությամբ (ծրագրային նյութի կատարումն ապահովող քարտեզներ, ատլասներ, էլեկտրոնային նյութեր, պլակատներ) ապահովելու կարգը:			
124.	**«Իրավական համաուսուցման, իրավական դաստիարակության և իրավաբանական կրթության համակարգի վերակառուցման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 40, ընդունված է՝ 31.08.2015* Հավանություն է տալիս իրավական համաուսուցման, իրավական դաստիարակության և իրավաբանական կրթության համակարգի վերակառուցման հայեցակարգին, ՀՀ արդարադատության նախարարին և ՀՀ ԿԳ նախարարին եռամսյա ժամկետում հանձնարարում է մշակել և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման ծրագիրը:	1. Հանրապետության Նախագահի կարգադրությամբ նախատեսված իրավական համաուսուցման և իրավական դաստիարակության համակարգի վերակառուցման միջոցառումները պետք է ընթանան հետևյալ մակարդակներում. նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրավական կրթության, իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններում իրավունքի ուսուցման և հասարակության իրավական համաուսուցման համակարգի կատարելագործում, միջին մասնագիտական իրավաբանական կրթության համակարգի ձևավորում և զարգացում, բարձրագույն իրավաբանական կրթության համակարգի վերափոխում, ՋԼՄ-ների միջոցով իրականացվող իրավական համաուսուցման և դաստիարակության կայուն համակարգի ստեղծում: 2. Սահմանում է նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրավական կրթության, իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններում իրավունքի ուսուցման և հասարակության իրավական համաուսուցման համակարգի կատարելագործման գերակայությունները 3. ՀՀ **նախադպրոցական** կրթության համակարգում ներդնել իրավական կրթության ու դաստիարակության նոր սկզբունքներ: (Կետ 2.2) **Հանրակրթական** տարրական, միջին և ավագ մակարդակների կրթական ծրագրերում կատարելագործել իրավական համաուսուցման և դաստիարակության համակարգի կատարելագործում: (Կետ 2.3) Իրավական համաուսուցման համակարգը պարտադիր դարձնել միջին **մասնագիտական** և **բարձրագույն** ուսումնական հաստատություններում բոլոր մասնագիտություններով. (Կետ 2.4) 4. **Միջին մասնագիտական** կրթության ոլորտում իրավունքի բնագավառի նոր մասնագիտությունների (օրինակ՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման, ոստիկանության պարեկապահակային ծառայության, քրեակատարողական ծառայության և այլ ոլորտներում) վերհանում և այդ մասնագիտություններով պաշտոն զբաղեցնելու համար միջին մասնագիտական կրթության առկայության պահանջի սահմանում, իրավունքի ոլորտի միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի և դրանց համար պետական կրթական չափորոշիչների սահմանում, իրավունքի ոլորտի միջին մասնագիտական կրթության կրթական ծրագրերի մշակում և կրթական ծրագրերի ներդրմանն ուղղված պետական աջակցության ապահովում, կրեդիտների կուտակման և փոխանցման միջոցով ուսանողների շարժունության ապահովում միջին մասնագիտական կրթական համակարգի ներսում, ինչպես նաև միջին մասնագիտական համակարգից դեպի բարձրագույն մասնագիտական կրթության համակարգ և բարձրագույն մասնագիտական կրթության համակարգից՝ միջին մասնագիտական կրթական համակարգ: (Կետ 3.3) 5. Ուսումնասիրել **ՋԼՄ**-ներում իրավական համաուսուցման և համադաստիարակության թեմաներով հաղորդաշարերի, հրատարակությունների բացման հնարավորությունը և ներկայացնել առաջարկներ, զարգացնել հանրային-պետական ՋԼՄ-ների միջոցով իրավական քարոզչության համակարգը, նպաստել ՋԼՄ-ների ներկայացուցիչների համար իրավունքի և դրա առանձին ճյուղերի վերաբերյալ դասընթացների կազմակերպմանը: (Կետ 6.1)		• ՀՀ արդարադատության նախարարություն • ՀՀ ԿԳ նախարարություն
125.	**«ՀՀ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների 16-18 տարեկան երեխաների կրթական կարիքների գնահատման, աջակցության և մոնիթորինգի իրականացման մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 4, ընդունված է՝ 02.02.2012* Հավանություն է տալիս ՀՀ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների 16-18 տարեկան երեխաների կրթական կարիքների գնահատման, աջակցության և մոնիթորինգի իրականացման ծրագրին, կրթական կարիքների գնահատման հետազոտության հարցաթերթի և արդյունքների ամփոփագրի, ինչպես նաև կրթական ծրագրերում ընդգրկված երեխաների մասին տեղեկանքի ձևերին:	1. ՀՀ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների 16-18 տարեկան երեխաների կրթական կարիքների գնահատման, աջակցության և մոնիթորինգի ծրագրի **նպատակն** է՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների 16-18 տարեկան երեխաների (հաճախորդ) մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունները մեծացնել՝ դրանով աջակցելով ընտանիքին ներգարվվելու սոցիալական ակտիվ ծրագրերում, բարձրացնել ընտանիքի բարեկեցության մակարդակը: (Կետ 1) 2. Ծրագիրն իրականացվում է հետազոտության, վերլուծության, ծառայությունների տրամադրման և գնահատման փուլերով: (Կետ 2) 3. Առաջարկվող ծառայությունների տեսակներն են. ծնողին համալիր խորհրդատվական ծառայությունների տրամադրում՝ ծրագրի կարևորության, անհրաժեշտության, բովանդակության և ակնկալվող արդյունքների մասին, առաջարկվող կրթական հաստատությունում համապատասխան մասնագիտությամբ ընդունվելու համար անհրաժեշտ նվազագույն գիտելիքների տրամադրման ապահովում՝ կրկնուսույցների միջոցով՝ անհատական կամ խմբային դասընթացների միջոցով, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում անվճար ուսուցման ապահովում, ուղղորդում կենտրոն՝ աշխատանքի տեղավորման կամ զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի շրջանակներում իրականացվող մասնագիտական ուսուցման ծրագրում ներառելու համար: (Կետ 12)	Ծրագրի հետազոտության փուլի նպատակն է ուսումնասիրել հաճախորդի կրթության նկատմամբ հակումներն ու նախասիրությունները, ունակություններն ու կարողությունները, կրթությունը շարունակելու նպատակամղվածությունը, կրթության իրականացմանը խոչընդոտող հիմնական խնդիրները: (Կետ 3) Հետազոտությունն իրականացվելու է առնվազն մեկ մարզում և Երևանի վարչական մեկ շրջանում: (Կետ 4) Հետազոտության ընտրանքում ներառվում են ընտանիքների անապահովության գնահատման համակարգի՝ ընտրված տարածքի, տեղեկատվական համակարգում հաշվառված բոլոր ընտանիքների 16-18 տարեկան բոլոր երեխաները: (Կետ 5) ՍԾՏՄ-ն անհատական ծրագրում նախատեսում է հաճախորդի՝ կրթական ծրագրում ներառման ողջ ընթացքի **մշտադիտարկման** պլան (հանդիպումներ հաճախորդի, ուսումնական հաստատության, կրկնուսույցի, կրկնուսույցների խմբի ղեկավար հետ, հեռախոսազրույցներ և այլն): (Կետ 13)	• Հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացնում են տարածքի **«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության (ԶՊԾԳ)** մարզային և տարածքային կենտրոնների, ինչպես նաև **սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների (ՍԾՏՄ)** աշխատողների ուժերով մեկ ամսվա ընթացքում: (Կետ 6) • **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը**. կազմում է հաճախորդների ցուցակներն ըստ հասցեների և տրամադրում ՍԾՏՄ-ներին և կենտրոններին՝ 5 աշխատանքային օրերի ընթացքում, հաստատում է հարցաթերթի լրացման մեթոդաբանությունը, կազմակերպում է հարցազրուցավարների հրահանգավորում, դաշտային աշխատանքների ավարտից հետո ձևավորում է տեղեկատվական բազան, վերլուծում է տեղեկատվական բազայի տվյալները (SPSS ծրագրով), գնահատում կրթական կարիքները, համադրում աշխատանքի շուկայի

			ՍԾՏՄ-ն ՀՀ մարզպետարանի կամ տեղական ինքնակառավարման մարմնի հետ համատեղ կազմակերպում է անհատական կամ խմբային դասընթացները (տարածք, մասնակիցների ներկայության ապահովում և հաճախելիության **մոնիթորինգ**, ժամանակացույցի կազմում): (Կետ 14) Ծրագրի **գնահատումն** իրականացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: (Կետ 16)	առկա իրավիճակի (պահանջարկի) հետ, կազմում առաջարկություն, արդյունքների մասին ամփոփ տեղեկանք է ներկայացնում ՀՀ կառավարության աշխատակազմ: (Կետ 7) Առաջարկությունը ներառում է հաճախորդների գնահատված կարիքներին և աշխատանքի շուկայի պահանջարկին համարժեք մասնագիտությունների ցանկը (Կետ 8), և տրամադրվում է **ՀՀ կրթության և գիտության նախարարությանը**, ՋՊԾԳ կենտրոններին և ՍԾՏՄ-ներին: (Կետ 9) • Սահմանում է ՀՀ ԿԳՆ և ՀՀ ԱՍՀՆ գործառույթները՝ առաջարկության մեջ ներառված մասնագիտությունների ցանկին համապատասխան: • ՍԾՏՄ-ն հիմք ընդունելով յուրաքանչյուր հաճախորդի հետ տարված անհատական աշխատանքի գնահատված արդյունքները, ինչպես նաև ցանկերն ու ցուցակները, կազմում է անհատական ծրագիր՝ նրան առաջարկելով իր կարիքին համարժեք ծառայություն: (Կետ 11)
126.	**«ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարությանը և ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարության 2014-2019 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 47, ընդունված է՝ 13.11.2014* Հավանություն է ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարությանը և դրա իրականացման 2014-2019թթ. գործողությունների ծրագրին:	1. Սահմանում է ՖԿԱՌ-ի նպատակը և խնդիրները, սկզբունքները, թիրախ խմբերը, ֆինանսական կրթման բովանդակությունը և ծրագրերը, գործողությունների ծրագիրը, նպատակային ցուցանիշները: 2. Դպրոցում ֆինանսական կրթումը շղթայի սկիզբն է և ֆինանսական կրթման գործընթացը սկսվում է հանրակրթական դպրոցից: (Կետ 61) Ֆինանսական կրթումը անհրաժեշտ է իրականացնել հետևյալ **հաջորդական աստիճաններով՝** տարրական դպրոց՝ 1-4-րդ դասարաններ, միջին դպրոց՝ 5-9-րդ դասարաններ, ավագ դպրոց՝ 10-12-րդ դասարաններ: (Կետ 66) 3. Դպրոցներում ֆինանսական կրթումը իրականացվելու է այլ առարկաներում **ինտեգրված** ձևով: Այս պարագայում դասավանդվող առկա առարկաներում ներառվելու են առանձին բաղկացուցիչներ անձնական ֆինանսների վերաբերյալ: Առարկաների ցանկը, որում պետք է ինտեգրվեն ֆինանսական գիտելիքները, կորոշվի ՀՀ ԿԳՆ-ն՝ դպրոցներում ֆինանսական կրթման ծրագրի մշակման ժամանակ: (Կետ 68) Ուրվագծում է դպրոցում ֆինանսական կրթման մեթոդները (Կետ 69), պիլոտային փորձարկումները (Կետ 70), դասընթացների բովանդակությունը (Կետ 71), ուսուցիչների վերապատրաստման մոտեցումները:	ՖԿԱՌ-ի և ֆինանսական կրթման ծրագրերի արդյունավետության գնահատումը և մոնիթորինգը ներառում է հանրության ֆինանսական կրթման մակարդակի շարունակական գնահատումը և առանձին կրթական ծրագրերի արդյունավետության գնահատումը: (Կետ 103) Ընթացիկ ծրագրերի, ինչպես նաև ՖԿԱՌ արդյունավետության գնահատման նպատակով կստեղծվի հատուկ մոնիթորինգային խումբ, որը գործելու է Հանձնաժողովի ներքո և անմիջապես հաշվետու է նրան: (Կետ 104)	• **ՀՀ Կենտրոնական բանկ** (կոորդինացնում է աշխատանքների ղեկավարումը), Հայաստանի բանկերի միություն, Ֆինանսական կազմակերպություններ, միություններ և ասոցիացիաներ, Վարկային կազմակերպությունների միություն, Ապահովագրական շուկայի մասնակիցների ասոցիացիա, Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միություն • ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարության մշակման և իրագործման հանձնաժողով (միջգերատեսչական խորհրդատվական մարմին, 2012թ. մայիսի 30-ին ՀՀ ԿԲ նախագահի թիվ 1/501Ա որոշում) • ՀՀ ԿԳՆ, Կրթության ազգային ինստիտուտ, Գնահատման և թեստավորման կենտրոն, Հայկական պետական մանկավարժական համալսարան, համագործակցող ԲՈՒՀ-եր
127.	**«Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 46, ընդունված է՝ 15.11.2012* Հավանություն է տալիս	1. Սահմանում է ծրագրի նպատակները, այդ թվում՝ տաղանդավոր երեխաների ու երիտասարդների բացահայտումը, նրանց կրթության և ստեղծագործական ունակությունների զարգացման ու ինքնադրսևորման համար պայմանների ապահովումը, մանուկների և պատանիների հաղորդակցում ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, ժողովրդական արվեստի լավագույն նմուշներին, դասական և ժամանակակից արվեստին, արվեստի բարոյական ներուժի իրացում՝ որպես մանուկների և պատանիների բարձրագույն նպատակների, բարոյական սկզբունքների ձևավորման ու զարգացման նախապայման, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար կրթության մատչելիության ապահովումը: (Կետ 6) Սահմանում է ծրագրի խնդիրները (Կետ 7): 2. Սահմանում է 2013-2015թթ. ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը, ակնկալվող արդյունքները, ֆինանսավորման աղբյուրները, կատարման ժամկետները, կատարողներին 3. **Նախադպրոցական** հաստատություններում նախատեսվում է տարիքային տարբեր խմբերի համար երգի, պարի, նկարչության ուսումնամեթոդական ժամանակակից ձեռնարկների մշակում և հրատարակում: (Կետ 9)	Մասնագիտական գեղարվեստական կրթական հաստատություններում, մասնավորապես, նախատեսվում է իրականացնել մշակույթի ոլորտին առնչվող մանկավարժական կադրերի մոնիտորինգ, ինչպես նաև կրթական հաստատությունների գործունեության ուսումնասիրում, մոնիթորինգ, հասարակության գեղարվեստական կրթության ու սոցիալ-մշակութային և սոցիոլոգիական հետազոտություններ:	• ՀՀ կրթության և գիտության նախարարություն • ՀՀ մշակույթի նախարարություն • ՀՀ տարածքային կառավարման նախարարություն • ՀՀ մարզպետարաններ • Մասնագիտական գեղարվեստական կրթական հաստատություններում, մասնավորապես, նախատեսվում է Մանուկների և պատանիների

	մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015թթ. ծրագրին և միջոցառումների ցանկին:	4. **Հանրակրթական** ուսումնական հաստատություններում նախատեսվում է. հանրակրթական դպրոցում՝ «Ազգային պարարվեստ», «Մշակույթի պատմություն», «Արվեստի պատմություն», «Բարոյագիտություն», «Բանահյուսություն», «Գեղագիտություն», «Հնագիտություն», «Ազգագրություն» առարկաների, ավագ դպրոցում՝ «Համաշխարհային մշակույթի պատմություն» առարկայի ներդնում, ինչպես նաև դպրոցական ծրագրում ընդգրկված հայ դասականների ստեղծագործությունների հրատարակում՝ «Դպրոցականի գրադարան» խորագրով: (Կետ 10) 5. Նախատեսում է միջոցառումներ **նախնական մասնագիտական (արհեստագործական)** (Կետ 12) և **միջին մասնագիտական** (Կետ 13) ուսումնական հաստատություններում: 6. **Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում** նախատեսվում է տարիքային տարբեր խմբերի համար երաժշտության, երգի, պարի, կերպարվեստի ժամանակակից ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում և մանկավարժների վերապատրաստման դասընթացների կազմակերպում, սովորողների համար պետական աջակցության տրամադրում փառատոների, ցուցահանդեսների, ստուգատեսների, մրցույթների կազմակերպման գործում: (Կետ 14) 7. **Երեխաների հանգստի, ժամանցի և մշակութային կյանքի** կազմակերպման նպատակով նախատեսում է մարզային մանկապատանեկան կենտրոնների հիմնում, մանկական թատրոնների ստեղծում, «Միջհամայնքային մշակութային մանկական ցուցահանդեսի (Արտ-Էքսպո) և մրցույթ-փառատոնի» իրականացում, ՀՀ մարզերում Դպրոցականի ֆիլհարմոնիայի գործունեության ընդլայնում և մասնաճյուղերի հիմնում, «Արտուտիկ» մանկապատանեկան ստեղծագործական ամառային ճամբարի կազմակերպման շարունակականության ապահովում, «ԿԻՆՈՄԱՆ» կրթամշակութային կենտրոնի և մանկապատանեկան կինոստուդիայի պիլոտային ծրագրի իրականացում, մանկապատանեկան թատրոն-ստուդիայի ստեղծում, ուսումնադաստիարակչական հեռուստառադիոծրագրերի մշակում և իրականացում, մանկապատանեկան կինոֆիլմերի և տեսաֆիլմերի ստեղծում, մանկական գիտաճանաչողական, ուսումնական, արվեստի և մշակույթի վերաբերյալ տեսալսողական արտադրանքի ստեղծում: (Կետ 15) 8. Շնորհալի երեխաների բացահայտման և հետագա ուսուցման գործընթացում աջակցության ցուցաբերման նպատակով նախատեսվում է ՀՀ և ԼՂՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկի համալրման շարունակականության, մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների, համերգների, «վարպետ-դասարանների» և այլ միջոցառումների կազմակերպման շարունակականության ապահովում: (Կետ 16) 9. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, առանց ծնողական խնամքի մնացած, սոցիալապես անապահով և իրավախախտում կատարած երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով նախատեսվում է հաշմանդամ երեխաների մշակութային կյանքին ինտեգրման ծրագրի մշակում, մանկատների ու գիշերօթիկ դպրոցների գեղարվեստական կրթություն և գեղագիտական դաստիարակություն իրականացնող խմբերում ներառված երեխաների համար մեթոդական և նյութատեխնիկական աջակցության ցուցաբերում, պետական աջակցություն՝ սոցիալապես անապահով երեխաներին մշակութային մասնագիտական ուսուցման և գեղագիտական դաստիարակության ասպարեզում, ինչպես նաև առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, մանկատների, գիշերօթիկ դպրոցների երեխաների հանգիստը և բազմաբովանդակ ժամանցը անցկացնելու նպատակով մշակութային միջոցառումների իրականացում, այդ թվում՝ գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում, երեխաների ընդգրկում մանկապատանեկան մշակութային հանրապետական համերգներում, ցուցահանդեսներում և այլ միջոցառումներում: (Կետ 17)	(Կետ 11)	գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների պետական ծրագրի» կառավարման նպատակով **միջգերատեսչական խորհրդի** ստեղծում: Նախատեսվում է ՀՀ մշակույթի նախարարությանը կից ստեղծել **մշակույթի ազգային ինստիտուտ**, որի հիմնական գործառույթներն են մշակույթի ոլորտում՝ մասնագետների վերապատրաստումը և վերարտակավորումը, մշակութաբանական, գիտահետազոտական աշխատանքների ու ուսումնասիրությունների իրականացումը, մանկավարժների որակավորման չափորոշիչների մշակումը, մանկավարժների ատեստացիայի իրականացումը, ուսուցման մեթոդիկաների մշակումը, համապատասխան գիտական և մեթոդական գրականության հրատարակումը, գիտահետազոտական աշխատանքների և ուսումնասիրությունների իրականացումը, համապատասխան գիտական և մեթոդական գրականության հրատարակումը մշակույթի ոլորտում ուսուցիչների որակավորման չափորոշիչների մշակումը, ինչպես նաև մշակութային կրթության ոլորտում աշխատող կադրերի որակավորման բարձրացումը և վերապատրաստումը, ատեստացիայի իրականացումը: ՀՀ մշակույթի նախարարությանը կից ստեղծվելու է «Երաժշտական գործիքների շրջանառու հիմնադրամ»: (Կետ 11)
128.	**«ՀՀ-ում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 952-Ն, ընդունված է՝ 26.07.2012, ուժի մեջ է՝ 25.08.2012* Հաստատում է ՀՀ-ում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագիրը՝ ՀՀ Արարատի մարզում, սահմանում է ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվող ինտեգրված	1. Սահմանում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի **խնդիրն է.** բացահայտել անձի (ընտանիքի) համար սոցիալական անբավարարվածություն (սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն) առաջացնող գործոններն ու դրանց փոխկապակցվածությունը, պատճառահետևանքային կապերը՝ գնահատելով անձի (ընտանիքի) կարիքները, համալիր միջոցներ ձեռնարկել այդ գործոնների բացասական ազդեցությունը չեզոքացնելու, կարիքները բավարարելու ուղղությամբ: (Կետ 19) 2. Սահմանում է սոցիալական ծառայությունները՝ սոցիալ-վարչարարական, ընդհանուր մասնագիտական և նեղ մասնագիտական (Կետ 20) 3. Ընդհանուր մասնագիտական ծառայությունների շրջանակներում որոշվում է կարիքը, իսկ նեղ մասնագիտական ծառայությունների շրջանակներում՝ բավարարվում է այդ կարիքը՝ հաճախորդի վրա անմիջական ներգործության արդյունքում: (Կետ 32)	**Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կառավարման խորհուրդն** իրականացնում է հետևյալ գործառույթները՝ ապահովում է սոցիալական պաշտպանության ոլորտում գործող հանրապետական գործադիր, պետական, տարածքային կառավարման մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների **համագործակցությունը**, **համակարգում և մոնիթորինգի** է ենթարկում սոցիալական պաշտպանության ոլորտում գործող հանրապետական (ազգային՝ հաշմանդամության հարցերով զբաղվող, երեխաների պաշտպանության, գենդերային բռնության դեմ պայքարի, կանանց հարցերով և այլն) հանձնաժողովների աշխատանքները՝ այդ հանձնաժողովների կատարած	• Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը չի հանդիսանում մեկ գերատեսչության առջև դրված խնդիր և չի կարող իրականացվել մեկ գերատեսչության ուժերով: (Կետ 14) Այն համապետական նշանակության խնդիր է, որը հնարավոր է լուծել պետական կառավարման, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոչ պետական կազմակերպությունների համակարգված գործողությունների արդյունքում, և ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման **աշխատանքները համակարգելու է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կառավարման խորհուրդը**:

	սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կառավարման խորհուրդը, հանձնարարականներ է տալիս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և ՀՀ Արարատի մարզպետին:		աշխատանքների մասին հաղորդումների քննարկումների ձևով, քննարկում և հավանության է արժանացնում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումն ապահովող իրավական ակտերի նախագծերը, ըստ անհրաժեշտության՝ քննարկում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կապակցությամբ առկա խնդիրները և առաջադրում է լուծումներ: (Կետ 16) Սոցիալական ծառայությունների ինտեգրման ձև է տեղեկատվական ինտեգրումը, երբ մեկ միասնական ենթակառուցվածքում ինտեգրվում են սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերը: (Կետ 45) Այն հնարավորություն է տալիս՝ ներդնել և կիրառել հաճախորդին տրամադրվող ծառայությունների արդյունավետության գնահատման գործուն համակարգ, համակողմանի վերլուծությունների արդյունքում բարելավել սոցիալական պաշտպանության ոլորտում ռազմավարական որոշումների ընդունման գործընթացի արդյունավետությունը, պարզեցնել ծառայությունների տրամադրման ընթացակարգերը, որոշումների ընդունման գործընթացն ավտոմատացնելու միջոցով էապես նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը: (Կետ 46) Տեղեկատվական ինտեգրումը կիրականացվի թե՛ տարածքային, թե՛ կենտրոնական մակարդակում: (Կետ 53) Միասնական կրիչի (սերվերի) վրա կտեղակայվեն սոցիալական պաշտպանության ոլորտի բոլոր տեղեկատվական համակարգերը (առկա և ստեղծվելիք), ինչը կկրճատի տեղեկատվական համակարգերի սպասարկման ծախսերը: (Կետ 54) Աստիճանաբար, սոցիալական պաշտպանության ոլորտում անցում կկատարվի դեպի կենտրոնացված սկզբունքով վարվող տեղեկատվական համակարգերի ներդրումը, որն էապես կբարելավի տեղեկատվական համակարգերում ներառվող տեղեկատվության հավաստիությունն ու համակարգին կապահովի հաճախորդի վերաբերյալ ակտուալ տեղեկատվությամբ՝ բացառելով տարածքներում և կենտրոնական շտեմարաններում առկա տեղեկատվության միջև անհամապատասխանությունը: (Կետ 55) Ի լրումն դիմումների հաշվառման	(Կետ 15) • Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի կարևորագույն բնութագրիչներից (պարտադիր պայմաններից) մեկը համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների առկայությունն է (**ՀՍԾՏԿ**): (Կետ 36) Նախատեսվում է ստեղծել 54-56 ՀՍԾՏԿ, որից՝ 42-44-ը մարզերում (նախկին վարչական շրջկենտրոններում), իսկ 10-12-ը՝ Երևան քաղաքում (վարչական շրջաններում): Հարկ է նկատի ունենալ, որ ՀՍԾՏԿ-ների թիվը կարող է փոփոխվել նորմացույցերի շրջանակներում: (Կետ 39) • Տարածքային մակարդակում կկիրառվի սոցիալական ծառայությունների տրամադրման «Մեկ պատուհան» սկզբունքը, որի շրջանակներում ՀՍԾՏԿ-ներում կտեղակայվեն ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժինները, ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության զբաղվածության մարզային, ինչպես նաև տարածքային կենտրոնները, ՀՀ մարզպետարանների սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունները, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի սոցիալական ծառայությունների տարածքային բաժինները: (Կետ 50) ՀՀ ԱՍՀՆ բժշկասոցիալական փորձաքննական գործակալության տարածքային մարմինների՝ ՀՍԾՏԿ-ներում տեղակայվելու խնդիրը կքննարկվի յուրաքանչյուր ՀՍԾՏԿ-ի համար առանձին՝ հաշվի առնելով շենքային պայմանները և հանձնաժողովի սպասարկման տարածքը: (Կետ 51)

			(հաճախորդների սպասարկման) տեղեկատվական համակարգի ներդրման, կմշակվի համապատասխան ծրագրային ապահովում, որի շրջանակներում՝ հաճախորդի նույնականացումը կիրականացվի բնակչության պետական ռեգիստրի համակարգի տվյալների հիման վրա, կիրականացվի տեղեկատվության ինքնաշխատ փոխանակություն տարբեր տեղեկատվական համակարգերի միջև՝ ապահովելով սոցիալական ծառայություններ տրամադրելու համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը ծառայություններ տրամադրողներին՝ իրենց իրավասությունների շրջանակներում, կապահովվի սոցիալական դեպքի վարումը: (Կետ 56) Տարածքային սոցիալական ծրագրերը պետք է ունենան չափելի մոնիթորինգային ցուցանիշներ: (Կետ 63) Առաջին փուլում (նախապատրաստական փուլ), մասնավորապես, կմշակվի սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության ինքնաշխատ փոխանակությունն ապահովող ծրագրային ապահովման տեխնիկական առաջադրանքը, այդ թվում՝ առաջարկություններ կներկայացվեն սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի կատարելագործման ուղղությամբ: (Կետ 73) Երկրորդ փուլում (իրականացման փուլ), մասնավորապես, կմշակվի, կփորձարկվի և կներդրվի սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության ինքնաշխատ փոխանակությունն ապահովող ծրագրային ապահովումը, ինչպես նաև սոցիալական դեպքի վարումն ապահովող ծրագրային գործիքը, դիմումների հաշվառման (հաճախորդների սպասարկման) տեղեկատվական համակարգը կինտեգրվի սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի հետ, մեկ տանիքի տակ կտեղակայվեն սոցիալական ծառայություններ տրամադրող պետական ու համայնքային կազմակերպություններն ու կգործարկվեն միասնական ընդունարանները, կմշակվեն ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումն ապահովող մեթոդական ձեռնարկներն	

			ու ուսուցողական նյութերը և այլն: (Կետ 74)	
129.	**«ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխան ՀՀ ազգային զեկույցների պատրաստման համար պատասխանատու պետական մարմինների և ներկայացնելու ժամկետների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1793-Ա, ընդունված է՝ 15.12.2011, ուժի մեջ է՝ 22.12.2011* Հաստատում է միջազգային պարտավորություններին համապատասխան ՀՀ ազգային զեկույցների պատրաստման համար պատասխանատու պետական մարմինների և ներկայացնելու ժամկետների ցանկը:	1. Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին՝ ազգային զեկույցը ներկայացվում է յուրաքանչյուր հինգ տարին մեկ, այնուհետև կոմիտեի կողմից սահմանված ժամկետների համաձայն, պատասխանատու մարմինը՝ ՀՀ ԱԳՆ: (Կետ 6, Կոնվենցիայի Հոդված 44) 2. Կամընտիր արձանագրություն «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային կից զինված հակամարտություններին երեխաների մասնակցության վերաբերյալ՝ ազգային զեկույցը ներկայացվում է արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո 2 տարվա ընթացքում, այնուհետ յուրաքանչյուր 5 տարին մեկ, պատասխանատու մարմինը՝ ՀՀ ԱԳՆ: (Կետ 8, արձանագրության Հոդված 8) 3. Կամընտիր արձանագրություն «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային կից մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին ՝ ազգային զեկույցը ներկայացվում է արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո 2 տարվա ընթացքում, այնուհետ յուրաքանչյուր 5 տարին մեկ, պատասխանատու մարմինը՝ ՀՀ ԱԳՆ: (Կետ 9, արձանագրության Հոդված 12) 4. Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին՝ ազգային զեկույցը ներկայացվում է յուրաքանչյուր չորս տարին մեկ, այնուհետև կոմիտեի կողմից սահմանված ժամկետների համաձայն, պատասխանատու մարմինը՝ ՀՀ ԱՍՀՆ: (Կետ 7, Կոնվենցիայի Հոդված 35) 5. Կոնվենցիա կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին՝ ազգային զեկույցը ներկայացվում է յուրաքանչյուր չորս տարին մեկ, այնուհետև կոմիտեի կողմից սահմանված ժամկետների համաձայն, պատասխանատու մարմինը՝ ՀՀ ԱԳՆ: (Կետ 4, Կոնվենցիայի Հոդված 18) 6. Միջազգային կոնվենցիա կրթության բնագավառում խտրականության դեմ՝ ազգային զեկույցը ներկայացվում է յուրաքանչյուր չորս տարին մեկ, պատասխանատու մարմինը՝ ՀՀ ԿԳՆ: (Կետ 4, Կոնվենցիայի Հոդված 7)		• ՀՀ ԱԳՆ • ՀՀ ԿԳՆ • ՀՀ ԱՍՀՆ
130.	**«Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 275-Ն, ընդունված է՝ 06.03.2014, ուժի մեջ է՝ 03.04.2014* *նաև՝* **«ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 761-Ն, ընդունված է՝ 08.07.2015, ուժի մեջ է՝ 30.07.2015* Սահմանում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի, միաժամանակ մեկից ավելի երեխա ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը յուրաքանչյուր երեխայի համար՝ նոր ծնված երեխաներից ամենաբարձր կարգաթիվ ունեցող երեխայի համար սահմանված չափով, երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի՝ պետական աջակցության հաշվին մուտքագրվող չափը, նպաստը նշանակող մարմինը, հաստատում է երեխայի	1. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվ սահմանվում է. 1-ին և 2-րդ երեխայի ծնվելու դեպքում՝ 50 հազար դրամ, 3-րդ և 4-րդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն դրամ, 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն 500 հազար դրամ: (Կետ 1) 2. Միաժամանակ մեկից ավելի երեխա ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանվում է յուրաքանչյուր երեխայի համար՝ նոր ծնված երեխաներից ամենաբարձր կարգաթիվ ունեցող երեխայի համար սահմանված չափով: (Կետ 1) 3. 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի՝ պետական աջակցության հաշվին մուտքագրվող չափը սահմանվում է. 3-րդ և 4-րդ երեխայի ծնվելու դեպքում՝ 500 հազար դրամ, 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն դրամ: (Կետ 1) 4. Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակելու և վճարելու կարգը սահմանում է նպաստը նշանակելու համար դիմողի կողմից անձամբ իր բնակության (հաշվառման) վայրի տարածքային բաժին ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, ինչպես նաև դրանց տրամադրման և ընդունման կարգերը: Սահմանում է նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու մեթոդներն ու ընթացակարգը, տարածքային բաժինների կողմից կայացվող որոշումներն ու դրանց հիմքերը, դիմողին դրա վերաբերյալ տեղեկացնելու, նպաստը նշանակելու և կանխիկ կամ անկանխիկ եղանակով կամ պետական աջակցության հաշվին մուտքագրման ենթակա գումարը վճարելու ընթացակարգերը: 5. Կարգավորում է ընտանեկան դրամագլուխը տնօրինելու կարգի հետ կապված հարաբերությունները 6. Պետական աջակցության հաշիվը բացվում է երեխայի (հաշվետիրոջ) օրինական ներկայացուցչի (ծնողի, խնամակալի, որդեգրողի) դիմումի հիման վրա: Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի տվյալները բանկին է տրամադրում լիազոր մարմինը: Ընտանեկան դրամագլուխը, մինչև հաշվետիրոջ 18 տարին լրանալը, անկանխիկ վճարումներ կատարելու միջոցով տնօրինվում է ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի կողմից՝ բացառապես՝ ՀՀ-ում բնակարանի, բնակելի տան գնման, կառուցման համար տրամադրված և հիփոթեքով ապահովված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, եթե վարկառուն հաշվետիրոջ ծնողն է կամ որդեգրողը, հաշվետիրոջ կամ հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամի, հաշվետիրոջ օրինական ներկայացուցչի՝ ուսումնական հաստատությունում ուսումնառելու ընթացքում ուսման վարձը (նախադպրոցական ուսումնական հաստատության վարձավճարը) վճարելու համար, հաշվետիրոջ, հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամի, հաշվետիրոջ օրինական ներկայացուցչի համար ՀՀ-ում բժշկական ապահովագրություն ձեռք բերելու համար, սահմանված դեպքերում հաշվետիրոջ ծնողին կամ որդեգրողին տրամադրված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու կամ բնակարանի կամ բնակելի տան կամ այլ անշարժ գույքի գնման համար: 7. Ընտանեկան դրամագլուխը տնօրինվում է նաև հաշվետիրոջ հետ ՀՀ-ում նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) նրա այլ օրինական ներկայացուցչի (ծնողի, խնամակալի, որդեգրողի) կողմից՝ սահմանված դեպքերում: 8. Սահմանում է ընտանեկան դրամագլուխը հաշվետիրոջը, հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամին, հաշվետիրոջ օրինական ներկայացուցչին սահմանված դեպքերում բժշկական օգնության համավճարը վճարելու համար ծախսելու դեպքերը: 9. Հաշվետերն իրավունք ունի առանց սահմանափակումների տնօրինելու ընտանեկան դրամագլուխը՝ 18 տարին լրանալուց հետո: 10. Հաշվետիրոջ՝ մինչև 18 տարին լրանալը մահանալու (դատական կարգով մահացած ճանաչվելու) դեպքում ընտանեկան դրամագլուխը, ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցողի դիմումի հիման վրա, փոխանցվում է հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված՝ հաշվետիրոջից հետո հերթական կրտսեր՝ դիմելու օրվա դրությամբ 18 տարին չլրացած երեխայի (նույն օրը ծնված երեխաներից մեկի) անվամբ բացված պետական աջակցության հաշվին: Հաշվետիրոջ՝ մինչև 18		• 2014 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակում և վճարում է ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը՝ իր տարածքային բաժինների միջոցով, իսկ մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակում և վճարում է սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինը • ՀՀ գանձապետարան • Առևտրային բանկեր

	ծննդյան միանվագ նպաստը նշանակելու և վճարելու կարգը, ընտանեկան դրամագլուխը տնօրինելու կարգը, երեխայի ծննդյան միանվագ նպաստի անկանխիկ վճարման, պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման (ընտանեկան դրամագլխի սպասարկման) և երեխայի ծննդյան միանվագ նպաստի՝ կանխիկ եղանակով վճարման ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևերը:	տարին լրանալը մահանալու դեպքում, եթե հաշվետերը մահվան օրվա դրությամբ գտնվել է բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատուն) կամ ունեցել է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ, ընտանեկան դրամագլուխը փոխանցվում է ՀՀ պետական բյուջե:		
131.	**«Մանուկներին և վաղ տարիքի երեխաներին անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու նպատակով կրծքով կերակրման խրախուսման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման 2016-2020 թվականների գործողությունների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1353-Ն, ընդունված է՝ 19.11.2015, ուժի մեջ է՝ 03.12.2015* Հաստատում է մանուկներին և վաղ տարիքի երեխաներին անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու նպատակով կրծքով կերակրման խրախուսման ազգային ծրագիրը, ծրագրի իրականացման 2016-2020թթ. գործողությունների ժամանակացույցը և հանձնարարում է ՀՀ առողջապահության նախարարին ազգային ծրագրի 2017-2020 թվականների գործողություններն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցները ՀՀ պետական բյուջեում նախատեսելու հնարավորության հարցը քննարկել տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի կազմավորման գործընթացով նախատեսված ժամկետներում՝ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված բյուջետային հայտի առկայության պայմաններում:	1. Ծրագրի **նպատակը** երեխաներին կրծքով սնուցման կազմակերպման պատշաճ գործելակերպի ներդրման, կրծքով կերակրման աջակցության և խրախուսման ճանապարհով երեխաների կրծքով կերակրման իրավիճակի բարելավումն է՝ ուղղված նրանց առողջ աճի և զարգացման ապահովմանը, հիվանդացության և մահացության կրճատմանը: (Կետ 5) 2. 2020թ. ծրագրի **ենթանպատակներն** են. մինչև 6 ամսական երեխաների շրջանում բացառապես կրծքով սնուցման ցուցանիշի աճ 1/4-ով: 2020 թվականին կապահովվի ցուցանիշի 45% և ավելի մակարդակ՝ 2010 թվականի 35%-ի փոխարեն, բացառապես կրծքով կերակրման «մեդիան» ցուցանիշի բարելավում 1/2-ով: 2020 թվականին այն կկազմի նվազագույնը 3 ամիս՝ 2010 թվականի 1.8 ամսվա փոխարեն, «Մանկանը բարեկամ» նախաձեռնության ծավալների և այդ կոչումն ունեցող բուժհաստատությունների թվի ավելացում 25%-ով: (Կետ 5) 3. Ծրագրի **խնդիրներն** են. խթանել կրծքով կերակրման քարոզչությանն ուղղված միջոցառումները, բարելավել կրծքով կերակրման և օրենքի դրույթների կատարման վերաբերյալ տեղեկատվության հավաքումը և վերլուծությունը, ապահովել կրծքով կերակրման խրախուսման վերաբերյալ բուժաշխատողների կրթելուն ուղղված միջոցառումները, ընդլայնել առողջապահական կազմակերպություններում նորածիններին բարյացակամ ծառայությունների տրամադրումը, նպաստել կերակրող մայրերի և նրանց երեխաների համար նախատեսված նպաստավոր պայմանների ստեղծմանը, բարձրացնել հանրային իրազեկվածությունը, ապահովել միջգերատեսչական համագործակցությունը: (Կետ 6) 4. Սահմանում է ազգային ծրագրի իրականացման 2016-2020թթ. գործողությունների միջոցառումները, ակնկալվող արդյունքները, միջոցառման կատարման չափանիշները, ժամկետները, պատասխանատու կատարողին և համակատարողներին և ֆինանսավորման աղբյուրները:	Նախատեսում է կրծքով կերակրման խրախուսման հարցերի համակարգող մարմնի կողմից կրծքով կերակրման իրավիճակի պարբերաբար ուսումնասիրություն, տեղեկատվության վերլուծություն և համապատասխան առաջարկները ներկայացում, իրավիճակի, ծրագրի շրջանակներում իրականացված գործողությունների արդյունավետության ընթացիկ գնահատում, խնդիրների վերհանում և լուծումների առաջարկում՝ տարեկան առնվազն 1 անգամ: Նախատեսում է «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի շրջանակներում մանկան սնուցման վերաբերյալ տպագրվող գրականության և մանկան սնուցմանն անդրադարձող կայքերի բովանդակության դիտարկում, իրավական ակտերի պահանջներին ոչ համապատասխան տեղեկատվության հայտնաբերում և դրա վերաբերյալ հաշվետվության ներկայացում՝ ամփոփ զեկուցագրի ձևաչափով: Նախատեսում է իրազեկման միջոցառումներ՝ ուղղված բուժաշխատողներին, համայնքին, ընտանիքին, ծնողներին, մայրերին/խնամողներին, այդ թվում՝ ՁԼՄ-ների միջոցով, ընդ որում սահմանում է, որ յուրաքանչյուր տարի նորածինների մայրերի առնվազն 50%-ը կապահովվեն երեխայի սնուցման և խնամքի հարցերին նվիրված տեղեկատվական նյութերով: Նախատեսում է Հայաստանի ժողովրդագրական և առողջական հարցերի հետազոտության շրջանակներում երեխաների սնուցման կարգավիճակի գնահատում՝ երեխաների կրծքով սնուցման կարգավիճակի վերաբերյալ այլընտրանքային տվյալների հավաքագրում: Նախատեսում է նաև օրենքի դրույթների կատարման իրավիճակի	• ՀՀ առողջապահության նախարարություն • ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ • Երևանի քաղաքապետարան, ՀՀ մարզպետարաններ

			ուսումնասիրություն և գնահատում՝ հասարակական սեկտորի ներգրավմամբ, ինչի արդյունքում կվերհանվեն օրենքի խախտման առանձին դեպքեր:	
132.	**«Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1112-Ն, ընդունված է՝ 25.09.2015, ուժի մեջ է՝ 17.10.2015* Սահմանում է երեխաների խնամքի տրամադրման կարգն ու պայմանները, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները, հաստատում է տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության մի շարք որոշումներ, կարգավորում է խնամք տրամադրող՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունների ընդգրկումը և (կամ) սոցիալական ոլորտում իրականացվող ծրագրերին մասնակցությունը պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերում՝ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը համապատասխան կարգով հավաստագրելու դեպքում:	1. Սահմանում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնները և դրանց ներկայացվող ընդհանուր պահանջները, կարգավորում է բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններ երեխաների ուղեգրումը, այդ հաստատություններում խնամքի տրամադրումը: 2. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները կազմակերպում են այնտեղ բնակվող (խնամվող) երեխաների. առաջնային բժշկական օգնության և սպասարկման, սոցիալ-հոգեբանական օգնության, իրավական խորհրդատվության տրամադրումը. պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովումը. բժշկասոցիալական փորձաքննությունը, հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրումը, ազատ ժամանցը, ուսումնադաստիարակչական ծառայությունների մատուցումը, աշխատանքային թերապիան՝ 16 տարեկանից բարձր երեխաների համար: (Կետ 24) 3. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններն այնտեղ բնակվող (խնամվող) երեխաներին տրամադրում են. առողջ, անհրաժեշտ քանակի և տարիքին համապատասխանող սնունդ, մահճակալ և այլ անհրաժեշտ կահույք, հագուստ, սպիտակեղեն, կոշկեղեն՝ տարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան, անկողնային պարագաներ, խաղալիքներ, անձնական հիգիենայի պարագաներ: (Կետ 25) 4. Սահմանում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների՝ երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ու խնամքի տրամադրմանն ուղղված այլ գործառույթներ: 5. Հաստատությունն այնտեղ բնակվող (խնամվող) և դպրոցում սովորող երեխային ապահովում է անձնական մանր ծախսեր կատարելու համար անհրաժեշտ գումարով, սովորեցնում է խելամիտ և արդյունավետ օգտագործել ունեցած գումարը (Կետ 53), ապահովում է երեխայի առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ պայմաններ, կազմակերպում է երեխաների մասնակցությունը մարզական, մշակութային միջոցառումներին, մրցույթներին, երգի, պարի, նկարչության, կարուձևի, մարզական և այլ խմբակների պարապմունքներին՝ ըստ նրանց հակումների և հետաքրքրությունների (Կետ 54), աջակցում է կենսաբանական ընտանիքի հետ սոցիալական կապերը վերականգնելու և (կամ) ամրապնդելու և նրան ընտանիք վերադարձնելու հարցում, եթե դա բխում է երեխայի շահերից: (Կետ 55) 6. Հաստատությունում բնակվող (խնամվող) երեխաներին կարող են այցելել նրանց ծնողները (ծնողը)՝ ծնողական իրավունքից զրկված չլինելու դեպքում, ընտանիքի այլ անդամներ, ազգականները, ծանոթները և ընկերները, աջակցող ցանցի անդամները (նրանց ներկայացուցիչները), պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ և անձինք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք գտնվում են ոչ սթափ կամ հակահիգիենիկ վիճակում, կամ, եթե դա բացասաբար չի ազդի երեխայի առողջության, դաստիարակման, սոցիալ-հոգեբանական վերականգնման գործընթացի վրա կամ չի խոչընդոտի դրա արդյունավետ իրականացմանը: (Կետ 55) 7. Կարգավորում է հաստատություններից երեխայի դուրսգրումը: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունից երեխան՝ մինչև 18 տարին լրանալը, կարող է դուրս գրվել. նրան կենսաբանական ընտանիք վերադարձնելու, որդեգրման հանձնելու, բնակչության սոցիալական պաշտպանության մեկ այլ հաստատություն կամ շուրջօրյա խնամք տրամադրող այլ կազմակերպություն տեղափոխվելու, խնամատար ընտանիք՝ դաստիարակության հանձնելու, այլ անձի՝ երեխայի խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելու և նրա ընտանիքում տեղավորվելու դեպքում: (Կետ 62) 8. Սահմանում է բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն երեխաների ընդունելության և այնտեղ խնամքի տրամադրման կարգը: 9. Կարգավորում է պետական կամ ՏԻՄ ենթակայության ներքո գտնվող բնակչության գիշերօթիկ հաստատությունից երեխայի մինչև 18 տարին լրանալը դուրս գրումը (Կետ 81) 10. Կարգավորում է սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն երեխաների ընդունելությունը և այնտեղ խնամքի տրամադրումը: 11. Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում խնամքը տրամադրվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ հաշմանդամություն ունեցող երեխաներին: (Կետ 82) 12. Կենտրոնում խնամքը տրամադրվում է հիմնականում հետևյալ սոցիալական ծառայությունների մատուցման միջոցով՝ սնունդ՝ օրական մեկ անգամ, սոցիալ-հոգեբանական օգնություն, այդ թվում՝ երեխայի ընտանիքի անդամներին, իրավական խորհրդատվություն, ուսումնադաստիարակչական ծառայություններ, մասնագիտական կողմնորոշում, արվեստի միջոցով թերապիա, օկուպացիոն թերապիա (շտկիչ վարժանքներով թերապիա): (Կետ 95) Կենտրոնը կազմակերպում է խնամք ստացող երեխաների՝ 16 տարեկանից բարձր երեխաների աշխատանքային թերապիան, առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը, ժամանցը, ինչպես նաև իրականացնում է մշակութային միջոցառումներ, սոցիալական ներառման այլ միջոցառումներ: (Կետ 96) 13. Կենտրոնը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ ուսումնական հաստատություններից դուրս մնացած երեխաներին կրթական հաստատություններում տեղավորելու համար, կազմակերպում է դպրոցահասակ երեխայի դասապատրաստումը դպրոցական ժամերից հետո, աջակցում երեխաների աշխատանքային հմտությունների ձևավորմանը, կազմակերպում երեխայի ազատ ժամանցը՝ մարզական և մշակութային միջոցառումներին մասնակցելու միջոցով, ինչպես նաև աջակցում է նրանց իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքներին: (Կետ 100) 14. Կարգավորում է կենտրոնում խնամքի տրամադրման դադարեցումը: 15. Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդություններն են.	Խնամակալության և հոգաբարձության մարմիններն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին տեղեկություններ կարող են ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, նախադպրոցական կրթական, հանրակրթական, բժշկական կազմակերպություններից, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններից, այլ իրավաբանական ու ֆիզիկական անձանցից, զանգվածային լրատվության միջոցներից և այլ աղբյուրներից: (Կետ 13) Խնամակալության և հոգաբարձության մարմինը (իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետի անունից խնամակալության և հոգաբարձության մարմիններին վերապահված լիազորություններն իրականացնող՝ Երևանի վարչական շրջանների ղեկավարները) տեղեկատվությունն ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում իրականացնում է իրավիճակի ուսումնասիրություն՝ տեղեկատվությամբ հայտնի դարձած վայրում երեխայի հայտնաբերման կամ երեխային տեսակցելու նպատակով: Ստացած տեղեկատվության հավաստիության դեպքում, մասնավորապես, 3 օրվա ընթացքում տեղեկացնում է ՀՀ մարզպետարանին (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանին), երեխայի գտնվելու վայրի տարածքն սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը կամ բաժնին, ՀՀ ոստիկանությանը, եթե անհայտ է երեխայի ծնողների կամ նրանցից որևէ մեկի կամ միակ ծնողի գտնվելու վայրը կամ անհայտ են երեխայի ծնողները՝ բացառությամբ այն դեպքի, երբ այդ երեխայի մասին տեղեկատվությունն ստացվել է այս մարմիններից: Այնուհետև, հետազոտում է երեխայի կյանքի պայմանները, իրականացնում երեխայի սկզբնական հաշվառումը՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա, կազմակերպում է համապատասխան բժշկական հաստատության կողմից երեխայի բժշկական զննությունը, ապահովում երեխայի ժամանակավոր տեղավորումը, ընդ որում, երեխային հիվանդանոցային բժշկական	• ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն • ՀՀ առողջապահության նախարարություն • Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված), խնամքի գիշերօթիկ հաստատություններում և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում խնամքը կարող է տրամադրվել ինչպես պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող կազմակերպության կողմից, այնպես էլ՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպության կողմից: (Կետ 5) • Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններն ապահովում են երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարան, շուրջօրյա լրիվ խնամք առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար: (Կետ 6) • Բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններն ապահովում են երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարան, շուրջօրյա լրիվ խնամք առանց ծնողական խնամքի մնացած այն երեխաների համար, ովքեր ունեն ծանր սահմանափակ կարողություններ՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ու ֆունկցիոնալ ախտահարումներ, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական ու մտավոր արատներ: (Կետ 7) • Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություններն ապահովում են երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարան, շուրջօրյա լրիվ խնամք ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար: (Կետ 8) • Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները և սոցիալական

		հոգեկան խանգարումներ՝ բացառությամբ բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն ընդունվելու դեպքերի, քրոնիկ ալկոհոլամոլություն կամ թմրամոլություն, մաշկային վարակիչ հիվանդություն, սեռավարակներ, օնկոլոգիական հիվանդություններ՝ դեկոմպենսացիայի շրջանում՝ բացառությամբ հոսպիսային օգնության տրամադրման դեպքերի, շրջապատի համար վտանգ ներկայացնող վարակիչ հիվանդություններ, մանրէազատ տուբերկուլյոզ:	հաստատություն տեղափոխելիս, երեխայի ժամանակավոր տեղավորումն իրականացնում է հիվանդանոցային բժշկական հաստատությունից երեխայի դուրսգրումից անմիջապես հետո, եթե մինչ այդ չի ապահովվել երեխայի տեղավորման հարցի վերջնական լուծումը: (Կետ 14) Երեխայի կյանքի պայմանների հետազոտությունից հետո, բայց ոչ ուշ, քան տեղեկատվությունն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում խնամակալության և հոգաբարձության մարմինը ՀՀ մարզպետարան (իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարան) է ներկայացնում մի շարք փաստաթղթեր և տեղեկություններ: (Կետ 16) Կարգավորում է ՀՀ մարզպետարաններում (Երևանի քաղաքապետարանում), գործակալությունում, ՀՀ ԱՍՀՆ-ում համապատասխան փաստաթղթերն ստանալուց հետո փաստաթղթերի և տեղեկությունների շրջանառության և ուղղորդման գործընթացը և հետագա գործառույթները: Կարգավորում է զննման արդյունքում կամ համապատասխան բժշկական հաստատության կողմից տրամադրված եզրակացության համաձայն երեխայի օրգանիզմում վարակիչ հիվանդություն կամ շրջապատի համար վտանգ ներկայացնող այլ հիվանդություն հայտնաբերելու կամ դրանց առկայության վերաբերյալ կասկածի դեպքում դրա մասին ՀՀ առողջապահության նախարարությանը հաղորդելու, իսկ հոսպիտալացման դեպքում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնին, մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին, գործակալությանը և երեխայի օրինական ներկայացուցչին (առկայության դեպքում) տեղեկացնելու կարգը: (Հոդված 31) Սահմանում է հաստատություն ընդունված երեխայի մասին տվյալները բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության հաշվառման մատյանում (կարող է վարվել թղթային կամ էլեկտրոնային եղանակով) գրանցելու կարգը: (Կետ 35) Սահմանում է հաստատությունում բնակվող (խնամվող) յուրաքանչյուր երեխայի հաշվառման քարտի և բժշկական քարտի լրացման, ինչպես նաև անձնական գործի վարման կարգը (Կետ 42) Երեխային խնամք տրամադրելու	հոգածության ցերեկային կենտրոնները պետք է ապահովված լինեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմաններով, ունենան դասապատրաստման ու խմբային աշխատանքների համար նախատեսված սենյակներ, երեխաների տարիքային խմբերի առանձնահատկություններին համապատասխանող անվտանգ և բարեկարգ խաղահրապարակներ ու խաղասենյակներ: (Կետ 11) • Խնամակալության և հոգաբարձության մարմինն ապահովում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ մինչև նրա տեղավորման հարցի վերջնական լուծումը (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելը կամ խնամատար ընտանիքում տեղավորելը, կամ կենսաբանական ընտանիք վերադառնալը, կամ որդեգրումը, կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը): (Կետ 15) • Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունն ապահովում է այնտեղ բնակվող (խնամվող) երեխաների կրթությունն ու դաստիարակումը, այդ թվում՝ կազմակերպում է երեխաներին հիմնական կրթություն մատուցելը, որն իրականացվում է հանրակրթական դպրոցներում կամ հատուկ դպրոցներում աշակերտելու միջոցով: (Կետ 52) • Բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունն այնտեղ բնակվող (խնամվող) երեխաների հիմնական կրթությունն ապահովում է տվյալ հաստատության տեղակայման վայրին մոտ գտնվող հանրակրթական դպրոցներից որևէ մեկում: (Կետ 79) • Ցերեկային խնամքի կենտրոնը երեխայի առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը կազմակերպում է կենտրոնի գտնվելու վայրի համապատասխան ամբուլատոր բժշկական հաստատությունում: (Կետ 99)

			ամբողջ ժամանակահատվածում տվյալ հաստատության պաշտոնատար անձինք, գործակալությունը, ՀՀ մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը երեխային ընտանիքում տեղավորելու հնարավորության մասին համապատասխան տեղեկատվություն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում դրա մասին տեղեկացնում են բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին: (Կետ 58) Բացառությամբ սահմանված դեպքերի՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունը, նրա պաշտոնատար անձինք ու աշխատողները պարտավոր են որևէ կերպ չհրապարակել, չտարածել խնամքի տրամադրման ընթացքում երեխաների և նրանց օրինական ներկայացուցիչների վերաբերյալ իրենց հայտնի դարձած անհատական տվյալները, այդ երեխաների և նրանց ընտանիքների վերաբերյալ այնպիսի տեղեկություններ ու տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն նույնականացնելու այդ երեխաներին, ինչպես նաև երրորդ անձանց չընձեռել այդ տվյալները ու տեղեկությունները հայթայթելու այնպիսի հնարավորություն, որ կարող է առաջանալ թույլատրելու, չխոչընդոտելու կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետևանքով: (Կետ 61) Գիշերօթիկ հաստատությունը վարում է այնտեղ բնակվող (խնամվող) երեխաների հաշվառման մատյան՝ ինչպես թղթային, այնպես էլ՝ էլեկտրոնային եղանակով: (Կետ 77) Կենտրոնում երեխայի խնամքը տրամադրվում է նրա՝ գնահատված սոցիալական կարիքներին համապատասխան: (Կետ 97) Կենտրոնը այնտեղ խնամվող յուրաքանչյուր երեխայի համար լրացնում է հաշվառման քարտ (Կետ 101), կազմում է անձնական գործ (Կետ 104) և վարում խնամվող երեխաների հաշվառման մատյան (Կետ 103): Կարգավորում է համագործակցությունը և լիազորած պետական մարմնին տեղեկատվություն տրամադրելը: Բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի, հատուկ (մասնագիտացված), խնամքի գիշերօթիկ հաստատությունները և սոցիալական հոգածության ցերեկային	

			կենտրոններն իրենց գործառույթների իրականացման շրջանակներում համագործակցում են լիազորած պետական մարմնի, ոստիկանության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման այլ մարմինների, նախադպրոցական կրթական, հանրակրթական, բժշկական կազմակերպությունների, տարածքային մակարդակում գործող աջակցող ցանցի անդամների, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ: (Կետ 108) Հատատությունները «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում և կարգով՝ լիազորած պետական մարմին են ներկայացնում խնամքի տրամադրման մասին տեղեկատվություն: (Կետ 109) Գործակալության և լիազորած պետական մարմնի միջև տեղեկատվությունը փոխանակվում և փաստաթղթերն առաքվում են թղթային եղանակով՝ փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ էլեկտրոնային փոստի միջոցով կամ առցանց եղանակով՝ սոցիալական աջակցության բնագավառի տեղեկատվական շտեմարանների միջոցով: (Կետ 110)	
133.	**«ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու և ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 381-Ն, ընդունված է՝ 24.03.2005, ուժի մեջ է՝ 21.04.2005* Հաստատում է ՀՀ-ում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափանիշները, փոփոխություններ է կատարում ՀՀ կառավարության N 2179-Ն որոշման մեջ, սահմանում է ՀՀ-ում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկի և դրանցում երեխաների տեղավորման չափանիշների	1. **Մանկատները**՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ են, որոնք իրականացնում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը և դաստիարակությունը՝ մինչև նրանց 18 տարին լրանալը կամ մինչև կենսաբանական ընտանիք վերադարձնելը, կամ որդեգրման հանձնելը, կամ խնամակալություն, կամ հոգաբարձություն սահմանելը, կամ խնամատար ընտանիքում տեղավորելը: Մանկատները լինում են ընդհանուր, մասնագիտացված և ընտանեկան տիպերի: (Հավելված 1) 2. **Ընդհանուր տիպի** մանկատները դասակարգվում են ըստ հետևյալ տարիքային խմբերի՝ մինչև 6 տարեկան երեխաների ընդհանուր տիպի մանկատուն, 6-18 տարեկան երեխաների ընդհանուր տիպի մանկատուն, մինչև 18 տարեկան երեխաների ընդհանուր տիպի մանկատուն: (Հավելված 1) 3. **Ընտանեկան տիպի մանկատներն** իրականացնում են 3-23 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած և նրանց թվին պատկանող երեխաների խնամքը՝ ըստ հետևյալ տարիքային խմբերի՝ մանկական տան փուլ՝ իրականացնում է 3-13 տարեկանների խնամքը՝ 8 երեխայից ոչ ավելի խմբերով, ընտանիքների միջոցով (փոխարինող ընտանիքներ), ղեկավարվում են ոչ կենսաբանական մոր/ծնողների կողմից, երիտասարդական տան փուլ՝ իրականացնում է 13-18 տարեկանների խնամք՝ 8 երեխայից ոչ ավելի խմբերով, կիսաանկախ բնակության փուլ, որը կազմակերպում է 18-23 տարեկանների խնամքը՝ բնակարաններ վարձակալելու, համապատասխան մասնագետների հսկողությամբ նրանց խնամքն ու դաստիարակությունը կազմակերպելու, ինչպես նաև ուսման և աշխատանքի հարցերում աջակցելու: (Հավելված 1) 4. **Ընդհանուր տիպի մանկատուն և ընտանեկան տիպի մանկատուն** կարող են ըստ տարիքային խմբերի **տեղավորվել** հետևյալ չափանիշներով մինչև 18 տարեկան այն երեխաները, որոնց ծնողները կամ միակ ծնողը՝ մահացել են, զրկված են ծնողական իրավունքից, ինքնակամ հրաժարվել են ծնողական պարտականությունների կատարումից և տվել են որդեգրման մասին գրավոր համաձայնություն, անհայտ են (ընկեցիկ երեխաներ), դատարանի կողմից ճանաչված են անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած, չունեն երեխային խնամելու և դաստիարակելու հնարավորություն՝ ազատազրկման ձևով պատիժը կրելու կամ նախնական քննության ընթացքում կալանքի տակ գտնվելու պատճառով, խուսափում են երեխայի դաստիարակությունից կամ նրա իրավունքների և շահերի պաշտպանությունից: (Հավելված 1) 5. **Մասնագիտացված մանկատներ**ն իրականացնում են հատուկ կարիքավոր երեխաների խնամքն ու դաստիարակությունը և դասակարգվում են ըստ հետևյալ տարիքային խմբերի՝ մինչև 6 տարեկան երեխաների մասնագիտացված մանկատուն, 6-18 տարեկան երեխաների մասնագիտացված մանկատուն: Մասնագիտացված մանկատուն կարող են ըստ տարիքային խմբերի տեղավորվել նաև երեխաների խնամքից խուսափող ծնողներ ունեցող՝ մինչև 18 տարեկան հատուկ կարիքավոր այն երեխաները, ովքեր ունեն՝ բնածին կամ ձեռքբերովի արատներ, մտավոր թերզարգացածություն, ինչպես նաև զուգակցված տարբեր ֆիզիկական արատներ: (Հավելված 1) 6. **Երեխաների բժշկասոցիալական վերականգնողական հաստատությունը** բուժական հաստատություն է, որն իրականացնում է հատուկ կարիքավոր երեխաների բուժումը, խոսքի խանգարումների շտկումը, այլ համալիր վերականգնողական միջոցառումներ, տրամադրում է հոգեբանական աջակցություն, ինչպես նաև բուժման ընթացքում կազմակերպում երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքները: Երեխաների բժշկասոցիալական վերականգնողական կենտրոնում կարող են		• ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ առողջապահության նախարարություն

	կետերով սահմանված յուրաքանչյուր հաստատության տիպի համար բժշկական հակացուցումների ցանկը համատեղ հաստատում են ՀՀ առողջապահության նախարարն ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, հանձնարարականներ է տալիս վերը նշված նախարարներին:	տեղավորվել նյարդաբանական և հոգեկան քրոնիկ խանգարումներ, զարգացման հապաղումներ, հոգեբանական խնդիրներ, բռնության ենթարկված, բժշկասոցիալական վերականգնման, խնամքի, դաստիարակության և ուսուցման հատուկ կարիք ունեցող մինչև 18 տարեկան երեխաները: (Հավելված 1) 7. **Երեխաների աջակցության կենտրոնը** բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն է, որն իրականացնում է՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ժամանակավոր խնամքը, այդ երեխաների և նրանց ընտանիքների անդամների սոցիալ-հոգեբանական վերականգնողական աշխատանքները մինչև երեխային ծնողին վերադարձնելը կամ երեխայի նկատմամբ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մանկատանը տեղավորելը: Երեխաների աջակցության կենտրոնում կարող են տեղավորվել ընտանիքում կոնֆլիկտներ ունեցող, դաժան վերաբերմունքի ենթարկված, բռնության ենթարկված, հաշմանդամ, հակասոցիալական վարք դրսևորած, այդ թվում՝ մուրացիկ, թափառաշրջիկ, սոցիալապես անապահով՝ անօթևան ընտանիքների, առանց ծնողական խնամքի մնացած, դժբախտ պատահարի ենթարկված կամ արտակարգ իրավիճակում հայտնված, սոցիալապես մեկուսացված երեխաները: (Հավելված 1) 8. **Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունը** բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն, որն իրականացնում է ընտանիքների անապահովության համակարգում հաշվառված, սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ ներկայացված սոցիալապես անապահով ընտանիքի երեխաների խնամքը և դաստիարակությունը: Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում կարող են տեղավորվել սոցիալապես անապահով ընտանիքների 6-18 տարեկան երեխաները: (Հավելված 1) 9. **Երեխաների խնամքի ցերեկային հաստատություն**, որն իրականացնում է երեխաների խնամքի, սոցիալ-հոգեբանական, կրթական և դաստիարակչական աշխատանքները: Երեխաների խնամքի ցերեկային կենտրոն կարող են հաճախել հաշմանդամ, դաստիարակության դժվարություններ ունեցող, ծնողական խնամքից զրկված 6-18 տարեկան երեխաները: (Հավելված 1) 10. **Երեխաների նախադպրոցական հաստատություն**՝ ուսումնական հաստատություն, որն իրականացնում է մինչև 6 տարեկան երեխաների խնամքը, ինչպես նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված գործառույթները: Երեխաների նախադպրոցական հաստատությունները դասակարգվում են ըստ հետևյալ տիպերի՝ մսուր-մանկապարտեզներ, մանկապարտեզներ: Երեխաների նախադպրոցական ուսումնական հաստատություններ կարող են հաճախել մինչև 6 տարեկան երեխաները: (Հավելված 1) 11. **Պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ**, որոնք ապահովում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը և խնամքը: Ելնելով երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման առանձնահատկություններից՝ սահմանվել են պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների հետևյալ տիպերը՝ լսողության, տեսողության, խոսքի ծանր խանգարումներ, հենաշարժական համակարգի խախտումներ, մտավոր թերզարգացում, հակասոցիալական վարք ունեցող, արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ: Պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ կարող են հաճախել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները: (Հավելված 1) 12. Առանձին հաստատություններում չեն կարող տեղավորվել **բժշկական հակացուցումներ** ունեցող երեխաները:		
134.	**«Բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց ցանկը, կացարանով ապահովելու կարգը և պայմանները սահմանելու, ՀՀ կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի N 614-Ն ու 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման մեջ լրացում ու փոփոխություն և 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1516-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1069-Ն, ընդունված է՝ 10.09.2015, ուժի մեջ է՝ 17.10.2015* Սահմանում է բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց ցանկը, նրանց հաշվառելու և կացարան	1. Սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն չունեցող ինքնասպասարկման ապահովման ունակություն ունեցող, ժամանակավոր կացարանում կամ հասարակական նշանակության այլ օբյեկտներում բնակվող հետևյալ անձինք (խմբերը) **դասվում են բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին՝** «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասվող անձինք, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ ունեցող ընտանիքները, որոնց անապահովության միավորը բարձր է 0-ից՝ որպես սատարող ընտանիք, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, անապահովության 0-ից բարձր միավոր ունեցող միածնող ընտանիքները, եթե ամուսիններից մեկը մահացել է, կամ միայնակ անձի կողմից որդեգրվել է երեխա: (Հավելված 1) 2. Սոցիալապես անապահով և հատուկ խմբերի միջև կացարանների բաշխման ժամանակ առավել մեծ թվաքանակների սահմանման **առաջնահերթությունը** տրվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասվող անձանց, ապա միածնող ընտանիքներին, եթե ամուսիններից մեկը մահացել է, կամ միայնակ անձի կողմից որդեգրվել է երեխա: (Հավելված 2) 3. Սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառման **ընթացակարգը**: (Հավելված 2) 4. **Սատարող ընտանիքի ընտրությունը** կատարվում է խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկության հիման վրա՝ ընտանիքների հետ անցկացված հարցազրույցի, սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական վիճակի ուսումնասիրությունների արդյունքում՝ մասնավորապես հաշվի առնելով, որ ընտանիքը բաղկացած է առնվազն ծնողներից և երեխաներից: Կենտրոնը խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառված անձին **հաշվառում է** նրա օրինական ներկայացուցչի տվյալներով՝ նշելով, որ բնակելի տարածություն ստանալու իրավունքը ծագում է այդ երեխայի համար՝ նրա 18 տարին լրանալու կամ անչափահասի՝ օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ ճանաչելու օրը: (Հավելված 2) 5. Համակարգող խորհրդի քննարկմանը սոցիալական տան ազատված կացարանում բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող անձանց հաշվառման ցուցակում ընդգրկված անձին (ընտանիքին) արտահերթ տեղավորման վերաբերյալ առաջարկության համար **կողմնորոշիչ հանգամանքներ** են, մասնավորապես. դիմողի՝ ընտանիքում մինչև 5 տարեկան երեխաների թիվը, դիմողի կամ դիմողի կնոջ հղի լինելը, ընտանիքում նույն կարգավիճակ ունեցող (առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասված անձ, մանկատան շրջանավարտ լինելը և այլն) քույրեր, եղբայրներ լինելը: (Հավելված 2) 6. Եթե բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող անձանց համապատասխան սոցիալական խմբի հաշվառման ցուցակի՝ այդ պահի դրությամբ առաջին համարով հաշվառված անձն առանց ծնողական խնամքի մնացած երեխա է, որի բնակելի տարածության իրավունքը ծագում է ավելի ուշ ժամկետում՝ նրա 18 տարին լրանալու օրը, ապա ՀՀ ԱՍՀՆ-ն **ուսումնասիրությունը** կազմակերպում է հերթացուցակում ընդգրկված հաջորդ անձի (ընտանիքի) համար, իսկ առանց ծնողական խնամքի մնացած երեխան հերթացուցակում պահպանում է իր տեղը՝ մինչև նրա 18 տարին լրանալը: (Հավելված 2)	Բնակելի տարածության իրավունք ունեցող անձանց (ընտանիքների) դիմումներում ներառված և կից ներկայացված փաստաթղթերում առկա (առցանց ստացված) տվյալների հիման վրա ՀՀ ԱՍՀՆ-ն ստեղծում է բնակելի տարածության իրավունք ունեցող անձանց տվյալների տեղեկատվական ենթահամակարգը և տիրապետում դրան, իսկ սպասարկում և շահագործում է ՀՀ կառավարության լիազորած կազմակերպությունը: Տեղեկատվական ենթահամակարգը բաղկացած է տեղական և կենտրոնական տեղեկատվական շտեմարաններից, ընդ որում, տեղական տեղեկատվական շտեմարանը ձևավորվում է կենտրոնների կողմից՝ կացարանում տեղավորվելու համար դիմած անձանց ներկայացրած տվյալների հիման վրա՝ դրանք ամբողջական ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Տեղական տեղեկատվական շտեմարանում կատարված փոփոխություններն անմիջապես արտացոլվում են կենտրոնական տեղեկատվական շտեմարանում: (Հավելված 2) Օթևան տրամադրող կազմակերպությունն ընտանեկան	• Լիազորած պետական մարմնի (ՀՀ ԱՍՀՆ), ոստիկանության, խնամակալության և հոգաբարձության մարմինների, ՀՀ մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) կողմից ներկայացված տեղեկությունների, գրավոր և բանավոր դիմումների միջոցով ընտանեկան բռնության ենթարկված անձի մասին տեղեկություններ ստանալու դեպքում **օթևան տրամադրող կազմակերպությունն** անհապաղ, բայց ոչ ուշ, քան համապատասխան տեղեկատվությունն ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում կազմակերպում է ընտանեկան բռնության ենթարկված անձի՝ օթևան տեղափոխումը և ընդունելությունը: (Հավելված 3) • Օթևան տրամադրող կազմակերպությունը, մասնավորապես, աջակցում է ընտանեկան բռնության ենթարկված անձին՝ ընտանիքի հետ սոցիալական կապերը վերականգնելու և նրան ընտանիք վերադարձնելու հարցում, ընտանեկան բռնության

	տրամադրելու կարգը, ընտանեկան բռնության ենթարկված անձանց և որոշակի բնակության վայր չունեցող անձին՝ որպես ժամանակավոր օթևան՝ կացարան և սոցիալական ծառայություններ տրամադրելու կարգն ու պայմանները, հատուկ խմբերին դասված որոշակի կատեգորիայի անձանց կացարանով ապահովելու կարգը և պայմանները, յուրաքանչյուր տարվա համար ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք ֆինանսական միջոցների ծավալների որոշման հարցերը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության մի շարք որոշումներ, լրացում և փոփոխություն է կատարում ՀՀ կառավարության որոշման մեջ:	7. Հերթացուցակում ընդգրկված անձանց (ընտանիքների) հերթագրման հավասար պայմանների (դիմումը տալու օր, սոցիալական խումբ) դեպքում կիրառվում են, մասնավորապես, հետևյալ **առաջնահերթությունները**՝ ըստ թվարկման հերթականության՝ խնամքին առկա երեխաների թիվը, ընտանիքում 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձի առկայությունը և նրանց թիվը: (Հավելված 2) 8. Սատարող ընտանիքին, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասվող անձանց, մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին կացարանները բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող անձին (ընտանիքին) **տրամադրվում են 10 տարի ժամկետով**: (Հավելված 2) 9. Կարգավորվում է **ընտանեկան բռնության ենթարկված** անձանց (Հավելված 3) և **որոշակի բնակության վայր չունեցող անձանց** (Հավելված 4), այդ թվում՝ երեխաներին, որպես ժամանակավոր օթևան՝ կացարան տրամադրելու, ինչպես նաև կացարանում այդ անձանց սոցիալական ծառայություններ տրամադրելու հետ կապված հարաբերությունները: 10. **Միևնույն օթևանը** (Հավելված 3) և ժամանակավոր կացարանը (Հավելված 4) **երեխաներին և չափահաս անձանց** կարող է տրամադրվել սահմանված դեպքերում՝ օթևանում կամ ժամանակավոր կացարանում երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ սոցիալական **նվազագույն չափորոշիչները բավարարելու** պարագայում: Օթևանը տրամադրվում է մինչև 12 ամիս (Հավելված 3), իսկ ժամանակավոր կացարանը՝ մինչև 90 օր տևողությամբ (Հավելված 4) 11. Ընտանեկան բռնության ենթարկված երեխաների համար նախատեսված օթևանում (Հավելված 3) և , որոշակի բնակության վայր չունեցող երեխաների համար նախատեսված ժամանակավոր կացարանում (Հավելված 4) պետք է ապահովվեն նաև օթևանում **երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ սոցիալական նվազագույն չափորոշիչները**: 12. Ընտանեկան բռնության ենթարկված (Հավելված 3) կամ որոշակի բնակության վայր չունեցող (Հավելված 4) երեխայի անունից գրավոր դիմումը ներկայացնում է նրա օրինական ներկայացուցիչը՝ բացառությամբ, երբ երեխան (անչափահասը) օրենքով սահմանված դեպքերում և կարգով ճանաչվել է լրիվ գործունակ (էմանսիպացիա): 13. Ընտանեկան բռնության ենթարկված (Հավելված 3) կամ որոշակի բնակության վայր չունեցող (Հավելված 4) անձին օթևան/ժամանակավոր կացարան տրամադրելիս, անհրաժեշտության դեպքում, **միևնույն օթևանով** ապահովվում են նաև այն երեխան, ով գտնվում է տվյալ անձի փաստացի խնամքի տակ կամ, որի օրինական ներկայացուցիչն է հանդիսանում տվյալ ընտանեկան բռնության ենթարկված/չափահաս անձը, եթե դա բխում է երեխայի շահերից, օթևանը բավարարում է երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ սոցիալական նվազագույն չափորոշիչները և ունի. օթևանում/ժամանակավոր կացարանում բնակվող (գտնվող) այլ անձանցից երեխայի՝ առանձին բնակվելու համար անհրաժեշտ կոմունալ պայմաններ՝ ընտանեկան բռնության ենթարկված չափահաս անձանց համար նախատեսված օթևանի դեպքում, օթևանում բնակվող (գտնվող) այլ երեխաներից տվյալ չափահաս անձի՝ առանձին բնակվելու համար անհրաժեշտ կոմունալ պայմաններ՝ ընտանեկան բռնության ենթարկված երեխաների համար նախատեսված օթևանի դեպքում: 14. Որոշակի բնակության վայր չունեցող երեխային ժամանակավոր կացարան տրամադրելիս՝ **միևնույն ժամանակավոր** կացարանով կարող է ապահովվել նաև այն չափահաս՝ որոշակի բնակության վայր չունեցող անձը, ով հանդիսանում է տվյալ երեխայի օրինական ներկայացուցիչը կամ, որի փաստացի խնամքի տակ է գտնվում տվյալ երեխան, եթե դա բխում է երեխայի շահերից, և ժամանակավոր կացարանն ունի այնտեղ բնակվող (գտնվող) այլ երեխաներից տվյալ չափահաս անձի՝ առանձին բնակվելու համար անհրաժեշտ կոմունալ պայմաններ: (Հավելված 4) 15. Ընտանեկան բռնության ենթարկված երեխան կարող է օթևան բերել **խաղալիքներ և շրջապատի համար վտանգ չներկայացնող այլ իրեր և ընտանի կենդանիներ**, եթե դա արգելված չէ օթևանի կանոններով և օթևանի պայմաններն ընձեռում են այդ հնարավորությունը: (Հավելված 3) 16. Ընտանեկան բռնության ենթարկված անձին, ինչպես նաև օթևանում բնակվող (գտնվող)՝ ընտանեկան բռնության ենթարկված անձի օրինական ներկայացուցչին, խնամքի տակ գտնվող երեխային, նրանց անհատական կարիքներին համապատասխան, **օթևանում տրամադրվում է**՝ մահճակալ՝ անկողնային սպիտակեղենի լրակազմով, անհրաժեշտության դեպքում՝ նաև հագուստ, կոշիկ, ներքին սպիտակեղեն և անձնական հիգիենայի պարագաներ (սրբիչ, օճառ, ատամի մածուկ, խոզանակ և այլն), երեխաների խնամքի պարագաներ, սնունդ՝ օրական առնվազն երեք անգամ, ընդ որում, հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց համար բժշկի ցուցումով նշանակվում է դիետիկ սնունդ: (Հավելված 3) 17. Ընտանեկան բռնության ենթարկված երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումները մշակելիս, վերանայելիս և իրականացնելիս՝ հաշվի է առնվում նաև **երեխայի օրինական ներկայացուցչի կարծիքը**, եթե այն բացասաբար չի ազդի վերականգնման գործընթացի վրա կամ չի խոչընդոտի դրա արդյունավետ իրականացմանը: (Հավելված 3) 18. Երեխայի հետագա խնամքը կազմակերպելու մասին իրավասու մարմնի տված եզրակացության հիման վրա օթևանում բնակվող (գտնվող) (Հավելված 3) կամ ժամանակավոր կացարանից (Հավելված 4) **երեխայի դուրսգրման հիմքեր են** ընտանիք վերադառնալը, խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը, խնամատար ընտանիքում տեղավորելը, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելը: Երեխայի դուրսգրման հիմքեր են նաև լրիվ գործունակ ճանաչված (էմանսիպացիա) երեխայի՝ ինքնուրույն և կշռադատված որոշման հիման վրա ներկայացրած **դիմումը**: Ժամանակավոր կացարանից որոշակի բնակության վայր չունեցող երեխայի դուրսգրման հիմք է նաև ժամանակավոր կացարան տրամադրելու՝ օրենքով սահմանված **ժամկետը լրանալը**: (Հավելված 4) 19. Օթևանում բնակվող (գտնվող)՝ ընտանեկան բռնության ենթարկված անձի օրինական ներկայացուցիչը և խնամքի տակ գտնվող երեխան օթևանից դուրս են գրվում այդ անձի դուրսգրման հետ միաժամանակ: (Հավելված 3)	բռնության ենթարկված անձի մասին տեղեկություն կարող է ստանալ անձամբ այդ անձից, ՀՀ ԱՍՀՆ-ից, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններից, ՀՀ ոստիկանությունից, խնամակալության և հոգաբարձության մարմիններից, պետական և տեղական ինքնակառավարման այլ մարմիններից, իրավաբանական ու ֆիզիկական այլ անձանցից, զանգվածային լրատվության միջոցներից, ինքնուրույն իրականացրած աշխատանքների արդյունքում և այլ աղբյուրներից: (Հավելված 3) Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, յուրաքանչյուր այն հիմնավոր կասկածի դեպքում, որ իրենց գործառույթներից բխող շփման տիրույթում հայտնված անձը ենթարկվել է ընտանեկան բռնության, նրան ուղղորդում են տվյալ անձի փաստացի բնակության վայրի տարածքն սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին) կամ ՀՀ մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին կամ օթևան (օթևանի գտնվելու վայր) կամ օթևան տրամադրող կազմակերպություն (դրա մշտական գործող մարմնի գտնվելու վայր) կամ այդ անձի մասին տեղեկությունը, նրա (կամ նրա օրինական ներկայացուցչի) գրավոր համաձայնության առկայության պարագայում, փոխանցում են տվյալ անձի փաստացի բնակության վայրի տարածքն սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը (բաժնին): Գրավոր համաձայնությունը չի պահանջվում, եթե՝ ենթադրյալ ընտանեկան բռնության ենթարկված անձը երեխա է, և առկա են ողջամիտ կասկածներ, որ այդ երեխայի օրինական ներկայացուցիչ հանդիսացող անձը որևէ կերպ մասնակցել է նրա նկատմամբ իրականացված ընտանեկան բռնությանը, կամ ենթադրյալ ընտանեկան բռնության ենթարկված անձը չունի օրինական ներկայացուցիչ և, հիվանդության կամ տվյալ պահին ունեցած հոգեբանական կարգավիճակով կամ սթրեսային վիճակում գտնվելով պայմանավորված, զրկված է իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ այն ղեկավարելու հնարավորությունից կամ չի կարող անձամբ տալ գրավոր համաձայնությունը: (Հավելված 3) Ընտանեկան բռնության ենթարկված անձի կողմից օթևան տեղափոխվելուց	ենթարկված անձի ընտանիքի անդամների հետ իրականացվող սոցիալ-հոգեբանական աշխատանքի միջոցով նպաստում է ընտանիքում բարենպաստ մթնոլորտի վերականգնմանը, անձը հաստատող և սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի (ատեստատ, դիպլոմ, աշխատանքային գրքույկ և այլն) բացակայության դեպքում ցուցաբերում է անհրաժեշտ աջակցություն՝ դրանք ստանալու գործընթացը կազմակերպելու հարցում, անհրաժեշտության դեպքում՝ ընտանեկան բռնության ենթարկված անձին աջակցում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունելության համար փաստաթղթերը ձևակերպելու և ներկայացնելու հարցերում, իրականացնում է համապատասխան աշխատանքներ՝ ընտանեկան բռնության ենթարկված անձի հոգեկան կյանքի կարգավորման, սոցիալական միջավայրին հարմարվելու, սթրեսային վիճակներին դիմակայելու, սոցիալական հմտությունները և ինքնիրացումը (ինքնորոշումը) զարգացնելու և հասարակության կյանքում նրա արդյունավետ և լիարժեք ներգրավվածությանն աջակցելու նպատակով, իր իրավասությունների շրջանակներում աջակցում է ընտանեկան բռնության ենթարկված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, ապահովում է անվտանգ միջավայրով՝ ընտանեկան բռնության ենթարկված անձին (ինչպես նաև օթևանում բնակվող (գտնվող)՝ ընտանեկան բռնության ենթարկված անձի օրինական ներկայացուցչին և խնամքի տակ գտնվող երեխային) զերծ պահելով ցանկացած բռնությունից, շահագործումից, իրավունքների և օրինական շահերի այլ ոտնահարումից: (Հավելված 3) • Օթևան տրամադրող կազմակերպությունը, ըստ անհրաժեշտության, համագործակցելով սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի), խնամակալության և հոգաբարձության մարմնի, ՀՀ մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հետ, օժանդակում է օթևանում բնակվող (գտնվող) երեխաների կրթությանն ու դաստիարակմանը, այդ թվում նաև՝ կազմակերպում է

			հրաժարվելու կամ ընտանեկան բռնության ենթարկված անձին անհետաձգելի բժշկական օգնություն տրամադրելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ օթևան տեղափոխելու անհնարինության դեպքում օթևան տրամադրող կազմակերպությունը տվյալ անձի մասին իրեն հայտնի դարձած տեղեկատվությունն անհապաղ տրամադրում է ոստիկանությանը, իսկ ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է նաև տվյալ տարածքն սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը (բաժնին), տվյալ վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին, ՀՀ համապատասխան մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին, ինչպես նաև այն անձանց կամ մարմիններին, որոնցից ստացել էր տեղեկություններ ընտանեկան բռնության ենթարկված տվյալ անձի մասին: (Հավելված 3) Ընտանեկան բռնության ենթարկված երեխայի՝ օթևան տեղափոխվելուց (փաստացի ընդունվելուց) հետո մեկ ժամվա ընթացքում, անկախ հրամանի ընդունումից կամ օթևանի տրամադրումը մերժելու հանգամանքից, օթևան տրամադրող կազմակերպությունը դրա մասին իրազեկում է ոստիկանությանը, իսկ ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում՝ նաև լիազորած պետական մարմնին, տվյալ վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին, սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը (բաժնին), ՀՀ համապատասխան մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին և երեխայի օրինական ներկայացուցչին (առկայության դեպքում)՝ բացառությամբ ստորև դեպքի: Ելնելով ընտանեկան բռնության ենթարկված անձի լրացուցիչ անվտանգության ապահովման նկատառումներից՝ ընտանեկան բռնության ենթարկված անձի մասին տեղեկատվությունը նույն կետերով սահմանված այլ անձանց և մարմիններին կարող է տրամադրվել ոստիկանության պահանջով՝ վերջինիս հետ համաձայնեցված ժամկետներում: Այն դեպքում, երբ առկա են ողջամիտ կասկածներ, որ ընտանեկան բռնության ենթարկված և օթևան տեղափոխված անձի օրինական ներկայացուցիչ	օթևանում բնակվող (գտնվող) երեխաների հիմնական կրթության մատուցումը, որը կարող է իրականացվել ինչպես մասնավոր դասընթացների, այնպես էլ՝ հանրակրթական կամ հատուկ դպրոցներում աշակերտելու միջոցով: (Հավելված 3) • Օթևան տրամադրող կազմակերպությունը (Հավելված 3) և ժամանակավոր կացարանը (Հավելված 4) ապահովում են այնտեղ բնակվող (գտնվող) անձանց բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ նրանց այնտեղ բնակվելու (գտնվելու) ամբողջ ժամանակահատվածում: Օթևանում բնակվող (գտնվող) անձանց բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնում են օթևանի գտնվելու վայրի համապատասխան բժշկական հաստատությունը և օթևանի բժիշկը, իսկ անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է համապատասխան բժշկական հաստատություններ ուղեգրման գործընթացը: (Հավելված 3) • Ժամանակավոր կացարանը, մասնավորապես, աջակցում է որոշակի բնակության վայր չունեցող անձանց՝ ընտանիքի հետ սոցիալական կապերը վերականգնելու և նրանց ընտանիք վերադարձնելու հարցում, անհրաժեշտության դեպքում երեխաներին աջակցում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ընդունելության համար փաստաթղթերը ձևակերպելու և ներկայացնելու հետ կապված հարցերում, իր իրավասության շրջանակում աջակցում է որոշակի բնակության վայր չունեցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: (Հավելված 4) • Ժամանակավոր կացարան ընդունված՝ որոշակի բնակության վայր չունեցող յուրաքանչյուր գործունակ ճանաչված անչափահաս անձի հետ եռօրյա ժամկետում, ժամանակավոր կացարան տրամադրող կազմակերպության համապատասխան լիազորություններ ունեցող պաշտոնատար անձը կնքում է վերասոցիալականացման համաձայնագիր: (Հավելված 4)

			հանդիսացող անձը որևէ կերպ մասնակցել է նրա նկատմամբ իրականացված ընտանեկան բռնությանը, օրինական ներկայացուցչին չի տրամադրվում անձի գտնվելու կոնկրետ վայրի մասին տեղեկատվությունը՝ մինչև օրենքով սահմանված կարգով այլ օրինական ներկայացուցչով ապահովելը: (Հավելված 3) Ընտանեկան բռնության ենթարկված անձին օթևան տրամադրելու մասին հրամանի ընդունումից անմիջապես հետո օթևանի՝ համապատասխան լիազորություններով օժտված աշխատողը (կամ պաշտոնատար անձը) օթևան ընդունված անձի մասին տվյալները գրանցում է օթևանի՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց **հաշվառման մատյանում**, որի ձևը հաստատում է օթևան տրամադրող կազմակերպության ղեկավարը: Ընտանեկան բռնության ենթարկված անձանց հաշվառման մատյանում, ի թիվս այլ տեղեկությունների, գրանցվում են նաև ընտանեկան բռնության ենթարկված անձի՝ օթևանում բնակվող (գտնվող) օրինական ներկայացուցչի և խնամքի տակ գտնվող երեխայի մասին տվյալները: (Հավելված 3) Ընտանեկան բռնության ենթարկված անձը չի կարող ընդունվել ժամանակավոր կացարան, եթե տառապում է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված՝ խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով: Նշված հիմքով օթևանի տրամադրումը մերժելու մասին տեղեկատվությունն ստանալուց հետսոցիալական աջակցության տարածքային գործակալությունը (բաժինը), ՀՀ համապատասխան մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, խնամակալության և հոգաբարձության մարմինը ձեռնարկում են համապատասխան բոլոր միջոցները՝ ընտանեկան բռնության ենթարկված տվյալ անձի հետագա խնամքի կազմակերպման, սոցիալ-հոգեբանական վերականգնման, անհրաժեշտ այլ աջակցության տրամադրման և սոցիալական ներառման նպատակով: (Հավելված 3) Բացառությամբ կարգով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերի՝ օթևան տրամադրող կազմակերպությունը, նրա	

			պաշտոնատար անձինք և աշխատողները պարտավոր են որևէ կերպ չհրապարակել, չտարածել օթևանի տրամադրման ընթացքում ընտանեկան բռնության ենթարկված անձանց, նրանց օրինական ներկայացուցիչների, խնամքի տակ գտնվող անձանց վերաբերյալ իրենց հայտնի դարձած անհատական տվյալները, այդ անձանց ընտանիքների մասին այնպիսի տեղեկություններ և տվյալներ, որոնք հնարավորություն կընձեռեն նույնացնելու ընտանեկան բռնության ենթարկված անձանց, ինչպես նաև երրորդ անձանց չընձեռել այդ տվյալները և տեղեկությունները հայթայթելու այնպիսի հնարավորություն, որը կարող է առաջանալ թույլատրելու, չխոչընդոտելու կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետևանքով: (Հավելված 3) Եթե ժամանակավոր կացարան տեղափոխված (փաստացի ընդունված) անձը երեխա է, ապա ժամանակավոր կացարան տրամադրող կազմակերպությունը դրա մասին տեղեկացնում է նաև ժամանակավոր կացարանի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին: (Հավելված 4) Ժամանակավոր կացարանից որոշակի բնակության վայր չունեցող անձի դուրսգրումից հետո մեկ օրվա ընթացքում, ժամանակավոր կացարան տրամադրող կազմակերպությունը դրա մասին տեղեկացնում է ոստիկանության տարածքային մարմնին, սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը (բաժնին), ինչպես նաև լիազորած պետական մարմնին, իսկ այն դեպքում, երբ դուրս գրված անձը երեխա է, ապա նաև՝ ժամանակավոր կացարանի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին: (Հավելված 4) Ժամանակավոր կացարան տրամադրող կազմակերպությունը վարում է ժամանակավոր կացարանում բնակվող (գտնվող)՝ որոշակի բնակության վայր չունեցող անձանց **հաշվառման տեղեկատվական շտեմարան:** Ժամանակավոր կացարան տրամադրող կազմակերպությունը, լիազորած պետական մարմին է ներկայացնում որոշակի բնակության վայր չունեցող անձանց ժամանակավոր կացարանով ապահովելու մասին **տեղեկատվություն**: (Հավելված 4)	
135.	**«Վերականգնողական օգնության տրամադրման**	1. Կարգավորվում է **վերականգնողական օգնության** տրամադրման հետ կապված հարաբերությունները: (Հավելված 1) 2. «**Հաշմանդամ երեխա**» կարգավիճակ ունեցող երեխաներին վերականգնողական օգնությունը տրամադրվում է վերականգնողական	Բուժատեխնիկական հանձնաժողովը հսկողություն է իրականացնում ՎԱԾ-ի	ՀՀ առողջապահության նախարարություն

	կարգը և պայմանները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 22-ի N 1369-Ն և 2007 թվականի ապրիլի 12-ի N 453-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1035-Ն, ընդունված է՝ 10.09.2015, ուժի մեջ է՝ 03.10.2015* Սահմանում է վերականգնողական օգնության տրամադրման կարգը և պայմանները, վերականգնողական, տեխնիկական միջոցների և այլ օժանդակ սարքերի օգտագործման ժամկետները, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության որոշումներ:	անհատական ծրագրի (ՎԱԾ) համաձայն՝ բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնողական համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով: (Հավելված 1) 3. Երեխաներին՝ անկախ հաշմանդամություն ունենալու կամ սոցիալապես անապահով լինելու հանգամանքից վերականգնողական, տեխնիկական միջոցները և այլ օժանդակ սարքերը, այդ թվում՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաները տրամադրվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: (Հավելված 1) 4. Երեխաներին **օրթեզներ և սեղմիրաններ** (կորսետներ) կարող են տրամադրվել նաև առողջապահության բնագավառում ՀՀ կառավարության սահմանած լիազորած մարմնի ղեկավարի կողմից սահմանված դեպքերում և կարգով: (Հավելված 1) 5. «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող երեխաներին՝ հաշմանդամություն ունեցող անձի ՎԱԾ-ի համաձայն՝ ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում պարագաներով ապահովում նախատեսող միջոցառումների շրջանակներում տրամադրվում է **հաշմանդամի սայլակ**: (Հավելված 1)	բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների կատարման և դրանց արդյունավետության նկատմամբ: (Հավելված 1) Վերականգնողական օգնություն տրամադրող կազմակերպությունները, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով, լիազորած մարմին են ներկայացնում վերականգնողական օգնության տրամադրման մասին տեղեկատվություն: Պարագաներ տրամադրող կազմակերպությունների կողմից, լիազորած մարմնի հետ կնքած համապատասխան պայմանագրերով սահմանված պահանջներին համապատասխան, հաշմանդամություն ունեցող անձանց պարագաների տրամադրման մասին տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով մուտքագրվում է պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ: Պարագաներ տրամադրող կազմակերպությունները լիազորած մարմին են ներկայացնում պարագաների տրամադրման (վերանորոգման) մասին հաշվետվություն՝ լիազորած մարմնի ղեկավարի հրամանով սահմանած կարգով և ձևին համապատասխան: (Հավելված 1)	• **Բուժատեխնիկական հանձնաժողովն** ստեղծվում (կազմավորվում) է լիազորած մարմնի ղեկավարի կողմից:
136.	**«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1262-Ն, ընդունված է՝ 24.08.2006, ուժի մեջ է՝ 01.01.2007* *Նաև՝* **«ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում**	1. Սահմանում է **ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման իրականացումը ըստ աշակերտների թվի**՝ հետևյալ բանաձևով՝ Ըգ = Սթ x Սգ + Պգ + ՏՍթ x ԱՕք x ԻՆգ + ՀՈՒՀՍթ x 0.1 x ՍԱդգ (Ըգ-ն մեկ տարվա համար հաստատությանը հատկացվող ընդամենը գումարն է, Սթ-ն հաստատության սովորողների թիվն է, Սգ-ն մեկ սովորողին ընկնող տարեկան գումարն է, Պգ-ն հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարն է, ՏՍթ-ն հաստատություններում տարրական դասարաններում սովորողների և նախակրթարանների երեխաների թվի հանրագումարն է, ԱՕք-ն աշխատանքային օրերի քանակն է, ՍՆգ-ն տարրական դասարանների և նախակրթարանների երեխաներին սննդով ապահովման մեկ օրվա գումարն է, ՀՈՒՀՍթ - հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների (բացառությամբ տարրական դասարանների) թիվն է, ՍԱդգ-ն սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի փոխհատուցվող գումարն է): (Կետ 1) 2. Մինչև 100 աշակերտ ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար հաստատության **պահպանման ծախսերի նվազագույն գումարը** 2014 թվականի համար կազմում է 16876.0 հազ. դրամ (ներառյալ ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը), որը հետագա տարիներին ենթակա է վերահաշվարկման՝ ելնելով ընթացիկ ցուցանիշներից: 101-ից մինչև 300 աշակերտ ու 301 և ավելի աշակերտ ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը բաղկացած է 2 մասից՝ հաստատության պահպանման ծախսերից և, աշակերտների թվից ելնելով, ըստ դպրոցների հաշվարկված ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդից: (Կետ 1) 3. Աշխատանքային օրերի թիվը, տարրական դասարանների և նախակրթարանների երեխաներին սննդով ապահովման մեկ օրվա գումարը, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի փոխհատուցվող **գումարը հաշվարկվում** են ՀՀ ԿԳՆ կողմից ներկայացված հաշվարկների հիման վրա: (N 749-Ն որոշում, Կետ 2) 4. **Տարրական դասարանների երեխաներին սննդով ապահովումը** տարածվում է միայն ՀՀ Վայոց ձորի, Սյունիքի և Արարատի մարզերում գտնվող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա: (N 749-Ն որոշում, Կետ 3)		• **ՀՀ ֆինանսների նախարարը**՝ ՀՀ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաստատումից հետո մեկ ամսվա ընթացքում **ՀՀ կրթության և գիտության նախարարի** հետ համատեղ հաստատում է ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցները՝ ելնելով ընթացիկ ցուցանիշներից, կիրառելով համապատասխան գործակիցներ՝ հանրակրթական դպրոցի տարրական, միջին և ավագ մակարդակներում, ինչպես նաև լրացուցիչ գործակիցներ՝ բարձրլեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող, ինչպես նաև ավագ դպրոցների համար, ինչպես նաև, աշակերտների թվից ելնելով, մինչև 100 աշակերտ, 101-ից մինչև 300 աշակերտ, 301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար ոչ ուսուցչական անձնակազմի նվազագույն հաստիքների թիվը, սոցիալապես անապահով

	կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 749-Ն, ընդունված է՝ 08.07.2015, ուժի մեջ է՝ 01.01.2016* Կարգավորում է ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման իրականացումը ըստ աշակերտների թվի և սահմանում է բանաձևը, հանձնարարականներ և թույլատվություններ է տալիս ՀՀ ֆինանսների և ՀՀ ԿԳ նախարարներին, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 25-ի N 773 որոշումը:			ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի փոխհատուցվող գումարը և տարրական դասարանների երեխաներին սննդով ապահովման մեկ օրվա գումարը: (Կետ 2) • ՀՀ կրթության և գիտության նախարարն ու ՀՀ մարզպետները (Երևանի քաղաքապետը) ՀՀ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաստատումից հետո մեկ ամսվա ընթացքում, անհրաժեշտության դեպքում, իրենց ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում իրավասու են կատարել վերաբաշխումներ՝ համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարի հետ: (Կատ 4)
137.	**«Ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 540-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 219-Ն, ընդունված է՝ 05.03.2015, ուժի մեջ է՝ 10.08.2016* Հաստատում է ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 540-Ն որոշումը, հանձնարարական է տալիս ՀՀ էկոնոմիկայի նախարարին:	1. Մարդու առողջության վրա ծխախոտի ունեցած բացասական ազդեցության մասին լրացուցիչ նախազգուշացման տեքստերը ներառում են. «Պահպանեք երեխաներին՝ թույլ մի տվեք նրանց շնչել ծխախոտի ծուխը», «Ծխելը հղիության ընթացքում վնասում է Ձեր ապագա երեխային»: Ծխելու վնասակարության վերաբերյալ հիմնական նախազգուշացման տեքստը պետք է զետեղվի ցանկացած տուփի 2 առավել մեծ մակերեսով կողմերից մեկի վրա, իսկ լրացուցիչ նախազգուշացման տեքստը՝ մյուսի վրա: Սահմանում է հիմնական և լրացուցիչ տեքստերի տպագրությանը ներկայացվող պահանջները: (Հավելված 1)	Տեխնիկական կանոնակարգին ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների համապատասխանությունն ապահովվում է դրա անվտանգության պահանջների անմիջական կատարումով կամ հրապարակված տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող կամավոր սկզբունքով կիրառման դեպքում՝ ստանդարտների անվանացանկում ներառված ստանդարտների պահանջների կատարումով: Գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի «Համապատասխանության գնահատման ընթացակարգերը սահմանելու մասին» N 56-Ն որոշմամբ հաստատված հայտարարագրման ընթացակարգերից որևէ մեկով: Տեխնիկական կանոնակարգի պահանջներին ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողությունը պետք է իրականացվի «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:	• ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
138.	**«ՀՀ պետական մանկատների շրջանավարտներին պետական աջակցության ծրագիրը հաստատելու և ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 158-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1452-Ն, ընդունված է՝ 18.12.2014, ուժի մեջ է՝ 21.12.2014*	1. **Ծրագիրը տարածվում է** «Պետական աջակցություն ՀՀ-ում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում ՀՀ-ում պետական մանկատների 2003 թվականից սկսած մինչև 2013 թվականը ներառյալ, հաշվառված և շահառու ճանաչված (1991-2013 թթ. շրջանավարտներ), ինչպես նաև Գավառի և Վանաձորի ընդհանուր տիպի մանկատների 2014 թվականի և հաջորդող տարիների շրջանավարտների վրա: (Հավելված 1) 2. ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշմամբ կարգավորվում է բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող սոցիալապես անապահով և հատուկ խմբերին, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող **անձանց հաշվառելու, կացարանի և այլ սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը**: (Հավելված 1) 3. Ծրագրի **նպատակը** շրջանավարտների սոցիալական պաշտպանության և հասարակությանը նրանց ինտեգրման ապահովումն է: Ծրագրի **խնդիրներն** են՝ շրջանավարտների ինտեգրումը հասարակություն, աջակցություն շրջանավարտների կենսամակարդակի բարձրացմանը, շրջանավարտների տվյալների շտեմարանի ստեղծումը: (Հավելված 1) 4. Ծրագրի իրականացումից **ակնկալվող արդյունքներն** են՝ 1991-2013 թվականների շրջանավարտների սոցիալական կարիքների	Հանձնարարում է **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին**՝ եռամսյա ժամկետում հաստատել ՀՀ պետական մանկատների շրջանավարտներին պետական աջակցության իրականացման ծրագրի **մոնիթորինգի չափորոշիչները**: (Կետ 3) Ծրագրի **մոնիթորինգն** իրականացվում է ՀՀ ԱՍՀՆ հաստատած չափորոշիչների և կարգի համաձայն: Ծրագրի իրականացման համար	• ՀՀ ԱՍՀՆ • Ծրագրի իրականացումը գործակալության պայմանագրով վերապահում է **երեխաների հիմնահարցերով շահագրգիռ հասարակական կազմակերպությանը**: (Հավելված 1) • Գործակալության պայմանագրի հիման վրա ծրագիրն իրականացնող **հասարակական կազմակերպությունը** համագործակցում է շահառուի

	Հաստատում է ՀՀ պետական մանկատների շրջանավարտներին պետական աջակցության ծրագիրը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 158-Ն որոշումը, հանձնարարություն է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին:	գնահատումը, 1991-2013 թվականների շրջանավարտների և ընտանիքներում բնակվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կարգավիճակ ունեցող անձանց տվյալների ճշտումը և տվյալների շտեմարանի ձևավորումը, 2014 թվականի և հաջորդող յուրաքանչյուր տարվա շրջանավարտների հաշվառումը, նրանց տվյալների ներառումը շտեմարան և նրանց սոցիալական կարիքների գնահատումը, յուրաքանչյուր տարի շրջանավարտներին, ըստ նրանց գնահատված կարիքների, ծրագրով նախատեսված ծառայությունների տրամադրումը: (Հավելված 1) 5. Անհատական սոցիալական ծրագրի շրջանակներում **շրջանավարտներին իրենց կարիքներին համարժեք տրամադրվում են՝** իրավաբանական խորհրդատվություն՝ ուղղված նրանց իրավունքների և օրինական շահերի, մասնավորապես, գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների, պաշտպանությանը, մասնագիտական կողմնորոշում և աջակցություն զբաղվածության ապահովմանը՝ խորհրդատվության տրամադրում ելնելով նրանց գիտելիքներից և նախասիրություններից հետագա կրթության կազմակերպման համար, աշխատանքի շուկայի պահանջներին համապատասխան շահառուի ներգրավում առաջնային մասնագիտական ուսուցման և մասնագիտացման վերապատրաստումների դասընթացներում, ինչպես նաև հաշվի առնելով շահառուի պատրաստվածությունն ու նախասիրությունները, աջակցություն նրա զբաղվածության ապահովման գործում, ընդգրկում պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման ծրագրերում՝ դրա անհրաժեշտության դեպքում, աջակցություն բնակելի տարածության կարիք ունեցող շահառուին ժամանակավոր կացարանով ապահովմանը՝ վարձակալության հիմունքներով բնակվելու դեպքում՝ ամսական ոչ ավելի, քան 30 հազ. դրամ օգնության տրամադրում՝ մինչև շրջանավարտի 23 տարեկանը լրանալը, դրամական օգնություն՝ տվյալ տարվա շրջանավարտին միանվագ դրամական օգնության տրամադրում՝ 50 հազ. դրամի չափով, բնակելի տարածության տրամադրումը, սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրում, որոնք ուղղված են շահառուների հարմարեցմանն ինքնուրույն կյանքին, նրանց միջանձնային հարաբերությունների ձևավորմանը, ինչպես նաև սոցիալական այլ հմտությունների և կարողությունների զարգացմանը: (Հավելված 1) 6. **Դրամական օգնությունը** տրամադրվում է շրջանավարտին անկանխիկ եղանակով, եթե առկա է շրջանավարտի և բնակարանի սեփականատիրոջ միջև կնքված բնակարանի վարձակալության պայմանագիր՝ պայմանագրում նշված վարձակալության համար նախատեսված գումարի չափով, բայց ոչ ավելի, քան ամսական 30 հազ. դրամ: (Հավելված 1)	կազմակերպությանը տրամադրվող **ֆինանսական միջոցների ծավալները** քննարկվում են յուրաքանչյուր տարի՝ տվյալ տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում: (Հավելված 1) Ծրագրով միջոցառումները ներառում են՝ **ուսումնասիրել** 2003-2013 թվականների ընթացքում «Պետական աջակցություն ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շահառու ճանաչված՝ 1991-2013 թվականների շրջանավարտների սոցիալ-տնտեսական պայմանները, **գնահատել նրանց սոցիալական կարիքները**, վերագնահատված սոցիալական կարիքների համաձայն կազմել շահառուների, այդ թվում՝ բնակելի տարածության կարիք ունեցողների, **տվյալների շտեմարան**, **ուսումնասիրել և գնահատել** պետական մանկատների 2014 թվականին և հաջորդող տարիներին՝ տվյալ տարվա շրջանավարտների **սոցիալական կարիքները** և նրանց տվյալները ներառել տվյալների շտեմարանում, գնահատված սոցիալական կարիքներին համապատասխան կազմել շրջանավարտի **անհատական սոցիալական ծրագիր**: (Հավելված 1) Վարձակալության պայմանագրի տվյալները ներառվում են շահառուների **տվյալների շտեմարանում**՝ պայմանագիրը կնքելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: (Հավելված 1)	բնակության վայրն սպասարկող **սոցիալական ծառայությունների տարածքային մարմնի**, **զբաղվածության տարածքային կենտրոնի**, **սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային ստորաբաժանման**, **տեղական ինքնակառավարման մարմնի** և այլ կազմակերպությունների հետ: (Հավելված 1) • Կազմակերպությունը ծրագրի նախատեսված միջոցառումներն իրականացնելու համար՝ համագործակցելով **մանկատան աշխատակազմի** հետ, **նախապատրաստական աշխատանքներն** սկսում է դեռևս մանկատանը բնակվող 17 տարեկանը լրացած մանկատան սանի հետ, շրջանավարտին՝ մանկատնից դուրս գալուց հետո տեղավորելու, կրթական և այլ սոցիալական խնդիրների արդյունավետ լուծումներ գտնելու նպատակով: Կազմակերպությունն աջակցում է մանկատան սանին՝ մինչև իր 18 տարեկանը լրանալը, որևէ առևտրային բանկում բացելու իր անունով **բանկային հաշիվ**: (Հավելված 1) • **Միանվագ դրամական օգնությունը** տրամադրվում է շրջանավարտին իր 18 տարեկանը լրանալու օրը՝ փոխանցում կատարելով նրա բանկային հաշվին՝ **ՀՀ ԱՍՀՆ** կողմից: Դրամական օգնության տրամադրման հայտ-պահանջագիրը նախարարություն է ներկայացնում **կազմակերպությունը**՝ առնվազն մանկատան սանի 18 տարեկանը լրանալու օրվանից 5 աշխատանքային օր առաջ: (Հավելված 1)
139.	**«Խաղալիքների անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 278-Ն, ընդունված է՝ 06.03.2014, ուժի մեջ է՝ 01.03.2015* Հաստատում է խաղալիքների անվտանգության տեխնիկական կանոնակարգը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1551-Ն որոշումը, հանձնարարական է տալիս ՀՀ էկոնոմիկայի նախարարին:	1. Կարգավորում է **խաղալիքի վերաբերյալ տեխնիկական պահանջները** և ՀՀ տարածքում դրանց **ազատ տեղաշարժի կանոնների** հետ կապված հարաբերությունները: (Կետ 1) 2. **Տարածվում է** այն արտադրանքի վրա, որն ստեղծված է կամ նախատեսված է **մինչև 14 տարեկան** երեխաների կողմից խաղերում օգտագործելու համար՝ **բացառությամբ** հանրային օգտագործման համար նախատեսված խաղահրապարակների սարքավորումների, հանրային օգտագործման համար նախատեսված, մետաղադրամով կամ առանց դրա աշխատեցվող ավտոմատ խաղային մեքենաների, այրման շարժիչներով գործող խաղալիք ավտոմեքենաների, խաղալիք շոգեշարժիչների, պարսատիկների և կատապուլտների, անհատական պատվերով պատրաստված խաղալիքների, ցուցահանդեսային օրինակների: (Կետ 2) 3. Սահմանում է արտադրողի, արտադրողի լիազոր ներկայացուցչի, ներմուծողի, դիստրիբյուտորի կողմից ապահովվող խաղալիքի **շուկայահանման պայմանները**: 4. Խաղալիքը՝ ներառյալ դրանում պարունակվող քիմիական նյութերը, ըստ նշանակության կամ նախատեսված ձևով օգտագործելիս, հաշվի առնելով նաև երեխաների վարքը, **չպետք է վտանգի օգտագործողի կամ երրորդ կողմի առողջությունը կամ անվտանգությունը**: Պետք է հաշվի առնել օգտագործողի և, որտեղ որ նպատակահարմար է, նրա վերահսկողի կարողությունը, մասնավորապես, մինչև 36 ամսական կամ այլ սահմանված տարիքային խմբերի երեխաների կողմից օգտագործման համար նախատեսված խաղալիքի դեպքում: Ամրակցված պիտակները և խաղալիքն ուղեկցող օգտագործման հրահանգները պետք է հրավիրեն **օգտագործողի կամ նրա վերահսկողի ուշադրությունը** խաղալիքի օգտագործման հետ կապված բնորոշ **վտանգների** և **վնասի ռիսկերի**, ինչպես նաև նմանատիպ վտանգներից և ռիսկերից **խուսափելու ուղիների** վրա: (Կետ 10) 5. Շուկայահանված խաղալիքը դրա օգտագործման համար նախատեսված ժամկետի ամբողջ ընթացքում պետք է համապատասխանի հիմնական անվտանգության պահանջներին: (Կետ 10) 6. Եթե **փաթեթվածքը**, որում իրացվում է խաղալիքը, նմանապես օգտագործման համար է նախատեսված, ապա այն որպես խաղալիքի	Խաղալիքը շուկայահանվելուց հետո արտադրողը պարտավոր է 10 տարի պահպանել նրա նմուշը, տեխնիկական փաստաթղթերը և համապատասխանության հայտարարագրի մեկ օրինակը: Խաղալիքից առաջացող **ռիսկերի** դեպքում սպառողների **առողջության** և **անվտանգության** պաշտպանության նպատակով, արտադրողի կամ ներմուծողի կողմից պարտադիր նշանակված փորձարկման լաբորատորիայում շուկայահանված խաղալիքի նմուշի փորձարկում է իրականացվում և, անհրաժեշտության դեպքում, բողոքների, սահմանված պահանջներին չհամապատասխանող և հետ կանչված խաղալիքների գրանցամատյան վարվում, ինչպես նաև տեղեկացվում դիստրիբյուտորներին	• ՀՀ էկոնոմիկայի նախարարություն • **Համապատասխանության գնահատման նշանակված մարմինների** հետ կապված պահանջները սահմանված են «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի 3-րդ գլխի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշման պահանջներին համապատասխան:

		բաղկացուցիչ մաս է դիտարկվում: (Կետ 10) 7. **Նախազգուշացումները** պետք է մատնանշեն օգտագործողի սահմանափակումները: Խաղալիքը չի կարող կրել մեկ կամ ավելի հատուկ նախազգուշացումներ, որոնք հակասում են նրա նպատակային օգտագործմանը՝ պայմանավորված խաղալիքի գործառույթով, չափով և բնութագրով: Արտադրողը պարտավոր է խաղալիքի, ամրակցված պիտակի կամ նրա փաթեթվածքի և խաղալիքն ուղեկցող օգտագործման հրահանգի առկայության դեպքում դրա նախազգուշացումները նշել **հայերենով հստակ տեսանելի**, **հեշտ ընթեռնելի**, **հասկանալի** և **ճշգրիտ**: Համապատասխան նախազգուշացումները պետք է **ամրակցված** լինեն այն փոքր խաղալիքների վրա, որոնք վաճառվում են առանց փաթեթավորման: Նախազգուշացումներին պետք է նախորդեն «Նախազգուշացում» կամ «Նախազգուշացումներ» բառերը: Այն նախազգուշացումը, որը **որոշիչ գործոն** է հանդիսանում խաղալիքի ձեռքբերման որոշումն ընդունելու ժամանակ, այդ թվում՝ նաև օգտագործողի **նվազագույն և առավելագույն տարիքը** սահմանող նախազգուշացումը և այլ կիրառելի նախազգուշացումները պետք է լինեն **սպառողին հասանելի փաթեթվածքի** վրա կամ այլ կերպ **հստակ տեսանելի** լինեն սպառողին գնումից առաջ՝ ներառյալ այն դեպքերը, երբ գնումը կատարվում է **առցանց**: (Կետ 11) 8. **Խաղալիք չեն համարվում**. հանդիսությունների և տոնակատարությունների համար դեկորատիվ առարկաները, կոլեկցիոներների համար նախատեսված արտադրանքները՝ պայմանով, որ արտադրանքը կամ դրա փաթեթավորումն ունի տեսանելի և հստակ նշում այն մասին, որ այն նախատեսված է 14 տարեկան և ավելի տարիք ունեցող կոլեկցիոներների համար ապրանքները, սպորտային պարագաները, հեծանիվները, որոնց հեծնելու առավելագույն բարձրությունը 435 մմ է, սկուտերները և այլ տրանսպորտային միջոցները, որոնք նախատեսված են սպորտում կամ հանրային տրանսպորտային ուղիներում կամ արահետներում օգտագործելու համար, էլեկտրաշարժիչով մեքենաները, որոնք նախատեսված են հանրային տրանսպորտային ուղիներում կամ արահետներում կամ դրանց կից մայթերի վրա օգտագործելու համար, խորը ջրում օգտագործելու համար նախատեսված ջրային սարքավորումը և երեխաներին լողալ սովորեցնելու համար նախատեսված միջոցները, ավելի քան 500 կտորներից բաղկացած գլուխկոտրուկները, սեղմած գազով աշխատող ատրճանակները և հրացանները՝ բացառությամբ ջրային ատրճանակների և հրացանների, նաև ավելի քան 120 սմ երկարությամբ նետաձգության աղեղները, հրավառելիքը՝ ներառյալ հարվածային կապսուլները, որոնք հատուկ չեն նախագծվել խաղալիքների համար, սրածայր հրթիռներով արտադրանքները և խաղերը, ուսուցման համար նախատեսված ֆունկցիոնալ արտադրանքը, որոնք ունեն 24 վոլտից ավելի անվանական լարում և վաճառվում են բացառապես մեծահասակի հսկողությամբ ուսուցողական նպատակով օգտագործելու համար, ավագ հրահանգչի հսկողությամբ դպրոցներում և այլ կրթական հաստատություններում ուսուցման նպատակով նախատեսված արտադրանքը, էլեկտրական սարքավորումները, բացառությամբ այն էլեկտրական սարքավորումների, որոնք հատուկ նախագծված են երեխաների համար, ինչպիսիք են հատուկ նախագծված անհատական համակարգիչները, ստեղնաշարերը, ձեռքով ղեկավարելու սարքը (joystick), ղեկը, հանգստի և զվարճանքի համար նախատեսված ծրագրային միջոցները, ինչպիսիք են համակարգչային խաղերը և դրանց կրիչները, մանկական ծծակները, մանկական շարժական լուսատուները, խաղալիքների էլեկտրական տրանսֆորմատորները: 9. Խաղալիքները և դրանց մասերը, իսկ ֆիքսված խաղալիքների դեպքում՝ դրանց հենարանները պետք է ունենան անհրաժեշտ **ամրություն** և նպատակահարմարության դեպքում նաև կայունություն, որպեսզի առանց կոտրվելու կամ ձևախեղման ենթարկվելու դիմանան ծանրաբեռնվածությանը, որին դրանք ենթարկվում են օգտագործման ընթացքում՝ առաջացնելով **ֆիզիկական վնաս** պատճառելու ռիսկ: Խաղալիքների հասանելի եզրերը, ելուստները, քուղերը, մալուխները և ամրակցիչները պետք է նախագծվեն և արտադրվեն այնպես, որ դրանց հետ շփումից **ֆիզիկական վնասվածքների** առաջացման ռիսկը հնարավորինս նվազեցվի: Խաղալիքները պետք է նախագծվեն և արտադրվեն այնպես, որ դրանց **մասերի շարժումը** որևէ ռիսկ չներկայացնի կամ ներկայացնի միայն դրանց օգտագործմանը բնորոշ նվազագույն ռիսկ: Խաղալիքները և դրանց մասերը չպետք է ներկայացնեն **խեղդվելու**, այդ թվում՝ **շնչահեղձության** ռիսկ՝ բերանի և քթի օդի հոսքի արտաքին խոչընդոտով փակման արդյունքում, պետք է ունենան այնպիսի չափեր, որոնք բերանի կամ ըմպանի մեջ խրված կամ ստորին շնչուղիների մուտքի մոտ առարկաների հայտնվելու արդյունքում օդի հոսքի օբստրուկցիայի առաջացման հետևանքով շնչահեղձության ռիսկ չներկայացնեն: Այն խաղալիքները, որոնք հստակորեն նախատեսված են 36 ամսականից ցածր երեխաների կողմից օգտագործման համար, ինչպես նաև դրանց բաղադրիչ մասերը և ցանկացած առանձնացվող մաս, պետք է ունենան այնպիսի **չափեր**, որ կանխվի դրանց **կուլ տալը** կամ **ներշնչելը**: Դա նաև վերաբերում է այլ խաղալիքներին, դրանց բաղադրիչ մասերին և ցանկացած առանձնացվող մասի, որոնք նախատեսված են բերանը դնելու համար: **36 ամսականից ցածր երեխաների կողմից օգտագործման համար խաղալիքներում չի թույլատրվում** բնական մորթու, բնական կաշվի, ապակու, ճենապակու, խավով ռետինի, ստվարաթղթի, թղթի, առանց ներքին կազմի 3 մմ և դրանից ավելի փոքր չափսերի լցնված հատիկների, խոնավ միջավայրում 5 տոկոսից ավելին ավելացող չախմախների տիպի խաղալիքների լցնվածքների օգտագործումը: Մանրածախ վաճառքի համար նախատեսված խաղալիքների **փաթեթավորումը** չպետք է ներկայացնի շնչահեղձության ռիսկ, որն առաջանում է արտաքին խոչընդոտի պատճառով բերանի և քթի օդի հոսքի օբստրուկցիայի հետևանքով, Խաղալիքները, որոնք տեղադրվում են սննդի մեջ կամ միախառնված են սննդի հետ, պետք է իրենց փաթեթավորումն ունենան: Մատակարարման պահին փաթեթավորումը պետք է ունենա այնպիսի **չափեր**, որ կանխվի դրանց կուլ տալը և (կամ) ներս շնչելը: Խաղալիքի փաթեթավորումը, որը գնդաձև, ձվաձև կամ էլիպսաձև է, և դրա ցանկացած առանձնացվող մասերի կամ գլանաձև խաղալիքի կլորացված եզրերով փաթեթավորումը պետք է ունենա այնպիսի չափեր, որպեսզի կանխվի բերանի կամ ըմպանի մեջ խրված կամ ստորին շնչուղիների մուտքի մոտ փաթեթավորման հայտնվելու արդյունքում օդի հոսքի օբստրուկցիան: Արգելվում է օգտագործման պահին **սննդամթերքին ամուր կցված** այն խաղալիքների շուկայահանումը, որոնք ուղղակի հասանելի են դառնում սննդի ընդունման արդյունքում: **Ջրային խաղալիքները** պետք է նախագծվեն ու արտադրվեն այնպես, որ հնարավորինս նվազեցվի խաղալիքի լողունակության ու երեխային պահելու հնարավորության կորստի ռիսկը՝ հաշվի առնելով խաղալիքի օգտագործման ցուցումները: Այն խաղալիքները, որոնց մեջ հնարավոր է մտնել և որոնք փակ տարածք են հանդիսանում դրանք զբաղեցնողների համար, պետք է ունենան հնարավոր օգտագործողի կողմից ներսից հեշտությամբ բացվող ելքի միջոցներ: Օգտագործողներին **շարժունակություն ընձեռող խաղալիքները** պետք է հնարավորության սահմաններում ներառեն արգելակման համակարգ, որը պետք է հարմարեցված լինի խաղալիքի տեսակին և համազոր լինի դրանից անջատված կինետիկ էներգիային: Այս համակարգը պետք է հեշտությամբ գործի գցվի օգտագործողի կողմից առանց օգտագործողի դուրս նետվելու կամ օգտագործողի կամ երրորդ կողմի ֆիզիկական վնասվածք ստանալու ռիսկի: Վարելու համար նախատեսված էլեկտրական խաղալիքների նախագծային առավելագույն արագությունը պետք է սահմանափակվի այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի	ցանկացած նման **մշտադիտարկման** մասին: Խաղալիքի վրա արտադրողի կողմից պետք է նշված լինի իր կողմից արտադրված խաղալիքի տեսակը, խմբաքանակը, սերիական կամ մոդելի համարը կամ այլ տարրեր, որոնք խաղալիքի նույնականացման հնարավորություն են տալիս: Այն դեպքում, երբ խաղալիքի չափը կամ բնույթը դա թույլ չի տալիս, ապա պահանջվող **տեղեկատվությունը** պետք է տրված լինի խաղալիքի փաթեթվածքի վրա կամ դրան ուղեկցող փաստաթղթերում: (Կետ 4) Խաղալիքի վրա կամ, եթե դա հնարավոր չէ, դրա փաթեթվածքի կամ դրան ուղեկցող փաստաթղթի վրա պարտադիր պետք է նշված լինի արտադրողի կամ ներմուծողի անունը, գրանցված ֆիրմային անվանումը կամ ապրանքային նշանը և միայն մեկ հասցե, որով խաղալիքի հետ կապված հարցերով կարելի է արտադրողի հետ **կապ հաստատել**: Խաղալիքը պետք է ուղեկցվի արտադրողի կամ ներմուծողի կողմից **հայերենով գրված հրահանգներով** և **անվտանգության տեղեկատվությամբ**: Արտադրված և շուկայահանված խաղալիքի՝ ՀՀ օրենսդրությանը չհամապատասխանելու կասկածի դեպքում, խաղալիքը պարտադիր համապատասխանության է բերվում արտադրողի, ներմուծողի կամ դիստրիբյուտորի կողմից անհապաղ ձեռնարկվող անհրաժեշտ **ուղղիչ միջոցառումների** արդյունքում և, ըստ նպատակահարմարության, **շրջանառությունից հանվում** կամ **շուկայից հետ է կանչվում**: Խաղալիքի համապատասխանությունն ապացուցող բոլոր **տեղեկությունները** և **փաստաթղթերը**, իրավասու պետական մարմնի կողմից ներկայացրած հիմնավորված գրավոր դիմումի հիման վրա, վերջինիս հայերենով տրամադրվում են արտադրողի, ներմուծողի կամ դիստրիբյուտորի կողմից: Շուկայահանված խաղալիքներից առաջացած ռիսկերը վերացնելու ցանկացած գործողության հարցում արտադրողը, ներմուծողը և դիստրիբյուտորը պետք է համագործակցեն իրավասու պետական մարմնի հետ՝ վերջինիս դիմումի հիման վրա: Խաղալիքը շուկայահանվելուց հետո արտադրողը, ներմուծողը և դիստրիբյուտորը պարտավոր են շուկայահանման կամ մատակարարման օրվանից հետո **10 տարի պահպանել**	

		վնասվածքի ռիսկը: **Գնդակների** ձևն ու կազմությունը և կինետիկ էներգիան, որը կարող է անջատվել կրակելու նպատակով նախագծված խաղալիքից կրակելու ժամանակ, պետք է օգտագործողի կամ երրորդ անձի համար չներկայացնի ֆիզիկական վնասվածքի ռիսկ՝ հաշվի առնի խաղալիքի բնույթը: Խաղալիքը պետք է արտադրվի այնպես, որպեսզի ցանկացած հասանելի մակերեսներին դիպչելիս առավելագույն և նվազագույն **ջերմաստիճանը վնասվածք չի պատճառ**ի, իսկ խաղալիքում պարունակվող հեղուկներն ու գազերը չպետք է հասնեն այնպիսի **ջերմաստիճանների կամ ճնշումների**, որոնք խաղալիքի պատշաճ աշխատելու հիմնական պատճառներից բացի այլ պատճառներով խաղալիքից անջատվելու դեպքում այրվածք կամ այլ ֆիզիկական վնասվածք պատճառեն: **Ձայն արձակելու** համար նախագծված խաղալիքները պետք է նախագծվեն և արտադրվեն այնպես, որ իմպուլսային աղմուկի ու շարունակական աղմուկի առավելագույն արժեքները չվնասեն երեխաների լսողությունը: **Ակտիվ հանգստի խաղալիքները** պետք է արտադրվեն այնպես, որ նվազեցվի մարմնի մասերի **ճզմվելու** կամ **կոտրվածք** առաջացնելու կամ հագուստի կառչելու և ընկնելու, հարվածի և ջրում խեղդվելու ռիսկը: Մեկ կամ մի քանի երեխաների խաղալու համար հասանելի այսպիսի խաղալիքի ցանկացած մակերես պետք է նախագծված լինի նրանց՝ **իր վրա կրելու** համար: 10. Երեխայի շրջակայքում առկա խաղալիքները չպետք է վտանգավոր **բոցավառվող** տարր հանդիսանան: Ուստի դրանք պետք է կազմված լինեն այնպիսի նյութերից, որոնք ուղղակիորեն բոցի կամ կայծի կամ կրակի այլ պոտենցիալ աղբյուրի ազդեցությանը ենթարկվելիս չեն այրվում, հեշտությամբ չեն բոցավառվում (բոցը մարում է կրակի պատճառի վերանալիս), բոցավառվելու դեպքում այրվում են դանդաղ և ունեն բոցի տարածման ցածր արագություն, անկախ խաղալիքի քիմիական կազմից՝ նախագծված են այնպես, որպեսզի մեխանիկորեն դանդաղեցնեն այրման գործընթացը: Այսպիսի դյուրավառ նյութերը չպետք է բոցավառման ռիսկ ներկայացնեն խաղալիքներում օգտագործված այլ նյութերի համար: Խաղալիքները, որոնք իրենց բնույթից ելնելով պարունակում են վերը նշված չափանիշները բավարարող քիմիական փոխարկումների նյութեր և սարքավորումներ, մոդելների հավաքման, պլաստիկ կամ կերամիկական ծեփագործության, էմալապատման, լուսանկարչական կամ նմանատիպ գործողությունների համար նախատեսված նյութեր կամ խառնուրդներ, չպետք է պարունակեն **ոչ դյուրավառ** ցնդող բաղադրիչների կորստի պատճառով դյուրավառ դարձող նյութեր կամ խառնուրդներ: **Հարվածային կապսուլից** տարբեր խաղալիքները չպետք է պայթյունավտանգ լինեն կամ պարունակեն տարրեր կամ նյութեր, որոնք կարող են պայթել համապատասխան եղանակով օգտագործվելու դեպքում: Խաղալիքները, մասնավորապես, քիմիական խաղերը և խաղալիքները, չպետք է պարունակեն նյութեր կամ խառնուրդներ, որոնք միախառնվելու դեպքում կարող են պայթել քիմիական ռեակցիայի կամ տաքացնելու արդյունքում, կարող են պայթել, երբ խառնվում են օքսիդացող նյութերի հետ, կամ՝ պարունակում են ցնդող բաղադրիչներ, որոնք դյուրավառ են օդում կամ կարող են առաջացնել դյուրավառ կամ պայթուցիկ գոլորշու/օդի խառնուրդ: 11. Խաղալիքները պետք է նախագծվեն և արտադրվեն այնպես, որ մարդու առողջության համար բացասական ազդեցության ռիսկեր չառաջացնեն այն **քիմիական նյութերի կամ խառնուրդների** պատճառով, որոնցից բաղկացած են խաղալիքները կամ որոնք պարունակվում են դրանցում նշված եղանակով օգտագործվելու դեպքում: Սահմանում է երեխաների առողջության պահպանության նպատակով խաղալիքների օգտագործման արդյունքում փոխանցվող կենսամատչելիությունը չգերազանցող նյութերի օրական սահմանաչափերը (ծարիր, մկնդեղ, բարիում, կադմիում, քրոմ, կապար, սնդիկ, սելեն): Խաղալիքը չպետք է պարունակի վտանգավոր նյութերի կամ խառնուրդների այնպիսի քանակներ, որոնք կարող են վտանգել այն օգտագործող երեխաների առողջությունը: Բոլոր դեպքերում խստորեն արգելվում է ցանկացած խաղալիքում օգտագործել վտանգավոր նյութեր կամ խառնուրդներ, եթե նախատեսվում է, որ խաղալիքի օգտագործման դեպքում այդ վտանգավոր նյութերը կամ խառնուրդներն օգտագործվելու են ինքնին: Այն դեպքերում, երբ սահմանափակ քանակությամբ վտանգավոր նյութերի կամ խառնուրդների օգտագործումն էական է կոնկրետ խաղալիքների աշխատանքի, մասնավորապես, քիմիական փոխարկումների համար օգտագործվող նյութերի կամ սարքավորումների, մոդելների հավաքման, պլաստիկ կամ կերամիկական ծեփագործության, էմալապատման, լուսանկարչական կամ նմանատիպ գործողությունների համար, ապա դրանց խտության թույլատրելի առավելագույն մակարդակը յուրաքանչյուր վտանգավոր նյութի կամ խառնուրդի համար պետք է սահմանված լինի Հայաստանի ազգային ստանդարտով: Նիտրոզամինները և նիտրոզացվող նյութերը պետք է արգելվեն 36 ամսականից ցածր երեխաների օգտագործման համար նախատեսված խաղալիքներում օգտագործվելու կամ այլ այնպիսի խաղալիքներում օգտագործվելու համար, որոնք նախատեսված են բերանում դնելու համար, եթե նյութերի միգրացիան հավասար է կամ բարձր է 0,05 մգ/կգ-ից՝ նիտրոզամինների համար և 1 մգ/կգ՝ նիտրոզացվող նյութերի համար: Խաղալիքները չպետք է պարունակեն սահմանված ալերգեն հոտավետ նյութերը, սակայն այդ հոտավետ նյութերի չնչին քանակության առկայությունը կարող է թույլատրվել, եթե դա տեխնիկապես անխուսափելի է պատշաճ արտադրական գործելակերպի կիրառման դեպքում և չի գերազանցում 100 մգ/կգ: Սահմանված ալերգեն հոտավետ նյութերի անունները պետք է նշվեն խաղալիքի, ամրակցված պիտակի, փաթեթավորման կամ ուղեկցող թերթիկի վրա, եթե այդպիսիք առկա են 100մգ/կգ համակցությունը գերազանցող խաղալիքներում ու նրա բաղադրիչներում: Խաղալիքների տեղափոխման և պահպանման ժամանակ չպետք է կիրառվեն բիոցիդ դիմեթիլֆումարատ պարունակող նյութեր: Արգելված հոտավետ նյութերի օգտագործումը կարող է թույլատրվել հոտառական խաղատախտակի խաղերում, կոսմետիկ հավաքածուներում և համային խաղերում, եթե՝ այդ հոտավետ նյութերը հստակ պիտակավորված են փաթեթավորման վրա և փաթեթավորումը կրում է սահմանված զգուշացումը, դրանք համապատասխանում են սննդի անվտանգության վերաբերյալ ՀՀ օրենսդրությանը: Նման հոտառական խաղատախտակները, կոսմետիկ պարագաները և համային խաղերը չեն կարող օգտագործվել մինչև 36 ամսական երեխաների կողմից: Խաղալիքներից կամ խաղալիքների բաղադրիչներից նյութերի տարաշարժի չափը չպետք է գերազանցի սահմանված արժեքները: Սահմանային արժեքները չեն կարող ավելացվել այն խաղալիքներին կամ խաղալիքների բաղադրիչներին, որոնք իրենց հասանելիության, գործառույթի, ծավալի կամ զանգվածի բերումով հստակորեն բացառում են ծծելու, լիզելու, կուլ տալու կամ մաշկի հետ երկարատև շփման հետ կապված ցանկացած վտանգ: 12. Խաղալիքները **չպետք է սնուցվեն 24 վոլտ անվանական լարումը գերազանցող էլեկտրական հաստատուն հոսանքով կամ հավասարազոր փոփոխական հոսանքով**, իսկ դրանց հասանելի մասերը չպետք է գերազանցեն 24 վոլտ հաստատուն կամ հավասարազոր փոփոխական լարումը: Ներքին լարումները չպետք է գերազանցեն 24 վոլտ հաստատուն կամ հավասարազոր փոփոխական լարումը, եթե չի երաշխավորվում, որ լարումը և առաջացած հոսանքի համակցությունը չեն հանգեցնի որևէ ռիսկի կամ վնասակար էլեկտրահարման նույնիսկ այն դեպքում, երբ խաղալիքը փչացել է: Էլեկտրահարում առաջացնելու ունակ էլեկտրականության աղբյուրին միացած կամ միացման ենթակա խաղալիքների այն մասերը, մալուխները կամ այլ հաղորդիչները,	նրա նմուշը, տեխնիկական փաստաթղթերը և համապատասխանության հայտարարագրի մեկ օրինակը: Նախքան խաղալիքի շուկայահանումը, **արտադրողը պարտավոր է կատարել խաղալիքի քիմիական, ֆիզիկական, մեխանիկական, էլեկտրական, դյուրավառության պահանջների և ռադիոակտիվության հնարավոր վտանգների վերլուծություն**, ինչպես նաև նմանատիպ վտանգների նկատմամբ պոտենցիալ **խոցելիության գնահատում**: (Կետ 16) Շուկայահանված խաղալիքների **համապատասխանության վերահսկողությունն** իրականացվում է օրենքով սահմանված կարգով: (Կետ 22) Խաղալիքի շուկայահանումը սահմանափակելու կամ արգելելու, շրջանառությունից հանելու կամ հետ կանչելու նպատակով իրականացվող ցանկացած միջոցառում պետք է հստակ հիմնավորվի: Համապատասխան շահագրգիռ կողմը պետք է անհապաղ տեղեկացվի ծ միջոցառման մասին այն իրականացնողի կողմից՝ միևնույն ժամանակ տեղեկացնելով նրան իրեն հասանելի փոխհատուցման և ժամանակային սահմանափակումների մասին: (Կետ 25) Տեխնիկական կանոնակարգի դրույթները խախտող տնտեսավարողը ենթարկվում է տույժերի և տուգանքների՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով: (Կետ 26) Սահմանում է **անհամապատասխանությունների վերացման** գործընթացը: (Կետ 24) Շուկայի վերահսկողության մարմնի պահանջի դեպքում նշանակված մարմինը պետք է տեղեկատվություն տրամադրի տվյալ խաղալիքի հետ առնչվող՝ իր կողմից տրված և անվավեր ճանաչված ցանկացած փաստաթղթի տրամադրման մերժման վերաբերյալ: Եթե շուկայի վերահսկողության մարմինը գտնում է, որ խաղալիքը չի համապատասխանում տեխնիկական կանոնակարգում նշված պահանջներին, ապա այն պետք է նշանակված մարմնից պահանջի անվավեր ճանաչել այդ խաղալիքի համար իր կողմից տրված փաստաթղթերը: Շուկայի վերահսկողության մարմնի պահանջի դեպքում, նշանակված մարմինը պետք է վերանայի տեխնիկական հսկողության սերտիֆիկատը: (Կետ 22) Այն դեպքում, երբ շուկայի վերահսկողություն իրականացնող մարմինն օրենքին համապատասխան գործողություն է իրականացնում կամ,	

		որոնց միջոցով էլեկտրականությունը փոխանցվում է այդ մասերին, պետք է պատշաճ կերպով մեկուսացվեն և մեխանիկորեն պաշտպանված լինեն, որպեսզի կանխեն էլեկտրահարման ռիսկը: Էլեկտրական խաղալիքները պետք է նախագծվեն ու արտադրվեն այնպես, որ երաշխավորվի այն պայմանը, համաձայն որի ուղղակիորեն հասանելի բոլոր մակերեսների հնարավոր առավելագույն ջերմաստիճանի դեպքում դրանց դիպչելիս այրվածքներ չառաջանան: Կանխատեսելի թերության պայմաններում խաղալիքները պետք է պաշտպանված լինեն էլեկտրական սնուցման աղբյուրից բխող էլեկտրական վտանգներից: Էլեկտրական խաղալիքները պետք է պատշաճ կերպով պաշտպանված լինեն հրդեհի առաջացման վտանգներից, պետք է նախագծվեն ու արտադրվեն այնպես, որ էլեկտրական, մագնիսական և էլեկտրամագնիսական դաշտերը և սարքավորումներից առաջացող այլ ճառագայթումները սահմանափակվեն խաղալիքի գործունեության համար անհրաժեշտ աստիճանով և պետք է գործեն համընդհանուր ընդունված ժամանակակից տեխնոլոգիաներին համապատասխան անվտանգության մակարդակի վրա: Էլեկտրոնային կառավարման համակարգ ունեցող խաղալիքները պետք է նախագծվեն ու արտադրվեն այնպես, որ խաղալիքն անվտանգ գործի նույնիսկ այն դեպքում, երբ էլեկտրական համակարգը սկսում է վատ աշխատել կամ փչանում է՝ այդ համակարգի խափանման կամ արտաքին գործոնի պատճառով: Խաղալիքները պետք է նախագծվեն ու արտադրվեն այնպես, որպեսզի որևէ վտանգ չներկայացնեն առողջությանը կամ լազերներից, լուսարձակող դիոդներից կամ ցանկացած այլ տեսակի ճառագայթումից աչքերի կամ մաշկի վնասվածքի ռիսկ չառաջացնեն: Խաղալիքի էլեկտրական փոխարկիչը չպետք է խաղալիքի անբաժանելի մասը լինի: Խաղալիքը պետք է համապատասխանի միջուկային անվտանգության մասին ՀՀ օրենսդրության պահանջներին: 13. **Օգտագործողի համար սահմանափակումները** պետք է ներառեն առնվազն օգտագործողի նվազագույն և առավելագույն տարիքը և, նպատակահարմարության դեպքում, օգտագործողի կարողությունները, առավելագույն և նվազագույն քաշը և խաղալիքը միայն չափահասների վերահսկողության ներքո օգտագործելու անհրաժեշտությունը: 14. Սահմանում է **օգտագործման ժամանակ ձեռնարկվող նախազգուշական գործողությունների մասին նշումները և հատուկ զգուշացումները**՝ խաղալիքների **առանձին տեսակների համար**, այդ թվում՝ խաղալիքներ, որոնք նախատեսված չեն մինչև 36 ամսական երեխաների կողմից օգտագործման համար, գործող խաղալիքներ, ֆունկցիոնալ խաղալիքներ, քիմիական խաղալիքներ, երեխաների համար չմուշկներ, անվաչմուշկներ, գլաչմուշկը (միագիծ անիվներով), սկուտերներ և խաղալիք հեծանիվներ, ջրային խաղալիքներ, սննդում պարունակվող խաղալիքներ, պաշտպանիչ դիմակների և սաղավարտների իմիտացիա/նմանակում, օրորոցի, մանկական մահճակալի կամ մանկասայլակի երկայնքով լարերի, պարանների, թոկերի կամ քուղերի միջոցով կապելու համար նախատեսված խաղալիքներ, հոտառական խաղատախտակի խաղերի, կոսմետիկ հավաքածուների և համային խաղերի հոտավետ նյութերի փաթեթավորում:	երբ առկա է հիմնավորված կասկած, որ այն խաղալիքը, որի վրա տարածվում է տեխնիկական կանոնակարգը, ռիսկ է ներկայացնում մարդկանց առողջությանը կամ անվտանգությանը, ապա նա պետք է տվյալ խաղալիքի գնահատում իրականացնի՝ հաշվի առնելով տեխնիկական կանոնակարգի բոլոր պահանջները: Եթե գնահատման ընթացքում շուկայի վերահսկողության մարմինը գտնում է, որ խաղալիքը չի համապատասխանում տեխնիկական կանոնակարգում նշված պահանջներին, ապա շուկայի վերահսկողության մարմինը, առանց հապաղման, հանձնարարում է համապատասխան տնտեսավարողին ձեռնարկել անհամապատասխանության վերացման համար անհրաժեշտ ուղղիչ գործողություններ, որոնք կարող են վերաբերել ինչպես խաղալիքի բնութագրերին, այնպես էլ դրա փաթեթավորմանը, պիտակավորմանը, մակնշմանը և շուկայահանման այլ պայմաններին: Տնտեսավարողը, համաձայն շուկայի վերահսկողության մարմնի կողմից տրված հանձնարարականի, պետք է ապահովի խաղալիքի համապատասխանությունը սահմանված պահանջներին և, ռիսկի բնույթին համաչափ, խաղալիքը շրջանառությունից հանի կամ էլ ողջամիտ ժամկետներում հետ կանչի: Շուկայի վերահսկողության մարմինն այդ գործողությունների մասին պետք է տեղեկացնի համապատասխան նշանակված մարմնին: (Կետ 23) Համապատասխան տնտեսավարողը գրավոր ձևով պետք է երաշխավորի, որ իր կողմից շուկայահանված խաղալիքի նկատմամբ ձեռնարկված ուղղիչ գործողությունների արդյունքում, որոնք կարող են վերաբերել ինչպես խաղալիքի բնութագրերին, այնպես էլ դրա փաթեթավորմանը, պիտակավորմանը, մակնշմանը և շուկայահանման այլ պայմաններին, դրա անհամապատասխանությունը վերացվել է: Եթե տնտեսավարողն անհրաժեշտ ուղղիչ քայլեր չի ձեռնարկում նշված ժամկետում, շուկայի վերահսկողության մարմինը համապատասխան նախնական միջոցառումներ պետք է ձեռնարկի խաղալիքը շուկայում հասանելի դարձնելն արգելելու կամ սահմանափակելու կամ շրջանառությունից հանելու կամ հետ կանչելու նպատակով: Տեղեկատվությունը պետք է ներառի բոլոր առկա մանրամասները, մասնավորապես, անհրաժեշտ տվյալներ չհամապատասխանող խաղալիքի նույնականացման, ծագման,	

			հայտարարված անհամապատասխանության բնույթի և առկա ռիսկի, շուկայի վերահսկողության կողմից ձեռնարկված միջոցառումների բնույթի ու տևողության, ինչպես նաև համապատասխան տնտեսավարողի կողմից առաջ քաշված փաստարկների վերաբերյալ: Եթե անհամապատասխանությունը դեռևս առկա է, ապա շուկայի վերահսկողության մարմինը պետք է իրականացնի համապատասխան միջոցառումներ՝ խաղալիքի շուկայահանումը կանխելու կամ արգելելու կամ հետ կանչելու կամ շրջանառությունից հանելու համար: (Կետ 23)	
140.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 318-Ն, ընդունված է՝ 04.03.2004, ուժի մեջ է՝ 08.04.2004* *Նաև՝* **«ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1515-Ն, ընդունված է՝ 26.12.2013, ուժի մեջ է՝ 30.01.2014* Սահմանում է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման ծրագրերի ֆինանսավորումն իրականացնող մարմինները, բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային ու արտահիվանդանոցային, հանրային առողջապահական և առողջապահական հարակից ծառայությունների նորմատիվների, ինչպես նաև միջինացված և տարբերակված գների՝ ըստ բժշկական օգնության և ծառայությունների առանձին տեսակների, հաստատման կարգը, պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային ու արտահիվանդանոցային,	1. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերին համապատասխան՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: (Կետ 1) 2. **Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում** ներառված են. վերարտադրության տարիքի կանայք՝ հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանում, մինչև 7 տարեկան երեխաները, հաշմանդամություն ունեցող երեխաները՝ մինչև 18 տարեկան, Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները՝ մինչև 18 տարեկան, և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք՝ 18-23 տարեկան, մինչև 8 տարեկան և 12 տարեկան երեխաները՝ մասնագիտացված ստոմատոլոգիական բժշկական օգնության մասով, հաշմանդամություն ունեցող անձանցից բաղկացած ընտանիքների երեխաները՝ մինչև 18 տարեկան, Բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաները, Մինչև 18 տարեկան՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաները, միածնող երեխաները՝ մինչև 18 տարեկան, 14-15 տարեկան արական սեռի, նախազորակոչային և զորակոչային տարիքի անձինք (հիվանդանոցային բժշկական օգնություն, իսկ զորակոչային տարիքի անձանց՝ նաև հիվանդանոցային փորձաքննություն), մանկատներում և անօթևանների ժամանակավոր կացարաններում խնամվող անձինք: (Հավելված 1) 3. Առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում բնակչությանը հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում է տրամադրվում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով: Պետության կողմից երաշխավորված **անվճար բժշկական օգնության և սպասարկման տեսակները** ներառում են հետևյալը. բնակչության բոլոր խմբերին անվճար տրամադրվում են հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման հետևյալ տեսակները և ծառայությունները՝ ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանված հիվանդությունների և վիճակների ցանկի համաձայն, այդ թվում՝ զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ, ծննդօգնություն, 0-7 տարեկան երեխաների բժշկական օգնության ծառայություններ: (Հավելված 2) 4. Սահմանում է **արտահիվանդանոցային բուժօգնության ծրագրերի բյուջետային ծախսերի հաշվարկման սկզբունքները**, այդ թվում՝ բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայությունների համար բյուջետային ծախսերի հաշվարկը՝ գրանցված 0-18 տարեկան երեխաների համար, մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ ծրագիր, զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բուժման ծառայությունների, ինչպես նաև ստոմատոլոգիական բժշկական օգնության բյուջետային ծախսերի հաշվարկման կարգը, այդ թվում՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերի ցանկում ընդգրկված՝ գրանցված 0-18 տարեկան երեխաների համար: (Հավելված 2) 5. 2014 թվականի հունվարի 1-ից՝ մի շարք ծրագրերով, այդ թվում՝ «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով **կազմակերպությունների տարեկան պայմանագրային գումարները որոշվում են** ելնելով ըստ ծրագրերի տարածաշրջանային համահարթեցման սկզբունքից, ընդ որում, նշված ծրագրերով հիվանդանոցային ընդհանուր դեպքերի բաշխումը՝ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի միջև կատարվում է նախարարի կողմից: (Հավելված 2) 6. Սահմանում է **բուժօգնության պայմանագրային գումարները** որոշման կարգը՝ «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի և հղիության ախտաբանական ընթացքի հետ կապված օգնության համար: «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» և «Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» (երեխաների մասով) ծրագրերի ընդհանուր գումարների շրջանակներում պատվիրատուն սահմանված կարգով փաստացի կատարված աշխատանքների չափով նշված ծրագրերում կատարում է միջծրագրային վերաբաշխումներ: Սահմանում է մանկաբարձագինեկոլոգիական (հղիների նախածննդյան և հետծննդյան հսկողության ու 18 տարեկան և ավելի բարձր տարիքի (ներառյալ 15 տարեկան իգական սեռի անձինք) անձանց գինեկոլոգիական) արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման պայմանագրային գումարների որոշման հիմնական սկզբունքները: Սահմանում է «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծառայություններ» ծրագրի մասով արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման պայմանագրային գումարների որոշման հիմնական սկզբունքները, այդ թվում՝ նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց, ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության կողմից գրանցված 0-18 տարեկան երեխաների, համար,	Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային ու արտահիվանդանոցային, հանրային առողջապահական և առողջապահական հարակից ծառայությունների դիմաց փոխհատուցված միջոցների նպատակային օգտագործման ու բժշկական օգնության որակի նկատմամբ **հսկողությունն** իրականացնում է **ՀՀ առողջապահության նախարարությունը**, իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում մատուցվող բժշկական օգնության տրամադրման նկատմամբ **հսկողությունը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:** (Կետ 2) Տարածաշրջանային համահարթեցման ապահովման նպատակով Երևան քաղաքի և ՀՀ մարզերի կազմակերպությունների պայմանագրային գումարները հաշվարկվում են ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ ԱՎԾ կողմից **մարզերի և կազմակերպությունների սպասարկման տարածքների վերաբերյալ տրամադրված ցուցանիշների** հիման վրա, մասնավորապես, «Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր՝ վերարտադրողական տարիքի (15 տարեկան և ավելի բարձր) իգական սեռի անձանց թվաքանակը, «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր՝ մինչև 18 տարեկան երեխաների թվաքանակը, «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ», «Զորակոչային և նախազորակոչային	• Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման ծրագրերի **ֆինանսավորումն իրականացնում** են «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված **մարմինները**: (Կետ 2) • Բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային ու արտահիվանդանոցային, հանրային առողջապահական և առողջապահական հարակից ծառայությունների նորմատիվները, ինչպես նաև միջինացված և տարբերակված (ըստ տարածաշրջանների) գները՝ ըստ բժշկական օգնության և ծառայությունների առանձին տեսակների, հաստատում է **ՀՀ առողջապահության նախարարը**՝ համաձայնեցնելով **ՀՀ ֆինանսների նախարարի**, իսկ **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության** միջոցով ֆինանսավորվող՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իրականացվող բժշկական օգնության մասով՝ նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հետ: (Կետ 2) • Կազմակերպությունները բժշկական **օգնության և սպասարկման աշխատանքները** կատարում են պատվիրատուի կողմից սահմանված պայմանագրային գումարի **ամսական համամասնությունների** չափով: Ընդ որում, ամսական համամասնությունները սահմանվում են՝ հաշվի առնելով կազմակերպությունների կողմից ներկայացվող առաջարկությունները:

	հանրային առողջապահական և առողջապահական հարակից ծառայությունների դիմաց փոխհատուցված միջոցների նպատակային օգտագործման ու բժշկական օգնության որակի և ՀՀ ԱՍՀՆ միջոցով ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում մատուցվող բժշկական օգնության տրամադրման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինները, արգելում է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ու պետական պատվեր տեղադրող մարմինների միջև բժշկական օգնության և սպասարկման աշխատանքների մասին կնքված պայմանագրերի շրջանակներում ՀՀ նկատմամբ ձեռք բերված իրենց պահանջի իրավունքի զիջումն այլ անձանց՝ առանց պարտապանի համաձայնության, սահմանում է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների տարեկան պայմանագրային գումարների կամ տարվա ընթացքում դրանցում կատարվող փոփոխությունների հաստատման կարգը, ՀՀ մարզերի բժշկական կազմակերպություններ ժամանակավոր ուղեգրված բժիշկ-մասնագետների կողմից իրականացված բժշկական օգնության դիմաց փոխհատուցման կարգը, պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում չընդգրկված նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տեսակները և կազմակերպման կարգը սահմանող մարմինը, հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական	մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության մասով՝ հղիների և 15 տարեկան աղջիկների համար: Սահմանում է «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի մասով **արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման պայմանագրային գումարների որոշման հիմնական սկզբունքները**: Սահմանում է արտահիվանդանոցային բուժօգնության **ֆինանսավորման կարգը**, այդ թվում՝ գինեկոլոգիական բուժօգնության, հղիների նախածննդյան և հետծննդյան հսկողության, երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայությունների, զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բուժման ծառայությունների և ուղեգրման համար ճանապարհածախսի մասով: (Հավելված 2) 7. **Համավճարը** տարածվում է ՀՀ պետական բյուջեի մի շարք ծրագրերի, այդ թվում՝ «Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ», «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ», «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվող հղիների ախտաբանական ծառայությունների շրջանակներում փոխհատուցման ենթակա՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված հիվանդությունների, վիճակների և հետազոտությունների վրա: Համավճարը չի կիրառվում անվճար բժշկական օգնության և սպասարկման ուղեգրված անձանց վրա և պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) հետևյալ խմբերի վրա, այդ թվում՝ մինչև 18 տարեկան երեխաներ և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք (18-23 տարեկան), նախազորակոչային և զորակոչային տարիքի անձինք (հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում, իսկ զորակոչային տարիքի անձանց, այդ թվում՝ նաև հիվանդանոցային փորձաքննություն), ինչպես նաև խաղաղ ժամանակ վարժական հավաքների ու զորախաղերի կանչված զինապարտները՝ ամբուլատոր և հիվանդանոցային, մանկատներում և անօթևանների ժամանակավոր կացարաններում խնամվող անձինք: (Հավելված 3) 8. Սահմանում է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման նպատակով **բնակչության հերթագրման կարգը**: Պայմանագրային գումարի ամսական համամասնության սպառման դեպքում բժշկական կազմակերպությունը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնում է հերթագրման եղանակով՝ բացառությամբ, առանձին ծառայությունների, այդ թվում՝ նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում՝ փորձաքննության և ծննդօգնության: (Հավելված 4) 9. **Սրտի անվճար վիրահատությունից** օգտվելու իրավունք ունեն, մասնավորապես, մինչև 7 տարեկան երեխաները, պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված 7-18 տարեկան երեխաները: Սրտի վիրահատության անվճար իրականացումը կարող է **մերժվել**, եթե, մասնավորապես, բացակայում են սրտի վիրահատության բժշկական ցուցումները կամ սպառվել են պետական պատվերով նախատեսված միջոցները: (Հավելված 5)	տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ», «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» և «Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերով կազմակերպությունների պայմանագրային գումարները որոշվում են նախորդ տարում փաստացի ֆինանսավորված գումարի, գների ավելացման և դեպքերի ավելացման նպատակով նախատեսված գումարի համամասնությամբ: (Հավելված 2) Կազմակերպություններն անվճար կամ արտոնյալ պայմաններով հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում իրականացված աշխատանքների մասին պատվիրատուին ներկայացնում են **ամսական էլեկտրոնային հաշվետվություններ**, որոնց ձևերը հաստատվում են ՀՀ առողջապահության նախարարի կողմից, իսկ հաշվետվությունները ներկայացնելու կարգը և ժամկետները սահմանվում են պատվիրատուի և կազմակերպությունների միջև կնքվող «Պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մատուցման մասին» պայմանագրերով: Կազմակերպությունները պատվիրատուին են ներկայացնում նաև ՀՀ կառավարության որոշումներով կամ այլ իրավական ակտերով սահմանված **հաշվետվություններ**: Պատվիրատուին ներկայացվող ամսական հաշվետվություններում ներառվում են կատարված փաստացի աշխատանքների ծավալները, սակայն ոչ ավելի, քան պայմանագրով նախատեսված ամսական համամասնությունների գումարը: (Հավելված 2) Կազմակերպությունները պատվիրատուին սահմանված կարգով ներկայացնում են **տեղեկատվություն** պայմանագրային գումարի ամսական համամասնությունները գերազանցած և սահմանված կարգով հերթագրման ոչ ենթակա, հաշվետվություններում չներառված և ֆինանսավորման չներկայացված բժշկական օգնության դեպքերի և գումարի մասին, որի համար պատվիրատուն կատարում է հաշվառում: Կատարված աշխատանքների վերաբերյալ պատվիրատուին ներկայացվող ամսական հաշվետվություններում ներառվում են պայմանագրում	(Հավելված 2)

	օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկը, պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորման և կազմակերպման կարգերը, օգնության և սպասարկման նպատակով բնակչության հերթագրման կարգը, պետության կողմից երաշխավորված անվճար սրտային վիրաբուժության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բնակչության խմբերի ցանկը և այդ ցանկում ընդգրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը, ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին բժշկական սարքավորումների և գործիքների կենտրոնացված կարգով ձեռքբերման ու բաշխման կարգը, քաղաքացիներին պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար բժշկական կազմակերպություններ ուղեգրելուն ներկայացվող հիմնական պահանջները և ուղեգրող բժշկական կազմակերպություններին ու մարմիններին ուղեգրերի ձևաթղթեր հատկացնելու կարգը, հանձնարարականներ է տալիս ՀՀ առողջապահության նախարարին:		նախատեսված հաշվետու տարվա ընթացքում իրականացված բժշկական օգնության և սպասարկման ծավալները: (Հավելված 2) Կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացված ամսական **հաշվետվությունները վերահսկվում** են պատվիրատուի կողմից: Վերահսկողությունը կատարվում է հաշվետվությունը ներկայացնելու պահին՝ համակարգչային ծրագրի և հաշվետվությունն ընդունող մասնագետի կողմից, ներկայացված **հաշվետվություններում ուսումնասիրությունների ու մոնիթորինգի և** կազմակերպություններում **փաստաթղթային ստուգումների** միջոցով: ՀՀ առողջապահության նախարարը սահմանում է ստուգման յուրաքանչյուր փուլում պարտադիր հսկման ենթակա հաշվետվությունների տվյալների ցանկը և հսկման ենթակա հաշվետվությունների ընտրության կարգը: (Հավելված 2) Կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպությունների կողմից պատվիրատուին ներկայացված **հաշվետվությունների ստուգման կարգն ու պայմանները** սահմանում է ՀՀ առողջապահության նախարարը: (Հավելված 2)	
141.	**«ՀՀ կարիքների համար ինսուլին լիզպրո 100 մմ/մլ և ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) 100 մմ/մլ դեղերի գնման 2015-2019 թվականների գործընթացը կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 792-Ն, ընդունված է՝ 16.07.2015, ուժի մեջ է՝ 30.07.2015* Սահմանում է ՀՀ 2015-2019 թվականների կարիքների համար ՀՀ առողջապահության նախարարության կողմից ամերիկյան «Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերության	1. ՀՀ առողջապահության նախարարություն է ներկայացվել ՀՀ-ում **շաքարային դիաբետով տառապող երեխաների ու երիտասարդների համար հնգամյա ծրագիր** իրականացնելու վերաբերյալ առաջարկ, որտեղ, բացի ապրանքային գնային իջեցված առաջարկներից, հաշվի առած հետագա բանակցությունների արդյունքները, նշված է նաև 5 տարվա ընթացքում իրականացվող ծրագրային ներդրումների վերաբերյալ առաջարկ:		• ՀՀ առողջապահության նախարարություն

	արտադրության ինսուլին լիզպրո 100 ՄՄ/մլ և ինսուլին մարդու իզոֆան (ռեկոմբինանտ) 100 ՄՄ/մլ դեղերի գնումների աղբյուրը, հաստատում է այդ դեղերի ձեռքբերման ընթացակարգային արձանագրությունը և գները, հավանություն է տալիս ՀՀ առողջապահության նախարարության, «Էլայ Լիլլի և Քամփնի» ընկերության և «Հաղթենք դիաբետը միասին» ՀԿ միջև համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրի նախագծին և անհատույց տրամադրվող բժշկական նշանակության ապրանքների (գրիչ-ներարկիչներ, ասեղներ, գլիկոլիզացված հեմոգլոբինի սարքեր և դրանց թեստերը) տպագիր նյութերի և աշխատանքների ցանկին, հանձնարարական է տալիս ՀՀ առողջապահության նախարարին:			
142.	**«Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 670-Ն, ընդունված է՝ 05.05.2011, ուժի մեջ է՝ 09.06.2011* Հաստատում է կենսաթոշակ վճարելու կարգը, լիազոր մարմնի և բանկի միջև կնքվող՝ կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման, լիազոր մարմնի և վճարահաշվարկային կազմակերպության միջև կնքվող՝ կենսաթոշակները կանխիկ եղանակով վճարելու ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը, սահմանում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքող լիազոր մարմինը (ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն), լիազոր մարմնի կողմից նշանակվող դրամական վճարների գումարների վճարման կարգը, ՀՀ ՊՆ համակարգի կենսաթոշակառուի կենսաթոշակի կանխիկ եղանակով վճարման կարգը՝ ՀՀ	1. Կարգավորում է ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության միջոցով վճարվող կենսաթոշակը, կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստը և կենսաթոշակառուի մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի, պատվովճարի, ամենամսյա պարգևավճարի, ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի և սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների գումարները վճարելուն առնչվող հարաբերությունները, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: (Հավելված 1) 2. Կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար անչափահասի օրինական ներկայացուցիչն այցելում է բանկ և իր անվամբ բացում բանկային հաշիվ: Կենսաթոշակառուի պահանջով նրան տրամադրվում է բանկային հաշվի համարը հավաստող տեղեկանք՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանմանը ներկայացնելու համար: Տեղեկանքում նշվում է կենսաթոշակառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթուղթը, բանկային հաշվի բացման ամսաթիվը և բանկային հաշվի համարը: (Հավելված 1)		• ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն

	տարածքային զինվորական կոմիսարիատների միջոցով, մի շարք պետական մարմինների համակարգերի կենսաթոշակառուների կենսաթոշակի անկանխիկ եղանակով վճարման կարգը, հանձնարարականներ է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին, ՀՀ արդարադատության նախարարին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետին, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետին: *Նաև՝* «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1130-Ն, ընդունված է՝ 01.10.2015, ուժի մեջ է՝ 22.10.2015*			
143.	**«Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1078-Ն, ընդունված է՝ 10.09.2015, ուժի մեջ է՝ 10.10.2015* Հաստատում է սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը, սահմանում է 2017թ. հունվարի 1-ից սոցիալական ծառայություններ տրամադրող՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունների՝ պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերում ընդգրկվելու և (կամ) ՀՀ ԱՍՀՆ հետ համագործակցության շրջանակներում՝ սոցիալական ոլորտում իրականացվող ծրագրերին մասնակցելու հավաստագրման պայմանը, հանձնարարական է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին:	1. 2017 թվականի հունվարի 1-ից որոշման հավելվածի 4-րդ կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունները պետական աջակցությամբ իրականացվող ծրագրերում կարող են ընդգրկվել և (կամ) սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ համագործակցության շրջանակներում՝ սոցիալական ոլորտում իրականացվող ծրագրերին մասնակցել միայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում նշված՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնում հավաստագրելու դեպքում: (Կետ 2) 2. Սահմանում է սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության **հավաստագրման դեպքերը**, հավաստագրման համար պահանջվող **փաստաթղթերը** և **պայմանները**, կարգավորվում են սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման և սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրի տրամադրման հետ կապված այլ հարաբերություններ: (Հավելված 1) 3. Հավաստագրվել կարող է երեխաների (այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների) խնամքը՝ տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում, բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններում, բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություններում, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում: Հավաստագրվել կարող է նաև որպես ժամանակավոր օթևան կացարանով ապահովելը՝ որոշակի բնակության վայր չունեցող անձանց, ընտանեկան բռնության ենթարկված անձանց: (Հավելված 1) 4. Հավաստագրվում են այն կազմակերպությունները, որոնք **ապահովում են տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության համար անհրաժեշտ**՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմանները, տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու համար նախատեսված տարածքի ընդհանուր և բնակելի մակերեսին, անձնակազմին (աշխատողների թվին և հաստիքներին), նրանց աշխատանքային պայմաններին, միաժամանակյա խնամք ստացողների (բնակվողների) առավելագույն թվին, նրանց տրամադրվող սննդի չափաքանակին, դրա էներգետիկ արժեքին, հագուստի, սպիտակեղենի, կոշկեղենի, անկողնային և անձնական հիգիենայի պարագաների չափորոշիչներին, անվտանգության ապահովմանը և այլ **պայմաններին ներկայացվող պահանջները**: (Հավելված 1) 5. **Երեխաներին խնամք տրամադրելու գործունեությունը** հավաստագրելու համար դիմած կազմակերպությունները, վերը նշված ընդհանուր պարտադիր պահանջներից բացի, տվյալ սոցիալական ծառայությունը տրամադրելու համար նախատեսված տարածքում պետք է ունենան դասապատրաստման և խմբային աշխատանքների համար նախատեսված սենյակներ, երեխաների տարիքային խմբերի առանձնահատկություններին համապատասխանող անվտանգ և բարեկարգ խաղահրապարակներ և խաղասենյակներ, ինչպես նաև ապահովեն երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները: (Հավելված 1) 6. Որպես **ժամանակավոր օթևան կացարանով ապահովելու գործունեությունը** հավաստագրելու համար դիմած կազմակերպությունները, բացառապես երեխաների համար նախատեսված կացարան ունենալու դեպքում, վերը նշված ընդհանուր պարտադիր պայմաններից բացի, տվյալ կացարանում պետք է ապահովեն նաև երեխայի խնամքի և դաստիարակության համար	Հանձնաժողովի նախագահին նշանակում է լիազորած մարմնի ղեկավարը՝ հանձնաժողովի կազմից: (Հավելված 1) Լիազորած մարմնի ղեկավարի կողմից ընդունված անհատական իրավական ակտն ընդունելուց հետո եռօրյա ժամկետում առձեռն հանձնվում է հայտատուին կամ հայտատուի տրամադրած (նշած) գտնվելու վայր է ուղարկվում փոստային կապի միջոցով: Անհատական իրավական ակտում, ի թիվս այլ տեղեկությունների, պետք է նշվեն՝ ընդունման հիմնավորումը՝ այն փաստական և իրավական հիմքերը, որոնցով լիազորած մարմինը հանգել է հետևությունների, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը հավաստագրելու կամ հավաստագրումը մերժելու կամ որոշակի սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը հավաստագրելու, իսկ որոշ սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրումը մերժելու մասին, սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը վերապահումով հավաստագրելու մասին, ինչպես նաև հայտատուի կողմից թերությունները վերացնելու և սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը հավաստագրված համարելու ժամկետները, դրանք չվերացնելու	• Սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների գործունեության հավաստագրումն իրականացնում է սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (**ՀՀ ԱՍՀՆ**): (Հավելված 1) • Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման գործընթացը կազմակերպելու, հավաստագրման և հավաստագրումը մերժելու մասին եզրակացությունների տրամադրման նպատակով ստեղծվում է առնվազն հինգ անդամներից կազմված հավաստագրման հանձնաժողով, որի կազմը և աշխատակարգը հաստատվում է լիազորած մարմնի ղեկավարի հրամանով: (Հավելված 1) • **Հանձնաժողովն իրականացնում է** հայտերի և դրանց կից ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև դրանցում ներառված տեղեկությունների փոփոխման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը, կարող է այցելել հավաստագրման ենթակա սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության համար նախատեսված տարածքներ՝ տվյալ գործունեության համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ պայմաններին տեղում

		անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները: (Հավելված 1) 7. Հավաստագիրը տրվում է հինգ տարի ժամկետով: Այն չի կարող օտարվել, գրավադրվել կամ որևէ այլ կերպ փոխանցվել այլ անձի: (Հավելված 1)	հետևանքը: (Հավելված 1) Հավաստագրված կազմակերպությունների անվանումները և նրանց կողմից հավաստագրված՝ սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության վերաբերյալ տվյալները հրապարակվում են լիազորած մարմնի պաշտոնական կայքում՝ հավաստագրի տրամադրումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: (Հավելված 1) Լիազորած մարմինը վարում է հավաստագրերի գրանցամատյան: Հավաստագրված յուրաքանչյուր կազմակերպության համար լիազորած մարմնում կազմվում է անհատական գործ, որում ներառվում են տվյալ կազմակերպության կողմից հավաստագրման համար ներկայացված բոլոր փաստաթղթերը, դրանցում ներառված տեղեկություններում կատարված փոփոխություններին վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաև Հավաստագրի պատճենը: Հավաստագրված կազմակերպության անհատական գործը ենթակա է պահպանման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: (Հավելված 1) Հավաստագրում չնշված վայրում (հասցեում), իսկ տնային պայմաններում խնամք տրամադրելու դեպքում՝ հավաստագրում չնշված սպասարկման տարածքում սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեություն իրականացնելը համարվում է առանց հավաստագրման սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության իրականացում: (Հավելված 1) Հավաստագրված կազմակերպությունները «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում և կարգով լիազորած մարմնին են ներկայացնում հավաստագրված սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության վերաբերյալ տեղեկատվություն: (Հավելված 1)	ծանոթանալու նպատակով, ընդունում և լիազորած մարմնի ղեկավարին է ներկայացնում եզրակացություններ, սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը վերապահումով հավաստագրվելու դեպքում լիազորած մարմնի ղեկավարին գրավոր տեղեկացնում է հայտատուի կողմից՝ թերությունները վերացնելու մասին՝ դրանք վերացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, կամ թերությունները չվերացնելու մասին՝ կարգի 23-րդ կետով սահմանված մեկամսյա ժամկետն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (Հավելված 1)
144.	**«Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1044-Ն, ընդունված է՝ 10.09.2015, ուժի մեջ է՝ 24.09.2015* Սահմանում է միջգերատեսչական	1. Կարգավորում է սոցիալական աջակցության տրամադրման գործընթացում համագործակցության կողմերի, համագործակցության շրջանակներում կողմերի իրավունքների ու պարտականությունների, միջգերատեսչական համագործակցության ձևերի ու կարգի, համագործակցող կողմերի միջև փոխանակվող տեղեկությունների ծավալի, ժամկետի և ձևի մասին պահանջների, խնդրահարույց այն դեպքերի, որոնք կարող են նախանշել անձի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված լինելը կամ հայտնվելու հնարավորությունը, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգի հետ կապված հարաբերությունները: (Կետ 1) 2. Կանոնակարգի **նպատակը** սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց (ընտանիքների) հայտնաբերումն է, անհատական սոցիալական ծրագրերի կազմումն ու դրա իրականացումը և շարունակական հսկողության ապահովումը: (Կետ 2) 3. **Խնդրահարույց են համարվում** կյանքի դժվարին այն իրավիճակները, որոնց պայմաններում հայտնվելու հնարավորության կամ հայտնված անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատումը, դրանց համարժեք անհատական սոցիալական ծրագրի կազմումը և ծրագրի իրականացումը պահանջում են միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերի ցանկում ընդգրկված **մեկից ավելի կողմերի մասնակցություն**: (Կետ 4)	Տեղեկատվական համագործակցությունն իրականացվում է համագործակցող կողմերում առկա այն տվյալների և փաստաթղթերի փոխանակմամբ, որոնք անհրաժեշտ են սոցիալական աջակցության կարիք ունեցող տվյալ անձին (ընտանիքին) տվյալ սոցիալական ծառայության տրամադրման համար: (Կետ 10) Սոցիալական ծառայությունների տրամադրման, այդ թվում՝ սոցիալական	• Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերն են. • ՀՀ ԱՍՀՆ-ն ի դեմս՝ սոցիալական ապահովության տարածքային կենտրոնների, զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, խնամք տրամադրող սոցիալական պաշտպանության հաստատությունների, կացարան

	սոցիալական համագործակցության կանոնակարգը, հանձնարարականներ է տալիս մի շարք պետական մարմինների ղեկավարներին:	4. **Հիմնական խնդրահարույց դեպքերը** ներառում են՝ **բնակության որոշակի վայր չունենա**լը և դրանով պայմանավորված սոցիալական բազմաբնույթ խնդիրների առկայությունը կամ դրանց առաջացման վտանգը, **երեխայի հանրակրթությունից դուրս մնացած լինելու** հանգամանքը կամ դրա առաջացման վտանգը, **երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնացած լինելու** հանգամանքը կամ դրա առաջացման վտանգը, **երեխայի հակասոցիալական վարքի** դրսևորումը կամ դրա առաջացման վտանգը, **ընտանեկան բռնությունը** կամ դրա սպառնալիքը, **ընտանիքի աղքատությունը** կամ դրա առաջացման վտանգը, **անչափահասի աշխատանքային շահագործումը** կամ դրա սպառնալիքը, հաշմանդամություն ունեցող անձանց՝ **վերականգնողական ծառայություններ չստանալը**, **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վերականգնողական ծառայություններ չստանալը**, **խտրական վերաբերմունքի** արժանացած լինելը, **առողջության առաջնային պահպանման ծառայություններ** մատուցող հաստատություններում սպասարկումից դուրս մնացած լինելը, կողմնակի անձի մշտական խնամքի կարիք ունեցող անձի **խնամազուրկ** լինելու հանգամանքը կամ դրա առաջացման վտանգը, **հոգեկան առողջության խնդիրներ** ունեցող անձի մասնագիտական օգնության կարիք ունենալը, **ալկոհոլային խմիչքների** օգտագործումը չարաշահելու, **թմրամիջոցներ** և (կամ) **հոգեմետ** (հոգեներգործուն) նյութեր օգտագործելու հանգամանքը կամ դրա առաջացման վտանգը, **քրեակատարողական հիմնարկից վերադարձած** լինելը (մինչև 3 տարի) կամ **այլընտրանքային պատիժ** կրելը (ամբողջ ժամանակահատվածը և դրան հաջորդող 1 տարին), հասցեների ռեեստրում **չներառված վայրում անձի (ընտանիքի) բնակվելու** հանգամանքը, անձը հաստատող **փաստաթղթի բացակայությունը**: (Կետ 5) 5. Համագործակցող կողմերի պաշտոնատար անձինք խնդրահարույց դեպքերի հայտնաբերման դեպքում պարտավոր են եռօրյա ժամկետում, իսկ արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող դեպքերում անհապաղ դրա մասին տեղեկացնել (ծանուցել) խնդրահարույց դեպքի հայտնաբերման տարածքն սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին): (Կետ 7) 6. Սոցիալական ծառայությունները՝ սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային և սոցիալ-իրավական, քաղաքացիներին, այդ թվում՝ անչափահասների ծնողներին, խնամակալներին, հոգաբարձուներին, այլ օրինական ներկայացուցիչներին տրամադրվում է դրա անհրաժեշտության դեպքում: (Կետ 23)	դեպքի վարման շրջանակներում անհատական սոցիալական ծրագրերի իրականացման ժամանակ տեղեկատվական համագործակցությունը նախատեսում է հետևյալ տեղեկությունների տրամադրումը՝ համագործակցող կողմերի գտնվելու վայրը, կոնտակտային հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեները, սոցիալական ծառայություններ մատուցող մասնագետների տվյալները՝ ազգանունը, անունը, կոնտակտային հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեները, սոցիալական ծառայությունների տրամադրման պայմաններն ու կարգը՝ տվյալ մարմնում (կազմակերպությունում), սոցիալական աջակցության կարիք ունեցող անձի տվյալները՝ ազգանունը, անունը, հայրանունը, փաստացի բնակության (գտնվելու) վայրի և (կամ) բնակչության պետական ռեգիստրում հաշվառման հասցեները, սոցիալական աջակցության կարիք ունեցող անձի անհատական սոցիալական ծրագիրը, այլ տվյալներ (տվյալ աշխատողի իրավասությունների շրջանակներում), որոնք վերաբերում են սոցիալական աջակցության կարիք ունեցող անձին՝ համապատասխան սոցիալական ծառայությունը տրամադրելու համար: (Կետ 11) Եթե քաղաքացին դիմել է սոցիալական ծառայություն ստանալու համար, սակայն իր նախաձեռնությամբ չի ներկայացրել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը (տվյալները), ապա դիմումն ընդունող կողմը որոշում է ընդունում միջգերատեսչական հարցում կատարելու մասին: (Կետ 12) Միջգերատեսչական հարցումը կարող է կատարվել էլեկտրոնային փաստաթղթի ձևով կամ թղթային կրիչով՝ պահպանելով անձնական տվյալների պաշտպանության կանոնները: (Կետ 13) Միջգերատեսչական հարցման պատասխանը տրվում է հինգ աշխատանքային օրվա ընթացքում, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ: (Կետ 16) Տեղեկատվական համագործակցությունը համագործակցող կողմերի միջև կարող է իրականացվել ինչպես էլեկտրոնային ձևով, այնպես էլ՝ փաստաթղթերի և թղթային կրիչների վրա տեղեկատվության փոխանակման ձևով: (Կետ 21) Համագործակցող կողմերի միջև տեղեկությունների փոխանակումն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» և «Անձնական տվյալների	տրամադրող կազմակերպությունների: • ՀՀ ԿԳՆ-ն դեմս՝ հատուկ հանրակրթական դպրոցների, ավագ դպրոցների, հիմնական դպրոցների, մասնագիտացված դպրոցների, միջնակարգ դպրոցների, արտադպրոցական հաստատությունների, վարժարանների, կրթահամալիրների, նախնական մասնագիտական (արհեստագործական) պետական ուսումնական հաստատությունների, միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների, համալսարանների, ակադեմիաների, ինստիտուտների, կոնսերվատորիաների: • **ՀՀ առողջապահության նախարարությունն** ի դեմս՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացնող կազմակերպությունների՝ ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններ (առողջության առաջնային պահպանման գործառույթ իրականացնող կազմակերպություններ), մասնագիտացված բժշկական կազմակերպություններ (հիվանդանոցներ և դիսպանսերներ), մասնագիտացված ստոմատոլոգիական պոլիկլինիկական կազմակերպություններ, արտահիվանդանոցային շտապ բժշկական օգնության ծառայություն իրականացնող բժշկական կազմակերպություններ (կարող է լինել ինքնուրույն և հիվանդանոցային կազմակերպությունների կազմում), մարզպետարանի ենթակայության հիվանդանոցների, պոլիկլինիկաների, գյուղական ամբուլատորիաների և առողջության կենտրոնների, տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության՝ առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող հաստատությունների (պոլիկլինիկաներ, գյուղական ամբուլատորիաներ, առողջության կենտրոններ, բժշկական կենտրոններ) • ՀՀ ՏԿԱԻՆ-ն ի դեմս՝ միգրացիոն պետական ծառայության, փրկարար ծառայության ճգնաժամային ազգային կենտրոնի (վարչություն), «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի: • ՀՀ արդարադատության նախարարությունն ի դեմս՝ քրեակատարողական հիմնարկների, այլընտրանքային պատժի կատարման

			պաշտպանության մասին» ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն: (Կետ 22) Սոցիալական ծառայությունները, որոնք տրամադրվում են համագործակցող կողմի (կողմերի) կողմից, արտացոլվում են անձի (ընտանիքի) անհատական սոցիալական ծրագրում: (Կետ 24) Սոցիալական ծառայությունների տրամադրման ընթացքը, դրա արդյունքը, ընթացիկ մոնիթորինգային ցուցանիշներն արտացոլվում են անհատական սոցիալական ծրագրում, որը հասանելի է տվյալ անհատական սոցիալական ծրագրում ներգրավված համագործակցող կողմին (կողմերին): (Կետ 25) Միջգերատեսչական սոցիալական համագործակցության արդյունքների մշտադիտարկումը և գնահատումն իրականացվում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ բնակչության սոցիալական ծառայությունների տրամադրման օրենսդրության կիրարկման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով: (Կետ 27) Մշտադիտարկումը և գնահատումն իրականացնում են համագործակցող կողմերի ղեկավարները կամ նրանց լիազորած պաշտոնատար անձինք: (Կետ 28) Մշտադիտարկման հիմնական ցուցանիշներն են՝ խնդրահարույց դեպքի հայտնաբերման դեպքում միջգերատեսչական հարցում կատարելու, ինչպես նաև այն ստանալուց հետո պատասխանի տրամադրման ժամկետները, խնդրահարույց դեպքերի թիվը՝ ըստ կանոնակարգի 5-րդ կետով թվարկված և այլ դեպքերի, համապատասխան մասնագետի մասնակցությունը բազմամասնագիտական խմբի աշխատանքներին (դեպքերի թիվ), տարածքային (տեղական) մակարդակում ձևավորված՝ համակարգող և խորհրդատվական մարմինների, կնքված տարածքային (տեղական) համագործակցության մասին համաձայնագրերի թիվ: (Կետ 29) Միջգերատեսչական սոցիալական համագործակցության արդյունքների մշտադիտարկումն իրականացվում է նաև սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական միասնական համակարգի՝ սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգի միջոցով: (Կետ 31) Համագործակցող կողմերի ղեկավարներն ամփոփում են	բաժանմունքների, «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի: • ՀՀ մշակույթի նախարարությունն ի դեմս՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, մասնագիտացված դպրոցների: • ՀՀ ՊՆ-ն ի դեմս՝ ՀՀ ՊՆ զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության, տարածքային զինվորական կոմիսարիատների: • ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարությունն ի դեմս՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, արտադպրոցական հաստատությունների (մարզադպրոցների): • ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունն ի դեմս՝ համայնքային ոստիկանության ստորաբաժանումների, անչափահասների գործերով ստորաբաժանումների, բնակչության տեղական ռեգիստրը վարող տարածքային ստորաբաժանումների, ոստիկանության ուսումնական հաստատության: • ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունն ի դեմս՝ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների: • ՀՀ մարզպետարաններն ի դեմս՝ աշխատակազմերի կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների, տարրական դպրոցների, միջնակարգ դպրոցների, հատուկ հանրակրթական դպրոցների, հիմնական դպրոցների, վարժարանների, արտադպրոցական հաստատությունների. • ՏԻՄ-երն ի դեմս՝ աշխատակազմի, Երևանում՝ նաև վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի, կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային բաժինների, քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժինների, խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների, նախադպրոցական հաստատությունների, արտադպրոցական հաստատությունների, Երևանում՝ հիմնական, ավագ և հատուկ

			մշտադիտարկման արդյունքները և մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը ներկայացնում սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած մարմին: (Կետ 32) Միջգերատեսչական սոցիալական համագործակցության արդյունքները գնահատվում են սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած մարմնի կողմից՝ հաշվի առնելով համագործակցող կողմերի մշտադիտարկման ամփոփված արդյունքները, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 1-ը: Գնահատման արդյունքները ներկայացվում են ՀՀ կառավարություն՝ մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 30-ը:	դպրոցների: (Կետ 3) • Համագործակցությունն իրականացվում է հետևյալ ձևերով. տեղեկատվական համագործակցություն, վարչական-կազմակերպական համագործակցություն, համակարգող և խորհրդատվական մարմինների ձևավորում, սոցիալական դեպքի վարման շրջանակներում բազմամասնագիտական խմբի աշխատանք: (Կետ 9) • Սոցիալական աջակցության բնագավառում միջգերատեսչական սոցիալական համագործակցության շրջանակներում համագործակցող կողմերը խնդրահարույց դեպքի (դեպքերի) տարածվածության կամ առավել արտահայտված և առանձնահատուկ ձևերի ժամանակ կարող են տարածքային (տեղական) մակարդակում ձևավորել համակարգող և խորհրդատվական մարմիններ՝ միջգերատեսչական աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ, խորհրդակցական մարմիններ: (Կետ 17) • Բազմամասնագիտական խմբի աշխատանքները կազմակերպվում են սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) աշխատողի՝ սոցիալական դեպք վարողի կողմից անհատական սոցիալական ծրագրով նախատեսված՝ խմբի անդամների հետ փոխհամաձայնեցված, կարգով և ժամկետներում: (Կետ 20)
145.	**«Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերի ուսուցման դասընթացների կազմակերպման և այդ ծրագրերով աշխատելու կարողությունները հաստատող հավաստագրերի տրամադրման դեպքերն ու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1110-Ն, ընդունված է՝ 10.09.2015, ուժի մեջ է՝ 10.10.2015* Հաստատում է սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերի ուսուցման դասընթացների կազմակերպման և այդ ծրագրերով աշխատելու կարողությունները հաստատող հավաստագրերի տրամադրման	1. ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի զբաղվածությ**ան պետական գործակալության տարածքային կենտրոններում** աշխատելու (քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու) համար պաշտոնի անձնագրով սահմանված դեպքում պահանջվում են հետևյալ տեղեկատվական ենթահամակարգերի օգտագործման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերով աշխատելու կարողություններ՝ ՀՀ զբաղվածության ոլորտի գործառույթներ իրականացնող **«Գործ» տեղեկատվական ենթահամակարգ**, հա**մալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգ**: (Կետ 2) 2. ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումներում աշխատելու (քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու) համար պաշտոնի անձնագրով սահմանված դեպքում պահանջվում են հետևյալ տեղեկատվական ենթահամակարգերի օգտագործման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերով աշխատելու կարողություններ՝ պետական կենսաթոշակային համակարգի «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական ենթահամակարգ, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի տեղեկատվական ենթահամակարգ, ծննդյան միանվագ նպաստի տեղեկատվական ենթահամակարգ, «Մայրության նպաստ» տեղեկատվական ենթահամակարգ, համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգ: (Կետ 2) 3. ՀՀ մարզպետարանների սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի սոցիալական աջակցության տարածքային բաժիններում աշխատելու (քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու) համար պաշտոնի անձնագրով սահմանված դեպքում պահանջվում են հետևյալ տեղեկատվական ենթահամակարգերի օգտագործման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերով աշխատելու կարողություններ՝ ընտանիքների անապահովության գնահատման «Նպաստ» տեղեկատվական ենթահամակարգ, սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգ, սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանների, բնակելի տարածության կարիք ունեցող անձանց տվյալների հաշվառման և համապատասխան հերթացուցակի ձևավորման տեղեկատվական ենթահամակարգ, համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգ: (Կետ 2) 4. 2017 թվականի հունվարի 1-ից սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերով աշխատելու կարողությունները հաստատող հավաստագրի առկայությունը պարտադիր է վերը նշված «Սոցիալական աջակցության	ՀՀ զբաղվածության ոլորտի գործառույթներ իրականացնող «Գործ» տեղեկատվական ենթահամակարգ: Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգ: Պետական կենսաթոշակային համակարգի «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական ենթահամակարգ: Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի տեղեկատվական ենթահամակարգ: Ծննդյան միանվագ նպաստի տեղեկատվական ենթահամակարգ: «Մայրության նպաստ» տեղեկատվական ենթահամակարգ: Ընտանիքների անապահովության գնահատման «Նպաստ» տեղեկատվական ենթահամակարգ: Սոցիալական դեպքի վարման	• Քաղաքացիական կամ համայնքային ծառայության այն պաշտոնները, որոնց համար սահմանվում է սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերով աշխատելու պահանջ, զբաղեցնող մասնագետների համար համակարգչային ծրագրերով աշխատելու հավաստագրումը կատարվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը: (Կետ 2) • ՀՀ մարզպետարաններ • Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի ՏԻՄ-եր • ՀՀ ՏԿԱԻՆ-ը՝ ՀՀ ԱՍՀՆ հետ համատեղ ցուցաբերում է անհրաժեշտ մեթոդական աջակցություն Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետներին: (Կետ 4) • Ուսուցման դասընթացների ծրագրերը, ժամանակացույցը և թեմաները

	դեպքերն ու կարգը, սահմանում է ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում, սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումներում, ՀՀ մարզպետարանների սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի սոցիալական աջակցության տարածքային բաժիններում աշխատելու համար պաշտոնի անձնագրով սահմանված դեպքում տեղեկատվական ենթահամակարգերի օգտագործման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերով աշխատելու կարողությունների պահանջները, 2017թ. հունվարի 1-ից սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերով աշխատելու կարողությունները հաստատող հավաստագրի առկայության պարտադիր պահանջը, հավաստագրումը կատարող մարմինը, հանձնարարականներ է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին, ՀՀ ՏԿԱԻ նախարարին, ՀՀ մարզպետներին և առաջարկներ կատարում Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետներին:	մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում աշխատելու (քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու) համար պաշտոնի անձնագրով սահմանված դեպքում: (Կետ 2) 5. Կարգով կարգավորվում են սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերի ուսուցման դասընթացների կազմակերպման, թեստավորման անցկացման և այդ ծրագրերով աշխատելու կարողությունները հաստատող հավաստագրերի տրամադրման հետ կապված հարաբերությունները: (Հավելված 1) 6. Ուսուցման դասընթացներին մասնակցելու համար կարող է դիմել հայերենին տիրապետող, 18 տարին լրացած և 65 տարին չլրացած ՀՀ յուրաքանչյուր գործունակ քաղաքացի, այդ թվում՝ տարածքային մարմիններում քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող աշխատողը: Ուսումնական դասընթացներին կարող է մասնակցել նաև տարածքային մարմիններում քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող այն աշխատողը, ով 65 տարին լրանալուց հետո, օրենքով սահմանված կարգով, մինչև մեկ տարի ժամկետով շարունակում է զբաղեցնել իր պաշտոնը: (Հավելված 1) 7. Թեստավորումն անցկացվում է հայերենով և դոնբաց: Թեստավորման ընթացքին հետևելու համար կարող են հրավիրվել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներ: Թեստավորման անցկացման օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում թեստավորումն անցած անձանց լիազորած պետական մարմնի կողմից տրամադրվում են սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերով աշխատելու կարողությունները հաստատող հավաստագրեր: Հավաստագիրը տրվում է երեք տարի ժամկետով: (Հավելված 1)	տեղեկատվական ենթահամակարգ: Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանների, բնակելի տարածության կարիք ունեցող անձանց տվյալների հաշվառման և համապատասխան հերթացուցակի ձևավորման տեղեկատվական ենթահամակարգ: Կազմակերպությունն ուսուցման դասընթացների մասին տեղեկացնում է լիազորած պետական մարմնի պաշտոնական կայքի, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող՝ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ հայտարարության հրապարակմամբ ոչ ուշ, քան ուսուցման դասընթացները սկսելու օրվանից առնվազն մեկ ամիս առաջ: (Հավելված 1) Հավաստագրված անձանց անունները հրապարակվում են լիազորած պետական մարմնի պաշտոնական կայքում՝ թեստավորման անցկացման օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում: (Հավելված 1) Հավաստագրի գործողությունը դադարեցնելու մասին հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով: (Հավելված 1) Լիազորած պետական մարմինը վարում է հավաստագրված անձանց գրանցամատյան: (Հավելված 1)	հաստատում է լիազորած պետական մարմնի ղեկավարը: Ուսուցման դասընթացների թեմաները և ուսումնական նյութերը տեղադրվում են լիազորած պետական մարմնի և ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշման 3-րդ կետով սահմանված՝ սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանների սպասարկման և շահագործման բնագավառում ՀՀ կառավարության լիազորած կազմակերպության պաշտոնական կայքերում: Ուսուցման դասընթացներն իրականացնում է սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանների սպասարկման և շահագործման բնագավառում ՀՀ կառավարության լիազորած կազմակերպությունը՝ լիազորած պետական մարմնի ղեկավարի կողմից հաստատած ուսուցման դասընթացների ծրագրերին, ժամանակացույցին և թեմաներին համապատասխան: (Հավելված 1) • Թեստավորման ընդունումն իրականացնում է լիազորած պետական մարմնի ղեկավարի հրամանով ձևավորված հավաստագրման հանձնաժողովը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են լիազորած պետական մարմնի երեք ներկայացուցիչ և երկուական ներկայացուցիչ՝ կազմակերպությունից ու լիազորած պետական մարմնի կառավարման ոլորտում գործող՝ սոցիալական ապահովության բնագավառում ծառայություններ մատուցող պետական մարմնից: Հանձնաժողովը կազմակերպում է դիմորդների թեստավորման և դրանց արդյունքների ստուգման աշխատանքները, քննում է թեստավորման արդյունքների վերաբերյալ դիմորդների բողոքները:
146.	**«ՀՀ հատուկ սպառողների սննդի օրական միջին նորմաների մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 706, ընդունված է՝ 11.11.1998, ուժի մեջ է՝ 11.11.1998* Հաստատում է ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության քրեական հետախուզության վարչության անչափահասների ընդունիչ-տեղաբաշխման բաժնում գտնվող երեխաների սննդի օրական միջին նորման, հանձնարարականներ է տալիս պետական մարմիններին:	1. ՀՀ ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության քրեական հետախուզության վարչության անչափահասների ընդունիչ-տեղաբաշխման բաժնում գտնվող երեխաների սննդի օրական միջին նորման սահմանում է՝ հաց (600գ), ձավարեղեն (90գ), մակարոնեղեն (40գ), միս, մսամթերք (150գ), ձուկ՝ առանց գլխի (100գ), կենդանական յուղ, մարգարին (20գ), կարագ (20գ), պանիր (25գ), կաթ/կաթի փոշի (200/28,57գ), հավի ձու (4 հատ՝ շաբաթվա ընթացքում), բուսական յուղ (20գ), շաքար, շաքարավազ (70գ), աղ՝ կերակրի (10գ), թեյ (1գ), տոմատի մածուկ (3գ), դափնետերև (0.1գ), կարտոֆիլ (600գ), կաղամբ (130գ), գազար (40գ), գլուխ սոխ (40գ), բազուկ (30գ), հյութ (150գ) (Հավելված 4)		• ՀՀ ոստիկանություն • ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն

147.	**«Ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու նվազագույն չափաբաժինները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 587-Ն, ընդունված է՝ 15.05.2003, ուժի մեջ է՝ 19.06.2003* Սահմանում է ձերբակալվածներին պահելու վայրերում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու նվազագույն չափաբաժինները:	1. Հղի կանանց, կերակրող մայրերին, անչափահասներին լրացուցիչ տրվում է՝ բուսական յուղ (20գ), կարագ (25գ), կաթ/կաթի փոշի (100/14.3գ), հավի ձու (1 հատ) (Հավելված)		• ՀՀ ոստիկանություն • ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն
148.	**«ՀՀ-ում սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների և պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1229-Ն, ընդունված է՝ 30.10.2014, ուժի մեջ է՝ 29.11.2014* Հաստատում է ՀՀ-ում սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների ցանկը, պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկը, անվտանգությունը հավաստող փաստաթղթի առկայությամբ՝ պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկը, առանց անվտանգությունը հավաստող փաստաթղթի առկայության, անկախ պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկին համապատասխանող «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի՝ ԱՏԳ ԱԱ» կոդի՝ պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկը, սահմանում է պետական գրանցման ենթակա ապրանքների ներմուծման և շրջանառության իրականացման կարգի կիրառումը, պետական գրանցման ոչ ենթակա ապրանքները, ինչպես նաև ցանկերում ընդգրկելու համար հիմք հանդիսացող տեղեկությունները:	1. ՀՀ-ում սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների ցանկը ներառում է՝ երեխաների համար խաղեր և խաղալիքներ, անկողնու սպիտակեղեն, հագուստ, կոշիկներ, դասագրքեր, կահույք, սայլակներ, պայուսակներ, օրագրեր և համանման արտադրանք, տետրեր, թղթից և ստվարաթղթից այլ գրենական պիտույքներ, գրենական պիտույքներ կամ դպրոցական արհեստական պոլիմերային և սինթետիկ նյութեր՝ մանկական ապրանքների տեսականու պատրաստման համար (ԱՏԳ ԱԱ հետևյալ խմբերից՝ 32, 34, 39, 40, 42-44, 46, 48-56, 60-65, 87, 94, 95), տպագրական արտադրանք, դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ՝ հանրակրթական միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, գրքեր և ամսագրեր՝ երեխաների ու դեռահասների համար (ԱՏԳ ԱԱ հետևյալ խմբերից՝ 48, 49): (Հավելված 1) 2. ՀՀ-ում պետական գրանցման ենթակա են՝ շշալցված, տարայավորված խմելու ջուր, այդ թվում՝ մանկական սննդում օգտագործելու համար, մանկական սննդամթերք, սննդամթերք՝ հղի և կերակրող կանանց համար, երեխաների համար անձնական հիգիենայի պարագաներ, մինչև 3 տարեկան երեխաների համար կենցաղային պարագաներ, մանկական սննդում օգտագործվող սպասք և արտադրանք, մանուկների հիգիենիկ խնամքի համար անհրաժեշտ իրեր և պարագաներ, երեխաների համար հագուստ (առաջին շերտ): Այս ապրանքները, որոնք առաջին անգամ են արտադրվում ՀՀ-ում կամ առաջին անգամ են ներմուծվում ՀՀ տարածք, ենթակա են պետական գրանցման: (Հավելված 2) 3. ՀՀ-ում սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների ցանկը, որոնք ենթակա են պետական գրանցման, ներառում է՝ վուլկանացված ռեզինից հիգիենիկ իրեր՝ բացի պինդ ռեզինից, պինդ ռեզինից կցամասերով կամ առանց դրա, տարբեր տիպի ծծակներ և համանման արտադրանքներ՝ երեխաների համար, մանկական խանձարուրներ, տակդիրներ և համանման սանիտարահիգիենիկ իրեր, մանկական տակաշորեր և տակդիրներ, բամբակից պատրաստված այլ նմանատիպ սանիտարահիգիենիկ արտադրանք, մանկական հագուստ և դրանց պարագաներ (առաջին շերտ): (Հավելված 3) 4. Առանց անվտանգությունը հավաստող փաստաթղթի առկայության, անկախ պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկին համապատասխանող «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի՝ ԱՏԳ ԱԱ» կոդի՝ պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկում ներառված են ուսումնական հաստատությունների ուսանողների կողմից ստեղծված հավաքածուները, որոնք նախատեսված են ազգային և միջազգային փառատոներին մասնակցելու համար: (Հավելված 4)		• ՀՀ առողջապահության նախարարություն
149.	**«Քաղաքացիական կացության ակտերի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական**	1. Կարգը սահմանում է քաղաքացիական կացության ակտերի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև 16 տարեկանը չլրացած անձանց տրված ծննդյան վկայականների կրկնօրինակների (նոր ծննդյան վկայականների) վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ԱՍՀՆ-ին տրամադրող մարմինները և տրամադրվող տվյալները: (Կետ 1) 2. ՀՀ ԱՍՀՆ-ին տեղեկատվություն է տրամադրվում քաղաքացիական կացության հետևյալ ակտերի վերաբերյալ՝ **ծնունդ**, մահ: (Կետ 2)	ՔԿԱԳ մարմինը կամ ՀՀ արդարադատության նախարարությունը տվյալները տրամադրում են էլեկտրոնային եղանակով: (Կետ 9)	• ՀՀ ԱՍՀՆ-ն քաղաքացիական կացության ակտերի, ինչպես նաև 16 տարեկանը չլրացած անձանց տրված ծննդյան վկայականների

	հարցերի նախարարությանը տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 723-Ն, ընդունված է՝ 26.05.2011, ուժի մեջ է՝ 09.06.2011* Հաստատում է քաղաքացիական կացության ակտերի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ԱՍՀՆ-ին տրամադրելու կարգը, հանձնարարական է տալիս ՀՀ ԱԳ նախարարին:			կրկնօրինակների (նոր ծննդյան վկայականների) վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում՝ **ՀՀ-ում քաղաքացիական կացության ակտի պետական գրանցում կատարած**, 16 տարեկանը չլրացած անձանց ծննդյան վկայականի կրկնօրինակ կամ նոր ծննդյան վկայական տված մարմինը, կամ **ՀՀ արդարադատության նախարարությունը**՝ մասնավորապես, եթե օտարերկրյա պետությունում ապրող ՀՀ քաղաքացու քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումը կատարել է **ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը**: (Կետ 3) • **Ծննդյան պետական գրանցման** դեպքում ՔԿԱԳ մարմինը կամ ՀՀ արդարադատության ՀՀ ԱՍՀՆ-ին է տրամադրում՝ երեխայի անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում), սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, ծննդյան վկայականի սերիան և համարը, երեխայի մոր անունը, ազգանունը, հայրանունը, երեխայի հոր անունը, ազգանունը, հայրանունը, իսկ ծննդյան ակտի գրառման մեջ երեխայի հոր մասին տեղեկություններ լրացված չլինելու կամ հոր մասին տեղեկությունները երեխայի մոր գրավոր հայտարարության հիման վրա լրացված լինելու դեպքում՝ նշում դրա մասին: Գտնված (ընկեցիկ) երեխայի ծննդյան պետական գրանցման դեպքում նշված տվյալների փոխարեն նշում է կատարվում երեխայի գտնված (ընկեցիկ) լինելու մասին: (Կետ 5) • 16 տարեկանը չլրացած անձին ծննդյան վկայականի կրկնօրինակ տալու դեպքում ՔԿԱԳ մարմինը կամ ՀՀ արդարադատության նախարարությունը ՀՀ ԱՍՀՆ-ին է տրամադրում՝ նախկին և նոր տրված ծննդյան վկայականների սերիաներն ու համարները, երեխայի անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում), սեռը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը: (Կետ 7) • 16 տարեկանը չլրացած անձին նոր ծննդյան վկայական տալու դեպքում ՔԿԱԳ մարմինը կամ ՀՀ արդարադատության նախարարությունը ՀՀ ԱՍՀՆ-ին է տրամադրում՝ նախկին և նոր տրված ծննդյան վկայականների սերիաներն ու համարները, երեխայի անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում), սեռը,

				ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը՝ ըստ նոր ծննդյան վկայականի, ծննդյան վկայականում ուղղված, լրացված կամ փոփոխված տվյալը: (Կետ 8)
150.	**«ՀՀ շտապ բժշկական օգնության ծառայության արդիականացման ռազմավարությունը և ՀՀ շտապ բժշկական օգնության ծառայության արդիականացման ռազմավարության միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 894-Ն, ընդունված է՝ 15.07.2010, ուժի մեջ է՝ 05.08.2010* Հաստատում է ՀՀ շտապ բժշկական օգնության ծառայության արդիականացման ռազմավարությունը, միջոցառումների իրականացման ժամանակացույցը, հանձնարարական է տալիս ՀՀ առողջապահության նախարարին:	1. Շտապ օգնության ծառայությունն իրականացվում է Երևանում «Շտապբուժօգնություն» փակ բաժնետիրական ընկերության 7 կայանի միջոցով, որոնցից մեկը կենտրոնն է, իսկ 6-ը ենթակայաններ են: ՀՀ մարզերում շտապ օգնության ծառայությունը հիմնականում ներկայացված է բժշկական կենտրոնների կառուցվածքում, որոնց ընդհանուր թիվը 45 է, բացառությամբ ՀՀ Շիրակի մարզի, որտեղ գործում է «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» փակ բաժնետիրական ընկերությունը: Երևանում գործում է շտապ և անհետաձգելի բուժօգնության 38 բրիգադ, այդ թվում՝ **մեկ մանկական**: (Հավելված 1) 2. **Մոր և մանկան բուժօգնության ոլորտում** արտագնա անհետաձգելի բուժօգնության/արագ արձագանքման ծառայությունների կազմակերպումն ունի հետևյալ առանձնահատկությունը՝ նորածինների արտագնա անհետաձգելի բուժօգնությունն իրականացվում է «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի» N 1 կլինիկական հիվանդանոցի նեոնատոլոգիական կլինիկայի կողմից, իսկ երեխաներինը՝ «Արաբկիր բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով: Մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության կազմակերպման անհրաժեշտության դեպքում այն կազմակերպվում է «Պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության «Արագ արձագանքման» ծառայության կողմից: Այս դեպքերում արտագնա անհետաձգելի բուժօգնության ծառայության միջոցով ապահովվում է կանանց և երեխաների մասնագիտական բուժօգնությունը տեղում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև տեղափոխումը Երևան: (Հավելված 1) 3. Սահմանում է ՀՀ շտապ բժշկական օգնության ծառայության արդիականացմանն ուղղված **նպատակները**, այդ թվում՝ շտապ օգնության կանչերի դասակարգման վերաբերյալ **չափորոշիչների** (կանչին արձագանքելու ժամանակահատված, դեպքի վայր ժամանող շտապ օգնության մեքենայի և անձնակազմի **մինիմալ պահանջներ** և այլն) մշակում և ներդրում, ծառայության **որակի ապահովմանը** և կառավարմանն ուղղված միջոցառումների իրականացում: (Հավելված 1) 4. Սահմանում է ՀՀ շտապ բժշկական օգնության ծառայության արդիականացմանն ուղղված նպատակներին հասնելու **ռազմավարությունները**: Նախատեսում է Երևանում և ՀՀ մարզերի խոշոր քաղաքների շտապ բժշկական օգնության բրիգադներում ձևավորել մասնագիտական բրիգադներ, այդ թվում՝ **երեխաների անհետաձգելի բուժօգնության համար**: Նախատեսում է շտապ օգնության մեքենաները հագեցնել ժամանակակից սարքավորումներով, տեխնիկայով ու դեղերով՝ այդ խնդրում անպայման հաշվի առնելով **երեխաների համար նախատեսվողները**: (Հավելված 1)	Սահմանում է ՀՀ շտապ բժշկական օգնության նախահիվանդանոցային փուլի հիմնական խնդիրները, այդ թվում՝ շտապ օգնության միասնական կառավարման, **մոնիթորինգի և գնահատման համակարգի բացակայությունը**, չափորոշիչների (ստանդարտների) բացակայությունը: (Հավելված 1) Սահմանում է ակնկալվող **արդյունքները**, այդ թվում՝ շտապ օգնության որակյալ և մատչելի ծառայությունների մատուցում ՀՀ ամբողջ տարածքում, որոնք հիմնված կլինեն հստակ **չափորոշիչների** կիրառման վրա, որն իր հերթին կապահովի համակարգի արդյունավետ և շարունակական **մոնիթորինգը և գնահատումը**: (Հավելված 1) Սահմանում է իրականացման **ժամկետները:** (Հավելված 1)	• ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ շտապ բժշկական օգնության ծառայություն
151.	**«Փախստականին, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձին տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի նկարագիրը և փաստաթուղթը տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1417-Ն, ընդունված է՝ 03.12.2009, ուժի մեջ է՝ 02.01.2010* Հաստատում է փախստականին, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձին տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի նկարագիրը, փախստականին, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձին տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը տալու կարգը, հանձնարարական է տալիս ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետին, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 1999թ. նոյեմբերի 20-ի N 695 որոշումը, ՀՀ կառավարության 2003թ. մարտի 20-ի 282-Ն որոշումը:	1. ՀՀ-ում փախստականին, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձին տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի 6-րդ և 7-րդ էջերի վերևի մասում տպագրվում է «ԵՐԵԽԱՆԵՐԸ» բառը: Նշված էջերից յուրաքանչյուրի վրա տեղ է հատկացվում երկու երեխայի՝ 35 x 45 մմ չափսի գունավոր լուսանկարները փակցնելու և նրանց տվյալները լրացնելու համար, իսկ յուրաքանչյուր լուսանկարի համար հատկացված տեղից ներքև տպագրվում են «ԱԶԳԱՆՈՒՆԸ», «ԱՆՈՒՆԸ», «ԾՆՎԵԼ Է» և «ՍԵՌԸ» բառերը: (Հավելված 1) 2. Մինչև 16 տարեկան փախստականի տվյալներն ընդգրկվում են իր **ծնողների Կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերում**: Փաստաթուղթ կարող է տրվել նաև մինչև 16 տարեկան այն փախստականին, որի ծնողները ՀՀ-ում ապաստան ստացած **փախստական չեն**: (Հավելված 2) 3. Մինչև 16 տարեկան՝ **առանց ուղեկցողի** կամ **ընտանիքից անջատված** փախստականներին տրամադրվում է փաստաթուղթ, որը **չի կարող օգտագործվել առանց խնամակալի կամ հոգաբարձուի համաձայնության**: **Քաղաքական ապաստանի** իրավունք ստացած անձի՝ մինչև 16 տարեկան երեխաներին տրամադրվում է փաստաթուղթ, որը **չի կարող օգտագործվել առանց ծնողների համաձայնության**: (Հավելված 2) 4. Սահմանում է մինչև 16 տարեկան փախստականի ծնողներից մեկի կամ օրինական ներկայացուցչի՝ մինչև 16 տարեկան փախստականին տրվող **փաստաթուղթն ստանալու կամ փոխանակելու համար ներկայացվող փաստաթղթերը**: (Հավելված 2) 5. Մինչև 16 տարեկան փախստականների **փաստաթղթերն ստանում է** նրանց ծնողներից մեկը կամ այլ օրինական ներկայացուցիչը կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչը: (Հավելված 2) 6. Սահմանում է փախստականի, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձի հետ ճամփորդող յուրաքանչյուր երեխայի համար **ներկայացվող փաստաթղթերը**: (Հավելված 2)		• ՀՀ ոստիկանություն • ՀՀ ԱԳՆ • ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ, հյուպատոսական հիմնարկներ

152.	**«Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 825-Ն, ընդունված է՝ 26.05.2006, ուժի մեջ է՝ 16.07.2006* Հաստատում է կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը, պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկը, թերապևտիկ բնույթի հիվանդների նկատմամբ դինամիկ հսկողության, հոգեկան հիվանդների նկատմամբ դինամիկ հսկողության, հոգեակտիվ նյութերից (թմրամիջոցներ, ալկոհոլ, տոքսիկ և այլ նյութեր) կախվածություն և հակում ունեցող հիվանդների նկատմամբ դինամիկ հսկողության, մաշկային հիվանդություններով և սեռավարակներով տառապող հիվանդների նկատմամբ դինամիկ հսկողության, աղիքային վարակիչ հիվանդություններով տառապող հիվանդների նկատմամբ դինամիկ հսկողության ժամանակացույցերը, ուժը կորցրած է ճանաչում նոյեմբերի 20-ի N 695 որոշումը, ՀՀ կառավարության 2003թ. մարտի 20-ի 282-Ն որոշումը:	1. Սահմանում է Քրեակատարողական ծառայության բժշկական սպասարկման ստորաբաժանումների նպատակը, խնդիրները, ստորաբաժանումները և բժշկական աշխատանքային հանձնաժողովը: (Հավելված 1) 2. **Բուժկանխարգելիչ հետազոտությունները** կատարվում են տարեկան առնվազն մեկ անգամ, որոնք պետք է կատարվեն անչափահասների **օրինական ներկայացուցչի համաձայնությամբ**: (Հավելված 1) 3. Վեց ամսից ավելի հղի և մեկ ամսականից մինչև երկու տարեկան երեխա ունեցող կալանավորված կամ դատապարտյալ **կանանց փոխադրումը** կատարվում է մյուս բոլոր կալանավորված անձանցից կամ դատապարտյալներից **մեկուսացված**: (Հավելված 1)	Հիվանդ կալանավորված անձին կամ դատապարտյալին զննելուց հետո բժիշկ-մասնագետը կամ միջին բուժանձնակազմը բժշկական քարտում և կալանավորված անձանց և դատապարտյալների ամբուլատոր բժշկական օգնության ցուցաբերման մատյանում և կալանավորված անձանց և դատապարտյալների ստոմատոլոգիական օգնության ցուցաբերման մատյանում կատարում է համապատասխան գրառումներ: Հոգեկան խանգարում ունեցող հիվանդ կալանավորված անձինք և դատապարտյալները գրանցվում են հոգեկան հիվանդություններով տառապող կալանավորված անձանց և դատապարտյալների դիսպանսեր հաշվառման մատյանում: (Հավելված 1) Բժշկական քարտը համարվում է բժշկական գաղտնիք պարունակող փաստաթուղթ և կալանավորված անձին կամ դատապարտյալին առձեռն չի տրվում: Բժշկական քարտերը պահվում են բժշկական սպասարկման բաժնում կամ բաժանմունքում կամ խմբում՝ չիրկիզվող պահարանում, որոնց հաշվառման և պահպանման համար պատասխանատու է հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի ղեկավարը կամ նրան փոխարինող անձը: Բժշկական քարտերի հետ պահվում է նաև կալանավորված անձանց և դատապարտյալների ամբուլատոր բժշկական օգնության ցուցաբերման մատյանը: Բժշկական քարտում պարունակվող տեղեկություններին ծանոթանալու նպատակով կալանավորված անձին կամ դատապարտյալին, ինչպես նաև նրանց գրավոր համաձայնությամբ մատնացույց արված անձանց տրվում են բժշկական քարտից քաղվածք կալանավորված անձի կամ դատապարտյալի առողջական վիճակի մասին: (Հավելված 1) Բժշկական սպասարկման բաժնի, բաժանմունքի կամ խմբի ստացիոնար ընդունվելու վերաբերյալ տվյալները գրանցվում են կալանավորված անձանց և դատապարտյալների ստացիոնար բժշկական օգնության ցուցաբերման մատյանում: Վարակիչ հիվանդություններով և տուբերկուլոզով տառապող հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների հայտնաբերման դեպքում կատարվում են գրանցումներ համապատասխանաբար՝ տուբերկուլոզով կասկածվող կալանավորված անձանց և	• ՀՀ արդարադատության նախարարություն • ՀՀ արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության բժշկական սպասարկման ստորաբաժանումներ • Կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնելու նպատակով քրեակատարողական ծառայությունում գործում են քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի՝ վարչության կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող բժշկական սպասարկման բաժինը, ինչպես նաև հիմնարկների կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող բժշկական սպասարկման կամ բժշկական մասնագիտացված բաժինները կամ բաժանմունքները կամ խմբերը: (Հավելված 1) • Բժշկական աշխատանքային հանձնաժողովը ստեղծվում է ՀՀ արդարադատության նախարարի հրամանով, երեք տարի ժամկետով՝ նախագահի, առավելագույնը հինգ բժիշկ-մասնագետ անդամների (թերապևտ, վիրաբույժ, նյարդաբույժ և այլն) և բժշկական մատենավարի կազմով: ԲԱՀ-ն իրականացնում է բժշկական վերահսկողություն՝ ժամանակին և ճիշտ ախտորոշման, հոսպիտալացման, հետազոտությունների ծավալների, համալիր բուժման կատարման և դրանց հիմնավորվածության, դժբախտ դեպքի և մահվան դեպքերի ուսումնասիրությունների, քննությունների, կոնսիլիումների կամ համապատասխան բժիշկ-մասնագետների խորհրդատվությունների ժամանակին կազմակերպման և դրանց ընթացքում համապատասխան նշանակումների կատարման նկատմամբ (Հավելված 1)

			դատապարտյալների հաշվառման մատյանում և վարակիչ հիվանդություններով տառապող կալանավորված անձանց և դատապարտյալների դիսպանսեր հաշվառման մատյանում: Վիրաբուժական միջամտությունները գրանցվում են վիրաբուժական միջամտությունների հաշվառման մատյանում: Յուրաքանչյուր ստացիոնար հիվանդ կալանավորված անձի կամ դատապարտյալի համար վարվում է սահմանված նմուշի հիվանդության պատմագիր, որը բժշկական գաղտնիք պարունակող փաստաթուղթ է, և այն կալանավորված անձին կամ դատապարտյալին առձեռն չի տրվում: Դրանք պահվում են բժշկական սպասարկման բաժնում կամ բաժանմունքում կամ խմբում՝ չիրկիզվող պահարաններում, որոնց հաշվառման և պահպանման համար պատասխանատու է հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի ղեկավարը կամ նրան փոխարինող անձը: Հիվանդության պատմագրերի հետ է պահվում կալանավորված անձանց և դատապարտյալների ստացիոնար բժշկական օգնության ցուցաբերման մատյանը: Հիվանդության պատմագրում պարունակվող տեղեկություններին ծանոթանալու նպատակով՝ կալանավորված անձին կամ դատապարտյալին, ինչպես նաև նրանց գրավոր համաձայնությամբ մատնացույց արված անձանց տրվում է հիվանդության պատմագրից քաղվածք՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի առողջական վիճակի մասին: (Հավելված 1) Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժական ուղղիչ հիմնարկ կամ այլ առողջապահական մարմինների բուժական հիմնարկ փոխադրումները հաշվառվում են համապատասխան մատյանում: Դուրս գրելիս՝ հիվանդության պատմության մեջ և բժշկական քարտում գրվում է էպիկրիզ՝ ներառելով համառոտ տեղեկություններ բուժման և հետազոտությունների մասին: (Հավելված 1) Հիվանդ կալանավորված անձին կամ դատապարտյալին ընդունելիս՝ բուժական ուղղիչ հիմնարկի հերթապահ բուժաշխատողը հավաքում է նրա առողջական վիճակի մասին անհրաժեշտ տեղեկություններ, որոնք գրառվում են կալանավորված անձանց և դատապարտյալների ստացիոնար բժշկական օգնության ցուցաբերման մատյանում և հիվանդության	

			պատմագրում: (Հավելված 1) Ստացիոնար բուժում ստանալուց հետո դուրս գրվելիս՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի հիվանդության պատմության մեջ և բժշկական քարտում գրառվում է էպիկրիզ: Դուրս գրման էպիկրիզում տրվում են տեղեկություններ և ցուցումներ հիվանդ կալանավորված անձի և դատապարտյալի հետագա բուժման և նրա նկատմամբ հսկողություն սահմանելու վերաբերյալ: Էպիկրիզի պատճենը կցվում է բժշկական քարտին: (Հավելված 1) Այն կալանավորված անձինք կամ դատապարտյալները, ում մոտ չի ավարտվել ալկոհոլամոլությունից և թմրամոլությունից հարկադիր բուժումը, ինչպես նաև այն անձինք, ովքեր գտնվում են դիսպանսերային հսկողության տակ, հիմնարկ չեն ուղարկվում մինչև բուժման ավարտը դատարանի կողմից բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը դադարեցնելու մասին որոշման ընդունումը կամ դիսպանսերային հսկողության մարումը: Տվյալ կալանավորված անձինք և դատապարտյալները գրանցվում են հոգեներգործուն նյութերից կախվածություն և հակում ունեցող կամ հիվանդություններով տառապող կալանավորված անձանց և դատապարտյալների դիսպանսեր հաշվառման մատյանում: Հաշվառված և (կամ) հաշվառումից հանված՝ հոգեներգործուն նյութերից կախվածություն և հակում ունեցող անձանց մասին տեղեկությունները ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից յուրաքանչյուր ամիս տրամադրվում են ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությանը: Նշված տեղեկությունները փոխանցելիս՝ ապահովվում է դրանց գաղտնիությունը: (Հավելված 1)	
153.	**«Քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձևաթղթերի նմուշները, այդ ձևաթղթերի լրացման կարգը, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրառման դիմումի ձևաթղթերի նմուշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 492-Ն, ընդունված է՝ 14.04.2005, ուժի մեջ է՝ 19.05.2005* Հաստատում է քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձևաթղթերի լրացման կարգը, գրառումների	1. Ծննդյան ակտային գրառման մեջ **երեխայի ազգությունը** լրացվում է **ծնողների գրավոր համաձայնությամբ**: (Հավելված 1) 2. **Ծննդյան** (ծնողի, ծնողների) ակտային գրառումների ձևաթղթերի «Այլ տեղեկություններ» սյունակում նշվում է **կրթությունը**: (Հավելված 1)	Քաղաքացիական կացության ակտերի գրառումների **մատյանները** կազմված են քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձևաթղթերի 2 օրինակից, որոնք լրացվում են միաժամանակ և համարակալվում միևնույն հերթական համարով: (Հավելված 1) ՔԿԱԳ ձևաթղթերի **առաջին օրինակները**, որոնք կազմվել են մեկ տարվա ընթացքում, ժամանակագրական կարգով հավաքվում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման **մատյանում** (ակտային գրքում): (Հավելված 1) ՔԿԱԳ տարածքային մարմնի կողմից	ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալություն

	ձևաթղթերի և գրառման դիմումի ձևաթղթերի նմուշները:		ծննդյան, մահվան, ամուսնության և ամուսնալուծության ակտային գրառումների ձևաթղթերի երկրորդ օրինակները յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ ուղարկվում են **ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ**: Ակտային գրառումների ձևաթղթերի երկրորդ օրինակները՝ յուրաքանչյուր տարվա կտրվածքով վիճակագրական մշակման աշխատանքների ավարտից հետո ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից վերադարձվում են ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության հանրապետական արխիվ: (Հավելված 1) **Հայրության ճանաչման, որդեգրման, անվան փոխման**, ինչպես նաև վերականգնված ակտային գրառումների ձևաթղթերի երկրորդ օրինակները տարեկան մեկ անգամ, բայց ոչ ուշ, քան հաջորդ տարվա հունվարի 20-ը, ուղարկվում են ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության հանրապետական **արխիվ**: (Հավելված 1) Իրավասու մարմինների պահանջով տրամադրվող քաղաքացիական կացության ակտերի գրառումներից տրվող ձևաթղթերի **պատճենները** դրոշմակնքվում և կնքվում են ՔԿԱԳ մարմնի ղեկավարի կողմից, և նշվում է տալու ժամանակը (Հավելված 1)	
154.	**«Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1560-Ն, ընդունված է՝ 19.10.2006, ուժի մեջ է՝ 22.05.2007* Հաստատում է մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգը:	1. Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի **գործողությունը տարածվում է արտաքին տնտեսական գործունեության** ապրանքային անվանացանկի ծածկագրերին համապատասխան՝ մսի և մսամթերքի վրա: (Կետ 1) 2. **Անչափահասներին, հղի և կերակրող կանանց չի թույլատրվում աշխատել** մսի և մսամթերքի արտադրության կազմակերպություններում: (Կետ 58)	Մսի և մսամթերքի շրջանառության գործընթացում տեխնոլոգիական, անասնաբուժասանիտարական, սանիտարահիգիենիկ կանոնների ապահովման նկատմամբ **վերահսկողությունն** իրականացվում է ՀՀ կառավարության լիազորած մարմինների կողմից: (Կետ 83)	• ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն
155.	**«ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 429, ընդունված է՝ 10.06.1999, ուժի մեջ է՝ 23.06.1999* Հավանություն է տալիս ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրին, հանձնարարականներ է տալիս ՀՀ նախարարություններին, գերատեսչություններին, մարզպետներին՝ սեյսմիկ ռիսկի նվազեցմանը վերաբերող աշխատանքներն իրականացնելիս համալիր ծրագրով ղեկավարվելու	1. Ծրագրով նախատեսվում է **երեխաներին կենսականորեն անհրաժեշտ հմտությունների ուսուցման** կազմակերպում: (Հավելված)	Ծրագրի կատարողները յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվություն են ներկայացվում ծրագրի համակարգողին: Ծրագրի համակարգողը յուրաքանչյուր տարին մեկ անգամ արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացնում ՀՀ կառավարությանը: Արդյունքների մասին տեղեկատվությունը ընդգրկվում է սեյսմիկ պաշտպանության բնագավառում լիազորված մարմնի ղեկավարի՝ ՀՀ Ազգային ժողովի նիստի ամենամյա հաղորդման մեջ: ՀՀ կառավարությունը կարող է պահանջել լրացուցիչ հաշվետվություն՝ դրա մասին իր քննարկումից առնվազն երեք ամիս առաջ տեղեկացնելով ծրագրի	• ՀՀ ՏԿԱԻՆ

	վերաբերյալ:		համակարգողին: (Հավելված)	
156.	**«Ձերբակալված և կալանավորված անձանց ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 351-Ն, ընդունված է՝ 02.04.2009, ուժի մեջ է՝ 02.05.2009* Հաստատում է ձերբակալված և կալանավորված անձանց ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1124-Ն որոշումը:	1. Սահմանում է ձերբակալված և (կամ) կալանավորված անձանց ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ձերբակալվածներին պահելու վայր (ՁՊՎ), քրեակատարողական հիմնարկ, դատարան, բժշկական հաստատություն ուղեկցման, ինչպես նաև դատարանի աշխատակազմի ղեկավարի միջնորդության (համաձայնության) առկայության դեպքում՝ ձերբակալված և (կամ) կալանավորված անձանց դատարան ուղեկցման և պահպանման, նման անձանց քննչական գործողությունների կատարման վայր ուղեկցման և պահպանման կարգը: (Հավելված 1) 2. Ակնհայտ հղիության նշաններ ունեցող կանանց ուղեկցման ընդունելիս հրավիրվում է բուժաշխատող: (Հավելված 1) 3. Հղի կանայք, որոնց բժիշկն արգելել է տեղափոխել ուղեկցման ենթակա չեն: (Հավելված 1) 4. Ձերբակալված կամ կալանավորված տղամարդկանց և կանանց, ինչպես նաև անչափահասների ուղեկցումն իրականացվում է միմյանցից անջատ: (Հավելված 1)	Ուղեկցման ժամանակացույցները համաձայնեցվում են ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների և քրեակատարողական հիմնարկների հետ: Դատարանն սպասարկման ընդունելիս՝ ուղեկցող ստորաբաժանման պետի և դատարանի աշխատակազմի ղեկավարի կողմից կազմվում է դատարանն սպասարկման ընդունելու մասին **ակտ**: (Հավելված 1) Ուղեկցող պահակախմբի ավագը պարտավոր է՝ ՁՊՎ-ի հերթապահին կամ քրեակատարողական հիմնարկի հաշվառման բաժին ներկայացնել ձերբակալված և (կամ) կալանավորված անձանց ուղեկցելու մասին հայտի հիման վրա կազմված՝ ձերբակալված և (կամ) կալանավորված անձանց ընդունման- հանձնման պահանջագիրը, ստանալ կարգով նախատեսված՝ ուղեկցման համար անհրաժեշտ փաստաթղթերը, կատարել ձերբակալված և (կամ) կալանավորված անձանց ու նրանց իրերի զննություն և կազմել դրա մասին **արձանագրություն**: (Հավելված 1) Ձերբակալված և կալանավորված անձանց՝ պահանջվող վայր ուղեկցումը (պահպանությունը) իրականացվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի գրավոր **հայտերի** հիման վրա: ՁՊՎ-ից կամ քրեակատարողական հիմնարկից տեղափոխվող կալանավորված անձանց վերաբերյալ կազմվում է նաև **ուղեկցական ցուցակ**: (Հավելված 1) Բուժզննության արդյունքների, ինչպես նաև բժշկի կողմից ուղեկցումը թույլատրելու կամ արգելելու մասին գրառում է կատարվում անձնական գործում:	• ՀՀ ոստիկանություն • Ուղեկցող ստորաբաժանումներն ստեղծվում և լուծարվում են ՀՀ ոստիկանության պետի հրամանով: (Հավելված 1)
157.	**«ՀՀ-ում անձնագրային համակարգի կանոնադրությունը և ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 821, ընդունված է՝ 25.12.1998, ուժի մեջ է՝ 25.12.1998* Հաստատում է ՀՀ-ում անձնագրային համակարգի կանոնադրությունը, ՀՀ քաղաքացու անձնագրի նկարագիրը, սահմանում է անձնագրային համակարգի կազմակերպման աշխատանքները կատարող և վերահսկող, ՀՀ-ում անձնագրային համակարգի	1. ՀՀ քաղաքացու անձնագիր **պարտավոր են** ունենալ ՀՀ՝ **16 տարին լրացած բոլոր քաղաքացիները անկախ բնակության վայրից**: (Հավելված 1) 2. **16 տարին չլրացած** ՀՀ քաղաքացիներին ՀՀ քաղաքացու անձնագիր տրվում է **ըստ ցանկության՝ մեկ ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա**: (Հավելված 1) 3. ՀՀ՝ **մինչև 16 տարեկան քաղաքացիներին** ՀՀ քաղաքացու անձնագիր է տրվում **առանց անձնագրում հաշվառման մասին նշում կատարելու**: (Հավելված 1) 4. **Մինչև 16 տարին լրանալը** ՀՀ քաղաքացիներին ՀՀ քաղաքացու անձնագրով փաստաթղթավորելիս՝ անձնագրերը տրվում են **3 տարի վավերականության** ժամկետով, իսկ **արական սեռի 15 տարին լրացած** անչափահասներին՝ **մինչև 18 տարին** լրանալը: (Հավելված 1) 5. **16 տարին չլրացած** ՀՀ քաղաքացու՝ մինչև 16 տարին լրանալը տրված **անձնագիրը** կարող է **փոխանակվել** նրա **մեկ ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա**՝ նախքան անձնագրի վավերականության ժամկետը լրանալը: (Հավելված 1) 6. **Մինչև 16 տարեկան** անչափահասների անձնագրերի 5-րդ էջի «Նշումներ» բաժնում կատարվում է **ծնողների մասին տվյալների** (անունը, ազգանունը) գրառում: Ծնողների մահացած կամ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչված լինելու դեպքում անձնագրերի 5-րդ էջի «Նշումներ» բաժնում գրառումներ չեն կատարվում: (Հավելված 1) 7. ՀՀ **16 տարին լրացած** քաղաքացու անձնագիրը տրվում է **10 տարի** ժամկետով: Գործածության համար պիտանի անձնագրերի ժամկետը ՀՀ-ում՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, իսկ օտարերկրյա պետություններում՝ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից կարող է **երկարաձգվել** ևս 5 տարի ժամկետով: (Հավելված 1)	ՀՀ քաղաքացու անձնագրով **փաստաթղթավորված արական սեռի 15 տարին լրացած անձանց** մասին **տվյալները** (անունը, ազգանունը, հայրանունը, ծնողների հաշվառման վայրը) ՀՀ կառավարությանն առընթեր **ՀՀ ոստիկանության** կողմից յուրաքանչյուր **եռամսյակը մեկ** անգամ **փոխանցվում են ՀՀ պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատ**: (Հավելված 1)	• ՀՀ-ում անձնագրային համակարգի կանոնադրության կիրարկման կարգի մասին հրահանգը հաստատում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը: (Կետ 3) • Անձնագրային համակարգի կազմակերպման աշխատանքների կատարումն ու վերահսկողությունը դրված է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, իսկ օտարերկրյա պետություններում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության վրա: (Կետ 2) • ՀՀ քաղաքացիների անձնագրերը **տրվում կամ փոխանակվում** են ըստ ՀՀ քաղաքացիների **մշտական, ժամանակավոր կամ փաստացի բնակության վայրի**՝ ՀՀ-ում ՀՀ կառավարությանն առընթեր **ՀՀ**

	կանոնադրության կիրարկման կարգի մասին հրահանգը հաստատող մարմինները, հանձնարարություն է տալիս ՀՀ ոստիկանությանը, փոփոխություն է կատարում ՀՀ կառավարության 1997 թվականի հունվարի 13-ի N 8 որոշման մեջ, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 1992 թվականի սեպտեմբերի 11-ի N 473 որոշումը՝ բացառությամբ 4-րդ կետի:	8. Սահմանում է 16 տարին չլրացած քաղաքացու ծնողներից մեկի կամ օրինական ներկայացուցչի կողմից 16 տարին չլրացած **քաղաքացու անձնագիր ստանալու կամ փոխանակելու համար ներկայացվող փաստաթղթերը**: **Եթե ծնողն անձամբ չի կարող ներկայացնել համաձայնությունը**, ապա ներկայացվող համաձայնության վրա նրա ստորագրության իսկությունը պետք է **վավերացված լինի նոտարական կարգով**: 16 տարին չլրացած քաղաքացիների անձնագրերն **ստանում են նրանց ծնողներից մեկը կամ օրինական ներկայացուցիչը** կամ այլ ներկայացուցիչ: (Հավելված 1)		**ոստիկանության**, իսկ օտարերկրյա պետություններում՝ **ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների** կամ **հյուպատոսական հիմնարկների** կողմից: (Հավելված 1)
158.	**«ՀՀ պետական սահմանի անցման կետերում ու տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության և օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 783-Ն, ընդունված է՝ 18.07.2013, ուժի մեջ է՝ 17.08.2013* Սահմանում է ՀՀ պետական սահմանի անցման կետերում ու տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության և օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 127-Ն որոշումը:	1. Կարգավորում է ՀՀ պետական սահմանի անցման կետերում ու տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության և օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը, կանոնները, հատուկ կացարաններից օտարերկրացիների ազատման հետ կապված հարաբերությունները: (Հավելված) 2. **Հատուկ կացարանը** հուսալի փականներով փակվող դռներով սենյակ (շինություն) է՝ կից միջանցքով, որտեղ կբացառվի այլ անձանց ներթափանցումը, ինչպես նաև սահմանապահին հնարավորություն կընձեռվի մշտապես հսկողություն իրականացնելու այնտեղ պահվող անձանց նկատմամբ: Յուրաքանչյուր անցման կետում պետք է լինի **առնվազն երկու սենյակ**՝ տարբեր սեռերի անձանց, տարբեր երկրների քաղաքացիներին (իր ցանկությամբ), տարբեր կրոնների ներկայացուցիչներին առանձին պահելու համար: (Հավելված) 3. Հատուկ կացարանները պետք է ապահովված **մանկական մահճակալով**: Օտարերկրացիներն **անձնական հիգիենայի** համար ապահովվում են նաև **տաք ջրով**՝ լողանալու հնարավորությամբ: (Հավելված) 4. Օտարերկրացիներին պահելու համար հատուկ կացարանում ստեղծվում են տղամարդկանց, կանանց և (կամ) **անչափահասներին առանձին** պահելու սենյակներ, **ընտանիքի** համար նախատեսված սենյակ: (Հավելված)	Հատուկ կացարաններում պահվող օտարերկրացիների վերաբերյալ **գրանցում** է կատարվում համապատասխան **մատյաններում**: Հատուկ կացարաններում օտարերկրացիների գրանցման մատյանի ձևը (լրացման կարգը) սահմանում է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենը: (Հավելված) Հատուկ կացարանների **սանիտարահակահամաճարակային հսկողությունն** իրականացվում է տվյալ անցման կետի սանիտարական-կարանտինային կետի կողմից, իսկ վարակիչ հիվանդությունների արձանագրման ժամանակ առաջնային բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում են ՀՀ առողջապահության նախարարի հրամանով սանիտարական-կարանտինային կետերին կցված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից: (Հավելված) Հատուկ կացարաններում գտնվելու ժամանակ օտարերկրացիների կողմից ներկայացվող առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկվում են օրենքով սահմանված կարգով: (Հավելված) Հատուկ կացարաններում պահվող՝ ապաստան հայցող անձանց իրավասու մարմիններին հանձնելիս՝ սահմանապահները կազմում են հանձնման (փոխանցման) ակտ և համապատասխան գրառում են կատարում ապաստան հայցողների գրանցամատյանում: (Հավելված)	• Օտարերկրացիները հատուկ կացարաններում պահվում են **սահմանապահ զորքերի սահմանային վերահսկողության ստորաբաժանման պետի** կամ նրան փոխարինող անձի որոշման հիման վրա: (Հավելված) • Հատուկ կացարաններում պահվող օտարերկրացիների նկատմամբ հսկողությունն իրականացվում է սահմանային վերահսկողության ստորաբաժանման հերթափոխի անձնակազմի կողմից՝ հերթափոխի պետի պատասխանատվությամբ: Կացարանին կից սահմանապահի ծառայողական սենյակի կահավորման կարգը սահմանում է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենը: (Հավելված) • Ավտոմոբիլային անցման կետերում գտնվող հատուկ կացարանները մաքրվում և ախտահանվում են սահմանային վերահսկողության տվյալ ստորաբաժանման հավաքարարների կողմից, օդային և երկաթուղային անցման կետերում այն ապահովվում է օդանավակայանի և երկաթուղային կայարանի ադմինիստրացիայի կողմից, իսկ նշված աշխատանքների նկատմամբ հսկողությունն իրականացվում է սանիտարական-կարանտինային կետերի կողմից: (Հավելված) • Հատուկ կացարանները պահպանվում են ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանն այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցների հաշվին: (Հավելված)
159.	**«ՀՀ պետական սահմանում սահմանային ռեժիմը և պետական սահմանի անցման կետերի ռեժիմը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 735-Ն, ընդունված է՝ 12.05.2011, ուժի մեջ է՝ 25.06.2011*	1. **Առանց անցագրի սահմանային շերտ կարող են մուտք (ելք) գործել սահմանային շերտում գտնվող** բնակավայրի (համայնքի) **դպրոցի, հիվանդանոցի կամ այլ կազմակերպության** սպասարկող անձնակազմը և այդ **հաստատություն հաճախող անձինք** (եթե նրանք բնակվում են սահմանային շերտից դուրս) համապատասխան հաստատության ներկայացրած ցուցակի ու անձը հաստատող փաստաթղթի հիման վրա: (Հավելված 1) 2. **Անչափահաս անձինք առանց անցագրի սահմանային շերտ կարող են մուտք (ելք) գործել** միայն օրինական ներկայացուցչի **ուղեկցությամբ** և **անձը հաստատող փաստաթղթով**, իսկ այն չունենալու դեպքում՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից տրված լուսանկարի առկայությամբ **համապատասխան տեղեկանքի** հիման վրա: (Հավելված 1) 3. **Անցման տվյալ կետի սահմանապահ զորքերի ստորաբաժանման պետի** կողմից տրված անցագիրն այն ստացող անձին իրավունք է տալիս գտնվելու անցման կետի միայն այն վայրում, որտեղ նրանք իրականացնում են իրենց պարտականությունները: Անցման կետ	**Մուտքի անցագրերը** հաշվառվում են համապատասխան մատյաններում: (Հավելված 1) Սահմանապահ զորքերի պաշտոնատար անձինք վերահսկում են անցման կետերի ռեժիմի կանոնների պահպանումն օդանավակայանների, երկաթուղային կայարանների, ավտոկայանների կամ	• Սահմանային ռեժիմի պահպանման միջոցառումները կազմակերպում և իրականացնում են ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերը՝ համագործակցելով ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ այլ համապատասխան

	Սահմանում է ՀՀ պետական սահմանում սահմանային ռեժիմը և ՀՀ պետական սահմանի անցման կետերի ռեժիմը:	մուտքի անցագրերը **հաշվառվում** են համապատասխան **մատյանում**: (Հավելված 2) 4. **Մինչև 3 տարեկան երեխա ուղեկցող** անձինք և **երեխաների կազմակերպված խմբերը**, որոնք մեկնում են առողջարանական բուժման ավտոմոբիլային կամ պարզեցված բացթողման անցման կետ **բաց են թողնվում արտահերթ**: (Հավելված 2)	ավտոկայարանների տեղակայված անցման կետերում: (Հավելված 2)	ստորաբաժանումների, ինչպես նաև պետական այլ մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների և կազմակերպությունների հետ՝ սահմանային շերտի բնակչության մասնակցությամբ: (Հավելված 1) • Սահմանային, սանիտարական-կարանտինային, անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական վերահսկողություն և մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով անցման կետերի ռեժիմը պահպանվում և հսկվում է ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ սահմանապահ զորքերի ստորաբաժանումների կողմից, իսկ օդանավակայաններում անցման կետերի ռեժիմի պահպանումը և հսկումը սահմանապահ զորքերի կողմից իրականացվում է միայն սահմանային վերահսկողության համար անհրաժեշտ պայմաններն ստեղծելու նպատակով: (Հավելված 2) • Սահմանապահ զորքերը ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ ստորաբաժանումների, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային մարմինների և պետական համապատասխան այլ մարմինների հետ համատեղ մշակում են միջգերատեսչական ստանդարտ գործառնական ընթացակարգեր՝ ռեժիմային գոտիներում դրանք կիրառելու նպատակով: (Հավելված 2)
160.	**«Մանկական սնունդը և հարակից ապրանքներն անվճար կամ ցածր գներով տրամադրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1105-Ն, ընդունված է՝ 25.09.2015, ուժի մեջ է՝ 10.10.2015* Սահմանում է մանկական սնունդը և հարակից ապրանքներն անվճար կամ ցածր գներով տրամադրելու կարգը:	1. Կարգավորում է պետության կողմից անվճար կամ ցածր գներով մանկական սննդի և հարակից ապրանքների հատկացման ընթացակարգի, դեպքերի ու պայմանների, ինչպես նաև տևողության հետ կապված հարաբերությունները: (Հավելված) 2. Պետության կողմից անվճար կամ ցածր գներով տրամադրվող մանկական սնունդը ներառում է մանկական **կաթնախառնուրդը** (արդյունաբերական եղանակով մշակված, կենդանական կամ բուսական ծագում ունեցող կաթ կամ կրծքի կաթի փոխարինիչ, որը նախատեսված է մանուկների կերակրման համար՝ ծննդյան պահից մինչև 6 ամսական հասակը) և **վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդը** (արդյունաբերական եղանակով մշակված, կենդանական կամ բուսական ծագում ունեցող կաթ կամ կրծքի կաթի փոխարինիչ, որը նախատեսված է 6 ամսականից բարձր տարիքի մանուկների և վաղ տարիքի երեխաների կերակրման համար): (Հավելված) 3. Երեխայի օրինական ներկայացուցիչներ են համարվում ծնողները (հայրը, մայրը), որդեգրողը, խնամակալը, խնամատար ծնողները, հոգաբարձուն: Ընտանիքի մյուս անդամները երեխայի օրինական ներկայացուցիչներ չեն համարվում: (Հավելված) 4. Մանկական սնունդն **անվճար տրամադրվում է** առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, բժշկական ցուցումներով հատուկ սնուցողական պահանջներ ունեցող երեխաներին, մայրական կաթով կերակրման բժշկական հակացուցումների դեպքում: (Հավելված) 5. Մանկական սնունդն **անվճար տրամադրվում է նաև** բազմապտուղ (երկու և ավելի) հղիությունից ծնված՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող երեխաներին, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող չհարմարեցված (ոչ ադապտացված) կաթնախառնուրդ ստացող և սնուցման ծանր խանգարում ունեցող երեխաներին, ՄԻԱՎ վարակ ունեցող մորից ծնված երեխաներին (Հավելված) 6. Մանկական սնունդը **ցածր գներով (արժեքի 50 տոկոս զեղչ) տրամադրվում է**՝ բազմապտուղ (երկու և ավելի) հղիությունից ծնված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 10.01-ից մինչև ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավոր ունեցող երեխաներին, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 10.01-ից մինչև ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող	Ձևաթղթի վրա նշվում է մանկական սննդի կամ հարակից ապրանքներն անվճար կամ ցածր գնով տրամադրելու վերաբերյալ համապատասխան տեղեկություն, եթե տրամադրվում է ցածր գնով՝ նաև վճարման ենթակա գումարը, իսկ ձևաթղթի դարձերեսի մասում ստացողը կատարում է նշում ստացած մանկական սննդի կամ հարակից ապրանքի (ապրանքների) թվի և վճարված գումարի մասին: (Հավելված) Մանկական սննդի կամ հարակից ապրանքների տրամադրման ձևաթղթերը պահվում են դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ 3 տարի ժամկետով: (Հավելված) Յուրաքանչյուր ամս**վա առաջին շաբաթվա** ընթացքում դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեղատան կամ	• Հատուկ սնուցողական պահանջներով պայմանավորված բժշկական ցուցումների, ինչպես նաև մայրական կաթով կերակրման բժշկական հակացուցումների ցանկը հաստատում է **ՀՀ առողջապահության նախարարը**: (Հավելված) • Բժշկական ցուցումներով հատուկ սնուցողական պահանջներ ունեցող երեխաների համար գնվող մանկական սննդի իրականացվում է **ՀՀ առողջապահության նախարարության** կողմից, կենտրոնացված կարգով և բաշխվում ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանված կարգով: (Հավելված) • **Առողջության առաջնային պահպանման հաստատության** կողմից մանկական սնունդը և հարակից ապրանքները ձեռք են բերվում **ՀՀ պետական բյուջեի «Բնակչության առողջության առաջնային պահպանման» ծրագրի**

		անապահովության սահմանային միավոր ունեցող ոչ ադապտացված կաթնախառնուրդ ստացող և սնուցման ծանր խանգարում ունեցող երեխաներին: (Հավելված) 7. Հարակից ապրանքներն անվճար տրամադրվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին: (Հավելված) 8. Սահմանում է անվճար մանկական սննդի տրամադրման **տևողությունը**: Հարակից ապրանքները տրամադրվում են մինչև երեխայի ինը ամսական դառնալը: (Հավելված) 9. Մանկական սնունդը և հարակից **ապրանքները ձեռք են բերվում** բժշկական կազմակերպությունների կողմից առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակում, յուրաքանչյուր բյուջետային տարվա համար նախատեսված ծավալներին համապատասխան՝ բացառությամբ բժշկական ցուցումներով հատուկ սնուցողական պահանջներ ունեցող երեխաների համար գնվող մանկական սննդի: (Հավելված) 10. Անվճար կամ ցածր գներով մանկական սնունդ կամ հարակից ապրանքներ **տրամադրելու հիմք է** մանկական սննդի կամ հարակից ապրանքների՝ բժշկի կողմից նշանակումը: Սահմանում է նշանակողներին և կարգավորում է նշանակումը: Սահմանում է ձևաթուղթը ստանալու նպատակով երեխայի օրինական ներկայացուցչի կողմից բժշկական կազմակերպություն ներկայացվող փաստաթղթերը: (Հավելված) 11. **Առանց ծնողական խնամքի մնացած նորածին երեխայի** բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում գտնվելու ժամանակահատվածում մանկական **սննդի նշանակման հիմք է**՝ երեխայից հրաժարվելու վերաբերյալ ծնողի դիմումը, ՀՀ ոստիկանության և բժշկական կազմակերպության կողմից համատեղ կազմված ընկեցիկության ակտը, բժշկական կազմակերպության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի արձանագրությունը մոր փաստացի բացակայության վերաբերյալ, մոր մահվան բժշկական վկայականը: (Հավելված)	դեղատնային կրպակի կողմից **ամփոփվում** է **նախորդ ամսվա** անվճար կամ ցածր գներով տրված մանկական սննդի կամ հարակից ապրանքների փաստացի ծախսը, և ամփոփ **տվյալները ներկայացվում են** համապատասխան **բժշկական կազմակերպություն**, որի հիման վրա համատեղ **կազմվում է** անվճար կամ ցածր գնով տրամադրվող մանկական սննդի կամ հարակից ապրանքների նշանակման ձևաթղթերի **ամփոփ ռեեստր**: Ռեեստրը կազմվում է երկու օրինակից, օրինակներից մեկը պահվում է դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ, իսկ երկրորդ օրինակը՝ բժշկական կազմակերպությունում: (Հավելված)	**շրջանակներում**, բնակչության անվճար և արտոնյալ պայմաններով դեղերով ապահովման համար նախատեսված միջոցների հաշվին: (Հավելված) • Մանկական սննդի կամ հարակից ապրանքի **տրամադրումը** երեխայի օրինական ներկայացուցչին **իրականացվում է դեղատնից կամ դեղատնային կրպակից**, որի հետ բժշկական կազմակերպությունները «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կնքել են համապատասխան պայմանագիր: • Դեղատան կամ դեղատնային կրպակի կողմից մանկական սննդի կամ հարակից ապրանքների անվճար կամ ցածր գներով հատկացումը երեխաներին իրականացվում է մանկական սննդի կամ հարակից ապրանքի նշանակման ձևաթուղթը ներկայացնելու դեպքում: (Հավելված)
161.	**«ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանը ձևավորելու և տեղեկություններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 933-Ն, ընդունված է՝ 20.05.2004, ուժի մեջ է՝ 31.07.2004* Հաստատում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու քարտադարանը ձևավորելու և տեղեկություններ տրամադրելու կարգը	1. Սահմանում է օպերատիվ տեղեկատու քարտադարանում հաշվառման վերցվող անձանց մասին հաշվառման փաստաթղթեր ստանալու, մշակելու, օպերատիվ տեղեկատու քարտադարան ձևավորելու, տեղեկություններ տրամադրելու կարգը, ինչպես նաև հաշվառման փաստաթղթերը պահպանելու ժամկետները: (Հավելված) 2. **Հաշվառման նպատակը** հանցագործությունների կանխման, նախականխման, խափանման, բացահայտման աշխատանքներում վարույթն իրականացնող մարմիններին, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց օրենքով նախատեսված անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելն է: (Հավելված) 3. Օպերատիվ տեղեկատու քարտադարանում **հաշվառման վերցվող անձինք են**, մասնավորապես, **քրեական պատասխանատվությունից ազատված այն անչափահասները, որոնց նկատմամբ կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ**: (Հավելված) 4. Սահմանում է օպերատիվ տեղեկատու քարտադարանում **հաշվառման վերցնելու հիմքերը**: (Հավելված) 5. Սահմանում է օպերատիվ տեղեկատու քարտադարանից **տեղեկություններ ստանալու համար հարցումների ձևակերպման ձևերը**: **Էլեկտրոնային եղանակով** տեղեկությունների տրամադրման կարգը սահմանվում է ՀՀ ոստիկանության պետի նորմատիվ հրամանով: (Հավելված) 6. Քրեական պատասխանատվությունից ազատված այն **անչափահասների քարտերը**, որոնց նկատմամբ կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ, **պահվում են 5 տարի**՝ այդ միջոցների նշանակման պահից: (Հավելված) 7. Ֆիզիկական անձն իրավունք ունի պահանջելու կատարել ուղղումներ օպերատիվ տեղեկատու քարտադարանում առկա՝ իրեն վերաբերող տվյալներում, եթե ներկայացնում է այդ տվյալների սխալ լինելը հավաստող համապատասխան փաստաթղթեր: (Հավելված)	Օպերատիվ տեղեկատու քարտադարանից **անմիջականորեն օգտվելու իրավունք ունեն.** ՀՀ Նախագահի աշխատակազմը, ՀՀ կառավարության աշխատակազմը, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ կառավարությանն ԱԱԾ-ն, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ԱԳՆ-ն, ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ դատախազության մարմինները, ՀՀ քննչական կոմիտեն, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, դատարանները, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կենտրոնական բանկը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում նշված համապատասխան մարմինները և տեղական ինքնակառավարման մարմինները: (Հավելված) **Դատարաններն** օպերատիվ տեղեկատու քարտադարանից օգտվում են ազատ հարցումների ձևով: (Հավելված) Պետական մյուս մարմինները, ֆիզիկական անձինք օպերատիվ տեղեկատու քարտադարանից **կարող են օգտվել** ՀՀ ոստիկանության տարածքային բաժինների միջոցով՝ օրենքով սահմանված լիազորությունների սահմաններում: (Հավելված) Օտարերկրյա պետություններում գտնվող ֆիզիկական անձինք օպերատիվ տեղեկատու քարտադարանից օգտվում են	• ՀՀ ոստիկանություն • ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն • ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության կողմից հաշվառման քարտում մատնադրոշմային բանաձևը լրացնելուց հետո հաշվառման քարտի առաջին օրինակն ուղարկվում է ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն: • Հաշվառման քարտի երկրորդ օրինակը դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու մասին տեղեկատվությունն ստանալուց հետո ԱՊՀ անդամ պետությունների ներքին գործերի նախարարությունների կողմից 1992 թվականի օգոստոսի 3-ին կնքված Ինֆորմացիայի փոխանակման վերաբերյալ միջպետական համաձայնագրի համաձայն ուղարկվում է Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության գլխավոր ինֆորմացիոն կենտրոն՝ միջպետական ինֆորմացիոն բանկում հաշվառելու համար, իսկ երրորդ օրինակն ուղարկվում է ՀՀ-ում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրո՝ օտարերկրյա քաղաքացու ծագման պետությանը տեղեկացնելու համար: (Հավելված)

			դիվանագիտական ծառայության մարմինների միջոցով: Օպերատիվ տեղեկատու քարտադարանից անմիջականորեն օգտվելու իրավունք ունեն նաև ԱՊՀ անդամ պետությունների այն երկրների ոստիկանական մարմինները, որոնց հետ կնքվել են համապատասխան միջպետական պայմանագրեր: (Հավելված) Սահմանում է օպերատիվ տեղեկատու քարտադարանից ստուգվող անձանց մասին տրվող տեղեկությունների կարգը: (Հավելված) Հաշվառման փաստաթղթերի որակի **հավաստիության** ու դրանք **ժամանակին** ուղարկելու նկատմամբ **հսկողությունն** իրականացնում են այդ փաստաթղթերը կազմող **մարմինների ղեկավարները**: (Հավելված) Օպերատիվ տեղեկատու քարտադարանը ձևավորվում է հաշվառման փաստաթղթերի հիման վրա: (Հավելված) Քարտադարանային տեղեկությունների տեղեկատու **բազաների պահպանման** և ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի ծառայողների կողմից **քարտադարանի վարման կարգը** սահմանվում է ՀՀ ոստիկանության պետի կողմից: Օպերատիվ տեղեկատու քարտադարանում առկա՝ ֆիզիկական անձանց մասին տվյալներն անձնական գաղտնիք համարվող տեղեկություններ են, և դրանք կարող են տրվել միայն կարգով սահմանված դեպքերում և անձանց: Օպերատիվ տեղեկատու քարտադարանում առկա՝ ֆիզիկական անձանց մասին տվյալների ապօրինի տրամադրումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն: (Հավելված)	
162.	**«Մանկական խնամատարական կազմակերպություններում խնամվող երեխաների և ստացիոնար ու տնային պայմաններում սպասարկվող միայնակ տարեցների ու հաշմանդամների սոցիալական սպասարկումը բարելավելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 582, ընդունված է՝ 29.06.2001, ուժի մեջ է՝ 02.08.2001* Հանձնարարականներ է տալիս ՀՀ ԱՍՀՆ-ին և ՀՀ առողջապահության նախարարությանը, սահմանում է պետական նվազագույն	1. **ՀՀ ԱՍՀՆ-ին** հանձնարարում է ՀՀ կառավարություն ներկայացնել **առաջարկություններ մանկական խնամատարական կազմակերպություններ** (անկախ կազմակերպական-իրավական ձևից) **ընդունելության կարգերի**, այդ կազմակերպություններում խնամվող և դաստիարակվող **երեխաների հաշվառման կարգի** վերաբերյալ: (Կետ 1) 2. **ՀՀ ԱՍՀՆ-ին** հանձնարարում է համաձայնեցնելով ՀՀ շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների, տարածքային կառավարման և համապատասխան ՏԻՄ-երի հետ, հաստատել մանկական խնամատարական կազմակերպություններում խնամվող երեխաների սոցիալական սպասարկման համար անհրաժեշտ **պետական նվազագույն չափորոշիչները**, մանկական խնամատարական կազմակերպություններում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) երեխաների խնամքի ու դաստիարակության գործում **իրականացնել մեթոդական և գործնական օգնություն**:(Կետ 1) 3. Սահմանում է, որ պետական նվազագույն չափորոշիչների հաստատումից հետո մանկական խնամատարական բոլոր կազմակերպությունները (անկախ կազմակերպական-իրավական ձևից) իրենց գործունեությունը պետք է իրականացնեն պետական նվազագույն չափորոշիչներին համապատասխան: (Կետ 2) 4. **ՀՀ առողջապահության նախարարությանը** հանձնարարում է ամենամյա պետական նպատակային ծրագրերի սահմաններում իրականացնել ՀՀ մանկական խնամատարական բոլոր կազմակերպություններում (անկախ գերատեսչական ենթակայությունից և կազմակերպական-իրավական ձևից) խնամվողների **բժշկական սպասարկման** գործում **մասնագիտական խորհրդատվությունների և մեթոդական օգնության** կազմակերպումը: (Կետ 3)	Պետական նվազագույն չափորոշիչների պահպանման նկատմամբ վերահսկողությունը վերապահում է ՀՀ ԱՍՀՆ-ին: (Կետ 2)	• ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ առողջապահության նախարարություն

	չափորոշիչների հաստատումից հետո նախատեսվող հարցերը:			
163.	**«Արտահիվանդանոցային և հիվանդանոցային հոգեբուժական բժշկական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 350-Ն, ընդունված է՝ 01.04.2010, ուժի մեջ է՝ 24.04.2010* Հաստատում է արտահիվանդանոցային և հիվանդանոցային հոգեբուժական բժշկական օգնության տրամադրման կարգը:	1. Հոգեկան խանգարմամբ տառապող **անչափահաս անձին այլ բուժհաստատություն տեղափոխում** են նրա **օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ**: (Հավելված)	Հոգեկան խանգարումներով տառապող անձանց **հաշվառման հիմքերը**: (Հավելված) Հոգեկան խանգարումներով տառապող անձանց **հաշվառման բժշկական փաստաթղթերի** ձևերը և լրացման կարգը հաստատում է առողջապահության ոլորտի լիազոր մարմինը: (Հավելված) Արտահիվանդանոցային հարկադիր հսկողության ու բուժման ընդունվելիս՝ հոգեբույժն անձին **տեղեկացնում է նրա իրավունքների**, պարտականությունների, արտահիվանդանոցային հարկադիր հսկողություն ու բուժում ստանալու նպատակի և պատճառների մասին՝ նշում կատարելով արտահիվանդանոցային (ամբուլատոր) **բժշկական քարտում**: (Հավելված)	• ՀՀ առողջապահության նախարարություն
164.	**«Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 17-ի N 282 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 657-Ն, ընդունված է՝ 27.05.2010, ուժի մեջ է՝ 19.06.2010* Հաստատում է ՀՀ քաղաքացիների զինվորական հաշվառման կարգը, հանձնարարություններ է տալիս ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարին, ՀՀ պաշտպանության նախարարին և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետին, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 17-ի N 282 որոշումը:	1. Սահմանում է ՀՀ զինապարտ քաղաքացիների զինվորական հաշվառումը կազմակերպելու և իրականացնելու, ինչպես նաև այդ գործընթացում զինվորական հաշվառման ամբողջականության ապահովման համար պատասխանատու մարմինների գործունեության հետ կապված հարաբերությունները: (Հավելված) 2. Զինվորական հաշվառման **խնդիրները** ներառում են նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների քանակական ու որակական կազմը որոշելը: (Հավելված) 3. Տեղական ինքնակառավարման մարմիններում և ուսումնական հաստատություններում զինապարտների գրանցամատյանի գրառումների հիման վրա մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը կազմվում են հաջորդ տարվա ընթացքում 16 տարին լրացող նախազորակոչիկների ցուցակներ, որոնք ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում ուղարկվում են իրենց գտնվելու վայրի տարածքային զինկոմիսարիատ: Նախազորակոչիկների ցուցակը հաստատվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի կամ ուսումնական հաստատության ղեկավարի ստորագրությամբ և կնիքով: (Հավելված)	Զինվորական հաշվառումը ՀՀ քաղաքացիների՝ բնակչության պետական ռեգիստրի վարման քաղաքականության շրջանակներում նախազորակոչային, զորակոչային տարիքի և պահեստազորում գտնվող արական, ինչպես նաև զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիների հաշվառման ու հանրապետության զորակոչային, վարժահավաքային և զորահավաքային հնարավորությունների գնահատման ու ռեսուրսների վերլուծության պետական համակարգ է: (Հավելված) Զինվորական հաշվառումը վարվում է անընդմեջ, անհատական կարգով և ընդգրկում է զինվորական հաշվառման ենթակա բոլոր անձանց: (Հավելված) Սահմանում է զինվորական հաշվառման վերցված լինելուն վերաբերող փաստաթղթերը: (Հավելված) Զինապարտների զինվորական հաշվառման լրիվությունն ապահովելու նպատակով **ՀՀ ԱՍՀՆ**-ն իր կողմից վարվող քաղաքացիների տվյալների հաշվառման բազայից **հանրապետական զինվորական կոմիսարիատին** է տրամադրում տեղեկություններ՝ հաշմանդամության խումբ սահմանելու վերաբերյալ, տեղեկություններ հաշմանդամության խումբը փոխելու կամ դադարեցնելու վերաբերյալ: (Հավելված) **ՀՀ առողջապահության նախարարության** ենթակայության «Երևանի հակատուբերկուլյոզային» և	• ՀՀ ՏԿԱԻՆ • ՀՀ ՊՆ • ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն • Զինվորական հաշվառում իրականացնում են զինապարտի մշտական բնակության հաշվառման (հաշվառում չունեցողներինը՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատը, ՀՀ զինվորական կոմիսարիատը՝ ՀՀ մշտական հաշվառում չունեցող և օտարերկրյա պետությունում ՀՀ դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած զինապարտներինը: (Հավելված) • Զինվորական հաշվառման ենթակա զինապարտ քաղաքացիների որակական և քանակական կազմը ճշտելու նպատակով տարածքային զինկոմիսարիատները համապատասխան պետական մարմիններից և կազմակերպություններից պահանջում են կցագրվողներին վերաբերող հետևյալ տվյալները՝ հոգեբուժական, հակատուբերկուլյոզային, մաշկային, նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառված լինելու մասին, բժշկասոցիալական փորձաքննության մարմիններից՝ հաշմանդամություն ունենալու մասին, տարածքային պոլիկլինիկաներից՝ կրած հիվանդությունների մասին, ոստիկանության մարմիններից՝ հատուկ հաշվառման, հետաքննության մեջ գտնվելու կամ դատվածություն

			«Աբովյանի հանրապետական հակատուբերկուլյոզային» դիսպանսերները, «Հոգեբուժական» և «Մաշկաբանության և սեռավարակաբանության» բժշկական կենտրոնները հանրապետական զինկոմիսարիատին են տրամադրում իրենց կողմից հաշվառված քաղաքացիների տվյալները հանրապետական զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար: (Հավելված) **ՀՀ արդարադատության նախարարությունն** իր կողմից վարվող քաղաքացիների տվյալների հաշվառման բազայից հանրապետական զինկոմիսարիատին է տրամադրում տեղեկություններ ազատազրկման դատապարտվելու և ազատազրկման ձևով պատիժ կրելու վերաբերյալ, ազատազրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու վերաբերյալ, ազատազրկման հետ կապ չունեցող պատիժների վերաբերյալ: (Հավելված) **ՀՀ ԱԳՆ**-ն իր կողմից վարվող հյուպատոսական հաշվառման կանգնած քաղաքացիների տվյալների հաշվառման բազայից հանրապետական զինկոմիսարիատին է տրամադրում տեղեկություններ՝ դիվանագիտական մարմնում կամ հյուպատոսական հիմնարկում հյուպատոսական հաշվառման կանգնած քաղաքացիների վերաբերյալ, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա անձանց և զորահավաքի ժամանակ զինապարտների ծանուցման վերաբերյալ: (Հավելված) **ՀՀ ԿԳՆ**-ն իր կողմից վարվող քաղաքացիների տվյալների հաշվառման բազայից հանրապետական զինկոմիսարիատին է տրամադրում տեղեկություններ՝ հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով սովորողների վերաբերյալ, պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքով բարձրագույն և հետբուհական (գիտակրթական) ծրագրերով սովորողների վերաբերյալ, ուսումնական հաստատությունից դուրս մնալու (հեռացվելու) վերաբերյալ: (Հավելված) **ՀՀ ոստիկանությունն** իր կողմից վարվող քաղաքացիների տվյալների հաշվառման բազայից հանրապետական զինկոմիսարիատին է տրամադրում տեղեկություններ՝ ծնունդների գրանցման վերաբերյալ, անվան, ազգանվան փոփոխման վերաբերյալ,	ունենալու մասին տեղեկանք, հատուկ դպրոցներից՝ սովորողների բժշկահոգեբանամանկավարժական բնութագիր, աշխատանքի կամ ուսման վայրից՝ բնութագիր: (Հավելված) • Գործընթացը պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում, անկախ կազմակերպական-իրավական ձևից, գործատու կազմակերպություններում և ուսումնական հաստատություններում իրականացվում է համապատասխան մարմնի ղեկավարի հրամանով: Տեղական ինքնակառավարման մարմիններում կարգի պահանջները կատարում է համայնքի ղեկավարը՝ ապահովելով հաշվառման գործընթացի կազմակերպումը: (Հավելված) • ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում աջակցում են տարածքային զինկոմիսարիատներին և հանրապետական զինկոմիսարիատին՝ զինապարտների զինվորական հաշվառման գործում, ըստ բնակության վայրի ռեգիստրի տվյալների, յուրաքանչյուր տարում 15 տարին լրացող արական սեռի քաղաքացիների մասին տվյալները ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 1-ը ներկայացնում են համապատասխան տարածքային զինկոմիսարիատներ: (Հավելված) • Օտարերկրյա պետությունում ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում աջակցում են նախազորակոչիկների և զորակոչիկների՝ ՀՀ վերադարձին: (Հավելված)

			երկքաղաքացիության, ՀՀ Նախագահի հրամանագրով ՀՀ քաղաքացիություն շնորհված և դեռևս ՀՀ քաղաքացու անձնագիր չստացած, ինչպես նաև ՀՀ քաղաքացիությունը դադարեցրած անձանց վերաբերյալ, մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեի վերաբերյալ, ՀՀ քաղաքացու անձնագրով փաստաթղթավորվելու վերաբերյալ, հետախուզման մեջ գտնվելու վերաբերյալ, անձի նկատմամբ քրեական գործ հարուցված լինելու կամ դատվածության վերաբերյալ, մահվան գրանցման վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ-ն իր կողմից վարվող քաղաքացիների տվյալների հաշվառման բազայից հանրապետական զինկոմիսարիատին է տրամադրում տեղեկություններ՝ ՀՀ տարածքից դուրս գալու վերաբերյալ, ՀՀ տարածք անձի մուտք գործելու վերաբերյալ: (Հավելված) **Պետական** ու **տեղական ինքնակառավարման մարմինները**, անկախ կազմակերպական-իրավական ձևից, **գործատու կազմակերպությունները** և **ուսումնական հաստատությունները** վարում են **աշխատող կամ սովորող**, տեղական ինքնակառավարման մարմինները՝ նաև համայնքում բնակվող (համայնքում հաշվառված կամ չհաշվառված, սակայն փաստացի բնակվող (1 ամսվանից ավելի) զինապարտների վերաբերյալ գրանցամատյան՝ փաստաթղթային և (կամ) էլեկտրոնային եղանակով: Տեղական ինքնակառավարման մարմինները համապատասխան համայնքում բնակվող, իսկ ուսումնական հաստատությունները սովորող զինապարտ քաղաքացիների մասին տվյալները զինապարտների գրանցամատյանում գրառում են քաղաքացու **14 տարին լրանալու տարում**: Աշխատանքի կամ ուսման ընդունված զինապարտ քաղաքացիների մասին տվյալները զինապարտների գրանցամատյանում գրառվում են աշխատանքի կամ ուսման ընդունվելու մասին հրամանը տալու օրվանից ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում: (Հավելված) Զինապարտների գրանցամատյանի գրառումների փոփոխությունների վերաբերյալ յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ, իսկ բնակության վայրի հաշվառման կամ հաշվառումից հանվելու, աշխատանքից կամ ուսումնական հաստատությունից ազատվելու մասին տեղեկատվությունը՝ ոչ ուշ, քան դրանց կատարման օրվանից 7-օրյա ժամկետում ներկայացվում է	

			համապատասխան տարածքային զինկոմիսարիատ: Տարածքային զինկոմիսարիատները տարեկան մեկ անգամ՝ տվյալ տարվա հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում համեմատում են զինապարտների գրանցամատյանի գրառումների, ինչպես նաև նախազորակոչիկների ցուցակների համապատասխանությունը տարածքային զինկոմիսարիատներում զինապարտների մասին առկա տվյալների հետ, իսկ տարածքային զինկոմիսարիատներում զինապարտների մասին առկա տվյալների փոփոխությունների դեպքում յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ դրա մասին տեղեկատվություն են տրամադրում տեղական ինքնակառավարման մարմիններին: (Հավելված) Նախազորակոչային տարիքի քաղաքացիների հաշվառումը վարվում է առանձին մատյանով: (Հավելված)	
165.	**«Ֆիզիկական արատներ ունեցող կամ հաշմանդամ երեխաների համար առանձին ուսումնամարզական պարապմունքների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1345-Ն, ընդունված է՝ 18.08.2005, ուժի մեջ է՝ 02.10.2005* Սահմանում է ֆիզիկական արատներ ունեցող կամ հաշմանդամ երեխաների համար առանձին ուսումնամարզական պարապմունքների իրականացման կարգը:	1. Սահմանում է **ֆիզիկական արատներ ունեցող կամ հաշմանդամ երեխաների** համար ֆիզիկական կուլտուրայի և սպորտի առանձին **ուսումնամարզական պարապմունքների իրականացման կարգը**, որի **նպատակը** երեխաների բազմակողմանի զարգացման, առողջ կենսակերպի, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու անհրաժեշտ պայմանների ստեղծումն ու ֆիզիկական ակտիվության ապահովումն է: (Հավելված) 2. Երեխաների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի առանձին ուսումնամարզական պարապմունքներն անցկացվում են **ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի** (որդեգրող, խնամակալ կամ հոգաբարձու) **գրավոր համաձայնությամբ**՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի՝ տվյալ մարզաձևով զբաղվելու **նախասիրությունը** և **բժշկի մասնագիտական եզրակացությունը**: (Հավելված) 3. Երեխաների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի առանձին ուսումնամարզական պարապմունքներն անցկացվում են **միաժամանակ 2 մարզիչ-մանկավարժի** կողմից՝ **բժշկի պարտադիր ներկայությամբ**: Մարզիչ-մանկավարժներից առավել փորձառուն՝ աշխատանքային երկարամյա ստաժ ունեցողը, նշանակվում է խմբի **ավագ մարզիչ-մանկավարժ**: (Հավելված) 4. Երեխաների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուսումնամարզական **խմբերը ձևավորվում** են հնարավորինս **համանման ախտորոշում** ու ֆիզիկական կամ մտավոր **արատներ** ունեցող երեխաներով՝ հաշվի առնելով տվյալ խմբում ընդգրկվող երեխաների **հաշմանդամության տեսակը** (կույր, խուլ-համր, մտավոր կամ ֆիզիկական արատ ունեցող, հենաշարժողական ապարատի սահմանափակումներ ունեցող և այլն): Ուսումնամարզական խմբում ընդգրկված **երեխաների թիվը չպետք է գերազանցի** մանկապատանեկան մարզադպրոցի համար՝ տվյալ մարզաձևի ուսումնամարզական խմբում մարզիկների ընդգրկվածության **սահմանված թվի կեսը**, իսկ պարապմունքները պետք է անցկացվեն **ոչ ավելի**, քան **շաբաթական 3 անգամ**՝ յուրաքանչյուրն **առավելագույնը 2 ակադեմիական ժամ** (45 րոպե x 2 = 1.5 ժամ) տևողությամբ: Բացառիկ դեպքերում, հաշվի առնելով տարիքը, սեռը, ֆիզիկական և հոգեկան վիճակն ու ախտորոշումը, յուրաքանչյուր երեխայի ուսումնամարզական պարապմունքների հաճախականությունը, տևողությունն ու ծանրաբեռնվածությունը, խորհրդակցելով բժշկի և հոգեբանի հետ, սահմանում է տվյալ խմբի ավագ մարզիչ-մանկավարժը, դրա մասին տեղյակ պահելով տվյալ կազմակերպության ղեկավարին և երեխայի ծնողին կամ այլ օրինական ներկայացուցչին (որդեգրող, խնամակալ կամ հոգաբարձու): (Հավելված) 5. Ուսումնամարզական պարապմունքներին մասնակցելու ընթացքում երեխաները **պարտավոր են** յուրաքանչյուր **եռամսյակը** մեկ անգամ անցնել **ընթացիկ**, իսկ **կիսամյակը** մեկ անգամ՝ խորացված **բժշկական զննություն**: (Հավելված) 6. Երեխաների ուսումնամարզական պարապմունքներն անցկացվում են նրանց համար **մատչելի՝ հատուկ մարզագույքով**, **սարքավորումներով** և **օժանդակ հարմարություններով** հագեցված **մարզակառույցներում**: (Հավելված)		• Մանկապատանեկան մարզական կազմակերպություններ
166.	**«Հաշմանդամ մանուկների ու պատանիների անընդմեջ վերականգնման համակարգում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքների կազմակերպման, մեթոդաբանական ու բժշկական աջակցության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 659-Ն, ընդունված է՝*	1. Սահմանում է հաշմանդամ մանուկների ու պատանիների անընդմեջ վերականգնման համակարգում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքների կազմակերպման, մեթոդաբանական ու բժշկական աջակցության կարգը, որը նպատակ ունի ապահովելու հաշմանդամ և սահմանափակ կարողություններ ունեցող մանուկների ու պատանիների սոցիալական հարմարեցումը, առողջության վերականգնումը և ինտեգրումը հասարակություն: (Հավելված) 2. Հաշմանդամ մանուկների ու պատանիների ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի **պարապմունքները կարող են ապահովվել մանկապատանեկան մարզական կազմակերպություններում**, **հանրակրթական դպրոցներում**, ինչպես նաև **արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում**: (Հավելված) 3. **Մանկապատանեկան մարզական կազմակերպություններում** հաշմանդամ մանուկների ու պատանիների ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի պարապմունքներն անցկացվում են վերջին 5 տարվա ընթացքում համապատասխան մասնագիտությամբ վերապատրաստում անցած մանկապատանեկան մարզական կազմակերպության բժշկի պարտադիր բժշկական հսկողությամբ՝ հաշվի առնելով երեխայի բուժումն ու դիսպանսերային հսկողությունն իրականացնող նեղ մասնագետի եզրակացությունը: (Հավելված)	Բժշկական հաստատությունների կողմից, որոնք իրականացնում են մասնագիտացված դիսպանսերային բժշկական հսկողություն, տարեկան մեկ անգամ տարածքային սպասարկման ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններին է տրամադրվում իրենց մոտ հաշվառված երեխաների վարման անհատական պլանը, որի ձևաթուղթը հաստատվում է ՀՀ առողջապահության նախարարի կողմից: Այդ պլանում նշվում են հաշմանդամ (քրոնիկ հիվանդ) երեխայի	• **Մանկապատանեկան մարզական կազմակերպություններում** հաշմանդամ մանուկների ու պատանիների ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի պարապմունքներն ապահովվում են՝ համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի N 1345-Ն որոշման: (Հավելված) • **Հանրակրթական դպրոցներում**, ինչպես նաև արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական

	04.06.2009, ուժի մեջ է՝ 11.07.2009 Հաստատում է հաշմանդամ մանուկների ու պատանիների անընդմեջ վերականգնման համակարգում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքների կազմակերպման, մեթոդաբանական ու բժշկական աջակցության կարգը	4. **Հաշվի առնելով տարիքը, սեռը, ֆիզիկական և հոգեբանական վիճակն ու ախտորոշումը**՝ յուրաքանչյուր երեխայի ֆիզիկական կուլտուրայի դասերի և մարզական պարապմունքների հաճախականությունը, տևողությունն ու ծանրաբեռնվածությունը՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչը, մարզիչ-մանկավարժն ու տվյալ հաստատության բուժաշխատողը, խորհրդակցելով երեխայի բուժումն ու բժշկական հսկողությունն իրականացնող նեղ մասնագետի հետ, ինչպես նաև հաշվի առնելով հաշմանդամ երեխայի վերականգնման անհատական ծրագրում նշված միջոցառումները, յուրաքանչյուր երեխայի համար սահմանում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի **պարապմունքների անհատական ծրագիր**: (Հավելված) 5. Հաշմանդամ մանուկների ու պատանիների անընդմեջ վերականգնման համակարգում ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի պարապմունքներն անցկացվում են նրանց համար **մատչելի հատուկ մարզական գույքի, սարքավորումների և օժանդակ հարմարությունների առկայությամբ**: (Հավելված) 6. **Հանրակրթական ուսումնական հաստատություններում հատուկ բժշկական խմբում** երեխաներն ընդգրկվում են՝ համաձայն յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին տարածքային սպասարկման բժշկական հաստատության կողմից (տեղամասային պոլիկլինիկա, գյուղական բժշկական ամբուլատորիա, գյուղական առողջության կենտրոն) տրված երեխայի **առողջական վիճակի և ֆիզիկական զարգացման մասին եզրակացության**: (Հավելված) 7. **Հատուկ բժշկական խմբում** ընդգրկվում են այն երեխաները, ովքեր ունեն առողջության մշտական կամ ժամանակավոր բնույթի այնպիսի նշանակալի շեղումներ, որոնք ուսումնական պրոցեսի համար հակացուցված չեն, սակայն պահանջում են ֆիզիկական ծանրաբեռնվածության սահմանափակում: Պարապմունքներն իրականացվում են հատուկ բժշկական խմբերում ընդգրկված, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող երեխաների համար նախատեսված «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսումնական ծրագրի շրջանակներում՝ յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով հիվանդության բնույթը և ծանրության աստիճանը, ինչպես նաև հաշմանդամ երեխայի վերականգնման անհատական ծրագրում նշված միջոցառումները: (Հավելված) 8. Հատուկ բժշկական խմբերում ընդգրկված, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող երեխաների հետ ֆիզկուլտուրայի պարապմունքներ իրականացնող **ուսուցչի գործելակարգը**, ինչպես նաև հաշմանդամ երեխաների ֆիզկուլտուրայի պետական **ավարտական քննությունների կարգն ու նորմատիվները** հաստատում է ՀՀ ԿԳՆ-ն: (Հավելված)	ֆունկցիոնալ վիճակի, նրանց թույլատրվող ֆիզիկական ակտիվության տեսակի, ծանրաբեռնվածության աստիճանի և դպրոցում ֆիզկուլտուրայի պարապմունքների անցկացման հատուկ պայմանների մասին: Նշված տեղեկատվությունը, ինչպես նաև հաշմանդամ երեխայի վերականգնման անհատական ծրագրում նշված միջոցառումներն արտացոլվում են տեղամասային մանկաբույժի (ընտանեկան բժշկի) կողմից տվյալ երեխայի մասին հանրակրթական ուսումնական հաստատությանը տրված եզրակացության մեջ: (Հավելված) Հաշմանդամ մանուկների ու պատանիների ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի պարապմունքների ընթացքում իրականացվող բժշկական հսկողությունը ներառում է փուլային, ընթացիկ և հրատապ հսկողությունը: (Հավելված) Փուլային հսկողությունն իրականացվում է մասնագիտացված դիսպանսերային բուժհաստատությունում՝ համաձայն յուրաքանչյուր հիվանդության համար սահմանված հսկողության սխեմաների: (Հավելված) Ընթացիկ բժշկական հսկողությունն իրականացվում է մարզադպրոցի բժշկի, իսկ հրատապը՝ մարզադպրոցի և հանրակրթական ուսումնական հաստատության բուժաշխատողի կողմից: (Հավելված)	հաստատություններում հաշմանդամ մանուկների ու պատանիների ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի պարապմունքներն ապահովվում են հատուկ բժշկական խմբերում ընդգրկված, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող երեխաների համար նախատեսված «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսումնական ծրագրի շրջանակներում: (Հավելված) • Հատուկ բժշկական խմբում ընդգրկված հաշմանդամ (քրոնիկ հիվանդ) **երեխաների դիսպանսերային (շարունակական) բժշկական հսկողությունն** իրականացվում է համապատասխան **մասնագիտացված կենտրոնի** կողմից: (Հավելված) • **Դպրոցի բուժաշխատողը**, յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում ստանալով դպրոցում սովորող հաշմանդամ (քրոնիկ հիվանդ) երեխաների մասին եզրակացություն, ըստ անհրաժեշտության, խորհրդակցելով համապատասխան մասնագետների հետ, աջակցում է ֆիզիկական կուլտուրայի ուսուցչին՝ այդ երեխաների ֆիզկուլտուրայի պարապմունքները՝ ըստ անհատական պլանի կազմակերպելու գործընթացում: (Հավելված)
167.	**«Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 2308-Ն, ընդունված է՝ 29.12.2005, ուժի մեջ է՝ 02.02.2006* Հաստատում է մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը:	1. Սահմանում է **քիմիական գործոնների** ազդեցության ներքո մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը (գործոնները և համապատասխան աշխատանքի անվանումը)՝ բացառությամբ միջնակարգ հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական գործընթացի նպատակով ստեղծված քիմիական լաբորատորիաներում կատարվող և մի շարք այլ աշխատանքների: (Հավելված) 2. Սահմանում է **ֆիզիկական գործոնների** ազդեցության ներքո մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը (գործոնները և համապատասխան աշխատանքի անվանումը)՝ բացառությամբ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և կազմակերպություններում 16-18 տարեկան անձանց ուսումնառության (ռենտգեն տեխնիկ, ռենտգեն լաբորանտ) ընթացքում իոնացնող ճառագայթման աղբյուրների հետ կատարվող և մի շարք այլ աշխատանքների: (Հավելված) 3. Սահմանում է **կենսաբանական գործոնների** ազդեցության ներքո մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը (գործոնները և համապատասխան աշխատանքի անվանումը)՝ բացառությամբ մի շարք աշխատանքների: (Հավելված) 4. Սահմանում է **արդյունաբերական աերոզոլների** ազդեցության ներքո մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը (աերոզոլները և համապատասխան աշխատանքի անվանումը)՝ բացառությամբ մի շարք աշխատանքների: (Հավելված) 5. Սահմանում է մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր աշխատանքների ցանկը (ֆիզիկական ծանրաբեռնվածությունը և համապատասխան աշխատանքի անվանումը)՝ բացառությամբ մինչև 18 տարեկան երեխաների ընդգրկվածությունը **պրոֆեսիոնալ սպորտում**, **բեմական պարարվեստում** և **կրկեսում**: (Հավելված) 6. Սահմանում է **զգայական, հուզական, լարվածության և ռիսկի գործոնների հետ կապված աշխատանքները**՝ բացառությամբ անտառային տնտեսություններում սեզոնային սանիտարական մաքրման և վայրի հատապտուղների հավաքման հետ կապված պլանային աշխատանքների: (Հավելված)		•
168.	**«Առողջ ապրելակերպի խթանման ռազմավարական ծրագրին և ծրագրի կատարումն ապահովող**	1. Սահմանում է առողջ ապրելակերպի խթանման ռազմավարական ծրագրի **նպատակներն** ու **խնդիրները**: (Հավելված 1) 2. **Ռազմավարական ուղղությունները** ներառում են **դպրոցներում առողջ ապրելակերպի խթանումը**՝ **դեռահասների առողջապահական ծառայությունների** հզորացման միջոցով: (Հավելված 1) 3. Ծրագրի իրականացման **արդյունքում** ակնկալվում է, մասնավորապես, **երեխաների առողջության վրա անառողջ սնուցման**	Ռազմավարական ուղղությունները ներառում են առողջ ապրելակերպի խթանման և անառողջ սնուցման սահմանափակման ուղղությամբ	• ՀՀ առողջապահության **նախարարություն** (հիմնական պատասխանատուն է) • Առողջ ապրելակերպի խթանմանն

	միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում *N 50, ընդունված է՝ 27.11.2014* Հավանություն է տալիս առողջ ապրելակերպի խթանման ռազմավարական ծրագրին և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին:	**բացասական ազդեցության բացառում կամ նվազեցում**: (Հավելված 1) 4. Ծրագրի 2020թ. **թիրախները** ներառում են **կրծքով սնուցման կարևորության մասին իրազեկության** մակարդակի բարձրացում՝ մինչև մեկ բնակչի հաշվով առողջության առաջնային պահպանման հաստատություններ միջինում 4.2 հաճախում՝ 2012թ. 3.8-ի դիմաց: (Հավելված 1) 5. Սահմանում է առողջ ապրելակերպի խթանման ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող միջոցառումները, դրանց պատասխանատուներին և համակատարողներին, կատարման ժամկետները, ակնկալվող արդյունքներն ու պահանջվող ֆինանսական միջոցները: (Հավելված 2) 6. Կրթական, բուժական և այլ հաստատություններում **երեխաների և դեռահասների** համար նախատեսված **սննդի ու ըմպելիքների իրացման** կարգավորման վերաբերյալ օրենսդրական բարեփոխումների մասին (ներառյալ անառողջ սննդի գովազդի սահմանափակման և հարկման մեխանիզմների կիրառման միջոցով անառողջ սննդի սպառման նվազեցման վերաբերյալ) առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն 2015-2016թթ.: Միջոցառման արդյունքում ակնկալվում է սննդում և գազավորված ըմպելիքներում հագեցած ճարպերի, տրանս-ճարպաթթուների, ազատ շաքարի և աղի բարձր պարունակության նվազեցմանն ուղղված իրազեկվածության բարձրացում: (Հավելված 2) 7. Ծրագրով նախատեսվում է **նորածինների և վաղ տարիքի երեխաների սնուցման** հարցերի վերաբերյալ **քարոզարշավի** իրականացում, **ծնողների համար կրթական ծրագրերի** իրականացում, **խորհրդատվական կենտրոնների** ստեղծում 2015-2018թթ.: (Հավելված 2) 8. 2014-2015թթ. բնակելի թաղամասերում և հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անվտանգ, ապահով և գրավիչ պայմանների ստեղծման և դրանց հասանելիության ապահովման վերաբերյալ լիազոր մարմիններին առաջարկությունների մշակման և ներկայացման արդյունքում ակնկալվում է **երեխաների, կանանց և վարժանքների** համար ֆիզիկական ակտիվության խթանման բարենպաստ պայմանների ստեղծում, բակերում և այլ հարմարեցված վայրերում տարածքների հատկացում, հատկապես երեխաների, կանանց և վարժանքների, հետիոտն և/կամ հեծանվային զբոսանքի համար, լողավազանների և այլ հարմարությունների առկայություն: (Հավելված 2) 9. 2015-2016թթ. ծրագիրը նախատեսում է **դպրոցներում** «Առողջ ապրելակերպ» **կրթական ծրագրի** իրականացման գնահատում, առաջարկությունների փաթեթի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն, ինչի արդյունքում ակնկալվում է կրթական ծրագրի բարելավում: (Հավելված 2) 10. 2015-2017թթ. ծրագիրը նախատեսում է երիտասարդներին ուղղված առողջության **ծառայությունների կենտրոնների գործունեության գնահատում** և առողջ ապրելակերպի խթանման նպատակով առաջարկությունների փաթեթի մշակում: (Հավելված 2) 11. 2016-2017թթ. ծրագիրը նախատեսում է **դպրոցներում** առողջ ապրելակերպի խթանման նպատակով **դեռահասների առողջապահական ծառայությունների մոդելի** մշակում, փորձարկում և գնահատում: Նախատեսվում է նաև **հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժների համար** նախատեսված՝ **նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների** մոտ **առողջ սնուցման** և դրա սահմանափակմանն ուղղված հարցերի ընդգրկմամբ **ուղեցույցների** մշակում և ներդնում: (Հավելված 2)	նախատեսվող միջոցառումների գործադրման **մոնիթորինգի համակարգի** ձևավորում և ներդնում՝ ապահովելով համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ: (Հավելված 1) Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված ռազմավարական ծրագրի **մոնիթորինգը և վերահսկողությունն** իրականացվում են **ՀՀ առողջապահության նախարարության** և **շահագրգիռ գերատեսչությունների** կողմից՝ **յուրաքանչյուրն իր իրավասության շրջանակներում**: (Հավելված 1) Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված նպատակային ծրագրի **մոնիթորինգն իրականացվում է վարչական վիճակագրական հաշվետվություններով**՝ սահմանված տեղեկատվական հոսքերով, ինչպես նաև հատուկ ուսումնասիրությունների և հետազոտությունների ժամանակ ստացած արդյունքներով: Մասնավորապես նախատեսվում է ցուցանիշների դինամիկայի մասին **տեղեկատվությունը հավաքագրել «Հայաստանի առողջապահության համակարգի գործունեության գնահատման» տարեկան ազգային զեկույցի**, **դեռահասների շրջանում ծխախոտի օգտագործման վերաբերյալ պարբերական հետազոտությունների**, **ժողովրդագրական և առողջապահական հետազոտությունների** և այլ գործիքների կիրառմամբ: (Հավելված 1) **Մոնիթորինգի արդյունքների** վերաբերյալ կատարվում են **եռամսյակային և տարեկան վերլուծություններ** և մշակվում են առաջարկություններ՝ ապահովելով **հետադարձ կապ** հաշվետվություններ կայացնող կազմակերպությունների հետ: (Հավելված 1) **Մոնիթորինգի** համակարգի ձևավորման և ներդրման շրջանակներում ծրագրով 2016-2020թթ. նախատեսվում է անառողջ սնուցման կարճատև **հետազոտությունների մեթոդական ուղեցույցի** հաստատում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով, «Առողջություն 2020» միջազգային քաղաքականության շրջանակներում սնուցման և ոչ վարակիչ հիվանդությունների մասին միջազգային հռչակագրից բխող **միջոցառումների կատարման մասին պարբերական զեկույցի** պատրաստում և ներկայացում, Առողջապահության համաշխարհային կազմակերպության Եվրոպական	ուղղված գործողությունները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով • Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված գործողությունների իրականացման համար մշտական գործող աշխատանքային • ՀՀ ԿԳՆ • ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն • ՀՀ մշակույթի նախարարություն • ՀՌԱՀ • ՀՀ ԱՍՀՆ • ՏԻՄ-եր • ՀՀ ՏԿԱԻՆ • ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ • Առողջապահության Համաշխարհային Կազմակերպություն

			տարածաշրջանային գրասենյակի և այլ երկրների հետ **համագործակցություն**, միջոցառումների և դրանց շրջանակներում իրականացվող ծրագրերի վերաբերյալ **ամենամյա հաշվետվությունների, զեկույցների** պատրաստում և հրապարակում: (Հավելված 2)	
169.	**«ՀՀ-ում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարությանը և ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 15, ընդունված է՝ 17.04.2014* Հավանություն է տալիս ՀՀ-ում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019թթ. ռազմավարությանը և դրա կատարումն ապահովող միջոցառումների ցանկին:	1. Սահմանում է ռազմավարության հիմնարար սկզբունքները, նպատակը և խնդիրները: (Հավելված 1) 2. **«Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի** 24-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունները ճանաչում են երեխայի առողջապահության առավել կատարյալ ստանդարտներից և հիվանդությունների բուժման ու առողջության վերականգնման ծառայություններից օգտվելու իրավունքը: Հոդված 25-ը սահմանում է, որ մասնակից պետությունները ճանաչում են խնամելու, պաշտպանության կամ ֆիզիկական, կամ հոգեկան հիվանդությունների բուժման նպատակով իրավասու մարմինների կողմից տեղավորված երեխայի իրավունքը պարբերաբար վերանայելու երեխայի բուժման ընթացքը և իր տեղավորման հետ կապված մյուս բոլոր հանգամանքները: (Հավելված 1) 3. 1991 թվականին **ՄԱԿ-ի** կողմից հաստատվել է **«Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքների» վերաբերյալ որոշումը**, որը սահմանում է դրույթներ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանության և նրանց բժշկական օգնության տրամադրման վերաբերյալ: Այդ սկզբունքները ուղղված են մասնավորապես **երեխաների իրավունքների պաշտպանությանը**:(Հավելված 1) 4. Երեխաների իրավունքների իրացումը կատարվում է նրանց **օրինական ներկայացուցիչների միջոցով**: (Հավելված 1) 5. **«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը** երաշխավորում է պետության կողմից **հոգեկան խանգարումներով տառապող անչափահասների հանրակրթական և մասնագիտական հատուկ ուսուցման** կազմակերպումը (Հավելված 1) 6. **Դիսպանսերային ծառայություններ** ստացող հիվանդների 29%-ը կանայք են, 2%-ը՝ երեխաներ և դեռահասներ: ՀՀ-ում գործում են **ցերեկային խնամքի ծառայություններ** մատուցող հոգեկան առողջության երեք կենտրոն, որոնք նախատեսված են **բացառապես մեծահասակների** համար: Երեխաների և դեռահասների ցերեկային խնամքի կենտրոններ չկան: Երեխաների և դեռահասների հոգեկան առողջությունը և հոգեկան խանգարումները Հայաստանում ընդհանուր առմամբ **չեն համարվում նույնչափ կարևոր**, որքան ֆիզիկական առողջության խնդիրները: Թեև Հայաստանում վերջերս նախաձեռնվել են որոշ աշխատանքներ ընդհանուր հոգեկան առողջության որոշ ծրագրերի ձևավորման ուղղությամբ, դրանք ընդհանրապես **չեն անդրադառնում երեխաներին և դեռահասներին**: (Հավելված 1) 7. **Հոգեբուժական հիվանդանոցներից** ոչ մեկը **չի մասնագիտանում** երեխաների և դեռահասների հարցերով: (Հավելված 1) 8. **Համայնքային զբաղվածության և վերականգնողական կենտրոնների քանակն** անբավարար է, ինչպես չափահասների, այնպես էլ մանկական, դեռահաս և երիտասարդ տարիքի անձանց համար: (Հավելված 1) 9. **Միջազգային փորձի** վերլուծությունը վկայում է, որ հոգ**եկան առողջության պահպանման և բարելավման համայնքահեն ծառայությունները** պետք է ներառեն **մտավոր խնդիրներ ունեցող, աուտիզմ և այլ հոգեկան հատուկ կարիքներ ունեցող անձանց և երեխաների համար ցերեկային կենտրոն**: Միջին և ծանր հոգեկան հատուկ կարիքներ (մեծամասամբ մտավոր խնդիրներ, աուտիզմ, հենաշարժողական ախտորոշումներ) ունեցող երեխաների և մեծահասակների համար ցերեկային կենտրոնի այցելուներին ցուցաբերվում է միայն ցերեկային խնամք, այս երեխաներին ընտանիքից և սոցիալական միջավայրից չկտրելու համար: Հիմնական աշխատակազմը բաղկացած է հատուկ մանկավարժներից, որոնք իրականացնում են բազմակողմանի շտկողական աշխատանք՝ շտկում են խոսքը, իրականացնում ֆիզիոթերապիա՝ սովորեցնելով ճիշտ նստել, քայլել, երաժշտական թերապիա, ֆիլմերի դիտում, քննարկում, կենցաղային հմտությունների զարգացում: Կենտրոնը կարող է իրականացնել միանգամից երկու ֆունկցիա՝ ցերեկային խնամք երեխաների և հասուն անձանց համար, ինչը թույլ է տալիս ծնողներին և խնամակալներին աշխատել, ինչպես նաև հոգեշտկում և զարգացում: (Հավելված 1) 10. Հատուկ հոգեբանների կրթական համակարգում **ուժեղ օղակ է** պրակտիկան. կան պայմանագրեր տարբեր կենտրոնների հետ, մանկական բուժհաստատությունների, ներառական կրթության դպրոցների հետ, որոնք զբաղվում են ինտելեկտի, տեսողության, լսողության, խոսքի, համակցված խանգարումներով երեխաների աջակցությամբ, խնամքով և կրթությամբ: (Հավելված 1) 11. Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների **ներառման և զարգացման խնդիրները** գտնվում են ուշադրության կենտրոնում: Դեռևս 1999 թվականից ՀՀ-ում որդեգրվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ռազմավարությունը: Մինչև 2005 թ. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը իրականացվել է փորձնական կարգով: Սակայն, 2005 թվականին «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի ընդունումից և 2007 թվականին Երևանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի ստեղծումից հետո ներառման գործընթացը սկսեց ծավալվել առավել արդյունավետ՝ իր հետ բերելով նաև որոշակի խնդիրներ: ՀՀ Ազգային ժողովը 2012 թ. ընդունել է «Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը և նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, ընդգրկելով տարեկան 15 դպրոց (Կրթության զարգացման պետական ծրագիր 2011-2015): (Հավելված 1) 12. Սահմանում է ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող միջոցառումները, դրանց պատասխանատուներին և համակատարողներին, կատարման ժամկետները, ակնկալվող արդյունքներն ու պահանջվող ֆինանսական միջոցները: (Հավելված 2)	ՀՀ հոգեբուժական ծառայության կողմից 2012թ. դրությամբ ընդամենը հաշվառված են 44.397 հիվանդներ, որից 01.07.2013թ. դրությամբ հաշվառված է 20341 հաշմանդամություն ունեցող անձ, այդ թվում՝ 1602-ը՝ երեխա: 2013թ. հունվարի 1-ի դրությամբ կանայք կազմում են հաշմանդամների ընդհանուր թվի 47%-ը: Հաշմանդամ երեխաների թիվը 8,078 է, որոնցից 1,545-ը՝ հոգեկան առողջության կամ մտավոր խնդիրներով: (Հավելված 1) Հոգեկան առողջության ոլորտի գործունեության **2013թ. տվյալները** ելակետային տվյալներ են ռազմավարության առաջընթացը գնահատելու համար: (Հավելված 1) Սահմանում է մոնիտորինգի կառուցվածքի, գործընթացի և բուժման ելքի ցուցանիշները և մեթոդները: (Հավելված 1) Ծրագրի վերջնական գնահատումն իրականացնում են ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ ԱՍՀՆ-ն, ՀՀ ԿԳՆ-ն, Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզպետարանների առողջապահության վարչությունները, հոգեկան առողջության ծառայություններ մատուցողները, հոգեկան և վարքային խնդիրներ ունեցող անձանց ընտանիքները: (Հավելված 1) Հոգեկան առողջության ծառայությունների գնահատման նպատակով նախատեսվում է իրականացնել հետազոտություններ, այդ թվում՝ բնակչության հարցում, ծառայության բժիշկների հարցում, արտահիվանդանոցային և հիվանդանոցային հաստատությունների ֆիզիկական վիճակի ու պայմանների գնահատում: (Հավելված 1)	• **Խարբերդի մասնագիտացված մանկատունը** նախատեսված է 6-18 տարեկան կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ու ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի մտավոր հետամնացություն ունեցող, ինչպես նաև զուգակցված խանգարումներով երեխաների շուրջօրյա խնամքի համար: Ինտերնատի երեխաներից մեծ մասը չեն հաճախում ուսումնական հաստատություններ և **ինտեգրացված չեն**: (Հավելված 1) • «Փրկություն» **հասարակական կազմակերպությունը**, որը զբաղվում է մտավոր խնդիրներ ունեցող երեխաների և երիտասարդների հարցերով, կազմակերպել է ցերեկային խնամքի կենտրոն, որտեղ հաճախում են շուրջ 50 երեխա և երիտասարդ: Աշխատանքի նպատակներն են շահառուների տարրական գիտելիքների ձեռքբերումը, նրանց զբաղվածության ապահովումը: Մի շարք այլ հասարակական կազմակերպություններ իրականացնում են հոգեկան և վարքի խնդիրներով երեխաների հոգեբանական վերականգնումը (Վորլդ Վիժն): (Հավելված 1)

		13. ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2014-2016թթ. նախատեսվում է իրականացնել երեխաների և դեռահասների **հոգեբուժական բաժանմունքների ձևավորման կարողությունների գնահատում** և առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն:		
170.	**«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման 2013-2017 թվականների և ֆիզիկական և սպորտի զարգացման 2013-2017 թվականների ծրագրերին և ծրագրերի իրականացման միջոցառումների ցանկերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 15, ընդունված է՝ 18.04.2013* Հավանություն է տալիս ՀՀ-ում հաշմանդամային սպորտի զարգացման 2013 2017թթ. ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկին, ՀՀ-ում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2013 2017թթ. ծրագրին և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկին, հանձնարարականներ է տալիս ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին և ՀՀ ֆինանսների նախարարին:	1. Ծրագիրը ներառում է հաշմանդամություն ունեցող անձանց մեջ առավել ուշադրություն պահանջող խմբերի նկատմամբ **հատուկ մոտեցում**, այդ թվում՝ երեխաներ, երիտասարդներ և կանայք: (Հավելված 1) 2. Ծրագրի խնդիրները ներառում են **բժշկամանկավարժական վերահսկողության** կազմակերպումը: (Հավելված 1) 3. Հաշմանդամություն ունեցող անձանց **ֆիզիկական զարգացման և դաստիարակության նպատակները** ներառում են համալիր միջոցառումների մշակումը, որը կապահովի հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես երեխաների և երիտասարդության շրջանում ֆիզիկական դաստիարակության համակարգի գործունեության արդյունավետությունը, ֆիզիկական դաստիարակության համակարգի կատարելագործումն ու զարգացումը, կրթական համակարգում հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական կուլտուրան և **սպորտը կրթական ծրագրերով, չափորոշիչներով և տիպային կանոնադրություններով** կանոնակարգումը: **Խնդիրները** ներառում են **նախադպրոցական հիմնարկների և ուսումնական հաստատությունների բոլոր սովորողներին ուսումնական տարվա սկզբին բժշկական զննման** ենթարկումը, որի արդյունքում սովորողները կընդգրկվեն **ֆիզիկական դաստիարակության հատուկ խմբերում**, հ**աշմանդամային սպորտով զբաղվողների բժշկամանկավարժական հսկողության** համակարգի կատարելագործումը: (Հավելված 1) 4. Սահմանում է ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող միջոցառումները, դրանց կատարողներին, կատարման ժամկետները, ակնկալվող արդյունքներն ու պահանջվող ֆինանսական միջոցները: (Հավելված 2) 5. 2013-2017թթ. նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ **ֆիզկուլտուրային-առողջարարական** և **զանգվածային-մարզական միջոցառումների** անցկացում, այդ թվում՝ հանրապետության **ներառական դպրոցներում**: (Հավելված 2) 6. Բացակայում է դպրոցականների և ուսանողների **ազատ ժամանակ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքների** արդյունավետ ձևերի կազմակերպումը, ինչպես **նաև ոչ արդյունավետ է օգտագործվում նրանց արձակուրդային ժամանակահատվածում** ֆիզկուլտուրա-մարզական աշխատանքների կազմակերպումը: **Բարձրագույն նվաճումների և մանկապատանեկան սպորտը** ունի չլուծված մի շարք խնդիրներ: (Հավելված 3) 7. Լուրջ մտահոգության տեղիք է տալիս **մանկապատանեկան մարզադպրոցների կադրային ապահովության** հարցը: Շարունակվում են մտահոգիչ մնալ մանկապատանեկան սպորտի ոլորտում **մրցումների** անցկացման հետ կապված հիմնախնդիրները: Մանկապատանեկան մարզական միջոցառումների օրացուցային պլանը, հանրապետական և քաղաքային մրցումների անցկացման մակարդակը չեն նպաստում մարզիկների մարզական կատարելագործմանը: (Հավելված 3) 8. Ծրագրի **գերակայությունները** ներառում են դպրոցականների, սովորողների, **ըստ բնակության վայրի** ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը, հաշմանդամների ֆիզիկական և հ**ոգևոր վերականգնումը**, **մանկապատանեկան սպորտը**: (Հավելված 3) 9. Մինչև 2017թ. ակնկալվում է **հստակեցնել** պատանիների, երիտասարդների և մեծահասակների ՀՀ հավաքական թիմերի օլիմպիական հերթափոխի պատրաստման հարցում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի լիազոր մարմնի և մարզաձևերի ֆեդերացիաների **իրավասությունները**, **մշակել** ՀՀ բյուջետային մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար անձնակազմի պաշտոնային դրույքաչափերի և հավելավճարների **վճարման հայեցակարգ**, **ներկայացնել սպորտային կրթության նկատմամբ նոր պահանջներ**: (Հավելված 4) 10. Նախատեսվում է 2013-2017թթ. ապահովել նախադպրոցականների, դպրոցականների և ուսանողների **առողջության գնահատման** գործընթացը՝ բժշկական վերահսկողության գործընթացի պարբերական և հետևողական իրականացման միջոցով, ի հայտ բերել առողջական շեղումներ ունեցող անձանց և նրանց հետ կազմակերպել առանձին մարզական պարապմունքներ: (Հավելված 4) 11. 2013-2014թթ. նախատեսվել է «Ֆիզիկական կուլտուրա» և «Ֆիզիկական դաստիարակություն» առարկաների ուսումնական ծրագրերի, քննական չափորոշիչների և ստուգարքային ձևերի լրամշակում՝ առանձնակի ուշադրություն դարձնելով հատուկ խմբերում (առողջական շեղումներ ունեցող անձինք) ընդգրկված անձանց, ինչպես նաև հատուկ և ներառական դպրոցում սովորողներին վերաբերող դրույթներին: 2013-2015թթ իրականացվել է հանրակրթական դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» և «Շախմատ» առարկաների ուսումնական դասագրքերի մշակում և հրատարակում (Հավելված 4) 12. 2013-2017թթ. նախատեսվում է **հանրակրթական դպրոցների** «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի **ուսուցիչների վերապատրաստման** դասընթացների, գործնական պարապմունքների կազմակերպում: (Հավելված 4) 13. 2014-2017թթ. ծրագիրը նախատեսում է **հանրակրթական դպրոցներում** արտադասարանական **մարզական խմբերի** ստեղծում: (Հավելված 4) 14. 2013-2017թթ. նախատեսվում է մարզումների համար անհրաժեշտ ժամանակակից **մարզական գույքի** ձեռքբերում և բաշխում՝ մանկապատանեկան մարզադպրոցներին, ինչպես նաև մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների վերապատրաստման դասընթացների, գործնական պարապմունքների կազմակերպում: (Հավելված 4)	Հանրապետությունում 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործում է 170 մանկապատանեկան մարզադպրոց և օլիմպիական հերթափոխի պետական մարզական երկու քոլեջ, որտեղ գործող 3,701 խմբերում մարզվում են 41,517 պարապող 1,880 մարզիչ-մանկավարժի գլխավորությամբ: Վերջին տարիներին մանկապատանեկան սպորտի ոլորտում իրականացված բարեփոխումները հիմնականում ուղղված են օրենսդրական դաշտին, ֆինանսական և նյութատեխնիկական բազայի ամրապնդման խնդիրներին: (Հավելված 3)	• ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն • ՀՀ մարզպետարաններ • Երևանի քաղաքապետարան • «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» ՀԿ • Հաշմանդամային սպորտով զբաղվող հասարակական կազմակերպություններ • Ծրագրով նախատեսվում է հանրապետության ներառական դպրոցներին լայնորեն ընդգրկել անցկացվող միջոցառումներին: (Հավելված 1)
171.	**«Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում ընդգրկելու նպատակով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2016 թվականի տարեկան ծրագրի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության**	1. Ծրագրի գերակայությունները ներառում են դպրոցականների, սովորողների, զինծառայողների ֆիզիկական պատրաստականությունը, ըստ բնակության վայրի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը, հաշմանդամների ֆիզիկական և հոգևոր վերականգնումը, ինչպես նաև մանկապատանեկան սպորտը: (Հավելված) 2. Սահմանում է յուրաքանչյուր ծրագրի և միջոցառման անվանումը, նպատակը, ակնկալվող արդյունքը, հիմնախնդիրները, ժամկետը, ֆինանսավորման չափը և աղբյուրը: (Հավելված) 3. 2016թ. իրականացվող միջոցառումները ներառում են «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի անցկացում, մանկապատանեկան սպորտի մասսայականացում՝ ընդգրկելով բոլոր էթնիկ, սոցիալական և սեռային խմբերին: Նախատեսվում է նաև անցկացնել նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր, ինչպես նաև անհրաժեշտ մարզագույքով ապահովել ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցներին: (Հավելված)	Միջոցառումներում ներգրավված դպրոցականների և դպրոցների թվաքանակ: (Հավելված)	• ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

	արձանագրային որոշում *N 44, ընդունված է՝ 01.10.2015* Հավանություն է տալիս ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվելիք ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման տարեկան ծրագրին և ներկայացնում ՀՀ Ազգային ժողով			
172.	**«Առաջին դասարանի աշակերտներին անվճար համակարգիչ տրամադրելու՝ «Մեկ երեխա-մեկ համակարգիչ» փուլային ծրագրին և փորձնական փուլի նկարագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 15, ընդունված է՝ 09.04.2015* Հավանություն է տալիս առաջին դասարանի աշակերտներին անվճար համակարգիչ տրամադրելու՝ «Մեկ երեխա-մեկ համակարգիչ» փուլային ծրագրին և փորձնական փուլի նկարագրին, ի գիտություն է ընդունում, որ ծրագրի փորձնական փուլի ֆինանսավորումն իրականացվելու է Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի միջոցներով, ինչպես նաև ծրագրի շրջանակներում՝ տեղական արտադրությունը խթանելու նպատակով աշակերտներին անհատույց տրամադրվելու են «Արմթաբ» պլանշետներ:	1. Սահմանում է ՏՀՏ-ի կրթության գործընթացում արդյունավետ կիրառման հիմնասյուները. համակարգչային տեխնոլոգիաները՝ մատչելի ժամանակակից համակարգչային սարքավորումները, որոնք նախատեսված են հատուկ կրթական խնդիրների լուծման համար, ինտերնետին փոխկապակցումը՝ հասանելի, արագագործ ինտերնետ կապը, որին կարող են միանալ ոչ միայն քաղաքային, այլ նաև հեռավոր ու գյուղական բնակավայրերի դպրոցները, ինչպես նաև դպրոցական լոկալ ցանցերը, էլեկտրոնային կրթական ռեսուրսները՝ բազմազան և բազմաթիվ մուլտիմեդիա նյութերն ու էլեկտրոնային ուսումնական ծրագրերը, որոնք կարող են ստեղծվել կամ թարգմանվել մայրենի լեզվով և տեղայնացվել տվյալ երկրի մշակույթին համապատասխան, ուսուցիչների մասնագիտական զարգացումը՝ տարատեսակ վերապատրաստման դասընթացները, որոնք հնարավորություն են տալիս նրանց ձեռք բերել ՏՀՏ-ն ուսումնական գործընթացում արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, դասավանդման մեթոդների կատարելագործումը՝ ուսուցման ինտերակտիվ մեթոդները, որոնք հիմնված են համագործակցային ուսուցման մեթոդների ու յուրաքանչյուր երեխային մեկ համակարգիչ տրամադրելու սկզբունքի վրա և հնարավորություն են ընձեռնում ուսուցիչներին արդյունավետ կիրառել համակարգչային տեխնոլոգիաները դասապրոցեսում, իսկ սովորողներին՝ ստանալ գիտելիքներ ցանկացած ժամանակ ու ցանկացած վայրում: (Հավելված) 2. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է **յուրաքանչյուր ուսումնական տարի առաջին դասարանի աշակերտներին անվճար տրամադրել պլանշետներ**՝ ուսումնական գործընթացում որպես ուսումնաօժանդակ նյութ կիրառելու նպատակով: Նախապատվությունը տրվում է հայկական արտադրության «Արմթաբ» պլանշետներին՝ համակարգչային սարքավորումների հայկական արտադրությունը խթանելու նպատակով: (Հավելված) 3. Ծրագիրն իրականացվելու է **փուլային** սկզբունքով. նախ փորձարկվելու է ՀՀ մեկ մարզում (Հավելված) 4. Ծրագրի **նպատակն** է՝ հանրակրթության կրթության որակի, մատչելիության և արդիականության բարձրացումը ՏՀՏ-ի կիրառման միջոցով: (Հավելված) 5. Ծրագրի **խնդիրները** ներառում են՝ վաղ տարիքից աշակերտներին հաղորդակից դարձնել ժամանակակից տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներին, սովորեցնել աշխատել դրանցով և ապահովել տեղեկատվության լայն հասանելիությունը, տարրական կրթության աստիճանում աշակերտների մոտ այնպիսի գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացումը, որոնք խիստ անհրաժեշտ են արդի դարաշրջանում, մասնավորապես՝ մեդիագրագիտությունը, ստեղծագործ, քննադատական ու համակարգված մտածողությունը, ինքնուրույնությունը, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացումը, դասավանդման նոր մեթոդների զարգացումը և ուսուցանվող նյութի՝ աշակերտների կողմից յուրացման դյուրինացումը, աշակերտների համագործակցային հմտությունների զարգացումը՝ համակարգչային տեխնոլոգիաների միջոցով համատեղ ծրագրերի իրականացման, ուսուցիչների, սովորողների, ծնողների ու դպրոցի վարչական աշխատակազմի միջև տեղեկատվական ու համացանցային կապերի ստեղծման միջոցով: (Հավելված) 6. Ծրագրի **փուլերն** են. **փորձնական** իրականացում ՀՀ Վայոց ձորի մարզում 2015 թվականի սեպտեմբերից 2019 թվականի օգոստոս ամիսը (ընդգրկում է **տարրական** դպրոցի բոլոր՝ 1-ից 4-րդ, դասարանները), 2019թ. սեպտեմբերից յուրաքանչյուր ուսումնական տարի **1-2 մարզի** ներառում, 2025թ. սեպտեմբերից **Երևան քաղաքի** ներառում: (Հավելված) 7. Սահմանում է Ծրագրի փորձնական փուլի իրականացման գործողությունները: (Հավելված)		• ՀՀ ԿԳՆ
173.	**«Անձի բազմակողմանի գնահատման՝ առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման» հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 1, ընդունված է՝ 09.01.2014* Հավանություն է տալիս անձի	1. Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից մշակված **Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգումը** (ՖՄԴ) հիմք է գնահատելու ինչպես անձի հաշմանդամությունն, այնպես էլ բնակչության հաշմանդամության մակարդակը: 2001թ.-ի մայիսի 22-ին կայացած Առողջապահության համաշխարհային վեհաժողովի 54-րդ նստաշրջանի ժամանակ այն պաշտոնապես ընդունվել է բոլոր 191 անդամ պետությունների կողմից (բանաձև WHA 54.21): Անդամ պետություններն այն ընդունել են որպես առողջության և հաշմանդամության նկարագրման և գնահատման համար միջազգային ստանդարտ: 2007թ.-ին ԱՀԿ-ն ընդունեց ՖՄԴ-ի լրամշակված տարբերակը՝ ներառելով լրացուցիչ 200 ծածկագրեր երեխաների և երիտասարդների համար (ICF-CY; ՖՄԴ-ԵՊ): (Հավելված 1) 2. **ՖՄԴ-ի կարևորությունը և ներուժը** արժևորվում է նաև **հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքների գնահատման** գործընթացում **միասնական ռազմավարություն** մշակելու հարցում՝ ուղղված նրանց իրավունքների և բարեկեցության խթանմանը: (Հավելված 1) 3. Առաջարկվում է **նոր մոդելը մշակել ԱՀԿ ՖՄԴ հիման վրա**՝ հաշմանդամության սահմանման գործող մոդելի շրջանակներում, ինչի համար պետք է կենսագործունեության և օրգանիզմի հիմնական ֆունկցիաների սահմանումն ու գնահատումը համապատասխանեցնել ՖՄԴ-ի սկզբունքներին: (Հավելված 1)	Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ **տեղեկատվության հավաքագրման գործընթացը լիարժեք չի իրականացվում**. հաշմանդամություն ունեցող անձանց մասին տվյալների հաշվառման **«Փյունիկ» տեղեկատվական համակարգը համադրելի է** սոցիալական պաշտպանության ոլորտում գործող մի շարք տեղեկատվական համակարգերի հետ և հնարավորություն են տալիս անձի մասին տվյալները պարբերաբար ճշգրտել և թարմացնել: Այնուամենայնիվ, առկա տեղեկատվական-հաղորդակցման **տեխնոլոգիաները չեն ապահովում միջգերատեսչական և փոխկապակցված տեղեկատվական համակարգ** ունենալու	• ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ ԿԳՆ • ՀՀ առողջապահության նախարարություն

	բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգին, ինչպես նաև դրա կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցին:		հնարավորությունը: Հանրային առողջապահության և սոցիալական պաշտպանության հիմնական նպատակները սահմանելու, հիվանդությունների կամ առողջական խնդիրների տարածվածությունը, ինչպես նաև դրանց ծանրությունը գնահատելու, դրանից ելնելով անձի կարիքներին համարժեք ծառայությունները սահմանելու համար անհրաժեշտ է ունենալ **վստահելի, ճշգրիտ և համադրելի տվյալներ**: Լիարժեք տեղեկատվության հիման վրա մշակված քաղաքականությունն ավելի կբարձրացնի այս համակարգերի կատարողականը և ծախսարդյունավետությունը: (Հավելված 1) **Չկան մշտադիտարկման և գնահատման լիարժեք մեխանիզմներ**: Չնայած սոցիալական պաշտպանության ոլորտում հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների կարգավորմանն ուղղված բազմաթիվ ծրագրերի համար պետական բյուջեից հատկացվում են զգալի միջոցներ, սակայն չկան դրանց արդյունավետությունը չափելու հստակ մեխանիզմներ: (Հավելված 1) ՄԱԿ-ի Վիճակագրության բաժնի համակարգում հիմնված Հաշմանդամության վիճակագրության Վաշինգտոնյան խումբը ՖՄԴ-ի հիմքի վրա ստեղծել է գործիքներ, որոնք աջակցում են հաշմանդամության սահմանման և գնահատման գործընթացին բոլոր անդամ պետություններում և ընդունելի և կիրառելի են բոլոր պետությունների կողմից: Գործիքները հիմք են նաև ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի վավերացումից հետո կոնվենցիայի պահանջների իրականացումը գնահատելու համար: Միևնույն ժամանակ ԱՀԿ-ը մշակել է Հաշմանդամության գնահատման հարցաշարը (WHODAS 2.0), առաջարկելով բոլոր մշակութային առանձնահատկությունների ազդեցությունից զերծ ստանդարտացված միջոց՝ առողջության վիճակի և հաշմանդամության գնահատման համար: (Հավելված 1) ՖՄԴ-ի բաղադրիչ ոլորտներն ու համապատասխան ծածկագրերն արտացոլող տեղեկատվական շտեմարանը հնարավորություն կտա առավել ճշգրիտ և համեմատելի վիճակագրական տվյալներ ունենալ հաշմանդամության ոլորտում առկա իրավիճակը և զարգացման միտումներն	

			ուսումնասիրելու համար, բարելավել տեղեկատվության փոխանակումը տարբեր մարմինների միջև, մշտադիտարկել հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունները, մշակել տվյալների վերլուծության վրա հիմնված քաղաքականություն, մշտադիտարկել Կոնվենցիայի իրականացման ընթացքը, բարձրացնել թե պետական մարմինների և թե ծառայություն մատուցողների հաշվետվողականությունը: (Հավելված 1)	
174.	**«Աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ բնակչության ուսուցման հայեցակարգին և հայեցակարգի իրականացման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 17, ընդունված է՝ 16.04.2015* Հավանություն է տալիս աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ բնակչության ուսուցման հայեցակարգին և դրա իրականացման միջոցառումների ծրագրին:	1. Աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ բնակչության **ուսուցման անհրաժեշտությունն** առաջին հերթին պայմանավորված է հանրապետության տարածքում **աղետների առաջացման բազմաթիվ և տարաբնույթ** բնածին, տեխնածին, սոցիալական ու այլ բնույթի ռիսկերի առկայությամբ: (Հավելված 1) 2. Հաշվի առնելով կրթության բնագավառում պետական քաղաքականության երկու կարևորագույն սկզբունքները՝ **կրթության շարունակականությունն ու հաջորդականությունը**, անհրաժեշտություն է առաջանում աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ ուսուցման համակարգը ներդնել **կրթության տարբեր մակարդակներում**: (Հավելված 1) 3. Ուսումնական հաստատություններում վտանգների ազդեցությունից **շենքերի ու շինությունների** խոցելիության առկայությունը կհանգեցնի աղետալի հետևանքների: Հետևաբար աղետների ռիսկերի նվազեցման կրթության ներդրումը կարևորվում է ինչպես այդ հաստատությունների աշխատակազմի, այնպես էլ այդ հաստատություններում **սովորողների** համար: (Հավելված 1) 4. **Ընտանիքներն** իրենց երեխաներին թողնելով կրթական հաստատություններում պետք է **համոզված լինեն**, որ նրանք գտնվում են **անվտանգ միջավայրում**, հուսալի ձեռքերում: Դրան կարելի է հասնել նաև կրթական հաստատություններում աղետների ռիսկերի նվազեցման կրթության իրականացմամբ (Հավելված 1) 5. Բնակչության ուսուցման հայեցակարգի **խնդիրները** ներառում են. աղետների ռիսկի նվազեցման ուսուցման տարրերի ներդրումը պետական **կրթական չափորոշիչներում**, աղետների ռիսկի նվազեցման ուսուցման ներդրումը հանրապետության կրթական **ողջ համակարգում** (նախադպրոցական հաստատություններից մինչև բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ), աղետների ռիսկի նվազեցման ուսուցման **շարունակականության** ապահովումը, աղետների ռիսկի նվազեցման **թեմաների ինտեգրումը** կրթության համակարգում դասավանդվող **առարկայական ծրագրերում**: (Հավելված 1) 6. **Նախադպրոցական հաստատություններում** ընդգրկված երեխաներին աղետների ռիսկի նվազեցման ուսուցման համար կարելի է ըստ տարիքի բաժանել երկու թիրախային խմբի՝ 2-4 և 5-6 տարեկան երեխաների խմբեր: Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների ուսուցման համար կազմակերպել դաստիարակների ուսուցում, որոնք ստացած գիտելիքները մանկավարժական ու հոգեբանական մոտեցումներով կփոխանցեն երեխաներին: (Հավելված 1) 7. **Հանրակրթական դպրոցներում** ընդգրկված աշակերտների աղետների ռիսկի նվազեցման ուսուցման գործընթացի կազմակերպման համար կարելի է աշակերտներին բաժանել **երեք հիմնական թիրախային խմբի**՝ տարրական դպրոցում ընդգրկված աշակերտներ, միջին դպրոցում ընդգրկված աշակերտներ, ավագ դպրոցում ընդգրկված աշակերտներ: (Հավելված 1) 8. Վերը նշված թիրախային խմբերը դիտարկվում են նաև **հատուկ հանրակրթական դպրոցներում** սովորող **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք** ունեցող երեխաների, ինչպես նաև **մասնագիտացված ուսումնական հաստատությունների** սովորողների համար: (Հավելված 1) 9. **Նախնական մասնագիտական** (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդգրկված սովորողների աղետների ռիսկի նվազեցման ուսուցման կազմակերպումը նախատեսվում է իրականացնել ըստ ուսումնական հաստատության մասնագիտացված թիրախային խմբերի: Այդ ուսումնական հաստատությունները լինում են՝ հումանիտար, տեխնիկական, տնտեսագիտական, բժշկական, մանկավարժական և այլ ուղղություններով: (Հավելված 1) 10. **Որևէ կազմակերպությունում աշխատանքի մեջ չընդգրկված** բնակչությունը, որպես խոցելի խումբ, ներառում է **հղի կանանց**: (Հավելված 1) 11. Աղետների ռիսկի նվազեցման հարցերով նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցումն ընդգրկում է երկու փուլ՝ առաջին փուլ՝ 2-4 տարեկան երեխաների համար, երկրորդ փուլ՝ 5-6 տարեկան երեխաների համար: (Հավելված 1) 12. **Նախադպրոցական** տարիքի երեխաների **առաջին փուլում** մատուցվող **ուսումնական նյութերը** պետք է լինեն **պարզ, հասկանալի, երեխայի կողմից ընկալվող**: Մատուցվող ուսումնական նյութերը պետք է կրեն հիմնականում **ճանաչողական** բնույթ և **նպատակաուղղված լինեն**՝ ընտանի կենդանիների հետ շփման առանձնահատկություններին, մթից, թափառող կենդանիներից, փակ տարածությունում մենակ մնալուց վախի զգացողության վերացմանը, կրակի, էլեկտրական կամ կենցաղային գազի սարքավորումների հետ վարվելու տարրական հմտությունների ուսուցմանը: Մատուցվող նյութերի մեջ պետք է ընդգրկվեն **տարրական գիտելիքներ** «**Ի՞նչ չի կարելի անել**» թեմայով: (Հավելված 1) 13. **Նախադպրոցական** տարիքի երեխաների **երկրորդ փուլի** ուսուցմանը ներկայացվում են հետևյալ պահանջները՝ առաջին փուլի ուսուցման մեջ ընդգրկված **թեմաների** շրջանակների որոշակի **ընդլայնում**, **կենցաղային անվտանգության** ապահովման վերաբերյալ **տարրական հմտությունների** ուսուցում, փողոցային **երթևեկության տարրական կանոնների** ուսուցում, իրենց **բնակարանում** իրերի **տեղադրության վերաբերյալ հիշողության** զարգացում, **բնակարանի կառուցվածքի** վերաբերյալ **տարրական գիտելիքների** ուսուցում, մատուցվող ուսումնական նյութերը պետք է առաջնորդվեն **«Ես կարող եմ» սկզբունքով**: (Հավելված 1)		• ՀՀ ՏԿԱԻՆ • ՀՀ ԿԳՆ

		14. **Տարրական դպրոցներում** աշակերտների աղետների ռիսկի նվազեցման հարցերով ուսուցման ծրագրերին ներկայացվում են հետևյալ պահանջները՝ նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման երկրորդ փուլի ծրագրերի շրջանակների **ընդլայնում**, փողոցային **երթևեկության կանոնների** վերաբերյալ հարցերի ընդգրկում, **բնական վտանգների** վերաբերյալ **տարրական գիտելիքների** ձևավորում, **երկրաշարժի** դեպքում պահելաձևի **տարրական հմտությունների** ընդգրկում, **ինքնօգնության** և **փոխօգնության տարրական գիտելիքների** ընդգրկում: (Հավելված 1) 15. **Միջին դպրոցներում** աշակերտների աղետների ռիսկի նվազեցման հարցերով ուսուցման ծրագրերին ներկայացվում են հետևյալ պահանջները՝ **բնական**, **տեխնածին վտանգների** և **աղետների** վերաբերյալ **ընդհանուր հարցերի**, **հիմնական հասկացությունների պարզագույն մեկնաբանությունների** ընդգրկում, **աղետների հետևանքների** վերաբերյալ պարզաբանումներ, իրենց **բնակավայրին** (թաղամաս, քաղաք, գյուղ) **առանձնահատուկ արտակարգ իրավիճակների** և դրանց **հետևանքների** հետ ծանոթացումը, այդ **իրավիճակներում պահելաձևերի**, **գործողությունների կանոններ**, **ինքնօգնության** և **փոխօգնության հմտությունների ամբողջական** ընդգրկում, **առաջին օգնության** և **հոգեբանասոցիալական օգնության հմտությունների** ընդգրկում, **ազդարարման** գործընթացի հետ **ծանոթացում**, **սեյսմիկ վտանգի**, **բնական վտանգների**, **ոչ կառուցվածքային ռիսկերի**, **ենթակառուցվածքային ռիսկերի** բացահայտման **կարողությունների** ընդգրկում, աշխատակազմի և սովորողների պատրաստվածության հարցերի ներառում: (Հավելված 1) 16. **Ավագ դպրոցներում** աշակերտների աղետների ռիսկի նվազեցման հարցերով ուսուցման ծրագրերին ներկայացվում են հետևյալ պահանջները՝ **աղետների ծագման** դեպքում **ըստ ազդարարման ազդանշանների գործելաձևի** վերաբերյալ հարցերի ընդգրկում, **շենքերի**, **շինությունների խոցելիության** վերաբերյալ հարցերի ընդգրկում, **ՀՀ-ում բնակչության պաշտպանության համակարգի** վերաբերյալ գիտելիքների ընդգրկում, **վտանգների կանխմանն** ու **կանխարգելմանն** ուղղված թեմաների ընդգրկում, **առաջին օգնության** և **հոգեբանասոցիալական** օգնության հմտությունների ընդգրկում, **աղետների ռիսկի** նվազեցման գործընթացի բացահայտմանն ուղղված թեմաների ընդգրկում: (Հավելված 1) 17. Կատարելագործել **նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական** կրթական պետական **կրթական չափորոշիչում** նախատեսված «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկան, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթական, այդ թվում՝ ռազմաուսումնական, հաստատություններում աղետների ռիսկի նվազեցման ուսուցման ծրագրերին ներկայացնել ոչ միայն համապատասխան ծրագրերի պահանջներ, այլև յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխան որոշակի ժամաքանակով մասնագիտական դասընթացի (օրինակ էներգետիկայի ուղղությամբ մասնագետների համար «Էներգետիկայի ոլորտին առանձնահատուկ վտանգները և դրանց վերացման, նվազեցման ուղիները» դասընթացը) պահանջներ: (Հավելված 1) 18. Սահմանում է **բարձրագույն մասնագիտական** ուսումնական հաստատություններում աղետների ռիսկի նվազեցման հարցերով ուսուցման առանձնահատկությունները: (Հավելված 1) 19. **Ուսուցման մեթոդների** ընտրությունը կախված է ուսուցանվող **թիրախային խմբի առանձնահատկություններից** և **ուսուցման ծրագրերում** ընդգրկված նյութերից: Նախադպրոցական, հանրակրթական ուսումնական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կարող են կիրառվել **անհատական, խմբային, կոլեկտիվ ուսուցման եղանակները**՝ ներառելով **խոսքային մեթոդները**, **տեսամեթոդները**, **խաղարկային, ակտիվ ու ինտերակտիվ այլ մեթոդները**: Անհրաժեշտ է խթանել **ծնողների ներգրավվածությունը** աղետների ռիսկի նվազեցման կրթության գործընթացների մեջ: Կրթական հաստատություններում կարող են գերակշռող լինել աշխատանքը **գրքերի** հետ, **զննական**, **հետազոտական** մեթոդները: **Հաշմանդամություն** և **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք** ունեցող անձանց առանձնահատկություններից ելնելով կարող են ներդրվել աղետների ռիսկի նվազեցման ուսուցման կազմակերպման **ներդաշնակեցված եղանակներ**: (Հավելված 1) 20. Աղետների ռիսկի նվազեցման հարցերով ուսուցման ծրագրերի վերաբերյալ հայեցակարգով նախատեսված պահանջները **ռազմաուսումնական՝ միջին մասնագիտական**, բարձրագույն ուսումնական հաստատություններում, ելնելով ուսումնական հաստատության առանձնահատկություններից, կարող են կիրառվել **ոչ լրիվ ծավալով**: (Հավելված 1) 21. Հայեցակարգի իրականացման **միջոցառումները** ներառում են **հանրակրթական դպրոցների մաթեմատիկայի և ֆիզիկայի դասագրքերում** աղետների ռիսկերի նվազեցման եզրերով ընդգրկված **խնդիրներ** մինչև 2017 թվականի դեկտեմբերը: (Հավելված 2)		
175.	**««Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությանն ու դրա իրականացման միջոցառումների ծրագրին և փորձնական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 33, ընդունված է՝ 22.08.2013* Հավանություն է տալիս «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությանն ու դրա իրականացման միջոցառումների ծրագրին, «Կայուն դպրոցական սնունդ» փորձնական ծրագրին, հանձնարարականներ է տալիս	1. «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարության **գլխավոր նպատակն** է ստեղծել դպրոցական կայուն սննդի համակարգ, որը հնարավորություն կտա ապահովել ՀՀ բոլոր մարզերի **հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտների առողջ սնունդը**, բարելավել նրանց **առողջությունն** ու հաղթահարել **աղքատությունը**, նպաստելով դպրոցականների **հաճախելիության** բարձրացմանն ու **համընդհանուր տարրական կրթության** ձեռքբերմանը: (Հավելված 1) 2. Ծրագրի **ռազմավարական նպատակն** է աստիճանաբար ընդլայնելով **հանրակրթական դպրոցներում սննդի** կազմակերպման շրջանակները, հանրապետության ողջ տարածքում **տարրական դասարանների բոլոր սովորողներին** ապահովել **հավասարակշռված, անվտանգ** և **որակյալ սնունդով**: (Հավելված 1) 3. Ռազմավարության հիմնական **խնդիրներն** են. **դպրոցական սննդի** կազմակերպման և իրականացման **նորմատիվային-իրավական** հենքի ամբողջացումը, ծրագրի կայուն իրականացման և կառավարման **ինստիտուտների ձևավորումը** և դրանց **հզորությունների զարգացումը**, դպրոցական սննդի կազմակերպման արդյունավետ **մոդելների փորձարկումը**, **արտաբյուջետային միջոցների** ներգրավման արդյունավետ մեխանիզմների ներդրումը: (Հավելված 1) 4. ՀՀ-ում դպրոցական սննդի ոլորտում օրենսդրության բարելավման և նորմատիվ իրավական դաշտի կատարելագործումը ներառում է. հանրակրթության ոլորտի օրենսդրության մեջ դպրոցականների տաք **սննդի կազմակերպման պայմանների** ստեղծման խնդրի ամրագրումը, այդ թվում արտոնյալ՝ կոնկրետ նպատակային խմբերի (նպատակային դպրոցների) համար, ճյուղային նախարարությունների, տարածքային կառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների **իրավասությունների ու պատասխանատվության շրջանակների սահմանումը**, ինչպես նաև **ՏԻՄ-երի և դպրոցի ծնողական համայնքի**՝ դպրոցական **սննդի կազմակերպմանը մասնակցելու** և **սատարելու հնարավորությունների** ու **մեխանիզմների** սահմանումը, հանրակրթական	«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի ընդհանուր նորմերը սահմանում են սննդի ոլորտում պատասխանատվությունները: Սակայն կրթական հաստատություններում սննդի կազմակերպման **պատասխանատվության, վերահսկողության մեխանիզմները կարիք ունեն հստակեցման**: (Հավելված 1) Կրթական հաստատություններում սննդի սպասարկման **պահանջներ** սահմանող իրավական ակտ դեռևս չի ընդունվել: (Հավելված 1) Ռազմավարության իրականացման առաջին՝ **նախապատրաստական փուլում**, մասնավորապես,	• Ծրագրի կայուն իրականացման և կառավարման ինստիտուտների ձևավորման նպատակով նախատեսվում է ռազմավարության իրականացման առաջին փուլում, երբ զգալի կլինի դոնորների ներգրավվածությունը, ծրագրի ընդհանուր համակարգումը կատարել **միջգերատեսչական աշխատանքային խմբի** կողմից, որի կազմում կընդգրկվեն նաև **միջազգային փորձագետներ** Աշխատանքային խմբի իրավասության տակ կլինեն դպրոցական սննդի կանոնակարգման և զարգացման խնդիրները, կառավարման մարմինների կառուցվածքային և ֆունկցիոնալ գործառույթների հստակեցումը,

	ՀՀ ԿԳ նախարարին և ՀՀ ֆինանսների նախարարին, սահմանում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում ընդգրկվող երեխաների թվի ճշտման հարցերը:	դպրոցի **ֆինանսավորման մեխանիզմներում** դպրոցական սննդի **ֆինանսավորման ներառումը** և դրա օրենսդրական ապահովումը, ներառյալ **արտաբյուջետային** աղբյուրներից միջոցների ստացումը խթանող, դրանց արդյունավետ և վերահսկելի օգտագործումը երաշխավորող դրույթների ամրագրումը, դպրոցական սննդի կազմակերպման գործընթացում **ծնողների ֆինանսական և ոչ ֆինանսական մասնակցությունը** կարգավորող մեխանիզմների մշակումը, **արտոնյալ պայմաններ** նախատեսող նորմատիվ ակտերի ընդունումը, օրինակ՝ տեղական արտադրողներից դպրոցներին, հատկապես գյուղական վայրերում, կարտոֆիլով, բանջարեղենով և այլն մատակարարման ժամանակ, **աճուրդի անցկացման միջոցով**, որոշված թույլատրելի գնումների ծավալով միայն փոքր բիզնեսի սուբյեկտների միջև կամ գնումների ընթացակարգի պարզեցում, նման գնումների կանխավճարում և այլ միջոցներ, դպրոցական ճաշարաններում **սննդի ծառայությունների արտաքին ռեսուրսների** ներգրավման եղանակները կարգավորող նորմատիվ բազայի ստեղծումը և հետաքրքրված ընկերությունների համար **աճուրդների անցկացման** կարգը, «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների **սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները**» **սանիտարական կանոնների** և **նորմերի** մշակումը: (Հավելված 1) 5. Ծրագիրը կընդլայնի **ծնող-դպրոց-համայնք համագործակցությունը**: Ծնողները և համայնքը մեծ ներգրավվածություն կարող են ունենալ ծրագրում և՛ նյութապես, և՛ ֆինանսապես, ինչպես նաև սեփական աշխատուժի ձևով: Ծնողների և համայնքի մասնակցությունը ծրագրին հանդիսանում է ծրագրի կայունության և արդյունավետության ապահովման հիմնական գործոններից մեկը, որի շնորհիվ դպրոցներում անհրաժեշտ պայմաններ են ստեղծվում տաք սննդով ապահովելու ոչ միայն տարրական, այլև բարձր դասարանների աշակերտներին: (Հավելված 1) 6. Սահմանում է ռազմավարության իրականացման միջոցառումների պլանը, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող դպրոցական սննդի նախաճաշի տարբերակները և դրանց արժեքը՝ հաշվարկված տարրական դասարանի մեկ սովորողի համար: (Հավելված 1) 7. Կարգավորում է փորձնական ծրագրի իրականացումը 2014թ.սկսած Վայոց Ձորի մարզում ընդգրկելով 42 համայնքների 45 հանրակրթական դպրոցների 186 տարրական դասարանների շուրջ 2,200, ինչպես նաև դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված 182 սովորողներ (ընդհանուր թվով՝ 2,382 սովորողներ): Փորձնական ծրագրի գնահատման արդյունքների հիման վրա ծրագիրն աստիճանաբար կներդրվի նաև Սյունիքի և Արարատի մարզերում դպրոցական սնունդ տրամադրելով Սյունիքի մարզում՝ 115 հանրակրթական դպրոցների 633 տարրական դասարանների ընդհանուր թվով շուրջ 6,000 և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված 36 սովորողների (ընդհանուր թվով՝ 6,036 սովորողների, իսկ Արարատի մարզում՝ 108 հանրակրթական դպրոցների 810 տարրական դասարանների շուրջ 12,000 և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված 429 սովորողների (ընդհանուր թվով՝ 12,429 սովորողներ): Միաժամանակ նախատեսվում է փորձնական միկրոծրագրերի շրջանակներում Արարատի մարզում ստեղծել մեկ դպրոցական բազային ճաշարան՝ փռով և մեկ դպրոցական բազային ճաշարան Սյունիքի մարզում: Վայոց Ձորի մարզում նախատեսվում է ստեղծել մեկ դպրոցական փուռ: (Հավելված 2) 8. 2016թ. սկսած ծրագիրն աստիճանաբար կտարածվի մյուս մարզերում: (Հավելված 2) 9. Դպրոցական սննդի ինստիտուցիոնալ համակարգի զարգացման նպատակով հիմնական փորձնական ծրագրին զուգահեռ միջազգային գործընկերների օժանդակությամբ կիրականացվեն «Դպրոցական կաթ», «Դպրոցական բազային ճաշարան», «Դպրոցական մինի փուռ» փորձնական միկրոծրագրերը: (Հավելված 2) 10. Ներկայացնում է ՀՀ-ում դպրոցների սննդի բլոկների առկայության, շինությունների և կոմունիկացիաների վիճակի վերլուծությունը՝ ըստ ցուցանիշների (դպրոցների քանակ, սովորողների թվաքանակ, շենքի վիճակ, ջրամատակարարում, կոյուղացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում, ջեռուցում, տաք ջրամատակարարում, ճաշարանների կամ բուֆետների առկայություն) և բնութագրերի (բավարար, առկա, բացակա, կարիք ունի հիմնանորոգման, կարիք ունի ընթացիկ նորոգման և այլն): (Հավելված 2) 11. Սահմանում է դպրոցական բազային ճաշարանների ստեղծման տարբերակները: (Հավելված 2) 12. Սահմանում է 2014-2016թթ. ՀՀ պետական բյուջեից դպրոցական սննդի ֆինանսավորման համար անհրաժեշտ գումարները, «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարության և փորձնական ծրագրի ծախսերի նախահաշիվը: (Հավելված 2)	նախատեսվում է ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի և Արարատի մարզերի դպրոցներում երեխաների առողջության և դպրոցական սննդի կազմակերպման հնարավորությունների վերաբերյալ մոնիթորինգի կազմակերպում (Հավելված 1) Փորձնական ծրագրի մոնիթորինգն ու գնահատումը կիրականացվի ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից՝ ՌԴ «Ճյուղային սննդի ինստիտուտի» և ՄԱԿ-ի ՊՀԾ-ի տեխնիկական օժանդակությամբ: Ծրագրի մոնիթորինգի իրականացման ու գնահատման աշխատանքներում կներգրավվեն նաև ճյուղային նախարարությունների, տարածքային կառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների ու ծնողական համայնքների ներկայացուցիչներ: (Հավելված 2)	ինչպես նաև դոնորների ներգրավումն ու դրանց հետ աշխատանքների համակարգումը: (Հավելված 1) • Ռազմավարության իրականացման ընդհանուր պատասխանատվությունը կկրի **ՀՀ ԿԳՆ-ն**, որի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը կհանձնարարվեն դպրոցականների սննդի կազմակերպման քաղաքականությունների մշակման և ծրագրի ընդհանուր համակարգման գործառույթները (Հավելված 1) • Ծրագրի աշխարհագրության ընդլայնմանը զուգընթաց **մարզպետարաններում** կնշանակվեն ծրագրի **պատասխանատու** քաղաքացիական ծառայողներ, որոնց, ինչպես նաև ներգրավված նախարարությունների համապատասխան աշխատակիցների համար կկազմակերպվեն նպատակային **վերապատրաստման** դասընթացներ (Հավելված 1) • **Սննդամթերքի որակի** և **անվտանգության նկատմամբ վերահսկողության**, ինչպես նաև **հումքային բազայի զարգացման** գործառույթները կիրականացնի **ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը**: (Հավելված 1) • **ՀՀ առողջապահության նախարարության** գործառույթները ներառում են «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները» սանիտարական կանոնների և նորմերի մշակումը և դրա նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև ալիմենտար կախված հիվանդությունների մոնիտորինգի իրականացումը դպրոցականների շրջանում (Հավելված 1) • Ծրագրի իրականացումը կվերապահվի **ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոնին** (ԿԾԿ ԾԻԳ)՝ համալրելով համապատասխան մասնագետներով: ԿԾԿ ԾԻԳ-ի կարողությունները Ծրագրի ընդլայնմանը զուգընթաց կզարգացվեն և կամբողջացվեն այն հեռանկարով, որ Ծրագրի ավարտին այն կարող լինի ինքնուրույն իրականացնել դպրոցական սննդի համակարգի առանցքային օղակի դերը: ԿԾԿ ԾԻԳ-ի պատասխանատվության շրջանակում կլինի նաև մասնակցությունը **փորձնական միկրոծրագրերի** իրականացմանը: (Հավելված 1) • Ծրագիրը ներկայում իրականացվում է հիմնականում **միջազգային**

				դոնորների միջոցներով: ՀՀ կառավարությունը աստիճանաբար ստանձնելով ծրագրի իրականացման պատասխանատվությունը կապահովի դպրոցականների սննդի բազային ֆինանսավորումը, որը մեկ սովորողի համար կազմում է օրական 140 դրամ, որն իր մեջ ընդգրկում է կաթ (200մլ) և թխվածք/բուլկի (50 գրամ): Երեխաների նախաճաշի բազմազանությունը ապահովելու նպատակով դպրոցական կաթ ծրագրով, որպես այլընտրանքային կերակրատեսակներ, նախատեսվում է երեխաներին հատկացնել նաև կակաո, կեֆիր, յոգուրտ, հյութ և այլն: (Հավելված 1) • Ռազմավարության իրականացման նպատակով 2013թ. կձևավորվի **միջգերատեսչական հանձնաժողով՝** ՀՀ ԿԳՆ գլխավորությամբ: 2013-2016թթ. նախատեսվում է իրականացնել ծրագրի վերաբերյալ իրազեկության բարձրացում: (Հավելված 1) • Փորձնական ծրագրի իրականացումը մարզերում կստանձնի ՀՀ ԿԳՆ-ն: (Հավելված 2)
176.	**«2016 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 44, ընդունված է՝ 01.10.2015* Հավանություն է տալիս 2016թ. առողջապահական պետական նպատակային ծրագրերին և դրանք ՀՀ 2016թ. պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնում է ՀՀ Ազգային ժողով:	1. 2016թ. առողջապահության ոլորտում պետության կողմից իրականացվող **նպատակային ծրագրերը** ներառում են **մոր և մանկան առողջության պահպանման** ապահովումը: (Հավելված 1) 2. Առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է **ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին**: (Հավելված 1) 3. Ծրագրի՝ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորվող միջոցառումները ներառում են. **ստուգումների** իրականացում **հղիության արհեստական ընդհատման** նկատմամբ, **վերարտադրողականության դոնորների**, ինչպես նաև վերարտադրողականության դոնոր չհանդիսացող քաղաքացիների կողմից **սեռաբջիջների տրամադրման**, տրամադրված **սեռաբջիջների և սաղմի պահպանման** նկատմամբ, ինչպես նաև **մինչև 18 տարեկան անձանց**, ինչպես նաև **հղի** կամ **երեխային կրծքով կերակրող կանանց** և **երեխա խնամող աշխատողներին**՝ սահմանված **երաշխիքների ապահովման** նկատմամբ **հսկողության** և **վերահսկողության** իրականացումը: (Հավելված 1) 4. 2016թ. առողջության **առաջնային պահպանման** պետական նպատակային ծրագրի՝ ՀՀ 2016թ. պետական բյուջեից ֆինանսավորվող միջոցառումները՝ **առաջնային բուժօգնության** գծով ներառում են՝ ամբուլատոր-պոլիկլինիկական մասնագիտացված **ստոմատոլոգիական** բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ **մինչև 8 տարեկան** երեխաներին**, 12 տարեկան** երեխաներին, **նախազորակոչային** տարիքի անձանց առողջական վիճակի **հետազոտումը**, **գնահատումը**, բժշկական **օգնության և սպասարկման** կազմակերպումը՝ ներառյալ **ուղեգրումը** հիվանդանոցային կազմակերպություն՝ **անվճար բուժման** նպատակով, **նախազորակոչային** տարիքի անձանց շրջանում **տուբերկուլոզի կանխարգելումը** ու **հիվանդների ակտիվ հայտնաբերումը**, **գյուղական բնակավայրերում բուժակ-մանկաբարձական** կետերի միջոցով բնակչության առաջնային նախաբժշկական օգնության և սպասարկման իրականացումը, **հղիների և գինեկոլոգիական հիվանդություններով տառապող կանանց մանկաբարձագինեկոլոգիական օգնության** ապահովումը՝ **կանանց կոնսուլտացիաների** (կաբինետների) միջոցով՝ համաձայն մոր և մանկան առողջության պահպանման 2016թ. պետական նպատակային ծրագրի: (Հավելված 1) 5. **Մոր և մանկան առողջության պահպանման** 2016թ. պետական նպատակային ծրագրի **նպատակներն** են՝ 2016թ. ապահովել. **երեխաների բժշկական օգնության** կազմակերպման անհրաժեշտ **ծավալներն ու մատչելիությունը**, ինչպես նաև **հիվանդությունների կանխարգելման** միջոցառումների իրականացումը՝ ուղղված **մանկական մահացության և հիվանդացության** ցուցանիշների նվազեցմանը, ինչպես նաև **անվտանգ մայրության հովանավորումը**, **սկրինինգային ծրագրերի** իրականացումը, **ծննդօգնության** և **վերարտադրողական առողջության ծառայությունների** անհրաժեշտ **ծավալների ու մատչելիության** ապահովումը՝ ուղղված **մայրական**, **շուրջծննդյան** (պերինատալ) **հիվանդացության ու մահացության** ցուցանիշների նվազեցմանը, ինչպես նաև **կանանց վերարտադրողական առողջության** բարելավմանը: (Հավելված 1) 6. **Մոր և մանկան առողջության պահպանման ծրագրի**՝ ՀՀ 2016թ. պետական բյուջեից ֆինանսավորվող միջոցառումները **երեխաների բժշկական օգնության** ուղղությամբ ներառում են «Երեխաների և դեռահասների առողջության ու զարգացման ազգային ռազմավարության ներդրման 2010-2015թթ. գործողությունների ծրագիր» շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարությանը վերապահված և 2016թ. համար նախատեսված ծրագրերի և միջոցառումների իրականացումը: (Հավելված 1) 7. Մասնավորապես, **ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության** գծով նախատեսվում է մինչև 18 տարեկան երեխաների **ամբուլատոր-պոլիկլինիկական (արտահիվանդանոցային) բուժօգնության** կազմակերպումը, այդ թվում՝ տեղամասային	Մոր և մանկան առողջության պահպանման ծրագրի՝ ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվող միջոցառումները կազմակերպա-մեթոդական գործունեության գծով, մասնավորապես, նախատեսում են՝ երեխաների ռացիոնալ սնուցման վերաբերյալ **տեղեկատվական-իրազեկման կրթական և կազմակերպչական** ծրագրերի իրականացումը, բժշկական մասնագետների և հասարակության լայն զանգվածների համար **մեթոդական և լուսավորչական** նյութերի մշակումը, տպագրումը, տարածումը, հեռուստա-ռադիո-հեռարձակումների կազմակերպումը, երեխայի առողջության պետական հավաստագրի շարունակական ներդրման և **մոնիթորինգի կազմակերպա-մեթոդական աշխատանքներ, առողջ մայրության**, **անվտանգ սեռական վարքագծի** քարոզչությանն ուղղված **հանրային իրազեկման** ծրագրերի իրականացում, առողջ մայրության, **վերարտադրողական օրգանների քաղցկեղային հիվանդությունների կանխարգելմանը**, անվտանգ սեռական վարքագծի **հղիության ընդհատմանը**, այդ թվում **դեղորայքային, անվտանգության քարոզչությանն** ուղղված հանրային իրազեկման ծրագրերի իրականացում, **ծննդօգնության պետական**	• ՀՀ առողջապահության նախարարություն (Հավելված 1)

		մանկաբույժների, ընտանեկան բժիշկների կողմից մինչև 18 տարեկան երեխաների **զարգացման և առողջության հսկողությունն** ու **բուժօգնության** իրականացումը (առողջ երեխայի հսկողությունը՝ աճի և զարգացման գնահատմամբ, հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ՝ ներառյալ պատվաստումների իրականացում, հիվանդությունների վաղ հայտնաբերումը և հիվանդ երեխայի բժշկական օգնություն), **ծնողների հետ** տարվող **առողջապահական կրթման** և **քարոզչական** աշխատանքների իրականացումը՝ երեխայի **խնամքի, սնուցման և հիվանդությունների կանխարգելման** վերաբերյալ գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով, մինչև 18 տարեկան երեխաների **նեղ մասնագիտական բուժօգնության** իրականացումը և **լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների** անցկացումը, ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում անհրաժեշտության դեպքում նաև բոլոր մասնագետների կողմից երեխաների **անհետաձգելի բժշկական օգնության** ապահովումը՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից, **բուժքույրերի կողմից դպրոցներում երեխաների բժշկական օգնության** և **սպասարկման** ապահովումը՝ տարածքային սպասարկման պոլիկլինիկայի ղեկավարության և պատասխանատվության ներքո, **երեխաների բերանի խոռոչի հիգիենայի** ծրագրի իրականացումը և **ստոմատոլոգիական օգնության** կազմակերպումը, **14-15 տարեկան արական սեռի անձանց, նախազորակոչային տարիքի պատանիների** առողջական վիճակի **գնահատումը**, ըստ անհրաժեշտության **բուժօգնության** կազմակերպումը, **դպրոցներում երեխաների բուժօգնության** գործընթացի կազմակերպումը, **առողջության գնահատմանն** ուղղված ընթացիկ զննումների իրականացումը, **արտահիվանդանոցային**/ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության այլ տեսակներ, մինչև 18 տարեկան երեխաների **նեղ մասնագիտական խորհրդատվական**, **լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների** և **բժշկական օգնության** իրականացումը **հիվանդանոցային հաստատությունների ամբուլատոր-պոլիկլինիկական** (արտահիվանդանոցային) ստորաբաժանումների կողմից, **խրոնիկ հիվանդ** երեխաների **դիսպանսերային հսկողության** և **բուժօգնության** իրականացումը՝ պոլիկլինիկաների համապատասխան մասնագետների կամ մասնագիտացված հիվանդանոցային հաստատությունների դիսպանսերային ստորաբաժանումների կողմից, ինչպես նաև **արտահիվանդանոցային** պայմաններում **երեխայի զարգացման գնահատման** և **վերականգնողական բուժօգնության** ծառայությունների մատուցումը՝ համապատասխան պայմաններ ունեցող վերականգնողական կենտրոններում (ստորաբաժանումներում): (Հավելված 1) 8. **Հիվանդանոցային բուժօգնության** գծով նախատեսվում է՝ **սոցիալապես անապահով** և **առանձին** (**հատուկ**) **խմբերում** ընդգրկված (այդ թվում **մինչև 7 տարեկան**) երեխաների **հիվանդանոցային բուժօգնության** կազմակերպումը, **սոցիալական և հատուկ նշանակություն** ունեցող առանձին **հիվանդություններով** (հոգեկան խանգարումներ, դիաբետ, չարորակ նորագոյացություններ, սեռավարակներ, տուբերկուլոզ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ, ինֆեկցիոն հիվանդություններ) տառապող երեխաների **հիվանդանոցային բժշկական օգնության** ապահովումը, մինչև 18 տարեկան երեխաների **վերակենդանացման** և հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող **անհետաձգելի վիճակների** ու **սուր հիվանդությունների** բուժումը, **նորածնային և վաղ հասակի** երեխաների **անհետաձգելի** բուժօգնության ծառայությունների ուժեղացման ծրագրերի/միջոցառումների իրականացումը, **նորածնային սկրինինգ** ծրագրերի իրականացումը (ֆենիլկետոնուրիայի, բնածին հիպոթիրեոզի, լսողության, անհասության ռետինոպաթիայի և կոնքազդրային սկրինինգներ), երեխաների **արտագնա հիվանդանոցային անհետաձգելի** բուժօգնության ծառայությունների կազմակերպումը, երեխայի առողջության պետական **հավաստագրի** ծրագրի շարունակական ներդրումը: (Հավելված 1) 9. **Վերականգնողական-առողջարանային բուժման** գծով նախատեսվում է՝ **սոցիալապես անապահով** և **հատուկ (առանձին) խմբերում** ընդգրկված երեխաների, այդ թվում **մինչև 7 տարեկան խրոնիկ հիվանդ** երեխաների **վերականգնողական-առողջարանային** բուժօգնության կազմակերպումը՝ համապատասխան բժշկական կազմակերպություններում, վերականգնողական-առողջարանային բուժման ընթացքում, աղ**ատության (ընտանեկան) նպաստների համակարգում ընդգրկված 30 և ավելի բարձր անապահովության միավոր** ունեցող ընտանիքների երեխաների **խնամակալների կացարանային-առողջարանային ծախսերի հոգածությունը**, եթե երեխան ունի անհատական խնամքի կարիք: (Հավելված 1) 10. **Այլ մասնագիտացված բուժօգնության** գծով նախատեսվում է՝ **հաշմանդամ և սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված** երեխաների **պրոթեզա-օրթոպեդիկ** իրերով ապահովումը (օրթեզավորում, կորսետավորում), **տուբերկուլոզի** ազգային ծրագրի շրջանակներում ռիսկի խմբի երեխաների մոտ անհրաժեշտ ծավալով **լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների**, այդ թվում խորխի բակտերիոլոգիական քննության ապահովումը, հատուկ կարևորելով դեռահասության շրջանում **տուբերկուլոզի կանխարգելման** հիմնախնդիրը, **ՄԻԱՎ վարակակիր մորից ծնված և ֆենիլկետոնուրիայով հիվանդ** երեխաներին **ադապտացված և հատուկ բժշկական կաթնախառնուրդներով** ապահովումը: (Հավելված 1) 11. Մոր և մանկան առողջության պահպանման ծրագրի՝ ՀՀ 2016թ. պետական բյուջեից ֆինանսավորվող միջոցառումները **մանկաբարձագինեկոլոգիական օգնության ուղղությամբ** ներառում են «Վերարտադրողական առողջության բարելավման 2008-2015թթ. ազգային ծրագրի» շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարությանը վերապահված և 2016թ. համար նախատեսված ծրագրերի և միջոցառումների իրականացումը (Հավելված 1) 12. Մասնավորապես, **ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության գծով** նախատեսվում է՝ մանկաբարձ-գինեկոլոգի, ընտանեկան բժշկի և մանկաբարձուհու կողմից **հղիների և ծննդկանների հսկողության** իրականացումը, **նախածննդյան հսկողության** ընթացքում հղիներին անհրաժեշտ **լաբորատոր- գործիքային ախտորոշիչ հետազոտությունների** իրականացումը, **բարձր ռիսկի հղիների հսկողությունը**, մասնագիտական **խորհրդատվությունը** և լաբորատոր-գործիքային **հետազոտությունների** ապահովումը, «**Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում**» ծրագրի ներդրումը՝ ապահովելով **բոլոր հղիների կամավոր խորհրդատվությունը** և **հետազոտումը**, **թեսթերի ձեռք բերումը** և **անվճար հետազոտման** շարունակական ապահովումը, **բուժաշխատողների ուսուցումը**, **բնակչության իրազեկումը**, «Հղիների սոցիալ-հոգեբանական աջակցության և ծննդաբերությանը ֆիզիկական նախապատրաստումը» ծրագրի շրջանակներում («**Մայրական դպրոց**») ծառայությունների մատուցումը՝ ծննդօգնության հիվանդանոցային և ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններում, **գինեկոլոգիական հիվանդությունների վաղ հայտնաբերումը**, **գինեկոլոգիական հիվանդություններով տառապող կանանց բուժման** և շարունակական **հսկողության** ապահովումը մանկաբարձ-գինեկոլոգի կողմից, հղիների և գինեկոլոգիական հիվանդություններով տառապող կանանց մասնագիտացված **բուժխորհրդատվական** օգնության կազմակերպումը մանկաբարձա-գինեկոլոգիական կազմակերպությունների կողմից, **սեռավարակների և պերինատալ հատուկ ինֆեկցիաների**՝ ռիսկի խմբի կանանց հետազոտումը և բուժումը, **անցանկալի հղիությունների կանխարգելման** և **հղիության արհեստական ընդհատումների կրճատման**, **ընտանիքի պլանավորման**	**հավաստագրի** շարունակական ներդրման և մոնիթորինգի կազմակերպական աշխատանքներ: (Հավելված 1) (Հավելված 1) (Հավելված 1) (Հավելված 1) (Հավելված 1) (Հավելված 1) (Հավելված 1)	

		ժամանակակից մեթոդների և բեղմնականխման արդյունավետ միջոցների տարածման միջոցառումների իրականացումը, բնակչության **անապահով և առանձին (հատուկ) խմբերում** ընդգրկված անձանց **հետազոտումն ու բուժումը՝ անպտղության** կապակցությամբ, **քաղցկեղի կանխարգելման** նպատակով 30-60 տարեկան կանանց **արգանդի վզիկի սկրինինգային հետազոտումը**, **հղիների ստոմատոլոգիական** օգնությունը՝ բերանի խոռոչի սանացիան: (Հավելված 1) 13. **Հիվանդանոցային բուժօգնության գծով** ծրագիրը նախատեսում է՝ **մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր և մասնագիտացված հիվանդանոցային** կազմակերպություններում **հղի կանանց**, **ծննդաբերների** ու **ծնունդների հիվանդանոցային բժշկական օգնության** ապահովումը (**հղիության ախտաբանությամբ** և **բարձր ռիսկով հղիների բուժօգնությունը**, **ծննդալուծումը**, այդ թվում **կեսարյան հատումով**, **բուժօգնությունը հետծննդյան 42 օրերի ընթացքում**, **նորածինների վերակենդանացման և անհետաձգելի բուժօգնության** կազմակերպումը, այդ թվում **ցածր քաշով ծնված նորածինների խնամքը**), **նորածնային հեմոլիտիկ հիվանդության կանխարգելման** նպատակով **ռեզուս-բացասական պատկանելիությամբ ծնունդներին հակառեզուս իմունոգլոբուլինով իզոիմունիզացիայի** ապահովումը, **գինեկոլոգիական հիվանդությունների** դեպքում՝ **հիվանդանոցային բժշկական օգնություն** պահանջող **անհետաձգելի** վիճակների **բուժօգնության** ապահովումը հիվանդանոցային բուժկազմակերպություններում, **արտոնյալ պայմաններով**, **հղիության արհեստական ընդհատման ապահովումը բժշկական** և **սոցիալական ցուցումներով**, **բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում** ընդգրկված **կանանց կոնսերվատիվ և օպերատիվ գինեկոլոգիական օգնության** ու **հղիության արհեստական ընդհատման** ապահովումը, **հղիների և գինեկոլոգիական հիվանդների**, ըստ անհրաժեշտության **նեղ մասնագիտական խորհրդատվական**, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ **հետազոտությունների** և **արտահիվանդանոցային բժշկական օգնության** իրականացումը բժշկական նեղ մասնագիտական բժշկական կենտրոնների, միավորումների, համալիրների պոլիկլինիկական (արտահիվանդանոցային) ստորաբաժանումների կողմից, **արտագնա**, **անհետաձգելի մանկաբարձա-գինեկոլոգիական** և **հարակից շտապ բուժօգնության** կազմակերպումը, այդ թվում **հղիների և գինեկոլոգիական հիվանդների տեղափոխումը** բարձր մակարդակի ծննդօգնության հաստատություններ և առաջատար բազմապրոֆիլ բժշկական կազմակերպություններ, «Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ռազմավարության» շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրագործվող ծրագրերի ներդրման ապահովումը: (Հավելված 1) 14. Շարունակվելու է **աղքատության նպաստների համակարգում ընդգրկված անպտուղ զույգերին վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների** կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման առանձին տեսակների տրամադրման, ինչպես նաև անցանկալի հղիությունների կանխարգելման նպատակով հակաբեղմնավորիչ ժամանակակից միջոցների մատչելիության ապահովման ծրագրերը: (Հավելված 1) 15. **Դեղերով ապահովման ուղղությամբ** ծրագիրը նախատեսում է **տեղամասային մանկաբույժների** կամ **ընտանեկան բժիշկների**, իսկ առանձին հիվանդությունների գծով **ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի** համապատասխան մասնագետների միջոցով **արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող երեխաների և կանանց դեղերով ապահովումը**: (Հավելված 1) 16. **Հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ուղղությամբ** ծրագիրը նախատեսում է **բժշկական հիմնավորված ցուցումների** առկայության դեպքում **երեխաներին և կանանց հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների** իրականացման ապահովումը: (Հավելված 1)		
177.	**«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016 թվականի տարեկան ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 44, ընդունված է՝ 01.10.2015* Հավանություն է տալիս Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016թ. տարեկան ծրագրին և միջոցառումների ցանկին և դրանք ՀՀ 2016թ. պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնում է ՀՀ Ազգային ժողով:	1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2016թ. տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները ներառում են հանրապետության ուսումնական հաստատություններում մատչելիության ապահովում՝ թեքահարթակների, հարմարեցված սանհանգույցների կառուցում (Հավելված 2): 2. Ծրագրով նախատեսվում է նաև՝ շուրջ 3 000 երեխայի ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտում և գնահատում, հանրապետության 159 հանրակրթական դպրոցում ներառական կրթության կազմակերպում շուրջ 5,000 երեխայի համար, 2.2 հազար հատուկ կրթության կարիք ունեցող երեխայի կրթության կազմակերպում 23 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նախատեսված ծրագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակում, հրատարակում և ձեռքբերում, միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ընդունելության ժամանակ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ ստանալու դեպքում 1-ին ու 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց համար անվճար հիմունքներով կրթության ապահովում: (Հավելված 2) 3. Ծրագրով նախատեսվում է հաշմանդամություն ունեցող երիտասարդների ընդգրկում Գեղեցիկ արվեստների ակադեմիայի կրթական ուսուցման ծրագրերում (գրաֆիկական դիզայն, արդուզարդի դիզայն, հագուստների մոդելավորում) և կրթության և հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող մասնագետների պատրաստում՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանում 2011 թվականից հիմնադրված Հատուկ կրթության ֆակուլտետում: (Հավելված 2) 4. Ծրագիրը նախատեսում է հաշմանդամություն ունեցող 6-24 տարեկան 160 շահառուի սպասարկում ցերեկային կենտրոնում, 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամ երեխաներին անվճար, 3-րդ խմբին՝ 50% զեղչով դեղերի տրամադրում, մինչև 12 տարեկան 200 երեխայի լսողական սարքի ներդիրներով ապահովում, լսողության խնդիրներ ունեցող շուրջ 160 մինչև 12 տարեկան երեխայի լսողական սարքերով ապահովում, 12-18 տարեկան երեխաներին և 18-30 տարեկան հաշմանդամություն ունեցող շուրջ 105 անձի եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերով ապահովում, միայնակ մայրերի հաշմանդամություն ունեցող երեխաների համար վերականգնողական ծրագրերի իրականացում (հիպոթերապիա, հիդրոթերապիա), «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի Երևանի, Լոռու, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի մասնաճյուղերում գեղագիտական, արհեստագործության անվճար ուսուցման ծրագրերի իրականացում 12 մասնագիտությամբ, տեղաշարժման դժվարություն և հաշմանդամություն ունեցող անձանց համար գրադարանային սպասարկում տնային պայմաններում Լոռու և Շիրակի մարզերում, մանկապատանեկան արվեստի ինտեգրատիվ հանրապետական փառատոնի իրականացում, հաշմանդամություն ունեցող երեխաների համար այցելությունների կազմակերպում Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ	2014/2015թթ ուսումնական տարում շարունակվել են աշխատանքները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար նախատեսված միջոցառումների իրականացման և ներառական կրթության ընդլայնման ուղղությամբ՝ Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից (ներառյալ մասնաճյուղերը) 2014թ. իրականացվել է շուրջ 3,000 երեխայի կրթական կարիքների բացահայտում և գնահատում, նրանց հանրակրթությունը կազմակերպելու նպատակով (ԱՀԿ ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների և մոտեցումների հիման վրա), հանրապետության 23 հատուկ հանրակրթական դպրոցում կազմակերպվել է շուրջ 2,200 հատուկ կրթության կարիք ունեցող երեխայի կրթություն, 2014/2015թթ. ուստարում հանրապետությունում գործող 139 ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցում սովորել են շուրջ 3,000 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք	• ՀՀ քաղաքաշինության նախարարություն • ՀՀ ԿԳՆ • ՀՀ մարզպետարաններ • Երևանի քաղաքապետարան • ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ մշակույթի նախարարություն • Հասարակական կազմակերպություններ («Լիարժեք կյանք» ՀԿ, «Հավատ» ՀԿ»)

		գործող մշակութային կազմակերպություններ, ինչպես նաև, հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների ներառում հասարակություն մշակութային և սպորտային միջոցառումների միջոցով: (Հավելված 2)	ունեցող երեխա, ապահովվել է անվճար հիմունքներով կրթությունը միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, առնվազն անցումային միավոր ստացած հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև ուսման ընթացքում հաշմանդամ դարձած անձանց համար, մշակվել, տպագրվել և ձեռք են բերվել ուսումնամեթոդական ձեռնարկներ ու այլ ուսումնական նյութեր՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար: Միջազգային և հասարակական կազմակերպությունների միջոցով 2014 թվականին մինչև 12 տարեկան 125 երեխայի տրամադրվել է 241 հատ OTIKON և SIEMENS ֆիրմաների թվային լսողական սարքեր: (Հավելված 1) Ծրագիրը նախատեսվում է ՀՀ և ԼՂՀ հաշմանդամություն ունեցող շնորհալի երեխաների տեղեկատվական բանկի համալրում: (Հավելված 2)	
178.	**«Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման ռազմավարությանը և դրանից բխող՝ 2015-2016 թվականների միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 37, ընդունված է՝ 06.08.2015* Հավանություն է տալիս մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման ռազմավարությանը, ռազմավարությունից բխող՝ 2015-2016թթ. միջոցառումների ցանկին, հանձնարարականներ է տալիս պատասխանատու մարմինների ղեկավարներին:	1. Ռազմավարության **հիմնական նպատակներն** են՝ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների թվաքանակի կրճատում և ոլորտի խնդիրների լուծման համակարգային մոտեցումների մշակում, մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների և նրանց ընտանիքների հայտնաբերման ուղղությամբ համալիր միջոցառումների իրականացում, մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաներին հասարակությանն ինտեգրելու համար անհրաժեշտ գործողությունների ապահովում, մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի խնդիրների մշտադիտարկում (մոնիթորինգ) և այդ առնչությամբ հասարակական լայն շրջանակներին իրազեկում, շահագրգիռ գերատեսչությունների և սոցիալական մարմինների ուղղորդված գործողությունների համախմբման միջոցով մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների զբաղվածության ապահովում, վերջիններիս ֆիզիկական, մտավոր և հոգևոր զարգացման համար անհրաժեշտ նախապայմանների ապահովում: (Հավելված 1) 2. Սահմանում է ռազմավարության **սկզբունքները**: (Հավելված 1) 3. Ռազմավարության նպատակների իրագործումից **ակնկալվող արդյունքներն** են՝ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների թվաքանակի կրճատում, մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների սոցիալական խնամքի, դաստիարակության և ընդհանուր հոգածության մակարդակի բարձրացման ուղղությամբ պետական և հասարակական կազմակերպությունների ջանքերի առավելագույն կենտրոնացում, միասնական քաղաքականության վարման մեթոդների կատարելագործում, մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների իրավունքների պաշտպանության և ոլորտի հիմնախնդիրների լուծման հրատապության վերաբերությամբ հանրային իրազեկվածության աստիճանի բարձրացում, սոցիալական ուղղվածության նոր ծրագրերի մշակում և առանձին նախաձեռնությունների իրականացման համար նախապայմանների ստեղծում: (Հավելված 1) 4. Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների թվաքանակի կրճատմանն ուղղված միջոցառումների **ուղղություններն** են. միասնական քաղաքականության մշակում, անհրաժեշտ տվյալների հավաքագրում, անհրաժեշտ օգնության ցուցաբերում, կանխարգելում, մասնագետների պատրաստում, հանրային իրազեկում: (Հավելված 1) 5. Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող՝ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների և նրանց ընտանիքների հայտնաբերման, ըստ բնակավայրերի հաշվառման և շահագրգիռ մարմիններին համապատասխան տվյալների տրամադրման նպատակով ծրագիրը նախատեսում է Պարբերաբար ստուգայց շրջագայությունների անցկացում Երևան քաղաքի վարչական շրջաններում և ՀՀ մարզերում 2015-2016թթ.: (Հավելված 2) 6. Նախատեսվում է շահագրգիռ պետական մարմինների և ՀԿ-ների հետ կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ, բարձրացնել խնդիրները, մշակել տեղեկատվության փոխանակման և երեխաների մուրացկանության և թափառաշրջիկության դեպքերի փոխանցման կարգ: (Հավելված 2) 7. Նախատեսվում է իրազեկվածության բարձրացման նպատակով սեմինարների կազմակերպել՝ յուրաքանչյուր ծնողի նկատմամբ անհատական մոտեցման ձևաչափով՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով մանկավարժի, հոգեբանի և սոցիալական ոլորտի համապատասխան ծառայողի: (Հավելված 2) 8. Դպրոց չհաճախող և մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հայտնաբերման և նրանց վերադարձը կրթօջախներ ապահովելու նպատակով, 2015-2016թթ. նախատեսվում է մ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի պարբերաբար այցելություններ դպրոցներ, մուրացկանության և թափառաշրջիկության կանխարգելման թեմաներով դասընթացների կազմակերպում, այդ թվում՝ խորհրդատվությունների տրամադրում: (Հավելված 2)	Պատասխանատու մարմինների ղեկավարներին հանձնարարում է միջոցառումների ցանկով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ մինչև յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 20-ը տեղեկատվություն ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն: (Կետ 2) ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետին հանձնարարում է ամփոփել ստացված տեղեկատվությունը և մինչև յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 30-ը հաշվետվություն ներկայացնել ՀՀ կառավարություն: (Կետ 3) 2012թ. ՀՀ ոստիկանության կողմից պրոֆիլակտիկ հաշվառման է վերցվել մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող 16 երեխա, 2013 թվականին՝ 13, իսկ 2014 թվականին՝ 7 երեխա: (Հավելված 1) Նախատեսվում է միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից առողջական խնդիրներ ունեցող մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների տվյալների հավաքագրում, կարիքների գնահատում և պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում: (Հավելված 2)	• ՀՀ-ում մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հետ տարվող աշխատանքների ընդհանուր համակարգումը իրականացվում է ոստիկանության կողմից: (Հավելված 1) • Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով • ՀՀ ԿԳՆ • ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ ՏԿԱԻՆ • ՀՀ առողջապահության նախարարություն • Երևանի քաղաքապետարան • Ինտեգրված սոցիալական ծառայություններ • ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն • Շահագրգիռ գերատեսչությունների և ՀԿ-ների միջև համագործակցության կատարելագործման մշակույթ ձևավորելու նպատակով նախատեսվում է մասնագիտական, հայեցակարգային նոր մոտեցումների, մոդելների և մեխանիզմների մշակում և կիրառում (Հավելված 2)

		9. Հիմնախնդրի լուծման և աշխատանքային խմբի համատեղ աշխատանքներին Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների պատասխանատուների ներգրավման նպատակով նախատեսվում է կազմակերպել համատեղ հանդիպումների և քննարկումների կազմակերպում, տեղեկատվության փոխանակում, յուրաքանչյուր դեպքով համագործակցություն: (Հավելված 2) 10. 2016թ. կմշակվի մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների ուղղորդման մեթոդաբանության (Հավելված 2) 11. Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների հետ աշխատող ոստիկանության ծառայողների, սոցիալական աշխատողների մասնագիտական ուսուցման նպատակով 2016թ. կկազմակերպվեն սոցիալական ոլորտի մասնագետների որակավորման, մուրացկանության և թափառաշրջիկության երևույթի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների հաղորդմանն ուղղված դասընթացներ: (Հավելված 2) 12. Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված, մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների զբաղվածության ապահովման, մշակութային, մարզական և այլ խմբակների մեջ ներգրավման նպատակով նախատեսվում է շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ սոցիալական, մշակութային, մարզական, գեղարվեստական և այլ ուղղվածության համատեղ միջոցառումների իրականացում: (Հավելված 2) 13. Նախատեսվում է հասարակության շրջանում տարբեր միջոցառումների կազմակերպում՝ ապահովելով ՋԼՄ-ների մասնակցությունը: (Հավելված 2) 14. Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների, նրանց ընտանիքների հետ կկազմակերպվեն հանդիպումներ: (Հավելված 2) 15. Ամառային հանգստի ժամանակահատվածում, Սևանա լճի ափամերձ տարածքներում կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու՝ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաներին հայտնաբերելու նպատակով նախատեսվում են միջոցառումների, ստուգայց-շրջագայություններ երեխաների ամառային հանգստի վայրեր, Սևանա լճի ափամերձ տարածքներ: (Հավելված 2) 16. Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների վերադաստիարակմանը և վարքագծի սոցիալականացմանը խոչընդոտող գործոնների և պատճառների վերացման նպատակով նախատեսվում է սոցիալ-հոգեբանական, կրթական-ուսումնական ծառայությունների տրամադրում, երեխայի հետ մասնագետների կողմից երկարատև աշխատանքների իրականացում: (Հավելված 2)		
179.	**«Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թվականների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 36, ընդունված է՝ 13.09.2013* Հավանություն է տալիս Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թվականների ծրագրին:	1. Միջոցառումների ծրագրով նախատեսված է 2014-2017թթ. ստեղծել ցերեկային կենտրոններ առնվազն երկու համայնքում 30- 50 մտավոր և հոգեկան զարգացման խնդիրներ ունեցող երեխաների և դեռահասների համար: (Հավելված)		• Հիմնական կատարողը՝ ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ ԿԳՆ • ՀԿ-ներ • Մարզպետարաններ • Երևանի քաղաքապետարան
180.	**«Բռնկումների (համաճարակների), քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված արտակարգ իրավիճակների ժամանակ, ինչպես նաև առօրյա պայմաններում բնակչության (առանձին խմբերի) իրազեկման, բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության կարգին և**	1. Բռնկումների (համաճարակների), քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված արտակարգ իրավիճակների ժամանակ, ինչպես նաև առօրյա պայմաններում բնակչության (առանձին խմբերի) իրազեկումը, բժշկահիգիենիկ գիտելիքների տարածումը և առողջ ապրելակերպի քարոզչությունն իրականացվում է բժշկական որակավորում ունեցող անձնակազմի կողմից, նախադպրոցական կազմակերպություններում, երեխաների խնամքի և պաշտպանության կազմակերպություններում, հանրակրթական դպրոցներում, հատուկ դպրոցներում և մանկատներում՝ նաև մանկավարժների կողմից: (Հավելված 1) 2. Մշակվում և տեղայնացվում են ծնողների համար կրթական ուղեցույցներ, երեխաների, հատկապես՝ վաղ հասակի շրջանում բժշկահիգիենիկ գիտելիքների տարածումը և առողջ ապրելակերպի քարոզչությունն ապահովելու և իրազեկումը բարձրացնելու համար: (Հավելված 1)	Առօրյա պայմաններում բնակչության (առանձին խմբերի) իրազեկման, բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության խնդիրները ներառում են քաղաքաբնակ և գյուղաբնակ ազգաբնակչության համընդհանուր ընդգրկում իրազեկման գործընթացում, նպատակային բոլոր խմբերի (ելնելով տարիքային և մասնագիտական առանձնահատկություններից) կարիքների գնահատում, տեղեկատվական, կրթական նյութերի	• ՀՀ ԿԳՆ-ն ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ մշակում և գործադրում է ուսուցիչների համար կրթական ուղեցույցներ՝ երեխաների շրջանում բժշկահիգիենիկ գիտելիքների տարածումը և առողջ ապրելակերպի քարոզչությունն իրականացնելու ուղղությամբ: (Հավելված 1)

	միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում *N 15, ընդունված է՝ 19.04.2012* Հավանություն է տալիս բռնկումների (համաճարակների), քիմիական և ճառագայթային գործոններով պայմանավորված արտակարգ իրավիճակների ժամանակ, ինչպես նաև առօրյա պայմաններում բնակչության (առանձին խմբերի) իրազեկման, բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության կարգին՝ համաձայն N 1 հավելվածի. և միջոցառումների ծրագրին:		բավարար քանակի և հասանելիության ապահովում, իրականացված իրազեկման, կրթական, քարոզչական միջոցառումների գնահատում, հետադարձ կապ՝ գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում շահագրգիռ կողմերին: (Հավելված 1)	
181.	**«ՀՀ մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգին և դրա իրականացման 2012-2015 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 40, ընդունված է՝ 04.10.2012* Հավանություն է տալիս ՀՀ մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգին և դրա իրականացման 2012-2015թթ. միջոցառումների ծրագրին:	1. Հայեցակարգի շահառուների հիմնական խմբում են նաև **դպրոցականները**՝ ընդգրկելով տարրական, միջին և ավագ դպրոցները, որտեղից սկսվում են անձի բացահայտմանն ու մասնագիտությունների աշխարհում ճանաչողության բարձրացմանն ուղղված աշխատանքները, պարտադիր ուսուցումից դուրս մնացած կամ 16-25 տարեկան այն երիտասարդները, որոնք չունեն միջնակարգ կամ լրիվ կրթության ատեստատ կամ հեռացել են մասնագիտական ուսումնական հաստատությունից՝ առանց մասնագիտական որակավորման: Որպես շահագրգիռ կողմ հանդես են գալիս երեխաների և երիտասարդների հետ աշխատող մասնագետները, մանկավարժներն ու ծնողները, որոնք պետք է տեղեկացված լինեն անձին բացահայտելու և զարգացնելու ,մասնագիտական կրթությունը և ուսուցումը շարունակելու, աշխատաշուկայի պահանջների, աշխատանք փնտրելու բոլոր հնարավորությունների մասին՝ նպատակ ունենալով օգնել անձին գիտակցված կատարելու ապագա մասնագիտության և կարիերայի ընտրությունը: (Հավելված 1) 2. **Մասնագիտական կողմնորոշման առաջնային և հիմնական օղակը՝ և ընդգրկման, և բովանդակության առումով հանրակրթության համակարգն** է, որտեղ սկսվում շարունակվում և հիմնականում ամբողջացվում են կողմնորոշման աշխատանքները: Հանրակրթության ոլորտում աշխատանքները պետք է կազմակերպվեն՝ ըստ Հայաստանում գործող հանրակրթական դպրոցների, վարժարանների, կրթահամալիրների: Դրանց գործունեության հիմնական ուղղությունը պետք է լինի ուսուցման և դաստիարակության ընթացքում անձի բացահայտումն ու զարգացումը, հասարակության և աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը, մասնագիտության գիտակցված ընտրությանն աջակցելը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի հետաքրքրությունները, նախասիրությունները, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, առողջական վիճակը և աշխատաշուկայի պահանջները: Մասնագիտական կողմնորոշման աշխատանքները հանրակրթական դպրոցներում պետք է կատարվեն հանրակրթական ծրագրով մասնագիտական կողմնորոշման նպատակով նախատեսված կամ արտադասարանական ժամերի հաշվին: Այս աշխատանքներում ներգրավված մասնագետները պարբերաբար պետք է անցնեն վերապատրաստման դասընթացներ: Մասնագիտական կողմնորոշումը հանրակրթական ուսումնական հաստատություններում պետք է իրականացվեն համապատասխան ուսումնական ծրագրով, որը պետք է մշակվի և հաստատվի պատասխանատու շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությամբ: (Հավելված 1) 3. Մասնագիտական կողմնորոշման հիմնական աշխատանքները կատարվում են հանրակրթական ուսումնական **հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի, սոցիալական մանկավարժի, հոգեբանի, դասղեկների** կողմից: Այդ աշխատանքների համակարգման գործառույթները կարող են վերապահվել նրանց: Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ են տարվելու նաև առարկայական դասաժամերի հաշվին՝ համապատասխան ուսուցիչների կողմից: Համակարգող մասնագետները պետք է ունենան սոցիալական մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ, սովորողների հետ անհատական և խմբային աշխատանքներ իրականացնելու հմտություններ, ինչպես նաև աշխատաշուկայի, մասնագիտությունների և զբաղմունքների վերաբերյալ համակողմանի տեղեկացվածություն: Նրանք այս շրջանակներում պետք է սերտորեն համագործակցեն դասղեկների, առարկայական ուսուցիչների, աշակերտների ծնողների հետ: (Հավելված 1) 4. Մասնագիտական կողմնորոշման հաջորդ փուլը կամ օղակը՝ **նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական** և **բարձրագույն ուսումնական հաստատություններն** են: Այս ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման աշխատանքները պետք է կրեն շարունակական բնույթ և իրականացվեն կարիերայի կենտրոնների միջոցով: Նախնական, միջին մասնագիտական և բուհական հաստատությունների ուսումնական ծրագրերը կներառեն «Կարիերայի կառավարում» առարկան, որն ուղղված կլինի անձի ինքնագնահատման, աշխատանքի և հասարակության միջև կապի, կարիերայի պլանավորման, ձեռներեցությամբ սեփական զբաղվածությունն ապահովելու և աշխատաշուկա մուտք գործելու համար հիմնական կարողունակությունների զարգացմանը: Նշյալ փուլում պետք է տարվեն նաև անհատական աշխատանքներ՝ արդեն կոնկրետ մասնագիտությունների, պաշտոնների, տնտեսության առանձին ճյուղերի վերաբերյալ: Սերտ համագործակցություն պետք է հաստատվի առանձին գործատուների, գործատուների կազմակերպությունների հետ: (Հավելված 1)	ՀՀ ԿԳՆ-ն կապահովի՝ կրթական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրման իրավական, գործառնական և ինստիտուցիոնալ հիմքերը, աջակցություն ՄԿՈՒ և բարձրագույն ուսումնական հաստատություններում կարիերայի կենտրոնների ստեղծմանն ու զարգացմանը, համապատասխան մասնագետների վերապատրաստման և որակավորման կազմակերպումը, մոնիտորինգը և գնահատումը: (Հավելված 1) Մասնագիտական կողմնորոշման համակարգի առանցքային խնդիրներից է մեկ միասնական տեղեկատվական շտեմարանի ձևավորումը: Մասնագիտական կողմնորոշման ծառայությունների համար անհրաժեշտ շտեմարանը պետք է ներառի տեղեկատվություն տնտեսության ոլորտների և ճյուղերի, զբաղմունքների, մասնագիտությունների և դրանց նկարագրությունների, նաև հենակետային ավագ դպրոցների, մասնագիտական ուսումնական հաստատությունների, յուրաքանչյուրում ուսուցանվող մասնագիտությունների, որակավորումների, ընդունելության պայմանների ու արտոնությունների մասին: Այդ նպատակով պատասխանատու պետական մարմինների իրավասության շրջանակներում առկա տեղեկատվության ստացման, շտեմարանի ձևավորման և վարման, շահագրգիռ կողմերի միջև տեղեկատվության փոխանակման կարգը կսահմանի ՀՀ կառավարությունը: Զուգահեռաբար, մասնագիտական կողմնորոշման	• Մասնագիտական կողմնորոշման շահագրգիռ և պատասխանատու պետական կառավարման մարմիններ են **ՀՀ ԱՍՀՆ**-ն և **ՀՀ ԿԳՆ**-ն նախարարությունները: (Հավելված 1) • Մասնագիտական կողմնորոշման գործընթացներում անմիջականորեն պետք է մասնակցեն նաև **ՀՀ էկոնոմիկայի**, **առողջապահության**, **սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունները**, ինչպես նաև **սոցիալական գործընկերներն** ու **քաղաքացիական հասարակության** շահագրգիռ մյուս կողմերը: (Հավելված 1) • Որպես մասնագիտական կողմնորոշման հանրապետական ուսումնամեթոդական կենտրոն առաջարկվում է ԱՍՀՆ համակարգում գործող **ԵՄԿԿ ՊՈԱԿ-ը**, որը ուսումնամեթոդական աշխատանքներից զատ կոնկրետ ծառայություններ է մատուցում նաև կրթության համակարգում՝ հատկապես հանրակրթության բարձր դասարաններում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման հաստատություններում և բուհերում: Ակտիվորեն համագործակցում է նաև գործատուների ու գործատուների կազմակերպությունների հետ:

			տեղեկատվական շտեմարանը համադրման ամբողջական հնարավորություն կտա գործատուներից և համապատասխան պետական մարմիններից ու հնարավոր այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա ձևավորված աշխատաշուկայի պահանջարկի ընթացիկ և կանխատեսվող տեղեկատվության և պահանջվող մասնագիտությունների աշխատուժի մասին տեղեկատվական շտեմարանի հետ: (Հավելված 1)	
182.	**«Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգին և դրանից բխող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 51, ընդունված է՝ 04.12.2014* Հավանություն է տալիս երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների ցանկին:	1. Պետության կողմից դեռևս **սահմանված չեն բռնության երևույթի գնահատման չափանիշները**, **դրսևորման ձևերի, տարածվածության մասին տեղեկատվությունը**, **շահագրգիռ մարմինների համաձայնեցված արձագանքման և գործունեության մեխանիզմները**: **Բացակայում են բռնության ենթարկված երեխաների վերականգնողական ծառայությունները** և երևույթի **կանխարգելմանն ուղղված միջոցառումները**, **ձևավորված չէ** նաև հասարակության կողմից երևույթի նկատմամբ **անհանդուրժողական վերաբերմունքը**: (Հավելված 1) 2. **Երեխայի հանդեպ բռնությունը** նրա իրավունքների և ազատությունների սահմանափակումն է, անվտանգության խախտումը և անձի արժանապատվության ոտնահարումը, ցանկացած վարքագիծ, որի կիրառումը կարող է վնաս հասցնել երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջությանը և զարգացմանը: Երեխայի հանդեպ **սեռական բռնություն** է հանցագործությունը երեխայի սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ: Երեխայի հանդեպ **ֆիզիկական բռնություն** է երեխային ծեծելը, կամ այլ բռնի գործողություններ կատարելը, խոշտանգելը, մարմնական վնասվածք հասցնելը կամ մարմնական պատժի ենթարկելը: Երեխայի հանդեպ **հոգեբանական բռնություն** է երեխայի հանդեպ հուզական և հոգեբանական դիտավորյալ ներգործությունն է, իր զարգացման համար անհրաժեշտ կապվածությունից և հուզական կապերից զրկելը, որը կարող է խոչընդոտել կամ խաթարել երեխայի հոգեկան, մտավոր և վարքային զարգացմանը: Երեխայի **անտեսում** է՝ երեխայի կենսապահովման համար հիմնական պահանջմունքներից դիտավորությամբ կամ անփութությամբ զրկելը, որի հետևանքով երեխան հայտնվում է կյանքի և զարգացման համար վտանգավոր ու անպաշտպան իրավիճակում: (Հավելված 1) 3. Ընտանիքները, որտեղ հարաբերությունները կառուցվում են բռնության վրա, համարվում են ռիսկային: Բռնության երևույթի հանդեպ առավել խոցելի են սոցիալապես անապահով ընտանիքները, միայնակ մայրերի, միակողմանի ծնողազուրկ երեխաներով, ծնողավարության ոչ բավարար հմտություններ ունեցող ընտանիքները: Բռնությունը ընտանիքում հաճախ հանգեցնում է ընտանիքի քայքայման, երեխաների դաստիարակության անտեսման, որի հետևանքով երեխաները հայտնվում են բարձիթողի վիճակում, ինչն էլ նպաստում է անչափահասների կողմից իրավախախտումների դրսևորմանը: Հիմնականում նման ընտանիքներում մեծացած երեխաներն իրենք են դառնում կամ բռնության զոհ, կամ բռնություն իրականացնողներ: Սոցիալապես անապահով ընտանիքներում, առավել հաճախ գյուղական բնակավայրերում տարածված է երեխաների աշխատանքային շահագործումը, որը բացասական ազդեցություն ունի նրանց ֆիզիկական, մտավոր և հոգեկան զարգացման վրա: Հաճախ անտեսվում են երեխաների ֆիզիկական և հոգևոր կարիքները, որոնք կարող են դառնալ բռնությանը նպաստող հանգամանքներ: Այն կարող է դրսևորվել տարբեր ճանապարհներով՝ օրինակ երեխայի ֆիզիկական անտեսումը ենթադրում է նրա սննդի, հագուստի, հիգիենայի, առողջության նկատմամբ անտարբերությունը, երեխաների լքումը երկար ժամանակով և այլն: Կրթական անտեսումը ենթադրում է երեխաների հանրակրթությունից դուրս մնալը, մեծ թվով բացակայությունները: Այսօր մեր հասարակությունում առկա են երեխաների հանդեպ բռնության նոր դրսևորումներ՝ հեռուստատեսային էրոտիկ, բռնության և սարսափի տարրեր պարունակող ֆիլմերը, հաղորդումները, ինտերնետային հատուկ կայքերը, թերթերը և ամսագրերը: (Հավելված 1) 4. Հաստատված են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները, ըստ որի վերոհիշյալ հաստատությունները սահմանված կարգով ապահովում են երեխայի պաշտպանությունը հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, սեռական շահագործումից և այլասերումից, դաժան վերաբերմունքից, անուշադրությունից ու անարդարությունից, առողջությանը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից: Սակայն, կիրառման մեխանիզմների բացակայության պատճառով դեռևս կան չլուծված խնդիրներ: Այդուհանդերձ, ինչպես ընտանիքներում, այնպես էլ կրթական, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում կիրառվում են երեխայի հանդեպ բռնության տարբեր տիպեր: ՀՀ քրեական օրենսգիրքը (Գլուխ 20) և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը (հոդված 178) նախատեսում են պատասխանատվության միջոցներ երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների (իրավախախտումների) համար, սակայն սահմանված պատասխանատվության միջոցները համարժեք չեն կատարված արարքներին և անհրաժեշտ է երեխայի հանդեպ կատարված բռնության դեպքերում նախատեսել առավել խիստ պատժամիջոցներ: (Հավելված 1) 5. Հայեցակարգի **նպատակն** է սահմանել երեխայի հանդեպ բռնության երևույթի վերացմանը, կանխարգելմանը և բռնության ենթարկված երեխայի, ինչպես նաև բռնություն գործադրող անձի վերականգնմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները: (Հավելված 1) 6. Հայեցակարգի **խնդիրներն** են. մշակել բռնության ենթարկված երեխաների իրավական, կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության բնագավառում պետական գործունեության հիմնական ուղղությունները, մշակել երեխայի հանդեպ բռնության երևույթի վերացմանն ուղղված շահագրգիռ մարմինների համաձայնեցված գործունեության կառուցակարգեր (մեխանիզմներ), մշակել երեխայի հանդեպ բռնության դեպքերում ուղղորդման ընթացակարգեր, մշակել երեխայի հանդեպ բռնության երևույթի մասին տեղեկատվության հավաքագրման կառուցակարգեր, մշակել երեխայի հանդեպ բռնության երևույթի	ՀՀ **պետական վիճակագրական տվյալների բացակայության** պատճառով դժվար է ամբողջական պատկերացում կազմել հանրապետությունում երեխաների հանդեպ կիրառվող բռնության չափերի և ձևերի մասին: Ընտանեկան բռնությունները բացահայտելն ու տիպերը գնահատելը բավականին բարդ խնդիր է նույնիսկ բռնությունների առկայության դեպքում. հարցման մասնակիցները գերադասում են կամ չխոսել դրա մասին կամ պարզապես արձանագրել ընտանիքում բռնությունների բացակայությունը: Վերջին տարիներին հաճախ խոսվում է հանրապետությունում երեխայի աշխատանքային շահագործման դեպքերի, երեխային աշխատանքի վատթարագույն ձևերի մասին: Այս խնդրի շուրջ իրավիճակը գնահատելու համար անհրաժեշտ են հետազոտություններ, որոնք հիմք կծառայեն ոլորտում համահունչ քաղաքականության մշակման համար: (Հավելված 1) Միջոցառումների ծրագրով նախատեսվում է «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգերի մշակման և հաստատված դեպքերի **գրանցման մատյանների** ձևերի հաստատման մասին» ՀՀ ԿԳ նախարարի և ՀՀ ԱՍՀ նախարարի համատեղ հրամանի նախագծի մշակում և հաստատում 2015-2016թթ.՝ **մշտադիտարկում և վերահսկողություն** իրականացնելու նպատակով: (Հավելված 2) Նույն ժամանակահատվածում նախատեսվում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երեխայի նկատմամբ բռնության դեպքերի բացահայտմանն ու դրանց պատճառների պարզաբանմանն ուղղված հետազոտությունների իրականացում: (Հավելված 2)	• Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգից բխող 12 միջոցառումներից 11-ի պատասխանատու կատարողը ՀՀ ԱՍՀՆ-ն է, մեկինը՝ ՀՀ ԿԳՆ-ն: (Հավելված 2) • Միջոցառումների համակատարողներ են ՀՀ ԿԳՆ-ն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը, ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ ՏԿԱԻՆ-ը, ՀՀ մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը: (Հավելված 2)

		մասին հասարակության տեղեկացվածությունն ապահովող կառուցակարգեր: (Հավելված 1) 7. Հայեցակարգը հիմնվում է հետևյալ **սկզբունքների** վրա. **պետության իրազեկվածությունը** և **պատասխանատվությունը** երեխայի հանդեպ բռնության երևույթի կանխարգելման և վերացման գործընթացում, բռնության ենթարկված երեխային և նրա ընտանիքին սոցիալական ծառայությունների տրամադրման **մատչելիության** և **հասցեականության** ապահովումը, մատուցվող ծառայությունների **ապակենտրոնացումը**, պետական մարմինների և հասարակության **համագործակցությունը** երեխայի հանդեպ բռնության երևույթի կանխարգելման և վերացման գործում, երեխայի պաշտպանության հարցում բոլոր շահագրգիռ կողմերի **միասնական մոտեցում** և **փոխհամագործակցության** ապահովում: բ(Հավելված 1) 8. Երեխայի հանդեպ բռնության և անտեսման կանխարգելման ու վերացման **հիմնական ուղղություններն** են. երեխայի **կյանքի անվտանգությանը**, **նրա ազատության** և **արժանապատվության պաշտպանությանն** ուղղված **օրենսդրական դաշտի կատարելագործումը**, երեխայի հանդեպ **բռնության դեպքերի**, **իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման կառուցակարգերի** ստեղծումը, **ընտանիքում** երեխայի հանդեպ **բռնության և անտեսման երևույթի կանխարգելմանը**, բռնության ենթարկված **երեխայի**, ինչպես նաև **բռնություն գործադրող անձի սոցիալական վերականգնմանն** ուղղված **սոցիալական աջակցության համակարգի** ներդրումը, երեխայի հանդեպ բռնության **երևույթի կանխարգելմանը** և **վերացմանն** ուղղված **կրթական ծրագրերի** ներդրումը, երեխայի հանդեպ բռնությունը **կանխարգելող** և բռնության ենթարկված **երեխայի վերականգնումն** իրականացնող **մարմինների միջև համագործակցության կառուցակարգերի** ստեղծումը, երեխայի հանդեպ բռնության երևույթի **կանխարգելմանը և վերացմանը**, բռնության ենթարկված **երեխաների**, ինչպես նաև **բռնություն գործադրող անձի վերականգնմանն** ուղղված պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների **համագործակցության** ապահովումը, **զանգվածային լրատվության** միջոցով երեխայի հանդեպ **բռնության երևույթի նկատմամբ** հասարակության կողմից **անհանդուրժողական վերաբերմունքի** ձևավորումը: (Հավելված 1) 9. Միջոցառումների ծրագրով նախատեսվում է 2015-2017թթ. հանրապետության քաղաքների և մարզերի համապատասխան հաստատություններում (պոլիկլինիկա, ոստիկանություն, սոցիալական ծառայությունների տարածքային մարմիններ) **բռնությունների ահազանգման և կանխարգելման մասնագիտական ծառայությունների (թեժ գծերով)** ստեղծում: (Հավելված 2) 10. 2015-2018թթ. նախատեսվում է **ուսումնական հաստատություններում** երեխաների համար «Երեխայի բռնության և անտեսման կանխարգելմանն ուղղված **կրթական ծրագրերի**» մշակում և հաստատում ՀՀ ԿԳ նախարարի հրամանով: (Հավելված 2) 11. Նույն ժամանակում նախատեսվում է **ուսումնական հաստատություններում**, համայնքային տարբեր կառույցներում, մանկական հաստատություններում **հոգեբանական խորհրդատվության** տրամադրում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքների անդամներին: (Հավելված 2) 12. 2015-2018թթ. երեխայի հանդեպ բռնության երևույթի նկատմամբ հասարակության կողմից **անհանդուրժողական վերաբերմունքի** ձևավորմանն ուղղված հանրային իրազեկման նյութերի մշակում և հրատարակում, սեմինարների, կլոր-սեղանների, գիտաժողովների և կոնֆերանսների իրականացում, հեռուստառադիոհաղորդումների կազմակերպում: (Հավելված 2) 13. 2016թ. նախատեսվում է բռնության ենթարկված երեխայի պաշտպանությանն ուղղված ուղղորդման մեխանիզմի (ընթացակարգի) մշակում և հաստատում ՀՀ ԱՍՀ նախարարի հրամանով (Հավելված 2) 14. 2016-2018թթ. նախատեսվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին սոցիալ-հոգեբանական աջակցություն տրամադրող մասնագիտացված ծառայությունների, նրանց սոցիալական վերականգնմանն ուղղված կենտրոնների՝ ժամանակավոր կացարանների, ապաստարանների ստեղծում, ինչպես նաև ծառայություններ տրամադրող մասնագետների համար ուսումնամեթոդական նյութերի մշակում և հաստատում ՀՀԱՍՀ նախարարի հրամանով: (Հավելված 2)	2016թ. նախատեսվում է երեխայի հանդեպ բռնության երևույթը բնութագրող ցուցանիշների ցանկի մշակում և տեղեկատվության հավաքագրման համակարգի ստեղծում և ներկայացում ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն՝ վիճակագրական հաշվետվություններում ներդնելու նպատակով: (Հավելված 2)	
183.	**«ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2016 թվականի միջոցառումների ծրագրին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 44, ընդունված է՝ 01.10.2015* Հավանություն է տալիս ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2016թ. միջոցառումների ծրագրին և ժամանակացույցին, ծրագիրը ՀՀ պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնում է ՀՀ Ազգային ժողով:	1. Ծրագրի **հիմնական ուղղությունները** ներառում են անչափահասների և երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպին նվիրված սպորտային-առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումների իրականացումը, էլեկտրոնային և զանգվածային լրատվական միջոցներով քարոզչությունը՝ անչափահասների զբաղվածությունն ապահովվելու և նրանց կողմից թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի հավանական գործածումը կանխելու նպատակով, ինչպես նաև լրատվամիջոցներով թմրամոլության հասցրած վնասների և հետևանքների վերաբերյալ հաղորդումների ինտենսիվացումը, և դրանց համապատասխան մասնագետներին՝ բժիշկների, հոգեբաններին, մանկավարժներին մասնակից դարձնելը: (Հավելված 1) 2. Անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների գործածման նկատմամբ սոցիալական անձեռնմխելիության խթանման նպատակով 2016թ. ծրագիրը նախատեսում է նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին մեթոդական օգնության ցուցաբերում՝ «Առողջ ապրելակերպ» ծրագրում, «Վնասակար սովորություններ» բաժնում բնակչության շրջանում թմրամոլության կանխարգելման նյութերի ներառում: (Հավելված 2)	Թմրամոլության և դրա հասցված վնասի մասին բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով միջոցառումների ծրագրով 2016թ. նախատեսվում է. լրատվամիջոցների հետ համատեղ հատուկ հաղորդումների, թեմատիկ ֆիլմերի, տեսահոլովակների պարբերաբար պատրաստում և ցուցադրում, ինչպես նաև թմրամոլության կանխարգելման նպատակով քարոզչական աշխատանքների կազմակերպում և անհրաժեշտ տեղեկատվության տարածում (Հավելված 2)	• ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2016թ. միջոցառումների ծրագրի հիմնական կատարողներն են ՀՀ կառավարությանն առընթեր **ՀՀ ոստիկանությունը**, ՀՀ **առողջապահության նախարարությունը**, ՀՀ **ԿԳՆ**-ն, ՀՀ **ԱՍՀՆ**-ն, ՀՀ **արդարադատության նախարարությունը**, ՀՀ **ֆինանսների նախարարությունը**, **ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը**, ՀՀ **ՊՆ**-ն, ՀՀ **ՏԿԱԻՆ**-ը, ՀՀ կառավարությանն առընթեր **ԱԱԾ**-ն, **Երևանի քաղաքապետարանը**, **մարզպետարանները**, ՏԻՄ-երը, ԶԼՄ-ները •
184.	**«Երեխաների սնուցման բարելավման հայեցակարգին և հայեցակարգի իրականացման 2015-2020**	1. Հայեցակարգը մանրամասն ներկայացնում է երեխաների սնուցման իրավիճակը հիմնական ցուցանիշների միտումները ՀՀ-ում: (Հավելված 1) 2. **Վաղ հասակի (0-5տ.) երեխաների սնուցման** կազմակերպման հետ կապված առողջապահական հիմնախնդիրները ներառում են՝	Միջգերատեսչական խնդիրների ներառումով երեխաների սնուցման հարցերի վերաբերյալ համապարփակ հայեցակարգային փաստաթուղթ	• ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ ԿԳՆ

	Թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում *N 40, ընդունված է՝ 25.09.2014* Հավանություն է տալիս Երեխաների սնուցման բարելավման հայեցակարգին, դրա իրականացման 2015-2020թթ. գործողությունների ծրագրին, հանձնարարական է տալիս ՀՀ առողջապահության նախարարին:	**կրծքով կերակրման** ոչ պատշաճ գործելակերպ, **կրծքով կերակրման «ոչ բավարար» վաղ նախաձեռնումը** և **բացառապես կրծքով կերակրման տևողության** «մեդիանա» ցածր ցուցանիշը, **բացառապես կրծքով կերակրման անբավարար մակարդակը**, **հեղուկների, հյութերի վաղ ներմուծման** սխալ գործելակերպ, **արհեստական կաթնախառնուրդների, կովի կաթի լայն կիրառումը**, **շշերի և ծծակների օգտագործումը**, **կրծքով սնուցման խրախուսման** ծրագրերում **համայնքային/ընտանիքի ցածր ընդգրկվածությունը**, **ծնողների համար անհրաժեշտ կրթական նյութերի** ոչ բավարար քանակությունը, **մայրերի ոչ բավարար գիտելիքները**՝ կրծքով կերակրման առավելությունների վերաբերյալ և սխալ գործելակերպը այդ ոլորտում, հատկապես **գյուղաբնակ** և **ցածր կրթական** ցենզով կանանց շրջանում, **հավելյալ սնուցման կազմակերպման** սխալ գործելակերպը և գիտելիքների անբավարար մակարդակը **ծնողների և բուժաշխատողների** շրջանում (հավելյալ սնուցման ոչ օպտիմալ ժամկետներ, հաճախականություն, տեսականի), **արհեստական կաթնախառնուրդների մարկետինգի** մասին միջազգային օրենսգրքի խախտման և ազգային օրենսդրության անկատարության խնդիրներ (կաթնախառնուրդների խրախուսման ապակողմնորոշիչ ձևեր և գովազդ՝ արտադրող և/կամ բաշխող կազմակերպությունների կողմից, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի խախտման դեպքերում օրենսդրորեն ամրագրված պատասխանատվության միջոցների բացակայություն, արհեստական կաթնախառնուրդներ արտադրող և/կամ բաշխող կազմակերպությունների հետ համագործակցող հաստատությունների և բուժաշխատողների գործելակերպի վրա ազդեցության գործուն մեխանիզմների բացակայություն) , ինչպես նաև **հատուկ սնուցողական պահանջներ** ունեցող երեխաների համար նախատեսված **սննդի**, այդ թվում կաթնախառնուրդների, **հիվանդ երեխաների** սնուցման կազմակերպման վերաբերյալ, բուժաշխատողների **գիտելիքների պակաս**, **տեղեկատվության բացակայություն**: (Հավելված 1) 3. Երեխաների **սնուցման կարգավիճակի** հետ կապված և **սնուցողական միկրոտարրերի անբավարարությամբ** պայմանավորված առողջական խնդիրները ներառում են՝ երեխաների **սնուցման վիճակի շարունակական վատացում**, **խրոնիկական թերսնուցման/թերաճի** ցուցանիշների աճի միտումը, **երեխաների և դեռահասների գերքաշության** բարձր ցուցանիշը, **սակավարյունության դեմ պայքարի միջոցառումների ցածր արդյունավետությունը** և վաղ տարիքի երեխաների և պտղաբեր տարիքի կանանց շրջանում սակավարյունության բարձր տարածվածությունը, **ցածր քաշով ծնված երեխաների** թվի աճի միտումը: (Հավելված 1) 4. Երեխաների սնուցման հարցերի կազմակերպման **ոչ պատշաճ բժշկական գործելակերպի** խնդիրները ներառում են. երեխաների և դեռահասների սնուցման կազմակերպման ժամանակակից սկզբունքների վերաբերյալ բուժաշխատողների գիտելիքների ոչ բավարար մակարդակ և անհրաժեշտ գրականության անբավարարություն, ծննդօգնության և մանկական բուժկանխարգելիչ հաստատություններում վաղ հասակի երեխաների սնուցման կազմակերպման բժշկական գործելակերպի գնահատման համակարգի բացակայություն, երեխաների սնուցման, այդ ուղղությամբ մասնագիտական խորհրդատվության, մասնավորապես առողջ սնուցման հարցերի կազմակերպման ոչ պատշաճ մակարդակ: Համապատասխան կադրերի՝ մանկական նուտրիցիոլոգների, դիետոլոգների բացակայություն, երեխաների սնուցման կազմակերպման վերաբերյալ ժամանակակից՝ ապացուցողական բժշկության վրա հենված մոտեցումների բացակայությունը նախա- և հետդիպլոմային կրթական հաստատություններում: (Հավելված 1) 5. **Դպրոցահասակ երեխաների սնուցման կարգավիճակի, սննդային վատ սովորույթների** հետ կապված և **սնուցման կազմակերպման** հիմնախնդիրները ներառում են՝ դպրոցահասակ երեխաների սնուցման կարգավիճակի վերաբերյալ պաշտոնական տվյալների և գնահատման գործուն համակարգի բացակայություն, դպրոցահասակ երեխաների սննդային անառողջ սովորությունների բարձր տարածվածություն, սննդային առողջ վարքագծի և ֆիզիկական ակտիվության ցածր մակարդակ, դպրոցահասակ երեխաների սնուցման վերաբերյալ ուղեցույցների բացակայություն, նախադպրոցական տարիքի և դպրոցահասակ երեխաների, հատկապես առողջական խնդիրներ և հատուկ կարիքներ ունեցող երեխաների և դեռահասների ֆիզիկական ակտիվության վերաբերյալ ուղեցույցների, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների մասնագիտական գիտելիքների անբավարարություն, սնուցման առողջ վարքագծի ձևավորման հարցում դպրոցների ցածր ներգրավվածություն, դպրոցներում առողջ սնուցման համար ոչ բարենպաստ պայմանները, հագեցած ճարպերի, տրանսճարպերի, ազատ շաքարների և աղի բարձր պարունակությամբ ոչ առողջ սննդի վաճառք՝ երեխաների ուսման և ժամանցի համար նախատեսված վայրերում, զանգվածային լրատվամիջոցներով առողջ ապրելակերպի, այդ թվում առողջ սնուցման խթանող ծրագրերի բացակայություն, դեռահասներին բարյացակամ ծառայությունների շրջանակներում բուժաշխատողների կողմից երեխաներին համապատասխան տեղեկատվության ոչ բավարար տրամադրում: (Հավելված 1) 6. Ծրագիրը հիմնախնդիր է ճանաչում և ռազմավարության իրականացման հիմնական ուղղություններ է նախատեսում նաև հետևյալ ուղղություններով. համայնքային կառույցների/ընտանիքի ծնողների անբավարար ներգրավվածությունը երեխաների առողջության պահպանման, մասնավորապես սնուցման բարելավմանն ուղղված ծրագրերում, ինչպես նրանց գիտելիքների մակարդակի, այնպես էլ մասնակցության առումով, ինչպես նաև ծրագրերի իրականացման գործընթացում միջգերատեսչական և միջազգային համագործակցության արդյունավետության անբավարար մակարդակը: (Հավելված 1) 7. Ռազմավարության **հիմնարար նպատակը** երեխաների սնուցման կազմակերպման պատշաճ գործելակերպի ներդրումն է, ուղղված նրանց առողջ աճի և զարգացման ապահովմանը, հիվանդացության և մահացության կրճատմանը, այդ թվում՝ վաղ հասակի երեխաների սնուցման գործելակերպի բարելավման, կրծքով կերակրման աջակցության և խրախուսման ճանապարհով: (Հավելված 1) 8. Սահմանում է երեխաների սնուցման բարելավման հայեցակարգի իրականացման 2015-2020 թվականների գործողությունների ծրագիրը (Հավելված 2)	ազգային մակարդակով բացակայում է: (Հավելված 1) Երեխաների սնուցման **վիճակի գնահատման և շարունակական հսկողության** անկատարության խնդիրները ներառում են՝ երեխաների **սնուցման իրավիճակի գնահատման, աճի և զարգացման գնահատման և մոնիտորինգի ազգային համակարգի** բացակայությունը, **սնուցողական միկրոտարրերով** պայմանավորված անբավարարության վերաբերյալ **հավաստի և նոր տվյալների** բացակայություն, **երեխաների սնուցման վիճակի ազգային հետազոտության** անցկացման անհրաժեշտությունը, **յոդի անբավարարության** դեմ պայքարի ծրագրի շրջանակներում ձեռք բերված հաջողության **կայունության ապահովման դժվարություններ** և **կենսաբանական մոնիտորինգի համակարգի** բացակայությունը: (Հավելված 1) Ռազմավարության իրականացման **հիմնական ուղղությունները վաղ տարիքի երեխաների համար** ներառում են. մինչև 6 ամսական երեխաների շրջանում բացառապես կրծքով սնուցման ցուցանիշի աճ 1/4-ով (2020թ. 45 % և ավելի մակարդակ՝ 2010թ. 35%-ի փոխարեն), կրծքով կերակրման վաղ նախաձեռնման ցուցանիշի բարելավում 30%-ով (2020թ. 47 % ՝ 2010թ. 36%-ի փոխարեն), բացառապես կրծքով կերակրման «մեդիան» ցուցանիշի բարելավում 1/2-ով (2020թ. նվազագույնը 3 ամիս՝ 2010թ. մեկ ամսվա փոխարեն), մինչև մեկ տարեկան երեխաների ընդհանուր թվի մեջ ժամանակին և համարժեք հավելյալ սնուցում ստացած երեխաների թվի բարելավվում նվազագույնը 20 %-ով (2020թ. 40% և ավելի՝ 2010թ. 34%-ի փոխարեն), Մինչև 6 ամսական երեխաների մոտ շշերի և ծծակների գործածության կրճատում 1/3-ով (2020թ. չի գերազանցի 36 %՝ 2010թ. 51%-ի փոխարեն), վաղ հասակի երեխաների թերաճի/քրոնիկական թերսնուցման տարածվածության նվազեցում 1/4-ով, խորքային պատճառների ուսումնասիրում (2020թ. մինչև 5 տարեկան երեխաների շրջանում տարիք-հասակային հարաբերակցության գործակցի ստանդարտ շեղումը՝ թերաճի ցուցանիշը, չի գերազանցի 15%-ը՝ 2010թ. 19%-ի փոխարեն), «Մանկանը բարեկամ» նախաձեռնության ծավալների և այդ կոչումն ունեցող բուժհաստատությունների թվի ավելացում 25-%-ով, Մինչև 5 տարեկան	• ՀՀ գյուղատնտեսության նախարարություն • ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն • ՀՀ մշակույթի նախարարություն • ՀՀ ՏԿԱԻՆ • ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ ԱՎԾ • ՀՀ մարզպետարաններ • Երևանի քաղաքապետարան • ՏԻՄ-եր • ՋԼՄ-ներ

			երեխաների շրջանում սակավարյունության տարածվածության կրճատում նվազագույնը 1/4-ով (2020թ. չի գերազանցի 25%-ը՝ 2005թ. 37 % համեմատ), ցածր քաշով նորածինների ցուցանիշի կրճատում նվազագույնը 1/3-ով (2020թ. չի գերազանցի 6%-ը՝ 2010թ. 7.6%-ի համեմատ), հիվանդ երեխաների սնուցման վերաբերյալ մայրերի գիտելիքները բարելավում 15%-ով (2020թ. ճիշտ գործելակերպ ցուցաբերած մայրերի ցուցանիշը կկազմի՝ 90%՝ 2010թ. 77 %-ի փոխարեն), 0-5տ. երեխաներ ունեցող տնային տնտեսություններում համարժեք յոդացված աղի օգտագործման 95% և ավելի ցուցանիշի շարունակական ապահովում: (Հավելված 1) Ռազմավարության իրականացման **հիմնական ուղղությունները դպրոցահասակ երեխաների** համար ներառում են. դպրոցներում առողջ սնուցմանը և ապրելակերպին նպաստող պայմանների բարելավում՝ «Առողջ դպրոցներ» ծրագրի ներդրման ճանապարհով (2020թ. նվազագույնը 30 դպրոց), երեխաների և դեռահասների համար առողջ սնուցման 12 քայլերի և ֆիզիկական ակտիվության առավելությունների վերաբերյալ գիտելիքների հասանելիության ապահովում (դպրոցահասակ երեխաների շրջանում սննդային անառողջ սովորությունների տարածվածության կրճատում 5%-ով և ֆիզիկական ակտիվության ավելացում նվազագույնը 10%-ով), երեխաներին ծառայություններ մատուցող մասնագետների սնուցման ճիշտ կազմակերպման և առողջ սննդակարգի վերաբերյալ գիտելիքների բարելավում (բուժաշխատողների 20-%-ը և ուսուցիչների 10-%-ը կունենան համապատասխան գիտելիքներ և հմտություններ) (Հավելված 1) Իրավիճակի գնահատման, տեղեկատվության հավաքագրման և վերլուծության և երեխաների սնուցման իրավիճակի մոնիտորինգի համակարգի բարելավման նպատակով ծրագիրը նախատեսում է. վաղ հասակի երեխաների աճի ու զարգացման մոնիտորինգի փորձնական ծրագրի գնահատում և շարունակական զարգացում և պաշտոնական վիճակագրական համակարգում այն ներառելու հնարավորության քննարկում, վաղ հասակի երեխաների սնուցման կարգավիճակի և սնուցողական միկրոտարրերի անբավարարությամբ պայմանավորված հիվանդությունների բեռի գնահատմանն ուղղված և/կամ մոնիտորինգի ազգային համակարգի	

			մշակում, դպրոցահասակ երեխաների սնուցման կարգավիճակի, վերաբերյալ գնահատման գործուն համակարգի ստեղծում, երեխաների սննդային վարքագծի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնների ու միջավայրի ուսումնասիրություն և գնահատում: (Հավելված 1) Երեխաների սնուցման բարելավման հայեցակարգի գնահատումը պետք է հիմնվի մի քանի աղբյուրների, այն է վերահսկողության, մոնիտորինգի, նպատակային հետազոտությունների տվյալների վրա, որոնց դրական արդյունքները և քաղված դասերը կարող են օգտագործվել թե տվյալ հայեցակարգի շրջանակներում իրականացված ծրագրերի արդյունավետությունը գնահատելու և թե երեխաների սնուցման ոլորտում ծրագրային միջոցառումների մշակման և ներդրման նպատակով: (Հավելված 1)	
185.	**«ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց համար 2016 թվականը հավասար հնարավորությունների տարի հայտարարելու և հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու կապակցությամբ անցկացվող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում** *N 40, ընդունված է՝ 31.08.2015* ՀՀ-ում 2016 թվականը հայտարարում է հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի, հավանություն է տալիս հաշմանդամություն ունեցող անձանց համար 2016 թվականը հավասար հնարավորությունների տարի հայտարարելու կապակցությամբ անցկացվող միջոցառումների ցանկին, հանձնարարականներ է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին, ՀՀ ՏԿԱԻ նախարարին, ՀՀ առողջապահության նախարարին, ՀՀ քաղաքաշինության նախարարին, ՀՀ ԿԳ նախարարին, ՀՀ մշակույթի նախարարին, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին, ՀՀ պաշտպանության նախարարին,	1. Միջոցառումները ներառում են կրթական, մշակութային, մարզական և առողջապահական նշանակության շենքերի հիմնանորոգման և կառուցման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների ապահովում (Հավելված) 2. Նախատեսվում է կազմակերպել հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների շրջանում «Իմ ներառական դպրոցը» վերնագրով շարադրությունների մրցույթ: (Հավելված) 3. Նախատեսվում է իրականացնել հաշմանդամություն ունեցող երեխաների լիարժեք ինտեգրման համար անցկացվող մանկապատանեկան արվեստի ինտեգրատիվ փառատոն՝ 7 անվանակարգերով (թատեր-արվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կերպարվեստ, դեկորատիվ-կիրառական, լուսանկարչական արվեստ, հեռուստանախագիծ): (Հավելված) 4. Ծրագիրը ներառում է ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում տարաբնույթ մշակութային ծրագրերում հաշմանդամություն ունեցող երեխաների ընդգրկում: (Հավելված) 5. Կազմակերպվելու է Շիրակի մարզի ուսումնական հաստատություններում սովորող հաշմանդամություն ունեցող երեխաների «Ես մի թերթն եմ քո ծաղկի» խորագրով ստեղծագործական աշխատանքների ցուցադրում: (Հավելված) 6. Նախատեսվում է տարբեր խնդիրներից՝ այդ թվում մտավոր խնդիրներից հաշմանդամություն ունեցող երեխաների և մեծահասակների թատերախմբերի ելույթների կազմակերպում: (Հավելված) 7. Իրականացվելու են հաշմանդամային սպորտի խթանմանն ուղղված ծրագրեր, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հանրապետական մարզական փառատոն, «Համաեվրոպական ֆուտբոլի շաբաթ» ծրագրով ֆուտբոլի հանրապետական առաջնություն՝ մտավոր խնդիրներ ունեցող երեխաների մասնակցությամբ, կույր շախմատիստների Հայաստանի առաջնություն, խուլերի մասնակցությամբ սպորտային միջոցառումներ, հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում (Հավելված) 8. Իրականացվելու են հաշմանդամություն ունեցող անձանց առողջ ապրելակերպի խթանման ծրագրեր, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների մարզավերականգնողական ճամբարի կազմակերպում, առողջ ապրելակերպի վերաբերյալ դասընթացների և հարմարեցված մարզասրահում մարզումների կազմակերպում, թենիսի ուսուցման դասընթացների իրականացում հաշմանդամություն ունեցող անձանց համար: (Հավելված) 9. Ծրագիրը նախատեսում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծման գործում աչքի ընկած անձանց կամ կազմակերպությունների, ինչպես նաև հաջողությունների հասած հաշմանդամություն ունեցող կանանց և ներառական կրթության ոլորտում հաջողության հասած երեխաների խրախուսում: (Հավելված)	Միջոցառումները ներառում են հաշմանդամություն ունեցող ուսանողների, բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, շահագրգիռ գերատեսչությունների և ՀԿ-ների մասնակցությամբ կլոր սեղանների կազմակերպում՝ ուսումնական հաստատությունների և ուսանողների կողմից հաշմանդամություն ունեցող ուսանողների կարիքների բացահայտում և գնահատում, համապատասխան առաջարկությունների ներկայացում, ինչպես նաև կատարված ուսումնասիրությունների արդյունքների ներկայացում: (Հավելված) Ծրագիրը նախատեսում է նաև հանրային իրազեկման ապահովում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ գրականության, մեթոդական ուղեցույցներից տարածման միջոցով: (Հավելված)	• Հիմնական կատարողներն ու համակատարողներն են • ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ ՏԿԱԻՆ • ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ քաղաքաշինության նախարարություն • ՀՀ ԿԳՆ • ՀՀ մշակույթի նախարարություն • ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն • ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն • ՀՀ ՊՆ • ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան • Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային, մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովներ ՀԿ-ներ • ՏԻՄ-եր • ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ • ԶԼՄ-ներ • Բժշկական կազմակերպություններ, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ • Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ, Երևանի Ա. Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջ, «Փարոս» կամերային երգչախումբ,

	ՀՀ մարզպետներին և առաջարկություն է տալիս Երևանի քաղաքապետին ու հասարակական կազմակերպություններին:			«ՀՀ թենիսի ֆեդերացիա», Disabilityinfo.am, ՀՀ ԿԳՆ Գյումրու «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն • Հանձնարարում է **ՀՀ մարզպետներին** և առաջարկում **Երևանի քաղաքապետին** հաստատել ՀՀ մարզերում և Երևան քաղաքում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարվա կապակցությամբ իրականացվելիք **տեղական միջոցառումների ծրագրեր**: (Կետ 4)
186.	**«Երեխաների խնամքի հարցերով զբաղվող հաստատությունների բարեփոխման պետական ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1654-Ն, ընդունված է՝ 27.11.2003, ուժի մեջ է՝ 15.01.2004* Հաստատում է երեխաների խնամքի հարցերով զբաղվող հաստատությունների բարեփոխման պետական ռազմավարական ծրագիրը և դրա միջոցառումների իրականացման ժամանակացույցը, հանձնարարականներ է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին, ՀՀ ԿԳ նախարարին և ՀՀ առողջապահության նախարարին:	1. Ծրագրի **նպատակն** է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության իրականացման ապահովումն ընտանեկան կամ ընտանեկանին մոտեցված միջավայրում՝ ստեղծելով նրանց լիարժեք կյանքի կայուն երաշխիքներ: (Հավելված 1) 2. Ծրագրի **խնդիրներն** են քննության առնել և համապատասխան լուծումներ ու միջոցառումներ առաջարկել հետևյալ հարցերին՝ **մանկատներում երեխաների թվի ավելացման կանխարգելում**, **մանկատների բեռնաթափում**, մանկատներում գտնվող **երեխաների կյանքի որակի բարելավում**, երեխաների **ինտեգրում հասարակության մեջ**, մանկատների **շրջանավարտների սոցիալական պաշտպանություն**, **մանկատների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում**: (Հավելված 1) 3. **Մանկատներում երեխաների թվի ավելացման կանխարգելման** ուղղությամբ նախատեսվող միջոցառումներն են՝ **խնամակալության և հոգաբարձության մարմինների աշխատանքի բարելավումը**, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ **օրենքի նախագծի մշակում**, երեխայի հարցերով **սոցիալական աշխատանքի ինստիտուտի** ներդրում, **աջակցության մեխանիզմների** մշակում՝ կոնֆլիկտային կամ սոցիալապես անապահով ընտանիքների և նրանց երեխաների համար, **երեխաների խնամքի ժամանակավոր կացարանների** ստեղծում (մուր-մանկապարտեզների ցանցի ընդլայնում և դրանց մատչելիության ապահովում, երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծում բոլոր մարզերում): (Հավելված 1) 4. **Մանկատների բեռնաթափման** ուղղությամբ ծրագիրը նախատեսում է՝ իրականացնել միջոցառումներ մանկատանը խնամվող երեխաներին **կենսաբանական ընտանիք վերադարձնելու** համար, այդ թվում՝ երեխայի կենսաբանական ընտանիքի կարիքների գնահատում, ընտանիքի աջակցության մեխանիզմների մշակում, ծնողներին երեխայի (հատկապես հաշմանդամ) խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների տրամադրման ապահովում, ինչպես նաև **որդեգրությունը կարգավորող օրենսդրության կատարելագործում**՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի ընդունումից հետո օրենսգրքով նախատեսված իրավական ակտերի ընդունում, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, որի նպատակն է ընդունված նոր օրենքում վերականգնել նախկին օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի պատվիրակած լիազորություններից մեկը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որդեգրման, խնամակալության և հոգեբարձության հարցերի լուծումը: (Հավելված 1) 5. Ման**կատներում խնամվող երեխաների կյանքի որակի բարելավման,** հասարակության մեջ երեխաների **ինտեգրման** ուղղությամբ ծրագիրը նախատեսում է իրականացնել մանկատների **բժշկական օգնության և մանկավարժական աշխատանքի բարելավում**, այդ թվում՝ մանկատանը բժշկական օգնության, խնամքի և դաստիարակչական աշխատանքների կատարելագործում, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, մանկատները սոցիալական մանկավարժության, սոցիալական հոգեբանության մասնագետներով ապահովում, մանկատան կադրերի պարբերական վերապատրաստման ապահովում: Նախատեսվում է նաև **ներդնել սոցիալական աշխատանքի ինստիտուտը մանկատներում**, մասնավորապես, մանկատան երեխաների անհատական սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծրագրերի մշակում և իրականացում, մանկատան երեխաներին մասնագիտական կողմնորոշման ապահովում, ինչպես նաև մանկատան երեխաներին միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության ձեռքբերման հնարավորությունների ընձեռում: (Հավելված 1) 6. **Մանկատների շրջանավարտների սոցիալական պաշտպանության** իրականացվելու է նախատեսվում է «Աջակցություն մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիր: (Հավելված 1)	Մանկատների գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման ուղղությամբ ծրագիրը նախատեսում է ապահովել մանկատների վերահսկողությունը, այդ թվում՝ ընդունել «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի կիրարկումն ապահովող իրավական ակտեր, մշակել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ: (Հավելված 1)	• ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ ԿԳՆ • ՀՀ առողջապահության նախարարություն
187.	**«ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներից բխող՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 452-Ն, ընդունված է՝ 15.04.2010, ուժի մեջ է՝*	1. Ազգային անվտանգության տեսանկյունից հանրապետությունում իբրև սոցիալական **ռիսկերի** դրսևորման առավել տարածված տեսակ է **վաստակի պակասը կամ դրա սպառնալիքը**, որն իր ազդեցությունն է թողնում, մասնավորապես, **երեխաների մեծացման և խնամքի, բուժօգնության, անհրաժեշտ կրթության, պատշաճ կենսամակարդակի ապահովման համար անհրաժեշտ միջոցների** ձևավորման համար: (Հավելված 1) 2. **Ընտանիքի և երեխաների հիմնահարցերի** ենթաոլորտում ծրագիրը նախատեսում է՝ մինչև 18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի, դաստիարակության, կրթության, ֆիզիկական և մտավոր զարգացման համար նպաստավոր պայմանների ապահովում, մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտների սոցիալական ապահովության վիճակի բարելավում և ինտեգրում հասարակությանը, երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն, նյութական ու կենցաղային պահանջմունքների բավարարում, սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների իրականացում, ինչպես նաև սոցիալական նպատակային որակյալ ծառայությունների մատուցում ծնողազուրկ երեխաներին: (Հավելված 1) 3. **Ժողովրդագրական իրավիճակի բարելավման** համար սահմանված առաջնահերթությունները ներառում են ծնելիության խթանումը՝ երեխաներ ունենալու և մեծացնելու համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով: (Հավելված 1)	Կարևորագույն խնդիր է տեղեկատվական հոսքերի կորպորատիվ ցանցի ստեղծումը, որը հնարավորություն կտա տարբեր սուբյեկտների ընդգրկել մեկ տեղեկատվական տարածության մեջ, ներդնել էլեկտրոնային փաստաշրջանառության համակարգեր՝ տեղեկատվության փոխանակման ինքնաշխատ համակարգերի միջոցով ապահովելով գործընթացների արդյունավետ կառավարումը: Սուբյեկտների համախմբումը մեկ	• ՀՀ ԱՍՀՆ

	13.05.2010 Հաստատում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներից բխող՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը, հանձնարարական է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին:	4. Սոցիալական աջակցությունը դիտվում է իբրև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, կյանքի դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու, նրանց հիմնական պահանջմունքները բավարարելու և հասարակության մեջ ներառելու ծառայությունների ամբողջություն, որը ենթակա է կառուցման՝ երեխաներին աջակցության տրամադրման առաջնահերթության, հասցեականության, համագործակցության, մատչելիության, համարժեքության և շարունակականության, համալիրության, թափանցիկության, մարդու արժանապատվությունը չնվաստացնելու և սոցիալական խնամառության բացառման սկզբունքների ներքո: (Հավելված 1) 5. Ծրագրի իրականացման միջոցառումները ներառում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանություն, մասնավորապես՝ բնակելի տարածքով ապահովում, մասնագիտական կողմնորոշում, մանկատների բեռնաթափում: Նախատեսվում է յուրաքանչյուր տարի շուրջ բնակարանի տրամադրում 20 երեխայի, շուրջ 60 առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասնագիտական կողմնորոշում և շուրջ 50 երեխայի տեղավորում (վերադարձ) ընտանիք: (Հավելված 2) 6. Նախատեսվում է նաև ընտանեկան նպաստի համակարգի ուղղորդում՝ կայուն ընտանիքի ձևավորման ապահովմանը, մասնավորապես՝ նպաստառու ընտանիքներում երեխա ունեցող ընտանիքների տեսակարար կշռի աճի ապահովում: (Հավելված 2)	տեղեկատվական միջավայրում թույլ կտա իրականացնել տեղեկատվության օպերատիվ փոխանակում և տվյալների բազաներին հասանելիություն ցանկացած պահի: (Հավելված 1) Տեղեկատվության փոխանակության կորպորատիվ ցանցը հնարավորություն կտա ՀՀ ԱՍՀՆ համակարգի, սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների և նրանց ենթակառուցվածքների միջև ապահովելու մշտական էլեկտրոնային կապ, որով պետք է իրականացվի տեղեկատվության փոխանակություն և ապահովվի բոլորի հասանելիություն կենտրոնական բազաներին և ցանկացած տեղեկատվության՝ ըստ իրավասությունների: Տեղեկատվական հոսքերի կորպորատիվ ցանցի ստեղծման արդյունքում կստեղծվեն առավելագույնս ճկուն և արդյունավետ կառավարման համակարգեր՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, կապահովվի որակյալ և վստահելի կապ, տեղեկատվության գաղտնիությունը, կպակասեցվեն այդ գործընթացների իրականացման վրա կատարվող ծախսերը, կտնտեսվի ժամանակ և ճիշտ որոշումներ կընդունվեն, կբարձրացվի բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը, ինչը նշանակում է բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը: (Հավելված 1) Կորպորատիվ ցանցի ստեղծումը կլուծի նաև սոցիալական պաշտպանության ոլորտում քաղաքացիների իրավունքների իրականացմանն առնչվող մի շարք կարևոր խնդիրներ: Մասնավորապես, պետական կառավարման մարմինները հնարավորություն կունենան ճշգրիտ և օպերատիվ որոշումներ ընդունել թե կոնկրետ քաղաքացու իրավունքի իրականացումը և թե իրականացվող ծրագրերի արդյունավետությունն ապահովելու նպատակով: Համակարգը պետք է նախագծել և կառուցել այնպես, որ հստակ զարգացման հնարավորություններ ունենա և, անհրաժեշտության դեպքում, դրանից օգտվելու հնարավորություն ունենան պետական կառավարման այլ մարմիններ: (Հավելված 1) Ծրագրի իրականացման միջոցառումները ներառում են սոցիալական պաշտպանության ոլորտին վերաբերող տեղեկատվության տրամադրման, քարոզչության և բնակչության իրազեկման համակարգի (տեղեկատվական պորտալի) ստեղծում և շահագործում՝ 2010թ.-ից: (Հավելված	

			2) Ծրագիրը նախատեսում է բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների որակի և արդյունավետության գնահատման մոնիթորինգի համակարգի ներդրում 2012թ.-ից: (Հավելված 2)	
188.	**«ՀՀ ազգային անվտանգության ապահովմանն ուղղված՝ ՀՀ առողջապահության նախարարության գործունեության ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 451-Ն, ընդունված է՝ 15.04.2010, ուժի մեջ է՝ 13.05.2010* Հաստատում է ՀՀ ազգային անվտանգության ապահովմանն ուղղված՝ ՀՀ առողջապահության նախարարության գործունեության ծրագիրը և միջոցառումների ցանկը:	1. ՀՀ ազգային անվտանգությանն ուղղված՝ ՀՀ առողջապահության նախարարության գործունեության ծրագրի **նպատակները** ներառում են **մոր և մանկան առողջության** պահպանումը: (Հավելված 1) 2. Արդյունավետ առողջապահության համակարգի ստեղծման **հիմնարար ռազմավարական բաղադրիչները** ներառում են **մոր և մանկան առողջության** խնդիրների գերապատվությունը, ծնելիության և կյանքի միջին տևողության ավելացմանը նպաստելը: (Հավելված 1) 3. **Մոր և մանկան առողջապահական ծառայությունների բարելավման** ուղղությամբ ծրագիրը նախատեսում է. երեխաների և մայրերի՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության անհրաժեշտ ծավալների ապահովում՝ պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, երեխաների և դեռահասների առողջության պահպանմանն ուղղված առողջապահական և հարակից համակարգերի հզորացում, բուժօգնության որակի և մատչելիության բարելավում, կանանց և երեխաներին ուղղված առողջապահական ծառայությունների ուժեղացում՝ գյուղական առողջապահության շեշտադրմամբ, մոր և մանկան առողջության պահպանման կանխարգելիչ ծրագրերի ուժեղացում: (Հավելված 1) 4. **Երեխաների և դեռահասների առողջության բարելավման, մանկան առողջ աճի ու զարգացման ապահովման, երեխաների հիվանդացության և մահացության կրճատման** նպատակով ծրագրի **միջոցառումներով** նախատեսվում է «Երեխաների և դեռահասների առողջության և զարգացման 2010-2015 թթ. ազգային ռազմավարությունը և միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումից բխող միջոցառումների իրականացում (Հավելված 2) 5. **Վերարտադրողական (մայրական) առողջության բարելավման** ուղղությամբ ծրագիրը նախատեսում է. բարելավել ծառայությունների որակն ու հասանելիությունը՝ ներառյալ մասնագետների գիտելիքները և հմտությունները, ապահովել սեռական և վերարտադրողական համակարգի հիվանդությունների կանխարգելման և անհրաժեշտության դեպքում՝ բուժման բարձրորակ բժշկական ծառայությունների տրամադրումը, ապահովել բոլոր հղի կանանց համար բարձրորակ պերինատալ խնամքի հավասար հասանելիություն՝ անկախ բնակության վայրից և սոցիալական կարգավիճակից, ստեղծել ուղեգրումների կենսունակ համակարգ, ամրապնդել անպտուղ զույգերի ախտորոշման և բուժման ինստիտուցիոնալ կարողությունը, բարելավել առաջնային և երկրորդային անպտղության մասին տվյալների հավաքագրման ազգային համակարգը, նվազեցնել հղիության արհեստական ընդհատման՝ որպես ծնելիության վերահսկման մեթոդի դերը և ապահովել արհեստական վիժումների իրականացման բազմակողմանի, որակյալ ծառայություններ՝ ներառյալ հետաբորտային խնամքը, բարելավել երիտասարդների, ներառյալ խոցելի խմբերը, համար բարյացակամ վերարտադրողական և սեռական առողջության բարելավմանն ուղղված ծառայությունների հասանելիությունն ու որակը, բարելավել սեռավարակների վաղ հայտնաբերման և բուժման ծառայությունների որակն առողջության առաջնային պահպանման մակարդակում: (Հավելված 1) 6. **Վերարտադրողական և մայրական առողջության բարելավման, անպտուղ ամուսնության հիմնախնդրի հաղթահարման, պերինատալ և մայրական հիվանդացության ու մահացության կրճատման** նպատակով ծրագրի **միջոցառումներով** նախատեսվում է բարելավել ծառայությունների որակն ու հասանելիությունը՝ ներառյալ մասնագետների գիտելիքները և հմտությունները, ամրապնդել անպտուղ զույգերի ախտորոշման և բուժման ինստիտուցիոնալ կարողությունը, բարելավել առաջնային և երկրորդային անպտղության մասին տվյալների հավաքագրման ազգային համակարգը, բարձրացնել կանանց սկրինինգային հետազոտություններում ընդգրկվածությունը և բարձրացնել ախտորոշման որակը: (Հավելված 2) 7. **Հանրային առողջության (սանիտարահակահամաճարակային) բնագավառում ազգային անվտանգության և ահաբեկչության հետ կապված հիմնախնդիրների ու հակազդեցության** ուղղությունները ներառում են ապահովել շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում շարունակական նպատակային ծրագրի իրականացումը՝ բազմակողմանի և համալիր միջգերատեսչական համագործակցությամբ, հատկապես, կարևորելով երեխաների, դեռահասների և աշխատողների առողջության պահպանման խնդիրները (Հավելված 1)	Մոր և մանկան առողջապահական ծառայությունների բարելավման ուղղությամբ ծրագրի ուղղությունները ներառում են երեխաների, մայրերի և կանանց վերարտադրողական առողջության իրավիճակի պարբերական հսկման և կարիքների գնահատման տեղեկատվական, վերլուծական (մոնիթորինգի) համակարգերի կատարելագործում Հավելված 1) Երեխաների և դեռահասների առողջության բարելավման, մանկան առողջ աճի ու զարգացման ապահովման, երեխաների հիվանդացության և մահացության կրճատման արդյունքների մոնիտորինգի թիրախները ներառում են մանկական և պերինատալ մահացության ցուցանիշի կրճատում՝ 20% և ավելի, կրծքով սնուցման ցուցանիշի բարելավում՝ 20% և ավելի, դեռահասներին բարյացակամ առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովման նպատակով Երևանում և մարզերում համապատասխան կենտրոնների ստեղծում: (Հավելված 2) Վերարտադրողական և մայրական առողջության բարելավման, անպտուղ ամուսնության հիմնախնդրի հաղթահարման, պերինատալ և մայրական հիվանդացության ու մահացության կրճատման արդյունքների մոնիտորինգի թիրախները ներառում են մայրական մահացության միջին եռամյա ցուցանիշի կրճատում՝ 20% և ավելի, արգանդի վզիկի քաղցկեղի բարդացած դեպքերի նվազեցում՝ 30%, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների ներդրման միջոցով բարձրացնել չբերության բուժման արդյունավետությունը՝ 30%, ծնելիությունը և բնական աճը՝ մինչև 1% (Հավելված 2)	• ՀՀ առողջապահության նախարարություն
189.	**«ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության գործունեության ծրագիրը և միջոցառումների ցանկը**	1. Ծրագիրը ներառում է հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության, ՀՀ զինված ուժերում ծառայելու համար ֆիզիկապես կոփված, հայրենասիրական ոգով դաստիարակման ապահովումը, նախազորակոչային տարիքի դպրոցականների կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորումը, դպրոցականների շրջանում իրականացվող ռազմահայրենասիրական և մարզական աշխատանքների բարելավումը, երիտասարդների հայրենասիրական և ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված հանրապետական ռազմամարզական միջոցառումների՝ պետական ծրագրերով նախազորակոչային տարիքի երիտասարդների մարզական խաղերի և սպարտակիադաների, մրցաշարերի կազմակերպումը, խաղերում ներգրավված երիտասարդների թվի ավելացումը: (Հավելված 1) 2. Ծրագիրը նախատեսում է դեռահասների ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացումը, մասսայական սպորտի, առողջ ապրելակերպի արմատավորումը դպրոցահասակ երեխաների շրջանում, մանկապատանեկան սպորտի զանգվածային		• ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

	հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 450-Ն, ընդունված է՝ 15.04.2010, ուժի մեջ է՝ 13.05.2010* Հաստատում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության գործունեության ծրագիրը և միջոցառումների ցանկը:	միջոցառումների անցկացումը հանրապետության մարզերում և համայնքներում: (Հավելված 1) 3. Ծրագրով նախատեսվում է հանրակրթական դպրոցներում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանն աջակցելը՝ մատաղ սերնդի շրջանում առողջ կենսակերպի քարոզումը և ազատ ժամանցի կազմակերպումը, դեռահասների ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացումը, միջոցառումներում ներգրավված դպրոցականների և դպրոցների թվի աճի ապահովումը: (Հավելված 1) 4. Ծրագիրը ներառում է նաև առանձնահատուկ օժտվածություն ունեցող երեխաների և երիտասարդների ի հայտ բերման և ուսուցման կազմակերպման ապահովումը՝ անհատի ներդաշնակ զարգացումն ու աշխատունակության բարձրացումը, մասսայական սպորտի, առողջ ապրելակերպի արմատավորումը դպրոցահասակ երեխաների շրջանում, նրանց լայնորեն ընդգրկումը ֆիզկուլտուրայի և սպորտի աշխատանքներում, մարզաձևերի խմբերում, սեռային հավասարության խթանումը, դպրոցականների շրջանում իրականացվող ռազմահայրենասիրական և մարզական աշխատանքների բարելավումը: (Հավելված 1) 5. Ծրագիրը ներառում է նաև մանկապատանեկան մարզադպրոցների շենքային պայմանների բարելավումը՝ ներառյալ տեղային ջեռուցման համակարգերի անխափան աշխատանքի ապահովումը, մարզակառույցները ժամանակակից մարզագույքով և ուսումնամարզական պրոցեսի արդյունավետ կազմակերպման համար նպաստավոր պայմանների ապահովումը: (Հավելված 1)		
190.	**«ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործունեության ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 482-Ն, ընդունված է՝ 15.04.2010, ուժի մեջ է՝ 20.05.2010* Հաստատում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործունեության ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ցանկը:	1. Գյուղական աղքատության հաղթահարման և գյուղական բնակավայրերի ամրապնդման քաղաքականության ուղղությունների հիմնական բաղադրիչները ներառում են գյուղատնտեսական նշանակության աշխատանքներին մինչև 14 տարեկան երեխաների ներգրավումը՝ պայմանով, որ դա չխոչընդոտի նրանց կրթությանը կամ վնաս հասցնի առողջությանը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացմանը: (Հավելված 1)		• ՀՀ գյուղատնտեսության նախարարություն • ՀՀ մարզպետարաններ
191.	**«ՀՀ-ում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1039-Ն, ընդունված է՝ 27.03.2008, ուժի մեջ է՝ 02.10.2008* Հաստատում է ՀՀ-ում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը, հանձնարարականներ է տալիս ՀՀ ֆինանսների նախարարին, հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման համար առաջին պատասխանատու հանրապետական գործադիր մարմիններին, ստեղծում է ՀՀ-ում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրային միջոցառումների	1. Ծրագրի միջոցառումները ներառում են Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքներում իրավախախտ անչափահասների վերականգնողական կենտրոնների ստեղծում, տեղերում սերտ համագործակցության ապահովում՝ ՀՀ մարզպետարաններում, Երևանի քաղաքապետարանում գործող երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների և շահագրգիռ մարմինների, կազմակերպությունների միջև, արտադպրոցական նոր հաստատություններ, սպորտային և այլ ուղղվածության խմբակներ ստեղծելու, դրանցում պետպատվերի ավելացման ուղղությամբ միջոցների ձեռնարկում, հանրակրթական և նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում հոգեբանի հաստիքներ ստեղծելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում, սովորողների հետ իրականացվող դաստիարակչական աշխատանքներում նոր և առավել առաջադիմական մեթոդների, ծրագրերի ներդրում՝ այդ աշխատանքներում ներգրավելով տարբեր հասարակական կազմակերպությունների ներուժը, սովորողների հետ տարբեր իրավական թեմաների շուրջ զրույց-զեկուցումների անցկացում, սովորողների շրջանում օրինապահ և ազգասեր քաղաքացու կերպարի դաստիարակության աշխատանքներում իրավապահ մարմինների փորձառու ծառայողների ու վետերանների ներգրավում, Երևանի տասը դպրոցում ոստիկանության դպրոցական տեսուչների ինստիտուտի՝ փորձնական կարգով ներդրում, դրական արդյունքի դեպքում հանրապետության մյուս դպրոցներում փորձի տարածում: (Հավելված 2)	Ծրագրային միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է երեք մակարդակներում՝ I մակարդակում՝ ծրագրային միջոցառումների իրականացման ընթացքի նկատմամբ իրականացվում է ներգերատեսչական հսկողություն, որի նպատակը վերջիններիս ժամանակին և ամբողջական կատարման կազմակերպումն է, II մակարդակում՝ ծրագրային միջոցառումների կատարման ընթացքի նկատմամբ հսկողություն է իրականացվում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից, որը ծրագրի յուրաքանչյուր փուլի ավարտին ՀՀ կառավարություն է ներկայացնում հաշվետվություն կատարված աշխատանքի մասին, III մակարդակում՝ ծրագրային միջոցառումների իրականացման միջանկյալ և վերջնական արդյունքների նկատմամբ հսկողություն է իրականացնում ՀՀ կառավարությունը: (Հավելված 1) Ծրագրի միջոցառումները ներառում են	• ՀՀ-ում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրային միջոցառումների կատարման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահը ՀՀ կառավարությանն առընթեր **ՀՀ ոստիկանության պետն** է: (Հավելված 2) • Հանձնաժողովում ընդգրկված են **ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ՏԿՆ, ԳԳ ԿԳՆ, ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ ՊՆ, ՀՀ քաղաքաշինության նախարարության** և **ՀՀ ԱՍՀՆ** ներկայացուցիչները: (Հավելված 2)

	կատարման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով և հանձնարարություն է տալիս միջգերատեսչական հանձնաժողովում ներգրավված հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին:		հանցագործություն կատարած անձանց օպերատիվ տեղեկատու քարտադարանի ավտոմատացման աշխատանքների ավարտ, ՀՀ ոստիկանության տարբեր ծառայությունների կողմից շահագործվող տվյալների բազաների ինտեգրման և մեկ միասնական ցանցային միջավայրում շահագործման ապահովում, Միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում՝ իրավապահ մարմինների և շահագրգիռ գերատեսչությունների տվյալների բազաները մեկ միջավայրում ինտեգրելու, միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներն իրականացնելու համար: (Հավելված 2)	
192.	**«Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1385-Ն, ընդունված է՝ 20.11.2008, ուժի մեջ է՝ 03.12.2008* Հաստատում է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը, սահմանում է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի ուղղորդման գործում ՀՀ պետական կառավարման լիազորված մարմինները:	1. Շահագործման նպատակով երեխաներին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը համարվում են մարդկանց շահագործում՝ նույնիսկ այն դեպքում, երբ դա չի ներառում կարգում սահմանված եղանակներից որևէ մեկը: (Հավելված 1) 2. Սահմանում է զոհերի հայտնաբերման փուլում տեղեկատվության աղբյուրները, ըստ ընդգրկված կառույցների, այդ թվում՝ ՀՀ ԱՍՀՆ համապատասխան ստորաբաժանման դեպքում՝ մարզպետարաններում երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները: (Հավելված 1) 3. Սահմանում է հայտնաբերված զոհի մասին տեղեկության փոխանցման և զոհի ուղղորդման կարգը, ըստ իրավիճակների: (Հավելված 1)	ՀՀ պետական կառավարման լիազորված յուրաքանչյուր մարմին կարող է թրաֆիքինգի մասին տեղեկություններ ստանալ մյուս լիազոր մարմիններից: (Հավելված 1) ՀՀ ոստիկանությունը և ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ-ն թրաֆիքինգի մասին տեղեկություններ կարող են ստանալ նաև ինքնուրույն՝ իրենց ստորաբաժանումների միջոցով, ինչպես նաև ՋԼՄ-ներից, անհատներից (տուժողներից և այլ դիմումատուներից), այլ կազմակերպություններից, օպերատիվ ճանապարհով և անձնական հետամտության միջոցով: (Հավելված 1) ՀՀ ԱԳՆ-ն կարող է թրաֆիքինգի մասին տեղեկություններ ստանալ նաև ինքնուրույն՝ իր ստորաբաժանումներից և ենթակառույցներից (այդ թվում՝ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններից), արտերկրում հայկական համայնքներից, եկեղեցիներից, այլ պետությունների դիվանագիտական ներկայացուցչություններից, միջազգային կառույցներից, ՀՀ ԱՍՀՆ-ն և ՀՀ առողջապահության նախարարությունը՝ նաև ինքնուրույն՝ իրենց ստորաբաժանումներից, ինչպես նաև անհատներից, ՀԳՀ ՏԿԱԻՆ-ը՝ նաև ինքնուրույն՝ ՀԳՀ ՏԿԱԻՆ ստորաբաժանումներից, ինչպես նաև թեժ գծով դիմած անհատներից, միգրանտների սպասարկման կետում կերպավորման (պրոֆիլավորման) աշխատանքների արդյունքում, ՏԻՄ-երից: (Հավելված 1) Մյուս բոլոր կազմակերպություններն ու մարմինները, որոնք իրենց գործունեության ընթացքում նույնպես կարող են առնչվել թրաֆիքինգի հետ կապված դեպքերին, տեղեկատվության աղբյուր են պետական կառավարման լիազորված մարմինների համար:	• Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերի ուղղորդման գործում ՀՀ պետական կառավարման լիազորված մարմիններն են ՀՀ ԱՍՀՆ-ն, ՀՀ ԱԳՆ-ն, ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ ՏԿԱԻՆ-ը, ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ-ն և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը: (Կետ 2) • Զոհերին աջակցության և դրա համակարգման համար պետական կառավարման լիազորված մարմին է ՀՀ ԱՍՀՆ-ն: Այն իր առջև դրված խնդիրների լուծման նպատակով ակտիվորեն փոխհամագործակցում է օգնություն և (կամ) աջակցություն տրամադրող այլ պետական մարմինների և համագործակցող ՀԿ-ների հետ: (Հավելված 1) • ՀՀ-ում թրաֆիքինգի հանցագործության դեմ պայքարի համար հիմնական պետական կառավարման լիազորված մարմինն է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը: Մյուս բոլոր պետական կառավարման լիազորված մարմիններն իրենց աղբյուրներից ստացված՝ հանցագործությունների մասին տեղեկությունն անմիջապես փոխանցում են ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն՝ համաձայն սխեմայի: (Հավելված 1) • Պետական կառավարման լիազորված մարմինները հանդես են գալիս համապատասխան կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումներով, որոնք համակարգում են իրենց աղբյուրներից ստացվող տեղեկատվության փոխանակումը միմյանց միջև: Վերջիններն ակտիվորեն փոխհամագործակցում և օգտագործում են միմյանց միջոցներն ու հնարավորությունները զոհերի

			(Հավելված 1) Պետական կառավարման լիազորված մարմինները պարտավոր են խստորեն պահպանել իրենց կողմից ստացված անձնական տեղեկությունների գաղտնիությունը: (Հավելված 1) Պետական կառավարման լիազորված մարմինները հայտնաբերված զոհի մասին տեղեկությունն անմիջապես փոխանցում են ՀՀ ոստիկանություն: Համագործակցող ՀԿ-ները, փոխադարձ համաձայնությամբ, իրենց կողմից հայտնաբերված զոհի մասին տեղեկությունը, հնարավորինս կարճ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում փոխանցում են ՀՀ ԱՍՀՆ կամ ՀՀ ոստիկանություն: ՀՀ ԱՍՀՆ-ն իր հերթին պետք է օգտագործի ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված հնարավորություններն ու միջոցները՝ զոհերի նույնացման և պաշտպանության նպատակով: (Հավելված 1)	հայտնաբերման, նույնացման և վերականգնողական օգնության տրամադրման նպատակով, ինչպես նաև հանցագործության դեպքերի նախականխման, կանխարգելման, բացահայտման ուղղությամբ: (Հավելված 1) • Պետական կառավարման լիազորված մարմինները համագործակցում են **միայն համագործակցող** ՀԿ-ների հետ: (Հավելված 1) • Այն դեպքում, երբ զոհը հայտնաբերման պահին գտնվում է ՀՀ-ում, հայտնաբերված և նախնական նույնացված զոհին նախնական աջակցություն ցուցաբերվում է ՀՀ ԱՍՀՆ միջնորդությամբ, ՀՀ համապատասխան մարմինների և կառույցների, այդ թվում՝ նաև ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի երեխայի իրավունքների պաշտպանության բաժինների միջոցով: Ելնելով անհրաժեշտությունից՝ ՀՀ ԱՍՀՆ-ն կարող է համագործակցել համապատասխան համագործակցող ՀԿ-ների հետ: (Հավելված 1)
193.	**«ՀՀ միգրացիայի ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Եվրամիությունում և միասնական տնտեսական տարածքում ընդունված մոտեցումներին և սկզբունքներին համապատասխանեցնելուն ուղղված գործողությունների 2014-2016 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 769-Ն, ընդունված է՝ 17.07.2014, ուժի մեջ է՝ 23.08.2014* Հաստատում է ՀՀ միգրացիայի ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Եվրամիությունում և Միասնական տնտեսական տարածքում ընդունված մոտեցումներին և սկզբունքներին համապատասխանեցնելուն ուղղված գործողությունների 2014-2016թթ. ծրագիրը, սահմանում է ՀՀ կառավարության յուրաքանչյուր տարվա գործունեության միջոցառումների ծրագրի նախագծի մշակման ժամանակ	1. Ծրագրով նախատեսված գործողություններն ընդգրկում են բնակչության տեղաշարժին առնչվող հարցերի ամբողջ շրջանակը, մասնավորապես՝ առանց ուղեկցության անչափահասների իրավունքների պաշտպանության ու նրանց իրավունքների իրականացման ապահովման հստակեցումը: (Հավելված) 2. Ծրագիրը նախատեսում է կամավոր վերադարձի համար առավելագույն ժամկետի սահմանում, կամավոր վերադարձի ժամկետի երկարացման նախատեսում (հաշվի առնելով առանձին դեպքի կոնկրետ հանգամանքները, ինչպիսիք են՝ գտնվելու տևողությունը, դպրոց հաճախող երեխաների առկայությունը, ընտանեկան ու սոցիալական այլ կապերի առկայությունը), ինչպես նաև այդպիսի կամավոր վերադարձի ժամանակահատվածի երկարացման արգելքի դեպքերի սահմանում՝ ընտանիքի միասնության ու անչափահասների համար հիմնական կրթական համակարգից օգտվելու հնարավորության ապահովման, խոցելի խմբերի հատուկ կարիքների ամրագրման նպատակով: 3. Ծրագիրը նախատեսում է ապաստան հայցողներին և փախստականներին տրամադրվող ծառայությունների ընդլայնում և հստակեցում, այդ թվում՝ անչափահասների կրթություն, ապաստան հայցողների և փախստականների իրավունքների արդյունավետ պաշտպանության նպատակով: (Հավելված) 4. Առանց ուղեկցության երեխաների իրավունքների ապահովում, այդ թվում՝ հարցազրույցի անհապաղ իրականացում՝ առանց անհարկի ուշացման՝ դրա համար հարմարեցված և համապատասխանեցված սենյակներում ու վերապատրաստված մասնագետների կողմից, ինչպես նաև լիազորված պետական մարմինների հետ անհարկի լրացուցիչ հանդիպումները նվազագույնի հասցնում: (Հավելված) 5. Ապաստան հայցող երեխաների իրավունքների իրականացման մեխանիզմի ներդրման և կանոնակարգման նպատակով նախատեսվում է երեխայի խնամակալների կամ հոգաբարձուների կողմից ապաստանի հայց ներկայացնելու կարգի, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող երեխային խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու ընթացակարգի հստակեցում: (Հավելված) 6. Առանց ուղեկցության երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանության նպատակով նախատեսվում է նաև ՀՀ կառավարության որոշման ընդունման նպատակահարմարության քննարկում, որով կսահմանվի առանց ուղեկցության երեխաների ներկայացուցչության նշանակման կարգը և այդ նպատակի համար միջգերատեսչական համագործակցությունն ու համապատասխան գերատեսչությունների պարտականությունները: (Հավելված)	Ծրագրի դիտարկման գործառույթը վերապահել ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1593-Ն որոշման 4-րդ կետով ստեղծված՝ ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. գործողությունների ծրագրի մոնիթորինգի միջգերատեսչական հանձնաժողովին: (Կետ 4) Ծրագրի պատասխանատու կատարող հանրապետական գործադիր մարմինները հանձնաժողովին տարեկան պարբերականությամբ պետք է ներկայացնեն իրենց կողմից իրականացված միջոցառումների կատարման մասին հաշվետվությունը՝ օրացուցային տարվա ավարտից հետո 20-օրյա ժամկետում: (Կետ 5) ՀՀ ՏԿԱԻՆ ՄՊԾ պետը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարություն է ներկայացնում կատարված աշխատանքների մասին հաշվետվություն: (Կետ 6)	• ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. գործողությունների ծրագրի մոնիթորինգի միջգերատեսչական հանձնաժողով • ՀՀ ՏԿԱԻՆ Միգրացիայի պետական ծառայություն • ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն • ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ • ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ ԿԳՆ • ԱԱ ԱԳՆ

	ծրագրով սահմանված համապատասխան տարվա միջոցառումները, հանձնարարական է տալիս ՀՀ ֆինանսների նախարարին, ծրագրի դիտարկման գործառույթը վերապահում է մոնիթորինգի միջգերատեսչական հանձնաժողովին, սահմանում է իրականացված միջոցառումների կատարման մասին հաշվետվության ներկայացման կարգը:			
194.	**«Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 303-Ն, ընդունված է՝ 27.02.2014, ուժի մեջ է՝ 12.04.2014* Հաստատում է մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը, հանձնարարականներ է տալիս ՀՀ ֆինանսների նախարարին և պատասխանատու հանրապետական գործադիր մարմիններին, ինչպես նաև առաջարկություն է տալիս օրենքով ստեղծված մարմինների ղեկավարներին:	1. Ծրագիրը նախատեսում է հանրակրթական դպրոցներում տարբեր կրոնների և դավանանքների նկատմամբ հանդուրժողականությանն ուղղված քայլերի ձեռնարկում, մասնավորապես՝ հայերենով Թոլեդոյի ուղղորդող սկզբունքների՝ առանձին գրքույկով տպագրում, հանրակրթական դպրոցներում տարածում, հատկապես, «Հայ եկեղեցու պատմություն» դասավանդող ուսուցիչների և կրթության ոլորտի պատասխանատուների շրջանում: (Հավելված) 2. Համապատասխան իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացվելու՝ բացառելու դպրոցներում ուսուցիչների հավատաքննության դեպքերը և աշխատանքի ընդունումը կամ հեռացումը՝ ըստ կրոնական պատկանելության: (Հավելված) 3. Ծրագիրը նախատեսում է ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ դպրոցների մանկավարժական խորհուրդների և կառավարման խորհուրդների նիստերը հասարակության համար թափանցիկ դարձնելու ուղղությամբ, մասնավորապես՝ թափանցիկությունն ապահովելու համար դպրոցների, մանկավարժական խորհուրդների և կառավարման խորհուրդների կայացրած որոշումների տեղադրում համապատասխան դպրոցի կայքէջում: (Հավելված) 4. Մինչև 14 տարեկան երեխաներին՝ իրենց համար թույլատրելի աշխատանքներում ներգրավման կարգավորման նպատակով համապատասխան իրավական ակտերի նախագծերը ներկայացվելու են ՀՀ կառավարություն: (Հավելված) 5. Նախատեսվում է «Անհատական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի ընդունած չափանիշներին համապատասխան: (Հավելված) 6. ՀՀ կառավարություն են ներկայացվելու շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններն այլընտրանքային ծառայությունների վերակազմակերպման վերաբերյալ առաջարկություններ: (Հավելված) 7. Ծրագիրը ներառում է համայնքներում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հարցերով զբաղվող մասնագետների ներդրման մոդելի մշակում, գործառնական ծախսերի վերլուծում և դրանց արդյունքներով ընտրված համայնքներում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հարցերով զբաղվող մասնագետներով ապահովում, մասնավորապես՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային առնվազն մեկ ծառայողի ընդգրկում, որի պաշտոնի անձնագրում ամրագրվելու են երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված գործառույթներ: (Հավելված) 8. Ծրագիրը նախատեսում է մուրացիկ երեխաների հարցերով զբաղվող միջգերատեսչական աշխատանքային խմբի գործարկում, խնդրի կարգավորման համար առաջարկների և անչափահաս մուրացիկների թվի նվազեցմանն ուղղված ռազմավարության մշակում: (Հավելված) 9. Երևանի ենթակայության մանկապարտեզներում երեխաների թիվը թույլատրելի քանակին համապատասխանեցնելու նպատակով կ ներկայացվի միջոցառումների ծրագիր: (Հավելված) 10. Անչափահասների վերաբերյալ քրեական գործերով օրենսդրորեն կնախատեսվեն գաղտնիության պահպանման լրացուցիչ երաշխիքներ (Հավելված) 11. Ծրագրով նախատեսվում է Քրեական դատավարության օրենսգրքով սահմանել անչափահասի մասնակցությամբ առերեսման և այլ քննչական գործողությունների հատուկ կարգ, մասնավորապես, անչափահասին հանցագործությամբ հասցված վնասի վերապրումը բացառելու համար (double victimization) (Հավելված) 12. Ծրագիրը ներառում է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի բոլոր մակարդակների միջև համագործակցության մեխանիզմների զարգացում (Հավելված) 13. Նախատեսվում է երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգի և միջոցառումների ծրագրի մշակում և այն ՀՀ կառավարություն ներկայացնելը, որով կսահմանվեն երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի ձևերը (Հավելված) 14. Կիրականացվի երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի մասնագետների մասնագիտական վերապատրաստում: (Հավելված) 15. Հանրակրթական դպրոցներում, նախադպրոցական հաստատություններում, երեխաների խնամքի կենտրոններում նախատեսվում է բարձրացնել բռնության բոլոր ձևերի մասին իրազեկվածությունը, երեխաների հետ իրականացնել զրույցներ՝ իրենց նկատմամբ հնարավոր բռնության դեպքերը բացահայտելու ուղղությամբ՝ ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնությունը՝ ինչպես ընտանիքում, այնպես էլ՝ ուսման վայրում և փողոցում (Հավելված) 16. Դատավորների, քննիչների, ինչպես նաև անչափահասների գործերով քննություն իրականացնող աշխատողների պարբերաբար վերապատրաստման միջոցով նախատեսվում է երաշխավորել, որպեսզի դեռահասների հարցերով արդարադատության համակարգում ներգրավված բոլոր մասնագետների ուսուցումն անցկացվի միջազգային չափանիշներին համապատասխան՝	Պատասխանատու հանրապետական գործադիր մարմինների ղեկավարները և օրենքով ստեղծված մարմինների ղեկավարները՝ յուրաքանչյուր կիսամյակ ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ, ՀՀ կառավարության աշխատակազմ և ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացնում հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ: (Կետ 3) Ծրագրով նախատեսվում է հանրությանը հայտնի դեպքերի հանգամանքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվող ուսումնասիրությունների հրապարակման մատչելիություն: (Հավելված)	• ՀՀ ԿԳՆ • ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ արդարադատության նախարարություն • ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն • ՀՀ ՏԿԱԻՆ • ՀՀ մարզպետարաններ • Երևանի քաղաքապետարան • ՀՀ մարդու իրավունքների պաշտպան • Արդարադատության Ակադեմիա • Փաստաբանական դպրոց • ՀՀ ֆինանսների նախարարություն • ՀՀ քննչական կոմիտե • ՀՀ ԿԱ ԱԱԾ • ՀՀ ՊՆ • ՀՀ քաղաքաշինության նախարարություն

		ներառյալ հանցագործության մանկահասակ զոհերի և վկաների մասնակցությամբ արդարադատությանն առնչվող ՄԱԿ-ի ուղեցույցը: (Հավելված) 17. Ծրագիրը նախատեսում է զարգացնել անչափահաս իրավախախտների վարքագծի շտկմանն ու սոցիալական վերաինտեգրմանն ուղղված մասնագիտացված կառույցների ինստիտուտը՝ համայնքային վերականգնողական խորհուրդների թվի ու աշխատանքի արդյունավետության աճի միջոցով: (Հավելված) 18. Նախատեսվում է միջոցներ ձեռնարկել հատուկ դպրոցներում սովորող՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների թվի նվազեցման ուղղությամբ, մասնավորապես՝ հատուկ դպրոցներից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների տեղափոխում հանրակրթական դպրոցներ: (Հավելված) 19. ՀՀ պետական բյուջեում համապատասխան վերաբաշխումներ կկատարվեն և կավելացվի խնամատար ընտանիքների թիվը՝ հաշվի առնելով միջազգային փորձը: (Հավելված) 20. Անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար կստեղծվեն նախատեսված հատուկ սենյակներ: (Հավելված) 21. Նախատեսվում է ՀՀ կառավարություն ներկայացնել հանրակրթական դպրոցների, նախադպրոցական հաստատությունների և բուհերի շենքերը հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցնելու միջոցառումների ծրագիր: (Հավելված) 22. Ծրագիրը նախատեսում է կազմակերպել ներառական կրթություն իրականացնող բոլոր ուսումնական հաստատությունների մասնագետների և աշխատողների վերապատրաստում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հետ առավել արդյունավետ աշխատելու նպատակով: (Հավելված) 23. Նախատեսվում է նաև նախազորակոչային տարիքի դպրոցականների շրջանում զինծառայության, զինծառայողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ընդհանուր իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ըստ անհրաժեշտության, ՆԶՊ առարկայի շրջանակում զինծառայողների իրավունքների և պարտականությունների, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ թեմաների և դասավանդման մեթոդիկայի վերանայում: (Հավելված)		
195.	**«ՀՀ խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպման (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 743-Ն, ընդունված է՝ 17.07.2014, ուժի մեջ է՝ 07.08.2014* Հաստատում է ՀՀ խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպելու (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագիրը, ՀՀ Լոռու մարզի և ՀՀ Շիրակի մարզի հաստատությունների ցանկը, հանձնարարականներ է տալիս ՀՀ ֆինանսների նախարարին և ՀՀ ԱՍՀ նախարարին:	1. Ծրագրի **նպատակը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքի և դաստիարակության ապահովումն** է ընտանիքում: (Հավելված 1) 2. Ծրագրից ակնկալվող արդյունքներն են՝ հաստատություններից երեխաների վերադարձն ընտանիք, երեխաների մուտքի կանխարգելումը հաստատություններ, երեխայի և նրա ընտանիքի սոցիալական վիճակի բարելավումը: (Հավելված 1) 3. Ծրագրի **հաճախորդներն** են՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի N 743-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված ցանկերի հաստատություններում խնամվող երեխաները և նրանց ընտանիքները, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի երեխաները, որոնց ծնողները (կամ միակ ծնողը կամ օրինական ներկայացուցիչը) դիմել են երեխային հաստատություն տեղավորելու համար, այն երեխաները, ովքեր հաստատությունից վերադարձել են ընտանիք և անհատական սոցիալական ծրագրի մոնիթորինգի արդյունքների համաձայն կարիք ունեն ստանալու սոցիալ-հոգեբանական վերականգնման ծառայություններ, որոնց մատուցման տևողությունը մինչև 12 ամիս է: (Հավելված 1) 4. Ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումներն են՝ սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցում, հաճախորդի կրթության կազմակերպում՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում, ծրագրում ընդգրկված հաճախորդներին աջակցություն՝ նրանց ընտանիքներին սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին ուղղորդելու միջոցով, հաճախորդների ընտանիքների չափահաս աշխատանք փնտրող անդամներին, ինչպես նաև 16 տարեկանը լրացած երեխաներին ուղղորդում նախարարության աշխատակազմի ԶՊԾԳ զբաղվածության տարածքային մարմին՝ զբաղվածության ծրագրերում ընդգրկելու նպատակով: (Հավելված 1) 5. Հաստատություններում խնամվող երեխաների վերադարձը կենսաբանական ընտանիք ապահովող միջոցառումների (բեռնաթափման գործընթաց) իրականացման քայլերն են՝ հաստատություններում գտնվող հաճախորդների տվյալների ուսումնասիրություն, վերլուծություն և նրանց կարիքների գնահատում, հաճախորդների ընտանիքներ տունայցի կազմակերպում, հաճախորդների սոցիալական կարիքների գնահատում, գնահատված կարիքների հիման վրա հաճախորդների ընտրություն, ընտրված հաճախորդների և երեխայի իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող մասնագետների կամ կառույցների (խնամակալության և հոգաբարձության մարմին, ուսումնական հաստատություն և այլն) հետ աշխատանքների կազմակերպում, հաստատություններից ընտրված հաճախորդների անհատական սոցիալական ծրագրի մշակում և իրականացում: (Հավելված 1) 6. Հաճախորդի մուտքը հաստատություններ կանխարգելման միջոցառումների իրականացման քայլերն են՝ հաճախորդների ընտանիքների ուսումնասիրություն և սոցիալական կարիքների գնահատում, հաճախորդների ընտրություն, հաճախորդների անհատական սոցիալական ծրագրի մշակում և իրականացում: (Հավելված 1) 7. Հաճախորդներին տրամադրվում է ծրագրի շրջանակներում նախատեսված բնաիրային օգնության փաթեթ: (Հավելված 1)	Ծրագիրը կիրականացվի ՀՀ պետական բյուջեի միջոցների և օրենքով չարգելված այլ աղբյուրների հաշվին՝ հասարակական կազմակերպության միջոցով, որի հետ ՀՀ ԱՍՀՆ-ն կկնքի գործակալության պայմանագիր: Ծրագրի կատարման նկատմամբ մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԱՍՀՆ կողմից: (Հավելված 1)	• Հաճախորդների սոցիալական կարիքների գնահատման, անհատական սոցիալական ծրագրի մշակման կարգը սահմանում է ՀՀ ԱՍՀ նախարարը: (Հավելված 1) • **ՀՀ Լոռու մարզի** ՀՀ խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատությունների ցանկը ներառում է. «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ, «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ, «Վանաձորի N 1 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ, «Երևանի բժշկամանկավարժական գնահատման կենտրոնի Ստեփանավանի մասնաճյուղ» ՊՈԱԿ, «Սպիտակի N 1 մտավոր թերզարգացում ունեցող հատուկ «օժանդակ» դպրոց» ՊՈԱԿ: (Հավելված 2) • **ՀՀ Շիրակի մարզի** ՀՀ խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատությունների ցանկը ներառում է. «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ, «Գյումրու Ֆ. Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ, «Գյումրու N 1 երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ, «Տիրամայր Հայաստանի կուսաստան կենտրոն», «Թռչունյան տուն երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՍՊԸ, «Գյումրու N 3 մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ օժանդակ դպրոց» ՊՈԱԿ, «Արթիկի N 1 հատուկ դպրոց»

				ՊՈԱԿ: (Հավելված 3)
196.	**«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 145-Ն, ընդունված է՝ 30.01.2014, ուժի մեջ է՝ 27.02.2014* Սահմանում է պետական նպաստների բնագավառի՝ ՀՀ կառավարության լիազորած մարմինը, ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ, հրատապ օգնություն, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ տրամադրող՝ ՀՀ կառավարության լիազորած տարածքային մարմինները, հաստատում է ընտանիքների անապահովության գնահատման կարգը, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) կարգը, ՀՀ բնակավայրերի ցանկը՝ ըստ ընտանիքների անապահովության գնահատման վրա ազդեցության գործակցի արժեքների, անասնապահությունից և հողօգտագործումից ստացվող եկամտի հաշվարկման կարգը, ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայի ստեղծման, ձևավորման, անհատական տվյալների՝ ԱՍՀՆ և սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների), ՀՀ նախարարությունների, այլ պետական մարմինների և կազմակերպությունների միջև փոխանակման կարգը, սոցիալական բանկի, ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում հաշվառված անձանց մասին ՀՀ նախարարությունների և այլ պետական մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների, ՀՀ ԱՍՀՆ միջև փոխանակվող տեղեկատվությունը,) ընտանեկան կամ սոցիալական նպաստի կամ հրատապ օգնության նշանակման և	1. Միակողմանի ծնողազուրկ երեխայի, առանց ծնողական խնամքի մնացած երեխայի, ամուսնալուծված ընտանիքի երեխայի, միայնակ մոր երեխայի, ինչպես նաև հաշմանդամ երեխայի սոցիալական խմբերի դեպքերում, որպես 2-րդ սոցիալական խումբ, հաշվի է առնվում նրանց՝ անչափահաս երեխա լինելու հանգամանքը՝ իրենց ժամկետներով: (Հավելված 2) 2. Ընտանիքի անաշխատունակ անդամների թվի հաշվարկման ընթացքում երեխաները ընտանիքի անաշխատունակ անդամներն են: (Հավելված 2) 3. Միայնակ մոր երեխա է համարվում այն երեխան, որի մայրը ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը, կամ որը որդեգրվել է ամուսնության մեջ չգտնվող կնոջ կողմից, ընդ որում, միայնակ մոր երեխայի ծածկագիրը չի կիրառվում, եթե միայնակ կնոջ խնամքի տակ գտնվող մեկից ավելի երեխաների հայրանունը (բացառությամբ երկվորյակ կամ ավելի ծնված բոլոր երեխաների հայրանունից) նույնն է: (Հավելված 3) 4. Միակողմանի ծնողազուրկ երեխա է համարվում համապատասխան փաստաթղթերը ներկայացրած՝ 21 տարեկանը չլրացած չաշխատող անձը կամ մինչև 23 տարեկանը չլրացած չաշխատող անձը, եթե սովորում է ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսուցմամբ (մինչև հաջորդ տարվա սեպտեմբեր ամսվա 1-ը ներառյալ), բայց ոչ ավելի, քան մինչև այն ավարտելը (մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը ներառյալ): (Հավելված 3) 5. Առանց ծնողական խնամքի մնացած երեխա է համարվում համապատասխան փաստաթղթերը ներկայացրած՝ 23 տարեկանը չլրացած անձը: (Հավելված 3) 6. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում՝ նպաստները մտնում են ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմի մեջ: (Հավելված 3) 7. Կենսաթոշակի, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, որպես եկամուտ, հաշվի են առնվում դիմելու ամսվան նախորդող ամսվա չափով: (Հավելված 3) 8. ՀՀ կառավարության որոշմամբ կենսաթոշակի, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը փոփոխվում են գնահատման համակարգի կենտրոնական տեղեկատվական բազայում, դրանց բարձրացման ամսվան հաջորդող ամսվա ընթացքում: (Հավելված 3) 9. Տարածքային կենտրոնը, ըստ անհրաժեշտության, համապատասխան տեղեկատվական շտեմարաններից ինքնաշխատ եղանակով (դիմելու պահին) կամ դիմողի կողմից ներկայացված տեղեկանքի հիման վրա ստանում է դիմողի ընտանիքի յուրաքանչյուր անդամի մասին թվարկվող տվյալները, այդ թվում՝ մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափերը և ժամկետները. առանց ծնողական խնամքի մնացած լինելու հանգամանքը: (Հավելված 3) 10. Եթե ընտանիքի հղի անդամի հղիության ժամկետը լրանում է և 2 ամսվա ընթացքում ներկայացվում է երեխայի ծննդյան վկայականը, ապա դրա արդյունքում ձեռք բերված անապահովության միավորը վերականգնվում է ընտանիքի հղի անդամի հղիության ժամկետի լրացման ամսաթվից սկսած: (Հավելված 6)	Հանձնարարում է ՀՀ մարզպետներին և առաջարկում է կատարում Երևանի քաղաքապետին, Գյումրու, Վանաձորի, Ջերմուկի և Արարատի քաղաքային համայնքների ղեկավարներին ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակները բնակչության համար առավել տեսանելի վայրերում պարտադիր փակցնելը, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընտանիքների հաշվառման (փաստագրման) աշխատանքների արդյունավետ կազմակերպումը, իսկ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) սպասարկման տարածքում մեկից ավելի համայնքների առկայության դեպքում՝ աշխատանքների կազմակերպումը համայնքներում՝ դրանցում ներգրավելով ՏԻՄ-երին, յուրաքանչյուր կիսամյակի առաջին ամսվա մինչև 15-ը ՀՀ ՏԿԱԻ նախարարին և ՀՀ ԱՍՀ նախարարին ներկայացնել տեղեկատվություն նախորդ կիսամյակի ընթացքում՝ քաղաքացիների (ընտանիքների) կողմից ավելի ստացված գումարների վերադարձման մասին: (Կետ 4) Հանձնարարում է ՀՀ ԱՍՀ նախարարին, ՀՀ մարզպետներին և առաջարկել Երևանի քաղաքապետին ապահովել ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակների պարտադիր տեղադրումը՝ համապատասխանաբար նախարարության, մարզպետարանների, քաղաքապետարանի պաշտոնական կայքէջերում, ինչպես նաև համացանցային կայքեր ունեցող՝ ՀՀ քաղաքապետարանների և գյուղապետարանների կայքէջերում, այն քաղաքապետարանների և գյուղապետարանների համացանցային կայքէջերում, որոնց կայքէջերը կձևավորվեն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո: (Կետ 6) Ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազան ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում ՀՀ-ում օրինական բնակվող անձանց անհատական տվյալների միասնական տեղեկատվական շտեմարանի (սոցիալական բանկ) մաս է կազմում: (Հավելված 6) Սոցիալական բանկը բաղկացած է հետևյալ տեղեկատվական բազաներից՝ էլեկտրոնային կենսաթոշակի	• Պետական նպաստների բնագավառի՝ ՀՀ կառավարության լիազորած մարմինը ՀՀ ԱՍՀՆ-ն է: (Կետ 1) • Ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ, հրատապ օգնություն, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ տրամադրող՝ ՀՀ կառավարության լիազորած տարածքային մարմինները ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալություններն են, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Արարատի, Վանաձորի, Գյումրու և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային բաժինները: (Կետ 1)

	վճարման կարգը, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի նշանակման և վճարման կարգը, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի անկանխիկ եղանակով վճարման կարգը, ՀՀ ԱՍՀՆ ու սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) միջև մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի տեղեկատվական բազաներում ամրագրված անհատական տվյալների փոխանակման կարգը, ընտանիքի (քաղաքացու) ներկայացրած փաստաթղթերում նպաստի իրավունք տվող կամ նպաստի չափի փոփոխություն առաջացնող ոչ հավաստի տեղեկությունների հիման վրա խորհրդի՝ ավելի վճարված գումարների վերադարձման վերաբերյալ առաջարկության մասին որոշում ընդունելու և ընտանիքի (քաղաքացու) հետ գրավոր համաձայնությամբ ժամանակացույց կազմելու կարգը, ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի վճարման համար ՀՀ պետական բյուջեից միջոցների հատկացման կարգը, հանձնարարականներ է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին, ՀՀ արդարադատության նախարարին, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին ու ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին, ՀՀ մարզպետներին և առաջարկություն է կատարում Երևանի քաղաքապետին, Գյումրու, Վանաձորի, Ջերմուկի և Արարատի քաղաքային համայնքների ղեկավարներին:		տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարան, անձնավորված հաշվառման համակարգի տեղեկատվական շտեմարան, ընտանիքների անապահովության գնահատման տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարան, երեխաների ծննդյան միանվագ և մինչև 2 տարեկան երեխաների խնամքի նպաստների տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարան, ՀՀ զբաղվածության ոլորտի գործառույթներ իրականացնող «Գործ» տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարան, «ՎՏԲ-Հայաստան» բանկում որպես նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկի ավանդատուների ավանդների փոխհատուցման տեղեկատվական շտեմարան, հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման տեղեկատվական շտեմարան, կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հաշվառման տեղեկատվական շտեմարան, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական շտեմարան, սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված տարեցների հաշվառման տեղեկատվական շտեմարան, բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական շտեմարան: (Հավելված 6) Սոցիալական բանկում ներառվում են ՀՀ նախարարություններում և այլ պետական մարմիններում, ինչպես նաև կազմակերպություններում առկա տեղեկատվական բազաների (հարակից բազաներ) այն տվյալները, որոնք անհրաժեշտ են քաղաքացիների սոցիալական իրավունքի իրացման համար: (Հավելված 6) Սոցիալական բանկում ներառվում են ստորև նշված հարակից բազաներում առկա տվյալները՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության տեխնիկական զննություն անցած անձնական օգտագործման ավտոմեքենաների և դրանց փոխադրամիջոցների սեփականատերերի մասին, ոստիկանության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձանց, անձնական օգտագործման փոխադրամիջոցների մասին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային վճարներ կատարած անձանց մասին, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի՝ ՔԿԱԳ-ում գրանցված անձանց մասին, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի	

			գործակալությունում գրանցված իրավաբանական անձանց մասին, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում հողի սեփականատերերի, հողը վարձակալողների մասին, անշարժ գույքի առուվաճառքի գործարքներ կատարած անձանց մասին: (Հավելված 6) Սոցիալական բանկում տվյալները մշակվում են և պաշտպանվում «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: (Հավելված 6) Սոցիալական բանկում առկա հարակից բազաների տվյալները և գնահատման համակարգի տվյալները փոխանակվում են համապատասխան **տեղեկատվական բազաների միջև՝ համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման N 7 հավելվածի**: (Հավելված 6) Գնահատման համակարգի տեղեկատվական բազան ստեղծվում է ընտանիքի սոցիալական անձնագրում ամրագրված՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամին և ընտանիքին վերաբերող սոցիալ-տնտեսական պայմանների մասին տվյալների մուտքագրման միջոցով: Գնահատման համակարգի տեղեկատվական բազան բաղկացած է կենտրոնական տեղեկատվական բազայից և դրա բաղկացուցիչ մասերից՝ ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում (բաժիններում) (տարածքային կենտրոն) ձևավորված տեղական տեղեկատվական բազաներից: (Հավելված 6) Գնահատման համակարգի տեղեկատվական բազան տնօրինում է ՀՀ ԱՍՀՆ-ն, կենտրոնական տեղեկատվական բազան սոցիալական բանկը շահագործում է ընտրված կազմակերպությունը, իսկ տեղական տեղեկատվական բազաները շահագործում են տարածքային կենտրոնները: Գնահատման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա ստացված տեղեկատվությունը տեղակայվում է ՀՀ ԱՍՀՆ պաշտոնական կայքէջում և հասանելի է քաղաքացուն՝ իր տվյալների մասով: Տեղական տեղեկատվական բազան կազմված է գնահատման համակարգում հաշվառված (փաստագրված) և տվյալ տարածքային կենտրոնի սպասարկման տարածքում բնակվող ընտանիքների և	

			նրանց անդամների տվյալներից: Գնահատման համակարգում հաշվառված և նախորդ 12 ամիսների ընթացքում չփաստագրված ընտանիքների կազմի և պայմանների մասին տվյալները պահպանվում են գնահատման համակարգի տեղեկատվական բազայում՝ անժամկետ: (Հավելված 6) Գնահատման համակարգի կենտրոնական, տեղական տեղեկատվական բազաներ և սոցիալական բանկ մուտքի թույլտվություն ունի այն շահագործող անձնակազմը: Կենտրոնական, տեղական տեղեկատվական բազաները և սոցիալական բանկը շահագործող անձնակազմի յուրաքանչյուր աշխատող ունի տեղեկատվական բազայի հետ աշխատանքի իր ծածկագիրը, նշանաբանը և կարգը, որոնցով որոշվում են յուրաքանչյուրի տեղեկատվական բազա մուտքի, անհատական տվյալների պաշտպանության և տեղեկատվական բազայի շահագործման համար լիազորությունների իր շրջանակները: Տարածքային կենտրոնի յուրաքանչյուր աշխատող կատարում է իրեն ամրակցված սպասարկման որոշակի տարածքի ընտանիքների հաշվառումը (փաստագրումը) և նրանց տվյալների տեղեկատվական բազայի սպասարկումը, նրանց անհատական տվյալների, դրանց փոփոխությունների, սոցիալական աջակցության հատկացման համար իրավունքի ծրագրային որոշումը: Տարածքային կենտրոնի աշխատողն իր ծածկագրով և նշանաբանով մուտք ունի միայն իր սպասարկման տարածքի տեղեկատվական բազա: Տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողի պարտականություններն ամրացվում են տարածքային կենտրոնի աշխատողներից մեկին՝ տարածքային կենտրոնի ղեկավարի կարգադրությամբ: Տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողն ապահովում է տվյալների տեղական տեղեկատվական բազայի ամբողջականության պահպանումը, իրականացնում տեղեկատվական բազայի սպասարկման բոլոր գործառույթները: Տեղեկատվական բազայի պատասխանատու աշխատողն ապահովում է տարածքային կենտրոնի և ՀՀ ԱՍՀՆ միջև տվյալների՝ միմյանց փոխանցումը: (Հավելված 6) Գնահատման համակարգի տեղական տեղեկատվական բազայի շահագործման անվտանգ պայմաններն	

			ապահովում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը կամ Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարը, Գյումրու, Վանաձորի, Արարատի, Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարները: (Հավելված 6) Կենտրոնական տեղեկատվական բազան թարմացվում է ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ, տարածքային կենտրոնների տրամադրած արդիականացված տեղեկատվական բազաների միջոցով՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 8-ը ներառյալ: (Հավելված 6) Տարածքային կենտրոնը տեղեկատվական բազայի փոփոխությունները՝ արդիականացված տվյալները, փոխանցում է կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպությանը՝ առցանց: Տեղական տեղեկատվական բազայում տվյալ ամսվա ընթացքում կատարված փոփոխություններն արխիվացվում են տվյալ ամսվա վերջին օրացուցային օրվա դրությամբ: Կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպությունից ամենամյա արդիականացված տեղական տեղեկատվական բազաները 15-օրյա ժամկետում փոխանցվում են տարածքային կենտրոններին՝ առցանց: Հարակից բազաներից ստացված տվյալների և գնահատման համակարգի տեղեկատվական բազայում առկա տվյալների հետ համադրման արդյունքները կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպությունը փոխանցում է տարածքային կենտրոններին՝ ՀՀ ԱՍՀՆ միջոցով: (Հավելված 6)	
197.	**«Որդեգրման կարգը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1919-Ն որոշման մեջ լրացում կատարելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած**	1. Սահմանում է ՀՀ-ում որդեգրման ենթակա՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների հաշվառման, նրանց մասին տեղեկությունների տրամադրման, որդեգրման կարգի, ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել (դաստերագրել) ցանկացող՝ ՀՀ-ում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների հաշվառման հետ կապված հարաբերությունները: (Հավելված 1) 2. Որդեգրել ցանկացող անձի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, բնակության վայրը, անձնական գործի համարը) գրանցվում են հաշվառման մատյանում կամ էլեկտրոնային տեղեկատվական համակարգով: (Հավելված 1) 3. «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայի անդամ երկրներում բնակվող՝ որդեգրել ցանկացող օտարերկրացիները, ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիները որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու նպատակով դիմում են համապատասխան երկրի կենտրոնական մարմին: (Հավելված 1) 4. Կոնվենցիային չանդամակցող երկրներում բնակվող՝ որդեգրել ցանկացող օտարերկրացիները, ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիները՝ որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու նպատակով, անձամբ կամ լիազորված անձի, կամ տվյալ պետությունում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի միջոցով դիմում են կենտրոնական մարմին: 5. Եթե որդեգրման ենթակա միևնույն երեխային որդեգրելու ցանկություն են հայտնել մեկից ավելի որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացիներ, ապա երեխայի հետ նրանցից առաջինի հանդիպումը կազմակերպվում է ըստ նրանց դիմումները տալու հերթականության: Որդեգրել ցանկացող մյուս անձի հետ երեխայի հանդիպումը կազմակերպվում է այն դեպքում, եթե առաջինը 15 օրվա ընթացքում ցանկություն չի հայտնել տվյալ երեխային որդեգրելու մասին: Եթե հաշվառված՝ որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացին, ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացին կամ օտարերկրացին որդեգրման ենթակա միևնույն երեխային որդեգրելու ցանկությամբ դիմել են նույն ժամանակահատվածում, ապա երեխայի հետ հանդիպման առաջնահերթությունը տրվում է	Որպես որդեգրման ենթակա երեխաներ հաշվառվում են այն երեխաները, որոնց որդեգրման համար առաջացել են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավական հիմքեր: Որպես որդեգրման ենթակա հաշվառվում են նաև այն երեխաները, որոնց որդեգրման համար առկա է ծնողների համաձայնությունը, երբ երեխային որդեգրելու ցանկություն են հայտնել երեխայի խորթ հայրը, խորթ մայրը, նրա ազգականները կամ որդեգրել ցանկացող այլ անձ: Հաշվառումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմը որդեգրման ենթակա երեխայի անձնական քարտի հիման վրա, որը ներառում է երեխայի կենսագրական տվյալների, էթնիկական ծագման, սոցիալական շրջապատի, ընտանիքի պատմության, առողջության, նաև	• ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ արդարադատության նախարարություն • ՀՀ ԱԳՆ • Որդեգրման ենթակա երեխաների հաշվառումն իրականացնում են նրանց փաստացի գտնվելու վայրի **մարզպետարանների** (**Երևանի քաղաքապետարանի**) աշխատակազմերը՝ իրենց ենթակայության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների՝ **ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների** միջոցով: (Հավելված 1) • Որդեգրման վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրությունն իրականացնում է կենտրոնական

	ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 269-Ն, ընդունված է՝ 18.03.2010, ուժի մեջ է՝ 10.04.2010* Հաստատում է որդեգրման կարգը, ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը, լրացում է կատարում ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 28-ի N 1919-Ն որոշման մեջ, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2000թ. փետրվարի 12-ի N 64, 2005թ. ապրիլի 21-ի N 623-Ն և 2007թ. փետրվարի 1-ի N 209-Ն որոշումները:	որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացուն: Որդեգրել ցանկացող օտարերկրացու և ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացու հետ երեխայի հանդիպումը կազմակերպվում է այն դեպքում, եթե որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացին երեխայի հետ հանդիպումից հետո 15 օրվա ընթացքում որդեգրելու ցանկություն չի հայտնել: (Հավելված 1) 6. Սահմանում է ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխաների հաշվառման հետ կապված հարաբերությունները: (Հավելված 2)	երեխայի հիվանդությունների, բժշկական հետազոտությունների, զննումների, հիվանդությունների, դրանց բուժումների և ընթացիկ առողջական վիճակի ու երեխայի հատուկ պահանջների մասին տեղեկություններ, որդեգրման համար տրված ծնողի (ծնողների) համաձայնությունը, կազմում է երեխայի համար անձնական գործ, որի պատճենահանված օրինակն ուղարկում է ՀՀ ԱՍՀՆ՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու նպատակով: (Հավելված 1) ՀՀ ԱՍՀՆ-ն 3 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է որդեգրման ենթակա երեխայի կենտրոնացված հաշվառումը և տեղեկացնում աշխատակազմին: Կենտրոնացված հաշվառման վերցնելուց 3 ամիս հետո ՀՀ ԱՍՀՆ-ն երեխայի անձնական գործի պատճենահանված մեկ օրինակը հաշվառման մասին տեղեկությունների հետ միասին ուղարկում է ՀՀ արդարադատության նախարարություն՝ «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայով նախատեսված՝ ՀՀ կառավարության կողմից նշանակված կենտրոնական մարմին: (Հավելված 1) ՀՀ ԱՍՀՆ-ն կենտրոնական մարմնից ստացված փաստաթղթերի հիման վրա իրականացնում է կենտրոնացված հաշվառում և որդեգրել ցանկացող օտարերկրացու կամ ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացու վերաբերյալ լրացնում է անձնական քարտ: Դրական եզրակացության, որդեգրել ցանկացող օտարերկրացու կամ ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացու անձնական քարտի, նրա կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա նախարարությունը կազմում է անձնական գործ: (Հավելված 1) Որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ ստանալու նպատակով հաշվառված՝ որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացիները դիմում են իրենց բնակության վայրի աշխատակազմ կամ նախարարություն, իսկ հաշվառված՝ որդեգրել ցանկացող ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիները և օտարերկրացիները՝ կենտրոնական մարմին: Հաշվառված՝ որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացին, ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացին և օտարերկրացին կարող են ծանոթանալ երեխաների անձնական գործերին՝ նախընտրելի չափանիշներով երեխա ընտրելու համար: Տրամադրված	մարմնի ղեկավարի հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խումբը, որի կազմը ձևավորվում է ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ԱԳՆ և ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներից: Աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատում է կենտրոնական մարմնի ղեկավարը: (Հավելված 1)

			տեղեկությունների հիման վրա որդեգրման ենթակա երեխային որդեգրելուց հրաժարվելու դեպքում որդեգրել ցանկացող անձը հաշվառումից չի հանվում: Այն դեպքերում, երբ երեխային որդեգրելու ցանկություն է հայտնել ՀՀ սահմաններից դուրս բնակվող երեխայի խորթ հայրը, խորթ մայրը, նրա ազգականները կամ, երբ երեխայի ծնողների և որդեգրել ցանկացող անձի (անձանց) միջև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով առկա է գրավոր համաձայնություն, որդեգրման նպատակով երեխայի կենտրոնացված հաշվառումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում նախարարությունը կենտրոնական մարմին է ուղարկում տվյալ երեխայի անձնական գործի պատճենահանված օրինակը: Այդ դեպքերում որդեգրման ենթակա երեխայի տվյալներն այլ անձանց չեն տրամադրվում: Որդեգրել ցանկացող անձի կողմից տվյալ երեխայի որդեգրումից հրաժարվելու դեպքում երեխան հանվում է հաշվառումից: (Հավելված 1) Երեխայի որդեգրումից հետո կամ որդեգրման հնարավորության մասին դրական եզրակացության ժամկետը լրանալուց հետո անձնական գործերը պահվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: ՀՀ-ում մշտապես բնակվող օտարերկրացին որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու նպատակով դիմում է կենտրոնական մարմին: Կենտրոնական մարմինն օտարերկրյա պետություն որդեգրված երեխայի կյանքի պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով յուրաքանչյուր տարին մեկ անգամ՝ մինչև որդեգրման 5 տարին լրանալը, դիմում է համապատասխան պետության իրավասու մարմնին: (Հավելված 1)	
198.	**«Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության վճարման կարգն ու չափը և խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 459-Ն, ընդունված է՝*	1. Սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխային դաստիարակության համար խնամատար ընտանիք տեղավորելու հետ կապված հարաբերությունները: Խնամատար ընտանիք դաստիարակության են հանձնվում ՀՀ ընտանեկան օրենսգրքի 139-րդ հոդվածով նախատեսված առանց ծնողական խնամքի մնացած երեխաները: (Հավելված 1) 2. Երեխա դաստիարակության վերցնելու ցանկություն ունեցող անձը խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին եզրակացություն ստանալու համար իր բնակության վայրի մարզպետարան, Երևանի քաղաքապետարան է ներկայացնում դիմում, որում նշվում է նաև խնամատար ընտանիքում դաստիարակության համար հայցվող երեխաների թիվը, անձի համաձայնությունը կենսապայմանների ուսումնասիրության նպատակով տնային այցելություն կատարելու մասին: 3. Երեխային խնամատար ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը կնքվում է խնամատար ծնողի բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնի ու խնամատար ծնողների միջև՝ երեխային խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու մասին որոշման հիման վրա: (Հավելված 1) 4. Կարգավորում է երեխային պահելու համար խնամատար ընտանիքին տրամադրվող ամսական դրամական միջոցների վճարման, ինչպես նաև երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողներին տրվող վարձատրության հետ կապված հարաբերությունները: (Հավելված 2) 5. Երեխայի ապրուստը հոգալու, երեխային պահելու համար անհրաժեշտ անձնական հիգիենայի պարագաների, կենցաղային իրերի, հագուստի, կոշիկի, անկողնային պարագաների, սննդի, խաղալիքների, խաղերի, գրքերի և այլ գրենական պիտույքների ու կահույքի ձեռքբերման, ջեռուցման, լուսավորության, ջրմուղ-կոյուղու և այլ կոմունալ ծառայությունների դիմաց վճարման համար խնամատար	Խնամատար ծնող լինելու հնարավորության մասին դրական եզրակացություն ստացած անձը դաստիարակության համար խնամատար ընտանիք տեղավորման ենթակա երեխայի մասին տեղեկատվություն ստանալու համար դիմում է իր բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին կամ մարզպետարան, Երևանի քաղաքապետարան կամ ՀՀ ԱՍՀՆ: (Հավելված 1) ՀՀ համապատասխան մարզպետարանի, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը կազմում և ՀՀ ԱՍՀՆ է ներկայացնում	• ՀՀ ԱՍՀՆ • **Մարզպետարանը**, **Երևանի քաղաքապետարանը** դիմումը և նախատեսված փաստաթղթերն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում իրականացնում է դիմումատուի կենսապայմանների ուսումնասիրություն և կազմում համապատասխան ակտ: (Հավելված 1) • Երեխային իր բնակության (գտնվելու) վայրում **այցելելու ուղեգիրը** տալիս է երեխայի բնակության վայրի **խնամակալության և հոգաբարձության մարմինը**: (Հավելված 1) • Ընտրված երեխային խնամատար ընտանիք դաստիարակության

	08.05.2008, ուժի մեջ է՝ 08.06.2008 Հաստատում է երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության վճարման կարգն ու չափը, խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը, հանձնարարական է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին, նոյեմբերի 28-ի N 1919-Ն որոշման մեջ, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2000թ. փետրվարի 12-ի N 64, 2005թ. ապրիլի 21-ի N 623-Ն և 2007թ. փետրվարի 1-ի N 209-Ն որոշումները:	ծնողին յուրաքանչյուր ամիս վճարվում են դրամական միջոցներ, ինչպես նաև վարձատրություն՝ երեխայի խնամքի և դաստիարակության համար: (Հավելված 2) 6. Երեխային պահելու համար խնամատար ծնողին տրամադրվող ամսական դրամական միջոցների վճարումն ու երեխայի խնամքի և դաստիարակության համար տրվող վարձատրությունն իրականացվում է խնամատար ընտանիքի բնակության վայրի մարզպետի, Երևանի քաղաքապետի և խնամատար ծնողի միջև կնքված՝ «ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցները խնամատար ընտանիքին տրամադրելու մասին» պայմանագրի հիման վրա: (Հավելված 2) 7. Խնամատար ընտանիքին երեխային պահելու համար տրվող ամսական դրամական միջոցները մեկ երեխայի հաշվարկով կազմում են տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով մանկատներում մեկ երեխայի խնամքի համար նախատեսված գումարի չափով, երկու երեխայի համար՝ մեկ երեխայի համար հաշվարկված գումարի 150 տոկոսի, իսկ երեք և ավելի երեխաների համար՝ 200 տոկոսի չափով: (Հավելված 2) 8. Մեկ երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողներից մեկին տրամադրվում է վարձատրություն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով, երկու երեխայի համար՝ նվազագույն ամսական աշխատավարձի 150 տոկոսի, երեք և ավելի երեխաների համար՝ նվազագույն ամսական աշխատավարձի 200 տոկոսի չափով: (Հավելված 2)	նախորդ ամսվա համար խնամատար ընտանիքին տրամադրված դրամական միջոցների վերաբերյալ հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվությունը՝ ըստ խնամատար ընտանիքների: (Հավելված 2)	հանձնելու մասին **որոշումն ընդունում է երեխայի բնակության (գտնվելու) վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը**: (Հավելված 1)
199.	**«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 917-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 962-Ն, ընդունված է՝ 22.06.2006, ուժի մեջ է՝ 03.08.2006* Հաստատում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման կարգը, հանձնարարական է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի 23-ի N 917-Ն որոշումը, փետրվարի 12-ի N 64, 2005թ. ապրիլի 21-ի N 623-Ն և 2007թ. փետրվարի 1-ի N 209-Ն որոշումները:	1. Սահմանում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կենտրոնացված հաշվառման հետ կապված հարաբերությունները: (Հավելված) 2. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառման նպատակը դաստիարակության համար նրանց ընտանիք հանձնելն է (որդեգրման, խնամակալության (հոգաբարձության) կամ խնամատար ընտանիք, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում տեղավորելն է, նրանց անհատական վերականգնման սոցիալ-հոգեբանական ծրագրերը կազմելն է, ինչպես նաև «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված երաշխիքներ տրամադրելն է: (Հավելված)	Հանձնարարում է ՀՀ ԱՍՀ նախարարին՝ 6-ամսյա ժամկետում հաստատել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց անձնական քարտերի ու առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց սկզբնական, տարածքային ու կենտրոնացված հաշվառման մատյանների ձևերը: (Կետ 2) Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումը (սկզբնական, տարածքային և կենտրոնացված) իրականացվում է համապատասխանաբար խնամակալության և հոգաբարձության մարմինների (սկզբնական հաշվառում), ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) (տարածքային հաշվառում) և ՀՀ ԱՍՀՆ կողմից (կենտրոնացված հաշվառում): (Հավելված) Խնամակալության և հոգաբարձության մարմինը, տեղեկանալով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին, պարտավոր է եռօրյա ժամկետում հետազոտել երեխայի կյանքի պայմանները և ծնողական խնամքի բացակայության փաստը հաստատվելու դեպքում երեխայի մասին տվյալները գրանցել առանց ծնողական խնամքի մնացած	• ՀՀ ԱՍՀՆ • Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց **սկզբնական հաշվառումը** և դրա համար անհրաժեշտ փաստաթղթերի կազմումն իրականացնում է երեխայի փաստացի գտնվելու վայրի **խնամակալության և հոգաբարձության մարմինը**: (Հավելված) • **Նախադպրոցական, հանրակրթական, բուժպրոֆիլակտիկ և այլ հաստատությունների** պաշտոնատար անձինք, որոնք տեղեկություն ունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին, պարտավոր են դրա մասին հայտնել երեխաների փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին: (Հավելված) • **Դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության և նմանատիպ այլ հաստատությունների** ղեկավարները, որտեղ գտնվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, պարտավոր են 7 օրվա ընթացքում, այն օրից, երբ տեղեկություն են ստացել, որ երեխան կարող է հանձնվել ընտանիք՝ դաստիարակության, հայտնել այդ հաստատության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմին: (Հավելված) • Մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) առանց

			երեխաների սկզբնական հաշվառման մատյանում: Սկզբնական հաշվառման վերցնելուց հետո 3 օրվա ընթացքում երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմինը լրացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի անձնական քարտը, որի պատճենը և երեխայի լուսանկարը՝ 2 օրինակից, ուղարկում է մարզպետարան (Երևանի քաղաքապետարան)՝ երեխային տարածքային հաշվառման վերցնելու համար: Խնամակալության և հոգաբարձության մարմինը մարզպետարան (Երևանի քաղաքապետարան) է ուղարկում նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց անձնական քարտերը: (Հավելված) Խնամակալության և հոգաբարձության մարմինն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավական կարգավիճակի փոփոխման դեպքում (ծնողի (ծնողների) ծնողական իրավունքների վերականգնման, երեխայի որդեգրման և այլն) 3-օրյա ժամկետում դրա մասին տեղեկացնում է մարզպետարան (Երևանի քաղաքապետարան): (Հավելված) Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց մասին խնամակալության և հոգաբարձության մարմնից տեղեկություն ստանալուց հետո մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) 3 օրվա ընթացքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց լուսանկարները և անձնական քարտերի պատճեններն ուղարկում է նախարարություն՝ երեխաներին կենտրոնացված հաշվառման վերցնելու և ՀՀ տարածքում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների ընտանիքներում դաստիարակության հանձնելուն աջակցելու, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց: (Հավելված) Մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) խնամակալության և հոգաբարձության մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա լրացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց տարածքային հաշվառման մատյանները և ձևավորում է տվյալ մարզի (Երևան	ծնողական խնամքի մնացած երեխաների թվից առանձնացնում է այն երեխաներին, որոնց որդեգրման համար օրենքով սահմանված կարգով ծագել են իրավական հիմքեր: (Հավելված) • ՀՀ ԱՍՀՆ-ն աջակցում է առանց ծնողական խնամքի մնացած երեխային ընտանիքում դաստիարակության հանձնելու հարցի լուծմանը և առանց ծնողական խնամքի մնացած երեխային ընտանիքում դաստիարակության վերցնելու ցանկություն հայտնած անձանց: (Հավելված)

			քաղաքի) տարածքում բնակվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տվյալների տարածքային շտեմարան և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց տվյալների տարածքային շտեմարան: (Հավելված) Մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) վարում է որդեգրման ենթակա այն երեխաների հաշվառումը, որոնց որդեգրման համար օրենքով սահմանված կարգով ծագել են իրավական հիմքեր: Տարածքային հաշվառման վերցված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավական կարգավիճակի փոփոխման դեպքում (ծնողի (ծնողների) ծնողական իրավունքների վերականգնման, որդեգրման և այլն) մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) 7-օրյա ժամկետում դրա մասին տեղեկացնում է ՀՀ ԱՍՀՆ: (Հավելված) Մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) հայտնած տվյալների հիման վրա ՀՀ ԱՍՀՆ-ն ձևավորում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տվյալների կենտրոնացված շտեմարան, վարում է այդ երեխաների կենտրոնացված հաշվառումը, առանձնացնում է առանց ծնողական խնամքի մնացած այն երեխաներին, որոնց որդեգրման համար օրենքով սահմանված կարգով ծագել են իրավական հիմքեր և եռօրյա ժամկետում կենտրոնացված հաշվառման մասին տեղեկությունը փոխանցում է համապատասխան մարզպետարան (Երևանի քաղաքապետարան): (Հավելված) ՀՀ ԱՍՀՆ-ն մարզպետարաններին (Երևանի քաղաքապետարանին), իրենց հարցման հիման վրա, տալիս է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տվյալների հանրապետական շտեմարանում եղած տեղեկությունները: (Հավելված) Կենտրոնացված հաշվառման վերցված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավական կարգավիճակի փոփոխման մասին տեղեկատվության հիման վրա ՀՀ ԱՍՀՆ-ն հաշվառման մատյանում կատարում է համապատասխան գրառում (առանց ծնողական խնամքի մնացած երեխային հանում է կենտրոնացված հաշվառումից): (Հավելված)	
200.	**«Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի**	1. Ծրագիրը կազմվում է երեխայի ուսումնասիրման և սոցիալական կարիքների գնահատման արդյունքների հիման վրա: (Հավելված 1) 2. Երեխայի կարիքների գնահատման հիման վրա համապատասխան մասնագետների կողմից կազմվում է ծրագիրը, որը ներառում է մի շարք վերականգնողական միջոցառումներ և ծառայություններ՝ ուղղված՝ երեխայի առողջության վերականգնմանը և զարգացմանը, երեխայի հոգեբանական վերականգնմանը և զարգացմանը, երեխայի սոցիալ-կենցաղային հարմարեցմանը, սոցիալական վերականգնմանը և զարգացմանը, երեխայի կրթադաստիարակչական գործընթացի իրականացմանը, ընտանիքում	Ծրագրի իրականացումը վերահսկվում է ծրագիրը կազմող կազմակերպության կամ մարմնի ղեկավարի կողմից: (Հավելված 1)	• ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ ԿԳՆ • Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների

	մշակման կարգը և կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի կազմման ձևաթուղթը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1288-Ն, ընդունված է՝ 08.11.2007, ուժի մեջ է՝ 08.12.2007* Հաստատում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի մշակման կարգը, կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրի կազմման ձևաթուղթը, ՀՀ ԱՍՀ նախարարին ու ՀՀ ԿԳ նախարարին հանձնարարական է տալիս:	երեխայի ունեցած միջանձնային խնդիրների լուծմանը: (Հավելված 1) 3. Ծրագրի արդյունքը երեխայի բժշկասոցիալական, հոգեբանական վերականգնումն ու հասարակությանը նրա ինտեգրումն է: (Հավելված 1) 4. Ծրագիրն ըստ անհրաժեշտության ենթակա է փոփոխության: Ծրագիրը վերանայվում է յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ, իսկ հատուկ կարիքներ ունեցող երեխաների դեպքում՝ յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ: (Հավելված 1)		իրավունքների պաշտպանության և սոցիալ-հոգեբանական վերականգնման ու զարգացման նպատակով սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագիրը կազմում են **ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները և երեխաների խնամք ու պաշտպանություն իրականացնող հաստատությունները**: (Հավելված 1)
201.	**«Կարուսելների (զվարճահարմարանքների) անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում** *N 1351-Ն, ընդունված է՝ 22.10.2009, ուժի մեջ է՝ 16.06.2010* Հաստատում է կարուսելների (զվարճահարմարանքների) անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը:	1. Տեխնիկական կանոնակարգը սահմանում է անվտանգության պահանջներ՝ կարուսելների (զվարճահարմարանքների) և դրանց սարքավորումների շահագործման կենսական ցիկլերի բոլոր փուլերի համար և տարածվում է զվարճանքի համար շարժական կամ անշարժ սարքավորումների վրա՝ նախատեսված զբոսայգիներում, հանգստյան այգիներում և հանգստի այլ վայրերում տեղակայման և շահագործման համար ու սահմանում է նվազագույն պահանջներ: (Հավելված) 2. Կանոնակարգի դրույթները տարածվում են ՀՀ տարածքում տեղաբաշխված հայրենական ու օտարերկրյա արտադրության ժամանակավոր և մշտական, նախկինում շահագործված և սկզբնապես տեղակայված զվարճահարմարանքների վրա, այդ թվում՝ մանկական հրապարակների համար սարքավորումների վրա: Սահմանում է մանկական հրապարակների սարքավորումների հիմնական տեսակները: Կանոնակարգի դրույթները չեն տարածվում, մասնավորապես, երեխաների համար մանկական հիմնարկներում ու բնակելի շեն քերի բակերում տեղադրված պարզագույն տեսակի զվարճասարքերի վրա: (Հավելված) 3. Մանկական հրապարակների սարքավորումների համար պետք է անցկացվի տեխնիկական վիճակի գնահատում՝ հսկիչ ստուգման ձևով, իսկ շահագործման դեպքում՝ ամենամյա ստուգմամբ: (Հավելված) 4. Տեխնիկական վիճակի գնահատման ժամանակ իրականացվում է տարիքի ու հասակի պատճառով զվարճահարմարանքից օգտվելու սահմանափակումների մասին տեղեկատվության տեղաբաշխումը: (Հավելված) 5. III և IV մակարդակի տեխնիկական պատասխանատվության ոչ մեքենայացված զվարճահարմարանքների շահագործման դեպքում դրանցից ինքնուրույն օգտվել թույլատրվում է 3 տարեկանից բարձր տարիք ունեցող երեխաներին, ինչպես նաև 3 տարեկանից ցածր տարիք ունեցողներին՝ մեծահասակների կամ չափահասների ուղեկցությամբ: Նշված զվարճահարմարանքները պետք է կահավորված լինեն՝ տարիքի, հասակի ու կշռի պատճառով սահմանափակումների մասին տեղեկատվությամբ, հաճախորդների՝ օգտվելու մասին կանոններով, շահագործողի ու փրկարարական ծառայությունների հեռախոսահամարների տեղեկատվությամբ: (Հավելված) 6. Այնպիսի զվարճահարմարանքներ, որոնք նախատեսված են միայն մինչև 130 սմ հասակ ունեցող երեխաների համար, թիկնակի բարձրությունը կարելի է փոքրացնել մինչև 0.25 սմ: (Հավելված) 7. Մանկական հրապարակների սարքավորումների շահագործման ժամանակ պետք է հաշվի առնվեն՝ տարբեր տարիքային խմբերի երեխաների համար խաղային հրապարակներում սարքավորումների շահագործման առանձնահատկությունները, սարքավորումների տարբեր բացվածքներում, ճեղքերում, անցքերում երեխաների ձեռքերի, ոտքերի, գլխի, մատների, հագուստի խցկված մնալու, լռվելու անթույլատրելիությունը, խաղային ու վայրէջքի գոտիների չափերի բավարարությունը, այն տեղերում, որտեղ կարող են ընկնել տարբեր առարկաներ, որտեղ տեղի են ունենում սահք, գլորում, թռիչքներ, սարքավորման տարրերում և դրանց միջև ճեղքերի, բացվածքների առկայության անթույլատրելիությունը, ազատ անկման անվտանգ բարձրության (խաղային մակերեսից մինչև վայրէջքի գոտու միջև ընկած ուղղաձիգ հեռավորությունը) ապահովումը, սարքավորման շարժվող ու անշարժ տարրերի, ինչպես նաև խաղային հրապարակի միջև անվտանգ հեռավորության ապահովումը, որպեսզի ռիսկը, որը ենթադրվում է զվարճանքի և խաղի ժամանակ, երեխայի համար լինի ակնհայտ, և նա կարողանա կանխատեսել դրանք ու խուսափել դրանցից, սարքավորման մեջ երեխաների օգնության համար մեծահասակների մուտքի մատչելիությունը, սարքավորման մակերեսին ջրի կուտակման անթույլատրելիությունը, ջրի ազատ հոսքի և չորացման ապահովումը, ամրացման միացությունների դուրս ցցված վերջույթներից պաշտպանվածության ապահովումը, որպեսզի սարքավորման փայտե տարրերի ու դրանց մակերեսների վրա չլինեն մշակման թերություններ, որպեսզի սարքավորման վրա երեխաներին պահող (բռնող) տարրերի լայնությունը համապատասխանի նախագծով նախատեսված չափերին, որպեսզի հարկ եղած տեղերում սարքավորումն ապահովվի բազրիքներով, ճաղաշարքերով ու		• Զվարճահարմարանքների նույնականացումն իրենց իրավասության սահմաններում կարող են իրականացնել՝ արտադրողը, հայտատուն (վաճառողը), սերտիֆիկացման մարմինը, տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող մարմինը: (Հավելված) • Զվարճահարմարանքների հավաստումն անցկացվում է լիազոր պետական մարմնում հավատարմագրված անձի կողմից՝ «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ հայտատուի հայտի համաձայն: (Հավելված) •

		պաշտպանակներով՝ հաշվի առնելով երեխաների տարիքային խմբերը: Դրա հետ մեկտեղ, բազրիքների, ճաղաշարքերի ու պաշտպանակների կառուցվածքը պետք է լինի այնպիսին, որ հնարավոր չլինի երեխաներին կանգնել կամ նստել, մագլցել ու բարձրանալ դրանց վրա: (Հավելված) 8. Սարքավորումների շահագործման ընթացքում պետք է հսկել՝ որպեսզի օգտագործվող նյութերը երեխաների ու շրջակա միջավայրի վրա չունենան վտանգավոր ազդեցություն, որպեսզի շատ բարձր ջերմաստիճանի պայմաններում երեխաների մաշկի վրա սարքավորումների հետ շփումից չառաջանան ջերմային այրվածքներ: (Հավելված) 9. Մանկական խաղային հրապարակների սարքվածքների համար արգելվում է օգտագործել հետևյալ նյութերը՝ պոլիմերային դյուրավառ նյութեր, այրման արգասիքների թունավորության տեսակետից վտանգավոր նյութեր, նոր նյութերը, որոնց հատկությունները դեռևս բավականաչափ չեն ուսումնասիրված: (Հավելված) 10. Եթե սարքավորումներում օգտագործվում են տարբեր ձուլամայրային (մատրիցա) հիմքով ոչ դյուրավառ պոլիմերային և կոմպոզիցիոն նյութեր, ապա դրանք ուլտրամանուշակագույն ճառագայթման ներգործության հանդեպ պետք է լինեն կայուն: Պոլիմերային և կոմպոզիցիոն նյութերի մակերեսների կարծրությունը շահագործման ամբողջ ընթացքում պետք է ապահովի երեխաների անվտանգությունը: Մետաղե նյութերը, որոնց շերտազատման, կեղևահանման, կլպման հետևանքով առաջանում են թթուներ (օքսիդներ), պետք է պաշտպանված լինեն ոչ թունավոր ծածկույթով: Նրբատախտակները մթնոլորտային ներգործությունների նկատմամբ պետք է լինեն կայուն: (Հավելված) 11. Սարքավորման հավաքակցումը, տեղադրումն ու շահագործումը պետք է կատարվեն նախագծին, սարքավորման տեխնիկական անձնագրի պահանջներին համապատասխան: Սարքավորումը պետք է հավաքակցվի և տեղադրվի այնպես, որպեսզի ապահովվի խաղացող երեխաների անվտանգությունը: (Հավելված) 12. Արգելվում է շահագործել մանկական հրապարակների սարքավորումները, եթե դրանցում աշխատանքներն ամբողջությամբ չեն ավարտվել: (Հավելված) 13. Մանկական հրապարակների սարքավորումների ստուգման ժամանակ անհրաժեշտ է՝ համոզվել սարքավորման սարքինության և համալրության մեջ, հավաստիանալ սարքավորման յուրաքանչյուր կառուցվածքի, դրա առանձին տարրերի ու մասերի առավելագույն ունակության մեջ՝ դրանց մշտական և ժամանակավոր բեռնվածության պայմաններում: (Հավելված) 14. Մանկական հրապարակների սարքավորումների շահագործման ժամանակ անհրաժեշտ է՝ արգելապատել խաղային գոտիները, որպեսզի դրանք չհատեն հետիոտնի անցումային գոտիները, բացառել սարքավորման շահագործումը, եթե այն վնասված է և կարող է վնաս հասցնել երեխաների առողջությանը, խաղային գոտում չստեղծել խոչընդոտներ, որոնք կարող են վնասվածքի պատճառ հանդիսանալ, վայրէջքի գոտիները սարքավորել հարվածամեղմիչ ծածկույթով՝ երեխաների վնասվելը բացառելու համար, տեղակայել ցուցանակներ՝ համապատասխան բովանդակությամբ: (Հավելված) 15. Ձվարճահարմարանքի սեփականատերն օբյեկտի համար մշակում է տեխնիկական անվտանգության համալիր միջոցառումներ և պարբերաբար, առնվազն տարեկան մեկ անգամ ստուգում և գնահատում է այդ միջոցառումների արդյունավետությունը և շահագործման պայմանների փոփոխության դեպքում ճշգրտում դրանք ու ապահովում դրանց պարտադիր կատարումը: (Հավելված)		
202.	**«Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշում** *N 107-Ա, ընդունված է՝ 17.02.2015, ուժի մեջ է՝ 18.02.2015* Հաստատում է «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» 2014թ. նոյեմբերի 20-ի ՀՕ-177-Ն ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը:	1. «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը ներառում է ՀՀ կառավարության հետևյալ որոշումների նախագծերի ներկայացումը. «Մանուկներին և վաղ տարիքի երեխաներին անվտանգ և համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու նպատակով կրծքով կերակրման խրախուսման ազգային ծրագիրը հաստատելու վերաբերյալ», «Մանուկներին և վաղ տարիքի երեխաներին կրծքով կերակրումը խրախուսելու ազգային ծրագրով նախատեսված մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների մասին տեղեկատվական և ուսուցողական նյութերի համաձայնեցման և լիազորման կարգը սահմանելու մասին», «Մանկական սնունդը և հարակից ապրանքներն անվճար կամ ցածր գներով տրամադրելու կարգը սահմանելու վերաբերյալ»:		• ՀՀ առողջապահության նախարարություն
203.	**«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց անձնական քարտերի ու առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց սկզբնական,**			• ՀՀ ԱՍՀՆ

	տարածքային ու կենտրոնացված հաշվառման մատյանների ձևերը հաստատելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման *N 62-Ն, ընդունված է՝ 12.04.2007, ուժի մեջ է՝ 25.05.2007* Հաստատում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց անձնական քարտերի և սկզբնական, տարածքային ու կենտրոնացված հաշվառման մատյանների ձևերը:			
204.	**«Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության մասին» թիվ 7, «Շտեմարանում հաշվառված հաշմանդամության մասին» թիվ 1 վարչական հաշվետվության ձևերը հաստատելու և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2004 թվականի օգոստոսի 3-ի թիվ 92-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման** *N 83-Ն, ընդունված է՝ 08.11.2011, ուժի մեջ է՝ 01.01.2012* Հաստատում է «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության մասին» թիվ 7 (տարեկան) վարչական հաշվետվության ձևը, «Շտեմարանում հաշվառված հաշմանդամության մասին» թիվ 1 /կիսամյակային/ վարչական հաշվետվության ձևը, հանձնարարական է տալիս հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետին և ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետին, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ ԱՍՀ նախարարի 2004թ. օգոստոսի 3-ի թիվ 92-Ն հրամանը:			• ՀՀ ԱՍՀՆ
205.	**«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ՀՀ**	1. ԲՍՓ գործեր են հարուցվում գործակալության տարածքային մարմիններում անձի դիմումի հիման վրա բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնելիս՝ անձին հաշմանդամ ճանաչելու, **«հաշմանդամ երեխա» կարգավիճակ** և հաշմանդամության խումբ սահմանելու, պատճառական կապ, մահվան պատճառական կապ, մասնագիտական աշխատունակության կորստի աստիճան որոշելու նպատակով: (Կետ 4)	ԲՍՓ գործերը, դրանց հաշվառման և վարչական ակտերի, վարչական վարույթին առնչվող փաստաթղթերի հաշվառման գրանցամատյանները	• ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն

	բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից հարուցվող վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները հաստատելու, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2005 թվականի ապրիլի 19-ի N 48-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման *N 51-Ն, ընդունված է՝ 05.04.2013, ուժի մեջ է՝ 11.06.2013* Հաստատում է ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից հարուցվող վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ ԱՍՀ նախարարի 2005թ. ապրիլի 19-ի N 48-Ն հրամանը, սահմանում է գործակալությունում վերը նշված գործառույթների նկատմամբ հսկողության պատասխանատու անձին:	2. **ԲՍՓ գործերը կազմվում են 4 հիմնական խմբերով՝** 18 տարին լրացած անձանց ԲՍՓ գործեր, **մինչև 18 տարեկան երեխաների ԲՍՓ գործեր**, անձի մահվան պատճառը արտադրական խեղման, մասնագիտական հիվանդության, ռազմաճակատում գտնվելու, զինծառայության և այլ հանգամանքների հետ կապելու ԲՍՓ գործեր, հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագիր կազմելու ԲՍՓ գործեր: (Հավելված)	պահպանվում են գործակալության կառուցվածքային ստորաբաժանումներում և տարածքային մարմիններում, գործակալության գործավարության կարգով սահմանված կանոններին համապատասխան և օրենքով սահմանված կարգով ենթակա են արխիվացման: (Հավելված) ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունում վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահում է ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության **գործակալության պետին**: (Հավելված)	
206.	**«Մանկատներում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն այն չափորոշիչները սահմանելու մասին, որոնց նկատմամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը իրականացնում է վերահսկողություն» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման** *N 130-Ն, ընդունված է՝ 01.11.2004, ուժի մեջ է՝ 11.12.2004* Սահմանում է, որ ՀՀ ԱՍՀՆ վերահսկողություն է իրականացնում Մանկատներում երեխաների խնամքի ու		ՀՀ ԱՍՀՆ վերահսկողություն է իրականացնում ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և մանկատներում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն որոշմամբ հաստատված «Մանկատներում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն հետևյալ չափորոշիչների» նկատմամբ՝ չափորոշիչ I, չափորոշիչ II, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ կետերի, չափորոշիչ III, չափորոշիչ IV, չափորոշիչ V 12-րդ կետի, չափորոշիչ VI, չափորոշիչ VII, չափորոշիչ VIII, չափորոշիչ IX 17-րդ	• ՀՀ ԱՍՀՆ

	դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն առանձին չափորոշիչների նկատմամբ:		կետի, չափորոշիչ XI 26-րդ, 27-րդ կետերի, չափորոշիչ XII, չափորոշիչ XIII, չափորոշիչ XIV 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 41-րդ կետերի, չափորոշիչ XV, չափորոշիչ XVI, չափորոշիչ XVII, չափորոշիչ XVIII, չափորոշիչ XIX, չափորոշիչ XX, չափորոշիչ XXI: (Կետ 1)	
207.	**«Պետության լրիվ խնամքի տակ գտնվող և խնամակալական կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուին կենսաթոշակ վճարելու կարգը սահմանելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման** *N 34-Ն, ընդունված է՝ 23.03.2004, ուժի մեջ է՝ 13.05.2004* Հաստատում է «Պետության լրիվ խնամքի տակ գտնվող և խնամակալական կազմակերպությունում ապրող կենսաթոշակառուին կենսաթոշակ վճարելու կարգը» և խնամակալական կազմակերպությունների ցանկը, սահմանում է, որ կենսաթոշակի գումարները բանկում բացված ավանդային հաշվին փոխանցելու դադարեցման և կուտակման հարցեր:	1. Մանկատանն ապրող երեխային վճարվում է կերակրողին կորցնելու դեպքում նշանակված կենսաթոշակի 50 տոկոսը: (Կետ 10) 2. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը մանկատանը երեխայի գտնվելու ամբողջ ժամանակահատվածում յուրաքանչյուր ամիս երեխայի կենսաթոշակի գումարը հաշվարկում և կուտակում է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամում նրա անունով բացված անձնական հաշվում՝ մինչև երեխայի 18 տարին լրանալը: (Կետ 10) 3. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը երեխային տրամադրում է կենսաթոշակի վկայական, որը փոխանցվում է մանկատան ղեկավարին՝ երեխայի անձնական գործում պահելու համար: Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, մանկատան ղեկավարին գրավոր տեղեկանք է ուղարկում երեխայի անձնական հաշվում կուտակված կենսաթոշակի գումարի չափի մասին (աճողական՝ տվյալ պահի դրությամբ ամփոփ տվյալներ), որը կարվում է երեխայի անձնական գործին: (Կետ 10) 4. Մանկատան ղեկավարը մինչև 18 տարին լրանալը մանկատնից երեխայի դուրս գրվելու դեպքում նրա ծնողին կամ օրինական ներկայացուցչին, իսկ 18 տարին լրանալուց հետո դուրս գրվելու դեպքում՝ անձամբ նրան, տրամադրում է նրա անձնական հաշվի տնօրինման համար անհրաժեշտ փաստաթղթերը (կենսաթոշակի վկայական, անձնական հաշվում կուտակված կենսաթոշակի գումարների մասին տեղեկանք և այլ փաստաթղթեր): (Կետ 10) 5. Մինչև 18 տարին լրանալը կազմակերպությունից դուրս գրվելու դեպքում մանկատանն ապրած ամբողջ ժամանակահատվածում կուտակված կենսաթոշակի գումարը կենսաթոշակառուին վճարվում է նրա 18 տարին լրանալուց հետո, իսկ օրենքով սահմանված կարգով ավելի վաղ գործունակություն ձեռք բերելու կամ գործունակ ճանաչվելու դեպքում՝ այդ օրվանից: (Կետ 10) 6. Կենսաթոշակի կուտակված գումարը վճարվում է անձի՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում և անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, միանվագ: (Կետ 10) 7. Մինչև կարգն ուժի մեջ մտնելը մանկատանն ապրող երեխայի համար բանկում բացված ավանդային հաշվի գումարի չափը ճշտում են մանկատան ղեկավարն ու կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման ղեկավարը, և բանկում եղած գումարի տնօրինման փաստաթուղթը (գրքույկը) կցվում է երեխայի անձնական գործին: (Կետ 10) 8. Մանկատանն ապրող երեխայի կենսաթոշակի գումարները նրա անձնական հաշվում կուտակելու և հաշվառելու փաստաթղթերը վարում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման համապատասխան աշխատողը: (Կետ 10) 9. Սահմանում է այն խնամակալական կազմակերպությունների ցանկը, որտեղ ապրող կենսաթոշակառուներին կենսաթոշակ է վճարվում, այդ թվում՝ «Երևանի «Մանկան տուն», «Գյումրիի «Երեխաների տուն», «Գավառի մանկատուն», «Վանաձորի մանկատուն», «Երևանի «Զատիկ» մանկատուն», «Հատուկ տիպի մանկատուն», Գյումրիի «Հույս» մանկատուն պետական ոչ առևտրային կազմակերպությունները:		• Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում • Կազմակերպության ղեկավար
208.	**«Սոցիալական փաթեթի շահառուների՝ անվճար բժշկական օգնության և սպասարկման հավաստագրի ձևը և սոցիալական փաթեթի շահառուների՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունքից օգտվելու ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 55-Ն, ուժի մեջ է՝ 11.10.2014, ընդունվել է՝ 01.09.2014* Հաստատում է սոցիալական փաթեթի շահառուների՝ անվճար բժշկական օգնության ու սպասարկման հավաստագրի ձևը և շահառուների՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեցույցը, սահմանում է շահառուներին անվճար	1. **Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող նպատակային արձակուրդից օգտվելու**, կադրերի ռեզերվում գտնվելու, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության անցնելու **դեպքում սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքը դադարում** է, որի դեպքում Շահառուն վերադարձնում է հավաստագիրը այն կազմակերպությանը, որտեղ աշխատում է: Վերստին աշխատանքի անցնելու դեպքում սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքը վերականգնվում է և հավաստագիրը վերադարձվում է Շահառուին: (Կետ 16) 2. **Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում** ընդգրկված են վերարտադրության տարիքի կանայք՝ հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանում, մինչև 7 տարեկան երեխաները, հաշմանդամություն ունեցող երեխաներ՝ մինչև 18 տարեկան, առանց ծնողական խնամքի մնացած երեխաները՝ մինչև 18 տարեկան, և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք՝ 18-23 տարեկան, մինչև 8 տարեկան և 12 տարեկան երեխաները, ինչպես նաև 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձինք՝ մասնագիտացված ստոմատոլոգիական բժշկական օգնության մասով, հաշմանդամություն ունեցող անձանցից բաղկացած ընտանիքների երեխաները՝ մինչև 18 տարեկան, բազմազավակ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաներ, մինչև 18 տարեկան՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաները, միածնող երեխաները՝ մինչև 18 տարեկան և մանկատներում, ծերանոցներում և անօթևանների ժամանակավոր կացարաններում խնամվող անձինք 3. **Փաթեթում ընդգրկված չեն մանկաբարձական** (ծննդօգնություն և հղիության ախտաբանություն) **ծառայությունները և մանկական ուղեղային կաթվածի բուժումը**: (Կետ 6.2&6.7)		• ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար

	բժշկական օգնության ու սպասարկման հավաստագրի և ուղեցույցի միաժամանակյա տրամադրումը, հանձնարարականներ է տալիս հավաստագրի և ուղեցույցի տպագրության վերաբերյալ:			
209.	**«Մանկատներում խնամվող երեխային (երեխաներին) կենսաբանական ընտանիք վերադարձնելու կապակցությամբ ընտանիքին աջակցություն տրամադրելու մասին» պայմանագրի և «ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրման» ակտի ձևերը հաստատելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման** *N 126-Ն/1, ընդունված է՝ 15.10.2004, ուժի մեջ է՝ 25.12.2004* Հաստատում է մանկատներում խնամվող երեխայի (երեխաների) կենսաբանական ընտանիք վերադարձնելու կապակցությամբ ընտանիքին աջակցություն տրամադրելու մասին պայմանագրի և ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրման ակտի ձևերը:			• ԱՍՀՆ
210.	**«Երեխային մանկատանը տեղավորելու և դուրս գրելու մասին եզրակացության ու երեխային երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու և դուրս գրելու մասին եզրակացության ձևերը հաստատելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման** *N 121-Ն, ընդունված է՝ 13.09.2007, ուժի մեջ է՝ 11.11.2007* Հաստատում է երեխային մանկատանը և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու և դուրս գրելու մասին եզրակացության ձևերը:			• ԱՍՀՆ
211.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու ուղեգրի լրացման կարգը, ՀՀ**		Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու ուղեգիր տրամադրող **բժշկական կազմակերպությունը ապահովում է ուղեգրվող**	• Առողջապահության նախարարություն

	առողջապահության նախարարության կողմից բժշկական կազմակերպությանը կամ մարմնին կամ հանձնաժողովին հատկացվող ուղեգրերի ձևաթղթերի գրանցամատյանի, բժշկական կազմակերպության կամ մարմնի կամ հանձնաժողովի կողմից տրամադրվող պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու ուղեգրերը հաշվառելու նպատակով վարվող գրանցամատյանի, պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու ուղեգրերի տրամադրման, խոտանված և դեռևս չօգտագործված ուղեգրերի ձևաթղթերի վերաբերյալ ամփոփ տեղեկանքի ձևերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման *N 13-Ն, ընդունված է՝ 11.04.2015, ուժի մեջ է՝ 11.06.2015* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու ուղեգրի լրացման կարգը, ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական կազմակերպությանը կամ մարմնին կամ հանձնաժողովին հատկացվող ուղեգրերի ձևաթղթերի գրանցամատյանի, վերջինիս կողմից տրամադրվող բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու ուղեգրերը հաշվառելու նպատակով վարվող գրանցամատյանի, ինչպես նաև ուղեգրերի տրամադրման, խոտանված և դեռևս չօգտագործված ուղեգրերի ձևաթղթերի վերաբերյալ ամփոփ տեղեկանքի ձևերը:		**քաղաքացուն**՝ ՀՀ կառավարության N 1405-Ն որոշման 4-րդ կետի համաձայն ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայք-էջում տեղադրված **ՀՀ ԱՆ աշխատակազմի հետ պայմանագրեր կնքած բժշկական կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությամբ**:	
212.	**«ՀՀ առողջապահության նախարարության վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերը հաստատելու և ՀՀ**			• Առողջապահության նախարարություն

	առողջապահության նախարարի 2004 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1009-Ն, 1009/5-Ն, 1009/12-Ն, 1009/15-Ն, 1009/19-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման *N 07-Ն, ընդունված է՝ 03.03.2014, ուժի մեջ է՝ 15.05.2014* Հաստատում է «Առողջապահության առաջնային պահպանման հաստատությունների սպասարկման տարածքում բնակվող անձանց մոտ գրանցված հիվանդությունների մասին», «ԱԱՊ հաստատություններում գրանցված արյան շրջանառության և ներզատական համակարգերի հիվանդությունների թիվն ըստ սեռի և տարիքի», «Շտապ բուժօգնության կայանի (բաժանմունքի) գործունեության մասին», «Տուբերկուլոզով հիվանդների թվաքանակի մասին», «Հոգեկան և վարքի խանգարում ունեցող անձանց մասին», «Հոգեկան և վարքի խանգարում ունեցող անձանց մասին (առանց ալկոհոլային փսիխոզների, ալկոհոլիզմի, թմրամոլության, թունամոլության)» տարեկան վարչական վիճակագրական հաշվետվության ձևերը: Ուժը կորցրած է ճանաչում ՀՀ առողջապահության նախարարի թիվ 1009-Ն, 1009/5-Ն, 1009/12-Ն, 1009/15-Ն, 1009/19-Ն հրամանները:			
213.	**«ՀՀ-ում կիրառվող մի շարք բժշկական փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 35-Ն, ընդունված է՝ 03.07.2013, ուժի մեջ է՝ 25.08.2013* Հաստատում է արտերկիր մեկնող մեծահասակի առողջական վիճակի վերաբերյալ բժշկական եզրակացության, նրա շարունակական հսկողության քարտի և ամբուլատոր բժշկական քարտից քաղվածքի ձևերը, առողջության			• ՀՀ առողջապահության նախարարություն

	առաջնային պահպանման ծառայությունների մատուցման հաշվառման, երեխայի շարունակական հսկողության քարտի և բժշկական հսկողության ամբուլատոր քարտից քաղվածքի ձևերը, ինչպես նաև 18 տարեկանից բարձր անձանց տնային այցերի, 0-18 տարեկան երեխաների հաշվառման «մայր մատյանի», բժշկական կազմակերպության կողմից տրամադրվող երեխայի առողջության պետական հավաստագրի և/կամ երեխայի առողջության անձնագրի, 0-18 տարեկան երեխաներին սպասարկող առողջության առաջնային պահպանման բժշկի տնային այցերի և մահվան դեպքերի, ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների նեղ մասնագետների գրառումների, ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող միջին բուժաշխատողի աշխատանքի, ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից հիվանդանոցային և ախտորոշիչ բժշկական կազմակերպություններ հիվանդների ուղեգրման գրանցամատյանների և նորածինների հաշվառման մատյանի ձևերը:			
214.	**«ՀՀ-ում իմունականխարգելման ոլորտում վարչական վիճակագրական հաշվետվական ձևերը և դրանց լրացման հրահանգները հաստատելու և ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի հոկտեմբերի 29-ի N 19-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 19-Ն, ընդունված է՝ 09.11.2012, ուժի մեջ է՝ 01.01.2013* Հաստատում է «Նպատակային քանակակազմի և նրանցից պատվաստումներում ընդգրկված երեխաների, հետպատվաստումային		Հանձնարարում է ՀՀ առողջապահության նախարարության իրավաբանական վարչության պետին ապահովել հրամանի պետական գրանցման գործընթացի կազմակերպումը:	• ՀՀ առողջապահության նախարարություն

	անբարեհաջող դեպքերի, կանխարգելիչ պատվաստումների, այլ պատվաստումների և պատահական ծակոցների, բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների վերաբերյալ», «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների և օժանդակ պարագաների շարժի մասին», «Պատվաստումներում ընդգրկվածության և կորստի մակարդակի վերաբերյալ», «Կառավարելի վարակիչ հիվանդությունների վերաբերյալ» վարչական վիճակագրական հաշվետվական ձևերը և դրանց լրացման հրահանգները, ինչպես նաև ուժը կորցրած է ճանաչում ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի հոկտեմբերի 29-ի N 19-Ն հրամանը:			
215.	**«ՀՀ առողջապահության նախարարության վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերը հաստատելու և ՀՀ առողջապահության նախարարի 2004 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1009/4-Ն, 1009/7-Ն, 1009/13-Ն, 1009/17-Ն, 1009/18-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 16-Ն, ընդունված է՝ 04.10.2012, ուժի մեջ է՝ 25.11.2012* Հաստատում է «Արյան և արյան բաղադրամասերի պաշարման և փոխներարկման կայանների, հիվանդանոցների բաժանմունքների գործունեության մասին», «Ալկոհոլիզմով, թմրամոլությունով, թունամոլությունով հիվանդների մասին», «Առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով, մաշկի սնկային հիվանդություններով և քոսով հիվանդների թվաքանակի մասին», «Առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով, մաշկի			• ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ

	սնկային հիվանդություններով և քոսով հիվանդացության մասին», «Մարդու իմունային անբավարարության վիրուսի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների մասին» վարչական վիճակագրական հաշվետվության ձևերը, ինչպես նաև ուժը կորցրած է ճանաչում ՀՀ առողջապահության նախարարի 2004 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1009/4-Ն, 1009/7-Ն, 1009/13-Ն, 1009/17-Ն, 1009/18-Ն հրամանները:			
216.	**«Մասնագիտացված դիսպանսերային բժշկական հսկողություն իրականացնող բժշկական հաստատություններում հաշվառված երեխաների վարման անհատական պլանի ձևաթուղթը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 16-Ն, ընդունված է՝ 16.07.2009, ուժի մեջ է՝ 13.08.2009* Հաստատում է մասնագիտացված դիսպանսերային բժշկական հսկողություն իրականացնող բժշկական հաստատություններում հաշվառված երեխաների վարման անհատական պլանի ձևաթուղթը:			• ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
217.	**«ՀՀ ԱՆ տարեկան վիճակագրական հաշվետվային ձևերի հաստատման մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 1009/11-Ն, ընդունված է՝ 04.10.2004, ուժի մեջ է՝ 05.03.2005* Հաստատում է «Երեխաներին ցույց տրված բուժօգնության մասին» վարչական վիճակագրական հաշվետվային ձևը:			• ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
218.	**«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ վկայականների կրկնօրինակների և տեղեկանքների տրման կարգը և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյանների ձևերը հաստատելու մասին» ՀՀ**			• ՀՀ արդարադատության նախարարություն

	արդարադատության նախարարի հրաման *N 96-Ն, ընդունված է՝ 02.07.2005, ուժի մեջ է՝ 11.08.2005* Հաստատում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ վկայականների կրկնօրինակների և տեղեկանքների տրման կարգը, ինչպես նաև ՔԿԱ գրանցման դիմումների հաշվառման, ՔԿԱ գրանցման ծննդյան դիմումների հաշվառման, ՔԿԱ գրանցման տեղեկանքների վերաբերյալ դիմումների հաշվառման և ՔԿԱ գրանցման վկայականների ելքի հաշվառման մատյանների ձևերը:			
219.	**«Նախադպրոցական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա «նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների շարժի մատյանի ձևաթուղթը, գործածության և վարման կարգը» հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման** *N 870-Ն, ընդունված է՝ 28.07.2011, ուժի մեջ է՝ 11.09.2011* Հաստատում է նախադպրոցական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա «Նախադպրոցական ուսումնական հաստատության երեխաների շարժի մատյանի ձևաթուղթը, գործածության և վարման կարգը»:			• ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ
220.	**«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի վկայագրի տիպային ձևը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման** *N 927-Ն, ընդունված է՝ 11.11.2009, ուժի մեջ է՝ 09.01.2010* Հաստատում է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի վկայագրի» տիպային ձևը:			• ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ
221.	**«Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր**			•

	լիազորությունների նկատմամբ ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը հաստատելու մասին» ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի հրաման *N 11-Ն, ընդունված է՝ 03.03.2014, ուժի մեջ է՝ 25.04.2014* Հաստատում է ՏԻՄ պարտադիր լիազորությունների նկատմամբ ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը:			
222.	**«Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտի, երեխաների բժշկական հսկողության ամբուլատոր քարտերի, նորածնի փոխանակման քարտի և նախածննդային պատրոնաժի թերթիկի ձևերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 1752-Ն, ընդունված է՝ 26.11.2007, ուժի մեջ է՝ 01.01.2008* Հաստատում է մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտի, երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտի, նորածնի փոխանակման քարտի և նախածննդյան պատրոնաժի թերթիկի ձևերը:			• ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
223.	**Բժշկական հաստատությունների կողմից անձանց բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրման կարգը և տրվող ուղեգրի ձևերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրաման** *N 580-Ն և N 100-Ն, ընդունված է՝ 26.05.2006, ուժի մեջ է՝ 25.08.2006* Հաստատում է «Բժշկական հաստատությունների կողմից 18 և բարձր տարիքի անձանց բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրման կարգը», «18 և բարձր տարիքի անձի բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրի ձևը», «Բժշկական	1. Մինչև 18 տարեկան երեխային «հաշմանդամ երեխա» կարգավիճակի տրման նպատակով բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրելու գործընթացը և փաստաթղթերի նախապատրաստումը իրականացվում է երեխաների բուժօգնություն կամ սպասարկում իրականացնող տարածքային սպասարկման բժշկական հաստատության կողմից: 2. Մինչև 18 տարեկան երեխան «հաշմանդամ երեխա» կարգավիճակի տրման նպատակով բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրվում է բժշկական հաստատության համապատասխան հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովում ընդգրկվում են Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների համար՝ երեխայի տարածքային սպասարկման բժշկական հաստատության ղեկավարը, մանկության գծով տեղակալը կամ մանկական ծառայության ղեկավարը և (կամ մանկաբուժական բաժնի վարիչը, տեղամասային մանկաբույժը (ընտանեկան բժիշկը) և համապատասխան նեղ մասնագետը՝ ըստ հիվանդության պրոֆիլի (եթե մասնագետը առկա է): Մարզային ենթակայության տարածաշրջաններում հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ըստ վարչատարածքների՝ երեխայի տարածքային սպասարկման բժշկական հաստատության տնօրենը, մանկական գծով տեղակալը և/կամ տարածաշրջանային պատասխանատու մանկաբույժը, տեղամասային մանկաբույժը (ընտանեկան բժիշկը) և համապատասխան նեղ մասնագետը (եթե մասնագետը առկա է): Վերոնշյալը տարածվում է նաև առանձին իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող (տարածաշրջանային պոլիկլինիկայի կառուցվածքում գտնվող) գյուղական բժշկական ամբուլատորիայի և գյուղական առողջության կենտրոնի վրա: Գյուղական բնակության վայրերում հանձնաժողովի կազմում են գյուղական բժշկական ամբուլատորիայի կամ առողջության կենտրոնի տնօրենը, տարածաշրջանային պատասխանատու մանկաբույժը (տվյալ գյուղական առողջության կենտրոնի կամ ամբուլատորիայի տարածքում գտնվող տարածաշրջանային պոլիկլինիկայի մանկական ստորաբաժանման ղեկավարը) և տեղամասային բժիշկը (մանկաբույժը, ընտանեկան բժիշկը, թերապևտը): 3. Հանձնաժողովի որոշման հիման վրա երեխային սպասարկող տեղամասային բժշկի (մանկաբույժ, ընտանեկան բժիշկ)կողմից լրացվում է «Մինչև 18 տարեկան երեխայի բժշկասոցիալական փորձաքննության ուղեգիր (Ձև N 088-1)», որը ստորագրվում է հանձնաժողովի անդամների կողմից և վավերացվում բժշկական հաստատության կլոր կնիքով: Մինչև 18 տարեկան երեխային «հաշմանդամ երեխա» կարգավիճակի տրման համար փորձաքննության ուղեգիրը (Ձև N 088-1) լրացվում է համապատասխան հիվանդանոցային բուժհաստատության, մասնագիտացված կենտրոնների կամ դիսպանսերների (բաժանմունքների) կողմից վերջին	Մինչև 18 տարեկան երեխաների բժշկասոցիալական փորձաքննության **ուղեգրերը հաշվառվում են գրանցամատյանում:** Մինչև 18 տարեկան երեխայի բժշկասոցիալական **ուղեգրի կտրոնը,** բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի եզրակացությամբ, **վերադարձվում է երեխայի տարածքային սպասարկման բժշկական հաստատություն:** Մինչև 18 տարեկան երեխային «հաշմանդամ երեխա» կարգավիճակի տրման նպատակով բժշկասոցիալական փորձաքննության **ուղեգրելու գործընթացը և փաստաթղթերի նախապատրաստման համակարգումը կատարվում է տարածաշրջանային պատասխանատու մանկաբույժների** (տարածաշրջանային բժշկական հաստատության մանկության գծով տեղակալ կամ մանկական ստորաբաժանման ղեկավար), **իսկ**	• ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ

	հաստատությունների կողմից մինչև 18 տարեկան երեխաների բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրման կարգը» , «Մինչև 18 տարեկան երեխայի բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրի ձևը», «Մինչև 18 տարեկան երեխաների բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրերի հաշվառման գրանցամատյանը» և «Բժշկափորձագիտական հանձնաժողովի եզրակացությունների գրանցամատյանը»:	վեց ամսվա ընթացքում տրված եզրակացության կամ էպիկրիզի հիման վրա, որտեղ պետք է նշվի նաև տվյալ ֆունկցիայի խանգարման ծանրության աստիճանը: 4. Բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրելիս անհրաժեշտ է նշել ուղեգրման նպատակը և հիմնավորել՝ նշելով նաև իրականացված բժշկական միջոցառումների և դրանց արդյունքների մասին:	**հսկողությունը՝ մարզային առողջապահության վարչությունների (բաժինների) կողմից:**	
224.	**«Պետական հանրակրթական դպրոցի սովորողի ծնողի և հաստատության միջև կնքվող անվճար կրթական ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման** *N 1105-Ն, ընդունված է՝ 26.12.2009, ուժի մեջ է՝ 11.03.2010* Հաստատում է «Հանրակրթական դպրոցի սովորողի ծնողի և հաստատության միջև կնքվող անվճար կրթական ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը»:			• ՀՀ ԿԳՆ
225.	**«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության և ծնողի միջև կնքվող վճարովի հիմունքներով հանրակրթական և (կամ) մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման համար օրինակելի պայմանագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման** *N 1672-Ն, ընդունված է՝ 06.12.2010, ուժի մեջ է՝ 12.03.2011* Հաստատում է «Հանրակրթական դպրոցի սովորողի ծնողի և հաստատության միջև կնքվող անվճար կրթական ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը»:			• ԿԳ նախարարի տեղակալ
226.	**«Ձև 1 - հանրակրթություն (տարեկան) «Հանրակրթական ուսումնական**			• ՀՀ ԿԳՆ

	հաստատությունների գործունեության մասին» վարչական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի հուլիսի 31-ի N 760-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման *N 1030-Ն, ընդունված է՝ 13.08.2013, ուժի մեջ է՝ 14.09.2013* Հաստատում է Ձև 1-հանրակրթություն (տարեկան) «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» վարչական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը, ինչպես նաև ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի հուլիսի 31-ի N 760-Ն հրամանը:			
227.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչը, «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագրի շրջանակներում համապատասխան տարիքային խմբի երեխաների ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը և պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անվճար ստոմատոլոգիական խորհրդատվության և/կամ բուժման ուղեգրի ձևը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 45-Ն, ընդունված է՝ 11.09.2013, ուժի մեջ է՝ 01.01.2014* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության	1. Երեխաների համար (0-ից 8 և 12 տարեկան) անվճար ստոմատոլոգիական բժշկական օգնության տրամադրման համար հիմք է հանդիսանում ծննդյան վկայականը: 2. Պետության կողմից երաշխավորված **անվճար ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման ծավալները ներառում են երեխաների առաջնային ստոմատոլոգիական զննումը**, որն իրականացվում է մանկական ստոմատոլոգիական գծով լիցենզիա ունեցող տարածքային սպասարկման առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպության ստոմատոլոգիական կաբինետների միջոցով, իսկ վերջիններիս բացակայության դեպքում մանկական ստոմատոլոգիական պոլիկլինիկաների, ընդհանուր ստոմատոլոգիական պոլիկլինիկաների մանկական բաժանմունքների (կաբինետների) կողմից՝ տեղամասային մանկաբույժի (ընտանեկան բժշկի) ուղեգրմամբ՝ 6-7 և 12-13 տարեկան հասակում, ինչպես նաև **6 և 12 տարեկան երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելումը (ՍԱԿ)**: «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագիրն իրականացվում է մանկական ստոմատոլոգիական պոլիկլինիկաների/կաբինետների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ընդհանուր ստոմատոլոգիական պոլիկլինիկաների մանկական բաժանմունքների (կաբինետների), իսկ վերջիններիս անհնարինության դեպքում՝ մանկական ստոմատոլոգիայի գծով լիցենզիա ունեցող տարածքային սպասարկման առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպության ստոմատոլոգիական կաբինետի կողմից: Ծրագիրն իրականացվում է տարածքային սպասարկման սկզբունքով, ըստ մասնագիտացված մանկական ստոմատոլոգիական պոլիկլինիկաների/կաբինետների նախնական տարածքային կցումների (ըստ կրթական հաստատությունների և դրանցում առկա սահմանված տարիքի երեխաների թվաքանակների): 3. **Կցումներն իրականացվում են** Երևանի քաղաքապետարանի և ՀՀ մարզպետարանների կողմից՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ համագործակցությամբ, իսկ գյուղական բնակավայրերում՝ ըստ տվյալ առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպության սպասարկման տարածքի՝ ՀՀ մարզպետարանների հետ համաձայնեցմամբ: 4. **«Երեխաների ՍԱԿ ծառայություններ» ծրագիրն** իրականացվում է կրթական ուսումնական (դպրոցական) հաստատություններում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ (գյուղական համայնքներում) գյուղական բժշկական հաստատությունում (առողջության կենտրոն, ամբուլատորիա և/կամ բուժակ-մանկաբարձական կետ), ընդգրկելով 6 տարեկան (առաջին դասարան) և 12 տարեկան (յոթերորդ դասարան) հասակի երեխաներին՝ տվյալ ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ: 5. **Սոցիալապես անապահով և հատուկ (առանձին) խմբերում ընդգրկված մինչև 18 տարեկան երեխաների ստոմատոլոգիական բժշկական օգնությունը ներառում** է ստոմատոլոգիական բժշկական օգնությունն ու սպասարկումը, ինչպես նաև օրթոդոնտիկ ստոմոտոլոգիական բժշկական օգնությունը և սպասարկումը երեխաներին՝ ըստ դիմելիության: 6. Սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված մինչև 18 տարեկան երեխաների ստոմատոլոգիական բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է մանկական մասնագիտացված ստոմատոլոգիական պոլիկլինիկաների, տվյալ տարածքում վերջինիս բացակայության դեպքում՝ մեծահասակների ստոմատոլոգիական պոլիկլինիկաների մանկական բաժանմունքների (կաբինետների) կողմից՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի լիցենզիայի առկայության դեպքում: 7. **Երեխաների ՍԱԿ գործընթացը իր մեջ ներառում է** երեխայի զննումը, ստոմատոլոգիական կարգավիճակի գնահատումը և գնահատման քարտի լրացումը, բերանի խոռոչի հիգիենայի վերաբերյալ խորհրդատվության ապահովումը (երեխայի օրինական	Երեխաների ՍԱԿ ծրագրի **միջոցառումները իրականացվում են** մանկական կազմակերպված կոնտինգենտի շրջանում՝ **կրթական կազմակերպության միջոցով**, իսկ անհնարինության դեպքում՝ **առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպությունների** միջոցով: Կատարվելիք աշխատանքների վերաբերյալ նախապես տեղեկացվում են դպրոցների, նախադպրոցական հիմնարկների տնօրենները, գյուղական համայնքներում՝ բժշկական ամբուլատորիաների և բուժակ-մանկաբարձական կետերի պատասխանատուները, որոնց կողմից կանխավ կազմվում են 6 և 12 տարեկան երեխաների ցուցակները: Յուրաքանչյուր երեխայի համար լրացվում է պետության կողմից երաշխավորված անվճար **ստոմատոլոգիական բժշկական օգնության ծավալների հաշվառման ձև և մուտքագրվում է տվյալների շտեմարան**, որը հիմք է հանդիսանում տվյալ ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կատարողականի ներկայացման համար: Ծրագրով նախատեսված տարիքային խմբերի երեխաների ընդգրկումից և ծրագրի գնահատումից հետո դրա **արդյունքները ամփոփվում են** ՀՀ առողջապահության նախարարության	• ՀՀ առողջապահության նախարարություն

	և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչը, «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագրի շրջանակներում համապատասխան տարիքային խմբի երեխաների ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը և համապատասխան տարիքային խմբի երեխաների անվճար ստոմատոլոգիական խորհրդատվության և/կամ բուժման ուղեգրի ձևը:	ներկայացուցչին, երեխային), ատամնաշարի մշակումը ֆտոր պարունակող մածուկով, բացառությամբ ֆլյուորոզ հիվանդությամբ տառապող երեխաների, ինչպես նաև ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման (թերապևտիկ կամ վիրաբուժական բուժում, օրթոդոնտիա, ատամնապրոթեզավորում և այլն) կարիք ունեցող երեխաների ուղեգրումը՝ համապատասխան ստոմատոլոգիական պոլիկլինիկա /կենտրոն, և վերջինիս մասին տեղեկատվության ապահովումը երեխայի օրինական ներկայացուցչին: 8. Այն երեխաներին, որոնք զննման արդյունքում ենթակա են հետագա մասնագիտական բուժման, **տրվում է ուղեգիր համապատասխան հաստատություն**՝ երեխայի օրինական ներկայացուցչին ապահովելով տեղեկատվությամբ ուղեգրման վերաբերյալ:	աշխատակազմի պետական առողջապահական գործակալության կողմից՝ ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված կարգով տրամադրվում է նաև մարզային առողջապահական կառույցներին:	
228.	**««Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» կարգը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրաման** *N 44-Ն, ընդունված է՝ 30.05.2008, ուժի մեջ է՝ 11.07.2008* Հաստատում է Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» կարգը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ արդարադատության նախարարի 2004թ. սեպտեմբերի 9-ի թիվ 141-Ն հրամանը:	1. Դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման ժամանակ կազմակերպվում են երեք փուլով՝ նախնական, ընթացիկ և ավարտական: Ընթացիկ փուլը ներառում է հղի կանանց կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա պահող կալանավորված անձանց հետ համապատասխան աշխատանքներ իրականացնելը: Նախապատրաստական աշխատանքներ են կատարվում երեխայի ծննդից հետո նրա հետագա խնամքի կազմակերպման ուղղությամբ, խորհրդատվություն է տրամադրվում երեխայի դաստիարակության իրականացման վերաբերյալ՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները: 2. Ընթացիկ փուլում կատարվում են աշխատանքներ նաև դատապարտյալի՝ ուղղիչ հիմնարկի կամ այլ մանկատանը կամ համապատասխան այլ հաստատությունում գտնվող իր երեխայի կամ երեխաների հետ, կապի ապահովման ուղղությամբ: 3. Դատապարտյալի համաձայնությամբ նրա՝ մինչև երեք տարեկան երեխային ազգականի, հոգաբարձության և խնամակալության մարմնի որոշմամբ՝ այլ անձանց խնամքին հանձնելու, իսկ երեք տարին լրանալուց հետո՝ դատապարտյալի ընտրությամբ մանկատուն կամ համապատասխան այլ հաստատություն ուղարկելու, ինչպես նաև ուղղիչ հիմնարկին կից մանկատանը պահվող երեխայի երեք տարին լրանալուց հետո մանկատանը երեխային պահելու ժամկետը մինչև ծնողի պատժի ժամկետի ավարտը երկարաձգելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարի կողմից քրեակատարողական հիմնարկի պետին վերադասության կարգով միջնորդություն է ներկայացվում դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ընթացիկ փուլում: 4. Դատապարտյալ ծնողի հետ քրեակատարողական հիմնարկում համատեղ բնակվող երեխայի հանգստի և դաստիարակության կազմակերպման ուղղությամբ միջոցառումներ իրականացվում: 5. Դատապարտյալին ազատման նախապատրաստելու ծրագիր կազմելը և ծրագրով նախատեսված կազմակերպչական բնույթի միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով ազատման նախապատրաստելու ծրագրում ընդգրկվում են կազմակերպչական և խորհրդատվական-ուսուցողական համալիր միջոցառումներ: Այդ թվում ՝ անձնական զարգացումը, ամուսնության, ընտանիքի, երեխաների դաստիարակության հետ կապված և այլ հմտություններ, որոնք կօգնեն նրան պատժից ազատվելուց հետո կազմակերպելու հետագա կյանքը: 6. Պատժից ազատվող և առողջական վիճակի պատճառով խնամքի կարիք ունեցող, հղի, մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձի, ինչպես նաև անչափահասի ազգականներին կամ այլ անձանց նրա ազատվելու մասին նախօրոք հայտնելու անհրաժեշտության և նպատակահարմարության վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի բաժնի կամ խմբի ղեկավարի կողմից քրեակատարողական հիմնարկի պետին վերադասության կարգով միջնորդություն է ներկայացվում և սահմանված դեպքում դատապարտյալին բնակության վայր են ուղեկցում: 7. Կալանավորվածների և դատապարտյալների ընդգրկումը սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներին իրականացվում է կամավոր հիմունքներով, բացառությամբ անչափահասների: Անչափահաս կալանավորվածների և դատապարտյալների ընդգրկումը սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներին պարտադիր է: 8. Անչափահաս կալանավորվածի հետ ուսումնադաստիարակչական աշխատանքներ են իրականացվում դատապարտյալների հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ընթացիկ փուլում: 9. Վերը նշված փուլում իրականացվում է նաև անչափահաս դատապարտյալների համար ուսումնադաստիարակչական միջոցառումներ կազմակերպում: Անչափահասների հետ աշխատանքում պարտադիր են դրական վարքագծի խրախուսումը և ամրապնդումը, կրթամշակութային և մարզական միջոցառումների կազմակերպումը:	Անհրաժեշտության դեպքում անչափահաս դատապարտյալի ազատվելու մասին իրազեկվում են նրա բնակության վայրի հոգաբարձության և խնամակալության մարմինները, անչափահասների գործերով հանձնաժողովները: Վարչության բաժնի պետը կազմակերպում է համապատասխան վերահսկողություն սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կատարման նկատմամբ՝ համապատասխան փաստաթղթերի գրագրությունների օրինականությունը հսկելու միջոցով, ուսումնասիրություններ և ստուգայցեր կատարելով քրեակատարողական հիմնարկներ և մարմիններ: Կիսամյակային և տարեկան հաշվետվությունների հիման վրա կազմակերպում է վերլուծական աշխատանքներ քրեակատարողական հիմնարկների և մարմինների բաժինների կամ խմբերի գործունեության վերաբերյալ:	• ՀՀ արդարադատության նախարարություն • ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության բաժնի պետը ղեկավարում և համակարգում է բաժնի գործունեությունը:
229.	**«ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանում փոփոխություն**	1. Սովորողի ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի և հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:	Տնօրենը, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում, եռամսյակը մեկ անգամ, լիազոր մարմնին է ներկայացնում դպրոց տեղափոխված սովորողների	• ՀՀ ԿԳՆ

	կատարելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման *N 1365-Ն, ընդունված է՝ 09.12.2013, ուժի մեջ է՝ 12.06.2014* Հաստատում է «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը», ուժը կորցրած է ճանաչում ՀՀ ԿԳ նախարարի 2003թ. օգոստոսի 25-ի N 619-Ն և 2010թ. օգոստոսի 30-ի N 1350-Ն հրամանները: *Նաև՝* **«ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2003 թվականի օգոստոսի 25-ի N 619-Ն, 2010 թվականի օգոստոսի 30-ի N 1350-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման** *N 1640-Ն, ընդունված է՝ 24.11.2010, ուժի մեջ է՝ 25.02.2011*	2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կրթությունը, իր զարգացման առանձնահատկություններին և տարիքին համապատասխան, ծնողի ցանկությամբ, կարող է կազմակերպվել հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված կամ հատուկ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում: 3. Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդգրկումը դպրոց կատարվում է սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում /դասարանում/, իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը: 4. Օտարերկրյա քաղաքացիները, երկքաղաքացիները, ՀՀ քաղաքացիություն չունեցողները (նրանց օրինական ներկայացուցիչը), ինչպես նաև այն դեպքում, երբ ծնողներից մեկն է ՀՀ քաղաքացի, մյուսը՝ վերը նշվածներից որևէ մեկը, իրենց երեխայի ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են ինքնուրույն: Մնացած դեպքերում, երբ սովորողի ծնողները ՀՀ քաղաքացիներ են, ուսուցման լեզուն հայերենն է: 5. Նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից դպրոց՝ սովորողի տեղափոխությունը կատարվում է ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ 1-ին կուրսից՝ 10-րդ դասարան, 2-րդ կուրսից՝ 11-րդ դասարան, 3-րդ և 4-րդ կուրսերից՝ 12-րդ դասարան՝ բաց թողած ծրագրային նյութը լրացնելու պայմանով: 6. Հատուկ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունից ընդհանուր հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն կամ ընդհանուր հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունից հատուկ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն սովորողի տեղափոխումը կատարվում է եռամսյակը մեկ անգամ՝ դպրոցի կողմից լիազոր մարմնին ներկայացնելով դպրոց տեղափոխված սովորողների անվանացանկը՝ նշելով դասարանը և այն դպրոցի անվանումը, որտեղ սովորողը հաճախել է: 7. Սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության համապատասխանության դեպքում այլ երկրում ուսումնառությունն ընդհատած և ՀՀ վերադարձած սովորողի դասարանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության անհամապատասխանության դեպքում՝ սովորողի ուսումնառությունը կազմակերպվում է մեկ դասարան բարձր (բացառությամբ 9-րդ դասարանի) կամ ցածր (կրթության տևողությունը 12 տարուց ավելի լինելու դեպքում): 8. Այլ երկրներից ՀՀ առանց կրթության վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի՝ վերադարձած սովորողի դասարանը որոշվում է հետևյալ կերպ. մինչև 8 տարեկանը՝ 1-ին դասարան՝ ընդհանուր հիմունքներով, 9-ից 13 տարեկանը՝ իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր, 13-ից 15 տարեկան, դպրոց չհաճախած կամ մինչև 2 տարի ուսումն ընդհատած սովորողն ընդունվում է իր տարիքային խմբից մեկ կամ երկու դասարան ցածր, կրթական 3-րդ աստիճանում դպրոց չհաճախած (մինչև 17 տարին լրանալը) սովորողը, հիմնական կրթության վկայական ներկայացնելու դեպքում ընդունվում է իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր, 10-րդ դասարան ընդունվելու դեպքում՝ 10-րդ դասարան, 19 տարին չլրացած սովորողը կրթական 3-րդ աստիճանի 10-րդ, 11-րդ կամ 12-րդ դասարաններում ուսումն ընդհատած լինելու դեպքում ուսումնառությունը շարունակում է ընդհատած ժամանակահատվածից: 9. 1-ին և 2-րդ դասարանները այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներում /դասարանում/ սովորած ՀՀ քաղաքացիների երեխաները ՀՀ վերադառնալիս ուսումը շարունակում են հայերենով ուսուցմամբ համապատասխան դասարանում: Ուսումնառության ընթացքում առնվազն 5 տարի անընդմեջ այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներում /դասարաններում/ սովորած ՀՀ քաղաքացիների երեխաները ՀՀ վերադառնալիս կարող են ուսումը շարունակել ռուսերենով /կամ այլ օտար լեզվով/ ուսուցմամբ համապատասխան դասարաններում: Մնացած դեպքերում, այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներում /դասարաններում/ սովորած ՀՀ քաղաքացիների երեխաները ուսումնական տարվա առաջին կիսամյակում ՀՀ վերադառնալիս կարող են մինչև ուսումնական տարվա ավարտը, իսկ երկրորդ կիսամյակում՝ մինչև հաջորդ ուսումնական տարվա ավարտը սովորել ռուսերենով /կամ այլ օտար լեզվով/ ուսուցմամբ դասարանում՝ այդ ընթացքում հայերենի իմացությունը ապահովելու և սահմանված ժամկետը լրանալուց հետո հայերենով ուսուցմամբ դասարան տեղափոխվելու պայմանով՝ եթե սահմանված ժամկետը լրանալու դեպքում չի լրանում 5 տարի անընդմեջ ռուսերենով կամ այլ օտար լեզվով ուսուցմամբ սովորելու ժամկետը: Տվյալ դեպքում սովորողը ուսումնառությունը շարունակում է ռուսերենով /կամ այլ օտար լեզվով/ ուսուցմամբ դասարանում: 10. 9-ից 13 տարեկանը՝ իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր, 13-ից 15 տարեկան, դպրոց չհաճախած կամ մինչև 2 տարի ուսումն ընդհատած սովորողին իր տարիքային խմբից մեկ կամ երկու դասարան ցածր, կրթական 3-րդ աստիճանում դպրոց չհաճախած (մինչև 17 տարին լրանալը) սովորողի հիմնական կրթության վկայական ներկայացնելու դեպքում իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր, 10-րդ դասարան ընդունվելու դեպքում՝ 10-րդ դասարան, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին հատուկ դպրոց, փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության համապատասխանության դեպքում այլ երկրում ուսումնառությունն ընդհատած և ՀՀ վերադարձած սովորողի դասարանը որոշելու համար տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագետների խումբ: Մասնագիտական եզրակացությունը տրվում է սովորողի՝ ուսումնական պլանով նախատեսված տվյալ դասարանի բոլոր առարկաների գիտելիքների գրավոր (դրա անհնարինության դեպքում՝ համապատասխան՝ տվյալ առարկային) ստուգման արդյունքում: Հիմք ընդունելով մասնագիտական խմբի գրավոր եզրակացությունը՝ սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին, տնօրենը սովորողին ընդունում է համապատասխան դասարան, հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մեթոդմիավորումների կողմից ներկայացված անհատական առարկայական պլանները, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը, ըստ որի՝ սովորողի համար կազմակերպվում է ուսուցում՝ բաց թողած ծրագրային նյութը յուրացնելու համար: 11. 17 տարեկանից բարձր, դպրոց չհաճախած կամ կրթական որևէ մակարդակում ուսումն ընդհատած սովորողը հանրակրթական հիմնական ծրագրերը կարող է յուրացնել ինքնակրթությամբ և դրսեկության ձևով (էքստեռն)՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգով ստանալ հիմնական կրթության վկայական և (կամ) միջնակարգ կրթության ատեստատ:	անվանացանկը՝ նշելով դասարանը և այն դպրոցի անվանումը, որտեղ սովորողը հաճախել է: Սովորողին դպրոց ընդունելու համար ծնողը ներկայացնում է՝ դիմում՝ ուղղված տնօրենին, բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանք՝ առաջին դասարան ընդունվելու դեպքում, ծննդյան վկայականի կամ անձնագրի բնօրինակը և պատճենը: Տնօրենի «Իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ պատճենը պահպանվում է սովորողի անձնական գործում, 2 լուսանկար՝ 3x4 չափսի, սովորողի «Անձնական գործ» գրքույկը (բացառությամբ առաջին դասարան և ուսումնական տարվա սկզբում ավագ դպրոցի 10-րդ դասարան ընդունվելիս), տեղեկանք՝ ընթացիկ գնահատականների և բացակայությունների քանակի մասին, նախնական(արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ նաև տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների մասին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի դեպքում՝ նաև անհատական ուսուցման պլանը, վկայագիր՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ» տրված տարածքային կառավարման պետական մարմնի կողմից, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին հատուկ դպրոց ընդունելու համար, տեղեկանք՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու վերաբերյալ՝ տրված տարածքային կառավարման պետական մարմնի կողմից, հակասոցիալական վարք դրսևորած սովորողներին համապատասխան դպրոց ընդունելու համար (չորրորդ դասարանից սկսած), սովորողի տեղափոխման թերթիկը՝ դպրոցից դպրոց տեղափոխվելիս (բացառությամբ ուսումնական տարվա սկզբում հիմնական դպրոցից ավագ դպրոցի 10-րդ դասարան ընդունվելիս): Նախնական(արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների մասին, հիմնական կրթության վկայականի բնօրինակը՝ 10-12-րդ դասարաններ ընդունվելիս, սահմանված դեպքում՝ փաստաթուղթ զինկոմիսարիատից: Սովորողի ազատումը դպրոցից	

			կատարվում է՝ ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա: Ավագ դպրոցից ազատված սովորողի հիմնական կրթության վկայականը հանձնվում է ծնողին, իսկ ավագ դպրոցից ազատված սովորողի հիմնական կրթության վկայականը պահպանվում է տվյալ դպրոցում՝ մինչև սովորողի կամ նրա ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր դիմում ներկայացնելը: Ոչ պետական կամ մասնագիտացված դպրոցից սովորողի ազատումը կարող է կատարվել նաև ծնողի և տվյալ դպրոցի միջև կնքված պայմանագրային դրույթները սովորողին կամ ծնողի կողմից չպահպանելու դեպքում:	
230.	**«Ներառական կրթություն իրականացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման** *N 1281-Ն, ընդունված է՝ 06.08.2010, ուժի մեջ է՝ 25.09.2010* Հաստատում է «Ներառական կրթություն իրականացնելու կարգը»:	1. Հանրակրթական ուսումնական հաստատությունում ներառական կրթությունն իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար՝ նրանց զարգացման սոցիալական հարմարվածությունը և հասարակության մեջ լիարժեք ներառումն ապահովելու, մյուս սովորողների հետ կրթության իրավունքի իրացման հավասար հնարավորություն ընձեռելու նպատակով: 2. Ներառական կրթություն իրականացնող հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթությունը իրականացվում է հանրակրթական չափորոշիչներով և ծրագրերով, իսկ դրանց յուրացման անհնարինության դեպքում՝ նաև հատուկ կրթության չափորոշիչներով և ծրագրերով: 3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի ուսուցման գործընթացը պարտադիր ներառում է երեխայի կողմից նրա դասարանի դասացուցակով նախատեսված ուսումնական պարապմունքների ոչ պակաս, քան 80%-ի մասնակցությունը: 4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի ԱՈՒՊ-ով նախատեսված լրացուցիչ պարապմունքները կազմակերպվում են տվյալ օրվա դասերի ավարտից հետո, սակայն ոչ պակաս, քան 30 րոպե անց: 30 րոպե տևողությամբ ընդմիջումը օգտագործվում է երեխայի սնունդը կազմակերպելու համար: 5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի հատուկ մանկավարժական լրացուցիչ պարապմունքների գրաֆիկը ամրագրվում է սովորողի ԱՈՒՊ-ում: 6. Ներառական կրթություն իրականացնող հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներից բաղկացած առանձին դասարանների ձևավորումը արգելվում է: 7. Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության միևնույն դասարանի համակազմում միաժամանակ կարող են ընդգրկվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 2-3 երեխա՝ ըստ կրթական կարիքների բարդության, ընդ որում՝ դրանք կարող են լինել թե՛ միևնույն, թե՛ տարբեր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ: 8. Ներառական կրթություն իրականացնող հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցումն իրականացվում է յուրաքանչյուր սովորողի համար պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կազմված Անհատական ուսուցման պլանի հիման վրա: ԱՈՒՊ-ը կազմվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հաստատություն ընդունվելուց մեկ ամիս անց մեկ ամսվա ընթացքում: Հաստատությունից հաստատություն տեղափոխվելիս ԱՈՒՊ-ը սովորողի անձնական գործերի հետ միասին ներկայացվում է ընդունվող հաստատություն: ԱՈՒՊ-ը հիմք է հանդիսանում տվյալ հաստատությունում կիրառվող գիտելիքների հաշվառման և գրանցման, ինչպես նաև գնահատման փաստաթղթերը վարելու և սովորողին դասարանից-դասարան փոխադրելու համար:	Ներառական կրթություն իրականացնող հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատման ժամանակ կարող է կիրառվել առաջադիմության գնահատման այլընտրանքային համակարգ, ըստ որի բացահայտվում և ԱՈՒՊ-ում գրանցվում է սովորողի զարգացման առաջադիմությունը, ճշտվում է նրա հետ տարվող անհատական աշխատանքների բովանդակությունը և ծավալը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթական կարիքը բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից ենթակա է գնահատման յուրաքանչյուր 2 տարին մեկ, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հաստատման նպատակով: Ծնողի և ուսումնական հաստատության դիմումի համաձայն՝ սովորողի կրթական կարիքը կարող է վերագնահատվել ավելի վաղ ժամկետներում: Ներառական կրթություն իրականացնող հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ընդգրկվածության վերաբերյալ տվյալները արտացոլվում են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված ձևի տարեկան հաշվետվության մեջ:	• ՀՀ ԿԳՆ • Հրամանի կատարման հսկողությունը վերապահվում է ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Մ. Մկրտչյանին
231.	**«Միջին մասնագիտական կրթության 0307 «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության**	1. Միջին մասնագիտական կրթության «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլների նպատակներն են՝ սովորողի մոտ ձևավորել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ, կազմակերպություններում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ, սովորողին գիտելիքներ տալ աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած	Միջին մասնագիտական կրթության «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտությամբ մասնագետի՝ զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են՝ ստուգողական աշխատանքներ	• ՀՀ ԿԳՆ • Հրամանի կատարման հսկողությունը վերապահվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանի:

	Նախարարի հրաման *N 1047-Ն, ընդունված է՝ 07.12.2009, ուժի մեջ է՝ 19.04.2010* Հաստատում է միջին մասնագիտական կրթության 0307 «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը:	բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:	նախապատրաստելը, անցկացնելը և գնահատելը՝ սովորողների շարժողական հմտությունները և ընդունակությունները մարզելու համար, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ պարապմունքներ անցկացնելը, սովորողների՝ ուսումնական ծրագրից դուրս գործունեությունը կազմակերպելը և հսկելը, ուսումնադաստիարակչական գործընթաց կազմակերպելը և անցկացնելը, սովորողների անձնական հաջողությունները խրախուսելը և նրանց ձեռքբերումները ծնողների և ուսումնական մասի վարիչի հետ քննարկելը, ծնողների հետ համատեղ դաստիարակչական միջոցառումներ մշակելը, սովորողներին դասարանում և դպրոցի այլ տարածքներում հսկելը, զեկուցումներ պատրաստելը, երեխաների ֆիզիկական և հաղորդակցման հմտությունների զարգացմանը նպաստող գործունեություն ծրագրելը և կազմակերպելը, երեխաների գործունեությանը հետևելը՝ նրանց հաջողությունները գնահատելու համար, և ծնողների հետ նրանց ձեռքբերումներն ու հնարավոր խնդիրները քննարկելը, երեխաների վարքը հսկելը՝ նրանց անվտանգությունն ապահովելու նպատակով, յուրաքանչյուր երեխայի առողջական վիճակի և դրա ամրապնդման, երեխաների համար սահմանված ապրելակերպի կատարումը հսկելը, ընտանիքում երեխաների դաստիարակության հարցերով ծնողներին օգնելը:	
232.	**«Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի հրաման** *N 263-Ն, ընդունված է՝ 14.10.2014, ուժի մեջ է՝ 13.11.2014* Հաստատում է «ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը», ուժը կորցրած է ճանաչում «ՍՆիՊ 2.07.01-89 «Քաղաքաշինություն. Հատակագծում և կառուցապատում քաղաքային և գյուղական բնակավայրերի»	1. Բնակելի միկրոշրջաններում անհրաժեշտ է նախատեսել տարաբնույթ նշանակության ընդհանուր օգտագործման հարթակներ, հաշվի առնելով բնակչության ժողովրդագրական կազմը, կառուցապատման տեսակը, բնակլիմայական և այլ տեղական պայմանները: Հարթակների կազմը և դրանց տարածքների չափերը պետք է որոշվեն շինարարական նորմերով և կառուցապատման կանոններով, ընդ որում՝ երեխաների խաղահրապարակների, մեծահասակ բնակչության հանգստի և մարզահրապարակների ընդհանուր մակերեսը պետք է լինի միկրոշրջանի բնակեցման տարածքի ընդհանուր մակերեսի 10 %-ից ոչ պակաս: 2. Տնտեսական հարթակներից հեռավորությունը չի նորմավորվում, աղբակուտակման հարթակներից մինչև մարզահրապարակներ, երեխաների խաղերի և մեծահասակների հանգստի հարթակներ, ինչպես նաև մանկական նախադպրոցական հաստատություններ, բուժական և սննդի հաստատություններ հարկավոր է ընդունել 20 մ-ից ոչ պակաս, իսկ տնտեսական նպատակների համար նախատեսված հարթակներից մինչև բնակելի շենքի առավել հեռավոր մուտքը՝ 100 մ-ից ոչ ավելի: 3. Խախտված լսողությամբ և տեսողությամբ երեխաների համար մասնագիտացված գիշերօթիկ դպրոցները ռադիոկայաններից, ռադիոռելեային տեղակայանքներից և կառավարակետերից անհրաժեշտ է տեղադրել 1500 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա: 4. Մտավոր արատ ունեցող երեխաների համար գիշերօթիկ տների հողամասերի մակերեսի հաշվարկային ցուցանիշը անհրաժեշտ է ընդունել սույն շինարարական նորմերի 11-րդ աղյուսակին համապատասխան: Մտավոր արատ ունեցող երեխաների համար գիշերօթիկ տների հողամասերի սահմանված մակերեսների նորմերը թույլատրվում է պակասեցնել, բայց 15 %-ից ոչ ավելի: 5. Մասնագիտացված մանկական հիմնարկների, ծերերի ու հաշմանդամների համար տուն-ինտերնատների հողամասերը պետք է ունենան 1,6 մ-ից ոչ պակաս բարձրությամբ ցանկապատ, իսկ մտավոր արատ ունեցող երեխաների համար գիշերօթիկ տների և հոգենյարդաբանական ինտերնատների հողամասերը՝ 2,0 մ-ից ոչ պակաս բարձրությամբ ցանկապատ: 6. Առողջավայրային և հանգստի գոտիներում տեղակայված լողափերի տարածքների չափերը հարկավոր է ընդունել մեկ երեխայի համար 4 մ2 հաշվով: 7. Մսուրային տարիքի երեխաների խմբային հարթակի մակերեսը 1 տեղի համար պետք է ընդունել 7,5 մ2, նախադպրոցական տարիքի երեխաների համար խաղահարթակները թույլատրվում է տեղադրել ընդհանուր տիպի մանկական նախադպրոցական հիմնարկությունների տարածքից դուրս: 8. Կրթական համալիրների թիվը որոշվում է կախված բնակավայրի ժողովրդագրական կառուցվածքից, նախադպրոցական հիմնարկություններով երեխաների ապահովվածության մակարդակն ընդունելով 85%-ի սահմաններում, այդ թվում ընդհանուր		• ՀՀ քաղաքաշինության նախարարություն

	պարբերությունը:	9. տիպի - 70%, մասնագիտացված - 3%, կազդուրչական - 12: Նորակառույց բնակավայրերում, ժողովրդագրական տվյալների բացակայության ժամանակ անհրաժեշտ է ընդունել յուրաքանչյուր 1000 մարդու համար մինչև 180 տեղ, ընդ որում բնակելի կառուցապատման տարածքում տեղադրել յուրաքանչյուր 1000 մարդու համար ոչ ավելի 100 տեղ հաշվարկից: 10. Հանրակրթական դպրոցներ սովորողներին հարկավոր է ընդունել ոչ լրիվ միջնակարգ կրթությամբ (I-VIII դասարաններ) երեխաների 100% ընդգրկման հաշվառումով և երեխաների մինչև 75% - միջնակարգ կրթությամբ (IX-X դասարաններ) մեկ հերթով սովորելու ժամանակ: Նորակառույց բնակավայրերում անհրաժեշտ է յուրաքանչյուր 1 հազ. մարդու համար ընդունել 180 տեղից ոչ պակաս: 11. Երեխաների համար մեկ մահճակալի նորմն անհրաժեշտ է ընդունել ամբողջ ստացիոնարի համար 1,5 գործակցով: Մեկ հողամասի վրա երկու և ավելի ստացիոնարների տեղադրման ժամանակ դրա ընդհանուր մակերեսը պետք է ընդունել ստացիոնարի գումարային տարողության նորմով: 12. Վերակառուցման ժամանակ և խոշոր և խոշորագույն քաղաքներում հիվանդանոցների հողամասերը թույլատրվում է փոքրացնել 25%-ով: Մերձքաղաքային գոտում տեղադրված հիվանդանոցների հողամասերի չափերն անհրաժեշտ է մեծացնել՝ վարակիչ և ուռուցքաբանականինը - 15%, տուբերկուլյոզայինը և հոգեբուժականինը-25%, մեծահասակների համար վերականգնողական բուժմանը - 20%՝ երեխաների համար - 40%: Ծննդատների հողամասերի մակերեսն անհրաժեշտ է ընդունել ըստ ստացիոնարների նորմի՝ 0,7 գործակցով:		
233.	**«ՀՀշն 31-01-2014 «բնակելի շենքեր. Մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի հրաման** *N 93-Ն, ընդունված է՝ 31.03.2014, ուժի մեջ է՝ 25.05.2014* Հաստատում է «ՀՀՇՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր. Մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմերը», ուժը կորցրած է ճանաչում ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի «Նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» N 82 հրամանի «ՍՆիՊ 2.08.01-89 «Բնակելի շենքեր» պարբերությունը:	1. Բնակելի շենքերի որմնախարսխային և նկուղային հարկերում չի թույլատրվում տեղադրել երեխաների խնամքի համար նախատեսվող սենքեր: 2. Պատուհանները, որոնց լուսամուտագոգի սալերը տեղադրվում են հատակից 0.9մ-ից պակաս բարձրության վրա, պետք է սարքավորվեն նախադպրոցական տարիքի երեխաների համար անհասանելի պատուհանները բացելու և փակելու հարմարանքներով, ինչպես նաև ունենան բազրիքներ, եթե շենքից դուրս հարթության և սենյակի հատակի մակարդակների տարբերությունը գերազանցում է 1.5մ-ը: 3. Ընտանեկան տիպի մանկապարտեզի համար թույլատրվում է տրամադրել լրացուցիչ սենքեր 10 մարդուց ոչ ավել խմբի համար՝ առնվազն II աստիճանի հրակայունության շենքերում 2-րդ հարկից ոչ բարձր գտնվող երկկողմանի կողմնորոշում ունեցող բնակարաններում, եթե այդ բնակարաններում ապահովվել է վթարային ելքը և շենքի մերձակայքում առկա է խաղահրապարակների կազմակերպման հնարավորությունը: 4. Բնակելի (բացառությամբ՝ բլոկացված շենքերի) և մանկական նախադպրոցական սենքերով ու բուժպրոֆիլակտիկ կազմակերպություններ ունեցող հարկերը պետք է առանձնացվեն ներկառույց ավտոկայանատեղից տեխնիկական հարկով կամ ոչ բնակելի սենքերի ունեցող հարկով՝ արտանետվող գազերից և թույլատրելի մակարդակը գերազանցող աղմուկից պաշտպանվելու համար:	Բնակելի շենքերի շինարարությունը պետք է իրականացնել սահմանված կարգով մշակված և հաստատված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի համաձայն՝ սույն շինարարական նորմերով, նորմատիվ այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան: Ընդ որում, բնակելի սենքերի ընդհանուր մակերեսի նվազագույն չափը սահմանվում է օրենքով, իսկ առավելագույն չափը որոշվում է նախագծային առաջադրանքով, եթե դա չի հակասում գործող իրավական ակտերի պահանջներին:	• ՀՀ քաղաքաշինության նախարարություն
234.	**«ՀՀշն ii-8.03-96 (մսն-2.04-05-95) «արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի հրաման** *N 156-Ն, ընդունված է՝ 21.12.2004, ուժի մեջ է՝ 18.07.2005* Հաստատում է ՀՀՇՆ II-8.03-96 (ՄՍՆ 2.04-05-95) «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերում կատարված փոփոխություններն ու լրացումները:	1. Բնակելի և հասարակական շենքերում միակողմանի կողային լուսավորման դեպքում մանկապարտեզների խմբային և խաղային սենքերում հիվանդացած երեխաների համար նախատեսված սենյակներում՝ սենքի բնորոշ հատվածքի ուղղաձիգ հարթության և լուսային բացվածքներից առավել հեռացած պատից 1 մ հեռավորության վրա հատակի հարթության փոխհատման վրա դասավորված հաշվարկային կետում:		• ՀՀ քաղաքաշինության նախարարություն

235.	**«ՀՀ օդանավակայաններում ուղևորների, ուղեբեռի և բեռի հաշվառման և սպասարկման կանոնակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի հրաման** *N 224-Ն, ընդունված է՝ 15.12.2010, ուժի մեջ է՝ 25.04.2011* Հաստատում է ՀՀ օդանավակայաններում ուղևորների, ուղեբեռի և բեռի հաշվառման և սպասարկման կանոնակարգը:	1. Չվերթի չեղյալ համարելու, ուշացման, տեխնիկական կամ այլ պատճառներով երթուղու փոփոխության դեպքերում փոխադրողը մեկնման և տարանցիկ վայրերում պարտավոր է երեխա ունեցող ուղևորին մոր և մանկան առանձնասենյակ հատկացնել: 2. Փոխադրողները կարող են անչափահաս ուղևորների փոխադրման համար սահմանել արտոնյալ պայմաններ և սակագներ, որոնք ենթակա են հրապարակման և չեն կարող հակասել օրենսդրությանը:	Անչափահաս ուղևորը, եթե մեկնում է առանց ծնողի կամ առանց նրան որդեգրողի կամ առանց խնամակալի կամ առանց հոգաբարձուի, ապա պետք է բացի ճամփորդական փաստաթղթերից իր մոտ ունենա վերը նշված անձանցից որևէ մեկի կողմից տրված նոտարական հաստատումով համաձայնագիր: Համաձայնագրում պետք է նշված լինի մեկնման ժամկետը և պետությունը/ները, որը/որոնք նա մտադրված է այցելել:	• ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
236.	**«Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի N 263-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հրաման** *N 595-Ն, ընդունված է՝ 18.06.2015, ուժի մեջ է՝ 13.08.2015* Հաստատում է հրդեհային անվտանգության կանոնները, «Ա», «Բ», «Վ», «Գ», «Դ» կարգի արտադրության շինությունների բնութագիրն ըստ հրդեհավտանգավորության դասակարգման, շենքերը և շինությունները ձեռքի կրակմարիչներով ապահովելու չափանիշները. հրդեհաշիջման, հրդեհի ազդանշանման ինքնաշխատ համակարգերով և հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման համակարգով օբյեկտների համալրման չափանիշները՝ համաձայն հավելված 4-ի, և ուժը կորցրած ճանաչել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի N 263-Ն հրամանը:	1. Վառարանային ջեռուցման սարքավորումների շահագործման ժամանակ չի թույլատրվում՝ գործող վառարանները թողնել առանց հսկողության, ինչպես նաև հսկողությունը հանձնարարել 16 տարեկանից փոքր երեխաներին: 2. Շենքերում, շինություններում (բացի բնակելի տներից) աշխատանքի ավարտից ոչ պակաս, քան երկու ժամ առաջ վառարանների գործարկումը պետք է դադարեցվի, իսկ մարդկանց շուրջօրյա ներկայությամբ օբյեկտներում՝ հիվանդանոցներում, գիշերօթիկ դպրոցներում, մանկատներում և այլ օբյեկտներում, քնելուց երկու ժամ առաջ: Մանկական կազմակերպություններում, որտեղ երեխաները միայն ցերեկային ժամերին են լինում, վառարանների գործարկումը պետք է սկսել երեխաների գալուց մեկ ժամ առաջ: 3. Մանկական ամառանոցների և առողջարանային համալիրների տարածքը, արտաքին սահմանագծով պետք է ունենա 3 մ-ից ոչ պակաս վարած շերտ: 4. Մանկական ամառանոցների շենքերը պետք է ունենան երկուսից ոչ պակաս տարահանման ելք: Այս շենքերը պետք է ապահովված լինեն հեռախոսային կապով և տագնապի ազդանշանային սարքով: 5. Կարկասային և վահանային շենքերը պետք է սվաղված լինեն և ունենան չայրվող տանիքածածկ: Դրանց ջերմապահպանիչը պետք է լինի անօրգանական նյութերից: Նման շենքերում չի թույլատրվում՝ երեխաներին տեղավորել շենքերի ձեղնահարկային սենյակներում, ինչպես նաև երկու տարահանման ելք չունեցող շենքերում, շինություններում, հարկերում. երեխաների բնակեցման շինություններում օգտագործել նավթավառեր և էլեկտրաջեռուցիչ սարքեր: 6. Առողջապահական, մանկական, նախադպրոցական կազմակերպություններում, ինչպես նաև գիշերօթիկ դպրոցների ննջասենյակներում, մասնաշենքերում հրդեհի մասին ազդարարվում է միայն սպասարկող անձնակազմը: Ազդարարման համակարգերի օգտագործման կարգը պետք է որոշվի դրանց շահագործման հրահանգներով և տարահանման հատակագծերով, որտեղ պետք է նշվեն համակարգերը գործողության մեջ դնելու իրավասու անձինք: 7. Սոցիալական ապահովության կազմակերպություններում՝ ծերանոցներ, հաշմանդամների տներ, մանկատներ) պետք է կազմակերպվի սպասարկող անձնակազմի շուրջօրյա հերթապահություն: Հերթապահը պարտավոր է իր մոտ ունենալ տարահանման բոլոր ելքերի դռների բանալիները, իսկ մյուս օրինակը պետք է պահվի հերթապահի սենյակում:	Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական հիմնարկների և 100 տոկոս պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց ղեկավարներ, առևտրային կազմակերպությունների սեփականատերեր, հասարակական և բարեգործական կազմակերպությունների հիմնադիրներ, ֆիզիկական անձինք պարտավոր են հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նպատակով մշակել և իրագործել միջոցառումներ (կազմել միջոցառումների պլան):	• ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն • Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական հիմնարկների և հարյուր տոկոս պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց ղեկավարներ, առևտրային կազմակերպությունների սեփականատերեր, հասարակական և բարեգործական կազմակերպությունների հիմնադիրներ, ֆիզիկական անձ պարտավոր են անցկացնել աշխատակիցների հրդեհային անվտանգության հրահանգավորում և կազմակերպել հրդեհի դեպքում մարդկանց տարահանման ուղիների պլանների մշակումը և համապատասխան վայրերում այդ պլանների տեղադրման աշխատանքները.
237.	**«Սոցիալական պաշտպանության բնագավառում ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը հաստատելու մասին» ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի**	1. Համայնքի ղեկավարը սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ: 2. Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները հատուկ հոգածության և պաշտպանության իրավունք ունեն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որոնք պետք է նպաստեն երեխաների լիարժեք կենսագործունեությանը և զարգացմանը, ինչպես նաև ապահովեն նրանց մասնակցությունը հասարակական կյանքին: 3. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվող կամ բնակվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները կամ նրանց օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն պահանջելու պարբերաբար ուսումնասիրել խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին՝ երեխաներին տրամադրվող ծառայությունների համապատասխանությունը: Տվյալ ուսումնասիրությունները կազմակերպում են ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը և տեղական	Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումը (սկզբնական, տարածքային և կենտրոնացված) իրականացվում է համապատասխանաբար խնամակալության և հոգաբարձության մարմինների (սկզբնական հաշվառում), ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) (տարածքային	• ՀՀ մարզպետարաններ • Համայնքի ղեկավարը սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած լիազորություն՝ համայնքի տարածքում կազմակերպելով սոցիալական օգնության ծառայության գործունեությունը:

	Նախարարի համատեղ հրաման *N 7-Ն և N 173-Ն, ընդունված է՝ 05.02.2014, ուժի մեջ է՝ 27.02.2014* Հաստատում է սոցիալական պաշտպանության բնագավառում ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը՝ համաձայն հավելվածի:	ինքնակառավարման մարմինները՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կամ նրանց օրինական ներկայացուցիչների դիմումների հիման վրա, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: 4. Ընտանիքի կազմը և փաստացի բնակության հասցեն որոշվում են ներկայացնելով հետևյալ փաստաթղթերի ցանկը՝ տեղեկանք բնակարանային պայմանների մասին (աղետի հետևանքով տրամադրված տնակ, ոչ հիմնական շինություն)՝ տրված տեղական ինքնակառավարման մարմնի կողմից, 3-րդ և 4-րդ աստիճանի վթարային բնակարանի համար ՀՀ քաղաքաշինության նախարարության լիազորած մասնագիտացված կազմակերպության կամ այդ կազմակերպությունից ստացված համապատասխան եզրակացության հիման վրա տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված տեղեկանք, տեղեկանք՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառելու մասին՝ տրված խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:	հաշվառում) և ՀՀ ԱՍՀՆ կողմից (կենտրոնացված հաշվառում): Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվող կամ բնակվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները կամ նրանց օրինական ներկայացուցիչներն իրավունք ունեն պահանջելու պարբերաբար ուսումնասիրել խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին՝ երեխաներին տրամադրվող ծառայությունների համապատասխանությունը: Տվյալ ուսումնասիրությունները կազմակերպում են ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը և տեղական ինքնակառավարման մարմինները՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կամ նրանց օրինական ներկայացուցիչների դիմումների հիման վրա: Նշված կազմակերպություններում պաշտոնատար անձինք պարտավոր են վերացնել բացահայտված խախտումները և տեղեկացնել այդ մասին լիազորված պետական կառավարման մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին:	
238.	**«Լողավազանների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-iii-2.2.4 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 534-Ն, ընդունված է՝ 17.05.2006, ուժի մեջ է՝ 11.12.2006* Հաստատում է «Լողավազանների կառուցվածքին, շահագործմանը և ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը:	1. 1-6 տարեկան երեխաների համար նախատեսված լողավազանում ազատ մնացորդային քլորի կոնցենտրացիան թույլատրվում է 0.1-0.3 մգ/լ, 100 մլ ջրում կոլիֆագեր չհայտնաբերելու պայմանով: Ջուրը քլորով (գիշերը) և օզոնով (ցերեկը) հաջորդական ախտահանման ժամանակ, քլորի մնացորդային կոնցենտրացիան պետք է լինի ոչ պակաս 0.4 մգ/լ, իսկ օզոնինը՝ ոչ պակաս, քան 0.1 մգ/լ: Ուլտրամանուշակագույն ճառագայթման և քլորացման միաժամանակյա օգտագործման դեպքում ընդհանուր մնացորդային քլորի կոնցենտրացիան կարող է իջեցվել մինչև 0.3 մգ/լ: Ջրի ախտահանումը կերակրի աղը էլեկտրոլիզի ենթարկելու միջոցով, ստացված նատրիում հիպոքլորիդով իրականացնելու դեպքում, թույլատրվում է քլորիդների կոնցենտրացիայի ավելացում մինչև 700 մգ/լ:	Անկախ համաճարակային իրավիճակից լողավազանի բուժաշխատողի կողմից իրականացվում է ամենօրյա արտաքին զննություններ, միկոզի և այլ մաշկային վարակիչ հիվանդությունների ախտանիշներով անձանց լողավազանից օգտվելը չթույլատրելու համար: Տվյալ բնակավայրում հավելված որևէ հիվանդության համաճարակային անբարենպաստ իրավիճակի առկայության դեպքում ՊՀՀ տեսչության տարածքային մարմինը նախազգուշացնում է լողավազանի ղեկավարությանը, որ տվյալ վարակիչ հիվանդության նկատմամբ համապատասխան հետազոտություններ չանցած և բուժկանխարգելիչ հաստատության կողմից առողջության մասին տեղեկանք չներկայացրած անձանց չթույլատրեն լողավազանից օգտվել: Անկախ համաճարակային իրավիճակից՝ լողավազան հաճախող նախադպրոցական և ցածր դպրոցական հասակի երեխաները պարտադիր պետք է հետազոտված լինեն էնտերոբիոզի նկատմամբ՝ եռամսյակը 1 անգամ հաճախականությամբ:	• ՀՀ Առողջապահության նախարարություն • ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն

239.	**«Մանկական խաղալիքների, խաղերի արտադրության և իրացման» սանիտարական կանոնները հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 539-Ն, ընդունված է՝ 26.03.2007, ուժի մեջ է՝ 25.05.2007* Հաստատում է «Մանկական խաղալիքների, խաղերի արտադրության և իրացման» սանիտարական կանոնները:	1. Խաղալիքների (խաղերի) արտադրության մեջ թույլատրվում է օգտագործել հիգիենիկ փորձաքննության արդյունքում դրական եզրակացություն ստացած հումքը և նյութերը: Մինչև 3 տարեկան երեխաների համար նախատեսված խաղալիքների արտադրության ժամանակ չեն թույլատրվում օգտագործել օգտաթափոնք, բնական մորթի և կաշի, ծառի կեղև: Փողային երաժշտական խաղալիքների մասերը, որոնք հպվում են երեխաների շրթունքների հետ, ինչպես նաև չխկչխկանները, պետք է պատրաստված լինեն խոնավակայուն, ինչպես նաև հեշտ լվացվող և ախտահանվող նյութերից:	Խաղալիքների փորձաքննությունը կատարվում է նոր տեսակի խաղալիքի արտադրություն կազմակերպելու ժամանակ, թողարկվող արտադրանքի կազմի (կառուցվածքի) մեջ փոփոխություններ կատարելու ժամանակ, թողարկվող արտադրանքի տեխնոլոգիական հրահանգում, արտադրական գործընթացի լրակազմության մեջ փոփոխություններ կատարելու ժամանակ, խաղալիքի փորձնական խմբաքանակի արտադրություն կազմակերպելու ժամանակ, հիգիենիկ եզրակացության տրման ժամկետի սպառման դեպքում: Հիգիենիկ փորձաքննությունը իր մեջ ներառում է՝ որակի և անվտանգության վերաբերյալ փաստաթղթերի փորձաքննություն, լաբորատոր-գործիքային հետազոտություններ և փորձարկումներ, անհրաժեշտության դեպքում նաև արտադրության պայմանների սանիտարահիգիենիկ հետազոտություն: Փորձաքննության համար պատվիրատուն ներկայացնում է խաղալիքների փորձաքննության համար անհրաժեշտ քանակությամբ փորձանմուշներ և հետևյալ փաստաթղթերը տեղական արտադրությամբ խաղալիքների համար խաղալիքների նորմատիվային և տեխնիկական փաստաթղթեր (տեխնիկական պայմաններ, տեխնոլոգիական հրահանգներ և այլն) խաղալիքների փորձարկման արձանագրություններ (եթե առկա են), . արտասահմանյան արտադրությամբ խաղալիքների համար խաղալիքների և դրանց պատրաստման համար օգտագործվող հումքի և նյութերի անվտանգությունը հաստատող փաստաթուղթ (երկրի լիազոր մարմնի, արտադրող և առաքող կազմակերպության կողմից տրված):	• ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն
240.	**«Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2-iii-2.13 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 06-Ն, ընդունված է՝ 16.04.2009, ուժի մեջ է՝ 11.07.2009* Հաստատում է հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ, սանիտարական կանոնները և նորմերը:	1. Ստացիոնար զուգարանները ապահովվում են նախամուտքով, որտեղ տեղադրվում են լվացարանները և երեխաների տակդիրների փոխման սեղանը (տակդիրների փոխման սեղանը տեղադրվում է հանրության զանգվածային այցելությունների համար նախատեսված զուգարաններում: 2. Սանիտարական սարքավորումների, լվացարանների, երեխաների տակդիրների փոխման համար սեղանների, հատակի, պատերի ախտահանման (երկնվագ սրբում, ողողում ջրով) համար օգտագործվում է 1%-ոց քլորամին Բ, լվացող-ախտահանող միջոցներ՝ 5 գ. 100սմ2 մակերեսի հաշվարկով, 0.5-%-անոց լվացող նյութի և քլորամին Բ-ի խառնուրդ, կալցիումի հիպոքլորիդի (0.5%) կամ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված համարժեք այլ լուծույթներ:	Հասարակական զուգարաններում իրականացվում է ամենօրյա սանիտարական մաքրում, ախտահանում և աղբահանություն: Տարին 2 անգամ (ինչպես նաև աղիքային վարակիչ հիվանդությունների հետ կապված համաճարակային լարված իրավիճակների դեպքերում) կատարվում են միջատասպան և կրծողասպան (դեզինսեկցիոն-դեռատիզացիոն) աշխատանքներ:	• ՀՀ Առողջապահության նախարարություն • ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն

241.	**«Ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պացիենտների հաշվառման կարգը, պացիենտների հաշվառման մատյանների, մեծահասակի ստոմատոլոգիական քարտի, երեխայի ստոմատոլոգիական քարտի, պացիենտներին տրամադրվող այցելության քարտի ձևերը և մեծահասակի ստոմատոլոգիական քարտի և երեխայի ստոմատոլոգիական քարտի վարման և դրանց լրացման ուղեցույցները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 18-Ն, ընդունված է՝ 17.09.2010, ուժի մեջ է՝ 11.11.2010* Հաստատում է Ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից պացիենտների հաշվառման կարգը, ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պացիենտների հաշվառման մատյանների ձևերը, մեծահասակի և երեխայի ստոմատոլոգիական և օրթոդոնտիկ ստոմատոլոգիական քարտի ձևը, քարտի լրացման ուղեցույցը, ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պացիենտներին տրամադրվող այցելության քարտի ձևը, քարտի վարման ուղեցույցը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ առողջապահության նախարարի 2009թ. հոկտեմբերի 12-ի N 18-Ն հրամանը:	1. Երեխայի ստոմատոլոգիական քարտում նշվում են երեխայի անձնագրային տվյալները, առողջության վերաբերյալ մասին տեղեկությունները, բերանի խոռոչի մասին տվյալները, այցի պատճառները, օբյեկտիվ տվյալները՝ զարկերակային ճնշումը, անոթազարկը, մարմնի ջերմաստիճանը, շնչառության հաճախականությունը, ախտորոշումը, և բուժումն ու բուժման պլանը: 2. Օրթոդոնտիկ քարտը հանդիսանում է մեծահասակի կամ երեխայի ստոմատոլոգիական քարտին կից փաստաթուղթ: Օրթոդոնտիկ քարտի համարը պետք է համապատասխանի ստոմատոլոգիական քարտի համարին: Այն լրացվում է միայն ստոմատոլոգիական քարտի «Արձանագրային տեղեկություններ», «Տեղեկություններ առողջության վերաբերյալ», «Բերանի խոռոչի վիճակը» բաժինները լրացնելուց հետո	Յուրաքանչյուր բժշկական կազմակերպություն վարում է համարակալված, թելակարված և բժշկական կազմակերպության կնիքով կնքված հաշվառման մատյան, որտեղ հաշվառվում են բժշկական կազմակերպություն խորհրդատվության, հետազոտման կամ բուժման նպատակով մուտք գործող յուրաքանչյուր անձի վերաբերյալ տեղեկություններ, որտեղ բժշկական կազմակերպություն յուրաքանչյուր այցելության ժամանակ մատենավարման բաժնում այցի վերաբերյալ գրառում է կատարվում: Բժշկական կազմակերպություն մուտք գործող յուրաքանչյուր պացիենտի համար լրացվում է ստոմատոլոգիական քարտ, որով պացիենտը մտնում է բուժող բժշկի մոտ: Պացիենտի ստոմատոլոգիական քարտը ունի հերթական համար, որը կազմված է ամբողջ թվից և ընթացիկ տարվա տարեթվից: Յուրաքանչյուր կատարված բժշկական միջամտությունների մասին նշվում է պացիենտի ստոմատոլոգիական քարտում, տվյալները լրացվում են բուժող բժշկի կողմից: Պացիենտների հաշվառման մատյանում գրանցելուց և ստոմատոլոգիական քարտ լրացնելուց հետո, պացիենտին տրամադրվում է բժշկական կազմակերպության կնիքով կնքված այցելության քարտ, որի վրա նշվում է համար, որը համընկնում է պացիենտի ստոմատոլոգիական քարտի համարի հետ: Այցելության քարտում նշվում է պացիենտի հաջորդ այցելության տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, նպատակը, բժշկի անունը և ազգանունը: Բժշկական կազմակերպությունում պացիենտների հաշվառման մատյանը, ստոմատոլոգիական քարտերը, ինչպես նաև պացիենտի անհատական տվյալների և հիվանդության ընթացքի վերաբերյալ տեղեկություններ պարունակող այլ փաստաթղթերը պահվում են մատենավարման բաժնում՝ առանձնացված փակ պահարաններում՝ ապահովելով բժշկական գաղտնիքի պահպանումը: Այս պահանջները խախտելու համար բժշկական կազմակերպությունները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:	• ՀՀ առողջապահության նախարարություն
242.	**«Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու մասին» ՀՀ**	1. Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցներից են ջրանետ մեքենաները՝ Լավինա-Մ, Լավինա-Ուռազան, ԱԲԱ-40-ի: Այս ջրցան մեքենաները կիրառվում են, եթե ջրի շիթի միջոցով մարմնական վնասվածքներ չեն հասցնում հղի կանանց, անչափահասներին, ծերերին: Ջրանետ մեքենաները չեն գործարկվում 00-ից ցածր ջերմաստիճանային պայմաններում:		• ՀՀ ոստիկանություն • ՀՀ ոստիկանության զորքեր • ՀՀ առողջապահության նախարարություն

	առողջապահության նախարարի հրաման *N 09-Ն, ընդունված է՝ 20.04.2012, ուժի մեջ է՝ 12.05.2012* Հաստատում է մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները:			
243.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում դատաբժշկական փորձաքննությունների կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 87-Ն, ընդունված է՝ 24.12.2013, ուժի մեջ է՝ 27.03.2014* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում դատաբժշկական փորձաքննությունների կազմակերպման չափորոշիչը:	1. Վիճելի հայրությունը, մայրությունը և երեխաների փոխարինումը պարզելու համար իրականացվում է դատակենսաբանական փորձաքննություն, որի ժամանակ չի հաստատվում հայրությունը, մայրությունը, այլ միայն ժխտվում է: 2. Դատաբժշկական փորձագետները կատարում են դիակների դատաբժշկական փորձաքննություններ, որի ժամանակ որոշվում են մահվան պատճառը, վնասվածքների առկայությունը, առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը, պատճառական կապը մահվան հետ: Իրավապահ մարմինների որոշմամբ առաջադրված /ինչպես և փորձագետի նախաձեռնությամբ/ լրացուցիչ լաբորատոր ուսումնասիրության համար անհրաժեշտ նյութերի և հյուսվածքների վերցնելը կատարվում է պտուղների և նորածինների մահվան դեպքերում /մինչև մեկ օրական: 3. Դիակային նյութի դատահյուսվածաբանական փորձաքննությունը (ուսումնասիրությունն) իրականացվում ճշտելու և հաստատելու պտղի և նորածինների, մանկական, մայրական մահացության պատճառները:	Պետության կողմից երաշխավորված անվճար դատաբժշկական առաջնային, կրկնակի, հանձնաժողովային, համալիր, լրացուցիչ փորձաքննությունները, ինչպես նաև դատաքիմիական, դատակենսաքիմիական, դատակենսաբանական, դատահյուսվածաբանական, մոլեկուլյար գենետիկական, բժշկաքրեագիտական փորձաքննությունները կատարվում են ՀՀ առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ իրավապահ մարմինների որոշումների հիման վրա: Դիակների փորձաքննությամբ գիտականորեն հիմնավորված դատաբժշկական եզրակացությունը կազմվում է փորձաքննությունը նշանակելու վերաբերյալ կայացրած որոշումը համապատասխան փաստաթղթերի հետ միասին «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» մուտք անելու օրվանից մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:	• ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ առողջապահության նախարարության «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
244.	**«ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի հատկացման ճաշացուցակի, սննդի պահեստից դուրս գրման ենթակա սննդամթերքի ցանկի և սննդի քանակի ու որակի հսկողության կարգը և ձևերը հաստատելու, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի N ՔՀ-60-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրաման** *N 251-Ն, ընդունված է՝ 09.06.2015, ուժի մեջ է՝ 11.07.2015* Հաստատում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական	1. Դատապարտյալներին և կալանավորված անձանց անհրաժեշտ սննդամթերքի ցանկում նշվում է անձանց այն թվաքանակը, ովքեր նշված օրը պետք է ապահովվեն սննդով, սննդամթերքի անվանումը, չափաբաժինները, գումարը, ինչպես նաև հղի կանանց, կերակրող մայրերերին, անչափահասներին կամ կալանավորված հիվանդ անձանց տրվող հավելյալ չափաբաժինները:	Յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրը քրեակատարողական հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի կողմից կազմվում է հաջորդ շաբաթվա ճաշացուցակ՝ ապահովելով ճաշատեսակների բազմազանությունը: Ճաշացուցակը ստուգվում և ստորագրվում է քրեակատարողական հիմնարկի տնտեսական ապահովման բաժնի պետի, ճաշարանի վարիչի և բժշկական սպասարկման ստորաբաժանման պետի կողմից և ներկայացվում քրեակատարողական հիմնարկի պետի հաստատմանը: Քրեակատարողական հիմնարկում պահվող դատապարտյալները և կալանավորված անձինք տեղեկացվում են ճաշացուցակի մասին: Ճաշացուցակում նշվում են մեկ անձին հասանելիք կաթսա լցվող սննդամթերքի օրական չափաբաժինը և ճաշատեսակների անվանումներն ըստ օրերի և օրակարգի: Դատապարտյալներին և կալանավորված անձանց տրվող սննդի	• ՀՀ արդարադատության նախարարություն • ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ

	հիմնարկներում պահվող անձանց տրվող սննդի հատկացման ճաշացուցակի, սննդի պահեստից օրական դուրս գրվող սննդամթերքի ցանկի և սննդի քանակի և որակի հսկողության կարգն ու ձևերը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ արդարադատության նախարարի 2004թ. դեկտեմբերի 27-ի թիվ ՔՀ-60-Ն հրամանը:		հսկողության համար քրեակատարողական հիմնարկում վարվում է «Ճաշերի պատրաստման քանակի և որակի հսկողության մատյան», որում նշվում է ճաշատեսակների անվանումը, օրակարգը և ամսաթիվը:	
245.	**«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բնագավառում ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը հաստատելու մասին» ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և ՀՀ արդարադատության նախարարի համատեղ հրաման** *N 6-Ն և N 18-Ն, ընդունված է՝ 05.02.2014, ուժի մեջ է՝ 27.02.2014* Հաստատում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման բնագավառում ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը:	1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բնագավառում վարչական հսկողության հարցաշարն իրականացնում է երեխայի ծննդի պետական գրանցման համար գրավոր հայտարարություն տալը, մեկ տարեկան և ավելի դարձած երեխայի ծննդի պետական գրանցումը, ՔԿԱԳ մարմինների գործունեության կազմակերպումը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի ստեղծումը, վերակազմակերպումը և նրա գործունեության դադարեցումը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի կանոնադրության հաստատումը:		• ՀՀ տարածքային կառավարման նախարարություն • ՀՀ արդարադատության նախարարություն • ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ մարմին
246.	**«Ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման կարգի» մասին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության հրաման** *N 149, ընդունված է՝ 30.09.1998, ուժի մեջ է՝ 26.11.1998* Հաստատում է ընտանիքների անապահովության աստիճանի գնահատման կարգը և այդ կարգի կատարելագործման նպատակով մշտական գործող միջգերատեսչական աշխատանքային խմբի կազմը:	1. Ընտանիքի անապահովության աստիճանի գնահատման ժամանակ օգտագործվում են մի շարք ցուցանիշներ, այդ թվում՝ հաշմանդամ մինչև 16 տարեկան երեխայի, 2-ից մինչև 18 տարեկան անչափահաս երեխայի, հղի կնոջ (20 շաբաթական և ավելի ժամկետով), միակողմանի ծնողազուրկ, միայնակ մոր, ամուսնալուծված ընտանիքի, երկկողմանի ծնողազուրկ երեխայի առկայությունը:	Ընտանիքի անապահովության աստիճանի գնահատման ժամանակ օգտագործվում են հետևյալ ցուցանիշները՝ ընտանիքի անդամների պատկանելությունը որոշակի սոցիալական խմբերի, ընտանիքի անաշխատունակ տարիքի անդամների և առաջին, երկրորդ խմբի հաշմանդամների թիվը, բնակավայրը, ընտանիքի բնակարանային պայմանները, անձնական օգտագործման ավտոմեքենայի առկայությունը, ընտանեկան ձեռնարկության առկայությունը և անհատ ձեռներեցությամբ զբաղվելը, ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների կամ համայնքի ավագանու եզրակացությունը, ընտանիքի ամբողջական եկամուտը:	• ՀՀ տարածքային կառավարման նախարարություն • ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
247.	**«ՀՀ արդարադատության նախարարի 2000 թվականի օգոստոսի 14-ի N 523 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ**	1. «ՀՀ արդարադատության նախարարի 2000 թվականի օգոստոսի 14-ի N 523 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանը սահմանում է նաև անչափահասի (14-18 տարեկան) կողմից համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ գործարք կնքելու կարգը:		• ՀՀ արդարադատության նախարարություն • ՀՀ արդարադատության նախարարության նոտարական գրասենյակ

	արդարադատության նախարարի հրաման *N 1703, ընդունված՝ 12.11.2001, ուժի մեջ է՝ 07.12.2001*			
248.	**«Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական կարիքների գնահատման մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և ՀՀ կրթության և գիտության նախարարի համատեղ հրաման** *N 163-N և N 1180-Ն, ընդունված է՝ 04.12.2007, ուժի մեջ է՝ 07.01.2008* Հաստատում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական կարիքների գնահատման կարգը:	1. ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված կարգով տեղեկատվություն ստանալուց հետո մասնագիտական խումբը իրականացնում է երեխայի հիմնական տվյալների հավաքագրումը: Հիմնական տվյալները հավաքագրելուց հետո մասնագիտական խմբի կողմից իրականացվում է տունայց՝ երեխայի ընտանիք (առկայության դեպքում)՝ պարզելու երեխայի և նրա ընտանիքի սոցիալական, տնտեսական, հոգեբանական և առողջական վիճակը: 2. Երեխայի և նրա ընտանիքի ուսումնասիրությունից հետո մասնագիտական խումբը վերլուծում է կատարված աշխատանքի արդյունքները՝ գնահատելով կարիքները ըստ առաջնահերթության և լրացնում է կարիքների գնահատման թերթիկը, որի հիման վրա կազմվում է երեխայի սոցիալ-հոգեբանական անհատական ծրագիրը: Կարիքների գնահատման նպատակն է երեխայի վաղ հայտնաբերումը, ուսումնասիրումն ու երեխայի սոցիալ-հոգեբանական անհատական ծրագրի ապահովումը:	Երեխայի կարիքները գնահատվում են ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների բազմամասնագիտական խմբի (սոցիալական աշխատող, մանկավարժ, բժիշկ, հոգեբան և իրավաբան) կողմից՝ ուսումնասիրելով սոցիալական, կրթական, հոգեբանական և առողջության հետ կապված հիմնական խնդիրները, և կազմվում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական կարիքների գնահատման թերթիկ:	• ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ ԿԳՆ
249.	**«ՀՀ երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման** *N 629-Ն, ընդունված է՝ 29.06.2015, ուժի մեջ է՝ 01.08.2015* Հաստատում է երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները:	1. Հաստատում է երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցներում ուսումնական տարվա սկիզբը, տևողությունը, աշնանային, ձմեռային և գարնանային արձակուրդների սահմանման կարգը, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերը: 2. Մինչև 7 տարեկան երեխաների համար դպրոցներում վճարովի հիմունքներով կարող են գործել նախապատրաստական դասարաններ: Առարկաների ընտրությունը կատարվում է ծնողի և երեխայի ցանկությամբ և/կամ հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ:	Դպրոցում գործում է սովորողների գնահատման 10 միավորային համակարգ: Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում է 1-ին կիսամյակային, իսկ տարեվերջյան փոխադրական ստուգարքների ու քննությունների արդյունքով՝ 2-րդ կիսամյակային և տարեկան գնահատականները:	• ՀՀ ԿԳՆ
250.	**«Կրթության բնագավառում ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը հաստատելու մասին» ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և ՀՀ կրթության և գիտության նախարարի համատեղ հրաման** *N 15-Ն և N 1389-Ն, ընդունված է՝ 13.12.2013, ուժի մեջ է՝ 27.03.2014* Հաստատում է կրթության բնագավառում ՀՀ	1. Կրթության բնագավառում վարչական հսկողության հարցաշարի հիմնական գործառույթներն են՝ նախադպրոցական կրթության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին մասնակցություն, նախադպրոցական կրթություն ստանալու համար պայմանների ապահովում, համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար աշխատողների ընտրություն, նշանակում և պաշտոնից ազատում իրականացնելը, նախադպրոցական ուսումնական հաստատություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացումը կազմակերպելը:	Կրթության բնագավառում վարչական հսկողության հարցաշարն իրականացնում է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառման գործառույթ:	• ՀՀ ԿԳՆ • ՀՀ տարածքային կառավարման նախարարություն • ՀՀ մարզպետարաններ

	մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարը:			
251.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 75-Ն, ընդունված է՝ 22.11.2013, ուժի մեջ է՝ 11.02.2014* Հաստատում է «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժման կազմակերպման չափորոշիչը»:	1. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի անվճար տրամադրվող ծառայություն է մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելումը: 2. ՀՌՎ բուժումն անվճար է և տրամադրվում է ցուցում ունեցող բոլոր հիվանդներին, այդ թվում՝ երեխաներին՝ ծնողների կամ օրինական ներկայացուցիչների համաձայնության հիման վրա (համաձայն ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով հաստատված ՄԻԱՎ վարակով հիվանդ մեծահասակների հակառետրովիրուսային բուժման ու վարման ազգային ուղեցույցի): 3. Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելումն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով հաստատված մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելման ազգային ուղեցույցի: 4. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ն իրականացնում է մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման կանխարգելում; 5. Հղիներին տրամադրվում է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվությունը և հետազոտություն բժշկական կազմակերպություններում՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով հաստատված ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության կարգի:		• ՀՀ առողջապահության նախարարություն • «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ (ՁԻԱՀ-ի ԿՀԿ): • ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի միջոցառումները համակարգող հանձնաժողով • Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ
252.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում տուբերկուլոզի դեմ պայքարի չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 59-Ն, ընդունված է՝ 14.10.2013, ուժի մեջ է՝ 25.01.2014* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում տուբերկուլոզի դեմ պայքարի չափորոշիչը:	1. Հակատուբերկուլոզային ծառայությունն անվճար է բնակչության բոլոր խմբերի համար, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների բոլոր մակարդակներում: 2. Առողջարանային վերականգնողական բուժման ենթակա են տուբերկուլոզով հիվանդի հետ անմիջական շփման մեջ գտնված և տուբերկուլինային ախտորոշիչ թեստի արդյունքում հայտնաբերված վարակված երեխաները: Առողջարանային բուժման ուղեգրվում են բնակության վայրի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետի ուղեգրով, որին կցվում են ամբուլատոր քարտի քաղվածքը: Առողջարանային բուժումը կազմակերպվում է հերթափոխային եղանակով. բուժման 1 հերթափոխի տևողությունը 50 օր է: Առողջարանային բուժման ավարտից հետո տարածքային տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ ներկայացվում է էպիկրիզ առողջարանային պայմաններում իրականացված միջոցառումների վերաբերյալ 3. Տուբերկուլոզի Կանխարգելիչ բուժումը կազմակերպում է տարածքային տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետի մասնագետը: 4. 5-15 տարեկան կոնտակտավոր Մանթու բացասական երեխաներին ենթարկվում են կանխարգելիչ բուժման՝ թեստի կրկնում՝ երեք ամսից: Թեսթի բացասական արդյունքի դեպքում կանխարգելիչ բուժման դադարեցվում է: Տուբերկուլոզի կլինիկական ախտանշանների առկայության, Մանթու բացասական արդյունքի դեպքում, սահմանված կարգով հետազոտություններ են կատարվում: Դրական արդյունքի դեպքում (ինդուրացիա 5 միլիմետր օղակով) սահմանված հետազոտությունների իրականացման արդյունքում ակտիվ տուբերկուլոզի առկայությունը բացառվում է: Հիվանդության բացակայության դեպքում իզոնիազիդով վեց ամիս տևողությամբ (1 կիլոգրամ քաշին 5 միլիգրամ հաշվարկով) կանխարգելիչ բուժում է իրականացվում: Բուժման սկզբից մեկանգամյա, բուժման ընթացքում՝ երեք շաբաթից հետո և բուժման վերջում լյարդային ֆերմենտների հետազոտություն կատարվում՝ ցուցանիշների որոշման նպատակով: Ելնելով լաբորատոր տվյալներից՝ լյարդի տոքսիկ ախտահարման կասկածի դեպքում ավելի հաճախակի հետազոտություններ են իրականացվում: 5. Վեց ամսականից հինգ տարեկան կոնտակտավոր երեխաների համար կատարվում է սահմանված կարգով հետազոտություններ՝ հիվանդության ակտիվությունը բացառելու նպատակով: Հիվանդության բացակայության դեպքում իրականացվում է իզոնիազիդով վեց ամիս տևողությամբ կանխարգելիչ բուժում: 6. Վեց ամսականից փոքր կոնտակտավոր երեխաների մոտ հիվանդության ակտիվությունը բացառել սահմանված հետազոտությունների միջոցով: Հիվանդության բացակայության դեպքում իրականացնել իզոնիազիդով վեց ամիս տևողությամբ կանխարգելիչ բուժում՝ անկախ Մանթու թեստի պատասխանից: ԲՑԺ պատվաստումը կատարվում է կանխարգելիչ բուժման ավարտից հետո: 7. Մշտապես տնային այցով բուժման ենթակա հիվանդների շարքում են 5 տարեկանից ցածր տուբերկուլոզով հիվանդ երեխաներ (եթե հիվանդի ծնողը ցանկանում է բուժումը ստանալ այցելելով տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ՝ բուժումը կկազմակերպվի կաբինետում), Խնամքի տակ 5 տարեկանից ցածր երեխա ունեցող, բայց երեխայի համար այլ խնամակալ չունեցող տուբերկուլոզով հիվանդ անձինք, Տուբերկուլոզով հիվանդ հղիները և Երեխաների համար խնամակալ/հոգաբարձու չունեցող տուբերկուլոզով հիվանդ բազմազավակ մայր:	Յուրաքանչյուր եռամսյակ, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, առողջարանի կողմից «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ է ներկայացվում հաշվետվություն՝ հաշվետու ժամանակահատվածում առողջարան ուղեգրված երեխաների թվի վերաբերյալ՝ ըստ մարզերի:	• Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներ • «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ • ՀՀ առողջապահության նախարարության «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ • Երևանի քաղաքապետարանի «Քաղաքային Հակատուբերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ • Մարզային հակատուբերկուլոզային բաժանմունքներ • Ազգային ռեֆերենս լաբորատորիա
253.	**«Բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում դիսպանսերային (շարունակական) հսկողության**	1. Երիկամի փոխպատվաստումից հետո հիվանդի ընթացիկ հետազոտությունը և բուժումը, ինչպես նաև արյան մեջ ցիկլոսպորինի կոնցենտրացիայի որոշումը կատարվում է «Արաբկիր» բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտում, իսկ «սելլ-սեպտ» և «ցիկլոսպորին» (կոնսուպրեն) դեղերի հատկացումը իրականացվում է նույն կենտրոնում: 2. Մաշկավեներաբանական դիսպանսերը անվճար արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում իրականացնում է իր սպասարկման տարածքում մշտապես բնակվող երեխաների և մեծահասակների շրջանում մաշկավեներաբանական հիվանդների վաղ հայտնաբերում:		• Մասնագիտացված դիսպանսերային բժշկական կազմակերպություններ • Տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններ • «Պրոֆեսոր Յոլյանի անվան

	ծառայության կազմակերպման և կազմակերպամեթոդական աշխատանքների իրականացման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման *N 68-Ն, ընդունված է՝ 31.10.2013, ուժի մեջ է՝ 11.02.2014* Հաստատում է բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում դիսպանսերային (շարունակական) հսկողության ծառայության կազմակերպման և կազմակերպա-մեթոդական աշխատանքների իրականացման չափորոշիչը:	3. Թմրաբանական ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններն անվճար դիսպանսերային (շարունակական) բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում իրականացնում են. Իրենց սպասարկման տարածքում մշտապես բնակվող անձանց (երեխաներին և մեծահասակներին), իսկ ՀՀ առողջապահության նախարարության « Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ նարկոլոգիական կլինիկան՝ ՀՀ բոլոր քաղաքացիներին (երեխաներին և մեծահասակներին)՝ թմրաբանական հիվանդությունների վերաբերյալ խորհրդատվություն, ինչպես նաև իրենց սպասարկման տարածքում մշտապես բնակվող թմրաբանական հիվանդների (երեխաների և մեծահասակների) հաշվառում, կամավոր դիսպանսերային հսկողություն, հարկադիր դիսպանսերային հսկողություն, կամավոր և հարկադիր ամբուլատոր բուժում, կամավոր և հարկադիր պահպանողական բուժում, կամավոր փոխարինող բուժում, լաբորատոր-գործիքային հետազոտությունների անցկացում, անաշխատունակության թերթիկների տրամադրում, ուղեգրում բժշկասոցիալական փորձաքննության և բժշկական ցուցումների առկայության դեպքում ուղեգրում թմրաբանական ստացիոնար: 4. Ալկոհոլիզմով տառապող անձանց հաշվառման վերցնելու հիմքերից են քաղաքացու հաշվառման վայրի արտահիվանդանոցային թմրաբանական ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություն ուղարկված հիվանդության պատմագրից/ երեխաների հիվանդության պատմագրից կամ մեծահասակների ամբուլատոր բժշկական քարտից/երեխաների բժշկական հսկողության ամբուլատոր քարտից քաղվածքը և ցանկացած բժշկական կազմակերպություն (անկախ ենթակայությունից, բժշկական օգնության և սպասարկման տեսակի ու կազմակերպման ձևի) դիմած անձի բուժման ընթացքում «ալկոհոլիզմ» ախտորոշման դեպքում հիվանդության պատմագրից/ երեխաների հիվանդության պատմագրից կամ մեծահասակների ամբուլատոր բժշկական քարտից/երեխաների բժշկական հսկողության ամբուլատոր քարտից քաղվածքը: 5. Արյունաբանական դիսպանսերը անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում իրականացնում է. իր սպասարկման տարածքում մշտապես բնակվող անձանց (երեխաների և մեծահասակների) շրջանում արյունաբանական հիվանդների բուժական կանխարգելիչ օգնության ցուցաբերում և տարածքում գործող արտահիվանդանոցային բժշկական կազմակերպությունների կողմից ուղեգրված հիվանդների խորհրդատվական-ախտորոշիչ օգնություն սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց համար:		արյունաբանության կենտրոն» ՓԲԸ • Հայկական Կարմիր Խաչի ընկերության «Գրացիա» միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ
254.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների չափորոշիչը, նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների տրամադրման ցանկը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 57-Ն, ընդունված է՝ 28.09.2013, ուժի մեջ է՝ 25.01.2014* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների չափորոշիչը և նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների տրամադրման ցանկը:	1. 0-7 տարեկան, սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված 7-18 տարեկան երեխաների և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 36.00 և ավելի բարձր անապահովության միավորներ ունեցող ընտանիքների անդամների բժշկական օգնությունը և սպասարկումը սրտի վիրահատությունների, կորոնար անոթների ստենտավորման և աորտայի անևրիզմաների պատռվածքների և շերտազատումների վիրահատությունների դեպքում ամբողջությամբ իրականացվում է անվճար՝ պետական պատվերի շրջանակներում: 2. 0-7 տարեկան, սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված 7-18 տարեկան երեխաների բժշկական օգնությունը և սպասարկումը օրթեզավորման և կորսետավորման պարագայում ամբողջությամբ իրականացվում է անվճար՝ պետական պատվերի շրջանակներում: 3. Հղիների, ծննդաբերների և ծննդկանների (հետծննդյան 42 օրերի ընթացքում) բժշկական օգնությունը և սպասարկումը սիներակի (Վ.Կավա/V.Cava) ֆիլտրի տեղադրման դեպքում ամբողջությամբ իրականացվում է պետական պատվերի շրջանակներում անվճար:		• ՀՀ առողջապահության նախարարություն • Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ
255.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում**	1. Երեխաների հոգեբուժական ամբուլատոր-պոլիկլինիկական (այդ թվում դիսպանսերային և խորհրդատվական) օգնությունն ապահովում է Երևան քաղաքում՝ Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ կառուցվածքում գործող մանկական նյարդահոգեբուժական դիսպանսեր բաժանմունքի կողմից՝ տարածքային պոլիկլինիկաների միջոցով, հանրապետության		• «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ • ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ

	հոգեբուժական օգնության կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման *N 49-Ն, ընդունված է՝ 18.09.2013, ուժի մեջ է՝ 12.12.2013* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հոգեբուժական օգնության կազմակերպման չափորոշիչը:	այլ քաղաքներում կամ մարզերում (որպես այլընտրանք)՝ մեծահասակների պոլիկլինիկաների կամ հոգեբուժական դիսպանսերների (կենտրոնների) միջոցով՝ տարածքային սպասարկման սկզբունքով: 2. Հոգեկան խանգարումներով հիվանդ երեխաների մասնագիտական հիվանդանոցային բուժօգնությունը կազմակերպվում է հոգեկան և վարքագծային սուր խանգարումների դեպքում՝ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Նորքի կլինիկայում, տևական մասնագիտական բուժօգնություն և խնամք պահանջող դեպքերում՝ «Ակադեմիկոս Ա. Հայրյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ում, 15-18 տարեկան երեխաների հիվանդանոցային հոգեբուժական մասնագիտացված բուժօգնությունը կարող է կազմակերպվել ինչպես մեծահասակների, այնպես էլ մանկական ստացիոնարի պայմաններում: 3. Դիսպանսերային հսկողություն իրականացնող արտահիվանդանոցային հոգեբուժական բժշկական օգնություն մատուցող բժշկական կազմակերպություններն իրականացնում են իրենց սպասարկման տարածքում մշտապես բնակվող հոգեկան խանգարումով տառապող անձանց (երեխաների և մեծահասակների) հաշվառում, դիսպանսերային հսկողություն, խորհրդատվական բժշկական օգնություն, ուղեգրում բժշկասոցիալական փորձաքննության, անաշխատունակության թերթիկների տրամադրում և բուժում՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով գնվող հոգեմետ դեղերով: Այն դեպքում, երբ հիվանդը կամ նրա օրինական ներկայացուցիչը հրաժարվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով գնվող հոգեմետ դեղերի անվճար հատկացումից, համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում, արտահիվանդանոցային հոգեբուժական բժշկական օգնություն ցուցաբերող հոգեբույժը հիվանդի կամ նրա հարազատի համաձայնությամբ կարող է դուրս գրել հոգեմետ դեղի դեղատոմս:		• «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՓԲԸ • Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ • ՀՀ առողջապահության նախարարության «Սևանի հուգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ • «Արթ-Մեդ» բժշկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ • ՀՀ ԱՍՀՆ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ • Երևանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ • «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ Նորքի կլինիկա • «Ակադեմիկոս Ա. Հայրյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ • Տարածաշրջանային ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության հոգեբուժական կաբինետներ
256.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ախտաբանաանատոմիական հերձումների և ախտաբանաանատոմիական հերձման (աուտոպսիա) նյութի հիստոլոգիական հետազոտությունների կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 36-Ն, ընդունված է՝ 16.07.2013, ուժի մեջ է՝ 28.12.2013* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ախտաբանաանատոմիական հերձումների և ախտաբանաանատոմիական հերձման (աուտոպսիա) նյութի հիստոլոգիական հետազոտությունների կազմակերպման չափորոշիչը:	1. Պերինատալ (շուրջծննդյան) մահացությունների դեպքում ախտաբանաանատոմիական հերձումները կատարվում են մանկական ախտաբանաանատոմների կողմից ՀՀ առողջապահության նախարարության կողմից լիցենզավորված հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների դիահերձարաններում: 2. Պերինատալ (շուրջծննդյան) մահացությունների դեպքում հերձումները, ախտաբանաանատոմիական հերձման (աուտոպսիա) նյութի հիստոլոգիական, պաթոմորֆոլոգիական, վիրուսամանրէաբանական և մորֆոհիստոքիմիական հետազոտությունները, թափոնների ոչնչացումը և հրկիզումը իրականացվում է պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում:		• Հիվանդանոցային և բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ (մանկատներ) • Առողջապահության նախարարության կողմից լիցենզավորված հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների դիահերձարաններ • «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» ՓԲԸ
257.	**«Բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ**	1. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բժշկական կազմակերպությունների կողմից քաղաքացիների հատուկ և դժվարամատչելի հետազոտությունները տրամադրվում են վերարտադրության տարիքի կանանց՝ հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանում, ուռուցքաբանական մասնագիտացված բժշկական կազմակերպությունների կամ կաբինետների կողմից չարորակ նորագոյացություններով և տուբերկուլոզ ախտորոշում ունեցող այն պացիենտներին, որոնք ընդգրկված չեն սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում: 2. Սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված անձանց հատուկ և դժվարամատչելի հետազոտությունների անհրաժեշտության դեպքում ուղեգրումներն իրականացվում են այն բժշկական կազմակերպության տնօրենի		• ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ առողջապահության նախարարության հետ պայմանագիր ունեցող բժշկական կազմակերպություններ

	հետազոտությունների տրամադրման չափորոշիչը, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկը և պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ուղեգրի ձևը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման *N 53-Ն, ընդունված է՝ 20.09.2013, ուժի մեջ է՝ 11.02.2014* Հաստատում է բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկը և տրամադրման չափորոշիչը, ինչպես նաև պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ուղեգրի ձևը:	կողմից, որտեղ բուժվում է պացիենտը և (կամ) մասնագիտական խորհրդատվություն է տրամադրվում պացիենտին (երեխաներին՝ նաև դիսպանսեր հսկողության տակ գտնվելու դեպքում): 3. Հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները շարունակական հսկողության տակ գտնվող երեխաների դիսպանսեր հսկողության ընթացքում դրանց իրականացման հնարավորություն ունեցող բժշկական կազմակերպություններում կարող են կատարվել առանց ուղեգրման՝ բժշկական կազմակերպությունների «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագրի տարեկան պայմանագրային գումարների շրջանակներում:		• ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովներ և վերափորձաքննության բաժին
258.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող շտապ բժշկական օգնության տրամադրման չափորոշիչը, շտապ բժշկական օգնության կանչի թերթիկի ձևը, իրազեկման թերթիկի ձևը, շտապ բժշկական օգնության դիսպետչերի գործառույթների նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 39-Ն, ընդունված է՝ 24.07.2013, ուժի մեջ է՝ 14.09.2013* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող շտապ բժշկական օգնության տրամադրման	1. Երեխաների, այդ թվում՝ նորածինների արտագնա անհետաձգելի բժշկական օգնության կանչերը, այդ թվում՝ նորածինների տեղափոխումը (Երևանից 30 կմ շառավղից ավելի), ինչպես նաև մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով արտագնա անհետաձգելի բժշկական օգնության կանչերը, իրականացվում են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի իրականացման համար ՀՀ առողջապահության նախարարության հետ պայմանագիր կնքած հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների կողմից: 2. Երեխաներին արտագնա անհետաձգելի շտապ բժշկական օգնության կազմակերպումը արագ արձագանքման ծառայության միջոցով, այդ թվում՝ երեխաների տեղափոխումը ՀՀ ողջ տարածքում իրականացվում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված կարգին համապատասխան: 3. Նորածինների տեղափոխման ժամանակ ուղեգրող հիվանդանոցային բժշկական կազմակերպությունն ապահովում է բժշկական փաստաթղթերի պատշաճ ձևակերպումը՝ կցելով երեխայի առողջության պետական հավաստագիրը, տեղափոխման էպիկրիզը՝ նորածնի վիճակի մանրամասն նկարագրությամբ, նորածնի ծննդյան վկայականը կամ ծննդյան մասին բժշկական վկայականը և մոր անձը հաստատող փաստաթղթի պատճենը: 4. Նորածինների արտագնա, անհետաձգելի շտապ բժշկական օգնության կազմակերպումը արագ արձագանքման ծառայության միջոցով, այդ թվում՝ նորածինների տեղափոխումը ՀՀ ողջ տարածքում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի իրականացման համար ՀՀ առողջապահության նախարարության հետ պայմանագիր կնքած հիվանդանոցային բժշկական կազմակերպություններ իրականացվում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բժշկական օգնության և սպասարկման չափորոշչի: 5. Նորածինների արտագնա անհետաձգելի բժշկական օգնությունը և տեղափոխումը իրականացվում է ուղեգրող և ընդունող հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների փոխհամաձայնեցմամբ՝ տեղափոխման համար նախատեսված և համապատասխան հագեցվածություն ունեցող ռեանիմոբիլով:	Սահմանում է, որ լրացված շտապ բժշկական օգնության կանչի թերթիկը ենթակա է մուտքագրման ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված Շտապ օգնության տեղեկատվական վերլուծական համակարգ: Հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների կողմից շտապ օգնության ծառայության միջոցով տեղափոխված պացիենտների հոսպիտալացման անհարկի մերժման յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ՀՀ առողջապահության նախարարության «Թեժ գիծ» ծառայությանը տվյալ հերթափոխի ավագ բժշկի կողմից:	• Շտապ բժշկական օգնության կայան (բաժանմունք) • Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություն • Երևանի քաղաքապետարանի «Շտապբուժօգնություն» ՓԲԸ • ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու շտապ բուժական օգնության կայան» ՓԲԸ • ՀՀ առողջապահության նախարարության հետ պայմանագիր կնքած հիվանդանոցային բժշկական կազմակերպություններ

	չափորոշիչը, իրազեկման և շտապ բժշկական օգնության կանչի թերթիկների ձևերը, վերջինիս լրացման կարգը, շտապ բժշկական օգնության դիսպետչերի գործառույթների նկարագիրը, սանավիայի թերթիկի և ուղեկցող թերթիկի ձևերը:	6. Բացառիկ դեպքերում, եթե նորածնի վիճակը թույլ է տալիս, տեղափոխությունը կարող է իրականացվել շտապ օգնության ծառայության միջոցով, տեղափոխող հիվանդանոցային բժշկական կազմակերպության բժշկական անձնակազմի ուղեկցությամբ՝ ընդունող հիվանդանոցային բժշկական կազմակերպության նախնական համաձայնությամբ: 7. Տեղափոխումից առաջ նորածնի վիճակի հետագա վատացման կանխարգելման, տեղափոխման բարեհաջող ընթացքի ապահովման նպատակով կատարվում է պացիենտի վիճակի կայունացում, ինչը կարող է արվել ինչպես ուղեգրող հիվանդանոցային բժշկական կազմակերպության (հեռախոսային խորհրդատվության միջոցով), այնպես էլ վերակենդանացման արտագնա խմբի մասնագետների կողմից: 8. Մանկատներից պացիենտներին համապատասխան հիվանդանոցային բժշկական կազմակերպություններ (ինչպես նաև մեկ հիվանդանոցային բժշկական կազմակերպությունից մյուսը) տեղափոխումը, եթե տեղափոխման ընթացքում չկա բժշկական միջամտության անհրաժեշտություն, իրականացվում է տվյալ սպասարկման տարածքի շտապ օգնության ֆելդշերական բրիգադների միջոցով:		
259.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված ՀՀ քաղաքացիների ՀՀ-ից դուրս բուժման ուղեգրման և ճանապարհածախսի և փոխհատուցման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 37-Ն, ընդունված է՝ 22.07.2013, ուժի մեջ է՝ 18.01.2014* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված ՀՀ քաղաքացիների ՀՀ-ից դուրս բուժման ուղեգրման և ճանապարհածախսի և փոխհատուցման չափորոշիչը:	1. ՀՀ-ից դուրս պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխայի ուղեգրումը կազմակերպվում է «Անկախ պետությունների համագործակցություն» միջազգային կազմակերպության անդամ երկրների շրջանակներում, եթե առաջնակի ուղեգրման համար տվյալ ոլորտի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում առկա է մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության (որտեղ բուժվել է կամ շարունակական հսկողության տակ է գտնվում երեխան) եզրակացությունը՝ վավերացված բժշկական կազմակերպության կնիքով, 2. Երեխայի ուղեկցողի ծախսերը փոխհատուցվում են: 3. Հիվանդին և ուղեկցողին տրամադրվում են տրանսպորտային միջոցի տոմսեր (մեկնում և վերադարձ)՝ առանց տվյալ երկրում բուժման ծախսերի փոխհատուցման:		• ՀՀ առողջապահության նախարարություն
260.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բժշկական օգնության և սպասարկման ու խնամքի կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 78-Ն, ընդունված է՝ 03.12.2013, ուժի մեջ է՝ 11.04.2014* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բժշկական օգնության և սպասարկման ու խնամքի	1. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է մանկաբարձագինեկոլոգիական և մանկաբուժական (նեոնատոլոգիական) ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների կողմից՝ մանկաբարձագինեկոլոգիական մասնագիտացված բժշկական կազմակերպությունների, քաղաքային և տարածաշրջանային ծննդատների/բժշկական կազմակերպությունների մանկաբարձական, նորածինների վերակենդանացման, ՀՀ առողջապահության նախարարի հրամանով սահմանված 2-րդ էտապի խնամքի բաժանմունքներում, միավորումների և բժշկական կազմակերպությունների մասնագիտացված մանկական (նեոնատոլոգիական), նորածնային պաթոլոգիայի բաժանմունքներում, ինչպես նաև մասնագիտացված բժշկական կազմակերպություններում՝ համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում: 2. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում իրականացվում է ՀՀ քաղաքացիներից ծնված նորածինների բժշկական օգնությունը և սպասարկումը, ինչպես նաև այլ երկրի այն քաղաքացիներից ծնված նորածինների բժշկական օգնությունը և սպասարկումը, որոնք ամուսնացած են ՀՀ քաղաքացիների հետ: 3. Մանկաբարձագինեկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների ղեկավարները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ նորածինների վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի ծառայությունները հզորացնելու, նորածինների վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքները կադրային և սարքավորումներով հագեցվածությունը հնարավորինս բարելավելու և նորածինների վերակենդանացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ուղղությամբ: 4. Ծննդօգնության ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների տնօրինությունը ապահովում է նեոնատոլոգի մասնակցությունը ծննդաբերությանը և անհրաժեշտության դեպքում նորածնի առաջնային վերակենդանացման միջոցառումների իրականացումը, իսկ նեոնատոլոգի բացակայության դեպքում նորածնի առաջնային վերակենդանացման միջոցառումների իրականացումը մանկաբարձ-գինեկոլոգի և/կամ մանկաբարձուհու կողմից, նորածինների վարման ծանր ընթացքով դեպքերի վերաբերյալ շտապ տեղեկատվության ներկայացումը և մասնագիտացված բժշկական կազմակերպության ծանր հիվանդ		• Մանկաբարձագինեկոլոգիական և մանկաբուժական (նեոնատոլոգիական) ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններ • Մ. Հերացու անվան ԵՊԲՀ-ի «Մուրացան» հիվանդանոցային համալիր • «Սուրբ Աստվածամայր» ԲԿ • Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ

	կազմակերպման չափորոշիչը:	նորածինների տեղափոխման գործընթացի կազմակերպումը, ինչպես նաև նորածինների մոտ հեմոռագիկ հիվանդության կանխարգելման նպատակով անհրաժեշտ քանակներով վիտամին Կ-ի ձեռք բերումը՝ բոլոր նորածիններին ներարկելու համար: 5. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորածինների բժշկական օգնությունը և սպասարկումն իր մեջ ներառում է առողջ նորածնի խնամքի ապահովումը՝ ներառյալ պատվաստումների իրականացումը, նորածնային սկրինինգների կազմակերպումը (բնածին հիպոթիրեոզ, ֆենիլկետոնուրիա, լսողության սկրինինգ, նորածնային ռետինոպաթիա, կոնք-ազդրային հոդի սկրինինգ), հիվանդ և անհաս նորածինների վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի և հսկողության ապահովումը, ինչպես նաև անհաս նորածինների խնամքի նորածնի առաջնային վերակենդանացման 2-րդ էտապի կազմակերպումը, նորածինների բժշկական օգնության և սպասարկման ու խնամքի կազմակերպումը և տեղափոխումը մասնագիտացված բժշկական կազմակերպություններ: 6. Ծննդօգնության ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններում առողջ նորածինների խնամքը իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով սահմանված դրույթներին համապատասխան, որի շրջանակներում պետք է մանկաբարձուհու կողմից ապահովվի նորածնի և ծննդկանի «մաշկը-մաշկին» շփումը ծնարանում (առնվազն 30 րոպե տևողությամբ), կրծքով վաղ կերակրման սկիզբը (հետծննդյան առաջին ժամվա ընթացքում), ծնարանում նորածնի դաստակին «ապարանջան-ձեռնակապի» ամրացումը, որտեղ պետք է նշված լինեն մոր ազգանունը, անունը, հայրանունը, նորածնի ծնվելու ամսաթիվը, սեռը, մարմնի զանգվածը և երկարությունը, մոր և մանկան համատեղ տեղակայումը, բացառապես կրծքով կերակրումը, շշերի և ծծակների օգտագործման բացառումը, ինչպես նաև մանկան կրծքով կերակրման և նորածնի խնամքի հարցերով մայրերին խորհրդատվության և գործնական օգնության տրամադրումը: 7. «Մանկանը բարեկամ ծննդատուն» կոչում ունեցող բժշկական կազմակերպությունները պարտադիր ապահովում են «Մանկանը բարեկամ հիվանդանոցներ» նախաձեռնության 10 քայլերի պատշաճ կատարումը և գործընթացի պարբերական շարունակական հսկողությունը: 8. Նորածինների և վաղ մանկական տարիքի երեխաների խնամք և բուժում իրականացնող բժշկական կազմակերպությունները իրենց գործունեության կազմակերպման համաձայն պետք է խստիվ հետևեն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի դրույթներին, բացառելով համագործակցությունը արհեստական կաթնախառնուրդներ արտադրող կամ բաշխող և/կամ նրանց կողմից լիազորված այլ կազմակերպությունների հետ, կաթնախառնուրդների վաճառքի կազմակերպումը բժշկական կազմակերպություններում և/կամ դրանց անվճար տրամադրումը մայրերին: Առանձին դեպքերում, երբ նորածինը կարիք ունի կաթնախառնուրդի (առանց ծնողական խնամքի մնացած, մարդու իմունային անբավարարության վիրուս վարակակիր մայրերից ծնված, կամ կրծքի կաթի նկատմամբ բժշկական բացարձակ հակացուցում ունեցող նորածիններ), այն ձեռք է բերվում ծննդօգնության ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպության կողմից՝ իր միջոցների հաշվին: 9. Հեմոռագիկ հիվանդության կանխարգելման նպատակով բոլոր հասուն նորածիններին կյանքի առաջին 4 ժամերի ընթացքում միջմկանային ճանապարհով ներարկվում է վիտամին Կ՝ 1 մգ (0,1 մլ) դեղաչափով: 10. Առողջ նորածինների խնամքը, ներառյալ՝ չբարուրելը, մաշկի, լորձաթաղանթների, պորտի խնամքը, կազմակերպվում է ՀՀ առողջապահության նախարարի համապատասխան հրամանով հաստատված առողջ նորածինների վարման ուղեցույցներին և ԱՀԿ հանձնարարականներին համապատասխան: 11. Հիվանդ նորածինների առաջնային վերակենդանացումը և բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է անհապաղ, անկախ ծննդօգնության ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպության մակարդակից՝ նեոնատոլոգի, իսկ վերջինիս բացակայության դեպքում, ծնունդն ընդունող մանկաբարձ-գինեկոլոգի կամ մանկաբարձուհու կողմից: 12. Հիվանդ ու անհաս նորածինների բուժումը և խնամքը կազմակերպվում է համապատասխան ստորաբաժանումներ և համապատասխան սարքավորումներ ունեցող ՀՀ առողջապահության նախարարի հրամանով սահմանված 2-րդ և 3-րդ մակարդակի ծննդօգնության ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների և մանկական հիվանդանոցային ու նեղ մասնագիտական ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների նորածինների վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի, նորածինների խնամքի երկրորդ էտապի և/կամ նորածնային պաթոլոգիայի բաժանմունքներում: ՀՀ առողջապահության նախարարի հրամանով սահմանված 3-րդ մակարդակի ծննդօգնության ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններում հսկվում և խնամվում են այն նորածինները, որոնք ունեն հատուկ մասնագիտացված հետազոտման, բուժման, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարի հրամանով սահմանված 2-րդ էտապի խնամքի կարիք: 13. 1500 գրամից ցածր քաշով բոլոր անհաս նորածիններին կյանքի առաջին 4 ժամերի ընթացքում միջմկանային ճանապարհով ներարկվում է վիտամին Կ՝ 0,5 մգ (0,05 մլ) դեղաչափով: Ինտենսիվ թերապիայի և հատուկ խնամքի կարիք ունեցող բոլոր (հասուն և անհաս) նորածիններին երկրորդ դեղաչափը պետք է տրվի 4 շաբաթական հասակում՝ ներքին ընդունման ձևով 2 մգ (0,2 մլ) դեղաչափով: 14. Հիվանդ նորածինների խնամքի կազմակերպման գործընթացում ծննդօգնության ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպության բուժանձնակազմի կողմից մայրերն ապահովվում են բավարար սոցիալ-հոգեբանական աջակցությամբ և կրծքով կերակրման շարունակականության խրախուսմանն ուղղված խորհրդատվությամբ և գործնական օգնությամբ: 15. Ծննդօգնության ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպության կողմից կազմակերպվում է հիվանդ նորածինների տեղափոխման գործընթացն ավելի բարձր մակարդակի մանկական/նորածնային վերակենդանացման ծառայություններ ունեցող բժշկական կազմակերպություններ: 16. Հիվանդ նորածինների տեղակայումը և/կամ տեղափոխումը վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի ստորաբաժանում (այդ թվում՝ բժշկական կազմակերպության ներսում), իրականացվում է համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում: 17. Նորածինների տեղափոխումն այլ բժշկական կազմակերպություն իրականացվում սահմանված ցուցումներին/հակացուցումներին ու ժամկետներին համապատասխան՝ տնօրինության և/կամ բաժանմունքների պատասխանատուների մակարդակով ուղեգրող և ընդունող բժշկական կազմակերպությունների փոխադարձ համաձայնությամբ:		

		18. Նորածիններին տրամադրվող «Սանավիացիայի» ծառայությունը իրականացվում է համապատասխան հագեցվածություն ունեցող մեքենայով (ռեանիմոբիլով), վերջինիս անհնարինության դեպքում շտապ օգնության մեքենայով՝ տեղափոխությունը կազմակերպող բուժանձնակազմի ուղեկցությամբ, որը իրականացվում է Մ. Հերացու անվան ԵՊԲՀ-ի «Մուրացան» հիվանդանոցային համալիրի, «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ի և Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի կողմից՝ նորածնի գտնվելու վայրի շտապ օգնության ծառայության միջոցով, տեղափոխող բժշկական կազմակերպության բուժանձնակազմի ուղեկցությամբ, ընդունող բժշկական կազմակերպության ծառայության պատասխանատուի և/կամ հերթապահ բժշկի հետ նախնական համաձայնությամբ: 19. Առանձին դեպքերում, եթե նորածնի վիճակը թույլ է տալիս, «Սանավիացիայի» ծառայությունը իրականացվում է մանկական վերակենդանացման մարզային բժշկական կազմակերպություններում 20. Բոլոր այն դեպքերում, երբ օբյեկտիվ պատճառներով նորածնի տեղափոխումը վերը նշված բժշկական կազմակերպություններ հնարավոր չէ, մարզային ծննդատնից նորածինների տեղափոխումը և անհետաձգելի բժշկական օգնությունն ու սպասարկումը կարող է կազմակերպվել տվյալ մարզի վերանորոգված և սարքավորումներով հագեցված բժշկական կազմակերպությունում, հետագայում ըստ անհրաժեշտության կազմակերպելով նորածնի տեղափոխումը մասնագիտացված նորածնային վերակենդանացման ծառայություն ունեցող բժշկական կազմակերպություն: 21. Նորածնին մասնագիտացված նորածնային վերակենդանացման ծառայություն ունեցող բժշկական կազմակերպություն տեղափոխումից առաջ, վիճակի հետագա վատացման կանխարգելման, տեղափոխման բարեհաջող ընթացքի ապահովման նպատակով կատարվում է երեխայի վիճակի կայունացում, ինչը կարող է արվել ինչպես ուղեգրող բժշկական կազմակերպության մասնագետների, այնպես էլ վերակենդանացման արտագնա խմբի մասնագետների կողմից: 22. Նորածինների տեղափոխման ժամանակ ուղեգրող բժշկական կազմակերպությունն ապահովում է բժշկական փաստաթղթերի պատշաճ ձևակերպումը, կցելով Երեխայի առողջության պետական հավաստագիրը, տեղափոխման էպիկրիզը՝ նորածնի վիճակի մանրամասն նկարագրությամբ, նորածնի ծննդյան վկայականի պատճենը կամ ծննդի մասին բժշկական վկայականը և մոր անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Տեղափոխման ժամանակ պարտադիր պահպանվում է երեխայի դաստակին ամրացված ապարանջան-ձեռնակապը, որի վրա գրառված են մոր և նորածնի անհատական տվյալները:		
261.	**«Բնակչությանը (18 տարեկան և բարձր տարիքի անձանց համար) պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների, բնակչությանը (մինչև 18 տարեկան անձանց համար) պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 65-Ն, ընդունված է՝ 18.10.2013, ուժի մեջ է՝ 25.01.2014* Հաստատում է բնակչությանը (մինչև 18 տարեկան և բարձր տարիքի անձանց համար) պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների ցանկերը, սահմանում է անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում պահանջող հիվանդությունների և վիճակների բժշկական			• ՀՀ առողջապահության նախարարություն

	օգնությունը և սպասարկումը:			
262.	**«Հայաստանի Հանրապետությունում բնական ծաղիկ հիվանդության համաճարակաբանական հսկողություն» ՍԿ N 3.1.1-023-11 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 22-Ն, ընդունված է՝ 22.11.2011, ուժի մեջ է՝ 08.01.2012* Հաստատում է ՀՀ-ում բնական ծաղիկ հիվանդության համաճարակաբանական հսկողության (ՍԿ N 3.1.1-023-11) սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը:	1. Բնական ծաղիկը անթրոպոնոզ, բարձր վարակելիություն ունեցող հատուկ վտանգավոր վարակ է: Բնական ծաղկի նկատմամբ ընկալ են չպատվաստված բոլոր անձինք: Բնական անընկալություն բնական ծաղկի դեմ չի լինում: Հիվանդանում են ցանկացած տարիքում, հատկապես խոցելի են մինչև 4 տարեկան երեխաները: Հիվանդության գաղտնի շրջանի տևողությունը 7-19 օր է, հաճախ՝ 10-14 օր: 2. Բնական ծաղկի յուրաքանչյուր դեպք, այդ թվում՝ կասկածելի, ենթակա է անմիջապես մեկուսացման և հոսպիտալացման ինֆեկցիոն հիվանդանոցի հատուկ բաժանմունքում (ապահովված Մելցերյան մեկուսարաններով): 3. Բնական ծաղկի կասկածով հիվանդի տեղափոխումն իրականացվում է տարհանման ջոկատի կողմից: 4. Բնական ծաղկով հիվանդի կամ վարակի որևէ գործոնի հետ շփված անձինք մեկուսացվում են ինֆեկցիոն հիվանդանոցի հատուկ բաժանմունքում (ապահովված Մելցերյան մեկուսարաններով) 14 օրվա ընթացքում՝ բժշկական հսկողության իրականացմամբ, վարակի հսկողության համապատասխան պայմանների ապահովմամբ: Նրանց նկատմամբ իրականացվում է ամենօրյա զննում, ջերմաչափում, արդյունքները գրանցվում են համապատասխան առաջնային բժշկական փաստաթղթերում կամ ամբուլատոր քարտերում, ինչպես նաև՝ Բնական ծաղկով հիվանդի կամ վարակի որևէ գործոնի հետ շփված անձանց առողջության մոնիթորինգի թերթիկում: 5. Անկախ տարիքից և հակացուցումներից, ինչպես նաև՝ պատվաստումային կարգավիճակից՝ բնական ծաղկով հիվանդի կամ վարակի որևէ գործոնի հետ շփված անձանց 48 ժամվա ընթացքում պատվաստում են բնական ծաղկի դեմ՝ ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ գտնվող և ՀՀ առողջապահության նախարարի կողմից նշանակված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունում, ինչպես նաև իրականացնում են արտակարգ կանխարգելում՝ 4-6 օրվա ընթացքում դոնորական հակածաղկային գամմա-գլոբուլինի միջմկանային ներարկում և հակավիրուսային մետիսազոն պատրաստուկի ընդունում խմելու ձևով: 6. Եթե բնական ծաղկով հիվանդի կամ վարակի որևէ գործոնի հետ շփված անձանց որևէ պատճառով պատվաստում չի իրականացվում, նրանց մեկուսացումը և բժշկական հսկողությունը շարունակվում է 21 օրվա ընթացքում:	Բնական ծաղիկ հիվանդության կասկածով անձանց հայտնաբերումն իրականացվում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բուժաշխատողների, ընտանեկան բժիշկների կողմից՝ ամբուլատոր և ստացիոնար ընդունելությունների, տնային կանչերի, բժշկական զննությունների ժամանակ, բնական ծաղկով հիվանդի և վարակի այլ աղբյուրների հետ շփված անձանց նկատմամբ բժշկական հսկողություն իրականացնելիս, ինչպես նաև՝ ՀՀ պետական սահմանի անցման կետերում Սանիտարական կարանտինային կետերի բուժաշխատողների կողմից՝ սանիտարակարանտինային հսկողության իրականացման ժամանակ: Բնական ծաղկով հիվանդների հայտնաբերման, այդ թվում՝ կասկածի դեպքում արտահերթ հաղորդվում է ՀՀ առողջապահության նախարարություն: Բնական ծաղկի դեպքերն ախտորոշվում են համաճարակաբանական, կլինիկական տվյալների հիման վրա, և վերջնականապես հաստատվում լաբորատոր հետազոտությունների արդյունքում: Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում հաշվառման (գրանցման) ենթակա են բնական ծաղկով հիվանդության և՛ կասկածելի, և՛ հավանական, և՛ հաստատված դեպքերը: Բնական ծաղկի դեպքը դիտվում է հանրային առողջապահության ոլորտում անսովոր կամ անսպասելի դեպք և ենթակա է անմիջապես հաղորդման Միջազգային առողջապահական կանոնների հարցերով Ազգային համակարգող մարմնին՝ համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 26-ի թիվ 1138-Ն որոշման և ծանուցվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության Միջազգային առողջապահական կանոնների հարցերով հաղորդակցման կետին՝ համաձայն ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 6-ի թիվ 913-Ն որոշման: Հիվանդին հայտնաբերող բժշկի կողմից կազմվում է բնական ծաղկով կասկածելի, հավանական կամ հաստատված հիվանդի (դիակի), բնական ծաղկի վիրուսի լաբորատոր շտամի հետ շփված կամ հնարավոր կենսաահաբեկչական գործողության վայրում գտնված անձանց ցուցակ:	• ՀՀ առողջապահության նախարարություն • Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ

			Կազմված ցուցակը փոխանցվում է սույն կետում նշված անձանց բժշկական հսկողություն իրականացնող ինֆեկցիոն հիվանդանոցին:	
263.	**«Հայաստանի Հանրապետությունում մենինգակոկային վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողություն» ՍԿ N 3.1.1-016-10 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 40-Ն, ընդունված է՝ 28.12.2010, ուժի մեջ է՝ 14.05.2011* Հաստատում է ՀՀ-ում մենինգակոկային վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության (ՍԿ N 3.1.1-016-10) սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը:	1. Մանրէաբանական հետազոտության են ենթարկվում՝ նախադպրոցական կազմակերպություններում, երեխաների խնամքի և պաշտպանության կազմակերպություններում, հանրակրթական դպրոցներում, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ ուսումնադաստիարակչական հիմնարկներ), ինչպես նաև՝ բժշկական օգնություն և սպասարկում (այդ թվում՝ առողջարանային-վերականգնողական) իրականացնող կազմակերպություններում և տնային օջախներում հիվանդի հետ շփված անձինք, որոնց շրջանակը որոշում է բժիշկ-համաճարակաբանը յուրաքանչյուր դեպքի համար: 2. Մանրէաբանորեն հաստատված մենինգակոկային նազոֆարինգիտով հիվանդների մեկուսացումը, բժշկական հսկողությունը և բուժումը կարող է իրականացվել տնային պայմաններում, եթե օջախում չկան մինչև 18 տարեկան երեխաներ, ուսումնադաստիարակչական հիմնարկների և բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնող կազմակերպությունների աշխատողներ 3. Դպրոցականները 6 ամսով ազատվում են ֆիզկուլտուրայի պարապմունքներից և ֆիզիկական այլ ծանրաբեռնվածությունից՝ տեղամասային մանկաբույժի/ընտանեկան բժշկի տեղեկանքի հիման վրա: 4. Շարունակական (դիսպանսերային) հսկողության ընթացքում ուշադրություն է դարձվում նյարդաբանական ախտանշանների շարժընթացին, շարժողական, մտավոր և խոսակցական հնարավորությունների կոմպենսացիայի աստիճանին, կանոնավոր բուժման և վերականգնողական ռեժիմի պահպանմանը: Անհրաժեշտության դեպքում կատարվում է կրկնակի հոսպիտալացում կամ լրացուցիչ հետազոտում, առողջարանային բուժում: Բուժական զննության համար կարող են ներգրավվել նաև այլ մասնագետներ՝ ակնաբույժ, քիթ-կոկորդ-ականջի բժիշկ, հոգեբան, մերսող, բուժական ֆիզկուլտուրայի հրահանգիչ: Ցուցումների դեպքում իրականացվում են լրացուցիչ հետազոտություններ՝ էլեկտրոէնցեֆալոգրաֆիա, էխոէնցեֆալոգրաֆիա, կրանիոգրաֆիա, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա, ռենտգենոգրաֆիա, աչքի հատակի հետազոտում, երեխայի հիշողության, ուշադրության, աշխատունակության նյարդահոգեբանական հետազոտություն: 5. Տնային օջախներում, ուսումնադաստիարակչական հիմնարկներում հիվանդի հետ շփված անձանց մանրէաբանական հետազոտությունների ժամանակ հայտնաբերված մենինգակոկակիրները տեղամասային բժշկի/վարակաբանի/ քիթ-կոկորդ-ականջի բժշկի կողմից ենթարկվում են առողջացման(սանացիա): Առողջացման ընթացքում նրանք չեն հաճախում ուսումնադաստիարակչական հիմնարկներ: Ուսումնադաստիարակչական հիմնարկներում հիվանդության տարածուն ձևով միաժամանակ 2 դեպք գրանցվելիս օջախում հիմնարկի ղեկավարի կողմից սահմանվում է 10-օրյա կարանտին: Կարանտինի ընթացքում չի իրականացվում ժամանակավորապես բացակայած կամ նոր երեխաների ընդունում, տեղաշարժ խմբից (դասարանից, կուրսից) այլ խումբ (դասարան, կուրս): 6. Հիվանդի հետ շփված անձինք չեն մեկուսացվում, սակայն հիվանդի հետ շփված ուսումնադաստիարակչական հիմնարկներ հաճախող երեխաները և դրանցում աշխատող անձինք հաճախում են կազմակերպություններ բժշկական զննությունից և մանրէաբանական հետազոտության բացասական պատասխանից հետո:	Մենինգակոկային վարակի տարածուն ձևով հիվանդների, հիվանդության կասկածով անձանց և վարակակիրների հայտնաբերումը իրականացնում են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բոլոր մասնագիտությունների բժիշկները և միջին բուժաշխատողները՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից և գերատեսչական պատկանելությունից, ցանկացած տեսակի բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու ընթացքում: Մենինգակոկային նազոֆարինգիտով հիվանդների և մենինգակոկակիրների հայտնաբերումն իրականացվում է մենինգակոկային վարակի օջախում հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելիս՝ կոնտակտավորների քիթ-ըմպանի լորձի մանրէաբանական լաբորատոր հետազոտությունների ընթացքում: Մենինգակոկային վարակիչ հիվանդությունների տարածուն ձևով՝ մենինգիտով, մենինգակոկցեմիայով, մենինգաէնցեֆալիտով և դրանց զուգակցված ձևերով, ինչպես նաև մանրէաբանորեն հաստատված մենինգակոկային նազոֆարինգիտով հիվանդները և մենինգակոկակիրները ենթակա են հաշվառման (գրանցման): Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունը ներկայացնում է նաև ամսական հաշվետվություն Առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության համապատասխան մարզային, Երևան քաղաքի տարածքային կենտրոններին՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանի հաջորդ ամսվա 5-ը մենինգակոկային մենինգիտների դեպքերի վերաբերյալ: Մենինգակոկային վարակիչ հիվանդությունների դեպքերի հաղորդումը ապահովում են դեպքը հայտնաբերող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարները: Հիվանդի հետ շփված անձանց նկատմամբ 10 օրվա ընթացքում իրականացվում է բժշկական հսկողություն (ջերմաչափում, քիթ-ըմպանի և մաշկային ծածկույթների զննում)՝ նրանց սպասարկող տեղամասային մանկաբույժի կամ տեղամասային թերապևտի/ընտանեկան բժշկի կողմից՝ այդ մասին կատարելով	• Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ

			նշում բժշկական փաստաթղթերում՝ «Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտում» կամ «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում»: Նրանց կողմից նաև՝ հսկողության արդյունքները փոխանցվում են հիվանդին սպասարկող տեղամասային բժշկին և գրանցվում «Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտում» կամ «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում» փակցվող հիվանդի հետ շփված անձանց առողջության մոնիթորինգի թերթիկում:	
264.	**«Հայաստանի Հանրապետությունում գրիպի և սուր շնչառական վարակների համաճարակաբանական հսկողություն» ՍԿ 3.1.1-021-10 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 34-Ն, ընդունված է՝ 17.12.2010, ուժի մեջ է՝ 11.02.2011* Հաստատում է ՀՀ-ում գրիպի և սուր շնչառական վարակների համաճարակաբանական հսկողության սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը և գրիպի և սուր շնչառական վարակների դեպքերի ստանդարտ սահմանումների, առողջապահության ոլորտի աշխատողների առողջության մոնիտորինգի ձևաթերթիկի, մանկական նախադպրոցական կազմակերպությունների և դպրոցների գործունեության դադարեցման մոնիտորինգ՝ օջախներում կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների ապահովման համար տեղեկատվության, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների վերակենդանացման բաժանմունքներում հոսպիտալացված ծանր սուր շնչառական վարակների վերաբերյալ տեղեկատվության ձևերը:	1. Ինֆեկցիոն հիվանդանոցներում/բաժանմունքներում լրացուցիչ մահճակալային ֆոնդը հաշվարկվում է՝ 1% մեծահասակների և 2,5% հիվանդ երեխաների հաշվարկով, առավել ինտենսիվ համաճարակների և համավարակների (պանդեմիա) ժամանակ՝ մեծահասակների 20%-ի և երեխաների 40%-ի հաշվարկով: Հիվանդանոցում գրիպով հիվանդների համար հատկացված մահճակալների ընդհանուր քանակը, հոսպիտալացման ենթակա հիվանդների հնարավոր քանակից նախատեսվում է 2 անգամ քիչ: 2. Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում (բաժանմունքներում) գրիպի համաճարակի և գրիպի սեզոնի ժամանակ ուժեղացվում է հսկողությունն ընդունվող ծննդաբերների, ծննդկանների նկատմամբ (ջերմաչափում, քիթ-ըմպանի զննում և այլն)՝ գրիպի կասկածելի դեպքերի վաղ հայտնաբերման նպատակով: 3. Սուր շնչառական վարակների ախտանշաններ հայտնաբերելիս ծննդկանը հոսպիտալացվում է առանձին հիվանդասենյակում, բոքսում կամ կիսաբոքսում: Ծննդատանը գտնվելիս ծննդաբերի մոտ սուր շնչառական վարակներ հայտնաբերելիս տեղափոխվում է մեկուսացված հատուկ հիվանդասենյակ: 4. Եթե ձևավորվել է գրիպի և սուր շնչառական վարակների օջախ կամ արձանագրվել է բռնկում, ապա իրականացվում է հիվանդ և հիվանդի հետ շփված մայրերի, նորածինների նկատմամբ հսկողություն՝ սահմանելով մեկուսացման պայմաններ, հիվանդ երեխան մոր հետ 7-10 օր մեկուսացվում է անհատական բոքսում՝ առանձին սպասարկող անձնակազմով, շփման մեջ գտնված երեխաների նկատմամբ սահմանվում է հսկողություն՝ ջերմաչափում օրը 2 անգամ, քիթ-ըմպանի զննում, երեխային կերակրելու ժամանակ գրիպով և սուր շնչառական վարակներով հիվանդ մայրը կրում է մեկանգամյա օգտագործման դիմակ, իսկ եթե նորածինների և ծննդկանների շրջանում միաժամանակ արձանագրվում է գրիպի կամ սուր շնչառական վարակների 5 դեպք և չկան նրանց մեկուսացման պայմաններ, ապա ծննդատանը սահմանվում է կարանտին: 5. Կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները մանկական նախադպրոցական և դպրոցական կազմակերպություններում իրականացվում են անընդհատ: 6. Գրիպի սեզոնային բարձրացումների կամ համաճարակային իրավիճակի ժամանակ հիվանդ երեխաները և անձնակազմի անդամները մեկուսացվում են՝ հատկապես ռիսկի խումբ հանդիսացող երեխաներից և անձնակազմի անդամներից (շնչառական, սիրտ-անոթային համակարգի և այլ խրոնիկ հիվանդություններով տառապող անձինք): 7. Սուր շնչառական վարակներով երեխաները և անձնակազմի անդամներն օրվա ընթացքում հիվանդանալու դեպքում մեկուսացվում են: Երեխաները հնարավորության դեպքում ուղարկվում են տուն: 8. Ուսումնական հաստատություններում նախօրոք որոշվում են այն տարածքները, որտեղ մեկուսացվում են հիվանդները: Այդ տարածքները չեն օգտագործվում այլ նպատակների համար և տարանցիկ չեն: 9. Հիվանդները մեկուսացվում են լավ օդափոխվող տարածքներում՝ առողջ անձանցից ոչ պակաս, քան 2 մետր հեռավորության վրա: 10. Մանկական նախադպրոցական կազմակերպությունների փոքրերի առաջին խմբում կատարվում է երեխաների ամենօրյա զննում և ջերմաչափում՝ դաստիարակների ուժերով: Առավոտյան երեխաների ընդունման ժամանակ հիվանդ երեխաները մեկուսացվում են մինչև ծնողի գալը: 11. Համաճարակի ընթացքում հատուկ հաստատություններում դադարեցվում է երեխաների տեսակցությունը, զանգվածային միջոցառումների իրականացումը (առավոտյան մանկական միջոցառումներ, ֆիլմերի դիտում, սպորտային միջոցառումներ, զվարճանքներ, բեմականացումներ և այլն): 12. Անձանց կողմից, ովքեր զբաղվում են գրիպով և սուր շնչառական վարակներով հիվանդների խնամքով, օգտագործում են անհատական պաշտպանիչ միջոցներ, որոնք փոխվում են յուրաքանչյուր 3-4 ժամը մեկ անգամ և՝ ըստ անհրաժեշտության: 13. Եթե անձնակազմի որևէ անդամի մոտ նկատվում է գրիպի կամ սուր շնչառական վարակների ախտանշաններ, վերջինս ժամանակավորապես ազատվում է երեխաների սպասարկումից: 14. Հիվանդը, ինքնազգացողությունից ելնելով և եթե նա ի վիճակի է՝ գտնվելով այլ անձանց շրջանում կրում է վիրաբուժական դիմակ: 15. Գրիպի համաճարակների ժամանակ հանրակրթական դպրոցներում դադարեցվում է զանգվածային միջոցառումների իրականացումը (առավոտյան մանկական միջոցառումներ, ֆիլմերի դիտում, սպորտային միջոցառումներ, զվարճանքներ, բեմականացումներ և այլն): 16. Գրիպով հիվանդացության բարձր մակարդակի արձանագրման ժամանակ իրականացվում է կրթության կաբինետային համակարգի դադարեցում, այդ դեպքում ուսուցումն իրականացվում է մեկ դասասենյակում, դադարեցվում են այնպիսի միջոցառումները, որոնց ժամանակ մի քանի դասարանների կամ դպրոցների երեխաները գտնվում են միևնույն տեղում՝ փակ տարածություններում, իրարից հնարավորինս հեռացվում են աշակերտական սեղանները, դասընթացները կազմակերպվում են ավելի մեծ սենքերում, որպեսզի սաների միջև տարածությունն ավելի մեծ լինի:	Գրիպով և սուր շնչառական վարակներով հիվանդների հայտնաբերումն իրականացվում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, կազմակերպությունների բուժաշխատողների, ընտանեկան բժիշկների կողմից՝ ամբուլատոր և ստացիոնար ընդունելությունների, տնային կանչերի, բժշկական զննումների և այլնի ժամանակ: Ախտորոշման, հիվանդացման ամսաթվի, հիմնական ախտանշանների և անցկացված հետազոտության և բուժման տվյալները հոսպիտալացման ուղեգրում նշվում է պոլիկլինիկայի բժշկի կողմից: Նորածնի դուրսգրման ժամանակ նրա փոխանակման քարտում կատարվում է նշում գրիպով և սուր շնչառական վարակներով հիվանդների հետ շփման մեջ գտնվելու մասին, որպեսզի նրա նկատմամբ հսկողությունը շարունակվի բնակավայրի տեղամասային պոլիկլինիկայում: Ուսումնական հաստատություններում (մանկական նախադպրոցական, դպրոցական, հատուկ) բուժաշխատողի կողմից կատարվում է երեխաների ամենօրյա ջերմաչափում՝ առավոտյան և երեկոյան՝ այդ մասին նշվում է ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 21-Ն հրամանով «Վարակիչ, այդ թվում՝ մակաբուծային հիվանդությունների հաշվառման մատյանում»:	• Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ

		17. Գրիպի համաճարակի կամ գրիպի վիրուսի նոր լոգոտիպով հարուցված հիվանդության ժամանակ մանկական ուսումնական հաստատությունների գործունեությունը ժամանակավորապես դադարեցվում է՝ եթե գրիպով հիվանդացության մակարդակը շարունակում է աճել: 18. Ուսումնական հաստատությունները փակվում են արձագանքման և նախազգուշական միջոցառումներ կազմակերպելու նպատակով: Արձագանքման միջոցառումներ իրականացվում են այն ժամանակ, երբ դպրոցներում նկատվում է սաների միաժամանակ 25% բացակայություն՝ գրիպով և սուր շնչառական հիվանդություններով: Այս միջոցառումը թեթևացնում է առողջապահական համակարգի ծանրաբեռնվածությունը: Նախազգուշական միջոցառումներ -իրականացվում են առողջապահական համակարգի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու, եթե հիվանդության գնահատումը հանրապետական մակարդակում նախանշում է գրիպի բարդությունների բարձրացում: 19. Ուսումնական հաստատությունների կրթական գործընթացի վերսկսումը՝ դադարեցումից հետո կախված է դադարեցման տեսակից, ինչպես նաև համաճարակի տևողությունից և ծանրությունից՝ Առողջապահության նախարարության կողմից իրականացված համաճարակաբանական տվյալների գնահատման արդյունքում: 20. Մանկական նախադպրոցական կազմակերպություններում իրականացվում են սանիտարահիգիենիկ միջոցառումներ՝ սպասքի ախտահանում (լվանալ տաք ջրով, օճառով կամ լվացող նյութերով), խաղալիքների ընթացիկ ախտահանում, երեխաների բացակայության ժամանակ սենյակի օդափոխում օրը 3 անգամ, 8-10 րոպե տևողությամբ, սենյակների խոնավ մաքրում օրը 2 անգամ, երեխաների զբոսանք մաքուր օդում սովորականից 4 ժամ ավելի՝ պահպանելով խմբային մեկուսացման սկզբունքը և սննդի վիտամինացում: 21. Բարձրագույն ուսումնական հաստատություններում, դպրոցներում, հատուկ ուսումնական կրթական կազմակերպություններում իրականացվում են ներքոհիշյալ սանիտարահիգիենիկ միջոցառումները՝ սպասքի ախտահանում (լվանալ տաք ջրով, օճառով կամ լվացող նյութերով), սենյակի օդափոխում օրը 3 անգամ, 8-10 րոպե տևողությամբ, սենյակների խոնավ մաքրում օրը 2 անգամ, առողջ ապրելակերպի քարոզչություն և բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում:		
265.	**«Հայաստանի Հանրապետությունում փայտացման համաճարակաբանական հսկողություն» ՍԿ N 3.1.1-014-10 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 33-Ն, ընդունված է՝ 14.12.2010, ուժի մեջ է՝ 11.02.2011* Հաստատում է «ՀՀ-ում փայտացման համաճարակաբանական հսկողություն» ՍԿ N 3.1.1-014-10 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը:	1. Կլինիկորեն չճշտված դեպքերի ախտորոշման նպատակով և մանրէաբանական հետազոտության տվյալների բացակայության դեպքում երեխաները և մեծահասակները հետազոտվում են շճաբանական (ագլյուտինացիայի ռեակցիա, պասիվ հեմոգլյուտինացիայի ռեակցիա, իմունաֆերմենտային հետազոտություն և այլն) մեթոդով: 2. Վերքի լավացումից հետո 6 տարեկանից փոքր երեխաները պատվաստվում են ԱԿԴՓ -ով /1 տարեկանից փոքր երեխաներին՝ ԱԿԴՓ+ՎՀԲ+ՀԻԲ, իսկ 6 տարեկան և բարձր երեխաներին՝ ԱԴՓ-Մ պատվաստանյութով/: 3. Փայտացման արտակարգ կանխարգելումն իրականացվում է, եթե առկա են արտահիվանդանոցային վիժումներ և արտահիվանդանոցային ծննդաբերություն: 4. Փայտացման արտակարգ կանխարգելումն արտահիվանդանոցային ծննդաբերության դեպքում կատարվում է ծննդկաններին և նորածիններին: Վերջիններիս ներարկում են հակափայտացման մարդկային իմունոգլոբուլին (250 ՄՄ) կամ հակափայտացման շիճուկ (3000 ՄՄ): Նորածնին արտակարգ կանխարգելում չի կատարվում, եթե ծննդկանի մոտ առկա են պատվաստումների վերաբերյալ փաստաթղթերով հաստատված տվյալներ՝ Պատվաստումների ազգային օրացույցին համապատասխան և վերջին պատվաստումից հետո չի անցել 10 տարի:	Փայտացման յուրաքանչյուր կասկածելի դեպքի մասին, հայտնաբերող բուժանձնակազմի կողմից անմիջապես հեռախոսով տրվում է հաղորդում Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն (ըստ տարածքի), այնուհետև՝ 24 ժամվա ընթացքում ուղարկելով շտապ հաղորդման «Ձև ՇՀ 1» ձևը «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցի, «Արմենիկում ԲԿ» ՓԲԸ և Երևանի «Շտապ բժշկական օգնություն» պետական ՓԲԸ, որոնք հաղորդում են «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ին: Բոլոր կազմակերպություններում փայտացման յուրաքանչյուր դեպք գրանցվում և հաշվառվում է «Վարակիչ հիվանդությունների հաշվառման մատյանում»:	• ՀՀ առողջապահության նախարարություն • Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ
266.	**«Հայաստանի Հանրապետությունում պոլիոմիելիտի համաճարակաբանական հսկողություն» ՍԿ N 3.1.1-011-10 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 29-Ն, ընդունված է՝ 08.12.2010, ուժի մեջ է՝ 11.02.2011* Հաստատում է ՀՀ-ում պոլիոմիելիտի համաճարակաբանական հսկողության (ՍԿ N 3.1.1-011-10) սանիտարահամաճարակային	1. Պոլիոմիելիտի հաստատված հիվանդի դեպքում, լաբորատոր հաստատումից հաշված 7 օրվա ընթացքում, մինչև 15 տարեկան երեխաների շրջանում իրականացվում են պոլիոմիելիտի դեմ լրացուցիչ պատվաստումներ կենդանի պոլիոմիելիտային պատվաստանյութով՝ անկախ նախկինում ստացած պատվաստումներից: 2. Մինչև 5 տարեկան (4 տարեկան 11 ամիս 29 օրական) երեխաները, ովքեր վերջին 1,5 ամսվա ընթացքում եղել են պոլիոմիելիտի առումով անբարենպաստ վայրերում և ցանկացած պատճառով դիմել են որևէ բուժկանխարգելիչ կազմակերպություն, ենթակա են պոլիոմիելիտի նկատմամբ վիրուսաբանական հետազոտության: 3. Պոլիոմիելիտի առումով անբարենպաստ վայրերում եղած երեխաների կղանքի նմուշների հետազոտություններն իրականացվում են Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ի վիրուսաբանական լաբորատորիայում: Նմուշները վիրուսաբանական լաբորատորիա տեղափոխվում են երկրորդ նմուշի վերցման պահից ոչ ուշ, քան 72 ժամ հետո 4. Պոլիոմիելիտով հիվանդացած երեխաների կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են պատվաստումների պլանային օրացույցի համաձայն: 5. Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով բուժկանխարգելիչ կազմակերպությունների ղեկավարների կողմից ապահովվում է ՝ 1 տարեկան (11 ամսական 29 օրական) երեխաների առնվազն 95% ընդգրկվածություն պոլիոմիելիտի դեմ երեք դեղաչափ պատվաստումներում և 2 տարեկան (23 ամսական 29 օրական) երեխաների առնվազն 95% ընդգրկվածություն պոլիոմիելիտի դեմ 4 դեղաչափ պատվաստումներում:	Պոլիոմիելիտով կամ դրա կասկածով հիվանդների, ինչպես նաև սուր թորշոմած կաթված ունեցող հիվանդների պասիվ հայտնաբերումն իրականացնում են կազմակերպությունների բոլոր մասնագիտությունների բուժաշխատողները՝ անկախ գերատեսչական պատկանելությունից և սեփականության ձևից, ցանկացած տեսակի բժշկական օգնություն ցուցաբերելու դեպքում, այդ թվում՝ կենսաբանական նյութերի շճաբանական հետազոտության ժամանակ: Պոլիոմիելիտով կամ դրա կասկածով հիվանդների, ինչպես նաև սուր թորշոմած կաթվածներով հիվանդների հայտնաբերման դեպքում բժիշկն անհապաղ հիվանդներին ուղեգրում է ինֆեկցիոն կամ նյարդաբանական	• ՀՀ առողջապահության նախարարություն • Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ

	կանոնները և նորմերը:	6. Պոլիոմիելիտով կամ սուր թորշոմած կաթվածով հիվանդների հայտնաբերման նպատակով տեղամասային բժշկի, նյարդաբանի և վարակաբանի կողմից պոլիոմիելիտի կամ սուր թորշոմած կաթվածի դեպքի մինչև 15 տարեկան կոնտակտավորների շրջանում իրականացվում է բժշկական հսկողություն՝ 35 օր տևողությամբ: 7. Կազմակերպություններում մինչև 15 տարեկան կոնտակտավորների նկատմամբ բժշկական հսկողության, նրանց պատվաստման, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վիրուսաբանական հետազոտության նմուշառման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարը:	հիվանդանոց (բաժանմունք): Պոլիոմիելիտով հիվանդների կամ սուր թորշոմած կաթվածի դեպքերի հոսպիտալացման ուղեգրի ձևաթղթում, բացի անկետային տվյալներից նշվում են նաև հիվանդության առաջնային ախտանշանները, կաթվածի առաջացման ժամկետը, կանխարգելիչ պատվաստումների, կոնտակտավորների, հիվանդի պոլիոմիելիտի առումով անբարենպաստ տարածք մեկնելու, ինչպես նաև պոլիոմիելիտի առումով տեղաճարակային (էնդեմիկ) վայրերից կոնտակտավոր անձանց ժամանման վերաբերյալ տեղեկատվությունը: Ստացիոնարում հիվանդության պատմության «Համաճարակաբանական վերհուշ» բաժնում նշվում են հիվանդի կաթվածի առաջացման ժամկետը, կանխարգելիչ պատվաստումների, կոնտակտավորների, հիվանդի պոլիոմիելիտի առումով անբարենպաստ տարածք մեկնելու, ինչպես նաև պոլիոմիելիտի առումով տեղաճարակային (էնդեմիկ) վայրերից կոնտակտավոր անձանց ժամանման վերաբերյալ տեղեկատվությունը: Առանց տարիքային սահմանափակման, պոլիոմիելիտի հիվանդացման կամ դրա կասկածի, ինչպես նաև մինչև 15 տարեկան երեխաների մոտ սուր թորշոմած կաթվածի (ցանկացած նոզոլոգիական ձևի) յուրաքանչյուր դեպքի մասին կազմակերպությունների հայտնաբերող բուժանձնակազմի կողմից անմիջապես հեռախոսով տրվում է շտապ հաղորդում Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն (ըստ տարածքի), այնուհետև՝ 24 ժամվա ընթացքում ուղարկելով շտապ հաղորդման «Ձև ՇՀ 1» ձևը, բացառությամբ՝ «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցի, «Արմենիկում ԲԿ» ՓԲԸ-ի և Երևանի «Շտապ բժշկական օգնություն» պետական ՓԲԸ-ի, որոնք հաղորդում են «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ-ին: Առանց տարիքային սահմանափակման պոլիոմիելիտի հիվանդացման կամ դրա կասկածի, ինչպես նաև մինչև 15 տարեկան երեխաների մոտ սուր թորշոմած կաթվածի (ցանկացած նոզոլոգիական ձևի) յուրաքանչյուր դեպքի մասին նաև կատարվում է արտահերթ հաղորդում ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կենտրոնական ապարատ: ՀՀ Առողջապահության	

			նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության մարզային կամ տարածքային կենտրոնները կասկածելի դեպքի մասին անմիջապես հաղորդում են «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ: Վերջինս բաժնետիրական ընկերությունը հեռախոսով հաղորդում է Առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կենտրոնական ապարատ և Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության մարզային կամ տարածքային կենտրոն (ըստ բնակության վայրի): ՀՀ Առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կենտրոնական ապարատը հաղորդում է Առողջապահության համաշխարհային կազմակերպություն: Բոլոր կազմակերպություններում պոլիոմիելիտի կամ դրա կասկածի յուրաքանչյուր դեպք՝ առանց տարիքային սահմանափակման, ինչպես նաև մինչև 15 տարեկան երեխաների մոտ սուր թորշոմած կաթվածի դեպքերը (ցանկացած նոզոլոգիական ձևի) ենթակա են գրանցման և հաշվառման «Վարակիչ հիվանդությունների հաշվառման մատյանում»:	
267.	**«Հայաստանի Հանրապետությունում դիֆթերիայի համաճարակաբանական հսկողություն» ՍԿ N 3.1.1-013-10 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 31-Ն, ընդունված է՝ 14.12.2010, ուժի մեջ է՝ 11.02.2011* Հաստատում է ՀՀ-ում դիֆթերիայի համաճարակաբանական հսկողության (ՍԿ N 3.1.1-013-10) սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը:	1. Կարգավորում է դիֆթերիայով հիվանդների և հիվանդության կասկածով անձանց հայտնաբերումը, գրանցումը, հաշվառումն ու հսկումը, ինչպես նաև դիֆթերիայի դեմ կանխարգելիչ պատվաստումների կազմակերպումն ու իրականացումը: 2. Կոնտակտավորների շրջանում կանխարգելիչ պատվաստումների ենթակա են երեխաները և դեռահասները, որոնց մոտ հերթական պատվաստման կամ կրկնապատվաստման ժամանակն է: 3. Դիֆթերիայի ցանկացած ձևով հիվանդանալու փաստը չպատվաստված երեխաների և դեռահասների մոտ գնահատվում է որպես առաջին պատվաստում, մինչև հիվանդանալը մեկ պատվաստում ստացած անձանց մոտ՝ հիվանդացումը համարվում է որպես երկրորդ պատվաստում: Հետագա պատվաստումներն իրականացվում են համաձայն կանխարգելիչ պատվաստումների գործող օրացույցի: 4. Դիֆթերիայի դեմ պատվաստված (վերջին պատվաստումը, մեկ կամ մի քանի կրկնապատվաստում) մինչև 16 տարեկան երեխաները դիֆթերիայի թեթև ձևով, առանց բարդությունների, հիվանդանալու դեպքում՝ հիվանդությունից հետո ենթակա չեն լրացուցիչ պատվաստման: Նրանց հերթական տարիքային կրկնապատվաստումն իրականացվում է համաձայն պատվաստումների գործող օրացույցով սահմանված ինտերվալների: 5. Երկու և ավելի դեղաչափ պատվաստումներ ստացած երեխաները և դեռահասները, ինչպես նաև դիֆթերիայի ծանր ձևով հիվանդացած անձինք պատվաստվում են՝ ելնելով տարիքից և առողջական վիճակից, միանվագ 0.5 մլ, բայց ոչ շուտ, քան հիվանդությունից հետո 6 ամիս անց: Նրանց վերջին կրկնապատվաստումներն իրականացվում են համաձայն կանխարգելիչ պատվաստումների գործող օրացույցի: 6. Փակ տիպի կազմակերպություններում (հանրակացարան, մանկատուն, ծերանոց, գիշերօթիկ և այլն) անգինայով, հարնշիկային թարախակույտերով, ստենոզով ընթացող լարինգոտրախեիտներով հիվանդները ենթակա են հոսպիտալացման դիմելու առաջին օրը: 7. Մանկական նախադպրոցական կազմակերպություններում, դպրոցներում, դպրոց-ինտերնատներում, մանկատներում և առողջարարական կազմակերպություններում կոնտակտավորների հսկողությունը, կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են նշված կազմակերպությունների բժշկի և բուժքրոջ կողմից: Այդ կազմակերպություններում բուժաշխատողների բացակայության դեպքում աշխատանքներն իրականացվում են տվյալ կազմակերպությունը սպասարկող բուժկանխարգելիչ կազմակերպությունների կողմից:	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով բուժկանխարգելիչ կազմակերպությունների ղեկավարների կողմից ապահովվում է 12 ամսական (11 ամսական 29 օրական) երեխաների առնվազն 95%-ի ընդգրկվածություն երեք դեղաչափ պատվաստումներում, 23 ամսական 29 օրական երեխաների առնվազն 95%-ի ընդգրկվածություն 4 դեղաչափ պատվաստումներում և 6, 16, 26, 36, 46, 56 տարեկանների ընդգրկվածությունը յուրաքանչյուր տարիքային խմբում՝ առնվազն 90%:	• ՀՀ առողջապահության նախարարություն • Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ
268.	**«ՀՀ-ում կարմրուկի, կարմրախտի և բնածին կարմրախտային**	1. Կարգավորում է կարմրուկով, կարմրախտով և բնածին կարմրախտային համախտանիշով հիվանդների և հիվանդության կասկածով անձանց հայտնաբերումը, հաշվառումն ու հաշվետվության ներկայացումը, հակահամաճարակային միջոցառումների իրականացումը, կարմրուկի և կարմրախտի դեմ կանխարգելիչ պատվաստումների կազմակերպումն ու իրականացումը:	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման	• ՀՀ առողջապահության նախարարություն • Բժշկական օգնություն և սպասարկում

	համախտանիշի համաճարակաբանական հսկողություն» ՍԿ N 3.1.1-015-10 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման *N 30-Ն, ընդունված է՝ 14.12.2010, ուժի մեջ է՝ 11.02.2011* Հաստատում է ՀՀ-ում կարմրուկի, կարմրախտի և բնածին կարմրախտային համախտանիշի համաճարակաբանական հսկողության (ՍԿ N 3.1.1-015-10) սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը:	2. Կարմրախտի կասկածով կամ լաբորատոր հաստատված ախտորոշումով հղի կանանց բժշկական հսկողությունն իրականացվում է հղիության ողջ ընթացքում և հղիության ելքը (բնածին կարմրախտային համախտանիշ կամ անախտանիշ բնածին կարմրախտ կամ պտղի մահ բնածին կարմրախտային վարակից կամ ինքնաբեր վիժում կամ նորմալ երեխայի ծնունդ և այլն) գրանցվում է բժշկական փաստաթղթերում (հղիի հսկողության կամ հիվանդության պատմություն և այլն): 3. Բնածին կարմրախտային վարակով մինչև 12 ամսական երեխաները մեկուսացվում են մինչև կարմրախտի վիրուսազատման դադարումը (հետազոտությունները կատարվում են յուրաքանչյուր ամիս): 4. Կարմրուկով կամ կարմրախտով բոլոր հիվանդները, որոնք հայտնաբերվել են նախադպրոցական կամ դպրոցական կամ միջին կամ բարձրագույն ուսումնական կազմակերպություններում կամ մանկական հանգստյան և այլ կազմակերպություններում մեկուսացվում են ցանավորման սկզբից հաշված 4 օր՝ կարմրուկի և 7 օր՝ կարմրախտի դեպքում, իսկ կարմրուկի բարդությունների (թոքաբորբ) դեպքում՝ 10 օր տևողությամբ:	նպատակով բուժկանխարգելիչ կազմակերպությունների ղեկավարների կողմից ապահովվում է 1 տարեկան (23 ամսական 29 օրական) երեխաների առնվազն 95%-ի ընդգրկվածություն առաջին դեղաչափ պատվաստումներում և 6 տարեկան (6 տարեկան 11 ամսական 29 օրական) երեխաների առնվազն 95%-ի ընդգրկվածություն երկրորդ դեղաչափ պատվաստումներում:	իրականացնող կազմակերպություններ
269.	**«ՀՀ-ում կապույտ և հարկապույտ հազի համաճարակաբանական հսկողություն» ՍԿ N 3.1.1-012-10 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 30-Ն, ընդունված է՝ 14.12.2010, ուժի մեջ է՝ 11.02.2011* Հաստատում է ՀՀ-ում կապույտ և հարկապույտ հազի համաճարակաբանական հսկողության (ՍԿ N 3.1.1-012-10) սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը:	1. Կարգավորում է կապույտ և հարկապույտ հազով հիվանդների և հիվանդության կասկածով անձանց հայտնաբերումը, գրանցումը, հաշվառումն ու հսկումը, կապույտ հազի դեմ կանխարգելիչ պատվաստումների կազմակերպումն ու իրականացումը: 2. Կապույտ և հարկապույտ հազի վաղ հայտնաբերման նպատակով 7 օր և ավելի հազ ունեցող յուրաքանչյուր երեխա ուղեգրվում է երկնվագ մանրէաբանական հետազոտության (2 օր անընդմեջ կամ օրը մեջ)՝ սահմանելով բժշկական հսկողություն, ծննդատանը (բաժանմունք), մանկական հիվանդանոցում (բաժանմունք), առողջարանում, մանկական նախադպրոցական և հատուկ կրթական կազմակերպությունում, դպրոցում աշխատող յուրաքանչյուր մեծահասակ ուղեգրվում է երկնվագ մանրէաբանական հետազոտության (2 օր անընդմեջ կամ օրը մեջ), եթե հազը տևում է 7 օր և ավելի, համապատասխանում է կապույտ հազի կասկածելի դեպքի բնորոշմանը, առկա է շփման փաստ կապույտ հազով հիվանդի հետ: 3. Կլինիկորեն չճշտված դեպքերի ախտորոշման նպատակով և մանրէաբանական հաստատման բացակայության դեպքում երեխաները և մեծահասակները հետազոտվում են շճաբանական (ագլյուտինացիայի ռեակցիա, պասիվ հեմոագլյուտինացիայի ռեակցիա, իմունոֆերմենտային անալիզ և այլն) մեթոդով: 4. Պարտադիր հոսպիտալացման ենթակա են երեխաները՝ կյանքի առաջին ամիսների ընթացքում, 5-6 ամսականից բարձր երեխաները՝ հիվանդության ծանր ընթացքի, ուղեկցող հիվանդությունների (առաջնահերթ ծննդաբերական էնցեֆալոպաթիա, ցնցումային համախտանիշ, խոր անհասություն, թերաճ 2-3-րդ աստիճանի, սրտի բնածին արատ, քրոնիկական թոքաբորբ, բրոնխիալ ասթմա), կապույտ հազի և սուր շնչական վիրուսային և այլ վարակների համակցված ընթացքի դեպքերում, փակ մանկական կազմակերպությունների սաները (մանկատներ, հատուկ կրթական, գիշերօթիկ և այլն): 5. Կյանքի առաջին տարում կապույտ կամ հարկապույտ հազով հիվանդ կամ դրա կասկածով երեխաները մեկուսացվում են բոքսային բաժանմունքներում, ավելի բարձր տարիքի անձինք մեկուսացվում են ինֆեկցիոն հիվանդանոցի (բաժանմունքի) առանձին հիվանդասենյակներում՝ ապահովելով նրանց մեկուսացումն այլ վարակիչ հիվանդներից: 6. Կապույտ հազով բոլոր հիվանդները (երեխաներ և մեծահասակներ), որոնք հայտնաբերվել են մանկական նախադպրոցական կազմակերպություններում, մանկական առողջարաններում, ամառային հանգստյան կազմակերպություններում, ծննդատներում, հիվանդանոցների մանկական բաժանմունքներում, դպրոցներում, հատուկ կրթական և գիշերօթիկ դպրոցներում ենթակա են մեկուսացման հիվանդության սկզբից հաշված 5 օր տևողությամբ հակաբիոտիկային բուժում ստանալու դեպքում, իսկ հակաբիոտիկային բուժման բացակայության դեպքում մեկուսացվում են հիվանդության սկզբից 3 շաբաթ տևողությամբ: 7. Կապույտ հազով հիվանդների մոտ բուժումից հետո մանրէաբանական հետազոտություններ չեն իրականացվում: Բացառություն են կազմում փակ մանկական կազմակերպություններից հոսպիտալացված երեխաները, որոնք դուրս են գրվում մանրէաբանական հետազոտության 2 բացասական արդյունքի դեպքում: 8. Կապույտ հազով հիվանդի հետ շփված մինչև 7 տարեկան երեխաները, որոնք չեն հիվանդացել կապույտ հազով, անկախ պատվաստումային կարգավիճակից, հազի առկայության դեպքում մեկուսացվում են տանը: Թույլատրվում է հաճախել կազմակերպություն կլինիկական առողջացումից հետո՝ երկնվագ մանրէաբանական հետազոտության բացասական արդյունքներից հետո: 9. Կապույտ հազով հիվանդի հետ սերտ շփված մինչև 7 տարեկան երեխաները, ովքեր չեն ստացել կապույտ հազի բաղադրիչ պարունակող պատվաստանյութ կամ ունեն թերի պատվաստումային կարգավիճակ, 21 օր տևողությամբ չեն թույլատրվում հաճախել մանկական նախադպրոցական կազմակերպություն և դպրոց կամ 5 օր տևողությամբ, եթե նշված ժամկետում ստանում են հակաբիոտիկային բուժում: 10. Կապույտ հազով հիվանդի հետ սերտ շփված մինչև 7 տարեկան երեխաները, ովքեր չեն ստացել կապույտ հազի բաղադրիչ պարունակող պատվաստանյութի 4 դեղաչափ կամ 1 դեղաչափ վերջին 3 տարվա ընթացքում, շփումից անմիջապես հետո պատվաստվում են կապույտ հազի բաղադրիչ պարունակող պատվաստանյութի 1 դեղաչափով:	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով բուժկանխարգելիչ կազմակերպությունների ղեկավարների կողմից ապահովվում է 12 ամսական (11 ամսական 29 օրական) երեխաների առնվազն 95%-ի ընդգրկվածություն երեք դեղաչափ պատվաստումներում և 23 ամսական 29 օրական երեխաների առնվազն 95%-ի ընդգրկվածություն 4 դեղաչափ պատվաստումներում:	• ՀՀ առողջապահության նախարարություն • Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ

		11. Կապույտ հազով հիվանդի օջախում մինչև 1 տարեկան երեխաներին և 37-40 շաբաթական հղիությամբ հղիներին (նորածնին վարակի փոխանցման ռիսկի պատճառով), անկախ տարիքից և պատվաստումային կարգավիճակից, իրականացվում է հակաբիոտիկային կանխարգելիչ բուժում էրիթրոմիցինով, կլարիթրոմիցինով կամ ազիթրոմիցինով, 7 օր տևողությամբ: 12. Կապույտ հազով հիվանդի հետ շփված և մանկական նախադպրոցական կազմակերպություններում, մանկատներում, ծննդատներում, հիվանդանոցների մանկական բաժանմունքներում, մանկական առողջարանային և ամառային հանգստի, հատուկ կրթական կազմակերպություններում, հանրակրթական և գիշերօթիկ դպրոցներում մեծահասակները, հազի առկայության դեպքում մեկուսացվում են աշխատանքից և թույլատրվում են աշխատանքի երկնվագ մանրէաբանական հետազոտության բացասական արդյունքներից հետո (անընդմեջ կամ 2 օր ընդմիջումով): 13. Կապույտ հազով հիվանդների տանը բուժման դեպքում մինչև 7 տարեկան կոնտակտավորների նկատմամբ սահմանվում է բժշկական հսկողություն հիվանդի 5 օր հակաբիոտիկային բուժումից, կլինիկական ապաքինումից, 2 բացասական մանրէաբանական հետազոտությունների արդյունքներից հետո ևս 5 օր տևողությամբ, եթե հիվանդը հակաբիոտիկային բուժում է ստացել, իսկ եթե չի ստացել կամ կիսատ է ստացել հակաբիոտիկային բուժումը, սահմանվում է բժշկական հսկողություն կլինիկական ապաքինումից և 2 բացասական մանրէաբանական հետազոտությունների արդյունքներից հետո ևս 21 օր տևողությամբ:		
270.	**«Աղիքային վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողություն» N 3.1.1.-027-2013 սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը հաստատելու և ՀՀ առողջապահության նախարարի 2003 թվականի մայիսի 15-ի N 348 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 14-Ն, ընդունված է՝ 09.04.2013, ուժի մեջ է՝ 12.05.2013* Հաստատում է աղիքային վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական հսկողության (N 3.1.1.-027-2013) սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը, 0-3 տարեկան երեխայի առողջական վիճակի դիտարկման մատյանը, կենսաբանական նյութի նմուշառմանը և մանրէաբանական հետազոտության համար լաբորատորիա տեղափոխմանը ներկայացվող պահանջները, նմուշառված կենսաբանական նյութի (կղանք, արյուն, մեզ, լեղի, փսխման զանգված, ստամոքսի լվացման ջրեր), դիակային նյութի աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչների նկատմամբ լաբորատոր հետազոտության ուղեգիրը, աղիքային վարակիչ հիվանդություններով հիվանդների հոսպիտալացման ցուցումները, հիվանդանոցային և արտահիվանդանոցային ձևերով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից	1. Սահմանում է աղիքային վարակիչ հիվանդություններով հիվանդների հայտնաբերմանը, ախտորոշմանը, դեպքերի հաշվառմանը և հաշվետվությանը, հիվանդների հոսպիտալացմանը, հիվանդության օջախում իրականացվող միջոցառումներին, հիվանդանոցից հիվանդի դուրս գրմանը, շարունակական (դիսպանսեր) հսկողությանը, աղիքային վարակիչ հիվանդություններից առողջացածներին, վարակակիրներին աշխատանքի և ուսման վայր թույլատրելուն ներկայացվող պահանջները: 2. Նախադպրոցական ուսումնական հաստատություն, մանկատուն, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, առողջարանային-վերականգնողական հաստատություն հաճախող մինչև 3 տարեկան երեխաների շրջանում աղիքային վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման նպատակով տվյալ հաստատության բուժաշխատողի կողմից իրականացվում է երեխայի ընդհանուր վիճակի, կղանքի բնույթի և հաճախականության վերաբերյալ ամենօրյա առավոտյան հարցում, օրվա ընթացքում երեխայի առողջական վիճակի շարունակական դիտարկում, հարցման, դիտարկման արդյունքների արձանագրում «0-3 տարեկան երեխայի առողջական վիճակի դիտարկման մատյան»-ում: 3. Աղիքային վարակիչ հիվանդություններին բնորոշ գանգատներով երեխաներն անհապաղ մեկուսացվում են և ենթարկվում տվյալ հաստատության բժշկի կողմից հսկողության: Անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է կղանքի նմուշառում՝ լաբորատոր (մանրէաբանական, վիրուսաբանական, մակաբուծաբանական) հետազոտություններ իրականացնելու նպատակով: Ցուցման դեպքում երեխան հոսպիտալացվում է: 4. Մանկատներ, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ հաճախող երեխաները, երեխաների և մեծահասակների շուրջօրյա կեցությամբ այլ փակ տիպի կազմակերպություններում գտնվող և մանրէաբանական հետազոտության արդյունքում հաստատված շիգելլոզով հիվանդները հիվանդանոցից դուրս են գրվում կլինիկական առողջացումից և պատճառագիտական բուժման ավարտից 2 օր հետո 1-2 օր ընդմիջումով վերցված կղանքի նմուշների 2 մանրէաբանական հետազոտության բացասական պատասխանից հետո, իսկ նշված քանակակազմին չպատկանող մյուս հիվանդները՝ կլինիկական առողջացումից ու պատճառագիտական բուժման ավարտից 2 օր հետո վերցված կղանքի նմուշի 1 մանրէաբանական հետազոտության բացասական պատասխանից հետո: 5. Դիսպանսեր հսկողության ենթակա են շիգելլոզով հիվանդացած նախադպրոցական ուսումնական հաստատություններ, մանկատներ, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, առողջարանային-վերականգնողական կազմակերպություններ հաճախող երեխաները, ինչպես նաև շուրջօրյա կեցությամբ այլ փակ տիպի կազմակերպություններում գտնվող անձինք (վարակակիրները) 3 ամիս տևողությամբ՝ ամիսը մեկ անգամ բժշկի զննմամբ և կղանքի մանրէաբանական հետազոտությամբ: 6. Նախադպրոցական ուսումնական հաստատություններ, մանկատներ, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, առողջարանային-վերականգնողական կազմակերպություններ հաճախող երեխաները, ինչպես նաև շուրջօրյա կեցությամբ այլ փակ տիպի կազմակերպություններում գտնվող անձինք (վարակակիրները), ովքեր տառապում են քրոնիկ շիգելլոզով, ենթարկվում են դիսպանսեր հսկողության 6 ամիս տևողությամբ՝ ամենամսյա կլինիկական և կղանքի մանրէաբանական հետազոտությամբ: 7. Աղիքային վարակիչ հիվանդություններով հիվանդացած կամ վարակակիր, առողջարանային-վերականգնողական, ուսումնական հաստատություններ, մանկատներ, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ հաճախող երեխաներին, ինչպես նաև շուրջօրյա կեցությամբ այլ փակ տիպի կազմակերպություններում գտնվող երեխաներին և մեծահասակներին թույլատրվում է աշխատել կամ հաճախել այդ կազմակերպություններ հիվանդանոցից դուրս գրվելուց հետո կատարված լաբորատոր հետազոտությունների բացասական արդյունքի դեպքում: 8. Հանրակրթական ուսումնական հաստատություններ հաճախող չհոսպիտալացված վարակակիր երեխաներին թույլատրվում է հաճախել ուսումնական հաստատություններ՝ մինչև վարակակրության ավարտը բացառելով վարակակիր երեխաների մասնակցությունը սննդամթերքի պատրաստման, փոխադրման և բաշխման, ինչպես նաև խմելու ջրի հետ կապված աշխատանքներին: 9. Նախադպրոցական տարիքի վարակակիր երեխաները ենթարկվում են հիվանդանոցային պայմաններում հետազոտության և բուժման: 10. Նախադպրոցական տարիքի վարակակիր երեխաներին թույլատրվում է հաճախել նախադպրոցական ուսումնական հաստատություն լաբորատոր հետազոտությունների բացասական արդյունքի դեպքում: 11. Հոսպիտալացման համաճարակաբանական ցուցումներն են՝ աղիքային վարակիչ հիվանդություն կամ մանրէակրություն նախադպրոցական ուսումնական հաստատություն հաճախող երեխաների հետ, աղիքային վարակիչ հիվանդություններ կամ մանրէակրություն այն անձանց մոտ (մեծեր և երեխաներ), ովքեր գտնվում են փակ տիպի կազմակերպություններում, ընտանիքում մի	Աղիքային վարակիչ հիվանդություններին առնչվող բոլոր բժշկական տվյալները՝ ներառյալ համաճարակաբանական վերհուշը (անամնեզը), գրանցվում են հիմնական բժշկական փաստաթղթերում՝ հիվանդանոցային և արտահիվանդանոցային ձևերով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների պրոֆիլին համապատասխան («Ամբուլատոր հիվանդի բժշկական քարտ», «Երեխայի բուժհսկողության քարտ», «Հիվանդության պատմություն» և այլն):	• ՀՀ առողջապահության նախարարություն • Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ • Առողջարանային-վերականգնողական հաստատություններ • Ուսումնական հաստատություններ • Մանկատներ • Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ

	աղիքային վարակիչ հիվանդությունների կասկածելի/հաստատված դեպքերի, վարակակիրների օջախներում իրականացվող միջոցառումների ալգորիթմը, բակային համայցի մատյանը, բակային համայցի մասին հաղորդման թերթիկը և աղիքային վարակիչ հիվանդությամբ հիվանդի հետ շփված բուժանձնակազմի առողջության մոնիթորինգի թերթիկը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ առողջապահության նախարարի 2003 թվականի մայիսի 15-ի N 348 հրամանը:	քանի երեխաների առկայություն (եթե անհնարին է երեխայի համապատասխան մեկուսացումը), կազմակերպ օջախում՝ մանկական կոլեկտիվում (մանկատուն, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն և այլն) երեխայի գտնվելը:		
271.	**«Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի համաճարակաբանական հսկողության N 3.1.1-010-08 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 14-Ն, ընդունված է՝ 09.04.2013, ուժի մեջ է՝ 12.05.2013* Հաստատում է տուբերկուլոզի համաճարակաբանական հսկողության (N 3.1.1-010-08) սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը:	1. Կարգավորում է տուբերկուլոզի դեպքերի հայտնաբերման, ախտորոշման, դեպքերի վարման, շարունակական հսկողության, տուբերկուլոզի դեմ պատվաստումների, տուբերկուլոզի օջախների համաճարակաբանական հետազոտության, կոնտակտավորների հսկողության, բուժման, կանխարգելման, առողջարանային բուժման, հակատուբերկուլոզային բուժկանխարգելիչ կազմակերպությունների տեղակայմանը, կառուցվածքին, շրջակա միջավայրի գործոնների բացասական ազդեցության կանխարգելմանը, սարքավորումների շահագործմանը ներկայացվող հիգիենիկ պահանջների և սանիտարահակահամաճարակային ռեժիմի և այլ հարցեր, որոնք ուղղված են տուբերկուլոզի համաճարակաբանական հսկողության ապահովմանը: 2. Տուբերկուլինային մաշկային փորձը համարվում է դրական՝ 10 մմ և ավելի չափով ինֆիլտրատի (պապուլա) առկայության դեպքում (օտարերկրյա քաղաքացիներ, որոնց ծննդավայրում տուբերկուլոզը լայն տարածում ունի, արգելված դեղամիջոցներ ներարկող անձինք, որոնք ՄԻԱՎ բացասական են, ցածր եկամուտ ունեցող անձինք, հատուկ հաստատություններում բնակվող անձինք՝ ծերանոցներ, ազատազրկման վայրեր և այլն, առողջական խնդիրներով անձինք (շաքարային դիաբետ, երիկամային ախտաբանությամբ, 4 տարեկանից ցածր տարիքի երեխաներ): 3. Տուբերկուլինային մաշկային փորձը համարվում է հիպերէրգիկ ռեակցիա՝ երեխաների և դեռահասների մոտ համարվում է 17 մմ և ավելի չափով ինֆիլտրատը, մեծահասակների մոտ 21 մմ և ավելի, ինչպես նաև վեզիկուլո-նեկրոտիկ ռեակցիաները, անկախ ինֆիլտրատի (լիմֆանգիոմայով կամ առանց դրա) չափերից) տուբերկուլոզի նկատմամբ ռիսկի գործոններ չունեցող անձինք): . 4. Երեխաների և դեռահասների մոտ տուբերկուլինային մաշկային փորձի արդյունքները, որոնք հաճախում են մանկական կազմակերպություններ (մսուր, մանկապարտեզ, դպրոց) գրանցվում են Կանխարգելիչ պատվաստումների քարտում) 063/հ և երեխայի զարգացման քարտում (ձև 112/հ,) կամ 026/հ՝ նշելով տուբերկուլինի արտադրող կազմակերպության, երկրի անվանումը, սերիան, հսկման համարը և պիտանելիության ժամկետը, տուբերկուլինի մաշկային փորձի ամսաթիվը, աջ կամ ձախ ձեռքի վրա, արդյունքները՝ մմ-երով: 5. Առաջնային վարակվածությունը հայտնաբերվում է այն երեխաների մոտ, որոնք չունեն կամ ունեն փոքր հետպատվաստումային մաշկային նշաններ (2-3 մմ), որոնց մոտ թույլ է արտահայտված պատվաստումային իմունիտետը: Նրանք տուբերկուլինային մաշկային փորձի գնահատումից հետո 6 օրվա ընթացքում ուղարկվում են տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ՝ ֆթիզիատորի խորհրդատվության: Երեխաներին չի թույլատրվում հաճախել մանկական և դեռահասների կազմակերպություն, եթե չեն ներկայացնում 1 ամսվա ընթացքում տեղեկանք՝ տուբերկուլոզի բացառման մասին: 6. Առողջարանային պայմաններում կարող է կազմակերպվել տուբերկուլոզով հիվանդ, կոնտակտավոր և տուբերկուլինադիագնոստիկայի արդյունքում հայտնաբերված վարակված երեխաների կանխարգելիչ, պահպանողական կամ վերականգնողական բուժումը: 7. Տուբերկուլոզով հիվանդների պահպանողական կամ վերականգնողական բուժումը, ինչպես նաև կոնտակտավոր և տուբերկուլինադիագնոստիկայի արդյունքում հայտնաբերված վարակված երեխաների կանխարգելիչ բուժումն ուղեկցվում է վերջիններիս շրջանում բժշկահիգիենիկ գիտելիքների տարածմամբ: Այդ մասին կատարվում է գրառում հիվանդության պատմության մեջ: 8. Տուբերկուլոզով հիվանդի օջախի մինչև 15 տարեկան կոնտակտավոր երեխաներին նշանակվում է կանխարգելիչ բուժման կուրս իզոնիազիդով, 3 ամիս տևողությամբ՝ ըստ «ԴՈՏՍ» ռազմավարության սխեմաների, այնուհետև կատարվում է տուբերկուլինային փորձ և բացասական արդյունքի դեպքում բուժումը դադարեցվում է, դրական արդյունքի դեպքում շարունակվում է կանխարգելիչ բուժումը՝ ևս 3 ամիս: 9. Երկրորդ փուլով դուրսգրման ենթակա երեխաներին (նորածնային ինտենսիվ բուժման և վերակենդանացման բաժանմունքի) պատվաստում են դուրսգրումից առաջ: 10. Առողջության առաջնային պահպանման կազմակերպություններում պատվաստվում են մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում տուբերկուլոզի դեմ չպատվաստված նորածինները, տնային պայմաններում ծնված երեխաները 1-6 ամսվա ընթացքում, ինչպես նաև ԲՑԺ-ի կրկնապատվաստման ենթակա 7 տարեկան հետպատվաստումային սպի չունեցող երեխաները:	Տուբերկուլինային մաշկային փորձի միջոցով հայտնաբերվում է ինչպես վարակվածությունը, այնպես էլ հետպատվաստումային ալերգիան: Առաջնային վարակվածության և հետպատվաստումային ալերգիայի միջև տարբերակիչ ախտորոշման նպատակով, երեխայի բժշկական փաստաթղթերը ներկայացվում է բժիշկ-ֆթիզիատորին՝ մանրամասն գրանցելով ԲՑԺ պատվաստումների և կրկնապատվաստումների ստույգ տվյալները՝ կատարման ամսաթիվը, սերիան, արտադրող երկիրը և արդյունքները: Տուբերկուլոզին առնչվող բոլոր բժշկական տվյալները՝ ներառյալ համաճարակաբանական վերհուշության (անամնեզի), գրանցվում են հիմնական բժշկական փաստաթղթերում՝ բուժկանխարգելիչ կազմակերպության պրոֆիլին համապատասխան. («Ամբուլատոր հիվանդի բժշկական քարտ», «Երեխայի բուժհսկողության քարտ», «Ստացիոնար հիվանդի բժշկական քարտ» և այլն): Առաջնային օղակի մասնագետները (տեղամասային թերապևտ, տեղամասային մանկաբույժ, ընտանեկան բժիշկ, տեղամասային բուժքույր, ընտանեկան բուժքույր, բուժակ-մանկաբարձական կետի բուժքույր և այլն) տեղեկատվություն են ներկայացնում տարածաշրջանի պոլիկլինիկայի տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ իրենց կողմից սպասարկվող բնակչության մեջ տուբերկուլոզի կասկած հարուցող անձանց (օրինակ՝ ազատազրկման վայրերից, արտագնա աշխատանքից վերադարձածներ և այլն) մասին՝ վերջիններիս կանխարգելիչ բժշկական զննությունները կազմակերպելու և իրականացնելու համար:	• ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության պետ, Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ղեկավար • «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար • ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պետ • ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար

		11. Հակատուբերկուլոզային հիվանդանոցում դեղորայքակայուն, բացիլազատ ձևերով տառապող, ինչպես նաև ախտորոշման համար ընդունված հիվանդների հիվանդասենյակները ունենում են կիսաբոքսերի կառուցվածք: Բաժանմունքներում նախատեսվում են հիվանդասենյակներ կամ կիսաբոքսեր երեխայի և մոր շուրջօրյա մնալու համար՝ անցախցով, սանհանգույցով: 12. Կիսաբոքսը նախատեսվում է 1-2 մահճակալի համար, ապահովվում է սանհանգույցով՝ իր ցնցուղով: 1 մահճակալով կիսաբոքսը ունենում է 12մ2, 2 մահճակալով կիսաբոքսը՝ 20մ2 , երեխայի և մոր շուրջօրյա մնալու կիսաբոքսը՝ 20 մ2 մակերես: 13. Մինչև 7 տարեկան երեխաների հիվանդասենյակները ունենում են ապակեպատ միջնապատեր: 14. Թոքային ոչբացիլազատ և արտաթոքային ձևերով տառապող հիվանդների բաժանմունքներում հիվանդասենյակները լինում են 1-3 տեղանոց՝ անցախցով կամ սանհանգույցով և անցախցով: Նշված հիվանդսսենյակներում 1 մահճակալի համար ապահովվում է՝ մեծերի հիվանդասենյակներում -7.5 մ2 , երեխաների հիվանդասենյակներում- 6.5 մ2 մակերես: 15. Հակատուբերկուլոզային բուժօգնություն և սպասարկում իրականացնող ԲԿԿ-ներում հիվանդասենյակների սենքերի օդի օպտիմալ ջերմաստիճանը նորածնային և մանկական տարիքի երեխաների համար՝ ցուրտ և անցումային եղանակներին՝ 21-25oC է, իսկ տաք եղանակների համար՝ 22-26oC: 16. Տուբերկուլինային մաշկային փորձը չի իրականացվում տանը, ինչպես նաև բուժկետ չունեցող մանկական և դեռահասների կազմակերպություններում: 17. Նորածինների տուբերկուլոզի դեմ կանխարգելիչ պատվաստումները կազմակերպվում և իրականացվում են մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում 18. Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարում պատվաստումներն իրականացվում են պատվաստումների սենյակում: Հիվանդասենյակում պատվաստումներն իրականացվում են բժշկի ներկայությամբ՝ օգտագործելով պատվաստումների շարժական սեղանը, որի նախապատրաստումն իրականացվում է պատվաստումների սենյակում: Նախապես պատվաստանյութը չի հավաքվում ներարկիչներում: Սեղանին դրվում են բամբակ, սպիրտ կամ թորած ջուր, ներարկիչներ, սառնարան-պայուսակ, անվտանգ այրման տուփ: 19. Նորածիններին ԲՑԺ պատվաստումներն իրականացվում են կյանքի առաջին 24-48 ժամվա ընթացքում: Դուրսգրումն իրականացվում է պատվաստումից 1 ժամ հետո՝ ռեակցիայի բացակայության դեպքում: Պատվաստումները հակացուցված են, եթե նորածինների մոտ առկա են սուր հիվանդություն և/կամ ցածր քաշ՝ մինչև 1700գ: 20. Իոնիզացնող ճառագայթման աղբյուրների հետ աշխատանքների իրականացմամբ (ռենտգեն ախտորոշիչ կաբինետ և այլն) սենքերը չեն տեղակայում տուբերկուլոզով հիվանդ հղիների և մանկական հիվանդասենյակներին հարակից (հորիզոնական և ուղղահայաց) տարածքներում: 21. Խաղալիքներն ախտահանվում են ամեն օր, հատուկ պիտակավորված ամանի մեջ եռացնելով և ախտահանիչ լուծույթով: Մանկական բաժանմունքում թույլատրվում է օգտագործել միայն նոր խաղալիքներ, որոնք պատրաստված են ռետինից, պլաստմասսայից կամ փայտից և հեշտ լվացվում ու ախտահանվում են: Խաղալիքներն առանց նախնական ախտահանման չեն վերադարձվում ծնողներին, հարազատներին և այդ մասին նախօրոք տեղյակ է պահվում նրանց: 22. Հիվանդի հետ սերտ շփված մինչև 18 տարեկան անձանց շրջանում իրականացվում է տուբերկուլինային մաշկային փորձ: 23. Հիվանդի հետ շփված անձանց շրջանում տուբերկուլոզային վարակի հայտնաբերման նպատակով իրականացվում է՝ 0-18 տարեկաններին տուբերկուլինային փորձ, մեծահասակներին՝ ռենտգենաբանական (ֆլյուորոգրաֆիկ) հետազոտություն, խորխի առկայության դեպքում՝ խորխի եռակի մանրադիտակային հետազոտություն:	Բոլոր բուժկանխարգելիչ կազմակերպություններում, այդ թվում՝ տարածաշրջանային պոլիկլինիկաներում, բժշկական ամբուլատորիաներում, առողջության կենտրոններում, ընտանեկան բժշկի գրասենյակներում և բուժակ-մանկաբարձական կետերում տուբերկուլոզի կասկածելի դեպքերը ենթարկվում են հաշվառման:	
272.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում չարորակ նորագոյացություններով հիվանդների հետազոտության, բժշկական օգնության և սպասարկման, դիսպանսերային (շարունակական) հսկողության ծառայության կազմակերպման և կազմակերպամեթոդական աշխատանքների իրականացման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 73-Ն, ընդունված է՝ 18.11.2013, ուժի մեջ է՝ 25.01.2014* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման	1. Առողջության առաջնային պահպանման համակարգում երեխաների ուռուցքաբանական խորհրդատվությունը և բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններում՝ տեղամասային մանկաբույժի (ընտանեկան բժշկի) ուղեգրմամբ, պետական պատվերի ծավալներով սահմանված պարտադիր նեղ մասնագետների և համապատասխան հետազոտությունների հնարավորության բացակայության դեպքում, երեխաների բժշկական օգնությունն ու սպասարկումը պայմանագրային հիմունքներով կազմակերպվում է համապատասխան լիցենզիա ունեցող այլ բժշկական կազմակերպությունների կամ մասնագետների միջոցով: Մասնագիտական խորհրդատվություն և տարբերակիչ ախտորոշում պահանջող դեպքերում պետական պատվերի շրջանակներում երեխաների ուռուցքաբանական խորհրդատվությունը կարող է կազմակերպվել նաև հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների մանկական նեղ մասնագիտացված և/կամ արտահիվանդանոցային ծառայությունների միջոցով՝ տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության ուղեգրմամբ: Լաբորատոր-գործիքային հետազոտությունների կրկնումից խուսափելու նպատակով ուղեգրին կցվում են ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունում կատարած լաբորատոր-գործիքային հետազոտությունների արդյունքները և/կամ քաղվածքը երեխայի բժշկական հսկողության քարտից: 2. Սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում չընդգրկված 7-18 տարեկան երեխաների պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում չարորակ նորագոյացությունների (այդ թվում՝ օնկոհեմատոլոգիական) բժշկական օգնությունը և սպասարկումը ներառում է անվճար կամ արտոնյալ պայմաններով: 3. Չարորակ նորագոյացություններով հիվանդների դեղերով ապահովումն իրականացվում է մասնագիտացված դիսպանսերային և ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների ուռուցքաբանական կաբինետների բժիշկների, վերջինների բացակայության դեպքում՝ տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի և ընտանեկան բժշկի կողմից:	Եթե հիվանդը բուժվել է հիվանդանոցային բժշկական կազմակերպությունում, ապա դուրս գրվելուց հետո հիվանդի՝ մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտի/երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտի մեջ փակցվում է հիվանդանոցային բժշկական կազմակերպության կողմից տրված էպիկրիզը: Դիսպանսերը իրականացնում է իր սպասարկման տարածքում մշտապես բնակվող ուռուցքաբանական հիվանդների (երեխաների և մեծահասակների) հաշվառում, վիճակագրական տվյալների ամփոփումը և տարեկան հաշվետվությունների ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն: Չարորակ նորագոյացությունների՝ պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում է 7-18 տարեկան	• Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների ուռուցքաբանական կաբինետներ • Ուռուցքաբանական մասնագիտացված դիսպանսերներ • Ուռուցքաբանական մասնագիտացված հիվանդանոցների արտահիվանդանոցային ծառայություններ/դիսպանսերային ծառայություն/ • Պոլիկլինիկաների ուռուցքաբանական կաբինետներ և առողջության առաջնային պահպանման գործառույթ իրականացնող բժիշկներ • «Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ

	շրջանակներում չարորակ նորագոյացություններով հիվանդների հետազոտության, բժշկական օգնության և սպասարկման, դիսպանսերային (շարունակական) հսկողության ծառայության կազմակերպման և կազմակերպամեթոդական աշխատանքների իրականացման չափորոշիչը:		երեխաների՝ անհետաձգելի հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում պահանջող դեպքերում՝ շտապ բժշկական օգնության ծառայության ուղեգրով կամ հիվանդանոցային օգնություն իրականացնող բժշկական կազմակերպության ընդունարանի (հերթապահ) բժշկի եզրակացությամբ:	
273.	**«Երեխաների և դեռահասների համար նախատեսված տպագիր գրքերին և տպագրական արդյունաբերության այլ արտադրատեսակներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.007-14 սանիտարական կանոններ և նորմերը հաստատելու և ՀՀ առողջապահության նախարարի 2007 թվականի փետրվարի 6-ի N 195-Ն հրաման ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 50-Ն, ընդունված է՝ 11.07.2014, ուժի մեջ է՝ 25.08.2014* Հաստատում է «Երեխաների և դեռահասների համար նախատեսված տպագիր գրքերին և տպագրական արդյունաբերության այլ արտադրատեսակներին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.007-14 սանիտարական կանոններ և նորմերը: Ուժը կորցրած է ճանաչում ՀՀ առողջապահության նախարարի 2007 թվականի փետրվարի 6-ի N 195-Ն հրամանով հաստատված N 2-III-3.4.06-05 սանիտարական կանոնները:	1. Այն տպագիր արտադրատեսակները, որոնք նախատեսված են 2 կամ 3 տարիքային խմբերի համար, պետք է համապատասխանեն «ընթերցողի հասցեում» նշված ամենափոքր տարիքային խմբի համար սահմանված պահանջներին: 2. Տպագիր արտադրատեսակները անկախ օգտվողի տեսակից և տարիքից պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին. տպագիր արտադրատեսակների պատրաստման համար չի թույլատրվում լրագրային թղթի օգտագործումը՝ բացառությամբ այն տպագիր արտադրատեսակների, որոնք նախատեսված չեն կրկին օգտագործման համար (քննական տոմսեր, առաջադրանք պարունակող թերթիկներ, թեստային խնդիրներ, խաչբառեր), տպագիր արտադրատեսակների համար չի թույլատրվում նեղ նկարվածքով տպատառի օգտագործումը, տառային, թվային և քիմիական ֆորմուլաներ կազմելու ժամանակ ֆորմուլաների հիմնական տարրերի տպատառի կեգելը կարող է 2 պունկտով ավելի փոքր լինել հիմնական տեքստի տպատառի կեգելից, իսկ ֆորմուլաների օժանդակ տարրերի տպատառի կեգելը պետք է լինի 6 պունկտից ոչ պակաս, հրատարակության բացված զույգ էջերի միջև լուսանցքը պետք է լինի 26մմ-ից ոչ պակաս, էջերի լուսանցքներում թույլատրվում է տեղադրել պայմանական նշաններ, ցուցադրական պատկերներ և 50 նիշից ոչ ավելի ծավալով տեքստեր՝ հիմնական շարվածքից 5մմ-ից ոչ պակաս հեռավորության վրա, գունավոր կամ գորշ ֆոնի վրա և (կամ) բազմագույն պատկերազարդ ֆոնի վրա տեքստի տպագրման ժամանակ ֆոնի օպտիկական խտությունը պետք է լինի 0.3-ից ոչ ավելի, իսկ նեգատիվային տպատառերով տպագրման ժամանակ՝ 0.4-ից ոչ պակաս, չի թույլատրվում տեքստը տպագրել ոչ հստակ տպատառերով, ինչպես նաև նախադպրոցական և տարրական դպրոցի տարիքի երեխաների համար նախատեսված տպագիր արտադրատեսակներում բառերի միջև հեռավորությունը պետք է հավասար լինի տպատառի կեգելին: 3. Գրական-գեղարվեստական, զարգացնող ուսուցման, լրացուցիչ կրթության համար և գիտահանրամատչելի հրատարակությունների տեքստերում խորհուրդ չի տրվում օգտագործել գունավոր ներկեր և նեգատիվային տպատառեր: 4. Հրատարակություններում գունավոր ներկերով գունավոր ֆոնի վրա տպագրման ժամանակ տպատառի կեգելը պետք է լինի 20 պունկտից ոչ պակաս, իսկ տեքստի ծավալը՝ 200 նիշից ոչ ավելի: 5. Տպագիր արտադրատեսակների տառատեսակային ձևավորման չափորոշիչները սահմանվում են Դիդո տիպոմետրիկ համակարգի համաձայն: 6. Տպագիր արտադրատեսակների անվտանգությունը գնահատվում է ըստ տեքստի տառատեսակային ձևավորման (մեկանգամյա ընթերցման տեքստի ծավալը, տպատառի կեգելը, միջտողային տարածությունն ու տողի երկարությունը) և ըստ սանիտարաքիմիական ցուցանիշների (վերահսկվող քիմիական տարրերի ցանկը որոշվում է ըստ նյութի քիմիական բաղադրության): 7. Սահմանում է զգայորոշման և սանիտարաքիմիական ցուցանիշներին, անվտանգությանը, գրքերի և ամսագրերի տեքստի տառատեսակային ձեվավորմանը ներկայացվող պահանջները:		•
274.	**«Մանկական տեսականու ապրանքների անվտանգությանը ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ միասնական պահանջներ» N 2.1.7.010-14 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու, ՀՀ առողջապահության նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի N 1191-Ն,**	1. Սանիտարական կանոնները տարածվում են մանկական տեսականու ապրանքների վրա՝ համաձայն ապրանքների դասակարգման՝ Մաքսային Միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկի ծածկագրի: 2. Հետազոտություններ անցկացնելիս հնարավոր է առանձնացնել տիպային նմուշ/ներկայացուցիչ: Տիպային նմուշն այն նմուշն է, որը ներկայացնում է ըստ նպատակային օգտագործման մեկ տեսակին պատկանող արտադրանք, որը նախատեսված է մեկ տարիքային խմբի համար, պատրաստված է մեկ արտադրողի կողմից միևնույն նյութերից նույն բաղադրատոմսով և արտադրանքի բացթողումը համակարգող նույն տեխնիկական փաստաթղթերով: 3. Սահմանում է երեխաների համար նախատեսված տարբեր տեսակի ծծակների և նույնանման արտադրատեսակների, տակդիրների, մանկական խանձարուրների (սանիտարահիգիենիկ արտադրատեսակներ, որոնք պարունակում են դոնդողագոյացնող խոնավակլանիչ նյութեր), խաղալիքների, խաղերի, դրանց մասերի և պարագաների, ծեփակերտության մածուկների հագուստի առարկաների,հագուստի պարագաների, գլխի հարդարանքի տեսակների և դրանց մասերի, այլ պատրաստի տեքստիլ արտադրատեսակների, կոշկեղենի, մանկասայլակների, թղթից և ստվարաթղթից օրագրերի և նմանատիպ արտադրատեսակների,		•

	2007 թվականի մարտի 26-ի N 539-Ն հրամաններում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման *N 47-Ն, ընդունված է՝ 03.07.2014, ուժի մեջ է՝ 11.09.2014* Հաստատում է «Մանկական տեսականու ապրանքների անվտանգությանը ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ միասնական պահանջներ» N 2.2.7.010-14 սանիտարական կանոնները և նորմերը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ առողջապահության նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի N 1191-Ն հրամանով հաստատված «Մանուկների, դեռահասների և մեծահասակների հագուստին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.III.4-7 սանիտարական կանոնների 3-րդ գլխի 3.2, 3.3, 3.4, 3.5, 3.6, 3.7 կետերը, ՀՀ առողջապահության նախարարի 2007 թվականի մարտի 26-ի N 539-Ն հրամանով հաստատված «Մանկական խաղալիքների, խաղերի արտադրության և իրացման» սանիտարական կանոնների 3-րդ գլուխը:	տետրերի,այլ գրենական պիտույքների երեխաների համար թղթապայուսակների (պորտֆելներ), դպրոցական պայուսակների եվ նույնանման արտադրատեսակների անվտանգության պահանջները:		
275.	**«Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 32-Ն, ընդունված է՝ 06.06.2014, ուժի մեջ է՝ 25.07.2014* Հաստատում է «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը:	1. Սահմանում է առողջ սննդի կազմակերպմանը և օրինակելի ճաշացուցակի կազմմանը, խոհարարական արտադրանքի պատրաստման պայմաններին, սովորողների լրացուցիչ սննդի կազմակերպմանը, սովորողների սննդի կազմակերպման հսկողությանը ներկայացվող և սանիտարական կանոնների եվ նորմերի պահպանման պահանջները: 2. Հաստատում է ուսումնական հաստատություններում սովորողների օրգանիզմի համար անհրաժեշտ սննդային նյութերի (սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր), վիտամինների, միկրոտարրերի և էներգիայի ֆիզիոլոգիական պահանջի միջինացված նորմերը, ուսումնական հաստատություններում սովորողների օրգանիզմի համար անհրաժեշտ էներգիայի օրական պահանջի ռացիոնալ բաշխումը օրինակելի ճաշացուցակում, շուրջօրյա գործող ուսումնական հաստատություններում սովորողների օրգանիզմի համար անհրաժեշտ էներգիայի օրական պահանջի ռացիոնալ բաշխումը օրինակելի ճաշացուցակում, ուսումնական հաստատություններում սովորողների համար նախատեսված մեկ չափաբաժնի օրինակելի ծավալը, ուսումնական հաստատություններում սովորողների համար սննդամթերքի միջին օրաբաժնի օրինակելի հավաքակազմը, սննդամթերքի փոխարինումը՝ ըստ սպիտակուցների եվ ածխաջրերի, առողջարանային տիպի ուսումնական հաստատություններում (բացի տուբերկուլոզային առողջարաններից) բուժվող երեխաների համար սննդամթերքի միջին օրաբաժնի օրինակելի հավաքակազմը, սննդամթերքի խոհարարական սառը մշակման արդյունքում թափոնի ելքը, սննդամթերքի հիմնական սննդային նյութերի և էներգետիկ արժեքի տվյալները, ինչպես նաև սովորողների լրացուցիչ սննդի կազմակերպման սննդամթերքի ցանկը:	Ուսումնական հաստատության ղեկավարը հանդիսանում է սննդի կազմակերպման և դրանում սովորողներին լիարժեք ընդգրկելու պատասխանատու անձը: Իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնց գործունեությունը կապված է ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպման, այդ թվում՝ տաք սննդի կազմակերպման և (կամ) ապահովման հետ, հանդիսանում են կազմակերպվող սննդի որակի և անվտանգության պատասխանատու անձը: Յուրաքանչյուր օր լրացվում է ճաշացուցակ-բաշխման ձևաչափը, ինչի մեջ նշվում է մեկ երեխայի համար դուրս գրվող սննդամթերքի անվանումը և քաշը/քանակը: Սննդի կազմակերպման, այդ թվում՝ սննդի օրաբաժնի որակական և քանակական կազմի, նրա սննդային և էներգետիկ արժեքի, ձեռքբերվող	• Հանրակրթական ուսումնական հաստատություններ • իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատերեր

			սննդամթերքի տեսականու և որակի, ինչպես նաև կերակրատեսակների պատրաստման, խոհարարական մշակման եղանակի նկատմամբ հսկողությունը իրականացնում է ուսումնական հաստատության բուժաշխատողը: Տեխնոլոգիական գործընթացի պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր պատրաստի կերակրատեսակից կատարվում է նմուշառում: Նմուշառումը կատարում է խոհարարը: Նմուշառումը կատարվում է խոտանորոշման հանձնաժողովի ներկայությամբ, որի կազմում ընդգրկվում են բուժաշխատողը, խոհարարը և տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը: Նմուշառման կարգի և օրվա նմուշների պահպանման պայմանների նկատմամբ հսկողությունը իրականացնում է բուժաշխատողը: . Նմուշառված ճաշատեսակի գնահատումը զգայորոշման ցուցանիշների նկատմամբ կատարվում է խոտանորոշման հանձնաժողովի կողմից: Պատրաստի կերակրատեսակի, խոհարարական արտադրանքի գնահատումը իրականացվում է ըստ զգայորոշման ցուցանիշների, ինչի արդյունքները լրացվում են «Պատրաստի կերակրատեսակի, խոհարարական արտադրանքի խոտանորոշման մատյան»-ում: Յուրաքանչյուր պատրաստի կերակրատեսակի բացթողումը իրականացվում է նմուշառումից և զգայորոշման ցուցանիշների նկատմամբ գնահատումից հետո: Սննդի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի խախտումների, ինչպես նաև անբավարար թերմիկ մշակման դեպքերի ժամանակ հանձնաժողովի կողմից չի թույլատրվում կերակրատեսակների բաշխումը՝ մինչև հայտնաբերված թերությունները վերացնելը: Ուսումնական հաստատության բուժաշխատողը սննդի օրաբաժնի որակական և քանակական կազմի, նրա սննդային և էներգետիկ արժեքի հաշվարկը և գնահատումը կատարում է 2 շաբաթը մեկ, ինչի տվյալները գրանցում են «Սննդի օրաբաժնի հսկողության, սննդային և էներգետիկ արժեքի հաշվարկի մատյան»-ում: Գնահատման արդյունքների հիման վրա, անհրաժեշտության դեպքում,	

			հաջորդ 10-14 օրվա համար նախատեսված ճաշացուցակում կատարվում են ուղղումներ և լրացումներ: Ամեն օր, աշխատանքները սկսելուց առաջ, բուժաշխատողի կողմից կատարվում է ուսումնական հաստատության խոհանոցի աշխատողների ձեռքերի և մարմնի բաց հատվածների մաշկի զննում՝ թարախային վերքերի առկայության, ինչպես նաև վերին շնչուղիների կատարալ երևույթների և անգինաների նկատմամբ: Մատյանում նշվում են տվյալ օրը ներկա բոլոր աշխատողների անուն-ազգանունները:	
276.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 70-Ն, ընդունվել է՝ 01.11.2013 ուժի մեջ է՝ 27.02.2014* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը	1. Պետության կողմից երաշխավորված անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումը ցուցաբերվում, իսկ Երեխայի առողջության պետական հավաստագիրը տրամադրվում է ՀՀ քաղաքացիություն ունեցող անձանց (անձի), այդ թվում՝ ՀՀ քաղաքացիություն ունեցող ծնողների (ծնողի) այլ երկրում ծնված, բայց ՀՀ-ում փաստացի բնակվող և ԱԱՊ հաստատությունում գրանցված երեխաներին: «Փոքր Միեր» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի սաների բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում: 2. Պետական պատվերի շրջանակներում անվճար է իրականացվում նաև ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունում չգրանցված, սակայն տվյալ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության սպասարկման տարածքում ժամանակավոր բնակվող մինչև 7 տարեկան հիվանդ երեխաների բժշկական օգնությունը և սպասարկումը, բացառությամբ դեղերով ապահովումը: Երեխայի անունով բացվում է համառոտ գրառումների թերթիկ, որը պահպանվում է բժշկական կազմակերպությունում, իսկ ծնողին կամ այլ օրինական ներկայացուցչին տրամադրվում է տրամադրված բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ գրավոր տեղեկատվություն՝ այն ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություն ներկայացնելու համար, որտեղ սահմանված կարգով գրանցված է երեխան: 3. Երեխաների ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման ծավալները ներառում են ԱԱՊ բժշկի կողմից երեխաներին տրամադրվող բժշկական օգնությունը և սպասարկումը (այդ թվումառողջ երեխայի հսկողությունը՝ երեխայի աճի և զարգացման գնահատմամբ, ռիսկի խմբի և հիվանդ երեխաների շարունակական հսկողությունը, հիվանդ երեխաների բժշկական օգնությունը և սպասարկումը բժշկական կազմակերպությունում և տանը, այդ թվում՝ տնային կանչերի և ակտիվ այցերի իրականացումը մինչև լավացում և/կամ առողջացում, երեխաների առողջության բարելավմանն ուղղված այլ նպատակային ծրագրերի ներդրման աշխատանքների իրականացումը, երեխաների նեղ մասնագիտական բժշկական օգնությունը և սպասարկումը, խորհրդատվական և շարունակական հսկողության ապահովումը, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների անցկացումը, երեխաների բժշկական օգնությունը և սպասարկումը հանրակրթական պետական և համայնքային դպրոցներում բուժքրոջ կողմից՝ տվյալ դպրոցի տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության բժշկական անձնակազմի ղեկավարման և պատասխանատվության ներքո, ԱԱՊ բժշկի և նեղ մասնագետի կողմից քրոնիկ հիվանդ երեխաների շարունակական հսկողությունը, համապատասխան մասնագիտացված կենտրոնի կողմից առաջարկված՝ դիսպանսերային հաշվառման մեջ գտնվող երեխաների վարման անհատական պլանի, անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող երեխաների դեղորայքային ապահովումը, դեռահասների, այդ թվում՝ 15 տարեկան աղջիկների առողջության գնահատման և 14-15 տարեկան արական սեռի, նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց հետազոտության և անհրաժեշտության դեպքում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը, Իմունականխարգելման ազգային ծրագրի իրականացման ապահովումը, երեխաների բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրման կազմակերպումը, հիվանդ երեխաների ուղեգրումը հիվանդանոցային հաստատություններ/մասնագիտացված կենտրոններ՝ հետազոտության և/կամ բուժման նպատակով, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների կազմակերպումը, երեխայի տնային մահվան դեպքում ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության կողմից ախտաբանաանատոմիական հերձման (պաթանատոմիական ուսումնասիրություն կամ դատաբժշկական փորձաքննություն) գործընթացի կազմակերպում: 4. Դեռահասների բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է երեխային ԱԱՊ բժշկի կամ դեռահասային բժշկի (քաղաքային և տարածաշրջանային պոլիկլինիկաների մակարդակում) միջոցով հետևյալ ծավալներով՝ դեռահասների առողջության շարունակական հսկողություն և գնահատում, այդ թվում՝ հոգեբանասոցիալական քննություն և սեռական զարգացման գնահատում՝ ըստ Թանների սանդղակի, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության բժշկական օգնության և սպասարկման տրամադրում՝ հիվանդության կապակցությամբ, 14-15 տարեկան արական սեռի, նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց հետազոտության և անհրաժեշտության դեպքում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում, 15-18 տարեկան աղջիկների տարեկան կանխարգելիչ զննումը, ֆիզիկական զարգացման և սեռական հասունացման գնահատմամբ, նեղ մասնագիտական խորհրդատվության և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների կազմակերպումը, ինչպես նաև դեռահասներին բարյացակամ առողջապահական ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ վերարտադրողական առողջության, սեռավարակների, վնասակար սովորությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը՝ մեկուսիության և գաղտնիության պայմաններում, առողջ ապրելակերպի և առողջ սնվելու վարքագծի քարոզումը դպրոցներում և այլն: Ըստ բժշկական ցուցումների	Բժշկական կազմակերպության տնօրենը ապահովում է բժշկական փաստաթղթերի հաշվառման և հաշվետվության վարման գործընթացի կազմակերպումը և այդ գործունեության համար անհրաժեշտ քանակներով հաշվառման ձևաթղթերի բազմացումը, ինչպես նաև պետական պատվերի շրջանակներում երեխայի ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման, այդ թվում՝ դեղերով ապահովման վերաբերյալ տեղեկատվությունը (բրոշյուր, բուկլետ, թերթիկ), տեղադրելով բժշկական կազմակերպության՝ բնակչության համար տեսանելի տեղերում: Երեխաների ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման ծավալները ներառում են երեխայի աճի և զարգացման, խնամքի, սնուցման և հիվանդությունների կանխարգելման հարցերի շուրջ բնակչությանն, ընտանիքին ուղղված հանրային իրազեկման աշխատանքների, ծնողների/խնամողների գիտելիքների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններում գործող Ծնողական կրթության կենտրոններում թեմատիկ դասընթացների կազմակերպման, ինչպես նաև մայրերին/խնամողներին խորհրդատվության տրամադրման և/կամ անհատական զրույցների միջոցով), երեխայի հիվանդության/խնամքի հետ կապված ծնողին կամ այլ օրինական ներկայացուցչին Ժամանակավոր անաշխատունակության թերթիկի տրամադրումը, երեխայի տնային ծննդի և տնային մահվան դեպքում համապատասխան բժշկական փաստաթղթերի ձևակերպումը, 0-28	• Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններ • Երեխաների պետության կողմից երաշխավորված՝ անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է պոլիկլինիկաներում (բուժմիավորումների, բժշկական կենտրոնների պոլիկլինիկական ստորաբաժանումներում), գյուղական առողջության կենտրոններում, գյուղական բժշկական ամբուլատորիաներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում (ներառյալ նրանց կազմում գործող բուժակ-մանկաբարձական կետերը), ընտանեկան բժշկի գրասենյակներում: • Մարզային ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության ԱԱՊ բժիշկը ամիսը մեկ անգամ պարտավոր է այցելություն կատարել կցագրված գյուղական համայնքների բուժակ-մանկաբարձական կետեր և տեղում կատարել մանկական բնակչության ընդունելություն և ըստ անհրաժեշտության՝ պատվաստումներ: ԱԱՊ բժիշկը այցելությունից հետո դիմում է համայնքի ղեկավարին՝ այցը հաստատելու դիմումով, ինչը կարող է հաստատվել համայնքի ղեկավարի ստորագրությամբ: • Առողջության առաջնային պահպանման համակարգում երեխայի հսկողության և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն են ԱԱՊ բժիշկը, ԱԱՊ բուժքույրը, ըստ առանձին ուղղությունների՝ նեղ մասնագետները: • Անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող երեխաների դեղորայքային

		դեռահասին սպասարկող ԱԱՊ բժշկի կողմից ապահովվում է մասնագիտացված բժշկական կազմակերպություններ դեռահասների ուղեգրման և բուժման գործընթացի կազմակերպումը: 5. Նեղ մասնագետների կողմից երեխաների բժշկական օգնության և սպասարկման անհրաժեշտ ծավալները ներառում են՝ առողջ երեխայի մասնագիտացված բժշկական հսկողության գործընթացը, ռիսկի խմբի և խրոնիկ հիվանդ երեխաների անհրաժեշտ շարունակական հսկողությունը (դիսպանսերիզացիան), 14-15 տարեկան արական սեռի, նախազորակոչային տարիքի անձանց նեղ մասնագիտացված բժշկական օգնությունը և սպասարկումը, 15-17 տարեկան աղջիկների նեղ մասնագիտական (այն թվում մանկաբարձ-գինեկոլոգի կողմից) բժշկական օգնությունը և սպասարկումը, սուր հիվանդությունների դեպքում անհրաժեշտ նեղ մասնագետների կոնսուլտացիաներն ու բժշկական օգնությունը և սպասարկումը: 6. Ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգում տվյալ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունում գրանցված երեխաների լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները իրականացվում են ԱԱՊ բժշկի ուղեգրմամբ՝ հետևյալ ծավալներով՝ առողջ երեխայի կանխարգելիչ բժշկական օգնության և սպասարկման գործընթացի շրջանակներում, ռիսկի խմբի և քրոնիկ հիվանդ երեխաների շարունակական հսկողության շրջանակներում կամ մասնագիտացված բժշկական կենտրոնի կողմից տրված դիսպանսեր հիվանդի վարման անհատական պլանի համաձայն, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ՝ սուր հիվանդությունների ժամանակ և համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում: 7. Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունն իր սպասարկման տարածքում գտնվող պետական և համայնքային հանրակրթական դպրոցներին ապահովում է առաջին բժշկական օգնության դեղերով և բժշկական ապրանքներով: 8. Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից ապահովվում է հանրակրթական դպրոցներում սովորողների ամենամյա /ընթացիկ բուժկանխարգելիչ ստուգումների անցկացումը ֆիզկուլտուրայի խմբերի որոշման նպատակով: 9. Հատուկ և մասնագիտացված հանրակրթական դպրոցներում սովորող, երեխայի խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների սան հանդիսացող այն երեխաները, որոնց ուսման/խնամքի և բնակության վայրը գտնվում է նույն քաղաքում/տարածաշրջանում, սպասարկվում են ըստ բնակության վայրի: 10. Պետության կողմից երաշխավորված ծառայությունների շրջանակներում երեխաների անվճար ստոմատոլոգիական բժշկական օգնությունը և սպասարկումը ներառում է երեխային սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից երեխաների առաջնային ստոմատոլոգիական զննում, 6 և 12 տարեկան երեխաների կամ հանրակրթական դպրոցների 1-ին և 6-րդ դասարանների աշակերտների շրջանում ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծրագրի իրականացումը, մինչև 8 տարեկան, 12 տարեկան և սոցիալապես անապահով ու հատուկ խմբերում ընդգրկված երեխաների ստոմատոլոգիական մասնագիտացված բժշկական օգնությունը և սպասարկումը, ընդհանուր անզգայացմամբ երեխաների ստոմատոլոգիական բժշկական օգնությունը և սպասարկումը (ատամի հեռացում և բերանի խոռոչի սանացիա)՝ ատամի հեռացում՝ մինչև 7 տարեկան անհաղթահարելի վախի զգացումով երեխաների դեպքում և մանկական ուղեղային կաթվածով (սպաստիկ տետրապարեզ, ծանր սպաստիկ դիպլեգիա, պսևդոբուլբար համախտանիշով՝ լեզվի, ըմպանի և կոկորդի մկանների կենտրոնական պարալիզով, ուղեկցվող դիստոնիկ-դիսկինետիկ ձևերը, որն առաջ է բերում կլման ակտի և արտիկուլացիայի խանգարումներ), հաճախակի ցնցումային նոպաներով ընթացող էպիլեպսիայի ծանր ձևերով, նյարդային համակարգի խանգարումներով ուղեկցվող ժառանգական համախտանիշներով, վարքի և հուզական ոլորտի արտահայտված խանգարումներով, զարգացման գլոբալ հապաղումով, մտավոր հետամնացությամբ, աուտիզմի տիրույթի համախտանիշներով տառապելու դեպքում, բերանի խոռոչի սանացիա՝ մինչև 4 տարեկան երեխաների և սահմանված հիվանդություններով տառապող երեխաների բուժման կամ հեռացման ենթակա ատամների մեծ քանակի դեպքում (40% և ավելի) և այլ դեպքեր՝ մասնագիտական կոնսիլիումի եզրակացության հիման վրա: 11. Երեխաների՝ պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումը ներառում է մինչև 7 տարեկան և սոցիալապես անապահով ու հատուկ խմբերում ընդգրկված երեխաների հիվանդանոցային (այդ թվում վերականգնողական) բժշկական օգնությունը և սպասարկումը՝ հիվանդանոցային բուժում պահանջող դեպքերում, երեխաների հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկում, անկախ նրանց սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերին պատկանելությունից, վերակենդանացման և անհետաձգելի բժշկական միջամտություններ պահանջող դեպքերում, ինֆեկցիոն (վարակիչ) հիվանդությունների դեպքում, որը ներառում է տուբերկուլյոզով հիվանդների հիվանդանոցային, ինչպես նաև քրոնիկ հիվանդների երկարատև բժշկական օգնությունը և սպասարկումը՝ հակատուբերկուլյոզային դիսպանսերներում (կենտրոններում) և վերականգնողական առողջարանային բուժումը՝ հակատուբերկուլյոզային առողջարանում, ինֆեկցիոն (վարակիչ), այդ թվում աղիքային հիվանդությունների բուժում՝ ընդհանուր և մասնագիտացված ինֆեկցիոն պրոֆիլի հիվանդանոցներում (բժշկական կազմակերպությունների ինֆեկցիոն բաժանմունքներում), սեռական ճանապարհով փոխանցվող և մաշկային հիվանդությունների բուժում՝ համապատասխան պրոֆիլի բժշկական կազմակերպություններում, ախտորոշված չարորակ նորագոյացությունների (այդ թվում օնկոհեմատոլոգիական հիվանդությունների) բուժումը, ինչպես նաև սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված երեխաների հետազոտումը՝ ախտորոշման ճշտման նպատակով՝ մասնագիտացված բժշկական կենտրոններում, սուր հոգեկան հիվանդությունների բուժումը՝ հոգենյարդաբանական դիսպանսերներում, կենտրոններում, հոգեբուժական հիվանդանոցներում, հոգեկան խանգարումներով և վարքագծային շեղումներով երեխաների տևական մասնագիտական բուժումն ու խնամքը, դիսպանսեր հսկողության տակ գտնվող քրոնիկ հիվանդ երեխաների հիվանդանոցային (այն թվում առողջարանային) բուժօգնությունը, անկախ նրանց սոցիալական կարգավիճակից, նորածինների բժշկական օգնության և սպասարկման ու խնամքի կազմակերպումը, հեմոդիալիզի և պերիտոնեալ դիալիզի անցկացումը՝ համապատասխան լիցենզիա ունեցող հիվանդանոցային բուժհաստատություններում: 12. Երեխաների արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների (մասնագիտացված կենտրոններ, հիվանդանոցներ, դիսպանսերներ և այլն) կողմից պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության շրջանակներում ապահովվում է հետևյալ ծավալներով. մինչև 7 և սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված երեխաների արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը, քրոնիկ հիվանդ երեխաների դիսպանսերային հսկողության և բուժման իրականացումը ըստ հիվանդությունների խմբերի, մինչև 7 տարեկան և սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված երեխաների նեղ մասնագիտական	օրական մանուկների տնային մահվան դեպքերի գրանցումը ՔԱԿԳ մարմիններում, երեխաների առողջության կամ հիվանդության հետ կապված Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտից քաղվածքի և այլ ձևաթղթերի տրամադրումը, ինչպես նաև նորածնին/երեխային ԱԱՊ բժշկական կազմակերպությունում գրանցելու և հսկողություն իրականացնելու ընթացակարգի ապահովումը: Բոլոր այն դեպքերում, երբ 0-7 տարեկան երեխայի ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչը ժամանակավորապես (ավելի քան 2 ամիս) փոխում է երեխայի բնակության վայրը՝ առանց տեղեկացնելու ԱԱՊ բժշկին, ԱԱՊ բժիշկը պատրոնաժ բուժքրոջ միջոցով ձեռնարկում է միջոցառումներ ճշտել երեխայի գտնվելու վայրը: Ճշտելու դեպքում ԱԱՊ բժիշկը երեխայի մասին տվյալները հաղորդում է այն բժշկական կազմակերպությանը, որի սպասարկման տարածքում գտնվում է երեխան: Երեխայի բացակայության և ժամանակավոր բնակության վայրի ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությանը տեղեկացնելու վերաբերյալ ԱԱՊ բժշկի կողմից կատարվում է գրառում Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում: Այս դեպքում երեխային գրանցած և հսկողություն իրականացնող բժիշկը չի կրում պատասխանատվություն երեխայի բացակայության ժամանակահատվածում ծագած առողջության խնդիրների և կանխարգելիչ պատվաստումներում ընդգրկվածությունը չապահովելու համար: ԱԱՊ բժիշկը նորածնին/երեխային գրանցում է և բացում «Երեխաների բժշկական հսկողության ամբուլատոր քարտ»: ՀՀ մարզերում դեռահասների բժշկական օգնության և սպասարկման աշխատանքների համակարգումը դրվում է մարզային բժշկական կենտրոնների կառուցվածքում գործող պոլիկլինիկաների վրա: Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններում իրականացվող ներքին ուղեգրումների դեպքում լաբորատոր-գործիքային հետազոտման ուղեգրման վերաբերյալ գրառումը կարող է կատարվել Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում: Առողջության առաջնային պահպանման	ապահովումն իրականացվում է ԱԱՊ բժշկի, իսկ առանձին հիվանդությունների գծով՝ համապատասխան մասնագետի միջոցով: Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունքի մասին իրազեկումը ապահովվում է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից՝ բնակչության համար տեսանելի վայրերում թերթիկների և պաստառների տեղադրման միջոցով: Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունը կարող է տրամադրել դեղ ոչ բուժման, այլ նաև կանխարգելիչ նպատակներով: • Անհետաձգելի վիճակների դեպքում նեղ մասնագիտական բժշկական օգնությունը և սպասարկումը կարող է իրականացվել առանց տեղամասային բժշկի ուղեգրման, հետագայում իրազեկ դարձնելով ԱԱՊ բժշկին (մանկաբույժ, ընտանեկան բժիշկ): • Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության կողմից՝ առողջության առաջնային պահպանման համակարգում նախատեսված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ առանձին հետազոտությունների իրականացման հնարավորությունների բացակայության դեպքում դրանք պետք է կազմակերպվեն այլ բժշկական կազմակերպությունների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով: • Պետական և համայնքային հանրակրթական դպրոցների երեխաների բժշկական օգնությունն ու սպասարկումը կազմակերպվում է համապատասխան ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից: • Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության տնօրենի հրամանով կազմակերպության բժիշկներից մեկը նշանակվում է որպես պատասխանատու (Պատասխանատու)՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում կազմակերպական աշխատանքների համակարգման համար: • Պետական և համայնքային հանրակրթական դպրոցներում աշակերտների բժշկական օգնությունը և սպասարկումը տեղում իրականացվում է դպրոցը սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության դպրոցական բուժքրոջ կողմից՝ համապատասխան ամբուլատոր-

		խորհրդատվության և ըստ անհրաժեշտության լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացումը արտահիվանդանոցային պայմաններում՝ ՝ հիվանդությունների ախտորոշման ճշտման նպատակով, ինչպես նաև երեխաների, այդ թվում նորածինների արտագնա անհետաձգելի մասնագիտական շտապ բժշկական օգնության կազմակերպումը և ըստ անհրաժեշտության տեղափոխումը հանրապետության ողջ տարածքից («սանավիացիա» ծառայություն): 13. Սահմանում է երեխաների հոսպիտալացման և ուղեգրման կարգը: 14. 15-18 տարեկան երեխաների հիվանդանոցային մասնագիտացված բժշկական օգնությունը և սպասարկում կարող է կազմակերպվել ինչպես մեծահասակների, այնպես էլ մանկական ստացիոնարներում (բաժանմունքներում): 15. Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումն ընդգրկում է արդյունավետ բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը (հիվանդասենյակով հիվանդի ապահովումը, մասնագիտացված կոնսուլտացիաները, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների անցկացումը, վիրահատությունները, վիրահատական և ֆիքսող միջոցները, բուժական միջամտությունները, անհրաժեշտ դեղերով և ներերակային ներարկման հեղուկներով ապահովումը, թթվածնի և այլ գազերի օգտագործումը, հիվանդի խնամքի ապահովումը միջին և կրտսեր բուժանձնակազմի կողմից, այլ անհրաժեշտ բժշկական, հարբժշկական ծառայությունները, իսկ հակատուբերկուլոզային, հոգեբուժական /թմրաբանական/ և վերականգնողական բաժանմունքներում հիվանդանոցային հատուկ խնամք պահանջող դեպքերում՝ նաև հիվանդների սննդով պարտադիր ապահովման ծախսերը): 16. Այն դեպքում, երբ բժշկական կազմակերպություններում բացակայում են հիվանդի լիարժեք բուժման կազմակերպման համար անհրաժեշտ առանձին ծառայությունները (մասնագիտացված կոնսուլտացիաներ, լաբորատոր գործիքային ախտորոշիչ հետազոտություններ և այլն), հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունը այդ միջոցառումները կազմակերպում է այլ բժշկական կազմակերպությունում՝ պայմանագրային սկզբունքով, կատարելով հատուցում հիվանդի բուժման համար հատկացվող համապատասխան գումարներից: 17. Բոլոր այն դեպքերում, երբ երեխան բերվում է հիվանդանոցային բժշկական կազմակերպության ընդունարան շտապ օգնության ծառայության միջոցով, իսկ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների աշխատանքային ժամերից դուրս և հանգստյան օրերին նաև ինքնուրույն՝ սուր վիճակում, սակայն հետագայում չի հոսպիտալիզացվում, բուժհաստատության կողմից բժշկական ծառայությունը մատուցվում է անվճար, դիտարկելով այն որպես առաջին բժշկական օգնություն: Այդ դեպքերում վնասվածքաբանական և վիրաբուժական բաժանմունքներ ունեցող բժշկական կազմակերպություններում ապահովվում է նաև հիվանդանոցային բուժում չպահանջող վնասվածքաբանական և սուր վիրաբուժական հիվանդությունների կասկածով 0-7 և սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված երեխաների անհետաձգելի հետազոտությունը և բժշկական օգնությունը: 18. Սահմանում է քրոնիկ հիվանդություններով տառապող երեխաների շարունակական հսկողության, հետազոտման և բուժման կազմակերպման ընթացակարգը: 19. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ապահովվում է մինչև 7 տարեկան ու սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված երեխաների վերականգնողական բուժումը մասնագիտացված վերականգնողական կենտրոններում՝ տարածքային սպասարկման ամբուլատոր-պոլիկլինիկական (ԱԱՊ բժիշկ)կամ մասնագիտական դիսպանսերների/կենտրոնների ուղեգրմամբ: Հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնումն իրականացվում է բժշկասոցիալական փորձաքննական մարմինների կողմից տրված վերականգնողական անհատական ծրագրի համաձայն: 20. Պետական պատվերի շրջանակներում մեկ երեխային առողջարանային բուժման ուղեգիր կարող է տրամադվել ոչ ավելի, քան օրացույցային տարին մեկ անգամ: 21. Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետի կողմից կազմակերպվում է տուբերկուլոզով հիվանդ, կոնտակտավոր և տուբերկուլինոդիագնոստիկայի արդյունքում հայտնաբերված վարակված երեխաների կանխարգելիչ, պահպանողական կամ վերականգնողական բուժում առողջարանային պայմաններում՝ ուղեգրերով, որոնց կցվում են քաղվածք՝ բժշկական հսկողության քարտից և մանկական հակատուբերկուլոզային առողջարան ուղեգրելու եզրակացությունը: 22. Սահմանում է առողջարանային բուժման կարգը: 23. Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների առողջարանային բուժօգնություն տրամադրող բժշկական կազմակերպություններում 0-5 տարեկան, անհատական խնամքի կարիք և (ընտանեկան) նպաստների համակարգում ընդգրկված՝ 30 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների երեխաների բուժման ընթացքում պետության կողմից ապահովվում է նաև նրանց խնամակալների սննդի և կացարանային ծախսերը: 24. Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում ապահովվում են նաև երեխաների հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները, նորածնային սկրինինգների գործընթացի կազմակերպումը և իրականացումը, երեխաների օրթեզավորումը և կորսետավորումը, որը ներառում է մինչև 7 տարեկան և սոցիալապես անապահով և հատուկ խմբերի ցանկում ընդգրկված երեխաների հենաշարժական համակարգի ֆունկցիայի վերականգնմանը նպաստող օժանդակ միջոցների տրամադրումը (մանկական օրթեզների և կորսետների տրամադրումը իրականացվում է՝ պետական պատվերի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության հետ նշված ծառայությունների մատուցման պայմանագիր ունեցող կազմակերպության կողմից՝ մասնագիտացված կենտրոնի ուղեգրերի առկայության դեպքում, որոնք տրվում են ինչպես հիվանդանոցային և արտահիվանդանոցային պայմաններում բուժվող, այնպես էլ նեղ մասնագիտական խորհրդատվության ենթարկված և օրթեզավորման կամ կորսետավորման կարիք ունեցող երեխաներին), «Անձավաբուժության» կազմակերպումը համապատասխան մասնագիտացված կենտրոնում՝ մինչև 7 տարեկան և սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված երեխաների համար (ուղեգրումը կատարվում է տարածքային պոլիկլինիկայի կողմից), ֆենիլկետոնուրիայով հիվանդ երեխաներին հատուկ բուժական կաթնախառնուրդով ապահովումը՝ մասնագիտական եզրակացության հիման վրա, արհեստական կաթնախառնուրդներով ապահովումը ՄԻԱՎ-վարակակիր մայրերից ծնված երեխաներին, ինչպես նաև ՀՀ-ից դուրս երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման նպատակով ճանապարհածախսի հատուցումը	համակարգում ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական կազմակերպության կողմից երեխաներին տրամադրված բժշկական օգնության և սպասարկման որակի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներն են՝ առողջ երեխայի հսկողության ծավալների ամբողջականության ապահովումը՝ ըստ սույն չափորոշիչով հաստատագրված ծավալների, առանձին պատվաստումներում ընդգրկվածության մակարդակը (95%-ից ոչ պակաս՝ պատվաստանյութերի մատակարարման անընդհատության պարագայում), պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության մակարդակը (90%-ից ոչ պակաս՝ պատվաստանյութերի մատակարարման անընդհատության պարագայում), կրծքով սնուցման ցուցանիշ (մինչև 6 ամիս միայն կրծքով կերակրվող երեխաների տեսակարար կշիռ)՝ 45 %-ից ոչ պակաս, նորածինների վաղ ընդգրկվածության ցուցանիշ (ծննդատնից դուրս գրվելուց հետո 1-3 օրերի ընթացքում)՝ տեղամասի նորածինների 80%-ից ոչ պակաս և 9 ամսում հեմոգլոբինի որոշման ցուցանիշի ընդգրկվածությունը՝ 70%-ից ոչ պակաս: ԱԱՊ բժիշկը նորածնին/երեխային առաջնակի հաշվառման վերցնելու ժամանակ ծնողին տեղեկացնում է նորածնի/երեխայի անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության և սպասարկման իրավունքի մասին: ԱԱՊ բժշկի առաջին այցի ժամանակ հուշաթերթիկի միջոցով մորն ապահովում է նորածնի խնամքի և սնուցման վերաբերյալ բավարար տեղեկատվությամբ, իրազեկելով մորը նորածնի կյանքի համար վտանգի այն նշանները, որոնց դեպքում անհրաժեշտ է անհապաղ դիմել բուժաշխատողին: Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին պետական և համայնքային հանրակրթական դպրոցի բուժքույրը այդ դպրոցը սպասարկող ԱԱՊ բժշկական կազմակերպություն է ներկայացնում առաջին դասարան հաճախող երեխաների անվանացանկը, որի հիման վրա ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության Պատասխանատուն կազմակերպում է Երեխայի բժշկական քարտերի փոխանցումը հանրակրթական դպրոցի բուժքրոջը: Այն դեպքերում, երբ երեխան գրանցված է տվյալ դպրոցի բժշկական սպասարկումը չիրականացնող՝ այլ ամբուլատոր-պոլիկլինիկական	պոլիկլինիկական բժշկական կազմակերպության հսկողության և պատասխանատվության ներքո: • Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատության սաների բժշկական օգնությունը և սպասարկումը տեղում իրականացվում է նույն հաստատության բուժքրոջ կողմից: Նշված հաստատություններում կազմակերպամեթոդական աշխատանքները համակարգում է տվյալ տարածքի ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունը: • Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից ապահովվում է նաև իրենց տարածքային սպասարկման գոտում գտնվող երեխայի խնամքի, պաշտպանության և հատուկ կրթական հաստատությունների (հատուկ, մասնագիտացված հանրակրթական դպրոց, մանկատուն, երեխայի խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն) սաների բժշկական օգնությունն ու սպասարկումը (եթե տվյալ հաստատությունում բացակայում է այլ գերատեսչության կողմից կազմակերպված բժշկական ծառայությունը), ընդ որում հատուկ և մասնագիտացված հանրակրթական դպրոցներում երեխաների սպասարկումը իրականացվում է տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության կողմից կցագրված դպրոցական բուժքրոջ կողմից: • Նախադպրոցական հաստատություններ և հանրակրթական դպրոցներ հաճախող երեխաների բժշկական օգնությունը և սպասարկումը, ներառյալ՝ պատվաստումները իրականացվում են՝ երեխային սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից, առանձին դեպքերում Իմունականխարգելման ազգային ծրագրերի շրջանակներում զանգվածային պատվաստումներ կարող են կատարվել նաև տեղում (դպրոց, նախադպրոցական ուսումնական հաստատություն և այլն)՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության միջոցով: • Մարզադպրոցներ կամ սպորտային խմբակներ հաճախելու համար երեխաների առողջական վիճակի մասին Քաղվածքի տրամադրումը ապահովվում է ԱԱՊ բժշկի կողմից,

		25. 0-18 տարեկան երեխաների տնային այցերն ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից կազմակերպվում և բժիշկ-մասնագետների կողմից իրականացվում են հետևյալ դեպքերում՝ սուր հիվանդություններ, որոնք ուղեկցվում են ջերմությամբ, վարակիչ հիվանդությունների կասկած, երեխայի ինքնազգացողության վատացումով պայմանավորված անկողնային վիճակ, շարժողական ֆունկցիայի խանգարման հետ կապված ֆիզիկական անկարողություն, նորածնային հասակում առկա ախտաբանական վիճակներ, պատրոնաժ և ակտիվ այցեր: 26. Սահմանում է սմբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից կանչերի ընդունման և սպասարկման կարգը: 27. ԱԱՊ բժշկի կողմից հիվանդ երեխաների համար առաջնակի տնային այցերը իրականացվում են հետևյալ դեպքերում՝ ԱԱՊ բժշկի մոտ գրանցված 0-18 տարեկան բնակչության դեպքում, ԱԱՊ բժշկի մոտ չգրանցված և տվյալ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության սպասարկման տարածքից դուրս մշտապես բնակվող, սակայն ժամանակավորապես տվյալ տարածքում գտնվող 0-7 տարեկան հիվանդ երեխաների պարագայում, ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության տարածքում բնակվող, սակայն դեռևս ԱԱՊ բժիշկ չընտրած 0-7տարեկան հիվանդ երեխաների պարագայում, 0-7 տարեկան երեխաների համար՝ հիվանդանոցային բժշկական կազմակերպությունից փոխանցված կանչերի դեպքում և շտապ բժշկական օգնության կողմից փոխանցված կանչերի դեպքում: 28. Ստացիոնար տանը կազմակերպելու դեպքում հիվանդները օգտվում են տվյալ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունում առկա բոլոր կոնսուլտատիվ և բուժախտորոշիչ ծառայություններից: 29. Ստացիոնար տանը կազմակերպելու դեպքում հիվանդ երեխաներն ապահովվում են անվճար դեղորայքով: 30. Դպրոցներում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման աշխատանքի ծավալը ներառում է ամենամյա սկրինինգ-տեստերի կատարում (քաշ, հասակ, Զ/Ճ, լսողություն, տեսողություն, կեցվածքի շեղումներ և այլն), սանիտարահիգիենիկ իրավիճակի ընդհանուր և շարունակական հսկողություն, երեխաների պարբերական քննությունների ապահովում՝ տարածքային պոլիկլինիկայում՝ ծնողների օգնությամբ, մասնակցություն իմունիզացիայի զանգվածային արշավներին (եթե այդպիսիք լինում են), կատարված պատվաստումների գրանցում, ապահովելով սերտ կապը տարածքային պոլիկլինիկայի հետ, անհետաձգելի բուժօգնության դրույթների իմացություն և բուժօգնության ապահովում, ըստ անհրաժեշտության՝ երեխայի տեղափոխում բուժհաստատություն, դպրոցահասակ երեխաների առողջական վիճակի գնահատում՝ ֆիզիկական կուլտուրայի դասերին մասնակցության և ֆիզիկական ծանրաբեռնվածության ծավալի որոշման նպատակով, ֆիզկուլտուրայի խմբերի ամենամյա որոշում, վնասվածքներ ունեցողներին առաջին բուժօգնության ցուցաբերում, տրամադրվող սննդի նկատմամբ սանիտարահիգիենիկ ընթացիկ հսկողության ապահովում, վարակիչ և մակաբուծային հիվանդությունների հայտնաբերում, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպում, դպրոցի տնօրինության, ուսուցիչների և ծնողների հետ կապի ապահովում, երեխաների և ծնողների հետ լայն քարոզչական աշխատանքների իրականացում՝ ուղղված առողջ ապրելակերպին, սնուցմանը, բժշկահիգիենիկ գիտելիքների բարձրացմանը, դպրոցականների շրջանում բացակայությունների նկատմամբ հսկողության իրականացում, պատճառների պարզաբանում (դասղեկների հետ համատեղ), հատկապես համաճարակային իրավիճակի սրացման դեպքում, դեռահասային տարիքի առանձնահատկությունների իմացություն, մասնակցություն առողջապահական կրթման և սեռական դաստիարակության ծրագրերի իրականացմանը, «Դեռահասներին բարյացակամ առողջապահական ծառայությունների» մատուցում, այդ թվում վերարտադրողական առողջության, սեռավարակների, վնասակար սովորությունների, հոգեկան առողջության, առողջ ապրելակերպի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում՝ մեկուսիության և գաղտնիության պայմաններում, հաշվառման և հաշվետու ձևերի վարում, տարածքային սպասարկման ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատության հետ կապի ապահովում, ուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին առաջին դասարան ընդունված երեխաների բժշկական փաստաթղթերի (Երեխայի բժշկական քարտ) առկայության ապահովում: 31. Նախադպրոցական հիմնարկներում բուժքրոջ աշխատանքի ծավալը ներառում է սանիտարահիգիենիկ ընդհանուր վիճակի հսկողությունը, երեխաների ամենօրյա ընդունման հսկողություն՝ մսուրային խմբերում, ամենամյա սկրինինգ թեստերի կատարում (քաշ, հասակ, Զ/Ճ, տեսողություն, լսողություն), դիսպանսեր խմբի երեխաների պարբերական քննությունների ապահովումը՝ տարածքային պոլիկլինիկայում (ծնողների օգնությամբ), պատվաստումային կարգավիճակի ստուգումը, պոլիկլինիկայում կատարված պատվաստումների գրանցումը Երեխայի բժշկական քարտում, մասնակցությունը իմունիզացիայի զանգվածային արշավներին (եթե այդպիսիք լինում են), անհետաձգելի (առաջին) բուժօգնության ապահովումը, ըստ անհրաժեշտության՝ երեխայի տեղափոխումը բուժհաստատություն, խոհանոցի և տրամադրվող սննդի նկատմամբ սանիտարահիգիենիկ ընթացիկ հսկողության ապահովումը, վարակիչ և մակաբուծային հիվանդությունների հայտնաբերումը, հաշվառումն ու հաղորդումը, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը, նախադպրոցական հաստատության տնօրինության, մանկավարժների, դայակների և երեխաների ծնողների հետ հետադարձ կապի ապահովում, լայն քարոզչական աշխատանքների իրականացում՝ ուղղված առողջ ապրելակերպին, սնուցման, բժշկահիգիենիկ հարցերի վերաբերյալ գիտելիքների բարձրացմանը, հաշվառման և հաշվետու ձևերի վարումը, տարածքային սպասարկման ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության հետ կապի ապահովումը, մասնակցությունը կազմակերպվող կոնֆերանսներին և սեմինարներին, ինչպես նաև ախադպրոցական հաստատություն ընդունված յուրաքանչյուր երեխայի բժշկական փաստաթղթերի (Երեխայի բժշկական քարտ) առկայության ապահովումը: 32. Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների ցերեկային ստացիոնարում՝ ըստ անհրաժեշտության, հիվանդ երեխայի սննդի ապահովման հարցը լուծվում է հիվանդատիրոջ կողմից:	բժշկական կազմակերպությանում, Երեխայի բժշկական քարտերը տրամադրվում են համապատասխան բժշկական կազմակերպությունների փոխհամաձայնությամբ՝ Պատասխանատուների, իսկ դրա անհնարինության դեպքում՝ երեխայի ծնողի միջոցով: Երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման որակի կողմնորոշիչ ցուցանիշներն են վաղ հասակի երեխաների առողջացումով դուրս գրման ցուցանիշ, բաժիններից վերակենդանացման բաժանմունք հիվանդների տեղափոխման դեպքերի թիվ, ներհիվանդանոցային վարակների դեպքեր, հիվանդանոցային մահաբերության ցուցանիշ, այդ թվում մինչշուրջօրյա, կլինիկական և պաթանատոմիական ախտորոշումների համընկնման ցուցանիշ/տոկոս, պաթանատոմիական և հիստոլոգիական հետազոտությունների տոկոս, հետադարձ կապի ապահովում՝ երեխային սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության հետ: ԱԱՊ բժշկի կողմից ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության ներսում նեղ մասնագետներին ներքին ուղեգրումները կարող են կազմակերպվել ինչպես առանձին ուղեգրերի լրացմամբ, այնպես էլ Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում գրառում կատարելու միջոցով: Սահմանում է երեխայի հաշվառման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և գրանցման ընթացակարգերը: Նախադպրոցական ուսումնական հաստատություն յուրաքանչյուր երեխայի ընդունվելուց հետո մանկապարտեզի բուժքույրը դիմում է երեխային սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություն՝ Երեխայի բժշկական քարտը ստանալու նպատակով: Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության կողմից Երեխայի բժշկական քարտը լրացվում է՝ հիմք ընդունելով Երեխայի ամբուլատոր հսկողության քարտում գրանցված՝ առողջության գնահատման արդյունքները, և տրամադրվում նախադպրոցական հաստատության բուժքրոջը: Հիվանդանոցային մեկ բժշկական կազմակերպությունից մյուսը տեղափոխման դեպքում	սակայն լրացուցիչ ֆիզիկական ծանրաբեռնվածություն պահանջող սպորտաձևերի պարագայում ըստ անհրաժեշտության կազմակերպվում են նաև այլ նեղ մասնագետների զննումներ և լաբորատոր-գործիքային անհրաժեշտ հետազոտություններ: • Ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու ժամանակ առողջության գնահատումը իրականացվում է՝ հաշվի առնելով նշված ուսումնական հաստատությունների կողմից առաջարկվող և ուսումնական հաստատության տնօրենի կողմից հաստատված՝ մասանագիտական զննումների և լաբորատոր-գործիքային հետազոտությունների ցանկը: • Երեխաների՝ պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնությունն և սպասարկումը իրականացվում է համապատասխան լիցենզիա ունեցող հիվանդանոցային բժշկական կազմակերպություններում և վերականգնողական կենտրոններում (մանկական հիվանդանոցներ, ստացիոնար բուժհաստատությունների/միավորումների /կենտրոնների մանկական ստորաբաժանումներ, առողջարաններ և այլն): • Երեխաների հակատուբերկուլյոզային, ուռուցքաբանական, հեմատոլոգիական (օնկոհեմատոլոգիական) և մաշկավեներաբանական, մարզերում նաև հոգեբուժական ամբուլատոր մասնագիտացված դիսպանսեր բժշկական օգնությունը և սպասարկումը ապահովվում է մասնագիտացված դիսպանսերների (կենտրոնների) կամ մեծահասակների պոլիկլինիկաների համապատասխան կաբինետների միջոցով՝ տարածքային սպասարկման սկզբունքով: • Հանրապետության մակարդակով երեխաների և դեռահասների առողջության պահպանման, այդ թվում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման հետ կապված կազմակերպա-մեթոդական (ներառյալ խորհրդատվական) աշխատանքների ապահովումը իրականացվում է «Արաբկիր» Բժշկական Համալիր-Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից: • Տնային այցերն իրականացվում են առողջության առաջնային պահպանման (այսուհետ՝ ԱԱՊ) բժշկի

			հոսպիտալացման հիմք է հանդիսանում տեղափոխման էպիկրիզը: Մեկ հիվանդանոցային բժշկական կազմակերպությունից մյուսը հիվանդ երեխայի տեղափոխումը կատարվում է բժշկական կազմակերպությունների փոխհամաձայնությամբ: Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման գործընթացում պարտադիր է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության հետ հետադարձ կապի ապահովումը՝ այն է՝ հիվանդանոցային բժշկական կազմակերպության կլոր կնիքով հաստատված դուրս գրման էպիկրիզի տրամադրումը հիվանդի ծնողին կամ խնամակալին, ինչը վավերացվում է ծնողի/խնամակալի ստորագրությամբ՝ հիվանդության պատմության մեջ, իսկ 0-7 տարեկան երեխաների համար՝ նաև դուրս գրման վերաբերյալ տեղեկատվության հաղորդումը (հեռախոսագիր) ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություն կամ մարզային/քաղաքային առողջապահության և սոցիալական հարցերի վարչություն: Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունը հիվանդ երեխայի ստացիոնար ընդունվելու ժամանակ երեխայի ծնողին կամ այլ օրինական ներկայացուցչին ապահովում է հասցեական տեղեկատվությամբ երեխայի անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքների մասին: Իրազեկման փաստը վավերացվում է բժշկական փաստաթղթերում ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի ստորագրությամբ: Հիվանդանոցային մասնագիտացված բժշկական կազմակերպությունների կողմից երեխային դիսպանսերային հսկողության վերցնելու փաստի վերաբերյալ տեղեկացվում է երեխային սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունը: Համապատասխան նեղ մասնագիտացված բժշկական կազմակերպության դիսպանսերային կենտրոնի կողմից հերթական դիսպանսեր այցից հետո (դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաների դեպքում), ինչպես նաև առաջնակի հիվանդների համար հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային	(մանկաբույժ կամ ընտանեկան բժիշկ), իսկ առանձին դեպքերում նաև նեղ մասնագետի կողմից՝ ԱԱՊ բժշկի կողմից դրա անհրաժեշտության գրավոր հիմնավորման դեպքում:

			հետազոտումից կամ բուժումից հետո, հիվանդի ծնողին կամ այլ օրինական ներկայացուցչին տրվում է մասնագիտացված դիսպանսերային բժշկական հսկողություն իրականացնող բժշկական կազմակերպություններում հաշվառված երեխաների վարման անհատական պլանը՝ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության կողմից երեխայի հետագա հսկողությունը և բուժումը կազմակերպելու նպատակով, ինչը վավերացվում է ծնողի/խնամակալի ստորագրությամբ հիվանդության պատմության մեջ: Առողջարանային բուժման ավարտից հետո տեղամասային ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական կազմակերպություն ներկայացնելու համար երեխայի ծնողին տրամադրվում է հետադարձ կտրոն՝ առողջարանում իրականացված բուժման, դրա արդյունավետության, հետագա բուժման առաջարկների և վարակիչ հիվանդների հետ կոնտակտի վերաբերյալ: Լաբորատոր-գործիքային հետազոտությունների կրկնումից խուսափելու նպատակով ուղեգրին կցվում են ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունում կատարված լաբորատոր-գործիքային հետազոտությունների արդյունքները և/կամ քաղվածքը երեխայի բժշկական հսկողության քարտից: Տնային ստացիոնարում հիվանդ երեխայի բուժման ընթացքի վերաբերյալ տվյալները, իսկ առողջանալուց հետո էպիկրիզը լրացվում են «Երեխայի բուժհսկողության քարտում»: Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններում կազմակերպված տնային ստացիոնարի վերաբերյալ վարվում է հաշվառում և ներկայացվում է վիճակագրական հաշվետվություն: Ցերեկային ստացիոնարում հիվանդ երեխայի բուժման ընթացքի վերաբերյալ տվյալները, իսկ դուրս գրելուց հետո էպիկրիզը լրացվում են «Երեխայի բուժհսկողության քարտում»: Ցերեկային ստացիոնարում հիվանդ երեխայի բուժման դեպքում խնամակալին տրվում է անաշխատունակության թերթիկ կամ տեղեկանք՝ ընդհանուր հիմունքներով: Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններում կազմակերպված ցերեկային ստացիոնարի գործունեության վերաբերյալ վարվում է հաշվառում և ներկայացվում է վիճակագրական	

			հաշվետվություն:	
277.	**«Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-01-2013 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 42-Ն, ընդունված է՝ 12.08.2013, ուժի մեջ է՝ 14.09.2013* Հաստատում է «Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-01-2013 սանիտարական կանոնները և նորմերը:	1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում սննդի կազմակերպումը պայմանավորվում է երեխաների գտնվելու տևողությամբ՝ մինչև 3-3,5 ժամ՝ սնունդ չի կազմակերպվում, 3,5-5 ժամ՝ կազմակերպվում է մեկից երկու անգամվա սնունդ՝ նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատանքային ռեժիմին համապատասխան, 5 ժամից ավելի՝ սնունդը կազմակերպվում է նախադպրոցական ուսումնական հաստատության աշխատանքային ռեժիմին համապատասխան: 2. Սահմանում է առողջ սննդի և ճաշացուցակի կազմմանը, խոհարարական արտադրանքի պատրաստման պայմաններին, երեխաների սննդի կազմակերպմանը, հսկողությանը ներկայացվող և սանիտարական կանոնների ու նորմերի պահպանման պահանջները: 3. Հաստատում է նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների սնուցման ռեժիմը, առանձին տարիքային խմբերի երեխաների համար անհրաժեշտ սննդանյութերի և էներգիայի օրական ֆիզիոլոգիական պահանջի նորմերը, օրինակելի ճաշացուցակում սննդի օրաբաժնի էներգետիկ արժեքի (կալորիականության) ռացիոնալ բաշխումը ըստ սննդի ընդունման առանձին փուլերի, նախադպրոցական ուսումնական հաստատություններում մեկ երեխայի համար մեկ օրվա ընթացքում նախատեսված չափաբաժնի օրինակելի ծավալը, նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների համար սննդամթերքի միջին օրաբաժնի օրինակելի հավաքակազմը, առողջարանային տիպի նախադպրոցական հաստատություններում (բացի տուբերկուլոզային առողջարանների) բուժվող երեխաների համար սննդամթերքի միջին օրաբաժնի օրինակելի հավաքակազմը, սննդամթերքի փոխարինումը ըստ սպիտակուցների և ածխաջրատների և սննդամթերքի խոհարարական սառը մշակման արդյունքում թափոնի ելքի աղյուսակը:	Նախադպրոցական ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպման և կիրառման, օրինակելի ճաշացուցակի մշակման պատասխանատուն տնօրենն է և հաստատության կանոնադրության շրջանակներում գործատուի կողմից ներքին իրավական ակտով սահմանված համապատասխան պաշտոնական պարտականություններ ունեցող անձինք: Յուրաքանչուր օր լրացվում է «ճաշացուցակ-բաշխում» ձևաչափը, ինչի մեջ նշվում է մեկ երեխայի համար դուրս գրվող սննդամթերքի անվանումը և քաշը/քանակը: Սննդի կազմակերպման, այդ թվում սննդի օրաբաժնի որակական և քանակական կազմի, նրա սննդային և էներգետիկ արժեքի, ձեռքբերվող սննդամթերքի տեսականու և որակի, ինչպես նաև կերակրատեսակների պատրաստման, խոհարարական մշակման եղանակի նկատմամբ հսկողությունը իրականացնում է նախադպրոցական ուսումնական հաստատության բուժաշխատողը: Տեխնոլոգիական գործընթացի պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով յուրաքանչյուր պատրաստի կերակրատեսակից կատարվում է նմուշառում: Նմուշառումը կատարում է խոհարարը: Նմուշառումը կատարվում է խոտանորոշման հանձնաժողովի ներկայությամբ, որի կազմում ընդգրկվում են բուժաշխատողը, խոհարարը և տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը: Նմուշառման կարգի և օրվա նմուշների պահպանման պայմանների նկատմամբ հսկողությունը իրականացնում է բուժաշխատողը: Նմուշառված ճաշատեսակի գնահատումը զգայորոշման ցուցանիշների նկատմամբ կատարվում է խոտանորոշման հանձնաժողովի կողմից: Պատրաստի կերակրատեսակի, խոհարարական արտադրանքի գնահատումը իրականացվում է ըստ զգայորոշման ցուցանիշների, ինչի արդյունքները լրացվում են «Պատրաստի կերակրատեսակի, խոհարարական արտադրանքի խոտանորոշման մատյան»-ում: Սննդի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի խախտումների, ինչպես նաև անբավարար թերմիկ մշակման դեպքերի ժամանակ հանձնաժողովի	•

			կողմից չի թույլատրվում կերակրատեսակների բաշխումը՝ մինչև հայտնաբերված թերությունները վերացնելը: Նախադպրոցական ուսումնական հաստատության բուժաշխատողը սննդի օրաբաժնի որակական և քանակական կազմի, նրա սննդային և էներգետիկ արժեքի հաշվարկը և գնահատումը կատարում է 2 շաբաթը օրը մեկ, ինչի տվյալները գրանցում են «Սննդի օրաբաժնի հսկողության, սննդային և էներգետիկ արժեքի հաշվարկի մատյան»-ում: Ամեն օր, աշխատանքները սկսելուց առաջ, բուժաշխատողի կողմից կատարվում է նախադպրոցական ուսումնական հաստատության խոհանոցի աշխատողների ձեռքերի և մարմնի բաց հատվածների մաշկի զննում՝ թարախային վերքերի առկայության, ինչպես նաև վերին շնչուղիների կատարալ երևույթների և անգինաների նկատմամբ: Զննումների արդյունքները գրանցվում են «Առողջության մատյան»-ում:	
278.	**«Հանրակրթական և նախնական մասնագիտական կրթության ուսումնական հրատարակություններին ներկայացվող» N 2-3.4.07-11 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 02-Ն, ընդունված է՝ 04.04.2011, ուժի մեջ է՝ 26.05.2011* Հաստատում է «Հանրակրթական, նախնական մասնագիտական ուսումնական հրատարակություններին ներկայացվող» N 2-3.4.07-11 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը, «Դասագրքերի սանիտարահիգիենիկ փորձաքննության անցկացման ուղեցույցը» և «Դասագրքերի սանիտարահիգիենիկ փորձաքննություն եզրակացությունը», ուժը կորցրած է ճանաչում ՀՀ առողջապահության նախարարի 2007 թվականի փետրվարի 6-ի N 195 հրամանով հաստատված «Հանրակրթական դպրոցի և նախամասնագիտական հաստատության դասագրքերի տպագրությանը ներկայացվող	1. Կանոնները տարածվում են հանրակրթական և նախնական մասնագիտական կրթության համար նախատեսված պաշտոնապես թույլատրված հրատարակությունների՝ դասագրքերի, ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի, ինչպես նաև դիմորդների համար նախատեսված ուսումնական ձեռնարկների վրա: 2. Կանոնները ներառում են դասագրքերի, ուսումնական և գործնական պարապմունքների ձեռնարկների (այսուհետ՝ դասագիրք) զանգվածի, հայերեն համակարգչային տպատառերի, տպատառային ձևավորման, տպագրության որակի, ինչպես նաև դասագրքերի համար օգտագործվող տպագրանյութերին ներկայացվող պահանջները և նպատակաուղղված են սովորողների տեսողության օրգանների, հենաշարժական, սիրտանոթային համակարգերի հիվանդությունների կանխարգելմանը: 3. Դասագրքերը ըստ ուսումնական առարկաների ստորաբաժանվում են հետևյալ խմբերի՝ հումանիտար (այբբենարան, մայրենի լեզու, հասարակագիտություն, պատմություն, գրականություն, հայերեն և օտար լեզուներ, իրավագիտություն, ֆիզիկական կուլտուրա, աշխատանքի ուսուցում և այլն), մաթեմատիկական (մաթեմատիկա, հանրահաշիվ, երկրաչափություն, եռանկյունաչափություն, ինֆորմատիկա և այլն), բնագիտական (բնագիտություն, բնապահպանություն, աստղագիտություն, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, կենսաբանություն և այլն) և հատուկ՝ նախնական մասնագիտական ուսուցման համար (մեխանիկա, ռադիոէլեկտրոնիկա, էլեկտրոտեխնիկա, քիմիական տեխնոլոգիա, գյուղատնտեսություն, բժշկություն, մանկավարժություն, երաժշտություն և այլն): 4. Ուսումնական գործընթացում դասագրքի գործառնական նշանակությունից կախված դասագրքերը ստորաբաժանվում են՝ դասագիրք, ուսումնական ձեռնարկ, գործնական, որոնց մեջ մտնում են նոր սերնդի հրատարակությունները (գիրք-տետր, աշխատանքային տետր, աշակերտների ինքնուրույն աշխատանքի գիրք և այլն): 5. Դասագրքերը նախատեսվում են՝ տարրական (I-IV դասարաններ) դպրոցի համար (I աստիճան), միջին (V-IX դասարաններ) դպրոցի համար (II աստիճան) և ավագ (X-XII դասարաններ) դպրոցի համար (III աստիճան): Նախնական մասնագիտական կրթության ուսումնական հրատարակությունները, ըստ տարիքային խմբերի, հարկավոր է դասել III աստիճանին: 6. Սահմանում է դասագրքերին ներկայացվող ընդհանուր հիգիենիկ պահանջները, հումանիտար առարկաների դասագրքերի ձևավորմանը, մաթեմատիկական, բնագիտական, նախնական մասնագիտական կրթության մասնագիտական առարկաների դասագրքերի տառատեսակային ձևավորմանը և պոլիգրաֆիկ նյութերին ներկայացվող պահանջները:	Սանիտարահիգիենիկ փորձաքննության են ներկայացվում յուրաքանչյուր դասագրքի 3 նմուշ և տպագրանյութերի վերաբերյալ տեղեկությունները: Կազմակերպությունը դասագրքի, ուսումնական ձեռնարկի, գիրք-տետրի, ուսումնական գրականության և կոմբինացված հրատարակության նմուշօրինակները ներկայացնում է սանիտարահիգիենիկ փորձաքննության, դրանց տպագրությունից հետո՝ 15 օրվա ընթացքում: Հիգիենիկ փորձաքննության նաև ներկայացվում են տեղեկություններ. դասագրքի վերնագիրը, դասագրքի նպատակային նշանակությունը, հրատարակչության անվանումը և հասցեն, հրատարակման տարեթիվը, տպարանի անվանումը և հասցեն, տպագրության հանձնման ամսաթիվը, հրատարակության ձևաչափը, թղթի տեսակը ու դրա բնութագիրը հավաստող փաստաթուղթը, գարնիտուրը՝ հիմնական տեքստի տեսակաշարի անվանումը, տպագրության տեսակը, տպաքանակը, տպարանին տրված պատվերի համարը: Սանիտարահիգիենիկ փորձաքննության տվյալների հիման վրա տրվում է եզրակացություն: Հաստատում է դասագրքերի սանիտարահիգիենիկ փորձաքննության կատարման ուղեցույցը:	• Գրքերի հրատարակությամբ և/կամ հրատարակչական այլ գործունեությամբ զբաղվող կազմակերպություններ

	հիգիենիկ պահանջներ» N 2-III-3.4.06-05 սանիտարական կանոնները և նորմերը:			
279.	**«ՀՀ-ում իմունականխարգելման գործընթացի կազմակերպում և իրականացում» ՍԿ 3.1.6.009-08 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի հաստատման մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 20-Ն, ընդունված է՝ 15.10.2008, ուժի մեջ է՝ 17.11.2008* Հաստատում է «Հայաստանի Հանրապետությունում իմունականխարգելման գործընթացի կազմակերպում և իրականացում» ՍԿ 3.1.6.009-08 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը	1. Կանոնները ներառում են ՀՀ-ում կառավարելի վարակիչ հիվանդությունների (ԿՎՀ) դեմ պատվաստումների կատարման, բժշկական հակացուցումների և հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վարման, բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների պահանջարկի որոշման, պահպանման, տեղափոխման, հաշվառման, ծախսի պլանավորման, ինչպես նաև բաց սրվակների օգտագործման պահանջները, որոնք ուղղված են ԿՎՀ վերացմանը, ԿՎՀ հիվանդացության և մահացության, չհիմնավորված հակացուցումների դեպքերի նվազեցմանը նպատակային քանակակազմերի շրջանում պատվաստումներում ժամանակին (95% և ավելի) ու լիարժեք ընդգրկվածության (բոլոր պատվաստումներով՝ 90% և ավելի), ինչպես նաև իմունականխարգելման անվտանգության և արդյունավետության ապահովմանը: 2. Պլանային կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են բուժկանխարգելիչ կազմակերպություններում (անկախ կազմակերպաիրավական ձևից), որոնք իրավունք ունեն իրականացնելու երեխաների, դեռահասների և մեծահասակների պատվաստումներ: Իմունականխարգելման գործընթացում իմունականխարգելման (կանխարգելիչ պատվաստումների) կաբինետը խորհրդատվական, կազմակերպամեթոդական և պատվաստումների իրականացման հիմնական միավորն է: 3. Կանխարգելիչ պատվաստումներ կատարում են բժշկական հակացուցումներ չունեցող անձանց՝ վերջիններիս, ինչպես նաև անչափահասների կամ անգործունակ ճանաչված անձանց ծնողների կամ օրինական ներկայացուցչի համաձայնության դեպքում: 4. Համաճարակաբանական ցուցումով կանխարգելիչ պատվաստումներ իրականացվում են մանկական նախադպրոցական կազմակերպությունների, հանրակրթական, հատուկ կրթական և այլ կազմակերպությունների բուժկետերում՝ պահպանելով նորմատիվ իրավական և մեթոդական փաստաթղթերի պահանջները: Անհրաժեշտության դեպքում Առողջապահության նախարարության որոշմամբ կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են աշխատավայրում և ուսումնական կազմակերպությունում՝ պատվաստումային ջոկատների ուժերով: 5. Բուժկանխարգելիչ կազմակերպության ղեկավարը հաստատում է իմունականխարգելման կաբինետի, ինչպես նաև արտագնա/շարժական պատվաստումային ջոկատների աշխատանքային կարգը, հրամանով նշանակում է պատասխանատու անձինք պատվաստումային գործընթացի կազմակերպման և ղեկավարման (մանկական գծով տեղակալին կամ մանկական բաժնի վարիչին, մեծահասակների պոլիկլինիկայում՝ վարակաբանին), կառավարելի վարակիչ հիվանդությունների վարման (վարակաբանի բացակայության դեպքում), բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների ստացման, հաշվառման, պահպանման, սառցային շղթայի պահպանման, պատվաստումների ընթացքում գոյացած բժշկական թափոնների հավաքման, պահպանման և ոչնչացման համար: 6. Պատվաստումների կատարումը գյուղական վայրերում իրականացվում է գյուղաբժշկական ամբուլատորիայում, առողջության կենտրոնում և բուժամանկաբարձական կետում՝ ապահովելով անվտանգ պատվաստումների իրականացման անհրաժեշտ պահանջները: 7. Կանխարգելիչ պատվաստումների տարեկան պլանը կազմվում է տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի և իմունականխարգելման կաբինետի բժշկի (բացակայության դեպքում՝ բուժքրոջ), գյուղական վայրերում՝ բժշկի կամ բուժքրոջ կողմից ելնելով՝ երեխաների տարիքային կազմից, կանխատեսվող նորածինների թվից (նախորդ 3 տարվա ընթացքում ծնված երեխաների միջին թիվ) և նախորդ տարում պատվաստումներից դուրս մնացած երեխաների թվից: 8. Մանկական հատուկ կրթական կազմակերպությունների (մանկատուն, հատուկ դպրոցներ, կենտրոններ և այլն) երեխաները պատվաստվում են տեղերում՝ տվյալ կազմակերպությունը սպասարկող բուժկանխարգելիչ կազմակերպության բուժանձնակազմի կողմից՝ պահպանելով պատվաստման գործընթացի բոլոր պահանջները: 9. Պատվաստման ենթակա անձինք պատվաստումից առաջ հետազոտվում են բժշկի (բժշկի բացակայության դեպքում՝ բուժքրոջ) կողմից. գնահատվում է ընդհանուր առողջական վիճակը, նրանց միաժամանակ կատարվում է ջերմաչափում և հարցում (ծնողներին կամ ուղեկցողին) երեխայի առողջական վիճակի, պատվաստանյութի նախորդ չափաբաժիններից ռեակցիաների վերաբերյալ և տեղեկացվում են հետպատվաստումային շրջանում հնարավոր ռեակցիաների մասին: 10. Պատվաստումից առաջ ցուցված չէ ապագերզգայունացնող (հակահիստամինային) պատրաստուկների օգտագործումը: Անհրաժեշտության դեպքում պատվաստումներն իրականացվում են ստացիոնար պայմաններում՝ երեխաների շրջանում կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների սահմանման, պատվաստումներից հրաժարումների դեպքերի քննարկման և խորհրդատվության տրամադրման հանձնաժողովի որոշմամբ և համապատասխան բուժկանխարգելիչ կազմակերպություն ուղեգրմամբ: 11. Վարակիչ կամ սոմատիկ հիվանդությունից, այդ թվում՝ թեթև ընթացող՝ հազից և մրսածությունից հետո երեխան պատվաստվում է առողջացումից անմիջապես հետո՝ համաձայն բժշկի գնահատման: Կատարված կանխարգելիչ պատվաստումների տվյալները գրանցվում են համապատասխան գրանցամատյանում և երեխաների համար՝ կանխարգելիչ պատվաստումների քարտում (ձև 063), «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում», «Կազմակերպ երեխայի բժշկական քարտում» (ձև 026/հ): 12. Կապույտ հազի դեմ պատվաստման ենթակա են 3 ամսականից մինչև 3 տարեկան 11 ամսական 29 օրական երեխաները: Պատվաստումների կուրսը եռանվագ է՝ 45 օր ընդմիջումներով (առաջին դեղաչափը՝ 3 ամսականում, երկրորդը՝ 4,5 ամսականում, երրորդը՝ 6 ամսականում): Ընդմիջումների նշված ժամկետը չի թույլատրվում կրճատել: Առողջական վիճակի հետ կապված պատվաստումների միջև ընդմիջումների երկարացման դեպքում պատվաստումը կատարվում է երեխայի առողջացումից անմիջապես հետո: 13. Դիֆթերիայի դեմ պատվաստման ենթակա են երեխաները սկսած 3 ամսականից, ինչպես նաև դեռահասները և մեծահասակները համաձայն Պատվաստումների ազգային օրացույցի: Պատվաստումների կուրսը եռանվագ է՝ 45 օր ընդմիջումներով (առաջին դեղաչափը՝ 3 ամսականում, երկրորդը՝ 4.5 ամսականում, երրորդը՝ 6 ամսականում): Ընդմիջումների նշված ժամկետը չի	Յուրաքանչյուր տարվա սկզբում՝ մինչև հունվարի 15-ը, բուժկանխարգելիչ կազմակերպությունը ՊՀՀՏ մարզային և Երևան քաղաքի տարածքային համապատասխան կենտրոն է ներկայացնում տարածքում հաշվառված երեխաների տարիքային կազմը և տարվա նախնական պլանը՝ ըստ առանձին պատվաստումների: Մինչև հունվարի 20-ը տարածքում հաշվառված երեխաների տարիքային կազմը և տարվա նախնական պլանը ՊՀՀՏ մարզային և Երևան քաղաքի տարածքային կենտրոնների համաճարակաբանների կողմից վերանայվում, ամփոփվում և ներկայացվում է հաստատման՝ ՊՀՀՏ կենտրոնական ապարատ: Կազմված ամսական պլանը արտացոլվում է պատվաստման ենթակա երեխաների պլանավորման մատյանում, որը վարվում է տեղամասային բուժքույրերի կողմից և պատվաստումներն իրականացվում են վերջինիս համաձայն: Նախորդ ամսվա պլանից դուրս մնացած երեխաները տեղափոխվում են հաջորդ ամսվա պլանի մեջ: Տարին երկու անգամ (գարուն, աշուն) բուժկանխարգելիչ կազմակերպության ղեկավարի հրամանով կատարվում է նորածինների հաշվառում՝ յուրաքանչյուր նորածնի համար 063 ձևի լրացմամբ, նոր ընդգրկված երեխաների հաշվառում՝ յուրաքանչյուր երեխայի համար 063 ձևի լրացմամբ, պայմանագիր ունեցող երեխաների հաշվառում (բժշկի ազատ ընտրության դեպքում), հաշվառված երեխաների ցանկի ճշգրտում և ամփոփում կազմակերպության ղեկավարության կողմից (տնօրեն, բաժնի վարիչ, պատասխանատու անձ):Հաշվառումից դուրս եկած երեխաների 063 ձևերը պահվում են առանձին (արխիվ), իսկ վերադարձի դեպքում նրանք կրկին հաշվառվում են՝ նշելով 063 ձևի վրա նոր հաշվառման ամսաթիվը: Պատվաստումից առաջ երեխայի զննման տվյալները գրանցվում են «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում»: ԲԿԿ-ի կողմից մանկական և դեռահասների կազմակերպություններ հաճախող երեխային տրվում է տեղեկանք՝ ստացած պատվաստումների վերաբերյալ, մանկական և դեռահասների կազմակերպություններում առկա 026/հ	• Բուժկանխարգելիչ կազմակերպություններ • Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն • Երեխաների կանխարգելիչ պատվաստումների հակացուցումների հետազոտությունը և խորհրդատվությունն իրականացվում է «Արաբկիր բժշկական համալիր - Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտում» և Երևանի պետական բժշկական համալսարանի թիվ 2 կլինիկայում պետական պատվերի շրջանակներում: • Երեխաների շրջանում կանխարգելիչ պատվաստումների նկատմամբ հակացուցումների որոշում և սահմանում, հրաժարականների քննարկում և խորհրդատվություն իրականացվում են հանձնաժողովների կողմից. • Երեխաների շրջանում կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների սահմանման, պատվաստումներից հրաժարականների քննարկման և խորհրդատվության հանձնաժողովները ձևավորվում են պատվաստում իրականացնող բոլոր ԲԿԿ-ներում: Երեխաների շրջանում կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումները ձևակերպվում են տեղամասային մանկաբույժի կողմից: Հանձնաժողովի պարտականություններն են՝ հակացուցումների սահմանում (բացառությամբ՝ սուր ընթացքով վարակիչ և սոմատիկ հիվանդությունների, որոնց ձևակերպումը կատարվում է մանկաբույժի կողմից), պատվաստումներից հրաժարվողների (ծնողների) խորհրդատվություն և իրազեկում: հակացուցումների հիմնավորման նպատակով ուղեգրում հետազոտության: • Իմունականխարգելման գործընթացն իրականացվում է քաղաքներում՝ մանկական բուժկանխարգելիչ կազմակերպությունների ղեկավարների, մանկաբույժների, ընտանեկան բժիշկների, միջին բուժաշխատողների, համաճարակաբանների կողմից, գյուղերում՝ մանկաբույժների, ընտանեկան բժիշկների, մանկական ծառայության պատասխանատու բժիշկների, միջին բուժաշխատողների,

		թույլատրվում կրճատել: Առողջական վիճակի հետ կապված պատվաստումների միջև ընդմիջումների մեծացման դեպքում պատվաստումը կատարվում է երեխայի առողջացումից անմիջապես հետո: 14. Կարմրուկի, կարմրախտի և համաճարակային պարոտիտի դեմ պատվաստումների ենթակա են 12 ամսական երեխաները: Երկրորդ դեղաչափը կատարվում է 6 տարեկան երեխաներին: 15. Պոլիոմիելիտի դեմ պատվաստման ենթակա են երեխաները՝ սկսած 3 ամսականից: Պատվաստումների կուրսը եռանվագ է 45 օր ընդմիջումով (առաջին դեղաչափը՝ 3 ամսականում, երկրորդը՝ 4,5 ամսականում, երրորդը՝ 6 ամսականում): Ընդմիջումների նշված ժամկետը չի թույլատրվում կրճատել: Առողջական վիճակի հետ կապված պատվաստումների միջև ընդմիջումների մեծացման դեպքում պատվաստումը կատարվում է երեխայի առողջացումից անմիջապես հետո: Չորրորդ դեղաչափը կատարվում է 18 ամսականում, հինգերորդը՝ 20 ամսականում, վեցերորդը՝ 6 տարեկանում: Պատվաստումների ազգային օրացույցից շեղումների դեպքում չորրորդ դեղաչափը կատարվում է երրորդից ոչ շուտ քան 3 ամիս հետո: Եթե երրորդ դեղաչափը կատարվել է 4 և ավելի տարեկանում, ապա չորրորդ և հինգերորդ դեղաչափերը չեն կատարվում: 16. Վիրուսային Հեպատիտ Բ-ի դեմ պատվաստման առաջին դեղաչափը կատարվում է նորածիններին՝ կյանքի առաջին 24 ժամվա ընթացքում: Երկրորդ դեղաչափը կատարվում է 1,5 ամսականում, երրորդը՝ 6 ամսականում: Պատվաստումների միջև ինտերվալը չի կրճատվում: 17. Տուբերկուլյոզի դեմ պատվաստման առաջին դեղաչափը կատարվում է նորածիններին՝ կյանքի առաջին 24-ից 48 ժամվա ընթացքում, նաև կարելի է կատարել առաջին 24 ժամվա ընթացքում հեպատիտ Բ-ի հետ: Երկրորդ դեղաչափը կատարվում է 6-7 տարեկանում՝ սպի չունեցող երեխաներին: 18. Դեղին տենդի դեմ պատվաստման ենթակա են մեծահասակներն ու երեխաները, սկսած 9-ամսական հասակից, ովքեր մեկնում են դեղին տենդի առումով էնզոոտիկ վայրեր, ինչպես նաև դեղին տենդի հարուցչի կենդանի կուլտուրայի հետ աշխատողները: Պատվաստումը կատարում են ոչ ուշ, քան 10 օր էնզոոտիկ վայրեր գնալուց առաջ: 19. Գրիպի դեմ պատվաստումներն իրականացվում են վարակման ենթակա բարձր ռիսկի անձանց (60 տարեկանից բարձր, քրոնիկ սոմատիկ հիվանդություններով տառապող, սուր շնչառական հիվանդություններով հաճախ հիվանդացող, նախադպրոցական տարիքի երեխաները, դպրոցականները, բուժաշխատողները, սպասարկման ոլորտի աշխատողները, տրանսպորտի, ուսումնական կազմակերպությունների և այլոց): Գրիպի դեմ պատվաստումներն իրականացվում են ամեն տարի աշնանը (հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին) գրիպի նախահամաճարակային շրջանում: 20. 1-2 -3 տարեկանից սկսած (ըստ ուղեկցող հրահանգի) երեխաները, ովքեր բնակվում են վիրուսային հեպատիտ Ա-ի բարձր հիվանդացություն գրանցված վայրերում, ինչպես նաև մանկական նախադպրոցական կազմակերպությունների անձնակազմը ենթակա են պատվաստման Հեպատիտ Ա-ի դեմ: 21. Հեպատիտ Բ-ի դեմ պատվաստումներն իրականացվում են նախկինում չպատվաստված երեխաների և մեծահասակների այն ընտանիքներում, որտեղ կան ավստրալիական հակածինակիրներ կամ քրոնիկ հեպատիտով հիվանդներ, մանկատների և հատուկ (գիշերօթիկ) հանրակրթական կազմակերպությունների երեխաների, ինչպես նաև այն երեխաների և մեծահասակների շրջանում, ովքեր պարբերաբար ստանում են արյան պատրաստուկներ: 22. Համաճարակաբանական ցուցումով անմիջապես պատվաստման ենթակա են դիֆթերիայով հիվանդի հետ սերտ շփված անձինք, ովքեր չեն պատվաստվել դիֆթերիայի դեմ, ինչպես նաև երեխաները և դեռահասները, ովքեր ըստ Պատվաստումների ազգային օրացույցի ենթակա են հերթական պատվաստման և մեծահասակ անձինք, ովքեր ըստ բժշկական փաստաթղթերի գրանցումների դիֆթերիայի դեմ վերջին անգամ պատվաստվել են 10 և ավելի տարի առաջ: 23. ՄԻԱՎ վարակակիր մայրերից ծնված երեխաների կանխարգելիչ պատվաստումների կատարման մոտեցումները նույնն են, ինչ առողջ երեխաներինը, բացառությամբ կենդանի պատվաստանյութերով պատվաստումների. ԲՑԺ պատվաստումը կատարվում է՝ ծնվելուց հետո հնարավորինս շուտ, ԲՑԺ, կարմրուկի, կարմրախտի, խոզուկի և պոլիոմիելիտի դեմ պատվաստումներն իրականացվում են, եթե երեխայի մոտ ՄԻԱՎ-ի կլինիկական ախտանշանները բացակայում են և իմունասուպրեսիան չափավոր է, պոլիոմիելիտի դեմ կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են պոլիոմիելիտի ապակտիվացված (ԻՊՎ) պատվաստանյութով: 24. Հեմոֆիլիայով հիվանդ երեխաներին, հնարավոր արյունահոսության կանխման նպատակով, միջմկանային ներարկումը փոխարինվում է ենթամաշկային ներարկումով՝ օգտագործելով հատուկ բարակ ասեղներ: Ներարկումը կատարվում է մարմնի այն մասերում, որտեղ մաշկը շատ մոտ է ոսկրին և հնարավոր է ներարկման տեղը սեղմել վերջինիս՝ կրունկի հետևի կամ դաստակի համապատասխան մասում: Ասեղը մտցվում է ոսկրի մակերեսին զուգահեռ: Պատվաստումները կատարվում են արյան մակարդելիության գործոնների որոշման ներքո: 25. Կենդանի վիրուս պարունակող պատվաստանյութով պատվաստված երեխան համարվում է չպատվաստված, եթե պատվաստումից հետո մինչև 2 շաբաթ երեխային ներարկվել է իմունագլոբուլին, շիճուկ կամ ամբողջական արյուն: 26. ԲՑԺ, կարմրուկի, ԿԿ և ԿԿԽ պատվաստումները հակացուցված են հղիներին: Կարմրախտի պատվաստումից հետո խորհուրդ է տրվում խուսափել հղիությունից 1 ամսվա ընթացքում, սակայն, եթե պատահմամբ պատվաստում է կատարվել հղիին, ապա վերջինս հղիությունն ընդհատելու ցուցում չէ:	ձևերում համապատասխան լրացումների նպատակով: Պատվաստումների մոնիթորինգը ներառում է պատվաստումների գրանցման հիմնական փաստաթղթերի վարում՝ «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտ» (ձև 112/հ), «Կանխարգելիչ պատվաստման քարտ»՝ 063 ձև, պատվաստումների պլանավորման մատյան, պատվաստումների գրանցամատյան, պատվաստումների հաշվառման թերթիկ, ամփոփ հաշվետվական ձևերի լրացում (ձև Պ-1/հ, ձև Պ-2/հ, ձև Պ-3/հ, ձև Պ-4/հ), ներառյալ սպասարկման տարածքում մանկական նախադպրոցական կազմակերպությունները և դպրոցները, պատվաստումների իրականացման գործընթացի մոնիթորինգ՝ պատվաստումների իրականացման գործընթացի վերաբերյալ տվյալների հավաքում, ամփոփում, մոնիթորինգի գծապատկերի (գրաֆիկ) կազմում՝ ըստ պատվաստումների ամսական հաշվետվությունների (ձև Պ-1/հ, ձև Պ-2/հ, ձև Պ-3/հ) և կառավարելի վարակիչ հիվանդությունների հաշվետվությունների (ձև Պ-4/հ)՝ պատվաստումներում ընդգրկվածության, ընդգրկվածության կորստի, ինչպես նաև կառավարելի վարակիչ հիվանդացության մակարդակների գնահատման համար (ներառյալ սպասարկման տարածքում մանկական նախադպրոցական կազմակերպությունները և դպրոցները), պատվաստումների գործընթացի ուսումնասիրություն ՊՀՀՏ մարզային, Երևան քաղաքի տարածքային կենտրոնների կողմից՝ եռամսյակը մեկ անգամ,ամփոփ տվյալների և պատվաստումների գործընթացի ուսումնասիրությունների հիման վրա բոլոր մակարդակներում վերլուծության իրականացում՝ խնդիրների հայտնաբերման և դրանց վերացմանն ուղղված համապատասխան միջոցառումների մշակման նպատակով: Հանձնաժողովը մինչ «Հրաժարված» որոշում կայացնելը հրավիրում է երեխայի ծնողներին՝ խորհրդատվության և իրազեկման նպատակով: Երեխան համարվում է «հրաժարված», եթե համապատասխան խորհրդատվությունից և իրազեկումից հետո ծնողը դիրքորոշումը չի փոխում և ներկայացնում է գրավոր հրաժարական՝ նշելով տրամադրված խորհրդատվության և երեխայի չպատվաստվելու դեպքում վերջինիս վարակիչ հիվանդությամբ վարակվելու վտանգի վերաբերյալ իր	համաճարակաբանների կողմից: • Իմունականխարգելման կաբինետի բժշկի աշխատանքը ներառում է սպասարկման տարածքի մանկական ազգաբնակչության ժամանակին և լիարժեք հաշվառման մշտական հսկողությունը, հակացուցումներով երեխաների հսկողության իրականացում՝ նրանց ընտրանքային զննումը, հանձնաժողովին հակացուցումներով, հրաժարված դեպքերի ներկայացումը, հսկողությունը ստացիոնարում նրանց հետազոտությունների արդյունքների ներկայացման և հանձնաժողովում հակացուցումների, հրաժարականի սահմանման և հակացուցումներով երեխաների համար նախապատրաստման պլանի կատարողականի նկատմամբ, կազմակերպված և անկազմակերպ երեխաների պատվաստումային կարգավիճակի գնահատում և առկա խնդիրների վերացմանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրականացումը, ինչպես նաև ծնողին տրվող «Կանխարգելիչ պատվաստման քարտում» համապատասխան գրանցումը: • Տեղամասային (ընտանեկան, ամբուլատորիայի, ԲՄԿ-ի) բժշկի աշխատանքը ընդգրկում է պատվաստված երեխաների նկատմամբ բժշկական հսկողության իրականացումը, հանձնաժողովին հակացուցումներով, հրաժարված դեպքերի ներկայացումը, հսկողություն ստացիոնարում նրանց հետազոտությունների արդյունքների ներկայացման և հանձնաժողովում հակացուցումների, հրաժարականի սահմանման և հակացուցումներով երեխաների համար նախապատրաստման պլանի կատարողականի նկատմամբ, պատվաստված երեխաների առողջական վիճակի դիտարկումը՝ հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի (ՀԱԴ) ժամանակին հայտնաբերման նպատակով, անհրաժեշտության դեպքում ՀԱԴ-ով երեխաների ուղեգրում հոսպիտալացման համար, ծնողներին տրվող «Պատվաստման քարտում» համապատասխան գրանցումը, պատվաստվողին և/կամ ծնողին իրազեկում հետպատվաստումային շրջանում հնարավոր ռեակցիաների մասին, ծնողներին իրազեկումը և խորհրդատվությունը՝ պատվաստումային գործընթացի վերաբերյալ:

			իրազեկվածության մասին: Ծնողի/պատվաստվողի կողմից գրավոր հրաժարականը արձանագրվում է «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում» կամ նորածնի զարգացման քարտում (ձև 097/հ), մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտում: Բուժկանխարգելիչ կազմակերպություններում հետպատվաստումային անհաջող դեպքերը գրանցվում են համապատասխան փաստաթղթերում, այդ թվում՝ «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում» կամ «Նորածնի զարգացման պատմությունում»: Հետազոտման իրականացումից հետո տրվում է եզրակացություն երեխայի առողջական վիճակի վերաբերյալ: Եզրակացությունը ներկայացվում է երեխային ուղեգրած տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության «Երեխաների շրջանում կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների սահմանման, պատվաստումներից հրաժարումների դեպքերի քննարկման և խորհրդատվության տրամադրման հանձնաժողովին»:	• Տեղամասային (Առողջության կենտրոնի, ամբուլատորիայի, ԲՄԿ-ի) բուժքրոջ աշխատանքը ներառում է դիսպանսեր հսկողության ներքո հակացուցումներով երեխաների հրավիրումը տեղամասային բժշկի մոտ, պատվաստված երեխաների առողջական վիճակի դիտարկում՝ը հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի ժամանակին հայտնաբերման նպատակով, առկայության դեպքում անմիջապես տեղեկացնում է բժշկին, քարտադարանի բուժքրոջ ամսական տեղեկացումը՝ յուրաքանչյուր երեխայի չպատվաստվելու պատճառների, հաշվառումից դուրս բերված, կազմակերպված կազմակերպություն ընդունված երեխաների մասին, քարտադարանի բուժքրոջն ամսական տեղեկատվության տրամադրումը՝ սպասարկման տարածքում մանկական նախադպրոցական կազմակերպություններ և դպրոցներ հաճախող երեխաների պատվաստումային կարգավիճակի վերաբերյալ, ծնողներին տրվող «Կանխարգելիչ պատվաստման քարտում» համապատասխան գրանցումը, ինչպես նաև ծնողներին իրազեկումը և խորհրդատվությունը՝ պատվաստումային գործընթացի վերաբերյալ: • Պատվաստումային կաբինետի բուժքրոջ աշխատանքը ներառում է պատվաստումների գրանցումը 0063 ձևերում, «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում»:
280.	**«Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտի և երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտի վարման ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 17-Ն, ընդունված է՝ 24.09.2008, ուժի մեջ է՝ 17.11.2008* Հաստատում է մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտի, դրա շրջանառության հաշվառման մատյանի ձևը և երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտի վարման ուղեցույցը, բնակչի այցի հաշվառման ձևը, համառոտ գրառումների թերթիկի ձևը:	1. Կարգավորում է առողջության առաջնային պահպանման հաստատություններում (պոլիկլինիկաներ, առողջության առաջնային պահպանման կենտրոններ, ամբուլատորիաներ, ընտանեկան բժիշկների գրասենյակներ) (այսուհետ՝ ԱԱՊ հաստատություններ) մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտերի և երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտերի վարման գործընթացը՝ ներառյալ դրանց տրամադրումը, պահպանումը, շրջանառությունը ԱԱՊ հաստատության բժիշկ-մասնագետների մոտ և վերադարձը մատենավարման (գրանցման) բաժին:	ԱԱՊ հաստատությունների բուժակ-մանկաբարձական կետերում երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտը լրացվում է բուժքրոջ կողմից: Նորածիններին հաշվառման վերցնելու համար փոխանակման քարտը պարտադիր է, բացառությամբ տնային ծննդաբերությունների դեպքում, երբ հաշվառման վերցնելու համար ներկայացնում են ծննդյան մասին տեղեկանք: Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտերը պահվում են ԱԱՊ հաստատության գրանցման/մատենավարման բաժնում, առանձին գրադարակներում, բացառությամբ բուժակ-մանկաբարձական կետերի, որտեղ բժշկական հսկողության ամբուլատոր քարտերը պահվում են այդ կետերում: Յուրաքանչյուր բժշկին կցված տեղամասի բնակչության ամբուլատոր քարտերը պահվում են առանձին պահարաններում՝ ըստ բնակության	• ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

			վայրի: Երեխաների ամբուլատոր քարտերը կարող են պահվել նաև բժշկի աշխատասենյակում՝ ըստ երեխայի ծննդյան տարեթվի և անուն-ազգանունի: Ազատ ընտրության սկզբունքով այլ տեղամասերից տվյալ բժշկի մոտ հավաքագրված (գրանցված) երեխաների բժշկական հսկողության ամբուլատոր քարտերը պահպանվում են այդ բժշկի կողմից սպասարկվող երեխաների բժշկական հսկողության ամբուլատոր քարտերի հետ: Անհետաձգելի դեպքերում եթե երեխայի վիճակը ծանր է, մատենավարը երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտը հանձնում է ծնողին, իսկ 14 տարեկանից բարձր երեխաների դեպքում կարող է հանձնվել նաև անձամբ երեխային, որն էլ անմիջապես դիմում է նեղ մասնագիտացմամբ բժշկին: ԱԱՊ հաստատությունից այլ բժշկական հաստատություն ուղեգրելու դեպքում ամբուլատոր բժշկական քարտը բնակչին չի տրվում: ԱԱՊ հաստատության նեղ մասնագիտացմամբ բժշկի օգնության անհրաժեշտության դեպքում մանկաբույժը կամ ընտանեկան բժիշկը բժշկական հսկողության ամբուլատոր քարտը հանձնում է բնակչին, որն էլ դիմում է նեղ մասնագիտացմամբ բժշկին: Այցելության ընթացքում նեղ մասնագիտացմամբ բժիշկը լրացնում է բժշկական հսկողության ամբուլատոր քարտը: Մասնագիտացված կաբինետի բուժքույրը ամբուլատոր քարտը վերադարձնում է ուղեգրող բժշկին: ԱԱՊ հաստատությունից դուրս ուղեգրելու դեպքում բժշկական հսկողության ամբուլատոր քարտը տվյալ հաստատությունից դուրս չի տրվում:	
281.	**«Մանկական կոշիկներին, դրանց պատրաստման համար օգտագործվող բնական և արհեստական հումքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.iii.4-8 սանիտարական կանոնները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 732-Ն, ընդունված է՝ 19.04.2007, ուժի մեջ է՝ 16.06.2007* Հաստատում է «Մանկական կոշիկներին, դրանց պատրաստման համար	1. Բնական և արհեստական հումքից ու նյութերից պատրաստված կոշիկները սանիտարաքիմիական և թունաբանահիգիենիկ ցուցանիշներով պետք է համապատասխանեն սանիտարական կանոններով սահմանված պահանջներին, իսկ դրանց օգտագործման ժամանակ պետք է բացառվեն. օրգանիզմի ջերմակարգավորման համակարգի խաթարումները և առողջությանը ցանկացած բնույթի վնաս հասցնելու հնարավորությունը: 2. Սահմանում է մանկական կոշիկների արտադրման մեջ թույլատրելի հումքն ու նյութերը. 3. Սահմանում է կոշիկի փորձաքննությունը կատարելու դեպքերը և փորձաքննության կարգը:	Կոշիկների և դրանց պատրաստման ժամանակ օգտագործվող հումքին ներկայացվող պահանջները, փորձաքննության արդյունքների հիման վրա, հավաստվում են հիգիենիկ եզրակացությամբ: Հիգիենիկ փորձաքննությունը իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության և (կամ) «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ կողմից: Հիգիենիկ եզրակացությունը տրվում է ՀՀ առողջապահության	• ՀՀ առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն • «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» ՓԲԸ

	օգտագործվող բնական և արհեստական հումքին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.III.4-8 սանիտարական կանոնները:		նախարարության Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից մինչև 5 (հինգ), իսկ փորձնական խմբաքանակի համար՝ մինչև մեկ տարի ժամկետով:	
282.	**«Ֆիզիկական դաստիարակության համալիր ծրագրի համաձայն հանրակրթական հաստատությունների բոլոր աշակերտներին ուսումնական տարվա սկզբին բժշկական զննման ենթարկելու և արդյունքում հիմնական, նախապատրաստական և հատուկ խմբերի բաժանման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 1075-Ն, ընդունված է՝ 22.09.2006, ուժի մեջ է՝ 25.12.2006* Հաստատում է մարդու առողջության վրա ծխախոտի ներգործած բացասական ազդեցության վերաբերյալ նախազգուշացման տեքստերը:	1. Հաստատում է ֆիզիկական դաստիարակության համալիր ծրագրի համաձայն հանրակրթական հաստատությունների բոլոր աշակերտներին ուսումնական տարվա սկզբին բժշկական զննման ենթարկելու և արդյունքում հիմնական, նախապատրաստական և հատուկ խմբերի բաժանման չափորոշիչը 2. Հանրակրթական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման հիմնական, նախապատրաստական և հատուկ խմբերը բաժանվում են՝ ելնելով երեխայի հիվանդության պատմության տվյալներից, ֆիզիկական զարգացումից ու պատրաստվածությունից, առողջական վիճակից, օրգանիզմի մարզվածության աստիճանից: 3. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման խմբերի բաժանումը կատարվում է ուսումնական տարվա սկզբում տարածքային սպասարկման բժշկական հաստատության կողմից (տեղամասային պոլիկլինիկա, գյուղական բժշկական ամբուլատորիա, գյուղական առողջության կենտրոն)՝ համաձայն տվյալ տարվա ընթացքում աշակերտների բժշկական զննման արդյունքների: Բժշկական զննման արդյունքում տրվում է եզրակացություն՝ աշակերտի առողջական վիճակի և ֆիզիկական զարգացման մասին: 4. Աշակերտների բժշկական զննումը կազմակերպվում է տարվա ընթացքում տեղամասային բժիշկների կողմից՝ առողջ երեխայի հսկողության ծավալով, երեխայի ծննդյան ամսաթվին համապատասխան: Ըստ անհրաժեշտության զննմանը պետք է ներգրավվեն համապատասխան նեղ մասնագետներ (վիրաբույժ, օրթոպեդ, ակնաբույժ, նյարդաբան, ռևմատոլոգ և այլն), ինչպես նաև իրականացվեն լաբորատոր-գործիքային հետազոտություններ: 5. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման խմբերը տարվա ընթացքում կարող են փոփոխվել՝ ելնելով երեխայի առողջական վիճակից: Բժշկական հսկողության ընթացքում անհրաժեշտ է նաև հիվանդությունների և տրավմաների վերականգնման շրջանում ֆիզիկական ծանրաբեռնվածության ճիշտ որոշումը, ինչպես նաև դրա աստիճանական մեծացումը՝ ծանրաբեռնումը: 6. Յուրաքանչյուր աշակերտի առողջական վիճակի և ֆիզիկական զարգացման մասին տրված եզրակացությունը, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման խմբի վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են աշակերտի բժշկական քարտում: Տարվա ընթացքում աշակերտի տեղափոխումը մեկ խմբից մյուսը կատարվում է տեղամասային բժշկի գրավոր եզրակացության հիման վրա: 7. Նախապատրաստական խմբի պարապմունքներն անց են կացվում հիմնական խմբի հետ, նույն ուսումնական ծրագրով: 8. Երկու խմբերն էլ հանձնում են ստուգողական նորմատիվներ, միայն այն տարբերությամբ, որ նախապատրաստական խմբի համար պահանջվում է որոշ սահմանափակում, երեխայի ֆունկցիոնալ հնարավորությունների շրջանակներում, սահմանում աստիճանաբար մեծացնելով պահանջվող նորմայի սահմաններում: 9. Նախապատրաստական խմբում, երեխաների ֆիզիկական ընդհանուր պատրաստականությունը բարձրացնելու նպատակով, իրականացվում են լրացուցիչ պարապմունքներ: Նախապատրաստական խմբի երեխաներին չի թույլատրվում մասնակցել սպորտային մրցումներին: 10. Սահմանում է հիմնական, նախապատրաստական եվ հատուկ խմբերի բժշկական բնութագիրը, դրանցից յուրաքանչյուրի համար ֆիզիկական ծանրաբեռնվածության թույլատրելի ծավալները և ըստ հիվանդությունների տեսակների եվ ախտաբանական վիճակների առողջական խնդիրներ ունեցող աշակերտների «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման խմբերը որոշելու կարգը:		• ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության պետ • ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
283.	**«Մանուկների, դեռահասների և մեծահասակների հագուստին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.iii.4-7 սանիտարական կանոնները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 1191-Ն, ընդունված է՝ 14.12.2005, ուժի մեջ է՝ 11.03.2006* Հաստատում է «Մանուկների, դեռահասների և մեծահասակների հագուստին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.III.4-7 սանիտարական կանոնները:	1. Սանիտարական կանոնների պահանջները տարածվում են գործվածքային սպիտակեղենի, գործվածքային զգեստների, վերարկուների, կոստյումների, գուլպաների, գլխարկների, գլխաշորերի, շարֆերի տեսականու վրա, բնական հումքից պատրաստված արտադրանքի վրա, որը արտադրության ընթացքում ենթարկվում է մշակման (ներկման, ներծծման, իոնիզացնող ճառագայթման ազդեցության և այլն), ինչպես նաևքիմիական թելերից ու մանրաթելերից պատրաստված կաշվե և մորթե արտադրանքի վրա: 2. Արտադրանքի անվտանգության աստիճանը որոշվում է հիգիենիկ դասակարգմամբ, որտեղ հիմնական դասակարգող տարրերն են հանդիսանում մաշկի հետ հագուստի անմիջական շփման մակերեսը, հագուստ օգտագործողի տարիքը և հագուստի անընդհատ օգտագործման տևողությունը: 3. Ըստ հագուստի հետ մարմնի շփման մակերեսի և շփման աստիճանի, արտադրանքի համար սահմանվում է հետևյալ բալային համակարգը՝ մեծ մակերեսով (մարմնի մակերեսի 15%-ից սկսած և ավելի) մաշկի հետ անմիջական շփում ունեցող հագուստ՝ 1 բալ, փոքր մակերեսով (մարմնի մակերեսի 15%-ից պակաս) մաշկի հետ անմիջական շփում ունեցող հագուստ՝ 2 բալ, մաշկի հետ անմիջական շփում չունեցող հագուստ՝ 3 բալ: 4. Ըստ երեխաների և մեծահասակների տարիքային ֆիզիոլոգիական առանձնահատկությունների բալային գնահատմամբ հագուստը բաժանվում է՝ նորածինների համար՝ 0 բալ, մինչև 3 տարեկան երեխաների համար՝ 1 բալ, 4 տարեկանից մինչև 7 տարեկան երեխաների համար՝ 2 բալ, 8 տարեկանից մինչև 12 տարեկան երեխաների համար՝ 3 բալ, 13 տարեկանից մինչև 15 տարեկան դեռահասների համար՝ 4 բալ և 16 տարեկան պատանիների, աղջիկների և մեծահասակների համար՝ 5 բալ: 5. Ըստ հագուստի անընդհատ օգտագործման հաճախականությունից և տևողությունից, բալային գնահատմամբ արտադրանքը բաժանվում է՝ կանոնավոր օգտագործվող (ամեն օր 4 ժամ և ավելի) հագուստ՝ 1 բալ և հազվադեպ օգտագործվող (շաբաթը 1-2 անգամ-4 ժամից ոչ ավելի) հագուստ՝ 2 բալ:		• ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պետ

		6. Յուրաքանչյուր կոնկրետ արտադրատեսակի համար, ըստ բալային համակարգի, անհրաժեշտ է որոշել դասակարգող ցուցանիշը (ԴՑ), որը սահմանում է երեխաների և մեծահասակների առողջության վրա արտադրանքի հնարավոր վտանգի աստիճանը և որոշվում է հատուկ բանաձևով: 7. Մանուկների, դեռահասների և մեծահասակների հագուստը, ինչպես նաև մանկական տակդիրները, կախված դասից զգայորոշման (օրգանոլեպտիկ), ֆիզիկոհիգիենիկ, սանիտարաքիմիական և թունաբանահիգիենիկ ցուցանիշներով պետք է համապատասխանեն սույն սանիտարական կանոններով սահմանված հիգիենիկ պահանջներին:		
284.	**«Մարդու առողջության վրա ծխախոտի ներգործած բացասական ազդեցության վերաբերյալ նախազգուշացման տեքստերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 916-Ն, ընդունված է՝ 05.10.2005, ուժի մեջ է՝ 25.11.2005* Հաստատում է մարդու առողջության վրա ծխախոտի ներգործած բացասական ազդեցության վերաբերյալ նախազգուշացման տեքստերը:	1. Ծխախոտի ներգործած բացասական ազդեցության վերաբերյալ նախազգուշացման տեքստերն են՝ «Ծխելը առաջացնում է թոքի քաղցկեղ», «Պահպանեք երեխաներին՝ թույլ մի տվեք նրանց շնչել ծխախոտի ծուխը», «Ծխելը հղիության ընթացքում վնասում է Ձեր ապագա երեխային» և «Ծխելը առաջացնում է սիրտ-անոթային հիվանդություններ»:		•
285.	**«Կաթի և կաթնամթերքի արտադրությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2iii.4.1-01-2003 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 108, ընդունված է՝ 18.02.2003, ուժի մեջ է՝ 27.03.2003* Հաստատում է «Կաթի և կաթնամթերքի արտադրությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2III.4.1-01-2003 սանիտարական կանոնները:	1. Վաղ մանկական հասակի երեխաների համար սնունդ արտադրող արտադրամասերում անհրաժեշտ է նախատեսել սենյակներ անձնակազմը աշխատանքի անցնելուն նախապատրաստվելու համար (սանիտարական արտահագուստ հագնել, ձեռքերն ախտահանել, մաղլայից դիմակ կապել և այլն): 2. Վաղ մանկական տարիքի երեխաների համար հեղուկ և մածուկանման կաթնամթերքների պատրաստման մասնագիտացված արտադրամասերում սարքավորումների լվացումը, ախտահանումը, լվացող և ախտահանիչ հեղուկների խտության ստուգումը, սանիտարական մշակումը պետք է կատարվի ավտոմատ ռեժիմով:Սարքավորումների և խողովակների լվացման համակարգը պետք է կազմված լինի մի քանի ինքնուրույն փուլերից՝ հում կաթի, սննդային բաղադրիչների, չպաստերիզացված կաթի սարքավորումներ և խողովակագծեր, մանրէազերծող սարքեր, ստերիլիզատորներ, պաստերիզատորներ և դրանց հետ ընդհանուր սխեմայով աշխատող սարքավորումներ, մանրէազերծված կաթնամթերքի տարողություններ, խողովակագծեր, շշալցման և փաթեթավորման սարքեր, մանկական կաթնաթթվային մթերքի արտադրման տարողություններ և կաթնաշոռի պատրաստման սարքավորումներ: 3. Մանկական սննդի փոքր հզորություն ունեցող արտադրամասերի համար սարքավորումների լվացումը պետք է կատարվի հետևյալ փուլերով՝ կաթի և ոչ պաստերիզացված սննդային բաղադրիչների խողովակագծեր և սարքավորումներ, ստերիլիզատորներ, պաստերիզատորներ և դրանց հետ նույն սխեմայով աշխատող սարքավորումներ, մանրէազերծված կաթնամթերքի տարողություններ, խողովակագծեր, փաթեթավորող ավտոմատ սարքեր, կաթնաշոռի արտադրման սարքավորում, փաթեթավորման ավտոմատներ (լվացումը պետք է կատարվի վերը նշված հաջորդականությամբ): 4. Կաթի մշակման կազմակերպություններում մանկական կաթնամթերքների պատրաստման արտադրամասերը պետք է մեկուսացված լինեն հիմնական արտադրամասից: Մանկական կաթնամթերքի պատրաստի արտադրանքի փաթեթավորումը պետք է կատարվի առանձին շինություններում, որոնք պետք է սարքավորված լինեն մանրէասպան լամպերով: 5. Արտադրամասերի, մերանների բաժանմունքների, մանկական կաթնամթերքի արտադրման արտադրամասի ներքին դռները և պանելների մակերեսները պետք է լվանալ շաբաթը 1 անգամ տաք ջրով, օճառով և ախտահանել քլորակրի 0.5% լուծույթով: Դռների բռնակները, դրանց շուրջը և լվացարանների ծորակները պետք է ամեն օր մշակել լվացող-ախտահանիչ լուծույթով: 6. Հատուկ սանիտարական ռեժիմ պահանջող տեղամասերում (մերման սենյակ, պանրի փաթեթավորման բաժին, մանկական կաթնամթերքի հատավորման սենյակ, լաբորատոր բոքս և այլն) օդը վարակազերծելու համար պետք է նախատեսել մանրէասպան լամպեր: 7. Արտադրամասերին տրվող օդը պետք է մաքրման ենթարկվի փոշուց: Բաց տեխնոլոգիական գործընթացներ ունեցող արտադրամասեր, մերման սենյակ, մանկական կաթնամթերքի և մանրէազերծված կաթի արտադրամասեր տրվող օդը պետք է ֆիլտրվի և մաքրվի փոշուց յուղային ֆիլտրերով: 8. Մանկական կաթնամթերքի արտադրման համար օգտագործվող կաթը պետք է համապատասխանի Պետ. ստանդարտի պահանջներին (բարձր և առաջին տեսակի (կարգի) կաթ): 9. Մանկական կաթնամթերքների արտադրման ժամանակ պետք է պահպանվեն հետևյալ պահանջները. կաթնաթթվային արտադրանքի պատրաստման ժամանակ կաթը կամ խառնուրդները պետք է պաղեցվեն մինչև 2-60C, որից հետո ուղարկվեն շշալցման, կամ բարձր ջերմաստիճանում հետագա մշակման, ելնելով արտադրական անհրաժեշտությունից թույլատրվում է կաթի պահպանումը մինչև շշալցումը. 2-50C ջերմաստիճանում՝ մինչև 6 ժամ, 6-80C ջերմաստիճանում՝ մինչև 3 ժամ: 10. Թույլատրվում է մանկական կաթնամթերքին ավելացնել տարբեր բաղադրիչներ (վիտամիններ, հանքային նյութեր, շաքար, կենսաբանորեն ակտիվ նյութեր և այլն)՝ դրանց կենսաբանական և սննդային արժեքը բարձրացնելու և կազմը մայրական կաթի կազմին ադապտացնելու (նմանեցնելու) նպատակով: Մանկական կաթնամթերքին ավելացվող բաղադրիչները պետք է համապատասխանեն նորմատիվային պահանջներին, արգելվում է ժամկետանց բաղադրիչների օգտագործումը:	Մանկական կաթնամթերք արտադրող կազմակերպություններում պետք է կատարվի ամենօրյա համտեսում՝ պահպանելով նմուշները մինչև դրանց իրացման ժամկետի լրանալը:	• ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային մարմինների ղեկավարներ

		11. Մանկական կաթնամթերքը պետք է փաթեթավորվի միանվագ օգտագործման համար նախատեսված ծավալով: 12. Մանկական հիմնարկներին առաքվող թթվասերը, կաթնաշոռը և այլ մթերքը պետք է լինի միայն սեփական արտադրության և բարձր որակի: Չի թույլատրվում մանկական հիմնարկներ առաքել կաթի առաջնակի մշակում կատարող արտադրամասերում պատրաստված արտադրանքը:		
286.	**«Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» N 2.iii.4.2... Սանիտարական կանոնները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 82, ընդունված է՝ 11.02.2002, ուժի մեջ է՝ 25.04.2003* Հաստատում է «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» N 2.III.4.2... սանիտարական կանոնները:	1. Սահմանում է հանրակրթական դպրոցների (հաստատություններ) տեղադրման, դպրոցներում ուսուցման դասասենյակների, առանձնասենյակների կահավորման, օդաջերմային ռեժիմի, բնական ու արհեստական լուսավորության, ջրամատակարարման և կոյուղացման, հարմարեցված շենքերում ծավալված դպրոցների դասասենյակների կահավորման, ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, աշակերտների բժշկական սպասարկման, սննդի կազմակերպման սանիտարահիգիենիկ պահանջներ: 2. Պահանջները տարածվում են հանրակրթական բոլոր տեսակի (տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր, հատուկ ընդհանուր) դպրոցների և հաստատությունների վրա: 3. Դպրոցների նախագծումը, շինարարությունը և վերակառուցումը պետք է իրականացվի համաձայն Կանոնների: 4. Նորակառույց դպրոցը պետք է ունենա ինքնուրույն տարածք, որպես կանոն, մեկուսացված ու հեռացված տրանսպորտային մայրուղիներից, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերության, կոմունալ և այլ կազմակերպություններից: Դպրոցի տարածք ունեցող հաստատություններում անհրաժեշտ է առանձնացնել սպորտային, հանգստի, ուսումնափորձնական և տնտեսական գոտիներ: Դրանք պետք է ունենան հարմարավետ հաղորդակցություն դպրոցի շենքի, ինչպես նաև մեկը մյուսի հետ, իսկ գիշերօթիկ դպրոցներում, հանգստյան գոտին՝ ննջարանային մասնաշենքի հետ: Սպորտային գոտին չի թույլատրվում նախագծել և կառուցել ուսումնական դասասենյակների պատուհանների կողմից: Արգելվում է անցկացնել պարապմունքներ խոնավացած մարզահրապարակներում: Վնասվածքների կանխարգելման նպատակով, հրապարակի հողաշերտը անհրաժեշտ է պարբերաբար հավասարեցնել և ուղղել: 5. Տնտեսական գոտին տեղակայվում է հողամասի խորքում՝ դպրոցի ճաշարանի արտադրամասերի մուտքի կողմից, և պետք է ունենա առանձին մուտք փողոցից: Այդ գոտում գտնվում են տնտեսական նպատակների համար ծառայող շինություններ: 6. Դպրոցում աշակերտների թիվը չպետք է գերազանցի տվյալ շենքի կառուցման կամ վերակառուցման նախագծով սահմանված թվաքանակը: 7. Հանրակրթական հաստատությունները (դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ և այլն) պետք է ունենան առանձին շենք կամ տեղակայվեն գործող հանրակրթական դպրոցի շենքի առանձին հատվածներում՝ առանձին մուտքով: 8. Շենքի նկուղային և գետնախարիսխային հարկերում արգելվում է տեղադրել ուսումնական սենյակներ: 9. Դպրոցի շենքը պետք է ունենա հետևյալ դասասենյակների խմբերը՝ ուսումնական սենյակներ I -III դասարանների համար, IV-X դասարանների համար, աշխատանքի ուսուցման առանձնասենյակներ, ուսումնամարզական, մշակույթի և զանգվածային միջոցառումների համար նախատեսված սենյակներ, երկարօրյա խմբերի սենյակներ, ճաշարան, գրադարան, վարչատնտեսական, բժշկական ապահովության և այլ ոլորտի սենյակներ: Երկարօրյա դպրոցներում նախատեսվում են ննջարանային սենյակներ: 10. Դպրոցը հարմարեցված շենքում ծավալելու համար, ուսումնական և օժանդակ սենյակների ցանկը, դրանց տարածքը յուրաքանչյուր ու կոնկրետ դեպքում որոշվում է հաշվի առնելով հանրակրթական հաստատության տեսակը, աշակերտների թիվն ու տարիքը, դասարանների քանակը և այլն: 11. Դպրոցի հանդերձարանները պետք է տեղակայվեն առաջին հարկում, արգելվում է ուսումնական սենյակներում և միջանցքներում (ռեկրեացիաներ) հանդերձարաններ տեղադրումը: 12. Դպրոցի տեղամասում մասնաշենքերը պետք է տեղադրվեն այնպես, որ ապահովվի սենյակների առանձին խմբերի բավարար արևի ճառագայթումը և լուսավորությունը: 13. Յուրաքանչյուր կամ 2-3 խումբ առանձնասենյակների համար պետք է նախատեսել լաբորատոր սենյակ՝ հատկապես քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության և համակարգչային: 14. Սահմանում է տարրական դասարանների երեխաների համար սեղանների դասավորմանը ներկայացվող պահանջները: 15. Ուսումնական սենյակների (դասասենյակներ) տարածքը հաշվառվում է ելնելով 1 աշակերտի համար 2մ2, առանձնասենյակները համապատասխանաբար՝ 1 աշակերտի համար 2,5մ2, անհատական պարապմունքների և խմբակային աշխատանքի ձևերի համար՝ 3,3մ2 տարածքի հաշվարկով: Աշակերտների աշխատանքային գոտու օպտիմալ չափերը կախված են հասանելիության անկյունից՝ գրատախտակից մինչև աշակերտական նստարանների առաջին անկյունային շարքերն ընկած տարածությունը: Այդ անկյունը առաջին դասարանի երեխաների համար պետք է կազմի 45 աստիճանից ոչ պակաս, իսկ IV- X դասարանի աշակերտների համար՝ 35 աստիճանից ոչ պակաս: 16. Դպրոցի տարածքներում հարաբերական խոնավությունը պետք է լինի 40- 60%: Ելնելով կլիմայական պայմաններից, սահմանվում են հետևյալ ջերմաստիճանները. դասասենյակներում և առանձնասենյակներում (+17) - (+20)0C, փայտամշակման ու մետաղամշակման արհեստանոցներում (+16) - (+18)0C, մարզական դահլիճում (+15) - (+17)0C, մարզադահլիճի հանդերձարանում (+19) - (+23)0C, զանգվածային միջոցառումների դահլիճում (+17) - (+20)0C-ից ոչ պակաս, գրադարանում, վարչական առանձնասենյակներում (+17) - (+21)0C, բժշկի առանձնասենյակում (+21) - (+23)0C, լվացարաններում (+20) - (+23)0C, նախասրահում, հանդերձարանում (+16) - (+19)0C, զուգարաններում (+17) - (+21)0C, ցնցուղարաններում 250C ոչ պակաս: 17. Սահմանում է շաբաթվա ընթացքում պարտադիր դասաժամերի առավելագույն քանակը: 18. Ֆակուլտատիվ պարապմունքները շաբաթվա մեջ չպետք է գերազանցեն մինչև VIII դասարանները 2 ժամ, VIII - XI դասարաններում՝ 4 ժամ: Ֆակուլտատիվ պարապմունքներն անհրաժեշտ է անցկացնել դասաժամերի նվազագույն տևողությամբ, պարտադիր պարապմունքներն ավարտելուց հետո, 45 - 60 րոպեից ոչ պակաս ընդմիջումով:		• Հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության Երևան քաղաքի, մարզային կենտրոնների և ներմարզային կայանների գլխավոր բժիշկներ

		19. Ուսուցման փոխհատուցող դասարաններում աշակերտների թիվը չպետք է գերազանցի 20 մարդուց: Նման դասարաններում դասաժամերի տևողությունը պետք է լինի 40 րոպեից ոչ ավելի: 20. Շտկող-զարգացնող ժամերը պետք է մտնեն յուրաքանչյուր տարիքի աշակերտի համար սահմանված առավելագույն թույլատրելի ծանրաբեռնվածության ծավալի մեջ: 21. Անկախ ուսուցման շաբաթվա տևողությունից, աշակերտների օրվա ծանրաբեռնվածությունը փոխհատուցող դպրոցներում պետք է լինի 5 ժամից ոչ ավելի տարրական դպրոցում և 6 ժամից ոչ ավելի հիմնական դպրոցում: 22. Ուսումնական պարապմունքները դպրոցներում պետք է սկսվեն առավոտյան 8:00-ից ոչ շուտ: Արգելվում է զրո ժամերի անցկացումը: Խորացված ուսուցման ծրագրերով դասերը հանրակրթական դպրոցներում (հաստատություններում) պետք է անցկացվեն միայն առաջին հերթի ժամանակ: 23. Դասացուցակները կազմելիս հաշվի է առնվում դասաժամերի օպտիմալ հարաբերակցությունը, ինչպես նաև օրվա և շաբաթվա ընթացքում ուսումնական առարկաների ճիշտ հաջորդականությունը՝ բնական, մաթեմատիկական և հումանիտար առարկաների դասաժամերը երգի, նկարչության և ֆիզիկական դաստիարակման դասաժամերին, ինչի շնորհիվ ստեղծվում է աշակերտների մտավոր գործունեությունից ֆիզիկականի փոխվելու հնարավորություն: Տարբեր առարկաների ճիշտ զուգակցումը ուսումնական օրվա ընթացքում ապահովում է աշակերտների աշխատունակության պահպանման բարձր մակարդակը մինչև դասերի ավարտը: Կրկնակի դասաժամերը թույլատրվում են միայն լաբորատոր և ստուգողական աշխատանքների, աշխատանքի ուսուցման և ֆիզիկական դաստիարակման պարապմունքների (ձմռանը) անցկացման ժամանակ: 24. Դասաժամերի կառուցվածքին ներկայացվող հիգիենիկ պահանջներն են. պարապմունքների ընթացքում անհրաժեշտ է ստեղծել կարճատև դադարներ՝ երեխաների մկանային ստատիկ լարվածության վերացման և մտավոր աշխատունակության բարձրացման նպատակով, ուսումնական բեռնվածությունը աստիճանաբար ավելանալով դասաժամի կեսին պետք է հասնի առավելագույնի և իջնի դասաժամի ավարտին: 25. Դասը պայմանականորեն կիսվում է երեք մասի՝ ներածական, հիմնական և ավարտական: Ներածական մասը ուսուցիչը օգտագործում է դասահարցման և կազմակերպչական միջոցառումների համար, հիմնականը՝ նոր դասի, նյութի շարադրման համար, ավարտականը՝ վարժեցման, վերարտադրման համար: Առավել դժվար առարկաները դասացուցակում ներառվում են 2-րդ և 3-րդ դասաժամերին՝ աշակերտների ամենաբարձր աշխատունակության ժամանակ: Բարդ առարկաները (ֆիզիկա, մաթեմատիկա, օտար լեզու) հարկ է զուգակցել հեշտ ընկալվող առարկաների հետ՝ պատմություն, աշխարհագրություն և այլն: 26. Բոլոր դասարանների համար դասաժամերի միջև ընդմիջումների տևողությունը 10 րոպե է, 2-րդ և 3-րդ դասաժամերից հետո մեծ ընդմիջման տևողությունը 30 րոպե է: Թույլատրվում է 2-րդ և 3-րդ դասաժամերից հետո մեծ ընդմիջման փոխարեն անցկացնել երկու ընդմիջում՝ յուրաքանչյուրը 20 րոպե տևողությամբ: 27. Տնային առաջադրանքները աշակերտներին տրվում են ելնելով դրանք կատարելու հնարավորությունից. I դասարանում՝ մինչև մեկ ժամ, II-ում՝ մինչև 1,5 ժամ, III - V դասարաններում՝ մինչև 2 ժամ, V- VI դասարաններում՝ մինչև 2,5 ժամ, VII-ում՝ մինչև 3 ժամ, VIII, X, XI դասարաններում՝ մինչև 4 ժամ:		
287.	**«Երեխային հաշմանդամ ճանաչելու բժշկական ցուցումները հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարության հրաման** *N 420, ընդունված է՝ 19.06.2001, ուժի մեջ է՝ 11.08.2001* Հաստատում է մինչև 16 տարեկան երեխային հաշմանդամ ճանաչելու բժշկական ցուցումների ցանկը:	1. Սահմանում է երկամյա ժամկետով հաշմանդամություն և մինչև 16 տարեկան երեխաներին հաշմանդամություն սահմանելու իրավունք ընձեռող հիվանդություններն ու ախտաբանական վիճակները:		• ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ • ՀՀ առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության պետ
288.	**«Մանկաբարձական բաժանմունքում հետծննդյան շրջանում ծննդկանի և նորածնի համատեղ տեղակայման վերաբերյալ» ՀՀ առողջապահության նախարարության հրաման** *N 1028, ընդունված է՝ 20.10.1994, ուժի մեջ է՝ 20.06.1998* Հաստատում է ծննդօգնության բուժհաստատությունների մանկաբարձական բաժանմունքներում հետծննդյան շրջանում ծննդկանի և նորածնի համատեղ տեղակայման	1. Մանկաբարձական բաժանմունքում հետծննդյան շրջանում ծննդկանի և նորածնի համատեղ տեղակայման դեպքում նկատելիորեն պակասում են նորածնի և ծննդկանի հետծննդյան հիվանդությունները, նվազում է նորածինների քաշի ֆիզիոլոգիական կորուստը, բարձրանում է բնական սնուցման տեսակարար կշիռը: 2. Համատեղ տեղակայման ժամանակ. սահմանափակվում է նորածնի շփումը մանկաբարձական բաժանմունքի անձնակազմի հետ, իջնում է նորածնի՝ ներհիվանդանոցային ախտածին միկրոօրգանիզմներով ինֆեկցման հավանականությունը և ստեղծվում է նորածնի օրգանիզմում մոր և միկրոֆլորայի հաստատման հնարավորության, որից երեխան պաշտպանված է մոր կաթի միջոցով ստացվող հակամարմիններով, հնարավոր է դառնում կրծքին նորածնի վաղ մոտեցումը և ազատ չչափավորված կերակրումը կրծքով, կատարվում է նորածնի պրակտիկ խնամքի ուսուցում՝ մոր ակտիվ մասնակցությամբ, բարձրանում է մոր պատասխանատվության զգացումը իր անձնական հիգիենայի և հետծննդյան սենյակի մաքրության պահպանման նկատմամբ, մասնակիորեն ազատված ժամանակը նորածնային բաժանմունքի անձնակազմը օգտագործում է ավելի արդյունավետ՝ ինտենսիվ հսկման և անհասների հիվանդասենյակում տարվող աշխատանքների վրա: 3. Մանկաբարձական բաժանմունքում մոր և մանկան համատեղ տեղակայումը հնարավորություն է ընձեռում մոր ֆիզիկական և հոգևոր անսահմանափակ շփման՝ մանկան հետ և նրա ակտիվ մասնակցության՝ մանկան խնամքի (փաթեթում, մաշկի և լորձաթաղանթի սանմշակում, կերակրում): 4. Մայրերի և նորածինների համատեղ տեղակայման դեպքում ցանկալի է նրանց տեղափոխումը 1-4 մահճակալանոց սենյակներում: Մոր և մանկան համատեղ տեղակայման կազմակերպման համար հնարավոր է նաև նախկինում կառուցված ծննդատների	Ծննդաբերությունից հետո 2 ժամվա ընթացքում նեոնատոլոգի կողմից նորածնի զննումից հետո ծննդկանը և նորածինը տեղափոխվում են համատեղ տեղակայման նախատեսված սենյակ, որի մասին նախապես գրանցում է կատարվում ծննդկանի և նորածնի պատմության թերթիկում: Նորածնի հանձնման ժամանակը և տվյալները նորածնի վիճակի մասին (ճիչի տեսակը, մաշկի գույնը, շնչառության տիպը) նշվում են պատմության թերթիկի 1-ին էջի վրա և հաստատվում մանկաբարձուհու և բուժքրոջ ստորագրություններով: Նորածնի պատմության թերթիկում	• Բուժհաստատություններ

	վերաբերյալ մեթոդական ցուցումները:	հետծննդյան սենյակների վերադասավորում՝ մորն ու մանկանը հասանելիք նորմատիվային մակերեսների (7 քառ. մ. և 3 քառ. մ.) պահպանմամբ: 5. Օբսերվացիոն մանկաբարձական բաժանմունքներում մոր և մանկան համատեղ տեղակայումը իրագործվում է ըստ նոզոլոգիաների առանձնացված հետծննդյան սենյակներում: 6. Մոր և մանկան համատեղ տեղակայման սենյակում պետք է լինի բժշկական կշեռք՝ նորածնին կշռելու համար, բիքս՝ ախտահանված տակաշորերով, լատոկ՝ նորածնի մաշկի և լորձաթաղանթի խնամքի համար անհրաժեշտ դեղորայքով (յոդի սպիրտային լուծույթ 2 տոկոս, բորաթթու 2 տոկոս, տանինի քսուտ 2 տոկոս, վազելին, արևածաղկի յուղ): 7. Յուրաքանչյուր հետծննդյան սենյակ պոստի բուժքրոջ կողմից պետք է բերվի ախտահանված պարունակությամբ բիքս (թանզիֆե շարիկներ, բինտ, փայտիկ՝ բամբակով): Փոքր չափաբաժիններով դեղորայքը և բիքսը փոխվում են օրը 3 անգամ: Բոլոր սենյակները պետք է ապահովված լինեն ախտահանող լուծույթով լցված տարաներով: 8. Փաթաթման սեղանը, պահարանիկը, կշեռքը, մահճակալը մշակվում են՝ քլորամինի 1 տոկոսանոց լուծույթով, քլորամինի 0,75 տոկոսանոց լուծույթով՝ 0,5 տոկոսանոց լվացող հեղուկի հետ, սուլֆախլորանտինի 0,2 տոկոսանոց լուծույթով, դիքլորի 1-2 տոկոսանոց լուծույթով, քլորդեզինի 0,5 տոկոսանոց լուծույթով: Նշված լուծույթներով կատարվում է կրկնակի մաքրում: 9. Նորածնի կողմից մոր և մանկան համատեղ տեղակայման հակացուցումներն են նորածնին սպառնող վիճակները՝ այնքան ժամանակ, քանի դեռ պահանջվում են ռեանիմացիա, ինտենսիվ թերապիա և ինտենսիվ հսկողություն, այն է՝ խորը անհասությունը (3-րդ աստիճանի), պտղի ներարգանդային կյանքում անցկացրած ծանր թթվածնային քաղցը, հեմոլիկվորոդինամիկայի 2-րդ և 3-րդ աստիճանի խանգարումը, միջին և ծանր աստիճանի ասֆիքսիան, ներարգանդային և ուրիշ կարգի ծանր ծննդաբերական տրավմաները, զարգացման ծանր բնածին անոմալիաները, ներքին օրգանների այլանդակությունը և հեմոլիտիկ հիվանդությունը՝ ծանր ընթացքի դեպքում: 10. Ծննդկանի կողմից հակացուցումներն են շիզոֆրենիան և հետծննդյան փսիխոզը, էքստրագենիտալ հիվանդությունները դեկոմպենսացիայի շրջանում, պրեէկլամպսիան և էկլամպսիան: 11. Նորածնի վիճակի վատացման դեպքում, եթե ի հայտ է գալիս ինտենսիվ բուժման կարիք, նրան անմիջապես տեղափոխում են ինտեսնիվ բուժման հիվանդասենյակ՝ հսկողության և բուժման համար, որտեղ նա մնում է այնքան ժամանակ, քանի դեռ առկա է ինտենսիվ թերապիայի և հսկողության անհրաժեշտություն: 12. Նորածնի մաշկի և լորձաթաղանթի առաջին մշակումը կատարվում է պոստի քրոջ կողմից: Կյանքի առաջին օրերին խնամքը կատարվում է պոստի քրոջ կողմից՝ մոր մասնակցությամբ: Բուժքույրը ծանոթացնում է մորը նորածնի առանձնահատկություններին, հատուկ նշում է մաշկային ծածկույթի (աչքերը, քթանցքները, դեմքը) և լորձաթաղանթների մշակման հետևողականության մասին, սովորեցնում է ախտահանված պիտույքներից և ախտահանող լուծույթից օգտվելու կանոնները, ցույց է տալիս կրծքով կերակրման և կթման ճիշտ տեխնիկան: Նորածնին լողացնելու համար օգտագործում են անհատական օճառ: 13. Պորտալարի մնացորդի և պորտի վերքի հսկողությունը կատարում է մանկաբույժը: Պորտալարի մնացորդի ընկնելուց հետո, մանկաբույժի բացակայության ժամանակ, վերջինիս նշանակմամբ՝ մանկան պորտը մշակում է բուժքույրը: 14. Հետծննդյան սենյակ մտնելիս մանկաբույժը և բուժքույրը ձեռքերը լվանալուց հետո հագնում են յուրաքանչյուր սենյակի համար նախատեսված ախտահանված խալաթներ, որոնք քույր-տնտեսուհին փոխում է ամեն օր: 15. Պոստի բուժքույրը ծննդկանին ապահովում է ախտահանված տակաշորերով (մեկ նորածնի համար՝ 25 հատ): 16. Օգտագործված տակաշորերը հավաքվում են փակվող բաքերի մեջ՝ մոմլաթե տոպրակներում: 17. Նորածնի փաթաթումից հետո պոստի բուժքույրը կամ մայրապետը մոմլաթե տոպրակներով օգտագործված տակաշորերը տանում են այդ տակաշորերի համար նախատեսված սենյակը: 18. Պոստի բուժքույրը խստորեն հետևում է պալատներում ախտահանվող լուծույթի փոփոխմանն ու ճիշտ օգտագործմանը, սովորեցնում է մորը դրանց օգտագործման ձևը և հետևում է ամեն փաթաթումից հետո դեզ. լուծույթի փոխմանը: 19. Դեղորայքը, ստերիլ մատերիալը, նորածնի խնամքի համար չափաբաժիններով կոմպլեկտավորված դեղորայքը, պատմության թերթիկը պահվում են մանկաբույժի և պոստի բուժքրոջ համար նախատեսված աշխատասենյակում: 20. Հատուկ նախատեսված աշխատասենյակի բացակայության դեպքում մանկաբարձական բաժանմունքի միջանցքում մանկական բուժքրոջ համար դրվում է սեղան, որի կողքին դրվում է ապակյա բժշկական պահարան: 21. Բժշկական պրեպարատները պահվում են փակի տակ: 22. Նորածնի բավարար վիճակի դեպքում բժիշկ-նեոնատոլոգի որոշմամբ նորածինը պետք է մոտեցվի մոր կրծքին հետծննդյան կես ժամում, և ապահովվի մոր և մանկան մաշկային շփումը առնվազն 30 րոպեի ընթացքում, այնուհետև պետք է կիրառվի ազատ կերակրում: 23. Առաջին կերակրումից առաջ բուժքույրը առաջարկում է մորը լվանալ ձեռքերը՝ կրկնակի անգամ օճառով, և կուրծքը՝ գոլ ջրով առանց օճառի, որից հետո նորածնին դնում են մոր կողքին՝ ախտահանված տակաշորի վրա: 24. Առաջին կերակրումների ժամանակ բուժքույրը գտնվում է պալատում և օգնում է մորը կերակրելիս: Հաջորդ օրերին կերակրման ժամանակ հաջորդաբար անցնում է պալատներով և օգնում կերակրման դժվարություններ ունեցող մայրերին: 25. Անհաս և թույլ նորածինները, որոնք ի վիճակի չեն կերակրվելու կրծքով, բժշկի նշանակմամբ ժամանակավորապես ստանում են լրացուցիչ կերակրում՝ կթած կաթի չափված քանակությամբ՝ զոնդով կամ բաժակով: 26. Լրացուցիչ կերակրման համար օգտագործվում է ասեպտիկ պայմաններում կթած մայրական կաթը, որը տրվում է մանկանը կթելուց անմիջապես հետո՝ առանց պաստերիլիզացվելու, կամ, վերջինիս անբավարար քանակի դեպքում՝ պաստերիլիզացված դոնորական կաթ:	նշվում է վակցինացիայի կատարման ամսաթիվը և սերիան:	

		27. Կթած կաթով կերակրումից հետո գդալները և բաժակները հավաքվում են և ախտահանվում կաթի հավաքման և պաստերիլիզացման սենյակում: 28. Կրծքի դոնորական կաթը կթվում և հավաքվում է կաթի հավաքման և պաստերիլիզացման սենյակի բուժքրոջ հսկողությամբ: 29. Ամեն կթումից առաջ բուժքույրը դոնոր մայրերին տալիս է չոր ախտահանում անցած էմալապատ բաժակներ կամ ապակյա բանկաներ և 30 րոպե հետո կաթի հետ միասին հավաքում է և տանում կաթի պաստերիլիզացման սենյակ: Դոնորական կաթի պաստերիլիզացիան կատարվում է կաթսաներում, 2 մլ-ից ոչ ավելի տարողության ապակյա տարաների մեջ, բերանը փակելով բամբակե տամպոններով: Հատուկ ստերիլիզատորի մեջ կաթի պաստերիլիզացիան կատարվում է 30-50 մլ տարողության շշերում: Պաստերիլիզացիայի տևողությունը 7 րոպե է՝ հաշված կաթսայում ջրի եռման վայրկյանից: 30. Գդալները կամ փոքրիկ բաժակները և ապակյա բանկաները (կամ էմալապատ բաժակները) լվանալուց հետո ախտահանում են չոր եղանակով կամ եռացնում՝ 15 րոպե: 31. Արգելվում է ռետինե ծծակների օգտագործումը ինչպես մանկան կերակրման, այնպես էլ՝ նրան հանգստացնելու նպատակով: 32. Կթած կաթի մնացորդով ամանեղենը կտրականապես արգելվում է թողնել հիվանդասենյակում: 33. Նորածինների վակցինացիան կատարվում է մանկաբույժի նշանակումով կյանքի 24-48 ժամվա ընթացքում՝ հատուկ պատրաստված բուժքրոջ կողմից: 34. ԲՑԺ-ի վակցինան պահվում է փակվող սենյակում հատուկ սառնարանի մեջ: Այդ սենյակում կատարվում է ներարկիչների ախտահանումը, վակցինայի բացումը և վակցինայի հավաքումը (յուրաքանչյուր նորածնի համար առանձին ներարկիչով): Վակցինացիան կատարվում է անմիջապես պալատում, առավոտյան ժամերին մանկաբույժի նշանակմամբ:		
289.	**«ՀՀ արդարադատության նախարարի 2007 թվականի մայիսի 14-ի թիվ 97-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրաման** *N 300-Ն, ընդունված է՝ 02.12.2009, ուժի մեջ է՝ 25.12.2009* Փոփոխություններ և լրացումներ է մտցնում ՀՀ արդարադատության նախարարի 2007 թվականի մայիսի 14-ի թիվ 97-Ն հրամանում:	1. Սահմանում է երեխայի ծննդյան ակտի գրանցման մեջ նրա, հոր կամ մոր մասին տեղեկությունների (անունը, ազգանունը փոխելու կապակցությամբ) ուղղման վերաբերյալ ծնողների (ծնողի) դիմումի հիման վրա կատարվող փոփոխությունների կատարման ընթացակարգեր:		• ՔԿԱԳ
290.	**«Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման** *N 257-Ն, ընդունված է՝ 30.03.2011, ուժի մեջ է՝ 03.06.2011* Հաստատում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները:	1. Սահմանում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ ձևավորման հիմնական դրույթները, կառուցվածքը և գործառույթը, չափորոշիչ որակական պահանջներն ու ակնկալիքները, նախադպրոցական կրթության բովանդակությունը, նախադպրոցական կրթական ծրագրերին ներկայացվող ընդհանուր պահանջները, նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխայի զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջները:	Նախադպրոցական ուսումնական հաստատություններում, չափորոշչին համապատասխան, ուսումնասիրվում, վերահսկվում և գնահատվում է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների գործունեությունը:	• ՀՀ ԿԳՆ
291.	**«Երեխայի որդեգրման կարգի կիրարկումն ապահովող հրահանգչամեթոդական ցուցումները հաստատելու մասին» ՀՀ սոցիալական ապահովության նախարարության հրաման** *N 66-Ա, ընդունված է՝ 19.09.2000, ուժի մեջ է՝ 07.12.2000* Հաստատում է երեխայի որդեգրման կարգի կիրարկումն	1. Որդեգրվածներն ու նրանց սերունդը որդեգրողների և նրանց ազգականների նկատմամբ, իսկ որդեգրողներն ու նրանց ազգականները՝ որդեգրվածների ու նրանց սերնդի նկատմամբ իրենց անձնական ու գույքային իրավունքներով ու պարտականություններով հավասարեցվում են ծագումով ազգականներին: Որդեգրումը կատարվում է մինչև 18 տարեկան երեխաների նկատմամբ, ելնելով միայն երեխայի շահերից: 2. Ընկեցիկ, բուժհիմնարկներում թողնված երեխաների համար ներքին գործերի մարմինների կողմից կազմվում է համապատասխան ակտ, որի հիման վրա բուժհիմնարկի ղեկավարությունը ՔԿԱԳ-ի տարածքային բաժնում կատարում է երեխայի ծննդի գրանցումը և համապատասխան հաստատություն ուղարկում հետևյալ փաստաթղթերը՝ ծննդյան վկայական, առողջության մասին բժշկական եզրակացություն, ընկեցիկության ակտ: Ընկեցիկ երեխաները կարող են որդեգրման հանձնվել ընկեցիկության ակտը կազմելուց 3 ամսից ոչ շուտ: 3. Եթե ծննդատանը ծնված նորածնի ծնողի (ծնողների) կողմից երեխային որդեգրման հանձնելու համաձայնության մասին կամ երեխային ժամանակավորապես մանկատուն հանձնելու մասին դիմում է տրվել, այն պետք է հաստատվի բուժհիմնարկի տնօրենի	Որդեգրման ենթակա երեխաների, որդեգրված երեխաների, ինչպես նաև որդեգրողի թեկնածուների հաշվառումը իրականացվում է որդեգրման հարցերով մարզային (Երևանի քաղաքային) և հանրապետական հանձնաժողովների իսկ կենտրոնացված հաշվառումը՝ ՀՀ ԱՍՀՆ կողմից: Ծննդատների, բուժկանխարգելիչ, խնամակալական հաստատությունների ղեկավարները, այլ պաշտոնատար անձինք պարտավոր են 5-օրյա	• ՀՀ ԱՍՀՆ • ՀՀ ԱՍՀՆ համակարգի խնամակալական հաստատությունների ղեկավարներ, որդեգրման հարցերով մարզային (Երևանի քաղաքային) հանձնաժողովներ և սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների տնօրեններ • ՔԿԱԳ

	ապահովող հրահանգչամեթոդական ցուցումները:	կողմից: Բուժման ավարտից հետո այդ երեխաները սահմանված կարգով եռօրյա ժամկետում տեղավորվում են խնամակալական հաստատություններում: 4. ԽՀ-ում գտնվող երեխայի որդեգրման համար նրա ծնողներից գրավոր համաձայնություն ստանալու դեպքում ԽՀ-ի տնօրինությունը ծնողներին բացատրում է որդեգրման իրավական հետևանքները, պարզում այն հանգամանքները, որոնք այդպիսի համաձայնություն տալու հիմք են հանդիսացել, վստահություն է ներշնչում նրանց երեխայի խնամքի և դաստիարակության գործի նկատմամբ և կախված ստացված տվյալներից օրենսդրությամբ սահմանված կարգով լուծում երեխային որդեգրման հանձնելու հարցը: 5. ԽՀ-ում գտնվող երեխայի որդեգրման համար գրավոր համաձայնություն չտված ծնողները նախազգուշացվում են այն մասին, որ օրենքի համաձայն որդեգրման համար ծնողների համաձայնությունը չի պահանջվում, եթե նրանք զրկված են ծնողական իրավունքներից կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ են ճանաչվել, ինչպես նաև եթե նրանք մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չեն ապրում, և չնայած խնամակալության և հոգաբարձության մարմինների նախազգուշացմանը, խուսափում են դաստիարակելուց ու խնամք տանելուց և երեխայի նկատմամբ ուշադրություն ու հոգատարություն չեն ցուցաբերում: 6. Հատուկ մոտեցում են պահանջում անչափահաս միայնակ մայրերի կողմից երեխաներին որդեգրման տալու դեպքերը: Անհրաժեշտ է անչափահաս միայնակ մորը բացատրել որդեգրման իրավական հետևանքները, խորհրդատվական (սոցիալական, իրավական և այլ բնույթի) օգնություն ցույց տալ նրան՝ երեխայի դաստիարակության և խնամքի ճիշտ կազմակերպման համար: 7. Այն դեպքերում, երբ ԽՀ-ում գտնվող ծնողազուրկ երեխան ունի հարազատներ (պապ, տատ, հորեղբայր, մորաքույր, քեռի, հորաքույր, չափահաս քույրեր կամ եղբայրներ), հարկավոր է օժանդակել, որպեսզի վերջիններս մասնակցեն նրա դաստիարակության, կյանքի և այլ հարցերի լուծման գործում, իսկ հնարավորության դեպքում երեխային խնամեն իրենց ընտանիքում: Եվ չնայած որ որդեգրման ժամանակ նրանցից համաձայնությունը չի պահանջվում, այդուհանդերձ, անչափահասի շահերը պահանջում են, որպեսզի հստակորեն սահմանվեն որդեգրված երեխայի՝ իր հարազատների հետ շփվելու հնարավորությունները: 8. Օրենսգրքի համաձայն 10 տարին լրացած երեխայի որդեգրման ժամանակ պահանջվում է նրա համաձայնությունը: Երեխային բացատրվում է որդեգրման իմաստը և դրանից բխող իրավական հետևանքները, ինչպես նաև նրա ազգանվան, անվան, հայրանվան, ծնողների մասին տեղեկությունների և տվյալների հնարավոր փոփոխումները: Այդպիսի բացատրություններ կարող են տրվել նաև 10 տարին չբոլորած երեխաներին, հաշվի առնելով նրանց զարգացածության աստիճանը: Օրենսգրքի համաձայն թույլատրվում է որդագրել 10 տարեկանից բարձր տարիք ունեցող երեխաների՝ առանց նրանց համաձայնության, եթե նրանք երկար ժամանակ ապրում են որդեգրողի ընտանիքում, սակայն անհիրաժեշտ են, որ որդեգրողները իրենց հարազատ ծնողները չեն և իրենց համարում են նրանց հարազատ երեխան: 9. Այն դեպքերում, երբ օրինական ամուսիններից որդեգրել է ցանկանում միայն մեկը, իսկ մյուս ամուսինը տալիս է միայն իր գրավոր համաձայնությունը, հարկավոր է պարզել վերջինիս երեխային համատեղ որդեգրելուց հրաժարվելու պատճառը և այն հանգամանքը, արդյոք դա հետագայում բացասաբար չի անդրադառնա որդեգրվող երեխայի կյանքի և դաստիարակության վրա: 10. Եթե որդեգրվող երեխան տառապում է որևէ հիվանդությամբ (արատով), որը որդեգրողից կպահանջի երեխայի հատուկ խնամք, երկարատև բուժում, ապրելու և դաստիարակելու համար հատուկ պայմանների ստեղծում: Նման դեպքերում որդեգրողի թեկնածուներին հարկավոր է ծանոթացնել որդեգրողին ներկայացվող պահանջները, որդեգրման իրավական հետևանքները և երեխայի առողջական վիճակի պատճառաբանությամբ որդեգրումը վերացնելու անթույլատրելիությունը՝ եթե որդեգրողը նախազգուշացվել է երեխայի հիվանդության մասին և, չնայած դրան, հայտնել է հիվանդ երեխային որդեգրելու մասին իր համաձայնությունը: 11. Եթե որդեգրվող երեխան գտնվում է խնամակալության տակ, ապա որդեգրման համար պահանջվում է խնամակալի, ինչպես նաև ծնողների գրավոր համաձայնությունը: 12. Այն դեպքերում, երբ որդեգրողը միայնակ անձ է, հարկավոր է պարզել հետևյալ հանգամանքները. արդյոք երեխայի շահերին չի հակասում նրա հանձնումը ոչ լրիվ ընտանիք, կարող է, արդյոք, որդեգրողը, ելնելով իր տարիքից, առողջական վիճակից, նյութական ապահովվածության աստիճանից, պատշաճ կերպով ապահովել որդեգրող երեխայի խնամքը և դաստիարակությունը՝ մինչև նրա չափահաս դառնալը: Սակայն հարկ չկա միայնակ անձնավորությանը զրկել որդեգրելու իրավունքից, եթե մինչև որդեգրելը նա հոգածություն է ցուցաբերել երեխայի հանդեպ և նրանց միջև առաջացել են բարեկամական հարաբերություններ, կապեր: 13. Գործող օրենսդրությունը թույլատրում է նաև ոչ ծնողազուրկ երեխաների որդեգրում ազգակցական կապեր ունեցող հարազատների (խորթ հայր, խորթ մայր, պապ, տատ, եղբայր, քույր և ուրիշներ) կողմից, եթե մարզային (հանրապետական) հանձնաժողովը և համայնքի ղեկավարը գտնում են, որ այդպիսի որդեգրումը չի հակասում երեխայի շահերին: Սակայն, որդեգրման հարցի ուսումնասիրման ժամանակ մարզային (հանրապետական) հանձնաժողովը պետք է պարզի ծնողներ ունեցող երեխաների որդեգրման շարժառիթները, որդեգրման հանձնելու մասին ծնողների համաձայնության պատճառները, որդեգրվող երեխայի հանդեպ նախկինում հոգածություն չցուցաբերած երեխայի խնամքով և դաստիարակությամբ չզբաղված հարազատներին, երեխաներ ունեցող ընտանիքներին, տարեցներին (տատին, պապին) երեխային որդեգրման հանձնելու նպատակահարմարությունը: Անհրաժեշտ է պարզել որդեգրողների և ծնողների կյանքի պայմանները, որոշել երեխային հարազատ ընտանիքից այլ ընտանիք տեղափոխելու նպատակահարմարությունը, պարզել, դրանով արդյոք բարելավվում են որդեգրվող երեխայի կյանքի և դաստիարակության պայմանները, ինչպես նաև պարզել ոչ միայն ծնողների, այլև քույրերի, եղբայրների և վերընթաց ու վարընթաց գծով մյուս հարազատների հետ որդեգրվողի իրավահարաբերությունների դադարեցման նպատակահարմարությունը: Հատկապես մանրամասնորեն պետք է պարզել ծնողների կողմից դեռահաս երեխաներին որդեգրման հանձնելու պատճառը՝ արդյոք դեռահասի որդեգրումը պայմանավորված է որդեգրողի ընտանիքը համալրելու ցանկությամբ, թե հետապնդում է շահադիտական նպատակներ: Երեխային խորթ հոր, խորթ մոր, հարազատների (տատի, պապի, քրոջ, եղբոր, մորաքրոջ, քեռու, հորաքրոջ) կողմից որդեգրելու ժամանակ որդեգրողի սոցիալ-տնտեսական վիճակի զննումը պարտադիր չէ, եթե նրանք արդեն իսկ զբաղվում են երեխայի խնամքով և դաստիարակությամբ:	ժամկետում երեխայի փաստացի գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին տեղեկատվություն (սեռի, տարիքի, առողջական վիճակի մասին և այլն) տրամադրել իրենց մոտ ծնված կամ ընդունված առանց ծնողական խնամքի մնացած, ինչպես նաև պետության լրիվ հոգածության ներքո գտնվող երեխայի վերաբերյալ: Յուրաքանչյուր որդեգրման ներկայացված երեխայի համար համապատասխան հաստատությունից (բուժմիավորում, մանկատուն, երեխաների տուն, մանկան տուն, գիշերօթիկ դպրոց) ներկայացվում են փաստաթղթեր նրա առողջական վիճակի, ֆիզիկական և մտավոր զարգացման վերաբերյալ՝ հիմք ընդունելով մանկաբույժի, հոգեբույժի, նևրոպաթոլոգի, վիրաբույժի (օրթոպեդ-վնասվածքաբանի), ակնաբույժի, քիթ-կոկորդի բժշկի, լոգոպեդի, իսկ 3 և ավելի տարեկանների համար մանկավարժ-արատաբանի եզրակացությունները: Անհրաժեշտության դեպքում, ըստ ցուցմունքների, երեխան հետազոտվում է նաև այլ մասնագետների կողմից: Այդ եզրակացությունը հաստատվում է այն հաստատության ղեկավարի կողմից, որտեղ գտնվելու է երեխան: ԽՀ-ում գտնվող երեխայի որդեգրման համար անմիջապես այդ հաստատությունում ծնողների տված համաձայնությունը ձևակերպվում է գրավոր: Ծնողների անձնագրային տվյալները և ստորագրությունները վավերացվում են ԽՀ-ի ղեկավարի կողմից և հաստատվում են ԽՀ-ի կնիքով: Երեխայի համաձայնությունը որդեգրմանը ի հայտ են բերում խնամակալության և հոգաբարձության մարմինները, որպես անչափահասի գրավոր համաձայնություն կարելի է ճանաչել նաև մարզային (հանրապետական) հանձնաժողովի երեխայի հետ ունեցած զրույցի արձանագրությունը: Եթե որդեգրվող երեխան հիվանդ է, ունի ֆիզիկական կամ մտավոր արատ, ՀԽ-ի ղեկավարությունը այդ մասին որդեգրողին տեղյակ է պահում գրավոր ձևով, իսկ վերջինս իրազեկության մասին ստորագրություն է տալիս: Երեխայի հիվանդության, դրա հետևանքների մասին բացատրություն է տալիս բուժհիմնարկի գլխավոր բժիշկը, մանկատան, բուժական հիմնարկի (ստացիոնար), գիշերօթիկ դպրոցի տնօրենը՝ մանկաբույժի հետ միասին:	

		14. Առանձնակի ուշադրությամբ պետք է քննարկվեն 15-17 տարեկան պատանիների, աղջիկների որդեգրման մասին խնդրանքները՝ նախկինում նրանց խնամքով և դաստիարակությամբ չզբաղված անձանց կողմից: Քանի որ նման դեպքերում միշտ չէ, որ որդեգրումը կարող է բխել որդեգրվողի շահերից: Անհրաժեշտ է նաև 15-17 տարեկան որդեգրվողին տեղեկացնել, որ օրենսգրքի համաձայն չափահաս դառնալուց հետո նրանք միաժամանակ կկրեն որդեգրողներին խնամելու, նրանց հանդեպ հոգածություն ցուցաբերելու պարտականություններ: 15. Որդեգրողները իրավասու են պահանջել, որպեսզի որդեգրվողին տրվի որդեգրողի ազգանունը, որդեգրող տղամարդու անունով հայրանունը, ինչպես նաև փոխվի որդեգրվողի անունը: Սակայն համայնքի ղեկավարը կարող է նաև մերժել որդեգրվողի անվան փոփոխումը, օրինակ, եթե դրան դեմ է 10 տարեկանը լրացած որդեգրվողը: 16. Որդեգրողների ընտանիքում որդեգրված երեխայի ապրելու և նրա դաստիարակության նկատմամբ հսկողության հիմնական նպատակը երեխայի ընտանիքին հարմարվելուն աջակցությունն է, նրա իրավունքների և օրինական շահերի ապահովումն է:	Երեխայի անձնական գործում նշվում է, որ որդեգրողի թեկնածուն նախազգուշացված է երեխայի հիվանդության (արատի) և դրա հետևանքների մասին: Որդեգրողներն իրենց խնդրանքով որդեգրվողի ծննդյան մասին գրառումների մատյանում կարող են գրանցվել որպես որդեգրվողի ծնողներ: Սակայն, առանձին դեպքերում, համայնքի ղեկավարը կարող է մերժել այդ խնդրանքը, եթե դրան դեմ է 10 տարեկանը լրացած որդեգրվողը:	
292.	**«ՀՀշն31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի հրաման** *N 103-Ն, ընդունված է՝ 09.04.2014, ուժի մեջ է՝ 15.05.2014* Հաստատում է հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը:	1. Հանրակրթական հաստատությունների ցանցն անհրաժեշտ է տեղակայել որպես ուսումնադաստիարակչական հաստատությունների համակարգի հիմնական կառուցվածք, որը հանրակրթականից բացի պետք է ներառի արտադպրոցական և աշխատանքային ուսուցումը: 2. Հանրակրթական հաստատությունների շենքերը պետք է բաղկացած լինեն ուսումնական և համադպրոցական սենքերի խմբերից և բաժանված լինեն առանձին գործառական խմբերի: Հանրակրթական հաստատության ուսումնական խմբի սենքերը պետք է տարբերակված լինեն կրթական երեք աստիճաններին և տարիքային խմբերի սպասարկման տեխնոլոգիական սենքերին համապատասխան: Խորացված ուսուցմամբ ավագ դպրոցի սենքերը պետք է բաղկացած լինեն մասնագիտացված կաբինետների զարգացած ցանցից՝ լաբորատորիաներից՝ ճակատային պարապմունքների համար, և լաբորանտական և այլն ռեսուրսային կենտրոն, պահեստներից: Մասնագիտասված ուսումնական կաբինետ-լաբորատորիաների քանակը հաշվարկվում է յուրաքանչյուր առարկայի տեսական և գործնական ուսումնական ժամերին համապատասխան: 3. Հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի միջնակարգ կրթությունն իրականացվում է ընդհանուր տիպի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հատուկ մասնագիտացված ուսումնական հաստատություններում: Հանրակրթական հաստատություններում մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների կրթության և դաստիարակության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով նախատեսել նրանց կրթության կազմակերպման հետևյալ տարբերակները՝ հանրակրթական հաստատություններում անհատական ծրագրով, հանրակրթական հաստատությունների հատուկ դասարաններում: 4. Հանրակրթական հաստատություններում մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների կրթությունն անհատական ծրագրով իրականացնելու համար անհրաժեշտ է տվյալ հաստատությունում նախատեսել հատուկ սարքավորված աշակերտական տեղեր: 5. Հանրակրթական հաստատությունների նախագծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հաշմանդամների կողմից, այդ թվում շարժասայլակներով և այլ օժանդակ հարմարանքների օգնությամբ տեղաշարժվող, դրանց օգտագործման հնարավորությունը՝ շենքերի մոտեցումների, մուտքերի և դռների, թեքհարթակների, սանդուղքների և աստիճանների, բազրիքների, վերելակների, լուսամուտների, սանիտարական հանգույցների կահավորման և դրանց բաղկացուցիչ մաս կազմող օժանդակ հարմարանքների նկատմամբ: 6. Հանրակրթական հաստատության հիմնական սենքերի կահավորման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների տարբեր տարիքային խմբերի համար սահմանված սանիտարահիգիենիկ պայմանները: Սենքերը պետք է ներառեն սովորողի, ուսուցչի աշխատանքային գոտիները, ուսումնական դիտակտիկ նյութերի տեղադրման, աշակերտների անձնական իրերի համար լրացուցիչ մակերեսներ, դասարանին կից գոտիներ, աշակերտների խմբային և անհատական պարապմունքների գոտիներ:		• ՀՀ քաղաքաշինության նախարարություն
293.	**«Նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների)» N 2.iii.1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին« ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 857, ընդունված է՝ 20.12.2002, ուժի մեջ է՝ 30.01.2003* Հաստատում է նախադպրոցական կազմակերպությունների (հիմնարկների) N 2.III.1 սանիտարական նորմերը և կանոնները:	1. Սահմանում է՝ նախադպրոցական հաստատությունների տեղամասի, շենքի, բնական և արհեստական լուսավորման, սանիտարատեխնիկական սարքավորումների, շինության սարքավորումների, տեղամասի և շենքի տարածքների սանիտարական պահպանությանը, օդային ռեժիմին, սննդային բլոկի սարքավորումների, մթերքի պահպանման և պատրաստման, ընդունման կարգի, սպասարկող անձնակազմի անձնական հիգիենայի, օրվա ռեժիմի և ուսուցողական պարապմունքների, սննդի, ֆիզիկական դաստիարակության կազմակերպման, երեխաներին հիգիենայի ուսուցման և դաստիարակության կարգը: 2. Մինչև մանկական նախադպրոցական կազմակերպություն երեխայի ընդունվելը առողջական վիճակի շեղումներ հայտնաբերելու նպատակով կատարվում են երեխայի բերանի խոռոչի, քիթ-ըմպանի, տեսողության խանգարման, ակնոցի ընտրության և այլ բուժական, ինչպես նաև առողջարարական միջոցառումներ:	Մանկական նախադպրոցական այլ հիմնարկներից երեխաների տեղափոխման ժամանակ, զարգացման պատմության քաղվածք է կազմվում մանկական կազմակերպություն հաճախող բժշկի կամ տեղամասային մանկաբույժի կողմից: Մանկական նախադպրոցական կազմակերպություն երեխայի ընդունվելիս բժիշկը, որը կատարում է տվյալ հիմնարկի հսկողությունը, ծնողներից հավաքում է լրացուցիչ տվյալներ երեխայի զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ, տալիս է առողջության վիճակի գնահատում ֆիզիկական և նյարդահոգեկան զարգացման վիճակի վերաբերյալ և մանկավարժի հետ համատեղ կատարում է անհատական ռեժիմի, ինչպես նաև սնուցման և	• ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային մարմիններ

			առողջարարական միջոցառումների վերաբերյալ նշանակումներ: Երեխայի ընդունման ժամանակ հավաքած բոլոր տվյալները անցկացվում են երեխայի զարգացման պատմության մեջ՝ մսուրային հասակի երեխաների համար՝ հաշվառման քարտ կամ երեխայի բժշկական քարտ, նախադպրոցական հասակի երեխաների համար- հաշվառման քարտ, և հասցվում է ի գիտություն խմբերի դաստիարակներին:	
294.	**«Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում (բաժանմունքներում) ներհիվանդանոցային վարակի կանխարգելման և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպման և իրականացման N 3.1.6.-011-09 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 03-Ն, ընդունված է՝ 27.03.2009, ուժի մեջ է՝ 11.06.2009* Հաստատում է մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում (բաժանմունքներում) ներհիվանդանոցային վարակի կանխարգելման և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպման և իրականացման սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը, ուժը կորցրած ճանաչել ՀՀ առողջապահության նախարարի 2004 թ. հունիսի 4-ի N 598-Ն հրամանը:	1. Սահմանում է սանիտարահամաճարակային նորմերի և կանոնների կիրառման ոլորտը, մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարի կամ բաժանմունքի տեղակայմանը, կառուցվածքին, սարքավորումների օգտագործմանը, ջրամատակարարմանը և ջրահեռացմնաը, միկրոկլիմային, օդափոխությանը, բուժանձնակազմի աշխատանքային և կենցաղային պայմաններին, աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները: 2. Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում (բաժանմունքներում) ներհիվանդանոցային վարակի կանխարգելման և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպմանն ուղղված կազմակերպական միջոցառումները: 3. Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում (բաժանմունքներում) աշխատանքի ընդունման և անձնակազմի բժշկական զննության կարգը: 4. Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում (բաժանմունքներում) հակահամաճարակային ռեժիմի և պատվաստումային գործընթացի կազմակերպման ձևերը: 5. Համաճարակաբանական հսկողությունը, ներհիվանդանոցային վարակի կանխարգելման և իրականացման, ներհիվանդանոցային վարակների հայտնաբերման ու հաշվառման կարգը: 6. Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարներում համաճարակային միջոցառումների իրականացման որակի մանրէաբանական հսկողության կարգը:	Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարն (բաժանմունքը) իր գործունեությունը ծավալում է գործունեության տվյալ տեսակն իրականացնելու լիցենզիա ունենալու դեպքում: Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարի (բաժանմունքի) գործունեության ժամանակավորապես դադարեցման պլան-ժամանակացույցը կազմվում է տվյալ ստացիոնարի տնօրենի/գլխավոր բժշկի կողմից՝ նախապես համաձայնեցնելով Պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության հետ: Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնար (բաժանմունք) դիմելու ժամանակ կնոջ բաժանմունք կամ առանձնացված սենյակ կամ բոքս ընդունելու հարցը որոշվում է փոխանակման քարտի, հարցման և զննման տվյալների հիման վրա: Օդափոխանակման, ջեռուցման և օդի լավորակման արդյունավետությունը գնահատելու համար բուժկանխարգելիչ կազմակերպության կողմից առնվազն ամիսը 1 անգամ իրականացվում են օդի մանրէային աղտոտվածության լաբորատոր հետազոտություններ, ինչպես նաև միկրոկլիմայի չափորոշիչների (առնվազն՝ օդի ջերմաստիճանի) ամենօրյա գործիքային չափումներ՝ համապատասխան գրանցումներով: Ամիսը 1 անգամից ոչ պակաս անցկացվում է զտիչների աղտոտվածության աստիճանի և օդի մանրէասպան սարքերի աշխատանքի արդյունավետության հսկողություն, որի վերաբերյալ գրանցումները կատարում են համապատ Մանկաբարձագինեկոլոգիական ստացիոնարում ծննդկանների, նորածինների, ինչպես նաև բուժաշխատողների շրջանում վարակիչ հիվանդության կամ կասկածի հայտնաբերման դեպքում անմիջապես՝ հեռախոսով և 24 ժամվա ընթացքում՝ գրավոր, պարտադիր հաղորդվում է Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության	• ՀՀ առողջապահության նախարարություն • ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության տարածքային մարմիններ

			տարածքային կենտրոն:	
295.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում արտահիվանդանոցային պայմաններում ցուցաբերվող մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 77-Ն, ընդունված է՝ 28.11.2013, ուժի մեջ է՝ 11.04.2014* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում արտահիվանդանոցային պայմաններում ցուցաբերվող մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչը:	1. Սահմանում է հղիների նախածննդյան և ծննդկանների հետծննդյան հսկողության կազմակերպումն ու ծավալները: 2. Սահմանում է հղիների նախածննդյան հսկողության և կանանց լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծավալը: 3. Ախտաբնական հղիության, պտղի զարգացման ախտաբանության ցանկը: 4. Հղիի նախածննդյան խնամքի կազմակերպման ծավալների հակիրճ նկարագիրը: 5. Պտղի սրտի անոմալիաների վաղ ախտորոշման և վարման համառոտ գործելակարգ մանկաբարձ-գինոկոլոգների համար: 6. Հղիների ֆիզիկական և հուզահոգեբանական նախապատրաստումը ծննդաբերության ամբուլատոր պայմաններում: 7. Հղիների հետ «Մայրության դպրոցում» դասընթացի բովանդակությունը:	Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում արտահիվանդանոցային պայմաններում ցուցաբերվող մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է տվյալ գործունեության իրականացման համար լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպությունների կողմից: Արտահիվանդանոցային պայմաններում ցուցաբերվող մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնությունն ու սպասարկումը հիմնականում իրականացվում է տարածքային սպասարկման սկզբունքով, միաժամանակ՝ յուրաքանչյուր բնակիչ իր բնակավայրի վարչական տարածքի շրջանակներում իրեն սպասարկող բժշկին՝ մանկաբարձ-գինեկոլոգին, ընտրելու իրավունքն ունի, անկախ մինչ այդ կատարված տեղամասային կցումներից:	• ՀՀ առողջապահության նախարարություն
296.	**«Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային պայմաններում ցուցաբերվող մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 80-Ն, ընդունված է՝ 29.11.2013, ուժի մեջ է՝ 11.04.2014* Հաստատում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային պայմաններում ցուցաբերվող մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչը:	1. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային պայմաններում ցուցաբերվող մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի հրամանը սահմանում է պետության կողմից երաշխավորված անվճար մանկաբարձագինեկոլոգիական հիվանդանոցային օգնության ծավալները, մանկաբարձագինեկոլոգիական հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման առանձին դրույթներ և մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության կազմակերպման այլ ծավալներ:	Մանկաբարձագինեկոլոգիական հիվանդանոցային բուժօգնության որակի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ են. ծննդաբերությունների բացարձակ թիվը, ախտաբանական ծննդաբերություններ /տոկոս կեսարյան հատումների տեսակարար կշիռը ծնունդների ընդհանուր թվի նկատմամբ անհետաձգելի միջամտություններ հոսպիտալիզացիայի ընդհանուր դեպքերից մայրական մահացություն, մեռելածնություն, պտղի ինտրանատալ մահ. նորածինների պոստնատալ մահ վաղաժամ ծննդաբերությունը տեսակարար կշիռը և այլն:	• ՀՀ առողջապահության նախարարություն
297.	**««Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցման մասին» Հաագայի 1980 թ. հոկտեմբերի 25-ի կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ապահովման մասին» ՀՀ արդարադատության**	1. Եթե որևէ անձ, հաստատություն կամ այլ մարմին գրավոր կամ բանավոր դիմել է կենտրոնական մարմին՝ ՀՀ տարածքից կոնվենցիայի մասնակից որևէ պետության տարածք երեխայի ապօրինի տեղափոխելու կամ այնտեղ ապօրինի պահելու փաստի առիթով, ապա կենտրոնական մարմինն անհապաղ պարզում է, թե արդյոք դեպքն առնչվում է սահմանված տարիքի երեխայի հետ, թե ոչ, թե՞ երեխային ՀՀ տարածքից կոնվենցիայի մասնակից որևէ պետության տարածք տեղափոխելը կամ այնտեղ նրա պահելը կարող է դիտվել իբրև անօրինական տեղափոխում կամ պահում, թե ոչ, դիմողն օգտվել է արդյոք կոնվենցիայով սահմանված իր իրավունքից և դիմել է կոնվենցիայի մասնակից որևէ պետության կենտրոնական մարմին՝ երեխային վերադարձնելու խնդրանքով, ինչ տեղեկություններ ունի դիմողը երեխայի և նրա անօրինական տեղափոխման կամ անօրինական պահելու վերաբերյալ, ինչ կապի մեջ է գտնվում դիմողը անօրինական տեղափոխված կամ անօրինական պահվող երեխայի հետ, և դիմողի բնակության հասցեն, այլ	Կենտրոնական մարմինը, փոխանցող մարմինը և ոստիկանությունը վարում են կոնվենցիային համապատասխան երեխայի վերադարձի հետ կապված գործերը՝ առանձին-առանձին և իրենց մոտ առկա տեղեկություններին, իրենց վերապահված իրավասությանը համապատասխան: Երեխային ընդունելուց հետո նստավայր	• ՀՀ արդարադատության նախարարություն • ՀՀ արտաքին գործերի նախարարություն • ՀՀ ոստիկանություն

	նախարարի, ՀՀ արտաքին գործերի նախարարի և ՀՀ ոստիկանության պետի համատեղ հրաման *N 31-Ն, N 1/184-Ն, 1-Ն, ընդունված է՝ 05.02.2008, ուժի մեջ է՝ 11.04.2008* Հաստատում է «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցման մասին» Հաագայի 1980 թ. հոկտեմբերի 25-ի Կոնվենցիայի կատարման ապահովման համար ՀՀ գործադիր իշխանության իրավասու մարմինների գործակցության կարգը:	հանգամանքներ, որոնք կարող են օգտակար լինել երեխային հայտնաբերելու և վերադարձնելու նպատակով կոնվենցիայի մասնակից համապատասխան պետության կենտրոնական մարմին դիմելու համար: 2. Եթե պարզվում է, որ դեպքն առնչվում է կոնվենցիայով կարգավորվող հարաբերությունների հետ, ապա կենտրոնական մարմինն անհապաղ գրավոր հայտնում է ոստիկանությանը՝ երեխայի անօրինական տեղափոխման կամ պահելու մասին՝ ՀՀ օրենսդրությամբ վերջինիս իրավասության շրջանակներում ընթացակարգեր սկսելու և երեխայի գտնվելու ճշգրիտ տեղը հայտնաբերելու և նրան ՀՀ վերադարձնելու աշխատանքները կազմակերպելու նպատակով: 3. Կենտրոնական մարմինը դիմումն անհապաղ ուղարկում է փոխանցող մարմնին՝ դիվանագիտական ուղիներով կոնվենցիայի մասնակից այն պետության կենտրոնական մարմին ներկայացնելու, երեխային հայտնաբերելու և վերադարձնելու նպատակով, որի տարածք նա ապօրինի տեղափոխվել է կամ այնտեղ ապօրինի պահվում է: Փոխանցող մարմինը դիմումը հայցվող կենտրոնական մարմին պետք է ուղարկի այն ստանալու օրվանից հաշված՝ 3-օրյա ժամկետում: Փոխանցող մարմինը միաժամանակ տվյալ երկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին հանձնարարական է տալիս միջազգային իրավունքով սահմանված կարգով նստավայր պետությունում երեխայի հայտնաբերման և Հայաստան վերադարձնելու ուղղությամբ գործողություններ իրականացնելու վերաբերյալ: 4. Եթե որևէ պատճառով հնարավոր չի լինում երեխայի ՀՀ տարածք վերադարձնելուն պես նրա ընդունումը երեխայի նկատմամբ խնամակալական իրավունքներ ունեցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից, ապա ոստիկանության պատասխանատու աշխատակիցը դիմավորում է նրան և ապահովում նրա փոխանցումն այն անձին, որը նրա նկատմամբ խնամակալական իրավունքներ ունի: Եթե պարզվի, որ երեխայի վերադարձի պահին ՀՀ-ում նրան ընդունող կամ պահող որևէ հարազատ չկա, ապա ոստիկանությունն ապահովում է նրա տեղավորումը համապատասխան կազմակերպությունում և քայլեր ձեռնարկում նրա նկատմամբ խնամակալություն սահմանելու ուղղությամբ: 5. Կոնվենցիայով մասնակից որևէ պետության կենտրոնական մարմնից) ՀՀ-ի տարածք երեխայի ապօրինի տեղափոխելու կամ այնտեղ ապօրինի պահելու մասին դիմում ստանալուց հետո՝ անհապաղ, փոխանցող մարմինն այն հասցեագրում է կենտրոնական մարմին: Կենտրոնական մարմինը դիմումը ստանալուց հետո՝ 3-օրյա ժամկետում, պետք է պարզի՝ դիմումի՝ կոնվենցիային համապատասխան կազմած լինելու հանգամանքը, լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ պահանջելու անհրաժեշտությունը, դիմումի մեջ նշված երեխայի վերաբերյալ ոստիկանությունում որևէ տեղեկության առկայությունը կամ բացակայությունը, այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել անհետաձգելիորեն: Եթե կենտրոնական մարմինը վերը նշված գործողությունները կատարելուց հետո պարզում է, որ պետք է իրականացվեն կոնվենցիայից բխող երեխային վերադարձնելու գործողություններ, ապա անհապաղ ոստիկանությանը գրավոր հայտնում է կոնվենցիայի մասնակից պետության տարածքից ՀՀ-ի տարածք երեխայի ապօրինի տեղափոխման կամ այնտեղ ապօրինի պահելու մասին՝ հայտնելով երեխայի վերաբերյալ իր մոտ առկա բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և հայցող կենտրոնական մարմնին ուղղված դիմումի և դրա հայերեն թարգմանության պատճենները: Ոստիկանությունը, կենտրոնական մարմնից դիմումն ստանալուն պես, իրականացնում է երեխայի հայտնաբերմանն ուղղված գործողություններ, ինչպես նաև՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ քրեական հետապնդում, եթե դրա համար բավարար հիմքեր կան:	պետությունում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը կազմակերպում է նրա վերադարձը ՀՀ՝ վերադարձի պայմանների և ժամկետների մասին նախօրոք տեղեկացնելով փոխանցող մարմնին՝ այն հաշվով, որպեսզի հնարավոր լինի ապահովել Հայաստանի տարածք երեխայի ժամանումից հետո ոստիկանության ներկայացուցչի ներկա գտնվելը: Երեխայի հետ տեսակցության մեկնող անձը մեկնման օրվա մասին պետք է տեղեկացնի (հեռախոսով, ֆաքսով, էլեկտրոնային փոստով կամ հասանելի որևէ այլ եղանակով) կենտրոնական մարմնին և ոստիկանությանը, իսկ վերադարձից հետո՝ նաև տեսակցության հանգամանքների մասին: Եթե տեսակցության մեկնելուց հետո հայցվող կենտրոնական մարմնի հետ համաձայնություն է ձեռք բերվել երեխային վերադարձնելու մասին և տեսակցողը Հայաստան է վերադարձել երեխայի հետ, ապա նա այդ մասին անհապաղ պետք է հայտնի կենտրոնական մարմնին կամ ոստիկանությանը: Հայցող կենտրոնական մարմնի պետության տարածք ժամանելուն պես ոստիկանության պատասխանատու աշխատակիցը այդ մարմնից կամ այդ պետության այլ իրավասու մարմնից, ինչպես նաև վերադարձված երեխայի խնամակալից կամ հոգաբարձուից գրավոր հավաստում պետք է ստանա երեխային վերադարձնելու փաստի վերաբերյալ: ՀՀ վերադառնալուց հետո՝ ողջամիտ ժամկետում, ոստիկանության պատասխանատու աշխատակիցը հավաստագրի պատճենը տրամադրում է կենտրոնական մարմնին:	
298.	**ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման** *N 29-Ն, ընդունված է՝ 26.01.2007, ուժի մեջ է՝ 25.03.2007* Հաստատում է ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական	1. Սահմանում է պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը և նորմատիվները		• ՀՀ ԿԳՆ

	հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը, խմբերի խտությունը, նորմատիվները:			
299.	**ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման** *N 280-Ն ընդունված է՝ 05.04.2011, ուժի մեջ է՝ 02.06.2011* Հաստատում է ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգը	1. ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգը սահմանում է ՀՀ դպրոցական առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման ընդհանուր դրույթները, օլիպիդաների հիմնական սկզբունքները, հիմնական նպատակներն ու խնդիրները, օլիմպիական խորհրդի գործառույթները, հանրապետական, մարզային, տարածքային և դպրոցական առարկայական հանձնաժողովների գործառույթները, հանրապետական, մարզային, տարածքային և դպրոցական կազմկոմիտեների գործառույթները, հանրապետական առարկայական օլիմպիադաների չորս փուլերի կազմակերպումը, միջազգային առարկայական օլիմպիադաներին մասնակցող թիմերի ձևավորման կարգը:	Հանրապետական, մարզային, տարածքային և դպրոցական կազմկոմիտեները վերահսկում են օլիմպիադաների անցկացումը և խրախուսման ներկայացնում հաղթողներին, իսկ առարկայական հանձնաժողովները՝ անցկացնում են օլիմպիաադնարը, որոշում հաղթողներին և պարգևատրում:	• ՀՀ ԿԳՆ • Հանրապետական օլիմպիական խորհուրդ • Հանրապետական, մարզային, տարածքային, դպրոցական օլիմպիական կազմկոմիտեներ և առարկայական հանձնաժողովներ
300.	**Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման** *N 369-Ն, ընդունված է՝ 04.05.2015, ուժի մեջ է՝ 11.07.2015* Հաստատում է հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները	1. Սահմանում է հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները:	Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Իսկ տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը:	• ՀՀ ԿԳՆ
301.	**«ՀՀ առողջապահության նախարարի 2004 թվականի հոկտեմբերի 4-ի N 1009/12-Ն և 1009/23-Ն հրամաններում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման** *N 04-Ն, ընդունված է՝ 19.03.2008, ուժի մեջ է՝ 25.04.2008* Փոփոխություններ է կատարում ՀՀ առողջապահության նախարարի 2004թ. հոկտեմբերի 4-ի «ՀՀ առողջապահության նախարարության տարեկան վիճակագրական հաշվետվային ձևերի հաստատման մասին» N	1. Սահմանում է «Տուբերկուլոզով հիվանդների թվաքանակի մասին» վարչական վիճակագրական հաշվետվային ձև թիվ 33-ը: 2. Սահմանում է «Ակտիվ տուբերկուլոզով հիվանդացության մասին» վարչական վիճակագրական հաշվետվական ձև թիվ 61բ-ը:		• ՀՀ ԱՆ • ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

	1009/12-Ն և N 1009-23-Ն հրամաններում:			
302.	**«Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր արհեստական և բնական լուսավորում» ՀՀ քաղաքաշինության նախարարի հրաման** *N 82, ընդունված է՝ 08.06.1996, ուժի մեջ է՝ 18.07.2005* Սահմանում է նոր կառուցվող և վերակառուցվող տարբեր նշանակության շենքերի և կառուցվածքների, շենքերից դուրս աշխատանքի արտադրական տեղերի, արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների հրապարակների, ձեռնարկությունների երկաթուղային հրապարակների, քաղաքների, ավանների և գյուղական բնակելի վայրերի արտաքին լուսավորման, հաստոցների, մեքենաների և արտադրական կահույքի հետ լրակազմված մատակարարման դեպքում տեղական լուսավորման սարքերի նախագծման կարգը:	1. Բնակելի, հասարակական և օժանդակ շենքերի սենքերի համատեղված լուսավորումը թույլատրվում է նախատեսել այն դեպքերում, երբ այն պահանջվում է ըստ ռացիոնալ ծավալահատակագծային լուծումների ընտրության պայմաններով, բացառությամբ բնակելի շենքերի բնակելի սենքերի և խոհանոցների, երեխաների կացությամբ սենյակների, ուսումնական հաստատությունների և դպրոցների ուսումնական և ուսումնաարտադրական սենքերի, սանատորիաների և հանգստյան տների ննջասենյակների: 2. Մանկական հաստատություններում ռեժիմի խախտումը կապված չէ դրանցում գտնվող երեխաների թվից: 3. Սահմանում է անհարմարավետության ցուցանիշի նորմավորվող արժեքը սենքերում տեսողության գծի առավելապես վեր հորիզոնի նկատմամբ 45 և ավելի անկյան տակ ուղղորդման դեպքում և լուսավորման որակի նկատմամբ բարձրացված պահանջներով սենքերում (մանկապարտեզների, մանկամսուրների, սանատորիաների ննջասենյակներում, դպրոցների դիսփլեային դասարաններում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և այլն: 4. Սահմանում է բաբախման K գործակցի նորմավորվող արժեքն է լուսավորման որակի նկատմամբ բարձրացված պահանջներով մանկական բուժական սենքերի համար: 5. Բնակելի տների և մանկական նախադպրոցական հաստատությունների հիմնական սենքերում ԲԼԳ-ի նորմավորվող արժեքները պետք է ապահովվեն հատակի մակարդակի վրա: 6. Առաջին խմբի վարչական շրջաններում բնակելի սենյակների և խոհանոցի համար - 0,5, խմբակային, խաղային, ճաշարանների և ննջարանների համար - 1,5: 7. Սահմանում է մանկական հրապարակների շարժական խաղերի համար սարքավորումների տեղադրման տեղերում միջին հորիզոնական լուսավորվածությունը 8. Սահմանում է մսուր-մանկապարտեզներում, հանրակրթական դպրոցներում և գիշերօթիկ դպրոցներում, ուսումնական հաստատություններում միջին հորիզոնական լուսավորվածությունը: 9. Սահմանում է Լուսավորվածության նորմավորման հարթությունը և ԲԼԳ-ն, հարթության բարձրությունը հատակից, տեսողական աշխատանքի կարգը և ենթակարգը, արհեստական լուսավորման աշխատանքային մակերևույթների լուսավորվածությունը, գլանաձև լուսավորվածություն, անհարմարավետության ցուցանիշը, լուսավորվածության բաբախման գործակիցը, բնական լուսավորման ԿԵՕ-ն:		• Պետական սանիտարական հսկողության մարմինների • ՀՀ քաղաքաշինության նախարարություն
303.	**«Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին» ՀՀ Երևան քաղաքի ավագանու որոշում** *N 312-Ն, ընդունված է՝ 24.10.2011, ուժի մեջ է՝ 19.11.2011* Հաստատում է Երևան քաղաքում ընտանի կենդանիներին հաշվառելու և պահելու կանոնները	1. Կենդանիների զբոսանքը թույլատրվում է միայն այդ նպատակով հատուկ հատկացված տարածքներում: Նման տարածքների բացակայության դեպքում զբոսանքը կարող է իրականացվել ամայի կամ խոտածածկ տարածքներում, բացառությամբ կրթական, մշակութային, սպորտային, առողջապահական կազմակերպություններին (հիմնարկներին) հարող տարածքների, **մանկական հրապարակների** և շուկաների տարածքների: 2. Արգելվում է շանը զբոսանքի տանելը մանկական հրապարակներում, առողջապահական, կրթական, մշակույթի, սպորտի հիմնարկների և շուկաների տարածքներում: 3. Արգելվում է 14 տարին չլրացած անչափահասներին 15 կիլոգրամից ավելի քաշ ունեցող շներին զբոսանքի տանելը:	Կենդանիներն հաշվառման են ենթակա սկսած վեց ամսական հասակից: Հաշվառման ենթակա չեն մանր կենդանիներն ու թռչունները, որոնք պահվում են դեկորատիվ նպատակով, ինչպես նաև կենդանաբանական այգիներում պահվող կենդանիները: Հաշվառումն իրականացնում է վարչական շրջանի ղեկավարը: Կենդանիների հաշվառումն իրականացվում է դրանց ձեռքբերման կամ Երևանի վարչական տարածք ներմուծման պահից 15-օրյա ժամկետում: Հաշվառման արդյունքում տիրապետողին տրվում է գրանցման վկայական և անհատականացնող համար: Հաշվառման մասին նշում է կատարվում կենդանիների հաշվառման գրքում: Կենդանուն անհատականացնող համարը նշվում է կենդանու վզնոցի վրա: Կենդանու հաշվառման ժամանակ տիրապետողը պարտադիր պետք է ծանուցվի Կանոնների մասին, ինչը հավաստվում է տիրապետողի ստորագրությամբ: Տիրապետողն իրավունք ունի հաշվառող մարմնից	• Երևանի քաղաքապետարան • Վարչական շրջանի ղեկավար

			անվճար տեղեկություններ ստանալ այն վայրերի մասին, որտեղ տիրապետողն իրավունք ունի կազմակերպել կենդանու զբոսանքը կամ արոտը, ինչպես նաև այն վայրերի մասին, որտեղ թույլատրված է կենդանիների թաղումը: Կենդանու մահվան կամ սպանդի դեպքում կենդանու նախկին տիրապետողը պարտավոր է հաշվառող մարմին հանձնել գրանցման վկայականը, ինչի մասին նշում է կատարվում գրանցման գրքում: Կենդանուն այլ անձի տիրապետությանը հանձնելու դեպքում նոր տիրապետողին են հանձնվում կենդանուն անհատականացնող համարի նշումով կենդանու վզնոցը և գրանցման վկայականը՝ կենդանու հետագա վերահաշվառում իրականացնելու համար:	
304.	**«Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի որոշում** *N 1-Ն, ընդունված է՝ 15.02.2010, ուժի մեջ է՝ 12.03.2010* Հաստատում է էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումներ, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների չափորոշիչները	1. էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների դրվագներում տղամարդու կամ կնոջ սեռական օրգանները կարող են պատկերվել միայն հեռավոր պլանով, սեռական գործողության կամ դրա իմիտացիայի տեսարաններում չեն կարող ցուցադրվել սեռական օրգաններ, սեռական հարաբերությունների խոսքի կամ ձայնի ուղեկցությամբ նկարագրությունը չի կարող պարունակել սեռական գործողության մանրամասներ: 2. Սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող են համարվում այն ֆիլմերը, որոնք ցուցադրում են վախի, տագնապի, անելանելիության զգացում հարուցող կամ սոսկում առաջացնող տեսարաններ, մարդկանց, ինչպես նաև կենդանիների խոշտանգումների, կտտանքների ենթարկելու, ֆիզիկական կամ հոգեկան ցավ պատճառելու, խոշտանգված մարմինների մանրամասների և արյունահեղ տեսարաններ: 3. Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում այն հաղորդումները, որոնք խեղաթյուրում են հանրակրթական ուսումնադաստիարակչական ծրագրերում ներառված պատմական իրողությունները, վարկաբեկում և նսեմացնում են ազգային գործիչներին, մշակութային ժառանգությունը, նսեմացնում և վարկաբեկում են ազգային եկեղեցուն և նրա կողմից քարոզվող արժեքները, ժխտում են բարոյականության նորմերը և քարոզում անբարո ապրելակերպ, նսեմացնում կրթության և դաստիարակության դերը, նպաստում են հանցագործ աշխարհի բարքերի, վարվելաձևերի, խոսելաձևերի հասարակության մեջ տարածմանը, հանցագործ կերպարների և կենսակերպի ռոմանտիզացիային, ցուցադրում կամ նմանակում են թմրամոլի կամ հարբեցողի՝ առանց դատապարտելու թմրամոլությունը և հարբեցողությունը, ծաղրում կամ ծաղրելով նմանակում են ֆիզիկական և հոգեկան արատներով անձանց, պարունակում են գռեհկաբանություն և հայհոյախոսություն: 4. Ժամը 6.00-24.00 ընկած ժամանակահատվածում ցուցադրվող հաղորդումները չեն կարող պարունակել էրոտիկ դրվագներ և սեռական գործողության տեսարաններ:		• ՀՌԱՀ • Հեռուստաընկերություններ
305.	**«Սիրողական ռադիոօպերատորների թույլտվությունների դասակարգման և տրամադրման, սիրողական ռադիոկայանների գրանցման, տեղադրման և օգտագործման կանոններն ու որակավորման չափանիշներին սիրողական ռադիոօպերատորների համապատասխանությունն**	1. 3-րդ կարգի թույլտվությունները (ֆիզիկական անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է սիրողական ռադիոյով զբաղվելու նրա իրավունքը, կարգը բնորոշվում է ռադիոհաճախականությունների թույլատրված տիրույթով, ճառագայթման տեսակով և հաղորդչի թույլատրված ելքային հզորությամբ) տրվում են նաև 14-ից մինչև 18 տարեկան անչափահասներին՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ:	Հանձնաժողովում յուրաքանչյուր Թույլտվություն ունեցող անձի համար վարվում է հաշվառման գործավարություն և կազմվում է Գործ: Թույլտվություն ստացած անձի ստորագրությամբ Թույլտվության ստացման կտրոնը պահվում է Գործում: Թույլտվության գործողությունը դադարեցվելու դեպքերում Գործը պահվում է Հանձնաժողովում:	• ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

	ստուգելու կարգը հաստատելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշում *N 527-Ն, ընդունված է. 26.08.2009, ուժի մեջ է. 25.10.2009* Հաստատում է սիրողական ռադիոօպերատորների թույլտվությունների դասակարգման և տրամադրման կանոնները, սիրողական ռադիոկայանների գրանցման, տեղադրման և օգտագործման կանոնները, որակավորման չափանիշներին սիրողական ռադիոօպերատորների համապատասխանությունն ստուգելու կարգը:			

3. Ինստիտուտներ (2016թ. հունվարի 1-ի դրությամբ)

Հ/Հ	Մարմնի անվանումը, փաստաթուղթը, որը սահմանում է մանդատը	Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում լիազորություններ, պարտականություններ	Տվյալների հավաքագրման և մոնիթորինգի համակարգեր, ստորաբաժանումներ	Կարողությունները, այդ թվում՝ կառուցվածքային և կարողության բացերը
1.	**Տեղական ինքնակառավարման մարմիններ** «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք *ՀՕ-337, ընդունված է՝ 07.05.2002, ուժի մեջ է՝ 21.06.2002* Սահմանում է ՀՀ տեղական ինքնակառավարման հասկացությունը, սկզբունքները, մարմինները, լիազորությունները, դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները, ինչպես նաև կարգավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները:	1. **Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները** լինում են սեփական և պետության կողմից պատվիրակված: Սեփական լիազորությունները բաժանվում են պարտադիր և կամավոր լիազորությունների: Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են օրենքով: Պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացումը կարող է փոխանցվել համայնքներին՝ որպես պետության պատվիրակած լիազորություններ: Պետության պատվիրակած լիազորություններն իրականացվում են օրենքով կամ կառավարության սահմանած կարգով: Պետության պատվիրակած լիազորություններն ամբողջովին և պարտադիր ֆինանսավորվում են պետական բյուջեից՝ պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին: Պարտադիր և պետության պատվիրակած լիազորությունները ենթակա են համայնքի կողմից առաջնահերթությամբ և օրենքով սահմանված կարգով կատարման: Կամավոր լիազորություններն իրականացվում են համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և ավագանու սահմանած կարգով: Այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքները կարող են իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ: (Հոդված 10) 2. **Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության** բնագավառում համայնքի ղեկավարը, մասնավորապես, իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները. սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ, կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեությունն այն համայնքներում, որտեղ գտնվում են համապատասխան կառույցները, միջոցներ է ձեռնարկում իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն, վավերացնում է համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը, եթե այդ համայնքում չկա մշտապես գործող նոտար: (Հոդված 33) 3. **Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության** բնագավառում համայնքի ղեկավարը, մասնավորապես, իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները. համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի որևէ ձև կամ միջոց (այդ թվում՝ տեղեկատվության և հեռահաղորդակցության), ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար, կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին, համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում և (կամ) ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում: (Հոդված 33.1) 4. **Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների** բնագավառում համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունը՝ կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, գրադարանների, կրթական և մշակութային այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները: Համայնքի ղեկավարը սույն բնագավառում, մասնավորապես, իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները. աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը, աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը: (Հոդված 41) 5. **Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի** բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունը. կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության առողջապահական և մարզական հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը: Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները. աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը, աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը, նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ: (Հոդված 42) 6. **Աշխատանքի և սոցիալական պաշտպանության** բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է	**Համայնքի ղեկավար** և **ավագանու անդամ** կարող է ընտրվել տվյալ համայնքում առնվազն վերջին երկու տարվա հաշվառում ունեցող՝ ՀՀ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի: (Հոդված 7) **Համայնքի ավագանին**, մասնավորապես, հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը, բյուջեն, բյուջեի փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը, որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ, որոշում է կայացնում պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից համայնքի խնդիրներին վերաբերող և օրենքով սահմանված գաղտնի տեղեկություններ չպարունակող փաստաթղթեր ստանալու վերաբերյալ (մեկամսյա ժամկետում պարտադիր է պետական մարմինների և պաշտոնատար անձանց համար), որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին, համաձայնություն է տալիս համայնքի ղեկավարի ներկայացրած՝ բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին, հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ, քննարկում է ՀՀ վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողության և այլ իրավասու պետական մարմինների իրականացրած ստուգումների արդյունքները և իր իրավասության շրջանակում դրանց վերաբերյալ ընդունում է որոշում, քննարկում և որոշում է կայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ, քննարկում և որոշում է կայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու վերաբերյալ և այլն (Հոդված 16) **Համայնքի ղեկավարն իր լիազորությունները**	

		պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը՝ համայնքի տարածքում կազմակերպում է սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը և տեղական ինքնակառավարման մարմինների՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեությունը: Համայնքի ղեկավարը, մասնավորապես, իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունը՝ միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ: (Հոդված 43) 7. Տեղական ինքնակառավարման մարմինները պետական կառավարման մարմինների մասը չեն: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացումը պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից արգելվում է, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: (Հոդված 70) Կարգավորում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների **փոխհարաբերությունները**: (Հոդված 71) 8. **Միջհամայնքային միավորումներ** 9. **Մարզի խորհուրդ**	**իրականացնում է** աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով: Համայնքի ղեկավարը իր ներկայացմամբ և ավագանու համաձայնությամբ նշանակում է համայնքային բյուջետային հիմնարկների ղեկավարներին: Բյուջետային հիմնարկների ղեկավարները համայնքի ղեկավարին են ներկայացնում տվյալ հիմնարկների կանոնադրությունները: (Հոդված 28) Սահմանում է **համայնքի ղեկավարի իրավասությունը** (Հոդված 32) Համայնքի ղեկավարը մշակում է համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, որը ներկայացնում է նորընտիր ավագանու հաստատմանը՝ վերջինիս լիազորությունների ստանձնման օրվանից եռամսյա ժամկետում: Համայնքի ղեկավարը տարեկան բյուջեների նախագծերը մշակելիս հաշվի է առնում համայնքի բնակչության կենսական շահերը, համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, ինչպես նաև առկա ռեսուրսները: (Հոդված 53) Համայնքի բյուջեն եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի քառամյա զարգացման ծրագրի և համայնքին՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը: Յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեն հաստատում է համայնքի ավագանին: Ավագանին համայնքի բյուջեում փոփոխություններ է կատարում համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատում է ավագանին: Համայնքի բյուջեն բաղկացած է վարչական և ֆոնդային մասերից: Համայնքի բյուջեն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: (Հոդված 54) Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է համայնքի ավագանին, որն իրավազոր է ստուգել ցանկացած բյուջետային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունը և որակը, պահանջել հաշվետվություններ՝ կատարված ծախսերի վերաբերյալ: Բյուջեի կատարման վերահսկողությունը մշտապես և արդյունավետ իրականացնելու նպատակով համայնքների ավագանիները կարող են սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է համայնքային բյուջեից: (Հոդված 68) Համայնքի սեփականության և բյուջեի միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում նաև ՀՀ վերահսկիչ պալատը: (Հոդված 681) Պետությունը համայնքների, միջհամայնքային միավորումների միավորման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Ազգային ժողովի և կառավարության միջոցով: ՀՀ վերահսկիչ պալատը, ոչ ավելի, քան տարին մեկ	

			անգամ ստուգում է պետական բյուջեից համայնքներին, միջհամայնքային միավորումներին միավորմանը տրամադրված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործումը: (Հոդված 77) Վարչական հսկողությունը տարածվում է համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակած լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ: Համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանափակվում է՝ բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով (իրավական հսկողություն): Համայնքի ղեկավարի՝ պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանվում է այդ լիազորությունների իրականացման օրինականությունը, արդյունավետությունն ու միասնականությունը ստուգելու նպատակով (մասնագիտական հսկողություն): (Հոդված 771) Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող մարմինները մարզպետներն են, որոնք իրականացնում են իրավական ու մասնագիտական հսկողություն համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակած լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ: Մարզպետը իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնում է իրավական հսկողության բարձրագույն մարմնի հաստատած ամենամյա աշխատանքային ծրագրին համապատասխան: Առանձին դեպքերում մարզպետը իրավական հսկողության բարձրագույն մարմնի գրավոր համաձայնությամբ կարող է իրականացնել ամենամյա աշխատանքային ծրագրում չընդգրկված միջոցառումներ: Մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինների կողմից կիրառվող բոլոր միջամտող միջոցառումները պետք է լինեն գրավոր և հիմնավորված: Իրավական հսկողության բարձրագույն մարմինը համայնքում կարող է իրականացնել իրավական հսկողություն համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակած լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ: Իրավական հսկողության բարձրագույն մարմինը սահմանում է կառավարությունը: Պետության պատվիրակած յուրաքանչյուր լիազորության իրականացման նկատմամբ մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինը այն պետական մարմինն է, որի իրավասության մեջ է մտնում այդ լիազորությունը: Մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինները համայնքում պատվիրակված լիազորությունների նկատմամբ մասնագիտական և իրավական հսկողություն կարող են իրականացնել բացառիկ դեպքերում՝ բարձրագույն իրավական հսկողություն իրականացնող մարմնի գրավոր համաձայնությամբ, նրա կամ մարզպետի	

			պահանջով: Տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ իրավական հսկողություն իրականացնող բարձրագույն մարմինն արդարադատության նախարարությունն է: Մարզպետի, իրավական հսկողության բարձրագույն մարմնի և մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինների կողմից վարչական հսկողության իրականացման ընթացքում ձեռնարկվող միջոցները սահմանվում են բացառապես օրենքով: (Հոդված 772) Սահմանում է վարչական հսկողության կանխարգելիչ միջոցները (Հոդված 773) Մարզպետը, իրավական հսկողության բարձրագույն մարմինը, ինչպես նաև մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինները իրավասու են ծանոթանալու տեղական ինքնակառավարման մարմիններում հսկողության ոլորտին առնչվող փաստաթղթերին: Նրանք կարող են այցելել տեղական ինքնակառավարման մարմիններ, համայնքին պատկանող բոլոր հաստատությունները, ստուգել նրանց գործողությունների և անգործության իրավաչափությունը, ինչպես նաև պահանջել դրանց հետ կապված փաստաթղթեր: (Հոդված 774) Կարգավորում է վարչական հսկողություն իրականացնելիս կիրառվող միջամտող միջոցառումները (Հոդված 775)	
2.	**Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մարմիններ** «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք *ՀՕ-5-Ն, ընդունված է՝ 26.12.2008, ուժի մեջ է՝ 26.01.2009* Սահմանում է Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները:	1. Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններն են Երևանի ավագանին և Երևանի քաղաքապետը: (Հոդված 5) 2. **Տարածքային կառավարումը** Երևանում իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: ՀՀ այլ օրենքներով, իրավական ակտերով մարզպետներին վերապահված լիազորություններն իրականացնում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունն այնքանով, որքանով դրանք չեն հակասում օրենքին: Կառավարության որոշմամբ Երևանում տարածքային կառավարման որոշակի գործառույթներ կարող են փոխանցվել գործադիր իշխանության հանրապետական այլ մարմինների: (Հոդված 9) 3. **Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների** բնագավառում **քաղաքապետն** իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները. կազմակերպում է Երևանի ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, գրադարանների, կրթական և մշակութային այլ կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները, իրականացնում է օրենքներով, այլ իրավական ակտերով համայնքի ղեկավարին սույն ոլորտում վերապահված պարտադիր լիազորությունները: (հոդված 61) 4. **Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի** բնագավառում **քաղաքապետն** իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները. կառավարում է Երևանի սեփականություն համարվող առողջապահական և մարզական կազմակերպությունները, Երևանի տարածքում ապահովում է համաճարակների կամ դրանց վտանգի դեպքում հատուկ ռեժիմի պահանջների կատարումը, կազմակերպում է քաղաքային հանգստի գոտիների ստեղծումը, պահպանումն ու շահագործումը: Սույն բնագավառում քաղաքապետն իրականացնում է հետևյալ պատվիրակված լիազորությունները. մասնակցում է պետական սեփականություն համարվող առողջապահական և մարզական կազմակերպությունների կառավարմանը, հիգիենիկ և հակահամաճարակային մարմինների սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, Երևանում պետական առողջապահական միջոցառումների իրականացմանը գնահատում է Երևանի բնակիչների առողջության ցուցանիշները և առաջարկություններ է ներկայացնում լիազոր մարմնին: (Հոդված 62) 5. **Սոցիալական պաշտպանության** բնագավառում **քաղաքապետն** իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունը՝ կազմակերպում է քաղաքային սոցիալական ապահովության հաստատությունների և կազմակերպությունների գործունեությունը: Սոցիալական պաշտպանության բնագավառում քաղաքապետն իրականացնում է հետևյալ պատվիրակված լիազորությունը՝ աջակցում է պետական սոցիալական ապահովության ծրագրերի իրականացմանը: (Հոդված 63) 6. **Քաղաքապետի կամավոր լիազորություններից** են մասնավորապես՝ աջակցությունը Երևանի տարածքում գործող մշակութային, առողջապահական, ֆիզիկական կուլտուրայի, մարզական կազմակերպություններին, սոցիալական պաշտպանության խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների	**Ավագանին** Երևանում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում քաղաքապետի գործունեության նկատմամբ: (Հոդված 11) **Ավագանին** ընտրում է քաղաքապետին, որոշում է ընդունում Երևանի զարգացման միամյա, քառամյա, երկարաժամկետ և հատուկ ծրագրերի վերաբերյալ, որոշում է ընդունում Երևանի ենթակայության կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման, լուծարման, կանոնադրության կամ դրա փոփոխությունների հաստատման, ինչպես նաև այլ կազմակերպություններում Երևանի մասնակցության և այդ մասնակցության դադարեցման մասին, որոշում է ընդունում հիմնարկի կարգավիճակ ունեցող՝ Երևանի ենթակայության կազմակերպությունների կառուցվածքի, աշխատակիցների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ, որոշում է ընդունում Երևանի բյուջեի, դրա փոփոխությունների վերաբերյալ, վերահսկողություն է իրականացնում բյուջեի կատարման նկատմամբ, իրավասու է որոշելու բյուջետային միջոցների նպատակային օգտագործման մանրամասները, վերացնելու բյուջետային միջոցները տնօրինելու վերաբերյալ քաղաքապետի համապատասխան որոշումները, քննարկելու և որոշում ընդունելու բյուջեի կատարման մասին քաղաքապետի տարեկան հաշվետվության վերաբերյալ, ի լրումն առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտում գործունեության կանոնների՝ սահմանում է	

		գործունեությանը, համագործակցությունը Երևանի տարածքում գործող պետական գրանցում ունեցող կրոնական կազմակերպությունների հետ, լիազոր մարմնի հետ համաձայնեցնելով՝ քաղաքային առողջապահական ծրագրերի իրականացումը, բնակչության սանիտարահիգիենիկ կրթության, առողջ ապրելակերպի քարոզչությունը, սոցիալական ծրագրերի իրականացումը: (Հոդված 69) 7. **Վարչական շրջանի ղեկավարը բնակիչների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության** բնագավառում իրականացնում է հետևյալ լիազորությունները. սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ, կազմակերպում է իր վարչական շրջանում գտնվող քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության համապատասխան կառույցների գործունեությունը, միջոցներ է ձեռնարկում իր վարչական շրջանում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն: (Հոդված 92) 8. **Կրթության և մշակույթի** բնագավառում վարչական շրջանի ղեկավարը, մասնավորապես, իրականացնում է հետևյալ լիազորությունները 1) վարչական շրջանի տարածքում կազմակերպում է դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, գրադարանների, կրթական և մշակութային այլ կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները: (Հոդված 97) 9. **Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի** բնագավառներում վարչական շրջանի ղեկավարն իրականացնում է հետևյալ լիազորությունը՝ վարչական շրջանի տարածքում կազմակերպում է Երևանի ենթակայության առողջապահական և մարզական հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը: (Հոդված 98) 10. **Աշխատանքի և սոցիալական պաշտպանության** բնագավառում վարչական շրջանի ղեկավարը, մասնավորապես, իրականացնում է հետևյալ լիազորությունները՝ իրականացնում է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառումը, իրականացնում է մարդասիրական օգնության բաշխումը, վարչական շրջանի տարածքում կազմակերպում է սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը և տեղական ինքնակառավարման մարմինների՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեությունը: (Հոդված 99)	Երևանում այդ կանոնների կիրառման լրացուցիչ պայմանները, ինչպես նաև լրացուցիչ կանոններ, որոշում է ընդունում Երևանում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության լրացուցիչ պայմանների վերաբերյալ և այլն (Հոդված 12) **Քաղաքապետը**, մասնավորապես, իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները. իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում բնակիչների իրավունքները և ազատություններն ապահովելու համար, պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքային կազմակերպությունների, վարչական շրջանի ղեկավարներին, ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը, 10) ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում հանրությանը ավագանու, իր գործունեության և Երևանի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին (տեղադրվում են Երևանի պաշտոնական համացանցային կայքում), վերահսկողություն է իրականացնում վարչական շրջանի ղեկավարի գործունեության նկատմամբ և պատասխանատու է նրանց լիազորությունների պատշաճ իրականացման համար, իրականացնում է Երևանի սեփականություն համարվող ենթակառուցվածքների կառավարումը և ապահովում դրանց շահագործումը: (Հոդված 52) Երևանի բյուջեն եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նախատեսված է Երևանի զարգացման ծրագրի և ավագանու և քաղաքապետի լիազորությունների իրականացման համար: Երևանի բյուջեն ընդունվում է մեկ տարով: (Հոդված 70) Երևանի **բյուջեի կատարման վերահսկողությունն** իրականացնում է Երևանի ավագանին, որն իրավազոր է ստուգելու յուրաքանչյուր բյուջետային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունը և որակը, պահանջելու հաշվետվություններ՝ կատարված ծախսերի վերաբերյալ: 2. Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու նպատակով ավագանին պարտավոր է ներգրավել աուդիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է Երևանի բյուջեից: Պետությունը Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է Վերահսկիչ պալատի և ՀՀ կառավարության միջոցով՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում: (Հոդված 81) Կարգավորում է Երևանի բյուջեի կատարման հաշվետվության հաստատումը (Հոդված 82) Երևանի զարգացման ծրագիրը փաստաթուղթ է, որը բովանդակում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն	

			ու կանխատեսումները: Քաղաքապետը կազմում և ավագանուն է ներկայացնում Երևանի զարգացման միամյա, քառամյա, երկարաժամկետ և հատուկ ծրագրեր: Ծրագրի իրականացման վերաբերյալ քաղաքապետը հաշվետվություն է ներկայացնում ավագանուն: Երևանի զարգացման ծրագրերը ենթակա են հրապարակման ավագանու սահմանած կարգով: Երևանի զարգացման ծրագրի իրականացմանը խոչընդոտող հանգամանքներ ի հայտ գալու դեպքում քաղաքապետը կարող է նախաձեռնել Երևանի զարգացման ծրագրում փոփոխությունների կատարում: Երևանի զարգացման ծրագրի առանձին բաժիններում սահմանվում են Երևանի վարչական շրջանների զարգացման ծրագրերը: Քաղաքապետը տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս հաշվի է առնում Երևանի բնակչության կենսական շահերը, Երևանի զարգացման ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները: (Հոդված 83) Քաղաքապետի և ավագանու լիազորությունների նկատմամբ **իրավական հսկողությունն** իրականացնում է իրավական հսկողության բարձրագույն մարմինը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: Ավագանու և քաղաքապետի **նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ իրավական հսկողություն** իրականացնող բարձրագույն մարմինը ՀՀ արդարադատության նախարարությունն է: Քաղաքապետին պատվիրակված յուրաքանչյուր լիազորության նկատմամբ **մասնագիտական հսկողություն** է իրականացնում մասնագիտական հսկողության համապատասխան բարձրագույն մարմինը. այն պետական մարմինը, որի իրավասության մեջ է մտնում տեղական ինքնակառավարման մարմիններին պետության պատվիրակած տվյալ լիազորությունը: Եթե այդ լիազորությունը չի ներառվում որևէ պետական մարմնի իրավասության մեջ, ապա այդ լիազորության առումով մասնագիտական հսկողության բարձրագույն մարմին է համարվում ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: Մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինները Երևանում մասնագիտական հսկողություն կարող են իրականացնել բացառիկ դեպքերում՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության համաձայնությունը ստանալուց հետո: Ավագանու և քաղաքապետի կողմից իրականացվող բյուջետային կամ ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացվում է ֆինանսական հսկողություն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: (Հոդված 105) Կարգավորում է վարչական հսկողության կանխարգելիչ միջոցները (Հոդված 106)	
3.	**Արմավիրի մարզպետարան** «ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ Արմավիրի	1.	Մարզպետարանի աշխատակազմի կառավարումն իրականացնում են **ՀՀ կառավարությունը և մարզպետը**՝ օրենքով, այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունների սահմաններում: Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարումն	**Կառուցվածքային ստորաբաժանումներ** *Վարչություններ.* Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն, Քաղաքաշինության վարչություն, Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն, Կրթության,

	մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1793-Ն, ընդունված է՝ 19.09.2002, ուժի մեջ է՝ 05.12.2002* Ստեղծում է «ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, վերակազմակերպում է մի շարք պետական հիմնարկներ, հաստատում է մարզպետարանի կանոնադրությունը, աշխատակազմի կառուցվածքը, հանձնվող գույքի կազմը և չափը:		իրականացնում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը: (Կետ 15) Մարզպետն ունի **տեղակալ** (տեղակալներ), որը համակարգում է մարզպետարանի աշխատանքները՝ մարզպետի կողմից իրականացվող քաղաքականության՝ իրեն հանձնարարված բնագավառում, իր լիազորությունների սահմաններում համակարգում է մարզպետին վերապահված բնագավառում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ՝ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքները՝ տալով ցուցումներ և հանձնարարականներ, մարզպետարանի աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան սահմանում է իրեն հանձնարարված բնագավառի՝ մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներին տրվող կոնկրետ հանձնարարականներն ու առաջադրանքները, իրականացնում դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն, մարզպետի հանձնարարությամբ իրականացնում է մարզպետի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները, համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից իրականացվող մասնագիտական ուսումնասիրությունների և դրանց իրականացման ընթացքի օպերատիվ վերլուծության հետ կապված աշխատանքները, համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ, իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները, պարբերաբար մարզպետին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին, ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում մարզպետի կարգադրությունների և որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում մարզպետին. (Հոդված 16) Մարզպետարանի **աշխատակազմի ղեկավարը**՝ մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստն է, վերահսկում է մարզպետարանի աշխատակազմի կողմից՝ սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը, ապահովում է համագործակցությունը ՀՀ պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ: (Կետ 23) Գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է մարզպետարանի աշխատակազմի **վիճակագրական հաշվետվությունները** ժամանակին կազմելու համար: (Կետ 25) Մարզպետարանի աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել **աուդիտի** (վերստուգման): (Կետ 32)	մշակույթի և սպորտի վարչություն, Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն *Բաժիններ* Իրավաբանական բաժին, Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին, Հողաշինության և հողօգտագործման բաժին - մարզային հողային պետական տեսչություն, **Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին**, Անձնակազմի կառավարման բաժին, Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին, Ներքին աուդիտի բաժին, Զորահավաքային նախապատրաստության բաժին **Առանձնացված ստորաբաժանումներ** Արմավիրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն, Բաղրամյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն, Վաղարշապատի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (Հավելված 2)

4.	**ՀՀ կրթության և գիտության նախարարություն** «ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ կրթության և գիտության նախարարության կանոնադրությունը, նախարարության աշխատակազմի կառուցվածքը, նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1579-Ն, ընդունված է՝ 12.09.2002, ուժի մեջ է՝ 31.10.2002* Ստեղծում է «ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, հաստատում է նախարարության կանոնադրությունը, աշխատակազմի կառուցվածքը, աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը:	1. ՀՀ կրթության և գիտության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը **մշակում և իրականացնում է կրթության և գիտության բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը:** (Կետ 1) 2. Նախարարության նպատակները և խնդիրները ներառում են. կրթության և գիտության համակարգի բնականոն գործունեության ապահովումը, համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով **դաստիարակված անձի ձևավորման** ապահովումը, յուրաքանչյուր քաղաքացու՝ իր ընդունակություններին և հակումներին համապատասխան առավել **որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորությունների** ապահովումը, հասարակության ընդհանուր **կրթվածության մակարդակի** բարձրացմանը նպաստելը, պետական կրթական չափորոշիչներին **կրթական ծրագրերի համապատասխանության** ապահովումը, կրթական և գիտական համակարգերի գործունեության **որակի ու արդյունավետության գնահատման**, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման ապահովումը, ուսումնական և գիտական հաստատություններում ՀՀ կրթության և գիտության բնագավառների օրենսդրության նկատմամբ **վերահսկողությունը**, պետական քաղաքականության **սկզբունքների** պահպանումը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, **քաղաքացիական հասարակության**, ինչպես նաև օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության զարգացումը, կրթական ծրագրերի իրականացման **լիցենզավորման** ապահովումը, **կրթության և գիտության համակարգերի որակի և արդյունավետության մոնիթորինգը և գնահատումը**: (Կետ 9) 3. Նախարարությունը, մասնավորապես, իրականացնում է հետևյալ գործառույթները. կրթության և գիտության բնագավառների վերաբերյալ ՀՀ **իրավական ակտերի** նախագծերի, **պետական քաղաքականության**, **ծրագրերի**, **կրթական չափորոշիչների** մշակում, դրանց իրականացման **մոնիթորինգ և գնահատում**, հանրակրթության պետական չափորոշիչի, ծրագրերի, օրինակելի ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի մշակում և հաստատում, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարության, մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների և որակավորումների բնութագրերի մշակում, մասնագիտացումների ցանկերի հաստատում, ՀՀ նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների, պետական կառավարչական հիմնարկների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ ուսումնադաստիարակչական բնույթի միջոցառումների կազմակերպում, կրթության և գիտության բնագավառների բյուջետային գործընթացի իրականացում, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, մասնագիտական կրթական ծրագրերով պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ուսուցման տեղերի՝ ըստ մասնագիտությունների մշակում և ըստ ուսումնական հաստատությունների բաշխում, ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական անձնակազմերին ներկայացվող պահանջների սահմանում, իր ենթակայությանը հանձնված կազմակերպությունների գործունեության համակարգում, համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրում և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարում, ուսումնական հաստատությունների պետական նմուշի փաստաթղթերի հայտավորման և բաշխման աշխատանքների իրականացում, բարձրագույն, միջին և նախնական (արհեստագործական) մասնագիտական, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական փաստաթղթերի պատվիրում, լրացում, հաշվառում և պահպանում, հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկի, ձևաթղթերի և դրանք վարելու կարգի հաստատում, ուսումնական հաստատություններում դասագրքերը, ձեռնարկները, ուսումնաօժանդակ նյութերը և ուսումնադիտողական պարագաները գործածության երաշխավորելու կարգի հաստատում: (Կետ 10)	Նախարարությունը կառավարում է ՀՀ կրթության և գիտության **նախարարը**, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ: Նախարարն ունի տեղակալներ, որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ վարչապետը՝ խորհրդակցելով նախարարի հետ: (Կետ 11) **Նախարարը** պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար: (Կետ 12) Նախարարը հաշվետու **է** ՀՀ Նախագահին, ՀՀ կառավարությանն ու ՀՀ վարչապետին: (Կետ 13) Նախարարը լսում և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի և նախարարության համակարգում գործող պետական մարմնի գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, ուսումնասիրում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում նախարարության աշխատակազմի և նախարարության համակարգում գործող պետական մարմնի պահպանման տարեկան ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները: (Կետ 14) **Նախարարին կից կոլեգիան**՝ օժանդակում է նախարարության գործունեության ռազմավարական պլանավորման, քաղաքական որոշումների ընդունման, միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացներին, նպաստում է ռազմավարական ծրագրերի իրականացմանը, գնահատմանը և այդ գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցությանը: (Կետ 14) **Նախարարի տեղակալը**՝ իր լիազորությունների սահմաններում համակարգում է տվյալ բնագավառներում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը՝ նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով՝ տալով ցուցումներ ու հանձնարարականներ, իրականացնում է նախարարության համակարգի մարմիններին որոշակի հանձնարարականների և առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն, նախարարի հանձնարարությամբ իրականացնում է նախարարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները, համակարգում է զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները և համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը, համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու	**Կառուցվածքային ստորաբաժանումներ** *Վարչություններ.* Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչություն, Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչություն, Հանրակրթության վարչություն, Մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչություն, Արտաքին կապերի և սփյուռքի վարչություն, Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն, Անձնակազմի կառավարման վարչություն, Իրավաբանական վարչություն, Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն, Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչություն, Ներքին աուդիտի վարչություն *Բաժիններ* Լրացուցիչ և շարունակական կրթության բաժին, Պետական նմուշի փաստաթղթերի վարման բաժին, Առաջին բաժին, Զորահավաքային նախապատրաստության բաժին **Առանձնացված ստորաբաժանումներ** *Գործակալություններ* ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողով, Լիցենզավորման գործակալություն *Տեսչություններ* Լեզվի պետական տեսչություն, Կրթության պետական տեսչություն (Հավելված 2)

			հիմնարկների հետ, պարբերաբար նախարարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի մասին, ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարի հրամանների ու ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին: (Կետ 15) Նախարարության աշխատակազմի ղեկավարը, մասնավորապես՝ **վերահսկում** է նախարարության աշխատակազմի կողմից սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը, ապահովում է **համագործակցությունը** ՀՀ պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ: (Կետ 43) Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է նախարարության աշխատակազմի **վիճակագրական հաշվետվությունները** ժամանակին կազմելու համար: (Կետ 45) Նախարարության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել **աուդիտի** (վերստուգման)՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: (Կետ 47)	
5.	**ՀՀ ԿԳՆ Կրթության պետական տեսչություն** «ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի N 1927-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 497-Ն, ընդունված է՝ 16.03.2006, ուժի մեջ է՝ 20.05.2006* Հաստատում է ՀՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության կանոնադրությունը, փոփոխություններ է կատարում տեսչության կառուցվածքում:	1. ՀՀ ԿԳՆ աշխատակազմի կրթության պետական տեսչությունը նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն իրականացնում է օրենքով նախարարությանը վերապահված **վերահսկողական գործառույթներ** և կիրառում **պատասխանատվության միջոցներ կրթության բնագավառում**: (Կետ 1) 2. Տեսչության **նպատակներն** են՝ ՀՀ կրթության համակարգում կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման ապահովմանը նպաստելը, ՀՀ կրթության համակարգում կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը, պետական կրթական չափորոշիչների պահանջների ապահովմանն աջակցելը: (Կետ 7) 3. Տեսչության **խնդիրներն** են ՀՀ կրթության համակարգում պետական կրթական քաղաքականության իրականացման և կրթության զարգացման պետական ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողության և մշտադիտարկման իրականացման ապահովումը, կրթակարգերի և կրթական չափորոշիչների կիրառման նկատմամբ վերահսկողության և մշտադիտարկման իրականացման ապահովումը, հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների կողմից կրթական ծառայությունների մատուցման մասին հաշվետվությունների ներկայացման ապահովումը, ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով կրթական քաղաքականության իրականացման ու կրթական ծառայությունների արդյունավետության գնահատման և հետադարձ կապի ապահովումը, կրթության որակի և չափորոշիչների բարելավման, օրինակելի փորձի բացահայտման ու դրա տարածման վերաբերյալ առաջարկությունների տրամադրման ապահովումը, ուսումնական հաստատություններին կրթության կազմակերպմանը և որակի բարելավմանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի, մեթոդական նյութերի հատկացումը, ուսումնական հաստատություններում կրթական ծառայությունների մատուցման ուղղությամբ ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով բացահայտված խախտումների, սխալների, թերությունների վերացման աշխատանքներում մեթոդական օգնության կազմակերպումը, կրթության բնագավառի օրենսդրության կիրարկման ուղղությամբ մեթոդական օգնության կազմակերպումը: (Կետ 8)	Տեսչությունն իրականացնում է նախադպրոցական (համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջին համապատասխան), տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր, հատուկ ընդհանուր, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից) **կրթական գործունեության ստուգում և ուսումնասիրում**, այդ թվում՝ կրթության բովանդակությանը համապատասխան կրթական գործընթացի կազմակերպումը, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարումը, տարեկան ուսումնական ժամանակացույցերի, դասացուցակների պահպանումը, սովորողների և շրջանավարտների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ստուգման, գնահատման, ամփոփիչ ատեստավորման, քննակարգերի, աշխատակարգերի պահպանումը, ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման կարգերին համապատասխան՝ սովորողների շարժը, ավարտական պետական փաստաթղթերի ստացումը, պահպանությունը և բաշխումը, գործավարությունը, հաշվետվությունների իսկությունը, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ անհրաժեշտ ուսումնագիտական, մեթոդական տեղեկատվությամբ, ծրագրերով, դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, այլ անհրաժեշտ	**Կառուցվածքային ստորաբաժանումներ** Նախադպրոցական կրթության տեսչավորման բաժին, Հանրակրթության տեսչավորման բաժին, Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության տեսչավորման բաժին, Գնահատման և վերլուծության բաժին **Տարածքային մարմիններ** Հյուսիսային տարածքային բաժին, Հարավային տարածքային բաժին, Արևելյան տարածքային բաժին, Արևմտյան տարածքային բաժին

			փաստաթղթերով ապահովվածությունը, լիազորված մարմնի կամ տարածքային կառավարման մարմնի ղեկավարի հրամանների, հրահանգների, հանձնարարականների, մեթոդական երաշխավորությունների կատարումը, կրթության որակի ապահովման նկատմամբ հաստատությունների կանոնադրական պահանջների կատարումը, հաստատությունների կառավարման մարմինների լիազորությունների իրականացումն ու պահպանումը, հանրակրթական և նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների գործունեության ամենամյա ինքնավերլուծության գնահատումը և հրապարակման ապահովումը. (Կետ 9) Տեսչությունն իրականացնում է ուսումնական հաստատությունների **կրթական ծառայությունների արդյունավետության** (այդ թվում՝ սովորողների կողմից հանրակրթական և նախնական մասնագիտական ծրագրերի յուրացման) **գնահատում**, այդ հաստատությունների գործունեության **վերլուծություն**, զարգացմանը նպաստող առաջարկություններ ներկայացնելը, ինչպես նաև դրանց իրականացման նկատմամբ **վերահսկողությունը**: (Կետ 9) Տեսչությունը լիազորված մարմնին ներկայացնում է կրթության բնագավառում առկա վիճակի, դրա առանձին բնութագրիչների, կրթության ցուցանիշների մասին (ընդհանուր և ըստ մարզերի) հաշվետվություն, տեսչության տարեկան աշխատանքային ծրագրի նախագիծը: (Կետ 9) Համապատասխան հանձնարարականի դեպքում՝ **ուսումնասիրում և ստուգում է քաղաքացիների դիմումներն ու բողոքները**: (Կետ 9) Տեսչավորման (ստուգումների, ուսումնասիրությունների) արդյունքների հիման վրա կազմում է **հաշվետվություններ**, **ակտեր**, **տեղեկանքներ**, **զեկուցագրեր**, **զեկույցներ**, **վերլուծություններ**, **ամփոփագրեր** և այլն: (Կետ 9) Իրականացնում է տարածքային կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կրթության հարցերով ստորաբաժանումների գործունեության՝ կրթության բնագավառի օրենսդրությանը համապատասխանության վերահսկում և ուսումնասիրում ու պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն: (Կետ 9) Տեսչավորման աշխատանքներին **մասնակից է դարձնում** կրթական համակարգի լավագույն մասնագետներին, կրթության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: (Կետ 9) Տեսչությունը կառավարում է նախարարը: Տեսչության անմիջական ղեկավարումն իրականացնում է տեսչության պետը: (Կետ 10) Տեսչության պետը նախարարին կամ նրա	

			համապատասխան տեղակալին պարբերաբար ներկայացնում է ընթացիկ տեղեկատվություն տեսչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին, **յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ** նախարարին ներկայացնում է **հաշվետվություն** տեսչության գործունեության հիմնական արդյունքների և կրթության ոլորտում տիրող իրավիճակի մասին (Կետ 14)	
6.	**ՀՀ ԿԳՆ Լեզվի պետական տեսչություն** «ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1610-Ն, ընդունված է՝ 19.09.2002, ուժի մեջ է՝ 07.11.2002* Հաստատում է ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչության կանոնադրությունը և կառուցվածքը:	1. ՀՀ ԿԳՆ աշխատակազմի լեզվի պետական տեսչությունը նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն իրականացնում է օրենքով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը վերապահված **վերահսկողական գործառույթներ** և կիրառում **պատասխանատվության միջոցներ լեզվական քաղաքականության բնագավառում**: (Կետ 1) 2. Տեսչության **նպատակներն** ու **խնդիրներ** են՝ ՀՀ-ում լեզվի բնագավառում միասնական քաղաքականության իրականացումը, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ լեզվական քաղաքականության պետական ծրագրի պահանջների կատարման ապահովումը, ՀՀ պաշտոնական լեզվի՝ գրական հայերենի կանոնարկումը և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրա լիակատար գործածության ապահովումը, ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքների ապահովումը: (Կետ 7)	Տեսչությունը մասնավորապես, վերահսկում է կրթական համակարգում դասավանդման և դաստիարակության լեզվի՝ գրական հայերենի գործածության պահանջի կատարումը, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննության և հայոց լեզվի ուսուցման պարտադիր պահանջի կատարումը, ազգային փոքրամասնությունների համայնքներում հայերենի պարտադիր ուսուցման պահանջի կատարումը, ինչպես նաև իրականացնում է քաղաքացիների ընդունելություն, ինչպես նաև նրանց դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկում: (Կետ 8) Տեսչությունը կառավարում է նախարարը: Տեսչության անմիջական ղեկավարումն իրականացնում է տեսչության պետը: (Կետ 9) Տեսչության պետը պատասխանատու է ՀՀ պետական լեզվական քաղաքականության բնագավառում վերահսկողական գործառույթների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման համար, հաշվետու է ՀՀ վարչապետին և նախարարին: (Կետ 10) Տեսչության պետը պարբերաբար նախարարին է ներկայացնում տեղեկատվություն տեսչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին, լսում է տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության ստուգման արդյունքները, համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ: (Կետ 12)	**Կառուցվածքային ստորաբաժանումներ** Լեզվական վերահսկողության բաժին, Վարչական իրավախախտումների բաժին
7.	**ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ** «ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1711-Ն, ընդունված է՝ 23.12.2010, ուժի մեջ է՝ 30.12.2010* Հաստատում է ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ՇԻԳ-ի կանոնադրությունը:	1. ՀՀ ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը նախարարության կազմում գործող՝ **իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող** կազմակերպություն է (Կետ 1), որի գործունեության **հիմնական նպատակը** ՀՀ կրթության ոլորտի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումն է: Հիմնարկի գործունեության հիմնական **ոլորտը** ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած, ՀՀ ԿԳՆ և տարածքային կառավարման մարմինների՝ կրթության ոլորտում ՀՀ պետական բյուջեի և օտարերկրյա պետությունների ու միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից ՀՀ-ին տրամադրվող միջոցների հաշվին մշակված ծրագրերն ու աշխատանքներն են: (Կետ 8) 2. Հիմնարկի խնդիրներ են ծրագրով նախատեսված աշխատանքների **որակի, ժամկետների և կատարման նկատմամբ հսկողությունը**, **ծրագրի իրականացման մոնիթորինգը**՝ ներառյալ համապատասխան միջազգային կամ օտարերկրյա վարկատու կազմակերպության կողմից, ինչպես նաև **հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը** (Կետ 9)	Հիմնարկն անցնում է տարեկան **ներքին աուդիտ**, և կարող է անցնել նաև **արտաքին աուդիտ** (Կետ 10) Հիմնարկը պարտավոր է ներկայացնել **հաշվետվություններ**, ապահովել տարեկան հաշվետվությունների պահպանումը: (Կետ 23) Հիմնարկի **կառավարումն** իրականացնում են հիմնադիրը և լիազոր մարմինը: (Կետ 24) Հիմնարկի բարձրագույն ղեկավար պաշտոնատար անձը հիմնարկի **տնօրենն** է, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ վարչապետը: (Կետ 27) Հիմնարկի գործունեության նկատմամբ **հիմնադիրը վերահսկողություն** է իրականացնում ՀՀ կառավարության սահմանած կարգով: (Կետ 36)	

8.	**ՀՀ ԿԳՆ Լիցենզավորման գործակալություն** **ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողով** «ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու, ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 676-Ն, ընդունված է՝ 12.05.2011, ուժի մեջ է՝ 09.06.2011* ՀՀ ԿԳՆ աշխատակազմի լիցենզավորման վարչությունը վերակազմակերպում է ՀՀ ԿԳՆ աշխատակազմի լիցենզավորման գործակալության՝ հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով, հաստատում է գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը: *Նաև՝* «ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողով» ստեղծելու և «Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի» կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման *N 1253-Ն, ընդունված է՝ 26.12.2007, ուժի մեջ է՝ 11.02.2008*	1. ՀՀ ԿԳՆ աշխատակազմի լիցենզավորման գործակալությունը նախարարության աշխատակազմի կազմում գործող առանձնացված ստորաբաժանում է (Կետ 1), որի նպատակը կրթության ոլորտում **լիցենզավորման գործընթացի** իրականացումն է: (Կետ 7)	Գործակալությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝ լիցենզիա տալու (մերժելու), դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման հետ կապված գործառույթների իրականացում, լիցենզավորված սուբյեկտների կողմից տվյալ գործունեությունն իրականացնելու համար պարտադիր պահանջների և պայմանների պահպանման նկատմամբ դիտարկումների և ուսումնասիրությունների իրականացում, լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների փոփոխման և արդիականացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, կրթության ոլորտի լիցենզավորման գործընթացի փաստաթղթաշրջանառության իրականացում, այդ թվում՝ լիցենզավորման համար ներկայացված հայտերի ու դրանց կից փաստաթղթերի մուտքագրում և հաշվառում, կրթության ոլորտում լիցենզավորման հանձնաժողովի գործավարության իրականացում, հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստում, ամփոփում և դրանք լիցենզավորման հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված սուբյեկտների մասին տեղեկությունների հավաքագրում, վերլուծություն և գնահատում: (Կետ 8) Գործակալությունը **կառավարում** է ՀՀ կրթության և գիտության **նախարարը**: Գործակալության անմիջական ղեկավարումն իրականացնում է **գործակալության պետը**: (Կետ 9) Գործակալության պետը **հաշվետու է** ՀՀ վարչապետին, նախարարին, գործակալության գործունեությունը համակարգող նախարարի համապատասխան տեղակալին: (Կետ 12)	**Կառուցվածքային ստորաբաժանումներ** Լիցենզավորման բաժին, Դիտարկումների և վերլուծության բաժին
9.	**ՀՀ ԿԳՆ Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն** «Երևանի N 5 հատուկ դպրոցը Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն վերանվանելու, գործունեության բնագավառը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի	1. Կազմակերպության գործունեության հիմնական **առարկան և նպատակը** երեխաների ֆիզիկական մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտումն ու գնահատումը, նրանց ընդունակություններին ու կարողություններին համապատասխան կրթության իրականացման ձևի ընտրությունն ու հատուկ կրթական բնույթի գործունեության իրականացումն է (Կետ 1) 2. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության տեսակները՝ սոցիալական ծառայությունների մատուցում առանց բնակության ապահովման (ներառում է՝ լրացուցիչ հատուկ կրթական ծրագրերի իրականացում, լրացուցիչ հատուկ մանկավարժական ծառայության կազմակերպում, սովորողների սննդի կազմակերպում), անմիջականորեն սաների կողմից ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում: (Կետ 3)	ՊՈԱԿ-ի կառավարման լիազորությունները վերապահել ՀՀ ԿԳՆ-ին: (Կետ 4)	**Կառուցվածքային ստորաբաժանումներ** Գնահատման բաժին, Կրթության կազմակերպման բաժին, Վերապատրաստման բաժին, Մեթոդական բաժին, Խնամքի բաժին, Տնտեսական բաժին **Տարածքային մասնաճյուղեր՝** Ստեփանավանի մասնաճյուղ, Կապանի մասնաճյուղ

	դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 821-Ն, ընդունված է՝ 06.07.2007, ուժի մեջ է՝ 09.08.2007* «Երևանի N 5 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանում է «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն»-ի, սահմանում է գործունեության հիմնական առարկան և նպատակը, սեփականության իրավունքով հանձնվում է գույք, թույլատրում է ձեռնարկատիրական գործունեության տեսակները, կառավարման լիազորությունները վերապահում է ՀՀ ԿԳՆ-ին *Նաև՝* «Ստեփանավանի N 1 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ստեփանավանի մասնաճյուղ ստեղծելու, ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն և 2005 թվականի սեպտեմբերի 8-ի N 1646-Ն որոշումներում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 386-Ն, ընդունված է՝ 16.04.2009, ուժի մեջ է՝ 30.04.2009* *Նաև՝* «Կապանի N 2 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կապանի մասնաճյուղ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 682-Ն, ընդունված է՝ 18.06.2009, ուժի մեջ է՝*			

	02.07.2009 *Նաև՝* «Բժշկահոգեբանամանկավարժական գնահատում իրականացնող կենտրոնների նկատմամբ պահանջները և դրանց ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 783-Ն, ընդունված է՝ 06.07.2007, ուժի մեջ է՝ 02.08.2007* Հաստատում է բժշկահոգեբանամանկավարժական գնահատում իրականացնող կենտրոնների նկատմամբ պահանջները և դրանց ցանկը:			
10.	**Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ.** **Երևանի Պետրոս Դուրյանի անվան N 10 հատուկ դպրոց** **Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց** **Վանաձորի N 2 հատուկ դպրոց** **Բյուրեղավանի որբ, ծնողական խնամքից զրկված երեխաների N 1 հատուկ դպրոց** **Գյումրու N 2 հատուկ դպրոց** **Դիլիջանի որբ, ծնողական խնամքից զրկված երեխաների N 1 հատուկ դպրոց** **Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն** **Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն** **Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն** **Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն** **Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն** «Մի շարք պետական հատուկ հանրակրթական հաստատություններ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ վերանվանելու, գործունեության բնագավառը սահմանելու, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնելու, «Երեխաների խնամքի և	1. «ՀՀ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի գործունեության առարկան և նպատակն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, աղքատ (սոցիալապես անապահով) ընտանիքի՝ 6-18 տարեկան երեխաների խնամքի և դաստիարակության ապահովումը, սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների իրականացումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելը, սննդով, նրանց՝ հագուստով և կենցաղային իրերով ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումն է: (Կետ 14) 2. Պետական կազմակերպությունը պատասխանատու է պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին համապատասխան երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման, կյանքի անվտանգության և առողջության, ինչպես նաև սանիտարական նորմերի ու կանոնների պահպանման համար: (Կետ 15) 3. Պետական կազմակերպությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝ երեխաների՝ մատուցվող ծառայությունների, շենքի պայմանների, հատուկ դեպքերում տարահանման հնարավորությունների, պետական կազմակերպությանը հարող տարածքի, արտակարգ իրավիճակներում ժամանակին օգնություն ցուցաբերելու, պաշտպանելու և այլնի մասին կարևոր տեղեկատվությամբ ապահովում՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները, երեխայի անվտանգության և պաշտպանության ապահովում, պետական կազմակերպություն երեխայի ինտեգրման ապահովում՝ հաշվի առնելով նրա՝ նոր սոցիալական միջավայրին հարմարվելու անհատական առանձնահատկությունները, պետական կազմակերպությունում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում երեխայի խնամքի կազմակերպում՝ ապահովելով խնամքի շարունակականության սկզբունքը, ստեղծելով ընտանեկանին հնարավորինս մոտ պայմաններ և առաջնորդվելով անհատական մոտեցմամբ, երեխային առողջ, անհրաժեշտ քանակությամբ և տարիքին համապատասխան սննդով ապահովելը, երեխային հագուստով և անձնական օգտագործման պարագաներով ապահովելը՝ ելնելով երեխայի տարիքային առանձնահատկություններից, երեխային կյանքի համար անվտանգ, սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան բնակելի տարածությամբ ապահովելը՝ հաշվի առնելով նրա սեռը, տարիքը և առողջական վիճակը, երեխայի առողջ ապրելակերպի (սնունդ, ֆիզկուլտուրա և սպորտ, անձնական հիգիենա, ազատ ժամանց) համար անհրաժեշտ պայմանների ապահովում, երեխայի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովում՝ հաշվի առնելով նրա հոգեկան, սեռատարիքային, ազգային և էթնիկական առանձնահատկությունները, անձի նախասիրությունները, հետաքրքրությունները, ընդունակություններն ու պահանջմունքները, որպես կանոն, համայնքի հանրակրթական դպրոցներում երեխայի հանրակրթության ապահովում, ընտանիքի և հարազատների հետ երեխայի կապի ապահովում, 14-18 տարեկան երեխաների մասնագիտական կողմնորոշման, նրանց աշխատանքի տեղավորմանն աջակցության ապահովում՝ համագործակցելով զբաղվածության տարածքային մարմինների և գործատուների հետ, երեխաների հետ անմիջական աշխատողների պարբերական մասնագիտական վերապատրաստման և բժշկական ստուգման ապահովում, երեխայի խնամքի և պաշտպանության հետ կապված այլ գործառույթների իրականացում: (Կետ 16)	Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը: Պետական կազմակերպության հիմնադիրը ՀՀ-ն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: Լիազորված պետական մարմինը՝ ՀՀ ԱՍՀՆ-ն իրականացնում է պետական կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար: Երեխաների խնամքի, ուսուցման, բժշկասոցիալական, սոցիալ-հոգեբանական վերականգնման, դաստիարակչական հարցերը քննարկելու և լուծելու նպատակով պետական կազմակերպությունում ստեղծվում է սոցիալ-մանկավարժական խորհուրդ՝ խորհրդակցական մարմնի կարգավիճակով: (Կետ 42) Խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները՝ պետական կազմակերպության աշխատանքային պլանի, բուժպրոֆիլակտիկ ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրերի քննարկում և լիազորված պետական մարմին դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, սաների հանրակրթության կազմակերպման հետ կապված հարցերի քննարկում, դաստիարակչական խմբերի աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկում, դաստիարակների, բժշկական անձնակազմի և այլ աշխատողների աշխատանքային գործունեության քննարկում, երեխաների խնամքի և սպասարկման նոր ձևերի ներդրման նպատակահարմարության քննարկում, երեխաների մասնագիտական կողմնորոշման, նրանց հետագա ուսման կազմակերպման հարցերի քննարկում: (Կետ 47)	

	պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 890-Ն, ընդունված է՝ 26.07.2007, ուժի մեջ է՝ 16.08.2007* Վերանվանում է մի շարք ՊՈԱԿ-ներ, սահմանում է երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների գործունեության առարկան ու նպատակը, ձեռնարկատիրական գործունեության տեսակները, դրանց կառավարման մի շարք լիազորություններ վերապահում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, հաստատում է «Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը:			
11.	**«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն ՊՈԱԿ** «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 890-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 381-Ն, ընդունված է՝ 02.04.2015, ուժի մեջ է՝ 23.04.2015* ՀՀ ԱՍՀՆ «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանում է «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ	1. «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի նպատակը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող՝ 18 տարին լրացած անձանց շուրջօրյա և ցերեկային խնամքի տրամադրումն է: (Կետ 1) 2. Կազմակերպության գործունեության առարկան հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սննդի, առաջնային բժշկական օգնության և սպասարկման, սոցիալ-հոգեբանական օգնության, իրավական խորհրդատվության, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրումը, ինչպես նաև բժշկասոցիալական փորձաքննության, հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ ուղեգրման, ազատ ժամանցի և աշխատանքային թերապիայի կազմակերպումն է: (Կետ 2) 3. Կազմակերպությունը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքն իրականացնում է երեք առանձնացված մասնաշենքերում տեղակայված երկու շուրջօրյա խնամքի բաժանմունքում և ցերեկային խնամքի կենտրոնում: (Կետ 3)	ՊՈԱԿ-ի կառավարման լիազորությունները վերապահել ՀՀ ԱՍՀՆ-ին: (Կետ 3)	

	առևտրային կազմակերպություն: Սահմանում է կազմակերպության նպատակը, գործունեության առարկան, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի իրականացման վայրը, ֆինանսական հատկացումները, կազմակերպության կառավարման լիազորությունները վերապահում է ՀՀ ԱՍՀՆ-ին, հանձնարարականներ է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 890-Ն որոշման N 2 հավելվածի 1-ին կետը:			
12.	**«ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» ՊՈԱԿ-ներ.** **Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ (օժանդակ) դպրոց** **Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 6 հատուկ (օժանդակ) դպրոց** **Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների N 8 հատուկ դպրոց** **Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց** **Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ (օժանդակ) դպրոց** **Թալինի բնագիտամաթեմատիկական հատուկ դպրոց** **Ապարանի ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց** **Աշտարակի N 1 հատուկ դպրոց** **Գավառի N 1 հատուկ դպրոց** **Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց** **Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց** **Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող**	1. Սահմանում է պետական **հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների հետևյալ տիպերը**. «Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ, «Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ, «Խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ, «Հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ, «Մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ (օժանդակ) հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ, «Հակասոցիալական վարք ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ, «Արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ: (Կետ 4) 2. Թույլատրում է «ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» ՊՈԱԿ-ներին իրականացնել ձեռնարկատիրական **գործունեության հետևյալ տեսակները**. լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում, արտադպրոցական դաստիարակություն, համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում, սովորողների սննդի կազմակերպում, անմիջականորեն սովորողների կողմից ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում: (Կետ 5) 3. «ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի գործունեության **առարկան և նպատակը** հանրակրթական բնույթի գործունեության իրականացումն է: (Հավելված 3) 4. Հաստատությունը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության, ապահովում աշակերտների կողմից հանրակրթական ու հատուկ հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, պայմաններ ստեղծում ինքնակրթության և լրացուցիչ (նախասիրական, նախամասնագիտական) կրթության պահանջմունքների բավարարման համար: Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա: (Հավելված 3) 5. Հաստատությունը պատասխանատու է պետական **չափորոշիչներին**, հանրակրթական և հատուկ հանրակրթական **պետական ծրագրերին**, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման **առանձնահատկություններին**, **հակումներին**, **ընդունակություններին** համապատասխան ուսուցման **մեթոդների** և **ձևերի** ընտրության, **կյանքի անվտանգության** ու **առողջության**, ինչպես նաև **սանիտարական նորմերի** և **կանոնների** պահպանման համար: (Հավելված 3) 6. Հաստատությունը **հանրակրթական և հատուկ հանրակրթական ծրագրերին** համապատասխան ստորաբաժանվում է տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր միջնակարգ (լրիվ) ընդհանուր և հատուկ ընդհանուր դպրոցների: (Հավելված 3) 7. **Միջնակարգ** (լրիվ) ընդհանուր կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 11(12) տարի ընդհանուր տևողությամբ, հետևյալ հաջորդական աստիճաններով. տարրական հատուկ դպրոց, միջին հատուկ դպրոց, ավագ հատուկ դպրոց: **Տարրական և միջին դպրոցները միասին կազմում են հիմնական դպրոց**: (Հավելված 3) 8. **Տարրական հատուկ** դպրոցն ապահովում է երեխայի ընդհանուր զարգացումը, կարդալու, գրելու, հաշվելու հմտությունների և կարողությունների, բարեկիրթ խոսքի ու վարվելաձևի, ինքնավերահսկման պարզագույն հմտությունների և կարողությունների, անձնական հիգիենայի և առողջ կենցաղի հիմունքների տիրապետումը: Տարրական կրթությունն ավարտվում է **գիտելիքների ստուգմամբ**: Միջին հատուկ դպրոցում ուսուցումը **նպատակաուղղվում** է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը: Հիմնական կրթությունը **պարտադիր է**: Պարտադիր հիմնական ընդհանուր կրթության պահանջը **չի տարածվում մտավոր**	Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են **խորհրդակցական մարմիններ**՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ: Համայնքի, ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում ձևավորվում է ծնողական խորհուրդ: Կարող են ստեղծվել նաև հոգաբարձուների և այլ խորհուրդներ: (Հավելված 3) Հաստատության գործունեության նկատմամբ **վերահսկողությունն** իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը և հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ: (Հավելված 3) **Լիազորված պետական մարմինը**, մասնավորապես, **վերահսկողություն** է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ, լսում է հաստատության գործունեության մասին **հաշվետվությունները**, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները, վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ, վերահսկողություն է իրականացնում հաստատության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար, հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, եթե հաստատությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին: (Հավելված 3) Սահմանում է հաստատության **խորհրդի** ձևավորման և գործունեության հարցերը, լիազորությունները և գործառույթները: (Հավելված 3)	Հաստատության **տնօրենը**, մասնավորապես, **վերահսկողություն** է իրականացնում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ: (Հավելված 3) Հաստատության տնօրենի՝ **ուսումնական աշխատանքի գծով տեղակալը**, մասնավորապես, պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի համար, **վերահսկողություն** է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը: (Հավելված 3) Հաստատության տնօրենի՝ **դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը**, մասնավորապես, կազմակերպում և ղեկավարում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները, դասղեկների և դաստիարակների գործունեություն, ապահովում է հաստատության և ընտանիքի սերտ կապը և համագործակցությունը, կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ է ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար: (Հավելված 3) **Դասարանի ղեկավարը, դաստիարակը**, մասնավորապես, դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի, խմբի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ, ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների **միասնությունը**, իրականացնում է դասարանի, խմբի համար սահմանված

	երեխաների N 3 հատուկ (օժանդակ) դպրոց **Արթիկի N 1 հատուկ դպրոց** **Սիսիանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց** **Գորիսի N 1 հատուկ դպրոց** *ՀՀ ԿԳՆ ենթակայության դպրոցներ.* **Երևանի պետական համալսարանին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց** **Երևանի N 12 հատուկ դպրոց** **Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 11 հատուկ (օժանդակ) դպրոց** **Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր** **Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների N 14 հատուկ դպրոց** **Երևանի N 16 հատուկ դպրոց** **Երևանի հենաշարժողական համակարգի խախտումներ ունեցող երեխաների N 17 հատուկ դպրոց** **Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց** **Երևանի N 18 հատուկ դպրոց** **Հանրապետական N 1 հատուկ կրթահամալիր** **Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան** **Երևանի երաժշտական N 13 հատուկ դպրոց** **Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր** **Կապանի N 3 հատուկ կրթահամալիր** **Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտության առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց** «Հայաստանի Հանրապետության պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները	**թերզարգացում ունեցող երեխաների** վրա: (Հավելված 3) 9. **Ավագ հատուկ դպրոցում** ուսուցումը նպատակաուղղվում է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը: Ավագ դպրոցում, սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան կարող է **լրացուցիչ** կրթական ծրագրերով իրականացվել տարբերակված (հոսքային) ուսուցում: Հաստատությունը կարող է իրականացնել նաև **նախնական մասնագիտական** (արհեստագործական) և **լրացուցիչ** կրթական ծրագրեր: Հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունն ավարտվում է **պետական քննություններով**: (Հավելված 3) 10. **Մտավոր թերզարգացում ունեցող երեխաների** հատուկ (օժանդակ) հանրակրթական ուսումնական հաստատության ծրագրերը մշակվում են հիմնական հանրակրթական ծրագրերի հիման վրա՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական, ֆիզիկական ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու կարողությունները: Հաստատությունը կարող է իրականացնել նաև **նախնական մասնագիտական** (արհեստագործական) և **լրացուցիչ** կրթական ծրագրեր: (Հավելված 3) 11. Հաստատության **ուսուցման լեզուն** գրական հայերենն է: Հաստատության **ընդունելության կարգը** սահմանում է ԿԳՆ-ն: Հաստատության աշակերտների **բուժսպասարկումն** իրականացնում է բուժանձնակազմը, որը տնօրինության և մանկավարժական կազմի հետ համատեղ պատասխանատվություն է կրում բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացմանը, աշակերտների առողջության պահպանման, հաստատության սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման համար: (Հավելված 3) 12. Հատուկ հանրակրթական ուսումնական հաստատության դասարանի (խմբի) միջին խտությունը՝ սանիտարական նորմերի պահպանմամբ, սահմանվում է՝ լսողության, տեսողության, հենաշարժական համակարգի, խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների, մտավոր թերզարգացում ունեցող երեխաների (օժանդակ) հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ 15 աշակերտ (ընդ որում, սովորողների թիվը դասարանում (խմբում) չի կարող գերազանցել 18-ը), արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ 20 աշակերտ (ընդ որում, սովորողների թիվը դասարանում (խմբում) չի կարող գերազանցել 25-ը), հակասոցիալական վարք ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ 20 աշակերտ (ընդ որում, սովորողների թիվը դասարանում (խմբում) չի կարող գերազանցել 25-ը): (Հավելված 3) 13. Հաստատությունում **ուսումնական տարին** սկսվում է սեպտեմբերի 1-ին: Հաստատությունում սահմանվում է 6-օրյա կամ 5-օրյա **ուսումնական շաբաթ**՝ պետական ուսումնական պլանի համաձայն: **Հակասոցիալական վարք** ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններն աշխատում են **շուրջօրյա** ռեժիմով: Ուսումնական **տարվա տևողությունը** պետք է լինի ոչ պակաս, քան 34 շաբաթ, իսկ դպրոցի առաջին դասարանում՝ 30 շաբաթ: Հաստատությունում կիրառվում է սովորողների գիտելիքների կիսամյակային և տարեկան **ամփոփիչ գնահատման** կարգ: (Հավելված 3) 14. Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը **դասն** է: Դասի **տևողությունը** 45 րոպե է, բացառությամբ օժանդակ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարանների, որտեղ այն սահմանվում է 35 րոպե: Առանձին դեպքերում դասի տևողությունը կարող է փոփոխվել նախարարության կողմից: Հաստատությունում ուսուցման կազմակերպման հիմնական ձևը **առկա (ստացիոնար)** ուսուցումն է՝ **գիշերօթիկ կամ երկարօրյա** ժամակարգով (ռեժիմով): Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների, ուսումնական ծրագրերի և իր դասացուցակի հիման վրա: Հաստատության ուսումնական պլաններում առանձին **առարկաներին հատկացվող ժամերի քանակը** չպետք է պակաս լինի պետական տիպային ուսումնական պլանով նախատեսված ժամերի քանակից: (Հավելված 3) 15. Հաստատությունն ուսման մեջ **բացառիկ հաջողությունների** հասած ավագ դպրոցի շրջանավարտներին կարող է ներկայացնել ուսման գերազանցության մեդալով պարգևատրման՝ նախարարության սահմանած կարգով: Տարեկան **գերազանց առաջադիմություն** և լավ վարք, ինչպես նաև առանձին ուսումնական առարկաներից գերազանց առաջադիմություն ունեցող սովորողները նախարարության սահմանած կարգով պարգևատրվում են գովասանագրերով: (Հավելված 3) 16. **Սովորողն իրավունք ունի**՝ անվճար ստանալու տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ ընդհանուր և հատուկ ընդհանուր կրթություն, անկախ բնակության վայրից՝ սահմանված կարգով ընտրելու հաստատությունը և ուսուցման ձևը, անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից, հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր, ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները, առանց հիմնական կրթություն ստանալու 16 տարին լրանալուց հետո՝ ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ թողնելու ուսումը: (Հավելված 3) 17. **Սովորողը պարտավոր է** բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, հարգել հաստատության սովորողների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները: Հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը կարող է հեռացվել հաստատությունից: (Հավելված 3) 18. **Հաստատությանն արգելվում է**, առանց ծնողների և սովորողների համաձայնության, սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և կանոնադրությամբ: Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը: (Հավելված 3) 19. **Ծնողն իրավունք ունի** պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու		գործավարությունը, հաստատության ղեկավարությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին **տեղեկություններ**, հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը, **արգելում է** սովորողների, ուսուցիչների և ծնողների այն ձեռնարկումները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրագործումը: (Հավելված 3) Հաստատության **մանկավարժական աշխատողները** պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից: (Հավելված 3)

	վերակազմակերպելու, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերը սահմանելու, «Հայաստանի Հանրապետության պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 2179-Ն, ընդունված է՝ 26.12.2002, ուժի մեջ է՝ 27.02.2003* «ՀՀ պետական հանրակրթական հատուկ ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները՝ վերակազմակերպում է «ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» ՊՈԱԿ-ների, հաստատում է դրանց օրինակելի կանոնադրությունը, սահմանում է գործունեության առարկան ու նպատակը, գույքի հանձնումը, տիպերը, թույլատրում իրականացնել ձեռնարկատիրական գործունեության տեսակներ, վերապահում է դրանց կառավարման լիազորությունները ՀՀ ԿԳՆ-ին, ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին, փոփոխություններ կատարում ՀՀ կառավարության N 1392-Ն որոշման մեջ:	հաստատության կառավարմանը: (Հավելված 3) 20. Սահմանում է «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» **ՊՈԱԿ-ների ցանկը**՝ ըստ ենթակայության. Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներ, ՀՀ մարզպետարանների ենթակայության դպրոցներ, արհեստագործական ավագ դպրոցներ, ՀՀ ԿԳՆ ենթակայության դպրոցներ: (Հավելված 4)		
13.	**ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանություն** «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1254-Ն, ընդունված է՝ 06.11.2014, ուժի մեջ է՝ 29.11.2014*	1. Համայնքային ոստիկանությունը ՀՀ ոստիկանության ընդհանուր թվի սահմաններում և ՀՀ ոստիկանության տարածքային մարմնի կազմում գործող ստորաբաժանում է: (Հավելված) 2. **Համայնքային ոստիկանության տեսուչները** պետք է մասնավորապես իմանան այն անչափահասների մասին տվյալները, որոնց վարքագիծը վերահսկվում է **ՀՀ ոստիկանության և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումների** կողմից: (Հավելված) 3. **Հետաքննության, նախաքննության, դատական և այլ պետական մարմինների հետ համագործակցելիս**՝ համայնքային ոստիկանության տեսուչները անչափահասներին իրավախախտումներ կատարելուց և հակաիրավական այլ երևույթներից զերծ պահելու նպատակով աջակցում են անչափահասների գործերով ծառայությանը, անչափահասների կողմից կատարվող իրավախախտումներին նպաստող պատճառների և պայմանների, ծնողական պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափող ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների մասին տեղեկություններ ստանալիս՝ իրազեկում են անչափահասների գործերով ծառայությանը: (Հավելված) 4. Քաղաքացիների կյանքի և առողջության, նրանց գույքի, հասարակական կարգի և հասարակական անվտանգության ապահովման, ինչպես նաև սպասարկվող տեղամասում հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխման, կանխման, խափանման ու հայտնաբերման համար համայնքային	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետին հանձնարարում է մեկամսյա ժամկետում սահմանել համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող պահանջները և հենակետում աշխատանքի կազմակերպման, համայնքային ոստիկանության ծառայողների կողմից անձանց հաշվառման փաստաթղթերի ձևերը և դրանց վարման կարգը: (Կետ 2) Համայնքային ոստիկանության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ոստիկանության տարածքային բաժնի պետի ծառայության գծով տեղակալը, որն ի պաշտոնե համայնքային ոստիկանության ղեկավարն է, իսկ անմիջական ղեկավարումը, ծառայության կազմակերպումը և վերահսկողությունը՝ համայնքային ոստիկանության բաժանմունքի	

	Հաստատում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը, հանձնարարական է տալիս ՀՀ ոստիկանության պետին, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի N 1233-Ն որոշումը:	**ոստիկանության տեսուչներն** իրականացնում են աշխատանքներ՝ **ընտանեկան, կանանց ու երեխաների նկատմամբ բռնության** կանխարգելման և դրա դեմ պայքարի համար: (Հավելված) 5. Համայնքային ոստիկանությունը, իր խնդիրներն իրականացնելիս, **համագործակցում** է համայնքի բնակչության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ իրավապահ մարմինների, իրավապաշտպան և սոցիալական ուղղվածություն ունեցող գործունեություն ծավալող կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, կրոնական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների և այլ միավորումների հետ: (Հավելված) 6. Քաղաքացիների հետ համագործակցությունն ամրապնդելու նպատակով համայնքային ոստիկանությունը սերտորեն համագործակցում է տեղամասերում կամավորության սկզբունքով կազմավորված **համայնքային խորհուրդների** հետ: Համայնքային խորհուրդները կազմավորվում են 5 - 7՝ համայնքի առավել ակտիվ հասարակական գործունեություն ծավալող, բնակիչների հարգանքը վայելող, բարձր իրավագիտակցություն և օրինակելի վարքագիծ ունեցող անձանցից: (Հավելված)	պետը: Համայնքային ոստիկանության գործունեության մեթոդական ապահովումը և վերահսկողությունն իրականացնում է ՀՀ ոստիկանության հասարակական կարգի ապահովման վարչությունը, իսկ աշխատանքի կազմակերպումը և ընդհանուր ղեկավարումը՝ ՀՀ ոստիկանության տարածքային բաժինը: (Հավելված) **Հենակետի ավագը**՝ համայնքային ոստիկանության բաժանմունքի պետին ներկայացնում է հենակետում քաղաքացիների ընդունելության ու ծառայության ժամանակացույցների կազմման վերաբերյալ առաջարկություններ և հետևում քաղաքացիների ընդունելության մատյանի և հանցագործությունների ու պատահարների մասին տեղեկությունների գրանցման գրքի վարմանը, յուրաքանչյուր օր ղեկավարությանը զեկուցում է կատարված աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկություններ է ստանում վարչական տարածքի օպերատիվ իրավիճակի մասին և դրանք ներկայացնում նույն հենակետում ծառայության մեջ ընդգրկված համայնքային ոստիկանության տեսուչներին, իրականացնում է հսկողություն քաղաքացիների դիմումների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման նկատմամբ, ընդհանրացնում և վերլուծում է իր խմբի կողմից յուրաքանչյուր ամսվա, եռամսյակի, կիսամյակի ու տարվա (աճողական ցուցանիշներով) ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները և ներկայացնում համայնքային ոստիկանության բաժանմունքի պետին, ինչպես նաև աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներկայացնում է առաջարկություններ, սպասարկվող տարածքում համայնքային ոստիկանության տեսուչի հետ միասին համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների, համատիրությունների, այլ կազմակերպությունների, ինչպես նաև տեղամասի բնակիչների հետ: (Հավելված) **Համայնքային ոստիկանության բաժանմունքի պետը**՝ վերահսկում է համայնքային ոստիկանության տեսուչների կողմից քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկման, հաշվառման մեջ գտնվող անձանց հետ կատարվող աշխատանքների իրականացման, հետախուզման մեջ գտնվող անձանց հայտնաբերման համար կատարվող աշխատանքները, սահմանում է վերահսկողություն պրոֆիլակտիկ գործերի և հսկողական քարտերի վարման կարգի նկատմամբ, իրականացնում է համայնքային ոստիկանության տեսուչների կատարած աշխատանքների ամենամսյա ամփոփումը: (Հավելված) **Համայնքային ոստիկանության բաժանմունքի պրոֆիլակտիկայի ավագ տեսուչը**՝ վերլուծում և ամփոփում է համայնքային ոստիկանության տեսուչների կողմից կատարված յուրաքանչյուր ամսվա, եռամսյակի, կիսամյակի ու տարվա	

			(աճողական ցուցանիշներով) հաշվետվությունները, վարում է ոստիկանության տարածքային բաժնի միասնական հաշվառման մատյանը, համակարգում հաշվառման մեջ գտնվող անձանց հետ համայնքային ոստիկանության տեսուչների կողմից կատարվող աշխատանքները, ստուգում և 10-օրյա ժամկետում գրավոր պատասխանում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից ստացված՝ ազատազրկման վայրերից վերադարձող անձանց բնակության վայրերի և հաշվառման հասցեների վերաբերյալ հարցումներին, ազատազրկման հետ չկապված պատիժների դատապարտված, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման տարածքային ստորաբաժանումներից ծանուցագրեր ստանալուց հետո կազմում է տեղեկատու քարտեր, հսկիչ քարտ և դրանք ուղարկում անձնագրային ծառայություն, ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տեղեկատու քարտադարանով և ոստիկանության տարածքային բաժնի մատյաններով ստուգում է վարչական պատասխանատվության ենթարկված անձանց և կարգի 26-րդ կետի 2-րդ ու 3-րդ ենթակետում նշված անձանց կողմից կատարված իրավախախտումների հայտնաբերման դեպքում դրա մասին իրազեկում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման տարածքային ստորաբաժանմանը՝ համապատասխան նշում կատարելով անձի տեղեկատու և հսկողական քարտերում, քննարկում և սահմանված կարգով ընթացք է տալիս դատվածության վերաբերյալ տեղեկանքներ տրամադրելու մասին քաղաքացիների դիմումներին: (Հավելված) Համայնքային ոստիկանության կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները տրամադրվում են քաղաքացիներին և կազմակերպություններին՝ նրանց հարցումների հիման վրա: Համայնքային ոստիկանությունը ՀՀ ոստիկանության ինտերնետային պաշտոնական կայքէջի կառուցվածքում ունի իր ենթաէջը, որում հրապարակվում են համայնքային ոստիկանության կատարած ու ընթացիկ աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ և այլ տեղեկություններ: Հանցագործությունների ու վարչական իրավախախտումների նախականխման, հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման կարևորագույն միջոցառումների պլանների նախագծերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկումների են դրվում համայնքային ոստիկանության ինտերնետային ենթաէջում, որոնց արդյունքների հիման վրա պլաններում կարող են կատարվել փոփոխություններ և	

			լրացումներ: Համայնքային ոստիկանության գործունեությունը ՀՀ ոստիկանության կողմից գնահատվում է համայնքում կատարված հարցումների (սոցիոլոգիական, ինտերնետային, ռադիոհեռուստատեսային և այլն) արդյունքների հիման վրա և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ ընթացակարգերով: Կատարված հարցումների արդյունքները ենթակա են հրապարակման և պարտադիր հաշվի են առնվում համայնքային ոստիկանության աշխատանքների կազմակերպման ու գործունեության վերաբերյալ որոշումներ ընդունելիս: (Հավելված) Համայնքային ոստիկանության տեսուչների գործունեության գնահատման չափորոշիչները ներառում են քաղաքացիների դիմումների և բողոքների ժամանակին ու որակյալ քննարկումը, հասարակական կարգի ապահովման գործում քաղաքացիներին ներգրավելու և վստահության մթնոլորտ ստեղծելու ունակությունը: (Հավելված)	
14.	**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** ««ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կանոնադրությունը, նախարարության աշխատակազմի կառուցվածքը, նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1821-Ն, ընդունված է՝ 14.11.2002, ուժի մեջ է՝ 12.12.2002* Ստեղծում է «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, հաստատում է ՀՀ ԱՍՀՆ կանոնադրությունը, աշխատակազմի կառուցվածքը, աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը, սահմանում է ՀՀ ԱՍՀՆ կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող վարչությունների և բաժինների հաստիքային միավորների թիվը. *Նաև՝* «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված	1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը **մշակում ու իրականացնում է աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը**: (Հավելված 1) 2. Նախարարության **նպատակները** և **խնդիրները** ներառում են. **աշխատանքի պետական կարգավորման** և **աշխատանքի վարձատրության**, **ժամանակավոր անաշխատունակության** դեպքում սոցիալական ապահովության, **սոցիալական աջակցության**, **ինտեգրված սոցիալական ծառայությունների** տրամադրման, **սոցիալական բնակարանային ֆոնդի** ձևավորման, **հաշմանդամների** սոցիալական պաշտպանության, **ընտանիքի, կանանց և երեխաների** սոցիալական պաշտպանության քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը, **ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների** քաղաքականության մշակումը և դրա իրականացման ապահովումը, սոցիալական պաշտպանության ոլորտի **տեղեկատվական համակարգերում** հանրային ծառայությունների համարանիշերի կիրառման ապահովումը, սոցիալական ապահովության ոլորտի պետական **նպատակային ծրագրերի** մշակումը և դրանց իրականացման աշխատանքների համակարգումը, **ժողովրդագրական** պետական քաղաքականության մշակումը, սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության **հիմնական և գերակա ուղղությունների** մշակումն ու իրականացումը, ՀՀ օրենսդրության կիրառման նկատմամբ **պետական վերահսկողության**, ինչպես նաև **զարգացման ու բարեգործական ծրագրերի** իրականացման, սոցիալական պաշտպանության բնագավառի **տեղեկատվական հոսքերի** արդյունավետ կառավարման ապահովումը: (Հավելված 1) 3. Նախարարությունը, մասնավորապես, իրականացնում է հետևյալ **գործառույթները**. **աշխատանքի** խթանման, արդյունավետության բարձրացման ու վարձատրության վերաբերյալ առաջարկությունների մշակում և դրանց կատարման մոնիթորինգ, **աշխատաշուկայի** ընթացիկ իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության, ազդեցության գնահատման և կանխատեսման իրականացում, աշխատաշուկայի վիճակի մասին տեղեկատվության հասանելիության ապահովում, **ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներին** վերաբերող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում, պետական կենսաթոշակների և պետական **նպաստների նշանակման, վերահաշվարկման և վճարման** մեթոդական ղեկավարում, պետական նպաստների նշանակման, վերահաշվարկման, վճարման նկատմամբ **մոնիթորինգ**, սոցիալական պաշտպանության բնագավառում **իրավակիրառական պրակտիկայի մոնիթորինգ**, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների միջոցով **մարդասիրական օգնության** բաշխման աշխատանքների մոնիթորինգ, սոցիալական ծառայություններ տրամադրող **տարածքային մարմինների գործունեության մեթոդական ղեկավարում**, սոցիալական **դեպքի վարման մեթոդաբանության** կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում, սոցիալապես անապահով ընտանիքների, առանձին սոցիալական խմբերի սոցիալական պաշտպանության և հասցեական օգնության **պետական ծրագրերի** մշակում, իրականացում, համակարգում և մոնիթորինգ, սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց **կացարանի խնդրի** լուծման պետական ծրագրերի մշակում, իրականացում, համակարգում և մոնիթորինգ, **ընտանիքի, կանանց, երեխաների** հիմնահարցերի ուսումնասիրություն, դրանք կարգավորող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում, **կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների** հիմնահարցերի ուսումնասիրություն, դրանց լուծման պետական ծրագրերի մշակում, իրականացման աշխատանքների համակարգում և մոնիթորինգ, մարդկանց **թրաֆիքինգի և շահագործման** հիմնահարցերի ուսումնասիրություն, թրաֆիքինգի ենթարկված անձանց սոցիալական վերականգնման ծրագրերի մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված **երեխաների սոցիալական պաշտպանության** պետական ծրագրերի մշակում և դրանց իրականացման ապահովում, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների հետ համատեղ նշված ծրագրերի իրականացում և մոնիթորինգ, **բժշկասոցիալական փորձաքննության** բողոքարկված	Նախարարությունը կառավարում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի **նախարարը**, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ Նախագահը՝ ՀՀ վարչապետի առաջարկությամբ: Նախարարն ունի առաջին տեղակալ և տեղակալներ, որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ վարչապետը՝ խորհրդակցելով նախարարի հետ: (Հավելված 1) **Նախարարը**, մասնավորապես, սահմանում է բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կազմը, հաստիքների թիվը, սպասարկման նորմացույցները և սպասարկման տարածքները, լսում և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի և պետական մարմնի գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում նախարարության աշխատակազմի պահպանման տարեկան ծախսերի նախահաշիվը, դրանց կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները: **Նախարարի տեղակալը**՝ համակարգում է նախարարության համակարգի աշխատանքները՝ նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման՝ իրեն հանձնարարված բնագավառներում, համակարգում է այդ բնագավառներում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ՝ նախարարության աշխատակազմի կառուցվածքային և արձանագրված ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքները և նախարարության համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը, իրականացնում է այդ բնագավառների՝ նախարարության համակարգի մարմիններին որոշակի հանձնարարականների և	**Կառուցվածքային ստորաբաժանումներ** Աշխատանքի և զբաղվածության վարչություն, Կենսաթոշակային ապահովության վարչություն, Սոցիալական աջակցության վարչություն, Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչություն, Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն, Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն, Վերլուծության և մոնիթորինգի վարչություն, Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն, Անձնակազմի կառավարման բաժին, Հասարակայնության հետ կապերի բաժին, Ժողովրդագրության բաժին, Ներքին աուդիտի բաժին, Գնումների համակարգման և տնտեսական հարցերի բաժին, Իրավական ապահովման բաժին **Տարածքային մարմիններ** «Զբաղվածության պետական գործակալություն» (51 զբաղվածության տարածքային կենտրոններ), ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն **ՀՀ ԱՍՀՆ կառավարման ոլորտում գործող պետական մարմին** ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայություն

	պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակի օրինակելի ձևի և դրա լրացման կարգի, պաշտոնների անվանացանկերի, պաշտոնների անվանացանկերում ներառված պաշտոնների նկարագրերի օրինակելի ձևերի, աշխատողների աշխատավարձերի միասնական համակարգի մոտեցումների ու մեխանիզմների ձևավորումն ու ներդրումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 172-Ա, ընդունված է՝ 20.02.2014, ուժի մեջ է՝ 27.02.2014* Հաշվի առնելով ՀՀ ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված ՊՈԱԿ-ներում գործունեության ոլորտային առանձնահատկությունները (այդ թվում՝ մանկատուն, երեխաների խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ հաստատություն և այլն) հանձնարարում է ՀՀ ԱՍՀ նախարարին՝ ՀՀ ԱՍՀՆ ենթակայությանը հանձնված ՊՈԱԿՆ-երի համար հաստատել հաստիքացուցակի օրինակելի ձևը և դրա լրացման կարգը, պաշտոնների անվանացանկերը և պաշտոնների անվանացանկերում ներառված պաշտոնների նկարագրերի օրինակելի ձևերը, աշխատավարձերի միասնական համակարգի ձևավորման մոտեցումներն ու մեխանիզմները, ապահովել աշխատավարձերի միասնական համակարգի մոտեցումների ու մեխանիզմների ներդրումը:	որոշումների քննարկում և եզրակացությունների տրամադրում, **հաշմանդամների** բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնողական ծրագրերի մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ, հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական և այլ տեխնիկական միջոցներով ապահովելու պետական նպատակային ծրագրերի մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ, հաշմանդամության վիճակի գնահատման հիման վրա հաշմանդամության շարժի և հաշմանդամություն առաջացնող պատճառների ուսումնասիրություն և վերլուծություն, հաշմանդամության կանխարգելման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, **սոցիալական աշխատանքի** բնագավառի օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ու ծրագրերի մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց գործունեության **հավաստագրում**, **անօթևան, մուրացիկ և թափառաշրջիկ** անձանց, այդ թվում՝ **երեխաների** համար սոցիալական աջակցության պետական ծրագրերի մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ, հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման կառուցակարգերի ներդրում և դրանց իրականացման մոնիթորինգ, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, **երեխաների տեղավորման**, ինչպես նաև նրանց **խնամքի և դաստիարակության** համար անհրաժեշտ **պետական նվազագույն սոցիալական չափորոշիչների** մշակում, դրանց պահպանման մոնիթորինգ և պետական վերահսկողության իրականացում, **որդեգրման ենթակա** և **որդեգրված երեխաների** ու որդեգրողների թեկնածուների կենտրոնացված հաշվառում, **ժողովրդագրական** վիճակի վերլուծություն և գնահատում, նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ժողովրդագրական **փորձաքննության** կազմակերպում և դրանց կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում, **ՀՀ մարզպետների** կողմից սոցիալական պաշտպանության բնագավառում կատարված աշխատանքների **մոնիթորինգ և գնահատում**, սոցիալական պաշտպանության բնագավառին վերաբերող՝ **ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների** կատարում, սոցիալական պաշտպանության բնագավառի **ռազմավարական ծրագրերի մոնիթորինգ** և **գնահատում**, սոցիալական պաշտպանության ոլորտում **բարեգործական ծրագրերի** հաշվառման տեղեկատվական համակարգի շահագործում, վերլուծությունների իրականացում և առաջարկությունների ներկայացում, սոցիալական պաշտպանության ոլորտում **զարգացման ծրագրերի** մշակում, իրականացում և համակարգում, սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ **պետական վերահսկողության** իրականացում, զանգվածային լրատվության ու հանրային իրազեկման այլ միջոցներով աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում վարվող քաղաքականության **լուսաբանում**, **վարչական վիճակագրական հաշվետվությունների** (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրում և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական **ռեգիստրների վարում**: (Հավելված 1)	առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն, նախարարի հանձնարարությամբ իրականացնում է նախարարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները, պարբերաբար նախարարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի մասին, ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարի հրամանների ու ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին: (Հավելված 1) **Նախարարին կից կոլեգիան** օժանդակում է նախարարության գործունեության ռազմավարական պլանավորման, քաղաքական որոշումների ընդունման, միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացներին, նպաստում է ռազմավարական ծրագրերի իրականացմանը, գնահատմանը և այդ գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը: (Հավելված 1) **Նախարարության աշխատակազմի ղեկավարը**, մասնավորապես՝ **վերահսկում** է նախարարության աշխատակազմի կողմից սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը, ապահովում է **համագործակցությունը** ՀՀ պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ: (Հավելված 1) **Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը** պատասխանատու է նախարարության աշխատակազմի **վիճակագրական հաշվետվությունները** ժամանակին կազմելու համար: (Հավելված 1) Նախարարության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել **աուդիտի** (վերստուգման): (Հավելված 1)	
15.	**ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչություն** «ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու, 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N 1319-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և 2004 թվականի հուլիսի 29-ի N 1146-Ն, 2005 թվականի	1. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչությունը նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն իրականացնում է օրենքով ՀՀ առողջապահության նախարարությանը վերապահված **վերահսկողական գործառույթներ և կիրառում պատասխանատվության միջոցներ առողջապահության, աշխատանքային օրենսդրությամբ սահմանված՝ աշխատանքի անվտանգության ապահովման և աշխատողների առողջության պահպանման նորմերի կիրառման բնագավառներում՝** հանդես գալով ՀՀ անունից: (Հավելված 1) 2. Տեսչության **նպատակներն ու խնդիրներն** են. ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, ՀՀ տարածքում պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողությունը, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում վարակիչ (շրջապատի համար վտանգ **ներկայացնող**) և ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների ու կանխարգելիչ աշխատանքների կազմակերպումը, առաջարկությունները ներկայացնելը, բժշկական օգնության և սպասարկման բնագավառը կարգավորող օրենքների, ՀՀ կառավարության որոշումների և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների նկատմամբ հսկողությունը և օրենքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցների կիրառումը, դեղերի և դեղագործական գործունեության բնագավառը կարգավորող օրենքների, ՀՀ կառավարության որոշումների և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների նկատմամբ հսկողությունը և օրենքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցների կիրառումը, առողջապահության բնագավառի	Տեսչությունը կառավարում է և դրա գործունեությանը համակարգում է **ՀՀ առողջապահության նախարարը**: (Հավելված 1) Տեսչության անմիջական ղեկավարումն իրականացնում է **տեսչության պետը**: Տեսչության պետը հաշվետու է ՀՀ վարչապետին, տեսչության կառավարման խորհրդին, ՀՀ առողջապահության նախարարին, իսկ քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նախարարության աշխատակազմի ղեկավարին: Տեսչության պետը, մասնավորապես, ՀՀ առողջապահության նախարարին և աշխատակազմի ղեկավարին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն տեսչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին, ապահովում նախարարի կամ նրա տեղակալի ցուցումների,	**Կառուցվածքային ստորաբաժանումներ** Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության բաժին, Հիգիենայի բաժին, Բժշկական օգնության և սպասարկման, կլինիկական ստանդարտների և ուղեցույցների վերահսկողության բաժին, Դեղերի և դեղագործական գործունեության վերահսկողության բաժին, Ռիսկերի գնահատման և ստուգումների պլանավորման բաժին, Ներքին հսկողության բաժին, Իրավական ապահովման և բողոքարկման բաժին, Վիճակագրության բաժին, Աշխատանքի անվտանգության նկատմամբ վերահսկողության բաժին **Տարածքային մարմիններ** Երևանի քաղաքային կենտրոն, Արագածոտնի

	հոկտեմբերի 6-ի N 1893-Ն, 2004 թվականի նոյեմբերի 25-ի N 1724-Ն ու 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1316-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 857-Ն, ընդունված է՝ 25.07.2013, ուժի մեջ է՝ 29.08.2013* ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը վերակազմակերպել ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության, հաստատում է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կանոնադրությունը և կառուցվածքը, լուծարում է ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության հայկական ատոմային էլեկտրակայանի և տրանսպորտի ու հաղորդակցության կենտրոնները, լրացումները և փոփոխություններ է կատարում ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման, ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշման մեջ, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության մի շարք որոշումներ, հանձնարարականներ է տալիս ՀՀ առողջապահության և ՀՀ ԱՍՀ նախարարներին:	լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների իրականացման բնագավառը կարգավորող օրենքների, ՀՀ կառավարության որոշումների և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների նկատմամբ հսկողությունը և պատասխանատվության միջոցների կիրառումը, վարակիչ (շրջապատի համար վտանգ ներկայացնող) և ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելումը, ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման օրենսդրության խախտումների հայտնաբերումը, վարչական վարույթի իրականացումը, պատասխանատվության միջոցների կիրառումը և կանխարգելումը, ՀՀ տարածքի և պետական սահմանների սանիտարական պաշտպանության ապահովումը, ՀՀ աշխատանքային օրենսգրքով և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերով սահմանված աշխատանքի անվտանգության ապահովման և աշխատողների առողջության պահպանության նորմեր պարունակող իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողության և վերահսկողության ապահովումը, աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների կանխարգելման միջոցառումների կազմակերպումը, աշխատանքի անվտանգ պայմանների իրավունքի ապահովումը: (Հավելված 1) 3. Տեսչության գործառույթները, մասնավորապես, ներառում են. բնակչության զանգվածային անընկալության ապահովման միջոցառումների (կանխարգելիչ պատվաստումների) կատարման նկատմամբ հսկողության իրականացումը, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում դիտարկումների, իրավիճակային վերլուծության և գնահատման իրականացումը՝ բացառությամբ սննդամթերքի անվտանգության բնագավառի պահանջների, վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների առաջացման ու դրանց տարածման պատճառների և պայմանների բացահայտումը (հայտնաբերումը) ու քննումը, բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ զննումների (մոնիթորինգի) կազմակերպումը, դրանց արդյունքների վերլուծությունն ու գնահատումը, վարակիչ, մասնագիտական ու զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների վարչական վիճակագրական հաշվառումը, գործող արդյունաբերական, այդ թվում՝ դպրոցների, մանկական ու բուժկանխարգելիչ հիմնարկների, առողջարանների, մշակութային, կենցաղային նշանակության շենքերի և այլ օբյեկտների, սարքավորումների գործունեությունը, կառուցվածքների շահագործումը, տեխնոլոգիական գործընթացները (առանձին բացառություններով) ժամանակավորապես դադարեցնելու մասին՝ մինչև սանիտարական նորմերի ու կանոնների, հիգիենիկ նորմատիվների և հակահամաճարակային ռեժիմների արձանագրված խախտումները վերացնելու վերաբերյալ որոշումների ընդունումը, խմելու, կենցաղային, տնտեսական, արտադրական, տեխնիկական կարիքների համար ջրի օգտագործումը ժամանակավորապես դադարեցնելու մասին որոշումների ընդունումը, եթե ջրի որակը չի համապատասխանում անվտանգության սահմանված սանիտարահիգիենիկ պահանջներին, բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի մասին քարոզչությունը, բնակչության առանձին խմբերի հիգիենիկ ուսուցման կազմակերպումը, սննդային գործոնով պայմանավորված՝ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կամ մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների հայտնաբերման դեպքում սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողություն իրականացնող մարմիններին տեղեկացում, դրանց առաջացման, ինչպես նաև տարածման պատճառների ու պայմանների հայտնաբերումը, նմուշառման և լաբորատոր հետազոտությունների իրականացումը, սննդային գործոնով պայմանավորված՝ վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը, համատեղ մշակումը և իրականացումը, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ստուգումների իրականացումը, այդ թվում՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից քաղաքացիներին տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի և անվտանգության, քանակական ու որակական բնութագրիչների, կլինիկական ստանդարտների և ուղեցույցների կատարման նկատմամբ, բժշկական օգնության և սպասարկման կանոնների, տեխնիկական կանոնակարգերի, կարգերի, չափորոշիչների, չափանիշների, նորմերի և բժշկական զննության իրականացման՝ օրենսդրության պահանջների համապատասխանության նկատմամբ, բժշկական փաստաթղթերի լրացման, դրանց պահպանման, շրջանառության և քաղաքացիներին դրանց կամ դրանցից քաղվածքներ տրամադրելու նկատմամբ, բժշկական ամլացման իրականացման նկատմամբ, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված առողջապահության բնագավառում լիցենզավորված անձանց կողմից տվյալ գործունեության իրականացման համար սահմանված պարտադիր պահանջների և պայմանների պահպանման նկատմամբ ստուգումների իրականացումը, «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով նախատեսված, այդ թվում՝ վերարտադրողականության դոնորների, ինչպես նաև վերարտադրողականության դոնոր չհանդիսացող քաղաքացիների կողմից սեռաբջիջների տրամադրման, տրամադրված սեռաբջիջների և սաղմի պահպանման նկատմամբ, հղիության արհեստական ընդհատման նկատմամբ ստուգումների իրականացումը, «Գովազդի մասին», «Դեղերի մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքներով նախատեսված՝ առողջապահության բնագավառի և հատուկ նշանակության սննդամթերքի գովազդի մասին օրենսդրության պահանջների ստուգումների իրականացումը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վարչական վարույթի իրականացումը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննումը և օրենքով նախատեսված դեպքերում պատասխանատվության միջոցների կիրառումը, աշխատանքային օրենսդրության նորմերի կիրառման նկատմամբ հսկողության և վերահսկողության իրականացումը, այդ թվում՝ գործատուների կողմից աշխատանքային օրենսդրությամբ սահմանված աշխատանքի անվտանգության ապահովման և աշխատողների առողջության պահպանման նորմերի կատարման նկատմամբ հսկողության և վերահսկողության իրականացում, մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և	հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը, լսում է տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների գործունեության մասին հաշվետվությունը, քննարկում դրանց գործունեության ստուգման արդյունքները, վերահսկողություն է իրականացնում տեսչության կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների օգտագործմանը հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ: (Հավելված 1) Տեսչության ընդհանուր կառավարման նպատակով ստեղծվում է **տեսչության կառավարման խորհուրդ**: (Հավելված 1) Խորհրդի լիազորությունները ներառում են. տեսչության գործունեության և իրականացվող ստուգումների տարեկան ծրագրերին հավանություն տալը, ստուգումներին առնչվող ուղեցույցերին հավանություն տալը, տեսչության պետի կողմից ներկայացված տեսչության տարեկան և ընթացիկ հաշվետվություններին հավանություն տալը, տեսչության պետի կողմից ներկայացված՝ կիրառված պատասխանատվության միջոցների մասին հաշվետվություններին հավանություն տալը, յուրաքանչյուր տարի նախատեսված ռազմավարական խնդիրների իրագործմանն ուղղված՝ տեսչության գործունեության թիրախների սահմանումը, տեսչության պետի կողմից ներկայացված կատարողականի ցուցանիշների ցանկին հավանություն տալը, որոնցով նախատեսված է գնահատելու տեսչության կողմից իր խնդիրների իրագործումը: Խորհուրդը կարող է մերժել ցանկում ներառված ցուցանիշները կամ նպատակահարմար գտնելու դեպքում ավելացնել այլ ցուցանիշներ: (Հավելված 1) Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում տեսչությունը խորհրդին ներկայացնում է իր **գործունեության վերաբերյալ ընթացիկ եռամսյակային հաշվետվություններ**, որոնք խորհուրդը համադրում է կատարողականի ցուցանիշների և սահմանված տարեկան թիրախների կատարողականի հետ: Սահմանված ցուցանիշներին կամ թիրախներին չբավարարելու դեպքում խորհուրդը կարող է տեսչությանը տալ կատարողականի բարելավմանն ուղղված ցուցումներ: (Հավելված 1) Խորհուրդը **հաշվետու է ՀՀ կառավարությանը և ՀՀ վարչապետին**: (Հավելված 1) Խորհրդին կից գործում է **բողոքարկման հանձնաժողովը**, որն ստեղծվում է տեսչության և նրա աշխատողների գործողությունների կամ անգործության (այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի) դեմ բերված բողոքների քննության և լուծման նպատակով: Բողոքարկման հանձնաժողովը խորհրդի կողմից ձևավորվող մարմին է, որը բաղկացած է նախագահից և վեց անդամից, որոնք իրենց աշխատանքը հանձնաժողովում իրականացնում են հասարակական հիմունքներով: Բողոքարկման	մարզային կենտրոն, Արարատի մարզային կենտրոն, Արմավիրի մարզային կենտրոն, Գեղարքունիքի մարզային կենտրոն, Լոռու մարզային կենտրոն, Կոտայքի մարզային կենտրոն, Շիրակի մարզային կենտրոն, Սյունիքի մարզային կենտրոն, Վայոց ձորի մարզային կենտրոն, Տավուշի մարզային կենտրոն, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ, Մեղրիի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ, Բավրայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ, «Շիրակ» օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ, Բագրատաշենի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ, Այրում-Ջիլիզայի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ, Գոգավան-Պրիվոլնոյեի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ

		երեխա խնամող աշխատողներին՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման նկատմամբ հսկողության և վերահսկողության իրականացում, ստուգումների արդյունքում ՀՀ աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերի՝ հանցագործության հատկանիշներ պարունակող խախտումներին վերաբերող նյութերն իրավապահ մարմիններ ներկայացնելը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հայցով դատարան դիմելը, տեսչության (այդ թվում՝ դրա տարածքային մարմինների) գործունեության արդյունքների մասին տարեկան հաշվետվությունների կազմում, քաղաքացիների ընդունելության կատարում, քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկների քննարկում: (Հավելված 1)	հանձնաժողովի կազմում չի կարող ընդգրկվել տվյալ տեսչության աշխատող: (Հավելված 1)	
16.	**Խնամակալության և հոգաբարձության մարմիններ** «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 922-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 164-Ն, ընդունված է՝ 24.02.2011, ուժի մեջ է՝ 05.03.2011* Հաստատում է խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 922-Ն որոշումը, հանձնարարական է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին:	1. **Խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքների ղեկավարներն են**: Երևանում քաղաքապետի անունից խնամակալության և հոգաբարձության մարմիններին վերապահված լիազորություններն իրականացնում են Երևանի **վարչական շրջանների ղեկավարները**: (Կետ 2) 2. Խնամակալության և հոգաբարձության մարմինները **համագործակցում են** մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների, սոցիալական ծառայության տարածքային մարմինների, զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հիմնարկների, ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների, ՀԿ-ների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների հետ: (Կետ 7) 3. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներն իրենց գործունեությունը կազմակերպում և իրականացնում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված աշխատանքային **տարեկան ծրագրերով**: (Կետ 9) 4. Խնամակալության և հոգաբարձության մարմինների **խնդիրները** ներառում են. անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովումը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը: (Կետ 12) 5. Խնամակալության և հոգաբարձության մարմինները սահմանում են **խնամակալություն** 14 տարին չլրացած անչափահասների և **հոգաբարձություն** 14-18 տարեկան անչափահասների նկատմամբ: (Կետ 13) 6. Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրականացնում են **խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունները** մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը: (Կետ 13) 7. Իրականացնում են **երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանություն**՝ երեխայի իրավունքների և շահերի խախտման, երեխայի կյանքին և առողջությանը վտանգ սպառնալու, ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթության տալու պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, կամ երեխայի դաստիարակությունից, նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու, կամ ծնողական իրավունքների չարաշահման դեպքերում (Կետ 13) 8. Իրականացնում են առ**անց ծնողական խնամքի մնացած երեխայի կյանքի պայմանների հետազոտություն** և նրա ծնողների կամ ազգականների կողմից խնամքի բացակայության փաստի հաստատման դեպքում **ապահովում երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը**՝ մինչև նրա տեղավորման հարցի լուծումը: 9. Իրականացնում են **երեխայի դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն** և ներկայացնում դատարան հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը: (Կետ 13) 10. **Թույլատրում** են՝ խնամակալին կնքել, իսկ հոգաբարձուին՝ համաձայնություն տալ կնքելու խնամարկյալի գույքի օտարման՝ ներառյալ փոխանակության կամ նվիրատվության, վարձակալության, այդ գույքն անհատույց օգտագործման հանձնելու կամ գրավ դնելու **գործարքներ**, որոնք հանգեցնում են խնամարկյալին պատկանող իրավունքներից հրաժարվելուն, ինչպես նաև նրա գույքը բաժանելուն կամ դրանից բաժիններ առանձնացնելուն, խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող ցանկացած այլ գործարքների, հոգաբարձուին **16 տարին լրացած խնամարկյալից առանձին ապրել**, եթե դա բացասաբար չի անդրադառնա խնամարկյալի դաստիարակության, նրա իրավունքների և շահերի պաշտպանության վրա, ինչպես նաև թույլատրում են **ծնողական սահմանափակված իրավունքներով ծնողներին երեխայի հետ շփումը**, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա: (Կետ 13) 11. Հաշվի են առնում **10 տարին լրացած երեխայի կարծիքը**՝ նրա իրավունքներին և շահերին առնչվող ցանկացած հարց լուծելիս: (Կետ 13) 12. **Ընտրում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքներում տեղավորելու ձևերը** (խնամատար ընտանիքում խնամքի և դաստիարակության հանձնելը, խնամակալ, հոգաբարձու նշանակելը)՝ ելնելով ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից (Կետ 13) 13. **Մասնակցում** են՝ **դատարանում** երեխաների **որդեգրման** հաստատմանը և որդեգրման վերացմանը վերաբերող **գործերի քննությանը**, **երեխայից առանձին ապրող ծնողի ծնողական իրավունքների** իրականացման հարցում ծագած կամ **երեխայի դաստիարակության** հետ կապված վեճերը քննող **դատական նիստերին**, **դատարանում ծնողական իրավունքների վերականգնման** քննությանը, **ծնողական իրավունքների սահմանափակման** մասին գործերի քննությանը, **դատարանում** 16 տարեկան դարձած անչափահասին լրիվ գործունակ (**էմանսիպացված**) ճանաչելու մասին գործերի քննմանը, անչափահասների շահերի պաշտպանության նպատակով **ժառանգության բաժանման վերաբերյալ համաձայնությունը կազմելուն** կամ ժառանգությունը բաժանելու վերաբերյալ գործի **դատաքննությանը**, **քրեական վարույթում** որպես **օրինական ներկայացուցիչ չունեցող** անչափահաս տուժողի,	Խնամակալության և հոգաբարձության մարմինների որոշումները կարող են **բողոքարկվել** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրենց վրա դրված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ենթարկվում են **պատասխանատվության**՝ օրենքով սահմանված կարգով: (Կետ 11) Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրականացնում են. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց **հաշվառումը**, **վերահսկողություն**՝ խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ, **հսկողություն**՝ խնամակալների ու հոգաբարձուների գործունեության նկատմամբ: (Կետ 13) **Բացահայտում** են՝ **առանց ծնողական խնամքի մնացած** երեխաների մասին **տեղեկությունները**, **ծնողների, ծնողական խնամքի բացակայության**, **ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքերը** և ապահովում երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը, համայնքում երեխայի **ծննդյան փաստի** օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև **երեխաների մահացության դեպքերը** և դրա մասին **իրազեկում** մարզպետին (Երևանի քաղաքապետին), միաժամանակ նախաձեռնում դրանց գրանցման գործընթացը, համայնքում երեխաների **թրաֆիքինգի դեպքերը** և դրա մասին **իրազեկում լիազոր մարմնին**: (Կետ 13) **Հաշվառում են անչափահաս տուժողին**, քաղաքացիական **հայցվորին**, **կասկածյալին**, **մեղադրյալին**: (Կետ 13) **Քննության են առնում** խնամակալների և հոգաբարձուների գործողությունների կամ անգործության մասին **դիմումներն ու բողոքները**: (Կետ 13)	Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում են **խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ**: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը (5-9-ը անձ) հաստատելու մասին որոշումը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է **համայնքի ավագանին**: (Կետ 3) Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը գործում է **հասարակական հիմունքներով**՝ բացառությամբ սահմանված դեպքերի: (Կետ 4) Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում **կարող են ընդգրկվել** մարզպետարանների աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների, սոցիալական ծառայության տարածքային մարմինների աշխատողներ, համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ): (Կետ 5) Խնամակալության և հոգաբարձության մարմինները երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության, իրավական ակտերի և փաստաթղթերի վերաբերյալ **մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցների վերաբերյալ խորհրդատվություն**, աջակցություն և տեղեկատվություն ստանում են ՀՀ ԱՍՀՆ-ից, իսկ անհրաժեշտ խորհրդատվություն, աջակցություն և տեղեկատվություն՝ նաև մարզպետարանից և Երևանի քաղաքապետարանից: (Կետ 8)

		քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական **ներկայացուցիչ**: (Կետ 13) 14. **Աջակցում** են՝ **խնամատար ընտանիքին**՝ երեխայի կյանքի և դաստիարակության անհրաժեշտ պայմանների ստեղծման համար, **խնամակալներին և հոգաբարձուներին** խնամարկյալների խնամքի և դաստիարակության, նրանց հանգիստը կազմակերպելու գործում, **լուծում են ծնողների միջև** երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած **տարաձայնությունները**, **քննարկում են ընտանիքի, կանանց և երեխաների, ինչպես նաև համայնքում առկա գենդերային հիմնախնդիրները**: (Կետ 13) 15. **Կնքում են՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր** իրենց կողմից նշանակված կառավարչի հետ՝ խնամարկյալի անշարժ և արժեքավոր շարժական գույքի մշտական կառավարման անհրաժեշտության դեպքում, խնամատար ծնողների (ծնողի) հետ պայմանագիր երեխային խնամատար ընտանիքին հանձնելու մասին: (Կետ 14) 16. Կարող են խնամակալին կամ հոգաբարձուին ազատել իր պարտականությունների կատարումից և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել նրան՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու համար՝ խնամակալությունը և հոգաբարձությունը շահադիտական նպատակներով օգտագործելու կամ խնամարկյալին առանց հսկողության և անհրաժեշտ օգնության թողնելու դեպքերում, անչափահասին իր ծնողներին վերադարձնելու կամ նրան որդեգրելու դեպքում, խնամարկյալին համապատասխան դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նման այլ հաստատությունում տեղավորելիս (եթե դա չի հակասում խնամարկյալի շահերին), հարգելի պատճառների (հիվանդություն, գույքային դրության փոփոխություն, խնամարկյալի հետ փոխադարձ ըմբռնման բացակայություն և այլն) դեպքում, խնամակալի կամ հոգաբարձուի կողմից իր պարտականություններն անպատշաճ կատարելու դեպքում: (Կետ 14) 17. Երեխայի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու դեպքում **երեխային վերցնում են ծնողներից** կամ **խնամակալից**, անհապաղ **ապահովում են երեխայի ժամանակավոր տեղավորումը** և 7-օրյա ժամկետում **դիմում դատարան**՝ ծնողներին (նրանցից մեկին) **ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու** հայցով (Կետ 14) 18. Դիմում են դատարան 14-18 տարեկան անչափահասի՝ իր աշխատավարձը, կրթաթոշակը կամ այլ եկամուտներն ինքնուրույն տնօրինելու իրավունքը սահմանափակելու միջնորդությամբ: (Կետ 14) 19. Կարգավորում են անչափահաս ծնողների և երեխայի խնամակալի միջև առաջացած տարաձայնությունները, կարող են պարտավորեցնել ծնողներին կամ ծնողին նրանցից մեկի մերժման դեպքում չխանգարելու պապերի, տատերի, եղբայրների, քույրերի և այլ մերձավոր ազգականների հետ երեխայի շփումը: (Կետ 14) 20. Անչափահասների նկատմամբ **խնամակալություն և հոգաբարձություն են սահմանում**՝ ծնողների, որդեգրողների բացակայության, դատարանով ծնողներին ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության և այլ դեպքերում, **նշանակում և ազատում են խնամակալների ու հոգաբարձուների**, խնամակալներին և հոգաբարձուներին **տալիս են համապատասխան վկայագրեր**, ընդունում են որոշում ընտրված երեխային **խնամատար ընտանիքին հանձնելու** մասին, տալիս են **համաձայնություն անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս**՝ վերջինիս ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում: (Կետ 14) 21. Անչափահասի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ ընդունում են **որոշում անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (էմանսիպացիա) մասին**: (Կետ 14) 22. Իրավունք ունեն **ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնել** օրենքով սահմանված դեպքերում: (Կետ 14)		
17.	**Երեխայի տարիքը որոշող հանձնաժողով** «Երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմն ու լիազորությունները հաստատելու և ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 995-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 18-Ն, ընդունված է՝ 20.01.2011, ուժի մեջ է՝ 12.02.2011* Սահմանում է երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմը և լիազորությունները, երեխայի տարիքը որոշելու մասին դիմումի և երեխայի տարիքը որոշելու մասին եզրակացության ձևերը: ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 995-Ն որոշման մեջ կատարում է	1. Բժշկական կազմակերպություններում ծննդյան ժամանակի մասին տեղեկությունների բացակայության, տեղեկությունները կորսված լինելու, բժշկական կազմակերպություններից դուրս ծնված, գտնված երեխաների ծննդյան գրանցման և այն դեպքերում, **երբ անհնար է այլ եղանակով պարզել երեխայի ծննդյան ժամանակը**, **երեխայի տարիքը որոշելու նպատակով ձևավորվում է մարզային, Երևան քաղաքում՝ վարչական շրջանի հանձնաժողով**: (Կետ 1) 2. Բժշկական կազմակերպություններում ծննդյան ժամանակի մասին տեղեկությունների բացակայության, տեղեկությունները կորսված լինելու, բժշկական կազմակերպություններից դուրս ծնված, գտնված երեխաների ծննդյան գրանցման և այն դեպքերում, երբ անհնար է այլ եղանակով պարզել երեխայի ծննդյան ժամանակը, **երեխայի տարիքը որոշվում և հրապարակվում է հանձնաժողովի կողմից**: (Կետ 2) 3. **Դիմումը** հանձնաժողով կարող են ներկայացնել երեխայի ծնողը, խնամակալության ու հոգաբարձության մարմինները, ՀՀ ոստիկանությունը, կրթական և առողջապահական, սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններ: (Կետ 12) Հարցումների դեպքում դիմումի քննարկման ժամկետը կասեցվում է մինչև պատասխանների ստացումը:(Կետ 16) 4. Դիմումի քննարկման արդյունքում հանձնաժողովի կողմից տրվում է **եզրակացություն** երեխայի տարիքը (ծննդյան ժամանակը) որոշելու մասին, որը հաստատվում է հանձնաժողովի նախագահի ու քարտուղարի ստորագրություններով և մարզպետարանի, Երևան քաղաքում՝ վարչական շրջանի կնիքով: (Կետ 17) Հանձնաժողովի եզրակացությունը հիմք է բժշկական կազմակերպությունների կողմից երեխայի ծննդյան ժամանակը գրառելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևի փաստաթուղթ տրամադրելու համար: (Կետ 19) Եթե հանձնաժողովի եզրակացության մեջ երեխայի ծննդյան ժամանակահատվածը նշված է տարվա առաջին կեսը՝ առանց նշելու ամիսը և ամսաթիվը, ապա ծննդյան ակտի գրանցման մեջ ծննդյան ժամանակ է նշվում տվյալ տարվա ապրիլի 1-ը, եթե նշված է տարվա երկրորդ կեսը՝ համապատասխանաբար նույն տարվա հոկտեմբերի 1-ը:	Հանձնաժողովի նախագահն ապահովում է հանձնաժողովի գործունեության հետ կապված **փաստաթղթերի պահպանությունը**: (Կետ 11) Հանձնաժողովը կարող է լրացուցիչ **հարցումներ** կատարել բժշկական, կրթական և այլ մարմիններից: (Կետ 15)	Հանձնաժողովը **կազմված է 7 անդամից**: (Կետ 3) Հանձնաժողովի կազմում, ի պաշտոնե, ընդգրկվում են մարզպետը, Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարը (հանձնաժողովի նախագահ), մարզպետարանի, Երևան քաղաքում՝ վարչական շրջանի սոցիալական կամ առողջապահական հարցերով զբաղվող ստորաբաժանման ղեկավարը (հանձնաժողովի քարտուղար), մեկական անդամներ մարզպետարանից, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունից, սոցիալական պաշտպանության, կրթական և առողջապահական կազմակերպություններից: (Կետ 4) Հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են **հասարակական կարգով**: (Կետ 5) Հանձնաժողովի նախագահի հրավերով հանձնաժողովի նիստերին **խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել** այլ

	փոփոխություն:	(Կետ 20) Եթե հանձնաժողովի եզրակացության մեջ նշված է միայն երեխայի ծննդյան տարեթիվը՝ առանց նշելու ամիսը, ամսաթիվը, ապա ծննդյան ակտի գրանցման մեջ ծննդյան ամիս և ամսաթիվ է նշվում տվյալ տարվա հուլիսի 1-ը: (Կետ 21) Եթե հանձնաժողովի եզրակացության մեջ նշված են տարեթիվը և ամիսը՝ առանց ամսաթվի, ապա ծննդյան ակտի գրանցման մեջ ծննդյան ամսաթիվ է նշվում համապատասխան ամսվա 15-ը: (Կետ 22)		անձինք և կազմակերպության ներկայացուցիչներ: (Կետ 8) Հանձնաժողովի գործունեությունը **ղեկավարում է հանձնաժողովի նախագահը**: (Կետ 9) **Հանձնաժողովի քարտուղարն** ապահովում է հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, արձանագրությունների, եզրակացությունների նախագծերի նախապատրաստումը, ինչպես նաև եզրակացությունները և դրանք տրամադրում հանձնաժողովի նախագահին ու հանձնաժողովի անդամներին: (Կետ 10)
18.	**«Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ** «Պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 2118-Ն, ընդունված է՝ 03.11.2005, ուժի մեջ է՝ 01.01.2006* Ստեղծում է «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնում է գույք, սահմանում է կազմակերպության նպատակներն ու գործունեության առարկան, կազմակերպության ձեռնարկատիրական գործունեություն տեսակները, կազմակերպության կառավարման լիազորությունները վերապահում է ՀՀ արդարադատության նախարարությանը, հանձնարարական է տալիս ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին:	1. Կազմակերպության **նպատակներն** են քրեական արդարադատության ոլորտում իրավախախտում կատարած անձանց ուղղումը, սոցիալական վերականգնումն ու վերաինտեգրումը, կրկնահանցագործությունների կանխումը, հասարակության անվտանգության բարձրացումը: (Կետ 3) 2. Կազմակերպության գործունեության առարկան ներառում է. **իրավախախտում կատարած անչափահասների արտադպրոցական դաստիարակության կազմակերպման, իրավագիտակցության բարձրացման, պատժից ազատված անչափահասների սոցիալական վերաինտեգրման միջոցառումների կազմակերպումը**, իրավախախտում կատարած անձանց ուղղման, սոցիալական վերականգնման և վերաինտեգրման արդյունավետ և նպատակային ծրագրերի, այդ թվում՝ կրթական, մշակութային, մարզական, մանկավարժական, հոգեբանական ու սոցիալական աշխատանքի միասնական չափորոշիչների մշակումը և լիազոր մարմնի հաստատմանը ներկայացնելը, սոցիալական վերականգնողական ծրագրերի իրականացումը քրեակատարողական հիմնարկներում պահվող կամ ազատությունից զրկման հետ չկապված պատիժ կրող կամ վերահսկողության տակ գտնվող, ինչպես նաև պատժից ազատված անձանց համար, քրեական արդարադատության ոլորտում իրավախախտների հետ աշխատանքում հասարակական նախաձեռնությունների սատարումն ու խթանումը, դրանց պետական աջակցության ցուցաբերումը: (Կետ 3) 3. Թույլատրել կազմակերպությանն իրականացնել **ձեռնարկատիրական գործունեություն հանգստի ու զվարճությունների կազմակերպման, մշակույթի և սպորտի բնագավառներում**՝ մատուցելով հետևյալ ծառայությունները՝ **պատանի հանդիսատեսի և մանկական թատրոնների** ներկայացումների ցուցադրում, **ցուցահանդեսների** կազմակերպում և անցկացում, ինքնագործ նկարիչների ստեղծագործությունների և արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպում և անցկացում, զարդակիրառական արվեստի վարպետների ստեղծագործությունների և արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպում և անցկացում, սիրողական ակումբների և ստուդիաների անդամների ստեղծագործությունների և արտադրատեսակների ցուցահանդեսների կազմակերպում և անցկացում, ժողովրդական ստեղծագործության ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում և անցկացում, **հրատարակչական գործ**: (Կետ 4)	Կազմակերպության գործունեության առարկան ներառում է տեղեկատվական և վիճակագրական շտեմարանների ձևավորումը, վերլուծությունը և ուսումնասիրությունների իրականացումը, տեղեկատվական-վերլուծական նյութերի և գրականության պատրաստումը: (Կետ 3)	
19.	**«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ** «ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 954-Ն, ընդունված է՝ 15.07.2010, ուժի մեջ է՝ 12.08.2010* ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության պետական	1. «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ը հանրակրթական մեկ կամ մի քանի ընդհանուր, այդ թվում՝ հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է: (Կետ 1) 2. Հանրակրթական դպրոցի **գործունեության առարկան** հանրակրթական հիմնական (ընդհանուր), պետական և հանրակրթական լրացուցիչ ծրագրերի իրականացումն է: (Կետ 10) 3. Հանրակրթական դպրոցի գործունեության **նպատակը** սովորողների կողմից հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, ինչպես նաև ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջմունքների բավարարման պայմանների ստեղծումն ապահովելն է: (Կետ 11) 4. Հանրակրթական դպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման **սկզբունքների** վրա: (Կետ 12) 5. Հանրակրթական դպրոցը **պատասխանատու է** հանրակրթության պետական չափորոշչի, հանրակրթական պետական ծրագրի, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական ու սոցիալ-հոգեբանական զարգացման	Սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) **գնահատումը**, դրանց ձևերի, մեթոդների, հաճախականության, առաջադրանքների բովանդակության ընտրությունը կատարում է հանրակրթական դպրոցը՝ հանրակրթության պետական չափորոշչին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան: (Կետ 20) Տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի ավարտին իրականացվում է հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանության ստուգում՝ **պետական ամփոփիչ**	Հանրակրթական դպրոցն ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ **խորհուրդ**, որի լիազորությունները ներառում են՝ հոգաբարձուների խորհրդի կողմից ներկայացված նախահաշիվը, ինչպես նաև նպատակային ծրագրերը քննարկելը, որոնց քննարկումներին կարող է մասնակցել հոգաբարձուների խորհրդի լիազոր ներկայացուցիչը: (Կետ 49) Խորհրդի անդամների թեկնածուներ, ըստ նախարարության կողմից հաստատված խորհրդի ընտրության կարգի, առաջադրում են՝ մանկավարժական խորհուրդը, ծնողական խորհուրդը, տարածքային կառավարման մարմինը, ՀՀ ԿԳՆ-ն և տեղական ինքնակառավարման մարմինը: (Կետ 53) Հանրակրթական դպրոցի տնօրենը չի կարող առաջադրվել դպրոցի խորհրդի կազմում: (Կետ

	հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1392-Ն որոշման N 3 հավելվածը շարադրում է նոր խմբագրությամբ, սահմանում է, որ կանոնադրության դրույթները չեն տարածվում մասնագիտացված հանրակրթական և հատուկ հանրակրթական դպրոցների վրա:	առանձնահատկություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան կրթության բովանդակության ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար: (Կետ 13) 6. Հանրակրթական դպրոցի կողմից հանրակրթություն իրականացնելիս **հանրակրթական հիմնական ծրագրերը**, որպես անբաժանելի մաս, կարող են ներառել՝ ուսումնամեթոդական, փորձարարական հետազոտական աշխատանքները, մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները, սովորողների համար հանրակրթական լրացուցիչ դասընթացների կազմակերպումը, սովորողների առողջության պահպանման միջոցառումները, սովորողների սննդի կազմակերպումը, սովորողների՝ տրանսպորտային կազմակերպված փոխադրումները, սովորողների երկարօրյա ուսուցման և (կամ) գիշերակացի կազմակերպումը, ուսումնաարտադրական բազաներում, մարզաառողջարարական ճամբարներում սովորողների ուսուցման, դաստիարակության ու հանգստի կազմակերպումը: (Կետ 14) 7. Հանրակրթական դպրոցը կարող է իրականացնել **ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները**՝ լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում, համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպում, ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում, արտադպրոցական դաստիարակության կազմակերպում: (Կետ 15) Հանրակրթական դպրոցը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն **լիցենզիայի** հիման վրա: (Կետ 16) 8. Հանրակրթական դպրոցը, ըստ կրթական մակարդակների, իրականացնում է հանրակրթական ծրագիր (17): 9. Հանրակրթական դպրոցներում ուսուցումն իրականացվում է **գրական հայերենով**: (Կետ 18) ՀՀ **ազգային փոքրամասնությունների** համար ստեղծված հանրակրթական դպրոցում (դասարանում) հանրակրթությունը կարող է կազմակերպվել իրենց **մայրենի կամ ազգային լեզվով**՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ: (Կետ 19) 10. Հանրակրթական դպրոցի **առաջին դասարան ընդունվում են** այն երեխաները, որոնց 6 տարին լրանում է մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ: Հանրակրթական դպրոցում հանրակրթական հիմնական ծրագրերին համապատասխան ուսումնական գործընթացը կարող է իրականացվել խմբային կամ անհատական ուսուցման եղանակով: (Կետ 23) Հիմնադրի կողմից սահմանված **խտությունից ավելի պակաս** խտությամբ դասարան կարող է բացվել հանրակրթական դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման միջոցների հաշվին՝ դպրոցի խորհրդի որոշմամբ: (Կետ 24) **Խմբային ուսուցումը** կարող է կազմակերպվել նաև ուսումնաարտադրական, փորձարարական բազաներում և մարզաառողջարարական ճամբարներում: (Կետ 26) Ըստ կրթական մակարդակի, կարող են կազմակերպվել **բազմահամակազմ դասարաններ**: (Կետ 27) Հանրակրթական դպրոցում **անհատական կրթությունը** կարող է կազմակերպվել սովորողի հետ անհատական աշխատանքի, տնային ուսուցման, ինքնակրթության, ընտանեկան և կրթության կազմակերպման դրսեկության ձևի այլ եղանակներով՝ ըստ նախարարության սահմանած կարգի: (Կետ 28) 11. Հանրակրթական դպրոցում **ուսումնական տարին** սկսվում է սեպտեմբերի 1-ից: (Կետ 29) Հանրակրթական դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը դասն է: **Դասի տևողությունը** սահմանվում է հանրակրթության պետական չափորոշչով: Ուսումնական տարվա տևողությունը սահմանվում է՝ առաջին դասարանում՝ 30 շաբաթ, երկրորդ դասարանում՝ 32 շաբաթ, 3-12-րդ դասարաններում՝ 34 շաբաթ: Ուսումնական շաբաթվա հնգօրյա կամ վեցօրյա տևողությունը սահմանում է հանրակրթական դպրոցը: (Կետ 30) Ուսումնական տարվա ընթացքում հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան նախատեսվում են աշնանային, ձմեռային, գարնանային և ամառային **արձակուրդներ**: Արձակուրդների ժամկետները և տևողությունը սահմանում է նախարարությունը: Բացառիկ դեպքերում արձակուրդների տրամադրման ժամկետները կարող են փոփոխվել նախարարության համաձայնությամբ: (Կետ 31) 12. Հանրակրթական դպրոցը **ուսումնական պլանները** կազմում է ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանների հիման վրա: (Կետ 32) Հանրակրթական ծրագրի (բացառությամբ նախադպրոցական) նախորդ աստիճանը կամ տվյալ ուսումնական տարվա ծրագիրը չյուրացրած սովորողին **չի թույլատրվում անցնել հաջորդ դասարան** կամ հանրակրթության հաջորդ աստիճան: (Կետ 35) 13. Հանրակրթական դպրոցից սովորողին այլ հանրակրթական դպրոց **տեղափոխելը** և (կամ) **ազատելը** կատարվում են ծնողի դիմումի հիման վրա, կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա: (Կետ 36) Առողջական վիճակի պատճառով հանրակրթական դպրոց ժամանակավորապես կամ մշտապես **հաճախել չկարողացող** կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հանրակրթական դպրոցը կազմակերպում է **տնային ուսուցում**: (Կետ 38) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձինք կարող են ուսումնառության մեկ ձևից անցնել այլ ձևի կամ փոխադրվել առանձնահատուկ կրթության այլ ուսումնական հաստատություն: (Կետ 40) 14. Հանրակրթական դպրոցում սովորողներն ունեն **հավասար իրավունքներ և պարտականություններ**: (Կետ 127) 15. Հանրակրթական **դպրոցն ապահովում է** կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ: (Կետ 129) 16. Յուրաքանչյուր սովորող տարին առնվազն մեկ անգամ անցնում է **բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտություն**, որն իրականացվում է հանրակրթական դպրոցի բժշկական սպասարկման ծառայության կողմից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝	**ատեստավորում:** (Կետ 21) Հանրակրթական դպրոցի շրջանավարտին, ըստ կրթության մակարդակների, տրվում է հանրակրթական ծրագրերի յուրացումը հավաստող ավարտական փաստաթուղթ՝ **վկայական կամ ատեստատ**: (Կետ 22) Հանրակրթության բնագավառում **ՀՀ ԿԳՆ** իրավասությունները ներառում են՝ օրինակելի ուսումնական պլանների մշակումը և հաստատումը, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների, դասամատյանների, գործածության երաշխավորված փաստաթղթերի ձևերի մշակման, փորձաքննության և հրատարակման ապահովումը, օրենքով, կանոնադրությամբ սահմանված կարգով և դեպքերում խորհրդի ձևավորմանը մասնակցելը, կարող է վաղաժամկետ դադարեցնել (հետ կանչել) խորհրդի իր անդամների լիազորությունները: (Կետ 45) Հանրակրթության բնագավառում **տարածքային կառավարման մարմնի և Երևանի քաղաքապետի** իրավասությունները ներառում են՝ դպրոցի կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության և ՀՀ ԿԳՆ ընդունած նորմատիվ ակտերի կատարման, կրթական ծրագրերի իրականացման վերահսկումը՝ հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան, խորհրդի ձևավորմանը մասնակցելը, հանրակրթական դպրոցի ընդհանուր կառավարման իրականացումը, նրա բնականոն գործունեության ապահովումը և դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար պատասխանատվություն կրելը (Կետ 46) Հանրակրթական դպրոցի գործունեության **վերահսկողությունն** իրականացնում են՝ հիմնադիրը և ՀՀ ԿԳՆ-ն, մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում՝ մարզպետը, Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներում՝ Երևանի քաղաքապետը, ՀՀ օրենքով նախատեսված պետական կառավարման այլ մարմիններ: (Կետ 48) Մանկավարժական խորհրդի նիստերն **արձանագրում** է անդամներից ընտրված մշտական քարտուղարը: Մանկավարժական խորհրդի նիստը հնարավորության դեպքում կարող է **ձայնագրվել**: (Կետ 83) Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են: Հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում չընդգրկված բոլոր մանկավարժները կարող են **ներկա գտնվել** նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: (Կետ 85) Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին, խորհրդակցական ձայնի իրավունքով, **հրավիրվում են**՝ ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ և այլ անձինք: (Կետ 86) Հանրակրթական դպրոցի գործունեության տարեկան **ֆինանսական հաշվետվությունների** հավաստիությունը կարող է ենթարկվել **աուդիտի**	56) Խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև լիազորված պետական մարմնի, տնօրենի, խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: (Կետ 61) Հանրակրթական **դպրոցի տնօրենը** ղեկավարում է հանրակրթական դպրոցի ընթացիկ գործունեությունը: Տնօրենը, մասնավորապես, մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և տնօրենի տեղակալների, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների և մանկավարժների հաշվետվությունները, մասնակցում է խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, վերահսկողություն է իրականացնում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, հանրակրթական դպրոցի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ, ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը, ուսումնական պլանին համապատասխան ապահովում է կրթական ծրագրերի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը և կրում է պատասխանատվություն կրթության որակի և բովանդակության համար, կրում է պատասխանատվություն ներքին կարգապահական կանոնների մշակման, ներդրման, երեխաների կյանքի և առողջության պահպանման, ինչպես նաև սովորողների ու աշխատողների իրավունքների և ազատությունների պաշտպանության համար, համակարգում և հսկում է կառուցվածքային ստորաբաժանումների, մանկավարժական և այլ աշխատողների աշխատանքը, ապահովում է ՀՀ ԿԳՆ և տարածքային կառավարման մարմնի հանձնարարականների կատարումը, ապահովում է պայմաններ (տարածք, մասնագիտական, կազմակերպական, ինչպես նաև օրենքով չարգելվող այլ օժանդակություն) հանրակրթական դպրոցում մանկական, երիտասարդական և այլ մանկապատանեկան հասարակական կազմակերպությունների գործունեության համար, ձևավորում է հանրակրթական դպրոցի սովորողների համակազմը, ապահովում նրանց սոցիալական պաշտպանվածությունը, ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքը: (Կետ 68) Հանրակրթական դպրոցի **տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը**, մասնավորապես՝ պատասխանատու է հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի

		պետական բյուջեի միջոցների հաշվին: (Կետ 130) 17. Հանրակրթական դպրոցի ներքին **կարգապահական կանոնները** չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժեր: (Կետ 132) 18. Սովորողի **կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը** ոչ պատշաճ կատարելը կամ չկատարելը, եթե դրա հետևանքով երեխայի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է միջին ծանրության վնաս այն անձի կողմից, ում վրա դրված են այդ պարտականությունները, ըստ ծառայության, կրում են **պատասխանատվություն:** (Կետ 136)	(վերստուգման)՝ լիազորված պետական մարմնի կողմից ընտրված աուդիտորի կամ հիմնադրի ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից: (Կետ 143) Ծնողական խորհուրդը իր աշխատանքների մասին հաշվետվություն է տալիս խորհրդի կազմի վերընտրության ժամանակ: (Կետ 105)	կատարման, դասավանդման որակի և սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի ապահովման համար, հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը, հանրակրթական դպրոցի տնօրենի հետ համատեղ իրականացնում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական ղեկավարումը, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը և ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվություններ, կազմակերպում է սովորողների ուսումնական պարապմունքների հսկողություն, ներկայացնում է առաջարկություններ ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղղությամբ, հսկում է կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը: (Կետ 72) Հանրակրթական դպրոցի **տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը**, մասնավորապես՝ կազմակերպում և ղեկավարում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը, ապահովում է հանրակրթական դպրոցի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը, կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ է ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար, հանրակրթական դպրոցի, նրա ստորաբաժանումների, աշխատանք է տանում սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցում դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը, հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կազմակերպում է ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ, նպաստում՝ հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը, մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը: (Կետ 73) Հանրակրթական դպրոցի **սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը**՝ կազմակերպում է ազգային մշակութային ժառանգության ճանաչողական

				բնույթի մանկապատանեկան միջոցառումներ, նպաստում հանրակրթության միջոցով ազգային փոքրամասնությունների համայնքների լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի իրականացմանը, մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական գործընթացի իրականացմանը: (Կետ 75) **Դասարանի ղեկավարը** (տարրական դպրոցում՝ դասվար)՝ դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ, նպաստում է հանրակրթական դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ, անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն, իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հանրակրթական դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն, կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ, հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին կարգապահական տույժի ներկայացնելու հարցը, արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել, ինչպես նաև խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը: (Կետ 76) **Մանկավարժական խորհուրդը**, մասնավորապես, քննարկում է՝ հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների հակումներին ու ընդունակություններին նրանց կյանքի և առողջության պահպանմանը համապատասխան, ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերը, հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և այլ նյութեր., հանրակրթական դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայություններ մատուցելու հարցը: (Կետ 80) **Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը**, մասնավորապես՝

				քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները, և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ, կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ: (Կետ 92) Տարբեր հանրակրթական դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ: (Կետ 93) 101. Հանրակրթական դպրոցի **ծնողական խորհուրդը**, մասնավորապես՝ իր կազմից առաջադրում է հանրակրթական դպրոցի խորհրդի անդամության թեկնածուներ, հանրակրթական դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների մեջ թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ, մասնակցում է հանրակրթական դպրոցի վճարովի ծառայությունների կազմակերպման, պայմանագրերի կնքման և արտաբյուջետային միջոցների տնօրինման աշխատանքներին, աջակցում է հանրակրթական դպրոցին դժվար դաստիարակվող սովորողների դաստիարակության, սոցիալական աջակցության կազմակերպմանը, լսում է տնօրենի հաղորդումը հանրակրթական դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումներ, հանրակրթական դպրոցի և ծնողների միջև ամրապնդում է կապերը, մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցերում ձևավորում է միասնական պահանջներ, ներգրավում է ծնողներին սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում, օգնում է հանրակրթական դպրոցին սովորողների հիմնական պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում, մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, մասնակցում է ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու գործին, աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը, ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը հանրակրթական դպրոցում, ապահովում է ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ, ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին և պատասխանատվության մասին: (Կետ 101) Հանրակրթական դպրոցի ծնողական խորհուրդը

				համագործակցում է հանրակրթական դպրոցի մանկավարժական և հոգաբարձուների խորհուրդների հետ: (Կետ 102) Հաստատության **աշակերտական ինքնավարության բարձրագույն մարմինը հանրակրթական դպրոցի** բարձր դասարանների (6-12-րդ դասարաններ) **աշակերտների ընդհանուր ժողովն է**, որի նիստերին կարող են մասնակցել նաև ցածր դասարանների աշակերտները: (Կետ 108) Աշակերտական ընդհանուր ժողովը (համաժողովը) հրավիրվում է տարեկան առնվազն երկու անգամ աշակերտական խորհրդի նախագահի կողմից, արտահերթ ժողով կարող է հրավիրվել՝ աշակերտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով, հանրակրթական դպրոցի տնօրենի նախաձեռնությամբ: (Կետ 110) Աշակերտները կարող են ստեղծել նաև ըստ հետաքրքրությունների ակումբներ, միավորումներ, որոնք հանդիսանում են աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ: (Կետ 111) Աշակերտական ընդհանուր ժողովը (համաժողովը) հանրակրթական դպրոցի սեպտեմբերյան ժողովում ձևավորում է խորհրդակցական մարմին՝ **աշակերտական խորհուրդ**: (Կետ 112) Աշակերտական խորհուրդը՝ ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան, անմիջականորեն աշակերտներին վերաբերող հարցերի մասին ազատորեն կարծիք է ներկայացնում հանրակրթական դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններին: (Կետ 114) Աշակերտական խորհրդի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում է խորհրդի և մանկավարժական խորհրդի այն նիստերին (կամ հարցերի քննարկմանը), որտեղ քննարկվում են աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցեր: (Կետ 115) **Հոգաբարձուների խորհրդի** կազմում կարող են ընդգրկվել հանրակրթական դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձինք, անհատ ձեռներեցներ, տեղական իշխանության ներկայացուցիչներ: (Կետ 116) Հոգաբարձուների խորհուրդը, մասնավորապես՝ օժանդակում է հանրակրթական դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը, նպաստում է հանրակրթական դպրոցի կողմից իրականացվող լրացուցիչ, ինչպես նաև օրենքին և հանրակրթական դպրոցի կանոնադրությանը չհակասող այլ ծրագրերի իրականացմանը, աջակցում է սոցիալական ծրագրերի իրականացմանն ու սովորողների ամառային հանգստի կազմակերպմանը, լսում է իր հատկացրած միջոցների նպատակային ծախսման վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը, մասնակցում է հանրակրթական դպրոցի զարգացման ծրագրերի քննարկմանը, իր կազմից ընտրում է հանրակրթական դպրոցի

				մանկավարժական խորհրդի անդամ, օժանդակում է այլ ուսումնական հաստատությունների հետ հանրակրթական դպրոցի համագործակցությանը, միջազգային կապերի ստեղծմանը: (Կետ 120) Հանրակրթական դպրոցում կրթական գործընթացի **մասնակիցներն** են՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ, վարչական աշխատողները, խորհրդում և խորհրդակցական մարմիններում ընդգրկված՝ նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և այլ անձինք: (Կետ 126) **Մանկավարժական աշխատողի** պաշտոն զբաղեցնելու իրավունքը սահմանափակվում է օրենքով: (Կետ 134)
20.	**«Երեխայի զարգացման կենտրոն» ՊՈԱԿ** ««Երեխայի զարգացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 461-Ն, ընդունված է՝ 03.03.2005, ուժի մեջ է՝ 12.05.2005* Ստեղծում է «Երեխայի զարգացման կենտրոն» ՊՈԱԿ, սահմանում է կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակները, թույլատրում է ձեռնարկատիրական գործունեության տեսակները, կառավարման լիազորությունները վերապահում է ՀՀ ոստիկանությանը, կազմակերպությանը գույք է ամրագրում:	1. Կազմակերպության գործունեության հիմնական **առարկան և նպատակներն** են. ոստիկանության ծառայողների, ոստիկանության քաղաքացիական ծառայողների, ոստիկանությունում տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների և նրանց ընտանիքի անդամների երեխաների ուսումնադաստիարակչական գործունեության կազմակերպումը և իրականացումը, մանկավարժական գործունեությունը՝ երեխայի հոգեբանական առողջության ամրապնդման ոլորտում, ոստիկանության ծառայողների, ոստիկանության քաղաքացիական ծառայողների, ոստիկանությունում տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների և նրանց ընտանիքի անդամների երեխաների հոգեբանական խորհրդատվությունը: (Կետ 2) 2. Թույլատրում է կազմակերպությանն իրականացնել **ձեռնարկատիրական գործունեության** հետևյալ տեսակները՝ **նախադպրոցական կրթություն**, **երեխաների խնամք**, հետազոտություններ և մշակումներ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում, հրատարակչական գործ:		ՀՀ ոստիկանություն (Կետ 4)
21.	**ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրեր** «ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 574-Ն, ընդունված է՝ 05.06.2008, ուժի մեջ է՝ 12.07.2008* Հաստատում է ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգը:	1. Կարգավորում է ձերբակալված անձանց ձերբակալվածներին պահելու վայրերում (ՁՊՎ) ընդունելու հիմքերն ու կարգը, ձերբակալվածների նյութակենցաղային ապահովումը, ձերբակալվածների սնունդը և նրանց կողմից սննդից հրաժարվելու դեպքում ձեռնարկվող միջոցառումները, ՁՊՎ-ում պահվող ձերբակալվածների վարքագծի կանոնները, ՁՊՎ-ի օրվա կարգացուցակը, ձերբակալվածների կողմից առաջարկներ, դիմումներ և բողոքներ ներկայացնելը, պաշտպանի և մերձավոր ազգականի հետ տեսակցելը, հանձնուքներ ընդունելը և հանձնելը, ձերբակալվածների բացօթյա զբոսանքը, ՁՊՎ-ում ներքին անվտանգության ապահովումը, ՁՊՎ-ի շինարարության և սարքավորման առանձնահատկությունները, ՁՊՎ-ում արտակարգ իրավիճակի կանոնակարգը, **ՁՊՎ-ում կանանց և անչափահասներին պահելու պայմանների առանձնահատկությունները**, ՁՊՎ-ում պահվող ձերբակալվածների նյութական պատասխանատվությունը, քննչական գործողություններին ձերբակալվածների մասնակցությունն ապահովելը, ՁՊՎ-ում պահվող ձերբակալվածների բուժսպասարկումը և հակահամաճարակային պայմանների ապահովումը և ձերբակալվածներին ՁՊՎ-ից ազատելու հիմքերը և կարգը: 2. Արգելվում է անձնական խուզարկություն իրականացնել հակառակ սեռի ներկայացուցչի կողմից կամ նրա ներկայությամբ: 3. Մերձավոր ազգականների հետ **տեսակցություններն** անցկացվում են ՁՊՎ-ի ծառայողների հսկողությամբ: Արգելվում է տեսակցության ընթացքում ձերբակալվածին առարկաներ փոխանցելը: Այդպիսի փորձ կատարելու դեպքում տեսակցությունը վաղաժամկետ դադարեցվում է: Ձերբակալվածի հետ միաժամանակ տեսակցել թույլատրվում է առավելագույնը երեք չափահաս և **երեք անչափահաս** անձանց, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել: Ձերբակալվածին նախօրոք տեղեկացվում է մերձավոր ազգականի հետ (հայր, մայր, ամուսին, կին, եղբայր, քույր, զավակներ, որդեգրողներ, որդեգրվածներ, հարազատ և ոչ հարազատ (համամայր, համահայր), եղբայր, քույր, տատ, պապ, թոռներ, ինչպես նաև ամուսնու ծնողներ) մինչև մեկ ժամ	Կանոնակարգի պահանջների կատարումն ապահովելու պարտականությունները դրվում են ոստիկանության տարածքային բաժինների պետերի (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՊՎ-ի պետի) կամ նրանց փոխարինող անձանց վրա: Ոստիկանության տարածքային բաժինների հերթապահը (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՊՎ-ի հերթապահը) ստուգում է ձերբակալվածներին ընդունելու և պահելու հիմքերը, ձերբակալվածներին ուղղված հարցերի միջոցով պարզում է ձերբակալման արձանագրության կամ որոշման մեջ նշված անձնագրային տվյալների իսկությունը, այնուհետև համապատասխան գրանցում է կատարվում ձերբակալվածների հաշվառման գրանցամատյանում և անհատական քարտում: ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է ձերբակալվածին ՁՊՎ ընդունելու կամ մի հիմնարկից մյուսը տեղափոխելու մասին, կապի հնարավոր միջոցով, անհապաղ տեղյակ պահել	ՀՀ Ոստիկանություն

		տևողությամբ առնվազն մեկ տեսակցության մասին: Ձերբակալվածի հետ տեսակցելու համար մերձավոր ազգականը ոստիկանության մարմնի պետին ներկայացնում է սահմանված ձևի դիմում և անձը հաստատող փաստաթուղթ: Տեսակցության եկած անձանց, ինչպես նաև ձերբակալվածներին տեսակցության ընթացքում բացատրվում են նրանց վարքագծի կանոնները: Նրանք զգուշացվում են նաև ներքին կանոնակարգի պահանջները խախտելու դեպքում վաղաժամկետ տեսակցությունը դադարեցվելու մասին: Հսկիչի պահանջները չկատարելու դեպքում դրա մասին զեկուցվում է ոստիկանության տարածքային բաժինների հերթապահին (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՊՎ-ի հերթապահին): ՁՊՎ-ում տեսակցությունների համար կահավորվում են հատուկ սենյակներ: Տեսակցությունը կազմակերպվում է այնպես, որ բացառվի այլ ձերբակալվածների հետ շփումը: Տեսակցությունից հրաժարվելու մասին ձերբակալվածի գրավոր դիմումի համաձայն տեսակցությունը կարող է փոխարինվել 1 հեռախոսազրույցով՝ մինչև 10 րոպե տևողությամբ, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել: Հեռախոսազրույցը՝ ներառյալ միջքաղաքային, ձերբակալվածին տրամադրվում է ոստիկանության տարածքային բաժնի պետի (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՊՎ-ի պետի) սահմանած ժամանակացույցով: Հեռախոսազրույցը տեղի է ունենում վարչակազմի ներկայացուցչի տեսանելիության, բայց ոչ լսելիության պայմաններում: Հեռախոսային խոսակցության վճարումները գործող սակագներին համապատասխան կատարվում են ձերբակալվածի հաշվին: Հեռախոսակապից օգտվելու գործընթացը հաշվառվում է համապատասխան մատյանում, որտեղ նշվում են ձերբակալվածի անվանական տվյալները, հեռախոսակապից օգտվելու հաճախականությունը և տևողությունը: 4. Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող **կանայք** ՁՊՎ-ում **տեղավորվում են** այնպես, որ հնարավորինս նվազագույնի հասցվի ՁՊՎ-ում պահվող այլ անձանց հետ շփումը: Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող ձերբակալված կանանց համար նախատեսված խցերում տեղադրվում են միահարկ մահճակալներ, երեխային տրվում է մահճակալ, իսկ խցերն ապահովվում են տաք ջրով: 5. **Ծննդաբերության ժամանակ** ձերբակալված կինը պետք է փոխադրվի առողջապահական հաստատություն՝ ապահովելով համապատասխան հսկողությունը նրա նկատմամբ: Ձերբակալվածին ծննդատուն տեղափոխելու դեպքում ՁՊՎ-ի վարչակազմը դրա մասին տեղյակ է պահում վարույթն իրականացնող մարմնին և նրա հարազատներին: 6. Հղի կանայք, կերակրող մայրերը և անչափահասները **սննդով ապահովվում** են ՀՀ կառավարության կողմից սահմանված չափաբաժիններով: 7. Իրենց մոտ երեխա ունեցող ձերբակալված կանանց կողմից հիվանդության, ծնողական պարտականությունները բարեխղճորեն չկատարելու, երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև կանոնակարգի պահանջները պարբերաբար խախտելու դեպքում ՁՊՎ-ի վարչակազմն իրավունք ունի **երեխային ժամանակավորապես ազգականներին կամ այլ անձանց հանձնելու կամ մանկական հաստատությունում տեղավորելու և ծնողական իրավունքներից զրկելու** մասին միջնորդություն ներկայացնել դատարան: Իրենց մոտ երեխա ունեցող ձերբակալված կանայք երեխային կարող են ազգականներին կամ այլ անձանց հանձնել սեփական նախաձեռնությամբ: Ընդ որում, ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է ամեն կերպ աջակցել նրան: Երեխային ազգականներին հանձնելու համար անհրաժեշտ է ձերբակալվածից ճշտել, թե ով կարող է իր վրա վերցնել երեխայի խնամքը: Եթե ձերբակալվածն ազգականներ չունի, ապա վարչակազմը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ երեխային ժամանակավորապես մանկական հաստատություն հանձնելու համար: 8. Անչափահաս ձերբակալվածների համար նախատեսված խցերում տեղադրվում են **միահարկ մահճակալներ**: 9. ՁՊՎ-ում անչափահաս ձերբակալվածների համար նախատեսված **զբոսանքի վայրերը** պետք է հարմարեցված լինեն ֆիզիկական վարժությունների և սպորտով զբաղվելու համար: 10. Անչափահասներին արգելանքից ազատելիս ՁՊՎ-ի վարչակազմն ազատման մասին նախօրոք հայտնում է նրանց մերձավոր ազգականներին կամ այլ անձանց: Մերձավոր ազգականներ չունենալու դեպքում անհրաժեշտ օգնությունը ցույց է տալիս տվյալ հիմնարկի վարչակազմը: ՁՊՎ-ի ծառայողի ուղեկցությամբ անձն ուղարկվում է բնակության վայր:	ձերբակալվածի ընտրած անձին: ՁՊՎ բերված անձինք ենթարկվում են սանիտարական մշակման, մատնադրոշմման և լուսանկարման: Բուժզննության արդյունքները գրանցվում են գրանցամատյանում, անձնական գործում և դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին: Յուրաքանչյուր ձերբակալվածի համար ՁՊՎ-ում կազմվում է անձնական գործ, որում ներառվում են ձերբակալման և ազատման ամսաթվերը, անհատական քարտը, բերման ենթարկելու մասին արձանագրությունը, հագուստի և անձնական իրերի անվանացուցակի վերաբերյալ արձանագրությունը, նախկինում դատվածության մասին տեղեկանքը, խուզարկության արձանագրությունը, մատնադրոշմման տվյալները, հանձնուքի, տեսակցության դիմումները, անձնական հաշվի գումարի շարժը և ձերբակալվածին վերաբերող այլ փաստաթղթեր: Ձերբակալվածի անձնական կամ խցի խուզարկության ժամանակ առգրավման ենթակա առարկաներ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրվում է խուզարկություն կատարող անձի, խուզարկվողի և մասնակիցների կողմից: Խուզարկվողի կողմից արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում արձանագրությունում կատարվում է համապատասխան նշում: Արձանագրությունը կցվում է ձերբակալվածի անձնական գործին: Դրամը, արժեթղթերը և թանկարժեք իրերն ընդունելու մասին ֆինանսական բաժնում 2 օրինակից լրացվում է կտրոն, որի մեկ օրինակը ստորագրությամբ տրվում է ձերբակալվածին, իսկ երկրորդ օրինակը կցվում է նրա անձնական գործին: Ոգելից խմիչքները, գարեջուրը, խաղաթղթերը և այլ արժեք չներկայացնող արգելված առարկաներ ու իրեր ոչնչացվում են, որի մասին կազմվում է արձանագրություն: Ձերբակալվածի անձնական խուզարկությունից, իրերի զննությունից, բուժզննությունից և սանիտարական մշակումից հետո ոստիկանության մարմնի հերթապահը ձերբակալվածին տեղեկացնում է նրա իրավունքների և պարտականությունների, ՁՊՎ-ի ներքին կանոնակարգի պահանջների և սահմանված կարգի խախտման համար նախատեսված պատասխանատվության, նրա նկատմամբ հսկողություն իրականացնելու համար առկա տեխնիկական միջոցներ, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու հնարավոր դեպքերի մասին, որի փաստը հաստատվում է ձերբակալվածի ստորագրությամբ և կցվում նրա անձնական գործին: ՁՊՎ-ի վարչակազմի ծառայողներն ամենօրյա շրջագայության ընթացքում պարտավոր են ձերբակալվածներից ընդունել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր առաջարկություններ, դիմումներ և բողոքներ: ՁՊՎ-ի վարչակազմին հասցեագրված առաջարկությունները, դիմումները	

			և բողոքները գրանցվում են մատյանում և զեկուցվում ոստիկանության տարածքային բաժնի պետը (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՊՎ-ի պետը): Վերջինս միջոցներ է ձեռնարկում դրանք լուծելու համար: Պետական իշխանության, տեղական ինքնակառավարման մարմիններին և հասարակական միավորումներին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքներն ուղարկվում են ՁՊՎ-ի վարչակազմի, պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով: Քրեական հետապնդման մարմնի որոշումների և գործողությունների դեմ ուղղված բողոքները, ինչպես նաև ՁՊՎ-ի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունները, դիմումներն ու բողոքներն ուղարկվում են հասցեատիրոջը մեկ օրվա ընթացքում: ՁՊՎ-ի վարչակազմի որոշումների ու գործողությունների առթիվ ներկայացված առաջարկությունները, դիմումները և բողոքները չեն կասեցնում այդ որոշումների և գործողությունների կատարումը: Առաջարկությունների, դիմումների և բողոքների պատասխաններն անհապաղ հայտնվում են ձերբակալվածներին, որը հաստատվում է նրանց ստորագրությամբ և կցվում նրանց անձնական գործին: Առաջարկությունների, դիմումների և բողոքների ուղարկման ծախսերը կատարվում են ուղարկողի հաշվին: Ձերբակալվածի անձնական հաշվում, դրամի բացակայության դեպքում, հանրապետության տարածքում ծախսերը կատարվում են ՁՊՎ-ի հաշվին: Դիմումների, բողոքների և առաջարկությունների ժամանակավոր դադարեցում կամ սահմանափակում չի թույլատրվում: Արգելվում է իրենց օրինական շահերի և իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներ, բողոքներ և առաջարկություններ ներկայացնող ձերբակալվածների նկատմամբ հետապնդումը: Հետապնդում իրականացնող պաշտոնատար անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն: Ձերբակալվածին տեսակցություն տալու մասին ոստիկանության մարմնի հերթապահը նշում է կատարում գրանցամատյանում: Ձերբակալվածի յուրաքանչյուր դուրսբերումը խցից կատարվում է ՁՊՎ-ի պետի կամ հերթապահի գիտությամբ: Դրա մասին կատարվում է գրառում ձերբակալվածներին խցերից դուրս բերելու գրանցամատյանում՝ համաձայն N 9 ձևի, որում նշվում են ձերբակալվածի անունը, ազգանունը, դուրս բերելու նպատակը, հիմքը, ամսաթիվը և տևողությունը, ինչպես նաև դուրս բերողի անունը, ազգանունը և ստորագրությունը: Արգելանքի տակ պահելու օրենքով սահմանված առավելագույն ժամկետը լրանալուց 24 ժամ առաջ ոստիկանության տարածքային բաժնի պետը (ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում՝ ՁՊՎ-ի պետը) ծանուցագրով, իրազեկում է վարույթն իրականացնող մարմնին, իսկ ժամկետը լրանալու օրը համապատասխան որոշում չստանալու դեպքում՝ սեփական	

			որոշմամբ, ձերբակալվածին ազատում է արգելանքից: Արգելանքից ազատված ձերբակալվածին հանձնում են անձնական փաստաթղթերը, թանկարժեք իրերը, դրամը, ինչպես նաև տեղեկանք նրան արգելանքի տակ պահվելու ժամկետի և ազատման հիմքերի մասին:	
22.	**ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրեր և ուղղիչ հիմնարկներ** «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1543-Ն, ընդունված է՝ 27.03.2008, ուժի մեջ է՝ 02.10.2008* Հաստատում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը:	1. Կանոնակարգը «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքին, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսդրությանը համապատասխան, սահմանում և կանոնակարգում է կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների, ազատությունների ու պարտականությունների իրականացման կարգը, կալանավորված անձանց կալանավորվածներին պահելու վայր, դատապարտյալներին ուղղիչ հիմնարկ ընդունելու կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների վարքագծի կանոնները, կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսպասարկումն ու անձնական հիգիենայի պահպանման պայմանները և կանոնները, սննդամթերք ու առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու կարգը և կալանավորված անձանց լրացուցիչ վճարովի ծառայություններից օգտվելը, կալանավորված անձանց և դատապարտյալների նյութական-կենցաղային ապահովումը, կալանավորված անձանց և դատապարտյալների օրվա կարգացուցակը, փակ, կիսափակ, կիսաբաց ու բաց ուղղիչ հիմնարկներում դատապարտյալներին և կալանքի դատապարտված դատապարտյալներին պահելու պայմանների առանձնահատկություններն ու կալանավորված անձանց և դատապարտյալներին բուժական ուղղիչ հիմնարկում պահելու պայմանների առանձնահատկությունները, կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում **հղի կամ իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կամ անչափահաս**՝ կալանավորված անձանց և դատապարտյալներին պահելու պայմանների առանձնահատկությունները, խուզարկություն, զննում և առգրավում կատարելու կարգն ու պայմանները, կալանավորված անձանց և դատապարտյալների աշխատանքը, կալանավորված անձանց և դատապարտյալների կրթությունը, գրքերից, ամսագրերից ու թերթերից օգտվելը, դատապարտյալների ինքնագործ միավորումների կազմավորման և գործունեության կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից կրոնական ծեսերին մասնակցելը, տեսակցությունների տրամադրման կարգը, հանձնուքներ, ծանրոցներ, փաթեթներ ընդունելու և հանձնելու, դրամական փոխանցումներ ստանալու և ուղարկելու կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ ներկայացնելը, նամակագրությունը, հեռախոսազրույցների տրամադրման կարգը, կալանավորված անձի և դատապարտյալի լուսանկարման, տեսանկարահանման ու հարցազրույցի իրականացման կարգը, կարճաժամկետ մեկնումների տրամադրման կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների՝ քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու և ամուսնությունը գրանցելու կարգը, կալանավորված անձանց և դատապարտյալների նյութական պատասխանատվությունը, կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ կիրառվող խրախուսանքի ու տույժի միջոցները և դրանք կիրառելու կարգը, կալանավորվածներին պահելու վայրերում և ուղղիչ հիմնարկներում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը, կալանավորված անձանց և դատապարտյալներին փոխադրելը, կալանավորված անձանց կալանքից և դատապարտյալներին պատժից ազատելու կարգն ու պայմանները, կալանավորված անձանց և դատապարտյալներին՝ իրենց մոտ ունենալ, հանձնուքներով, ծանրոցներով և փաթեթներով ստանալ կամ ձեռք բերել արգելվող իրերի, առարկաների ու սննդամթերքի ցանկը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությունից և կանոնակարգից բխող այլ հարաբերություններ: 2. Իր մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձին կալանավորվածներին պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ **ընդունելու** համար անհրաժեշտ են նաև երեխայի ծննդյան վկայականը կամ երեխայի հետ կալանավորված անձի կամ դատապարտյալի արյունակցական կամ ազգակցական կապը հաստատող այլ փաստաթուղթ: 3. Երեխայի հետ կալանավորված անձի կամ դատապարտյալի արյունակցական կամ ազգակցական կապը հաստատող փաստաթղթի բացակայության դեպքում երեխան կալանավորվածներին պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ **չի ընդունվում**, և դրա մասին կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը հայտնում է իրավասու մարմիններին: Մինչև երեխայի հետ կալանավորված անձի կամ դատապարտյալի արյունակցական կամ ազգակցական կապը հաստատող փաստաթուղթ ներկայացնելը կամ իրավասու մարմինների կողմից երեխային վերցնելը՝ **երեխան պահվում է կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում**: 4. Անչափահասները, հղի կամ իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձինք կարող են տեղավորվել իրենց վիճակի առանձնահատկություններին **համապատասխան պայմաններ ունեցող խցերում կամ կացարաններում**: 5. Դատապարտյալը պարտավոր է հագուստի վրա (վերնազգեստի վերին ձախ հատվածում) կրել **միասնական նմուշի անվանական կրծքանշան** (90 մմ x 55 մմ չափսի)՝ բացառությամբ անչափահաս կամ բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալի: 6. Անչափահաս դատապարտյալների համար ուղղիչ հիմնարկի տարածքում **կարող են կազմակերպվել կենդանի բնության անկյուններ**: 7. Իր մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կալանավորված անձը կամ դատապարտյալն ստանում է **երեխայի խնամքի համար անհրաժեշտ պարագաներ և իրեր**: 8. Հղի կամ իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կալանավորված անձինք և դատապարտյալները կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում տեղավորվում են այնպես, որպեսզի	Ուղղիչ հիմնարկի պատասխանատու հերթապահն ստուգում է ուղղիչ հիմնարկ բերված անձին ընդունելու համար անհրաժեշտ հետևյալ փաստաթղթերը՝ անձնագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթուղթ, դատավճիռը, ինչպես նաև դատարանի որոշումը կատարման հանձնելու մասին կարգադրությունը: Եթե անձն ուղղիչ հիմնարկ է բերվում կալանավորվածներին պահելու վայրից կամ այլ ուղղիչ հիմնարկից, ապա ստուգվում է նաև նրա անձնական գործը: Ուղղիչ հիմնարկի պատասխանատու հերթապահը կազմում է հագուստի և անձնական իրերի անվանացանկի մասին արձանագրություն, եթե անձը չի բերվում այլ ուղղիչ հիմնարկից: Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պատասխանատու հերթապահը, համոզվելու համար, որ փաստաթղթերը լրացված են տվյալ կալանավորված անձի կամ դատապարտյալի վերաբերյալ, անցկացնում է անձնական տվյալների վերաբերյալ ստուգողական հարցում և դրա արդյունքները համեմատում իրեն ներկայացվող փաստաթղթերում առկա տվյալների հետ: Նշված որևէ փաստաթղթի բացակայության դեպքում անձը կալանավորվածներին պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ չի ընդունվում: Կարանտինային բաժանմունքի խցում տեղավորվելուց անմիջապես հետո՝ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը նրա իրավունքների և պարտականությունների, կանոնակարգի, կալանավորման կամ պատիժը կրելու կարգի և պայմանների, ինչպես նաև կալանավորման կամ պատիժը կրելու սահմանված կարգի խախտման համար նախատեսված պատասխանատվության, նրա նկատմամբ հսկողություն իրականացնելու համար առկա տեխնիկական միջոցների, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու դեպքերի մասին տեղեկացնում է կալանավորված անձին կամ դատապարտյալին, որը հաստատվում է տվյալ անձի ստորագրությամբ, իսկ դրա մասին տեղեկանքը կցվում է նրա անձնական գործին: Կալանավորվածներին պահելու վայր ընդունվող կալանավորված անձը և ուղղիչ հիմնարկ ընդունվող դատապարտյալը ենթարկվում են նաև մատնադրոշմման և լուսանկարման: Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմն առանց քանակի սահմանափակման պարտավոր է ընդունել կալանավորված անձանց կամ դատապարտյալների կողմից ներկայացվող առաջարկությունները, դիմումներն ու բողոքներն ուղարկել հասցեատերերին՝ հանձնման պահից	

		հնարավորինս **նվազագույնի հասցվի այլ կալանավորված անձանց կամ դատապարտյալների հետ շփումը**: 9. Հղի կամ իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների համար նախատեսված խցերում կամ կացարաններում տեղադրվում են **միահարկ մահճակալներ**, յուրաքանչյուր երեխայի տրվում է մանկական մահճակալ, իսկ խցերը կամ կացարաններն ապահովվում են **տաք ջրով**: 10. Կալանավորված կամ դատապարտյալ կինը **ծննդաբերության նպատակով** պետք է փոխադրվի համապատասխան բաժանմունք ունեցող՝ կալանավորվածներին պահելու վայր կամ ուղղիչ հիմնարկ: Եթե դա հնարավոր չէ, ապա ծննդկանին կարող են տեղավորել կալանավորվածներին պահելու վայրին կամ ուղղիչ հիմնարկին առավել մոտ տեղակայված առողջապահական հաստատությունում՝ սահմանված կարգով ապահովելով համապատասխան հսկողություն: Կալանավորված անձին ծննդատուն տեղափոխելու դեպքում կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը դրա մասին տեղյակ է պահում քրեական գործի վարույթն իրականացնող մարմնին: 11. Հղի կանայք կամ մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձինք **սննդով և այլ պարագաներով ապահովվում են սահմանված** չափաբաժինների համաձայն: Բացի դրանից՝ պետք է ապահովվի մանկական սնունդ՝ առողջապահության համակարգի մանկական հաստատություններում գտնվող համապատասխան տարիքի երեխաների համար նախատեսված նորմերով: Մինչև 3 տարեկան երեխա ունեցող անձինք ստանում են երեխայի խնամքի համար անհրաժեշտ պարագաներ: 12. Երեխա ունեցող անձանց համար պետք է հատկացված լինի **զբոսանքի համար նախատեսված՝ կանաչապատված կամ խաղահրապարակ ունեցող բակ**: 13. Իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կալանավորված անձանց և դատապարտյալների ծանր հիվանդության, ինչպես նաև նրանց կողմից ծնողական պարտականությունների բարեխղճորեն չկատարման, երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի դրսևորման, ինչպես նաև կանոնակարգի պահանջների պարբերաբար խախտման դեպքերում կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմն իրավունք ունի **երեխային ժամանակավորապես ազգականներին կամ այլ անձանց հանձնելու կամ մանկական հաստատությունում տեղավորելու** մասին միջնորդություն ներկայացնելու դատարան: 14. Իր մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կալանավորված անձը կամ դատապարտյալը երեխային կարող է **ազգականներին կամ այլ անձանց հանձնել՝ սեփական նախաձեռնությամբ**: Ընդ որում, կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը պարտավոր է ամեն կերպ աջակցել նրան: 15. Երեխային ազգականներին հանձնելու համար անհրաժեշտ է կալանավորված անձից կամ դատապարտյալից ճշտել, թե ով կարող է իր վրա վերցնել երեխայի խնամքը: Եթե կալանավորված անձը կամ դատապարտյալն ազգականներ չունի, ապա կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ **երեխային ժամանակավորապես մանկական հաստատություն հանձնելու** համար: 16. Անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար նախատեսված խցերում կամ կացարաններում տեղադրվում են **միահարկ մահճակալներ**: 17. Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը պարտավոր է միջոցներ ձեռնարկել անչափահաս կալանավորված անձի կամ դատապարտյալի **ազատ ժամանակը նպատակաուղղված կազմակերպելու ուղղությամբ**: 18. Կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար նախատեսված **զբոսանքի վայրերը** պետք է հարմարեցված լինեն ֆիզիկական վարժությունների, զանազան խաղերով ու սպորտով զբաղվելու համար: 19. Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում կալանավորված անձանց կամ դատապարտյալների **հանրակրթությունը**, **նախնական մասնագիտական** (արհեստագործական), **մասնագիտական միջին** կրթությունը՝ պետության հաշվին կազմակերպելու համար: Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը կարող է կալանավորված անձանց կամ դատապարտյալների հանրակրթությունը, նախնական մասնագիտական (արհեստագործական), մասնագիտական միջին, բարձրագույն և հետբուհական կրթությունը կազմակերպել նաև ոչ նրանց հաշվին՝ համագործակցելով այլ կազմակերպությունների հետ: Կալանավորվածներին պահելու վայրերում կամ ուղղիչ հիմնարկներում կրթությունը կազմակերպվում և իրականացվում է պետական կրթական ծրագրերին համապատասխան: 20. Կալանավորված անձանց կամ դատապարտյալների մասնագիտական միջին, բարձրագույն և հետբուհական կրթությունն իրականացվում է **դրսեկության և հեռավար** ձևերով: Դրսեկության ձևով կարող են իրականացվել նաև կալանավորված անձի կամ դատապարտյալի հանրակրթությունը և նախնական մասնագիտական կրթությունը՝ բացառությամբ անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների: 21. Կալանավորված անձին կամ դատապարտյալին տեսակցություն տրամադրելու անհրաժեշտ պայման են հանդիսանում կալանավորված անձի կամ դատապարտյալի համաձայնությունը և տեսակցություն հայցող անձի դիմումին կցված՝ վերջինիս անձը հաստատող, իսկ երկարատև տեսակցության համար՝ նաև նախկինում համատեղ բնակվելու իրավունքը, ինչպես նաև երեխայի հետ կալանավորված անձի կամ դատապարտյալի արյունակցական կամ ազգակցական կապը հավաստող փաստաթղթերի առկայությունը: Կալանավորված անձի հետ միաժամանակ տեսակցել թույլատրվում է առավելագույնը երեք չափահաս և հինգ անչափահաս անձանց: Փակ, կիսափակ կամ կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալին կարճատև տեսակցություն կարող է թույլատրվել միաժամանակ երեքից ոչ ավելի, իսկ երկարատև տեսակցության դեպքում՝ երկուսից ոչ	հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմն իրեն հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Առաջարկությունների, դիմումների և բողոքների պատասխանները ստորագրությամբ հանձնվում են կալանավորված անձին կամ դատապարտյալին, իսկ նրա ցանկության դեպքում՝ կցվում նրա անձնական գործին: Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները կցվում են համապատասխանաբար կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական գործին: Կալանավորված անձի կամ դատապարտյալի առաջարկությունները, դիմումները և բողոքները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ուղարկելու հետ կապված ծախսերը կատարում է կալանավորված անձը կամ դատապարտյալը: Կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական հաշվում գումարի բացակայության դեպքում այդ ծախսերը կարող են կատարվել կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի հաշվին՝ կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետի թույլտվությամբ: Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչը կալանավորված անձից կամ դատապարտյալից վերցնելով նրա առաջարկությունները, դիմումները և բողոքները համապատասխան մատյանում կատարում է գրառում դրանք վերցնելու մասին, որի մասին ստորագրում է նաև կալանավորված անձը կամ դատապարտյալը:	

		ավելի չափահասների հետ, որոնց կարող են ուղեկցել դատապարտյալի անչափահաս եղբայրները, քույրերը, զավակները և թոռները: Բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալին կարճատև կամ երկարատև տեսակցություն տրամադրվում է առանց տեսակցողների թվի սահմանափակման: 22. Կալանավորվածներին պահելու վայրում և ուղղիչ հիմնարկում տեսակցության համար կահավորվում են հատուկ սենյակներ, որոնք հնարավորինս պետք է **հարմարեցված լինեն երեխաների ժամանցի** համար: 23. Կալանավորված անձին **կարճաժամկետ մեկնումներ** տրամադրվում են քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ: Քրեական վարույթն իրականացնող մարմինն իր որոշման մասին անհապաղ գրավոր հայտնում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին և կալանավորված անձին: Դատապարտյալներին կարճաժամկետ մեկնումներ տրամադրվում են ուղղիչ հիմնարկի պետի որոշմամբ: Ուղղիչ հիմնարկի պետն իր որոշման մասին անհապաղ գրավոր հայտնում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանմանը: **Անչափահաս** կալանավորված անձին կամ դատապարտյալին կարճաժամկետ մեկնումներ տրամադրվում են միայն ազգականի կամ այլ անձի ուղեկցությամբ: 24. Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի մանկատանը երեխա ունեցող, կերակրող մայր, հղի, նախածննդյան կամ հետծննդյան ժամանակահատվածում գտնվող կալանավորված անձը կամ դատապարտյալը **պատժախուց չի տեղափոխվում**:		
23.	**ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգում գործող ձերբակալված անձանց պահելու վայր** «ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգում գործող ձերբակալված անձանց պահելու վայրի ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 731-Ն, ընդունված է՝ 06.06.2007, ուժի մեջ է՝ 21.07.2007* ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգում ստեղծում է ձերբակալված անձանց պահելու վայր և հաստատում դրա ներքին կանոնակարգը:	1. Կարգավորվում է ձերբակալված անձանց՝ ձերբակալվածներին պահելու վայրում (ՁՊՎ) ընդունելու հիմքերն ու կարգը, ձերբակալվածների նյութակենցաղային ապահովումը, ձերբակալվածների սնունդը և նրանց կողմից սննդից հրաժարվելու դեպքում ձեռնարկվող միջոցները, ՁՊՎ-ի արգելանքի տակ պահվող անձանց վարքագծի կանոնները, ՁՊՎ-ի օրվա կարգացուցակը, ձերբակալվածների կողմից առաջարկություններ, դիմումներ և բողոքներ ներկայացվելու, պաշտպանի և մերձավոր ազգականի հետ տեսակցելու, հանձնելու ընդունելու և հանձնելու կարգը, ձերբակալվածների բացօթյա զբոսանքը, ՁՊՎ-ի ներքին անվտանգության ապահովումը, ՁՊՎ-ի շինարարության և սարքավորման առանձնահատկությունները, ՁՊՎ-ի արտակարգ իրավիճակի կանոնակարգը, ՁՊՎ-ի փախուստի ժամանակ իրականացվող միջոցառումները, հրդեհի դեպքում իրականացվող միջոցառումները, բնական և տեխնածին աղետների դեպքում իրականացվող միջոցառումները, ՁՊՎ-ի կանանց և անչափահասներին պահելու պայմանների առանձնահատկությունները, ՁՊՎ-ում պահվող ձերբակալվածների նյութական պատասխանատվությունը, քննչական գործողություններին ձերբակալվածների մասնակցության ապահովումը, ՁՊՎ-ում պահվող անձանց բուժսպասարկումը և հակահամաճարակային պայմանների ապահովումը, ձերբակալվածների՝ ՁՊՎ-ից ազատելու հիմքերը և կարգը: (Հավելված 1) 2. Մերձավոր ազգականների հետ **տեսակցություններն** անցկացվում են ՁՊՎ-ի ծառայողների հսկողությամբ: Ձերբակալվածի հետ միաժամանակ տեսակցել թույլատրվում է առավելագույնը երեք չափահաս և երեք անչափահաս անձանց, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել: Ձերբակալվածը նախօրոք տեղեկացվում է մերձավոր ազգականի հետ (հայր, մայր, ամուսին, կին, եղբայր, քույր, զավակներ, որդեգրողներ, որդեգրվածներ, հարազատ և ոչ հարազատ (համամայր, համահայր), եղբայր, քույր, տատ, պապ, թոռներ, ինչպես նաև ամուսնու ծնողներ) մինչև մեկ ժամ տևողությամբ առնվազն մեկ տեսակցության մասին: (Հավելված 1) 3. Մերձավոր ազգականի հետ տեսակցության ընթացքում զրույցը պետք է ընթանա **հսկիչին հասկանալի լեզվով**: Անհրաժեշտության դեպքում հրավիրվում է թարգմանիչ: (Հավելված 1) 4. Տեսակցության եկած անձանց, ինչպես նաև ձերբակալվածներին բացատրվում են նրանց **վարքագծի կանոնները** տեսակցության ընթացքում: Նրանք զգուշացվում են նաև կանոնակարգի պահանջները խախտելու դեպքում տեսակցությունը վաղաժամկետ դադարեցվելու մասին: Հսկիչի պահանջները չկատարելու դեպքում դրա մասին զեկուցվում է ՁՊՎ-ի հերթափոխի պետին: ՁՊՎ-ում տեսակցությունների համար կահավորվում են հատուկ սենյակներ: (Հավելված 1) 5. Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող կանայք ՁՊՎ-ում տեղավորվում են այնպես, որ **նվազագույնի հասցվի ՁՊՎ-ում պահվող այլ անձանց հետ շփումը**: Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող ձերբակալված կանանց համար նախատեսված խցերում տեղադրվում են միահարկ մահճակալներ, երեխային տրվում է մահճակալ, իսկ խցերն ապահովվում են տաք ջրով: (Հավելված 1) 6. Ձերբակալված կինը **ծննդաբերության** ժամանակ պետք է փոխադրվի առողջապահական հաստատություն՝ ապահովվելով համապատասխան հսկողությամբ: Ձերբակալվածին ծննդատուն տեղափոխելու դեպքում ՁՊՎ-ի պետը դրա մասին տեղյակ է պահում քրեական գործի վարույթն իրականացնող մարմնին և ձերբակալվածի հարազատներին: (Հավելված 1) 7. Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող կանայք **սննդով և այլ պարագաներով** ապահովվում են սահմանված **չափաբաժինների** համաձայն: (Հավելված 1) 8. Իրենց մոտ երեխա ունեցող ձերբակալված կանանց կողմից **հիվանդության, ծնողական պարտականությունները բարեխղճորեն չկատարելու, երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու**, ինչպես նաև **կանոնակարգի պահանջները պարբերաբար խախտելու** դեպքում ՁՊՎ-ի պետն իրավունք ունի **երեխային ժամանակավորապես ազգականներին կամ այլ անձանց հանձնելու,** կամ **մանկական հաստատությունում տեղավորելու**, ինչպես նաև **ծնողական իրավունքներից զրկելու** մասին միջնորդություն ներկայացնել դատարան: Իրենց մոտ երեխա ունեցող ձերբակալված կանայք երեխային կարող են ազգականներին կամ այլ անձանց հանձնել սեփական նախաձեռնությամբ: Ընդ որում, ՁՊՎ-ի պետը պարտավոր է ամեն կերպ աջակցել նրանց: Երեխային ազգականներին հանձնելու համար անհրաժեշտ է ձերբակալվածից	Կանոնակարգի պահանջների կատարումն ապահովելու պարտականությունները դրվում են **ՁՊՎ-ի պետի** վրա: (Հավելված 1) Ձերբակալվածներին ՁՊՎ ընդունելու հիմք են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կազմված ձերբակալման արձանագրությունը կամ ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը: Արձանագրության մեջ նշվում են ձերբակալման հիմքերը, շարժառիթները, դրա կազմման ժամը, օրը, ամիսը, տարին, վայրը և ձերբակալվածի տվյալները: Նշված փաստաթղթերը պետք է հաստատված լինեն համապատասխան պաշտոնատար անձանց ստորագրությամբ և կնիքով: ՁՊՎ չեն ընդունվում այն անձինք, որոնց վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ համապատասխան այլ փաստաթղթեր լրացված են խախտումներով: (Հավելված 1) Ձերբակալվածները ՁՊՎ ընդունվում են շուրջօրյա: ՁՊՎ-ի հերթափոխի պետը ստուգում է ձերբակալվածներին ընդունելու հիմքերը, ձերբակալվածներին ուղղված հարցերի միջոցով պարզում է ձերբակալման արձանագրության կամ որոշման մեջ նշված տվյալների իսկությունը, այնուհետև համապատասխան գրանցում է կատարվում ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման գրանցամատյանում և ձերբակալվածի անհատական քարտում: ՁՊՎ-ի ղեկավարությունը պարտավոր է ձերբակալվածին ՁՊՎ ընդունելու կամ մի հիմնարկից մյուսը տեղափոխելու մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 ժամվա ընթացքում տեղյակ պահել ձերբակալվածի մերձավոր ազգականներին կամ ձերբակալվածի կողմից նշված անձանց: ՁՊՎ բերված անձինք ենթարկվում են սանիտարական մշակման, վերցվում է մատնադրոշմը և լուսանկարում են: (Հավելված 1) Բուժզննության արդյունքները գրանցվում են ձերբակալվածների բուժզննության կամ բուժօգնության գրանցամատյանում, անձնական գործում և դրա մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին: (Հավելված 1) Յուրաքանչյուր ձերբակալվածի համար ՁՊՎ-ում կազմվում է ձերբակալվածի անձնական գործ,	

		ճշտել, թե ով կարող է իր վրա վերցնել երեխայի խնամքը: Եթե ձերբակալվածն ազգականներ չունի, ապա ՁՊՎ-ի պետը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ երեխային ժամանակավորապես մանկական հաստատություն հանձնելու համար: (Հավելված 1) 9. Անչափահաս ձերբակալվածների համար նախատեսված խցերում տեղադրվում են **միահարկ մահճակալներ**: (Հավելված 1) 10. ՁՊՎ-ում անչափահաս ձերբակալվածների համար նախատեսված զբոսանքի վայրերը պետք է հարմարեցված լինեն **ֆիզիկական վարժությունների և սպորտով զբաղվելու** համար: (Հավելված 1) 11. Անչափահասներին արգելանքից ազատելիս ՁՊՎ-ի ղեկավարությունն ազատման մասին նախօրոք հայտնում է նրանց մերձավոր ազգականներին կամ այլ անձանց: (Հավելված 1)	որում ներառվում են ձերբակալման և ազատման ամսաթվերը, անհատական քարտը, բերման ենթարկելու մասին արձանագրությունը, հագուստի և անձնական իրերի անվանացուցակի վերաբերյալ արձանագրությունը, նախկինում դատվածության մասին տեղեկանքը, խուզարկության արձանագրությունը, մատնադրոշմման տվյալները, հանձնուքի, տեսակցության դիմումները, անձնական հաշվի գումարի շարժը և ձերբակալվածին վերաբերող այլ փաստաթղթեր: Ձերբակալվածի անձնական կամ խցի խուզարկության ժամանակ առգրավման ենթակա առարկաներ հայտնաբերվելու դեպքում կազմվում է ձերբակալվածի անձնական կամ խցի խուզարկության արձանագրություն: Արձանագրությունն ստորագրվում է խուզարկություն կատարող անձի, խուզարկվողի և մասնակիցների կողմից: Խուզարկվողի կողմից արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում արձանագրությունում կատարվում է համապատասխան նշում: Արձանագրությունը կցվում է ձերբակալվածի անձնական գործին: Դրամը, արժեթղթերը և թանկարժեք իրերն ընդունելու մասին 2 օրինակից լրացվում է կտրոն, որի մեկ օրինակն ստորագրությամբ տրվում է ձերբակալվածին, իսկ երկրորդ օրինակը կցվում է նրա անձնական գործին: Անձնական խուզարկության ժամանակ առգրավված սննդամթերքը, դրամը, արժեթղթերը, թանկարժեք իրերն ու առարկաները, քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ կարող են փոխանցվել ձերբակալվածի հաշվին կամ ուղարկվել վերջինիս ազգականներին կամ այլ լիազորված անձանց: Ոգելից խմիչքները, գարեջուրը, խաղաթղթերը և այլ արժեք չներկայացնող արգելված առարկաներն ու իրերը ոչնչացվում են, որոնց մասին կազմվում է արձանագրություն: Ձերբակալվածի անձնական խուզարկությունից, իրերի զննությունից, բուժզննությունից և սանիտարական մշակումից հետո ՁՊՎ-ի հերթափոխի պետը ձերբակալվածին տեղեկացնում է նրա իրավունքների և պարտականությունների, ՁՊՎ-ի ներքին կանոնակարգի պահանջների և սահմանված կարգի խախտման համար նախատեսված պատասխանատվության, նրա նկատմամբ հսկողություն իրականացնելու համար առկա տեխնիկական միջոցների, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու հնարավոր դեպքերի մասին: Տեղեկացման փաստը հաստատվում է ստորագրությամբ ծանուցվելու վերաբերյալ տեղեկանքի վրա ձերբակալվածի ստորագրությամբ: Տեղեկանքը կցվում է նրա անձնական գործին: (Հավելված 1) ՁՊՎ-ի ծառայողներն ամենօրյա շրջագայության ընթացքում պարտավոր են ձերբակալվածներից ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր առաջարկություններ, դիմումներ և բողոքներ ընդունել: ՁՊՎ-ի անձնակազմին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները գրանցվում են ձերբակալվածներից վերցված առաջարկությունների, դիմումների և բողոքների մատյանում և զեկուցվում ՁՊՎ-ի պետին:	

			Վերջինս միջոցներ է ձեռնարկում դրանք լուծելու համար: Պետական իշխանության, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և հասարակական միավորումներին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքներն ուղարկվում են ՁՊՎ-ի ծառայողների, պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով: Քրեական հետապնդման մարմնի որոշումների և գործողությունների դեմ ուղղված բողոքները, ինչպես նաև ՁՊՎ-ի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունները, դիմումներն ու բողոքներն ուղարկվում են հասցեատիրոջը մեկ օրվա ընթացքում: ՁՊՎ-ի ծառայողների որոշումների ու գործողությունների վերաբերյալ ներկայացված առաջարկությունները, դիմումները և բողոքները չեն կասեցնում այդ որոշումների և գործողությունների կատարումը: Առաջարկությունների, դիմումների և բողոքների պատասխաններն անհապաղ, ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, ստորագրությամբ հայտնվում են ձերբակալվածներին և կցվում նրանց անձնական գործերին: Առաջարկությունների, դիմումների և բողոքների ուղարկման ծախսերը կատարվում են ուղարկողի հաշվին: Ձերբակալվածի անձնական հաշվում դրամի բացակայության դեպքում, ՀՀ տարածքում ծախսերը կատարվում են ՁՊՎ-ի հաշվին: Առաջարկությունների, դիմումների և բողոքների ընդունման ժամանակավոր դադարեցում կամ սահմանափակում չի թույլատրվում: Իրենց օրինական շահերի և իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներ, բողոքներ և առաջարկություններ ներկայացնող ձերբակալվածների նկատմամբ հետապնդումն արգելվում է: Հետապնդում իրականացնող պաշտոնատար անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն: (Հավելված 1) Ձերբակալվածին տեսակցություն թույլատրելու մասին ՁՊՎ-ի հերթափոխի պետը նշում է կատարում ձերբակալվածներին խցերից դուրս բերելու գրանցամատյանում: (Հավելված 1) Ձերբակալվածի՝ յուրաքանչյուր դուրսբերումը խցից կատարվում է ՁՊՎ-ի պետի կամ ՁՊՎ-ի հերթափոխի պետի գիտությամբ: Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու գրանցամատյանում նշվում են ձերբակալվածի տվյալները, երբ է խցից դուրս բերվել և երբ վերադարձվել: (Հավելված 1) Արգելանքից ազատված ձերբակալվածին հանձնում են անձնական փաստաթղթերը, թանկարժեք իրերը, դրամը, ինչպես նաև արգելանքի տակ գտնվելու ժամկետի և ազատման հիմքերի մասին տեղեկանք: Ձերբակալվածի ազատման մասին որոշումն ստանալու դեպքում ՁՊՎ-ի անձնակազմը պարտավոր է այն անհապաղ իրականացնել և դրա մասին նշում կատարել ձերբակալվածների գրանցամատյանում և անհատական քարտում: (Հավելված 1)	

24.	**ՀՀ տարածքում հատուկ կացարան** «ՀՀ տարածքում հատուկ կացարանի գործունեության և ձերբակալված օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 872-Ն, ընդունված է՝ 10.07.2008, ուժի մեջ է՝ 01.01.2010* Սահմանում է ՀՀ տարածքում հատուկ կացարանի գործունեության և ձերբակալված օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետին հանձնարարական է տալիս:	1. Սահմանում է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում արտաքսման նպատակով ձերբակալված օտարերկրացիներին հատուկ կացարան ընդունելու և կացարանում պահելու հետ կապված հարաբերությունները: (Կետ 1) 2. Կացարանը կազմավորվում և գործում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կառուցվածքում: Կացարանի աշխատանքներն իրականացվում են շուրջօրյա՝ կացարանի պետի կողմից հաստատված հերթապահության ժամանակացույցին համապատասխան: (Կետ 2) 3. Ձերբակալվածներին պահելու համար կացարանում ստեղծվում են՝ տղամարդկանց, կանանց և անչափահասներին իրարից առանձին պահելու սենյակներ, ընտանիքների համար նախատեսված **սենյակներ**: (Կետ 11) 4. Հղի և հաշմանդամ ձերբակալվածների համար ստեղծվում են **բարելավված նյութակենցաղային պայմաններ**, հատկացվում են լրացուցիչ **անվճար սնունդ** և **առաջին անհրաժեշտության** այլ կենցաղային պարագաներ: (Կետ 14)	Կացարանի հերթապահն ստուգում է ձերբակալվածներին ընդունելու և կացարանում պահելու հիմքերը, ձերբակալվածի տվյալները գրանցում կացարանում պահվող ձերբակալվածների հաշվառման գրանցամատյանում: Կացարանում կազմվում է ձերբակալվածի անձնական գործ: Անձնական գործում նշվում են ձերբակալվածի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամիսը, ամսաթիվը և տարեթիվը, ծննդյան վայրը, քաղաքացիությունը, ձերբակալման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ժամը, ձերբակալման հիմքը: Անձնական գործին կցվում են ձերբակալվածի վերաբերյալ դատարանի կայացրած որոշումների, ձերբակալվածի առաջարկությունների, դիմումների և բողոքների պատասխանների պատճենները, կացարանից ձերբակալվածի ազատման վերաբերյալ կացարանի պետի որոշումը: Ոստիկանությունը ձերբակալման մասին ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով տեղեկացնում է ձերբակալվածի ծագման պետության դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին, կամ տվյալ պետության շահերը ներկայացնող այլ պետության դիվանագիտական ներկայացուցչությանը և (կամ) ձերբակալվածի՝ ՀՀ-ում գտնվող մերձավոր ազգականներին: Ձերբակալվածներն իրենց գրավոր առաջարկությունները, դիմումները և բողոքները հանձնում են կացարանի ծառայողներին: Կացարանի վարչակազմին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները գրանցվում են կացարանում պահվող ձերբակալվածների առաջարկների, դիմումների և բողոքների գրանցամատյանում և զեկուցվում կացարանի պետին: Կացարանի պետը միջոցներ է ձեռնարկում դրանք լուծելու համար: (Կետ 23) Պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և հասարակական կազմակերպություններին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում են հասցեատիրոջը: (Կետ 24) Կացարանի վարչակազմի որոշումների ու գործողությունների վերաբերյալ ներկայացված առաջարկությունները, դիմումները և բողոքները չեն կասեցնում այդ որոշումների և գործողությունների կատարումը: (Կետ 25) Առաջարկությունները, դիմումները և բողոքները հասցեատերերին ուղարկվում են անվճար: (Կետ 26) Առաջարկությունների, դիմումների և բողոքների պատասխաններն ստորագրությամբ հանձնվում են ձերբակալվածներին, իսկ դրանց պատճենները կցվում են նրանց անձնական գործերին: (Կետ 27)	**Սենյակները** պետք է ունենան մեկ անձի համար նախատեսված նվազագույնը 4 քառ. մետր բնակելի մակերես: (Կետ 12) Սենյակները ապահովվում են սեղանով, աթոռներով, մահճակալով, կենցաղային իրերի կողպահարանով, զգեստապահարանով, հեռուստացույցով, սանհանգույցով, ցնցուղով, անկողնային պարագաներով, սրբիչով, սենյակը մաքրելու պիտույքներով, կենցաղում օգտագործվող այլ առարկաներով (օճառ, հիգիենիկ թուղթ, ավել, գոգաթիակ): Ձերբակալվածներն անձնական հիգիենայի համար ապահովվում են նաև տաք ջրով, սենյակում ցնցուղի բացակայության դեպքում՝ լողարանում լողանալու հնարավորությամբ՝ ըստ սահմանված ժամանակացույցի: Սենյակներում օդի նվազագույն ջերմաստիճանը պետք է լինի +180C: Կացարանում պետք է լինեն լվացքատուն և ձերբակալվածների փափուկ գույքի (վերմակ, ներքնակ, բարձ), վերնահագուստների, իրերի ախտահանման խցիկ: (Կետ 13) Կացարանի զբոսաբակերը պետք է ապահովված լինեն մարմնամարզությամբ զբաղվելու համար նախատեսված անհրաժեշտ սարքավորումներով: (Կետ 19)
25.	**ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն**	1. Սոցիալական ապահովության պետական ծառայությունը ՀՀ ԱՍՀՆ կառավարման ոլորտում գործող **պետական մարմին** է, որը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով մատուցում է **ծառայություններ** սոցիալական ապահովության բնագավառում: (Կետ 1)	**Ծառայությունը կառավարում է ծառայության պետը**, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ վարչապետը՝ ՀՀ ԱՍՀ նախարարի ներկայացմամբ: Պետը միաժամանակ կարող է	**Կառուցվածքային ստորաբաժանումներ** Իրավական ապահովման և դատական գործերի վարչություն, Տեղեկատվական տեխնոլոգիաների

	««ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ» պետական հիմնարկը վերակազմակերպելու և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1531-Ն, ընդունված է՝ 27.12.2007, ուժի մեջ է՝ 17.01.2008* «ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ» պետական հիմնարկը վերակազմակերպում է ՀՀ ԱՍՀՆ կառավարման ոլորտում գործող «Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի, սոցիալական ապահովության պետական ծառայությանը վերապահում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 5-7-րդ, 9-15-րդ կետերով, «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասով, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կենսաթոշակային ապահովության ոլորտում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի իրավասությունները, հաստատում է սոցիալական ապահովության պետական ծառայության կանոնադրությունը և կառուցվածքը, սահմանում է ծառայության աշխատակազմի՝ կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքային միավորների քանակը, հանձնարարություններ է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին:	2. Ծառայության **նպատակները և խնդիրներն** են՝ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի ձևավորման և վարման, ինչպես նաև ՀՀ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով նախատեսված՝ սոցիալական ապահովության ծրագրերի ֆինանսավորման համար հատկացված միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործման ապահովումը, կենսաթոշակների, ժամանակավոր անաշխատունակության նպաստների, պատվովճարի, դրամական օգնության և ծառայության միջոցով վճարվող սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների նշանակման և վճարման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման ապահովումը: 3. Ծառայությունը, մասնավորապես, իրականացնում է հետևյալ **գործառույթները**՝ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի, ժամանակավոր անաշխատունակության նպաստների, մայրության նպաստի, երեխայի ծննդյան միանվագ նպաստի, պատվովճարի, նշանակումը և վճարումը, այդ թվում՝ ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով, պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ներառված տվյալների տրամադրումը գործատուներին, ֆիզիկական անձանց և պետական մարմիններին ու կազմակերպություններին, սոցիալական ապահովության ծրագրերի գծով կանխատեսվող ծախսերի հաշվարկման և սոցիալական պաշտպանության բնագավառի զարգացման և ռազմավարական ծրագրերի մշակման համար ՀՀ ԱՍՀՆ անհրաժեշտ տեղեկատվություն և առաջարկություններ ներկայացնելը, կազմակերպությունների, քաղաքացիների դիմումներին և բողոքներին՝ օրենքով սահմանված ժամկետում և կարգով ընթացք տալը, դրանցում հաղորդվող՝ ծառայության գործունեության մեջ տեղ գտած խախտումների և թերությունների վերացման համար միջոցների ձեռնարկումը, գործատուների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից կենսաթոշակի նշանակման և վճարման համար ներկայացված փաստաթղթերի հավաստիության՝ օրենքով սահմանված կարգով ստուգումների իրականացումը: (Կետ 7)	նշանակվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ: Պետը հաշվետու է ՀՀ վարչապետին և նախարարին: **Պետը**, մասնավորապես՝ լսում և նախարարի միջոցով ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում ծառայության աշխատակազմի գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, քննում դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում ծառայության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները, վերահսկողություն է իրականացնում ծառայության աշխատակազմին ամրացված պետական սեփականության պահպանության ու օտարման նկատմամբ, ստեղծում է խորհրդակցական մարմիններ: (Կետ 13) **Պետի տեղակալը**, մասնավորապես՝ համակարգում է ծառայության համակարգի աշխատանքները՝ ծառայությանը վերապահված քաղաքականության իրականացման՝ իրեն հանձնարարված բնագավառում, պետի հանձնարարությամբ իրականացնում է պետի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները, համակարգում է իրեն հանձնարարված ոլորտներում ծառայության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ու հիմնարկների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը, իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ, պարբերաբար պետին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված ոլորտներում տիրող իրավիճակի մասին, ապահովում է իրեն հանձնարարված ոլորտներում պետի հրամանների և ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում պետին. (Կետ 15) Ծառայության աշխատակազմը ղեկավարում է ծառայության աշխատակազմի ղեկավարը: (Կետ 35) Ծառայության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: (Կետ 45)	և ռիսկերի կառավարման վարչություն, Ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչություն, Կենսաթոշակային ապահովության, նպաստների և դրամական այլ վճարների վարչություն, Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն, Հասարակայնության հետ կապերի բաժին, Անձնակազմի կառավարման բաժին, Տնտեսական բաժին, Ներքին աուդիտի բաժին **Տարածքային ստորաբաժանումներ** Արաբկիրի ՍԱՏԲ, Դավթաշենի ՍԱՏԲ, Քանաքեռ-Զեյթունի ՍԱՏԲ, Էրեբունի-Նուբարաշենի ՍԱՏԲ, Ավանի և Նոր Նորքի ՍԱՏԲ, «Կենտրոն-1» ՍԱՏԲ, «Կենտրոն-2» ՍԱՏԲ, Մաշտոցի ՍԱՏԲ, Մալաթիա-Սեբաստիայի ՍԱՏԲ, Շենգավիթի ՍԱՏԲ, Աշտարակի ՍԱՏԲ, Ապարանի ՍԱՏԲ, Արագածի ՍԱՏԲ, Թալինի ՍԱՏԲ, Արտաշատի ՍԱՏԲ, Արարատի ՍԱՏԲ, Մասիսի ՍԱՏԲ, Արմավիրի ՍԱՏԲ, Բաղրամյանի ՍԱՏԲ, Էջմիածնի ՍԱՏԲ, Գավառի ՍԱՏԲ, Ճամբարակի ՍԱՏԲ, Մարտունու ՍԱՏԲ, Սևանի ՍԱՏԲ, Վարդենիսի ՍԱՏԲ, Վանաձորի ՍԱՏԲ, Թումանյանի ՍԱՏԲ, Սպիտակի ՍԱՏԲ, Ստեփանավանի ՍԱՏԲ, Տաշիրի ՍԱՏԲ, Հրազդանի ՍԱՏԲ, Չարենցավանի ՍԱՏԲ, Կոտայքի ՍԱՏԲ, Եղվարդի ՍԱՏԲ, Գյումրու ՍԱՏԲ, Ամասիայի ՍԱՏԲ, Ախուրյանի ՍԱՏԲ, Մարալիկի ՍԱՏԲ, Աշոցքի ՍԱՏԲ, Արթիկի ՍԱՏԲ, Կապանի ՍԱՏԲ, Գորիսի ՍԱՏԲ, Մեղրու ՍԱՏԲ, Սիսիանի ՍԱՏԲ, Իջևանի ՍԱՏԲ, Դիլիջանի ՍԱՏԲ, Նոյեմբերյանի ՍԱՏԲ, Տավուշի ՍԱՏԲ, Եղեգնաձորի ՍԱՏԲ, Ջերմուկի ՍԱՏԲ, Վայքի ՍԱՏԲ
26.	**Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ** «ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և	1. Չափորոշիչները կիրառվում են ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից: 2. Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն անձնակազմին և այցելուներին ապահովում է հետևյալ **տեղեկատվությամբ**՝ մանկատան կանոնադրական նպատակների, խնդիրների, գործառույթների, անձնակազմի աշխատանքային առանձնահատկությունները սահմանող և աշխատողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորող աշխատանքային կարգապահական ներքին կանոնների, ինչպես նաև գտնվելու վայրի (հասցե), հեռախոսահամարների, էլեկտրոնային փոստի, տեղեկատվության համար	Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է երեխայի և նրա շահերից հանդես եկող անձանց (ծնողական իրավունքից չզրկված ծնողներ կամ օրինական ներկայացուցիչներ, հարազատներ)՝ մանկատան անձնակազմի անօրինական գործողությունները **բողոքարկելու** իրավունքի	Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը պետք է ապահովված լինի **կապի անհրաժեշտ միջոցներով**, ինչպես նաև **հանդիպումների առանձնասենյակով**: (Չափորոշիչ XVII) Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն

	երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1324-Ն, ընդունված է՝ 05.08.2004, ուժի մեջ է՝ 23.10.2004* «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին է ճանաչում ՀՀ ԱՍՀՆ-ն, հաստատում է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները, հանձնարարական է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին: *Նաև՝* «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1324-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1454-Ն, ընդունված է՝ 08.09.2005, ուժի մեջ է՝ 29.09.2005*	պատասխանատու պաշտոնատար անձի (անունը, ազգանունը, պաշտոնը) մասին, մանկատան գործունեության, այդ թվում՝ մանկատան հիմնադրման, նրա պատմության, ավանդույթների, հիշարժան իրադարձությունների, անձնակազմի, մանկատանը խնամվող երեխաների խնամքի ու դաստիարակության իրականացման առանձնահատկությունների, այլ կազմակերպությունների և առանձին բարերարների կողմից ցուցաբերվող աջակցության ու համագործակցության մասին: Հաստատությունը երեխաներին ապահովում է կարևոր տեղեկատվությամբ՝ մատուցվող ծառայությունների, շենքի պայմանների, հատուկ դեպքերում տարահանման հնարավորությունների, մանկատանը հարող տարածքի, արտակարգ իրավիճակներում ժամանակին օգնություն ցուցաբերելու, պաշտպանելու և այլնի մասին՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները: (Չափորոշիչ I) 3. Հաստատությունն ապահովում է երեխայի **անվտանգությունը** և երեխայի **պաշտպանությունը**՝ հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, այդ թվում՝ սեռական շահագործումից և այլասերումից, դաժան վերաբերմունքից, աշխատանքի շահագործումից, հանցագործություններից, անուշադրությունից և անարդարությունից, առողջությունը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից: (Չափորոշիչ II) 4. Հաստատությունը տրամադրում է հարմարավետ, անվտանգ, հուսալի ավտոտրանսպորտային միջոցներ՝ երեխաների **փոխադրումները կազմակերպելու** համար: (Չափորոշիչ II) 5. Հաստատությունն ապահովում է նոր ընդունված երեխայի **ծանոթությունը մանկատան անձնակազմի և խնամվող երեխաների հետ**: Երեխային թույլատրվում է իր հետ բերել շրջապատի համար վտանգ չներկայացնող **իրեր** և **ընտանի կենդանիներ**, եթե մանկատան պայմանները թույլ են տալիս: Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է երեխայի անձնական **թանկարժեք իրերի պահպանությունը**: Երեխայի **ինտեգրումը** մանկատանն ապահովվում է հաշվի առնելով նրա նոր սոցիալական միջավայրին հարմարվելու անհատական առանձնահատկությունները, հատուկ ուշադրություն դարձնելով հաշմանդամ երեխայի միջավայրին հարմարվելու, նրան անկախ և ինքնուրույն դարձնելու ուղղությամբ տարվող աշխատանքներին: Մանկատանը երեխաների խնամքն ու նրանց հետ աշխատանքն իրականացվում են սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրին համապատասխան: Մանկատանը գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագիրը մշակում, իրականացնում և պարբերաբար վերանայում են մանկատան համապատասխան աշխատողները (մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող, բժիշկ): Ծնողական իրավունքներից չզրկված ծնող (ծնողներ) կամ օրինական ներկայացուցիչներ կամ հարազատներ ունեցող երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագիրը կազմելիս՝ հաշվի է առնվում նրանց կարծիքը: (Չափորոշիչ III) 6. Մանկատունը կազմակերպում է երեխայի **խնամքը** մանկատանը գտնվելու ամբողջ ժամանակահատվածում՝ մինչև նրա չափահաս դառնալը կամ մինչև երեխային հարազատ ընտանիք վերադարձնելը կամ այլընտրանքային ընտանիքում (որդեգրողի, խնամատարի, խնամակալի, հոգաբարձուի) տեղավորելը՝ ապահովելով խնամքի շարունակականության սկզբունքը, ստեղծելով հնարավորինս ընտանեկանին մոտ պայմաններ և առաջնորդվելով անհատական մոտեցմամբ: (Չափորոշիչ IV) 7. Մանկատանը երեխան ապահովվում է առողջ, անհրաժեշտ քանակի և տարիքին համապատասխան **սննդով**: Հաստատությունը՝ բժշկի ցուցումով, ապահովում է անհատական մոտեցում հիվանդ, թերսնվող և գերսնվող երեխաների նկատմամբ: (Չափորոշիչ V) 8. Մանկատունը և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունը երեխային ապահովում է **հագուստով** և **անձնական օգտագործման պարագաներով**՝ ելնելով երեխայի տարիքային առանձնահատկություններից: 6 տարին լրացած երեխան մանկատան տվյալ տարվա համար սահմանված բյուջեի սահմաններում կարող է մասնակցել իր հագուստի և անձնական օգտագործման պարագաների ընտրությանը: (Չափորոշիչ VI) 9. Հաստատությունն ապահովում է առանձնացված պայմաններում երեխաների **նեղ անձնական պահանջմունքները, կարիքները** (**անձնական հիգիենա**) ինքնուրույն բավարարելու հնարավորությունը, անհրաժեշտության դեպքում՝ աշխատողների օգնությամբ: (Չափորոշիչ VII) 10. Մանկատունը դպրոցում սովորող երեխային ապահովում է **անձնական մանր ծախսեր** կատարելու համար անհրաժեշտ գումարով, սովորեցնում է խելամիտ և արդյունավետ օգտագործել ունեցած գումարը: Անձնական մանր ծախսերի համար՝ 7-12 տարեկան երեխաներին տրվում է ամսական 2 հազ. դրամ, 13-18 տարեկան երեխաներին տրվում է ամսական 3 հազ. դրամ: Պետական մանկատներում խնամվող երեխայի անձնական մանր ծախսերի համար նախատեսված գումարը տրամադրվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ ոչ պետական մանկատներում խնամվող երեխայի անձնական մանր ծախսերի համար նախատեսված գումարները տրամադրվում են տվյալ մանկատան սեփական միջոցների հաշվին: (Չափորոշիչ VIII) 11. Հաստատությունը երեխային ապահովում է կյանքի համար անվտանգ, սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան **բնակելի տարածությամբ**՝ հաշվի առնելով նրա սեռը, տարիքը և առողջական վիճակը: Հաստատությունը պետք է ունենա տարահանման պլան, մանկատան անձնակազմը պետք է անցնի քաղաքացիական պաշտպանության ուսուցում՝ արտակարգ իրավիճակներում համապատասխան կերպով գործելու նպատակով՝ առանձնակի ուշադրություն դարձնելով հաշմանդամ երեխաների տարահանման նախապատրաստմանը: Մանկատան տարածքը պետք է ապահովված լինի հրդեհից փրկվելու համար նախատեսված հատուկ ելքերով, ազդանշանային համակարգով և հակահրդեհային համապատասխան սարքավորումներով: Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը պետք է կառուցված լինի առողջության համար անվտանգ շրջակա միջավայրում: Հաստատությունը պետք է ունենա	իրացումը, սահմանում է բողոքարկման ներքին կարգ և պահում հատուկ արկղ՝ **բողոքների և առաջարկությունների** համար: Երեխայի շահերից հանդես եկող անձանց (ծնողական իրավունքից չզրկված ծնողներ կամ օրինական ներկայացուցիչներ, հարազատներ)՝ մանկատան անձնակազմի անօրինական գործողությունները բողոքարկելու դեպքում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն իրականացնում է երեխայի իրավունքի պաշտպանության համարժեք միջոցառումներ: (Չափորոշիչ II) Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը պետք է ունենա երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության **կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման** և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին **հաղորդումների գրանցամատյան**: (Չափորոշիչ II) Մանկատանը յուրաքանչյուր երեխայի համար լրացվում է երեխայի **բժշկական քարտ**: (Չափորոշիչ X)	աշխատակազմի յուրաքանչյուր աշխատողի համար ապահովում է մանկատան ղեկավարի կողմից հաստատված՝ չափորոշիչներին համապատասխանող **աշխատանքի նկարագիրը**: (Չափորոշիչ XXI) Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է երեխաների հետ անմիջական աշխատողների **պարբերական մասնագիտական վերապատրաստումը** և **բժշկական ստուգումը**: (Չափորոշիչ XXI)

		երեխաների տարիքային խմբերի առանձնահատկություններին համապատասխանող անվտանգ և բարեկարգ խաղահրապարակներ: (Չափորոշիչ IX) 12. Հաստատությունը պետք է ապահովված լինի առաջին **բժշկական օգնության ծառայությամբ և բժշկական սարքավորումներով**: Ֆիզիկական և մտավոր զարգացման շեղումներ ունեցող երեխաների՝ հատուկ մասնագիտացված երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը պետք է ապահովված լինի հոգեբանական, կանխարգելիչ, դեղորայքային, վերականգնողական ծառայություններով: Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է երեխայի **առողջ ապրելակերպի** (սնունդ, ֆիզկուլտուրա և սպորտ, անձնական հիգիենա, ազատ ժամանց) համար անհրաժեշտ պայմաններ: Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը երեխային ապահովում է սեռական հասունացման, անվտանգ սեռական կյանքի, ինչպես նաև ալկոհոլամոլության, թմրամոլության և թունամոլության բացասական հետևանքների մասին **խորհրդատվությամբ**: Յուրաքանչյուր երեխա համապատասխան բժշկական հաստատության կողմից ենթարկվում է բազմամասնագիտական բժշկական հետազոտման՝ համաձայն անհատական ցուցումների: Մանկատան բուժօգնության կազմակերպման գործընթացի մեթոդական և խորհրդատվական օգնությունն իրականացնում է տվյալ մանկատան տարածքն սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունը: (Չափորոշիչ X) 13. Հաստատությունն ապահովում է երեխայի **բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը**՝ հաշվի առնելով նրա հոգեկան, սեռատարիքային, ազգային և էթնիկական առանձնահատկությունները, անձի նախասիրությունները, հետաքրքրությունները, ընդունակություններն ու պահանջմունքները: Մանկատունը և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունն ապահովում է երեխայի **հանրակրթությունը**, որպես կանոն, համայնքի հանրակրթական դպրոցներում, անհրաժեշտության դեպքում՝ տեղավորում հատուկ հանրակրթական դպրոցներում: Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է երեխայի, նրա ծնողական իրավունքից չզրկված ծնողների կամ օրինական ներկայացուցիչների կամ հարազատների (նրանց առկայության դեպքում) **մասնակցությունը** երեխայի կրթության հարցերին վերաբերող որոշումների ընդունման գործընթացին: Մանկատանը մշակվում և իրականացվում է երեխայի **անձի զարգացման հատուկ ծրագիր**, որում նախատեսվում են անհատական պարապմունքներ, տնային հանձնարարությունների կատարում, ընթերցանություն, ակտիվ խաղեր, մասնագիտական կողմնորոշում, մանկատան տնտեսական (սննդի պատրաստում և ընտրություն, սանիտարական մաքրություն և այլն) աշխատանքներին և լրացուցիչ, արտադասարանային խմբակներին (սպորտային, գեղարվեստական, տեխնիկական) մասնակցություն՝ ըստ երեխայի հակումների, հետաքրքրությունների, որոնք կարող են կազմակերպվել ինչպես մանկատան ներսում, այնպես էլ մանկատնից դուրս: (Չափորոշիչ XI) 14. Հաստատությունն ապահովում է երեխայի ներգրավումն իր **ազատ ժամանցի**՝ զբաղմունքի տեսակների **ընտրությանը և պլանավորմանը**, ապահովում է երեխաների **մասնակցությունն էքսկուրսիաներին, սպորտային և մշակութային միջոցառումներին**: (Չափորոշիչ XII) 15. Հաստատությունն ապահովում է երեխայի **ազգային պատկանելության գիտակցության** ձևավորումը՝ ազգային ավանդույթների, սովորույթների, ծեսերի և ծիսակատարությունների իմացությունը: Հաստատությունն ապահովում է երեխայի՝ **ընտանիքին պատկանելության գիտակցության** ձևավորումը, **սեռային դերերի գիտակցումը**, նպաստում է երեխայի մարդասիրական **արժեքների ձևավորմանը**, նրա **մտքի և խղճի ազատության պահպանմանը**: (Չափորոշիչ XIII) 16. Հաստատությունն ապահովում է երեխայի **ինքնուրույնության, անկախության և սեփական արժանապատվության գիտակցության** ձևավորումը՝ հիմնված փոխադարձ հարգանքի, վստահության բարյացակամության, փոխօգնության և համագործակցության վրա: Հաստատությունն ապահովում է երեխայի **ինքնաճանաչմանը**, **ինքնագիտակցության զարգացմանը** և **ինքնահաստատմանը** նպաստող մոտեցումներ: (Չափորոշիչ XIV) 17. Անհրաժեշտության դեպքում հետևողական աշխատանք է տանում երեխաների **օրինավոր վարքագծի** ձևավորման համար: Մանկատանն **անհնազանդ, անկառավարելի երեխայի** նկատմամբ կիրառվում է համապատասխան մանկավարժական մոտեցում՝ մեթոդներ, հնարներ՝ հաշվի առնելով նրա տարիքը և զարգացման աստիճանը: **Արգելվում է որևէ պատժամիջոցի** (ներառյալ նաև սննդի, հանգստի և անձնական հիգիենայի պայմանների, ծնողական իրավունքից չզրկված ծնողների, օրինական ներկայացուցիչների, հարազատների հետ տեսակցության սահմանափակումների) կիրառումը: Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունը երեխայի ծնողներին կամ նրա օրինական ներկայացուցիչներին (նրանց առկայության դեպքում) 24 ժամվա ընթացքում **տեղեկացնում** է երեխայի կատարած իրավախախտումների և նրա նկատմամբ իրավասու մարմինների կիրառած պատասխանատվության միջոցների մասին: (Չափորոշիչ XIV) 18. Մանկատան ղեկավարությունը հաստատությունն **ինքնակամ լքելու** (երբ անհայտ է երեխայի գտնվելու վայրը) և անհարգելի բացակայության (երբ երեխան գնացել է տուն և ժամանակին չի վերադարձել) դեպքերում **ահազանգում** է նրա ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին (նրանց առկայության դեպքում) և ոստիկանության համապատասխան մարմիններին: (Չափորոշիչ XIV) 19. Հաստատությունն անձնակազմին, ծնողական իրավունքից չզրկված ծնողներին և երեխաներին ապահովում է **հոգեբանական խորհրդատվությամբ**՝ նրանց միջանձնային հարաբերությունները շտկելու, հարթելու համար: (Չափորոշիչ XIV) 20. Հաստատությունն ապահովում է երեխայի **կապն ընտանիքի և հարազատների հետ**: Երեխայի խնամքը, նրա սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագիրը, ընտանիքի հետ հարաբերությունները		

		պլանավորվում, կազմակերպվում և իրականացվում են՝ ելնելով երեխայի շահերից: Հաստատությունն ապահովում է երեխայի **կապն ընկերների, շրջապատի հետ**, եթե դա բխում է նրա շահերից: (Չափորոշիչ XV) 21. Հաստատությունն ապահովում է ծնողական իրավունքից չզրկված ծնողների, օրինական ներկայացուցիչների կամ հարազատների **տեսակցությունը** երեխայի հետ, **բացառությամբ** այն դեպքերի, երբ ծնողները, օրինական ներկայացուցիչները կամ հարազատները գտնվում են ոչ սթափ կամ հակահիգիենիկ վիճակում: (Չափորոշիչ XVI) 22. Մանկատունը և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունը **շրջանավարտի** համար կազմում է նրա **հետագա կյանքի անհատական զարգացման** ծրագիրը: (Չափորոշիչ XVIII) Մանկատունը և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունն ապահովում է 14-18 տարեկան երեխաների **մասնագիտական կողմնորոշումը**, աջակցումը նրանց աշխատանքի տեղավորմանը՝ համագործակցելով զբաղվածության տարածքային մարմինների և գործատուների հետ: Մանկատունը և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունը շրջանավարտին տրամադրում է **տեղեկատվություն** սոցիալական աջակցություն տրամադրող կառույցների մասին (սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ, զբաղվածության կենտրոններ, հասարակական կազմակերպություններ և այլն): (Չափորոշիչ XIX) 23. Մանկատունը մանկատնից դուրս գրվող շրջանավարտներին կամ հարազատ ընտանիք վերադարձող, որդեգրվող, խնամակալության (հոգաբարձության), խնամատար ընտանիք հանձնվող բոլոր երեխաներին ապահովում է **համապատասխան փաստաթղթերով** (ծննդյան վկայական/անձնագիր, բժշկական քարտ, կերակրողին կորցնելու կենսաթոշակի իրավունք ունեցող երեխային՝ երեխայի անձնական հաշվում կուտակված կենսաթոշակի գումարի չափի մասին տեղեկանք, ինչպես նաև նրա գույքային իրավունքները հավաստող փաստաթղթեր՝ եթե այդպիսիք կան): Մանկատան շրջանավարտներին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հատկացվում է **միանվագ դրամական օգնություն**՝ 50.000 դրամի չափով: (Չափորոշիչ XX)		
27.	**ՀՀ-ում թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողով** «ՀՀ-ում թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 725-Ն, ընդունված է՝ 13.05.2004, ուժի մեջ է՝ 17.06.2004* Հաստատում է ՀՀ-ում թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգը, փոփոխություններ է կատարում ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության ու ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» N 1714-Ն որոշման մեջ:	1. Կարգավորում է ՀՀ-ում թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության կազմակերպման, ՀՀ-ում թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման, դրանց նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև այդ գործում ՀՀ պետական լիազորված մարմինների ու կազմակերպությունների փոխհամագործակցության հետ կապված հարցերը: (Կետ 1) 2. Հանձնաժողովի հիմնական խնդիրները, մասնավորապես, ներառում են անչափահասների ու երիտասարդության շրջանում թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման ու թմրամոլության կանխման հարցերով նպատակային **քարոզչական աշխատանքի** կազմակերպումը: (Կետ 4) 3. Հանձնաժողովը, մասնավորապես, քննարկում է անչափահասների ու երիտասարդության շրջանում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության նվազեցման ու կանխման ուղղությամբ **ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող միջոցառումների** հետ կապված հարցերը և ընդունում համապատասխան որոշումներ: (Կետ 5)	Հանձնաժողովը, ելնելով իր աշխատանքների գործառական ուղղվածությունից, մշակում է միջոցառումների գերատեսչական ծրագրեր, ղեկավարվելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի 52-54-րդ հոդվածներով՝ յուրաքանչյուր տարի մինչև նոյեմբերի 1-ը կազմում ու ՀՀ կառավարություն է ներկայացնում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տարեկան ծրագիր, որի կատարման մասին մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը հաշվետվություն է ներկայացնում ՀՀ կառավարություն: (Կետ 3) Հանձնաժողովը քննարկում է ՀՀ նախարարությունների ու պետական կառավարման այլ մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման ուղղությամբ իրականացված միջոցառումների մասին հաղորդումները և ընդունում համապատասխան որոշումներ (Կետ 5) Հանձնաժողովը քննարկում և հաստատում է հանձնաժողովի աշխատանքային պլանները, փոփոխություններ ու լրացումներ է կատարում դրանցում, լսում հանձնաժողովի անդամների հաշվետվությունները նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի մասին, ուսումնասիրում ու տարածում է թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման ուղղությամբ ՀՀ նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կատարած աշխատանքի դրական փորձը: (Կետ 5) Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրների իրականացման նպատակով իրավունք ունի ՀՀ նախարարություններից, պետական	Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպելու նպատակով, անհրաժեշտության դեպքում, ստեղծում է ժամանակավոր աշխատանքային խմբեր: (Կետ 7) Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են անվճար: (Կետ 13) Հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական ապահովումն իրականացնում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը: (Կետ 16) **Հանձնաժողովի նախագահ**՝ ՀՀ ոստիկանության պետ **Հանձնաժողովի անդամներ՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման ոլորտն սպասարկող**. ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ, ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ, ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, Երևանի քաղաքապետի տեղակալ, ՀՀ կառավարության աշխատակազմի պետահիրավական վարչության ներկայացուցիչ

	Նաև՝ «Հայաստանի Հանրապետության թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության ու ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1714-Ն, ընդունված է՝ 27.11.2003, ուժի մեջ է՝ 22.01.2004*		կառավարման այլ մարմիններից պահանջելու թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման հարցերին առնչվող նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ և հաղորդումներ: Հանձնաժողովն իրավասու է, անհրաժեշտության դեպքում, ՀՀ համապատասխան նախարարություններ, պետական կառավարման այլ մարմիններ ներկայացնելու առաջարկություններ իրենց իրավասությունների սահմաններում կազմակերպություններում ստուգումներ անցկացնելու, թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգմանն ու ապօրինի շրջանառության կանխարգելմանն առնչվող աշխատանքների վերաբերյալ: (Կետ 6) Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց առնվազն յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ: (Կետ 10) Հանձնաժողովի նախագահը կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները և վերահսկողություն իրականացնում նրա կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ: (Կետ 14) Հանձնաժողովի անդամները ծավալում են քարոզչական աշխատանք թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման ուղղությամբ: (Կետ 15) Հանձնաժողովի գործունեության դադարումից հետո նրա գործունեության հետ կապված բոլոր նյութերը, փաստաթղթերը ենթակա են պահպանման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: (Կետ 18)	
28.	**Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ՝** **ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններ** **ՀՀ ԱՍՀՆ ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմիններ** **ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումներ** **ՀՀ մարզպետարանի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի**	1. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված տարածքային մարմիններն են՝ ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնները (զբաղվածության տարածքային կենտրոնները), ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմինները (բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովները), ՀՀ ԱՍՀՆ կառավարման ոլորտում գործող պետական մարմնի՝ ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումները (սոցիալական ապահովության տարածքային կենտրոնները), ՀՀ մարզպետարանների, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումները՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները և սոցիալական աջակցության տարածքային բաժինները: (Կետ 1) 2. Կարգը կարգավորում է ՀՀ մարզպետարանի (քաղաքապետարանի) սոցիալական աջակցության տարածքային գործակալության (**տարածքային մարմնի**) լիազորությունների իրականացման և սոցիալական ծառայությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները: (Հավելված 1) 3. Տարածքային մարմինը տրամադրում է եզրակացություն՝ երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ **խնամք տրամադրող** այլ կազմակերպություն ընդունելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու կամ կենսաբանական **ընտանիք վերադարձնելու**, կամ **որդեգրման հանձնելու** կամ **խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու** նպատակահարմարության, երեխաներին սոցիալական հոգածության **ցերեկային կենտրոն** կամ բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի **գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու** հնարավորության մասին՝ հիմք ընդունելով ՀՀ ԱՍՀ նախարարի սահմանած՝ երեխայի լավագույն շահ ճանաչելու, գնահատելու վերաբերյալ ուղեցույցը, անձին խնամակալ ճանաչելու կամ խնամատար ծնող կամ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին: (Հավելված 1) 4. Տարածքային մարմինը կազմակերպում է բազմամասնագիտական քննարկումներ, վարում է սոցիալական ծառայությունների տրամադրման վերաբերյալ որոշումների կամ այլ մարմին (կազմակերպություն) ուղղորդումների հաշվառման մատյան (թղթային կամ էլեկտրոնային)՝ ըստ սոցիալական ծառայության տեսակների, նշելով դիմողի	Տարածքային մարմինը՝ կատարում է անձանց ընդունելություն՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն, ստանում է ֆիզիկական անձանց գրավոր դիմումները և ընթացք է տալիս դրանց, քննարկում է տարածքային մարմին դիմած՝ սոցիալական աջակցություն հայցող անձի կամ նրա ներկայացուցչի բանավոր դիմումը, պարզում դիմողի հիմնական խնդիրները, դրանց լուծման հնարավոր ռեսուրսները (անձնական, ընտանիքի, ֆինանսական և այլն), անցկացնում է հարցազրույց միասնական ընդունարանում կամ դիմողի պահանջով՝ առանձնազրույցի ձևով՝ այդ նպատակով առանձնացված սենյակում (վայրում), անձին տրամադրում է խորհրդատվական օգնություն (խորհուրդներ, առաջարկություններ և տեղեկատվություն)՝ սոցիալ-իրավական հարցերի (քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային օրենսդրություն) վերաբերյալ, անձի հիմնական պահանջմունքները և սոցիալական կարիքների բավարարման (դիմողի բարձրացված հիմնախնդիրներին ամբողջական լուծումներ) ուղիներ և եղանակներ գտնելու, ստեղծված իրավիճակին համարժեք սոցիալական ծառայություններ ստանալու վերաբերյալ,	

	առանձնացված ստորաբաժանումներ՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալություն և սոցիալական աջակցության տարածքային բաժին **Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի միասնական ընդունարանում** «Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների լիազորությունների իրականացման և սոցիալական ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1061-Ն, ընդունված է՝ 10.09.2015, ուժի մեջ է՝ 10.10.2015* Սահմանում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված տարածքային մարմինները, ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների, ՀՀ ԱՍՀՆ ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմինների, ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների տրամադրած սոցիալական ծառայությունների իրավական կարգավորման շրջանակները, ՀՀ մարզպետարանի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումների՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալության և սոցիալական աջակցության տարածքային բաժնի լիազորությունների իրականացման, սոցիալական ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները, համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի միասնական ընդունարանում	ազգանունը, անունը, հայրանունը, հասցեն, դիմելու օրը, ամիսը, տարեթիվը, որոշում ընդունելու (ուղղորդելու) օրը, ամիսը, տարեթիվը, տվյալ պահին գործում առկա փաստաթղթերի թիվը: (Հավելված 1) 5. Տարածքային մարմինը ՀՀ ԱՍՀ նախարարի սահմանած ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառմամբ «ենթադրյալ» ընտանեկան բռնության ենթարկված անձի հայտնաբերման դեպքում տալիս է եզրակացություն նախնական նույնացման մասին և ընտանեկան բռնության ենթարկված անձին ուղղորդում է որպես ժամանակավոր օթևան՝ կացարան տրամադրող կազմակերպություն: (Հավելված 1) 6. Տարածքային մարմինը ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը կազմակերպելու համար՝ վարում է սոցիալական դեպք՝ անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատման հիման վրա, կազմում է անձի (ընտանիքի) անհատական սոցիալական ծրագիր, ապահովում է անհատական սոցիալական ծրագրի իրականացումը և շարունակական հսկողությունը: (Հավելված 1) 7. Սոցիալական **դեպք բացելու վերաբերյալ առաջարկությունը** ներառում է նաև անձի (ընտանիքի) կարիքների բավարարման ուղղությամբ իրականացվելիք առաջնահերթ քայլերը, այդ թվում՝ նախընտրելի սոցիալական ծառայությունների փաթեթը: Անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող դեպքերում սոցիալական աջակցությունը (սոցիալական ծառայությունները) տրամադրվում են անհապաղ՝ դրա մասին տեղեկատվությունն ստանալուց հետո՝ տվյալ սոցիալական ծառայությունը տրամադրելու վերաբերյալ ձևակերպումները կատարելով տվյալ օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: (Հավելված 1) 8. **Տարածքային մարմնի ղեկավարը**, առաջարկությունն ստանալուց հետո եռօրյա ժամկետում որոշում է կայացնում՝ սոցիալական դեպք բացելու և (կամ) օրենքով սահմանված սոցիալական ծառայություն տրամադրելու կամ սոցիալական աջակցության տրամադրումը մերժելու մասին: (Հավելված 1) 9. Սոցիալական **դեպք բացելու մասին որոշում կայացվելու դեպքում, դեպք վարողը** 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է դիմողի անհատական սոցիալական ծրագիրը, այդ թվում՝ հավաքագրում տվյալներ այն անձանց, ընտանիքների, կազմակերպությունների մասին, որոնք դիմողին տրամադրում են կամ կարող են տրամադրել նրա սոցիալական կարիքների բավարարմանն ուղղված որոշակի աջակցություն՝ ներգրավելով աջակցող ցանցի մասնակիցների մասնագետներին, ինչպես նաև աջակցող ցանցի մասնակից չհանդիսացող այն անձանց (ընտանիքներին, կազմակերպություններին), որոնք կոնկրետ սոցիալական դեպքի շրջանակներում կարող են նպաստել դիմողի սոցիալական կարիքների լրիվ կամ մասնակի բավարարմանը: (Հավելված 1) 10. Սահմանում է **տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի** (համաձայնագիր) ընդունման նպատակով տարածքային մարմնի գործառույթները: (Հավելված 1) 11. Տարածքային մարմինը, իր լիազորությունների շրջանակներում, հանդես է գալիս սոցիալական աջակցություն ստացողի օրինական **շահերի և իրավունքների պաշտպանությամբ**՝ նրա դիմելու դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ միջգերատեսչական սոցիալական համագործակցության շրջանակներում: (Հավելված 1) 12. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված լիազորությունն իրականացվում է **համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի միասնական ընդունարանում**: (Հավելված 2) 13. Միասնական ընդունարանում անձին խորհրդատվական օգնություն տրամադրում է համապատասխան տարածքային մարմնի մասնագետը: (Հավելված 2)	սոցիալական պաշտպանության ոլորտում անձի իրավունքների և դրանց իրականացման, սոցիալական աջակցության շրջանակներում տրամադրվող ծառայությունների վերաբերյալ, ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտով սահմանված կարգով կազմում է անձի (ընտանիքի) սոցիալական գործը (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով)՝ դրանում ներառելով նաև ընտանիքի սոցիալական կարիքների գնահատման անձնագիրը և անհատական սոցիալական ծրագիրը, ինչպես նաև սոցիալական դեպքի վարման ընթացքում կազմված փաստաթղթերը, բանավոր դիմումների, ահազանգերի հիման վրա, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներում նշված անձի (ընտանիքի) անձնական տվյալների և (կամ) գտնվելու վայրի մասին տեղեկության առկայության դեպքում՝ դրանք ստանալու (հայտնի դառնալու) օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում կատարում է այցելություն դիմումում, ահազանգում կամ հրապարակման մեջ նշված անձի (ընտանիքի) բնակության (գտնվելու) վայր, տեղում տրամադրում է խորհրդատվական օգնություն, ահազանգում կամ հրապարակման մեջ նշված անձի կողմից դիմում ներկայացվելուց կամ առաջարկվող սոցիալական ծառայություններ ստանալուց հրաժարվելու դեպքում եռօրյա ժամկետում կազմակերպում է կրկնակի այցելություն՝ աջակցող ցանցի երեք ներկայացուցիչներից կազմված խմբով՝ ևս մեկ անգամ համապատասխան սոցիալական աջակցություն (ծառայություն) առաջարկելու կամ հրաժարումը գրավոր ձևակերպելու նպատակով՝ տվյալ անձի կողմից ստորագրված, իսկ նրա ստորագրելուց հրաժարվելու դեպքում՝ համապատասխան արձանագրությամբ՝ վավերացված այցելությանը մասնակից երեք ներկայացուցիչների ստորագրություններով, ահազանգում կամ հրապարակման մեջ նշված անձի անձը հաստատող փաստաթղթի բացակայության դեպքում՝ անձի անձնական տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը) տարածքային մարմին ներկայացվող դիմումում լրացվում է նրա հայտարարության հիման վրա՝ դրա մասին կատարելով նշում, իսկ այդ անձի կողմից, առողջական խնդիրներով կամ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված, անձնական տվյալները հայտարարելու անկարողության պարագայում, կազմվում է արձանագրություն և նշված երկու դեպքում անհապաղ դրա մասին հեռախոսակապով (էլեկտրոնային փոստով) տեղեկացվում է համայնքային ոստիկանության բաժնին, արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող դեպքերում՝ անհապաղ կազմակերպում է անհրաժեշտ և հնարավոր սոցիալական աջակցության տրամադրումը՝ տվյալ սոցիալական ծառայությունը տրամադրելու վերաբերյալ ձևակերպումները կատարելով տվյալ օրվան	

	սոցիալական ծառայություններ տրամադրելու կարգը, հանձնարարականներ է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին:		հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում փաստաթղթերը ներկայացնողի ուշադրությունը հրավիրում է դրանց վրա՝ շտկելու նպատակով, ինչպես նաև նրանց ներկայությամբ ինքնուրույն ուղղում է ներկայացված փաստաթղթերում առկա ակնհայտ սխալներն ու վրիպակները, ընդունում է որոշում: (Հավելված 1) Տարածքային մարմինն անձի (ընտանիքի) սոցիալական կարիքները գնահատում է, մասնավորապես՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու մասին դիմում ներկայացնելու դեպքում, երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու մասին դիմում ստանալու դեպքում, սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց կացարանի տրամադրման մասին դիմում ներկայացնելու դեպքում, նախնական նույնացում իրականացնելու՝ ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառման միջոցով «ենթադրյալ» ընտանեկան բռնության ենթարկված անձ հայտնաբերելու դեպքում, բանավոր դիմումների, ահազանգերի, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա: (Հավելված 1) Անձի (ընտանիքի) սոցիալական կարիքները գնահատելու նպատակով տարածքային մարմնի՝ դիմողի բնակության վայրն սպասարկող աշխատողը (**դեպք վարող**)՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է տվյալ ընտանիք առաջին այցելությունը՝ նրա (ընտանիքի, ընտանիքի յուրաքանչյուր անդամի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական խնդիրների, ինչպես նաև դրանց լուծման համար անհրաժեշտ հմտությունների և կարողությունների բացակայությունը կամ ապագայում դրա առաջացման հավանականությունը կանխատեսելու համար հիմքերի առկայությունը գնահատելու նպատակով, բանավոր, գրավոր դիմումներում, ահազանգերում, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներում, ինչպես նաև որևէ այլ ձևով բարձրացված՝ անհետաձգելի լուծում պահանջող խնդրի պարագայում (կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող դեպքերում) տնային այցելությունը կազմակերպում է անհապաղ, ըստ անհրաժեշտության՝ ներկայացված խնդիրների համակողմանի ուսումնասիրության, դրանց լուծմանն ուղղված միջոցների ամբողջական գնահատման համար, իրականացնում է կրկնակի տնային այցելություններ, կամ հանդիպումներ դիմողի, ընտանիքի անդամների և այլ անձանց հետ, դիմողից, այլ անձանցից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից պահանջում և ստանում է անձի (ընտանիքի) սոցիալական կարիքները գնահատելու համար	

			անհրաժեշտ տվյալներ (տեղեկություններ), տնային այցելությունների հիման վրա անձի (ընտանիքի) մասին ձեռք բերված՝ անձի (ընտանիքի) սոցիալական կարիքները գնահատելու համար անհրաժեշտ տվյալները եռօրյա ժամկետում ներառում է սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգ: Անձի (ընտանիքի) անհատական սոցիալական ծրագիրը ներառում է՝ անձի (ընտանիքի) սոցիալական կարիքները (սոցիալական կարիքների նկարագիրը), անձի (ընտանիքի) սոցիալական կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տեսակները, առաջարկված միջոցառումները, դրանց տրամադրման ժամկետներն ու ակնկալվող արդյունքները, այլ կազմակերպությունների համապատասխան աշխատողների՝ մասնագետների (բազմամասնագիտական խումբ) տվյալները, սոցիալական դեպքի խմբային (բազմամասնագիտական) քննարկումների պլանավորումը, սոցիալական դեպքի շարունակական հսկողության ժամանակացույցը: (Հավելված 1) Դեպք վարողը սոցիալական դեպքի վարման ընթացքում շարունակաբար իրականացնում է սոցիալական կարիքների ընթացիկ գնահատում, որի արդյունքների (սոցիալական կարիքների նվազում, փոփոխություններ, խորացում) հիման վրա, դիմողի (ընտանիքի) սոցիալական կարիքների փոփոխություններին համապատասխան, ըստ անհրաժեշտության, կարող է փոփոխության ենթարկել անհատական սոցիալական ծրագիրը: (Հավելված 1) Դեպք վարողը սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգ է մուտքագրում անձի (ընտանիքի) անհատական սոցիալական ծրագրի (ծրագրում կատարված փոփոխությունների) և ծրագրի կատարման ընթացքի մասին տեղեկատվություն, այդ թվում՝ անձի (ընտանիքի) գնահատված սոցիալական կարիքները, դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման մասին որոշումները (եզրակացությունները), դրանք տրամադրող մարմինների (կազմակերպությունների) և համապատասխան աշխատողների (մասնագետների) տվյալները, սոցիալական դեպքի վարման ընթացքում սոցիալական կարիքների գնահատման արդյունքները (նվազում, փոփոխություններ, խորացում), բազմամասնագիտական քննարկումներ անցկացնելու, ինչպես նաև շարունակական հսկողության իրականացման միջոցառումների ժամանակացույցը, անցկացված բազմամասնագիտական քննարկումների օրը, ամիսը, տարեթիվը, արդյունքները, շարունակական հսկողության շրջանակներում կատարված տնային այցելությունների օրը, ամիսը, տարեթիվը և արդյունքները, ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը, անհատական սոցիալական ծրագրի փակման կամ այլ կազմակերպությանը	

			փոխանցման նկարագրությունը, դրանց հիմքը և արդյունքները: (Հավելված 1) Դեպք վարողը տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքների շրջանակներում կազմակերպում է իր սպասարկման տարածքի համայնքի (համայնքների) ղեկավարի կողմից ձևավորված համայնքների սոցիալական կարիքները գնահատող խմբի աշխատանքները՝ հավաքագրվում է համայնքի վիճակագրական տվյալները համայնքի ղեկավարի աշխատակազմից, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից, համապատասխան պետական մարմինների վարչական ռեգիստրներից, համակարգում, վերլուծում, վերհանում է առավել կարիքավոր (խոցելի) խմբերը, նրանց աշխարհագրական տեղաբաշխումը, իրավունքների այն խումբը, որոնց իրացումը սահմանափակված է կամ ոտնահարվում է, ինչպես նաև գնահատվում է համայնքի ռեսուրսները, կազմում է գնահատման մասին հաշվետվությունը և ներկայացվում տվյալ համայնքի ղեկավարին: (Հավելված 1) Միասնական ընդունարանում ընդունվում են (հաշվառվում են)՝ օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի սպասարկման տարածքի բնակչության կողմից սոցիալական ծառայություններ ստանալու համար ներկայացված դիմումները և փաստաթղթերը՝ համալիր կենտրոնում տեղակայված համապատասխան տարածքային մարմիններին փոխանցելու նպատակով: (Հավելված 2) Համապատասխան տարածքային մարմնի կողմից անձին տրամադրվում է խորհրդատվական օգնություն՝ անձի հիմնական պահանջմունքները և սոցիալական կարիքները բավարարելու ուղիներ և եղանակներ գտնելու, ստեղծված իրավիճակին համարժեք սոցիալական ծառայություններ ստանալու վերաբերյալ խորհուրդներ և առաջարկություններ, սոցիալական պաշտպանության ոլորտում անձի իրավունքների և դրանց իրականացման մասին տեղեկատվություն: Դիմումներն ընդունվում (հաշվառվում) են դիմումների հաշվառման էլեկտրոնային ենթահամակարգի միջոցով: (Հավելված 2)	
29.	**Պոլիկլինիկական հաստատություններ** «Պոլիկլինիկական հաստատությունների օրինակելի մոդելները և նեղ մասնագետների և դիսպանսերային ծառայություն մատուցող մասնագետների կողմից սպասարկվող բնակչության կողմնորոշիչ թվերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1529-Ն, ընդունված է՝ 25.12.2014, ուժի մեջ է՝ 19.02.2015*	1. Քաղաքային վայրերում բնակչության ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնությունն իրականացվում է պոլիկլինիկական հաստատությունների կողմից, որոնք սպասարկում են 10.000 և ավելի բնակչություն՝ ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում (ընդ որում, այդ թիվը ՀՀ մարզերում գործող պոլիկլինիկաներում ներառում է նեղ մասնագիտական և դիսպանսերային ծառայությունների կողմից սպասարկվող գյուղական բնակչությանը): (Հավելված 1) 2. Պոլիկլինիկական հաստատությունն իր կառուցվածքում պետք է ունենա նվազագույնը մի շարք ստորաբաժանումներ, այդ թվում՝ բուժական մաս, որի կազմում գործում են՝ առողջության առաջնային պահպանման բաժին (ընտանեկան բժշկի, ընդհանուր պրակտիկայի թերապևտի և ընդհանուր պրակտիկայի մանկաբույժի կողմից մատուցվող ծառայություններ) և նեղ մասնագիտական խորհրդատվական բաժին (վիրաբուժական/ վնասվածքաբանական, ակնաբուժական, սրտաբանական, նյարդաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական), ինչպես նաև դիսպանսերային (շարունակական հսկողություն իրականացնող) մասնագիտական կաբինետներ, երեխաների համար (վարակաբանական, ուռուցքաբանական, ներզատաբանական, մաշկավեներաբանական, անհրաժեշտության կամ առանձին դեպքերում նաև հոգեբուժական/նարկոլոգիական, տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներ): Բոլոր այն դեպքերում, երբ առողջության առաջնային պահպանման բաժինը ձևավորվում է միայն ընտանեկան բժիշկներից, որոնք հավաքագրում են նաև մանկական ազգաբնակչություն, նեղ մասնագիտական բաժինը ներառում է նաև	Պոլիկլինիկական հաստատությունն իր կառուցվածքում պետք է ունենա **մատենավարման** բաժին, **բժշկական վիճակագրության** բաժին: (Հավելված 1)	**Փոքր պոլիկլինիկաների կառուցվածքը (ինչպես ինքնուրույն, այնպես և բժշկական կենտրոնի կազմում գործող)** ներառում է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1529-Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետով սահմանված բոլոր ծառայությունները և ստորաբաժանումները: (Հավելված 1) **Միջին պոլիկլինիկաների** կառուցվածքը ներառում է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1529-Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետով սահմանված բոլոր ծառայությունները և ստորաբաժանումները, ինչպես նաև վերականգնողական բուժման կաբինետը: (Հավելված 1) **Խոշոր պոլիկլինիկաների** կառուցվածքը

	Սահմանում է պոլիկլինիկական հաստատությունների օրինակելի մոդելները, ինչպես նաև պոլիկլինիկական հաստատության նեղ մասնագետների և դիսպանսերային ծառայություն մատուցող մասնագետների կողմից սպասարկվող բնակչության կողմնորոշիչ թվերը՝ 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար, հանձնարարականներ է տալիս ՀՀ առողջապահության նախարարին, ՀՀ մարզպետներին և առաջարկություն է տալիս Երևանի քաղաքապետին:	մանկաբույժի (3 ընտանեկան բժշկին 1 մանկաբույժ հաշվարկով), իմունականխարգելման կաբինետ՝ երեխաների համար, ախտորոշման բաժին, որը ներառում է լաբորատոր-գործիքային ախտորոշիչ և օժանդակ ծառայությունները, կանանց կոնսուլտացիա, որը ձևավորվում է հետևյալ սկզբունքով՝ Երևանում, Գյումրիում և Վանաձորում 18 և բարձր տարիքի իգական սեռի 3300 անձանց համար 1 մանկաբարձ-գինեկոլոգ, իսկ ՀՀ մյուս բնակավայրերում 18 և բարձր տարիքի իգական սեռի 3700 անձանց համար՝ 1 մանկաբարձ-գինեկոլոգ հաշվարկով (բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ տարածքի կանանց մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնությունը ցուցաբերվում է ծննդատան կամ այլ բժշկական կազմակերպության կազմում, որտեղ գործում է կանանց կոնսուլտացիա): Այդ դեպքում պոլիկլինիկան պարտավոր է ունենալ գինեկոլոգիական կաբինետ: (Հավելված 1) 3. **Երևան քաղաքի և ՀՀ մարզերի** այն պոլիկլինիկական հաստատությունները, այդ թվում՝ խառը և մանկական, որոնք սպասարկում են 10,000-25,000 բնակչություն, որակվում են որպես **փոքր պոլիկլինիկաներ**: ՀՀ մարզերի՝ մինչև 10 000 բնակչություն ունեցող քաղաքային պոլիկլինիկաներն իրականացնում են նաև տարածաշրջանի գյուղական համայնքների բնակչության նեղ մասնագիտական խորհրդատվություն և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ, այդպիսով փաստացի գերազանցելով 10, 000 բնակչությունը, ևս որակվում են որպես փոքր պոլիկլինիկաներ: (Հավելված 1) 4. **Երևան քաղաքի այն փոքր պոլիկլինիկաները, որոնք սպասարկում են միայն մանկական բնակչություն**՝ կարող են իրականացնել նեղ մասնագիտական խորհրդատվական ծառայություններ՝ խառը պոլիկլինիկաների կողմից սպասարկվող երեխաների համար, պետք է ունենան վերականգնողական բուժման բաժանմունք, կարող են ծավալել նաև շուրջօրյա հսկողություն չպահանջող ցերեկային ստացիոնար բաժին: (Հավելված 1) 5. **Երևան քաղաքի և ՀՀ մարզերի** այն քաղաքային պոլիկլինիկական հաստատությունները, այդ թվում՝ խառը և մանկական, որոնք սպասարկում են 25.000-45.000 բնակչություն, որակվում են որպես **միջին պոլիկլինիկաներ**: (Հավելված 1) 6. **Երևան քաղաքի** այն պոլիկլինիկական հաստատությունները, այդ թվում՝ խառը և մանկական, որոնք սպասարկում են 45.000-ից ավելի բնակչություն, որակվում են որպես **խոշոր պոլիկլինիկաներ**: (Հավելված 1) 7. **ՀՀ մարզերի մարզկենտրոնների բժշկական կենտրոնների (միավորում) կառուցվածքում** գործող պոլիկլինիկական հաստատությունները (խառը, մանկական, մեծահասակների), անկախ սպասարկող բնակչության թվից, իրականացնում են **խոշոր պոլիկլինիկաներին բնորոշ գործառույթներ**՝ տարածաշրջանի բնակչության բնականոն բժշկական օգնության և սպասարկման ապահովման նպատակով, և որակվում են որպես **բժշկական կենտրոնի (միավորում) պոլիկլինիկա**: ՀՀ այն մարզերում, որտեղ մարզկենտրոնների պոլիկլինիկաները գործում են ինքնուրույն իրավաբանական անձի կարգավիճակով, իսկ մարզային նշանակության բժշկական կենտրոններն իրենց կառուցվածքում պոլիկլինիկական ծառայություն չունեն, խոշոր պոլիկլինիկաներին բնորոշ գործառույթների իրականացման լիազորությունը, ՀՀ տվյալ մարզպետի որոշմամբ, դրվում է առավել բարվոք շենքային պայմաններ ունեցող, սարքավորումներով հագեցած և մասնագիտական ներուժով ապահովված պոլիկլինիկայի վրա: (Հավելված 1) 8. Սահմանում է պոլիկլինիկական հաստատության նեղ մասնագետների և դիսպանսերային ծառայություն մատուցող մասնագետների կողմից սպասարկվող բնակչության **կողմնորոշիչ թվերը**՝ ըստ մասնագետների (ֆտիզիատր/տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետի մասնագետ, ուռուցքաբանական, հոգեբուժական, ներզատաբանական, մաշկավեներաբանական, նարկոլոգիական, վարակաբանական, վիրաբուժական, նյարդաբանական, ակնաբուժական, սրտաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական, իմունականխարգելման կաբինետի բժիշկ մասնագետ, այդ թվում՝ և՛ մեծահասակներին, և՛ երեխաներին, ինչպես նաև միայն երեխաներին սպասարկող մասնագետների), և սպասարկվող բնակչության թվի նվազագույն, օպտիմալ և առավելագույն սահմանների (Հավելված 2)		ներառում է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1529-Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետով սահմանված բոլոր ծառայությունները և ստորաբաժանումները, ինչպես նաև այլ նեղ մասնագիտական բժշկական և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծառայություններ (օրինակ՝ ուրոլոգիական, գաստրոէնտերոլոգիական, ռևմատոլոգիական, ալերգոլոգիական և այլն), վերականգնողական բուժման բաժանմունք, որի նպատակն է իրականացնել հետհիվանդանոցային վերականգնողական բուժում (մեծահասակների և երեխաների), ինչպես իր սպասարկման տարածքի, այնպես և այլ պոլիկլինիկաների ուղեգրմամբ՝ պայմանագրային հիմունքներով: Խոշոր պոլիկլինիկաներում կարող է ծավալվել նաև շուրջօրյա հսկողություն չպահանջող ցերեկային ստացիոնար բաժին: (Հավելված 1) **Բժշկական կենտրոնի (միավորում) պոլիկլինիկաների կառուցվածքը** ներառում է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1529-Ն որոշման N 1 հավելվածի 6-րդ և 7-րդ կետով սահմանված բոլոր ծառայությունները և ստորաբաժանումները: Այդ պոլիկլինիկաների կառուցվածքը ներառում է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1529-Ն որոշման N 1 հավելվածի 6-րդ և 7-րդ կետով սահմանված բոլոր ծառայությունները և ստորաբաժանումները:
30.	**Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով** «Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու և անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշում *N 213-Ա, ընդունված է՝ 30.03.2010, ուժի մեջ է՝ 31.03.2010* Ստեղծում է գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով, հաստատում է հանձնաժողովի կազմը, հանձնարարական է տալիս ՀՀ	1. Միջգերատեսչական հանձնաժողովը ստեղծվում է Գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացման, տեղեկատվության հավաքագրման և փոխանակման մեխանիզմների մշակման, ինչպես նաև «Ընդդեմ գենդերային բռնության» ազգային ծրագրի մշակման նպատակով (Կետ 1)	ՀՀ ԱՍՀ նախարարին հանձնարարում է՝ մինչև յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 15-ը ներկայացնել տեղեկատվություն հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքների մասին: (Կետ 3)	Հանձնաժողովի **նախագահը** ՀՀ ԱՍՀ նախարարի տեղակալն է: Հանձնաժողովի **քարտուղարը** ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետն է: **Անհատական կազմը** ներառում է ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչությունը, ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչությունը, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ԱԻՏԿ նախարարության, ՀՀ ԱԳՆ, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ԿԳՆ, ՀՀ ոստիկանության աշխատակազմերը, ինչպես նաև, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի

	ԱՍՀ նախարարին:			առաքելության, ՄԱԿԾ-ի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ԵԱՀԿ Երևանի գրասենյակի, ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի, ԱՄՆԶԳ, ՄԶՄԿ, Հայաստանի համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Կանանց ռեսուրսային կենտրոնի և Կանանց իրավունքների կենտրոն ներկայացուցիչներին
31.	**Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով** **Երեխաների իրավունքների պաշտպանության մարզային հանձնաժողովներ** **Երեխաների իրավունքների պաշտպանության Երևանի քաղաքային հանձնաժողով** «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N 835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի որոշում *N 1295-Ն, ընդունված է՝ 28.12.2012, ուժի մեջ է՝ 07.01.2013* Ստեղծում է երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով, հաստատում է երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը, սահմանում է հանձնաժողովի աշխատանքային գործունեության կազմակերպական-տեխնիկական ապահովումն իրականացնող մարմինը, ուժը կորցրած ճանաչել ՀՀ վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N 835-Ն որոշումը: Նաև՝ «ՀՀ երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի և մարզային հանձնաժողովների (Երևանի քաղաքային հանձնաժողովի) ստեղծման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշում *N 899-Ա, ընդունված է՝ 30.12.2004, ուժի մեջ է՝*	1. Հանձնաժողովը **խորհրդակցական մարմին** է, որի գործունեության հիմնական նպատակը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության **միասնական պետական քաղաքականության** ապահովմանը նպաստելն է: (Հավելված 1) 2. Հանձնաժողովի որոշումներն ունեն **երաշխավորական** բնույթ: (Հավելված 1) 3. Հանձնաժողովի հիմնական **խնդիրներն** են ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության **համակարգմանն** աջակցելը, երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության ու ռազմավարական ծրագրերի **իրականացման և մշակման** ապահովմանն աջակցելը, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած **խնդիրները վերլուծելը** և դրանց լուծմանն ուղղված **առաջարկություններ մշակելը, կյանքի դժվարին իրավիճակում** հայտնված երեխաների հիմնախնդիրների լուծմանն աջակցելը, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական, համայնքային և մասնավոր հաստատությունների, հասարակական, քաղաքական, գիտական և այլ **կազմակերպությունների համագործակցությանն** աջակցելը: (Հավելված 1) 4. Հանձնաժողովը **քննարկում է** երեխաների պաշտպանության պետական **ռազմավարական ծրագրերը**, անհրաժեշտության դեպքում **առաջարկություններ է ներկայացնում շահագրգիռ մարմիններին**, առաջարկություններ է ներկայացնում պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ **անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելմանն** ուղղված աշխատանքների վերաբերյալ, քննարկում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտի հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական **ակտերի նախագծերը** և դրանց մասին տալիս **եզրակացություն**, աջակցում է ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատողների վերապատրաստման գործընթացին: (Հավելված 1)	Հանձնաժողովը ապահովում է երեխաների պաշտպանության պետական ռազմավարական ծրագրերի իրականացման **մոնիթորինգի իրականացումը**՝ հանձնաժողովին կից ստեղծելով մոնիթորինգի աշխատանքային խումբ, քննարկում և հաստատում է **Մոնիթորինգի աշխատանքային խմբի տարեկան աշխատանքային պլանը և հաշվետվությունները**, **քննարկում և առաջարկություն** է ներկայացնում ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի **ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների գործունեությանն ուղղված քաղաքացիների դիմումների և բողոքների վերաբերյալ**, քննարկում է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ ստանձնած **միջազգային պարտավորությունների կատարման ընթացքը** և ներկայացնում առաջարկություններ դրանց արդյունավետ իրականացման համար, **ուսումնասիրում և վերլուծում** է **երեխայի իրավունքների խախտման պատճառներն** ու ներկայացնում առաջարկություն ՀՀ **օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխություններ** կատարելու վերաբերյալ, քննարկում է ՀՀ մարզպետների, Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների **տարեկան ծրագրերի հաշվետվությունները** և ներկայացնում առաջարկություններ, առաջարկություններ է ներկայացնում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանության **պետական ծրագրերի իրականացման վերաբերյալ**, կարող է իրականացնել **ուսումնասիրություններ** ՀՀ երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական և մասնավոր հաստատությունների, ինչպես նաև երեխայի պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող **ծրագրերը**: (Հավելված 1) **Հանձնաժողովը պետական կառավարման մարմիններից կարող է ստանալ երեխաների պաշտպանության հարցերին առնչվող նյութեր**, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: (Հավելված 1) Հանձնաժողովի ընդունած որոշումների մասին կազմվում է **արձանագրություն**: (Հավելված 1)	Հանձնաժողովի **անհատական կազմը** հաստատում է ՀՀ վարչապետը: (Հավելված 1) Հանձնաժողովի աշխատանքային գործունեության **կազմակերպական-տեխնիկական ապահովումն** իրականացնում է **ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմը**: (Կետ 3) Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է **հասարակական հիմունքներով**: (Հավելված 1) Հանձնաժողովի **նիստերը** գումարվում են առնվազն յուրաքանչյուր **6 ամիսը** մեկ անգամ: **Հանձնաժողովի նախագահը ՀՀ ԱՍՀ նախարարն է**: (Հավելված 2) **Հանձնաժողովի քարտուղարը** ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետն է: (Հավելված 2) Հանձնաժողովի նախագահի **հրավերով** նիստին կարող են **մասնակցել** ՀԿ-ների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ: (Հավելված 1) Հանձնաժողովն իր գործառույթներն իրականացնելու նպատակով կարող է ստեղծել **աշխատանքային խմբեր**: (Հավելված 1) Հանձնաժողովի **անհատական կազմը** ներառում է ՀՀ ԱՍՀ նախարարին, առողջապահության նախարարի առաջին տեղակալին, ԱՍՀ նախարարի, արդարադատության նախարարի, տարածքային կառավարման նախարարի տեղակալներին, ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետին, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի տնտեսության սոցիալական ոլորտի բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետին, ՀՀ ԿԳՆ աշխատակազմի հանրակրթական վարչության պետին, ՀՀ ԿԳՆ աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետին, ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ-ի 3-րդ վարչության պետի տեղակալին, ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետին, Երեխաների աջակցության կենտրոնի գործադիր տնօրենին, «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության, «Առավոտ» հասարակական կազմակերպության, «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության, Հայաստանի մանուկների հիմնադրամի, «UOU մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի, Հայ օգնության միության ներկայացուցիչներին: (Հավելված 2)

	20.01.2005 Հաստատում է ՀՀ-ում երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի և մարզային հանձնաժողովների (Երևանի քաղաքային հանձնաժողովի) ստեղծման միջոցառումների ժամանակացույցը, հանձնարարական է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին			
32.	**Դպրոցականների 2015 թվականի ամառային հանգստի կազմակերպման միջգերատեսչական հանձնաժողով** «Դպրոցականների 2015 թվականի ամառային հանգստի կազմակերպման նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի որոշում *N 400-Ա, ընդունված է՝ 19.05.2015, ուժի մեջ է՝ 20.05.2015* Ստեղծում է միջգերատեսչական հանձնաժողով և հաստատում դրա կազմը, հանձնարարական է տալիս հանձնաժողովին, ՀՀ մարզպետներին, ՀՀ առողջապահության նախարարին, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետին և ՀՀ ԿԳ նախարարին, առաջարկություն է կատարում Երևանի քաղաքապետին:	1. Հանձնաժողովը կազմակերպում է զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան երեխաների **ամառային հանգիստը**՝ երեք հերթափոխով, 20-ական օրով, ինչպես նաև միջազգային մարդասիրական կազմակերպությունների հետ համատեղ քննության է առնում մանկական առողջարարական ճամբարները սննդամթերքի անհրաժեշտ քանակությամբ և տեսականիով ապահովելու հարցը: (Կետ 2)	Հանձնարարում է **ՀՀ մարզպետներին** և առաջարկում **Երևանի քաղաքապետին**՝ ըստ միջգերատեսչական հանձնաժողովի հատկացրած տեղերի թվի՝ մինչև 2015 թվականի հունիսի 10-ը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել մանկական առողջարարական ճամբարներ մեկնող զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան երեխաների ցուցակները: (Կետ 3) Հանձնարարում է **ՀՀ առողջապահության նախարարին** և **Կոտայքի մարզպետին**՝ ձեռնարկել միջոցներ Հանքավանի միջճամբարային մեկուսարանի աշխատանքները 2015 թվականի հունիսի 19-ից սկսելու համար: (Կետ 4) Հանձնարարում է **ՀՀ ոստիկանության պետին**՝ **ՀՀ մարզպետների** և **Երևանի քաղաքապետի** հետ (համաձայնությամբ) համատեղ ապահովել ամառային հանգստի մեկնող ու վերադարձող երեխաների անվտանգ փոխադրումը: Հանձնարարում է **ՀՀ ԿԳ նախարարին**՝ աջակցել մանկական առողջարարական ճամբարներին երեխաների՝ ըստ իրենց նախասիրությունների, մտավոր և ֆիզիկական կարողությունների, լրացուցիչ կրթության կազմակերպման հարցում: (Կետ 5)	Միջգերատեսչական հանձնաժողովի **նախագահը ՀՀ ՏԿԱԻ նախարարի առաջին տեղակալն** է, **քարտուղարը՝ ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետը**: (Հավելված) Հանձնաժողովի **կազմում** ընդգրկված են ՀՀ առողջապահության նախարարի տեղակալը, ՀՀ Կոտայքի մարզպետը, ՀՀ ոստիկանության պետի տեղակալը, ՀՀ կառավարության աշխատակազմի վարկային և մարդասիրական օգնության ծրագրերի վարչության պետը, ՀՀ ԿԳՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալը, ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետը և ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետի խորհրդատուն: (Հավելված)
33.	**Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների պետական ծրագրի կառավարման միջգերատեսչական խորհուրդ** «Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների պետական ծրագրի կառավարման միջգերատեսչական խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի որոշում *N 333-Ա, ընդունված է՝ 07.05.2013, ուժի մեջ է՝ 08.05.2013* Ստեղծում է մանուկների և պատանիների գեղարվեստական	1. Միջգերատեսչական խորհուրդը ստեղծվում է մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների պետական ծրագիրը կառավարելու համար: (Կետ 1)		**Հանձնաժողովի նախագահը** ՀՀ մշակույթի նախարարի տեղակալն է: (Հավելված) Հանձնաժողովի **անհատական կազմում** ընդգրկված են ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ծրագրերի և մոնիթորինգի վարչության, ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ժամանակակից արվեստի վարչության, ՀՀ ԿԳՆ աշխատակազմի հանրակրթության վարչության նախադպրոցական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի, ՀՀ ԿԳՆ աշխատակազմի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության մասնագիտական կրթության և ուսուցման բաժնի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության գլխավոր մասնագետները, ինչպես նաև ՀՀ ԿԳՆ աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչության արտաուսումնական

	կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների պետական ծրագրի կառավարման միջգերատեսչական խորհուրդ և հաստատում դրա անհատական կազմը			դաստիարակության բաժնի պետը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության տարածքային զարգացման ծրագրերի բաժնի պետ և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության մշակույթի բաժնի առաջատար մասնագետը: (Հավելված)
34.	**Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կառավարման խորհուրդ** «Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կառավարման խորհուրդ ստեղծելու, դրա անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշում *N 941-Ն, ընդունված է՝ 29.09.2012, ուժի մեջ է՝ 11.10.2012* Ստեղծում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կառավարման խորհուրդ, հաստատում դրա անհատական կազմն ու աշխատակարգը:	1. Խորհրդի **նպատակը** ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման ծրագիրը հաստատելու մասին» N 952-Ն որոշմամբ նախատեսված՝ պետական կառավարման, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոչ պետական կազմակերպությունների կողմից իրականացվելիք աշխատանքներում համագործակցությունն է: (Հավելված 2) 2. Խորհուրդը **քննարկում է** սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող սոցիալական պաշտպանության **քաղաքականությունների հիմնական ուղղությունները**, բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտի բնագավառների **ռազմավարական և մարտավարական փաստաթղթերի նախագծերը**, սոցիալական պաշտպանության ոլորտում գործող **հանրապետական հանձնաժողովների կատարած աշխատանքների մասին հաղորդումները**, ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումն ապահովող **իրավական ակտերի նախագծերը**, ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կապակցությամբ առկա խնդիրները և առաջադրում է լուծումներ: (Հավելված 2) 3. **Խորհուրդը համակարգում է** միջոցառումների իրականացման տարեկան և միջնաժամկետ ծրագրերի մշակման աշխատանքները: (Հավելված 2)	Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է **նիստերի** միջոցով, որոնք գումարվում են յուրաքանչյուր **կիսամյակը մեկ** անգամ, ինչպես նաև՝ արտահերթ նիստերի միջոցով: (Հավելված 2) Խորհուրդը **համակարգում** է ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ **տեղեկատվական բազաների ձևավորման**, ինչպես նաև **տեղեկատվության արդյունավետ փոխանակման համակարգի ձևավորման** աշխատանքները: (Հավելված 2) Խորհուրդը **ներդաշնակեցնում է** սոցիալական պաշտպանության ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների հիմնական ուղղությունները: (Հավելված 2) Խորհուրդը **քննարկում** է ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի N 952-Ն որոշման N 2 հավելվածով նախատեսված՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման **փորձնական ծրագրի արդյունքներն ու ընթացիկ հաշվետվությունները**: (Հավելված 2)	**Կառավարման խորհրդի նախագահը ՀՀ վարչապետն** է: (Հավելված 1) Խորհրդի **քարտուղարությունը ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի սոցիալական աջակցության վարչությունն** է: (Հավելված 2) Կառավարման **խորհրդի կազմում** ընդգրկված են. ՀՀ փոխվարչապետը, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը, ՀՀ ԿԳ նախարարը, ՀՀ ԱՍՀ նախարարը, ՀՀ ֆինանսների նախարարը, ՀՀ առողջապահության նախարարը, Երևանի քաղաքապետը, ՀՀ ոստիկանության պետի տեղակալը և ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետը: (Հավելված 1) Խորհրդի **նիստերին կարող են մասնակցել հրավիրված՝** սոցիալական ծառայությունների տրամադրման ոլորտում գործող, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման գործընթացում ակտիվ մասնակցություն ունեցող փորձագետներ, միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների, ՁԼՄ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ: (Հավելված 2)
35.	**Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով** «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով ստեղծելու, ազգային հանձնաժողովի աշխատակարգն ու անհատական կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2006 թվականի հոկտեմբերի 10-ի N 747-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի որոշում *N 98-Ն, ընդունված է՝ 25.02.2008, ուժի մեջ է՝ 03.04.2008* Ստեղծում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով, հաստատում հանձնաժողովի աշխատակարգն ու անհատական կազմը, սահմանում է ազգային հանձնաժողովի աշխատանքային գործունեության կազմակերպական-տեխնիկական ապահովումն	1. Հանձնաժողովը **խորհրդակցական** մարմին է, որի **գործունեության նպատակը** հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն աջակցելն է: (Հավելված 1) 2. Հանձնաժողովի **որոշումներն ունեն երաշխավորական բնույթ**: (Հավելված 1) 3. Հանձնաժողովի **հիմնական խնդիրներն** են հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանն աջակցելը, նրանց իրավունքների իրացման ընթացքում ծագած խնդիրները վերլուծելը և դրանց լուծման վերաբերյալ առաջարկություններ մշակելը, հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմանների, հասարակական կյանքում նրանց առավելագույնս ներգրավվածության ապահովման, սոցիալական հիմնախնդիրների լուծմանն աջակցելը, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության համար պատասխանատու պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների և այդ ոլորտում գործող հասարակական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցությանն աջակցելը, ինչպես նաև հաշմանդամության իրավիճակի մասին ամենամյա ազգային զեկույցի քննարկումը: (Հավելված 1) 4. Հանձնաժողովն համապատասխան պետական լիազոր մարմիններ և ՏԻՄ-եր է ներկայացնում **առաջարկություններ** ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարության և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության **տարեկան ծրագրի** իրականացման վերաբերյալ: (Հավելված 1) 5. Հանձնաժողովը **քննարկում** է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության **տարեկան ծրագրի նախագիծը և տալիս եզրակացություն**՝ այն ՀՀ կառավարություն ներկայացնելու համար: (Հավելված 1) 6. Համապատասխան ոլորտի լիազոր մարմիններ է ներկայացնում **առաջարկություններ** հաշմանդամ և ոչ հաշմանդամ անձանց համար **հնարավորությունների հավասարեցման** վերաբերյալ: (Հավելված 1) 7. **Քննարկում է** հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ **իրավական ակտերի նախագծերը** և դրանց վերաբերյալ տալիս **եզրակացություն**: (Հավելված 1)	Հանձնաժողովը **քննարկում** է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության ոլորտում ՀՀ ստանձնած **միջազգային պարտավորությունների կատարման ընթացքը** և ներկայացնում առաջարկություններ դրանց արդյունավետ իրականացման վերաբերյալ: (Հավելված 1) Հանձնաժողովն **ուսումնասիրում և վերլուծում** է հաշմանդամություն ունեցող անձանց **իրավունքների խախտման, հաշմանդամության առաջացման պատճառները** և համապատասխան ոլորտի լիազոր մարմիններ ներկայացնում **առաջարկություններ**: (Հավելված 1) Հանձնաժողովը քննարկում է հաշմանդամության **իրավիճակի մասին ազգային զեկույցի նախագիծը** և ներկայացնում առաջարկություններ: (Հավելված 1) Հանձնաժողովը քննարկում և ՀՀ վարչապետին, նախարարներին, մարզպետներին, Երևանի քաղաքապետին, ՏԻՄ-երին է ներկայացնում **քաղաքացիների դիմումների և բողոքների վերաբերյալ առաջարկություններ**՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի: (Հավելված 1) Հանձնաժողովը տվյալ **ոլորտի լիազոր պետական մարմին է ներկայացնում առաջարկություն**՝ հաշմանդամ և ոչ հաշմանդամ	Հանձնարարում է **ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին**՝ ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող **մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովներ**: (Կետ 4) Մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների **գործունեության կարգը** հաստատում է ազգային հանձնաժողովը: (Հավելված 1) Հանձնաժողովի աշխատանքային գործունեության **կազմակերպական-տեխնիկական ապահովումն** իրականացնում է **ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմը**: (Կետ 3) Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է **հասարակական հիմունքներով**: (Հավելված 1) Հանձնաժողովի **անհատական կազմը հաստատում է ՀՀ վարչապետը**: (Հավելված 1) Հանձնաժողովի **նախագահը ՀՀ ԱՍՀ նախարարն** է: Հանձնաժողովի **քարտուղարը աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետն** է: **Հանձնաժողովի կազմում ընդգրկված են** ՀՀ ԱՍՀ նախարարի, ՀՀ առողջապահության նախարարի, ՀՀ ֆինանսների նախարարի, ՀՀ ԿԳ նախարարի, տարածքային կառավարման նախարարի տեղակալները և ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական

	իրականացնող մարմինը, հանձնարարականներ է տալիս ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին՝ ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովներ, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ վարչապետի 2006 թվականի հոկտեմբերի 10-ի N 747-Ն որոշումը:		մարդկանց համար ստեղծված հնարավորությունների հավասարեցման գործընթացների **զարգացումները վերահսկելու**, որոշակի **խնդիրներ հետազոտելու և վերլուծելու**, արդյունքները հանձնաժողով ներկայացնելու համար: (Հավելված 1) Հանձնաժողովը քննարկում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների հաշվետվությունները, նիստերում լսում նրանց կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը: (Հավելված 1) Հանձնաժողովի **նիստերը** գումարվում են առնվազն յուրաքանչյուր **4 ամիսը մեկ** անգամ: (Հավելված 1) Հանձնաժողովը պետական կառավարման մարմիններից կարող է ստանալ հաշմանդամություն ունեցող անձանց **իրավունքների և շահերի պաշտպանության հարցերին առնչվող նյութեր**, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: (Հավելված 1)	ապահովման վարչության պետը, Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության, «Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» ՀԿ, «Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ, «Հույսի կամուրջ» հաշմանդամ երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանություն» ՀԿ, «Հայաստանի կույրերի միավորում» ՀԿ, «Սկարպ» առողջական կենտրոն» ՀԿ, «Աստղիկ» հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա» ՀԿ, «Հաշմանդամների «Փարոս» կրթության և մշակույթի զարգացման կենտրոն» ՀԿ և «Լիարժեք կյանք» ՀԿ նախագահները: (Հավելված 2) Հանձնաժողովի անդամների առաջարկությամբ և նախագահի հրավերով **նիստին կարող են մասնակցել** պետական մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ՀԿ-ների և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ: (Հավելված 1)
36.	**Սոցիալական աջակցության խորհուրդ** «Սոցիալական աջակցության խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման *N 153-Ն, ընդունված է՝ 18.09.2006, ուժի մեջ է՝ 11.02.2007* Հաստատում է «Սոցիալական աջակցության խորհրդի օրինակելի կանոնադրությունը»	1. Սոցիալական աջակցության խորհուրդը գործում է ՀՀ մարզպետարանի աշխատակազմի ՍԾՏԳ և համայնքի, Երևանի վարչական շրջանի ՍԾՏԲ կից՝ **հասարակական հիմունքներով**: 2. **Խորհուրդն ստեղծվում և խորհրդի գործունեությունը դադարեցվում է ՀՀ կառավարության որոշմամբ**: 3. Խորհրդի **նպատակները** ներառում են՝ ապահովել գործակալության, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների և տեղական ՏԻՄ-երի համագործակցությունը: (Հավելված) 4. Խորհրդի **խնդիրները** ներառում են՝ աջակցել գործակալության սպասարկման տարածքում բնակվող **կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց հայտնաբերմանը**, **հաշվառմանը և սոցիալական աջակցության տրամադրմանը**, աջակցել սոցիալական աջակցության հանրապետական և տարածքային ծրագրերի իրականացմանը գործակալության սպասարկման տարածքում՝ խթանելով սոցիալական աջակցության տրամադրման գործում սոցիալական գործընկերությունը, օժանդակել սոցիալական աջակցության տրամադրման վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացումը, հիմնավորված առաջարկություններ և եզրակացություններ ներկայացնել գործակալությանը սոցիալական աջակցության տրամադրման վերաբերյալ: (Հավելված) 5. Խորհուրդը **քննարկում և ուսումնասիրում** է սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած անձանց ներկայացրած **փաստաթղթերը** և **կողմնորոշում** նրանց **սոցիալական աջակցություն ստանալու** հարցում, կազմակերպում է **տնային այցելություն:** (Հավելված) 6. Խորհուրդը տալիս **առաջարկություն** ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների (բարեկեցության), ընտանիքին ընտանիքների անապահովության գնահատման համակարգում որպես «**անօթևան**» հաշվառելու, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ընտանիքի **երեխաների խնամքը, դաստիարակությունը երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում կազմակերպելու** մասին: (Հավելված) 7. Ներկայացնում է **առաջարկություններ և միջնորդություններ գործակալությանը** և **սոցիալական ծառայություններ** տրամադրող այլ կազմակերպություններին, ՏԻՄ-երին և ոչ առևտրային կազմակերպություններին սոցիալական ծառայությունների տրամադրման (տեսակի, ձևի, չափի և ժամկետների) վերաբերյալ, ներկայացնում է առաջարկություններ գործակալությանը՝ վերջինիս սպասարկման տարածքում սոցիալական աջակցության կազմակերպման և տրամադրման, այդ թվում՝ սոցիալական ծառայությունների տրամադրման թափանցիկության, դրանց բարելավման միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև նպաստում է այդ միջոցառումների իրագործմանը: (Հավելված)	Խորհրդի կայացրած **որոշումները**, **առաջարկությունները**, **եզրակացությունները** գործակալության կողմից **չընդունվելու** (չբավարարվելու) դեպքում **Խորհուրդը կարող է այդ մասին տեղեկացնել մարզպետին և (կամ) ՀՀ ԱՍՀ նախարարին**: (Հավելված) Խորհուրդը կատարած աշխատանքների մասին **կիսամյակը** մեկ անգամ **ամփոփ տեղեկատվություն** է ներկայացնում մարզպետին և ՀՀ ԱՍՀՆ: Անհրաժեշտության դեպքում խորհուրդը կատարած աշխատանքների վերաբերյալ ներկայացնում է այլ տեղեկատվություն **ՀՀ ԱՍՀՆ**: (Հավելված) Խորհուրդն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստերը գումարվում են նաև խորհրդի նախագահի կամ գործակալության պետի նախաձեռնությամբ: (Հավելված)	Խորհրդի **անհատական կազմը** հաստատում է ՀՀ **մարզպետը**, իսկ Երևանում՝ **Երևանի քաղաքապետը**: (Հավելված) Խորհրդի **կազմում** ընդգրկվում են մարզպետարանի, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը, համայնքի (Երևանի վարչական շրջանի) ներկայացուցիչը, ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային մարմնի ներկայացուցիչը, ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային մարմնի ներկայացուցիչը և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչները: (Հավելված) **Լրացուցիչ ուսումնասիրություններ** կատարելու նպատակով խորհրդի կողմից ստեղծվում են համապատասխան **աշխատանքային խմբեր**: (Հավելված)
37.	**Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն** «Սոցիալական աջակցության տարածքային գործակալության և սոցիալական աջակցության տարածքային բաժնի օրինակելի կանոնադրությունները հաստատելու և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի	1. Գործակալությունը **ՀՀ մարզպետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում** է, որը տրամադրում է ծառայություններ սոցիալական աջակցության բնագավառում, որպես սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին: (Հավելված 1) 2. Գործակալության **նպատակները և խնդիրներն** են՝ գործակալության սպասարկման տարածքում բնակվող անձանց օրենքով նախատեսված **սոցիալական ծառայությունների տրամադրումը**, սոցիալական աջակցության բնագավառի պետական կարգավորման գործառույթների իրականացման ապահովումը սոցիալական աջակցության հանրապետական և տարածքային ծրագրերի իրականացման ապահովումն իր սպասարկման տարածքում: (Հավելված 1) 3. Գործակալությունը, իրականացնում է օրենսդրությամբ **սահմանված պետական նպաստների** և այլ դրամական	Գործակալությունը սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ **տվյալները ստանում է առցանց կամ անհրաժեշտ փաստաթղթերով**: (Հավելված 1) Գործակալությունը **հայտնաբերում** է աղքատ, սոցիալապես անապահով ընտանիքներին և սահմանված կարգով նրանց **հաշվառում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, պարզում է** սոցիալական	Գործակալությունը կառավարում է **ՀՀ մարզպետը**: (Հավելված 1) Գործակալության անմիջական ղեկավարումն իրականացնում է **գործակալության պետը**: Գործակալության աշխատողները **սոցիալական աշխատանքի մասնագետներ** են: (Հավելված 1) Գործակալությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումն ապահովում է **մարզպետարանի**

	փետրվարի 9-ի N 32-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման *N 115-ն, ընդունված է՝ 03.08.2015, ուժի մեջ է՝ 29.08.2015* Հաստատում է սոցիալական աջակցության տարածքային գործակալության և սոցիալական աջակցության տարածքային բաժնի օրինակելի կանոնադրությունները, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ ԱՍՀ նախարարի 2007 թվականի փետրվարի 9-ի N 32-Ն հրամանը:	վճարների **նշանակումը և վճարման** կազմակերպումը, **գնահատում է** սոցիալական աջակցություն հայցողների և ստացողների **սոցիալական կարիքները**, սոցիալական դեպքի վարման շրջանակներում **կազմում անհատական սոցիալական ծրագիրը**, ինչպես նաև ապահովում է **անհատական սոցիալական ծրագրի իրականացումը** և շարունակական հսկողությունը, իր սպասարկման տարածքում **կազմակերպում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը**, անհատական սոցիալական ծրագրի) շրջանակներում համակարգում է սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը: (Հավելված 1) 4. Գործակալությունը տալիս է **եզրակացություն խնամակալության և հոգաբարձության մարմնին**՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու, ինչպես նաև խնամակալ ճանաչելու կամ խնամատար ծնող կամ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին: (Հավելված 1) 5. Գործակալությունը տալիս է **եզրակացություն ընտանեկան բռնության ենթարկված անձանց կացարան** տրամադրող կազմակերպությանը ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառման միջոցով «ենթադրյալ» ընտանեկան բռնության ենթարկված անձի նախնական նույնացման մասին: (Հավելված 1) 6. Գործակալությունը մասնակցում է մարզի, իր սպասարկման տարածքի համայնքների տեղական **սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման** աշխատանքներին, **համագործակցում է աջակցող ցանցի հետ**, տարածքային մակարդակով կազմակերպում է **սոցիալական համագործակցության համաձայնագրի** ընդունման գործընթացը, կատարում է անձանց **ընդունելություն**՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն, աջակցում է դիմողի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքների իրականացմանը: (Հավելված 1) 7. Հանձնաժողովն աջակցում է **երեխայի կրթության իրավունքի իրականացմանը**, աջակցում է երեխաների կրթության **կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծմանը:** (Հավելված 1) 8. Ապահովում է սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ, սոցիալական աջակցության մատչելիություն և համարժեքություն սոցիալական աջակցություն ստացողների անհատական կարիքներին, հանդես է գալիս սոցիալական աջակցություն ստացողի օրինական **շահերի և իրավունքների պաշտպանությամբ**: (Հավելված 1)	աջակցություն ստանալու նպատակով դիմած **քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը**՝ դրանք տրամադրած մարմիններում և կազմակերպություններում, կամ գործակալությանը հասանելի տեղեկատվական շտեմարանների միջոցով: (Հավելված 1) Գործակալության պետը **հաշվետու է ՀՀ մարզպետին, ՀՀ ԱՍՀ նախարարին, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին:** (Հավելված 1) **Գործակալության պետը ապահովում է** գործակալություն դիմած քաղաքացիների (նրանց ընտանիքների) մասին ունեցած տեղեկությունների և գործակալության կողմից շահագործվող տեղեկատվական համապատասխան ենթահամակարգերում առկա **տվյալների գաղտնիությունը, մարզպետին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն** գործակալության իրականացրած աշխատանքների ընթացքի վերաբերյալ: (Հավելված 1) **Գործակալության պետի տեղակալը** կամ **բաժնի պետը** կամ **պատասխանատու աշխատողը** կամ **սոցիալական աշխատողը պարտավոր** է, **ուղղորդել** սոցիալական աջակցություն ստացողին տարբեր **մասնագիտացված կազմակերպություններ**՝ իրենց **իրավունքների մասին իրազեկելու,** ինչպես նաև դրանք իրականացնելու համար, պահանջել սոցիալական աջակցություն հայցող կամ սոցիալական աջակցություն ստացող անձից **միայն սոցիալական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ տեղեկությունները**, աջակցել անհրաժեշտ փաստաթղթերի **(տվյալների) ճիշտ ներկայացմանը**, հայտնաբերել և հաշվառել սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիներին և ընտանիքներին, ապահովել **տեղեկատվական ենթահամակարգերում ընտանիքների** (անձանց) մասին ամրագրված **տվյալների հավաստիությունը**, ընտանիքների անապահովության գնահատման **տեղեկատվական ենթահամակարգ մուտքագրել** տվյալ ընտանիքի սոցիալական անձնագրում ամրագրված տվյալները և ընտանիքի տվյալ ամսվա ընթացքում ներկայացրած իր ընտանիքում եղած **տվյալների փոփոխությունները**, նպաստի նշանակման համար ներկայացված դիմումը, **տեղեկատվական ենթահամակարգում ստուգել նպաստի վճարման** ժամկետները, **ընտանիքին տեղեկացնել** նպաստի վճարումը դադարեցնելու, ինչպես նաև այդ ընտանիքի տվյալների փաստագրման ժամկետը լրանալու մասին, **պարզաբանելով նրա իրավունքները**, ուսումնասիրել **քաղաքացիների դիմում-բողոքներում** բարձրացված հարցերը, պահպանել սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում իրեն հայտնի դարձած **տեղեկությունների գաղտնիությունը**: (Հավելված 1) **Գործակալության պատասխանատու**	**աշխատակազմը**: Գործակալությունը կարող է ունենալ (10 և ավելի հաստիք ունենալու դեպքում) **կառուցվածքային ստորաբաժանումներ**: (Հավելված 1) **Գործակալության պետի տեղակալը** կամ **բաժնի պետը** կամ **տեղական տեղեկատվական ենթահամակարգի պատասխանատու աշխատողը** կամ **սոցիալական աշխատողն** իրավունք ունի կատարելու **տնային այցելություններ**, անհրաժեշտության դեպքում **ուսումնասիրելու** սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և **նյութական պայմանները**, **պարզել** սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած **փաստաթղթերի հավաստիությունը**՝ դրանք տրամադրած մարմիններում և կազմակերպություններում, կամ գործակալությանը հասանելի տեղեկատվական շտեմարանների միջոցով: (Հավելված 1) **Գործակալության պետի տեղակալը** կամ **բաժնի պետը** կամ **պատասխանատու աշխատողը** կամ **սոցիալական աշխատողը պարտավոր** է **պաշտպանել** սոցիալական աջակցություն ստացողի **իրավունքներն ու օրինական շահերը**, ապահովել սոցիալական աջակցություն ստացողի **ներգրավվածությունը** և ակտիվ **մասնակցությունն** իր խնդիրների լուծման գործընթացին, որոշումների կայացմանը, **գնահատել** սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական **կարիքները**, կազմել սոցիալական աջակցություն ստացողի անհատական ծրագիրը՝ ներգրավելով աջակցող ցանցի մասնակիցների մասնագետներին, **օգտագործել** տվյալ տարածաշրջանում առկա աջակցող **ցանցը**՝ անհատական ծրագիր կազմելու և իրականացնելու նպատակով, **համակարգել** անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, ստանձնել **միջնորդի** դեր՝ ապահովելով կազմակերպությունների միջև **համագործակցությունը** և **տեղեկատվության փոխանակումը,** ինչպես նաև սոցիալական աջակցություն ստացողի օրինական **շահերի պաշտպանության առաջնային դերը,** կազմակերպությունների և համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հետ մշակել **կանխարգելող ծրագրեր**՝ ուղղված համայնքներում բացահայտված **ռիսկային գործոնների նվազեցմանը**, ապահովել անձանց համար սոցիալական աջակցության տրամադրման **հավասար հնարավորություններ**, ապահովել իր սպասարկման տարածքում բնակվող անձանց՝ սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ պետական նպաստ կամ այլ դրամական վճար տրամադրելը, ընթացք տալ նպաստի նշանակման համար **քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները**, ծրագրային մեթոդով որոշել ընտանիքի անապահովության միավորը, կազմել նպաստի գործ, պահպանել սոցիալական աշխատողի **էթիկայի կանոնները**: (Հավելված 1)

			աշխատողը պարտավոր է ապահովել գործակալության սպասարկման տարածքի ընտանիքների **անապահովության գնահատման համակարգի և այլ տեղեկատվական ենթահամակարգերի պահպանումը և անվտանգ շահագործումը**, կազմակերպել **տեղեկատվական ենթահամակարգերի շահագործումը, համակարգել** մյուս աշխատողների աշխատանքներն իրենց սպասարկման տարածքի քաղաքացիների (ընտանիքների) հետ, կատարել ընտանիքների անապահովության գնահատման համակարգի **տեղեկատվական ենթահամակարգում սոցիալական խմբերի համար ամրագրված ժամկետների ծրագրային ստուգում**, ծրագրային մեթոդով ընտանիքների անապահովության գնահատման համակարգի **տեղեկատվական ենթահամակարգում կատարել** ընտանիքների անապահովության **միավորի հաշվարկ**, **ճշտել** վճարող մարմնի աշխատողի կողմից նպաստի կամ այլ դրամական վճարների **վճարումը** կատարելու համար նախանշված երթուղին, սոցիալական աջակցության **տեղեկատվական շտեմարանների սպասարկման և շահագործման բնագավառում** ՀՀ կառավարության լիազորած կազմակերպությունից ստանալ նպաստի և այլ դրամական վճարների **վճարման ցուցակները**, դրանց տիտղոսաթերթերը և հաստատման ներկայացնել գործակալության պետին, **վճարող մարմիններին հանձնել** նպաստի և այլ դրամական վճարների **վճարման փաստաթղթերը** և նրանց ներկայացուցչից ստանալ **փոխադարձ հաշվետվությունները** (ռեեստրները) և համապատասխան տվյալները **մուտքագրել տեղեկատվական ենթահամակարգ** սահմանված ժամկետներում, **իրականացնել տեղեկատվական շտեմարանների սպասարկման և շահագործման բնագավառում ՀՀ կառավարության լիազորած կազմակերպության հետ աշխատանքները**: (Հավելված 1) **Գործակալության սոցիալական սպասարկողը պարտավոր** է ապահովել **տեղեկատվական ենթահամակարգերում** ընտանիքների (անձանց) մասին ամրագրված **տվյալների հավաստիությունը**, ընտանիքների անապահովության գնահատման **տեղեկատվական ենթահամակարգ մուտքագրել** տվյալ ընտանիքի սոցիալական **անձնագրում ամրագրված տվյալները** և ընտանիքի տվյալ ամսվա ընթացքում ներկայացրած իր ընտանիքում եղած տվյալների **փոփոխությունները**, նպաստի նշանակման համար ներկայացված **դիմումը**, **տեղեկատվական ենթահամակարգում ստուգել** նպաստ ստացող ընտանիքների նպաստի վճարման ժամկետները, **ուսումնասիրել քաղաքացիների դիմում-բողոքներում** բարձրացված հարցերը, պահպանել սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում իրեն հայտնի դարձած **տեղեկությունների գաղտնիությունը:** (Հավելված 1)	**Գործակալության սոցիալական սպասարկողն** իրավունք ունի կատարելու **տնային այցելություններ**, անհրաժեշտության դեպքում **ուսումնասիրելու** սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և **նյութական պայմանները**, պարզել սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած **փաստաթղթերի հավաստիությունը**՝ դրանք տրամադրած մարմիններում և կազմակերպություններում, կամ գործակալությանը հասանելի տեղեկատվական շտեմարանների միջոցով, ինչպես նաև տալ առաջարկություն տվյալ ընտանիքին աջակցություն տրամադրելու հարցը: **Գործակալության սոցիալական սպասարկողը պարտավոր** է միջոցներ ձեռնարկել **հայտնաբերելու** սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց, ընտանիքներին և **աջակցել** նրանց դիմելու տարածքային մարմնին, **ապահովել** իր սպասարկման տարածքում բնակվող անձանց՝ **սոցիալական ծառայություններ**, այդ թվում՝ նպաստ տրամադրելը, հավասար պայմաններ, ապահովել անհրաժեշտ **խորհրդատվությամբ** գործակալություն դիմած քաղաքացիներին, ընթացք տալ նպաստի նշանակման համար քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները, ծրագրային մեթոդով որոշել ընտանիքի անապահովության միավորը, **ընտանիքին տեղեկացնել** նպաստի վճարումը դադարեցնելու, ինչպես նաև այդ ընտանիքի տվյալների փաստագրման ժամկետը լրանալու մասին, կազմել նպաստի գործ, պահպանել սոցիալական աշխատողի էթիկայի կանոնները: (Հավելված 1)

38.	**Սոցիալական աջակցության տարածքային բաժին** «Սոցիալական աջակցության տարածքային գործակալության և սոցիալական աջակցության տարածքային բաժնի օրինակելի կանոնադրությունները հաստատելու և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի փետրվարի 9-ի N 32-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրաման *N 115-Ն, ընդունված է՝ 03.08.2015, ուժի մեջ է՝ 29.08.2015* Հաստատում է սոցիալական աջակցության տարածքային գործակալության և սոցիալական աջակցության տարածքային բաժնի օրինակելի կանոնադրությունները:	1. **Համայնքի, իսկ Երևանում՝ վարչական շրջանի սոցիալական աջակցության տարածքային բաժինը համայնքի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է**, որը տրամադրում է **ծառայություններ սոցիալական աջակցության բնագավառում**, որպես սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին: (Հավելված 2) 2. Բաժնի **նպատակները և խնդիրները** ներառում են՝ բաժնի սպասարկման տարածքում բնակվող անձանց (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) **սոցիալական ծառայությունների տրամադրումը**, սոցիալական աջակցության հանրապետական և տարածքային **ծրագրերի իրականացման ապահովումն** իր սպասարկման տարածքում: (Հավելված 2) 3. Բաժինն իրականացնում է օրենսդրությամբ **սահմանված** պետական նպաստների և այլ դրամական վճարների նշանակումը և **վճարման** կազմակերպումը, **գնահատում** է սոցիալական աջակցություն հայցողների և ստացողների սոցիալական **կարիքները**, սոցիալական դեպքի վարման շրջանակներում կազմում անհատական սոցիալական ծրագիրը, ինչպես նաև ապահովում է անհատական սոցիալական ծրագրի իրականացումը և շարունակական հսկողությունը, իր սպասարկման տարածքում կազմակերպում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը, անհատական սոցիալական ծրագրի շրջանակներում համակարգում է սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը: (Հավելված 2) 4. Բաժինը տալիս է **եզրակացություն խնամակալության և հոգաբարձության մարմնին**՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու, ինչպես նաև խնամակալ ճանաչելու կամ խնամատար ծնող կամ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին: (Հավելված 2) 5. Բաժինը տալիս է **եզրակացություն ընտանեկան բռնության ենթարկված անձանց կացարան** տրամադրող կազմակերպությանը՝ ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառման միջոցով «ենթադրյալ» ընտանեկան բռնության ենթարկված անձի նախնական նույնացման մասին: (Հավելված 2) 6. Բաժինը մասնակցում է մարզի (վարչական շրջանի), իր սպասարկման տարածքի համայնքների տեղական **սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման** աշխատանքներին, համագործակցում է **աջակցող ցանցի** հետ, տարածքային մակարդակով կազմակերպում է **սոցիալական համագործակցության համաձայնագրի** ընդունման գործընթացը, կատարում է անձանց **ընդունելություն**՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն, աջակցում է դիմողին բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքների իրականացմանը: (Հավելված 2) 7. Բաժինը **աջակցում է երեխայի կրթության** (այդ թվում՝ նախադպրոցական կրթության) իրավունքի իրականացմանը, աջակցում է **երեխաների կրթության կազմակերպման** և **ընտանեկան դաստիարակության** հարցերի լուծմանը,: 8. Ապահովում է սոցիալական աջակցության տրամադրման **հավասար հնարավորություններ**, սոցիալական աջակցության **մատչելիություն** և **համարժեքություն** սոցիալական աջակցություն ստացողների անհատական կարիքներին և հանդես է գալիս սոցիալական աջակցություն ստացողի օրինական **շահերի և իրավունքների պաշտպանությամբ**: (Հավելված 2)	Բաժինը **հայտնաբերում է** աղքատ, սոցիալապես անապահով ընտանիքներին և նրանց **հաշվառում** ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, **պարզում է** սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի **հավաստիությունը**՝ դրանք տրամադրած մարմիններում և կազմակերպություններում կամ բաժնին հասանելի **տեղեկատվական շտեմարանների** միջոցով: (Հավելված 2) Բաժինը սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ **տվյալները ստանում է առցանց** կամ անհրաժեշտ փաստաթղթերով: (Հավելված 2) **Բաժնի պետը** հաշվետու է **համայնքի ղեկավարին**, իսկ Երևանում **վարչական շրջանի ղեկավարին** և **Երևանի քաղաքապետին**, իսկ սոցիալական աջակցության մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ ՀՀ ԱՍՀ նախարարին: **Բաժնի պետը** ապահովում է բաժին դիմած քաղաքացիների (նրանց ընտանիքների) մասին ունեցած **տեղեկությունների և բաժնի կողմից շահագործվող տեղեկատվական համապատասխան ենթահամակարգերում առկա տվյալների գաղտնիությունը**, համայնքի կամ Երևանի վարչական շրջանի ղեկավարին պարբերաբար ներկայացնում է **տեղեկատվություն** բաժնի իրականացրած աշխատանքների ընթացքի վերաբերյալ, իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների, աջակցող ցանցի անդամների հետ: (Հավելված 2) **Բաժնի պետի տեղակալը** կամ **պատասխանատու աշխատողը** կամ **սոցիալական աշխատողը պարտավոր է ուղղորդել** սոցիալական աջակցություն ստացողին տարբեր մասնագիտացված կազմակերպություններ՝ իրենց **իրավունքների մասին իրազեկելու**, ինչպես նաև դրանք իրականացնելու համար, **պահանջել** սոցիալական աջակցություն հայցող կամ ստացող անձից **միայն սոցիալական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ տեղեկությունները**, աջակցել անհրաժեշտ փաստաթղթերի **(տվյալների) ճիշտ ներկայացմանը**, **հայտնաբերել և հաշվառել** սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիներին և ընտանիքներին, ապահովել **տեղեկատվական ենթահամակարգերում** ընտանիքների (անձանց) մասին ամրագրված **տվյալների հավաստիությունը**, ընտանիքների անապահովության գնահատման **տեղեկատվական ենթահամակարգ մուտքագրել** տվյալ ընտանիքի սոցիալական անձնագրում ամրագրված տվյալները և ընտանիքի տվյալ ամսվա ընթացքում ներկայացրած իր ընտանիքում եղած տվյալների փոփոխությունները, նպաստի նշանակման համար ներկայացված դիմումը, **տեղեկատվական ենթահամակարգում ստուգել** նպաստ ստացող ընտանիքների նպաստի	Բաժինը կառավարում է **համայնքի ղեկավարը**, Երևանում՝ համապատասխան **վարչական շրջանի ղեկավարը**: Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է **բաժնի պետը**: (Հավելված 2) Բաժնի աշխատողները **սոցիալական աշխատանքի մասնագետներ** են: (Հավելված 2) **Բաժնի պետի տեղակալը** կամ **պատասխանատու աշխատողը** կամ **սոցիալական աշխատողն իրավունք ունի** կատարելու **տնային այցելություններ**, անհրաժեշտության դեպքում **ուսումնասիրելու** սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և **նյութական պայմանները**, **պարզել** սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի **հավաստիությունը**՝ դրանք տրամադրած մարմիններում և կազմակերպություններում, կամ բաժնին հասանելի տեղեկատվական շտեմարանների միջոցով: **Բաժնի պետի տեղակալը** կամ **պատասխանատու աշխատողը** կամ **սոցիալական աշխատողը պարտավոր է պաշտպանել** սոցիալական աջակցություն ստացողի **իրավունքներն ու օրինական շահերը**, ապահովել սոցիալական աջակցություն ստացողի **ներգրավվածությունը** և ակտիվ **մասնակցությունն** իր խնդիրների լուծման գործընթացին, որոշումների կայացմանը, **գնահատել** սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական **կարիքները**, **կազմել** սոցիալական աջակցություն ստացողի **անհատական ծրագիրը**՝ ներգրավելով **աջակցող ցանցի** մասնակիցների մասնագետներին, օգտագործել տվյալ տարածաշրջանում առկա **աջակցող ցանցը**, **համակարգել** անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, ստանձնել **միջնորդի** դեր տարբեր և երբեմն միմյանց հակասող շահեր ունեցող կազմակերպությունների միջև՝ ապահովելով կազմակերպությունների միջև համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի պաշտպանության առաջնային դերը, կազմակերպությունների և համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հետ մշակել **կանխարգելող ծրագրեր**՝ ուղղված համայնքներում բացահայտված **ռիսկային գործոնների նվազեցմանը**, ապահովել անձանց համար սոցիալական աջակցության տրամադրման **հավասար հնարավորություններ**, ապահովել իր սպասարկման տարածքում բնակվող անձանց՝ **սոցիալական ծառայություններ**, այդ թվում՝ պետական նպաստ կամ այլ դրամական վճար տրամադրելը, **հայտնաբերել աղքատ ընտանիքներին** ստացած դիմումների, ահազանգերի, բաժնի պետի հաստատած ժամանակացույցի համաձայն կամ անհրաժեշտության դեպքում կատարվող տնային

			վճարման ժամկետները, **ընտանիքին տեղյակ պահել** նպաստի վճարումը դադարեցնելու, ինչպես նաև այդ ընտանիքի տվյալների փաստագրման ժամկետը լրանալու մասին, **պարզաբանելով նրա իրավունքները**, **ուսումնասիրել** քաղաքացիների **դիմում-բողոքներում** բարձրացված հարցերը, **պահպանել** սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում իրեն հայտնի դարձած **տեղեկությունների գաղտնիությունը**: (Հավելված 2) **Բաժնի պատասխանատու աշխատողը պարտավոր է** նաև ապահովել բաժնի սպասարկման տարածքի ընտանիքների անապահովության գնահատման համակարգի և այլ **տեղեկատվական ենթահամակարգերի պահպանումը և անվտանգ շահագործումը**, **կազմակերպել տեղեկատվական ենթահամակարգերի շահագործումը**, **համակարգել** մյուս աշխատողների աշխատանքներն իրենց սպասարկման տարածքի քաղաքացիների (ընտանիքների) հետ, կատարել ընտանիքների անապահովության գնահատման համակարգի **տեղեկատվական ենթահամակարգերի** սոցիալական խմբերի համար ամրագրված ժամկետների **ծրագրային ստուգում**, ծրագրային մեթոդով ընտանիքների անապահովության գնահատման համակարգի **տեղեկատվական ենթահամակարգում** կատարել ընտանիքների անապահովության **միավորի հաշվարկ,** սոցիալական աջակցության **տեղեկատվական շտեմարանների սպասարկման և շահագործման** բնագավառում ՀՀ կառավարության լիազորած կազմակերպությունից ստանալ նպաստի և այլ դրամական վճարների վճարման **ցուցակները**, դրանց տիտղոսաթերթերը, վճարող մարմիններին **հանձնել** նպաստի և այլ դրամական վճարների **վճարման փաստաթղթերը**, նրանց ներկայացուցչից **ստանալ փոխադարձ հաշվետվությունները** (ռեեստրները) և համապատասխան **տվյալները մուտքագրել տեղեկատվական ենթահամակարգ**, ինչպես նաև **իրականացնել տեղեկատվական շտեմարանների սպասարկման և շահագործման** բնագավառում ՀՀ կառավարության լիազորած կազմակերպության հետ աշխատանքները: (Հավելված 2) **Բաժնի սոցիալական սպասարկողը պարտավոր է** ապահովել **տեղեկատվական ենթահամակարգերում** ընտանիքների (անձանց) մասին ամրագրված **տվյալների հավաստիությունը**, ընտանիքների անապահովության գնահատման **տեղեկատվական ենթահամակարգ մուտքագրել** տվյալ ընտանիքի սոցիալական անձնագրում ամրագրված տվյալները և ընտանիքի տվյալ ամսվա ընթացքում ներկայացրած իր ընտանիքում եղած տվյալների փոփոխությունները, նպաստի նշանակման համար ներկայացված դիմումը, **տեղեկատվական ենթահամակարգում ստուգել** նպաստ ստացող ընտանիքների նպաստի **վճարման ժամկետները**, **ուսումնասիրել**	այցելությունների միջոցով, ապահովել անհրաժեշտ **խորհրդատվությամբ** բաժին դիմած քաղաքացիներին, ընթացք տալ նպաստի նշանակման համար քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները, ծրագրային մեթոդով **որոշել ընտանիքի անապահովության միավորը**, **կազմել նպաստի գործ**, որի մեջ ամփոփվում են ներկայացված և ստացված բոլոր փաստաթղթերը (տվյալները), առաջարկել սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած քաղաքացուն տրամադրվող սոցիալական ծառայության տեսակը, պահպանել սոցիալական աշխատողի էթիկայի կանոնները: (Հավելված 2) **Բաժնի սոցիալական սպասարկողն իրավունք ունի** կատարելու **տնային այցելություններ**, անհրաժեշտության դեպքում **ուսումնասիրելու** սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և **նյութական պայմանները**, ներկայացնելու **առաջարկություններ** սոցիալական աջակցության **ծրագրերի ձևավորման** և դրանց **կատարելագործման** վերաբերյալ, **պարզել** սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած **փաստաթղթերի հավաստիությունը**՝ դրանք տրամադրած մարմիններում և կազմակերպություններում կամ բաժնին հասանելի տեղեկատվական շտեմարանների միջոցով: (Հավելված 2) **Բաժնի սոցիալական սպասարկողը պարտավոր է** միջոցներ ձեռնարկել **հայտնաբերելու** սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց, ընտանիքներին և աջակցել նրանց դիմելու տարածքային մարմնին, ապահովել իր սպասարկման տարածքում բնակվող անձանց՝ **սոցիալական ծառայություններ**, այդ թվում՝ նպաստ տրամադրելը, համար հավասար պայմաններ, ապահովել անհրաժեշտ **խորհրդատվությամբ** բաժին դիմած քաղաքացիներին, ընթացք տալ նպաստի նշանակման համար քաղաքացիների կողմից ներկայացված **դիմումները**, ծրագրային մեթոդով **որոշել ընտանիքի անապահովության միավորը**, ընտանիքին տեղեկացնել նպաստի վճարումը դադարեցնելու, ինչպես նաև այդ ընտանիքի տվյալների փաստագրման ժամկետը լրանալու մասին, **պարզաբանելով նրա իրավունքները**, կազմել **նպաստի գործ**, պահպանել սոցիալական աշխատողի **էթիկայի կանոնները**: (Հավելված 2)

			քաղաքացիների **դիմում-բողոքներում** բարձրացված հարցերը, **պահպանել** սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում իրեն հայտնի դարձած **տեղեկությունների գաղտնիությունը**: (Հավելված 2)	
39.	**«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհուրդ** «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման *N 115-ն, ընդունված է՝ 03.08.2015, ուժի մեջ է՝ 29.08.2015* Հաստատում է հանրակրթական ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությունը, հանձնարարական է տալիս ՀՀ ԿԳՆ աշխատակազմի հանրակրթության վարչության պետին և իրավաբանական վարչության պետին, հրամանի կատարման հսկողությունը վերապահում է ՀՀ ԿԳ նախարարի տեղակալին:	1. ՀՀ **յուրաքանչյուր հաստատության** սովորողների ընդհանուր ժողովը իրավասու ստեղծել հաստատության **աշակերտական խորհուրդ** և ընդունել իր կանոնադրությունը՝ դրան համապատասխան իրականացնելով **սովորողների ինքնավարություն**: (Հավելված) 2. **Աշակերտական խորհուրդը** ստեղծվում է **ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին** համապատասխան հաստատության գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին **սովորողների կարծիքի ազատ արտահայտումն** ապահովելու և **սովորողների իրավունքների ու պարտականությունների** վերաբերյալ հաստատության կանոնադրության դրույթների պահպանումը **վերահսկելու** նպատակով: (Հավելված) 3. Աշակերտական խորհուրդը սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված **ներկայացուցչական մարմին է**, որի գործունեության հիմնական սկզբունքներն են՝ կազմավորություն, սովորողների իրավահավասարությունը, կառավարման կոլեգիալություն և հրապարակայնությունը: (Հավելված) 4. Սովորողների ինքնավարության հիմնական **խնդիրներն** են՝ համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելը, ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը նպաստելը, հաստատությունում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը, սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը օժանդակելը, սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցման ու իրացմանը օժանդակելը, հաստատության սովորողների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, սովորողների առողջության, կյանքի անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին աջակցելը և սովորողների նախաձեռնությունների ապահովմանը օժանդակելը, հաստատությունում սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանն օժանդակելը, ինչպես նաև երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական, ժողովրդավարական պետության կառուցմանը օժանդակելը: (Հավելված) 5. Աշակերտական խորհուրդը **խորհրդակցական ձայնի իրավունքով** մասնակցում է **հաստատության կառավարման խորհրդի** և **մանկավարժական խորհրդի** նիստերին՝ սովորողներին վերաբերող **ուսուցման բովանդակության**, գիտելիքների յուրացման **որակի**, նրանց հետ տարվող **արտադասարանական** և **արտադպրոցական** աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկումներին, **կարծիք** է ներկայացնում հաստատության **մանկավարժական խորհրդին**՝ հաստատության ներքին կարգապահական կանոնները խախտելու համար սովորողի նկատմամբ **կարգապահական տույժեր** կիրառելու վերաբերյալ, կարող է ստեղծել **մանկապատանեկան ակումբներ** և աջակցում է դրանց աշխատանքների կազմակերպմանը, **մասնակցում է համայնքին օժանդակող** ծրագրերի իրականացմանը, **արձագանքում** և իր իրավասությունների սահմաններում **ընթացք է տալիս** սովորողների **անհատական և կոլեկտիվ առաջարկներին** ու **դիմումներին**, աշխատանքներ է տանում **սովորողների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի** բարելավման ուղղությամբ, աջակցում է հաստատության կառավարման խորհրդի, մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի և տնօրինության կողմից սովորողներին անմիջականորեն վերաբերող այլ աշխատանքների իրականացմանը: (Հավելված) 6. Աշակերտական խորհուրդը **առաջարկություններ է ներկայացնում** հաստատության **տնօրինությանը**՝ հաստատության **ներքին կարգապահական կանոնների**. **սովորողների հանգստի** և **ժամանցի** կազմակերպման, հաստատության և ընտանիքի **կապի ամրապնդման**, **դասավանդման բովանդակության**, սովորողների գիտելիքների յուրացման **որակի**, նրանց **վարքի**, **կարգապահության** բարելավման վերաբերյալ: (Հավելված) 7. Աշակերտական խորհուրդը հաստատության կառավարման խորհրդի և խորհրդակցական մյուս մարմինների հետ համատեղ՝ **մասնակցում է սովորողների արտաուսումնական**, **արտադպրոցական** և **արտադասարանական դաստիարակչական** աշխատանքների կազմակերպմանը, մասնակցում է **ծնողազուրկ** և **օգնության կարիք ունեցող երեխաների հաշվառմանը**՝ նրանց **նյութական և այլ օգնություն** ցուցաբերելու աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացում, **պաշտպանում է երեխայի իրավունքները** հաստատությունում. նպաստում է դպրոցի **սանիտարահիգիենիկ պայմանների պահպանմանը**, համագործակցում է **դասղեկների** հետ: (Հավելված) 8. **Դասարանական խորհուրդը** նախաձեռնում և դասարանի ղեկավարի (դասղեկ) հետ կազմակերպում է դասարանի սովորողների առաջադիմությանը, առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, համագործակցում է աշակերտական խորհրդի հանձնախմբերի հետ՝ դասարանական և դպրոցական միջոցառումների կազմակերպման համար: (Հավելված) 9. Աշակերտական խորհուրդը կարող է **համագործակցել** Հայաստանի և օտարերկրյա կրթական	Սովորողների **ընդհանուր ժողովը** հրավիրվում է տարեկան երկու անգամից ոչ պակաս՝ աշակերտական խորհրդի կողմից: (Հավելված) **Ընդհանուր ժողովը** ի գիտություն է ընդունում հաստատության գործունեության վերաբերյալ տնօրենի ամենամյա ծրագրային ուղերձը, քննարկում է աշակերտական խորհրդի և նրա նախագահի տարեկան հաշվետվությունները և տալիս է գնահատական, լսում է հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի կամ սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի հաղորդումը՝ ուսումնական տարվա ընթացքում արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման մասին, ընդունում համապատասխան որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է աշակերտական խորհրդի համար: (Հավելված) **Դասարանական ընդհանուր ժողովը** հրավիրվում է ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան **երկու ամիսը** մեկ:	Հաստատության սովորողների **ինքնավարության բարձրագույն մարմինը** հաստատության 6-12-րդ (հիմնական դպրոցի համար՝ 6-9-րդ, ավագ դպրոցի համար՝ 10-12-րդ) դասարանների **սովորողների ընդհանուր ժողովն է**: Ընդհանուր ժողովին **կարող են մասնակցել** նաև 5-րդ դասարանի սովորողները՝ **խորհրդակցական ձայնի** իրավունքով: (Հավելված) **Աշակերտական ինքնավարության մարմինների ընտրությունների** կազմակերպման նպատակով ձևավորվում է **ընտրական հանձնախումբ**՝ յուրաքանչյուր դասարանի խորհրդի կազմում չընդգրկված մեկական սովորողներից: (Հավելված) Հաստատությունում սովորողների ինքնավարության **սկզբնական կառուցվածքային օղակը դասարանական ընդհանուր ժողովն** է, որը ձևավորում է **դասարանական խորհուրդ:** Խորհուրդը կազմվում է տվյալ դասարանից ընտրված երեքից հինգ սովորողներից, **մեկ տարի** լիազորությունների ժամկետով: **Աշակերտական խորհրդի նախագահն** ընտրվում է հաստատության սովորողների կողմից՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: (Հավելված) Աշակերտական խորհրդի գործունեությունը կազմակերպելու նպատակով ստեղծվում են համապատասխան **մասնագիտացված հանձնախմբեր:** (Հավելված) Սովորողները կարող են ըստ իրենց նախասիրությունների ստեղծել նաև **ակումբներ, միավորումներ**, որոնք նույնպես հանդիսանում են սովորողների ինքնավարության զարգացմանը: (Հավելված)

		հաստատությունների սովորողների ինքնավարության մարմինների ու կազմակերպությունների հետ: (Հավելված)		
40.	**Մարդու իրավունքների պաշտպան** «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք *ՀՕ-23-Ն, ընդունված է՝ 21.10.2003, ուժի մեջ է՝ 01.01.2004* Սահմանում է Մարդու իրավունքների պաշտպանին պաշտոնում ընտրելու և պաշտոնից ազատելու կարգը, լիազորությունները, գործունեության պայմանները և երաշխիքները:	1. Մարդու իրավունքների պաշտպանը **անկախ և անփոփոխելի** պաշտոնատար անձ է, որն իրականացնում է **պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը**՝ ղեկավարվելով օրինականության, հասարակական համակեցության և սոցիալական արդարության հիմնարար սկզբունքներով: (Հոդված 2) 2. Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ, այդ թվում՝ անկախ սեռից և տարիքից: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ խնամակալության և հոգաբարձության մարմինների, չեն կարող Պաշտպանին բողոքներ ներկայացնել: (Հոդված 8)	Պաշտպանը չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի: Պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ, այդ թվում՝ նաև որպես վկա, իր մոտ գտնվող բողոքի կամ փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Պաշտպանի որոշումները վարչական ակտ չեն հանդիսանում և բողոքարկման ենթակա չեն: (Հոդված 5) Մինչև բողոքի վերաբերյալ Պաշտպանի կողմից վերջնական որոշման ընդունումը, քննարկման ենթակա բողոքները կամ դրանց բովանդակությունը հրապարակման ենթակա չեն: Պաշտպանն իրավունք չունի բողոքի ուսումնասիրման ընթացքում իրեն հայտնի դարձած դիմողի կամ այլ անձանց մասին տվյալներ հրապարակել՝ առանց նրանց գրավոր համաձայնության: (Հոդված 14) Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը ՀՀ Նախագահին, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններ է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկույց, իսկ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում դա ներկայացնում է Ազգային ժողովի նիստում: Պաշտպանը զեկույցը ներկայացնում է նաև զանգվածային լրատվամիջոցներին և համապատասխան հասարակական կազմակերպություններին: Հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաև խախտումները զանգվածաբար չվերացնելու դեպքերում Պաշտպանը կարող է հանդես գալ արտահերթ հրապարակային զեկույցներով: (Հոդված 17)	Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որում իրականացվում է պետական ծառայություն՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայությունը անվանմամբ: Մարզերում կարող են ստեղծվել Պաշտպանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներ: Այն անձինք, ովքեր որևէ պաշտոն են զբաղեցնում Պաշտպանի աշխատակազմում, չեն կարող մեղադրվել, հետաքննության ենթարկվել, ձերբակալվել, կալանքի ենթարկվել կամ դատի տրվել Պաշտպանի հանձնարարականի համաձայն իրենց պարտականությունները կատարելիս, որևէ գործողության, կարծիքի կամ ընդունած որոշման համար: Եթե աշխատակազմում որևէ պաշտոն զբաղեցնող անձը ձերբակալվում է, կալանքի է ենթարկվում կամ դատի է տրվում այլ հանգամանքի պատճառով, ապա մեղադրող մարմինը պետք է սահմանված կարգով և ժամկետում այդ մասին տեղեկացնի Պաշտպանին: (Հոդված 23) Պաշտպանը, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, կարող է ստեղծել փորձագիտական խորհուրդներ՝ կազմված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող անձանցից: (Հոդված 26)
41.	**ՀՀ մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին** «ՀՀ մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի օրինակելի կանոնադրությունը հաստատելու և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2010 թվականի հուլիսի 14-ի N 07-Ն և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թվականի հուլիսի 13-ի N 66-Ն համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների	1. ՀՀ մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը **ՀՀ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է:** 2. Բաժնի **խնդիրներն** են՝ մարզում ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության իրականացման ապահովումը, ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովմանն աջակցելը, մարզում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանության ապահովումը, նման իրավիճակում նրանց հայտնվելու կանխարգելումը, մարզում ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական նպատակային ծրագրերի մշակումը և դրանց կատարման ապահովումը, մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ծրագրերի մշակումը և դրանց կատարման ապահովումը, մարզում հակասոցիալական վարք դրսևորած և իրավախախտ անչափահասների համար այլընտրանքային (վերականգնողական) արդարադատության ծրագրերի մշակում և դրանց կատարման ապահովումը: 3. Բաժինն իրականացնում է **ընտանիքի, կանանց և երեխաների (ԸԿԵ) պաշտպանությանն ուղղված քաղաքականությունը** մարզերում, մշակում և իրականացնում է ԸԿԵ պաշտպանությանն ուղղված ծրագրեր, ուսումնասիրում է մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերը, մշակում դրանց լուծմանն ուղղված ծրագրեր, ուսումնասիրում է մարզում կանանց և երեխաների թրաֆիքինգի հիմնահարցերը, մշակում զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրեր, ՀՀ ԱՍՀՆ միջոցով իրականացնում է մարզում հայտնաբերված թրաֆիքինգի զոհերի ուղղորդումը համապատասխան գերատեսչություններ և կառույցներ, ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ աշխատանքներ է իրականացնում իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) հետ, ապահովում երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների	Բաժինը ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության, իրավական ակտերի և փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների վերաբերյալ խորհրդատվություն, աջակցություն և տեղեկատվություն ստանում է **ՀՀ ԱՍՀՆ**-ից և այլ գերատեսչություններից: **Բաժնի պետը** հաշվետու է **մարզպետին,** մարզպետի՝ բաժնի գործունեությունը համակարգող համապատասխան **տեղակալին** և **մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին:** **Բաժինը տարեկան հաշվետվություն** է ներկայացնում **կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների քաղաքականության** համակարգման լիազոր մարմնին՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի լուծմանն ուղղված աշխատանքների մասին և տալիս առաջարկություններ՝ հաջորդ տարվա	Բաժնի կանոնադրությունը հաստատում է **ՀՀ մարզպետը**: Բաժինը բաղկացած է **բաժնի պետից և 5 (հինգ) աշխատողներից**՝ իրավագիտություն, մանկավարժություն, հոգեբանություն, սոցիալական աշխատանք կամ սոցիալական մանկավարժություն կամ առողջապահություն մասնագիտությունների գծով քաղաքացիական ծառայողներից:

	նախարարի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համատեղ հրաման *N 158-Ն, ընդունված է՝ 12.11.2015, ուժի մեջ է՝ 08.01.2016* Հաստատում է ՀՀ մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի օրինակելի կանոնադրությունը, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ ՏԿ նախարարի 2010թ. հուլիսի 14-ի N 07-Ն և ՀՀ ԱՍՀ նախարարի 2010թ. հուլիսի 13-ի N 66-Ն համատեղ հրամանը:	իրականացումը, մասնակցում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի անհատական սոցիալական ծրագրի մշակմանը, դրանով նախատեսված միջոցառումների իրականացմանը, խմբային (բազմամասնագիտական) քննարկումներին, ձեռնարկում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ, պաշտոնատար անձանցից և այլ քաղաքացիներից ստացված, երեխայի կյանքի և առողջությանը սպառնալու նրա իրավունքների և շահերի խախտումների տեղեկատվության դեպքերում, լուծում է առկա տարաձայնությունները՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում՝ հաշվի առնելով երեխայի շահերը, մասնակցում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի հետ կապված հատուկ դեպքերը, մասնակցում է դատական այն նիստերին, որտեղ քննարկվում են երեխայի իրավունքներն ու շահերը, երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքերում, խնամակալության և հոգաբարձության մարմնին ցուցաբերում է անհրաժեշտ աջակցություն՝ երեխային ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, վերցնելու և երեխայի ժամանակավոր տեղավորումն անհապաղ ապահովելու հարցում, իրականացնում է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը՝ նրանց ներգրավելով հանրակրթական կամ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում, բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի գնահատման արդյունքների եզրակացության հիման վրա վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ քննարկում է մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրները, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է համապատասխան հաստատություններ, պաշտպանում է անչափահասների իրավունքներն ու շահերը, իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն, կատարում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի և առանց ծնողական խնամքի մնացած երեխայի հետագա խնամքը տրամադրելու վերաբերյալ սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) տրամադրած նախնական եզրակացության լրիվ, օբյեկտիվ և համակողմանի ուսումնասիրություն և ստացված փաստաթղթերի ու տեղեկատվության համադրման, վերլուծության արդյունքում կազմում եզրակացություն՝ երեխայի հետագա խնամքը տրամադրելու մասին, որդեգրել ցանկացող անձին տալիս է որդեգրելու հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն, խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձին տալիս է խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու մասին տալիս է համապատասխան եզրակացություն (դրական կամ բացասական), երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու հնարավորության մասին առաջարկությունը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը սոցիալական աջակցության տարածքային գործակալության (բաժնի) կողմից ստանալուց հետո, խնամքի տրամադրում հայցող երեխայի ընտանիքի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված լինելու և սոցիալապես անապահով լինելու դեպքում, ուսումնասիրում է բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում երեխային տեղավորելու այլընտրանքային տարբերակները և դրանց բացակայության դեպքում, ներկայացնում գրավոր եզրակացություն երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու վերաբերյալ, մինչև երեխայի 18 տարին լրանալը, բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունից նրա դուրսգրման մասին տալիս է համապատասխան եզրակացություն, դատարան է ներկայացնում ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ դիմումները, աջակցում է երեխաների ծննդյան վկայականների ձեռքբերմանը:	իրականացվելիք միջոցառումների մասին, մարզում հայտնաբերված **թրաֆիքինգի զոհերի վերաբերյալ տեղեկատվությունը** տրամադրում է ՀՀ ԱՍՀՆ և ոստիկանությանը, իրականացնում է **կյանքի դժվարին իրավիճակում** գտնվող **երեխաների** (նրանց ընտանիքների) կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական **ուսումնասիրություն**, **վարում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգը**՝ դրանում **հաշվառելով** առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և ներկայացնում ԱՍՀՆ, որդեգրել ցանկացող անձին՝ որպես որդեգրողի թեկնածու (տվյալները գրանցում է հաշվառման մատյանում, լրացնում որդեգրողի թեկնածուի անձնական քարտը և պատճենը փոխանցում է նախարարություն), որդեգրման ենթակա երեխաների մասին տվյալները և անձնական քարտի պատճենները ներկայացնում է ՀՀ ԱՍՀՆ՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար, խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձին՝ որպես խնամատար ծնողի թեկնածու (տվյալները գրանցում է հաշվառման մատյանում և լրացնում խնամատար ծնողի թեկնածուի անձնական քարտը և պատճենը փոխանցում է ՀՀ ԱՍՀՆ), մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասներին (ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայություններից ստացված տեղեկատվության համաձայն), հանրակրթությունից դուրս մնացած երեխաներին, մանկուց հաշմանդամ երեխաներին, սոցիալապես անապահով ընտանիքների, բուժական հաստատություններում, բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունում գտնվող երեխաներին, հետևում և աջակցում է վկայագրված կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների՝ ուսումնական հաստատություններ ընդգրկվելու գործընթացին, երեխային ընտանիքում տեղավորելու հնարավորության մասին համապատասխան տեղեկատվություն ստանալուց հետո այդ մասին տեղեկացնում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին, մարզպետին է ներկայացնում երեխայի իրավունքների պաշտպանության գործունեության մասին տարեկան հաշվետվությունը, ներկայացնում է երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովին՝ բաժնի գործունեության մասին տարեկան հաշվետվությունը:	
42.	**ՀՀ ԱՍՀՆ ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն** «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի	1. ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որը մատուցում է ծառայություններ բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում: (Հավելված 1) 2. Գործակալության նպատակները և խնդիրներն են՝ բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունների մատուցումը՝ բժշկասոցիալական փորձաքննության իրականացման՝ անձին հաշմանդամ ճանաչելու, անձի հաշմանդամության խմբի որոշման, հաշմանդամության պատճառական կապի, տևողության և վաղեմության ժամկետների սահմանման, հաշմանդամի անհատական վերականգնողական ծրագրի մշակման,	Գործակալությունը մասնակցում է բժշկասոցիալական փորձաքննություն անցած հաշմանդամների տվյալների շտեմարանի ստեղծմանը և աջակցում հաշմանդամների տվյալների հաշվառման պետական համակարգի ձևավորմանը, իրականացնում է մոնիտորինգ հաշմանդամների վերականգնողական	Գործակալությունը կառավարում է ՀՀ ԱՍՀ նախարարը: (Հավելված 1) Գործակալության պետը հաշվետու է ՀՀ վարչապետին, ՀՀ ԱՍՀ նախարարին, գործակալության գործունեությունը համակարգող՝ ՀՀ ԱՍՀ նախարարի համապատասխան տեղակալին, նաև ՀՀ ԱՍՀ նախարարության

	նախարարության Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 3-ի N 684 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 1822-Ն, ընդունված է՝ 14.11.2002, ուժի մեջ է՝ 21.12.2002* Հաստատում է ՀՀ ԱՍՀՆ ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը, հանձնարարական է տալիս ՀՀ ԱՍՀ նախարարին, ուժը կորցրած է ճանաչում ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 3-ի N 684 որոշման 1-ին կետի «ա» ենթակետը: *Նաև՝* «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կազմում բժշկասոցիալական փորձաքննական մանկական մասնագիտացված հանձնաժողով և Շիրակի մարզի N 3 բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1822-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում *N 53-Ն, ընդունված է՝ 29.01.2016, ուժի մեջ է՝ 29.02.2016* ՀՀ ԱՍՀՆ նախարարության աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կազմում ստեղծում է բժշկասոցիալական փորձաքննական մանկական մասնագիտացված հանձնաժողով և Շիրակի մարզի	սոցիալական պաշտպանության անհրաժեշտ ձևերի որոշման ապահովումը, հաշմանդամների հաշվառման համակարգի ձևավորման, հաշմանդամության վիճակի, շարժի և հաշմանդամություն առաջացնող պատճառների ուսումնասիրման, վերլուծության ապահովումը: (Հավելված 1) 3. Գործակալությունը, մասնավորապես, իրականացնում է հետևյալ գործառույթները՝ անձին ճանաչում է հաշմանդամ, սահմանում հաշմանդամության խումբը, պատճառական կապը, տևողությունը, որոշում է սոցիալական պաշտպանության անհրաժեշտ ձևերը, կազմում է հաշմանդամի անհատական վերականգնողական ծրագիրը, որոշում բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնողական միջոցառումների տեսակներն ու ծավալները, աջակցում դրանց իրականացմանը և գնահատում արդյունավետությունը, խորհրդատվություն և եզրակացություն է տալիս առողջապահական կազմակերպություններին, զբաղվածության և սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններին՝ հաշմանդամին բուժվերականգնողական, մասնագիտական կողմնորոշման և ուսման, վերաբերյալ, օրենքով սահմանված կարգով համապատասխան զինվորական կոմիսարիատներին հայտնում է հաշմանդամ ճանաչված զորակոչային տարիքի անձանց մասին, բժշկասոցիալական փորձաքննություն անցնող անձանց տրամադրում է խորհրդատվական օգնություն, բժշկասոցիալական փորձաքննություն անցնող անձանց, անհրաժեշտության դեպքում, ուղեգրում է լրացուցիչ բժշկական հետազոտման, անհրաժեշտության դեպքում առողջապահական կազմակերպություններից, գործատուներից (անկախ կազմակերպական-իրավական ձևից) պահանջում է փորձաքննություն անցնող անձի բժշկական, աշխատանքի բնույթի և պայմանների վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր, ինչպես նաև տեղերում ուսումնասիրում է փորձաքննություն անցնող անձի աշխատանքի պայմաններն ու բնույթը, տալիս է եզրակացություն հաշմանդամի վերականգնողական պարագաների տրամադրման մասին: (Հավելված 1)	միջոցառումների իրագործման նկատմամբ: (Հավելված 1) Գործակալության պետը ՀՀ ԱՍՀ նախարարին կամ նրա համապատասխան տեղակալին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն գործակալության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին, իրականացնում է վերահսկողություն գործակալության կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների օգտագործմանը հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ: (Հավելված 1)	աշխատակազմի ղեկավարին: (Հավելված 1) **Կառուցվածքային ստորաբաժանումներ** Իրավական ապահովման բաժին, Տեղեկատվական-վերլուծական բաժին, Վերափորձաքննության բաժին (Հավելված 2) **Տարածքային ստորաբաժանումներ** Բժշկասոցիալական փորձաքննական հոգեբուժական մասնագիտացված հանձնաժողով, Բժշկասոցիալական փորձաքննական ակնաբանական մասնագիտացված հանձնաժողով, **Բժշկասոցիալական փորձաքննական մանկական մասնագիտացված հանձնաժողով**, Երևանի N 7 ԲՓՀ, Երևանի N 1 ԲՓՀ, Երևանի N 2 ԲՓՀ, Երևանի N 3 ԲՓՀ, Երևանի N 4 ԲՓՀ, Երևանի N 5 ԲՓՀ, Երևանի N 6 ԲՓՀ, Արագածոտնի մարզի ԲՓՀ, Արարատի մարզի N 1 ԲՓՀ, Արարատի մարզի N 2 ԲՓՀ, Արմավիրի մարզի ԲՓՀ, Գեղարքունիքի մարզի N 1 ԲՓՀ, Գեղարքունիքի մարզի N 2 ԲՓՀ, Լոռու մարզի N 1 ԲՓՀ, Լոռու մարզի N 2 ԲՓՀ, Լոռու մարզի N 3 ԲՓՀ, Կոտայքի մարզի ԲՓՀ, Շիրակի մարզի N 1 ԲՓՀ, Շիրակի մարզի N 2 ԲՓՀ, **Շիրակի մարզի N 3 ԲՓՀ**, Սյունիքի մարզի N 1 ԲՓՀ, Սյունիքի մարզի N 2 ԲՓՀ, Վայոց ձորի մարզի ԲՓՀ, Տավուշի մարզի ԲՓՀ (Հավելված 2)

	N 3 բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով, ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 14-ի N 1822-Ն որոշման մեջ կատարում է լրացումներ:			